Lucius Annaeus
Seneca

ԳԱՅԻ ՅՈՒԼԻՈՍ ԱՌԱՆՑԱՍԻՐ

Ս Ե Ն Ե Կ Ա Յ

ՀԱՅԵՐԷ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

1[սեպեկա]
ԼՒ-40

գիրք դասուն կրկնոց

ԳՐՈՒԹԻՒՆ ԾՆՆԼՒՈՅ

Ա Ե Ն Ե Կ Ա Յ

ԱՇՈՒՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼՔ Ի Հ· ՄԱՏԹԷՈՍ ԱԲՈՒՆԱԿԱԼ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՒ ԳԵՐԵՑԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

99



ՏՊԱԳՐԻԵԼ

Ի ՎԻՆԵՏԻԿ, Ի ՎԱՆՈՅ Ս· ՂԱԶԱՐԻՒ

ՅԱՄՍ 1849 ՌՄՊՂ



ՀԱՅԱՍՏԱՆ ԱԶԳԻՆ

ՅԱԽԵՐԻ ՅԻՇԱՏԱԿ

ՄԵՆԾԱՄԱՐՏՈՒԹԻՒՆ ՀՕՐ ԻՒՐՈՑ

ՄԱՀՏԻՒՆ ԼՈՒՍԻՆԴԻ ՕՂՏԱՅԻՆ

ՆՈՒԻՐԵՔ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԱՏԵՒՆ

ԹՈՒՐՔՄԵՆԱՑԻՆ

Ս Ա Ռ Ե Ր Ա Ն

ՈԽՆԱԲԱՐՈՒԹԻՒՆ

Հայաստանի ծերունի թոզբանըւէր առ ի սէր ազգին
Վէտ վերընծայէ, Յատեան Պատգամաւոր, զայս քիր-
տըն վէրջին.
Մինչ Կոստոյիկեանն ի սմա սոփեստէս աշխարհա-
քարոզ
Լզվըշհուսըն Վէտ յեղյեղէ ըզգօնա հայերէնախօս,
Ինդ ոլորտս երկրի ուր Հետ հայկազնեան բնակէ
տարագիր,
Կացցէ սոփերս այս հայրասէր զըմեզ Վոտ արձանագիր.
Որ առաքինւոյ Հօրդ ըզսա կանգնեմ ի կոթող վըսեմ;
Օ ազգասիրուհեան յուշեալ Հանդգնեաց զարահետ
ի Հետ։

Հապա ելթէ ընձեա տարփոզել մտաեանդ իմ գեղա-
նաեհ,
Դրոշմեալ ի չակատ քոյին բերելով զանունըն զայն
վեհ,
Որ ի սիրտ ազգին եւ ի պանծալի տարեգիրըն կեայ,
Ալ էհաղն Գրաֆել Օձաձեան տոհմին փառք
յաւերժակայ։

Հ· ՄԿՐՏԻՉ Վ· ԱԻԳԵՐԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Յարտաբոյս խնամատարացն ի պարս Թէ զնա-խապատիւ տեղին ունին Հելլենք՝ արք մեծահանճարք և աչխարհաքարոզք խորագոյն խնամատարեացն և զրատրական մեծագանձ վաստակովք, յետ նոցա ըզՀռոմայն ասել ոչ ոք երկբայեսցի։ Զի որպէս յայլսմ ամենայնի զՀելլենան յաջորդեցին Հռոմք, նոյնպէս և յխնամատարութեան՝ արս կոչովիս Թէ ոչ զուգակշիռս առաջնոցն և համապատիւս, բայց և ոչ յոյժ խնամարհագոյս քան զնոսա յարուցանելով։ Որոց Թէ պարագլուխ Ճանաչին մեծն Աւգոստոս և բազմահանճարն Կիկերոն, ոչ ինչ խղճեմ առարկել և կատարումն ասել համերձին իսկ նախնեացն խնամատարաց զԱհենեկա, որոյ ժամանակակից կացեալ լուսապայծառ Պետրոսին խնամատարեացն ծագման՝ այնպէս ուղղադոյս և համաձայն քրիստոնէական կատարելութեան աւանդէ կանոնս կենաց և խրատս ուղղութեան, մինչև համարել բազմոց Թէ հասեալ իցէ ի լուր նորա քարոզութիւն Պետրոսին, և յետոյն քան

զնա վարդապետաց և բեմբասաց քարոզչաց Հնմար-
տութեան կրճնիցս , բազում ուրեք և ի նոցա բանիցն
և ի վկայութենէ յաղագս յիսուսի յորդորել զՀաւա-
տացեալս : Եմին իրի ոչ ինչ երկբայիմ զի Թէ նախ-
նիքն մեր երանաշնորհ Կարգմանիչք որչափ Հնձնացն
բարբառոյ և մատենագրութեանց , նոյնչափ և Հռով-
մայեցւոյն ճանաչեցք էին և տեղեակք՝ արդ իսկ ընդ
Աքիստոսէլի և Պղատոնի նրբաբանութեանցն և Ա-
նեկայ Հարտարխօսութիւնք յաւելուին զփառս և զշ-
Հնութիւն Հայկեանս բարբառոյ և մատենագրու-
թեան : Եյլ զոր անդ ուրեմն ագահեաց բանսն՝
այժմ ահա ըստ ըղձից և ըստ ցանկութեան Ներ-
ին մերոյ Ներկենասայ յայողեցաւ մեզ՝ մասամբ գէթ՝
ընալ զնուազութիւն բանիսին , և Թէ ոչ նահինեացն
պերճ և շքեղ Հայկաբանութեան ընդհինն՝ բայց ըստ
մերումն կարի՝ զԱնեկայ Հանճարոյն Հնձնութիւնն ի
մերս փոխաբերել՝ ի վայելս մերազնեայ բանասիրաց .
որոց և նուիրեմք իսկ զվերջին զայս որպիսի և ե վաս-
տակս մեր , աներկայելով փոխարէն՝ առ ի սմանէ եղե-
լոց օգտութեանցն լինել բաժանորդ :

Եչ զի բնաւորական իմն ցանկութիւն է մարդոյ
գիտել Թէ ոյր և որպիսւոյ ուրուք մատենագրութիւնքն
էցեն զոր ընթեռնու , կարևոր Համարիմք խուն ինչ
զմատենագրէն կանխաբանել աստ : Եյդ Ոկիւոս Ան-
նեոս Անեկա իմաստասէր , ծնեալ ի Կորտովա Ասպա-
նիոյ , ամօք ինչ յառաջ քան զԹուականութիւն փրկ-
չին , նախակրթեցաւ ի Հօրէն իւրմէ ի նահինոյն Ա-
նեկայ ի վարժս Հռետորականին , և ապա կացին նոյն
վարժապետաք իմաստասիրութեան Ոկիոսի և Փոտինոս
ի ստոյիկեան աղանդոյ , որով ստոյիկեան վարդապե-

տուԹեանցն գտաւ ջերմ պաշտօնատար ։ Կալիգուլայ կայսեր կասկածեալ զնմանէ վասն ընտանուԹեան նորա ընդ Աղրիպինայ այրոյն Դոմետիոսի բարերարին իւրոյ , աքսորեաց զնա ՚ի Կորսիկայ , ուր զերկեամ մի կացեալ ՚ի մէջ խաժադուժ ազգին՝ գրեաց ինչ ինչ ՚ի Ճառից իւրոց ընդ որս և զԱխիԹարուԹեանն առ մայր իւր ։ Իսկ ապա Աղրիպինա լեալ կնուԹեան Կղոդեայ կայսեր , ետ դարձուցանել զԱենեկա յաքսորանաց առ ՚ի դաստիարակուԹիւն որդւոյ իւրոյ ՚Ներոնի , զոր ցան կայր հասուցանել ինքնակալուԹեան ։

՚Ներոնի պայազատեալ զաԹոռն , յառաջին ամ ինքնակալուԹեան իւրոյ՝ ըստ արժանի դաստիարակուԹեանն եկաց օրինակ բարւոք վարելոյ զիշխանուԹիւն ։ Աւր ապա զառածեալ ՚ի յոռուԹիւնս , և զդաստիարակին կենցաղավարուԹիւն համարելով իւր անվեհ կշտամբանս՝ խորհեցաւ դեղամահ առնել զնա ՚ի ձեռն միոյ ուրուք յաջատելոց նորա ստրկաց ։ Աւր կամ ՚ի ստրկին ստուգագանելոյ , և կամ յինաստասիրին զգուշուԹենէ , ՚ի զերև ելին Հնարք նորա . և ապա պատճառս իմն բաղադրեալ երբև համախոհ Պխռնի ՚ի դաւաճանուԹիւն կենաց իւրոց՝ դատապարտեաց զնա ՚ի մահ , ՚ի նա ինքն յընտիր առնելով զեղանակ մահուն ։ Յայնժամ խնաստասէրն ետ իւր երակ հատանել . և ՚ի հոսել արեանն՝ սփոփեր զարտասուս բարեկամացն ։ Ակ ՚ի յամել մահուն , խնդրեաց դեղ առնուլ , այլ և ոչ Թունիցն այնուհետև ազդեալ ՚ի նա առնազելոյ արեանն , ետ տանել զինքն ՚ի ջերմ բաղանիս՝ ուր հեղձամղձուկ զրաւեցաւ ՚ի կենաց յամին 68 ԹուականուԹեան փրկչին , յուԹերորդ ամի ինքնակալուԹեանն ՚Ներոնի ։

Ջնկարագիր վարուց նորա այլազգ ի միաբանց տան վիպագիրք. ոմանց պարտաւագէտ իմաստասիրին կալով, և այլոց ջատագով. յորմէ գուշակել մարթ է՝ խառնուրդ ինն ի բարւոյ և ի չարէ զվարս նորա լեալ, ոչ կալով ամենևին ի տուեալն յիւրմէ յօրէնս ուղղութեան և իմաստութեան։ Այլ թէպէտ ի մահուն իւրում խնդրեալ ժամանակ գրելոյ զկտակ իւր և ոչ ընկալեալ՝ աւանդեն ասացեալ առ բարեկամին որ մերձ կայրն նմա՝ թէ Վանգի չիք իմ ազատութիւն այլազգ երախտագէտ լինելոյ բարեացդ որ առ իս, զայն և եթ թողում ձեզ ի ժառանգութիւն՝ որ միայն մնայ հնձ յիմոցս, և է պատուականագոյնն քան զամենայն՝ զոբինակ վարուց իմոց, այլ այդ բանիք յիւրում բերանի՝ քան վարոյն անարատութեան՝ իցեն հաւաստիք առ բարեաւանութեան նորա, որոյ գեր ի վերոյ ամենեցուն կամէր երևեալ, և որ ի գրուածս նորա բազում ուրեք երևի, և է այն արտաքնոցն ամենեցուն պանծացելոց առաքինութեան դիւցազանց սեփական հնիք։

Վազում հնչ ի մատենագրութեանց Աւենակայ կոտսեալ՝ և ոչ հասին մինչև առ մեզ. իսկ յորոց ենն արդ՝ մեք զնմանատիպական Ճառիցն տամք ասա ըզթարգմանութիւն, այլում թողեալ վաստակասիրի զթարգմանութիւն թղթոցն, որք ոչ հնչ ընդհատք յառաջնոցն լուծութեամբք և օգտակարութեամբ ըզբարոյականաց Ճառն խնդրոց։ Յամենայն ի գրուածս իմաստասիրիս է տեսանել հանճար բազում և բեղնաւոր, միտք խորագնին, համառութիւն Ճոխ, պերճութիւն բազմակերպ դարձուածոյ բանից, և գեղագոյն ամենայնի՝ ուսումն մարդկայնոյ սրտի, յոր թուի ինն խորհուրդ լեալ նորա և զամենայն ծածկեցելոցն ի նմա

կրից և զգանկութեանց զնշոտմունսն վերբերեալ։ Այս զայս ուսաւ նա ՚ի պերճ աբբունիս Հռովմայ, յաքսորանան, և ՚ի բազմօրինակ դէպս յաջողակ և ձախողակ բախտին, ընդ բարձունս և ընդ խոնարհս՝ ընդ անարգն և ընդ փառաւորեալս լեալ կենակից։ Այլ ոչ իրլ՝ Այնեկայ մատեանքն Ճոխացեալք խորացնին տեսութեամբք բարոյականին և Ճշգրիտ Ճարտար նկարագրութեամբք բազմադէմ կենաց մարդկան, կարևորագոյնք են ՚ի հանապազորդ պիտանութիւն պարապելոյն յիմաստասիրութիւն գործնական։

Այլ և զայս չէ մարթ ժխտել՝ զի որ ՚ի միում ուրեք ՚ի թղթոցն զգեղծանելոյ հռովմէական պերճախոսութեանն առեալ գրել՝ օրինօն գեղեցիկս զկիրթ ախորժակաց աւանդէ, ինքն ոչ կացեալ ՚ի նոսին՝ զհասոյց հարուածն ետ լսանին պերճախոսութեան և ախորժակաց իւրոց դարուն՝ պաճուճեալ թերութեամբք պերճախոսութեանն իւրոյ։ Շարագրութիւն ապրուեստակեալ, խիտ առ խիտ նմանաձայն բառից հակադրութիւնք ՚ի բնիկ լեզուին՝ որք չպահին ՚ի հայումն, և բազմայեղյեղական կրկնութիւն մի և նոյն իմաստից ՚ի կերպս կերպս մինչ ՚ի տաղտկութիւն, տիպք են կերպարանաց բանից նոցա որովք և օտգտանի։ այլ այն ամենայն ՚ի բազմապատիկ առաւելութեանցն յաղթեալք՝ արգարացուցին զիրեօք զսուտ յեաղն թէ Ոչիք ինչ ՚ի մարդկայնոց պոյ չկոչեն թերութիւնք։

ՊՕԼԻԿԱՐՊՈՍ Ա. ՍԱՐԱՖԻԱՆՑ

ԱՒԱՆԴԱՏՈՒ

ՅԱՊՂԱԳՈՒ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ

(Deir)

ԳԻՐՔ ԱՒԱՆԴԻՆ

ԳԱԼՈՒԽ ԱՒԱՆԴԻՒ

Պ՚ՐԵՒ, յիճէն խնդրեցեր, ով Աղաւաւ, թէ զինչ ե՛ս նուաճել մարթ իցէ զբարկութիւն։ Այս ոչ վայրապար, որպէս ինձ թուի, առաւելագոյն ահիւ զարհուրեալ է քո ի կրից աստի՝ որ բուռն է և դժոխըմբերը քան զանհնայն։ Օ՚ի յայլ ի կրից է ինչ գեհ դիւք և անդորը հեշտի, իսկ սա խռովութեամբ լի և ճնասակաւ ահեղիւք խաւարն տապի ցանկութեամբ զինու, արեան և պատուհասի։ Ա՚իայն զի այլոց ինասիցէ՝ յանձն ինչ ոչ ինայէ. ընդդէմ նեաւից դիմագրաւեալ՝ ցանկայ ի վրէժխնդրութիւն որ բազմադէտ չարեացն է ծնող։

Ա՚ղդ զան յիմանանոց ամենք կոչեցին Չիմարութիւն սուղ, զի Հանգոյն իմն յիմարեցելոցն էջ անձին իւրում առը. ոչ պատշաճից ինչ աին անձ և ոչ կարեւոր ծանօթութից. յամառեալ այնպէս՝ի կամս չարութեան իւրոյ՝ ոչ թեպետ ութեան անասց բանին և ոչ խրատուց. ի գոյն իրաց բորբոքեալ և զայրացեալ՝ անընդունակ է յընտրութիւն արդարութեան և ուղղութեան. նման նեալ իմն աւերակաց՝ որք զոյս չմիջեցինն՝ի վերայ նոցա խորտակին և ինքեանք։ Այս զի գիտացես թէ չէն ա-

ողջ մնաք ըմբռնեալքն ի բարկութենէ, Հայեաց և ի կերպարանս նոցա։ Օ՛ն որպէս մոլեգնելոցն սեպհական նշանակք են դէմք յոխորտ և սպառնական, Ձակատ հնձեալ, աչք խոժոռասյայեացք, գնացք խուճապեալ, ձեռք անհանգարտ, գոյն թափեալ, ստէպ և ուժգին յոգւոցհանումի՛նք, նմանապէս և բարկացողացն նոյն նշանք են։ Աչք փայլակնացեալք և բոց արձակէն, երեսք հրացեալք Համակ՝ ի յորձնեռանդն յուզելոյ արեանն ի խորոց սրտին. շրմունքն գողգոջէն, աղխեալ փակիլ ատամունք, քաշմիին հէրքն և դիզանան, Համակիլ անձկասպ չունչն, անդամոյն յօդք Ձարձատէն ինքնատանջ, հեծումն և մնչիւն և բարբառ կիսահազագ և կցկտուր, ձեռաց ստէպ ստէպ ընդ իրեարս բախումն, գետինն ընդ ոտիւք գոփեալ և բռավանդակ մարմինն դէպ ի. որոտալ սպառնալից, և Համայն՝ տեսիլ ինն գազր և քաշմիելի կերպարան անգեղեալ և տմբաքեալ երևի։

Լսեմ՝ առաւել նզովելի իցէ սխան քան առաւել գարշելի՝ յամարեմ ասել։ Օ՛այլս ի կրից քաջուցանել մարթէ և ծածկապէս սպաս տանել նոցա. բայց բարկութիւն անձնասանձնշանակի յերեսս ցոյցաեալ և որչափ բուռն իցէ և սաստիկ՝ այնչափ մեծաբարբառ ի յայտ գայ։ Ո՛չ տեսանես զի և կենդանեաց ամենեցուն՝ ընդ գըրգռելն ի բարկութիւն և ի՝ ձեռս՝ անդէն այլափոխին երևոյթք, և Թոռեալ զընիկ կերպարանս հեզութեան և Համեստաւութեան՝ բամենակ մարմնովքն գժնեալ։ Ա՛ պարզուց բերանքն փրփրին և կրճտելով սրին ատամունք. յուսկն եղջիւրք տատանին ընդ օդս և աւազ ընդ ոտիւքն փոթորկի ի բախանիլ. առիւծք մռնչեն, օձիք գլգռելոց փքացուածոյց այտունս պարանոց և շնոց կատաղելոց գժնեալ է տեսիլն։ Զկնի կենդանեաց այնպէս արհաւիռատիպ և այնպէս վայրագ ի քէն, յոր ի բորբոքելոյ բարկութենեան ոչ յաւելցի գժնեալութիւն։ Այն են արգարև և այլք ի կրից անմաքչելիք ոչ ժխտեմ. ցանկութեանն, երկիւղն և յանգգնութեան են նշանք սեփականք սրովք նշաւակին, և սրտի յուզելոյ յուժգնացն կրից Հարկ է զի գուշակ լինիցի երեսք։ Օ՛ճիչ ասպ խորին իցէ. — Ա՛յն՝ զի ուր այլք ի կրից նշանբին և եթ, սա մերկասպատնոց կայ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Իսկ թէ և յարգասիս մեռանուցնողաս անհարկել կամ-
յիս՝ քան զամենայն սպառնալեաց աղիտաբեր է ազգի
մարդկան ։ Պահումնք , զերազտուռնեաց , զտատիս-
զուխեաց զիրերաց , բազաքաց կործանումն , ազգաց
համայնաջինջ աւերած , արքայից գլուխք հրապարա-
կաւ ի վաճառ եդեալք , հրձգութիւնք յարկաց և
հրդեհք բազմաձարակ մնչեալք ոչ ի չջնջափակս ևեթ
պարսպաց , այլ և ընդ անբաւ տարածութիւնս գաւա-
ռաց զոխերիմ բոցոն ծաւալելով , սորա արգասիք են
համայն ։ Հայեաց , ազէ , ի հիմունս Հայակաս քաղա-
քաց որոց հետքն հազիւ նշմարին . զայգոսիկ տապա-
լեաց բարկութիւն ։ Ջես զերազուս տապարիսաց վայրս
ամայացեալ անբնակ . բարկութիւնն անմարդացոյց զայ-
նոսիկ ։ Ջես զվէմ ձաղօր ալանջն խուժք՝ զորս յօրինակ
ձախողակ բախտի ընծայեցուցանէն վէպք , զոմն ի ծո-
ցանել ի մահճի անդ իւրում դաւեաց բարկութիւն , զոմն
ի ինջոյս սեղանոյ , զոմն ի պաշտամունս անդ օրինակա-
նացն՝ անհերձև մեծի հրապարակին արար տիգաբոյց ,
զոմն ստիպեաց տալ զարիւն իւր ի սուր հայրասպան
որդւոյն , զայլոյ զծառայական բազուկն զինեաց ի փո-
ղոտել զպատանոցն արքունի , և զայլոյ զանդամն յօշո-
տեաց՝ ի խաչն ։ Լաւ այս ամենայն դեռ և միոյ միոյ ա-
նանձինն պատուհասք , իսկ զինչ եթէ թողեալ զայնա-
սիկ՝ յորս ուրոյն և առանձնաբար մնչեցաւ բարկութիւն՝
ընդ ժողով մարդկանն նայիցիս սպասղեող եղելոյ , և
ընդ ամբոխն մահանեալ ի սուր զինուորաց , և ի մեա-
սապատութեան բազմաց՝ ընդ քաղաքացիսն համօրէն
դատապարտեալս առ ի մահ , փոխանակ զի նշկահեալ
թողուն զմեզ , և կամ զի զնչխանութիւն մեր անաղ
կեցին ։ . . .

Իսկ զինչ այն իցէ զի ընդ սուսերամարտիկս բարկա-

1 Հատուած մեծ բանից ի քաց անկեալ պակասք առաս , յորում և զսահման բարկութեանն տայր մատենագիրն ։

նայ ժողովուրդն անագորոյն մնաք՝ անիրաւութիւն չա-
մարեալ և արհամարհանս անձին զի ոչ մտադիր մար-
տիկքն կորնչին . և որ հանդիսատեսն կայր՝ զձիաամբ
առնու զկերպարանս և զիմաքն և շարժմամբն և գայլայ-
մամբ : — Ոչխ այն որ ինչ և է , բայց իսկապէս բարեու-
թիւն ոչ է , այլ նմանութիւն իւին բարեաւէտ . որ-
պէս յորժամ զձեալ անկանիցին մանկունք՝ կամին զի
գանեասցի գետինն , և բազում այն է՝ զի չգիտեն իսկ ո-
րում բարկանան , այլ բարկանան անպատճառ՝ ոչ ինչ
կրեալ զրկանս , բայց ոչ և առանց ինչ առեւրացեալ զրկա-
նաց , զորոյ ցանկան խնդրել զվրէժ : Ոմն իրի սուտ
հաւատածոլքն պատրին , և կեղծ պատասխանօք ողբասու-
բացն հանդարտեն և կերպարանօք վրէժխնդրութեան՝
կերպարանեալ ցաւքն բառնին :

ԴԱՍԻԽ ԵՐԻՐՈՐԴ

Ասացն , ասիցէ ոք , բազում այն է՝ զի ոչ որոց վը-
նասեցինն բարկանամք , այլ որոց կամինն վնասել . յորմէ
մարթի է՝ ի միա առնուլ՝ զի ոչ յեղելոյն և ևթէ՝ ի զըր-
կանաց յառաջ գայ բարկութիւն : — Ոարկանամք ար-
դարև որոց կամինն վնասել մեզ . իբրև զի նոքին իսկ
կամքն և խորհրդոյ թափին վնասել . և որ անիրա-
ւեին ցանկայ՝ անդէն անիրաւեցաւ : Ոայց զի բարկու-
թիւնն չէ ցանկութիւն վրէժ խնդրելոյ՝ և անտի , ա-
սէ , կայտ է՝ զի և աքք տկարք բարկանան յաձախ՝ ի
վերայ հզօրաց , այլ ոչ առ վրէժուց ինչ ցանկութեան ո-
րոց անկն ոչ ունին : — Ոչ այդ պատասխանեմք նախ՝
զի մեք զբարկութիւն ցանկութիւն գոլ ասացաք և ոչ
կարողութիւն վրէժխնդրութեան . արդ ո՞չ տեսաքէն
և որոց չենն ձեռնհաս ցանկանան մարդիկ : Ոչկղզի՝
չեք որ այնչափ նուաստ՝ որում չիցէ անկասկածութիւն
վրէժխնդրութեան և՝ ի կարի իսկ հզօրագունէն : Ոչ՝
է մեր արդարև կարողութիւն պատելոյ :

ԵՒս այլազգ յոյժ առ՝ ի մէնջ սահմանեն և Ոչիստո-
տել զբարկութիւն , յասելն . Ոարկութիւնն է ցանկու-
թիւն փոխարինելոյ ցաւոյն : Ոչ թէ զինչ խոիր իցէ

ընդ այս սահմանն և ընդ միջն՝ յերկար լեցի հետագօտել։ Ասայց և երկաքանչիւր իսկ սահմանացս դիմանդրեն ամենք ասելով. Ասա զազանք բարիանան, այլ ոչ եթէ զրգռեալք յանիրաւութենէ և կամ ցանկութեամբ չարեաց և վնասուց, որք թէպտ արգասիք են չամաչս նոցա բարկութեանն, այլ ոչ եթէ ուշ նպատակի։ — Ոչ զոր ասելի է, թէ անբաժ են ի բարկութենէ զազանք՝ որպէս և ամենայն իսկ կենդանիք՝ բայց ի մարդոյ։ Օ՛ի թէպտ և հակառակ է բանին բարկութիւն, բայց և ուրեք երբեք ոչ ճնանի եթէ ոչ ուր բանին կայցէ տեղի։ Ա՛յ արգասիք բերութիւն ինն ի զազանս, կատաղութիւն, մռնչգնութիւն և ուժգնութիւն. բայց բարկութիւն ոչ ինչ աւելի քան զղջնջողութիւն. թէպտ և ի հեշտութիւնս անասունք ևս են և ապաժոյժք քան զմարդիկ։ Ի՛ արդեօք հաւասարեցես սրումսանէն.

Ո՛վ վարագ դիտէ ցանուել, ոչ եղջերու յուսալ յրնթացս,
Ո՛չ ոչ արջ արիւնահամած բուռն ի ջոլեր դիմել անդեայց։

Յասուցին ասա ասացեալ՝ խնդ ինձ զզրգռութիւն և զբերութիւն. զի ոչ ինչ աւելի բարկանալ դիտէն զազանք քան թէ նեբել։ Ո՛չքան անասունք մարդկայնոցս կրից անբաժք՝ նմանեալս ինն այնոցիկ ունին աւելի բերմունս. ասա թէ ոչ եթէ սէր էր ի նոսա, ասա և ատելութիւն, եթէ բարեկամութիւն՝ ասա և կռիւ, եթէ տարաձայնութիւն՝ ասա և միաբանութիւն։ Ա՛յլք ինն այդոցիկ և երևելիք տեսանին ի նոսա. բայց իակութեամբ մարդկայնոց սրտից սեփականն կրեք են բարութեան և կամ չարութեան։ Ի՛արդ այ աւելի տուեալ է ընտրութիւն, խորհուրդ և յաւանաբանութիւն։ Ա՛յլ ոչ միայն ի մարդկայնոց առաքինութենանց անբաժք են անասունք, այլ և յախտից. որպէս արտաքին կերպարանաւքն անմնման են մարդոյ՝ նոյնպէս և ըստ նեբքնոյն։ Զայն ինն ի նոցա, այլ անյօդուածոց խառն ի խուռն և անհնձան ամենեքին. և և լեզու՝ այլ դժուարաշարժ և ոչ առ ամենայն դար-

ձուածս զիւրաքեք. քան այսոցիկ և սիրականն որ ի նոսա և իշխանական մանն ոչ ամենակատար ինչ է և նուբբ. առնուլ առնու զառաքելութիւն և զկերպարանս իրացն որովք զրգեալ գրգռի, այլ խառն ի խառնն ինչ և չիմեի, նմին իրի իսկ բառն է ի նոսա և ուժգին բերումին և մերժումն: Կակ երկիւղն, հոգոց, տրտմութեան և բարկութեան չէք բնաւ առեալ ի նոսա, այլ նմանութիւն իմն ևեթ նոցին առեանն: Ո՛ւ ասն որոյ և վազվազակի փոփոխին և ի հակառակն կայս միտեն. և թէպէտ կարի յոյժ զայրացեալ իցեն և կամ զանգիտեալ՝ սակայն և ձայնին և զնդեգին մնչիւնն նոցա և զառաձայն հուպ ընդ հուպ յաջորդել հանդարտութիւն և անդորրութիւն:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Ահ զինչ բարկութիւնն իցէ՝ շատ իսկ յուզեալ է զև. իսկ թէ ես զանազանիցի ի բարկասրտութենէ՝ յայտնի է և այն՝ թէ այնու որով և արբեանն յարբեցողէ, և որ երկիչսն յերկչոտէ: Կարկացեալն ոչ միշտ բարկասիրտ է. և որ բարկասիրտն է՝ ոչ միշտ բարկացեալ: Ահագին ասել զազգս ազգս բարկութեան որ առ Հոգին բազմապատիկ անուամբք զանազանեալք և առ մեզ չեն նոցա բառք սեփականք. թէպէտ և առ մեզ իսկ ասի զառն, գժնեայ, սրամտեալ, ցասկաս, կատաղի, պոռոտոզ, խիստ և անբերելի, որք զազգ ազգ բարկացողացն յայտ առնեն. յորոց մի և գժգոհն է՝ պատրաստ և զիւրագրգիռ ի բարկութիւն: Կանգիլ է բարկութիւն որ գոչմամբ և ազազակաւ զիմամի, և է որ զիւրագրգիռ է և յանառ, սին սակաւախոս՝ այլ բառն ի ձգումն ձեռին, և այլ սին ի զառն անհնաբանութիւնս բերեալ. է որ ի արտունջ լուծանի և ի հակառակաբանութիւն, և է որ ի խոթս սրտին մերեալ գանձի. և բիւր այլ ևս ազգք են բազմակերպ չարիս այսորիկ:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Յաւս վայր խղիրք եղէն թէ զինչ բարկութիւնն իցէ. և թէ մարդոյ միայոյ սեփական՝ թէ պղծոյ և ի կենդանեաց. և թէ ե՛ր պոշիցի՝ ի բարկասրտութենէ և քանիպատիկ իցէ զանազանեալ. ժամ է արդ խընդրել թէ արդեօք ըստ բնութեան ինչ իցէ բարկութիւն և պիտանի՞ եթէ կացցի ոք զայն ի չափս։

Օ ի ոչ ըստ բնութեան ինչ է բարկութիւն, յայտ յանդիման երևի եթէ յառեալ Հայիցի ոք ի մարդ. զի զինչ հեզագոյն քան զնա ցորչափ անպղպեղակ կայ ոգւով, և զինչ բուռն և դժոգնագոյն քան զբարկութիւն։ Օ զինչ քաղցր և մարդասիրագոյն քան զմարդ, և զինչ՞ ոխերիմ քան զբարկութիւն։ Արդ յօգնական եղեալ ծանեալ ընկերին, բարկութիւնն ի կորուստ. նա ի հանիմարութիւն ջանայ, սա ի քակտուիճ. նա յօգուտ և սա ի չքաւս. նա անձանձութիւ՝ իսկ փութայ չասանել յօգնութիւն, սա և ի սրբելիսն չինայէ. նա զան դիւրի այլոց ծախի, սա զանձն իսկ վտանգէ զի և զայլ վտանգեսցէ։ Արդ իցէ ոք այնպէս անձնատուչ բնութեան, որ չքնաղագեղին և կատարեալգունն ի գործս նորա պատկանաւոր հանիմարեցի զայդ սիրտ մոլեկան և չքաւսակաց։ Կարկութիւնն՝ որպէս ասացաք՝ ծագաւի է վրէժխնդրութեան. և իցէ ի դէպ այդպիսեայ ցանկութեան բնաւորապէս ունել տեղի ի խաղաղասէր սրտի մարդկան։ Ի բարեբարութեան և ի միաբանութեան հաստատեալ են կենաց մարդկան, և ոչ եթէ երկիւղիւ՝ այլ սիրով և օգնականութեամբ միմեանց դաշնաւորեալ կայ յակաստանի հասարակացն ընկերութիւն։

Ոտ զինչ, ասիցես թերևս, չիցէ՞ն ուրեք կարևոր և պատիժք։ — Այս կարի իսկ քաջ. ասայն թէ, ըստ թելադրութեան բանին իցէն անխառն ի կրից, ոչ ի չքաւսել՝ այլ ի բժշկել ընդ կերպարանաւք չքաւսս։ Օ որ օրինակ զթիւրեալ ձողս բռցակիզեալք առ ուղղել, և սեպ ի ներքս վարեալ հարկանեալք՝ ոչ ի խորտակել

այլ յընդարձակել, նոյնպէս և զթիւրեալ միտս յախտից՝ ցաւոք մարմնոյ և ոգւոյ ածելիք յուղղութիւն։ Օր օրինակ և բժիշկ յախտս մարմնոյ՝ ի թեթևացուցանել զոգեծէ զառաջինն զոյն փոխոխութեամբ հանապազորդ սովորութեանց ախտացելոյն և կերակրոյն և ըմպելեացն և մարզից մարմնոյն օրինաւորութեամբ և բնաւ իսկ տարազս կենացն յեզոփոխութեամբ հանատանել զնա յառողջութիւն։ Յաւելու ապա և չափ ևս զնմ նմա։ Զի թէ չափոյն և կարգաւորութեամբ ոչ օգտեսցի, յաւելու և ևս նուազեցուցանել ինչ և յապաւել։ Զի և ոչ այսպէս օգտեսցի՝ արգելու զնա ի կերակրոց, և ժուժկալութեամբ պահոց թեթևացուցանել զմարմինն։ Զի թէ այն ամենայն մեզմական գործ ի գերև եղիցին՝ երակ հատանել, և յանդամս իսկ վնասակարս յարակից մասանց և փաղաղիչս մարմնոյն՝ ձեռն արկանել. և ոչ ինչ ի գարմանոց որոց առաջաւար իցեն արգասիք, խիստ Զուի նմա։ Զայսպէս վայել է և որում օրինաց կայ իշխան և առաջնորդ քաղաքի, մեզմ և առաք բանիւք արտաք և հնար իցէ՝ վարել նախ ի բժշկութիւն մնացց, յորդորելով զթիւրեալսն ի գործս պատշաճից, ազդելով ի նոսա զգայնութիւն ուղղութեան և զառաքինութեան, և ատելի առնելով նոցա զախտս և սիրելի և մեծարս զառաքինութիւն։ Զնահ ապա յառաջ անցցէ ի բանս խոստս ի յանպիտանութիւն և ի խոտ։ Զետ այնպիսիկ ձեռն արկցէ ի պատիժս բայց ոչ ի ծանուցս և անբան դատնական գարմանոյ. և զծանրագոյնն պատուհաս ծայրագունից եղեռնաւորացն ածցէ ի վերոյ, այնպէս զի կորիցէ և ոչ ոք՝ բայց յորժամ և կորուսեալն իսկ այնպէս օգտակար իցէ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Ի ՈՎՔ այսու անմնման գտանին միմեանց բժիշկն և իշխան, զինա որոց միանգամ՝ոչ կարաց տալ կենաց՝ զերծն դիւրե՛ ի կենաց, իսկ սա զպատուսորեալն յատենի՝ մնու անարգութեամբ զրաւէ ի կենաց։ Երբ ոչ եթէ ընդ պատուհաս նորա զուարճանալով, զի օտար է յի-

մասանոց խժդժութիւն այդպիսի , այլ ի խրատ ամենեցուն . և զի որ կինդանոյն չեզև ումեք օգտակար , ի մահուն անշուշտ օգտեսցէ քաղաքին :

Այսպս ոչ ի բնէ վըէժխնդիր է մարդ , նմին իբրև իսկ և ոչ բարկութիւն՝ որ վըէժխնդրութեան է ցանկացող , բստ բնութեան ինչ իցէ նմա : Այլ առցէս ինձ և զԱրդասոնի առասպելութիւն , զի զինչ արգելու զմեզ զայլոյն ի վար արկանել բստ մասինն որ մեզ իսկ ի դէպ գայ : Այլ բարի , ասէ , ոչ ումեք միասէ . իսկ վըէժխնդրութիւն զի միասակաւ է՝ չէ ի դէպ բարւոյն , ապա և ոչ վըէժխնդիրն բարկութիւն : Այն բարւոյ է թէ չէ ցանկալի վըէժխնդրութիւն , ապա և ոչ այն կիրքն որ վըէժխնդրութեան է ցանկացող , ապա և ոչ բարկութիւնն բստ բնութեան ինչ իցէ նմա :

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ծնդիցս և ոչ բստ բնութեան ինչ իցէ մարդոյ բարկութիւն՝ բայց չիցէ արդեօք արժան վարել նմա այնու՝ որ ի բազում ինչ իրս օգտակար է : Օ՞չ նուաղ գրգռի ոգին և յուսելոյ ի կորով . և թէ ոչ այս բոց վառիցի ի նմա և ոչ այս խթան մարակիցէ զնա դիմադրաւ խիզախել վտանգաց , և ոչ մի ինչ ի մեծամեծաց արիասցի գործել ի մարտի : Այլ ոչ իրի լաւ թուեցաւ ի մասանոց ոմանց չափաւորել զբարկութիւն և ոչ անհետ առնել ի սպառ . յապաւել զանելորդն և յօգտակարն վերածեալ զայն ի չափ , պինդ պահել . զի առանց այնորիկ լքանին բազուկք և թուլանայ կորով հոգւոյն և զօրութիւն : — Այլ նախ քան զամենայն՝ դիւրագոյն ևս է բնաւ իսկ արատաբել զինասակարս քան ուղղել . չատ նոցա մեռաս , քան յետ մահուն բարեկարգել . զի գամ մի կռուան ոտից գտեալ՝ հզօրագոյնք քան զուղղելն լինին և անընդունակք պատանի և չափոյ : Ոչ դարձեալ բանն ինքնին յորոյ ի ձեռս վերասանակ սանձիցն աւանդեսցէ , ցայն վայր զօրաւոր է՝ ցորչափ ազատ ի կրից իցէ . իսկ թէ չաղեալ վարակեցաւ նոքօք՝ ոչ ևս սանձել կարէ զոր վանելն կարող էր : Այսոյ ինչ

սիրզեն յիշխանաց Հեռան մեռաւ է ։ Ինդ յառաջէն և բռնաւոն և ոչ ևս ընկերին յետս ։ Ինդիս որք ընդ գահակիս Հաղիցին չկարեն ընկերիլ և կամ առնել ուրբք զկայ, և ոչ խորհուրդ և ոչ ապաչաւ զիարափ վայրբերաբեհանն խոհանել կարացեք, և արգելալ ի Տաճանելոյ անդր ուր մարեհ էր չերեալ, բառնդին օրհնակին և սիրտ մարդոյ անհնաւաւր լեալ գամ մի ի բարկութիւն, ի սէր՝ և յայլ ինչ կիրս, ոչ ևս խրատն է առնել զիարափ յարձակման նոցա ։ Հարկ է զի յափշտակեալ վարեսցի, Հարկ է զի բնիկ ծառութեամբն և ի վայրաբեր սխոհոյն բնութենէ մինչ ի խոտս անդնդոցն Հասանիցէ ։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Լաւ ևս է անգէն ի սկզբան զնախկի խրատուներս բարկութեանն լռեցուցանել, և զոտն իակ զսերմանսն հեղձուցեալ փութով սրդութեամբ խոյս տալ ի բարկութենէ ։ Օ՛ի թէ գամ մի յափշտակեալք բերիցիք գլխիվայր՝ դժուարին գործն իցէ ի փրկութիւն ։ Օ՛ի ուր կիրք ի ներքս սպրդեալ անկան՝ չեր անդ բանին տէր ։ և ի Տանութենէ կանգ մերոյ խրատուներս իմն ի ձեռս առեալ կրեց, բառնդան պատուհասեալ առնել զրկաք ինչ խրատուց Տանդիպելեն և ոչ գոհ ։ Ինդէն ի գլուխս ատենդացն, ասեմ, պարտ է արգելուլ զնեղութիւն զի թէ միջանկեալ լեալ գամ մի և զգրաւնն կարեալ ունիցի՝ ոչ ևս օրէնս ի գերեզման խրոց առնուցու ։ Օ՛ի ոչ եմէ ինքնատրոյն բանալ Տոգին և արատաբուստ գնալ կայ կրնայ չեզոքալ նոցա յառաջ խոզալ քան զարժանն, այլ ինքնին իակ կրէ ։ Տանին իրի անկարասեալ գառնալ անդրէն և զառաքն ածել զօգտակարն զայն և զիրկաւէտ զօրութիւն՝ արամ մնան հգել և ակարացցեց ։ Օ՛ի արպես ասացի՝ ոչ եմէ ուրոյն յիրերաց և առանձինն գահոյք իցեն ասցս, այլ կիրքն և բան ի լաւ անդր կամ ի վատնարն փոխոխումն է Տոգւոյն ։ Ինդ զնարդ որ առի բարկութեան բանն՝ գրաւեալ և նուաճեալ յոխոխոց՝ յառնիցէ անդրէն, կամ արպես Տոգարկել

զանձն մարեցասցի ի զուգախառնութենէ անտի ու
մահացուցանին աչեաց և զօրացաւ կոյսին։

Ասաց են, ասես, որ ի բարկութեան ի չափս ու-
նին զանձինս։ — Ոչ պրպէս. չառնելով և ոչ ինչ յորոց
ի հեռագրէ բարկութիւնն, ի՞նչ քան մնասին ևս ի. Ոչ ի
չառնեն և ոչ ինչ՝ ապա յայտ է ի ևս չկոչեն ինչ պատ
բարկութեան ի գործել, ու զաք յօդուածիւն գնա
կարգայիք, պրպէս ևս ի առաւելագոյն քան զանձին՝
ազգեցութիւն ինչ իցի նորա։ Ոչ զարձեալ Տարցանեմ.
Հզօրագոյն իցէ բարկութիւնն քան զանձ ևս ի, ակա-
բացոյն. ևս ի Հզօրագոյն՝ զնարդ մարմի իցէ բանին
չափ պնել նմա, որ զի Հզօրագունից քնաւորեցան Հր-
պատակել ակաբք. իսկ ևս ի, ակաբացոյն, և առանց
իսկ նորա բանն ինքնին բանական է ի գործ և ոչ ակա-
բացունին կարօտի ձեռնառութեան։

Ասկայն են, ասես, ի բարկացելոց զրք անայլայլակ ա-
նձինս ևս և անասանս նուաձին զանձինս։ — Ոչ զնարդ.
Երբ ինքնին ցածուցեալ տեղի տայ բարկութիւնն, և
ոչ ևս ի. զինչդեռ յեռանգանն իցէ, որով և բռնագոյն։
— Ասայ ազէ, ոչ ապաքէն և ի բարկութեան անդ ի
աւրեք զի անվնաս և աղջանդամ արձակին զառեալս իւ-
րեանց ոչ ինչ պարսաւալ նոցա չարիս։ — Ոչ յդպէս է
այս. այլ երբ. յորժամ կիրք ընդ կրից զիմամարտեալ՝
յաղթիցի, երկիւղն և կամ ցանկութիւն. և ոչ ևս ի
յազգեցութենէ ինչ բանին, այլ ի կրից ընդ մի-
ւմանս գաշնաւորելոց վեր ի վերոյ իմն և առ ժամայն
լինի խաղաղութիւն։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Ոչ ապա կարևոր ինչ է բարկութիւն, և ոչ ի մերոց
մտնուս մարտի՝ պարտէանս զրգիռ։ Գաւթնութիւն ինք-
նաբառ յաստնայնի չէ երբեք կարօտ ախտիցն օգնա-
կանութեան։ Ամ աւրեք ախտից և ուժգնութեան
պատ իցեն՝ ոչ զգրգռի բարկութեամբ, այլ խրախու-
սեալ արիութեամբ, և ըստ Հարկի պիտոյիցն յորդէ և
մեղմ գեանդնին. Հանդոյն իմն սլաքաց արձակելոց ի

նեռատիպոյց, որք ձեռինն ձգոյին հպատակեալ՝ բաս ազդեցոյ ՚ի նոսա զօրութեանն սպանան։

Արիատոհել կարևոր Համարի զարկութիւն, առանց որոյ չէ մարթ, ասէ, յաղթել դժուարութեանց՝ եթէ ոչ նովաւ լցցի սիրտն և վառեսցի ոգին։ Այլոյ պիտոյ զզօրական ունել զինս հրամայէ և ոչ պիտոյ զզօրավար։ Ահաւասիկ. զի եթէ անասցող է բանին՝ և նոցա առաքնորդութեանն երթայ գՀետ, ոչ ևս բարկութիւն իցէ, զի ահ սեփական է անասուածութիւն։ Ահ եթէ դիմադարձի և գՀրամայեալ նմա տեղին ոչ ունի, այլ բաս բերելոյ կրկին յարձակեալ դիմէ մոլեգնաբար՝ ոչ աւելի ինչ պիտանացու է յարբանեկութիւն ոգւոյն քան զզօրական անդրը ձայնի փողոյն յետադարձի։ Ապա ուրեմն եթէ կարգի և օրինաց Հպատակէ, յայլ ատեն անասանել գինս պարտ է և ոչ բարկութիւն, զոր ապերասան գոլ գիտեմ և անուսանելի։ Ահ եթէ չՀլպատակի՝ ՚ի նասակար է և ոչ նիզակակից օգնական։ Այ այսպէս կամ բարկութիւն չէ և կամ անպիտան է։ Օ՛ թէ իմդրէ զբ վրէժս՝ ոչ ցանկութեամբ վրէժխնդրութեան, այլ զի այնպէս պարտ է, ոչ ընդ բարկացողս Համարի այնպիսին։ Օ՛ օրական պիտանի է որ գիտէ անասել խորՀրդոց, խոկ կիրք և՛ ՚ի զինուորութիւն և ՚ի զօրավարութիւն միօրինակ անչարմանք էն և անպիտանք։ Ա՛ ասն որոյ մի առնուցու բանն յօգնականութիւն իւր զուժգին և գյախուռն բերմունս կրից որոց իշխել ոչ ունի և ոչ նուաձել գնոսա, բայց եթէ Համազօրս նոցին և Համանմանս դիմադրելով նոցա կիրս, որպէս բարկութեան՝ զերկիւղ, պղերգութեան՝ զբարկութիւն, և երկիւղն՝ զցանկութիւն։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Օ՛ն անդր յառաքինութենէ չարիքս այս՝ բանին ապատինել յախտին նպատս։ Ընդէ այնուհետև Հոգւոյն ունել խաղաղութիւն անվրդով։ Հանապազորդ խոովութեանց և մրրկաց նշաւակ կայ՝ որ ՚ի կիրս սխալուս ինդրեաց իւր ապատէն, որոյ ՚ի բարկութեան

է արիութիւն, ի ցանկութեան ձգտութիւն, և յերկիւղն հանգիստ։ Այլ որ միամ՛ի կրից ծառայանայ՝ չարչ է նման ընդ ծով լինել բռնաւորութեան։ Այլ չի՛ անթեղ ընդ խնամեք պաշտպանութեան ախտից կարգել զառաքինութիւն։ Զոտից ասել՝ զի թէ առանց կրից չիցէ իմիք բաւական բանին, ապա անկարող է ամենևին, և նոցին իսկ կրից հաւասարել նմանեսցի այնոցիկ տա։ Այանգի եթէ անխորհուրդ են կրքք և զաչացու. զկրկ գոլով ի բանէ, և բանն անգործ՝ զկրկ գոլով ի կրից, ել ընդհատք լցեն յիրերաց. երկաքանչիւր իսկ հաւասարք են՝ երբ և ոչ մին առանց միւսոյն կարէ լինել։ Այլ ո՞ հանդուրժեսցէ այժմ՝ կրից հաւասարել ընդ բանի։

Յարկութիւնն, ասէ, օգտակար է՝ եթէ ի չափն իցէ։ — Անաւանդ եթէ ըստ բնութեանն օգտակար իցէ։ Իսկ եթէ բնութեամբ ապստամբ է յիշխանութենէ և ի բանէ՝ այս աւելի շահ իցէ ի չափաւորութենէն զի ըստ նուազութեանն նուազագոյն և վնասէ։ Այսան որոյ չափաւորեալ կիրք չափաւոր չարիք են։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յ438 սակայն ընդդէմ ձեռնհասից կարելոր է, ասէ, բարկութիւնն։ — Ընդ իսկ ոչ. զի ի մեզաւի մանաւանդ ոչ չախտն խնդրի բերութիւն ոգւոյ, այլ չափաւոր և հլու։ Այսան է՛ր, ազէ, խուժքն բարբարոսք՝ հզօքք մարմնով և կորովիք և յաշխատութեան տոկունք՝ նկուն լինին առաջի մեր, եթէ ոչ վասն բարկութեանն որ անձամբ անձին վնասակար է։ Օտա սերամարտիկս գլխովին՝ արուեստին պատասպարէ, չարտարութիւն, իսկ բարկութենէն վտանգէ։ Այս դարձեալ՝ զինչ պէտք իցեն բարկութեան երբ զնոյն ինչ վճարէ բանն։ Այի՛ արդեօք և զորսորգան չհամարիցես բարկացեալս ընդ երկվայրիս մինչ փախուցելոյն պնդին զՀետև և եկելոցն ի վերայ՝ զիմանալեն արութեամբ. զայդ ամենայն առանց բարկութեան գործել բանին։ Օ՜ինչ զբիւրատրոն Ախիլլեայց և Ահեւտեանց որք զԱյաքեան

լերինն ծածկէին՝ այնպէս ընտրելով արար մինչև զոյժ կատարածին մեծի ոչ թօթաբեր՝ այլ Տաճեաւն ինքնին յաշխարհ Նոցա Տասուցանել, եթէ ոչ բարկութիւնն որ զարմեաւն առնուսս ունէր զանձի, բարկութիւնն՝ որ ոչ զգիմակաց միայն Տարկանէ սատակել քնաջինջ, այլ յաձախ ևս յանձին իւրում բերի ի կորուստ։ Ո՞ քան զԱերմանացիսն խրոխտ և քաջասիրտ, ո՞ բուռն և գոռ քան զնոսա ի յաղձակմունս, ո՞ առաւել պատերազմասէր որք ի զէնս ծնեալ և մանկին, և այնց եւեթ Հագ է նոցա՝ այլում՝ ամենայնի անհոգիք ամենևին։ Ո՞ ի բրև զնոսա տոկուն ի վաստակս և բրտացեալ յաշխատութիւն, որոց մեծաւ մասամբ և ծածկոյթ մարմնոյ ոչ է և ոչ պատապարան ընդդէմ գառնութեան ժմեսաբուռս ձմերայնոյ գաւառին, Հս սակայն զնոսա Ասպանիացիքն և Վաղղեացիք, Իսիացիք և Իտրիք՝ որք Թուլասիրեալք և անարիք ի մարտի՝ մինչ չև լեզհնին երևեալ՝ Տարեալ կոտորեն վասն բարկութեանն զիւրայաղթս զնոսա առնելոյ։ Ասյց արդ ազէ յայդ մարմինն պնդակազմ և յայդ կորով ոգւոյ որ զփափկութիւն, զզեղխութիւն և զձոխութիւն ոչ գիտէ՝ յաւել զՀանգարտութիւն մտաց, յաւել զԸրտհանգս կրթութեան. և զի մի վայրապար յերկարեցից, Տարկ է ինձ զնախնեացն Հռոմայեցւոց զգործսն երկրորդել։

Ո՞ւ իւիք Փաբիոս զանկեալ զօրութիւն տէրութեանն յոտին կացոյց, քայց եթէ զանդաղանօքն, յապաղմամբ և յերկարաձգելով, որք բարկացելոյն անծանօթք իրք են։ Ի մեռալուտ օրՀասական վտանգին կորուսեալ իակ էր պետութիւնն եթէ ըստ Թերադրելոյ բարկութեանն յանդգնագոյնս խիզախեր Փաբիոս։ Ասյց մեռ խոՀ եղև ի Հանգամանս տէրութեանն, կրաեաց զգօրութիւնս նորա, որոց եթէ այլ ևս Տասանէր վտանգ՝ սպառապուռ կորուստ աշխարհին ի վերայ կայր, ի քայ եդ զօրամոութիւն և զվերիժինդրութիւն և օգտասոյց պատճին Հանդիպելոյ ուշ եդեալ եկայ ակնկալոյց։ Նախ բարկութեանն յաղթեաց և ապա Ինիբալ։ Օ ինչ և Ակիպիոս. ոչ ապաքէն զՆինիբաղ Թողեալ և զբանակն Պունիկեան և զամենեսեան զնոսա ընդ որս զայրանալն նման պարս էր, և յԻբերիկ զպատեռբաղձին փոխադրեաց այնու զանդաղանօք մինչև զշուայ-

տէրոյ և զԹուլամարԹուԹեան տալ կարծիս չարասիրացու։ Օ՜ինչ և երկրորդն Վկիպիոն. ոչ ապաքէն բազմօրեայ ժամանակաք յերկարեալ նստուա՛ զՎ,ումանտեաւ դիմաՀարտեալ ՀանքերուԹեամբ ցասմանն իւրոյ և Հռոմ՛ ՀԱական ժողովրդեանն ընդ անագան նուաՃումն Վ,ումանտեայ քան զՎաքքեդոնին. և պատճառիակ պաշարմանէն Հարկեցոյց Հռոմ՛ ուրեմն զԹշնամիս ընդ իւրեանց տուր եղանել։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՎՉ ինչ ապա պէտք են բարկուԹեան ոչ ՚ի մըցանս և ոչ ՚ի պատերազմի. զի դիւրամՏա ՚ի յանդգնուԹիւն ՀԱ բարկուԹիւնն և այլոց կամեցեալ վՏասել՝ անձին իւրում՛ ածէ վտանգ։ Վսկապէս արուԹիւն այն է՝ որ անդամ անդադար շուրջ զիւրև պարադիտեալ զգուշանայ անձին և մեզմով և խորՀրդով խաղայ յաւաջադէմ։

Վսկ արդ զինչ, ասէ, ոչ բարկացի այր բարի եԹէ տեսանիցէ խողխողեալ զՀայր իւր կամ զմայր իւր Հափտեալ։ — Վչ բարկասցի. այլ վերՀ խնդրեսցէ, այլ պաշտպանեսցէ։ Վյս զի զանգիտես. միԹէ և առանց իսկ բարկուԹեան զդոյն ինչ իցէ բարեպաշտուԹեանն գրգիռ։ Վյս զինչ արգելուցու ասել Նոյնպէս. իսկ արդ զինչ. այլ բարի եԹէ տեսանիցէ զՀայր իւր և կամ զորդիս յօշոտեալ՝ ոչ ողբասցէ և ոչ լքանիցէ ՚ի սրտի, որպէս ստեպ պատահէ կանանց զի առ զոյզն կասկած վրանգի խոռվեալ վՀատին։ Վյր բարի զպարտս պաշտամանն իւրոյ ընու անվրդով և անսասան ամենևին, և ըստ արժանի առն բարւոյ գործէ զամենայն՝ ոչ ինչ անարժան մարդոյ գործելով։ Հայրն իմ խողխողի, պաշտպանեցիկ նմա. խողխողեցաւ, վրէժ խնդրեցիկ՝ ոչ առ բարկուԹեան ինչ, այլ զի այնպէս պարտք են։ Օ՜ այդոսիկ Հակառակաբանեալ քո, Վէսփրաստ, յատելուԹիւն զրգռել կամիս զոգիս ընդդէմ բարձրադունիցն վարդապետուԹեանց, և Թոզեալ զդատաւորսն՝ յորս շուրջ զբև կան լինիս ապաստան[1]։ Վյս զի ամե-

[1] Օրինակաւ առեղնական սովորուԹեան յարմարէ զբանն Պետրոսի. զի առեղաբանք զդատաւորսն Թոզեալ յաՏախ, և առ ժողովուրդն՝

նեցուն է ընդ այգպիսի աղէտս իւրայնոյն զայրանալ, համարիս զի զոր առնեին մարդիկ՝ զնոյն և աստեղքն սահմանեացեն օրէնս ՚ի կանոն։ Օ՚ի արդարև յորոց կրէին զբ՝ զնոյն արդար և իրաւացի համարի կիրս։ Կարկանաւն աղբ բարիք ընդ անիրաւութիւնն լեալ առ իւրեանցն. այլ բարկանան նոյնպէս եթէ ոչ ըստ պատշաճի և ըստ ժամուն մատուցի նոցա ջուր ջերմ՚, և եթէ բաժակն բեկանիցի, եթէ տիրմ զիջիկոք նոցա ցայտեցէ։ Այս ոչ եթէ ՚ի բարութենէ ինչ՝ այլ ՚ի տգիտութենէ զրգռի ՚ի նոսա բարկութիւնն այն. և նման են մանկանց տղայոց որք քան ընդ ծնողացն զընկուզացն իւրեանց ոգեան զկորուստ։ Այսոքան իւրոցն բարկանալ ոչ բարեպաշտութեան է գործ՝ այլ տկարութեան ոգւոյ։ Գործ մի գեղեցիկ է և արժանաւոր ըստ պատհանելի՝ հարկի պաշտամանն՝ ծնողաց, որդւոց, բարեկամաց և քաղաքակցաց կալ պաշտպան ոչ յախուռն և մոլեգնի բերմամբ, այլ կամաւ, ընտրութեամբ և խորհրդով։ Օ՚ի չիք քան զբարկութիւն՝ կիրք ցանկացող վրիժուց, վասն այն իսկ և անկարող ՚ի վրէժխնդրութիւն առ խորհրդակրոյս յանդգնութեանն, որպէս և առնացն ցանկութիւնք գրեթէ ուժգնին բերմամբն վրիպին յորոց ցանկանն։

Այսպ ուրեմն ոչ ՚ի խաղաղութեան և ոչ ՚ի պատերազմի օգտակար ինչ է բարկութիւն։ Օ՚ի ՚ի խաղաղութեան որպէս ՚ի պատերազմի կայ և ՚ի պատերազմի ոչ չիշէ զի Այրէս մարտուցելոցն առնեացն պաշտպան է. և ինքն անձին իւրում իշխել ոչ կարացեալ՝ ընդ օտարին մատի իշխանութեամբ։ Ցառել զի ոչ վասն այնորիկ ընդունելի ինչ իցեն ախտք, զի ուրեք երբեք գտան օգտակարք. զի և տենդք՝ հիւանդութեանց ինչ եղեն վանիչք, սակայն լաւ ևս էր եթէ բնաւ իսկ չէին ինքեանք։ Պատնագոյն քան զառնացն ազգս դեղոց է հիւանդութեամբ խնդրել զառողջութիւն։ Այսպ և

որ չուրջն կայր՝ զբանն գաթուղանէն մարգահաճելով խն զնոսա։ Որով առել կամք են մատենագրիս թէ Թէոփրաստ և Ճմեմակաք առ հասարակ զծոցվզիդեան կոզմն ունէն, զնոսա մանաւանդ քան թէ զիմաստասեան հաճել կամեցեալ։

1 Սովորութիւն էր առ Հռոմայեցիս ջուր ջերմ պատրել ՚ի սենեակ։

բարկութիւնն ուրեք էրբեք [illegible] անակնկալ և յիշա-
կարծ օրինակաւ գոյի օգտակար, որպէս և [illegible]ոյնն և
անկումնն և նաւաբեկութիւն, ոչ վասն այսորիկ կենս-
առիթ [illegible]ազուցի : Ազատում այն է, ի և [illegible]ասական
բազմոյք յիրաց և մանաւանդ՝ կենդանութեան ու-
րեք գոյն պատճառք :

ԳԼՈՒԽ ԵՐԵՔԱՏԱՍՆԵՐՈՐԴ

Վնարչեալ սեփական է բարւոյն զի լաւ առաւելու-
թեանն լաւագոյն ևս իցէ և ցանկալի : Այն է բարի է
արդարութիւն՝ ո կարիցէ ասել [illegible] նուազեցուցեալ ինչ
ի նմանէ՝ լաւ ևս լինի : Այն է բարի է արիութիւն, ոչ
զի ցանկասցի պակասեցուցանել ինչ ի նմանէ : Այլա
ուրեմն և բարկութիւն որչափ մեծ իցէ՝ նոյնչափ և լա-
ւագոյն . զի ո՞ր չառաւելութեանէ, բարւոյն խորչեսցի :
Այսպէս արդ առաւելութիւն բարկութեան չար է, ասա
և ինքն գլխովին : Այն բարի որ առաւելութեամբն փո-
խի ի չար :

Պատակար է, ասէ, բարկութիւն, զի զմարտիկն
գոնա առագրէ ի պատերազմ : — Ոչ այդմ ասա և
սրբեցուսութիւնն, զի ապառումն գործէ և յանդգնու-
և բազումք չուայտեցան՝ յանդգնագոյնս արշաւեցին ի
սուր : Այլպէս և զմտերնութիւն և զհեղգութիւն
կարևոր ասիցես ի զօրութիւն, զի բազում ուրեք ու-
ժաւորս ներգործէ կատաղութիւն : Այլ զինչ . ոչ և
երկիւղ իսկ երբեմն չաւելու զյանդգնութիւն . և մա-
նաւանդ երկիւղ զկարի իսկ վատս ընդոստացեալ զար-
ձոյց ի պատերազմ : Պակասն և բարկութիւն և ար-
ձացութիւն և երկիւղ՝ ամենայնիւ և վեր ի վերոյ
գրգռեալ են և ոչ սատարք առաքինութեան, որ անկարօտն
է ախտից օգնականութեան . և զսպաւոնն և զվատս
ոգւով առ վայր մի ևեթ գրգռել գրգռէն : Որ առանց
բարկանալոյ արի ոչ է՝ զնա միայն արիագոյն գործէ
բարկութիւն : Այսին իրի ոչ սատար գայ արիութեան
այլ ի փոխանակել զնա : Ասոյցից ասել՝ զի [illegible] բարի
ինչ էր բարկութիւն, Հարկ էր գտանիլ այնմ յայր ա-

մեծակատար, ուր ընդ հակառակն՝ մանկունք, ծերք և հիւանդք առաւել բարկասիրք են, և որ տկարագոյնք են բնութեամբ՝ տրտնջոզք են։

ԳԼՈՒԽ ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ընդ մարթի, ասէ Աւետարանն, առն բարւոյ չբարկանալ ընդ չարս։ — Իստ այդմ ապա որչափ լաւագոյն ոք է՝ նոյնչափ և բարկացող լինել նմա հարկ իցէ։ Տես մի արդեօք ընդ հակառակն առաւել հեզագոյն և ազատ ի կրից և ոչ ումեք ատեցող։ Իսկ զմեզուցեալսն զի կայ նոցա և առելոյ, երբ ի մոլորութենէ վարեալ բերին նոքա ի յանցանս։ Ընդ արժան իմանանոյ ատել զմոլեալսա, ապա թէ ոչ և անձամբ զանձն ատիցէ։ Յուշ լիցին նմա որչափ ինչ գժպատեհ և հակառակ վարուց բանեաց գործեալ իցէ, և որչափ ինչ նեղութեան կարօտ։ և հարկ է զի անձամբ անձին բարկասցի։ Պատուոր արդար ոչ այլազգ զանձնէ և այլ զայլոյ գտուր գտատատան։ ոչ ոք է, ասեմ, որ կարող իցէ արձակել զանձն իւր։ և ամենայն ոք անմէղ ասէ զանձն ի վկայութիւն մարդկան ապատատան և ոչ բան մնացն խղճի։ Իսանի մարգապետքդ իցէ հեզ և քաղցր առ մեզուցեալսն զոլ՝ յետս գնասա ածելով յաղդութիւն, և ոչ եթէ հալածել։ Ընչ լաւ և իցէ զնոսրեալն յանդի անպիտութեամբ ձանապարհայ՝ յաղիւն ածել պղտոտայ քան ի բաց մերժել։ Իչա և զմեզուցեալն ուղղել պարտ է խրատու և զանխ, մեզմով և խաստութեամբ։ և անձին իսկ և այլոց լաւ և պիտանի գնա առնել՝ ոչ առանց պատժոց, այլ առանց բարկութեան։

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Իսանց, ասիցես, անուղղելք են, և ոչ ինչ բարւոյ ակնկալութիւն է ի նոսանէ։ — Իարձցին ապա ի միջոց մանկանացուաց ժանտքն ապականարարքը այլոց։ և միանչ այնու ձանապարհաւ պրով մարթի է՝ դադարեսցեն ի չա-

բնայն իբրեւանց. և այս առանց առերեւթեան։ Այլ ընդ
դէմ քոնաւ առիցեմ զնա որում բարեբարեմս մեծապէս՝
յանձնէն զնա զերծուցեալ։ Այնքան առեայ զք զան-
դաման իբր յոյժ ամ՛ի բաց Հատանել. ոչ բարկութիւն
է այն՝ այլ բժշկութիւն ինն ազեւտրի։ Օ չանս կա-
տաղիս սպանանելոյ, զարջառ վայրագ և զանընդել՝ ի
սպանդ վարելոյ, և սխտացելոյն ի խաչանց՝ զի մի գՀօտ
վարակեացեն՝ սուբ՛ի վերայ ածելոյ. զայրանալ վիժած-
սըն ընկրկանելոյ և զձնդոցս իսկ սկզբոյ զանկածան
և զսխեզձս հեղձուցանելոյ՝։ Այսոյն և ոչ բարկու-
թիւն Թէպտրկ մեզ զանպիտանն՝ ի պիտանեաց՝ ի
բաց պրծել։ Այլ ինչ այսպէս վայելուչ պրամ պատճէն՝
որպէս անվնդով կալ՝ի բարկութենէ. զի զրչաւ Հան-
դարտութեամբ մնալոյ տալոյն պատիժք՝ դոյնչափ առա-
ւել օգտակարք իցեն յաւղղութիւն։ Այլին իբր ասաց
Մովսէս ընդ Ծառայն. Հարկանեմ՝ Թէ չէր իմ ցաստա-
կեալ։ Օ Ծառայն խրատ այլում է՛ծոյ պահ՝ և՝ի
ժամուն անձամբ զանձն խրատեաց։ Այր ուրուք բա-
րեկարգ իցէն կիրք՝ յոյժամ Մովսէս ինքնին վիրհա-
տալ զանձն՝ի բարկութիւն։ Այսպա ուրեմն ոչ ինչ
պէտք են բարկութեան՝ի պատուհասել զանդրեալս և
չչարագործս առ՛ի խրատ ուղղութեան. քանզի և բար-
կութիւն սխտ ինն է Հոգւոյ, և չէ օրէն սխտացելումն՝
սխտից վնասել ուղղիչ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Լսեմ արդ որպէս, ոչ բարկացայց ընդ աւազակն, ոչ
և ընդ գեղատուն։ — Այ, զի և ոչ ընդ իս ցանուատ՝ յոր-
ժամ տամ երակ Հատանել։ Օ ամենայն ազգս պատ-
ժոց որպէս գեղ՝ի վար արկանեմ՝։ Գոտ գեռ ևս՝ի
սկիզբն ես սխալանաց, չէ ևս ծանուն՝ բայց յառնախա-
գոյնս յանցանես. նախ ծածկաբար ազդեցուԹեամբ և
ապա յայտ յանդիմանուԹեամբ փոքձեցից ածել զքեզ

՝ Խժական և նզովելի սովորոյթ էր հեԹանոսաց յառաջել առ
Ցոյնս և առ Հռովմեացիս, զոհեզձ և զանկելոպատ ծնունդս իւ-
րեանց հեղձուցանել և կամ՛ի բաց ընկենուլ։

յուղալութիւն ։ Խակ քո հնացեալ և յառաջացեալ է՝ ի չարիսդ և յանդիմանութիւնք քեզ ինչ ոչ օգտեսցեն յուղալութիւն և ոչ խայտառակն լինել ։ ուժգնացոյն ևս և ազդու դեղովք հարկ է խոշտանգել զքեզ և՝ ի վայրս անճանաչս տարագրել ։ Եւ քո հաստատմամբ սկզբանէ յանօրէնութեան՝ խստագոյն դեղոց քեզ պէտք են բանտից և կապանաց ։ Խակ քո անբուժելի է սիրտ՝ չարեաց՝ ի չարիս գահավիժ ։ զի ոչ երեք պատճառանաւք՝ որ ոչ պակասեն երբեք չարաց՝ բերիս յանօրէնութիւնս, այլ շատ խակ և հզօրագոյն քեզ պատճառք մեզանչելոյ՝ նոյն ինքն մեզանչելն է ։ Վնասելով արբեր զանզգամութիւն, և այնպէս թափանցանց յերակունս ընդ արեան քում խառնեալ է՝ զի նուաւա հանդերձ հարկ է երթ փախեցի՝ ի դուս ։ Եւ բազմոց Հեաւէ, ով Թշուառական, ՝ի ինդիր ես մնալոյ, քանզ է՝ արասցուք քեզ զայդ ընդ Տէր, բուժեսցուք զքեզ ՝ի մոլեգնութենէ այսի որ լլկէն զքեզ ։ ՝ի պատուհաս անձին և այլոց կեցեր յարդ, և արդ զմիայն բարւոյն որ ինայ քեզ, ընդհեսցուք զմահ ։ Օ մէ բարկացայց որում բարեբարեմն մեծամեծ ։ Է ուրեք զի գթութիւն մեծ և վայելուչ սեպհականեալն է ։ Եթէ կիրճ և Տմուտ արուեստին՝ դէպ լիներ ինձ ՝ի հիւանդանոց ուրեք մտանել կամ՝ ՝ի տուն մեծատան՝ ոչ գնոյն պատուիր տայի ախտացելոցն առնելոցն պէս պէս խօթութեամբ ։ Խստ այլ և այլ տեսանել յայն չափ բազմութեան հոգւոց, և ինձ որ ՝ի բժշկութիւն կարգեալս եմ քաղաքի՝ դեղս ըստ իւրաքանչիւր ախտից ինդրել պարտ է ։ Ոմն ամենայն բուժեսցի, այլ ոք տապրութեամբ, ոմն ցաւովք, այլ ոմն կարօտութեամբ և այլ ոմն սրով ։ Խրդ Թէպէտ և զձև և զկերպարանս դատաւորի արկեալ զանձամբ և ՝ի ձայն քարոզի փողոց Համախմբել զամբոխն հրամայեցից, բայց ոչ զայգագինս և սրամտեալ երեմայց յատեան, այլ ՝ի կերպի օրինաց ։ և զատեհնականն զայն ձև բանից լուծք և ազդու բարբառով այլ ոչ խստագոյնս առից բարբառել ։

1 Քանզի զայնու ժամանակաք ՝ի տունս մեծատանցն Հաւմմայեցւոց գունգագունդ յատեանին ծառայք, որպէս ասէ և Պլինիոս, յայնչափ բազմութեան Հարկ էր և ախտացելոցն յատեանէ՝ նմին իրի ոչ վայրապար առ հիւանդանոցին և զատնս մեծատանցն յատելու կարգել մտենագիրս ։

ձայն տայ գահՃին ոչ բարկութեամբ այլ ահարկու ձեռով։ Իբր յորժամ գլխատել զքնաստպարան հրամայեցից, ի քրձի զՀայրապետին փակել, ի պատուհաս զնուռբական տալ զազրականն, ի Տարեւանն ժայռ[1] հանել զմանեիչն և զՀաստատակաց թէնեմին, այնպէս անվզռով կացից ոգւով և անխռով կերպարանօք որպէս եթէ զմունաւոր օձս ջախիջեմ և զքնաստակաց կէնդանիս։

Բարկութեան պէտք էն, ասես, ի պատուհասել։ — Տայց զնաթրդ թռչ քեզ, միթէ օրէնքն բարկանան որոց ոչն ձանձրանան, զորս ոչն տեսին և զորոց չկարծեն իակ բնաւ եթէ լինիցին։ Իբր մեզ ասպա պարտ է առնուլ զկերպարանս օրինացն, որ ոչ բարկանայ՝ այլ օրինադրէ։ Օ ի եթէ արժան իցէ առն բարւոյ բարկանալ ընդ չարագործս, ապա և ընդ յանցաւորութիւնս ամբարշտաց։ Օ ի զինչ այնպէս զժպատեմ՝ որպէս արժանաւորացն ամենայն չարաբախտութեան բարգաւաճել առատաձեռն պարգեւօք բախտին և չարայար վարել նոքօք. բայց այլ բարի որպէս ի բարօրութիւն նոցա անընախանձ հայի, նոյնպէս և յերջանկարութիւն նոցա առանց բարկութեան։ Պատուար բարի՝ զատապարտել այո զանարժանս, այլ ոչ առեալ։

Օ ինչ ասպա. այր իմաստուն տեսեալ ինչ յայդպիսեացդ ոչ զգայցէ ինչ ի սրտի և ոչ վրդովեսցի ամենևին։ — Օ գայցէ այո ոչ ժխտեմ՝ զգայցէ զդոյզն և զթեթև խրտումն սրտի. զի որպէս ասէ Օհեան, Իբր ի սիրտ նմանոյ ի վիրացն խակ բժշկել ձեան սպիք։ Հեռ իմն և տաւեղք կրից էն ի նմա այլ ոչ և կիրք։ Քրիստոսել զմանս ի կրից իբրև զհոս տեսեալ մարդոյ եթէ գիտիցէ վարիլ նոքօք որպէս պարտն է։ Ձնմարտութեամբ արդեօք էհն ասացեալքն եթէ մարթի ինչ էր և գկիրս հանդոյն մարտացու զինուց առնուլ զանձամբ և ի բաց գնել ըստ կամն վարողին նոքօք։ Իբր զինք զորս Քրիստոսել ընձեռեաւ առաքինութեան՝ ինքնին իւրովի մարտնչին առանց ձեռին չարժողի, վարեն և ոչ վարին։

1 Տարպեան ժայռ էր ի բլրին Կապիտոլիոնի ուստի գահավէժ զնանիչան առնէին։

Աչխոյ գինուց մեզ չէն պէտք, շատ իսկ սպառազէն նեաց զմեզ բնաւթիւնն բանիւ. զայն ետ մեզ զէն անվանելի, յաւէրժական, անեղկեանս, չկու և անպիտանի զգած և անշիտաս ձեռինն վարդոյն։ Ոչ անն ինքնին բաւական էր ոչ ի խորհել ևս զայլ և ի գործել։ Այլ զինչ անմտագոյն կայցէ՝ որպէս բանին խնդրել օգնութիւն ի բարեաթենէ. այնմ՝ որ անզգուշութիւն է՝ ի յոգիս յոգիէն, որ հաւատարիմն է՝ ի զրժողէն, և որ առաջին է՝ յախտապատճառն։ Այս և յայն ինչ իցս, յորս ևեթ կալ զի որ հաւարի ձեռնտուութիւն բարեաթենեան՝ բանին ինքնին յոյժ զօրաւորագոյն է, զի հաստատեալ առնել ինչ՝ անգուսթեամբ հանապազորդ ի նոյն. քանզի և չարել նմա լաւագոյն քան զինքն գոլ զի փոխացի. նմին իրի իսկ անսասան կայ յառաջադրութեանն իւրում։ Իսկ բարեաթիւն բազում այն է զի յաղթեալ ընկերկի ի գնութենէ. զի չէք իւր զօրութիւն տեսական՝ այլ փքացուեն և սին։ Ուստի և ուժգին ի սկզբանն է՝ ոչ ընդհատ ինչ ի հոգւոյ յարուցելոց յերկրկէ, որ ի գետոց և ի ձախճոյ առեալ թափ չընչէն ուժգին և զադարեն առժամայն։ Հանգոյն նոցին ևՃամ թափով սկսանի և բարեաթիւն ի վազ ընդ փոյթ չիջանի պարտասեալ. և որ զանգութիւն և եթ և զազգս ազգս անցուր պատուհասիցն երկնէր, ի գործ անդր մատուցեալ՝ մեզիկ և թուլասոյ։ Վերք վաղվաղակի թողանան, բանն հաստատուն է՝ Այս ևեթ և ուրեք երբեք տեսական խոկ բարեաթիւն՝ ի բազմոյ փնաստպարիչ զերծուցն և զերծոյ հեղեալ զարիւն, գադարել ի սպանանելոյ։ Ախտիկն նորա հարուածք գժնդակք են. որպէս օձիցն նախայարձակ սողելոց ի խոտեաց փնասակարացոյն են թոյնք, և ըստ յանձնելոյ նոցա ի խածուած՝ առանձնոյն սպառեալ այժ ոչ ևս վնասեն։ Այլ վասն այնորիկ հաւատալուածս յանցուցելոյն չէ հաւատար և պատուհասն, այլ շատ ևս այն է՝ զի յանցուցեալն սակաւուք՝ պատուհասի մեծագոյնս նա խապարձակ թափոյ բարեաթենեան պատահեալ։ Ուր պարզաբար՝ ոչ ուրեք ի չափոն կայ. մերթ անդր քան զարժանն վազեալ անցանէ, և մերթ յայսկոյս զկայ առնու. քանզի զանձն իւր խնդրէ հաձել ըստ քիմս գաւի զամենայն և անտել ումեք ոչ կամի և ոչ իրաւանց

ութք տալ տեղի . պինդ ունի որոց հետամուտ է , և չառնու երբեք յանձն ՚ի չարեացն իսկ խորհրդոց կալ ՚ի բաց : Ոչ ոք լսէ երկուստեք և տայ նոցա ժամանակ . ինդրէ իւր պարագայ և հնարս ՚ի խնդիր ձըզմարտութեան , իսկ բարկութիւն շտապի : Ոչ ոք արդարութեամբ կամի դատել զամենեսին , իսկ բարկութիւն զոր դատեցան զայն արդար համարել : Ոչ ոք յառաջարկեաւն և եթ խնդիր կայ մտադիր , իսկ բարկութիւն բազում մտոտի և օտարոտի իրօք վերովի : Այրեաք ազատադիմ , բարբառ հանդարտաձայն , անվեհեր բանք , յարդարուն կերպարանք , հզօր պաշտպանութիւն և սէր ժողովրդեան զրգռեն զնա և նա : Ազատիմ այն է զի ընդ պաշտպանին զայրացեալ զամբաստանեսցն դատապարտ , և թէպէտ անկայական և մերկապարանոց հանդարտութիւնն կացցէ՝ հաձի նա ընդ մեղսութիւնն և ջատագով կայ այնմ , չառնու յանձն զպարտութիւն . և ՚ի սխալելն իսկ չարաչար՝ լու համարի գյանդուգնութիւն քան զապաշաւ :

Ահեռս Պիտոն առ մեօք եկայ այր բազում մասամբ կատարեալ , այլ այնու մեղսերբ՝ զի գյանդգնութիւն կարծէր գոլ արիութիւն անյողդողդ : Ամբաստեալ սորա երբեմն՝ հրամայեաց ՚ի մահ վարել զզօրականն , որ միայնակ զաձեալ գայր ուստի երթեալն էր , առանց իւրոյ զինուորակցին . համարելով թէ սպանեալ իցէ զնա զոր առաջի առնել ոչ կարէր : Յազատեաց զնա զօրականն ժամ տալ նմա ՚ի ցուցանել զարդարութիւն իւր . այլ ոչ լուաւ նմա Պիտոն : Ջնաւ դատապարտեալն արտաքոյ բանակին , և այն ինչ մատուցանէր սրոյ զպարանոցն՝ և ահա երևեցաւ անդ յանկարծ զինուորակից նորա որ ի մեռեալն համարէր : Յայնժամ հարիւրապետն ոչ ՚ի վերոյ կայր պատուհասին , հրամայէ դահձին զարձուցանել զսուրն ՚ի պատեան իւր և զմահապարտեալն առեալ ածէ առ Պիտոն զեկուցանել նմա զանմեղութիւն զօրականին յոր ինայեաց բախան : Ջնաւ զինուորակիցքն երկոքին փարեալք զմիմեանցք ՚ի ձայն աղաղակի ցնծութեան բանակին՝ որք խուռնելեաց ամբոխիւ գՀետ ընթացեալ : Ոչ նստաւ Պիտոն յատենի լը ցասմամբ , և հրամայեաց ՚ի մահ վարել զերկոսին իսկ զօրականն , զնա՝ որոյ չէր սպանեալ զընկերն , և զնա որ ոչն էր

սպանեալ յինկերէն։ Ոչ զինչ խժդժագոյն քան զայս, զի յանպարտ երևեալ միոյն՝ կորիցէն երկոք։ այլ Պետն և վերրոդն յաւել ի նոսա, և զնոյն ինքն զՀաբրահամեան՝ որ առեալ զարձոյց զնահապետն՝ հրամայեաց վարել ի մահ։ Այնմ կացուցին ի մի վայր կորուսանել և զերեսեանն վասն միոյն անմեղութեան։ Ահաբէ, քանի խորագէտ է բարկութիւն ի հայթայթել պատճառանս ցասմանն. Օքեզ, ասէ, մնատնեմ ի մահ զի գտատպարտեալ ես. և զքեզ՝ զի պատճառ գտատպարտութեան զնուազագիդ քոմ գտար, և զքեզ՝ զի հրամանն առեալ սպանանելոյ՝ և սպասպեսին ոչ անասցեր։ Խնդրեաց հնարեցաւ յանցանս երիս ձարտարել ընդ միումն զոր չէր գտեալ։

Ա, է այս արդարև մեծապես չար բարկութեանն՝ անընդունակ գոլ սանձից և ուղղութեան։ Ձանապատութեան իսկ ընդդէմ աքսոյ յորժամ հակառակեսցի կամաց իւրոց, և ազմկաւ և աղազակաւ և բռնադրակ մարթիցէն տատամնամբ և անիծիւք և թշնամանօք ի վրէժ բերի այնպիսի որոց հետամուտն է։ Եւ այդպէս առնէ բանն, այլ ի տոհմել Տարկին լսիկ և հանդարտութեամբ զառնոյ ի հիմնոյ տապալել, զազգատոհմն ժանտախտս հասարակաց՝ կամաքեր և որդւովք կորուսանել և զարկս նոցա Տարթ այատակ կործանել, և զանոն թշնամի ազատութեան ջնջել անհետ։ Ոչ զայսպիսիկ զործէ ոչ զատանհան կրձնալով, ոչ զգլուխն շարժելով և ոչ մի ինչ բերելով յինքեան ցոյցս անվայել զատաւորի, որ որչափ մեծամեծս հրամանատու լինի՝ նոյնչափ և հեզ և անայլայլակ պարտի գոլ զինքն։

Օ ինչ պիտոյ է, ասէ Հրոնիմոս, մինչ չև Տարեալ զոր՝ նախ զքո շրթունդ խածանել. իսկ զինչ եթէ տեսանէր նա զիսխանալ բզեզին յատենէ անտի ի զուրս ուռուցեալ և զնուրթս ի ձեռաց զահձացն յափշտակել և զնոր Տանդերձն պատառել զի յատի և անագան պղտին պատառէին։ Օ ի է քեզ կործանել զբեզդն, զբաժակս Տարկանել զգեանի, ընդ սիւնս ընդհարկնել, զՀերս ցեխել և զծուխս բաղխել և զկուրծս։ Արպիսի՞ աշագին բարկութիւն իցէ՝ որպ ոչ կարացեալ վազգոյն՝ որպէս կամէրն՝ մոլեգնել յայլս, յինքն յարձակեսցի. մինչև մերձաւորացն ազաչել զնա զի խնայեսցէ

յանձն իբր և հանդարտեսցի ։ Ալ ինչ յայդպիսեաց գործէ այլ ազատ ի կրից բարկութեան . իւրաքանչիւր գործանեին ի վերայ ածէ պատուհաս ։ Խազում անգամ Թողու արձակել զմերձնաւան ի յանցանս , սակայնաւ Թիեն իմն բարեաց տեսեալ ի նմա զընդ չարիսն ապաշաւ . կամ խելամուտ լեալ զի ոչ խորամանիս բռնանալ է ի հոգւոյ նորա անզգամութիւն , այլ վեր ի վերոյ իմն Թէ այսպէս օրէն իցէ ասել՝ չիեալ ի նա ։ Շարչէ զպատուհասն՝ յորժամ ոչ նմա որ չարչէն և ոչ ինքն չարչէին ի միասս իցեն չարչէքն ։

Ա՛ ուրեք զի զմեծերեսն ոՀիրա Թեթևասլոյն քան զինքնաբնոյն պատուհասէ՝ յորժամ վրիպակաւ և ոչ ա նադատոյն մեռք ծանուցքն իցեն գործեցեալք , և ի վա քանման տեսանի գազանածածուկ իմն հնացեալ և խո րամանկ չարութիւն ։ Օ՛նոյն յանցաւած ոչ նոյնօրինակ պատուհասէ յամենեսին՝ եԹէ ի միասին անհրաժա Թեան իցեն արդասիք , իսկ ի միասին չարահամաձԹեան առ ի միասս ։ Օ՛այս միտ ի պատուհասեին դիպէ զբ ի մոի պիտէ՝ զի կամ յուղղութիւն չարաց և կամ ի բաբ ձումն կարգին պատուհասք . և յերկրսեանն իսկ ոչ յան յեալն հայել պարտ է այլ յապագայս ։ Օ՛ի պարէս ասէ Պղատոն . Ո՛չ ըստ խնամատեն ոչ զոր պատժէ զի մե զաւ , այլ զի մի մեղեսցէ . քանզի զանցեալս յետս ընկրկել անհնար է , այլ զլինելոցն խափանել հնարաւոր ։ Ո՛չ զորս յօրինակ զպատուհասէ չարագործաց կարգել կամիցէ՝ հրապարակաւ ի տեսիլ ամենեցուն սպանցէ , զի ոչ միայն կորուսցեն ինքեանք , այլ և զայլս ընկրկես ցեն անդէ ի կորստենէ ։ Ո՛ըդ որում զայս ամենայն կրշ ռել և ընտրել առաջի կայ՝ տես Թէ որպիսի անխոով ազատութեամբ մեզ պարտ իցէ մտանել ի գործ մի դժուարին և բազմախանգ վարելոյ վիշտնութեան կե նաց և մահու ։ Ընդ է սուր ի ձեռս տալ բարկացողին ։

Ո՛չ ոչ առ մեծամեծութեան կարէաք ինչ համարես ցիս զբարկութեան , զի ոչ եԹէ մեծութեան՝ այլ փքա ցումն ածէ սրտի ։ Ոըպէս և ոչ մարմնոյ ուռուցելոյ ախտարծարծ հիւթովք՝ ի գիրութեան համարեսցի ախտն , այլ ի յորդութեան մահաւիթ ։ Ո՛ևնեքին՝ որպ ցնորելոն միտք վերամբարձ քան զհասարակաց մարդկան զխորհուրդն եղեալք , կարծեն բարձանա

ինչ և գերագոյն երկիւղ յանձնիս իբրեւ պայ-
ման ամենայնի վերանալոյ ։ Ոչ ի վերայ հի-
ման հաստատուն վերանձառան՝ հաւատ ընդ հոգի կոր-
ծանեալոյն ։ Խարիսխ հաւատ չէր հիմն հաստատուն հաւատոյ
և ոչ պնդութիւն տեսական, այլ փրկիչն և հոգեւոր
այնչափ հեռի է ի մեծասքանչելին՝ որչափ յան-
դգնութիւն յարութեանն, յանձնապատրաստութիւն
ի վատահութենէ, խոստովանութիւն ի խոստանալէ,
անդամութիւն յանապատութենէ ։

Հազագինչ խորհի տեսիլ ընդ վիշտն և ընդ տխ-
րութեան ։ Ոչ ինչ վասն և ապրեցական երկիւղ բար-
կութեան ընդհակառակն՝ ինձ այսպէս թուի զի տեսիլ
գիւտ կամակատարութեան ցոյց իմն է հիւծացեալ և երկնչեալ
հոգւոյ՝ որ գիտայն իցէ տկարութեան իւրոյ ։ Օ որ օ-
րինակ մնալին ցատգնեալ վերջը գոյն հոգւոյ ձեռնհաս
հանդարտել, քան այսմ և բարկութիւն կանայի և տը-
գայական տիտ է ։ Ապայ և արանց գնալ վնաս բարկանալ,
զի և նոքա տղայաբարբոյք են յանձին և կանացի բնու-
թիւ։ Ոչ տես բարբառս ինն ի բարկացողսն է լսել, որք
մեծանձնութեան արդեօք թուեցին որոց այն գիտեն
են զինչ խոպապս մեծանձնութիւն իցէ, պարտ խր-
ժականն այն բարբառ և գժոխալեզք ։ “Ասաց տեսչին՝
միայն են զանգիտեցին ։ բարբառ արդարոյ Ոխրոյ
գարան արժանի ։ Ոչ չգիտեմ են որ կերկաց որոց ցան-
կայր բանասիրն՝ չարագոյնն իցէ, տեսչին լինել, են ա-
նարկու ։ “Ասաց տեսչին ։ — Ոչտա և զգուեցին իսկ,
գուեցին և կարուցին ։ բայց տես ինձ՝ ով արդարա-
գան գիր, տես զինչ արժանի տեսչութեան փախարկնս
ի վերայ տնէ ։ Ասաց տեսչին՝ միայն են ։ ։ ։ զինչ ։
Տեսանդգեցին արդեօք ։ — ոչ ։ գովեցին ։ — ոչ ։
Ոչ զինչ ապա ։ — Ոչիայն են զանգիտեցին ։ զի
պարտեցաւս այսուիկ և ոչ սիրելի գոյ կամիմ ։ Ոչգոյ մի-
են մեծանձնութեան են տեսչի քեզ բարբառս ։ խոս-
բիս ։ զի ոչ մեծանձնութեան է, այլ անագորոյն մեռոյ ։

Ոչի հաւատար բանիդ բարկացողսդ, որոց պատրն
գուտ բոլորիւք տպատնեալ են և սիրտ անարի ի հներ-
քոյ ։ Ոչի և բանիդ հաւատացեալ պերձախօսն առնն Ոչ-
խոսի որ ասէն. “Ոչայլ մեծ հազոյ քան բաւութեան ։ ։
Ոչանգի անմերձի է երկուց այսոցիկ բաժանիլ յերկ-

բաց, զի որ մեծն է Հոգւոյ Հարկ է Ձեզ և լաւ իցէ, և կամ Ձեզ և ոչ իսկ Հոգւոյն մեծ։ Այլ մեծութիւնս իմս ինձ զանզգուշելն զայն որ ի Հոգւոջ Տաճարիս ամբարեալ ի վեր, յորմէ անբաժ են չարաբարոյ։ Արդեօք է չարաց աշխարհս զոլ, ապականեցեալ և փոսախոր, այլ զիրկս ամենեցուն ի մեծութենէ անտի ոչ ամենայն զօրութիւն և ամրութիւն ի բարութեան է, Տաճարատեալ, Ձեզ պէտ և բանիւք և Ձգտիւք և ամենայն արարուածոյդարգոյ երեւեցութիւն զմեծութեան կերպարանն բերիցեն։ Արտեսան բանիւք որք մեծ իմ ուսեցին քեզ Ձերիս, որպէս Կայիոս Կեսար՝ որոյ յաստիճանել ընդդէմ երկրին զի արտաքսէ զհամայնսին վտանգիւք զինքնակատին, զորոյ Ձգրատիպ քան զոհ սիրն բերեր զնմանութիւն, և զի տարաբեպ կշռութեամբ չանէին փայլատակից զիարեանձնակիցս իւր պահպանեալ՝ Ձայն եղ Վիտոյ ի մայր անմուռիք զՀռոմիրն գոչելով զոյգ,

Կամ զոյս քարձ, կամ ես ըզքեզ։

Այլ մեծի խելագարութեանն. Համարեցաւ արդեօք զի և Վիտոյ չիցէ մարթ սանանել ինքեան, կամ Ձէ ինքն կարող իցէ սանանել Վիտոյ։ Այլ ոչ սակաւ, որպէս կարծեմ, ազդեցին բանքն ի զրգռել զոգիս միաբանել լոյն ընդդէմ նորա. քանզի անարքենելի Ձուկեցաւ Հանդուրժել այնմ՝ որ ոչ Հանդուրժէր Վիտոյ։

Այս մեծի ինչ ապա և ոչ ապատականի խիղ ակրն կալութեան է, ի բարկութենէ, Ձէպէտ և բաւն իցէ և ուժգին և տաստուածոյն իսկ և մարդկան ընդդէմ կրքեացի։ Իսկ Ձէ Հանդոյ ումեք Ձուկեցի զբարկութեան ծնող սաէլ մեծանձնութեան, զնոյն Հարկ իցէ սաէլ և զդեղութենէ, որ ի փղոսկրեայս ցանկայ Հանգչել, Ձիբանիս զգենուլ, յակիս Համակիլ, զերկիր ի Ձով փոխադրել և զՁով երկրաս պարադրել, զգետս զարաւիժ բնեզացուցանել և անտառս բնդ օգս կախել՝։ Օ՜ նոյն Հարկ իցէ սաէլ և զագահութենէ զի ի կոյտս ակուց և

1 Ի տանէս տանց ուր պարակս անկեին, որպիսիք և կոխագանաւ պարակդին էին։

արծաթոյ վերաբազմի, զի ազարակս ըստ գաւառաց ձիակ, զի ընդ ձեռամբ գաւառապետաց ընդարձակս պոյծ սահմանք էն վիճակաց նոցա քան զոր երբեմն հիւպատոսաց։ Օ՞նոյն ասել իցէ և զտափանաց որ ընդ ծովս ի լոզ անցանել, որ վշտյլս մանկտւոյն ներբինացուցանել, և որով վնաս արհամարհեալ հնոջ ընդդէմ որոյ առնն խիզախել։ Օ՞նոյն և զիատամնուլթենէ, որ տարեւորական իշխանութեամբ ոչ չատացեալ՝ յանկոյ ձէ մարթինչ իցէ զամենայն պերձութիւն իշխանութեան չինքն ունել և փառաւք անուան իւրոյ ընել զոհեգերս ամենայն։ Ա՛յլ այս ամենայն յանկութինք թէպէտ և յանթաւս ընդարձակեալ ձիտեացին՝ սակայն անձուկ են չինքեանս, հեգ և նկուն։ Ա՛զաքինութիւն միայն գերազանց է և վսեմ, և առանց անդորր խաղաղութեան հոգւոյ չկր մեծութիւն։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՅԱՂԱԳԻՍ ԿԵՐԿՈՒԹԵՆՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ա՛ՌԱՋՆՈՑ գրոց, ով Աստուած, հեշտին կին բանք. զի զիւրին են ախտիցն ընթացք ընդ զառ ի վայր. այլ արդ ժամէ ի ներքինն մատչել, Վանդի խնդիր առաջի կայ մեզ՝ կամաւորաբար արդեօք եթէ բնաւորապէս ծնցի ի մեզ բարեմտութիւն. կամ թէ ասել, կամաւորդեօք և գիտութեամբ՝ եթէ հանգոյն այլոց ինչ բազմաց որ ի մեզ ներգործին, յանգէտս մեզ զրգռիցի և բարեմտութիւն։ Վանդի և ի խնդիրս յայսոսիկ հարկ է իջանել, զի անդուստ ապա և ի բարձրագոյնն թևակոխեսցէ բանս։ Ա՛յ հա և ի մարմնի իսկ մերում ոսկերք և ջիղք և յօդք՝ անարգագոյնքն տեսլեամբ՝ այլ հիմունք հաստատութեան կազմուածոյն և կարևորագոյնք ի կենդանութիւն բոլորին, յարդարեալ կազմին նախ, և ապա որ ինչ ի գեղ և ի վայելչութիւն դիմացն են և մարմնոյն, և յետ ամենայնի գոյնն՝ որ զօշոռին զարդ, ի լոութիւն մարմնոյն ծառալ։

Օ՛ի երևութիւ իմն վերահաս անիրաւութեան զբազմի բարեմտութիւն, չիք երկայնել ընդ այն. բայց թէ ընդ երևութիւն առ ժամայն զարհնուցու ինքնին առանց կամացն գործակցութեան՝ եթէ ի նոցա հաւանութենէ՝ խնդրելի է։ Վեզ այսպէս թուի՝ թէ չիշխիցէ բարեմտութիւն առնել ինչ ինքնին առանց կամացն հաւանութեան։ Օ՛ի եղելոյ անիրաւութեանն խելամուտ լինել և ցանկալ վրէժխնդրութեան նորին և կցոր դել ի մի զերկուս զայսոսիկ՝ զի տարապարտ կրեաց ձեռս

և զի արժան է խնդրել վասի՛ ոչ բնաւորական իմն բերման է գործ, առանց կամացն արբանեակելոյ ազգեալ ի մեզ։ Օ՛ի բերումին պարզ է, իսկ սա յօդուածոյ ի բազմայ տեսութեանց զուգեալ։ Օ՛ գայ անիրաւութեանն, գժպատեհ հանդերձ զայն, գատապարտ առնէ, և բերի ի վերաժխողրութիւն։ Ո՛յսոցիկ ամենայնի չմաքթէ լինել առանց հատանութեան հոգւոյն յոր ազգին այն ամենայն։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ասէ Յիսուս, ասես, բերելի խնդիրս։ — Ոչ՝ զի գիտացաք թէ զինչ բարկութիւնն իցէ։ Օ՛ի թէ ակամայ գործի ի մեզ, ոչ հպատակեսցի երեքեք բանին։ Ո՛րանզի ակամայիցն գործելոյ ի մեզ անհրաժեշտ և անխուսափելի բերումն է։ Օ՛ր օրինակ սաստուկ մարդեայ ի ցուրտ ջրոյ ցանկալոյ, ցնցումն առ չօշափմունս ինչ, քաջամիկ հերաց ընդ գոյժ բօթաբեր, շառագունութիւն երեսաց ի լուր անպարկեշտ բանից, և պոռոտ գլխոյ ոտոյ ի բարձուէ գահաւանդից ի խոր անդունդս հայելոյն։ Ոյք քանզի չէն յիշմանութեան մերում՝ չկարէ բանն արգելուլ և խափանել զայնոսիկ. բայց ոչ նոյնպէս և բարկութիւնն որ պատուիրանագրութեամբքն նուաճի, զի կամաւոր ախտ է հոգւոյ և ոչ ի բնաւորականաց անտի որ ըստ պայմանի մարգկայնոյ վիճակիս կրեն ի մեզ, յորոց չէն զերծք և կարի իսկ խնաստունքն։ Ոչզ բնաւորականն ընդ այնոսիկ համարեսցի և նախկինն այն վերոլուծեալ սրտի որ ի տեսիլ եղելոյ ինչ անիրաւութեանց ծնանի ի մեզ, որ և ի տեսարանս ինչ տեսական խաղոյց և յընթեռնուլն զվարդնջոյց վէպս պատահէ յաչսս. զայրանամք ընդ Կղոդիոս զի տաբացգրէ զկիկերոն, և ընդ Ներոնիոս զի սպանանէ զնա։ Ո՛չ սրամտեսցի ընդ զէնս Պարիսոի և ընդ տաբացգրութեան օրէնսն Պիղոյի, ո՛ չ ցասնացու ընդ Ակողոտոս և ընդ Բելլէս և ընդ մնուցիկն[1] ինքնին

[1] Ջղոպոմեայ արքային Եգիպտացւոց են բանքն, որ խորհրդով Ա-քիլեայ և Թևոդոտոսի պաշտօնեիցն իւրոց՝ հետ գիմաւել զՊոմպէոս։

զկաւղին , որ ի վեր քան զհան յանդգնեցաւ յերեան ։ Եւ զի և ընդ ձայնս արտաքուստ երգոց գժկամակիմք և ի հնչիւն պատերազմական փողոց և ի տեսիլ ահաւոր պատկերաց և արգաւառատ իսկ՝ բայց տխրական պատահասից՝ յոյժ զարժին սիրտք մեր ։ Եւ յոր ազատ իսկ ինդամբ ընդ ինդացոյս , և ընդ արտասուեցեալն բազմութեան արտասիմք և մեք , և ի կատել պղոյ՝ ոչ անխտով կամք ոգւով . իբր ոչ եթէ բարկութիւն իցէն այսոքիկ՝ որպէս և ոչ արտասուիւն զի ի տես նաւաբեկութեան ընչաւէրն իսկ կիտանեմք զձկատ , և ոչ երկիւղ , զի յընթեռնուլ զվէպս Վհերթազայ բաբախեն սիրտք մեր ի պատել պաշարել նորա զպարիսպս Հռովմայ յետ կամեալ պատերազմին , այլ խղճմտանք իմն են հոգւոյ առ ի շարժել . չէն կիրք , այլ նախասկիզբն կրից ։ Արդէս և ի հնչիւն պատերազմական փողոյ ի խաղաղութեան իսկ՝ վասին աչխոյժք զօրականին ընդ պչինաւոր հանդերձիւն , և ի շաչիւն զինուց գրգռի մարտիկ երիվար ։ Այս զի՞նքեանդրէ աւանդէն ի նաւագել Վաենոփանաեայ ձեռն ի զէն ձգեալ ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՐԴ

Օ ԱՁԳԴԻՒՍ ինքնագիտ շարժմունս սրտի՝ կիրս կոչել չէ սրժան , զի ոչ եթէ ներգործէ ինչ յայնս հոգին , այլ կրէ եւեթ ։ Զի պարտ ուրեմն կիրս հանապատ զնախկինն այն զգացումն շարժման ի սրտի յերկոցուն ի նմա ազդեցութեանց , այլ գերի մնէին ամէն և ինքնագիտ շարժմանցն այնոցիկ գՀետ երթալ ։ Օ ի թէ ոք զայլագունել երեսաց , զղձումն արտաստաց , զդրգռումն մարմնոյ յանմարթուլ հիւթոց , գյոգւոցնաւթիւնս , զաչացն յերակարծ շրջել և զայլս այսպիսս նշանակս հանարեցուք կրից և ցոյցս հանգամանաց հոգւոյն՝ իսպի . ոչ ի միս առեալ զի մարմնոյ եւեթ շարժմունք են այդոքիկ ։ Այսքեն բազում այն է՝ զի և բաղացն քաջի զդէնսն զանձամբ առեալ՝ գոյն երեսացն շրջի . և ի ձայն նշանի պատերազմին՝ արիագունեին իսկ ի մարտից առ վայր մի բաբախեն ծունկք , և մեծի

սպարապետի՝ մինչև Ձախատուցն ընդ իրեարս բաղևեալ՝ արարիչ սիրտ, և պերձախօսին ի հռետորս յատեան և լեալ՝ ծայրը անդամոյն պաղին։ Խարկութիւն ոչ չարժմամբ և եթ բնութեանն վճարի այլ և թափով, զի ուժգին իմն բերումն է՝ որում առանց կամացն Տեառն նութեան լինել երբեք ոչ է հնար։ Խանզի որպես մարթ իցէ առանց հոգւոյն գիտութեան ի վերկիրդրութիւն գալ և ի վեռս։ Համարեցաւ որ վերատեալ ուստեք, խորհեցաւ վերկիր առնուլ, և ապա յորդորեալ ի պատճառաց ինչ՝ ի բաց եկաց ի խորհրդոյն և հանդարտեցաւ առ ժամայն. զայդ ոչ բարկութիւն կոչեմ ես, այլ չարժուման սրտի հպատակեալ բանին։ Խարկութիւն այն է՝ որ հեստե բանին և վճռեալ ձգե զնա։ Խ. պա առաջինն այն վերդովումն սրտի վասն անկրաւութեանն եղելոյ՝ ոչ այնչափ բարկութիւն է, որչափ անհրաւութեան ի նմա ազդեցութիւն. իսկ բարկութիւնն՝ բերումն է որ առաջնոյն այնմիկ վերդովմանն վճռեալ գայ։ Ոմիք բնաւ երկայնութիւն զի որպես երկիւղին վճռեալ գայ խորշումն նոյնպես և բարկութեան բերումն. արդ տես թէ մարթի ինչ իցէ առանց չարութեան կամաց բերել յինչ և կամ խորշել յիմիք։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Ասէ թէ որպես կիրքն ծնանիցին, առիցեն և զայրանայցեն՝ լուր։ Խակիին նոցա չարժումն անկանոն է որպես նախաշաւիղ իմն կամ սպառնալիք կրից։ Խ. կրողն կամաւոր բայց ոչ կամակոր։ Խակ երկրորդն ապերասան ամենևին, որ ոչ զի արժան է՝ իմոյն զվերկիր, այլ զի զօրացաւ և անկուշեաց զանձն։ Ո առաջինն զանձն չարժուման սրտի ոչ է մարթի արգելուլ բանին, որպես և ոչ զբնաւորականս զայնոսիկ զորոց ասացաք՝ չարժմանս մարմնոց, օրինակ իմն՝ զի յօրանջք պլոց մի և զմեզս գրգռեացեն, զի ի կարկառել ուրուք յանկարծ զմատունսն՝ անհարթափ կացցեն աչք։ Խ. յոյժ կարէ չկարէ յաղթել բանն, այլ սովորութիւն և ջանք

նուազեսցեն [1] թերևս։ Աշխարհդն այն շարժումն՝ խոր-
հրդով ծնեալ՝ խորհրդով և նուաճի, ։ ։ ։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Այլ զայն ևս, ասէ, արժան է խնդրել [1] թէ որք հասա-
րակաբար գաղանեան առ ամենեսեան և մարդկայնով
արեամբն զուարճանան, որպէս Պղտղոդորոսն և Փաղա-
բիս, միթէ առ բաղկումն եան ինչ սպանանիցեն զայնո-
սիկ՝ յորոց ոչ ինչ թշնամանս կրեցին ոչ իրօք և ոչ կար-
ծեօք։ Այանզի այսպիսեացն ոչ եթէ բարկութիւն է,
այլ գազանութիւն։ զի ոչ եթէ վասն եղելոցն առ ին-
քեանս թշնամանաց վրեժեն, այլ զի վրեժեսցեն միայն՝
մոռացիւր և զթշնամանս յանձն առնուն. գանեն գիշա-
տեն, յօշոտեն ոչ առ վրէժու՝ այլ [1] հեշտութիւն։ —
Այայց և խժդժութեանդ այդորիկ սկիզբն [1] բարկու-
նէ է. որ յաձախ սովորութեամբն ընդելացեալ [1] չարիս
և զյաղագս յանկութեանն իւրոյ ընկալեալ՝ մոռանայ
տակաւ զգալ, և զվնասութիւն մարդկային յանձնէ [1]
բաց եդեալ՝ ժամանէ յանգթութիւն։ Ընփծաղի, խըն-
դայ և զուարճանայ յանձին ընդ խժդժութիւնն, և
այլազգ յոյժ [1] բարկացուցիչ են կերպարանք այնպի-
սումն առ [1] զբօսանս գազանացելոց։

Ընդհանրապայ տեսութիւն զիտս լի արեամբ մարդկան՝ ա-
ւանդեն ասացեալ. Ովվ տեսիլ գեղեցիկ։ Այանի ևս
չքնաղագոյն տեսիլն [1] թուէր նմա [1] զգետ կամ զլիճ
լցեալ էր արեամբ։ Այս զինչ զարմանք, ով դու, զի այդ-
պիսեաւ պարարիս տեսլեամբ ծնեալդ յարիւն՝ և [1]
սպանութիւնս ընդելացեալ [1] մանկութենէ։ Խախտ
աջողակ ընդ ամն քսան աջակից քեզ լեալ [1] խժդժու-
թիւնս քո և ամենայն ուրեք ընծայեցեալ քեզ զգանկալին
աչագդ տեսիլ. զնոյն տեսցես առ Ցրտահմեհեաւ, զնոյն
[1] Կանոնս և Հուսկ ապա զնոյն առ քոյովդ Կարքեդո-
նաւ։

Ալ ոլսէոս սակաւիկ մի յառաջ առ դիւցազն Գոս-

[1] Որպէս և [1] կարգէ բանին երեի յայտնապէս՝ հատուած անկեալ
է [1] տեղւոջս։

առաւ՝ փոխանակ կացեալ բդեշխի Ա՛սիա, յորժամ զնա ի միում աւուր սակաւով ջաղեաց, ի մէջ դիականցն Ջեմառեալ ամբարտաւանութեամբ, որպէս մեծ ինչ արարեալ և երևելի՝ գոչեաց յումեքէն. Ո՛վ գործ Թագաւորավայել։ Ա՛յլ զինչ առնէր արդեօք եթէ էր Թագաւոր։ Ա՛յ բարկութիւն էր այն՝ այլ մեծ և անբժշկելի մոլեգնութիւն։

ԳԼՈՒԽ ՎԱՑԵՐՈՐԴ

Ի՛ՅԱՒՈՒՆՈՒԹԻՒՆն, ասէ, որպէս ՉաՃի ընդ բարին, նոյնպէս Չարկ է զի և ընդ չարն բարկասցի։ — Ա՛յր զայդ ասէն՝ Չանգոյն իմն է Թէ ասէր. Չարկ է առաքինութեանն և մեծ գոլ և նուաստ, զի ահա բանիւն այնուիկ բարձրացուցանէ և ցածուցանէ զառաքինութիւն։ Ո՛Չանգի խնդալ և ՉաՃիլ ընդ ուղղութիւնս՝ արգարև չքեղ իմն է և մեծամայելուչ. իսկ ընդ վըխպակս այլոց բարկանալ՝ փոքրոգւոյ և ցածուն սրտի գործ։ Ա՛յ չանձին կայցի երբեք առաքինութիւն առ ուղղելոյ զախտս նմանող լինել այնոցիկ։ Չարկ է նմա և զնոյն ինքն նուաՉել զբարկութիւն, որ ոչ լաւագոյն ինչ է՝ նա մանաւանդ բազում անգամ չար ևս քան զյանցաւածսն ընդ որս բարկանայ։ Ա՛ծանել և ուրախ լինել ընդակից է և սեփական առաքինութեան, իսկ բարկութիւնն ոչ ինչ ընդհատ ի տրամադնէ՝ զժպատիճ է մեծութեան նորա։ Օ՛ի արգարև բարկութիւն անանձրեպետ է ի տրամադնէն, և ի նոյն չանգի միշտ՝ Թէպէտ սարբ ջանք զնա չաղարգեացէն, Թէպէտ վրէպ ի ցանկութենէն գոյի։

Ա՛Ո՛վ արժան իցէ խնամանոյ բարկանալ ընդ մեզ, ապա և մեծագունեցոյն ընդդէմ մեծապէս և ստէպ բարկանալ, որպէ և Չարկ իցէ խնամանոյն ոչ բարկացող միայն գոլ, այլ և բարկասիրտ։ Ա՛յլ քանզի ոչ ի դէպ և ոչ արժան Թուի մեզ մեծապէս և կամ ստէպ բարկանալ խնամանոյն, զի է զի ոչ ի սպառ ազատ կացուցցուք զնա ի կրից սուտի։ Ա՛Թէ ըստ իւրաքանչիւր գործոց բարկանալ Չարկ իցէ՝ անՀնար է բարկութեանն ի չափսն կալ։ Օ՛ի Թէ Հաւասարապէս ընդ անՀաւա-

սար յանգամանն բարկանայցէ՝ անիրաւ է , իսկ Թէ ըստ արժանի անձինըւ եղեալագործութեան ջնեալ բարբարբեսցի՝ ցաւկոտ յոյժ ։ Այլ զինչ գժպատեհ քան զայդ՝ կրից իմաստնոյն կարեալ կալ զայրոյն անզգամութենէ ։ Այլ զնաքդ այնուհետեւ կարասցէ Աղկրատ դառնալ ՚ի տուն անվրդով դիմօք որով եկն ՚։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Այլ Թէ արդարև Հարկ իցէ իմաստնոյն բարկանալ ընդ գործս գժպատեհս և վրդովիլ և տրտմիլ ընդ անօրէնութիւնս՝ զիցէ ոք եղկելի քան զնա. ամենայն կեանք նորա անցցէն ցաստմոք ։ Ոչիցէ վայրկեան յորում՝ չտեսանիցէ զանարժանս . քանիցս դէպ լիցի նմա ելանել ՚ի տանէ՝ Հարկ է զի պատահեսցի անօրինաց , ագահից , անառակաց , անառնձիից , որոց ամենայն երջանկութիւն յախտս իւրեանց է . յոր կոյս և զաչս չրջեսցի՝ տեսցէ ինչ զայրանալոյ արժանի , և Թէ յամենայն դէպս բատ բերելոյ առնիցին բարկանալ կամեսցի՝ սպառեսցին ոգիք նորա ։ Հայն ամբոխ բիւրաւորաց որ ընդ այգն առաւօտուն կանխեն ձեռով յատեան հրապարակին՝ զմի վէձն անիրաւս և քան զվէձն անիրաւագոյն փաստաբանս ոչ տեսանիցէ ։ Այն ընդդէմ կամաց կոտակի Հօրն բողոքէ , որում՝ լաւ էր՝ Թէ արժանի զանձն ընծայեցուցանէր . այլ այն ընդ մօր իւրում դատի , այն գյանգամն՝ որոց յայտնապէս ինքն է պարտաւոր՝ առաւանել զայլն . և որ գինւոյն գործեալ մեղանչ ՚ի դատել զայլ նոսի դատաւոր . և Ժողով առնելին ՚ի փաստաբանին բանիցն մոլորեալք՝ արհամարհէն զարդարն և զանիրաւութեան ունին գկողմն ։ Այլ գի՞ մի մի Թուիցեմ , յորժամ տեսանիցես զառեան հրապարակին խոստ առ խիտ լցեալ բազմութեամբ , և զաչս Այրիսին խոնարհեալ ամբոխիւ ծածկեալ , և գկրկեն՝ յորում մեծ կէս Ժողովրդեանն տեսանի գուսմարեալ , յուշ լիցի քեզ՝ գի որչափ մնրդիկ են ՚ի նոսա , նոքօրեակ և ախտք ։

1 Պատմեն վասն Աղկրատայ իմաստնոյ , եԹէ միշտ նոյնօրինակ տեսաւ նա ՚ի դէմս երեսաց . ոչ զուարԹ առաւել և ոչ ամբոխեալ ինչ առաւել ։

Ահ պիտի՝ ի պատմուճանս պղծեցուսցես զի զնան, քայց չիք խաղաղութիւն և՝ ի նոսա, այլ՝ ի կո-
րուստ ընկերին վասն դոյզն շահու դարանի։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ոչ ոք ձոխանայ քայց տուժիւք ընկերին, ատելի է բարեբախտն և Թշուառն արհամարհ, ոք ընկէնին՝ ի հզօրաց՝ ի տկարս ծանրանան, այլ այլ՝ ի պէսպէս ցան-
կութեանց վարեալ մղի, վասն դոյզն հաճոյից և աւարի՝ ցանկալի է և աչխարհին կորուստ։ Ոսւսերամարտից՝ հանգոյն իմն են կեանք մարդկան՝ բնակակիցք գոլով ընդ սոս մարանչին։ Վաղանաց է այդ ժողով, այլ և նո-
քա իսկ խաղաղութեամբ են ընդ համազգիս և նահն զնմանին ոչ խածատէ. իսկ մարդկան յագուրդ՝ ի գիշա-
տելոյ զերեաց է։ Ի՝ իմաս այսուիկ որոշին յանբան ա-
նասնոց՝ զի նոքա ձեռնընդդէք են որոց բուծանեն զին-
քեանս. իսկ մարդկան կատաղութիւն և՝ ի մտուցիչս իւր մղէգնի։

Եթէ դամ մի բարկանալ սկսանիցի խնամոտունն, չէ
ցէ նման երբէք թոյլ և դադար. անօրէնութեամբք և սիւ-
տիւք լի է երկիր, և խուռն յաձախելոյ չարեացն դէպք և խափանք ոչ բաւեցեն։ Ի՝ ըղձանք իմն են ամենեցուն զմիմեանս գլեղոյ անօրէնութեամբք, օր ըստ օրէ մե-
ղայն յաձախէ յանկութիւն և նուազէ ամօթ։ Օ յա-
ւուրեան և զուղղութեան զկապան խզեալ անառակու-
թիւն՝ ըստ հաճոյս մղի սպերասան։ Ի՝ և ս գաղտագո-
ղի գործին ոչ՝ իրք, այլ ակներև համարձակութեամբ։ Ի՝ մբարշտութիւն զայրացեալ համաձայնակ զսիրտս բո-
լորից կալեալ ունի։ Օ՝ ի ոչ եթէ նուազեալ ինչ է ան-
մեղութիւն, այլ բարձեալ՝ ի սպառ։ Ի՝ եթէ աղբ ամենք, կամ սակաւաւորք թուով օրինաւանդքն իցեն. յամե-
նուստ առ հասարակ որպէս՝ ի տալ նշանին՝ հորդան տուեալ դիմեն յախուռն՝ ի գործել զարժանն և զա-
նարժան։

---

1 Քանզի բնակակիցք միմեանց գոլով սակաւերամարտիցին և սեզանա-
կիցք՝ հուպ ընդ հուպ՝ ի կռիւ ելանեին յասպարէս սպանանել զմի-
մեանս։

. . . Ձկ հիւրն յիւրմէ հիւրընկալուէն անկասկած
Լաւ ոչ աներ ՚ի փեսայէն. սէր յեղբօրէ նուազեաց.
Կայր ամուսնոյն իւր գաղանի և ՚ի կորուստ առնըն կին.
Որոյ զրժեալ խառնէ անգութ ձեռամբ ըզժանտ մոլեխնդ,
Լաւ կենսախուզ ձեպէ զօրհաս հօրն իւր որդին գաւաձան։

Լաւ այսոքիկ դեռ գոյն ՚ի մտանէ են ոձրագործուԹեանցն. ոչ նկարագրեաց քերԹողն զմիոյ կողմանն՝ կրկին հակառակամարտ բանակս, զորդուոյն զէն առնուալ ընդդէմ ծնողաց, զառն քաղաքացւոյ հրձիգ առնել զհայրենիս, զգունդս սիերիմ հեծելոց յայսկոյս յայնկոյս արշաւասոյր ՚ի հետաձգեալ զապաւէնս տարագրելոյն, զաղերդսյն ԹունաւորուԹիւն, զժամանակս ձեռագործս, զծնողաց պատնչափակ պաշարումն յորդւոց, զանստս լցեալ, զքաղաքս համաձարակ ՚ի հրդեհէ, զարիւնահեղ բռնակալուԹիւնս, զգաղտամեստ խորհուրդս ՚ի կորուստ ազգաց և ԹագաւորուԹեանց, զեղեռնն յաջողեալ անպատուհաս՝ հանարել ՚ի պարծանս, զառևանգուԹիւնս, զպղծուԹիւնս և զբերանս իսկ չհնայեալ ՚ի զազրագործուԹենէ։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Յաջողուկ լաւել և զայրայանդիման ստերջնուԹիւնս և զուխտազանցուԹիւնս ազգաց և ազանց. զորկատագնիցն ՚ի ժողովրդոց հզօրագունին լինել լաւար, զգաւաձանուԹիւնս, զգողուԹիւնս, զնենգուԹիւնս, զաւանդիցն զլացումն, յորոց ատեանք երեք ոչ բաւէն ՚ի գատաստան։

ԼԹէթ ըստ յաձախելոց անօրէնուԹեանց բարկանալ պարտ իցէ խնամտոյն՝ գոյն ինչ բարկուԹիւն իցէ, մոլեգնիլ իսկ Տարկ է նմա։ Լաւ լաւ և ապա բնաւ իսկ անպատեհ Տամարել զբարկանալն ընդ ախտս։ Լար-

1 Խմ զմիոյ համազգի և համաչխարհիկ բանակի յերկուս հերձանել բանակս թշնամիս իրերաց։

կանայդէ՛ որ որոց խարխափէին՝ ի խաւարի . խլից՝ որք անլուր են հրամանաց , մանկանց՝ զի ապախա սրարեալ զկարևոր գործ պարտուցն իւրեանց , և ընդ հասակակից մանկտին՝ ի խաղս պարապին և ՝ի զբօսանս . կամ թէ բարկանայցես ընդ խօթացեալսն մարմնով , ընդ ձերս և ընդ տուայտեալս :

Ի բազմապէմ թշուառութեանց մարդկայնոյ բնութեան մի և այս անհրաժեշտ կուրութիւն է մեզ՝ ոչ սխալել և եթ , այլ և անդրաժել ընդ սխալանսն : Օ՛ի մի ումեք առանձինն բարկանայցես՝ ամենեցուն ներեա առ հասարակ . համբերն մարդկան ազգի ընդհէա թողութիւն , ապա թէ ոչ՝ եթէ ընդ երիտասարդս բարկանայցես և ընդ ձերս զի մեղանչէն , բարկացիր և ընդ մանկունս զի մեղանչելոց են : Ի՛թէ բարկանաս՝ որ ընդ մանկունս զի անբաւականք են տիզ յրնտրութիւն իրաց , և ահա քան զմանկութիւն հզօրագոյն և իրաւացի չքմեղանք մարդկութիւնն է : Ի՛նչու ծնանիմք պայմնաւ , զի առաւել քան զմանկիս՝ հոգւով սխտից եմք նեղբոյ անկեալք : Ջեմք թանձրամիտք , չեմք ապուշք , այլ ոչ որպէս պարան է զորութիւն մտաց ՝ի վար արկեալ՝ յախտս չսրեաց օրինակ եմք միմեանց : Ամք ընդ հետս յառաջընթացին մոլորին՝ այնու արգելօք արդարացին՝ զի ընդ հասարակաց ուղին մոլորեցան :

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Օ՛ՄԷն մի ՝ի զօրականէն խստագոյնս պատուհասէ սպարապետ , այլ ՝ի համագումար յանցանել զօրուն՝ նեղութեան անդ պէաք են : Օ՛ինչ է որ արգելուցու զինամս տունն ՝ի բարկանալոյ , բայց մեղուկերցն սոքա մեծ . խորհի՝ քանի անիրաւ իցէ և բազմամտանգ գայրանալ ընդդէմ հասարակաց ախտից : Հերակղիտոս՝ տեսեալ շուրջ զիւրև զամբոխ բազմութեան որոց կէրինն՝ մանաւանդ թէ կորնչէին չարաչար , լայր և գթայր ՝ի վերայ ամենեցուն՝ որք խրախամիտք և զուարթ երեսք պատահէին նմա ընդ առաջ . արդարև գթութեան արտասուք , բայց փոքրոգի տկարութեամբ հեղեալք , որովք արժանի ողորմոյ էր և ինքն : Իսկ զԴեմոկրիտեայ ընդ

հակառակին աւանդէն ոչ երբեք առանց ծաղու երևեալ
՝ի հրապարակի, իբրև զի ոչ ինչ յորոց գործէին այն-
քանեաւ խնամով Թուէին նմա արժանի խնամոց իրք ։
Այլ ոչ ապա պատճառք բարկութեանն իցեն՝ երբ
ամենայնին ծաղու և կամ լալոյ իրք են ։ Այլ բարկանայ
խնաստունն ընդ որս մեզանչեն ։ Այլ ընդէր . զի գի-
տէ Թէ ոչ ոք է խնաստուն ՝ի ծնեալ , այլ եղեակն . գի-
տէ Թէ յամենայն ՝ի դարս սակաւք յոյժ եղանին ի-
մաստունք . Ճանաչէ յայսմանէ խնամութեամբ զմարդ-
կայնոյ բնութեանս պայման , և գիտէ իսկ զի ոչ ոք յող-
ջամտոց բարկանայ ընդ բնութիւն ։ Այլ ո՞ ոք զարմաս-
ցի երբեք զի Թուփք վայրենիք ոչ ծանրանան ՝ի պատուղ .
կամ զի մացառուտք և փշաբերք չիցեն ծածկեալ յար-
մախս շահեկանս ։ Այլ ոք բարկանայ ընդ Թերութիւնս
որոց բնութիւնն կայ պաշտպան ։ Այսպս խնաստունն զգոն
է և անխոտով ընդդէմ ախտից . ոչ Թշնամի այլ կրտամ
բիչ մեղուցելոց . գիտէ զի յեմանէն ՝ի տանէ՝ բազուկք
պատահեսցեն նմա արբեցողք շուայտոտք, ապաշնորհք ,
արծաթասէրք և փառամոլք, անվրդով հոգւով ներեալս
միա ակնարկէ ՝ի նոսա որպես բժիշկն ՝ի հիւանդս իւր ։
Այ՛Թէ բարկանայ նաւապետ ընդ նաւաստին կամ ընդ
նաուն ինքնին գլխովին Թէ տախտակամածիցն յարմա-
րութիւն քայքայեալ ջուր յորդ ՝ի ներքս ընդունիցի . ոչ
մանաւանդ հնարս հայթայթէ , ատտի զարիսն արգելու ,
անտի զջուրն ՝ի դուրս Թափէ . զայսոսիկն ՝ի ծակտեաց
իցան՛է , անհերևութիցն ընդ որս անզգալապէս ջուրն ՝ի
ներքս ծորդի՝ անդուլ վաստակօք զդէմ ունի , և ոչ լքա-
նի երբեք ՝ի ջանիցն , զի ոչ դադարեն ջուրքն զվափեցե-
լոցն ընդ զետղի ։ Ընդդէմ հանապազորդեան բազմա-
սերունդ չարեաց՝ յուշիկ և մեղմ դարմանոյ պէտք են ,
ոչ զի դադարեսցեն՝ այլ զի մի յաղթեսցեն ։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՍՆԵՐՈՐԴ

ԿԱՐԵՒՈՐ է , ասէ , բարկութիւն ՝ի պատսպարանս
ընդդէմ Թշնամանաց և յահարկութիւն չարաց ։ —
Այլ նախ՝ եԹէ բարկութեան՝ ըստ սպառնալեացն է
և զօրութիւն՝ նուիրն իսկ ահարկու է և ատելի և ս-

րով և վտանգ իակ է նմա [Ձ]է արհամարհեսցի մանաւանդ քան [Ձ]է լեցի ահարկու ։ Իակ եթէ անզօր բարկութիւնն է՝ արհամարհ և իցէ և ծաղրալից ։ Օ՜ի զինչ առաւել ծաղու արժանի քան զորոտաձայն գոչիւն ապիկար բարկութեան ։

Վարձեալ, ոչ ամենայն որ ահարկու է՝ նոյն և օգտակար իցէ. և իմաստնոյ ոչ պատշաճ համարիմ զահեղս կեցն լինել, զի գազանաց այդ զինք են ։ Ո՜չ ահա երկնչիք և ՚ի տենդ, յոտնացաւէ և ՚ի քաղցկեղ, բայց ոչ ինչ բարւոյ ակնկալութիւն է ՚ի նոցանէ. և զի ահարկուք են՝ նմին իրի իակ և արհամարհք, գարշք և ատելիք ։ Իարկութիւնն գժնեհատեսիլ է բնութեամբ և ոչ ահարկու, բայց ահընկեց լինի բազմաց՝ որպէս տղայոց գժոխատեսիլ կերպարանք ։ Ձատէ՝ զի երկիւղն միշտ ՚ի պատճառ անդր իւր վերադառնայ. զի որ ահարկուն է՝ չմարթի լինել աներկիւղ ։ Ձուշ լեցի քեզ աստուածո Ա աբերիւեանն այն տող, որ յաւուրս քաղաքական մարտի արտասանեալ ՚ի Թատեր, այնպէս զարհուրց զլսելիս ամենայն ժողովրդեանն, որպէս [Ձ]է բատ սրտից ամենեցուն ձայն տայր բարբառն.

Որ ահարկուն է բազմաց՝ ինքն ՚ի բազմաց երկիւղ ։

Ա՜յս օրէնք են բնութեան, զի որ ահարկութեամբն յայլս մեծ է՝ ոչ և ինքն աներկիւղ իցէ ։ Ա՜ր դոյզն դընդիւն սրտաբեկի առիւծ, զգազանս ամենայնիս խոնջապեցուցանէն ստուերք և ձայն և հոտ անսովոր ։ Որ դողացուցանէն՝ սարսի և ինքն ։ Ա՜ի ապա ցանկասցի ի մնաստունն լինել ահարկու ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ա՜՛ոք մեծ և կարևոր զբարկութիւնն համարեսցի, այնու զի ահընկեց է ։ Վ՚անզի և բազում ինչ այլ իրք արհամարհք յոյժ՝ զարհուրեցուցիչք են, որպէս թզնն, պալարք մնհաբերք և խայթուածք ։ Ա՜ւ չէն ինչ զբաղմունք. զի և զջոկս գազանաց խոնջապեցուցանէ և թա-

կարգէ լար փետրազարդ՝ խրատւիլակ յարդեանց իրացն կոչեցեալ։ Ասոտիք մնոտեաց են ահագուցիչք. ընթացք կառաց, և հիւս գալ անուց՝ զառիւծ յորջ իւր ձեպեցուցանեն, և ի խանչիւն խոչքորակի սասանի փիղ. ըստ այսմ՝ ահա ահարկու է և բարկութիւն, որպէս մեռանիցէ սուտերը, և գազանաց՝ կարմրանիչ փետուրք։ Իբր ոչ եթէ ի քնէ զօրաւոր ինչ իցէ, այլ զիտքրտգիան սասանեցուցանէ։

Ո անզգամութիւն, ասէ, Հարկ է բառնալ յաչխարհէ, զի բարձցի և բարկութիւն. որոց և երկոքին իսկ անհնարինք են։ — Այսր՝ զի Թէպետ և ձիւռն իցէ ի քնութեան իրաց՝ սակայն մարթ է չարաղիլ ումեք. և ոչ տասանալ՝ Թէպետ և ամիսք ամարայնոյ իցեն, պատրաստարեալ յարկօք յեղանակացն անբարեխառնութենէ և կամ մարմնոյն խստամբերութեամբ չարեցեալ աղգեցութեան ցրտոյն և տօթոյ։ Այսր դու շրջեա գխովին զանդ այսպէս։ Հարկ է զառաքինութիւն նախ անհետ առնել ի հոգւոյ, զի մարթ իցէ տեղի տալ ցասման. քանզի ախտից ընդ առաքինութիւնս չէք միաբանութիւն. և ոչ ինչ դիւրագոյն իցէ լինել ումեք հիւանդ և առողջ միանգամայն, քան բարկացող և լուռ։

Ո մարթի, ասէ, զբարկութիւն քնացինդ առնել ի սրտի, զի և հակառակ իսկ է այդ քնութեան մարդկան։ — Ահակայն չէք ինչ այսպէս խիստ և դժուարին՝ ուրում ոչ չարեցեալն միաբ մարդոյ, և ոչ ընդելացուցեալ զայն խոկումն հանապազորդ. և ոչ մի ի կրից այնչափ վայրագ ի և ինքնիշխան՝ զի ոչ նուաձեցի կրթանօք։ Ո որ ինչ միանգամ անձին իւրում հրամնատու եղև հոգին, ած զայն զբռամբ։ Արդեն՝ որք սովորեցան չծածաղել ամենևին. այլք հրաժարեցին ի սպառ ի գինւոյ, ի ծաղկանէ և ի ջրոյ իսկ։ Ամանց դոյզն քնով չատացեալ՝ յանխոնջ տքնութիւնս յերկարեցին, այլք ընդ նուրբ և ընդ զառ ի վեր ձկտեալ լաթս սովորեցան ընթանալ, ոմանք բառնալ բեռինս ծանուցս և դժուարակիրս մարդկեղէն ուժոյ, և այլք խորասոյզ լինել ի ծովս և առանց շնչելոյ յերկարել ընդ ջրոցն։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Խոհ և այլ իրք են յորս բռնութիւն կամաց չաղթեաց ամենայն դժուարութեանց՝ յայտ արարեալ թէ չիք ինչ անհնարին, միայն զի հաստատութեամբ կամեցի զայն հոգին։ Նմանակարգեալ օրինակող ոչ ինչ կամ դողն ինչ վարձուց ամենալաւութիւն առաջի կայր ամենայնոյ ջանիցն։ Ո՛ի զինչ մեծամավելուչ առաջի կայր ո՛րում ընդ կարկամ լարան խորհեցաւ ընթանալ կամ ծանուցանել բեռին զպարանոցն՝ի նեղըդոյ մտոցանցեալ կամ չտալ քուն այլոց կամ խորասոյզ լինել՝ի ծով. սակայն առանց իսկ ստիպելոյ ուստեք՝ի լուծն անդր գործոյն ժամուն եղև աշխատութիւն։ Իսկ մեք՝ որոց վարձք մեծ առաջի կայ՝ անսասան անդորրութիւն երջանկաւէտ հոգւոյ, ոչ կարդացուցիք մեզ օժանդակ զհամբերութիւն։ Վասնի մեծ է խոցս տալ՝ի մեծագոյն չարէ անտի, ի բարկութենէ, աւար, որով և՝ի կատաղութենէ, ի գրժնէութենէ, յանողորմութենէ, ի մոլեգնութենէ և յայլոց ևս կրից դաշնաւորելոց ընդ նմա։ Ո՛ի զատագովութիւնս հայհոյեսցուք անձանց և մի չքմեղանայ՝ օգտակար և անխորչելի ասելով զարկութիւն, զի այր յախտից պակասեցին ջատագովք։

Ո՛ի ասիցես թէ անվանելի է բարկութիւն. չեմք ախտացեալք անբժշկելի ցաւօք։ Խնդութիւնն որ յաւերաքինութիւն ծնաւ զմեզ՝ նոյն ինքն օգնական մեր է՝ շատ է թէ ուղղել կամիցիմք։ Յաւերքինութեանն Նմանապարհ չէ խոտ և դժուարակոս, որպէս ոմանց հաճոյ թուեցաւ ասել, այլ հարթ և դիւրագնալի։ Ո՛չ դողն և մնոտի իրաց հրաւիրակ ձեզ հասեալ կամ. դիւրագնալի առ երանելի կենաս է Նմանապարհ. ուղեւոյ լերուք միայն և յաջողեսցի ձեզ՝ի բարի, դիմի իսկ հզօր օգնականութեամբ։ Ո՛չ ահա դժուարագոյն յոյժ է զոր առնէքդ արդ. զինչ հեշտ և ցանկալի քան զանդորր խաղաղութիւն հոգւոյ և զինչ դժոխըմբեր քան զբարկութիւն. զինչ դիւրագոյն քան զգթութիւն և զինչ տարժանելի քան զանողորմութիւն։ Ո՛ղբօս է ժուժկալութիւն և բազմազբաղ անտատակութիւն. Նմանյն

ասել՝ գիւրին է յոյժ առաքինութեան պատկառ կալ, քան ախտից սպաս տանել։

Օ ի զբարկութիւն պարտ է ՚ի բաց ընկենուլ, խոստովանին իմն և նոքա՝ որք չափաւորել զայն պատուիրեն ։ Ի սպառ բարձի ապա զի չէ լինչ պիտանացու. առանց իսկ նորա լաւ և գիւրաւ խափանեսցին չարիք, պատուհասեսցին չարագործք և ածցին յուղղութիւն ։

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԻ

Օ ԱՄԵՆԱՅՆ զոր պարտին՝ արասցէ իմաստունն առանց՝ արբանեկութեան ախտից, և ոչ մի ինչ ՚ի ներքս խառնելով յայնպիսեաց՝ ընդ որ հոգասցի միշտ ունել զայն ՚ի չարիս ։ Ի պատ չէ պարտ նմա բնաւ երբեք տեղի տալ բարկութեան ։ Ի արթ է կեղծել զայն երբեմն առ ՚ի զարթուցանելոյ զՀեղգալարան յունկնդրութիւն. որպէս և զձիոց հեղգութի՛ խթանօք և մտրակօք մեծաց ։ Ի ուրեք զի ահ արկանելոյ պէտք են այնոցիկ՝ առ որս ոչ ինչ օգտէ բանին ազդեցութիւն ։ Ի ակ բարկանալ՝ ոչ ինչ առաւել օգտակար է քան զարտմէնն և զանգիտել ։

Ի ակ զնմոյդ, չիցէ՛ն երբեք դէպք զրգռիչք բարկութեան ։ — Ի չն այս՝ այլ անդ առաւել ժուժկալութեան պէտք են ։ Ի չ վինչ դժուարին իցէ՝ ուր և ըմբռնամարտիկք ահա յանուրգագոյն կռուին նուաստագոյն մասամբն իւրեանց ժուժկալեն ցաւոց և հարուածոց մինչև ցապաձել ուժոյ ախոյենին. և ոչ ըստ բերելոյ բարկութեան՝ այլ ՚ի պատեհ ժամուն ածեն զՀարուածն ։ Ի չանդեն զՊիւռոսէ մեծանուն վարժապետէ ըմբշական հրաւհանգաց, զի սովոր էր պատուիրել որոց մարզէրն՝ չբարկանալ երբեք. Ի արկութիւն, ասէր, եղծանէ զարհեստն, և ՚ի վնասել նեղե ուշ կալեալ՝ չզգուշանայ անձին ։ Ի չպա ուրեմն բանն յորդորէ միշտ ՚ի համբերութիւն, բարկութիւնն ՚ի վրէժխնդրութիւն. և ՚ի խուսափել անդ յառաջնոցն չարեաց՝ յևս մեծագոյնսն ըմբռնիմք ։ Ի մանց միոյ նեղե թշնամանաց բանի ոչ հանդուրժեալ՝ յաքսորս տարագրեցան, և զթեմ և նախա-

սիւնն անմռունչ տանել ոչ կամեցեալ՝ ծանուցց չարեաց գտան անձնասանն, և որք ընդ դոյզն նուազել Համար-ձակ ազատութեանն իւրեանց զչարեին՝ զծառայականն յանձինս ընկալան զլուծ։

ԳԼՈՒԽ ՀՆԴԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ո՞ւ գիտասցես, ասէ, Թէ է ինչ արիական՝ ի բարկութեան՝ Հայեաց յաղգս ազատս որպէս ցասմնկոտ էն. զՊերճանացիսն ասեմ և զՍկիւթացիս։—Լ՚յդմ պատասխանառք այս էն, զի ուժեղքն և խիստք՝ ի բնէ՝ չև կարղեալ կրթանօք՝ դիւրամիտք են՝ ի բարկութիւն։ Ո՞ւ էն ինչ ինչ որ՝ ի լաւաբարոյն՝ ի բնէ ծնանին։ Ո՞ր օրինակ երկիր բարի բայց անհնաման, Թէպետ և քաւսուցանեն ծառատունկս Հաստաբեստս և ուռճացեալս, բայց այլ ինչ էն մշակեալ երկրին ծառատունկք, նոյնպէս և բնաւորութիւնք ուժեղք՝ ի բնէ՝ ծնանին զբարկութիւն, և անօգրիչն և նրբից չէն ընդունակք։ Հրայինք և եռանդունք՝ այլ Թերակատարք են զօրութեամբ, որպէս և այն ամենայն որք ինքնաբոյս՝ ի բնէ, զերկիք են յարուեստին կատարմանէ, և Թէ ոչ փութապէս սանձեացին ծնեալքն յարիութիւն՝ զառաքեցին՝ ի Համարձակութիւն և՝ ի յանդգնութիւն։ Լ՚ե ահա և հեզագունիցն բարուք կցորդք են ախտք մեղմագոյնք՝ որպէս գԹածուքիւն, սէր և ամօԹ. սակայն և ախտքդ այդոքիկ բազում՝ ուրեք բարւոյ բնաւորութեան գուշակք են և յայտարարք. բայց ոչ վասն այնորիկ չիցեն ախտք։ Յաւել՝ զի այդ ամենայն ազնիք, վայրագութեամբն ազատք, Հանգոյն ինն առիւծուց և գայլոց՝ որպէս ծառայել ոչ գիտեն, նոյնպէս և հրամայել։ Ո՞ւ ոչ որպէս մարդոյ բանիւ է զօրութիւն նոցա, այլ գազանական և վայրենի։ Լ՚որ որ չգիտէ հնազանդել՝ նա և հրամայել ոչ կարէ։

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

*Ա*ՄԻՆ իրի բնակեալքն ի բարեբոյն գաւառս ազինք՝ գոգցես կալան միշտ զհշխանութիւն։ Իսկ ցրտայնոցն հիւսիսաբնակաց վայրագ և անընդել էն բարք, և որպէս քերթողն ասէ,

. . . Ահրեանց երկնից համանմանեալք։

Ազաւելեալքն, ասէ, բարկութեամբ ի կենդանիս՝ արիագոյնք համարեալ են։ — Այսալէ որ զկենդանիս առնու մարդկան յօրինակ. զի ի նոսա բերումին զբաղնին ունի տեղի, ուր ի մարդումն բանն ունի զտեղի բերման։ Այլ և ոչ կենդանեացն ամենեցուն նոյն առաւելութիւն է. ցասումն օժանդակէ առիւծու, եղջերուաց՝ երկիւղ, արծուոյ խոյանալ, աղաւնոյ փախուստ։ Զոր զի և այն իսկ չէ Ճշմարիտ թէ քաջալաբքն ի կենդանեաց լցեն առաւելեալքն ի ցասման։ Ո՛զ ազանման՝ որոց ի յաւիտակութենէ է կերակուր, ըստ առաւելութեան ցասմանն լաւագոյնս արդեօք համարեցայց. այլ զարջառոց գովեցից զհամբերութիւն՝ և զձիոց հլութեամբ բերել սանձից։ Այս զի է քեզ յայդ նմանութիւն անարգ նուաստացուցանել զմարդ մինչ առաջի կայ աշխարհ և Աստուած, զոր մարդոյ միայնոյ է Ճանաչել՝ զի նմա միայնոյ լցի նմանող։

Ահարկասիրաքն, ասէ, սովորաբար անկեղծք թուին։ — Այո՛ առ համեմատութեամբ նենգաւորացն և խրամանգից. և թուին այնպէս՝ զի անպատրաւակ հոլանէն զսիրտս, զոր անգգոյշս մանաւանդ կոչեցից քան թէ անկեղծս։ Անկեղծս կոչեմք և զանմիտս, զզեղխս և զշռայլս. և զամենայն իսկ զախտաւորս վերջացեալս ի խորագիտութենէ։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ՆԱՐՏԱՐԱԽՕՍ , ասէ , քաջագոյն ևս է՝ ի բարկանալն ուրեք : — Այո՛ , ասաց նմա Թէ՝ ի ձեւանալն զբարկութիւն . քանզի և կատակերգակք ոչ եթէ իսկապէս բարկութեամբ շարժեն զսրճողոխն , այլ Ձարտար նմանաբերելով զկերպարանս բարկացողի : Այս մեզ ապա՝ եթէ յատենի դատաւորաց , եթէ ի ժողովս ժողովրդոց և աւետեան ուրեք՝ երբ կամք իցեն զսիրտս այլոց ի մեր կոյս շրջել՝ հարկ է մերթ զբարկութիւն , մերթ զերկիւղ և մերթ զգթութիւն ի մէջ կերպարանել , զի և յայլս ազգել զայնս մարթասցուք . և բազում այն է՝ զի առաւել քան զիսկապէս կիրս՝ ներգործէ նմանաբերութիւն նոցին :

Ախտաբերս է , ասէ , այր անմտութ ի բարկութենէ : — Հիւրաւի , եթէ չիցէ ի նմա հզօրագոյն ինչ քան զբարկութիւն : Այո է պարտ լինել աւարառու , բայց և ոչ յաւար . ոչ յոյժ գթած , բայց և ոչ անգութ . զի միոյն կարի մեղկ է սիրտ , իսկ միւսոյն կարի խիստ . բարեխառն լիցի խնամատուն , և առ արիանալոյ ի գործ՝ մի բարկութեամբ՝ այլ զօրութեամբ վարեսցի :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Այժ քանզի ոչ ինչ յաղագս բարկութեան խնդիրք էին սպառեցան , արդ ի դէպս նորա մատիցուք : Այնկին ազգք են դէղոյն՝ որպէս կարծեմ . մին՝ առ ի չանկանել ի բարկութիւն , և միւսն ի սանձահարել զայն : Օդր օրինակ ի դարմանս մարմնոյ այլ պատուէրքն են ի պահպանութիւն առողջութեան և այլ ի վերանորոգումն նորին , ըստ այնմ և զբարկութիւն այլ ազգ ասելով պարտ է և այլ ազգ սանձակոծել և նուաճել : Այն ինչ պատուէրքք աւանդեալք ի պէտս բժշկական կենաց , որոց կէսք ի դաստիարակութիւն պատշաճին և կէսք ի հասական որ յետ այնորիկ :

Այեծապէս խնամոց պէտք են ի դաստիարակութիւն՝

որոյ բազմապատիկ է առ ի կենաց օգտութիւն։ Վասն որոյ եւ յայժ զմտաւ Հասակն ուղղել, գժուարաւ քան զին ախտ զարգացեալք ընդ մեզ։ Խանդուխքն հոգւով ի բնէ՝ դիւրագրկիւք են ի բարկութիւն։ Ոմանք գոլով տարերք՝ հուր, ջուր, օդ և հող՝ իւրաքանչիւր նոցա են համաբնոյթք ինքեանց զօրութիւնք, որք տութիւն, ջերմութիւն, չորութիւն և խոնաւութիւն. և ըստ սպասէս զուգախառնութեան տարերացս այսոցիկ պէսպէս որոշումն է տեղեաց կենդանեաց, մարմնոց և բարուց. և ըստ առաւելուլ զօրութեան միոյ ուրուք ի տարերացս ի խառնութեանն՝ յայս կամ՝ յայն միտ բնաւորութիւնն։ Ոստի և գաւառացն զանազանել ի խոնաւ, ի չոր, ի ջերմին և ի ցուրտ։ Ոմանք և անասունք և մարդիկ անմահք են իրեարց։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

Յաճն հայել պարտ է ապա թէ, որչափ ինչ բաժին իցէ իւրաքանչիւր ի խոնաւոյ և ի ջերմութենէ. զի որ ի տարերաց առաւելու մասն յոք՝ յայն միտ բնաւորութիւն։ Դառնեխաքն ջերմութեամբ՝ բարկասիրտք են, զի ազդողագոյն է հուր և երագ։ Դառնեխաքն ցրտութեամբ՝ երկչոտք են, զի դանդաղ է ցրտութիւն և կծկեալ։ Ըդ ոմանց ի մերոցս Հաճոյ Թուեցաւ ասել Թէ բարկութիւն ի կուրծս յուզիցի եռացմամբ արեան զսրտին։ Նա այս պատճառաւք են զայն օձապան Համարել զբարկութեան՝ զի ի բազմադակ մարմնի ջերմագոյն են կուրծք։ Որոս առաւելու խոնաւն՝ նոցա տակաւ աՀՀ բարկութիւն. զի պակասէ ի նոսա ջերմութիւն քնաւ բանաւ, և շարժմամբն արծարծի։ Վասն իրի և բարկութիւն տղայոց և կանանց բարկ է քան Թէ ծանր, և Թեթևադոյն իսկ ի սկզբանն. իսկ ի չորային Հասակս ուժգին է և կորովի՝ այլ ոչ յայժ ընդունակ աՀման և յաւելուածոյ, զի նուազելոյ ջերմութեանն յաջողակ ցրտութիւն։ Նոքք՝ գժուարաբարոյք են և քանքարողք, նաև որոց ի տարժանակիր վաստակոց կամ յեբակ Հատանելոյ նուազեալ իցէ ջերմութիւն, ընդ որս

իմա և զսանձելն ՚ի սովէ կամ ՚ի ծարաւոյ՝ և որոց առ նուազելոյ մնդեանն նուազեալ ցամաքէ մարմինն յարենէ ։ Վ֊ինի բորբոքէ զբարկութիւն զի ըստ անձնիւր բնութեան յաւելու զչերմութիւնն ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Ոմանց յարբեցութենէ բորբոքի բարկութիւն և ոմանց ՚ի ժուժկալութենէ ... Այս պատճառք են դիւրագրգիռ գոլոյ ՚ի բարկութիւն որոց մաղձագոյն և արիւնատեսակ են դէմք , զի յեռանդան կայ արիւն նոցա և յոգւի անդադար . և որ յայլը ՚ի մարդկանէ ՚ի գրգռելոյ բարկութեանն է գոյին՝ նոցա բնաւորական ։ Այս որպէս զոմանս բնութիւնն եդ դիւրասպառաստ ՚ի բարկութիւն՝ նոյնպէս և զայլս դեպք բաղուածք և պատահարք առնեն բարկասիրտս՝ զբնութեան կատարելով ՚ի նոսա զգործ ։ Ոմանս խօթութիւն կամ վէրք արարին բարկասիրտս , զայլս աշխատութիւնք և տրբնութիւնք անընդհատք , և գիշերք տապնապեցուցիչք , և ցանկութիւն և սէր տարապայման . և այն ամենայն որ մարմնոյ և կամ հոգւոյ վնասակարք են՝ զխօթամիտսն լուծանեն ՚ի տրտունջ ։ Այլ այդոքիկ դեռ ևս սկզբունք են և պատճառք բարկութեան , յոր թէ չամախեսցէ ոք չարաչար՝ ոչ մեծ առեալ դառնոյ չախտ չար ։ Այդ զբնութիւն փոխել դժուարին է , և զմիանգամ խառնեալ տարերս հողածնելոյն յեղաշրջել՝ անհնարին , բայց օգտ գիտել և ձանձրել զբնաւորութիւնս՝ զի չերմանյնոյն կարձեսցի գինի , զոր պղտոն արգելու չտալ մանկանց և հրով զհոգւ արծարծանել ։ Այս ոչ կեպակրովք խնդել զնոսա , զի մի ընդ ստուարանալ և թանձրանալ մարմնոյն՝ ուռուցեալ փքացի և հոգիս ։ Աշխատութիւն առանց խոնջելոյ ինչ նոցա՝ ի հրահանգս , զի նուազեսցի չերմութիւն և ոչ զի սպառեսցի . և զի մի առ սաստկութեան եռանդանն յորդեսցի ՚ի փրփուր ։ Գտանկար են և խաղք ՚ի չափաւոր զբօսանս առ ՚ի մեղմել զգիս և բարեխառնել ։ Յոմանսագունիցն բնութեամբ և չորացնոց և ցրտագունից թէպէտ չիք վտանգ առ ՚ի բարկութենէ , այլ ՚ի մեծագոյնս քան զայն հակամէտք

են յախտս, յերկիւղ՝ ի հոգածութիւն, ի յուսահատութիւն և ի կասկածոտութիւն։

ԳԼՈՒԽ ՔԱՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Ա ԱՍՆ որոյ ընդ այսպիսեացն բնաւորութեամբ՝ զգուշանալ վարել պարտ է, մեղմով և զուարթութեամբ։ Այլ քանզի այլ է դեղ բարկութեան և այլ տրտմութեան, և ոչ միայն անմիանեօք, այլ և հակառակօք բուժին ախտքն՝ հարկ է զայնր առաջս առնուլ միշտ որ առաւել զօրացեալն է։ Անճառակս օգտակար է, պակս առցի, վաղագոյն զմանկտին հրահանգել ի բարին։ Այլ դժուարին գործ տեսչութեանս է և վտանգ ի վերայ կայ երկուստեք զի մի լցցի մեզ կամ զարթութիւն տածել ի նոսա և կամ զընդառականն աչքայժ չկրճտցանել. առ որ աչալուրջ զգուշութեան պէտք են. զի երկաքանչիւր իսկ՝ զոր ընդհարին պարտ է և զոր խրախուսել՝ նմանեօք մտանին, և զկարի իսկ աչալուրջս նմանութեանցն պատրեն։ Զգաստութիւն յաւելու զգաստութեան, ծառայութիւնն ընդհարձ, գովութիւնք խրախուսեն զոգի և բարկոյս առնեն, բայց նոքին իսկ ծուռնին զյանձնապատասխանութիւն և զարկասրտութեան։ Անմին իրի զմիջնին երկոցուն պարտ է առնել Հանապարհ՝ մերթ զսոնձ և մերթ զնեման ի վար արկանելով. և ոչ թողուլ երբեք նուաստանալ ծառայաբար։ Անի բնաւ լցցի նմա հարկ աղաչելոյ սարկաբար, և ոչ յաղաչելն օգտեսցի իւրք. այլ վասն արդարութեան նորա մնասցանգ, և ի հնարս առաջնոյն իւրոց գնայցից և վասն ապագային բարկոյս խոստման ներեսցի նմա։ Ի մրցանս ընդ հաւասակցացն իւրոց մի թող տայի նմա ընդհարել և ոչ իսկ զայրանալ։ Ցոյնի կայցաք ընտանեբար վարելոյ նմա միշտ ընդ որս սակայն է վիճել՝ զի ուսցի և ի մրցմանս ոչ ընդ վեսս կամիլ հակառակորդին այլ ընդ պարտութեան։ Ի յաղթելն կամ ի գործել ինչ գովութեան արժանի՝ ներեսցաք նմա խրախուսել, այլ ոչ ցնծալ ծափառանն. զի ցնծութեանն այնմիկ զՀետգայ խրոխտումն, և խրոխտանացն՝ վքանալ և յանձնապատան լինել։ Ցիւր սրատցաք նմա երբեմն առանց

Թողլոյ պղերգաստ և ի ծուլութիւն Հատանել ։ Իսկ ի փափկութեանց քնաւ իսկ Հրաժարելոյս ոչ ինչ այնպէս բարկաբերս գործէ, որպէս մունդ գիրգ և փափուկ ։ Այն իրի միանգր որգաց՝ վասն Ծնողացն առաւել Նեղոցութեան, և որգոյ՝ վասն Համարձակ ազատութեանն, առաւելապէս զեղծեալ ապականին սիրտք ։ Օ Լարդ Հանգուրժել կարասցէ զրկանաց որում ոչ ժամեցաւ ինչ երբեք, և զորոյ զարտասուս սրբեր Հա նապազ մայրն բազմիմիամ, և զորոյ զկամն Հաձեաց միշտ վարժապետն ։

Ի տեսանել զի յոյժվերջոյն ի մեծութիւնս բախտի՝ յաւելու և բարկութիւն, որպէս ի մեծատունս և յազնականս և յաւագրերացն տեսանի այս յայտնապէս՝ այն ինչ ընդունայնութիւն նոցա և թեթևամտութիւն ի հնչելոյ յաջողակ բախտին փքացեալ վերամբառնայ ։ Յաջողութիւն տածէ զարկաստութիւն, մանաւանդ երբ մարդելոցացն ամբոխ պաշարեալ զամբարտաւանն սկսցիս զրգռել ասելով ։ Իշխանդ Նա տալ քեզ պատուխանի ։ Թէ ոչ բոլ մեծութեան քում Հատուցանես նմա զարժանն, զանձն քո արհամարհեսցես ։ և զայլ ինչ յայսպիսեաց, որով միաբ առողջ և ի բարուքն Հաստատեալք ի մանկութենէ՝ Հազիւ կարասցեն զդիմանել ։ Այն իրի և ի մարդելոցացն ի բաց կալցուք զմանկտին ։ լուիցէ զձմարտութիւն, երկիցէ իսկ ուրեք և յարգեսցէ, զայն միշտ ։ զերիցսգոյնն պատուեսցէ և մի իմիք կանգնիցս լծոյ բարկութեամբ ։ Որ ինչ ժամեցաւ նմա ի լայն՝ ի Հանդարտութեն տացի նմա ։ զձմարտութիւնս ծնողացն տեսցէ, ակնարկս՝ բայց ոչ վարեսցի նոքօք ։ և ի յանցանելն իւրք՝ յանդիմանեսցի բատ արժանեացն ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Յ ՅՈՈՑԻԿ աղագաւ պարտ է ուսուցչաց և դաստիարակաց մանկտոյն հեզ լինել և քաղցրաբարբոյ ։ Որ տատասանին և զեռաբուսիկ յոր մերձն կայ յայն յարի՝ և բատ նոցին նմանութեան զարգացեալ անձ ։ Դայրկայն և դաստիարակաց բարբ վազ փոխանցին ի

մանկանին : Ա՛նուշ ունի գաստիարակեալ առ Պղատոնի և զարձ ապարեալ առ Ծնողսն ի տուն իբրև հասեալ ՚ի Հայրն զի գոյիւք զայրագին , ասէ . Օ՜այդ իմ՝ չիք երբեք տեսեալ առ Պղատոնի . և ոչ ինչ երկեայիմ՝ զի վաղագոյն քան զոր Պղատոնի՝ Հօրն իւրում իցէ լեալ նմա նոյ :

Յառաջ քան զամենայն՝ մանկտւոյն տակաւապէտ լեալ կերակուր , և Հանդերձ ոչ մեծագին , ամենայն ինչ դասակարգացն իցէ Համանման . զի որ ՚ի մանկութենէ ուսաւ Հաւասարել ընդ բազումս , ոչ ինչ ցաւանուցու ապա ընդ Համեմատելն այլոց :

Բայց այսոքիկ առ որդիս մեր պատշաճեալք . իսկ մեր քանզի ծնունդեանն պայման անփոխիկ և զատիարակութենն պատեալքը անագան , զղարգացելոց Հասակին բուռն Հարցուք բարեկարգել : Եւ արդ ընդդէմ սկզբնապատճառացդ բարկութեանն պարտ է մեզ մանաւանդ և այս սկզբնապատճառքն են . կարծիք անիրաւութեան եղելոյ . որում չէ պարտ Հաւատալ Հեշտեաւ և ոչ իսկ Հաւանել վաղվաղակի՝ թէպէտ և յայտնի և ակնհայտ իրքն Թուեսցին . զի և սուտ ինչ իրք բեռն երբեմն զկերպարանս Ճշմարտութեան . ժամտուր և պարտ , և օրն յայտնեսցի զՀնամարտութիւնն : Ա՛ի իցէ քո ունկն զկարծելոյ չարախօսութեան : Օ՜չ չալի իցէ քեզ և քաջահանօթ ախտն այն մարդկայնոյ բնութեանս , զի զոր լսել չկամիցիս՝ Հաւատալ ախորժ ևս . և չէ քննեալ բարկանալոյ :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Եւ ոչ եթէ ՚ի չարախօսից միայն զկռնակալք , այլ և կասկածանօք զդէմս և զծիծաղ այլոց ՚ի Թշնամանս մեզ ընկալեալ՝ տարապարտ բարկանամք : Ո՛վ պարտ ապա Ձեզ ՚ի բարկութիւն , մինչ չէ վարեալ զգաստ բացականին ընդդէմ մեզ : Օ՜ի զվրէժ չապա դնել մարթի է խնդրել և անագան , բայց զինքրեանն չէաս զարձուցանել անհնարին է : Ա՛չաճանօթ են ամենեցուն իրք առնն որպ կամիցեալ ապահանել զբնութեան , մինչ չէ վճարեալ էր զատին ձերբակալ եղև և

մատուցեալ ի տանջանս ի Հիսուսէ զի յուցցէ զՀա-
մահարհն՝ եղոյց յանուանէ զաբեհամեան բռնատուին որ
զնուաճն կային և որոց մեծապէս ցանկալի էին կեանք
նորա։ Իսկ բռնատուին հրամայն տուեալ սպանանել զա-
նուանեալսն մի քան միոջէ, իբրև եհարց Թէ Ո՞նդ
որ պղ եւս։ Ա՛յս, ասէ, զոմ միայն։ զի զպղ որ ոչ
Թողի ի սիրելեաց անձինդ։ Օ այս Թէ եղադրեաց բար-
կութիւն բռնատուին՝ զազգսն իւր տալ յանօթի զատա-
Նատոլին զինքն, և սրով իւրով կտրտել զանձնասպանա-
պետս իւր։ Վասն քաջասիրտ քան զնա զտաւ Ա՛ղէք-
սանդր, որպ ընԹերցեալ զԹուղԹ մերն որով ազդ առ-
նէր նմա զգուշանալ անձին ի գեղատուԹենէ Փիլիպ-
պեայ բժշկին, սա զաւժարն մատրուակեալ ի նմանէ
և էարբ անվեհեր։ Օ հաւատարմուԹենէ բարեկա-
մին յանձն իւր առաւել եղև վտասդ, և արժանի զտաւ
բարեկամուԹեան արգարոյն և այնպիսի իսկ արար զնա։
Իսկ այս այնչափ գովելի է Ա՛ղէքսանդր՝ որչափ զի չէր
աբ իբրև զնա գիւրագրգիռ ի բարկուԹիւն։ և որչափ
դժուարագիւտ ի Թագաւորս չափաւորուԹիւն անձին՝
այնչափ և առաւելագոյն գրաւառեաց արժանի։ Օ այս
և Կայիոս Կեսար առաքինացաւ գԹուԹեամբ բազմու-
ի քաղաքական յաղԹուԹեանն վարեալ. զի կալեալ
զծրարս նահանգացն գրեալց առ Պանդեոս ի Թշնամեաց
իւրոց կողմանն և յորոց ոչ յայս և ոչ յայն կողմն կին
ձեռնտուք, ընկէց ի հուր. և ԹԷպէտ կարող էր ցաս-
նուլ չափով այլ զկարելին լաւագոյն ընտրեաց։ Վերս-
զուԹիւն իմն գեղեցիկ Հանդերձեալ անգիտանալ զան-
ցեալսն առն իւրաքանչիւր։ Խաղմասերանդ չարեաց
ճնող է զիւրահաւան գոլ չարաբաստուԹեան, զոր յա-
ղախ և լսել իսկ չէ արժան. զի լաւ և ուրեք խոբիլ
քան կասկածել։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՁՈՐՐՈՐԴ

Ի բաց ԹօղԹափեսցուք ի մեզ զամենայն կասկա-
ծանս և զկարծիս որք խաբէնն զմեզ և գրգռեն։ Այս
ողջունեալ զիս անպատուաբար, նա ոչ գրկախառն
ընկալաւ զիմ Համբոյր, միւսն ընդմիջեալ զանս իմ

առ՝ ժամայն, նա ոչ հրաւիրեաց զիս՝ ինչ, սա խոժոռ զիմօք հայեցաւ յիս։ Եւ պակասեալին երբեք պատճառաբ կասկածանաց. պարզմտութեան մեզ պէտք են և բարեհաւր զատման։ Իմ ունէք հաւատացուցաբ բայց որոց աչքօք մերովք տեսանելիք աներկիւղ ատելութեամբ, և՝ ի յանդիմանել տառապեան կասկածանացն՝ խոտոր կշռանելեացուբ զղիւրահաւանութիւնս մեր, զի ուսանիցիմք մի ևս լինել զիւրահաւան։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՅԱՑԵԼՈՑՍ գՀետ գայ և այս՝ չզայրանալ ընդ զոյզն ինչ և ընդ մեռոյ, որպէս ընդ այն՝ զի գանդաղաշարժ է ծառայն, զի երկագոյն պաշտի ջուրն յարբուսին, զի անյարգար է ակուռք բազմականին, զի ոչ բարեկարգ սեղանն։ Ընդառաջեցիր է վրդովել ընդ այզպիսս. ահաբ է և վատառողջ ոք՝ ի մէջ հողմոյ վտանգ, ցաւառ են աչք որք տանջին՝ ի սպիտակ հանդերձից, և թուլասրթի ապիկար՝ որոյ՝ ի ցաւս այլոց ցաւագնին կոյք։ Ինքնիբրիս ոմն՝ ասեն՝ ի Ալեքսանդրեայ քաղաքէ, տեսեալ զերկրագործ զի բրէր զերկիր ուժգին և բարձրագոյն ամբառնալով զբրիչն, ասէ գանգատելով. Ահ, ես ինքն խանջեցայ. և արգել մի այլ ևս վաստակել յայն հանդուպ աչաց իւրոց։ Այն ինքն գանգատէր ատէպ զի տեղւոք վարդից ծալ՝ ի ծալոյք անհանգստէին գնա յրնկողմանեն՝ ի նոսա։ Որք հոգւով և մարմնով լուծեալ և մեղկեալ իցեն՝ ի փափկութիւնս՝ նոցա ամենայն ինչ ծանր թուի և անբնութեբելի. ոչ զի խոտան են իրքն՝ այլ վասն կրելեացն մեղկութեան։ Օ՛ի զինչ աղէ, զայրանալոյ իրք իցեն հայոյ մարդոյ, կամ փորձգալ, կամ զոյգն անհոգութիւն՝ ի վանել զհանձն, կամ՝ հանդիպումն չան և կամ չառաչուէն բանալոյ անկելոյ՝ ի ձեռաց ծառային։ Արդ՝ ի ձևինչ աճառայն ձգելոյ ընդ քարշ տանջին լսելիք՝ զիարդ կարասցէ անդորր պահ հանդուրժել այնպիսին հրապարակախոսաց լինելոյ և թշնամանաց յաչխարհէ՝ ի ժողովս ժողովրդեան և յատեանս։ Կամ զիարդ ժուժկալեսցէ սուտ և ծարա-

ւոյ ամենայնոյ արշաւանին՝ որ զայրանայ ընդ Ծառայն զի ոչ բան պատշաճի զՏիւնն հալեցոյց։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԱՅԵՐԱՐԴ

Այլ ինչ ապա առաւելագոյն տաժիչ բարկութեան որպէս զզեղումութիւն անպայման և անժուժկալ։ Որ թեա զանձն քո՝ի խստամբերութիւն, զի մի զգայցէ՝ բայց ծանուսց յոյժ հարուածոց։ Խարկութիւն մեր բերի կամաւ այնոսիկ որոց չէ մարթ վնասել մեզ, կամ որոց է կարողութիւն վնասելոյ։ Ծառայինսն են և անզգայք ամենեքին. որպէս զմատեան մանրագիր զգեստեալք յաձախ և զվերխպագրեալն հերձոտեալք, և զՏանգերձն անՏաձոյս մեզ պատառեալք։ Այլ որպիսի անմտութիւն իցէ այս բարկանալ այնպիսեաց որք չեն արժանի բարկութեանս մերում և չգգան իսկ։ Այլոյ, ասիցես, ոչ ընդ այնոսիկ բարկանալ՝ այլ որոց զգայս արարին։ — Վասկայն բազում այն է՝ զի մինչ չէ խորհեալ մեր յայդ՝ զայրանամք. և զարձեալ գուցէ և նոցին իսկ արուեստս արարոյն էին պատճառք իրաւացիք՝ի չբաւզանս. ու մեծի՝ զի լաւագունին չէր բաւական առնել, և զի ոչ՝ի թշնամանել զբեզ չեղև քաջուս. այլում՝ զի ոչ առնուացուսցեալ զբեզ արար զայն։ Հուսկ ապա՝ զինչ անմտագոյն քան զայդ կայցէ՝ զնաղն զառ՝ի մարդիկ մեծերեալ յանշուշան թափել յանզգայս։ Այլ որպէս ընդ անշունչն բարկանալ անմտութիւն է՝ նոյնպէս և ընդ անբան անասունս, զի առանց խորհրդոյ և մտաց անիրաւութիւն ոչ է։ Վաքսէն և երկաթ և քար կարեն վնասել մեզ, բայց անիրաւել ոչ երբեք։ Վասկայն են որք յանարգանս անձանց Տանարին թէ երիվար Տլոս այլոց հեծելոց՝ հետեւեցեալ հնձեանց, որպէս այն՝ թէ կամաւ և խորհրդով և ոչ՝ի սովորութենէ և կամ՝ի Տարստութենէ ձեռինն՝ այլոց առաւել քան թէ ինքեանց Տպատակիցեն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Զ ինչ ընդհատ յիմարութիւն է բարկանալ և ընդ անձկանս, նա և ընդ այնոսիկ որոց ոչ ինչ աւելի խնամութիւն է քան զանձկանց : Ի յիսիսեացն ամենայն վերապակք ներելիք են առ արդարակորով դատաւորի՝ զանձնութիւն անդելով իւրեանց ի չքմեղանս :

Այն և այլ որք բնաւ իսկ չկարեն ինքեանք և ամենայն զօրութիւն նոցա ի բարերարել է և ի կեցուցանել : որպիսիք են դիքն անմահք որք ոչ կամին և ոչ կարեն մեռանել : Օ ի հեգք են և խաղաղասէրք ի բնէ, և այսպէս ի բացեայք յանիրաւելոյ՝ որպէս ի կրելոյ զանիրաւութիւն : Ոչայց տխմարքն և անբաւականք ի խելառնութիւն Աչեաբառնութեան, նոցա վերապրելն զանօրհնութիւն ծովու, զյաճախութիւն անձրևաց, զզմայնգակութիւն ձմերայոյ . յորոց և ոչ մին՝ Թէպէտ օգտակար մեզ, Թէպէտ ինեանակարծ՝ վասն մեր ինչ կարգեցաւ տիրապէս : Օ ի ոչ եթէ ի մեր սակս ձմեռն և ամառն զմիմեանս յաջորդեն յաշխարհի, այլ իւրաքանչիւր նոցա օրինք են որոց վարին երկնայինք : Կարի յոյժ մեծապատիւ դնեմք անձանց, արժանիս զմեզ Ստանարեալ՝ զի վասն մեր մեծամեծ գործ այդպիսիկ հրաշագործիցին : Օրինչ ապա ի մեռս մեր արարեալ, այլ ընդ Հակառակն ամենայն ի կենդանութիւն մեր ալքատեկեն :

Այն, ասացաք, որք ոչն կարեն մեռանել մեզ, և են որք ոչն կամին . և ի նոցա սակի են առեղնակալք առաքինիք, Տնօրէնք, ուսուցիչք և դատաւորք, զորոց գիրքսոս և գործս այնպէս պարտ է ընդունել որպէս զբժշկայն նշոցական և զժուժկալութիւն ի կերակրոյ և որ ինչ այլ ևս յօգուտ մեր բերին տանջանք : Պատճիժք եղան ի վերայ մեր . մի յայն ևեթ Հայեցուցք զոր կրեմքս, այլ և զոր արարաքս, և մեզին արասցաք մեզ իրաւունս : Եթէ անաչառք իցեմք մեծագունից ևս պատժապարտ դատեսցուք զանձինս : Եթէ ուղղութեամբ դատել կամիցեմք զամենայն, զայս նախ գիցուք ի մտի՝ զի չիք որ ի մէնջ առանց յանցանաց . զի մեծի բարկութեան ծնող է ասել՝ " Ա ինչ մեղայ, ոչ ինչ գործեալ է իմ . .

մանաւանդ թէ ոչ ինչ լինիս խոստովան : Օ այրանամբ ընդ խրատ և ընդ ազդարարութիւն ուղղութեան , և նովին իսկ յանցանեմբ ի մեզս մեր յաւելեալ և զանսուտ յամառութիւն : Ո պարծեսցի անարատ յամենայն օրինս և ի պատուիրանս կացեալ . սակայն թէ և պարծեսցի իսկ ոք , յոչ անձուկ սահմանն է անմեղութեան ըստ օրինաց ևեթ կեալ . որչափ ընդարձակագոյն սահմանք են պարտուց և պատշաճից քան զօրինացն : Ո՞րչափ առաւելագոյնս ինչ օրինադրէ բարեպաշտութիւն , մարդասիրութիւն , առատաձեռնութիւն , արդարութիւն և հաւատարմութիւն , ոչք ի տախտակս օրինաց ոչ բովանդակին :

ԳԼՈՒԽ ՔԱՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Յայլ և ոչ ըստ անձկագոյն իսկ այդմ սահմանի օրինացն անսպիտիւք խղճմք . որչափ ինչ արարեալ է մեր և կամ խորհեցեալ . որչափ ինչ իրաց ցանկացեալ և կամ ձեռնտու լեալ , ոչք զի չկարողեցան յարգիլնս գալ անմեղք հանդիպիմք : Օ այս գիտասցածեալ՝ նեղոտագոյնք առ յանցաւորս իցեմք և անսասցոյք խրատուց : Յա մանաւանդ մի ընդ անձինս մեր զայրասցոյք , զի որ ընդ անձն իւր զայրանայ՝ ընդ ո՛ այլ ոչ զայրասցի : Ո՞ի և ընդ աստուածս երբեք , զի ոչ ևեթ՝ ի նոցա հրամանացն՝ այլ ըստ մահկանացուացս օրինաց կրեմք որ ինչ ի չարիս մեզ պատահէն : Խայց հիւանդութիւնս , ասես , կրեմք և ցաւս : — Յչաքէն որոց փառս և խորհուրդ է տուն բնակութեան , հարկ է ևեթ կրեացէն ինչ . լաւար զուարքն զի չարիս խոսեցեալ է զբէն . խորհեսցայ մի արդեօք կանխեալ իցէ քո խօսել զնմանէ , խորհեսցայ մի արդեօք յոլովագոյն ևս դու ինքն խոսեսցիս զայլոց : Օ այս խորհեսցուք ասեմ՝ զի զարհուրս մերոյն հատուցանէն մեզ այլք մերթ կամիս , մերթ ի հարկէ և մերթ անդիտութեամբ եկեալք յայն : Յա նոքին իսկ ոք կամիս և գիտութեամբ անիրաւին առ մեզ՝ ոչ առ չարութեան ինչ գործեն , այլ ոմն ի հրապոյրս քաղցր և ընթող բանից ըմբռնեալ զեէ . և ոչ առ ի

վեսանել մեզ առնել զոր առնէն , այլ զի չէր մարթի նմա յոր ձեռնն հասանել՝ մինչ չև քարընդոստնեալ զմեզ : Վասն այն է՝ զի և մարդասիրութիւն ի շողոքորթեէն անդ վեսանէ :

Եւ միանգամ մեռանիմ չկրնի յանձն իւր Թէ քանիցս անկաւ և ինքն ընդ անիրաւ կասկածանաց , քանիցս բժըւեզօծութեանցն իւրոց եւսուն դէպք զկերպարանս ա նկրաւութեան , քանիցս զոր ատելչին սկսաւ սիրել , կարասցի այնպիսին երագել ի բարկութիւն և ոչ մնաւանդ յամենայն դէպս գրգռիչս ցասման իւրոյ ասիցէ ցանձն իւր . Օ այդ և ես արարի : Վասն ո՞ր ինչ գտանել այգպիսի արդար դատաւոր՝ Վասն որ յայրատ ակամբ բերի ի կանայս ամենեցուն՝ զայն և ես շատ համարեալ իւր յերաւունս սիրելոյ զի օտարին է՝ չներել ուժգ այնպիսին ի կին իւր ակնարկել : Վասն որ բարեպաշտութիւն և հաւատս յայլմէ պահանջել՝ ինքն ամբարշտութի և գրժել . ինքն սուտ երդնու և զտատիանն հալածէ . առնաքարշ լեալ՝ սրտմտի , և ինքն գտտափետեէ հանարձակ . զայրանայ Թէ Թշնամանս որ դիպէ պարկեշտութեան ծառայիցն իւրոց , և ինքն յիւրն չհնայէ :

Օ այլոց ախտս հանդիպ աչագ ունիմք՝ զմերան ի Թիկանց . այսր աղագաւ զտարաժամեալ կոչումն որ դուն պատուհասէ հայրն վատհարագոյն քան զորդին . և որ անձին իւրում ժխտէ և ոչ ինչ՝ այլոց ներել ոչ կիտէ : Վնդ այլ մարդասպան ցասնու բռնաւորն , և զգողօնս պատուհասէ ամբարիշտն սեղանակատուս : Վասն՝ի մարդկանէ ոչ ընդ յանցանսն բարկանան՝ այլ ընդ յանցաւորն : Օ գաստագոյնք իցեմք եԹէ յանձինս մեր հայեսցուք տեսանել մի արդեօք և մեր իսկ գործեալ ինչ իսկ յայդպիսեաց . մի արդեօք և մեր իսկ յանցուցեալ իցէ . և զնմանէ համարձակիցեմք դատապարտ առնել զայլս : Եծապէս մեծ դեղ է բարկութեան յասպաղումին : Չառնէ բարկացողէ մի իսկ և իսկ զնեբերն պահանջեսցես , այլ զի ժամ առեալ դատեսցի նախ . ի յասպաղելն հանդարտի : Չէ մի՛ ի սպառ հեղձուցանել փորձեսցիս զբարկութիւն . բուռն է նորա նախկին Թափ , յաղԹեսցի բռնանդակ Թէ մնասաբար նուաձեսցես :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՍՆԵՐՈՐԴ

ՅԱՆԻՐԱՒՈՒԹԵԱՆՑ անսի ընդ որս զայրանալիք՝ զանձնս ի լոյս գիտեմք, և այլոց ակամբաղուզք եմք կամ ակամաւեաք։ Ուրոց պատմիչն մեզ չէ պարտ իսկ և իսկ դիւրահաւան լինել. բազումք ստեն զի խաբեսցեն և բազումք և զի խաբեսցեն։ Այլ որ զուպարտութեամբք հնարի որսալ հնարչս, և ստեղծանիւ անիրաւութիւնս կարեկցելով իմն ընդ քեզ. Ի և չարակամ որ զսերտ բարեկամութիւնս քակել այնու հնարի. Ի և անօրէն բանսարկու որ որպէս ի խաղս հանդիսատես նստեալ անբոյիւ ի բացէ՝ զուարճանայ ի զնին այնոցիկ զորս ընդ միմեանս զրգռեաց։

Այլ թէ զդոյզն զրամոց վէճս դատել նատիցիս, ոչ ինչ հաւատարիմ թուի քեզ առանց վկայի, և ոչ վկայն առանց երդման. կողմնից երկոցուն ժամ տալ և տեղի փաստաբանութեան, ոչ միով անկնդրութեամբ վճռելս, զի որչափ դարձադարձիւ յեղյեղեսցի՝ այնչափ առաւել բացայայել ճշմարտութիւն. իսկ զգաբեկամդ դատապարտես վաղվաղակի մինչ չև հարցեալ կամ լսեալ ինչ ի նմանէ. և մինչ չև ցուցեալ նմա զչանցման կամ զամբաստանին՝ զայրանաս ընդ նա, որպէս լուեալ երկուստեք և ի վերայ կացեալ ճշմարտութեանն։ Ընարհաւն ստիպեալ տալ զհաւատիս բանիցն՝ լուի ի չարախօսելոյ. Ա՞ի, ասէ, մի ստիպեր զիս ի ցուցանել զհաւատիսն, ապա թէ ոչ՝ ժխտեցից զամենայն զոր ասացի, և ոչ և յաւելից ինչ ասել քեզ։ Յայսմ մինչ զրգռէն զքեզ՝ զանձն իւր ապահովէ ի կռուոյ և ի թշնամութենէ։ Որ ծածկաբար և ի ընդ գաղտ նեաւք ասէ ինչ քեզ, այնպէս է՝ որպէս թէ չասիցէ բնաւ։ Այլ զինչ այլ անիրաւ քան զայդ՝ հաւատալ ծածկաբար և բարկանալ յայտնապէս։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ

ՈՐՈՇ մեզն վկայք եմք անիրաւութեանցն՝ յայնոսիկ զնաութիւն և զկամս գործելոցն հետազօտեսցուք ։ Տղայ է , տիոջն ընտրեսցի · զի չգիտէ իսկ թէ մեզանէ ։ Հայր մեր է , առ յաձախութեան բարերարութեանց նորա առ մեզ՝ լիցեն նմա ուրեք և ճշտասէրք իրաւունք · կամ գուցէ և այն իսկ ընդ որ վճռանեսցի՝ այլ ինն առ մեզ երախտիք լիցեն ։ Ինն է , դիւրախաբ է , ի հրամանէ այլոց գործեացն զոր գործեացն , և ո՞ զբայց եթէ այր անիրաւ՝ զայրացցի ընդ Տարին ։ ի քէն զրկեալ ևկն յայն , ոչ ինչ անիրաւ իցէ զարիտուր արդեանցդ ընդունել ։ Վատասիրտ է , հաւատարիմ իցէ քեզ վճռն նորա քան զքոյդ ։ Վատասիրտ է , եթէ ընդ յանցանս նացդ պատուհասէ՝ տուր տեղի արդարութեան · իսկ եթէ տարապարտ՝ տուր տեղի բարեխիղճ ։ Չքաշն անաստուն է կամ անամնդի հանգուցատիպ , նման նմա լինիցիս թէ բարկանաս ։ Հիւանդութեան է կամ նեղութեան , զիւրատար իցէ սրտմտ Տամբերէն ։ Յստուածն է , այնպէս ընդունայն իցէ զայրացն քո ընդդէմ նորա , որպէս և Ձիգնդ ի զայրացուցանել զնա ընդդէմ այլոց ։ Ոչ բարի է որ անիրաւեցաւն առ քեզ , մի հաւատար · չար , մի զարմանար ։ Օ վրէժ զոր քեզն պարտի՝ լուծցէ այլում · մանաւանդ թէ անդէն ի մեզանէնէն իւրում՝ անձամբ անձին էզյծ զվրէժն ։

Արկածումբք , որպէս ասացի , գրգռիմք ի բարկութեի · ի զի Տամարիմք լեալ մեզ թշնամանս , և զայսմանէ շատ իսկ ատացաք ցայս վայր · և միս՝ զի տարապարտ և յանիրաւի զթշնամանան Տամարիմք , և զայսմանէ արդ ժամ է ասելոյ ։ Արդոյ անիրաւ թուի այն ամենայն զոր չէր պարտ Տամոզն յուսալոյ կրել ։ Վնեայն որ յեզակարծ ի վերայ Տասանէ , ծանր թուի և դժպհի · և այս պատճառք են ահա զի զայրանամք մեծապէս ընդ անանկիալ և ընդ յեզակարծ դէպս · որ աղագաւ և դոյն ինչ յընտանեաց կրեալ՝ ծանր թուի մեզ · և զթեթև անհոգութիւնս բարեկամին՝ անիրաւութիւնս Տամարիմք ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՔՆԵՐՈՐԴ

Լուսկ ասաց ընդ Հշնամեացն անիրաւութիւնս ընդէր վրդովիմք ։ — Օի ոչ սակս ունելոյ այնոցիկ կամ գէթ ոչ այնքանեաց ։ Այլ այս արգասիք են տարապայման անճնարելութեանս մերոյ , որով արժանիս Համարիմք զանձինս անասնանելիս գոյց և ի Հշնամեաց ։ Զիարաքանչիւր որ ի մէնջ սիրտ Հագաւորի է . կամիմք զի իցէ մեզ ամենայն Համարձակութիւն , այլ ոչ ումեք ի վերայ մեր ։ Լայս կամ առ ոգիտութեան և կամ առ ամարտաւանութեան մերոյ զրկիմք ի բարեկութիւն ։ Լոգիտութեան ասեմ , զի ո՛ր խնամուն զարմացի ընդ չարացն չարիս գործել . կամ մամ ումեք նոր ինչ Հուեցի զի վնասել Հշնամին , վշտացուցանել բարեկամին , սիալել որդին , յանցանել ծառայն ։ Վարքիս առն սպառնալի գժպատեհ չքմեղանս Համարեր առել ։ Ալ կարծեմ ։ Այն էս գժպատեհ և մարդոյ Համարիմ զայն ։ Օ ամենայնն կարծեաս , ամենայնի ակնկալիր , նա և ի բարեբարոյս և ինչ խիտ և գժնեայ ։ Ի մարդկային բնութեան են միշտ և բարեկամք գտանձանք , և ապաշաւորք և ընչաբաղձք և ամպարիշտք ։ Ի գտանել քո զընութենէն միայն՝ Հասարակացն քեզ չուշ լինի ։ Յորժամ մեծապէս խնդաս՝ երկիր մեծապէս ։ Յորժամ յանդրդռիս և ի խաղաղութեան Համարիս զանձնդ , վնասակարք քեզ ոչ պակասեն , այլ լեռն Հանդարտեալ . գիտեաս զի չամենայն ժամնանակի գարնանն քեզ չարիք . նաւատիզ խնամատուն ոչ ի սպառ աներ կեանն Համերէն զգոյս առագաստիցն տայ Հողմոյ , այլ կամ և պատրաստ ունի զպարանոն չամիտիլել զայնս բան Հարկին ։

Ի վեր քան զամենայն չուշ լինի քեզ՝ զի ամենայն գործութիւն մնասակար առելի է և գժարհի , և օտար ի բնութենէ մարդկան , որ բարեբար քաղցրութեամբ և զգժնեայսն ածէ ի հլութիւն ։ Ձես զի զիզոյց պարանոցս ընկեզ լուծ , զի ի նուս ցլոյց անեբկիւղ վազեալ ոստոստել մանկանն և կանգուխ , և վիշապք ընդ գետաթս և ընդ գոգս կոչնահանացն գալարեալ սողին առանց

վասելոյ , և արքէ և առիւծք առանձին հեզասիրեսցին ի միասին ուտել ցանկանան իբրեւ ի շշափութենէ և զանգք քծնին զանբարբառ իբրեւ ի ձայնէ : ||| ամենի իսկ ընդ գազանաց փոխանակել մեզ զբարս :

Զ տարագէպ յառաջարկութենէ իրացս լսել տեսանել թէ ցոր վայր ընբռստացաւ խժդժութիւն նորա ։ Այլ թէպէտ և ահիցիմբ ումեք զարտաղի անկեալ և քան սահման ճառիցս վազեալ, բայց և այն տիպք են անսովոր մոլեգնելոյ բարկութեան ։ Զի գան եհար միայն զաւազանին, այլ և այնչափ յաճախեաց ՚ի նոյն մինչև տալ ասել ամենեցուն . Զի անսովոր ինչ է և այդ ։ Խոշտանգեաց զնոսա ամենահնար գառն և գժնդակ տանջանարանօք՝ գելարանօք, մամլոք, փայտից տակառօք, հրով և երեսաց երեւութիւ ՚ ։ Այլ զինչ մեծ իցէ, ա-

՚ ։ Գեղեցիկ է առասպելութիւնն . իբրու այն թէ աչընկէց և գեժոխահաչաց գեղք բռնաւորին վեհագոյն իցէ քան զամենայն գառնաղէտ տանջանարանս ։

սասցէ ոք , զարս երիս յաւազանէյն Հանգոյն անարգ գե-
ղեաց գանահար և բոցակէզ խոշտանգել այնմ՝ որ զծե-
ռակոյսն ողջոյն խորհէր սրոյ տալ Հարակ , և որ ցանկայր
զի մի ևեթ գլուխ եր աներևոյն ժողովրդեանն Հաւա-
մայ , զի զայնչափ աւուրց և զտեղեաց և զՏարաւածոց
զանօրէնութիւնս իւր ՚ի մի Հարուած բովանդակեսցէ ։
Իսկ զերկոսին անլուր և անսովոր քան զգիշերախառն պա-
տուհաս . ոչ ապաքէն ոՀիրք և աւազակութիւնք գաղ-
տագողի գործին ՚ի խաւարի . իսկ պատիժք պատուհաս-
սից այնչափ առաւել օգտակարք իցեն առ ՚ի խրատ և
յուղղութիւն , որչափ յայտ յանդիմանութեամբ գոր-
ծեսցին ։ Ա՛յլ ասասցէ ոք ինձ աստանօր . զի զարմացեալ
է քո , այն աներևոյն Հանապազորդեան գործ է գազա-
նիդ այգորիկ . յայդ կեայ նա , յայդ աքնի և առ այդ
Հսկէ ։ Ուա՛ ոք երբէք և այլոց ուրուք Հրամայեալ ու-
րեք զդատապարտելոյն յիւրեանէ ՚ի մա՛ՀՆ սպնդաւ խնուլ
զերեքեան զի մի կարասցեն ՚ի կէ Հանել ։ Ա՛յ ո՛մ ումեք
՚ի մարդկանէ չեղև Համարձակութիւն Հեծելոց և
յոգւոց Հանելոյ ՚ի մահուն իւրում . բայց նա եր-
կեաւ զի մի յեթին աղետիցն բռնութիւն Համարձա-
կասցին տացէ մերկանալ զՀմարտութիւն , և զոր ոչն
կամէր՝ լսիցէ . գիտեր իսկ զի բազում և անՀամար ին՛չ
իրք էին զոր չէր ումեք Համարձակութիւն յանդիման
առնելոյ իւրեան բայց որում մեռանելոյն էր ։ Ի պա-
կասել սպնդաւոյ՝ Հրամայեաց զՀանդերձս պատառել զՀի-
գացելոյն և նոքօք զերեքեան նոցա խնուլ ։ Ի՛վ խոգժու-
թիւն , թոյլ արա գոնեայ եղկելեացն տալ զյետին շունչ
իւրեանց , տուր եղս Հոգւոց նոցա զի մի ընդ վերսն
ելանիցեն ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Յերկաբեսցէ մեզ բանս Թէ յաւելումք ասել որ-
պէս և զՏարս սպանելոյն ՚ի նմին գիշերի՝ Հարիւրա-
պետս յիւրաքանչիւր տունս արձակեալ ետ սպանանել ,
որպէս գԹալոմ ՚ի նոսա և զերծուցանելով ՚ի կոծելոյ
զորդիս իւրեանց ։

Ա՛յլ եԹէ զԱյիոսի խոգժութեանցն՝ այլ զպատեաց

քարկոծեաւն բռնեն Հարեալ է մեր Ձառել։ Խարկոծեալն ոչ եթէ մանաւանդ յայս ոք և յայն մեղեփի, այլ զազգս սղոյն Համանգամայն Հարկանէ, և զբազ զաքս և զգեստ՝ անզգայս ի բնէ և անբերկիւղս ի ցաւոց՝ գանակոծ առնէ։ Ի Թագաւորացդ ոք Պարսից յաշխարհին Խոսրուց զընակացոյն ամենեցուն զոնչնուն եՀատուրեք, յորմէ և Ոխտաբեկեալ անուն տեղւոյն կոչեցաւ որ ընչատ ի մեզ լսի։ Ո՛ի կարծիցես առ զԹաւեԹեան ինչ զոյն այնպէս արարեալ զի մի զգլուխն Հատանիցէ, այլ զի ընդ անսովոր ազգ տանջանացն զուարձասցի։ Ակաւիկ մի և և զնոյն անցս կրկին և ԵրԹևսվսացիք Ա՞տբովէէ վասն երկայնակեցութեանն կոչեցեալք։ Ո՞անզի ցասմամբ մեծաւ սրտմտեալ ընդ նոսա Կամբիւս զի ոչ բացաւ ձեռաք յանձն առնի զծառայութի՛ն և զի Համարձակ եւսուն պատասխանի դեսպանացն յղելոց յԵգիպ՛ս՝ զոր ի մեծ Թշնամանս գրէն Թագաւորք, վաղ ընդ փոյթ առանց Հանդերձանաց պաշարոյ և առանց զՀնամապարհն լաւեսելոյ առեալ վարէը ընդ անկոխն և ընդ անջրդի ասազուտն զմարտամբոխ պատերազմին, որում յաւելին չուտն պակասեցին կարևորք վասն և ոչ մի ինչ գտանելոց յանդերձ և՛ի մարդկային Հետց անկոխ յաշխարհին։ Օ՞ասաջինն գալուստն մատուցին սովոյն փափագորք՝ի սաղարԹաց և ծիրք ծայրից Թփոց, ապա մերձ կակղացեալք՝ի Հուր և որ ինչ այլ մատուցանէր նոցա Հարկն՝ի կերակուր։ Եւ՝ի սպառել խոտոյն և արմատոց յատազուտն ամպոհ, յորս և կենդանեաց չերևելին Հետք՝ տատանորդեալ վիճակաւ զղօրն Հայոց Թագաւորեցին Հարամ՝ գժդեգագոյն քան զսով։ Ասկայն ցատումն գեռ և ստիպէր ձեռն զաղբայ՝ի չուն, մինչև տեսեալ ապա զնոսն զօրսն՝ի կորուստ և զնոսն՝ի կերակուր լեալ սովելոյն, երկեաւ գոց և ինքն անկի ընդ վիճակաւն, և Հրամայեաւ տալ զնոյն յետադարձին։ Ձայնմ տագնապի սովոյն պատեհին վասն նորա Հաւք ընտիրք՝ի կերակուր, և կաՀք և սպասք խոհանոցին բարձեալ բերելին ուղտուք, այն ինչ գօրականն վիճակ արկանէը Թէ՝ ո՞րդեաք կորիցէ չարաւ և ո՞ չարագոյն և՞ն կեցցէ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՒՐԱՋԵՐՈՐԴ

ԿԱՄԲՒՍ զայրացաւ ընդ ազգ անձանօթի և անպարտ արդարև՝ այլ ոչ գիշեր անքաժ ՚ի զգայութենէ. իսկ Կիւրոս բարկացաւ ընդ գետ։ Օ՚ի ձեզ տուեալ երթայր ՚ի Բաբելոն ՚ի մարտ պատերազմի՝ որոյ մեծագոյն յաջողութիւն ՚ի պատեհն հաստատեալ է, խորհեցաւ անցանել ընդ հոսին լայնածաւալ գետոյն Կիւրոս զայ՝ որոյ և յամարայնի իսկ ՚ի նուազել ջուրցն ոչ աներկեան էին անցք։ Ընդ ՚ի կորզել վարել յորձանացն զմի ՚ի կառաձիգ սպիտակ ձիոց արքային՝ ծանրացաւ սումն լեալ ընդ այն՝ երգուաւ և կանոնցն անգամ ՚ի հեռուստս դիւրանցանելի դնել զգետն՝ որ չէս անցս ձիոց արքային։ Եւ անդր զամենայն պատրաստութիւն պատերազմին գործոցեալ՝ այնպէս գհետ անդեցաւ զործոյն, զի ընդ հարիւր և ութսուն գետակս և ընդ երեք հարիւր և վաթսուն վտակս գջուրն բաշխեալ յամենքեցունց զգետն։ Ապա կորեաւ յայն ժամանակին մեծ և կարևոր ՚ի գործս մեծամեծս, կորեաւ եռանդն զօրականին յընդունայն աշխատութիւնն լուծեալ, կորեաւ և պատճէն յանդատաստիս ՚ի վերայ անկանելոց քաղաքին. զի զպատերազմն զոր ՚ի վերայ Թէհմէնոյն պատրաստեալ ածէր՝ ընդ գետն մղեաց։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ՅՔՍ մոլեգնութիւն, զի զինչ այլ կոչեցից, եղև և առ Հռովմայեցիս. զի Կայիոս Կեսար զգեղեցիկ գիւղն որ ՚ի Հերակլեան վիճակի՝ յայսպիսի վարեաց վասն մերոց նորա ՚ի պիտոհՀ կալոյ անդ երբեմն. և աշխարհս քարող զյիշատակ Թշնամութեան նորա յաւերժայոյց։ Օ՚ի ցորչափ կայր մնայր գիւղն՝ նահապետական անդանէաք գնային, այլ արդ զպատճառս կործանմանն հարցանեմք։

Ա՚յդպիսեացդ օրինակք եմք օգտին մեզ ՚ի զգուշութիւն, և ՚ի հակառակէն ապա յորդոր բարեաց

նախանձու լինին մեզ հեղգին և հանդարտասրտոյից, որոց ոչ դէպք պակասեցին ի բարկութիւն և ոչ կարողութիւն առ ի վրէժ խնդրելոյ։ Օ ի զինչ դժուարին էր Ալեքսանդրոսի տալ ի պատուհաս վերկուսն զայնոսիկ զպահանտորդ զօրականս՝ որոց նստեալ առ արքունի խրախանաւ պարապէին յայն ինչ՝ զոր հեշտեալ յոյժ այլ մեծաւ վտանգաւ առնեն մարդիկ դժկամակք ընդ թագաւորն իւրեանց։ Այլ սէր զամենայն Աղեքսանդրոսս, զի ընդ խօսողսն և ընդ լսողն անպըղտեալ փերզ մի ևեթ խորանին, զոր չարժէաւ նորա մեղմով ասէ. Հեռացոյց ուրեք մեկնեցարուք ասաի, մի գուցէ լուիցէ ձեզ արքայ։ Այլ ինքն ի գիշերի միում լուեալ զի ոմանք ի զօրականէն անեծս բազումս կարդային արքային զի աճէր զնոսա ընդ այն ձանապարհ և ընդ տղմուտս անձռոզպրելիս, մտեալ առ այնսոսիկ որոց խորագոյնս խրեալ էր, և հանեալ զնոսա յաղատութիւն մինչդեռ չգիտէին իսկ ո բարերարն իցէ, ասէ. Աղբեայք արդ անեծս կարդացէք Աղեքսանդրի որ ած զձեզ յայս աղէտս. և օրհնեցէք զնա որ եհան զձեզ ի տղմախոր վտանգէդ։

Ա ա ինքն նովին հեղուեաեան ոգւով և զթշնամեացն և զբաղաքացեաց լուաւ զանեծս։ Զոյնիւ պաշարեալք երբեմն ի նմանէ յանձուկ ամրոցի ուրեք որ ամուրեաեանէն յաւելոյր զժպրհութիւն յուսացելոցն յայն, իբրև անգոսնեալ արհամարհէին զթշնամին և բազում ինչ խեղկատակութեամբ խօսէին ի թագաւորն ծաղրելով զագերութիւն նորա զի կարձահասակ էր և տափակուն, ետ նոցա պատասխանի և ասէ. Ուրախ եմ և բարութիւնէ հաճարիմ գուշակ՝ զի է ի բանակի իմում Աիղենոս։ Ոչ յորժամ նուաձեաց սովոտ զթշնամեացնոցան զայնոսիկ՝ զայս ընդ գերեալսն արար, զի զկապուցան ի նոցանէ ի զինուորութիւն՝ գրեաց ի գունդ զօրականին և զայլս եհան ի վաձառ և ասէ. Օ այդ իսկ չէր իմ արարեալ ընդ նոսա եթէ ոչ յոգուտ նոցա համարեի, զի որոց այդպէս ագատասիսս լեզու է՝ ինչն ընդ տերամբ։ Այսոր Թոռն էր Աղեքսանդր՝ որ ի տէգ

1 Վերսի սասս Մենեկա զԱղեքսանդր Թոռն ասել Ալեքսանդրոսի զորմէ սասս բանն է, զի է սա ի յաջորդացն Աղեքսանդրի հայոց Դեմետեայ. իսկ Աղեքսանդրի հաւ ըստ հասարակաց աւանդելոյ Ալին տասս էր հայր Փիլիպպեայ։

նիզակի գիշնականան չամիրքը , որ յերկուցն իւրոց բարեկամաց՝ որպէս վերագոյնդ ասացի՝ զմին առիւծուն արկ առաջի և զմին իւրեան . այլ յերկուց անտի՝ առաջինն ապրեցաւ ՚ի ժանեաց առիւծուն :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԻՐԴ

ՅԱՂԵՔՍԱՆԴՐ զիւրամէան գոլ ՚ի բարկութիւն ոչ առ ՚ի նախնեացն էր և ոչ առ ՚ի Տօրէ . քանզի Փիլիպպէայ մի և այս ուղղութիւն էր՝ համբերել և հնազանդ , որ զօրավիգն մեծ է յամրութիւն և յազատութեան : Դաժան առ նա հրեշտակք յԱթենացւոց՝ ընդ որս և Դեմոքարէս՝ Խոժոխապէս վասն հանդգնախոհ լեզուին կշտեցեալ : Յաղթութեամբ ընկալաւ Փիլիպպոս զպատգամաւորսն և հարցանէ . Յասացէք ինձ , զինչ սպաս մեծ և հաճոյական կարիցեմ առնել Աթենացւոց : Զոմ՚ի վերայ էած Դեմոքարէս . Խեղդ անձին առնել : Ի սրտմտութիւն բարկութեան բրդեցան որք մերձն կային ընդ յանդուգն և ընդ տմարդի պատասխանին . բայց Փիլիպպէայ հանդարտեցուցեալ զնոսա , հրամայեաց ողջ և անվնաս զկնի թողուլ զայն արձակել . և առ այլ հրեշտական ասէ . Յրմէ՞ք պատմեցէք Աթենացւոց , զի որ զայդպիսիսդ բարբառին՝ ամբարտաւանագոյնք են յայժ քան որ ներելոյին խրճեն :

Յաղթ՚ինչ արժանի յիշատակաց աւանդեն և դիւցազնին ( ) գոստեայ արարեալ և ասացեալ՝ յորոց երևի բարկութեան ոչ իշխեալ ՚ի նմա : Տիմագենէայ վիպասքն խօսեցեալ ինչ էր ՚ի նախատինս նորա և տիկնոջն և համբերէն ազգատոհմին . և ոչ ՚ի ծածուկ ծնացեալ էին բանքն , զի վաղագոյն ՚ի բերանս ամենեցուն ծաւալին համարձակախօսութիւնք : Յաղթ՚ամագոյզ արար նմա կայսրն չափ դնել լեզուին . այլ ՚ի չանսալ նոքա՝ արգել նմա զնուազս արքունեացն : Յետ այնորիկ ծէքսայա Տիմագենէս ընդ յարկաւ Պողնոսի Խրնիսոսի՝ ցանկալի լեալ ամենայն քաղաքին : Պատուն կայսեր փակեալ առաջինորա՝ չարգելնմա զնուազս և ոչ միայ՚ի սեմից : Յայնմ հետ ընթերցեալ Տիմագենէս զգրեանսն յիւր մէ զվէպս այրեաց , և մանաւանդ զյիշատակագիրս զոր-

ծոց ( )գոստեայ ինքնին արկ՝ ի հուր՝ զինամուձի իւր յայտ արարեալ ընդ կայսեր ։ Ապակին ոչ աք՝ ի բարեկամութենէ նորա զանգիտեաց , ոչ զբարկ յամբաստան եղելոյ խոստութեաց՝ ի նմանէ , նա՝ եղև իսկ որ հնազեցուն՝ ի բարձանց գիրկս եբաց յընդունելութիւն ։ Յամենայնի, որպես ասացի, հեզութեամբ համբեր ( )գոստոս, և ոչ ընդ այն գչարեցաւ ինչ՝ զի՝ ի գովութիւն զիւրմէ և՝ ի յիշատակագիրս վարուցն իւրոց ձեռն արկեալ էր նորա ։ Ել ումեք՝ ի հիւրոցն եկելոց առ ինքն գանգատ կալաւ զմանուկ . միայն Պողնոսի Խրիստոսի զայս ասաց յունարէն (Ֆէօ՜օ՜օՔԷ , այն ինքն է Վա՜ զանաբոյծ լինիս ։ Յորմէ այն ինչ կամէր նա՝ ի չքմեղս լինել՝ կանխեաց ( )գոստոս և ասէ . Ա՛ այելեաց , իմ Պողնոս , վայելեաց՝ ի նա ։ Յոր ասէ Պողնոս . Յիմէ այդպէս հրամայ իցէ տեառնդ իմում՝ այժմ իսկ մերժելոյց զնա՝ ի տանէ իմմէ ։ Ոչ որ կեսար . Յոր զնմարդ , ասէ , կարիցեմ առնել զայդ , մինչ ես ինքն ածի զնեզ՝ ի հաշտութիւն ։ Վանգի յառաջն ցասմամբ էր Պողնոս ընդ Տիմագենեայ , և ոչ այլ ինչ պատճառք եղեն նորա դադարելոյ՝ ի ցասմանէն՝ բայց զի կայսրն ցասեաւ ընդ նա ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՁՈՐՐՈՐԴ

Յա՛պա , ՚ի զայրանալ ուրուք և՝ ի գրգռել՚ի ցասումն ասացեալ ցանձն իւր . Պիեմ Հզօրագոյն ինչ զոր իցեմ ես քան զՊիլիպպոս . սակայն և զնա Թշնամանեցեալն անպատուհաս ։ Պիեմ առաւելագոյն իցէ իմ իշխանութիւն՚ի տան քան զիւրացուինն ( )գոստեայ ընդ տիեզերս համօրէն . սակայն և նա շատ համարեցաւ հեռի և ևեթ առնել յեւրմէ զԹշնամանեաղիրն . և ինձ զի է գանիւք և ոտնակապօք պատուհասել զՀանդիսակատարութիւն ծառային իմոյ և զնեռութիւն և զբրիճիչանան , որք ոչ ժամանեն մինչ առ իս ։ Յա՛ո իցեմ ես զի ծանր ինչ և դժուարալուր մի Հարցի յումեքէ իմ՝ Պատրաստ Թշնամեաց իւրեանց նեռիցին , իսկ ես ոչ նեռիցեմ ծուլիցին , Թերահոգ եղելոց և շաղակրատից ։ Ով մանուկ է՝ անբասիր արացէ զնա Հասակն . Թէ կին՝ տկարութիւն բնութեանն , Թէ եկ՝ օտարութիւնն , Թէ ըն-

տանի՝ կենակցութիւն։ Վաճ ևս թշնամանել սկսա նմ. յայն հայհոյեցաք թէ քանի՛ ժամանակք են զի հա՛ձեր զմեզ. յառնայ ևս դառնացուցեալ ևր զմեզ, համբերեսցաք այլ ևս որում համբերեցաքս յերկար։ Խոսեցեալ եմ, արար զոր ինչ ոչն կամեր. թշնամի, արար որ ինչ իւր անկ էր։ Խնասոյն տեղւոյ տացաք, անմնին նեբեսցաք. և ընդ ամենեցուն, որ ոք և իցէ, զայս տացաք մեզ պատասխանի. Վա՛ և իմասնագոյնք՝ի մարդկանէ յանցանեն յաճախ. չիք որ այնպէս աչալուրջ՝ որ ոչ ներհիցէ երբէք, չիք որ այնպէս զգօն և անվրդով՝ի հարուածոյ՝ որ՝ի լեզակարծ դիպուց ոչ ինչ ջեռեալ բորբոքեսցի. չիք որ այնպէս զգուշաւոր առ՝ի չմտանել ումբ՝ որ ոչ՝ի խոսել՝ի իրում ըմբռնիցի՝ի նոյն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Օ ԱՐ օրինակ այր նուաստ քաջալերի՝ի թշնամուն թիւնն իւր տեսեալ զի և հզօրաց դեղեին բախտք, և յաղքատին խղճն զգօնաբար ողբայ զորդին որ զաղքատ նեայն զգառնակիծ յուզարկաւորութիւնս տեսանէ, սոյնպէս և որ խորհին թէ չիք իշխանութիւն մեծազօր աներկեւան՝ի թշնամանաց՝ անգթրագոյն ոգւով տանի իւրոյն զրկանաց։ Վա՛ եթէ կարի յայժ խնամանագոյնք սխալեն՝ այր սխալանք չիցեն ներելիք։ Ցուշ լինի մեզ քանիցս՝ի մանկութեանս մերում թերացեալ գոսք՝ի պարտուց պաշտամանս մերոյ. քանիցս անհամեստք՝ի բանս և անժուժկալք՝ի գիներըս։ Վթէ բարկութեամբ չնասեաց ոք մեզ, ժամ՝տացուք նմա զգօնաւոյ և՝ի միտ առնուլ զսխալանս իւր՝ և անձամբ զանձն կշտամբել։

Որ զթշնամանիչս իւր զկածեցուցիչս անձին արհամարհէ՝ ո՛ երկբայեցի երբեք զի այնպիսին գեր՝ի վերոյ յամբոխին բազմութենէ՝ի բարձու եկաց արձանացեալ։ Խոկապէս մեծութիւն այն է չզեալ հարուածոց։ Պատան ամենի անվրդով հայի լեսս՝ի հայիւն շանց, և զժայռ ահագին վայրապար ծեծեն ալիք փրփրագէք։ Որ ոչն բարկանայ՝ անսասանելի՝ի հարուածոյ անթրաւումենից է. որ բարկանայն՝ սասանեցեալ։ Որ գեր՝ի

վերջ ամենայն զրկանաց ամբարձեալ կայ՝ պատճառաց ասացաք, գիրկընդխառն ինն լեալ երանեալսն բարւոյն՝ ոչ մարդկան ևեթ այլ և բարեաց ձայն տայ յասպարէզ. Աբրա, ասէ, զոր կամիս, այլ ոչ զպայծառութիւնն իմ նահատակութեանել կարասցես. պատասխան է ինձ բանն յորոյ առաջորդութիւն հաւատացեալ եմ զանձն իմ։ Նահատակագոյն իցէ ինձ բարկութիւնն քան զանիրաւութիւն. զի անիրաւութեան է չափ և սահման. իսկ բարկութիւնն թէ ցոլվայր առեալ վարեսցէ զիս՝ անյայտ է ամենևին։

ԴԱՄԻՍ ՔԱՍԵԵՐՈՒԴ ՎԱՃԵՐՈՒԴ

Խոստ է, ասես, հանդուրժել անիրաւութեանց, համբերել ոչ կարեմ։ — Ասես. որ գիտէ տանել կրից բազկութեան՝ անիրաւութեան տանել զիարդ ոչ կարասցէ։ Այս ասանկի ոչ և բարկութեան տանիս արդ և անիրաւութեան։ Ո՞ իարդ հանդուրժես կատաղութեան հիւանդին. զիարդ նահատանաց զառանցելոյն մոռք և տարադէպ հարուածոյն տալոյց. քանզի յայտ իսկ չգիտեն նոքա զոր գործեն։ Ո՞ ինչ խորհ է թէ այսու կամ թէ այնու ախտիւ իցէ ոք խոնջանիս. խոնջանութեան միօրինակ պատասպարան կայ ամենեցուն։

Իսկ զիարդ, ասիցես, անպատուհաս ուրեմն ինասցէ։ — Թէպէտ և այն կամք իցեն քո՝ սակայն նման չմարթէ կալ անպատուհաս։ Անձագոյն պատիժ չարեացն գործեցելոցն նոյն ինքն չարագործութիւնն է. և որ ի խրշտ չարեացն տանջի՝ զձմարտագոյնն կրէ պատուհաս։

Եւ զի յամենայն դէպս պատահիցէ ուղղութեամբ դատել մարթասցուք՝ հայել պարտ է և ի պայման մարդկայնոյ բնութեանս. զի զինչ անիրաւ քան զՀաստակաց ախտն սմա կամ նման համարել ի յանցանս։ Հրեշտակացուց Թխութիւն մարմնոյ չհամարի ինչ առ նոսա, և ոչ չիկադոյն հերք առ Վերմանացիս, առ որս ոչ ինչ գժպատեհ է և արանց հիւսս վարսից սնդել ի վարսակալ։ Ալի ապա մեզադիր լիցիս ումեք և մի ի յանցանս գրեսցես զայն ինչ որ հաստատակաց է ազգին ողջոյն։ Ո՞ այսոսիկ զոր ասացի՝ գաւառի միոյ և կամ

կողմանն արդարացուցանել սովորութիւն. տես արդ քանի՞ առաւել ներողութեան իցէն արժանի այն ամենայն որ հասարակաց մարդկան ազգի են թերութիւնք. Պետերքին խորհրդակցեցաք եւ անզգոյշք, ամենեքեան կասկածոտք բրիստոնեայք եւ ամբարտաւանք. եւ զի պատ՝ի պատ բանիւք զհասարակաց վերս թագուցանեմ ամենեքեան չարք եմք: Այլ որ ինչ որ արժանի կրճատութեան տեսանել յայլ՝ յիւրումծոյի գոցել պայն: Օ՛ զարմանալի է ախտն ժանտ: Հանապա, ներողամիտք առ միմեանս լինուք. չարք՝ի միջ չարաց կեանք. միոյն այսուիկ լծոյն մեզ անգորր՝ եթէ գաղնաւորիցիմք ներել միմեանց: Այսպէս նա, ասես, անիրաւեցաւ առ իս և ես նմա ոչ: — Ասայց գուցէ և քո վարդ իսկ անիրաւեալ է այլոմ կամ թէ անիրաւեցիս դեռ և ս:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ա՛ի՛ յօրէ առաջի և՛ի ժամէ առնուցուս կշռել զանձնդրդ. այլ՝ի պայման բնութեան հոգւոյդ հայեաց հաստձրէն. թէ և չիցէ քո չար ինչ արարեալ՝ սակայն արատ ցես դեռ ևս: Այլ ևս ևս իցէ գարման տանել անիրաւութեն քան վրէժիմդիր լինել. բազում ժամանակք վատնին՝ի վրէժիմդրութիւն. և միոյ անիրաւութեան քննախնդրութիւն՝ յոլովից այլոց լծոյ պատճառք: Ցկերկարատև քան զինչսն բարկութիւնս մեր է. քանիմն լաւ իցէ տեղի տալ և մի ախտիւ զախտս ցամոցանել: Այթէ խնամոտութիւն իցէ աքացել զչորի զի աքաղաղաց, և խածանել զշուն զի եխած: Դարա, ասես, չգիտեն իսկ թէ մեզանչեն: — Ասայց նախ՝ ո՞ր անիրաւ քան զնա՝ առ որում մարդն գոլ յանցաւորին՝ նուազագոյն հնարէի առնել զնա արժանի: Այս գարձեալ, եթէ այնք՝ի կենդանեաց պատասպարին՝ի բարկութենէ քոմմէ այնու՝ զի վերկ են՝ի խորհրդոյ, ըստ նոցին հանարեացին քեզ և ամենայն խորհրդակցոյնք: Օ՛ի զինչ անատ թէ այլով մնասոքք անմահն անբանից՝ իցէ ոք՝ երբ այնու օրով չհանարին անբանիքն մեզք՝ նմանել նոցա՝ միգամած ունելով զմիտս: Այեղանէ ոք առ քեզ,

ոչ այն առաջին նուագ իցէ յանցանելոյ նորա և ոչ վերջին։ Զի պէտ և ասել ասիցէ, թէ ոչ ևս յաւելից մեզանէ՝ մի՛ հաւատար նմա, մեղիցէ նա քեզ և այլ ևս նմա. և կեանք մարդկան հանդերձն հոլովիցի ՚ի մեզ։ Ոգի դժնեայս մեզմով վարել պարտ է. որ ինչ ՚ի ցասս և ՚ի տրտունջեան զնոյն իրաւանքն ևս ՚ի բարկութեան մերում է ասել. կամ ժամանակեայ բարկութիւնդ է և կամ մշանջենա. եթէ առ ժամանակեայ՝ ոչ լաւ ևս իցէ քեզ զնա յաղթել քան թէ նմա զքեզ. ապա թէ մշտին ջնջասցի՝ տես թէ որպիսի չարաստանջ կեանս ընտրես քեզ. զի որպիսի ինչ իցեն կեանք յաւերժացելոցն ՚ի բարկութեան։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ՅԱՒԵԼ արդ և զայն՝ զի թէ ոչ զոյց բարկութեանդ մեղայնիցեմ անդուլութեամբ պատճառս նորանորս յաւելուլ ՚ի զրգռութիւն, ինքնին իւրովի չիջանիցի՝ ժամանակաւ տկարացեալ զօրութեան նորա. արդ ոչ լաւ ևս իցէ զի ՚ի քէն յաղթեսցի այն և ոչ յիւրմէն։ Վերթ ընդ սա և մերթ ընդ նա զայրասաս. այսօր ծառայիցդ և վաղիւ ազատագրելոցդ. այժմ ծուռացդ և ապա որդւոցդ, մերթ ծանօթիցդ և մերթ անծանօթիցդ, զի ամենայն ուրեք չպահասիցեն քեզ պատճառք՝ եթէ ոչ խաղաղարար ընդ մէջ մտանել սիրեսցես։ Վերթ յայսկոյս ձգեսցէ զքեզ զայրոյթ և մերթ յայն. և ՚ի յանձինել նորանոր զրգռութեանց հետզհետէ՝ բնաւ բեսցի ՚ի քեզ կատաղութիւն։ Ոչ՝ զոգ հիզացելումդ, և երբ ապա ժամ առնուցուս ՚ի սիրել, զարգ զգաստական ժամանակդ ՚ի չարն ՚ի վար արկանես։ Ոչ լաւ ևս էր բարեկեան քեզ առանալ, զի շնաւիսգ ընդհանցուցանել, աշխարհին սպառ հարկանել և յաւանեին տեսչութիւն հսկել արհեստութեամբ, քան թէ չուրջ գալ և խնդրել թէ որպէս ջնասեսցես այլոյմ, և թէ զոր հարուածս տացես պատուոյ նորա կամ ընչիցն հայրենականաց և կամ մարմնոյն, որ և այն ոչ առանց մեծի ձգանց և վտանգի՝ թէ յաջողեսցի քեզ, թէպէտ և վայրագոյն որ քան զքեզ իցէ։ Օ ի թէպէտ և ձեր-

բանալ զնա կաշկանդեալ՝ և ըստ ամենայն կանկու-
Թեան սրտիդ զցասումն բարկութեանդ՝ ինձ Թափես-
ցես, սակայն բազում այն է՝ զի և հարուած մի ուժ-
գին զհարկանողին յօդան խախտեսցէ, կամ բազկին
կորով ընկրկեալ՝ զատամունն փշրեսցէ։ Ո՛չ բազում
խեղացոյց բարկութիւն և անպիտանս արար առանց
իակ ստախին դիմամարտութեան։ Իակ ո՛ւր Թողից ապա
զի չէք կենդանի այնպէս ապիկար՝ ի քնէ զոր անվտանգ
առնևիւն մարթ իցէ կորուսանել. Է՛ զի ցաւք և է՛ զի
դէպք զտկարս իակ խրախուսեցոյն ընդդէմ հզօրաց։
Յաւել և զայն զի բազում ինչ իրք ընդ որս զայրա-
նամք՝ հարկանեն զմեզ, այլ ոչ խոցեն։ Ո՛ի բազում
ինչ իտիր է եԹէ հակառակեսցի ոք կամաց մերոց կամ
Թէ Թերացի՝ ի կատարումն. յափշտակեսցէ ինչ՝ ի
մէնջ կամ Թէ տալ չկամիցի, բայց մեզ հաւասար իրք
Թուին Թէ բառնայ ինչ ոք՝ ի մէնջ և Թէ չկամի տալ.
եԹէ ընդունայն առնէ զյոյս մեր՝ և Թէ յապաղեցուցա-
նէ, եԹէ ԹշնամուԹեամբ հակառակի և եԹէ յօգուտ
անձին. եԹէ՝ ի սէր այլոց և եԹէ առ ատելոյ զմեզ։
Ան իակ ոչք ոչ միայն արդար իրաւամբք՝ այլ և առա-
քինաբար հակառակին մեզ, ոմն հօր իւրում ջատագով
կացեալ, ոմն եղբօրն, ոմն հօրեղբօր և ոմն բարեկամին.
և մեք դժկամակիմք ընդ նոսա զի զայն առնեն, զոր
Թէ չառնէին՝ ստգտանէաք զնոսա։ Ա՛ւ չհաւատալն և սա
այն է՝ զի զգործն գովեալ յաձախ և զգործողն պար-
սաւեմք։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Ա՛յր մեծախոհ և արդարակորով՝ զքաջն և զարին
որ զոգի՝ ի բուին եդեալ՝ ի վերայ ազատուԹեան և
փրկուԹեան հայրենեացն մարտնչի՝ Թէպէտ և՝ ի Թըշ-
նամեաց իակ իւրոց իցէ՝ մեծարէ, և ցանկայ այնպիսիս
և հայրենեացն իւրոց ունել քաղաքացիս և վերամար-
տիկս։ Ձար է և վատԹար՝ ատել զոր գովեսդ, այլ
վատԹարագոյն և աս ատել զայն յայն սակս՝ որ աղա-
գաւ գԹուԹեան է մանաւանդ արժանի։ Ո՛ր օրի-
նակ է ազատն՝ որ՝ ի գերուԹիւն ծառայուԹեան է-

կեալ յանկարծ՝ թէ զՀետս ինչ ազատութեանն բերցէ յանձին, եթէ յանարգ և ի տարժանական ապաստ-
ուրութիւնս ոչ մեծաւ փութով աձապարեսցէ, եթէ յանձնդիւրի սովորեալ՝ զՀետ ձիոց և կառաց տեառնն
ընծանալ ոչ բաւեսցէ, եթէ ի հանապազորդ սքնու-
թեանցդ խոնջ նիրհեսցէ, եթէ ի քաղաքական ան-
դորը կենաց ի գեղջկական վաստակս եկեալ՝ ի խիստ
գործոյն հրաժարեսցի կամ ոչ ժրութեամբ գործեսցէ:
Եթէ չկամի ինչ որ թէ չկարէ՝ զայն քաջ քննեսցուք:
Եթէ ոչ յառաջ քան զդատաստան շտապէաք ի բար-
կութիւն՝ զազգումն արձակեաք անդատապարտ: Այլ
մեք արդ զՀետ նախկին թափոյ բերմանն վարեալք
միանգամ՝ յետ այնորիկ թէպէտ և մնատի ինչ իրքն
իցեն յորոց գրգռեցաքն՝ ցանկորդեմք ի նոյն, զի մի
յանիրաւի թուիցիք եկեալք յայն: Այլ որ չար և
է՝ բարկութիւն անիրաւ առաւել խստասիրտ է և
առաւել կամակոր, յոր յամառեալք և յաւելումք
գամ քան զգամ. որպէս եթէ հաւաստիք արդար բար-
կութեան իցեն յաւելուածն ի նոյն: Եւ լաւ ևս է զնախ
կին պատճառս նորին առնուլ ի քնին և տեսանել թէ
արդեօք թեթև իրք են և անվնասք: Որ ինչ անբանիցն
կենդանեաց՝ նոյն և մարդկան տեսանելիք պատահեալ,
զի ընդ ընկնիս և ընդ մնոտիս խոտովին:

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ

Ընդ գոյն կարմիր զայրանան ցուլք, գբարբս գըր-
գռեալ կանգնեն ստուերք, ի տեսիլ սպիտակ կտաւոյ
խրտնուն արջք և առիւծք. և ամենայն կատաղիքն ի
քնի գազանք՝ ի տեսիլ մնոտեաց զարհուրեալ պակ-
նան: Զայն և խօթամտայն և ամբոխելոց ի մարդկա-
նէ պատահէ. դայլն կասկածանօք գրգռին և զայրանան
այնպէս՝ մինչ և զնուազութիւն երախտեաց զրկանս
երբեմն համարել: Այս արդարև չամախագոյն՝ կամ
գէթ զառնագոյն բարկութեան պատճառք երախտիքն
եպանին: Օ այրանաքդ ընդ սիրելիս զի ոչ որպէս ակն
ունէաք, կամ որչափ ինչ այլոյն՝ ընդհեցին և մեզ. Թէ-
պէտ և առ երկաքանչիւրն դիւրապատրաստ կայ դեղ,

(Ախպիկա և յոլովագոյնս առատաձեռնեսցէ զբ այլոմ՝ մեք մերովբս մխիթարեսցուք , ոչ ինչ յայլոյն Հայկ. ցեալ : Որ երջանկագունին նախանձու տանջի՝ լցցէ երբեք երջանիկ : Ոչ որչափ ակն ունելի ընկալայ · բայց գուցէ առաւել քան զարժանն ակն կալայ : Այս է ահա յորմէ առաւելապէս երկնչել մեզ պարտ է . զատի ծաղեն բարկութիւնք աղիտաբերք որք զամենայն օրինս ուղղութեան և արգարութեան առ ոտն կոխեն : Օ գիւցազնն Յուլիոս յոլովագոյնք ՚ի բարեկամացն քան թէ ՚ի թշնամեաց նորա դատեցին , զի զանցագ տենչ ակնկալութեան նոցա լիացուցանել ոչ կարաց : Այսպէսէն ջանացաւ նա բարեբարել ամենեցուն , և ոչ որ երբէք գնա առատաձեռն գտաւ յաղթութեամբն , յորմէ ոչ ինչ այլ կալաւ անձին՝ բայց զանշահելոյն գիշխանութիւն : Սակայն զիարդ մարթ էր լիացուցանել զդիւժ պատերհ ցանկութիւնս այնքանց մարդկանն՝ որոց միոյ միոյ այնչափ ցանկութիւն էր՝ որչափ իւր միայնոյ կարողութիւն : Այմն իրի սուսերամերկս զգահոյիւքն էաես գգինուորականիցս իւր զՎիմբրոս Տուղլոս և զայլսն ևս զջերմ կուսակիցս իւր յառաջագոյն՝ և յայժմ Պոմպէոսեանս , մինչ ոչ ևս էր Պոմպէոս :

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԱՒՈՒՆԵՐՈՐԴ

Այս է ահա որ զթագաւորսն՝ իւրեանց գինուքն և հար չև զմտերիմն նոցա գրգռեաց ՚ի մահ մտաբերել այնոցիկ՝ յորոց վերայ և յառաջ իսկ քան զնոսա ՚ի մահ տալ զանձինս ուխտ եդեալ էին : Որ յայլոյն աչս արձակի՝ ընդ իւրսն ոչ հաձի : Այսր աղագաւ և ընդ դիմս ցասնումբ՝ զայլ որ տեսանելով յառաջադէմ քան զմեզ , և ոչ յայն հայիմք թէ և ամբոխ մեծ նախանձորդաց գինի մեր գայ : Սակայն ցայն վայր մարդկանն հասանէ անզգամութիւնն՝ զի և յառնուն շատ՝ անիրաւութիւն զայն համարի զի շատ ևս կարէր առնուլ :

Վատաւոր կացցէ զիս , ասէ , այլ իմ՝ բդեշխութեան աին եդեալէր . խոբնա երկոտասան ետ ինձ յառաջընթաց , բայց ոչ տարեւոր կացցէ զիս բդեաշխ : Յանուն

իմ՝ սահմանեաց կոչել զաթոռին՝, բայց պակասի ինձ քրմապետութիւն։ Ի դասակցութիւն պատուոյ քրմապետութեան եղէ վերառեալ, այլ աւագ, զի՝ ի միում ևեթ դասու։ Ի ծայր լրութեան փառաց և իշխանութեան կացոյց զիս. այլ ՚Ո՛հ թոհութիւնս ինձ ոչ յաւել։ Օ՜այն ինձ ասաւ հնոյնս՝ զոր այլևայլ ումեք հարկ էր ինձ տալ. ոչ ինչ յիւրոցն ընձեռեաց։ Վո՛հացիր մանաւանդ վասն որոց առեր, և որոց չառեր ակնկալիր, ինդացեալ՝ զի չև ևս յղփացեալ ես. քանզի և այն ցանկալի է՝ լուսափունի իմիք դեռ ևս ակն ունել։ Ա՜խ ամենեցուն գոսա գեր՝ ի վերոյ՝ ընդ այն խնդասիրիր զի գիտասպասիս տեղին ունիս՝ ի սիրտ բարեկամիդ. ինձ յառաջեցին քան զքեզ յոլովք՝ յայն հայեաց՝ ինձ ո՛րչափ յոլովագոյնք ևս են զորովք յառաջեցեր քան որոց զհետն երթաս։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Վ՚ԻՏՈՑԵ՚Ն իւ իւիք սխալես մեծապէս. զի վըիպակ առնես հաւիս, զտուեալդ մեծ և զառեալդ փոքր գրեւով։ Վ՚Ա՛յլ ինչ յայլս նահանջեացեն զմեզ՝ ի բարկութիւն. յամանս երկիւղ, յոմանս պատկառանք և յոմանս արհամարհութիւն։ Ա՚ն մեծ ևս ինչ գործեաք՝ զտապակեալն ստրուկ՝ ի պահեստ առաքեալ բանտի. և զի սաստապարեմք՝ ի գանել և զարձան խօտակել. մի՚ել բարձրի՝ ի մէջ իշխանութիւս մեր՝ երթ՚ ել յապաղիցեմք. Թող եկեսցէ ժամն յորում մեք ինքնին՝ ի ձեռս առցուք զիշխանութիւնն. զի այժմ հրամանատու բարկութիւնն է. յորժամ նա տեղի տացէ՝ յայնժամ արդար գտեսցուք զատաստան։ Յայսմ՚ա՛ն առաւելապէս սխալեմք՝ զի վաղվաղեմք՝ ի սուր և՝ ի պատուհասս մեծամեծս, և կապանօք և բանտիւ և սովու քննախնդիր լինիմք յանցանաց՝ որք թերթև գանից էին արժանի։

Խակ զինքդ. կամիս ուրեմն զի զամենայն չնաստկարան

1 Քանզի երկին ազգ իշխանութեան բդեչխից սահմանեցան յՕգոստէայ, ոմանց առաւելագոյն փառաց ընդ այն ոգւոյն կալ յիշխանութեան, յորոց անուն և տարին այն կոչէր և Թռուէր. խակ այլոց ընդ ամիսս երկուս կամ երիս, և տալա այլք գնասս յայլորդէին։

մեզ իբրև ընչինս՝ մնոտիս և տղայականս արհամարհեցեալք, — Եմ կարևորագոյն իսրատ և յորդոր այս է՝ վէհանձն գոլ հոգւով, և տեսանիցեմք՝ զի այն ամենայն վասն որոց կագեմք, խոռվիմք և յոգւոց ելանեմք, որ պէս արհամարհք են, անարգք և անարժանք ամենևին. զի որ ի մեծամեծացն և ի բարձրագունիցն տեսութիւնս յառեալ կայ՝ անկարկեցեալ իսկ յայնոսիկ։

ՈՒ ասպաքէն առաւելագոյն մասամբ վասն արծաթոյ յուզին վէմք և կռիւք. սա զատեանս աշխատ առնէ յուզել, զհարս գրգռէ ընդ որդիս, Թոյն ի բաժակս խառնէ, սուր ի ձեռս տայ հուղկահարացն և լեզեցոց. սա արեամբ մերով շաղախի. վասն սորա այր ընդ կնոջ զգիշերս ի գլուխ կագեն աղաղակաւ և զատեանս դատաստանաց հեզեղաբար գրաւէ ամբոխ. վասն սորա Թագաւորք գաղանանան և յափշտակեն, և զքաղաքս կանգնեալս բազմաշխատ ձկամբք և վաստակօք յոլով դարուց՝ հիմնովին տապալեն զի յաձիւն նոցին խուզարկեացեն զոսկի և զարծաթ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Տես, ազէ, ի խորչս խորհրդոյ զծածկեալ գանձան. վասն նոցա աչք ի գուբս ոսոխուն կագելով, և ի գոչիւն աղաղակի հնչէն տաճարք ատենից, և ի հեռաւոր աշխարհս կոչեցեալ նստին դատաւորք ի գատել զինչ, Թէ արք յերկուց արդարացի ագահութիւնն իցէ։ Եւ զինչ ասեմ վասն գանձուց. վասն գոյն պախրէի, վասն դենարի միոյ նենգելոյ ի ծառայէն՝ ծերունին անաժառանգ մերձ ի գուբս մնհու հեղամիձուկ պայթի բարկութեամբ։ Եւ վասն գոյն վաշխոյ և տոկոսեաց վաշխառուն ախտակիր հաշմտիւք և կարկամեալ ձեռօք՝ որք ոչ ևս յայլ ինչ բայց ի հաշիւ են պիտանացուք, յատեան դիմ աղաղակաւ, օր և ժամ սահմանեալ պահանջելոյ զգրաման ի տագնապի անդ ախտին հիւանդութեան։ Եւ Թէ համարձն զանձնայն իսկ հանեալց՝ զորս ի բովուցն պեղեմք անդադար՝ զգրաման այսր ի մի վայր կուտեսցես, եԹէ զծածկեալն բովանդակ զգանձս զորս ագահութիւն յերկիր անդր ուսոի վեր-

բերեալն էր չարաչար՝ Թագէ վերատին, այսը ՚ի մէջ մատուցանիցես, զայն առնուցին զեզ և կոյտ ոչ ինչ արժանի վարկանիմ առ ՚ի հնձուել զնակատ առն բարւոյ։ Որչափ ծաղռ արժանի իրը են ապա որոց վասն արտասուեմք։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

ՅԱՒԵԼ յայտսոիկ և զայլ ևս զրգիռս բարկութեան՝ զկերակրոյն և զըմպելեաց զեղխութիւն, զհանդերձանոց չքեղ պերճութիւն, զանիս թշնամանաց, զանպատուադիր շարժուածս մարմնոյ, զկատակածանս, զգրատուց հետութիւն, զտարփոյ պղերգութիւն, զօտարբին բանից ՚ի չարն մեհենութիւն՝ որով և ընդհանուր մարդկան պարգև խօսից ընդ աղիտաբեր թշուառութիւնս բնութեան համարեսցի արդեօք։ Ո՛հ, կարի յոյժ թեթև իրը են՝ որոց վասն ծանուցիս ցանուսմբ, նմանեալք մանկանց որք վասն հնձելոց ՚ի կապ և ՚ի կռիւ բորբոքին։ Ո՛չ ինչ չայնցանէ ընդ որս հոգամքն այնչափ՝ մեծ է և կարևոր։ Այս այն է, ասեմ՝ պատճառաբ բարեմութեանս մերոյ և մոլեգնութեան, զի զնչնիս մեծ համարիմք։ Այս որ զժառանգութիւնն իմ՝ կինքն շորթել հնարեցաւ. նա յուսով կատկարիր ժառանգութեան զառգեցուցեալ զիս յերկար և ապա մերժեաց. և միւսն այն սիրուհւոյս իմոյ ցանկացաւ։ Այսպէս միաձայնութիւն կամաց և չժաղաւութեան ՚ի նոյն, որ յաչախ սիրոյ է զոգ և պատճառ, առելութեան և թշնամութեան լինի մեզ զրգիռ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՅԱՆՁՈՒԿ փողոցի ընդ միմեանս հարեալ զրգռին անցաւորք. ՚ի լայն և լընդարձակ չանապարհի և ամբոխ մեծ քաղաքին չպատահէն իսկ իրերաց։ Յանկալիքն ձեզ հանայն՝ քանզի նուազունք են, չայլմէ չայլ չտենին անցանել առանց միումն զրկելոյ. և աստի ահա կռիւ և կռիւ ՚ի ցանկացողս նոցին զրգռին։

Օ այրանաս զի իշխեաց տալ քեզ պատասխանի ծա-
ռայ քո կամ ազատագրեալ, կամ ամուսին և կամ հո-
վատուրեաքն առ ի քէն. և զու ինքն բողոքես ասա
զի բարձեալ է ազատութիւն ի Հասարակապետու-
թենէ, մինչ քո անհետ իակ արարեալ է զայն ի տանէ
քումմէ։ Աչ զինչ թէ լսեր ծառայդ, և հարցեալ չտայր
քեզ պատասխանի. ոչ արդեօք ստամբակ և կամակոր
գնա կոչեիր։ Ասէ մեր ասա և խօսել նմա և լսել և
ծիծաղիլ։ — Այոյ, առաջի տեառնն իւրոյ։ — Աչ
տեառնն, այլ հօր գերդաստանին։ Օ ի աղմկիս, զի գո-
չես, զի ի ժամ ընթրեաց ի գաւազան ձեռնարկես
զի խօսեցան ծառայք և զի ի բազմամբոխ ժողովին
չտիրէ լուռթիւն տայ։ Այ ինէ ի լսր մեղմ
և աւաչ քաղցրաձայնութեամբ միայն և յարմարաւոր
ներդաշնակ նուագաց հաստեցան քեզ լսելիք. Հարկ է
քեզ լսել յաճախ և զծաղր և զկական, զփազաքշանս
և զթշնամանս, զաւետաւորս և զտխրականս, զար-
բառ մարդոյ և զձայնիւն և զառաւիւն անասնոց։ Օ ի
այդպէս ընդոստնուս, ով չուառական, ընդ գոլել ծա-
ռային, ընդ զօրանալ պղնձոյն, ընդ բաղխել դրան.
մի այդպէս փափկասէր լինիր, Հարկ է քեզ և զորօ-
միւնս լսել։

Օ որ ինչ զունկանէն ասացաք զնոյն և զայսմն է ի-
մանալ որք ոչ ինչ ընդհատ նեղին սովորեալք ի գրգու-
թէ։ Ա չտագնին ընդ բիծ և ընդ արատ և ընդ արծաթի
անփայլ և ընդ անագ թէ ոչ ցոլայ յարևու։ Ա՛ր որք
ոչ Հանդուրժեն տեսանել առանին՝ բայց կիճ բազմա-
գունկ ջինջ և որորկ արծնեալ և սեղան յազնիւ փայ-
սից ի գունագեղ առէչս պիսակացեալ, և ընդ ատիք
զայն որ մեծագին քան զոսկի իցէ, անվրդով տեսանէն
արտաքոյ զգայուղից խորտաբորտ փողոցն, զգձուձ
կերպարանս յորովագունիցն ընդ առաջ երելոց և զոր-
միւնս տանց ծախեալս, կիսաւերս և անհարթս։

՝ Ջի որպէս և այդ սովորութիւն է Հնդրապա՝ զանգակ ի գուռս տանցն կախէին յորոց ի հնչիւն բանային գուբքն։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՎԱՑԵՐՈՐԴ

Այլ արդ զի է զի ընդ որս զայրանան ՚ի տան՝ ոչ ինչ նեղին արտաքոյ , բայց զի ատ Հանդարտ և պատրաստ ՚ի Համբերութիւն է սիրտ նոցա , և ՚ի տան դժկամակ և պատրաստ ՚ի տրտնջել : Ի խստամբերութիւն պարտ է կրթել զզգայութիւնս ամենայն որք տակաւնքն են և Համբերարոք ՚ի քնե թէ ոչ սիրտն վնասս զեղծուցանիցէ . նմին իրի Հանապազօր պարտ է Համարս պահանջել ՚ի նմանե , որպէս առնէր Մկքստոս : Օի ՚ի տալ ուել աւուրն յորժամ ՚ի դիշերայնին դարձ առնէր Հանգիստ՝ Հարցանէր ցանձն իւր . Օր չախտիցդ քոց բժշկեցեր , զոր ՚ի կրիցդ նուաճեցեր , ի՛ լաւագոյն է ցես : Ցեղի տացէ բարկութիւն կամ զգծտագոյն ևս գոցի՝ յոչ ածեալ թէ յերեկոյին յանդիման լինել կայ գատաւորին : Օ ինչ ուրեմն զեղեցիկ քան զայս տալ բոլոր խնդրելոյ յանձանց զաւուրն Համար : Մրսլիսի քոն գթնութիւնն զայն յաջորդեսցէ , քանի խաղաղիկ , խորին և քաղցր՝ եթէ անտգիւտ գտաւ սիրտն կամ թէ խրատեցաւ ծածկաբար . և դէտ ևս քննիչ կացեալ անձին՝ ծանեաւ զինացս իւր :

Այսու վարիմ և ես իշխանութեամբ և զօր առնայն առեան ուղղեալ առաջի իմ գատ վարեմ : Յորժամ Հրաման բառնի յայց իմոց , յորժամ ամաւսինն իմ՝ վաղնջուց գիտակ բարւոյ իմոց՝ լռեալ դադարէ , խնդրեմ զՀանար աւուրն՝ զաներևոյթն զբանս իմ և զգործս ՚ի մէջ մտաւոգեալ : Ի ինչ Հագուցանեմ յինէն և կամ անտեսեմ . զի առիմ իցէ ինձ զանգիտել ՚ի խոստովանութենէ յանցանացս իմոց յորչափ կարող եմ առել . Տես , մի՛ ևս յանցանիցես . զայս նուազ ներեալ քեզ . յայն վէձն Ջերմագոյնս խօսեցար , մի՛ ևս ընդ տխմարս ՚ի պայքար մտանիցես . որոց ուսեալ երբէք չէք՝ ուսանել բնաւ ոչ կամեցան : Օայն զբ Համաձայնագոյնս քան զարժանն կշռամբեցեր , վըշտագնեալ մանաւանդ քան թէ ուղղեալ . տեսջիր այսու Հետև զի ոչ միայն Ճշմարտութեամբ իցեն ասացեալքդ , այլ զի և որ լսէն՝ ընդունակ Ճշմարտութեան իցէ :

ԳԼՈՒԽ ԵՐԵՄԵՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Այր բարի խնդայ ընդ խրատ. չարն գժկամակի ընդ յանդիմանին։ Ի ինջոյս անդ ծաղրածուելն ամենց և բանք խոցոտիչք զկծեցուցին զքեզ, ի բաց կացեալս այսուհետև ի ռամկական ինջոյից. ազատաբար և յետ գինւոյ մոլի համարձակախօսութիւն, զի և զգաստից իսկ չէ այն յամենի։ Ցեսեալ զբարեկամ քո զայրացեալ ընդ դռնապանի փաստաբանին կամ մեծատանն զի մերժեալ եր զնա ի մուիցն, զայրացար և դու ընդ նմա ընդ ստրուկն անարգ։ Օ այրացիր, ազէ, և ընդ շունն՝ չղթայակապ, որ յերկար հաջեալ՝ ընտելանայ ապա պատառով միով հացի։ Ի բաց կաց ի տեղոջէն և ծիծաղեսջիր՝ զի մեծ ոմն զանձն իւր համարի փաստաբանին վասն պահպանելոյ սեմոյն ի խուռնբնեթայ ամբոխէ վիճողացն և դատափետելոց. զի և մեծատունն ի խորս անդ ապաքանիցն բազմի երջանկաւէտ՝ նշանակ մեծութեանն իւրոյ և բարեբախտութեան զամբապահ զրուանն համարեալ, ոչ գիտելով թէ ամրագոյն ևս պահին զրուանքն բանտին։

Օ այս վաղագոյն դիջիր ի մոլ թէ բազում ինչ ինայ քեզ կրել. եթէ զարմացիր որ զի պակղ ի ձմերան, զի ծովահար տանջի՝ինաւելն, զի ի ցունդ գայ ի ձմեռապարտ հորդէնս։ Ահրտ կալ և յառաջապատրաստ՝ արիագոյն ի վիշտս է։ Օ ի խմարհագոյն ի բազմականին տուաւ քեզ տեղի՝ զբարեցար ընդ հրաւիրսին և ընդ կոչնատէր և ընդ նմա իակ որ ի վերագոյն բարձին պատուեցաւ։ Օ ինչ իցէ, անմիտ, թէ զմր կողմն բազմականին ձնեղցես. զի կայ քո ընդ բարձին. միթէ ի նմանէ զմեծութիւն և զանարգութիւն ընկալցիս։ Ընդ ակամբ հայեցար և ընդ նա՝ որ ոչ գոլով եամբ խօսեցար զհանձարոյ մտացդ. քաջ է, թէ հաստատութեամբ վայրդ օրհնագ ունիցիս՝ ապա և ի հնինիս զքեզ տեսցէ զի ոչ նորա քերթուածոցքն զուարճանաս, և Հորաեհիս

1 Ջի ի տունս աւագաց և շուն մեծ առ դռնապանին կապեր ի պահպանութիւն։

պես քեզ պահեսցէ, և Աիկերան Հնդամասցի սրգեաբ
եթէ ծաղբես զտաղս նորա։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Ի՛ՀԱԿԵՐՏԵԱԼ քո բանասիրութեան և գԺկամակից
ընդ դատաստանաւ անկանել։ Ի՛այլ Հնդամանեալ զբ
զքեզ. և միեմէ առաւել քան զԱիպոկրէս զհմտաստա-
սէրն Աոտիկեան, որ մինչ զբարկութենէ Հառ արկեալ
խօսէր՝ պատահի ոմն լսել և ստահակ յերեսան եթոբ։
Ապրամ Հեգութեամբ և իմաստութեամբ Համբերեալ
իմնստասէրն և ասէ. Աէ՛ինչ գայրանամ, բայց կարծեմ
թէ գայրանալ արժան էր։ Ի՛մաստութեամբ եւս մերս
Կատոն, որպ յատենաբանէն՝ Հնտուլոս ոմն այլ գո-
ռոզ և աղմկայոյզ առ՛ի նախնեաց անտի մերոց ծանու-
ցեալ, խիստ զերան իւր որպէս մարձն էր լցեալ և
Հոգւբ՛ի միջավայր անդր Հանգստաւ նորա. զոր սրբեալ
Կատոնի ասէ. Հաւաստեաւ յայտ Հետէ ցսկյց բա-
լորից, Հնտուլէ, զի ստեն որք ասենն զքէն չունել
բերան։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Յ՝ԱՋՈՂԵԱՑ մեզ, ով՛ Լպատէ, ուղղել և չարդա-
րել զմիտս մեր՝ եթէ չզգայ յանձին զցաստումն բար-
կութեան կամ՝ եթէ նուաՀել զայն։ Ջեսցուք արդ զհարդ
և զայղոյն բարկութիւն ցածուցանել մարթ իցէ. զի ոչ
այն և եթէ յանկութիւն է մեր առողջս վնասել, այլ և
զայս առողջացուցանել։

Օ՛նախկին Թափ բարկութեանն նուաՀել բանիւբ
մի յանդգնեացիս, զի խոլ է և անմիտ. Ժամ տուր նմա,
՛ի Թողանալ բռնութեան ախտից ազգին դէզք։ Ա՛է
զբ Հսի յայս ուռուցեալս զի մի ցաւոյն սաստկութիւն
զրգռեալ զայրացի. զնայն է իմանալ և զայլոց ախտից
միևչդեռ յեռանդանն կան։ Օ՛ակիզբն հիւանդութեանց
դարմանել Հանգիստն։

Ասէին. Այս զինչ արգասիք ազդեցութեան դեղոյդ իցեն՝ եթէ զցածուցեալն իւրովի զբարկութիւն հանդարտեցուցանիցէ։ — Այն նախ՝ զի վաղագոյն հանդարտեցուցանէ. երկրորդ անգամ՝ զի չթողու նմա անկանել վերստին. և հուսկ ապա՝ թէ զթափ յարձակմանն ընկրկել ոչ՝ սակայն ուժգնութիւն առնել կատացէ. 'ի բաց արտացէ 'ի նմանէ զաւերնային գործիս վրէժխնդրութեան։ Ակեղծաւորեացն զբարկութիւն վշտակից իմն երևեալ նմա և օգնական՝ զի ազդողագոյն ևս խրատք իւր ներգործեսցեն. և յապաղումն ընդմէջ արկեալ՝ պատճառանօք մեծի ևս վրէժխնդրութեան՝ յառաջակայիցն զնա կասեցուսցէ. և աւերնային չարտարութեամբ դուլ և դադար ցասմանն հնարեսցի։ Եթէ բուռն և սաստիկ բարկութիւնն իցէ և անտեղիտալի աւերնևին՝ զամօթ և զերկիւղ առաջի դիցէ նմա։ Խակ եթէ մեղմ և տկար՝ բանս հաճոյականս և նորալուրս 'ի մէջ արկեալ հետաքննին յանկութեամբ նոցին զնա զբաղեցուսցէ։ Բանդեն բժշկի ումեմն դէպ լեալ բժշկել զդուստր արքայորդւոյ, և իբրև ետես՝ զի երկաթոյ պէտք էին նմա 'ի գործ, այն ինչ զուռուցեալ ատինան դարմանքն մեղկաշօշափ, նշտրակ ընդ սպնգաձև թաղուցեալ՝ 'ի վէրսն միսեայց։ Բպաքէն հակառակքն այնմ աղջիկն եթէ անպատրուակ զերկաթն տեսանէր. բայց յեղակարծ ցաւոցն հանդուրժեալ տապաւ։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ

Լ ուրեք զի ոչ այլազգ բայց պատրանօք քուժին ախտք։ Ասեմք զսէր. Տես զի մի ընդ ցասումն քո խնդասցեն Թշնամիք. այլում, Տես զի մի բազմահոչակ համբաւ վեհանձնութեան քո և արիութեան կորնչեսցէ ընդոստնայն. իմ իսկ զայրացեալ է արդարև ընդ երեսդ և ցաւէ ինձ յոյժ յոյժ, այլհարկ է ճնալ պատեհին առ 'ի խնդրել զվրէժ. կալ զայդ 'ի մոռ քում և 'ի դէպ ժամուն հատուսցես տոկոսեօք։

Խակ կշտամբել զբարկացողն և ցասմամբ ցասմանն հակառակել՝ զրգռել էցէ և ևս։ Ասեմով վարեսցիս միշտ

և պէսպէս հնարիւք, եթէ ոչ գուցէ մեծ ինչ ոք իցէս հզօր և կարող զօրութեամբ ի նկուն առնել զաթաղութիւն, զոր օրինակ զիւրացուն արար ( )գոստոս մինչ ի կոչունս ընթերաց կայր առ Աղիոսի Պողիոնի, Օ ի ի բեհկանել ուրուքն ի ծառայիցն զինչ առնուցուք՝ Հրամանեա եւ Աղիոս ունել զնա և նորօրինակ պատուհասիս կորուսանել՝ կուր արկեալ մուրեխին ձկանց ոք ի մեծի աւազանի պահէին ի յայգուրդ զեղութեան նորա որպէս կալծեալ թուէր ամենեցուն, բայց իսկապէս յարբանեկել խժգժութեան նորա։ Ընձեռաւրծ եղև մանուկն և յոտս կայսեր զիմեաց ապաստան, ոչ այլ ինչ խնդրելով բայց զի միմ ինն ազգ և մի կուր արկեալ՝ կորիցէ։ Ետուեցաւ կայսրն ընդ անլուր անգթութիւնն և հրամայեաց արձակել զմանուկն յազատութիւն և զամենայն շինս առնորակս խորտակել առաջի իւր և լիր արկանել աւազանին։ Ասպէս իսկ ի դէպ եր կայսեր խրատել և պատուհասել զբարեկամին. պատշաճապէս յոյժ հզօր զօրութեանքն վարեցաւ։ Ի խնջոյից անտի, ալ ժպիրն, հրամայեաց ի մահ յանխտակել զմարդիկ և նորանչան պատուհասիս կորուսանել. զի բաժակ քո բեհկան՝ մարդկեղէն ուրեմն յօշեսցին աղիք։ Զայդ վայր հաձել զնիրսդ՝ զի և անդ ուր կայսրն է՝ զայր ի մահ վարեսցես։

ԳԼՈՒԽ ՔԱՒԱՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Յայսպիսեաւ պէտք են հզօր զօրութեան, զի ի բարձանց ի վերայ անկեալ ուժգին ընդհեռուէ զբարեկութիւնն. մանաւանդ զբարեկութիւն այդպիսի գազանական, անապօրէն և արիւնահեղ՝ որպիսի եղոյց բանս, որպէս չարութիւնք իսկ այլազգ գտանել բժշկութիւն, բայց բուռն ահիւ հզօրագունին[1]։ . . . .

Ի խաղաղութեան հաստատեացուք զսիրտս մեր, հանապազորդ խոհմութիւք կենսատիպ վարդապետութեանց և զօրծովք բարեաց և ի ցանկութիւն հեռ

[1] Պակասէ և սոսկ ի բնագրին։

առաքինութեան զմիտս մեր վառելով։ Չնարատ զխիղճ մտացս կալցուք՝ ոչ ինչ վասն փառաց և համբաւոյ ջանացեալ։ — Այլ ընդ բարձունսն պչրուս ամբարձեալ և մեծարեալ պատուի յանդգնութիւն, և ընդ վատս և ընդդ անգործս պարապուին հանդարտաբարոյք։ — Ոչ ոք ընդունակ թերևս թերի սեռութեամբ, այլ ի վկայել ապա անպայծառ վարուց ուղղութեան թէ ոչ վատութիւն է այն այլ անդորը խաղաղութիւն ոգւոյ, ի նմին իսկ ի ժողովրդենէ մեծարեալ պաշտի։

Եւ մի ինչ ապա յօգտակարագ բերէ յինքեան սխան այն զարհուրատեսիլ և ապառում. ընդ հակառակն զգ չարիս ամենայն, զՏուր, զսուր · արհամարհէ զահեղ, արեամբ զեռան շաղախէ և զանդամն զուարկաց ցանեալ ցնդէ։ Չայլերատութեանց նորա չէք ինչ աներկեան. զիարաց չէ ինչ նմա փոյթ, ի չարաճամբաւելոյ ոչ զանգիտէ, և ի բարկութենէն յատելութիւն չզոփոխեալ՝ կամակոր եւս է և անբժշկելի։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Ի բաց ընկենացուք չանձանց զարս զայս, յստակեցուք զմիտս և կարձռվին խլեցուք ի մէնջ զկիրսն որք ի դոյզն արմատոց առնուրեք վերընձիւղին։ Չաւեմ չափաւորել զբարկութիւն՝ այլ բնաջինջ առնել. զի որ չափաւորութիւն իցէ չարին։ Եւ կարողք իսկ եմք՝ միայն թէ ջանացուք։ Եւ մեծապէս օժանդակ կեցցէ մեզ ի նոյն խոկումն մահկանացու կենացս։ Այլ իւրաքանչիւր ասացցէ ցանձն իւր որպէս առ այլ ոք · Օ՛ի է զի իբրև անմահ ծնեալք՝ բարկութիւն և թշնամութիւն միմեանց յայտ առնեմք և զտակաւորեալ կենաս մեր վայրապատեմք։ Օ՛ինչ օգուտ է զաւուրսն տուեալս մեզ ի պատշաճ զուարճութիւնս՝ ի ցաւս և ի տանջանս այլոց ի վար արկանել։ Չիք մեր ժամանակ կորուսանելոյ. անձկութիւն կենացս զայդ մեզ ոչ ներէ։ Օ՛ի է մեզ ընդ կռիւ գալ, պատերազմունս գրգռել. զի զտկարութիւնս մեր մոռացեալ ատելութիւնս անհաշտս մտացմանեմք, և կորստականաբ

զկորստականաց հնարիմք կորուստ : Ո՛հա ջերմն կամ այլ ինչ յախտից մարմնոյ ՚ի վերայ հասեալ կարձեսցէ զոխտութիւն զոր անհաշտ կրեմք ՚ի սրտի. ահա դառնացոյն և ա՛ս կրձիմն՝ մահ ընդ մէջ անկեալ՝ հուպ ընդ հուպ վախճան արասցէ կուռոյն : Օ՛ի աղմկիմք և ամբոխեալ վրդովեմք զկեանս մեր յուզմամբք : Ա՛օտ առ կուրծս հասեալ կայ օրհաս և զկորստական աւուրս մեր թուէ, և ժամ՚ի ժամէ հպատրագոյն առ մեզ է : Ո՛համ մահուն զոր դու այլուս սահմանես՝ գուցէ անդրագոյն քան զքոյդ է :

ԳԼՈՒԽ ՓԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Օ՛՞ր է զի ոչ առաւել փութաս զփախստեայ ժամանակն ըմբռնել և ընծայել զայն ՚ի դիւր անձինդ և այլոց : Օ՛ի է զի ոչ ջանաս մանաւանդ սիրելի աւետեցուն զանձինդ ընծայեցուցանել ՚ի կենդանութեան և ցանկալի յետ մահուան : Ո՛ւր իմՀ վայրաբերել ցանկաս և զգետնել զնա որ ՚ի բարձու կացեալ՝ խրոխտագոյնս ընդ քեզ վարի. առ իմՀ և զցածումն զայն և զարհամարհ որ ընդդէմ քեզ հաջէ՝ զի դժպհի և անհաճոյ տկարաց են հզօրք՝ ահացուցանել ձգնիս աւետեանն զօրութեամբ քով : Ո՛ւր զայրանաս ընդ տէր քո և ընդ ծառայ, ընդ Թագաւոր քո և ընդ խնամարկեալն առ ՚ի քէն. համբեր վայր մի և ահա գայ հասանէ մահ հաւասարել զամենեսեան : Ո՛ւխծալիմք յաձախ յառաւօտին տեսանս աստղարիզին՝ զի արջ ընդ ցլու կապեալ լկեն զմիմեանս յերկար մաքառմամբ, մինչ երկոքանչիւր նոցա ստակէն սպասեալ ունայ : Օ՛նոյն և մեք գործեմք. ընդ կապեցեալսն ընդ մեզ՝ մաքառիմք ՚ի կռիւ, մինչ յաղթողին և յաղթեցեալսն մօտալուտ ՚ի վերայ կայ կորուստ կանխաժամանն :

Ո՛յպա, խաղաղութեամբ և յանդորրու զսակաւօրեայ ճնացուած կենացս վարեսցուք. մի գուցէ ատելի ումեք և դժպհի զիսակս մեր անկեալ դնիցէ : Ո՛ազում այն է զի ՚ի շշուկ աղաղակի հուպ առ երի բորբոքելոյ հրդեհին լուծաւ կռիւն. և զազան ՚ի վերայ հասեալ

զուղևորն և զհուղկահար զատոյց յիրերաց ։ Ի բռնա-
նալ հզօրագոյն երկիւղին՝ ոչ ևս է պարապ զմանուկդ
չարեաց խորհելոյ ։ Այլ քնաւ իսկ զինչ պէտք էցեն
մեզ մարտից և դաւանաց . զինչ աւելի քան զմահ ըղ-
ձանաս այնմ ընդ որում բարկութեամբ կեաս . և արդ
հանդարտ լեր զի և առանց քոց ջանիցդ մեռցի նա . մի՛
վայրապար աշխատ լինիր առնել զայն ինչ որ լինելոցն է ։
Ա՛հաւասիկ նորա չեմ, ասես, ցանկացօղ, այլ զի տա-
րագրեսցի, չարահամբաւ լինի և վնասեսցի ։ — Ա՛յս-
րագոյն նեղեմ այնմ որ ընդ վերս կամի թշնամւոյն քան
ընդ պալար . զի ոչ չարասիրտ միայն է սա՝ այլ և վատ .
սակայն թէպէտ և զծանրագոյնն ի չարեաց ցանկասցիս
նմա՝ թէպէտ և զթեթև, որչափ ինչ ժամանակս տան-
ջեսցի նա, և դու որչափ ինչ ժամանակս խնդայցես զվայ-
րենամիտ խնդութիւնդ ընդ չարիս օտարին ։ Ա՛յդ հուպ
ընդ հուպ փչեսցուք զոգիս . բայց ցորչափ չնչեմքս դեռ,
ցորչափ ի մէջ մարդկան կեամք՝ մարդկութեան պատ-
կառ կացցուք ։ Ա՛ի ումեք ահընկէցք և մի՛ ումեք վնա-
սակարք լիցուք ։ Ո՛տոյժս, զզրկանս, զթշնամանս և
զչարախօսութիւն՝ արհամարհեալ՝ մեծանձնութեամբ
վաղանցուկ վշտացս տարցուք ։ Ա՛ինչև ի թիկունս կոյս
հայեցեալ, որպէս առակն ասէ, և այսրէն դառնայցեմք՝
ահա հասեալ կայ մահ ։

ՊՂՈՒԿԻՈՍԻ Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐԻՍՏԱՑԻՆ

ԸՍ ՄԵՑԻՑ ԻՒՐ ՀԱՂԱՒԻՒ՝

(Consolatio ad Helviam)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ա՛յս քանիցս է, մայր իմ պատուական, զի խղճէ ե-
զէն ինձ միխիթարել զքեզ, և այս քանիցս ընկրկեալ կա-
տեցայ։ Բազում՝ ինչ իրք յորդորէք կայնել ինձ՝ ի նմին. և
նախ այն զի դիւրեւին ինձ վիշտքս, եթէ զարտասուս քո՝
թէ և ոչ՝ ի սպառ ցամաքեցուցանել՝ բայց մեղմել գնե-
առ վայրս մի ինձ յաջողէր։ Կրկրոզդ անգամ, զի գիտէի
Հաւաստեաւ թէ չէր ինձ մարթ ձեռն տալ քեզ՝ ի կան-
գուսին, եթէ ոչ և ես ինքն ընդ քեզ կամեցեալ։ Օ՛անգի-
տէի և ևս մի գուցէ՝ եթէ ոչ յաղթեսցի յինէն բախտն՝
միւս՛ուանգ յիմոցս լըցի յաղթական։ Կ՛ինն իրի ձեռն
զվիրօքս արկեալ գուն գործէի խլտել գալ՝ ի պատել
զվէրս քո։

Բայց և՝ ի հակառակէն էին և այլ ինչ իրք, որք ըն-
կրկէին զիս յառաջարկութենէ ատոի խմդ։ Կ՛անգի
ոչ՝ ի դէպ համարէի անդատին՝ ի սկզբանէ զդէմ ունել
դժնդակութեան ցաւոցդ, զի մի նովին իսկ միխիթարու-
թեամբ զրգռեալ զայրացի և ևս։ զի և յախտս մարմնոյ

1 Զգիր զայս՝ զոր իրրև լի աչառաժիւք և ձաբասասնուԹեամբ գրեալ և գեղեցկաբոյգ ոճով և մրցանակի արժանի՝ գովեն քննիչք յամենայն մատենագրուԹիւնս Սենեկայի, գրեաց նա՝ ի վայրկ աք-
սորեացս իւրոց, այն էր՝ կղզին Կորսիկա, ի վերջն առաջնոյ ամի աք-
սորեացն։ Միխիթարէ զմայրն, և ցուցանէ զանձն քաջաբար բերել
արկածին իւրոյ, իրրու պարտաւոր այնմ։

*չէք ինչ այնպէս ՀԱսասկար՝ որպէս զեզ տարաժամ՝ Աստ-
ին իրի սպասեալ ՀՈսայի մինչև խորտակեալ առաջնոյ Թափ-
ուժգնութեանն և ինքնին մեղմացեալ ժամանակաւ՝
հեշտընկալ իցէ զեզոյ և զիւրամատոյց զարմանող ձե-
ռին ։ Աչ այսոքիւք և ընդ ամենայն մատեանս անցեալ
մեծահանճար խնամոյոց ոչք պատուիրէին մեղմել և
սանձահարել զցասս , չգոն ուրեք զօրինակ այնորիկ՝ որ
ինքն չիւրոյն արտասուեալ և զիւրն միխիթարեցեալ ։
Ոյր աղագաւ ընդ անսովոր իրացս նորութիւն տարա-
կուսեալ խիթայի իսկ մի գուցէ փոխանակ միխիթարու-
թեան զվերսդ կէդեբեցից ։ Ոչոդ զի և ոչ յառնիսելոց ՚ի
բերանս ամենեցուն հետևակ բանից՝ այլ նոր և անսովոր
միխիթարութեանց պէտք էին ասմ՝ որ ՚ի փայտակոյտ
խարուկէն գլուխ ՚ի վեր ամբառնայր միխիթարել զիւրսն ։
Ասյց առաւելագանց ցաւոց սասկութիւն որ և գձայնն
իսկ սգացելումն գողանայ յառնիս՝ միխէ ընտրութեան
բանից Թոդուցու տեղի ։

Սակայն Ջանացայց որպէս և էն , ոչ ՚ի հանձար յու-
սացեալ , այլ յայն՝ զի ես ինքն որ միխիթարեմ զքեզ ,
եղէց քեզ փոխանակ մեծի միխիթարութեանն ։ Աւ Թէ-
պէտ անյուսք և անսասան իցէ ցաւ , սակայն ասն ունիմ
զի որում ոչ ինչ զլացար երբէք՝ և զայս Ջնորհեսցես որ-
դւոյդ չաի դնել սրտառուչ կրիցդ ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Տես ոչչաի ՚ի Ջներողութիւն քո իցեմ մեծայայս . ոչ
ինչ չերկուսցեալ քնաւ զի քան զցաս քո , քան զոր
չքէ ինչ բռնագոյն ՚ի Թշուառացեալս , զօրիցեմ ես առ
քեզ ։ Աչ զի մի իսկ և իսկ ոգորեցայց ընդ ցաւոցդ՝
զառաջինն սատար իմն կացեալ նմա՝ յաւելից որովք զօր-
գոհն . զանցեալսն ՚ի մէջ մատուցից և զՀնացեալսն նո-
րոգեցից ։

Ասյց , ասասցե ոք , որպիսի՞ ինչ միխիթարութիւնդ այդ
իցէ՝ զՀնացեալ ցաւս սրտի նորոգել , և որ միանգն Հազիւ
Հանդուրժէ՝ զամենայն իսկ ադէտս նորա միաՀամուռ
ածել Թափել նմա զառաջեաւ ։ — Աչ որ զայդ ասէն՝
գիտասցէ զի յոլով ինչ իրք Ջեասակաքը ոչք Հակառա-

կինն դեղոյ՝ բազում այն է զի ներհակաբն բժշկին։ Ա՛ն որոյ զամենայն իսկ աղէտս սրտիդ և զեղերական ցաւսդ յուզեալ շարժեցից, և ոչ մեղմական հնարիւք վարեցայց ի բժշկութիւն, այլ հրով և հատամբ։

Նէ զինչ այնու շահեցայց։ — Օ՛այն՝ զի սիրտ յաղթող այնպէս աղիտից ամենեսեան չէնդունիմ ի միոյ վերառնութեան ի բազմասպի մարմնի։ Զոր լացցեն յերկար և կոծեսցին Թուխսիրտքն մեղկացեալք ի հանապազորդ բարեբաստութիւնս, և ի դոյզն ինչ ստուգմեալք անկցին ի կործան. միոյ որոյ յաղէտս անցին կեանք՝ ծանունք իսկ հարուածոյ անդրդուելի տանին արութեամբ։ Ընդուզ և անընդհատ Թշուառութեանց այս օգուտ է՝ զի ստէպ խոշտանգանօքն հուսկ ապա սիրտս կազմս յարդարեն զկրելիս։

Ադաղն անդասին յօրէ ծնանելեանդ չետ քեզ դուզ և դադար ի ծանր ծանր աղիտից։ Ընդ ծնանելդ՝ մանանայդ Թէ՝ ի ծնանելդ՝ զմայր քո կորուսեր, և որպէս Թէ ընկերիկ եղեր ի կեանս յայս։ Ընդ խնամոք մեծ բուի զարգացար, զոր Թէպէտ որպէս գուստր հարազատ ամենայն որդիապարտ սիրով և մեծարանօքդ ստիպեցեր լինել քեզ ի մայր, սակայն և մերձ բարի՝ չեղև ուրեք զիւրացուոյ։ Օ՛ք եւ խանդակաՀ՝ զայր լաւ և զարի՝ մինչ գաստեանն որա սպառեալ ինայիր, կորուսեր։ Նէ զի մի միոջց և պարապ տուեալ բախտին՝ զարկածիցն ԹեՀևացուսցէ զդժնդակութիւն, մինչ չև անցեալ աւուրց երեսից՝ բարձաս ի քէն և այր քո ցանկալի, յորմէ զերիս որդիսն ծնար։ Ասուգ աղիտիցդ՝ սուգ քեզ գուժեցաւ մինչ և ոչ զր յորդոցդ առ քեզ կայր, որպէս կանխաւ և խորհրդով զայն ժամ ընտրեալ բախտին իւրոց հարուածոյն, զի ոչ ուստեք գոյի քեզ զօրավիգն ի ցաւսդ։ Զոգուժ և զայլ անբաւ վիշտս վտանգաց և զահ և զերկիւղ բազում կուռ զմիմեանց ի վերայ քո հասեալ՝ որոց տարար արիաբար։ Իակ զարդիս ի նոյն ծոց՝ յորմէ զերիս Թոռունս ընծայեալ եր քո՝ զերեցուսց Թոռանցդ վերընկալար զոսկերս։ Յուզարկաւորեալ զոր դեանն իմ, որ ի վերայ բազկացդ և ի համբոյր շրեթանցդ անչնչացաւ, չետ աւուրց քանիից լուար զգոյժ տարագրութեանս իմոյ, զի մի և այս պակասիցէ ի վիշտս քո՝ լալ և զկենդանիս։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ.

Օ՛ի վերջինս այս Հարուած ծանրագոյն քան զամենայն վերսդ է զոր ՛ի մարմնի քում ընկալար՝ խոստովանիմ և ես . ոչ վեր ՛ի վերոյ զմորթդ քերեաց սա , այլ խորամուխ զսիրտդ և զաղիսդ կեղեքեաց ։ Այլ զոր օրինակ Հաճեսկացոյիք ՛ի զօրականէն վերս Թեթևս ընկալեալ աղաղակէն և ՛ի բժշկական դարմանող ձեռացն առաւել քան ՛ի սրոյն զանգիտէն , իսկ քաջքն հնացեալք աւուրբք Թէպետ և կարեվեր խոցեացին՝ Համբերատար արիութեամբ և առանց հեծութեան տան ըզմարմինս իւրեանց որպէս զայլս ՛ի Հատուածն , սոյնպէս և քեզ արդ արիաբար պարտ է տալ զանձն ՛ի բժշկութիւն ։ Իսկ զկոծ և զՀիւ կանացի և զայլն առնեացն զայսպարսս ցաւոց նոցա ՛ի բաց արա ՛ի քէն . զի մի ընդունայն զայնչափ աղէտսդ լնցիս կրեալ , եթէ չև իցէ քո ուսեալ տանել Թշուառութեան ։ Այս արդ կարծիցես դեռ և Թէ խնայելով ընդ քեզ վարիցիմ՝ ահա ոչ ինչ յաղետիցդ քոց նուազեցուցեալ՝ զամենայն միահամուռ ածեալ Թափեցի առաջի քո անվերջ արութեամբ . քանզի եղի ՛ի մահ ոչ պատրանօք այլ զօրութեամբ յաղթել ցաւոցդ ։

ԳԼՈՒԽ ՀՈՐՈՐԴ.

Այ՛ի յաղթեցից՝ որպէս ինձ Թուի , եթէ ցուցից նախ զի չիք ինչ պատահեալ ինձ յայսպիսեաց որով իցեմ Թշուառ , և կամ իսկոյն Թշուառութեան պատճառք ։ Այ՛կրկրդ եթէ և ՛ի քեզ դարձուցեալ զաչսն՝ ցուցից զի և քո իսկ աղէտքդ ոչք զիմոյս կախեալ կան բռնադատ՝ ոչ այնպէս ծանր են և դժուարակիր ։ Այ՛ նախ անտի սկսայց զոր ցանկայ լսել գութ քո մայրենի՝ զի ոչ ինչ կրեմ ես ՛ի չարեաց ։ Այ՛ Թէ կարող ինչ իցեմ՝ և զայն իսկ ցուցից քեզ յայսմասէս , զի և նոքին իսկ զոր

'ի վիշտս ինձ համարիս՝ ոչ ինչ դժոխքմբերը են ինձ ։ Իսկ եթէ անհատտալի Թուեսցին քեզ այսոքիկ, ընդ այն ինդայիդ և ուրախ եղէց՝ զի որովք Քշուառանան այլք՝ ես երանելի եմ յայնոսիկ ։ Իր ինչ զինէն է՝ մի այլում հատատացես . ես ինքնին՝ որպէս զի մի վարանեսցիս 'ի հոգս կասկածոտս՝ ցուցանեմ քեզ Թէ չեմ Քշուառ , և յառաւել վստահուԹիւն քո յաւելում և՝ Թէ չմարԹէ իսկ ինձ լինել Քշուառ ։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Կ՚ԵՂԵՑԻԿ պայման կենաց ընկալաք Թէ ոչ 'ի բաց քաՀիցեմք զայն ։ Օ այս այսպէս սահմանեաց քնուԹիւն զի առ բարուԹիւն կենաց ոչ բազմաց ինչ և մեծամեծաց պէտք իցեն . ամենեցուն մարԹ է լինել երանելի ։ Կ՚ուԼը և պատահարք ոչ մեծ ինչ են , և չէ նոցա մեծ իմն զօրուԹիւն յայս կոյս կամ յայն զկիրճն միտելոյ ։ Իլ յաջողուԹեամբք ամբառնայ խնաստունն և ոչ 'ի ձախողակս Թուլանայ ։ Օ ի այս փոյԹ է նորա հաստատագ յանձն իւր լինել մեծայոյս , և 'ի ներքս 'ի սրտի իւրում խնդրել զամենայն ուրախուԹիւն ։ Իսկ արդ մի Թէ յիմաստուԹիւն պարծիցիմ . քաւ լիցի . զի Թէ էր յիս իմաստուԹիւն՝ ոչ զայն ևԷԹ ասել Թէ չեմ Քշուառ , այլ և բարեբախտ քան զամենեսեան և աստուածամարդ զանձն իմ համարել ։ Իայց արդ շատ է ինձ յամընդել զամենայն ՔշուառուԹիւնս իմ՝ զի առ իմաս ածունս ապաւինեալ եմ . և 'ի պաշտպանուԹիւն անձին անբաւականն՝ 'ի բանակ այլոց կամ ապաստան որք գիտեն քաջ պաշտպանել անձանց և յուսացելոցն 'ի նոսա ։ Իր քա ետուն ինձ պատուէր որպէս դէտ 'ի պահ կալ և դիտել անդուլուԹեամբ զամենայն հնարս բախտին . և զամենայն յարձակմունս նորա՝ մինչ չև 'ի վերայ հասեալ տեսանել վաղագոյն ։ Ոչ են հարուածք նորա յեղակարծք , դիւրաստարք են որոց որ դէտ աչն ունիցի այնոցիկ ։ Ի յապէս և որք յարշաւանս Քշնամեաց գտանին անպատրաստք՝ վտանգին յեղակարծ ։ Իսկ որք յառաջ քան զպատերազմն պատրաստին 'ի նոյն՝ կազմք և

վառեաք՝ դիւրաւ զդէմ ունին նախկին յարձակմանն՝ որ բազմախտանգն է ։

Իմ ընչք երբեք հաւատացեալ բախտին թէպէտ և հաշտ իսկ երևեր ընդ իս . զամենայն պարգևս նորա առատաձեռնեալս ինձ՝ ի նմանէ՝ զինչս , զպատիւ և զփառս , յայնմ կալալ վայրի ուստի մարթի իցէ նմա առնուլ զայն անդրէն առանց իմոյ խղճահարելոյ ։ Ընդդէպ մեծ է դի ընդ իս և ընդ նոսա , նմին իրի իսկ եբարձ զնոսին և ոչ թէ կապտեաց ։ Ա զոք կործանէ չարաբախտութիւն՝ բայց զնաբեալն ի բարեբախտութէ ։ Ոք միանգամ զձիրս պարգևաց բախտին որպէս զուրեանց ինչ և զյաւէրժական սիրեցեին , և նոքօք հաձեցան առնուլ պատիւ և մեծարանս՝ որք ընդունայնամիտք հոգւով և աղայացարօք և յամենայն չնմարիտ բերկրութեանց անձաշակք՝ ի թողուլ լքանել զնոսա անկայուն և խաբեպատիր բերկրութեանցն վճատին և տխրին ։ Իսկ որ ոչ յուրախանին փքանայ և ոչ ի ձախողակս լքանի տրցոմութեամբ՝ ընդդէմ երկաքանչիւրոցն ևս անպարտելի կայ ոգւով և աներկևան արիութեամբ . զի ի բարեբաստութեան անդ և ի յաջողակս զփորձ առեալ գիտաց թէ սրբապ ինչ զօրութիւն իցէ իւր ի թշուառութեան ։ Ոչ յոսոցիկ աղագաւ ես ոչ համարեցայ երբեք թէ իցէ ինչ իսկապես բարի յայն ամենայն որոց ցանկան մարդիկ . այլ տեսի մնանաւանդ զի մնտաքը են համայն , և պատիր և արտաքնայարդար գեղով պաձուձեալք . որոց ոչ ըստ արտաքին երևութիւն է և ներքինն նոցա ։ Այս և ոչ յայնոսիկ որք չարիքն կոչին՝ գտանեմ ինչ այնպէս դժնդակ և ահարկու որպէս ոամիկն կարծէ և գուժէ ։ Ընդունն ինքնին՝ կանխակալ իմն պատրանօք և ի հաւանութենէ մտաց՝ դժոխալուր հնչէ յունկն , և որպէս տխրական և դժպհի հարկանէ զլսոցն . զի զայն այնպէս դատեցաւ ամբոխին , բայց զդատաստան ամբոխին բազում ուրեք եղծանեն խնամտանք ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Յետ արդ ի բաց եդեալ զդատաստան ամբոխին, որ ի վերին երեսս իրացն Հայեցեալ որպէս զիարդ կարծիցն յայն հատանի, տեսցուք զինչ տարագրութիւնն իցէ. ոչ սպաքէն տեղափոխութիւն իմն է։ Այլ զի մի երևեսցուք փոքրկացուցանել զզօրութիւն նորա և զպարագրեալ սըն ընդ նովաւ զաղէտս գողանալ ի տեսութենէ, տեղափոխութեանս այսմիկ զհետ գան վիշտք՝ աղքատութիւն, նախատինք, և արհամարհանք, որոց ընդդէմ բաղխեցայց զինի։ Սակ զարդիս զայն առից նախ տեսանել զէ՛ր իւ տեղափոխութիւնն ինքնին իցէ զժնդակ։ Ընդերկայն է օտարանալ ի հայրենեաց։ — Ագէ, նայեաց ի բազմախուռն ամբոխ մարդկանդ որոց մեծի և ծովածաւալ քաղաքիդ չքաւէն յարկք ի բնակութիւն. մեծ կէս մասն ամբոխիդ տարաշխարհիկ է յիւրոց հայրենեաց՝ ի քաղաքաց քաղաքաց և ի գաղթականաց անտի, և պարզաբար՝ յամենայն կողմանց աշխարհի այդը հաստատեալ։ Օ՜ ոմանս ի նոցանէ ած ձգեաց փառասիրութիւն, զայլս հարկ իրաց և պաշտամանդ աշխարհին. զոմանս գործ պատգամաւորութեան, զայլս զեղխութիւն՝ որպէս ի քաղաք ձոխ և յարմար ի սպաս ախտից իւրեանց. զայլս բանասիրական ուսմանդ տենչ, զայլս տեսարանք։ Այն որք բարեկամութեան ազատ ածեալ ձգեցան այդր, և են որ վասն Հարստութեան՝ առաւելագոյն խնդրելով պատեհ հանդէս առնելոյ ուշիմութեանն իւրեանց, և են գարձեալ որ զտեսիլ կերպարանացն իւրեանց և կամ զսերձախօսութիւն առեալ բերեն ի վաճառ։ Յամենայն ազգէ մարդկան խուռն ընթանան ի քաղաք այդր որ մեծադնդ գնէ և զառաքինութիւնս և զախտս։ Տուր հրաման զամենեսին՝ սին զդոսս կոխել յանտառն, և Հարց իւրաքանչիւր ի նոցանէ ուստի իցէ. և տեսցես՝ զի յոլովագոյն այնոքիկ են՝ որոց թողեալ զտեղի բնակութեան իւրեանց՝ եկեալ են այդր ի քաղաք մեծ արդարև և գեղեցիկ յոյժ, բայց ոչ իւրեանց գաւառ սեփական։ Այս յուղի անկեալ

Հերկարագոյն ևս մարթի է մեզ բողոքել զանխտէ՝ այլ փոխել զայն ոչ. անդարձ և անողոքելի են հրամանք Ճակատագրին. ոչ կշտամբանք, ոչ ողոք և ոչ փառաց դրդուեցուցանել զայնս կարեն. ողբ խնայել ումեք և կամ նեղել ոչ գիտեն։ Այսն որոյ յարտասուս մեր խնայեցուցաք չհեղուլ ընդ վայր. դիւրագոյն յայժ ցաւս այս ածցեն զմեզ առ նա՝ քան զնա առ մեզ. ի տանջանս են մեզ ցաւք և ոչ յօգուտ։ Կ՚ինն երբ անպատին ի սկզբանէ պարտ է ի բաց մերժել զայն, և ի մտոհի Ճախիթարութեանց և ի զառն Հաճութենէն տրամութեանն հրաժեշտ տալ. եթէ ոչ բանն վախճան տայ զարտասուացս՝ բախտն տայ զայն ոչ ունի։ Հայեաց, աղէ, ընդ մանկանացուս Հանճրէն. ամենայն ուրեք յորդ և անպատ են արտասուաց պատճառք. զոմն տագնապ կարօտութեան վարեալ մղէ ի հանապազորդ աշխատութիւն, զայլ զբզուէ մշտատանջ անբարեհաճութիւն. ոմն ահիւ Ճոխութեանցն զորս ժողովեաց ըմբռնեալ՝ յիւրոցն տանջի ցանկութեանց, ոմն ի հոգոց տառապի, այլ զբ ի վաստակոց, և այլ զբ զարձեալ ի

խոնարհեայ առ նա աղաչաւոր խոժոռանիւն ի գաւիթ տանն. ուրեմն ցաւէ ընդ զաւակացն ծնողաց և սկսեալ ընդ մանն։ Ապաստաք մեզ պահապետացն և ոչ արտաստաց պատճառք։ Ոչ տեսանես որպիսի խոստացաւ մեզ կեանս բնութիւն էից՝ նախազեկոյց գուշակ ծնողեանս մերոյ զալստեն սահմանեալ։ Ապայիսում սկզբան կենաց և յաջորդքն համեմատին սմք, և կեանք մեր ողջոյն ի վիշտս անցանեն։ Ամեն իրի չափալ պարտ է մեզ վարել։ Այն ինչ յոր ատեպ հարկ է մեզ գալ, և չայն հայեցեալ թէ պղտի միմեանց գնեսա պատրաստեալ կան մեզ աղէտք, պարտ է մեզ՝ թէ ոչ վախճան առնել արտասուացս, գէթ ապագայիցն պահել։ Հայն ինչ առաւել ագահել պարտ է որում ատեպ սկիս ունիցիմք։

Ա՛ենձապէս օգտեսցէ քեզ և այն թէ խորհիցիս՝ զի ոչ ումեք այնպէս անհաճոյ են ցաւդ որպէս որում նուիրել զանս համարիս, զի նա կամ չիմանայ զկիրսդ և կամ արգելու։ Ապա զինչ պէտք իցեն այդպիսում սպասաւարկութեան, զոր թէ չիմանայ որում հարկանեմն՝ անպէտ իցէ նմա, իսկ թէ իմանայ՝ անհաճոյ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

Հանդգնագոյն ասացից. չէք որ ընդ ամենայն աչխարհ որ հաճելոցի ընդ քո արտասուել։ Օ՛ինչ, խոստովի՛ր ուրեմն քան զամենայն մարդ հանդիպիս առ քեզ զեղջայր քո՝ որպէս եթէ ընդ չարչարանս քո կամիցի և ընդ մեռանել։ և արգելու դեզ ինդրեսցէ՝ ի քոց զգաստութեցդ, ի պղտութեանցդ ասեմ և ի կեսալէ։ Ապա՛ երբեք կարծեսցէ զայդ։ Ապրա՛ որ սիրեացն զքեզ որպէս զեղջայր, մեծարեաց որպէս զՀայր, և պաշտեաց որպէս վեհագոյն, կամք են ցանկալի քեզ գոլ, այլ ոչ ի ցաւս։ Ամենչ պէտս ապա ցաւդ՝ զորոյ, թէ գուցէ ինչ ի մեռեալս զգայութիւն, զխախճան ինդրել եղբայր քո։ Ամէ այլ որ եղբայր քո էր՝ որոյ ոչ քաջածանօթ էին ինձ բարեսէր կամք, ասէի արգելոք երկայնութեամբ. Ապէ՛ն կամք են եղբօրքո զի անապատանջեացիս զու արտասուօք՝ անարժան ցաւոդդ է. իսկ

եթէ չկամիցես ընդ ցաւդ՝ ի բաց թողլիր զայն որ երկաքանչիւրոցդ իսկ անօգուտ է : Զղջայր անդուլ ոչ այդպէս ցանկալի քեզ իցէ . բարեգութն՝ ոչ այդպէս կամեսցի : Այլ զի իմ բանք վերջաւորեն՝ զայր քաջածանօթ եղեալ ի մեզ բարեգթութիւն , ասեմ Հաստատութեամբ զի չէր ինչ նման այնպէս դառն՝ որպէս այն թէ դու ընդ նորա արկածան զառնացես , թէ վշտասցիս ընդ նա , թէ անդուլ արտասուօք տարապարտ հալեալ մաշեսցիս ի սուգ նորա :

Քանզի զերջայրեակք գորովոյ սրտիդ զանօգուտ արտասուն լռեցուսցես վաղագայն՝ ածեալ զնուաւ զի քեզ պարտ է գոլ օրինակ բարեաց եղբարց քոց արիաբար տանելոյ զդիպեալս բանիոն : Որպէս զօրաւոր մեծ ի ձախողել իրացն վերջ ի վերոյ զտարեգութեամբ և կերպարանեալ ուրախութեամբ թագուցանէ զարկածան՝ զի մի գուցէ զօրականին սրտաբեկ զդօրաւորն տեսեալ՝ լուծեալ լքանիցին սիրտք , զնոյն և քեզ պարտ է արդ առնել . զեմ ինն առնուն թախծելոյ սրտիդ բերջիր յանձին , և թէ մարթ ինչ իցէ՝ ի բաց մերժեսջիր ի քէն զամենայն ցաւ . իսկ եթէ ոչ , ի ներքս ի քեզ լծագուջիր , և ժուժկալեալ մի ցուցցես ինչ արտաքոյ՝ և այնմ խնամ կալջիր զի քեզ նմանող լցին և եղբարք քո , որք զոր ի քէն տեսանեն՝ զայն արժան համարին և վայելուչ , և ի տեսիլ երեսաց քոց քաջալերեալ սրբատաղին : Պէտ պարտ է լինել նոցա և մխիթարիչ և ի մխիթարութիւն . և որպէս կարացես զդէմ ունել արտմութեան նոցա եթէ քոյումդ ներեսցես :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ընձափութեան ցաւոցդ իցէ և այս դեղ դարմանոյ՝ յաշ առնել անձին զի ոչ ինչ յորոց առնես ծանկես ցի . ի մեծ ինչ կարգեցար ի հաստատակաց մարդկան հաւատոյ ենէ , վայելչապէս արժան է քեզ կալ ի նմին : Ի խիթարչացն քոց բազմակրօն ամբոխ սրբ չուքջ կան զքէ՝ հետազօտեալ լսեսէն զսիրտ քո տեսանել զրչափ իցէ քո զօրութիւն ի տանել ցաւոց . և թէ զի-

տիպեա արդեօք այրաբար զդէմ ունել Հակառակաց, Թէ
'ի յաջողակս և եթե արիանաս. ամենեցուն աչք 'ի քոյդ
կան ակնկառոյցք։ Ա՛մենայն ինչ մարթ է այնոցիկ՝ որոց
կրիցն Հնար իցէ ծածկելոյ. քեզ և ոչ ինչ 'ի գաղ-
անեաց մարթ է, 'ի լոյս տունջեան եդ զքեզ բաւական. ա-
մենեքին տեսանեն Թէ որպէս զՀարուածդ զայդ ընկա-
լար. արդեօք զայդ ընդ Հարուածոյն եղեր զէնըմկէց
եԹէ արիաբար արձանացեալ կաս 'ի տեղւոջդ։ Զորմ
Հետ սէր Ա՛ևսարու և Հանձար իմաստութեանդ քո
ամբարձին զքեզ յայդ պատիւ բարձրութեան, ոչ 'ի
դէպ ոչ արժան քեզ ցածուն ինչ և գռեհիկ բերել յան-
ձին. և զինչ այնպէս ցածուն և կանացի որպէս անձնա-
տուր մաշել 'ի ցաւս։ Ա՛ւ որ ինչ եղբարցդ Նոյն և քեզ
օրէն իցէ 'ի նմանօրինակ ազէտս. բազում ինչ արգելու-
քեզ Համբաւ բարեաց առաքինութեան քո և Հանձա-
րոյ. բազում ինչ պահանջեն 'ի քէն մարդիկ, բազմաց
ակն ունին։ Ա՛Ժէ ցանկայիր ազատ լինել յամենայնի՝
չէր քեզ պարտ զայս ամենեցուն 'ի քեզ դարձուցանել.
այլ արդ Հատուցանել քեզ պարտ է զոր խոստացար
Նոցա ամենեցուն որք իմաստութեան գործոցդ կան գո-
վաբանք, որոց Թէ չէն ինչ պէտք քոյոյ բանիդ, սա-
կայն Հանձարոյ քո ունին պէտս և պահապանք իսկ են
նմին. վասն որոյ Թէ տեսցի ինչ 'ի քեզ անարժան առն
իմաստնոյ և կատարելոյ՝ սարկաւագին զի զարմացան ընդ
քեզ։ Ա՛յլ քեզ օրէն սուգ տարապայման, և ոչ այն միայն՝
այլ և ոչ յերկարել 'ի քուն ցմահն մի տունջեան, կամ
'ի յանխոհեմին զբաղանաց խոյս տալ յանզգաստ անդոր-
րութիւն զեղջ, կամ զխմոջ մարմինդ յանդուլ վաստա-
կոց տարժանելի պաշտամանդ՝ բերկրարուարձ ուղևո-
րութեամբ յանձամանձել, կամ 'ի զբօսանս բազմակերպ
տեսարանաց զբաղիլ և լսոտ Հանձոյս անձին տնօրինել
ջորդ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԱՑԵՐՈՐԴ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ինչ իրք խոնարհագունից և անելևոյթ յանկեան ուրեք անկելոց մարթի են՝ այլ քեզ ոչ։ Պատ մեծ՝ ծառայութիւն մեծ է։ Ընդարթի քեզ հաճոյիկ անձինդ պարապել։ Հարկ է ունկն մատուցանել հաղորդաց մարդկան. զգաստանալիս աղերսանաց նոցա զգրեանն ի կարգ արկանել, ուշ ունել աշխատութեամբ միաիսուն կուտելոցն յամենայն աշխարհէ անբաւութեան իրաց, զի արժանապէս ըստ իւրաքանչիւր կարգի մատուցին յանձնիդրութիւն մեծի ինքնակալին։ Այո, քեզ լալ օրէն ոչ է՝ զի զայլոց լալիսն լսիցես. և զի ցանկութեացին արտասուք տառապելոցն և կարօտելոց զթութեան մարգասէր ինքնակալին, քեզ նախ պատ է զքոյդ ցանկութեացանել։

Լ. քո և այլ մխիթարութիւն մեծ. զի Թէ մոռանալ կամիցիս զամենայն, յուշ լեցի քեզ Կեսար. տես որպիսի հաւատարիմ և աչալուրջ ծառայութիւն մատուցանել պարտիս նմա՝ փոխարէն մեծի նորա առ քեզ մարդասիրութեանն. զնմանէ ած զի չէ քեզ օրէն կորանալ առաւել քան զնա՝ յորոյ, Թէ արժան իցէ անսալ առաքելոցդ, ի Թիւնն յեցեալ կայ աշխարհ։ Այլ ոմն իսկ Կեսարու՝ քանզի ամենայն ինչ մարթի է՝ վասն այնորիկ իսկ բազում ինչ չմարթի է։ Այորա աբնութեամբն ամենեցուն պահպանին տունք. նորա ինամբն ամենեքին վայելեն ի խաղաղութեան, տառապանաց՝ ի բերկրութիւնս, և վաստակաց՝ ի հանգստեան։ Յորմէ հետէ նուիրեցաւ Կեսար յօգուտ տիեզերաց՝ զանձն իւր զրկեաց, և ըստ օրինի լուսաւորաց որք անգուլեթեամբ կատարեն զընթացս իւրեանց, չէ նմա օրէն ոչ զկայ առնուլ և ոչ զանձին ինչ ինդրել։ Այլ Հարկ և ի վերայ քո կայ ըստ բազում գլխոց. չէ քեզ օրէն ի շահ օգտի և ի ինամս հանգչից անձինդ պարապել։ Յորմէ Կեսար տիեզերաց կայ տեսուչ՝ չէ քեզ օրէն յայլ ինչ տալ զանձն քո, ոչ ի փափկութիւն, ոչ ի ցաւս և ոչ յայլ ինչ քեզ սեփական. զանձն քո ողջոյն նմա պարտիս։

Յաւել արդ և գայթ. ոչ ապաքէն զկնի սիրելի գոլ քեզ քարոզիս Հանապազ. ապա ցորչափ կենդանի է անձն նորա՝ քեզ չէ մարթ քրթմնջել զաղտիսն։ Ի կնդանութեան նորա ողջ են քեզ քոյդդ, և չիք քո կորուսեալ ինչ։ Իսկ անձդաց միայն պարտ է գոլ աչացդ, այլ և զուարթաչայեաց։ Կայ քեզ ընդ ամենայնի, և ի նմա քեզ ամենայնիւ։ Մեծապէս գժպատեհ է խնամս տուեալդ քո և բարեգործով զգացմանց սրտիդ՝ ցայնվայր անձամաչող լինել բարեբախտութեանդ մինչ կենդանեալ կեսարու ողջալ քեզ։

Յոգւոյ քեզ և այլ ինչ դեղ՝ եթէ ոչ ազգողջոյն բայց առաւել ընդելական։ Ցրտմտութիւն դարմանակալ կայ քեզ ի տան. ցորչափ յանգիման կաս երեսաց աստուծոյն քո՝ ոչ իշխեսցէ մերձենալ նա առ քեզ. տեսութիւն կեսարու նուաճեսցէ ի քեզ զամենայն կիրս. իսկ ի մեծնալ քո ի նմանէ՝ զմիայնութիւն պատեհ կալեալ տրտմութեան, յարձակի ի քեզ և յանզբաղութիւնն քում յարամբի սպրդի ի սիրտ քո։ Կայն իբրև գունդ գործեսջիր անպարապ կալ յաւանից։ Այժմ սիրելիքն քեզ զպրութիւնք զաչխատամանակեայ հաւատարիմ պաշտօնատարութեանդ քո փոխարէն հատուսցեն քեզ զնորս. այժմ որպէս խնամակալուի իւրեանց և ոսոխիկանի պաշտպանեսցեն քեզ. այժմ Հոմեր և Վիրգիլ՝ բարեբարքն ազգի մարդկան՝ որպէս զու ինքն ազգաց ամենեցուն և նոցա իսկ գտար բարեբար, յոգունց և ստացող չունաս յընդերցուածն որոց վասն չէր նոցա գրեալ, յաձախեսցեն կալ քեզ առընթեր՝ և ամենայն ժամանակի զոր ի խնամն պաշտպանութեան նոցա առնես ապատան, անբոյթ եղիցի քեզ և անբերկեան։ Այժմ իսկ և ինքնակալին քո գործոցն արութեան որպէս վկայ առանձին քարոզ կացեալ քո առ ամենայն գաս՝ տուր ի գիր որչափ ինչ կարես, և նա ինքնին ի գեղեցկայարմար յօրինուած գործոցն սատարեսցէ քեզ արութեամբքն իւրով և օրինակաւ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՈՂ իշխեմ անդրադոյն ևս ձգել զանս և յորդորել զքեզ, զի առասպելս Հզմուռեան բարառնութեամբ՝ յոր չև ևս հռովմկական փոքձեցաւ Հանձար, ընիկ քոյդ ոձոյդ ընորհիւ շարագրեսցես։ Օ՛ի արդարև դժուարին է կարեվէր տրամեցելոյ անձին այդպէս փութով՝ ի զուարճալիսն պարապել զանհշտարար դպրութիւնս. կացցեն այդ վաստակք՝ մինչև զօրացեալ քո և անձին զգացեալ մարթի իցէ քեզ՝ ի խրճնագունիցն պարապմանց՝ ի հեշտալիսն գալ։ Օ՛ի՝ ի նոսա՝ նոյն իսկ ձառեղեացն դժուարութիւն զանգիցուցանէ զվաստակաւորն ևթէպէտ և խօթի իցէ սրտիւ և ընդ անձին ոգորիցէ. իսկ սոցա՝ յորոց՝ ի վաստակս զուարճութեան մնաց պէտք են՝ հակառակի, մինչ չև իցէ յանձն իւր գարձեալ՝ ի սպառս։ Հզայս պարտ է քեզ խրճնագոյն հրահանգօք նախ աշխատ առնել զմիտոգ և ապա հեշտալեօքն ազդել։

Հոչ այն գարձեալ լեցի քեզ՝ ի սփոփանս մեծ՝ եթէ հարցցես առէպ ցանձն քո. Ո՛ասն իմ արդեօք ցաւէ ինձ՝ եթէ վասն վախճանելոյն՝. եթէ վասն իմ, որ պարծանք իցեն իմ կամ զինչ հնարհ. զի որ միոմն այնուիկ արդարանան ցաւք Հձ առաքինութեան իցեն ծնունդք, զանձնասիրութիւն կալեալ պատճառս՝ անհասն են՝ ի գձութենէ։ Հոչ չիք ինչ այնպէս գրժպատեհ առն բարւոյ՝ որպէս՝ ի սուգ եղբօրն զանձինն նկատել օգուտ։ Հակ Հձ վասն նորա ցաւագնիմ, հարկ է զմի յերկուց աստի առնուլ ինձ կանոն ուղղութեան. զի կամ չիք բնաւ զգայութիւն՝ ի մեռեալս, և եղբայրն իմ զերծեալ յանհնայն վշտաց կենցաղոյս դարձաւ անդրէն ուր էին յառաջ քան զծնանել, և այժմ անսիրտ յանհնայն չարէ ոչ ուստեք զանգիտէ, ոչ իմիք ցանկայ և ոչ ինչ կրկ. և զի է ինձ ապա մխիթարութիւնս այս՝ անդադար ցաւագնիլ վասն նորա՝ որ չէ և չիցէ երբեք ընդունակ ցաւոց։ Հոչ կամ Հձ զգան ինչ մեռեալք՝ հոգի եղբօրն իմոյ որպէս յերկար բանտարգելութենէ

արձակեալ արդ՝ վայելէ յանձնիչնան ազատութեան, և ի սեսիլ բնութեան էից զուարճացեալ՝ անդուստ ի բարձանց արհամարհէ զմարդկայինս ամենայն. և զաս տուածայինն զորոց գիսկութիւն վայրապար հետա զօտեր ընդ երկար, նկատեէ ի մօտոյ։ Այդպս առիմ հիւ ծել ինձ ի ցաւս նորա, որ կամ յերանութեան է և կամ ոչ ինչ. եթէ յերանութեան՝ ողջալ զնա նախան ձու իրք են, եթէ ոչ ինչ՝ անմտութեան։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Ա՛ցդ տրտմեցուցանէ զքեզ արդեօք՝ զի Համարիս զեղբայր քո մերկացեալ յամենայն բարեաց պերձու թենէ յորոց պատառեալն էր։ Այլ ի յիշել քո զայդ թէ բազում ինչ կորոյս՝ յուշ լիցի քեզ առ նմին զի և ի բազմայ յերկիւղէ ազատացեալ է ամենևին։ Ոչ բար կութիւն զնա ամբոխէ, ոչ հիւանդութիւն վշտացուէ, ոչ կասկած տագնապէ, ոչ նախանձ չար՝ ոխերիմ թշնամի յառաջադիմութեան այլոց զնա տանջէ, ոչ երկիւղ զար հուրեցուցանէ, ոչ բախտ յեղյեղուկ՝ որ ընդ պարգեւս իւր զղջանայ երբէք, անհանգիստ առնէ։ Ա՛ն թէ քան խորհիցիս՝ բազում յոյժ քան զկորուսեալսն առաւելու թիւնքն նորա եղեն։ Ոչ և զայրեցոյէ ի մեծութիւն, ոչ բծոյ և ոչ իւրով զօրութեամբն վարեցի, ոչ ուստեք ընկալցի չորշն և ոչ իսկ արասցէ ումեք։ Ա՛ն միթէ ի թշուառութիւն համարեսցի նմա զի կորոյս զայդսիկ, եթէ յերանութիւն՝ զի ոչ ինչ իսիք ցանկայ։ Ա՛ն ինձ հաւատասս՝ երանելի նա է որում չէն ինչ պէտք բախտի քան որում յաջողեալն է։ Ա՛յն ամենայն բարութիւնք որք վերերևոյթ պատիր գեղմն զմեզ բերկրեցուցանեն՝ ինչք, մեծութիւնք, իշխանութիւնք և այլ ինչ բազում ընդ որս զայցոյս ցանկութեամբ յակնիս կան մարդիկ՝ աշխատութեամբ բազմաս ի ձեռս բերեալք և նախան ձու կան նշաւակ, և զնոսին իսկ զորս պճնեն՝ ընկճեն. և քան զօգուտ՝ զպատուսիս յաձախեն. անստոյգք են և կորստականք, և չէ մարթ ունել զնոսա հաստատութիւն. և թէպետ ոչ ինչ երկիւղ յապագայէն իցէ նոցա, բայց

նոյն ինքն պահպանութիւն նոցին բազմահոգ է ։ Այլ թէ անսալ կամիցիս որոց ի չմարտութիւն անդր իրացն եղեն խորամուխ՝ կեանքս մեր բովանդակ տանջանք են ։ Ի խորանգունդս յայս և ի մշտական ընկեցեալք ի ծով՝ որ իւրով անհարթութեամբն մերթ վերամբառնայ զմեզ յեզակարծ ահմամբ և մերթ մեծագոյն վնասուք վայրաբերեալ փոխանակաւ՝ յուզէ զմեզ ալեւտանջ, և ոչ ուրեք կամք ի յաստոջ՝ այլ բարձրագէզ յաւեացն ի ծայր տատանիմք ծփիմք , և ընդ իբեաս հարեալք՝ ստէպ նաւաբեկք լինիմք և միշտ ահաբեկք ։ Յայսպիսում ահ մրրկածուփ և ի բազմավտանգ ծովու նաւարկելոցս՝ մնչն է միայն նաւահանգիստ ։

Այլ ասա նախանձիր ընդ եղբայր քո , հանգեաւ նա արդ , արդ ազատ է , արդ անեղկեան է , արդ անմահ է ։ Աթոռ գնեաւ իւր կենդանի զայրն և զսերունդ նորա , եթող զքեզ համօրէն եղբարբք հանդերձ ։ Այնչ և էր բախտին եղծեալ ինչ յիւրոցն ընտրեաց , մինչ դեռ ան զըրդուելի կացեալ և լիաձեռն զպարգեւն առատացուցանէր՝ եթող ելիք գնա ։ Այս վայելէ արդ ի բացարձակ պայծառութեան երկնից , և ի ցածուն և ի խոնարհ վայրացս յայն վերասլացաւ յօթեւանս անծանօթս մեզ , որ զազատացեալսն ի կապանաց գնոցիս յերանաւէտն իւր ընդունի ի ծոց ։ Այժմ համարձակ սպանաց նա ընդ առնոյն , և ի գնին աքանչելեաց բնութեան էից զուարճացեալ բերկրի ։ Այլ , մի խաբիր , եղբայր քո ոչ կապտեցաւ ի լուսոյ , այլ անեղկեան ևս ժառանգէ գնոյն , յոր և մեր իսկ ամենեցունն ուղեալ են ընթացք ։ Օ՛ զօրհաս նորա ողջամբ . ոչ եթող նա զմեզ , այլ յառաջեաց ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Նախերեւոյթն մեծ է , հաւատա ինձ , մեռանել ի բարեբախտութեան ։ Զիք յաշխարհի անեղկեանութիւն և ոչ օր մի . և ո՞ յայս խաւար թանձրամած որ զհանդերձեցն գողանայ ի մէնջ գիտութիւն՝ գուշակել կարասցէ եթէ արդեօք զբարեցաւն մահ ընդ եղբայր քո թէ բարերարեաց նմա ։

Այս քանզի արդարասէր էս յամենայնի՝ Տարկաւ օգ-
տեցայ քեզ խորհել և զայս՝ զի ոչ եթէ զրկանք եղէն
քեզ մարհուածք եղբօրդ, այլ ի հակառակին՝ բարեբա-
րութիւն մեծ վայելել քո յերկար ի սէր Տեառն եղբայ-
րական։ Ընդէր է որ ժխտէ զիրաւունս և զիշխանու-
թիւն պարգևատուին ի վերայ պարգևացն իւրոց. ա-
զատ է՝ որ զառնուլն ոչ Տանարեալ իւր ի չահ՝ զդար-
ձուցանելն Տամարի ի մեզաս։ Ընդերախտ է որ զկատա-
րած վայելիցն Տամարի անիրաւութիւն. յիմար է՝ որ
բաց յառաջակայիցն բարեաց յորս վայելէ՝ զայլն ա-
մենայն յոչինչ Տամարի. որ ոչ անդորրը սրտիւ անխորհ
և յանցեալսն որպէս յաներկիւնն՝ որոց ոչ ևս է վատնագ
կորստեան։ Այսի անձուկ սահմանեալ զվայելս իւր՝ որ
չայն ևեթ ամիտիմ զոր ի ձեռինն ունի և ընդ այնք,
յոչինչ զանցեալսն գրեալ։ Վհանգի վաղանցուկ և
խուսափող են բերկրութիւնք, Թողուն լքանեն զմեզ
վաղվաղակի, և մինչ չև եկեալք՝ մեկնին ի բաց։ Վմին
իրի Տարկ է փոխաբերիլ մոռք յանցեալ ժամանակն,
և ոտիկ յիշատակաւ այնոցիկ յորս բերկրեցաքն՝ վայե-
լել։ Յիշատակ բերկրութեանց երկարագոյն և Տա-
ւատարագոյն քան զվայելեսն է։ Ամայս, պարգև պե-
տագոյն Տամարեալիր անձին զի տուաւ քեզ եղբայր այն-
պիսի ցանկալի լաւութեամբք։ Ի չայն խորհիցես Թէ
արդարի երկարագոյն ևս մարթէ եր քեզ վայելել ի նա,
այլ չայն զոր վայելեցեր։ Վչից բնութիւն չետ գնաքեզ,
որպէս և այլոց իսկ եղբարցդ, ի ժառանգութիւն
հանդիսնուսոր՝ այլ չատանդ ևեթ, զոր կամեցեալ արդ
չետս պահանջեաց՝ ոչ ի չապտրդ ցանկութեանդ
Տայեցեալ, այլ յօրինս Հրամանացն իւրոց։ Որ ոք զրժ-
կամակեսցի ի Տատուցումն արժանաւոյն զոր ընկալաւ
չայրմէ և մանաւանդ զոր ձրի ի վար արկանէր՝ ած
ապաքէն անիրաւ է։ Ընտանիութեան էս կեանս եղբօր
քոմ՝ էս և քեզ, և ապա վաղագոյն յորմէ կամե-
ցաւն ըստ իրաւանց իւրոց պահանջեաց զիւրն. ոչ
ապա Տորս ինչ մեզք են, զի չայր իսկ պարմանքն էին,
այլ անցագ ցանկութեան մանկամացաւս սրտի, որ
իսկ և իսկ ի մոռացօնս արկեալ զիւրաքանչիւր իրաց
զընտանեացն՝ չնիչէ ամենևին զպատմեան կենաց իւրոց
բայց չորժամագզ առնիցի։

Հանպա , ուրախ լեր զի եղև քեզ եղբայր այսպիսի . և գնայելը նորա՝ Թէպետ և կարի սուղ քան զգանկու- Թիւն բաղձանացդ՝ ի ջնորհս քեզ Տանդեսցի : Որ հեաց զի Թէ քաղցր վայելչդ էին՝ և կորուստ նորա մարդկային ինչ էր : Այլ զինչ առաւել ներհակին մի- մանց քան զդժկամակել ուրուք ընդ այն՝ զի ոչ տուաւ նմա յերկար ևս վայելել յեղբայր այսպիսի , և չուրա- խանալ վասն որոյ վայելեացն :

Այլ յայդ չարիշտակեցաւ , ասէ , յինէն յեզակարծ : — Ուրաքանչիւր զբ յիւրոյն խաբի ՝ի յօժարութեանց դիւրահաւատ լեալ այնց , և կամաւորապէս մոռացեալ զի մահկանացուք էն զորս սիրէ : Ընտրեալինն ոչ ումեք խոստացաւ Ջնորհել զյաճախումն Տարկի հրամանացն իւ- րոց : Հանապազօր տեսանելիք անցեալ զառաջեաւ ըզ- յուզարկաւորութիւն ծանօթից և անծանօթից , բայց զգաղէտեցս մեզ յայլ ինչ՝ յեզակարծ Թուի այն՝ որ յա- մենայն կեանս մեր ազդ մեզ լինէր : Այսպ ոչ եթէ Տրամանիք օրհասին անհրաւք իցեն , այլ վատԹար է սիրտ մարդոյ անյագ ամենևին , որ դժկամակի ելանել անտի ուր մուրացածոյ կալաւ մուտս :

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ

Ա՛վ , որպէս արդարակորով գտաւ նա որոյ լուեալ զդոյժ մանկանն որպէս իւրոյ՝ ըստ արժանի առն մեծի արձակեաց բարբառ . « Այս ՝ի ծնանելն իմում գիտացի զնա մահկանացու ,, : Այս զինչ զարմանք իցեն Թէ այն- պիսւոյ Տօր որդի գիտացեալ մեռանել քաջալերէր : Այլ որ- պէս նորաշուրս ինչ ընկալաւ զդոյժն . զի զինչ նորաշուրս իցէ մեռանել մարդոյ՝ այդ կեանքն ոչ ոքոյն ոչ այլ ինչ է՝ բայց ՏանապարՀ առ ՝ի մահ : Այս ՝ի ծնանելն իմում , ա- սէ , մահկանացու զնա գիտացի . որում՝ քաջալերեամբ կա և խնամոտութեամբ ածէ ՝ի վերայ . « Ոչայն իսկ զնա մնացի ,, : Այ , յայն իսկ մնանիցք ամենեքին . որ միան- գամ՝ ի լոյս կենաց ընծայի՝ սահմանեալ է առ ՝ի մահ : Այնին իրի ուրախացեալք յայն որ տուաւն մեզ , Տատուա- ցուք անդրէն յորժամ պահանջիցին : Օ՜ մի մի իւրա-

քանչիւը յայլ և այլ ժամանակի ըմբռնել օրէնս, ոչ զոք
Թողեալ ի բաց ։ Հանապա, իւրաքանչիւր պատրաստ իցէ
սիրա, ոչ ինչ զանգիտեալ յայնմանէ որ անհրաժեշտ
է, զետաին կալեալ այմանէ որ անասդին է ։

Օ՛ի է ինձ բանս ՝ի միջ առնուլ զարհարհակալաց և
զանընդոդ նոցա և զպյոց բազմից գհամբաւելոյն բդեշ-
խութեամբ և կամ յաղթանակաւք, որք հանդոյն զանազո-
քելի օրհասին ընկերան զվախճան, Թագաւորութիւնք
հանդերձ Թագաւորօք հանդերձ, և ժողովուրդք ազգօք
ընկերան զիւրաքանչիւր վախճան ։ Մինչեբեան մանա-
ւանդ Թէ և ամենայն ինչ վախճանի աւուրցն սպառին ։
բայց ոչ ամենեցունցն նոյն վախճան է ։ ոմն ՝ի կէս ընթա-
ցիցն անկանի կենդանւոյ, ոմն անդէն ՝ի մէնեան, այլ որ
՝ի ծայր ծերութեան հասեալ խնդք և վատասի՝ ցան-
կայ ելից և հանդիս ընդունի արձակուրդ ։ ոմն վաղ և ոմն
անագան, բայց ամենեքին ՝ի նոյն դիմի՝ վախճան ։ Ա-
դիտեա՛ մեծագոյն յիմարութիւն իցէ անպիտանալ
մարդոյ զօրինս մնչհկանացու բնութեան իւրոյ, եթէ
ժողովութիւն՝ հակառակել այմանէ։

Ա՛ր արդ ազէ աո ՝ի ձեռն զոր բազմախոտա եր-
կանիք հանձարոյ քո ածեր ՝ի լոյս՝ զերկոցուն քեր-
Թողոց գշափաբերութիւնն զոր այնպէս յարձակն վեր-
ածեր՝ զի անհոգ մնալով հնարէի բանին՝ բարձցին չափ-
քին ։ Ա՝ ան զի այնու հարատարութեամբ յայլմ յայլ
յերդեր գնասս ՝ի բարբառ, զի որ կարի գժուարինն էր՝
ամենայն գեղ վայելչութեան նոցա անկորուստ ընդ օ-
տար կերպարանաւքն երևեսցին ։ Ա՝ինն մի ՝ի զրոց քեր-
Թողոյն այնոցիկ բազմերևնակ զմարդկայնոց յերգոփո-
խութեանցս և զանահնկալ արկածից և զբազմապատիկ
հոսելոցն արտասուաց դնկարագիր պատկերան ածէ քեզ
յանդիման ։ Ա՝ոց ընդ այնոսիկ և տես Թէ որպէ քա-
ջութեամբ զահագինն որոտացեր, և ամաչեսցես այդ-
պէս վաղվաղակի Թոգոնալ, և յայնչափ բարձրութենէ
անտի Հառիչն վայրաբերել ։ և մի Հանդուժեսցես զի
որք զարմանային՝ և արդ ևս զարմանան ընդ գրեարան
աո ՝ի քէն՝ Հարցանիցես Թէ զինչդ ոգի տկար և գիւ-
րայաղԹ զմեծամեծան գայնոսիկ և զբաժբագոյն ի-
մաստան իցէ ծնեալ։ Հապա, Թող ՝ի բաց զայն ամենայն
որք Տարկանեն զսիրա քո ։ և գաղձուցեալ զաչս քո ՝ի մե-

ծաւեծ և 'ի բազմապատիկ միթիթարեանդ՝ հայեաց 'ի պատուական եղբարսդ . յամենեսին քո հայեաց և յոր դիպ ։ Վասն ամենեցուն նոցա կենդանաբեանն զմի զայս ինդրեաց 'ի քէն փոխանակ բարեաց . յոլովք կան ինան քեզ տակաւին յորս միթիթարեսցիս ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԱՒՒԱՋՆԵՐՈՐԴ

Ի բաց արա 'ի քէն զկեզտ վատաբեան , և մի ումեք տացես կարծիս թէ մի միայն ցաւ առաւել քան զամենայն միթիթարեանդ զայդսոսիկ ազդեսցէ 'ի քեզ ։ Չէս դի և նոքա ամենեքին նովին հարուածով հարեալք ընդ քեզ՝ չկարեն օգնել քեզ , այլ մանաւանդ առ 'ի քէն միթիթարեան ակն ունին . և որչափ առաւելուս քան զնոսա հանձարով և գիտութեամբ՝ այնչափ առաւել պարտ է քեզ զդիմ անել հասարակաց ազեսիցդ ։ Այս և այդ իսկ սիրափաքը են՝ բազմոց զցաւդ մանսանալել , զի որ 'ի բազումն բաշխի՝ դոյզն մասամբ ծանրանայ 'ի քեզ ։

Այս և զկեսաբ ոչ դադարեցայդ յուշ քեզ ածել առեպ ։ Որչափ վարէ նա զսրեզբս և ցուցանէ զի բարեբարութեամբք առաւել քան զինու զօրութեամբ 'ի հասատ կայ թագաւորութիւն , ցորչափ նա հնձն է ոտիկան մարդկայնոց իրաց , չկը քեզ երկիւղ թէ զգայցես կորստեան . և այս և եթէ շատ իցէ քեզ 'ի միթիթարութիւն և 'ի զօրաւիգն ։ Վաղվաղեբեաց ուբեին , և քանիցս թացցին արտասուբ աչք քո , զարձո զայնոսիկ 'ի կեսաբ և ցամաքեսցին 'ի ձնոտագայթից սեծատառ դիւցազնին , և 'ի շողիւն փայլման նորա սեւեռեալք անքթիթի՝ բլշակնեսցին հայել յայլ կինչ ։ Նոա ինձն ակընկառոյց խորհեաջիր միշտ 'ի տուէ և 'ի գիշերի , և անմիկին լեր առ 'ի նմանէ հոգւով . և զնա կացիս քեզ զօրավիգն ընդդէմ արկածից բարոյ ։ Ալ կինչ յերկուաղնամ զի որ առ իւրն ամենեսեան այնչափ գիտութիւն և մարդասիրութիւն 'ի վար արկանէ , և զքո վէրադ բազմապատիկ սիրափաքօք պատեսցէ և սպեղանիս 'ի դարման ցաւոցդ մնուսցէ ։ Կայց թէպետ և ոչ մի կինչ

յայդցանէ ոչ առնէր , սակայն տեսիլ նորա ևեթ և խոհայն ի կեսօր ոչ ապաքէն մեծապէս ի միխիթարու-թիւն քեզ լցի : Հովանաւոյին նմա դիք և դիցուհիք համօրէն՝ երկայնաւուրքդ պարգևել զնա տիեզերաց . արուեստիւք գործոց հաւատարեսցէ (գոտեպատ առա-ւելութեամբ անաց յաղթեսցէ նմա . և ցորչափ ընդ մահկանացուս դեգերիցէ՝ զմահկանացուն ուրուք յիւրոցն մի սուգ զիարձ . ժառանգ և ուղղիչ հռովմէա-կան ինքնակալութեան պայազատ նորա ընտիր և հա-ւատարիմ փորձ գտեալ յերկար՝ նախ քան զյաջոր-դել հօրն գահակից նմին կացցէ . և անագան ուրեմն Թռուռնք մեր տեսցեն զօրն զայն՝ յորում զարմ նորա յերկինս զնա դասեսցէ :

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Ա՝ն երբեք ծանրասցի ի նա ձեռն քո , ով բախտ , և ոչ պղտզդ ցուցցես զզօրութիւն քո ի նմա բայց ի հան-դէս առաստաձիր հոգեհայոց քոց : Ա՝ող նմա կալ իմաս-ածու և ապաքինիչ ի բազմաց հետ. ախտացելոց և տա-ռապելոց մարգկայնոց բնութեանս . Ա՝ող նմա զաւե-րեալն և զտապալեալն ի մեղգութենէն նախորդին իւրոց ուղղել և հաստատել վերստին յիւրաքանչիւր կարգ : Ա՝ա հոսեցեալնն ի վիհ խաւարամած աշխար-հիս աստղ ծագեալ լուսատու անմահ լուսափայլեսցէ : Ա՝ա խաղաղացուսցէ զՎերմանիա , հորդեսցէ մեզ Ձա-ռապարշ՝ ի Կրետանիա , և ընդ հայրենականացն զիւրն ևս յաւելցէ կանգնել զյաղթանակս . որոց հանդիսա-տես լինել անկն ունիմ և ես ի գերագոյնն առաքինու-թեանց նորա յուսացեալ ի գԹռուիքն . քանզի ոչ այն-պես ինչ զգեաներաց զնա Թէ չպարուսյանիցէ . մանաւանդ Թէ ոչ զգեաներաց զնա , այլ զնիզալ ի բախտէն՝ յանկա-նէրն խնամ կալաւ , և զգաշավիժ գլորմանս Թափ՝ աս-տուածայնոց ձեռինն չափաւորութեամբ մեղմեալ՝ վայ-բարերեաց զնա անվտանգ : Ա՝զատաւոր եկաց վասն իմ առ ծերակոյսն , և կեանս ոչ ետ ինձ միայն՝ այլ և խրն-դրեաց : Ա՝աքն տեսցէ և դասեսցի զդաստատան իմ. և

թէպէտ իրաւաւէր ուղղութեամբ արդար գոցէ զայն, թէպէտ գթութեամբն իւրով արդարացուսցէ, թէպէտ անմեղ զիս ծանիցէ, թէպէտ անմեղացուսցէ՝ եր կարծեմք իսկ միօրինակ բարերար գոյն առ իս։

Այժմէն միթէ արուեստիւն մեծ է ինձ՝ թշուառութեանս համար տեսանել զմարդասիրութիւն նորա տարածեալ ընդ երեսերս ամենայն. և որ՝ի ծագաց աստի՝ ուր անկեալ դնիմ թաղել՝ զաղջամուխ ընդ բազմահոլով ամաց փլատակօք ծածկեալն վերաբերեալ եհան՝ի լոյս, մեծայոյս եմ զի ոչ զիս միայն անտեսեցէ՝ի սպառ։ Այնքան գիտէ երբ իւրաքանչիւր ումեք այցելութեանն իցէ ժամանակ. իմ չեն և փոյթ այն իցէ՝ գթութեան նորա լինել արժանի, զի մի՛ ամաչեցէ զիս չանել առ իս։ Ով մեծի և բարերար գթութեանդ քո, քաջդ արանց, որով աքսորեալք արդ անդորրագոյն վարեն կեանս առ քեզ՝ քան զոր խաղն ինչ յառաջ ասպանին առ Այիոսիս։ Եւ յերկիւղ կասկածանաց տրտմին սիրտք նոցա, և ոչ ժամ՝ի ժամ գէտսին ուղղին սրոյն շողալոյ, և ոչ՝ի տես ամենայն նուաց զանգիտեն։ Իսկ գժնդակ բախտին նոցա մեզմի զայրոյթ, քեզ լաւագունին հանդերձելոյ յոյս տրտմել զնոսա և առաջակայիս աներևակայութեան ապահովել։ Այլ զայս իսկ գիտասցես՝ի վերջ՝ զի արդարացի են կայծակունք՝ զոյս և զոր ամբահարիցեն՝ յայրգեն։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Այդ այսպիսի ոք ինքնակալ որ հասարակաց ամենայն մարդկան միթէ արուեստիւն է՝ վաղ իսկ, թէ ոչ խաբեմ, տրտմեալ իցէ զսիրտ քո, և մեծի վիրաւորութեդ մեծագոյն ևս պատրաստեալ դեղ՝ի դարման, վաղ իսկ պատանդեալ իցէ գքեզ ամենայնիւ, և անմոռաց մնացեն յիշատակաւ առաջի քո եղեալ զամենայն օրինակ անվրդով առաքինութեանն ոգւոյ՝ի քաջասերս քեզ, վաղ իսկ զամենայն խնամատոյց զնորատոն բնիկ իւրով պերճախօսութեամբն պարզեալ առաջի քո։ Այս ոմ ումեք ազդողագոյն քան զվեսաս մարթ էր խօսել առ

քեզ զբանան. մեծ ինն ի չըթամց նորա առնուցուն ուժգնութիւն բանին՝ հանգոյն դիւն պատգամաց. յաստուածակերպ իշխանութենէ նորա նկուն լինի ամենայն զօրութիւն յատոգ։ Համարեաց ապա Թէ զայս ընդ քեզ ասիցէ Կիւսար. "Ո՞վ զքեզ միայն ի ձեռս էառ բախտն խոշտանգել այդպիսի ծանր ազեաւք. չիք և չեղև իակ ընդ աշխարհ հաւօրէն տուն առանց ազատից։ Յաճեմ քեզ օրինակ ի խուժանէն, որք Թէպէտ այնու զի ցածունք էն և անշնանք՝ չիցեն նուազ զարմանալիք, այլ ի մատեանս յիշատակաց և ի տաբեգիրս պետութեանն առեալ յաճեցուցից զքեզ։ Տեսանէս զազգութիւն զայն կենդանագիր պատկերացն որք զրաւեալ ունին զարշաւ աբբունեաց կայսեր. չիք զի նոցանէ որոյ չիցէ մեծ ինչ կրեալ առանձին ազէտս Թշուառութեան. չիք զի ի մեծափառ արանց անտի որք ի զարդ պայծառութեան դարուցն իւրեանց փայլեցին՝ որոյ չիցէ կամ իւրոցն անձկաւ տանջեալ, կամ յիւրոցն չարակամէ տեսչանօք անձկացեալ։

Օ՞ի է ինձ յոչ քեզ ածել զՎկիպիան Վիրկեցի որ ի տարագրութեանն իւրում լուաւ զգոյժ մահու եղբօրն զոր զերծուցեալ երբեմն ի քանտարգելութենէ՝ այլ ի ձեռաց օրհասին զերծուցանել ոչ կարաց, և Թէ պրպես արդար իրաւամբք յուզէին գութք նորա՝ յայտ անտի էր ամենեցուն, զի ի նմին աւուր յորում Թագիեաց զեղբայր իւր ի ձեռաց նուիրակի առենին, և ընդ Տրիբունի ժողովրդեանն հակառակեցաւ այր գոլով սոսկական. սակայն այնու արիութեամբ ոգւոյ տաբաւ ցաւոց եղբօրն՝ որով և պարտսպանեալն էր նմա։ Օ՞ինչ և զՎկիպիոնէ Վիրկեայ ասացից, որ Համանգամայն գոգոյս գյաղթանակ Հօրն, և զեղբարցն երկուցուն ետես զմահ. սակայն յերիտասարդական՝ մանաւանդ Թէ ի մանկական հասակին, զայն յանկարծահաս աւեր կործանման տան իւրոյ անկելոյ ի վերայ նորին իակ յաղթանակին Վիրկեայ՝ այնու տարաբաղձութիւն, որպես վայել էր այնմ՝ որ յայն իակ էր ծնեալ, զի մի կամ Հռովմայ պակասեսցին Վկիպիոնք և կամ կանգուն կացցէ Կարթագոն։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՁՈՐՐՈՐԴ

,, Օ՛ն՛ձ և զ՝ ուկուլեանցն ասացից վերկոցուն հա-մաշունչ եղբարց զաժանելոցն յիրերաց մահուամբ ։ Օ՛ՐԻՒ զՊամպէոսեանց՝ որոց և ոչ զայս ընդոհ արար բանան միով հարուածով համակործան առնել զնոսա ։ Լ՛ակեաց Վեքստոս Պոմպէոս՝ ի տեսանել նախ զաղէտս օրհասի քեռն իւրոց , որպ մահուամբն լուծաւ զոդ գե-դեկայարմար խաղաղութեանն Հռովմայ ։ ի տեսա-նել զարձեալ զմահ ցանկալոյ եղբօրն՝ զոր յայն սակս ամբարձ բանան՝ զի մի՝ ի խոնարհագոյն բարձրութե-նէ քան զՏայրն անկցի որդին , սակայն և յետ աղետից այսոցիկ ժուժկալել ժուժկալեաց ոչ ցաւոյն միայն , այլ և պատերազմի ։

,, Ընդ իւ այլ և այ ամենայն ուրեք յաձախեն օրինակք եղբարց անձաւեալոց յիրերաց մահուամբ . և զոն ուրեք իցէ՝ ի հակառակէն գտանել զոգս Տարազատաց զու-գապէս ծերացեալս . այլ ես մերոյ ազգատոհմիս օրի-նակաբեր չատացայց ։ Օ՛ի ո՞ր այնպէս անզգայ և խօ-թամիտ որ բողոք ունիցի զբախտէն վասն Տասելոյն առ՝ ի նմանէ աղիտից՝ մինչ տեսանէ զի և կայսերացդ իսկ սուգ ածէ՝ ի վերայ ։ Պիւցանդեան ( )գոստոս կորոյս զբոյր իւր ամենասիրելի զՀոկտաւիա . զի և ոչ զնա որում սահմանեալ էին երկիցք , ազատ արար բնութիւնն էից՝ ի Տարկէ արտաստաց . մանաւանդ թէ նոյն ինքն բազ-մայեղանակ տանջեալ որբութեամբ՝ կորոյս և զքեռորդին զոր՝ ի յաջորդութիւն ինքնակալութեանն պատ-րաստեր ։ Լ՛ը զի մի ըստ միոջէ զամենայն աղէտս նորա թուեցից . կորոյս զքեռայս , կորոյս զորդեզրեալս , կորոյս և զքեռորդիս . և ոչ որ՝ ի մահկանացուաց ա-ռաւել քան զնա զիրթ էառ մարդկութեանն իւրոց ցորչափ ընդ մարդկան դեգերեր ։ Վակայն զայնչափ և զայնպիսի Տարուածոն ընկալաւ արիաբար՝ ի լայնատարած սրտին որ բաւականն էր ամենայնի . և ոչ ազգայ և եթ օտարաց՝ այլ և իւրոյն աղետից գտաւ յաղթական դիւց-ազնն ( )գոստոս ։

„Կայիոս Կեսար Նորին զհւսգաղինն ( )գոստեայ քեզ, ոյ իմոյ որդեգիր և Թոռն՝ յառաջին սան անդ պատա- նեկութեէ իւրոյ իշխան մանկահասակ զհասակակիցն իւր կորոյս զնչխան և զեղբայր սիրելի զ[illegible]ուկիոս՝ մինչդեռ հանդերձէր՝ ի պատերազմ ընդդէմ Պարթևաց, յո- լոմ և հարաւն իսկ ապա հարեալն կարեվէր յոյժ՝ ի սրտի. այլ երկաքանչիւր իսկ հարուածոց միօրինակ ժուժկալեաց արիութեամբ և բարեպաշտութեամբ։

„Ծօրեղբայրն իմ Կեսար կորոյս զեղբայր իւր կրասեր զՎրուսոս Վերմանիկոս զՅայն իմ, մինչ՝ ի միջոց- կրեայս Վերմանացւոց աշխարհին զազգս ամենից ընդ հռովմէականն նուաձէր ջնով, և կորոյս՝ ի գիրկս իւր համբուրելով. սակայն իւր և այլոցն իսկ չափ եդ ար- տասուաց. և համբրէն զօրուն՝ որ սասանեալ կայր՝ ի սուգ և զսիրելոյ զօրավարին իւրոյ Վրուսոսի ինգրեր ըզ- գիահն, չէտ թողլ երանել բոստ օրինս հռովմէական սղոյ. կարևոր համարեցաւ ոչ միայն գինուորութեան՝ այլ և սգաւորութեան հրաշանգացն ինամ տանել՝ ի պահպա- նութիւն։ Այս ինչ մարթի էր նման զայլոց արտասուսն կարձել մինչ չև գիւրան զսպեալ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

„Արկոս Ջնտոնիոս հանն իմ քան զամենայն ա- ւագս աւագագոյն՝ բայ յորմէ յաղթեցաւն, ՝ի ժա- մանակի յոյժամ բարեկարգեալ հաստատեր զհասա- րակապետութիւնն, և երանապետական իշխանութեամբ գեր՝ ի վերոյ ձեռացեալ ամենեցուն՝ բայ յերկուց իշ- խանակցացն՝ զայլս ամենեսեան տեսանէր ընդ իւրև, լուսո զգոյժ սպանման եղբօր իւրոյ։ Արվ բանիտ անա- գորոյն, զիարդ խաղ առնես զմարդկայնովքս ապիտիւք։ Ի ժամանակի անդ յորում Արկոս Ջնտոնիոս բազ- մեր տէր և դատաւոր կենաց և մահու քաղաքացւոցն իւրոց, եղբայր նորս դատապարտեալ ածէր առ՝ ի մահ։ Ակայն այնպիսւոմ դառն հարուածոյ տարուն նա նո- վին մեծանձնութեամբ՝ որով այլ ամենայն ձախողա- կաց տարեալ էր։ և զայս կոծ սրաթ մահու եղբօրն՝

քսան լեգէոնից արեամբ հաշտ առնել զոգի նորա ։

.. Ա՛յլ զանց զայլովք ալարեաւ բազմապատիկ օրինակք , լռեալ և զայլն ամենայն որ ընդ իս անցին ազէտք , զայս ևեթ ասացից զի երկիցս եհար զիս բախտն հաւաստացս օրհասիս և երկիցս ի միտ էառ զի սանանել ինձ կարող է՝ այլ չաղթել ոչ ։ Կորուսի զեղջայրն իմ զՎերմանիկոս , որ թէ պակս սիրելի էր ինձ՝ նա արդեօք առնու ի միտ որ զիտիցէ ցաւալայր զօրէ գալթն հարաւատական ի սիրա եղեալյաւեր ։ Ապակին այնպէս ի չափու կալայ զկիրս , զի պակասեցուցեալ և ոչ ինչ յոյց պահանջինն ի գործադրելն եղբօրէ , և ինքնակալի գժպատեհ ինչ ոչ արարի ։ ։

Օ այսոսիկ քեզ Հայրն հասարակաց առաջի արալեալ օրինակս՝ համարեաց թէ յուշ առնիցէ քեզ զի չէք ինչ սուրբ և անմատոյց ի բախտէն . որ և յաղբանեաց անտի ուստի զդիւցազունսն հանդերձեալ էր վերառնուլ յաստուածութիւն՝ ոչ պատկառեաց զագուից յուզարկաւորութիւնս հանել ։ Ի որ զարմացի ապա թէ անգթութեամբ և կամանիրաւութեամբ գործիցէ ինչ . զի որ անողոքելի գժնդութեամբ օրհասաբեր ոտիցն տայ կոխան զարձս արքունի՝ զիմդ հնար իցէ այնպիսումն իրաւամբք և չարաւորութեամբ առ սոսկականն քէ՞ րիլ ։ Վախճան և բիւր կշտամբանս նման առնիցեմք , ոչ ի մերոց ևեթ այլ և ի դիմաց հասարակաց , սակայն փոխեսցի նա ոչ . ուղերձք և պաղատանք զնա ոչ ողոքեսցեն ։ Որպէս ինչ արարն ի սկզբանէ ընդ աշխարհ՝ զնոյն և յայսմ հետէ արասցէ . ոչ ինչ եկաց ազատ ի բռնութենէ նորա , ոչ ինչ մնասցէ անմատոյց ի ձեռաց նորա ։ Վնասն ուրեք միսի բռնն զօրութեամբ , որպէս է նորա սովորութիւն , և ոչ ակն ածէ ապիտաբերս մտանել և ի տունս անդր՝ որոց ընդ տանձսն են անցք , և զդաբնազարդ մուտս արքունեաց համակել ի թռչս ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Օ ԱՑՍ ևԵԹ զմի աշխարհասպատաս աղօթիւք և ուխտիւք ինդրեսցուք՝ ի Նմանէ, զի ԹԷ չև իցէն Նմա կամք համարձակիլ սպառել զազգ մարդկան, ևԹԷ տակաւին սիրելի իցէ Նմա անունն Հռոմէական, համՀեացի ըստ մահկանացուացս առնեցաւն որպէս ի սուրբ և ի նուիրական ակնարկել յանձն ինքնակալին պարգևելոց մեզ ի վատթարել մարդկայնոցս իրաց մերձ ի կործանումն։ Այսցի զՈՒԹիւն առ ի Նմանէ, և առ մարդասիրա-գոյնն քան զամենայն իշխանս գոցի մարդասէր։

Այլ քո ակնկատոյց լեալ ի նոսա՝ զորս ասա ի վերոյ կարգեցի՝ ի վերառեալն յերկինս կամ ի մերձաւոր գառաս երկնից՝ պարտ է քեզ անվրդով սրտիւ համբերել բանին ի ձգել նորա և ի քո վերայ ըզձեռան զորս ոչ ամիտիեաց և ի նոցանէ պրովք կեանքս և հնչեմք։ Այլոյս արիւԹեանն պարտ է և քեզ լինել նահանձաւոր ի տանել և ի յաղԹել ցաւոց, և որչափ հնար իցէ արդ մարդկայնոց բնուԹեանս՝ ընդ աստուածային չաւիղն գնալ։ Այլումամենայնի՝ ի մեծուԹէ և յամենաստուԹեան խափան ընդ միջ կայ իրացն գժուարամատոյց հեռատոպուԹիւն. իսկ առաքինուԹիւն զիւրամատոյց ամենեցուն՝ ոչ զոր համարի իւրանց արժան բայց որ ոչ արժանի ինքեանն զնա համարեսցի։ Որինակ արդարև գեղեցիկք են նորա քեզ ի նմանուԹիւն, որոց ԹԷպէտ մարԹ էր ցանուել զի ոչ ազատք գտան յաղեետիցն չարեաց, սակայն ոչ ինչ անիրաւուԹիւն համարեալ՝ այլ օրինս մանկանացուն յայտ մնալն ևԹԷ հաւասարել այլոց ի մարդկանէ՝ ոչ խժաբար դիմակալուԹեամբ տարան աղետիցն իւրեանց, և ոչ մեղկ և կանացի վատուԹեամբ. զի չզգալ բնաւ ցաւոց չէ մարդոյ, իսկ չտկալ աչխ՝ ոչ առն։

Այլ զի համարէն անցի ընդ կարգս ինքնակալացն ամենեցուն, զորոց զեղբարս կամ զքորս յափշտակեաց ի նոցանէ բախտն, չմարԹէ ինձ լռել և ի կարգէ անտի նոցա ի բաց Թողուլ զնա ինքն զոր բնուԹիւն էից ծնաւ

'ի կորուստ և 'ի նախատինս ազգի մարդկան, և 'ի տապալել հիմն 'ի վեր զսէտութիւնն զոր լատագունին յինքնակալաց յանձանձէ արդ բարեգործութիւն։ Այսիսս Աէսար զքոյր իւր զԱրտաւիլիա կորուսեալ՝ քանզի ոչ ցաւել դիտէր և ոչ խնդալ որպէս ինքնակալի է վայել, խոյս ետ 'ի տեսութենէ և 'ի կենակցութենէ քաղաքացւոց իւրոց, և 'ի հանդէս յոտզարկաւորութեան քեռն իւրոյ ոչ գտաւ առընթեր, և զվերջինն պարտս եղբայրութեանն ոչ հատոյց նմա, այլ Ա՛ղեքսանդր 'ի գեղջ՝ նարտիս և քաւէիք և այլովք այսպիսեօք զղառնութիւն ցաւոցն հնարէր սիրել։ Լ՛ացն և եղուկ հառաչական ինքնակալութեանն. նարտ և քաւեալք եղեն սիրիչք ցաւոց մեծի ինքնակալին 'ի սուգ քեռն իւրոյ։ Այլ ինքն Աայիոս յաւելեալ 'ի մեղկութենէն իւրում է զի զմօրուսն և զՀերան Յողոյր երկայներ անդադրիմն, և է զի զՅատալոյ և զՎիկիլոյ Ծովախաղքն յածեալ Յախտէր. և ոչ օք երբեք գիտաց Հաւատատեաւ ընդ սուգ արդեօք կամիցի քեռն իւրոյ եվէ ընդ պատուն գիցական։ Օ՛ի մինչ տաճարս նմա նուիրեր և պատիւ աստուածական՝ խժաբար պատուհասեալ առնէր և զայնասիկ որք ոչն գնա սգային։ Վանգի նուիրն անչափառութենէն ոգւոյ որով 'ի յաջողութիւնս փքացեալ գեր 'ի վերոյ քան զմարդկային բնութիւնս ապարհանէր, նոյն և 'ի ձախողակ դէպն նկուն լինէր անժուժութեամբ։ Ա՛ւս 'ի Հռովմայեցւոյ գժպատեհդ այդ գործ՝ տալադեպ խաղալք և ոչ մարդավայելուչ սիրիմանօք փարատել զցաւս անձին, կամ զայրը և զժգալն սգով տխրութեան գրգռել զայնոսիկ և կամ այլոց աղետիւքն մեղմել։ Ակ քեզ չէ պարտ փոխել ինչ 'ի քումմէ սովորութենէդ, զի փոյթ 'ի մեր եղեր զուսումնասիրութեան, որով 'ի բարեբաստութեանն իւրում երջանկանալ մարդ, և 'ի թշուառութիւնս իւր սիրիմ. և է նմա այն 'ի զարդ վայելչութեան և 'ի մխիթարութիւն ոգւոյ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄԵԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՀԱՒԱՏՔ, լեր խոստովան յանձինս քո, և որպէս ամբաստանեալք ոգւոյ չոլլ պարսպեա նոքօք զանձինս քո, և ոչ ուստեք մեզ պղծել ի քեզ ցաւք։ Յաւերժացո և զյիշատակ եղբօր քո արձանագրուեսցի ի մատենի. զի այս ևեթ յամենայն ձեռակերտս մարդկան անեղծականայ յամենայն յեղափոխութեանց ժամանակի՝ ի հնութենէ ոչ ծախեսցի. այլ ամենայն քարագործ կամ կճեայ ամբարտակք, կամ հողակոյտ շիրիմք երկնաբերձք ոչ յոյժ երկարակեացք են, զի և և այնոցիկ կոխեսցեն։ Ահա յիշատակ անմահ է. այնու ամբարեօքիւր զեղեայր քո և նոցաւք յաւերժացո։ Ամենատուիցեամբ յոյժ գոյժեցեալս մշտատև հանգստով վնասպատասխանել, քան անօգուտ ցաւալ սգալ։

Իակ որ ինչ վասն բախտին բանք իցեն, ի եպէտ և զարդիս չէ մարթի վարել առաջի քո զգաստ նոցա, զի վասն միոյ ևեթ կարծեցեալ զրկանացն առելի ի մեզ քեզ ամենայն պարգևք նոցա, բայց եկեսցէ օրն վարելոյ զայն՝ երբ ժամանակն ինքնին կացուցցէ զքեզ իրաւարար նմին գտաւսր, և յայնժամ հաշտեսցին ընդ նմա։ Վասնզի բազում ինչ՝ ի գործոյն զրկանացդ հոգացաւ կանխաւ, և բազում ինչ ևս յաւելցու արդ տալ փոխանակ. և հանգոյն ասացեալ՝ ոչ տպաքէն զոր եբարձն՝ իւր պարգև էր։ Ի՞նչ ասա՝ ի շնաս անձինդ վարեսցին հանգարտիդ, և մի զօրալիցն և ջատագով կացցես ցաւոցդ։ Պատքէն մարթի է քեզ պերձաբանեալ եամբ քով մեծացուցանել զպատուս, և զմեծամեծն փոքրկացուցանել և ընդ ընդենոյն գնել ի համարի. բայց պլոմ կացցէ քեզ պահու զօրութիւնդ այդ, և զարգիս միթէ արուեան անձինդ ամենայնիւ խնամ կալը իր։ Կացց տես, մի և յայնմ առաւելապանց գոյիս. խոսն ինչ տրամաբանի է մարդոյ, զառաւելն յանձախ ընդունայնութեան։ ի սպառ արդելու քեզ զայն ոչ կարեմ։ Ցավկսա գիտեմ զի են և ի մնաստասէրք՝ խոտասիրեալք մնաւանդ քան քաջասիրեալք,

որ զցաւս գժպատեհ Հանդիպեալ խնամոյդ . որոց , Թուի ինձ , ոչ երբեք այսպիսեաց Հանդիպեալ արկածից . ա-պա Թէ ոչ՝ ուսուցեալ էր նոցա բանիւն ի բաց դնել զայդ ամբարտաւան խնամատուԹիւն , և ակամայ գալ ի խոս-տովանուԹիւն ՀնազանդուԹեան : Շ ատ իսկ բանիւն զաւէրդն ի ցաւոց և զանգաւթն ըստ չափ ի բաց Հա-տանել , այլ բնաւ իսկ խափանել զայն ոչ մարԹի ինչ է և ոչ պատշաձ՝ Այլ իբրև չափուն պատշաձի խնամ կալ-ցի՝ ոչ զանգաԹեան և ոչ զանմուԹեան տալ ինչ ցոյց , այլ որպէս ինչ գԹասէր զորոյց անկն է առանց ԹեԹեւամուԹեան , յայնմ կացի զմէզ ի պայմանի : Հոտեսցին արտասուք , բայց և գադարեսցեն . երկեն Հառաչանք ի խորոց սրտի , բայց և լռեսցեն : Ի նչպէս կալ իբր զանձն քո , զի և խնամոյդ և եղբարդդ քոց ա-ռաջի արդարացիս : Ի նչ իմամ կալ զի ցանկալի քեզ իցէ խորհել ստէպ զեղբօրդդ , խօսել զնմանէ և անդուլ յիշատակաւ անմեկին ունել զնա յաչացդ : Նա յա-ջողեսցի քեզ այս՝ եԹէ յիշատակ նորա ի բերկրուԹիւն իցէ քեզ և ոչ ի դառնուԹիւն . քանզի ի տրտմակա-նաց բնաւորապէս ի բաց խուսափիլ հոգի : Ցաւշ լինի քեզ ՀամեստուԹիւն նորա , յաւշ լինի եւանգնին ի զոր-ծել , ՀարատևուԹիւնն ի կատարել և ՀաստատուԹիւնն ի խոստմանս : Ո ամենայն բանս նորա և զգործս յաւշ արասջիր և՝ անձին քումն և այլոց : Խոր-հեաց որպիսի ոք էր և որպիսի ինչ լինել խոստացեալ . զի զինչ չէր մարԹի աներկբայ ակն ունել յայսպիսւոյ եղբօրէ :

Ո այսպիսի ահա միտք վառԹարեալ յերկայնատև վշտաց և Հանգոյն խրԹնացեալ որպէս ինչ կարացին ծնանել՝ եԹէ ի գիր . որք ԼԹէ ոչ ըստ արժանի բոյոյ խնամատուԹեանդ իցեն և կամ ի դարման ցաւոցդ ան-բաւականք՝ յաւշ լինի քեզ զի որ յիւրոյն է գրաւեալ յադեսից՝ ընդԹէ նման միԹԹարիչ կալ այլեւս . և զի գԺուարաւ յոյժ լսուիւականն ի յաւշ գայ բարբառ այեմ՝ զորով Հնչէ շնորՀանակի խժխոյն խաղաղարար զօդանջ և նոցին իսկ ապուռաւոյնադանիցն ի բարբարոսաց գԺսխմբեալք :

ՂՈՒԿԱՍԻՈՍԻ Ա. ՍԱՆԵՑԿԱՑ

ՅԱՂԹՈՒԱԾ ՄԽԻԹԱՐԻՍԹԵՆ

ԱՒՐ ՄԱՐԿԻԱ ՏԻԿՆՈՋ ՀՈՌՈՎՄԱՑԵՑԻ Ի ՄԱՀ ՈՐԴՈՅՑ ՆՈՐԱ ՄԵՏԻՂՈՍԻ [1]

Consolatio ad Marciam

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ա ԹԷ ոչ՝ որպէս ամենայն ախտից, նոյնպէս և կա-
նացի տկարութեան ոգւոյ գէր ի վերոյ գթեզ գիտեի,
Մարկիա, և զվարս քո որպէս օրինակ ընծայեակ նախ-
նեացն առաքինութեանց, զիարդ իշխեալ էր ինձ մխի-
թարիչ մատչել քեզ ի ցաւոդ որ և զարս ինքնին գըլ-
խովին նկուն արարեալ ընկէզ. կամ՝ զիարդ յուսայի
այսպէս անյաջող գժամանակին [2] տեսանելոյ, և զդա-
տաւորն ոսոխ և գյանցանսն գժպհի՝ անդատապարտ
զղաղ քո առնել քեզ յանդիման, եթէ քաջածանօթ

1 Մարկիա տիկին ասիւր. և Ճոխ գուսար Արեմուտիոսի Կոդրոսի առն Լիբեզլոյ գիտութեամբք և մատենագրութեամբք, կորուսեալ զմի յոր-
գոցն՝ զահաւասեկան ի կատարումն մարգկութեան և ի ծայր քրմա-
պետական իշխանութեան, կայր յերկար ի սուգ անմխիթար. առ որ առնու գրել Սենեկա զգիրս զայս մխիթարութեան որ մի ի գեղեցիկ մատենագրութեանց նորա է:

Կոդրոսի հօր Մարկիայ գրեալ էր զպատմութիւն քաղաքական և զինվորական պատերազմացն. յորմէ զԲրուտոս և զԿասիոս վերջինս ասէր կացեալ Հռոմայեցիս. զոր երբեք տրգել կայսրն Ցիբեր ի հրա-
մայեից կորուսանել զմատեանն և զմատենագիրն պատուհասել՝ Մար-
կիա առեալ թագոյց զօրինակ մատենին, և ապա յիրիքնակալել Կալի-
գուլայ հրամանաւ նորա ի վեր հանեալ զմատեանն՝ կենդանացոյց զհանճար հօր իւրոյ և ապրեցոյց զնա յեկեսպես մահառանէ, որպէս ասէ մատենագիրս:

2 Չի հնացեալ էր ի նմա ցաւն ժամանակաւ, զի գատաւոր ինքն մտցն էր, և յանցանք բազումն գժպհի մահ որդեկին:

արարքին ոգւոյդ և բանսհանդիպ առաքելեանդ ցոյցք ոչ յատկանին յիս վատահաւատութեան։

Վասնզի ամենեցուն է՝ զինչ արարիք և ընդ հայր քո, զոր հաւատալ որդւոյդ սիրեցեր, այնու և է ընդհատ՝ զի ոչ երկայնակեաց քան զքեզ լինել նմա ցանկացար. [1]եպէտ և զայն իսկ՝ ո՞վ գիտէ՝ ցանկացար եւրեա. քանզի առաւելութիւն սիրոյ և մեծատանց է ուրեք զի և անդր քան զպատշաճն բերի։ Վասն՝ ի քեզն էր՝ կացեր հակառակ ինքնակամ մահուան Տեառն քո Աբեժատի Աղբոսի. և յայնմհաւրեալ՝ ի բանից նորա զի չուրջ պատեալ յարբանեկացն Ակչանոսի՝ այն և է մայր նմա Ձանապարհ փախստեան՝ ի ծառայութենէ, լալ լսեցեր, բայց չէիր նմա խորհրդակից՝ ի նոյն. պատաստեցեր յայնապէս, և՝ ի հեծութիւնս քո մաչեցար, և ոչ զուարճութեամբ գիմոյ զցաւդ պատրաստեցեր, և այն յայտնի ժամանակի՝ յորում՝ ի բարեպաշտութիւն մեծ Տամարեալ էր ջանարշտեն։

Իբ ապա զիտիօխումն Հանգամանոց ժամանակին պատեհ քեզ կալեալ, զՁանձար իմաստութեան Տօր քո՝ զպատճառս ազիտութեր պատուհասոյն նորա առ՝ ի պէտս մարդկան վերրնծայեալ՝ յիսկապէս մահուանէ գնա Ձզպարեցեր։ Իբ՝ ի գիւանս յիշատակաց աշխարհին առանձեալ զմտաբանան, զոր այրն այն մեծ՝ արեամբ իւրով էր զրեալ, բարեացապարտ Հաւվիկականացն գասը գպրութեանց զմանն ի նոցա զմեծ թափեալ՝ ի հրոյ. բարեացապարտ Հանդերձելոց ազգին՝ անեղծ պահելով նոցա զվիպասն Ձնահատութիւն՝ որ այնչափ թանկագնոյ լեալ էր մատենագրին. բարեացապարտ և նմին իսկ մատենագրին՝ որոյ անմահ է և անմահասցի յիշատակ՝ ցորչափ Հաւվիկականքն մեծարեսցին վկայք, ցորչափ և ցե՛ք որ որ՝ ի նահանեացն իւրոց՝ ի գործս քաջութեան ակնարկել կամիցի. որ ցանկասցի գիտել՝ որպիսի որ Հաւվիկացեցին իցէ, և որպիսի որ նա՝ որ՝ ի խնարհեցուցանել ամենեցուն զպարանոցս ընդ Ակչանեան լծով՝ եկաց միայ անկուն և ազատ Հանձարոյն և ոգւով և ձեռամբ։ Որպիսի, բարեկ, կորուստ մեծ Տասանէր աշխարհիս՝ եթէ այնպիսի ոք այր՝ ի մոռացօնս թաղէր, և ոչ քեզ որպէս վերակենդանեալ գայր՝ ի տեսութիւն կրկին գերեզմանէ առաւելութեամբն՝ պերձախօսու-

թեամբն ասեմ և ազաւութեամբ ։ Լաւ արդ ընթերցեալ և ի ձեռս յանձնա ամենեցուն, և ի սիրտս բոլորից ի գրուածեալ և յորիածից ժամանակաց ոչ գտնիսիս ։

Լսայիսի հաւատալիք մեծութեան ոգւոյ քո ոչ թողին ինձ հայել ի տկարութիւն կանացի բնութեանդ և ոչ ի թախծութիւն երեսացդ զոր ի բազում անաց հետէ որպէս պատեաց կալաւ տրտմութիւն, նոյնպէս և ունի ։ Ջես որպես անպատրաստ խօսիմ և ոչ նենգագործ գտանիս ի քէն զգաւոդ հնարիմ ։ Օ հին ցաւոդ քեզ յուշ ածեալ՝ զի գիտացես թէ և այս քո վէրք չեն անբուժ ժելիք՝ զնոյն օրինակ մեծի խոցուածոյդ զսպիտն ցոյցի ։ Ոտդ այլք մեղմիլ ընդ քեզ վարեացին և փաղաքշեացին. իմ՝ի մեի եղեալ է ընդ տրտմութեան քում օգնել և զհանգ և զկկոցեալ աչդ յարտասուաց՝ ողբ, թէ զնըշմարտութիւն լսել կամիցիս, ի սովորութենէ առաւել քան ի հարիկ ցաւոյն հոտեն արդ՝ ցանաքեցուցանել, քոյոլգ իսկ սատարելոլ թէ մարթ ինչ իցէ՝ և մնացդիւք ընդունելութեամբ զեղոյն ։ իսկ եթէ ոչ ուժգին իսկ և ակամայ քեզ ։ Թէպէտ և զիրկս զցաւոլդդ արկեալ չկամիցիս Թոզալ, զայն կալեալ քեզ փոխանակ արդեոյ ։ Օ ի երբ իցէ վախձան դորա ։ ամենայն ինչ փարձեցաւ ի զուր, ի զուր բարեկամացն սպառեցան սիրելիչ բանք, մերձաւորացդ քոց աւագ արանց զօրութիւնք, և գլաւորականացն հայրենաշատանդք Հոխութեանց պերճ և պատուական աւանդք ընդ անցուր ակամբ քո սահեալ անցանեն՝ հազիւ թէ վայրկեան եւեթ զգացեցեալ զքեզ ի սիրանս ։ Լա և ժամանակն ինքն գնին որ բնաւորապէս գարմանել զամենայն և զհանուսն իսկ յաղիտից թեւեւացուցանէ, ի քեզ միայն անզօր գտաւ ։ Լայ ահա երրորդ ամ է ցաւոդ և տակաւին չձողանայ յառաջոյ խստութենէն ։ Նա՝ նորագի օր ըստ օրէ և զտագն յաձախէ, և իշխանութիւն իմն յերկար գութեամբ ժամանակին ի վերայ քո կալեալ՝ յայն հաւ սեալ է արդ զի ամաչէ իմն տեղի տալ ի քէն ։ Օ որ ո՞ րինակ սիրտը ամենայն եթէ ոչ իսկ և իսկ ընդ յաձնելն և ընկճեացեալ բռնանան ի սպառ, նոյնպէս և տիրականն աղիտաբեր կրից սիրտ յանձն իւր մոլեգնեալ յերկար, հուսկ ապա նուիրն իսկ տիրութեամբ պարարեալ մնան. և անձին թշուառացելոյ ցաւք զառնան ի հեշտու-

Թիւն ալէտալի ։ Վ ան որոյ ցանկալի իսկ էր ինձ անդրս-
տին ի սկզբանէ գալ ի բժշկութիւնս յայս , զի գոյն
դէղովք մարթ էր ինձ յայնժամ նուաճել զսկըզ-
բնաբոյս ախտին զօրութիւն , և արդ ուժգնագոյն մըր-
ցանաց պէտք էն ընդ տարրացեալսին ժամանակաւ ։
Ա յսպէս և վիրաց բժշկութիւն դիւրին ի սկզբանն է
մինչ դեռ ևս դալար յարևնէ լեռին . զի յայնժամ և խա-
րել մարթ է և խորագոյնս խոլ արկանել և զգարմանիչ
մտաւնան ի նեղըս մխել . իսկ յորժամ զայրացեալ ժա-
մանակաւ և խղճայեալ ի կեղ փախչին՝ դժուարա-
բուժելիք են ։ Ոչ ինձ մարթի խնայութեամբ և մեղմով
զհաստացեալ ցաւսդ գարմանել արդ , պատառելոյ զայն
պէտք էն ։

ԳԼՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Պ ԻՏԱԿ իսկ եմ զի ամենայն խրատ ի վարդա-
պետութեանդ առեալ սկիզբն և օրինակօք կատարին .
այլ արդ զկարգդ զայդ փոփոխել Հարկ է . զի այլ ազգ
ընդ այլում վարել արժան է ։ Ո ունիս նուաճել բանն .
այլոց անուանս չբերդս և օրինակս մեծագործս պարտ է
դնել առաջի զի ի տեսիլ նոցին զմայրեալ սանձ դիցէ
ազատութեան ոգւոյն ։ Ո երկուս առաջի եղիցէ քեզ օ-
րինակս երևելիս ի քոյոց ժամանակակցացդ և ի քոմ-
մէ իսկ կանայսի բնաւթենդ , որոց մին անճնատուր ի
յաւն եղև , և միւսն նուիրեալք զգածեալ կրիւք և ծան-
րագոյն վնասուք՝ ոչ ի սպառ ներեաց յաւոյն տիրանալ
յանձն իւր , այլ փութապէս Հանդարտեցոյց զսիրտ իւր ։
Հ ոկտաւիա և Ի ւխիա մին քոյր և միւսն կին Օ դոս-
տեայ , որք և երկոքին կորուսին զորդիս առոյգս Հա-
սակաւ մինչ և երկոցուն աներկբայ էր յոյս ինքնակա-
լելոյ յաւուր միւսմ։ Հոկտաւիա կորոյս զՄարկեղոս՝
յոր քեռի նորա և աներ սկսանէր տակաւ զբեռն ծանր
ինքնակալութեանն բառնալ . երիտասարդ զուարթա-
միտ և քաջահանձար , սակաւապետ և ժուժկալ , որ յայն
տիս և ի Հռոմէ ինս մեծապէս զարմանալիք էին .
Հեռի ի փափկութեանց և կարող ի կրել տրտում ինչ
յաւելոյր քեռի նորա ստանձնել ի նա բեռինս , կամ

որպէս կամք են ասել իմոյ բանիս, որչափ ինչ չնուաճս ի վերայ նորա կամաց կառուցանել՝ կուռ և անտեղիտալի հիմունքն էին։ Օ՜սա Հոգեսաւոր զամենայն ժամանակս կենաց իւրոց ոչ զադարեալ ի լալոյ և ի կոծելոյ, չառեալ երբեք յանձն զուարճանալ ինչ լսել ձայն բերկրալոյ և կամ սփոփանս ցաւոցն ընդունել։ Ի՝հայնաւին ուշ եղեալ ցաւոց անձինն և հոգւոյն և մնոք խորասուզեալ ի նոյն՝ յամենայն ի կեանս իւր ե. կաց որպէս յաւուր յուզարկաւորութեան որդւոյն, ոչ կամեցեալ քնաւ՝ լսասցից յառնել իւրմէ՝ այլ զի և ոչ զնա յարուցանիցէ, երկրորդ որբութիւն զայն վար կացեալ թէ զարտասուսն լքանիցէ։ Ի՝ զպատկեր ինչ սիրելւոյ որդւոյն ունել կամեցաւ, և ոչ գլխուտակ առնուն նորա լսել։ Գ՝ժպհի էին նմա ամենայն մարք. և ս առաւել ընդդէմ՝ Իւիայ գժնեմանայր գի զորդի նորա տեսանէր ժառանգաւոր բարեաց խոստացեալ իւրումն։ Ի՝նդ խաւար և ընդ առանձնութիւն ընդելացեալ և ոչ յեղբայր իւր վերանիլ կամեցեալ՝ մերժեաց և զառաջս յօրինեալս ի լինչատակ պարծանաց Ի՝արկէզուտի և զոր ինչ միանգամ ի մեծարանս նորին ընծայեցին դպրութիւնք. եթէպ գլսելիս իւր առ ամենայն բանս միխիթարութեան, և ի բնաւիցն ի բաց հրաժարեալ կենցաղական վայելչութեանց պատշաճին կենաց և առեցող դերախալ փառաց իշխանութեան եղբօր իւրոյ՝ ծածկեաց և թաքոյց զանձն իւր յառանձնութեան։ Պար առեալ յորդւոց և ի թոռանց՝ զհանդերձեան սգոյ ոչ մերկացաւ ի թշնամանս իմն իւրայոցն առ Հասարակ, զի ի կենդանութեան նոցա՝ որբացեալ յամենայնի զանձն համարէր։

ԳԼՈՒԽ ԵՐԻՈՐԴ

Ի ԻՒԻԱ կորոյս զորդի իւր զԻ՝գրւսոս, որում իշխանութիւն ինքնակալութեան հանդերձեալ պատրաստեր, և էր իակ կացեալ զօրաւոր մեծ և ի խորս Վերմանիոյ լեալ միջամուխ՝ զհռովմայեցի զիշխն կանգնեալ յաշխարհս յորս և հռովմէականն անծանօթ էր առնուն։ Յայն աշուանան մեռաւ նա՝ զոր և թշնամեաց

իսկ մեծարեալ ի հիւանդութեանն՝ հոգւոյ ախտիւ հայեին ի նա, և ոչ իրխնեին ցանկալ նմա զոյն ինչ՝ որ ինքեանց օգտակար էր։ Ի ահաւասիկ այնմիկ զոր մեռաւ նա ի վերայ իւրոց աշխարհին՝ ցանկալի եղև առնեցան՝ քաղաքացւոցն և գաղթականաց և համբոյն առակս. զի վասն իակ ազատքն քաղաքացիք և եկեղ գաղթականքն երևեալ զմիաբանքն միցելով ի սպաս պատուհան յուզարկաւորութեան նորա՝ որպես ի հանդէս յաղթանակի առեալ ածին զնա մինչև ի Հռոմ։ Ի զոր մայրն աղիողորմ որ և վերջին համբուրից որդւոյն չէր լեալ արժանի և ոչ լսելոյ գլխոյն անուշակ բարբառ բերանոյն, ընդ երկայն ձանձալարշ զհետ ընթացեալ նշխարացդ Պաւլոսեան իւրոյ ընդ մէջ լուցելոյն ընդ ամենայն Ի առաքեալ խիտ առ խիտ խարուկաց, յորոց ի մէն մի արպէս բոցակէզ առանելով զորդին մարմնէքն գառնակիսի, իբրև ի չերմէ զնա ամիսիւեաց՝ անդր և դնաւս իւր եմոյ ընդ նմա. ոչ ինչ առաւել քան զարժանն մեր և քան զպատշաճն տիկնոջ կայսեր վերադնեալ։ Ի ոչ դադարեաց հոգալել զանուն Պաւլոսեան իւրոյ և ամենայն ազգէ՝ առանձինն և ի ժողովս ակնթէրց յանդիման իւր զնա առանել և մնոգիսբացդոյնս խօսել և լսել զնամանէ. ուր զի Պարկեշտին յիշատակ ոչ զր պահել կարող էր և ի մէջ ածել առանց զնայլն զառնացուցանելոյ։

Զոր ընարեա քեզէն զոյր յերկուց առաի օրինակաց զհետ երթիցես. եթէ առաջինն՝ ոչ ևս համարեսցիս զանձն քո ընդ կենդանիս, առելի իցէն որդիք քո և օտարաց, և ի տիրութեան քումմէ ինչիս գոչակ չարեաց հանդիպելոյն քեզ մարդ. յամենայն պատշաճ և յօրինաւոր բերկրութեանց որպէս գժպատահ քեզ եղելոց ի բաց հրաժարիցես, գժպհին իցէ քեզ լցս, և զկենաց քոց կացիս բազոք զի ոչ հասցեալ վախճանաւ գահավիժ գքեզ ի գերեզման. և որ գժպատահ ևս է և անարժան մեծութեան ոգւոյդ համբաւելոյ լուսութեամբ՝ յայտ իմն այնպէս արասցես՝ զի տատակացեալ ի կենաց և մեռանել ոչ կարես։ Իսկ եթէ զմեռոյ սիրելոյն զօրինակի զհետ երթիցես՝ գժն և համառատ ի վիշտս քո լեալ և ոչ տարատանջ հիւծեսցիս։ Օ ի արդարև ոչ անմտութիւն իցէ վրէժս թշնամութեանցն

ինդրեալ յանձնէ և յաւելուլ զպահաս իւր։ Ո՛չ աւուրք Թիւն բարուց և վճռաւորեան, որպ յամենայն ի կեանս քո պատկառ կացեր, ցուցիչը ազէ և ի գէպս յայս. քանզի է և ի գաւս Հաստատանալ։ Ո՛ղոյն ինքն զերիտասարդն՝ զարժանին Հանդստեան՝ անդորր պտիւ յոշ քեզ ածեալ և անուանեալ ատէպ՝ յանդորրու զնա կալցիս և յերջանկաբեաց կացուս զետեղեցոյս՝ եթէ որ պէս կենդանեաւ ընտա՝ և ի մահուն զատրեմ ամիտ և ուրախ յիշատակաւն եղիցիս։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Յ՚ետ և ոչ ընդ խոտոգոյն վարդապետութեանդ Տրա Հանդպ առաջնորդեցից քեզ, ի մարդկայինն ի բաց զմարդկութիւն դնել Հրամայելով, և կամ ի նմին իսկ յոգարկաւորութեանն աւուր զարտասուս մեր ցամաքեցուցանել կամելով։ Կացցէ ոք մեզ զատաւոր իրաւարար ի սահմանել զայս մեր վէձ՝ եթէ իցէ արժան ցաւոց անպայման զոլ և անվախձան։ Ա՛ն ինչ յերկուսեանդ մեծ ծափառ տիկնոջն Լիւիայ՝ զոր մեծքմեծաբար պաշտեցեր յաջքունեիս, Հաձոյագոյն իցէ քեզ օրինակ։ Ա՛յս արդ յատեան իւր և ի նամուսի կոչէ զքեզ։ Ա՛յս և յատաջնումն անդ ազիտին բօրբօքմանն՝ յոլում ապա ժոյժ և գժնդակ էն ցաւք, տեղի ետ մխիթարութեան բանից Ա՚ըհսոի խնամատարին մեռելին առն իւրոյ, և վկայեաց իակ զի զնա եգիտ իւր զօրավիգն առաւել քան զժողովուրդն Հռովմէական զոր արտունեաւ Հատիճն իւրով տխրեցուցանել ոչ կամէր, քան զ( )դուստրն՝ որ զնի յոյզուցն՝ զնեցուկ իւր կորուսեալ գեղեցիկ, և չէր արժան զի և իւրոյն սգով ընձեռեսցի ի սպառ. և քան զորդի իւր զՏիբեր՝ որպ լաւութեանդն ոչ ինչ այլ տեսանէր նուազեալ յիւրմէ յայնմ գառն և աշխարհակոծ օրհասի բայց զԹիւ և ևեթ զորդւոյն։ Յա այս՝ որպէս կարծեմ մեռաք և սկիզբն եղեն բանիցն Ա՚ըհսոի առ տիկինն, որ մեծապէս Հոգ և խնամաներ Համբաւոյն իւրոյ պահպանութեան.

“Ա՛ինչե՞ ցայսօր, Լիւիա, զոն գործեցեր անատիւս զվարս քո ընծայեցուցանել, որպէս զիտեմ զայս Հաս-

տատուիեամբ կենակից առնդ գոլով և տեղեակ ամենայնի՝ ոչ այլոց ևեթ որ յայտնապէս գործին՝ այլ և գաղանեացն իսկ անբեւեայ շարժմանց սրտից ձերոց ։ Այլ ոչ՝ ի մեծ ինչ իրս միայն՝ այլ և ի մանուսնս փոյթ կալաք ջառնել ինչ այր վասն կարօտ իցես շնորհի համբաւոյն որ ազատաբար գասի զձագաւորս ։ Օ՜ի և ոչ ինչ այլ առաւել վայելչագոյն համարիմ՝ պերձացեալցն գերագոյն իշխանութեամբ՝ որպէս շնորհել բազմաց և ոչ ուսանէք կարօտ գոլ շնորհի ։ Հայպա, լեր և արդ քոյոց բարուցդ հետեւող, և ոչ մի ինչ գործեսցես յայնպիսեաց՝ ընդ որ սարջասցիս յաւուրն միում, ցանկացեալ զի այլազգ կամ՝ թէ բնաւ իսկ չէր քո արարեալ զայն ։

ԳԼՈՒԽ Հ.ԻՆԳԵՐՈՐԴ

„ Յ.ԱՂԱՉԵՄ զքեզ զարձեալ և երդմնեցուցանեմ մի գժնեայ և անհամբոյր բարեկամացդ իցես ։ Վխտաես իսկ զինքդ չուարեալ իմն են նոքա և չգիտեն սրպէս վարել ընդ քեզ ։ Խօսեսցին ինչ արդեօք առաջի քո զվրտուսոսէ քումմէ՝ եթէ լսեսցեն ։ զանգիտեն մի գուցե անցիցեն տակ աքարեալ զդիւցազն պատանին՝ զնա տրամեզուսցեն, կամ՝ թէ յիշատակեալ զքեզ ։ Ի քէն՝ ի բաց մեկնեալք՝ յորժամ՝ ի մի վայր ժողովիմք, զարարս նոքա և զբանս արժանապէս գովութեամբ հռչակեմք ։ իսկ քո առաջի խոր լռութիւն է մեզ զնանել ։ Ի մեծ իմն բերկրութենէ զրկեալ գտանիս ասա՝ ի գովութեանց որդւդ , զոր թէ յիշատակեան քումմէ՝ ոչ ինչ երկբայիմ զի և կենացդ տուժիւք անմահացուցանել յաւերժ գնա ցանկալիք ։ Հայպա , մտադիրութեամբ լսիցես , մանաւանդ թէ քեզէն զոյցս ի մէջ արկեալ պատճառս տաջիր զրուատեաց նոցա ։ և բաց իցեն բանիք քո՝ ի լաւ անտան նոքա և յիշատակի , և մի գժսիրի թուիցին քեզ բանք միսիթարութեան՝ Հանգոյն այնոցիկ որք ի նմանօրինակ ադէտս յանէրտած իմն ցաւոց խրեանց զմխիթարութեան բանսն համարին ։ Վո՜ս արդ ծայրագեղ միտեալ է ի մի կողմն և զաւրիս բախտիդ ոչ յիշես , այլ ըստ չարի մասինն ևեթ անհարկս յայն ։ Ո՜չ զընտանի կենակցութիւնս որդւդդ յուշ ածեալ, ոչ

զբերկրալից գրկախառնութեան, ոչ զմանկական քծինան և ոչ զառ ի յուսումն յառաջադիմութիւնն, և ի կատարած հասեալ վախճանին. և որպէս թէ ինքնին իւրովի ոչ չատ իսկ ադետալի տեսիլն նորա իցէ՝ յաւելուս յայն զոր կարես։ Ի, ազաւէտ, մի իցես ցանկացող գԺպհի պարծանաց առնոտիշուտս երևելոյ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

«Ա և զայն ածցես զնուաւ զի ոչ մեծ ինչ է արիանալ ի յաջողութեան ցոլտափ ըստ բղեխից յառաջին կեանք. և ոչ ի խաղաղութեան ծովու և ի շունչ յաջողակ հողմոց՝ զեկավարին երևիլ հարտարութիւն։ Այս խոզակս փորձեսցի հոգի. վասն որոյ մի լքանիցիս, նայ մանաւանդ պինդ կաց և անդրդուելի հաստատութեամբ տոհասկիր բռնութեան վերայս չարեացն որք նախկին եւեթ խիզախմամբն արՀաբեկեն։ Ընկը ինչ այնպէս նախանձարկու բախտի որպէս անվրդով խաղաղութիւն ոգւոյ»։ Հայտնի յաւելու ապա և ցուցանէ նմա զորդին իւր զվենդամի և զվտանգն որ ի վախճանելոյն։

Այս բանք առ քեզ էին, Աարիա. քեզ առընթեր բազմեցաւ Աքեօ և զքեզ յայլոց զեմն միխիթարեաց։ Այլոց համարեաց իսկ թէ մեծ քան զամենայն մարդ կոչուստ քո իցէ. ահա զի ոչ նենգեմ յաւոգ և ոչ զքեզս քո փոքրկացուցանեմ. սակայն եթէ լսելոք յազթիցէ օրէնս, լսելով լայցուք միանգամայն. անցցեն աւուրքս մեր ի սուգ և անքուն տրտմութեամբ մնացեալին գիշերք ցաւագինք. ի հարուածս ձեռաց կոծեսցին կուրծք և բունցի ցեռեսցին երեսք և կոծ չարեկան մրևսցի յամենայն ազգս գԺոդակ կրից. իսկ եթէ ողբ և լալիք զգնացեալն ոչ վերահրէն, եթէ անդարձ և յաւերժաբար օրէնսին հնքեցաւ վՀիմ և ազէտք գնաս ոչ ողբեսցեն, և զոր կալաւ մահ զտեարն ոչ տացէ յետս՝ գադարեսցէ ցաւն կորտահան։ Աղղութեամբ զազգ ևեսին վարեսցուք՝ զի մի գլխովայր հասեսցէ զմեզ բռնութիւնդ այդ։ Գ եկաւար վտա է յորդ ի ձեռաց զղեակն իւրն ալիք, որ հողմահած լքանէ զառագաստան և ի հաձոյս մրրկին զլաստաիայն Թողու. իսկ որ

ձեռն զբեզեաք և ընդ ալիս մրցելով սուզանիցի՛ և ՚ի նաւաբեկութեան անդ գտելն է ։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ասաց ասիցես , բնաւորական է մարդոյ խրոխտն անձակ ։ — Այլ կարի իսկ քաջ . միայն ՅԵ ՚ի չափոն կացցէ ։ Վասնզի և ընդ տարապարտ ուզևորութիւն Յոգ ՅԵ ընդ մահ սիրելեաց՝ ցաւ է և մարմոր արտից քաջաց գլխովին ։ Ոչ ցաւ առաւել յոյժ քան զբրնաւպրեակն ՚ի բնութենէ յառնախեն զայն միտք ։ Ցես զանբանից կենդանեացն զանձակ սրպէս բառն է՝ բայց և վազանցակ . կովուց բառաչիւն ընդ օր մի լսի կամ ընդ եղիւս . ոչ ինչ յերկարատեւ քան զնոցայն մնատակ եւ բիւրարայն են առատնպաստն և մեղկին վազք ։ Վասզանիք ամենիք գՀետ կոթնանցն ընդ անտառս Յոտաւեաք ՚ի խնդիր և յառնախ ընդունայն զարձեալք ՚ի խշտեան իւրեանց առաջեալ , ՚ի սուղ ժամու ցածուն ՚ի կատաղութենէ ։ Այլ Հաւք ՚ի կուչս միջանցն մինչ գեա գիտութիւ բառնալն Յեւանձին՝ Հուպ ընդ Հուպ Հանդարտեալք առնուն վերատին զիմիչս իւրեանց ։ Այլ ուրեք ՚ի կենդանեաց այնպէս յերկարատեւ և անձակ իւրոյն ծննդոց սրպէս մարդոյ որ ցանկոտիցէ ՚ի ցաւս իւր և զգաճեալ սրչափ և կամի և ոչ սրչափ և զգայ ։

Այլ զի խելամուտ իցես զի ոչ բնաւորական է ընկճիլ մարդոյ ՚ի ցաւոց, տես զի ոչ զամենեսեան միօրինակ Հարկանիմ ի և նոյն կրծատ . այլ զկանայս առաւել քան զարս , զմանուկս քան զաբեկիրեայս , զագէտսն քան զիմաստուս ։ Սակայն սրոց ՚ի բնէ ՚ի զօրաՅիւն զնոյն սպրեն յամենեսեան , իսկ սր բազմապիսի փոփոխին՝ չեն բնաւորականք ։ Նոյր զամենայն Հաւասկ և զամենայն քաղաքաց զքաղաքացի՝ զայր և զկին այրէ միօրինակ . սուր յամենայն մարմնս գՀատս զօրաՅիւնն սպրէ . և ընդհէր , զի բնաւորս զզօրաՅիւնան ունին , և օրէնք բնութեան Հաստատեալ են ։ Ոչ ագբատաՅիւեան , սպա և կարաւեան սյսպէս ՚ի միմեանց զգան մարդիկ սրպէս և զիարդ իցեն սովորեալք . և քան կանխակալ կարծեացն յաւելուն յերկիւղ կամ՚ի խրախոյս ։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ղ[illegible]ԶԱՐ՝ որ ինչ քնաւորական է՝ ժամանակաւ ոչ նուազի, իսկ յաճն Թուլանայ և նուազի ժամանակաւ. զի Թէպէտ և խստակեաց կոչի իսկ, Թէպէտ և ընթացեցեալ օր ըստ օրէ, և անքնդհատեալ ամենայն գնդոյ իսկ՝ սակայն նուազէ զնա ժամանակին ամենազօր ի մեզմել զամենայն վայրագութիւն։ Չպաքէն տրամադիրն ինն ծ քնաւորեալ ինն տեսանի ի քեզ գնա և Արեւիա, ոչ բուռն և ուժգին որպէս ի սկզբանն էր, այլ խիստ և կամակոր. սակայն և զայդ գաղացի ի քէն ժամանակին առ սակաւ սակաւ։ Չպաքէն զբարձն սիրելիք գոհրազ, Թէ ոչ հրաժարելիք յամենայնէ։ Խոտաւ ինչ խոթք է Թէ նեբեցի, որ յաւուց և Թէ հրաւէր տոցին կարգացեալ։ Ահ, վնասիդ ի գնդ և վայելուչ գնհանձնութեան բարեգործ իսկ քեզնէն առնել վախճան յաւուդ և մի սպառ սեալ ինալ այնմ։ Վնեզնէն տուր հրաժեշտ յայտնանել՝ որ և առանց քոց կամաց Թողլոյ և զքեզ յաւուր մեռանի։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Եւ Թէ ոչ յայգեցութենէն բնութեանն՝ ուսաւ իսկ մեզ ապա այս խոստութիւն յաւուց։ — Չնաւ զի անապ կընկալ մեզ հասանեն չարիք, յորոց իբրև ազատս հանդիսիմք զանձինս. և որպէս անեբրևեան քան զայլ ի մարդկանէ կարեալ Հանապարհ՝ ոչ ինչ նոցա չարեաւքն խոտանիմք՝ հասարակաց և մեզ զայնս Համարեալ։ Վհանի քանի յուզարկաւորութիւնք զառաջեաւ ասոյց մեբոց անցանէն և մեք զնհանալ, ինչ ոչ խորհիմք. քանի օրհնաբ տարաժամք, և մեք զգնհնատգն և զառը որ զոյս Հանդերձեմք և գնհանելն խորհիմք ի ժառանգութիւն հայրենի։ Վնճառանք բազում առանի առոյց մեբոց մանկացեալք յառնախ, և մեք չառնուամք իսկ ի մեռ զի անկայուն են ինչք մեր և կորստականք, նմին

իրի իակ և յեղակարծ զՀարուածմն ընկալեալ՝ ուժգնագոյնս զգեանիլը ։ Յառաջածանօթի մեզ չարեաց՝ Թուլացգոյն են յարձակմունք ։ Վիտասջիր ասպա զի նշուակ կաս ամենայն Հարուածոց, և որ զայս Հարկանիցն նեաք՝ զքև Թուուցեալք անցանեն. և որպես Թէ ընդ քաղաքորին կամ ընդ վայր գժուարամատոյց պատեալ պաշարեալ յամբոխիչ Թշնամեաց՝ անգէն և անպատսպար վերելակիցեն՝ դէտակն կալջիր Հարուածոց, և գնեա և գնիզակ և զբարձնա Թուուցեալս ընդ օդ՝ ի քեզ Համարեաջիր ուղղեալ ։ Այլ քանիցս յայմ կամ՝ ի Թիկանց զՀարուածմն տեսանիցես անկեալ՝ գուցե. Այլ խաբեացես զնս, ով բախտ, և ոչ յանկոգս և՝ ի վտանգ Համարեացես զնս ընբռնեսցես. Ծանօթ են ինձ Հաղորդք քո, առ իս զՀարուածոգ ուղղեալ և զայլ ոք Հարեր ։

Ո՞ ոք՝ ի մէնջ որպես մահկանացու ակնարկեաց յիւրմն. ո՞ ոք զաքսորանս, զՀաւատոյ Թիւն կամ՝ զսուգ իւրոյն մտաբերեաց, կամ՝ յայլմէ իսկ ազգեալ՝ որպէս գուշակութիւն չարեաց զգանան չէրժեաց, և Թշնամեացն իւրոց կամ՝ նորին իսկ որ տարագէալ գուշակն եղէ՝ ոչ մաղթեաց զայն՝ ի գլուխ ։ — Օ այս ես ոչ կարծէի ։ — Այ զինչ այն իցէ զոր ոչ կարծիցես՝ երբ Հնարաւոր իրքն են և բազմագ իսկ տեսանես Հանդիպեալ ։ Այս քեզ իմաստ գերազանց՝ ոչ Պոբզեաց, այլ վեհմիտոս և բերանոյ արժանաւոր.

Որ միամտութեամբ՝ նայն և բոլորից մարթի Հանդիպել ։

Ոլորա որդիքն կորեան՝ մարթ է և քոյոգդ կորնչել. Նա պարտաւորեցաս, և քո անմոռանալ մտաբերատ՝ ի վերայ կայ Հարուած ։ Այսօրիկ ահա սխալեմք, խալ բիմք և լքանիմք՝ ի վիշաս, զի անահնկալ Հասանեն մեզ չարիք, և զոր ոչն կարծէաք՝ կրեմք ։ Որ գՀանգերձեալ չարիսն կանխել նկատել, զվերահաս զօրութիւն նոցա ջատել ։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Որ ինչ միանգամ՝ ի ստացականացդ չուրջ զմեօք նչդ-
ղէն, Արկիա, եթէ որդիք իցեն, եթէ փառք, եթէ
մեծութիւնք, եթէ սրահք ընդարձակք և գաւիթք
լցեալք յամբոխիկ անտի հովանաւորելոցն առ ի մէնջ
և ցանկացելոց տեսութեան մերում, կամ ամենևին
չքեղ, ազնուազարմ և չքնաղագեղ և որ ինչ այլ և այ-
լեւլեղուկ և անկայուն բախտին պարգևք՝ օտարին
հանդերձանք են յանօթի մեզ տուեալք և ոչ ի պարգև։
Որպես ի զարդս մարացածոյս յանօթի առեալս զար-
դարին տեսարանքս մեր, զորոց զկնի առ օրին և զկնս
ի վաղիւ անդր առ իւրաքանչիւր տեարս դարձուցանել
հարկ է, և սակաւք յոյժ եթէ ինասցեն առ մեզ մինչև
ցվախճան։ Ի տալս համարեւցուք ինչ որպես զմեր.
յանօթի տուեալ է մեզ ամենայն. մարթի է մեզ ի վար
արկանել զայնոսիկ ցորչափ ժամանակս ներեսցի մեզ
պարգևացն տէր. և ի պահանջելն զտուեալսն անպայ-
մանն առումբք՝ պատրաստք իցեմք հատուցանել անտըր-
տունջ։ Ջարէ և և վատշուէր պարտապան որ ի թշնա-
մանս պարտատեառնն բերիցի։

Այլ արդ զմերսն զամենեսեան՝ եթէ զնոսա որոց ըստ
կարգի և ըստ օրինաց Ծննդեան ցանկամբ երկայնա-
կեացս գոլ զհետ մեր, և եթէ զնոսա որք արդարասիրս
ցանկան յառաջադոյնց լինել քան զմեզ, այնպէս սիրես-
ցուք ոչ որպես մեռանելոցս, նա և ոչ երկարատեւս
մեզ խոստացեալ։ Մոեպ յուշ լեցի մեզ ի սիրելս մե-
րում՝ զի անցաւորք են համայն՝ մանաւանդ եթէ և ան-
ցանեն իսկ. և զտուրս բախտին որպես վաղանցուկս
ընկալցուք։ Հապա, վայելեսջիք ի սէր որդւոցդ և տուք
նոցա փոխարէն ի ձեզ վայելել. և զանձուկ սիրոյ ձերոյ
լեացուսջիք անյապաղ. չէ ձեզ խոստացեալ և օրս այս,
և զինչ ասեմ օր, կարի շատ ընդհեմ, և ժամս այս։ Ո՛չ
Հապարել հարկ է, ահա հասեալ կայ մահ ի թիկանց,
ահա քակտի կենակցութիւնս մեր, ահա ի ձայն նշանի
լուծանին երախանք և ամիսիկին խորանք։ Ի՞նեք ոչ
գիտիցէք, ով եղկելիք, զի փախուստ իսն են կեանք և

ամենայն ինչ կայ յաւար և ՚ի յափշտակութիւն։ Զի թէ ցաւէ քեզ ընդ մահ որդւոյդ, զծննդենէն նորա բո՛ղք կալջիր զի անդէն ՚ի ծնանելն սահմանեցաւ նմա մեռանել. սովին պայմանաւ ընծայեցաւ նա քեզ և անդրստին յարգանդէ գՀետ պնդէր նորա այս օրհաս։ Ընդ խիստ և ընդ բռնակալ իշխանութեամբ բախտին անկեալ կաք, և ըստ նորա հաճութեանն հարկ է մեզ ընդունել զչարն և զբարին։ Այս ինքն խժդժութեամբ զմարմինս մեր խոշտանգեսցէ անխնայ. զոմանս հրով կիզուցու ՚ի պատուհաս կամ ՚ի բժշկութիւն, զոմանս ՚ի կապանս կաշկանդեսցէ թշնամեացն և կամ քաղաքակցաց ձեռօք, զայլս մերկանդամ ծովամոյն արարեալ և կոհակակոծ բազմատանջ ալեացն տուեալ խաղալիկ՝ ոչ ՚ի ծովամին և կամ յաւազուտս ՚ի դուրս ընկենուցու, այլ ՚ի փոր վիթխարի կիտին արկեալ ծածկեսցէ. զայլս պէսպէս ախտիւք հիւծեալ և մաշեալ ընդ մէջ մահու և կենաց կալցէ յերկար։ Այլ որպէս տիկին յեղյեղուկ և շուայտուտ, անկարեկիր յայտնս իւրոյն ստոյգս՝ խառն ՚ի խուռն վարեսցի պարգևօք և պատուհասիւք որպէս ընդ խաղ։ Այլ զի է մեզ մանաւանդ զկենաց ադէտն ողբալ. Համայն իսկ ողբալի են կեանք։ Այ՚ինչ չէ զՀաեղջն վշտաց զաղէտն ողբացեալ՝ այլք ՚ի նորոյ ՚ի վերայ հասանեն։ Այս ողբ ՚ի բնէ ծայրայեղ ՚ի կիրսդ եք, պարտ է ձեզ զսիրտս ձեր բարեկարգել, և ՚ի վիշտս և յերկիւղալիս պատրաստ կալ միշտ։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այ զի այդպէս մնացօ՛ղք եղեն քեզ քոյդ և հասարակաց ամենեցուն պայման կենաց։ Այ՚ահ կանացու ծնեալ՝ ծնաւ զմահ կանացուս։ Այ՚արմին տակաւ՝ փուտ և ապականացու, ընդ պէսպէս ախտիւք գրաւեալ և աւ կածիլ բախտին անդուլ նշանակ՝ մինչ անկ ունկիր տեսական ինչ և յաւերժ ծնայուն տալ ՚ի լոյս. վախ Հանեցաւ որդի քո, այն է՝ եՀաս ՚ի վախճան անդր յոր Հնարիս Հանապազորդ երջանկագոյնքն քեզ թուեցեալք քան զորդի քո։ Ի վախճան անդր դիմին առ Հասարակ անՀատասար ոտամբ՝ որք յատեանս վիճեն

ամբոխ , որք ի թատերս ցանկոտղեն և որք ի տաճարս աղօթեն : Այլ զորս յարգեսն և զորս անարգեա՛ ի նոյն լուծցին յաձիւն : Օ այս ազգիդ ահա բարբառն այն ընծայեալ Պիւթեան պատգամաց " Օ՜ անիր զքեզ ,, : Օ ինչ է մարդ , բայց անօթ ջանչաին և դիւրաբեկ , նաև խախուտ՝ որ ոչ երեք ի մըրկի՝ այլ և ի դիպն ալեաց բախեալ քայքայի և ընդհարեալ փշրի : Օ ինչ է մարդ , բայց մարմին տկար և դիւրեզծանելի , մերկ և անպատսպար ի բնէ , այլոց կարօտ օգնականու թեան , ամենայն արկածից բախտի նշաւակ , և համայն իսկ իւրով ջլապինդ զօրութեամբն որս և ձարակ զա զանաց . գործած Թոյլ և լցած վեր ի վերոյ ևեթ ար տափայլեալ երեւութիւ , անբաւական ի տոկ ցրտոյ և տօթոյ և աշխատութեան , և հանգստաեսմբն դարձեալ և անգործութեամբ հիւծական : Ինունդ իսկ նորա բազմավտանգ , մերթ առաւելութեամբ և մերթ նուա զութեամբ կերակրոցն փնտոի : Պահպանութիւն նորա բազմահոգ և տարժանելի , մեւրացածոյ և առանց հաս տատութեան զօրութիւն նորա , յանկարծ երկիւղիւ սասանի և յեղակարծ ձայնիւ ընդոստնու , իւր միայոյ անպիտան և ինասակար ի մնունդ : Այլ ո՞ տպա ընդ ութեանել միոյն զարմացի , մինչ ամենեցուն իսկ հարկ ի վերոյ կայ մեռանել : Այլ մեծի ինչ զօրութեան պէտք են ի կորուստ նորա . հոտ և ձաշակ և աչխատութիւն և տքնութիւն և կերակուր և ըմպելի և այլն ամենայն առ ի կեանս պիտանացուք՝ մնհատիք են նմա : Ընդ շարժեն ուրեք՝ իսկ և իսկ իրազգած լինի տկարու թեանն իւրում . ընդ ամենայն երկնիւք կեալ ոչ կարէ , ի ջուրջն փոփոխելոյ և յանտոլոր օգոյ և ի դպչն արկածից և ի պատճառաց դիւրամխասելի : Ակնդանի ազ կաղկ , փուտ և ախտաւոր՝ լաւեօք եկեալ ի կեանս , սակայն սրչափ աղմկա յուզէ , յորպիսի խորհուրդս մտաբերի մոռացեալ ի սպառ զիւրոյ տկարութեանն զպայմանն : Ինմահկանս երկինէ և յաւերժականս , և մինչ ի Թոռունս և ի Թոռնեայս զէտ անկ կայ և անօ բէն : Այլ այն ինչ զապագայիցն հոգայ զՀեռաւորայ՝ գայ հասանէ մահ զգեանել գնա . զի և անուանեալն այն ծերութիւն զինչ է , բայց սակաւօրեայ ամաց շրջան :

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍՈՒՆԵՐՈՐԴ

ԺէպԹՏ և բանտաւոր և իրաւացի իսկ ցաւքդ իցէ, Ա՛արկիա, սակայն ընդ քո՛ աղեաս է եթէ ընդ վախ-Ճանելոյն։ Ա՛ընդ այն ցաւէ քեզ արդեօք դի մնչմամբ պրծոյդ չկարացեր քնաւ վայելել՝ի նա, Թէ դի առա-ւելագոյն աին ունէիր վայելել եթէ յաւելեալ եր լինել երկայնակեաց։ Ա՛եթէ քնաւ իսկ ոչ վայելեցեր՝ի նա՝ ապա դիւրըմբռնելի կորուստդ իցէ, դի ո՞ր ցանկաս-ցի այնմ՝ յոր ոչն բերկրեցաւ և ոչ ուրախ եղև։ Ա՛սկ եթէ խոստման լիցիս դի մեծապէս բերկրեցայր նովաւ և ուրախ եղեր, ապա ոչ ընդ կորուստ նորա ողբալ քեզ պարտ է, այլ ընդ վայելելդ գոհանալ։ Օ՛ի և՝ի մնուցանել քո գնա՝ ընկալաւ զքաղցր փոխարէնս վաս-տակոցդ։ դի և որ զսկուռնդն, կամ՝ զթռչնիկս և զայլ ինչ յայդպիսեացդ՝ի զօսանս անձանց մնուցանէն խնամով, ոչ ահա՝ի տեսանել գնաս, ՚ի գգուել և՝ի քծինս նոցա անմասունչա՝ բերկրանս իմն զգան յանձին, ապա և որ զորդիսն մնուցանէն նովին իսկ անդրէանքն զիմոխարէնս վաստակոցն ընդունին։ Ա՛ընդ Թէպէտ և չիցէ քո օգտեալ քնաւ՝ի Ճարտարութենէ որդւոյդ, և ոչ՝ի խնամոյ նորա պահպանեալ, և ոչ խոհական նուԹեամբն նպաստաւորեալ, սակայն դի եղև քեզ որ-դի և դի սիրեցեր գնա՝ շատ իսկ վայելք քո եղեն։

Ա՛այց մարԹ եր երկարատև և առաւելագոյն ևս լինել վայելիցդ։ — Ա՛այց մարԹ էր և քնաւ իսկ չլինել։ և ո՞ր ահա լաւագոյն քան զայն այժմեան վայելեցդ էն։ Ա՛եթէ յրնտիր քեզ լինէր կամ կարՃ-ժամանակեայ ունել երջանկութիւն և կամ քնաւ իսկ ոչ, ո՞ր ապաքէն լաւագոյն ընտրէիր զժամանակաւորն ունել քան Թէ չունել քնաւ։ Ա՛նարէիր ունել քեզ զաւակ խորԹաբարոյ՝ որ զԹիւ և զանուն եւԹէ ունէր զորդւոյ, եԹէ չքնազագէց Հանձարով որպիսի քո որ-դին էր։ Ա՛յրհատասարդ փաԹկոս և երագ յաՄենայնի, փաԹով խոհական, փաԹով բարեպաշտ, փաԹով այր, փաԹով Հայր, փաԹով յաՄենայն պաշտամունս

աջողակ և փութով պատուեալ քրմութեամբ ։ Որ-
ծագոյնք ի բարեաց կարճատեւք են, և ոչ ի սպառ յա-
ջողէ երջանկութիւն Թէ չէ հանդարտաբոյր ։ Վտիտն
անմահք՝ որոց կամք էին տալ քեզ որդի ոչ երկայնա-
կեաց, զամուսինն ետուն փութապէս՝ որպիսումն
երկար ժամանակաց պէտք էին ի լինել ։ Այլ ոչ զայդ
բողոք զդիոյն կալցիս զի քեզ միայնոյ չետուն վայելել
յերկար յորդիդ ։ Որք, շուրջ զաշագ յածեցս ընդ
ամենայն բազմութիւն ծանօթիցն քեզ և անծանօթից,
և տեսցես ամենայն ուրեք որք մեծամեծս ևս քան զք-
քեզ կրեցին ։ Տեսցես զօրաւարս անուանիս, տեսցես
և թագաւորս նահանջիլոտս քեզ ։ Այս և ոչ զդիս ա-
զատս յաղեւոից այտի կացուցին առասպելք, որպէս
ինձ Թուի՝ ի սփոփանս ցաւոց մերոց, տեսեալ զի և
աստուածազարմիք խոկ զրաւին մանկուանէ ։ Հայեաց
առեմ շուրջ զամենեքումբք, և չգտցես տուն մի այն-
չափ Թշուառ որպ ոչ ի Թշուառագոյնն հայեցեալ քան
զինքն և սփոփեցի ։

Վա՛ւ, ոչ բերեմ զքէն այնպիսի նուաստ կարծիս,
որպէս Թէ ի տեսիլ բազմամօրթ սգաւորաց Թէթևաս-
յի քեզ կորուստ քո մեծ ։ Վայծեայ և չարակամ սփո-
փանք են Թշուառացելոյն ամենօր ։ Ականյն սակաւս ի
բազմաց յառաջ ածից քեզ օրինակս, ոչ առ ի ցու-
ցանել զի ամենայն մարդկան վատարակաց են աղէտք,
քանզի ծաղոտ իրք են մանկանացութեան մարդկան
օրինակս ի մէջ առնուլ, այլ զի գիտացես Թէ որպէս
համբերատար ժուժկալութեամբ զնստութիւն ազի-
տիցն մեղմացուցին յոլովք ։

Այ զի յերջանկագունէն կալայց սկիզբն, Ով ուխիտ
Աղղայի մեռաւ որդին. այլ կորստեամբն այնուիկ ոչ
ընկճեցաւ նա և ոչ զահաւոր զէնն Թուլացոյց առ
Թշնամիան և առ քաղաքակիցս. և ոչ զայն կարծիս
ետ զանձնէ՝ որպէս ի կենդանութեան որդւոյն ըն-
կալեալ զառաւելութեան անունն Յերջանիկ՝ զոր յետ
մահու նորա ընկալեալ էր, ոչ ինչ երկուցեալ ամենևին՝
ոչ յատելութենէ մարդկան յորոց ի Թշուառութիւնս
բարեբախտութիւն իւր յեցեալ էր. և ոչ ի ցասմանէ
դիոյն՝ որոց ի յանցանս հանեալ Աղղա բարեբախտ ։
Ով որպիսի զբ էր Աղղա՝ խնդիր է դեռ ևս ընդ երկ-

բայմ[illegible]եամբ անկեալ. ըստ Հակառակորդաց իսկ վկայե-
լոյ՝ պատշաճապէս զնն առեալ նորա, պատշաճաբար և ս
'ի բաց եդ զայս։ Այլ զայն ինչ, զորմէ մեր բանքս
են, յայսմանէ մեզ օրինակ՝ զի ոչ մեծ ինչ չար է այն որ
և երջանկագունիցն պատահէ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔԱՍԱՆԵՐՈՐԴ

Ա՛ր յոյժ պանծացի Աքիլլեա 'ի հայրն՝ որ 'ի ժամ
զոհից զօրհասի որդւոյն զգոյժն առեալ՝ սրեգահարին
ևեթ հրաման ետ լռելոյ, և զպատին 'ի գլխոյն 'ի բաց
եդեալ՝ զայնն ամենայն յատաղ մատոյց ըստ օրինի։
Օ՛ի զնոյն գործեաց և քրմապետն Պաւլոսիոս. որպ
'ի սրբազանելն զկապիտոլիոն այն ինչ ձեռն զսեմաք
տաճարին էր արկեալ՝ բօթ հնչեաց առ նա մահաւան
որդւոյն, այլ չլուելոյն արարեալ զայն՝ զհանդիսի պաշ-
տամունն կատարեաց առանց իրիք հեծութեան զգ-
քրմապետական մաղթանսն պաշտեալ և 'ի կոչ անուան
որդւոյն՝ Աքրամաղայ գքաւութիւնն ըղեռձելով։
Ա՛արթ էր գուշակել զի դիւրաւ վախձան լցի ցաւոյն
որ յատաղձին անդ աւուր և առաջնոյն իւրով ուժ-
գնութեամբ ոչ զօրեաց տասանեցուցանել զՀայրն և 'ի
բաց քեցել 'ի բաղնաց անտի զոհիցն և 'ի բարեբաստ
նուագատեաց տաճարին։ Աչք արդարև արժանի մե-
ծահռչակ նուիրագործութեանն. արժանի գերակատար
քրմութեանն՝ որ ոչ հրաժարեցաւ ցաւուցելոյն իսկ դից
պաշտօն մատուցանել։ Այլն ինքն ապա յորժամ եկն 'ի
տուն՝ խուն ինչ զայն ելից արտասուօք և ձայնս իմն ո-
ղորմն արձակեալ՝ զպատշաճ պարտուն հատոյց վախձա-
նելոյն՝ և զուարթագէմ դարձաւ անդրէն 'ի Կապիտո-
լիոն։

Պաւլոս Էմիլիոս զանուրբք իսկ շքեղ յաղթանա-
կին՝ յորում շղթայակապ առաջի կառացն ընթացեալ
զՊերսէոս զգերագոհչին անուանք թագաւոր, զեր-
կուս յորգւոյն ետ յորդեգրութիւն, և զոյս պահեաւն
էր առ իւր՝ 'ի մահ։ Այս զնոյս կարծիցես պահեալ առ
իւր՝ յորժամ 'ի տուեալն յորդեգրութիւն էր Ա[illegible]կե-

պիոն ։ Ալ անվրդով սրտիւ էտես ժողովուրդն Հռոմ. մայ Թափուր գկառս յաղթականին [1] . սակայն նա ինքն հյապարակախօս եղև և գոհացաւ զաստուածոց գի ընկալան զսխտ իւր ։ Վասնզի զայս խնդրեալ էր նորա գի Թէ փոխարէն մեծապանձ և շքեղ յաղթութեանն հարկել ինչ մախանաց [2] պարտ էր՝ ինքն իւրմէն տուժեացի զայն , և աշխարհն պահեցի անվնաս ։ Ջեսէր որպիսի մեծանձնութեամբ տարաւ աղետիցն . որբացեալ յորդւոց և գոհութիւնս ևս դիցն մատուցանէ ։ Այ ոմ այլ առաւել անբմբերելի և գժուարընդել մարթ էր լինել ադետիցն , քան Տօրն՝ որ զբերկրութիւնս իւր և զօգնականութիւնս կորոյս միանգամայն ։ Վասյն Պերսեայ ոչ յաջողեցաւ տիրոք տեսանել զՊաւղոս ։

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այ զի ե ինձ ընդ յաճախաւոր օրինակս արանց աւագաց յածեցուցանել զբեզ՝ Թշուառացեալ ամենութիւնք խնդրելով , մինչ գժուարագոյն յոյժ է զերկնանկացեալն գտանել ։ Վասնի և կամ՞ր այն տուն իցէ որ ամենիւաղ ամենայն մատաղքն յաւերժացեալ ցվախձան վայելեցէ՞ի խաղաղութեան ոչ ինչ՞ի հակառակաց կրելով ։ Կալ աղէ՝ զմի յամաց զոր և կամիս , և մատո՞ի մէջ զնշխարս տարբոյն . զի ուկիոս Խիբուլոս Թէ սիսոյ ժես , և զկայիոս Կեսար , և տեսցես իշխանակիցս Հռոմայական իրեարց՝ այլ բախտիս գաշնաւորեալս և համանմանս իրեարց . Լուկիոսի Խիբուլոսի որդիք երկու միանգամայն սպանան եգիպտացի զօրականին եզելոք նշանակ . որոց քան զկորուստն ոչ ինչ ընդհատ արտասուաց արժանի պատճառք կորտեանն էին ։ Ասյց Խիբուլոս որ ընդ սմն ողջոյն իշխանութեան իւրոյ

1 Քանզի այս սովորութիւն էր՝ի յաղթականս՝ զի որդիք յաղթականին ընկերէին՝ի հանգիստն՝ կրթելագոյնք՝ի նոյն կառս ընդ հօրն իւրեանց բազմեալք , և երիցագոյնք ուրոյն՝ի կառս կամ հեծեալ ։

2 Համարէին հեթանոսք նախանձս կամ չարանշութիւնն դարձնել յաջողութեանց և ուրախութեանց , և հակառակաբք ինչ վրդովել զայնոսիկ ։

ծածկեալ կայր ՚ի տան վասն ատելի առնելոց վիշխանա-
կից իւր, առեալ զգոյժ կրկին օրհասիչն ՚ի վաղիւ անդր
եկն երևեցաւ յատենի ՚ի գործ պաշտաման իւրոյ։ Ոչ
զինչ նուաղագոյն քան զմի օր մնալեի էր նմա երկուց
որդւոցն ընդհարել։ Որ զամ մի զսուգ իշխանութեանն
ունէր՝ զսուգ որդւոցն այսպէս համառօտ վճռեաց։
Այսիսու կէսսար այն ինչ խաղայր գնայր ՚ի Բրիտա-
նիա՝ կոխելով և զսահմանս Վիկիանու որ զբախտ իւր
պարագրէր, լուաւ զգոյժ մահուան դստերն իւրոյ՝ որ
և զաշխարհին օրհաս առեալ բերէր ընդ իւր։ Վասն
իսկ տեսանելոյ անհանգուրժելի գոլ Կնէոսի Պամպէի զի
այլ ոք բաց յիւրմէ զօրացեալ իշխեսցէ աշխարհին, և
զի խափան լիցի զարգացմանն որ դժպհին էր նմա, թէ-
պէտ և իւր իսկ էր, սակայն և այնու ամենայնիւ յեր-
բորգումն աւուր ձեռն էարկ վերստին ՚ի գործս սպա-
նանեստութեանն, և այնու երագութեամբ որով յաղ-
թական էր ամենեցուն՝ և ցաւոցն յաղթեաց։

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Օ՛ և այսաւր ածից քեզ զայլոց իսկ կայսերաց
զսուգ օրհասական, որով յայն սակս թուի ինձ երբեք
երբեք չարեալ գնոսա բախտին, զի և այնու մնասմբ
օգտակարք իցեն ազգի մարդկան. ցուցանելով՝ զի և նո-
քին իսկ աստուածորդիքն կոչեցեալք և աստուածոց
ծնողք՝ ոչ որպէս զայլոցն և զևրեմանց բախտ ունին ՚ի
բոին։ Վեսպասիանն Օգոստոս կորուսեալ զորդիսն և
զքեռորդիս՝ իբրև զկայսերականին իւր տոհմ՝ եռես չի-
ջեալ որդեգրութեամբ զանմարդացեալ տուն վայելեցոյց
և քաջութեամբ տարաւ ազետից որպէս օգտի անձինն
խնամ ածելով՝, խելամուտ ինն լեալ՝ զի ոչ ումեք այնպէս
դժպատեհ էր տրտունջ զդիցն ունել որպէս ինքեան։
Տիբեր կայսր կորոյս և զոր ծնաւն և զոր որդեգրեաց.

1 Իբրև զի որպէս գուշակէրն Օգոստոս ՚ի սրտի իւրում՝ միայր և
ինքեան գասել ՚ի կարգս աստուածոց, նմին իբրև որպէս իւրոյ օգտին
խնամ ածեալ՝ գժպատեհ զարանջելն համարեր զդից։

սակայն ինքնին յատենի գամբանականաւ ներբողեաց զորդին հուսկ առնելէր կացեալ մարմնոյն՝ անդրպետութեամբ ևեթ քոյրն, որ ի տեսութենէ քրմապետին զնուաքաղ ծածկեր. և անվերադոյլ ի լալեայ ժողովրդեանն Հռովմայ՝ եղեալ Ակյանոսի որ առ նմա կայր, [թէ զիարդ և զիւրոյն կորուստ գիտեր տանել համբերութեամբ, Տեսանէս զամբոխ մեծ բազմութեան այնոց մեծամեծաց՝ զՀօրացելոցն բազմադիմարբեմաստութեամբք հոգւոյ ի զարդ և ի չքեղութիւն անձանց և աշխարհին, յորս ոչ խնայեաց աղիսաբերդ այդ օրհաս սատակչական՝ որ զորդին մերկի փոթորկեալ ընդ հանուր յաղարտ և յապականութիւն գնել անխտիր, և որպէս զիւր ինչ առեալ վարել զամենայն. Հարց և խնդրեա զյիշատակագիրս նոցա ամենեցուն, և ոչ զոք գտցես ծնեալ անպատուհաս։

ԳԼՈՒԽ ՎԵՀՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Կ՚ուտեմ զինչ ասիցես, [՚արկիա. իբրև զի մոռացեալ իմ [թէ զկին զարդ մխիթարեմ, զարանց յաձախեմ քեզ օրինակս։ [՚Տայց ո՞ այն որ ասիցէ քնութենեան յաչաղեալ կանանց զպարգեւս իւր և յանձուկ զառաքինութիւն նոցա սահմանեալ [՚, և կանանց, հաւատալ ինձ, զօրութիւն զուգահաւասար, և նոյնօրինակ՝ [թէ կամին՝ առ պատշաձն կարողութիւն. և զուգապէս՝ [թէ սովորիցեն՝ գիտասցեն տանել աշխատութեան և ցաւոց։ [՚Այլ ուր, բաբէ, խօսիմք զայսոսիկ։ ՚ի քաղաքի մեծ յորում [՚ուկրետիա և [՚Կրուտոս ՚ի հռովմէական պարանոցայ [թ ոմի ափեցին զլուծ [թագաւորաց։ [՚Կրուտոսի երթիստապարտ եմք վասն ազատութեան, և [՚ուկրետեայ՝ վասն [՚Կրուտոսի. յորում [՚Կլելիա քաջայանդգնարիութեամբ խիզախեալ ընդդէմ [թշնամեաց և գեղոյ՝ իբրև զիւցայն պատուեցաւ, և այն ևեթ պակասէ նմա՝ զի ընդ արս ոչ համարի։ [՚Ընդրի հեծեալ ձերևելի տեղւոջ ՚ի սրբազան ճանապարհին կանգնեալ [՚Կլելիայ՝ անդուստ ՚ի բարձանց զերիտասարդս մեր յանդիմանել, որք ՚ի գահաւորակս բարձեալ զերկին ՚ի քաղաք այսր, ուր

և կանայք՝ հեծեալք ի ձի պատուեցան։ Իսկ Թէ և ի կանանց օրինակս քեզ ընծայել հարկ իցէ՝ ոչ զուն ի դրանէ յածեալ խնդրեցից. ի միոյ գերազաստանի երկուս քեզ ընծայեցից՝ զԱուռնելիայն և Պաւլինն զդուստր Ակեպիոնի զՎրակեանցն մայր որ վերիստասան որդիս ի ըստ միոջէ մատոյց ի խարոյկ։ Ցաստնցն ի նոցանէ, զորոց ոչ զծնունդ և ոչ զմեռանել գիտաց Հռոմ, դիւրս ըմբեր Թերևս ցասքն էին. բայց զՅիտոս Վրակոս և զՎայիոս որոց Թէ ոչ լաւութեանն՝ սակայն մեծութեանն վկայեսցէ ամենայն ոք, դիակնացեալ եռեւ և անեղ. և ի միեղբարէվնս այլոց և յողբալ զԹշուառութիւն նորա, ասէ. Ո՛չ զգաքեցայց երբէք երանել զանձն իմ զի ծնայ զՎրակեանս։ Պիւսն Կաուռնելիա՝ զ Լիւիոս Վրուսոս զպատանին չքեղ և մեծապայծառ հանձարով զնախանձաւորն Վրակեանց մինչ չև հասատատեալ էր զօրէնն՝ ի Հայրենի տանն եգիտ սպանեալ յանծանօթ բազկի։ Սակայն զդուն զայն մահ որդւոյն, որպ և վրէժն ոչ խնդրեցաւ, այնու մեծանձնութեամբ տարաւ՝ որով որդին զօրէնն տայր։

Ընդ ուրեմն հաշտեցիս, Պարկիա, ընդ բախտին, որ զնետսն զորս ի Ակեպիոնեայն ձգեաց և ի մարս նոցա և յորդիս և ի կայսերս իսկ՝ ի քէն և ոչ ի բաց զարձոյց. վի է կենցաղս մեր բազմադէմ արկածիւք, յորոց չիք ումիք խաղաղութիւն ընդ երկար, այլ Թէ աւելի՝ զուլ իմն կարճժամանակեայ։ Օ որդիս յորս մնուցեալ էր քո, Պարկիա, և զորոյք էն Թէ Ընդունայն անկանի նետ ընկեցեալ ի խուժան. և զինչ զարմանք իցեն չկարել այնչափ բազմութեանն խուսել կայսեր մահուն։ Կայց այնու առաւել անհրաւ զարահն Տանուբեացիս զի ոչ իսոն ի խուն այլ ընտրանաւ յորդւոցդ յաւիշտակեաց։ Պայլ միեղբ անհրաւութիւն Համարեսցի Հաւասար ընդ Հզօրագունին բաժանել. երկուս քեզ եթող զտէրս և զառ ի նոցանէ զթողուսնդ. և գնա իսկ՝ զոր այդչափ լաս և սգաս ի մոռացօնս զառաջինն արիեալ՝ ոչ ի սպառ յաւիշտակեաց. գնա քեզ ի նմանէ զտօրիկք երկու որք ի միեղբարութիւն մեծ իցեն քեզ՝ եթէ սրտապնդեացիս, իսկ եթէ ոչ՝ բեռն ծանրակիր։ Յայդ իսկ պարգևեցան քեզ նոքա, զի ի տեսիլ նոցին յուշ լեցի քեզ որդիդ և ոչ ցաս սրտիդ։ Պշակ երկրա-

գործ՝ ի տապալել ծառոց զորս յարմատոց խլէ մերկիկ, կամ փոթորիկ յեղակարծ ալեքտապտոյտ ի ափով հա- բեալ խորտակէ, զառ ինոցանէ մնացեալ ճնշմնդան ստա- ծէ և գկորուսեալսն զսերունդս և զշառաւէղս դարմանէ. որոց վաղ ընդ փոյթ ուռճացեալ, որ զի՝ երագ է և վաղ- վաղկոտ ժամանակ որպէս յեղծանել նոյնպէս և ի նո- րոգել, բարգաւաճէն վայելչագոյն քան զառաջինսն: Համա, զդատիկսդ զայդոսիկ Աստեղսին քում հա- մարեաց փոխանակ, և զզակասեղսն զտեղի լքիր նոքօք. զմիակ ցասդ կրկնակի մխիթարութեամբ թեթևացո: Այսաքէն այս քնութիւն է մարդկան, զի զոր կորուսա- նէնն՝ ընդայն հաճին առաւել և ցանկան, և կորուսեալսն անձկամաբ՝ առ ինացեալսն անիրաւէն: Այլ թէ քաջ միտ դիցես որպէս և ի գժնեհանալ անդ իւրում խնայեաց ի քեզ բախտն, խելամուտ լիցիս զի բազում ինչ մնայ քեզ տակաւին ի միխիթարութիւն: Հայեաց ի դրս- տեսդ և ի թռուցդ բազմութիւն:

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵԻՏԱՍՆԵՐՈՐԴ

Այր զայս իսկ ասասցես ցանձն քո, Արկիա· Լ- թէ բազդ մարդոյ ըստ անձնիւր բարուցն էր և լաւց ոչ երբէք դիպէին չարիք՝ վըդովէի արդեօք ընդ ազէտս իմ: այլ արդ տեսանեմ զչարս և զաբրիս անխտիր տան- ջեալ նոյնօրինակ: Ակայն խիտ է և ծանր զոր մնայցն ոք միտլ ցպատանեկութիւն, գնեցուկ ճնողացն և ըզ- վայելչութիւն ազգատոհմին կորուսանել տարաժամ:— Խիտ է արդարև, բայց ոչ ինչ օտար ի մարդկայնոցս: Յայդ իսկ ճնալ՝ կորուսանել և կորնչել, յոլով և եր- կրնչել, անձին և այլոց լինել ի ցաւս· զանգիտել ի մա- հառնէ և այմ ցանկալ, և որ չար եւն է՝ գկենաց ան- ձին չգիտել զպայման:

Լ թէ ուղևորելութիւն ի Աիկիլիա ասէր ոք, գիտակ է- ցես ամենայն տատապանաց և բեղկրութեանց պանդխ- տութեանդ յոր Հանդերձիս· աղէ, վաղագոյն ած զայնս զնուա և այնպէս ապա ուղևորեսցիս: Հաւասիկ զոր գիտել քեզ պարտ է, Ցեսցես նախ գկղզին զայն անձամբ

կրձիւ ծովու անջրպետեալ Յոտալեոյ յոր վիահետ կղզոյ-
դէր երբեմն, և ապա

Նովաւ միջամուխ արկ բուռն ալեօք անջրպետ
Յերեկորնեայց ըղկղզին հերձեալ Վիկուզեան[1];

Տեսանիցես զաղձեալ (քանզի մարթի է քեզ զազգա-
ւանգ ժայռիւ ծովուն հուպ քերել), զառաստելեան
զայն զԼարբզիս, որ ի լռել հարաւոյ հանդարտ խա-
ղաղիկ, այլ ի ընդելոյ հողմոյն յուզեալ խորանդունդ՝
ոլորտապտոյտ յորձանաքն կլանէ զնաւս։ Տեսանիցես
զգերահռչակեալն ի քերթողաց զաղբիւրն Լրեթու-
սայ որ ի լուծ յատակ ցյատակն և վճիտ զահանակիտ
զսառնակերպ ջուրսն թափէ, անդստին ի տեղւոջէն
առեալ զծագումնին կամ երկրասոյզ ընդ անբաւ ծովս ան-
ցեալ գետոցէն անհատն և անայլայլակ յաղտաղտուկ
ալեաց զՀոմանան վերբերելով։ Տեսանիցես նաւահան-
գիստ անդորր և խաղաղաւէտ քան զամենայն հան-
գրուանս նաւաց՝ ի քէզ կամարուեստագործ ձեռին օ-
ժանդակութեամբ պատրաստեալս՝ ի պատսպարան հան-
դիսից նաւաց՝ անքոյթ և աներկիւան յամենայն կա-
տաղութենէ մրընչելոյն մրրկաց։ Տեսանիցես ուր Լ-
թենացւոյն վատթարեալ խորտակեցան զօրութիւնք,
ուր ամբոխ մեծ գերեացն Հազարաւորաց արգելեալ պա-
հէին ի վիմափոր բանտին ահաւոր խորութեամբ։ Տե-
սանիցես և զքաղաքն ինքնին լայնանիստ և ընդարձա-
կածաւալ քան զքաղաքաց բազմաց համանգամայն ընդ-
արձակութիւն՝ շուրջանակի ամրացեալ աշտարակօք,
ուր մեզմ և բարեխառն են ձմերոցնք և չիք օր անարև։

Լաւ առ սոքօք և զայն գիտասջիր զի ամառն ծանր և
վատառողջ զձմերայնոյ բարիւն խանգարէ. գտանիցես
անդ Վիմնեսիոս զոյն բռնաւոր՝ ազատութեան օրի-
նաց և արգարութեան օրհաս աղիտաբեր. իշխանասի-
րութեամբ մոլեալ՝ զՊղատոն իսկ առ իւր ունելով, կե-
նաց ցանկացող և յաքսորս անդ. զամանս հրով գատեա-
ցի, զայլս գանիւ և զայլս վանն Թեթիս յանցանաց ծայ-
բաքաղ առնել հրամայեսցէ, ընդ արուսց և ընդ իգաց

[1] Վիրգիլ. Ենէակ. գ. 642։

անխոհեր մոլեգնեսցի ցանկութեամբ, և ՚ի խաւան անդ վատ և պիղծ խուժանին՝ արբանեկացն աքքունի զեղ-ծագործութեանց՝ սակաւ ինչ թուեսցի նմին ընդ երկուց միանգամայն չաղաչարիլ։

Ոչ լուար զամենայն որ ինչ մարթին յօժարեցուցանել զքեզ յայդ ուղևորութիւն և որ ինչ ՚ի բաց ընկրկել։ արդ ընտրեա զոր կամիս՝ ուղևորել և կամ ոչ։ Զետ ամենայն ազգաբարութեանցս այսոցիկ եթէ յանձն առցէ ոք տակաւին ուղևորել ՚ի Վիրակուսա, չկոչեն նմա իրաւունք զայլմէ բազում ունելոյ բայց զանձնէ, զի ոչ յանգիստ և յանդաստից բերաւ յայս, այլ խորհրդով և գիտութեամբ։

Այս մեզ ամենեցուն ասէ քնութիւն. Ձէն ինձ կամք խաբել զոք. դու թէ ցանկաս որդւոյ՝ իցեն քեզ և՛ գեղեցիկք և տգեղք, և թէ յոլովք ևս իցեն՝ յարիցեն թէ ըևս ՚ի նոցանէ և փրկիչք և մանուչք Հայրենեացդ։ Վ՚ի անյոյս լինիս թէ չլինիցին քեզ որդիք այնպէս մեծարոյք և պատուականք՝ զի ՚ի ՀՀորհս նոցա ոչ ոք իշխեսցէ նա խատել զքեզ. բայց և զայն դիր ՚ի մտի թէ իցեն և վատք այնպիսիք որք ինքեանք ՚ի նախատինս քեզ լինիցին։ Վ՚արթ է քեզ ՚ի նոցանէ ընդունել զվերջինն սպաս յաղարկաւորութեանդ և յորդւոցդ քոց պատուիլ ներքոյ դնիս, բայց դու պատրաստ լեր և ՚ի խարոյկ վտոսա մատուցանել թէպէտ ՚ի մանկութեան թէպէտ յերիտասարդութեան թէպէտ ՚ի ծերութեան։ Օ՚ր զինչ յամացն է խորհ. դառն է և տարաժամ՝ ամենայն օր Հաս կանխեալ քան զծնողին։ Օ՚ այսոսիկ քո որպէս պայմանս ՚ի մտի կալեալ՝ եթէ տակաւին զաւակս մեռանիցես, մի երբէք զդիցն կացիս բազում որոց չէք քեզ արարեալ խոստումն։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Այ արդ, աղէ, յայս ձև համառութեան պատկերեսցուք զմեռս մեր յաչխարհ։ Վ՚ահա յուղևորեն քո ՚ի Վիրակուսա առաջի արարի քեզ որ ինչ ՚ի բեր կրալեաց և կամ ՚ի վշտալեաց մարթի էր քեզ դիպել յուղևորութենէ անտի. արդ համարեաց զի և ՚ի ծնա-

նել քո յաշխարհ՝ խրատտու քեզ մերձ կացեալ ասե-
ցեմ. Լ՚Հա մտանես ՚ի քաղաք՝ որ հասարակաց է աս-
տուածոց և մարդկան, և ամենայն ինչ բամանդակեալ է
՚ի նմա հաստատուն և յաւիտենական օրինօք, որովք և
երկնայնոցն արգանեկութեանց անդուլ պարբերու-
թեամբ կատարին շրջանք։ Ցեսցես անդ զբոլս աստե-
ղաց որոց ոչ գոյ թիւ. և զարմացիս ընդ լուսաւորն՝ որ
միայն գրաւեալ ընդ գտիեզերս, ընդ արեգակն՝ ասեմ,
որ հանապազորդ ընթացիւքն սահմանէ զտիս և զգի-
շեր և տարեդարձական շրջանաւ զուգահաւասար զամառնն
և զձմեռն բաժանէ։ Ցեսցես և որ յաջորդէն զնա զլու-
սաւորն գիշերական զլուսին որ սերտիւր հանդիպասա-
րութեամբ լոյս մերմ և աղօտ առ ՚ի նմանել որպէս
յեղբօրէն ընկալեալ ՚ի փոխ՝ մերթ թաքչի և մերթ ե-
բևի լուսաւիր. ամէն և նուազի և յար գիերպարանն փո-
փոխ։ Ցեսանիցես այլ ևս լուսաւորս հինգ ընդ այլ և
այլ շաւիղս՝ հակառակ ընթացից տիեզերացս առեալ
շրջան, յորոց ՚ի մերմ ընթացիցն՝ ազգաց և ազանց տես-
րինին բախտք. և ամենայն ինչ մեծ կամ փոքր ըստ
բարւոյ կամ ըստ չարի աստեղն հանդիպելոյ առնուն ազ-
դեցութիւն։ Ալքանչասցիս և ընդ ամենայն գումարել,
ընդ տեղալ ջուրց, ընդ գալարուն շանթիցն հետս և
ընդ որոտընդոստ շառաչիւն երկնից։

Լ՚Ա այն ինչ երկնայնոցն յագեալ տեսութեամբ յեր-
կիր ՚ի խոնարհ զաչդ դարձուցանիցես, այլ ինն նորա-
սքանչ տեսարան բացցի քեզ զառաջեաւ։ Լ՚ստի ընդար-
ձակաձաւալ գաշտաց անհուն տարածութիւն. անտի
լայնանիստ և ձիւնապատ լերանց երկնաբերձ գագա-
թունք. գետք յորդահոսեալք անդստին ՚ի միոյ աղբե-
րանէ ընդ արևելս և ընդ արևմուտս բազմակտակ ծա-
ւալեալք. գագաթունք բարձրաբերձք մշտատատանք ՚ի
մայրիս, և անտառք թանձրաթիթեռք բազմազգի լցեալ
կենդանեօք և յայլազան հաւուց ՚ի ներդաշնակ երգս
հնչեցեալք։ Վաղաքաղ տեսիլք բազմակերպք և ազգք
բազմաձերմնդք վայրացն գժուարութեամբ անջրպե-
տեալք յիրերաց, ոմանց ՚ի գժուարս լերանց ՚ի բար-
ձու կալեալք զբնակութիւն և այլոց ՚ի ձորս և յեզերս
ծովուց գետոց և լճից։ Հունձք արմտեաց մշակութեան
արգասիք և ծառք պտղաբերք առանց ձեռին մշակողի.

առուաց ընդ մարգս հեզասահ կարկաջք, ծոցք զուարճատեսիլք, և ծովեզերք գոզ առեալք ի կայս նաւաց։ Ով համատարած զարդարեալ բազմութեամբ կրզեաց որք զվիայսր և զնոյնատեսիլ ընդարձակութիւն նորս ընդ միջեալ զարդարեն։ Յակ զինչ զշողշողելոյն ասացից գոհար ականց և զաւազախառն ոսկեբեր ուղխից յորձանաց. զինչ զբացատրութեանց որ ի ծոցս երկրի և որ յանդնոց իսկ ծովու. զինչ և զհամապարփակն Հվկիանեայ որ զերկիր ընդ երկրի կցորդեալ և զմիութիւն ազգաց երիւք բաժանեալ ծոցովք, և մերկեալ մերկութիւն սանձակոտոր։ Ի յաբաժուփ և առանց իսկ հողմոյ յաչետանջ ջուրս անդ տեսցես գաղանս սոսկալիութեսրս առաւել յոյժ քան զորս ենն ի ցամաքի. որոց կէսք կարի ծանրագանդաղք՝ այլոց կարօտին օգնականութեան ի շարժել. այլք և քան զբուռն թիավարեալ նաւակն սրընթացք. են և այլք՝ որք զուիան կրեալ ժայթքեն ուժգնութեամբ ի վտանգ մեծ նաւորդաց։ Տեսցես ի նմա նաւս անծանօթ ահագնս եղեալ ի ինդիր։ Ցեսանիցես և զմարդկան յանդգնութիւն յաստենայն դժուարինս ձեռներից, որոց ոչ հանդիսատես միայն այլ և վաստակակից ձգնութեանցն լինիցես մեծապէս։ Հետանիցիս և ուսուցանիցես որ ի պէտս կենաց իցեն, և որ ի վայելչութիւն և որ յուղղութիւն։

Ա.յլ իցեն անդ և բիւրազգի ժանտախտք ազիտաբերք մարմնոց և հոգւոց. պատերազմունք, աւազակութիւնք, դեղատուութիւնք, նաւակոծութիւնք, օդոց և մարմնոց ապականութիւնք, դառն կորուստ սիրելեաց և մահ անհատատի՝ բնաւորական արդեօք և խաղաղաւէտ եթէ բուռն և չարատանջ պատուհասիւք։ Ա.յդ խորհեաց յանձնքս և տես զինչ ընտրեացես։ Ով յայն մտանես քաղաք, ընդ այս ելանել քեզ հարկ է։ Ա.սացես անշուշտ. Օ կեայն կամիմ. քանզի չկարծեմ իսկ հրաժարել քեզ յայնչափ բերկրութեանց առ երկիզի զի մի գուցէ բարձցի ինչ ի քէն։ Կեաց ապա որպէս պարտ է։ Ասացց ասիցես. Կե զբ եհարց ինչ մեզ յայդպիսեացդ։ — Հարցան ընդ մեր ծնողք մեր, որոց դիտելով չափ ամենայն հանգամանս կենցաղոյս՝ ծնան զմեզ ի սոյն։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Լ՚ձև արդ ՝ի սիրոյել զցաւդ մատուցեալ՝ տեսցուք նախ՝ զինչ պատճառք ցաւոցդ իցեն և զինչ ապա նոցին դարման ։ Ցանկալ զսգաւոյն անձուկ սիրելոյն ։ այլ այդ ոչ անբնական ինչ թուի յինքեան ։ զի ահա զտարաքնացս ՝ի մէնջ յերկար զսիրելիս՝ յորչափ կենդանի էն՝ ոչ ողբամք , թէպէտ և ՝ի տեսութենէ նոցա և ՝ի վայելչին իցեմք զրկեալք ։ Կարծեաք ուրեմն տանջիմք առաւել , և այնչափ ծանրանան մեզ աղէտքս մեր՝ որչափ յաւելումք տալ նոցա կշիռ ։ Ի մեր ձեռս է դարման չարեացդ ։ տարաշնացս առ ՝ի մէնջ համարեսցուք զվախճանեալսն ։ և ոչ խաբիցիմք ։ մեզէն յղեցաք զնոսա այլուր , մանաւանդ թէ յառաջընթացս մեզ առաքեցաք , և մեք ինքեանս զէտ ընթացուք նոցա ։

Ցանկալ դարձեալ զսգաւոյն խորհել՝ թէ Չիք իմ՚ոք այսուհետև պաշտպան և պատսպարան յերեսաց արհամարհողաց ։ — Ո՚վ այդ մատուցիդ քեզ ՝ի մխիթարութիւն զայն՝ որ անկարծելին է արդարև , բայց և Աշմարիտ յոյժ ։ իբրև զի ՝ի քաղաքի աստ մերում անզաւակութիւն ոչ արհամարհեալ ինչ է , այլ մեծաբարմանաւանդ ։ այնպէս զի ծերութիւն անօգնական փոխանակ նկուճ լինելոյ՝ որպէս արժանն էր , յաւելու ՝ի զօրութիւն , մինչև ոմանց առելութիւն առ որդիսն կեղծեալ՝ մերժել զնոսա , և իւրովի անզաւակել զանձինս ։

Վիտեմ զոր ասիցես ։ Ոչ ընդ տոյժս անձին ցաւել ինձ և ոչ մխիթարութեան իսկ արժանի համարիմ զնա որ ընդ որդւոյն կորուստ որպէս ընդ ծառային վշտանայ , և որում մարթի է զայլ ինչ նկատել յորդին բաց յիւրմէն ։ — Ընդ որ ինչ ապա ցաւել քեզ , Արկիա , ընդ այն զի մեռաւ որդիդ , եթէ ընդ այն զի ոչ երկայնակեաց եաւ ։ Իսկ եթէ ընդ մեռանելն ողբաս՝ միշտ իսկ ողբալ քեզ պարտ էր զի մահկանացու միշտ գիտելիր զնա ։ Օ այս գիտասջիր զի մեռելոյ ոչ պատահեն չարիք ։ և այն առնոյն որ ահաւորս գործէն մեզ զսանդարամետս , առասպելք են , Չիք մեռելոյ ոչ խաւար , ոչ բանտ , ոչ գետք հրահոսանք , ոչ վտակ մռնացու-

Թեան, ոչ տառեանք, ոչ դատախազութիւնք և ոչ անդամօր ևս զարձեալ բռնաւորք յայնպիսում անդորը ապատութեան։ Այդոքիւք մեռոտի արհատրօք խաղ արարին զմեօք քերթողք ի պակուցանել զմեզ։ Այնոցա ցաւոց վախճան և արձակուրդ է մահ. անդրադարձ ևս քան զնա ոչ ձգին աղէտքս մեր. նոքա դառնամբ անդրէն յայն հանգիստ՝ յոր անկեալ դնեաք մինչ չև էաք ծնեալ։ Այնէ ցաւէ ումեք ընդ մեռեալս, ցաւեսցի և ընդ այնոսիկ որք չեն ծնեալ։ Այո՛ոչ բարի ինչ է և ոչ չար. զի որ էն՝ մարթի լինել բարի կամ՝ չար. իսկ որ ինքն ոչ ինչ և զանհնայն յոչնութիւն դարձուցանէ, զինքրդ կարիցէ բարւոյ կամ՝ չարի լինել մեզ տուիչ. քանզի Հարկ է գոլ իրայ ինչ յոր բարիքն կամ՝ չարիք բերիցեն. իսկ զոր բնութիւնն յոչնութիւն դարձուցանէ՝ զնա բնաւին ունել ոչ կարէ. և որ ոչ ինչն է զինքրդ կարասցէ լինել Թշուառ։

Այնից կատարեաց որդին քո զչափ ժամանակի վաստակոյն իւրոց. ծրարեցաւ ի ծոց անդորը և յաւիտենական խաղաղութեան, ոչ ևս յաղքատութենէ զանգիտէ, ոչ զհնձութեանց հոգայ, ոչ ի մարմնջ ցանկութեան՝ որ հեշտութեամբ մնչէ զոգին՝ չեռեալ տապի, ոչ ընդ օտարին բարեբախտութեանս նախանձաբեկ մնչի և ոչ իւրովքն ընկճեալ պարանի, և ոչ ի լուր գժպատեհ բանից Թշնամանաց տանջին պարկեշտ լեզուիք նորա. ոչ գհասսրակաց և զառանին աղետից խեթայ և ոչ ի հանդերձելոցն հոգս վարանեալ՝ ահեկատոյց ի գէպս կայ ի չարեաց միտելով միշտ ի կասկած։ Այս համայն ասել՝ զոտս ի յաստոջ կացոյց անդ՝ ուստի ոչ ինչ զնա զրդուեցուցանել կարացէ և ոչ երկեցուցանել։

ԳՎԱՒԻԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Այ՛ւ որպէս անգէտք էն աղետից չարեաց իւրեանց՝ որք ոչ գովելի համարին զմահ որպէս գիւտ գեղեցիկ հնարից բնութեան։ Օ ի Թէպէտ երջանկութեան իցէ պատճառ, Թէպէտ Թշուառութեանց կատարած, եմ խնդ և տաղտկոտ ծերութեան ածիցէ վախճան, և ե-

թէ զառոյգ պատանեկութիւն՝ զզուարձացեալն ի յոյս վայելից՝ ի ծաղկի անդ հասակին խլեալ տանիցի, և եթէ զմանկութիւն՝ մինչ չև զխիստ քայլափոխն արա-բեալ յետս կոչեսցէ՝ ամենեցուն կատարած է, բազմոց դեղ՝ ոմանց ցանկալի և այլոց բարեբար, մանաւանդ այնոցիկ՝ առ որս կանխել ժամանել մինչ չև իցէ կոչ-ցեալ։ Այս տայ ազատութիւն տարկայ ի բռնութենէ տերանց նոցա, սա զգերեաց շղթայն խզէ, սա հանէ ի բանտէ զորս հրաման բռնութեան արգելեալ պահեր անել. սա աքսորեալսն՝ որոց աչք և սիրտ ցանկութեամբ հայրենեացն հալին, յուսացանէ զի չիք ինչ խոչ թէ ատ աք կամ անկեալ գնիցի. սա զանհաւատարմն բախ-տիւ՝ որ զհաստարակաց պարգևաւն չարաչար բաշխէ և զծնեալսն նուիրն իրաւամբք զայլ աք ընդ այլոց արկանէ իշխանութեամբ՝ հաւատարէ առհաստարակ. սա է որ ոչ գործեաց ինչ երբեք ըստ հաճոյս այլոց, սա է յորում ոչ աք գնուաստութիւն իւր ծանեաւ, որ ոչ յումեքէ ակնածեաց. սա է, Այարկիա, որում հայր քո ցանկա-ցաւ։ Այորա հնարէ է զի ոչ առ ի պատիժ ծնանիցէ. սո-վաւ ընդդէմ սպառնալեաց բախտին խիզախեմք ինքն-իշխան և անբռնաբարելի պահեալ զոգիս. զսա ունիմ ինձ ապաւէն և պատսպարան։ Չեսանեմ աստանօր փայ-տս պատուհասից պէսպէս և բազմօրինակ հնարա-գործեալ՝ ոմանց գլխովքայր զկախեալն յինքեանս բե-րելով, այլոց սպածայր ընդ սրբանան վարսեալ, և այլոց բազկատարած զիւաչեալն յիւրեանս տանջելով։ Չե-սանեմ եղէգունս սրեալս, ձաղկիչս և կազմածս տան-ջանաբանաց ըստ իւրաքանչիւր անդամից և յօդից։ բայց առ նոքօք տեսանեմ և զմահ։ Այստանօր կան աւասիկ թշնամիք արեւնաբաբուք, քաղաքակիցք գոռոզք, այլ աւրնեցեր նոցա կայ և մահ։ Չէ տարժանելի ծառայու-թիւն որոյ տաղտկացեալ ի գժտութիւն տեառնէն՝ միով քայլափոխիւ ելանել կարէ յազատութիւն։ Խնդրէմ անկրաւութեամբ կենաց՝ բարեբար ինձ աւրնեցեր կայ մահ։ Այնեա և տես որչափ բարեաց օձան իցէ մահ բարեպատեհ, և որչափ չարեաց պատահելոյն բազում յերկարեալք ի կեանս։

Այնէաս Պոմպէոս փառք և պատսպարան պետու-թեանս եթէ անդ ի Աղեքսոլիս հիւանդութեամբն

զկեանսն վճարէր, Հռոմէացւոց ամենեցուն գերագոյն մեռանէր աներկբայ. բայց զոյն յաւելուած կենաց ի բարձրութենէ անտի փառացն գահավէժ զնա կործանեաց։ Օ լեզուաս զօրաց առաջի աչաց իւրոց եռաս խորտակեալ, և համայնաջինջ բանակին որպ նախամարտիկ ձնկատ ինքն իսկ աւազանին էր, մեռցուղ հէք զինքն ևեթ որ սպարապետ էր նորին։ Աչես առ իւր զղահիձն եղեսպատցի, և զմարմինն յաղթականաց իսկ պատուական՝ մնասեաց ի ձեռս վատ արբանեկին։ Յետ էգեպտ ազջանդամ իսկ ապրեր՝ սպրդանայր ընդ կեանսն. զի զինչ այլ դժոգոհագոյն քան Պոմպէի ի չարչաց թագաւորի կեալ։

Ի՞արկոս Կիկերոնիս եթէ ոչ խոյս տուեալ էր ի սրոյ կատիլինայ, որ ընդ հայրենեաց դարաներ և նմա, զպետութիւնն ապրեցուցեալ և որպէս ազատարար նմին անկեալ էր։ Ա՛յս թէ և գհետ մահուան գտանէն իւրոյ հետեւէր՝ բարեբաստ զկեանս իւր վճարէր և յայն ժամ։ Ել տեսանէր զվաղահասուրն չողացեալս ի վերայ գլխոց քաղաքացեաց, և ոչ զկատորէլոյն զինչ՝ որպէս գինք և միցանակ կորտեան նոցա ի մէջ սպանողացն բաժանեալ. ոչ զբզեզխիցն կապուտ կողոպուտ ի ձայն քարոզի ածեալ ի վաճառս, ոչ զկոտորածս, ոչ զաւազակութիւնս պատուեալս միցանակօք, ոչ զպատրաստիս, ոչ զյափշտակութիւնս և ոչ զկատիլինայս բազումն միանգամայն։

Ի՞արկոս Կատոն ի գարձին իւրում ի Կիպրոսէ, ուր երթեալ էր ի տնօրինել զյաջորդութիւն արքունի գահոյն, թէ ծովակուռ լինէր ամենայն գանձիւքն Տանդերձ զոր բարձեալ բերէր ընդ իւր ի ծախս քաղաքական մարտի, ոչ տպաքէն բարեբաստիկ և մեռանէր, զայս գէթ պարծանս տարեալ ընդ իւր արդարապէս՝ զի առաջի Կատոնի չէր ումեք Համարձակութիւն մեռանելոյ։ Ա՛յլ ամն տակաւ յերկարեալ ի կեանս, նա որ յաջողութիւն անձին և աշխարհին ծնեալն էր՝ Տարկեցաւ խոյս տալ յերեսաց Կեսարու և գհետ երթալ Պոմպէոսի։

Ել ինչ ասպ տոյժք են որդւոյդ ի վաղահաս մահուանէն, նա՝ գերծաւ իսկ այնու յամենայն չարեաց։ — Ի՞այց վաղամեռիկ եղև յոյժ և արագավախճան։ Ի՞այլ

է, Համարեաջիր զնա լեալ երկայնակեաց, յաւելնան ամս որչափ և մարթի իցէ մարդոյ կեալ. սակայն որչափ ինչ իցէ այն։ Արթժամանակեայ եկեալք յաշխարհ, յորմէ հուպ ընդ հուպ մեռանել և տալտեղլ եկելոցն վճռեալ մերնովին պայմանաւ, որպէս ի հիւրանոցի կամք։ Օ այս ասեմ զամոյ կենացս մերոց, որք որպէս յայտ է՝ անհաւատալի խուսեն երագութեամբ. այլ զու և զքաղաքաց զարս բեր ինձ ի համար, և տեսցես թէ քանի սակաւակեացք եղեն պանծացեալքն իսկ կարի հնութեամբ։ Արդեւսյինքս համարիչն վաղանցուկք են և դիւրեզձանելիք, զանսահման ժամանակին և ոչ զմի մանն գրաւելով։ Օ երկիր համարիչն ազգօք հանդերձ և քաղաքօք և գետովք և շրջաբերութեամբ ծովու որպէս կէտ մի գետնիք առաջի տիեզերաց։ Այլ կենացս ասպարէզ փոքրագոյն ևս է քան զկէտ առ համեմատութեամբ համասպարփակ ժամանակին որոյ մեծ ևս է չափ քան զաշխարհն. զի ի ժամանակի անդ բազմապատիկ գարձադարձիւ շրջաբերի աշխարհ։ Արդ զինչ օգուտ իցէ ձգել երկայնել զչափ ժամանակի կենացս, որ որչափ և յերկարաձգեացի չէ ի բացեայ յոլնչէ. այլ միով ևեթ այնու մարթի է յերկարել կենացս՝ եթէ շատանայցեմք նուաւ։ Զվպէտ և զգուշական՝ ինձ ի մէջ աճեցս և զհամբաւեալն բազմաժամանակեայ ծերութեամբ՝ ոչ ինչ աւելի քան զամն հարիւր և տասն բերցես ինձ ի համար. այլ ընդ յաւիտենական անսահմանն ժամանակին եգեալ ի կշիռ՝ զինչ խտիւն այն իցէ երկայնութեան կամ կարճութեան՝ թէ զչափ ժամանակին զոր եկեաց որ մերձ դիցես այնմ զոր ոչն եկեաց,

Եւ զարձեալ՝ ոչ տարաժամ մեռաւ որդի քո. զի եկեաց որչափ և ասհմանեան էր նմա կեալ, և ոչ գոյր նուազ այլ ժամանակ։ Զնոյն չափ ծերութեան և մարդկան ամենեցուն, որպէս և ոչ անասնոց՝ յորոց ոմանք չբնաւանանամեաք լնդհին և պակասեն, և յերկարագոյն կեանք նոցա ոչ հասանել ի չափ մանկութեանս մերոյ։ Զամենեցուն զուգահաւասար տուեալ է զօրութիւն ի կեալ, և ոչ կանուխ որ մեռանի՝ յորժամ աւելի քան

[1] Գուշակ զմիբելայն է խմանալ զմարգարէսն, որոց ընդհեալ էր լինել երկայնակեաց։

զոր եկեսցէ՝ կեալ ոչ կարէր։ Արբաքանչիւր կենաց սահմանն հնբեալ է և ոչ փոխեսցի, և ոչ հոգք և կամ հնոտքն ընդարձակել զայն կարասցեն, և կամ փոյթ և հանճար՝ ամփոփել։ Արդ բանտին հպատակեաց և որդի քո,

Այս սահմանեալ կենացն իւրոց՝ ի վախճան
Ո՛ւր երկարեաց գոլ և նա ինքըն ժամուն՝։

Ո՞ւ ասա դիցես՝ ի սրտի քումմ որպէս եթէ մարթ էր նմա երկարակեաց եւս լինել։ Այլ ընդհակեցան կենաց նորա և ոչ արկածք նուազեցին զամն նորա։ Արբաքանչիւր ումեք ըստ եղելոյ առ նա խոստմանն և հատուցումն է. յընթացս իւր ձեպի օրհաս ոչ ինչ՝ ի խոստացելոցն յաւելեալ և կամ նուազեցուցեալ. ընդունայն ի ցեն ամենայն ջանք և ուխտք։ Այլ այլ ընկալցի որչափ ինչ յառաջնումն աւուր սահմանեցաւ նմա. յօրէ յորմէ զաչս իւր՝ ի լոյս եբաց, զմահուն կալաւ ձանապարհ և մերձեցաւ առ օրհասն. և որ՝ ի մանկութեանն տուան նմա ամբ՝ ի կենաց նորա պակասեցին։

Զայսմ սխալեմբ ամենեքին զի զծերս ևեթ և զկորացեալս մարմնով համարիմբ դիմեալս առ՝ ի մահ. մինչ և տղայութիւն և մանկութիւն և ամենայն չափ հասակի՝ ի նոյն դիմին անդուլութեամբ։ Որհաս գիշեր կատարըէ զգործ՝ յանզգաստից վարեալ զմեզ յեղծումն. մահ ընդ անուամբ կենաց պատրուակեալ՝ զիւրացոյն ևս սղոսկեալ սպրդի՝ ի ներքս։ Ո՛ տղայութիւն եղծանէ մանկութիւն, զմանկութիւնն՝ պատանեկութիւն, զպատանեկութիւնն՝ երիտասարդութիւն, և զերիտասարդութիւնն բառնայ ծերութիւն։ Յեթէ քաջ խելամուտ իցես՝ նոյն իսկ զարգացումն կորուստ է։

՝ Վ. Եփրեմ. Ենէակ. ժ. 741։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Պաղդասեայ, Մարկիա, զի ոչ սրտիւ մարթեն էր՝ յերկարակեաց եղև զդէն քո։ Խոյզ ուսոյ գիտիցես զի լաւ էր նման երկայնակեաց լինել, և զի ոչ՝ ի ձահ դիպեցաւ նման մահ։ Ոյզ ինձ զոք, թէ կարես, որոյ այնպէս սոպգ և անյեղլի իցէ բարս մինչև աներկեւան և աներկիւղ յապագային գոլ։ Կենցաղականքս Տամայն անկայունք են և հոսանուտք, և որ առաւել ցանկալին է մեզ՝ ի կեանս մեր՝ բազմամանգ ևս է և դիւրեղծական։ Նմին իսկ յաջողելոյն՝ ի բարեբաստութեան ցանկալ պարտ էր մահս։ զի՝ ի բազմադիպի անհաստատութեան իրոյ՝ չիք ինչ սոպգ և հաւաստի քան զանցեալն։ Ո՛ եկաց քեզ երաշխաւոր զի անձնագեղ վայելչութիւն զդուդդ՝ պարկեշտութեանն ինամոտ զգուշութեամբ անարատ պահպանեալ յայրատ աչաց զեղծ և անառակ բաղաքիս, կարող ինչ էր տալրել նոյնպէս յարկածից հիւանդութեանց, և անտեսեղծ գեղջին փայլել մինչև ցծերութիւն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Հաճեաց՝ ի բիւրաւոր զեղծմունս ոգւոյ, և տես զի և բարեբարոյքն՝ ի քնէ ոչ որպէս սկզկալութիւն էր գնացանէ՝ ի մտաւոր Հասակին՝ յառաջեցին ցծերութիւն. այլ բազում՝ այն է՝ զի՝ ի կիսոյ Հանապարհին զառածեալ զեղծան։ Կամ անագան ուրեմն՝ բայց զազբագոյն անառակութիւն ուժգնն՝ ի վերոյ յարձակեալ՝ զգեղեցիկ սկիզբնն անարգեաց։ Յո կամ շուայտութեամբ՝ պորոյ և որովայնի անձնատուրք՝ ոչ այլ ինչ Հոգ էր նոցա բայց զկերակրոյ և զըմպելեաց։ Յաւել յայսոսիկ և զՀրդեհս և զկործանմունս, զնաւաբեկութիւնս, զչարատանջ դարմանս բժշկաց որք կեն, դանուցն զոսկերսն քաղեն, ձեռն և՝ ի ներքս՝ ի փորոտիս անդր արկանեն, և դառնակսկիծ անսովոր

ցաւովք զամենայն բուժէին ։ Ի վերայ ամենայնի այսոցիկ յաւել և զարտասանմանութիւն Թեկլա և անմեղ իբրև զՀռուփիմէս էր որդի քո, զանա՛ Թեկլա և ի մասունն էր իբրև զԿոկրատ . զինքնաձեռն հարուած ընդ սիրտ՝ Թեկլա և սրբազոյն էր իբրև զԱստուծն ։ Յայսոսիկ քո ակնարկեալ՝ խնամեա՛ դեռս զի չնորհս ինն բնաւթիւնն առնէ այնպիսի զօրս վաղագոյն վերծուցեալ՝ի տուժից չարեաց կենցաղոյս՝ յանբոյսեն պատրաստարէ աներկևանութիւն ։

Ոչիք ինչ քան զկեանս մարդոյ խաբուսիկ և նենգաւոր, զոր Թէ ոչ յանգետս, ծն և ծն ասեմ՝, ոչ ոք առնոյր բնաւ ։ Ի՛զուր եթէ երջանկագոն է չճնանեին բնաւ, Տալաւորագոյն նմին Համարեաց վաղահասման կենցաղ ընդ կրունկն զարձ առնել՝ի ներս ։ Ոչուշ քեզ լինին աւուրքն դառնութեան յորս Աչքանոս գՀայր քո չնորհեաց՝ի ծառայութիւն Ասորիսի Աեկունդոսի սանին իւրոյ ։ Օ այրացեալ էր Աչքանոս ընդ Հայր քո վասն Համարձակախօս բանից ինչ նորա , և մանաւանդ անհանգուրժելի Թուէր նմա այն զոր ասաց՝ Թէ Աչքանոս ոչ եթէ՛ի գլուխս մեր եգեալ կայ՝ այլ ելանէ . և այն զարձեալ զի՛ի սահմանել Կայսեր անդրի կանգնել Աչքանոսի՛ի Թէատրոնն Պոմպէի զոր՝ի հրկիզութենէն նորոգեր , գոչեաց Կորդս . Ասուգապէս չայնժամ բնաջինջ լինի Թէատրոնն ։ Ոչ արգարև պայթելոյ իրք էին՝՛ի վերայ աՀինացեալ նշխարաց կին . Պոմպէի առանել կանգնեալ զԱչքանոս , և՛ի տեղւոջ չիշատակի մեծացեալ սպարապետին սրբազանեալ զգինաւորն ամբարիշտ ։ Ոչ սակայն սրբազանի ներքնագիր արձանագրաւ Համդերձ ։ Ոակ և իսկ չունքն գժնդակք զորս մարդկեղէնն արեամբ մնուցաներ Աչքանոս՝ զի անոզբեցիք առ ամենեսեան ընդ իւր միայնոյ ընդելասցին, սկսան Հաղել չարքն զԱորդոսիս մինչ կայր նա անկասկած ։ Ոչ զինչ առնել էր նմա . եթէ ցանկայր կենալ՝ Հարկ էր նմա աղաչել զԱչքանոս , իսկ եթէ մահու՝ զդուստրն , որոց և երկաքանչիւր անամոքելիք էին ։ Ոգ՛ի մտի խաբել զդուստրն . լոգացաւ՛ի բաղանիս , և առ՛ի դիւրահաւք զպատրանսն գործելոյ՝ եմուտ առանձնացաւ՛ի սենեակ առնուլ ինչ կերակուր . և արձակեալ չիւրմէ զմանկունսն ընկեց՛ի կերակրոյն ընդ պատուհանն

զի երևեսցի Ճաշակեալ. ապա հրաժարեցաւ յընթրեաց որպէս չատ իսկ Ճաշակեալ ի սեղանին. զնոյն արար և յերկրորդումն աւուր և յերրորդում: իսկ ի չորրորդումն քանզի տկարութիւն մարմնոյն մնաւն լինէր խարկանացն, ցերկիս արկեալ զքէն՝ ասէ. "Պատուոյ իմ սիրելք, ահա զոր միայն յամենայն կենաս իմ Թաքուցի ի քէն. զի տասջիր՝ զի առ ի մահ ուղևորեալ է իմ և ի կէս իսկ հասեալ ուղւոյն. և քեզ չէ մարթ և ոչ արժան ընկերել զիս յընթացիցս,,: Եւ հրամայեաց փակել զդուռնս մատանն զամենայն և նստէր ի խաւարի: Երբև լու եզև արտաքոյ խորհուրդ նորա՝ ուրախ լինէին ամենեքեան զի ի կոկորդաց անյագ գայլոց փրծանէր որսն: Պատախազք առաջնորդեալեամբ Աչխանոսի դիմին յատեան բդեշխից՝ բողոք բարձեալ զի ահա ինքնակամ մեռանի Կորդոս. և զայն ինչ ամբաստան լինին զնմանէ յոր ինքեանք զնա ստիպեցին. քանզի տեսանէին յայտնապէս զի զերծանէր որսն ի ձեռաց իւրեանց: Խնդիր մեծ յուզեցաւ յայժամ թէ ինքնակամ մահ Հուամբ պատրաստորին վրիպեսցին արդեօք ամբաստանքն ի մոգանակէն: Զի ինչ ի խորհրդեան էին իրքն, այն ինչ միւսանգամ յատեան դիմէին ամբաստանքն՝ Կորդոս անձամբ անձին տայր արձակուրդ: Տեսանէս, Արիկիա, զչեզակարծ փոփոխմունս եղեռնաւոր ժամանակին: Օ միոյ ի քոյոց զկնասիս զօրհասն ողբաս, և զմիւսոյն գոգցես զանագանն:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Այլ Թող զայն զի հանդերձեալքն ամենայն անսոցդք են և ի չար անդր յաւէտ ստուգագոյնք, դիւրագոյն է Ճանապարհ առ դիան վերելից հոգւոյն այնոցիկ՝ որոց փութով արձակեալք ի կենցաղական՝ նաց՝ չիցեն ծանրացեալք և Թանձաւեալք աղտեղութեամբ: Արդ ինչ չէ իցէ նոցա ընկղմեալ և խորասուզեալ յերկիրաւոս, ազատացեալք Թեթևաբեռն վերթեւեն առ սկիզբն իւրեանց, և անարգել լուզան համարձակ յեթերական հոսանուտին՝ որպիսի ինչ և իցէ այն:

Կ'ասին իրի և ալք մեծահանճարք տաղտկան յամել ՚ի մարմնի, ցանկացեալք ելանել և սլանալ ՚ի վեր. սակայն յամիլ ընդ երկինս և անդուստ ՚ի բարձանց արհամարհել զերկրաւորս ամենայն՝ ծանր թռուին անձկութիւնք կենցաղոյս : Այր աղագաւ գոչէ Պղատոն. Խնստունն ամենայն ոգով ձեպէ ՚ի մահ. այնմ՝ ցանկայ, զայն խորհի, և ՚ի նոյն՝ որպէս յուշ նպատակի բերի անդադար :

Այլ զինչ, Արկիա. տեսեալ զորդի քո յերիտասարդութեան ալեւորեալ խնամոտութեամբ, անբիծ և անախտ հոգւով և ամենայն փափկութեանց աշխարհի յաղթական, ցանկացող մեծութեանց առանց ագահութեան, փառաց՝ առանց փառամոլութեան, բերկրութեանց՝ առանց զեղխութեան, կարծէիր յերկար ժամանակս վայելել ՚ի կենդանութեան նորա : Այր ինչ ՚ի ծայրն ժամանակատարման՝ մերձ յեղծումն է : Հաբրինուածին ամենայնիւ անբեւեղ ծածկի ՚ի տեսութենէ. և կանխահաս ՚ի պտղոյ ոչ յերկար տևէն : Ոչ ուժգին փայլեալ վաղագոյն շինչի, յերկարատև է որ դժուարագնեզ առեալ ձարակ՝ յամր վառի և ծխախտն փայլեն նեսեմութեամբ. զի նովքն իսկ որով յամր մնանի՝ պահպանի յերկար : Ոստ նմին օրինակի և հանճարք պայծառապայք վաղնջուկք էն. զի որ ՚ի ծայրն եհաս բարձրութեան մերձ է ՚ի խոնարհել : Հանգէ փաթիւնոս, զոր և ծնողք մեր տեսին, մանուկ ոմն կացեալ ՚ի Հռոմ՝ ՚ի չափ հասակի առն կատարելոց, և լեալ վաղամեռիկ որպէս խնամոտոց ամենեցուն գուշակեալ էր զայն զի արագավախձան եղիցի. զի չէր մարթ ժամանել նմա յայնչափ հասակին յոր կանխեալ և ակնապարեալն էր : Ոյսպէս ահա մծտալուտ անկման է նշանակ վաղահաս գոլ. և որ ՚ի կատար հասեալ է զարգացմանն՝ ձեպէ ՚ի վախճան :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

Ա՝ի՛ւ ևս ապա յամացն Թուոյ՝ այլ յառաքինութեանցն զկեանս որդւոյդ Հաշուեացես։ Ճատ իսկ յերկարակեաց եղև. որբացեալ՝ի հօրէ՝ մինչև չչորեքտասաներորդ ամ Հասակին եկաց ընդ խնամակալութեամբ ընդ մայրենի Թևաւոջդ պատսպարեալ միշտ, և Թէպէտ էր նորա տուն Հայրենի՝ սակայն ոչ կամեցաւ Թողուլ զքոյդ։ Պատանի անձնագեղ և Թիւնաւէտ, քաջակորով մարմնովն և աւելնայն Հանգամանաւք ծնեալ՝է զինուորութիւն՝ չէառ յանձն զինուորիլ ղմի՝է քէն մեհենացի։

Վ՝ախես, որչափ սակաւս տեսանէն մարք զորդիս իւրեանց որք ուրոյն բնակեալք իցեն՝է տունս. և Թէ՝է պատեհագոյն իցեն՝ քանի քանի առք կենաց նոցա չՀաւասարին՝է մարդ և՝է Հոգս անցանեն. տես ապա որչափ երկայնակեաց եղև քեզ որդիդ զի ոչ ինչ յայդցանէ կոտաւեր։ Ուրեք երբեք ոչ մեհենացաւ նա՝է քէն, և առաջի աչաց քոց յառաջադէմ վարժեցաւ յուսմունս պանծալի ուշիմութեամբն՝ որով Հաւասարեր արդեօք Հաւուն իւրում Թէ ոչ արգելոյր զնա Համեստութիւն, որ զգաստացնէ բազմից ծածկեաց՝է լուսնեան։

Պատանի չքնաղագեղ՝է խառն բազմութեան կանանց որք և զարս ապականեն Հրապուրանօք՝ չէառ նոցա քնաւ տեղի ակնկալութեան զանձնէն։ Այլ՝է լարչել ոմանց և՝է փորձել զնա՝ չառագունեցաւ առաքինի՝ որպէս յանցանս Համարեալ անձին զի Հաձոյ գտաւ։ Այսպիսի մաքրութեամբ վարուց դեռևս մանուկ տիօք քըրմութեան գտաւ արժանի, սատարելով անշուշտ մերն. բայց և ոչ նորա զօրեղին բանք եթէ նուիրեցելումն լուսնութիւն ոչ օժանդակեր՝է նմա։ Չիշատակաւ առաքինութեանցս այսոցիկ անմեռին կալ զքեզ յորդւոյդ, և առաւելագոյն այժմ Համարեաջիր զնա անձնանուէր քեզ և խնամակալս։ Ունիք ինչ նորա արդ որով տարագնաց առ՝է քէն՝ Հոգոյ և Թախծութեանց եղիցի քեզ պատճառաք։ Օ՝մի զայն ցաւ զոր մարդ էր քեզ կրել յառաքինի որդւոյդ՝ ցաւեցար։ Այդ մնայ քեզ բերկրութիւն

անխոտան յարկածից . միայն թէ գիտիցես վայելել որ-
դւոյդ . միայն թէ ՚ի միտ առնուցուս ՚ր ինչ առաւել
մեծարգոյ և պատուական էր ՚ի նմա : Պատկեր ևեթ
կերպարանաց որդւոյդ կորեաւ , և պատկեր ոչ չքնքըշ-
տութիւն . ինքն յամենայն օտարոտի ծանրութեանց
թեթևացեալ՝ ՚ի լաւագոյն կեանս յաւերժացեալ կայ
՚ի վայելս ազատութեան : Յոյսիւկ ամենայն որ ՚ի
մեզ տեսանին ոսկերք ջլապատք մորթով ծածկեալք
և երեսք և ձեռք սպասաւարկութք և այլն ամենայն ո-
րովք պարապմունք եմք՝ խաւարտարգել կատարք էն ո-
րովք բանտեալ հոգին նեհմանայ և տագնապի , և յիւ-
րոյ անտի ՚ի սեփական չշնարտութեանցն ուծացեալ՝ ՚ի
հաբեպատիր մորթութիւնս զառաջանի : Հանապազորդ
մնալու է նորա ընդ վայրաքարշ մարմնոյ՝ զի մի ընկճեալ
նուաճեցի ընդ նոսա . ուստի եկին անդր ձկտի հա-
նապազ . անդ է նորա հանդիստ յաւիտենական , և ՚ի
թանձրամած խաւարէ ստոյ խառնակութեան՝ զտնտի
պայծառ և գյատակ լոյսն տեսանել :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ա՚Ի ասպա ՚ի գերեզման ընթանար որդւոյդ . անդ
անարգագոյնքն նորա մասունք դժուարահիլք հոգւոյն
անկեալ գնին՝ ոսկերքն և ատիւն , ոչ ինչ աւելի քան
զզգեստն և քան զայլ ծածկոյթս մարմնոյ՝ իւր ինչ հա-
մարելիք : Յակ ինքն խոյս ետ աղջիկ և մեհենեցաւ ՚ի
սպառ առ ՚ի մէնջ ոչ ինչ լիւրոյն թողեալ յերկրի :
Յե սուղ ինչ ՚ի վերոյ մեր գեգերեալ զի զտեալ մաք-
րեսցի ՚ի կենցաղականացս համայն յանհրաժեշտ ախ-
տից յարելոց ՚ի նա , բարձրաթռիչ խոյացաւ ՚ի բար-
ձունս և խառնեցաւ յերջանկացն պարս փառաւորեալ
հոգւոց Ակիպինեանցն և Աստուածեանց որոց արհամար-
հեալ զկեանս ընտրհիւ մահու ստացան զաստուածութիւն :

Ա՚նդ , Ա՚արկիա , թէպետ և ամենեքին ծանօթ իրե-
րաց և հոգեկցորդք , բայց Հայր քո գրկախառն ընդու-
նի զքոմնն իւր նորանշոյլ լուսով զարդարեալ , և հուպ
եղելոյն աստեղաց զընթացան ուսուցանէ նմա և գաղտ-

նեաց քնութեան առնէ զնա խելամուտ ոչ ի կարծս այլ ձշգրտապատում բանիւք։ Ու զոր օրինակ հիւր է՝ զելումն յանճանօթ քաղաքի ցանկալի է յոյժ թէ զչքնաղագեղն ոք յուցանիցէ, նոյնպէս և որում զերկնաստնոյն զպատճառն Տարցասիրել՝ Թարգման ընտանի։ Ուղուստ կորովաբիւր տեսութեամբ և ի խորս երկրի յառեալ բերկրեսցի, զի քաղցր է ակնարկել ի բարձանց զրոս Թոզեալ վերացաւ։

Ձնպա, այնպէս կալջիր զանձն քո, Ա՛րկիա, որպէս եթէ առաջի աչաց կաս Տօղդ և որդւոյդ, որք ոչ որպէս ծանեաքն զնոսա իցեն արդ, այլ զերազանցեալք յոյժ և վերամբարձք։ Ա՛ր ինչ նուաստն է և գոհիւիկ՝ զայն քեզ ամենի Տամարեսջիր, և մի ողբասցես զգեղեցիկ փոխակերպութիւն քոյոցդ ի լուսազգին։ Ա՛րոց ի ծոց յաւիտենականութեան ընդ անՏուն ասպարէզս արձակածաւալ քնութեան խաղան անարգել՝ զնոսա ոչ ծովուն ալիք, ոչ լերանց բարձրութիւն, ոչ ձորոց խորութիւն և ոչ քազմաւանգ Ա՛իւրդեան աւազուտք արգելել կարեն և բաժանել ամենայն Ձանապարհք Տարթեալք են առաջի նոցա, Տեշտիք, դիւրագնալք և դիւրանալոյք յիրեարս և աստեղազարդ Ձեմիք։

ԴԱՒԻԹ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԱՃԵՐՈՐԴ

Ձ՛ՊԱՆ Համարեսջիր, Ա՛րկիա, զի Տայր քո, որոյ այնչափ է ի վերայ քո իշխանութիւն որչափ յորդւոյդ, յեթերական ամէն անտի Ձայն տուեալ ոչ այնու բարբառով որով զքաղաքական պատերազմունսն ողբաց և որով զտարագրողն տարագրեաց յաւէրժաբար, այլ վեմախաօս յոյժ որչափ վերամբարձ կայ արդ, ասիցէ ցքեզ. “Օ՛ի է քեզ, դուստր իմ, զի այդպէս անմիթար կաս ի Թախծութեան. զի այդպէս հեռի ի Ձըշմարտութենէ ի տգիտութեան դանդաչես՝ անիրաւութիւն իմն կարծելով լեալ որդւոյդ զի տաղտկացեալ ի կենաց ի գիրկս նահաՏարցն իւրոց դիմեալ անկաւ։ Ա՛թէ ոչ գիտես զնորդ որպէս մերթիկ յուզեալ բախտ՝ վեր ի վայր Տարեալ՝ վըդովէ զամենայն, և ոչ ումեք այն-

պէս քաղցրութեամբ մարդասիրէ, որպէս որոց ոչ երբեք դաշնաւորեցան ընդ նմա։ Օ՞րն կամիս թէ ցուցից քեզ, զթագաւորս արդեօք՝ որք բարեբախտիկ յոյժ էին թէ վաղագոյն ի մատաղատ չարեաց կորզեալ եր զնոսա մահ. զօրաւորս հռոմայեցիս որոց ոչ ինչ նուաճ զէր ի մեծութենէն եթէ ամբ ինչ ի կենաց նոցա նուաղէին. զարս անուանիս և զպատուականս որք մատնեցան ի սայր գինուորական սուսերին։

„Հայեաց ընդ հայր քո և ընդ հաւ. նա ծտարայ մնահեցաւ ի ձեռս ի սպանդ. իսկ ես ոչ ումեք Թողացուցի առնել ինչ ընդ իս, այլ սովամահ եղեալ ցուցի Թէ զնածդ մեծի և արիական ոգւոյ իւրէ մեռանել ինքն իշխանաբար, և ընդէր բնաւ այդպէս անխիթար արտասուի արդ ի տան մերում՝ որ երջանկագոյն ընկալաւ օրհաս։ Ի՞ր արդ համեմեալ աստ՝ հայեցեալ տեսանելիք զձեզ ի խոր գիշէր ստուերամածեալ։ Ձկիք ինչ առ ձեզ ի ցանկալեաց՝ որպէս կարծէիք՝ չիք ինչ գեղացածք, չիք ինչ շքեղ, այլ համայն ցածունք, դժուարակիրք և բազմաչոգք, և անհամեմատք յոյժ մերոց գեղանշոյլ պերճութեանցս։ Օ՞րն ածից քեզ ի համար. չեն աստ առ մեզ ոչ դիւամարտ զինուց մոլեգին զայրոյթք, ոչ նաւատոլմից միաձայնահաւ խոստակումն, ոչ սպանուածեանց ոձիք և կամ խորհուրդք և ոչ առեանք հնչեցեալք հանապազօր ի վէմս և ի կռիւս։ Ա՛յ ինչ ի ծածուկ գոծի առ մեզ, բացերև են միտք և մերկապարանոց սիրտք և որպէս ի հրապարակամիջի կեանք. և բազմայոլով գարուց դէպք և պատահարք կան մեզ ակներև։ Օ՞ւարձալի Թուէր ինձ տալ ի գիր զմիոյ ևեթ գարու դէպս ի սակաւուց ոմանց ի ծայր մի աշխարհի գոծեցեալս, աստ անսահման գարուց և ժամանակաց դէպք և պատահարք համախուռն կան ինձ զառաջեաւ. զհանդերձեալ մեծազօր Թագաւորութեանց տեսանելմ զկանգնումն և զկործանումն, զկոյակաւ քաղաքաց տապալումն, և զահմանափոխ արշաւանս ծովու։ Ա՛ւ եթէ հասարակաց ամենեցուն օրհաս օգտ ինչ քեզ ի սփոփումն ցաւոցդ, գիտասջիր զի ոչ ինչ յեղելոցդ կացցէ ինասցէ որպէս և էն. զամենայն տապալեսցէ ժամանակ և առեալ վաթեսցէ ընդ իւր, և ոչ ընդ մարդկան միայն որ դոյզն ինչ մանն է

Թագաւորութեան բախտին, այլ և ընդ տեղեաց և ընդ գաւառաց և ընդ մասանց աշխարհի զօտանուցս ի խաղ։ Այսպէս անդնդասոյզ զերծինս տապալեսցէ, անդ ժայռս ահաւորս ի խորոց վերբերեցէ, զծովս ցամաքեցուսցէ, զգետոց զընթացսն փոխեսցէ, և զկոյսդութիւնս աղջկաց քակեալ՝ զմիաժողով ընկերութիւնս մարդկան ցրուեսցէ։ Այլոյն ուժգնին գղջութեամբ սաստեցուսցէ զբաղաքս և սուզեսցէ խորանդունդ, և ի տարէ սղոխս ժանտս և վհասակարս վերբերեցէ. հեղեղատ ջուրց ծածկեսցէ զբնակութիւնս և համայնաջինջ ապականեսցէ զամենայն շունչ կենդանի, և համաձարակ հրով հրդեհեալ ծախեսցէ զամենայն մնհկանացուս։ Այլ ի գալ հասանել սահմանեալ ժամուն յորում չիջեալ լուծցին տիեզերքը ի միւսանգամ նորոգութիւն, ամենայն ինչ ընկիզ զօրութեամբն ընկձեալ լուծցի իւրովք. սատեղք ընդ աստեղս հալցին, և նիւթականքն համայն և որ կարգաւորաբար լուսափայլենն արդ՝ համաձարակ բոցակիզեալ բորբոքեսցին։

„Այս մեք ինքնին հոգիք երջանիկք յաւիտենական օթեւանաց բնակք, յորժամ հնձոյ Թուեսցի Այտուծոյ վերանորոգել զիեզերս՝ ի համակործան յահագին աւերակն գոյն ինչ գործեսցուք և մեք յաւելուած՝ յաւազինսն մեր գտանալով ի տարերս։“ Այրանի, Աարկիա, երանի որդւոյդ որ այսոցիկ ամենայնի խելամուտն է արդ։

ՊՕՒԿԻՈՍԻ Ա. ՍԱՐՆԵԼԻՑ

ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՀՆԱՄՈՒԹԵԱՆ

ԹԷ ՈՆԴԻՐ ՉԱՐՒԲ ՊԱՏԱՀԵՑԱՒ ԲԱՐԵԱՑ ԵՐԲ ԴՈՒՑԻ ՎԵՐԻՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ [1]

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ասդրիցեր լինէն, Լուկիլիւս, ասէլ թէ ընդէր արանց բարեաց յոլով պատահէն չարիք՝ ետէ գոյ ինամահալումն որ վարէ զաշխարհ։ Լոյդ ինդրոյ լուծումն պատշաճագոյն ես՝ի դէպ գալը ուր զինամակալութենէն Ճառ արկեալ ցուցանեաք զի է տեսչութիւն որ ընդհանուր վարէ զտիեզերս և ինամէ զմեզ յամենայնի։ Այլ քանզի այսպէս հաճոյ Թուի քեզ զտոհանել զմանն՝ի բոլորէն, և Թողեալ զբովանդակութիւն մեծի ինդրոյն՝ զմի ետէ՝ի դիմադրութեանց լուծանել, ոչ ինչ դժուարին իսկ ինձ գործդ. աստուածոց կացիլ Ջատագով։

Լրատաքոյ է ասպա առաջարկութեանս ցուցանել՝ զի մեծի այսմ հրաշակերտի առանց ինամակալուի կալ ոչ է մարթ, և ոչ լուսաւորայն բարեյաղթմամբ ընեթայիլ կայցուղել ըստ դիպաց։ Վասնզի դիպաց արգասիք խառն՝ի խուռն են յաճախս և դիմահարտք. և զի այդմ անսայթաք երագութեան, որով ըստ սահմանեալոյն յաւիտենական օրինաց ուղղեալ վարին ամենայն որ՝ի ծո-

[1] Յաղագս Նախախնամութեան գիրք՝ գրեալ՝ի Սենեկայէ առ Լուկիլիոս իմաստասէր բարեկամ իւր, իբրև ոսկեղենիկ համարեալ է՝ի քննեցաց՝ի մասեհադրութիւնս նորա։

վու և որ ի ցամաքի էն հրաշալիք և որով նշուլագեղ գունտքն ի լուսաւորութիւն մեր կարգեալ չքնաքերին պատշաճապէս , չմարթէ ՝ի թափառական ընթացից խառն ՝ի խուռն հիւլէից յաջողել։ Այս ոչ թէ ըստ դիպաց ինչ զուգաւորելոյն այսոքիկ՝ այս կարգ սքանչելի է. բևէր ՝ի նոսա . ծանրագնդաձ երկրի զետեղ առնուլ անշարժ և վճռակեաց փախստեայ ընթացս երկնից չուրջ գիւրև պարագիսել, և ծովս ՝ի ծորձորս զետուլ և տամ կացուցանել զերկիրը ոչ մի ինչ անշուշտ ՝ի գետոցն ընդունելով, և ՝ի փոքունց անեւևոյթ սերմանց մեծամեծաց յառաջ գալ ։ Այս և ոչ թաւեցեալքն մեզ թէ խառն ՝ի խուռն ինչ իցեն և անկարգ՝ զանձրևս առեմ և զամպս և զկայծակնացայտ փայլատակունս և զհրաշ հոսան ժայթքմունս ՝ի գագաթանց լերանց սեպացելոց, զսաստանութիւնս երերուն երկրի և որ ինչ այլ ևս ՝ի մերկայայզ գաւառին յեզակարծ փոթորկին զերկրաս՝ անխորհրդաբար պատահիցեն . այլ էն և նոցա պատճառք որպէս և որոց յայլ և այլ կողմանս երկրի սքանչելագործին երևոյթք . օրինակ իմն ջերմաջրոց ՝ի ծովս եռացումն և լայնանիստ կղզեաց նորոդ վերբերութիւնք յանդնդախոր ալեաց ։

Այսքանէն յընկերել ալեաց տեսեալ ուրուք զծովափունսն ցամաքեալ և սուղ ինչ յետոյ ծածկեալս անդրէն՝ կարծեսցի արդեօք թէ խառն ՝ի խուռն չքնաւսա մերթ կծկիցին ալիք և տեղի տացեն ամիսփելով, և մերթ ուռուցեալ հեղհեղաբար ՝ի գագարս իւրեանց դիմեսցեն . մինչ նոցա մեղմաբար ածեալ ըստ աւուրն և ըստ ժամու յորդեն յաւէտ կամ՝ նուազ որպէս և զիարդ ազդէ ՝ի նոսա լուսնականն զօրութիւն որ ըստ կամս իւր յաւզէ զվիճիան ։

Այլ այսոքիկ այլուս կացցեն ժամանակի , մանաւանդ զի քո ոչ երկմտութիւն ինչ է ընդ խնամակալութիւնն , այլ բազոք . և արդ խնամ կալայց հաշտ առնել զքեզ ընդ դիս , որք բաբերարք առ բարիս էն . զի և հակառակ իսկ է բնութեան բարեաց միաստակար գոլ առ բարիս ։ Ընդ Այսառած և ընդ արս բարիս բարեկամութիւն իմն է կցորդեալ առաքինութեամբ ։ Այս զինչ ասեմ բարեկամութիւն . նա՝ ապագկցութիւն իսկ և նմանութիւն . զի անձն բարի ժամանակաւ և ևթէ ընդհատ է

Ա՛ստուածոյ. աչակերտ է նորա և նմանող և ձգմարտապէս որդի, զոր նա ինքն Հայր մեծաւայելուչ՝ սաստկապահանջ առաքինութեանց՝ որպես Հայր անաչառ խստագոյնս զաստիարակէ: Ա՛յս՝ ի տեսանել քո զարս բարիս և զաստուածահաճոյս յաջխտութեան և՝ ի քրտունս և՝ ի տարժանաւոր վերեալս, իսկ զչարս՝ ի զեղխութենէն և՝ ի փափկութենէն լուղեալ, յաչ լցուի քեզ զի և մեր ընդ Համեստութիւն որդւոց մերոց զուարճասցեալ՝ ընդ Համարձակութիւն ընդոծնայն ոչ ինչ է մեզ փոյթ. զմերսն ընդ խիստ կրթանօք մարզեմք և զնոցա յանդգնութիւնն անտեսեմք: Օ՜նոյն իմն և զԱ՛ստուածոյ. առն բարւոյ չներէկ կալ՝ ի փափկութեան. փոքձէ՛ զինա, պնդակազմ և արժանաւոր իւր պատրաստել:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ա՛ԱՑՍ զի է զի բազում՝ ինչ ձախողակ պատահէն բարեաց: — Ա՛յն բարւոյ չարիք երբեք ոչ Հանդիպին. ներ Հակառակ ընդ ներՀականս չիք կցորդութիւն: Օ՜ր օրինակ բազմութիւնք գետոց, յաճախութիւնք երկնատեզաց անձրևաց և յորդութիւնք բժշկական ջրոց, զծովուն Ձաշակ փոխել ոչ կարեն և ոչ այլայլել, նոյնպէս և բազմախուռն արկածք չարեաց զքաջի առն զսիրտ յեղաշրջել ոչ ունին: Ա՛նփոփոխ՝ ի բարւոյն կացեալ և զամենայն դէպս յիւրն փոխարկէ՝ ի գոյն, զի Հզօրագոյն է քան զարտաքինն Համայն. իբր ոչ եթէ անզգայ իցէ այնոցիկ, այլ յաղթող. և յայլմ՛ամենայնի Հեզ գտուղ և Համարտա՝ առ Հակառակսն գոլայ: Օ՜ամենայն դիմամարտ՝ ի կրթանս իւր Համարի: Լա՛՛ոք, միայն ԼԺ այր իցէ և առաքինութեանց նախանձաւոր, ոչ ցանկասցի բարեաց վաստակոց, և ոչ՝ ի գործս պատշաճից՝ վտանգաւ իակ անձինն՝ լցուի զիմագրաւ. ո՛՛ոք ժիր և գործունեայ ոչ՝ ի պատիժ զգաստարկութիւնն Համարեսցի: Ա՛՛ՀԷ ահա տեսանեմք և զըմբռամարտս որոց փոյթ մեծ է զուժոյ, զի ընդ ամենայն ուժաւորս ոգորին և ինդրեն՝ ի վարժապետացն զի ամենայն զօրութեանցն իւրեանց մրցեսցին ընդ իւրեանս. զանից և խոշտան-

գանաց ժուժկալէն, և եթէ չգտանիցի որ հաւասարա-
զօր ինքեանց, յոքունց միանգամայն եղանէն ախոյեան։
Պաֆլագիւն անդիմադրեալ խաղրի. ի փորձ հանդիսի
Ճգնութեան յայտնեացի թէ քանիօն իցէ զօրութիւն
նորա, որչափ ուժիցէ և այդ դիմակալեսցէ։ Օձոյն առ-
նել պարտ է և առն բարւոյ, ի հակառակաց ոչ զան-
դիտել և ոչ զինամակալութենէ բողոք ունել. այլ զա-
մենայն դէպս ի բարւոյ մասին ընկալեալ և ի բարի
յեղաշրջել։ Ոչ այն ինչ է զոր կրէ որ, այլ այն՝ թէ որ-
պէս կրիցէ։ Ցէս զծնողս զիարդ այլազգ յիրերայ խնա-
մեն զորդիս իւրեանց։ Հարը ձայն տան նոցա վազայա-
րոյց լինել և փութալ յաւսումն. և յաւուրս իսկ պա-
րապոյ ընթերցն նոցա կալ պարապարդ. և ստիպէն գնասս
ի քիրսն, է զի և յարտասուս։ Իսկ մարք ի գիրկս
դգուեն, ի հովանւոջ պատսպարեն և չծողուն նոցա
լալ կամ տրտմել և կամ խնդալ։ Ընդ արս բարիս հայ-
բագումի և արիական սիրով վարի Պաւռաւած. “Յաշ-
խատութիւն, ասէ, և ի ցաւս և ի տագիս մարզեսցին
զի իսկապէս կորովիք իցեն,,։ Պարարեալքն յանգոր-
ծութեան մեղկին և թուլանան, և առանց իսկ աչքա-
տութեան՝ ի չարժեն և եթէ ծանու բեռամբն իւրեանց
պարտասին։ Կրթանկութիւն անընդհատ ի դոյն հա-
րուածոյ ընկճի, իսկ որ անդուլ ընդ հակառակն մրցի՝
բրտացեալ ինն չգայ հարուածոց և ոչ ի չարեաց ինչ
ընկճի. այլ թէ անկցի և՝ ի գուշն մարանչի։

Օարմանայս զու զի Պաւռաւած բարեացն մեծապէս
սիրեցող և որ կամի ի գերակատարն ածել զնոսա ի
մեծութիւն, զբօսանս իմն տացէ նոցա ի կրթութիւն.
այլ ինձ ոչ զարմանայ իրը Թուխն զի և Պաւռաւած ինք-
նին ցանկասցի երբեմն հանդիստս կալ Ճգնութեան
քաջացն իւրոց ընդ վիշտս մրցելոյ։ Ոչ ահա և մեք ինքներին
զուարճանամք երբեմն տեսեալ ի գազանամարտի զե-
բիտասարդ քաջասիրտ զի յեցեալ ի սեգ նիզակին խո-
զախ ընդդէմ բուռն գազանին և անվեհեր զդէմ ունի
յարձակմանն առիւծու. և այնչափ առաւել հաճոյական
է տեսիլն որչափ յանկուսկանագունից ոք և չքեղ նա-
հատանն իցէ։ Պաւլ այդոքիկ ամենայն տղայոց խաղք
են մարզեալոյ ընդունայնութեանս զբօսեցուցիչք և
ոչ աստուածայնոյ տեսութեանն արժանիք։ Ցեսարան

աստուածավայելուչ՝ յոր բերկրեացի իւրամակալուն իւ-
րոց ձեռակերտաց՝ աշխատասիկ է . ահա ըմբիշ Յաստուծոյ
արժանաւոր՝ այրքաջ ընդ ձախտակ բախտի մրցական ,
մանաւանդ թէ և ձայնատու նմին յաստպարէզ : Ընդ ,
որպէս կարծեմ, չիք յերկրի ասա տեսարան այնպէս
քաջազգեղ յոր հաձեացի ականատես լինել Յոբամագդ , որպէս
զԱստուծն յետ կրկին բեկման իւրոց կողմանն՝ ի հա-
մակործան աւերակս անդ արձանացեալ անսասան .
“ Ահաւադ ասէ՝ նուաձեալին տիեզերք ընդ իշխանու-
թեամբ միոյն . Թող զգամաք կայցի լեզուախաւսիւն և
նաւատորմն զծով . Թող և զգրուսս պահեցեալն գունդք
կեսարու , Աստուծի եղք ոչ պահասեցին : Խաղկաւ ի
մէվ բացից ինձ Հանապարհ լայն յաղաւթիւն . սու-
սերս այս ցայս վայր սուրբ և անարատ յարենէ քաղա-
քակցաց գործ մեծ և շքեղ կատարեցի արդ . զազա-
տութիւն զոր ոչ կարաց ընձեռուել Հայրենեաց , տայէ
Աստուծի : Հանապա , անձն իմ, ձեռն ի գործ արա յեր-
կնեան ի վաղուց , խոյս տուր ի կենցաղականաց աս-
տի : Ահա Պետրէյոս և Յովհաննէս պատահեցին միմեանց ,
և այր յեղբօրէ Հարեալ անկան դիտապատառ . քնար և
շքեղ գաշնաւորութիւն առ ի մահ , այլ գժպատեհ մեծ
անձնաւթեանս մերոյ : Աստուծի միօրինակ նուաստու-
թիւն իցէ և մահ և կեանս յայնմ ինդրել .. :

Ահաւի ինձ մեծապէս զուարճացեալ զիս ի տեսանել
անդ զայն մեծ որ ազատութեան անձին այնպէս նա-
խանձաւոր՝ իւրոցն իսկամտանէր փրկութեան գիտելով
տեսանն ցուցանելով նոցա Հանապարհ, որ և ի վերջնում
գիշերին պարապէր յընթերցուին ' , որ զսուրբ ի սուրբ
լանջան մխէր , որ զաղիան իւրովի ի գուբս բերեալ ձե-
ռամբ . իւրով կորզէր զորբանուկ Հոգին յորմէ ակն-
ածեաց սուրբն : Այլ յայս իսկ, որպէս կարծեմ, վերիպեալ
Հարուածոյն և ոչ զօրեալ առ ի մահ՝ զի ոչ բաւական
Համարեցան զիք միանգամ ևեթ ի գնին կալ Աստուծի ,
այլ պահեցին զոգի նորա ի միւսանգամ տեսիլ գժուա-
բադոյն Հանդիսի . զի քան զանձնասէրն լինել առաւե-
լագունի արութեան ոգւոյ պէտք էն կրկին դառնալ ի

1 Ձի գՊողսանի զաւագաւրութիւնն ընթեռնոյր զանուանեալն Փե-
գոն , որ վասն անմահութեան Հոգւոյ . զոր և երկից առնն ընթեր-
ցեալ ի գիշերին յայնմիկ :

նոցին ։ Եւ զնմանէ ոչ հաճութեամբ մեծաւ ակնարկելիս զնա ի սմին իւրեանց, որ այնու չքեղ և յաւելուած պանծալի ելիւք Աեղեր յաշխարհէ ։ Որ արդարև զիւ-ցաղնական, գովելի և այնոցիկ՝ որք երկնչին յայնմանէ ։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Այլ թէ զնմանէ չարիքն կարծեցեալք ոչ են չարիք՝ ցուցից ի վերջկոյս ձառիս . այժմ զայն առիթ ցուցանել զի այն ամենայն զոր դու դժոգոհս կոչես , ձախողակս և գժպհիս , օգտակարք են նախ՝ որոց պատահէնն , և երկրորդ՝ հանճարիւն իսկ մարդկութեան որում առաւելս գոյն ինամք են զնոց քան թէ առ մեզ ի մարդկանէ ։ Եւ այդպիսիք գարձեալ՝ զի ի հաճոյս կրելեացն պատահէն , և որք գժկամակիցն՝ արժանի իսկ չարեացն են ։ Յաւելից և զայն զի յանհրաժեշտ հրամանաց սահմանեալք և ի ձահ պատահէն բարեաց ըստ նոցին իսկ օրինաց՝ որովք և բարիքն են ։ Յովիմբք հուսկ ապա հաւանեցուցից զբեզ[2] մի երբէք եղկելի համարել զայր բարի . զի թէպէտ և այնպէս իսկ կարծեսցի՝ սակայն չէ և չմարթէ նման լինել թշուառ ։

Դժուարագոյն չասացեալքս այն թուեսցի թերևս զոր նախն ասացի՝ եթէ յորոց դողամբն և զարհուրիմք՝ օգտակարք իցեն ։ Եւ զնմանէ , ասիցես , օգտակար իցէ տարագրիլ չաքաղս , տուայտիլ չքաւորութեամբ , զկին և զորդիս կորուսանել , նախատակած լինել , անտակրութեամբ ծնրիլ ։ — Եթէ ընդ օգտակարութիւն այդոցիկ զարմանաս՝ զարմացիր ապա զի և սուր և հուր , սով և ծարաւ անտաչելոցն օգտեն ի բժշկութիւն , իսկ եթէ կարևոր առ ի բժշկութիւն համարիս զի քերեսցին ոսկերք և քանդեսցին , զի հատցին երակք և կարեսցին անդամք ինասակաքը բռնադակութեան մար-

[1] Ըստ որում վերագոյնդ ազդեցաք ի ծանօթութեան՝ ծանրագոյն մեղաց անճառապանութեան չաստագով մտանէ Աենեկա մոլութեան ի առա սկզբանց ազանգոյն սաոյիկեանց ։

[2] Ակն յետին մասն ձառիս պակասէ ի գատարածին հնութեամբ ժամանակաց ծախեալ և ոչ ի գրչացն անհոգանալոյ ։

ձնոյն, մի՛ ինչ գժաւարահաւատալի Թուեցցի քեզ եթէ և զչարիս օգտակարս կրելեացն ցուցանիցեմք. այնպէս ամենևին ոպէս և ՚ի հակառակին բազում ինչ ցանկալիք և բերկրարարք վնասակարք վայելելոյն են նոքօք, որպիսի ինչ արբեցութիւնն է և չուայտութիւն և այլ ինչ իրք հեշտութեամբն վնասակարք։

Ի բազում գերահրաշ ասացուածոց մերոյս Գեմոստենեայ՝ մի և այն է զոր դեռ ևս լուեալ և տակաւին հնչէ յականին իմ. «Ո՛չ ոք, ասէ, Թուի ինձ Թշուառագոյն քան զնա որում չիցեն երբեք դիպեալ ձախողակք»։ Ապիսին չէառ երբեք զանձինն փորձ։ Վնպէս և ըստ ցանկութեան սրտի իւրոյ, Թէպէտ և յառաջ իսկ քան զցանկանալ յորդեացեն ՚ի նա բարութիւնք հաճայն՝ սակայն յաչս վերինից անարգ է այնպիսին և անարժան յաղթական գոլոյ բարւոյն, որ անգամեալ զվատն անարիս՝ ՚ի բաց խոսէ ՚ի նոցանէ ասելով ինն. «Օ՛ի է ինձ մրցել ընդ այնպիսւոյն որ իսկ և իսկ լցեր զընչիսկեց. ոչ մեծի ինչ զօրութեան ինձ պէտք են ՚ի նուաճել զնա. զոյգն սպառնալեօք սասանեսցի և ոչ հանդուրժեսցէ կալ առաջի երեսաց իմոց։ Այլ ոք ինդրեսցուք ընդ որում մարթի իցէ ինձ գալ ՚ի վէց. գժպատեհ է ինձ ընդ այնպիսւոյն ոգորիլ որ պատրաստ կայ ՚ի պարտութիւն»։ Ի մէջ արի նուաստութեան անձին համարի տիարապետնին քան զինքն կալ ախոյան, և գիտէ զի անփառունակ է յաղթութիւն ուր չիք վտանգ յաղթողին։ Օ՛նոյն առնէ և բանսն. արժանիս իւր ընտրէ ախոյանս քաջակորով՝ արհամարհեալ զայլոսկ։ Ինդ տոկունսն և ընդ առաքինիս զգոյր ՚ի վէգ ՚ի հանդէս իւրոյ զօրութեանն։ Հրով փորձէ զՄուկիոս[1], աղքատութեամբ զԹաբրիկիոս, տարագրութեամբ զՀռուտիլիոս, խոշտանգանօք զՀռեգուլոս, դեղատուութեամբ զՈկրատ, մահուամբ զՍոկրատէս։ Զկնի օրինակ պանծագոյն բայց զօրս ընծայեցուցանէ բախտ հակառակ։ Ի՛նթէ Թշուառ Թուեցի քեզ Մուկիոս որ աջով զՀռոմ Թշնամեացն Ձիլեալ՝ անձամբ յանձնէ զվրէժ

1 Դեմոստենես էր խնամատար կիմիկեան, զոր և պղտոր գովութեամբ բազմաւ յիշատակէ Սենեկա։

2 Մուկիոս Հռովմայեցի որ զեղանն զբոցով էած փոխանակ զի սը խաղեաց ՚ի սպանանել զԹագաւորն Պորսենա։

վըխտանայն խնդրեաց, և զԱգապոսն զոր զինեալ բազ-
կան չէր կարացեալ՝ այրեցելոյին վանեաց։ Այնժէ երջա-
նիկ և երէց՝ ի ծոց սիրոյ հոգւոյն զէնամն զայն հանգուցա-
նէր։ Ալչուան Թուեսցի և Փաբրիկիոս որ զպարապոյ ժա-
մանակն՝ ի ծառայութենէ պետութեան՝ ի հերկագոր-
ծութիւն անդոյն նուիրեր, որ որպէս ընդ Պիւռոսի
նոյնպէս և ընդ մեծութեանց մտէր պատերազմ, որ առ
հրով վառարանին իւրոյ նստեալ ընթերը արմտաւորն
և բանջարօք զորս ի մաքրագործեալ անդոյն յաղթա-
կան ձեռօքն քաղեր ծերունին։ Այնժէ երջանիկ և
երէց ձկամբք օտար ծովախանց և տարաշխարհիկ
որսովք հաւուց զորովայն իւր խնդուէր. եթէ վերին և
ստորին ծովուցն ժժմակօք գյաղիրացեալ ստամոքսոյն
գրգռեր զթուլութիւն. եթէ շար ի շար մրգոյն կար-
գօք զարդարեր շուրջանակի գնշաւխարհիկ որսս յաղթ
երէց բազմապատիկ վտանգօք կենաց որսորդացն որ-
սացելոց։ Ալչուան Համարեացի և Հռուտիլիոս՝ զի որք
դատապարտելոյնն գնա՝ ամենապարտք նշանակեացն
ընդ դարս համարէն. զի անվրդով սրտիւ յանձն էառ
՝ի հայրենեացն զրկիլ քան ՝ի փառաց աքսորանացն, որ
միայն իշխեաց չանսալ իշխանապետին Այուգոյէ, և կո-
չեցեալ յաքսորանացն ոչ միայն չդարձաւ այսրէն, այլ
հեռագոյն և փախեաւ։ “Ալտոլ տեսցեն, ասէ, որք ՝ի
պատրանս մեծի բարեբախտութեանց քոց ըմբռնեալ
կան ՝ի Հռոմ, տեսցեն զարեան Ջատպղինն ՝ի հրապա-
րակիցն, և ՝ի վերայ Այերուլեան լերինն՝ ուր մերկա-
ցեալ և խոպոպին տարագրեալքն առ ՝ի քէն՝ զդլուխս
աւազանեայն, տեսցեն զխուճաս սատակացն սիւիւռ ընդ
քաղաքն յարձակեալ և զգազմութիւն հազարաւորաց
Հռոմայեցւոց ՝ի միում վայրի սրախողխող ընդդէմ
ուխտին խոստմանց մանաւանդ թէ նոցին իսկ նենգա-
ւոր ուխտիցն պատրանօք. զայդ ամենայն տեսցեն որք
չկարենն զաքսորանս յանձն առնուլ։” Լա զինչ, միթէ
երջանիկն է Այուգա, զի յիջանէ ընդառ յատեանն սուսերը
յառաջընթացք բանան նմա անցս. զի զգլուխ իշխան-
ապանց ժուժէ գնեալ ՝ի նշանակ ամբոխին և զգինս սպա-
նութեանց ըստ իւրաքանչիւր սահմին հրամայէ գանձա-
պետին Տատուցանել և արձանագրել ՝ի մատեանս յի-
շատակաց. և զայս ամենայն առնէ նա ինքն՝ որ զՅուս-
նելեան օրէնսն սահմանեաց։

Լկեսցուք ի Հռեգուղոս. վինչ չար արար նմա բախան ձախողակ, կացուցեալ զնա օրինակ չքեղ հաւատարիմ ուխտապահութեան և համբերութեան։ Թէեւ ապրասուրք խոցոտէն զնա, և յոր կողմն զպարտասեալ մարմինն շրջէ՝ վէրս գտանէ. տքնի անընդհատ և ոչ փակին երբեք արտևանունք նորա. ըստ տանջանացն առաւելութեան մեծ եղեցին և փառք նորա։ Կամիցիս գիտել զի այսպանոյ գնեալ զառաքինութիւն և ոչ ստջացաւ երբեք. ասէ, գարձո զնա ի կեանս և առաքեա միւսանգամ առ ծերակոյտն, և զնոյն տացէ պատգամն բանի։ Մինչ երջանկագոյն համարիցիս դու զԱՌեկենաս, որ տանջեալ ի սիրոյ և ընդ հանապազորդեան արհամարհանս գժուարաբարդ կնոջն Թափծեալ անխիթար՝ ի մեղմասաւ ներդաչնակ երգոց հնչեցելոց ի բացուստ հրաւիրեր զքոյն։ Վակայն Թէպէտ և անապակաւ զմիեսցի, Թէպէտ և ի կարկաչանս ջուրց և ի բիւրազգի զրգռանս զանձկութիւն սրբոյն սիրելի հնարեսցի՝ ոչ նուազ ինչ հակեսցէ տքնութեամբ ի փետրալից անկողինսն քան զՀռեգուղոս ի խաչին։ Բայց Հռեգուղեայ ի սփոփանս էր վանն ուղղութեան համբերել դժդեղակաց, և ի տանջանսն անդ ի պատճառս համբերութեանն վերանկել։ Իսկ զա՝ զծիւրեալն ի զրգռանս և զվաստակեալն ի յաջողութեանց առաւել քան զկիրսն, կրկին պատճառք տանջէին։ Վարդկայինս բնութիւն ոչ ցայն վայր գերեցաւ յախտից՝ մինչև երկբայել զի ի կացուցանել հրամանաց Ձակատագրին զայր իւրաքանչիւր տէր ընտրոյն, յորմէ զոյն այնք կէն որք ցանկային ծնանել Հռեգուղոս քան Թէ Վեկենաս։ Իսկ Թէ գոյի աք որ իշխեսցէ ասել, Թէ ինձ ցանկալի է գոլ Վեկենաս և ոչ Հռեգուղոս, այնպիսումն՝ Թէպէտ և չասասցէ իսկ ինքն՝ սակայն ցանկալի իցէ անշուշտ Ցերենտիա ծնանել[1]։

Մինչ Թշուառ Թուեսցի քեզ Վակրատ որ զբաժանին խառնեալ նմա յայտնապէս՝ արբ և քաջեաց իբրև զդեղ անմահութեան, և մինչև ցմահ Ձառեաց զմահ Տուանէ։ Օ ինչ ինաս եղև նմա զի պատեցաւ արիւն

1 Ցերենտիա էր կին Մեկենեսայ, որով զինաթափոյն լինել այնպէսումն կամի ցուցանել մատենագիրն։

նորա, և ցուրտ յերակունեան սողոսկեալ կապեցան տա-
կաւ։ Որչափ առաւել նահանձելի է Մովրատ քան զայ-
նոսիկ որք գոհար բաժակաւ ըմպէն և որոց պատանին
ցոփ և իգայեալ ամենապատրաստ կայ՝ ձիւնալիր՝ զոսկի
բաժակին խոնարհելով նոցա յարբուն։ Այսքա զոր արբե-
նան վերբերեին անդրէն նոցունակալի ժայթքմամբ զգաս-
նուէիւն մաղձին խլեակաց ծաւքելով. իսկ Մովրատ
մնադիւր և զուարթագին զթոյնն ըմպէ։

Ա ան կատուին շատ իսկ ասացաք յատաջագոյն, և
երջանկութիւն նորա մեծ խոստովանեալ է յամենե-
ցունց. և սակայն էիցս զնաւթիւն ահաւոր հարուածոց
կարգեաց գնա նշաւակ. "Խուռն է, ասէ, ընդ նշաւակ-
թիւն հզօրաց. բայց կատուին ընդ Պամպէի, ընդ Կեսա-
րու և ընդ Աքասոսի ոգորեացի միանգամայն։ Վատն է
վատթարագունից գոլ յեռագաս, կատուին անարգեացի
և քան զԱ ատենիոս։ Վժգարկն է՝ի քաղաքական
պատերազմինս լինել միջամուխ։ կատուին ընդ աշխարհ
համարէն վասն արդարութեան տացե պատերազմ՝ի
ձախողակս անընկճելի արիացեալ առաւել։ Վժգոգակ
է ձեռն անձին առնել, երթալ գնւրոլի, կատուին եր-
թիցէ։ Լաւ որ օգուտ չայդցանէ. այն զի գիտացեն ա-
մենեքեան թէ չէն չարիք որոց արժանի համարեցայ
ես զկատուն։"։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Լամպաձ է և ծանծաղամիտ մարդկան չայնոցու-
թեամբք ձոխանալ։ Իակ զաղէտս և զարհաւիրս մահ-
կանացուաց ընկնել ընդ լծով՝ առն մեծի է սեփական։
Որ ցանկայ չաւելորժ երջանկութեամբ և անխոռով սրտիւ
անցուցանել զաւուրս իւր՝ի բարութեան, մնասցէ ևեթ
Հանապէ զաշխարհ։ Այնծ ոմն ես, այլ ուստի գիտացիցէ
զայն թէ չտայ քեզ բախտն պատեհ Հանդէս առնելոյ
զօրութեանդ։ Ինչեր յողմնիախառն ասպարէզ, բայց

1 Քանզի՝ի բաժակ գինւոյն՝ ձիւն կամ սառն՝ի զովացուցանել ար-
կանէին նախնիք, որպէս և ցարդ զբեաց սովորութիւնն։

չգտաւ որ քեզ անդ ախոյան. քո է պատկին այլ ոչ և յաղթութիւն։ Ի՞նձարեցից զքեզ ոչ որպէս քաջ նահատակ, այլ որպէս պատուեալ փառօք Հանդոյն իմն թէ բդեշխութեան կամ դատաւորութեան հասեալ էր քո։ Զնոյն է ինձ ասել և առ այլ բարի որում դէպք դժուարինք չետուն երբէք պատերազմ զզօրութիւն Հոգւոյն։ “Զշուառ համարիմ զքեզ զի ոչ երբէք թշուառացար. յաճենայն ի կեանս քո ոչ ինչ եկաց քեզ դիմամարտ. ոչ ոք գիտաց զկորով զօրութեան քո և ոչ դու ինքն գլխովին. զի փորձոյ պէտք են ի Հանապազ ել զանձն։ Զոր ինչ ոք իցէ բաւական՝ փորձն ուսուցէ ,,։

Զոր աղագաւ եղեն ոմանք ոչք ինքնակամ՝ ի ինդիր երթին խոնարհելոյն ի նոցանէ չարեաց, և ի խաւարի ծածկեալ առաքինութեանն իւրեանց խնդրելոցին պատերազմ ի լուսափայլութիւն։ Զդիք դիւցազնից խնդան ընդ ձախողակս որպէս զօրականք քաջք ընդ պատերազմին։ Զաւուրս կայիսէի կեսարու զուրբանն ի սուրբ սերտմարտկաց լուայ զարտուղ զի ասէր ընդ նուաղել մրցանակացն դժուարելով. “Ո՛վ, որպիսի պատուական ժամանակք կղզնէին ,,։ Զբիութիւն ցանկալի վտանգաց, և ոչ չայն խորհի զոր կրէն՝ այլ չոր ինչ դէտ ակն ունի, քանզի և զոր կրէն՝ ի փառս իւր Հանապէ։ Ի վերս իւր պարծի զօրական մարտիկ, և ցուցանէ ի դէպ ժամուն զարիւն իւր հեղեալ, և թէպէտ Հանդոյն նմին իցէն մարտուցեալ և ողջանդաքեր դարձեալք ի մարտէն, բայց վերաւորեցելոյն չահախեճն փառք։ Զացի և դարձեալ ասացից, զորս կամի Զուտաձ չառաքադէմ զարգացուցանել չառաքինութեանն՝ չօգուտ նոցա և ի փառս տայ պատերազմ և պատճառս Հանդիսից քաջութեան որ ի դժուարինս և ի ներչհաս կամս Հարկ է թէ երևեսցին։ Ո՞ղեկալսն ի մրրիկ և զզօրականն ի Հակառակ ծանիցես։ Հաստ կարիցեմ Հանապէ սրբափ իցէ քո արիութիւն ի տուկ աղքատութեան եթէ չդիմացեալ ես ի մեծութիւնս. ուստի զՀամերութիւն քո նախատանաց և չարահամբաւ լինել և առելութեան ամբոխին՝ եթէ ի ծափաձայն գովութիւնս ծերանաս և բնաւորապէս ինն պատուեալ մեծարիս չանենգնցես։ Հաստ կարացից գիտել զի անվրդով սրտիւ կորստեան որդւոցդ տարցիս՝ եթէ զորս

ծնաւն և մնալեր չուրջ զքեզ ունիս . լուայ զոր ՚ի մխի-
թարութիւն այլոց խօսեիր , այլ զի և զանձն քո կարող
ես մխիթարել՝ յայնժամ գիտացից յորժամ զգաս քո
սանձահարեալս : ՚Ի ո՞ր աղաչեմ , մի՛ երկնչիլիք յայնա-
նէ՝ զորս որպէս խոնաւս ոգւոց ՚ի վար արկանէն զիք .
վիշաք և աղէտք մտրակք են առաքեալք եաս : Ա՛կա-
պէս թշուառ այնոքիկ են՝ զոք անչափութեամբ բարեաց
ընդարմացեալք՝ որպէս յանշարժութեան ծովու ան-
կեալ դիպին յանգործ հանդարտութեան : ՚Ի վէնայն ար-
կածք՝ նոքք թուին նոցա և անսովորք . և զանխորձս
առաւել տանջին զժնդակք . ծանր է լուծ պարանոցի
երէից : Երկիւղ վիրաց ահաբեկի զօրական համբակ ,
՚ի չնալոցին արեան իւրոյ ակնարկել անվեհեր մարտիկ
հինաւուրց , յուշ ածեալ զի հեղմամբ արեան կալաւ
յաձախ զյաղթութիւն : Ա՛յսպէս ահա Յ՚ստուած
զընտրեալս իւր զսիրելիս փորձէ , մարզէ և սրատասդէ .
իսկ որոց նեբէլն թուի և խնայել՝ զդիրգսն՝ հանդերձե-
լոց չարեաց պատրաստեալ պահէ : Խաբիչ եմ կար-
ծիցէք զոք ազատ ՚ի չարեաց . և և բազմաժամանակեայ
երջանկացելոյնն մնան իւր և բաժին զոր ընկալցի ՚ի
ժամանակի իւրում : Ա՛զատութիւնն կարծեցեալ յա-
պաղումն և եմ է , — Ո՞զդէր զգաս ՚ի մարդկանէ ծանր
սխտակրութեամբ և բազմադիմ վշտօք խաշտանիկ Յ՚ս-
տուած : — Ո՞զդէր ՚ի բանակս զօրաց քաջագունից հրա-
մայեն արուեստիւնք բազմալամանգք : Եթէ զիշերախառն
դաւով յարձակիլզ պէտք իցեն ՚ի թշնամիս , եմէ
լրտեսել զնմանապարտս և կամ վանել ուստեք զզաչ-
նակս , զընտիրս ՚ի քաջաց առաքել զօրավարն . և ոչ օր ՚ի
նոցանէ ասիցէ երբեք թէ “ Ո՞չերաւեցաւ առ իս սպա-
րապետն ,, . այլ զի “ Ո՛ւաջապէս խորհեցաւ ,, : Օ՛նոյն
սասացեն և նոքա որոց ծանուցին հրամայիչն և ազեւտա-
լքեն թուեցեալք վատաց և անարեաց . “ Ո՛րժանիք է-
րևեցաք Յ՚ստուծոյ հանդէս առնելոյ ՚ի մեզ զօրութեան
մարդկայնոյ բնութեանս՝ թէ զրչափ ինչ կարող իցէ
տանիլ ,, :

Փախերուք ՚ի զրգանաց , փախերուք ՚ի մեղկացուցիչ
բարեբախտութենէ որով Թուլացեալք և որպէս յա-
էրժական արբեցութեամբ Թմբելք ընդարմանան
ոգիք՝ եթէ ոչ ՚ի վերայ հասցեն դէպք ազդարարք տես-

լութեան մարդկայնոյ բնութեանս։ Զոր յամենայն օդոյ փչանէ պատսպարէն փեղկիք թափանցիկք ի լուսաճաւոյն, որոց ոտք ջերմութեամբ փոխանակեալ բարձիւրոյն եղկտան, զորոյ գնաշարանն ջերմացանէ հոգւոյ ի ներքուստ և ընդ դրսումս ածեալ չուրջանակի, այնպիսին ի դոյզն շարժմանէ օդոյ վտանգեսցի։ Յամենայն ծայրայեղ անչափութեանց բազմատանդ է փափկութեանցն անչափութիւն որ խանգարէ զուղիղն, ընու զմիտն ի պատկերս մնոտիս և մառախուղ թանձր անջրպետ ընդ մէջ արկանէ, Չմարտութեան և ստութեան։ Ոչ ապաքէն լաւ ևս իցէ կալ հանապազ ի թշուառութեան որ յառաքինութիւն անդր առաջնորդէ, քան մեծատան բարութեանցն անչափութեամբ պարպատիլ։ Հեշտագոյն է մահ որ ի պահոյն պնդութենէ, իսկ որ ի տհալ կերակրոյն՝ դժնդակ է։

Ոչնդ արս բարիս այնու օրինակաւ վարի Ըստուած՝ որպէս վարժապետ ընդ աշակերտս իւր. զի յորս միծայցայն է՝ առաւելագոյն ինոցանէ պահանջէ վաստակս։ Ոչ ևթէ հանարիցիս եթէ ակնդետմունդիւք ստեղծողբ իցեն զանակաց իւրեանց, զի ի փորձ արութեան նոցա ի հարուածս գանից մատուցանեն զնոսա հրապարակաւ։ և առընթեր կացեալ յորդորէն զնոսա՝ արիաբար տանել հարուածոցն խարազանից և զպատառոտեալն մարմնով զկիսամեռս աղաչէն ժուժկալել և վերս ի վերոյ վիրաց ընդունել։ Զինչ զարմանք եթէ և Ըստուած խստիւ հրահանգէ զառաքինեացն ոգիս։ Ոչ թէեթէ ինչ է և հեշտին ուսումն առաքինութեան։ Ըստուածգէ զմեզ բանսն և կեղեքէ՝ ժուժկալեսցուք. մրցանք էն և ոչ եթէ անդրանութեան ցոյցք. որչափ յաձախ մրցիցիմք՝ այնչափ առաւել արիագոյնք իցեմք։ Յորոյզագոյն է մանն մարթիոյ որ յաձախ վարի ի գործ։ Ոչնձնատուր լիցուք ի կամ բանսին զի նուաւ ընդդէմ նորա լիցուք այնդակազմք և հաւասարազօրք իսկ տակաւ։ Որ ստէպ դիմագրաւէ վտանգաց՝ ուսանի արհամարհել զնոքօք։ Ըյաձախ և նաւաստեացն բրտանայ մարմին ի ծովս, հողագործացն փապարին ձեռք և զօրակառոյց պնդին ջիլք ի կորովի նետաձգութենէն և սուրհանդակաց երագաշարժ են անդամք։ Զոր ինչ և մարզիցի ոք՝ յայնմ առաւել պնդակազմ է։ Ոաղում համերեւ-

Թեամբ ժամանեսցի հոգին յարքհամարհութիւն բրնութեան չարեաց։ Եւ թէ գիտել կամիցիս արչափ մեծ իցէ համբերութեանն զօրութիւն՝ հայեաց յաղգս մերկս և անհնչս, և տես թէ որպէս օգտին աշխատութեամբ, և չքաւորութեամբն յաւելուն ի զօրութիւն։ Հայեաց յաղինս ամենայն առ որս ոչ ընդ հռովմէացկան խաղաղաւէտ պետութեամբն էին, ի վերանացին ասեմ և յորս միանգամ շուրջ գնացեալ թափառականք էին ազգք. ընդ տխուր երկինիւք ձմեռն յաւերժական տագնապէ զնոսա՝ յանբեր երկրի որ դառն աշխատութեամբ ընձեռէ, նոցա զդոյզն պարէն ի մնունդ։ Յօղնութիւք և տերևովք պատսպարին յանձրևոյ, և ի վերայ սալայատակ սառուցեալ ձիոյ կայտառն և որսովք երեսց պարենաւորին։ Հոգևելիք անձինք թռչնոցին քեզ արդեօք. բայց չէն։ Մոլորութիւնն փոխի ի բնութիւն, և որ ի հարկէն կալաւ սկիզբն՝ դառնայ տակաւ ի հեշտութիւն։ Ել նոցա տուն բնակութեան և ոչ հանգրուան՝ բայց զոր աւուրն վաստակ պատրաստէ նոցա հանգոյց առօրեայ։ Ի աստակօք ձեռաց զաղբատին պարէնն հայթհայթեն, անվերարկու և անպատսպար մնալովք դժնդակութեան օդոյ կան նշանակք, և այնքանով բազմութեան ազգաց այս պայման է կենաց որ յաղէտս քեզ համարի։ Օ՜ի զարմանաս ապա զի ցնցմամբ և տատանմամբ ամրասնդին աղք բարիք. ծառ թէ ոչ ատեպ բաղխիցի ի հողմոց ոչ սնդի. զի որով տատանին՝ նովին արմատս ի խոր արձակեալ կայիցին։ Օ տպիաղ փուն են որ ի ծմակին ծործորան ածէն ծառ։ Ի ծապաս ուրեմն օգտ արանց բարեաց յերկիւղալիս գերբիլ յանձս զի կարասցեն կեալ աներկիւղք և անսասանք, և անդորը սրտիւ տանել այնմ ամենայնի որք չեն չարիք՝ բայց որոց չարեաւն կրկնեն։

ԴԱՆԻԷԼ ՀԱՆԴԵՐՁՈՐԴ

{ՅԱՒԵԼ արդ և զայն զի և Հաստարակաց օգուտ պահանջէ լաւաց ամենեցունն կազմ կալ, և զի այսպէս առաջի՝ սպառազէն նահատակել՝ի գործ։ Քան առաջադրութիւն է Քրտուածոյ՝ որ և առն խնամատոյ, ցուցանել՝ զի որ ինչ միանգամ ցանկալի կայցէ ոմանից, և որ ինչ ահաւոր, ոչ բարիք են և ոչ չարիք։ Իսկ արդ բաներիք թուելին թէ բարեաց և եթէ հնարէր զայնս, և չարիք՝ թէ չարաց և եթէ աճէր՝ի վերայ։ Ընդհատարար համարիլ կուրութիւն եթէ նոցա միայն վտանգելին ահ որոյ արժանի էր զայն բրելոյ. վասն որոյ կուրացոյն և Պետրոս և Պետեղոս՝։ Նոքուրթիւնք ընդդէմ չեն բաներիք. վասն որոյ Նոխասոյն և Յղեոս ցոփակեաց, որպէս զի գիտասցեն մարդիկ զի և՝ի տաճարս նուիրին ինչք և՝ի բազմոցս։ Զամարթեր Քրտուածոյ լաւագոյն և՝ս նշանակել զանարգութիւն ցանկալեացն մարդկան, որպէս յորժամ բարձեալ զայնս՝ի բարեաց ընձեռեր չարաց։

Կայց չեն իրաւունք առն բարւոյ տուայտիլ՝ի ցաւս, ՝ի վերառնութիւնս և՝ի կապանս. իսկ չարաց քաջառողջ մարմնով՝ի գրգռանս և՝ի զբօսանս վայելել համարձակ։ — Իսկ զնարդ. ոչ անիրաւ իցէ և բաց զչն առնուլ զանձամբ, զդիւրս ողջոյն տքնել՝ի բանակի և պատաստել վիրաք՝ի պահ պատնչացն կալ. մինչ վատքըն ցանկասէրքը և հեշտութեան անձնատուրք անդրդրդ անհնարին անութեամբ վայելեն՝ի քաղաքի։ Իւ դար-

1 Ապոլիոս Կղոդիոս մականուանեալն Կոյր եկաց առ Ժամանակաւք Պիւռոսի՝ այր մեծահանճար և նախանձախնդիր փառաց Հռովմայ. որ՝ի ծերութեանն կուրացեալ՝ պատգարակաւ ածաւ՝ի ծերակոյն և չեթող՝ի խորհրդեան առնել հաշտութիւն ընդ Պիւռոսի։

Իսկ Մեսեղոս այր կրօնասէր քրմապետ մեծ կացեալ՝ի Հռովմ՝ ՝ի հրաւիրացան յորում ծախեցաւ և տաճար դիցն Վեստայ, ՝ի Թագուլ զամենայն Վեստեան կուսանաց և փախստեամբ ապրեցուցանել զանձինս, սա ինքն Մեսեղոս անմէկնելի արուեստիւք միջամուխ անցեալ ընդ բոց եռուտ՝ի տաճարն և Թախեաց՝ի հրոյն զդեան և զսրբութիւնեան։ Բայց՝ի մեծի վտանգին կորոյս զայնն և կուրացաւ և մի՝ի բազկաց նորա խանձոզեցաւ կիսայրեաց։

ձեռ՝ ոչ անիրաւ իցէ ազնուագոհացն սրբասէր կուսա-
նաց գիշերայարոյց լինել ի սուրբ պաշտամունս, իսկ
պղծոցն խոր ի քուն յօրանալ։

Այսքան և ընդերք կան ի պաշտաման։ Այսպանին՝
բազում այն է՝ զի զտիւն ողջոյն յերկարել ի խորհր-
դեան, մինչ յետինն ի սինդերայց Ձեմի պարապոդդ ի
զբօսանս, կամ շուայտի ի կապելայս և կամ ի խաղս
կրկիսաց վատնել զժամանակն։ Այդոյն իրք պատահէն ա-
մենևին և ի մեծի յայսմ տիեզերական տերութեան.
լաքն ի մարդկանէ աչխատին, ծախեն և ծախին և այն
մտաղիւրութեամբ. ոչ որպէս ընդ քարշ բերեալք ի
բախանէն, այլ հետամտութեամբ այնմ և զուգընթացք, նա՝
և յառաջընթացք իսկ՝ թէ նախաձեռնեցեալք լինէին։ Այ-
զայս իսկ արիական բարբառ գքաջն առնն Աւետարեայ
յիշեմ դարձեալ զի ասաց. «Օ այս ևեթ մարթ է ինձ
բողոք ունել զձէնդ, ով անմահ աստուածք, զի ոչ վա-
զագոյն ազդեցեք ինձ զկամս ձեր զի կանխեալ գայի յա-
սոսիկ յորս Հասեալ կամ արդ կոչեցեալ։ Օ որդիս իմ
խնդրելք յինէն. ձեզ ծնայ զնօսա։ Օ մանո՛ւկ իմ կամիք
զնարինայս. ընկալարուք զոր կամիք. ոչ մեծ ինչ տուր-
քըս էն, Հուպ ընդ Հուպ և զօրօքն իսկ Թողից։
Օ կեա՛ն իմ խնդրելք. և զիմդրէ գանդագելեցայց Հա-
տուցանել զոր ընկալայն. տամ զայն մնագիւր. այլ յան-
կալի էր ինձ ընծայել քան Թէ Հատուցանել։ Օ որ առ-
նուլ ձեզ մարթ էր ընդէր խլիցէք. բայց և արդ իսկ ոչ
խլէք. զի ոչ ոք խլէ ինչ բայց յորոց չտանի։ Այս բունի
և ոչ առ Հարկի կրեմ ինչ, այլ ի Հատանութեանէ մտայ
Հպատակեմ Այատուծոյ։ Այս այնչափ առաւել որչափ զի
գիտեմ Թէ ըստ յաւիտենից անցելոյն սահմանեալ օրի-
նայ պատահէ ամենայն։ Այրանքաք յաւիտենականաք ա-
ռաջորդեն մեզ. և զչափ ժամանակի կենայ իւրաքան-
չիւր՝ ծննդեանն սահմանեալ օր։ Օ միմանց ունին պատ-
ճառք և երկայնադիպ իմն կարգ գործոյ առեալ բերել
զառանձնականան ամենայն և զհատարակայն։ Այմին իրի
պարտ է մեզ արիաբար տանել ամենայնի. զի ոչ ևեթ՝
որպէս կարծեցեքն՝ գհզօր պատահէն, այլ ըստ սահմանե-
լոյն զան։ Այանիրաւ յոյժ սահմանեալ է յոր ինչ խնդոյ-
կան և յոր ինչ լացցես. և Թէպէտ իւրաքանչիւր ու-
րուք կեանք մեծագոյս զանազանեալ Թուիցին յիրերաց՝

բայց ՚ի նոյն միաբանին առ հասարակ . կոպտակամբ ընկալաք կոպտակամս : Օ թագս զայրասոյզ և տրտմեալ ջեմք . ՚ի սոյն խակ կարգեցաք : Ասող վարեսցի բնութիւն իւրովքն որպէս և կամի , և մեք խնդամիտ արիութեամբ անծոյլք զմնասս զձեզ ոչ մեր ինչ է որ կորնչին : Օ ինչ գոյծ իցէ առն բարւոյ բայց հպատակել հրամանաց հակառակողին : Ի խիթարութիւն մեծ է անցաւորակից գոլ ընդ աշխարհի : Ոչախիսի ինչ և օրինքն իցեն որ հրամայեն մեզ կեալ և մեռանիլ այսպէս՝ նոյն և զդիան անհրաժեշտ հարկաւ կապել ունին : Նոսանք իմն անհանգիստք զաստուածայինն և զմարգկայինս հանդուգնանայն առեալ վարեն : Այս ինքն ամենայնի հաստիչ և ուղղիչ որ գրեալ գրեաց զհրամանս հակառակողին , անապ այնոցիկ . և որ հրամայեացն միանգամ՝ հպատակի միշտ :

Բայց ընդէր այդպէս անիրաւ զաչշեան արար Ի-ուուան՝ զաղքատութիւն , զվէրս , և զդառնակսկիծ մանկունս բաժին կարգեալ արանց բարեաց :—Ձարատարին ոչ է մարթի փոխել զնիւթն որ կրողն է : Յաւէլ՝ զի են ինչ ինչ անմեկնին կցորդելոք իրերաց և ոչ բաժանին : Ասոյլ և քնեաց միաբ , կամ որոց արիութիւնն ոչ ինչ ընդհատ է ՚ի քնոյ՝ յանարգացն յօդին ՚ի տարերսոյ . իսկ յարատարութիւն առն մեծի որպէս արժանին է՝ հզօրագոյն հակառակողի պէտք են : Ել իցէ նման երբեք ընդ հարթին ընթանալ ձիասպարէզ , այլ ՚ի վեր և ՚ի վայր , ծփեսցի ալեկոծ և ՚ի մրրկի զեկավարեսցէ և ընդդէմ հակառակաշունչ բախտին ընթասցի : Յողովք դիպեսցին նման խոչք և խութք և ապառաժք գժուարչինք զորս հարկ իցէ նման հարթել և ուղղել : Նոր փորձէ զոսկի և թշուառութիւն զարս առաքինիս : Ցես յոր բարձրութիւն պարտ է վերբերս առնել առաքինութեան , և զիտացես զի ոչ ընդ անքոյնն ունի գնալ հանապարհ [1] :

1 Յովհեայ Ա.լեքսանդրեացւոյ գրոցն են յետագայ տողքն (գլուխ ը . աս . 63) ուր Արեգակն խրատէ զորդի իւր զվայելուն՝ որ ինքն զօրակիւս կառն ցանկայր վարել ընդ գժուարին և ընդ բազմավտանգ ուղին . զոր յորինակ բանիցն իւրոց առեալ յարմարէ Աւետիս ՚ի ցուցանել թէ որպէս ՚ի բարձունս վերանիլ առաքինութեան և ընդ որ ուղի գժուարին առաջի կայ նման ընթանալ :

Վրժուարակոխ ընդ զառ ի վեր և Ճանապարհն առաջին,
Ընդ որ այգուն այգուն առայգ ի յոյժ նըժոյգըն Ձրգնին։
Ի միջակին յերկինէ կըշիռ կայ վերատեարձ ի կատար,
Լուտի յաձախ զաչս ի ցամաքն արկեալ ։ի ծով ի խոնարհ,
Ինձ իսկ տեսիլն և ահարկու, և սիրտս ի դող կայ յերեր.
Ո էրջ զառ ի Թափ ուղւոյն խընդրել վարիչ ըզգոյշ անվեհեր։
Ընդ ի ծաւալ վերանըստեալ ջուրց ընդունել զիս Տէթիս՝
Կայ սրատեսունդ մի գահավիժ Թէ հոսեցայց ընդ ալիս։

Օ այս իբրև լուաւ քաջայանդուգն պատանին,
Ձանեալ եմասէ՝ ընդ Ճանապարհդ, ելից ի կառադ։
Ո՞ւեծ է ինձ երթալ ընդ այն Թէ և անկանել Հատաւնիցէ։ Ցաւելու երկեղուկս արկանել ի սիրտ քաջազինն ։

Ով և կըշիռ կացիս զուղին յո դէմն եդեր անսայթաք,
Ո՞այց քեզ Ցրլուն կան Հանդիպոյց վազել զնոքօք գոռ վըիժակք,
Ու Ձմեռեանն [2] ընդ լայտալիտ, սեգ Ընիւծուն ընդ բերան։

Ի լուր այսոցիկ “Ձեա, ասէ, զկառադ. որովք Համարիտ ինձ ահ արկանել՝ գրգռիմ մանաւանդ։ Ցանկամ էանել անդր ուր և արեգակն ինքնին ի գողմն կայ ,, ։ Ընարի վատաց է ընդ անբոյսն բերիլ. ի բարձունս վերանձեւ առաքինութիւն։

1 Խա՝ Արեգակն փայտոնի։
2 Եմմեանայ, այսինքն Թեսաղիոյ, որ այսպէս կոչեցաւ ի Լամնէն Եմմն անուն։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՅԱ. ընդէր Թոզու Աստուած՝ բարեաց ընդունել զաբիս։ — Աստուած զայդ ոչ Թոզու. նա՝ զամենայն չար ի բաց տանի ի նոցանէ՝ զանօրէնութիւնս, զապիրատութիւնս, զմիտս չարութեան, և զխորհուրդս ամբարտաւանութեան, զգայացոյց ցանկութիւն հեշտասիրութեան և զաչարձակութիւն ագահութեան։ Տովանի լինի նոցա և պաշտպան։ Այլ միթէ զայդ և ա՛ր պահանջիցէ Յաստուծոյ՝ զկարասին և պահել զանց բարեաց. զայդ Հոգ բարձցեն Յաստուծոյ արհամարհեալ զարտաքինս աներևոյթս։ Վեմկրիտոս զնախութիւնս աներևոյթս ի բաց ընկէց որպէս բեռն համարեալ աւաքինութեան։ Այդ զոր այլ բարի անձամբ անձին Թոզացուցանէ երբեմն, զի զարմանաս զի զնոյն և Յաստուած նմին Թոզացուցէ։ Արդիք կարեկին նոցա. և զինչ այն իցէ երբ և ինքեանք իսկ երբեմն սպանանէն զնոսա։ Տարագրին յաքսորս, և զինչ եթէ և ինքնին երբեմն անդարձ օտարութեամբ մեկնին ի հայրենեաց։ Ի մահ վարին, և զինչ եթէ և զերծուին իսկ երբեմն երբեք։

Ընդէր կրեն ինչ ի դժնդակաց։ — Օ՛ն և այլոց ուսուցչեն կրել. զի յօրինակ ծնան այլոց. առ որս այսպէս իմն գոգցես բարբառիլ Աստուած. «Ո՛վ քրիստոնեայք զինեն զանձն՝ որք սիրեցիք զուղղութիւն։ Օ՛այլ խաբուսիկ բարեօք շուրջ պատեցի և զընդունայնութեան միտս նոցա որպէս չերկար և պատիր երազովք զբօսեցուցի, ոսկւով և արծաթով և փղոսկրեւք զնոսա զարդարեցի. այլ ի նեղըդ անհաս էն ի բարեաց։ Վասն՝ Թուեցեալքն ձեզ երջանիկք, Թէ ոչ վէր ի վերոյ՝ այլ որպիսիք էին ծածկեալ ի նեղըդ ձեզ երևեսցին՝ աղօրմելիք էն, գարշք և յոռիք. Հանգոյն իմն որմոյն իւրեանց բռնելոց արտաքոյ։ Այ՛ նոցայն սեռն և ստոյգ երջանկութիւն. այլ պատրուակ իմն է և պատրաստակ նոցա։ Յորչափ ոտկալ կարիցեն և ըստ ցանկութեան իւրեանց երևեցուցանել զանձինս՝ փայլէն

և խոտղէն զաչս . այլ թէ ինչ մի խոռվարար ի ներքս անկեալ ի բաց առցէ զպատրուանն , յայնժամ որ ինչ ևիցն ի վէր երևեսցին , և որ ընդ մուրացածոյ փայլմամբն քօղասուզեալ կայր ի ներքոյ իսկապէսն գարշելութիւն՝ մերկասցի : Աեծուելիւն այսպիսի ետուս ձեզ Տէրարիս և անանց , յոր որչափ մարթ և շրջչրջելով յամենասուտ հայեսջիք՝ այնչափ չքեզ երևեսցի և գեղափայլ : Լուտս ձեզ արհամարհել զերկիւղալիս , տաղտկալ ի ցանկութեանց : Ողիք ձեր փաղփիւն արտաքոյ , զամենայն մեծութիւնդ ի ներքս ի ձեզ ամբարեցի . և բարութիւն ձեր այն է՝ անկարօտ գոլ բարութեանց :

„ Կայց յոլովք պատահէն տխրակամք , քամնելիք և դժուարակիրք : — Կանգղ էր մարթ վերծ կացուցա նել զձեզ յայդցանէ՝ զոգիս ձեր սպառազինեցի ի դիմակալել այնոցիկ : Տարայք քաջութեամբ և այսու գերազանցիցէք և քան զԱստուած ' . Նա արտաքոյ ի կրից չարեաց կայ , դուք գեր ի վերոյ : Կրհամարհեցէք աղաղաստութիւն . ոչ ոք որպէս ծնանն այնպէս աղքատ կեայ : Կրհամարհեցէք ցյաս . կամ լուծցի կամ լծցիք : Կրհամարհեցէք զբախտ . չետուս նմա զէնս , որովք վէրս ի հոգիս ձեր ազդեսցէ : Կրհամարհեցէք զմահ , որ կամ վախճան և կամ փոխումն ձեզ ածէ : Աեծապէս այնմ իսնամ կալայ զի մի ոք յականայս զձեզ կալցի : Կայ են առաջի ձեր Հանապարհք ելից . եթէ պատերազմել ոչ կարիք՝ խոսել ձեզ մարթ է : Ցայդ իսկ քան զամենայն կարևորսն , որոյ կարօտս զձեզ արարի , դիւրագոյն եդի զմահ : Ի դիւրաւոյ վայրի կացուցի զՀոգի , ունելոյ միշտ գնա պէտք են : Աիտ դիք միայն և տեսանիցէք արչաւի կարճ և յաջողակ Հանապարհ է որ ածէ յաղաւութիւն : Աչ որպէս մարիդ՝ յաղաղումն ընդ մէջ արկի և ելիցդ ի կենաց . ապա թէ ոչ՝ եթէ որպէս ծնանի մարդ՝ այնպէս յամր մեռանիցէ , ընդ խիստ թագաւորութեամբ բախտի ընկղմիցիք Հանայն : Կմեռնայն ուրեք և յամենայն ժամանակի տեսջիք և ուստ հնջիք արչաւի դիւրին է Հրաժեշտ տալ բնութեան և

1 Սոցիկեան մեծաբանութիւն՝ մանաւանդ թէ յիմարաբանութիւն , մարգոյ գերազանցել քան զԱստուած , բայց վայելուչ ի բերան գիւցազուն հեթանոսի , որոյ աստուածք նուաստագոյնք յոյժ են քան զմարդիկ :

զտուբս նորա յերեսս նորա ընկենուլ ։ ի մեծահանդէս պաշտամունս զոհից անդ առ բագնով ուր վասն կենաց ըղերձին մաղթանք , ուսարուք զմահ ։ Օ ուսարակը գերբ և ստուարք դոյզն վիրօք անկանին խոցահար . և զմեծաղօր կենդանիս հարուած մի ձեռին մարդոյ տապալէ . երկաթ փոքրիկ զպարանոցին յօդուած խանգարէ և մարմինն ստուար հողանայ ՚ի գետնի ։ Ալէ ՚ի խորս զուշակէ հոգին և ոչ երկաթոյ պէտք են ՚ի կորզել զնա և ոչ ուժգին և խորամուխ հարուածոց առ ՚ի զփորոտիան հետազօտելոյ . առ ընդհեր կայ մահ ։ Ալէ սահմանեցի զխոցուածոյն տեղւ , ընդ ամենայն կողին բաց են ձանապարհք ։ Ալս նոյն ինքն կոչեցեալն մահ , որոյ հոգին անջատի ՚ի մարմնոյ , այնչափ երագ է՝ զի երագագոյն ինչ քան զնա չկը խտանալ ։ Ալթէ խեղդ զընչափողն պարանէ , եթէ ջուր զշունչն խափանէ , եթէ սալայատակ խիստ զանկեղջին զգլուխս ջաղխէ , եթէ հուր կըլեալ զընչոյն տուրևառ ընդմիջէ՝ որպէս ինչ և իցէ ՚ի քթթել ակն վէմարի ։ Ալս ոչ անմնեջիք զանգիտել յերկար յոտմէ այդպէս երագն վէմարի ,,։

ԴԱՒԿԻՈՍԻ Ա. ՍԱՆԵՑԿԱՅ

ԸՆ ՍԵՐՆՈՍ

Be tranquille the anime

ՅԱՂԱԳՍ ԱՆԴՈՐՐՈՒԹԵԱՆ ՈԳՒՈՅ ։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ի հետազննել, իմամ յանձինս, ամ Աերենէ, ախտը ինչ յայտ յանդիման երևելին անպատուական զորս իբրև ձեռամբ չօշափելի. ինչ ինչ նսեմագոյն և բացագոյն, և ինչ ինչ ոչ հանապազորդ, այլ մերթ ընդ մերթ դարձեալն, որ առաւել դժպհի թուին ինձ՝ ոչ ինչ ընդհատ ի թշնամեաց թափառականաց, քան բերման առթից ի վերայ յարձակելոց. ընդ որս չէ մարթ ոչ այսպէս և ոչ այնպէս վարել, ոչ իբրև յաւուր պատերազմի պատրաստ կալ և ոչ իբրև ի խաղաղութեան աներկեան ծնալ։ Այլ սակայն առաւելապէս զայս ինչ կերս յանձին տեսանեմ, զի զի է ինձ ոչ զձնմանբերան լինել խոստման իբրև բժշկի, իբր զի ոչ անկասկած գանիմ ազատացեալ յորոց երկնչելի և ատելի, և ոչ զարձեալ գերի եղեալ նոցին։ Յայնպիսի կամ վիճակի, որ որպէս ոչ է յեսին չար, նոյնպէս և է գանգատելի և դժպատեհ. ոչ հիւանդ եմ և ոչ առողջ։

1 Գրեաց զայս Ճառ Սենեկա առ բարեկամ իւր իմաստասէր Սերենոս յետ դարձին իւրոյ յաքսորանաց. յորում ժամանակի եմուտ նա առաջին յարքունիս՝ ի վեհել գաստիարակ Ներոնի. յորում և զարքունեացն զգօնու և զզեխուճիւն ճարտար նկարագրէ։ Բայց ի գրչացն Թերունենէ կամ առ Հուլեան ժամանակին բազում ուրեք ընդհատ և խառն ի խուռն Թուի Ճառս։

Լաւ յառիցես, թէ սկզբանէնք առաքինութեանց ամենայնի մատաղք էն, ժամանակաւ ի վերայ գայ նոցա սերտութիւն և զօրութիւն։ Եւ անգիտանամ, զի և այն ինչ իրք՝ որք առ ի ցոյցս երկասիրէն, զիշխանական ասեմ շուք և զհամբաւ պերճախօսութեան, և որ ինչ միանգամ յօտարին հայի ձեռնտուութիւն, հեղգհետ զօրանան։ և որ ինչ իրք ստուգապէս զօրութեան են յարդարիչք և որ ի հաձել սեթևեթիւք ոմանիք բարեբէին՝ ամաց կարօտին, միշտ առ սակաւ սակաւ երկարութիւն ժամանակին գոյն ի վերայ ածիցէ։ այլ ես խրեամ, մի արգելօք սովորութիւն՝ որ տայ իրաց հաստատութիւն, զայս ախոռ՝ հաստատմանս յիս գործիցէ։ Եթէ բարեաց և եթէ չարեաց ընտանութիւնն յերկայ՝ ծնանի զսէր։ Եւդ թէ որպիսի ինչ իցէ այս հիւանդութիւն հոգւոյ՝ որ վարանեալ կայ ընդ միջ երկուց կողմանց, ոչ քաջութեամբ ի լաւ անդր գառնայ և ոչ ի վատթարն նկրտի, անմարթ է ինձ միանգամայն յայտնաբանել, եթէ ոչ ժամն առ ժամն։ ես պատմեցից զիմ անցս, դու անուն գաջիր ախտիս։

Այս յիս անչափ սէր չափաւորութեան, զայս ոչ ուրանամ։ Հաձոյ է ինձ սենեակ ոչ ի ցոյց հպարտութեան յօրինեալ, և ոչ հանդերձ չարկեղայ ի զուարճանեալ, կամ բիւրազգի ծանրոցիւք և ցոլացուցիչ գործեօք արտակայեալ, այլ առանձին և ցածուն և ոչ այնչափ ինչ հոգոյութեամբ պահեալ և կամ ի կիր արկանելի։ Հաձոյ է կերակուր, յոր ոչ վաստակեացին յաձախառուքք և ոչ պէնուցուն։ ոչ բազում առուրքք յառաջ ապսպարեալ և ոչ ձեռամբ բազմոց մատակարարեալ, այլ դիւրապատրաստ և դիւրագիւտ, անմահն ի յաւելուածոց և ի ծանր գնոց, ամենայն ուրեք անապակաւելի ոչ ընչից և ոչ մարմնոյ ծանրացուցիչ՝ զի մի ընդ որ եմուտն՝ ընդ այն էցէ։ Հաձոյ է ծառայ անշուք և ընդոծին անպաձոյձ, արծաթէ ծանր ի չինական չօրէ, առանց իրիք գործուածոյ և առանց առնուն արհեստագործի։ և սեղան ոչ պէսպիսակ խայտիւք նշանաւոր և ոչ ծանուցեալ ընդ քաղաքն ամենայն՝ անցանելով ձեռաց ի ձեռս ականատես տեառնոյ։ այլ յանկաւոր ի պէտս որ՝ ոչ զաւա զօշտեսցէ ուրուք

'ի բազմականաց, և ոչ զսիրտս նոցա վառեսցէ 'ի հա-
մոյնձ։

Լսեմ այս ամենայն քաջահաճոյ եղիցի, նեղել
զոգիս հանդերձանք իմն մանկտուցն զգեցեալ խնամով
առաւել քան զոր 'ի նեղըս 'ի տան, և ոսկեզիպակ ծա-
ոյքս, և գունդ պաշտօնեից չողշողելոց։ Ցուցն ամե-
նայն մինչև ցյատակն կոխելի՝ մեծագին. ձեղունք
ձաձանչաւուխտ, և ժողովուրդ հետևորդ և ընթա-
ցակից հայրենի ժառանգութեանցն վաստեղեաց։
Օ՛ինչ ասացից զակամակիտ ջրոց ցյատակ ջինջ
փայլելոց և շրջահոսելոց զկոշնականօք. զինչ ըզ-
խորակաց՝ իւրեանց տեսարանին արժանեաց։ Ե՞ռըջ
պատճ զինև՝ որ եկեալս եմ 'ի հեռագոյն վայրէ պահե-
ցողութեան, զեղկութիւն մեծապայծառ և յամենայն
կողմանց տարփողէ։ Ո՛չ փոքր մի դեղեւի ձևակատն.
դիւրագոյն և զոգիս քան թէ զաչս 'ի նոյն ամբառ-
նամ։ Այ այսպէս 'ի բաց մեկնիմ՝ ոչ վատթարագոյն
այլ տխրագոյն, և ոչ 'ի մէջ խնդոյս մտոհեաց գնամ
հնդամիտ, և խայթ իմն լսելիք և երկմտութիւն ունի
զիս, միթէ լաւ ևս իցեն արդեօք իրքն. ոչ ինչ յայդ-
ցանէ այլափոխէ զիս, բայց և ոչ թողու անսասան։

Հաճոյ թուի զկետ երթալ խրատուց վարդապե-
տութեան, և միջամուխ լինել լիրս Հասարակաց տե-
ղութեան. հաճոյ թուի զիշխանական պատիւս և զգա-
ւազանս՝ ոչ 'ի հրապոյրս ծիրանեացն կամ ոսկի մա-
կանաց զբառամբ ածել, այլ զի մեծաւորագոյն և դիւրա-
պատրաստ գտայց նոքօք ծառայել և օգտակար լինել
բարեկամաց, մեծատոհմ եւանկեան քաղաքակցաց,
եւս և ամենայն մահկանացուաց։ Օ՛հետ երթամ
Օ՛ենանի, Կղեմանթեայ և Խուիսթպոսի, յորոց
թէեպէտ և ոչ մեծ միջամուխ եղև 'ի պաշտօն տերու-
թեան, բայց և ոչ մեծ հրաժարեցոյց։ Կեր ինչ մի ան-
սովոր թէ բախի ոգորմամբ ընդ ոգոյ, թէ պատահէ
ինչ կամ անարժան (որպիսի շատ ինչ կայ յամենայն
կեանս մարդոյ) կամ դժուարընկալ կամ թէ ընդեն
ինչ իրք բազում ժամանակաց կարօտիցեն, 'ի հան-
դարտութիւն դառնամ, և զոր օրինակ խաչանց՝ թէ-
պէտ և յոգնեալ իցեն՝ երագաբայլ լինի զարձ 'ի տուն,
(նոյնպէս և ինձ) հաճոյ է 'ի մէջ իւրոյն որմոց հրա-
հանգել զկեանս։

Ա՛ի ոք կապատեսցէ և ոչ զմի օր, ուր ՛ի փոխարէն այդմ մեծի տուգանաց ոչ ինչ ունի արժանաւոր հատուցանել. անձամբ յանձն յարեսցի հոգւոյն, անձին պատճառն տարցի, ոչինչ օգտարին գործեցէ և ոչ մի ինչ որ ընդ դատաստանաւ անկցի: Վերելը լեցի անդորրութիւնն անման յառանձնական և ՛ի հասարակաց հոգոց: Ա՛յլ յորժամ ընթերցուած զօրաւոր արիացոյց զոգին, և խթանս վարեցին ՛ի ներքուստ օրինակք ազնուականք, արժան է ընդոստնուլ ՛ի հրապարակ առնէին՝ առ ՛ի փոխ տալ ուժեք զբարբառ, այլեմ զվաստակ, որ թէ և ոչինչ օգտեսցէ, բայց առ օգտել գոն գործեսցէ. և զայլոց ուրուք չարաչար փքացելոց յանդուգնութեամբ ընբերանել յառնէի զանբարտուանութիւն: Ա՛պաքէն՝ որպէս ինձ թուի՝ լաւ և յարմարն անդ նկատող լինել իրաց, և խօսել ՛ի պատճառս նոցին. ապա թէ ոչ՝ զբանս թողացուցանել բանից, զի յի և տանին, անդր անաչխատ ընթացից առնէնաբանութիւնն: Օ ինչ պէտք էն շարագրել զանականս ՛ի դարս: Կամիս արդ առնել զայդ, զի մի լռեցեն զքէն յետնորդք. առ ՛ի մահ ես ծնեալ. սակաւ աշխատութիւն ունի լռելեայն թաղուիս: Ա՛յս ուրեմն առ ՛ի զբաղիլ ժամանակաւ ՛ի քո պէտս և ոչ ՛ի հռչակ հաւ բաւոյ, զրեա ինչ յոմն պարզ. սակաւ աշխատութեան պէտք էն՝ որոց առօրեայ են ջանք: Ա՛յլ դարձեալ ուր միաբ ամբառնան մեծութեամբ խորհրդոյ՝ ամբարտաւանագոյն լինին ՛ի բանս. և բարձրագոյնս կամի հոգին՝ որպէս վերարհնել, նոյնպէս և բարբառել, և ՛ի բարձրութիւն խորհրդոյն վերելակէ չառն. յայնժամ ՛ի մոռացօնս արկեալ իմ զօրէնս և զդատաստան ցածուն, գերաթռիչ խոյանամ և ոչ ևս իմով բերանով: Ա՛յլ զի մի մի առ մի անցից ընդ առնէնայն, յառնէնայն իսս այս հիւանդութիւն բարւոյ մնաց զհետ գայ իմ. և ես խիթամ զի մի նուիրն առ փոքր փոքր վայրաբերիցիմ, կամ որ առաւել զգուշալին է, զի մի հանապազ ՛ի կախ կայցեմ որպէս մերձ յանկանիլ. և գուցէ առաւել ևս է՝ քան զոր ես յանձին տեսանեմ: Վ ան զի յառնէնին իրս ընտանեբար ակնարկեմք, և միշտ վնասք դատանն նպաստաւորութիւնն (այսինքն կուսակցութիւնն), Ինձ այսպէս թուի թէ բազումք կարող

Էին ժամանն լինել յիմաստութիւն եթէ ոչ թուէր նոցա՝ թէ ժամանեալ իցէն. եթէ ոչ քօղասուզիին ինչ ինչ յանձինս, և զնիւթ իւիք զանգանիին այօք բացօք։ Այսան զի մի լցցի քեզ կարծել թէ մեք առաւել կորնչիմք յօտարին մարգահանուածենէ, որչափ յանձնահանուածենէ. ո՞ ոք համարձակեցաւ զնշմարիտն ասել անձին իւրում. ո՞ ոք՝ թէ և լցցէ ի հանդիսի բազմութեան գովեալ և մարդեղուզաց, սակայն բազմօք անձամբ անձին չհաճոյացաւ։ Այդր ազաչեմ, եթէ ունիս ինչ դեղ ի հանդարտել զայս իմ ծփանս, արժան հաւատալոյ ինորհել, զի վասն անդորրութեան ոգւոյս չնորհաւալտ քեզ գտայց. գիտեմ, զի այսօրիկ չէն վտանգաւոր շարժութիւնք սրտի և ոչ խռովայոյզք, այլ զի ձնչգրիտ նահանուածեամբ պարզաբանեցից քեզ զայն՝ զորմէ գանգատեմն, գիտեա զի ոչ ախտածուածեամբ տագնապիմ, այլ սրտխռանուածեամբ։ Այդր ազատեա զիս ի չարէ աստի, որպիսի և իցէ ախտս, ձեռնտու ինձ լինելով որ ցաւագնիսն յանդիման տիեզերաց։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՅՈՒԴՈՒԹԵԱՄԲ ասեմ; Այերինէ, ինդրել ինդրեմ ես յանձին իմում՝ թէ իմ իսիք նմանեցուցանել արժան է ինձ զայս կրթս. և ոչ գտանեմ զայլ օրինակ մեծ ձաւուրագոյն, որպէս զայնոցիկ, որոց յերկար և ի ծանր հիւանդութենէ ազատացեալ՝ տակաւին նեղին յերբեսց դողն շարժութեանց և թեթևացութեանց. և թէ և յայլմէ ամենայնէ զերծք իցեն, բայց ի կասկածանաց անհանգիստ լինին. և յողջութեան անդ գիտեն առ բժիշկս և զամենայն ջերմութենէ մարմնոց իւրեանց գանգատեն։ Այսպիսեացս մարմին, Այերինէ, ոչ եթէ անառողջ է, այլ ոչ այնպէս սովորեալ յառողջութեան. զոր օրինակ է և ծածանուածն ծովու խաղաղելոյ կամ լճի՝ յետ հանդարտելոյ յերեսաց մրրկի։ Այս արգ պէտք են ոչ այնց իստագունից դեղոց, ընդ որս և անցաք, զի երբեմն գիմակալ լինելոյս անձինդ, եր-

բեանն բարկացոյս, երբեմն ծանուցնս բռնադատեացես. այլ այնմ՝ որ վերջինն է ըստ կարգի. իբր զի հատատացես անձին քումմ և աներկբայ իցես Թէ ընդ ուղիղ գնաս Հանապարհ, ոչ իւիք նահանջեալ խոտորնակի շաւղոջ բազմաց՝ որք այսր անդր ընթանան յոլովակի, և ոմանց ոմանց՝ որք մոլորեալ են ի բուն իսկ Հանապարհի:

Լաւ որում ցանկացեալն ես, մեծ ինչ է և գերագոյն և աստուածամերձ. այս է՝ ոչ բախիլ և Հոզմակածիլ: Օ այս Հաստատուն վիճակ ոգւոյ Հելլենք լուծիկ վերածայնեն, այս ինքն վնհանդուրժո՝ զորմէ կայսանծալի մատեան Լեւեկրիտաց: Լա՛ ի մէջ Լաստանտուկիոս կոչեմ, այն է անդորրութիւն. զի չէ Հարկ նմանող լինել և փոխաբերել զգաստն բան նոցուն կերպի. բուն իրն, զորմէ բանն է, անուանիք իւիք է նշանակելն, որ պարտի ունել գյուտական ձայնին զգօրութիւն և ոչ գկերպարան: Լա՛ արդ խնդրելին մեր այս է Թէ գիարդ իցէ Հոգւոյն միշտ միօրինակ գոլ և յայտնելութեաց, Հաշտ ընդ անձին, և ուրախատիս անկարկեացէ յիւրմն. և ոչ ընդհատեացի ուրախութիւնս այս, այլ միասցէ՛ ի վիճակ խաղաղական, ոչ փքասցի երբեմն և ոչ ընկձեսցի: Լա՛յս է ըստ իս Լնդորբութիւն, Լորդ Թէ գիարդ մարթէ է՛ի սոյն Հասանել, խնդրելոցդ ընդ Հանրապէս. առցես զու քեզ՛ ի հասարակաց գեղջ, որպափ և կամիցիս: Լամէ՛ զաման բռնադատ հրապարակել յոլովակ ծանիցէ այլ իւրաքանչիւր գիւր բաժինն. միանգամայն և զու՛ ի միտ առնուցուս Թէ որքան սակաւ իցէ քո աշխատութիւն՛ի տաղտկութենէ անձինդ, քան զանոցիկ՝ որք յարուեստ գեղեցիկ պարապեալք և չքեղ անուամբ Հռիսացեալք, առ ամենայն մանաւանդ քան Թէ՛ ի յօժարութենէ բերին կեղծել զանձինս:

Լմենեքեան ընդ նովին են դատիւ, եԹէ նոքա այք Թեթևաւութեամբն նեղին և ձանձրութեամբ և անդադար փոփոխութեամբ առաջադրելոցն, որոց միշտ առաւել Հաճոյագոյն է այն զոր Թողուն. և եԹէ նոքա որք Հաշին և յօրանջեն: Հաւել և գայնոսիկ որք ոչ ինչ ընդ Հատ՛ի գժուարաքոն եղելոց՝ չորչորքեն զանձինս և այսպէս և այնպէս յարմարեն մինչև յոգնութեամբ Հանդիստ գտանիցեն. այնուհետև յարմա-

բեալ զվիճակ կենաց իւրեանց՝ հուսկ յետոյ յարեա-
նան ի նմին, ըմբռնեալք ոչ յատելութենէ փոխար-
թեանն, այլ առ ծերութեան որ յոյն է առ նորոգու-
թիւն։ Այր թողից և զայնոսիկ որք ոչ եթէ անյող-
դողութեամբ դժուարաշարժ են ի վիճակէ կենաց
իւրեանց, այլ անկարողութեամբ. կեան ոչ օրպէս կալին,
այլ օրպէս և սկսանն։

Այն և այլ անհամար յատկութիւնք, այլ մի արդա-
սիք է ախտին, անհաճոյ լինել անձին։ Այս այս ծա-
գի յանբարեխառնութենէ ոգւոյն և ի կասկածոտ
կամ յանյագուղակ յօժարութեանց. զի ուր չէ նոցա
համաձակելի օրէսքի ցանկանան, կամ ոչ հասանիցեն
ի խնդրելին և ի յոյս անդ բովանդակ կախեալ կան,
հանապազ անհաստատք են և շարժունք. որպէս պա-
տահէ հարկաւ որոց կախին զաղաձանաց իւրեանց։
Յամենայն ի կեանս ի կախ կան և միանգամայն սաղ-
րին և տիպին յանհամեստ և ի դժուարին ցանկու-
թեանց. և երբ ընդունայն լինի աշխատութիւնն՝ տանջէ
զնոսա առնթեն անպտուղ. և ցաւէ նոցա, ոչ զի վատթա-
րաց՝ այլ զի զբաղան եղեն ի խնդիրս։ Յայնժամ պաշարէ
զնոսա և ապաշաւ ընդ սկսեալն և երկիւղ ընդ սկսա-
նելին. և յարամբի ի նեղութ մտանէ տատանումն այն
ոգւոյ՝ վասն չգտանելոյն զերս, վասն զի ոչ հրամայել կա-
րող են ցանկութեանց իւրեանց և ոչ գտանգիտա լի-
նել. և զանգաղութիւն կենաց՝ որ է վիճակ անյաղող
ոգւոյ ընդարմացելոյ ի մէջ բաղձանաց ի գերև ելե-
լոց։ Այնք առհասարակ ծանուցք են որոց առ ատեղծ-
թեան բազմավաստակ անյաղողութեանն ի հանդար-
տութիւն լինին ապաստան և յաստանին ուսմանս, զի ոչ
կարէ տանել այնց անձն կարգեալ առ քաղաքականս և
գործառեր և բնութեամբ անհանդարտ, այսրիւքն է
որոց չէք միխիթարութիւն յանձին. նմին իրի ի պակա-
սիլ զուարճութեանց՝ զորս զգացանքն տան աստանգա-
կանաց, ոչ հանգուրժէ ընդ տուն, ընդ առանձնու-
թիւն և ընդ որմունս. այլ դժկամակութեամբ հայի
յանձն իբրև թողեալ էքեալ յանձին։ Այս յայտնեալ
է տատակութիւնն այն և տհաճութիւն անձին և յու-
զումն ոգւոյ անիսդաղելի, և տխուր դժուարակրութիւն
հանդարտութեան անձին։ Այս կարի յիրաւունս. ուր

ամենի Տամարին զպատճառան խոստովանիլ, և ամենին խորամուխ տանջել, այնուհետև ցանկութիւնք ի նեղ անդ փակեալք առ չունելոյ եւս անձամբ յանձինս հեղ. ձամղձկին։ Այսպանակ՝ Թախծութիւն և հիւծութիւն, և բիւրապատիկ ծուխք անորոշ մտաց, զոր սկսեալքն ի կախ ունին, և անյոյսքն սիրեցուցանեն։ Այսպանակ է կիրքն այն տաղտկացեալքն ի Տանգարտութենէ իբրեւանց և գանգատելոց՝ որպէս Թէ չունիցին ինչ առ առնել, և նախանձ սիրելիմ ընդ բարգաւաճութիւն այլոց։ Ա ան զի մտացիչ է մախանաց հեգ անգործութիւն, և ի ղէձ լինին ընդ կործանումն ամենեցուն. վասն զի ինքեանք չեղեն կարող վերբերել։ Ա յնուհետև ի դժկամակութենէ ատտի ընդ այլոցն յառաջադիմութիւն, և ի յուսահատութենէ զարգացման իւրոց, ծանրացասումն լեալ մարդոյ ընդ բախտն, և ցասուցեալ աշխարհի և ծակամտեալ և ի վիշաս իւր խորամուխ, տաղտկանալ յանձնէ և տաղտապի։ Ա ան զի ոգին մարդոյ գործունեայ է ի բնէ և մեռ ի չարժումն. Տաճոյական է նմա ամենայն ատիճ արծարծելոյ զանձն և զբաղեցուցանելոյ. Տաճոյագոյն եւս անպիտան Տանձարոյ ոչք զբաղանօք մտադիւր ոգորկին։

Օ որ օրինակ կեղք ինչ խղճ լինին վնասակար ձեռին և անարժէն ընդ չշոշափումն, և գարշ խղճալոյ Թից մարմնոյ Տեշտալ Թուին կծողականք. նոյնօրինակ կարծեմ և այսպիսեայ մտաց յորս ցանկութիւնք իբրև չար կեղ Տարակեցան, ի Տեշտութիւն Տանգրեալ զցաւս և զվատտահս։ Ա անզի են և ինչ ինչ ոչք և ըզմարմին մեր ցաւով իւիք Տեշտացուցանեն, որպէս չոչ ջել զանձն և փոխել զձև խանչեալ կողին, և յայլեայլ դիւրս Տոգմանօթիլ։ Ա յսպիսի ոչ է Տոմերականն այն Ա քիղէս՝ մերթ յորացս, մերթ երեսխվայր յայզի ագռի կերպարանս յեզափոխեալ. ոչ սեպհական է Տիւանդի, ոչ իսիք յերկար ժուժել և զփոփոխմանցս ի դեղ Տամարել։ Ա ստի լինի յանձն առնուլ զձափառական վտարանդութիւնս, մերձական չոջիլ ընդ ծովեզերս, և է զի զծով և է զի զցամաք չափել ԹեԹևամտութիւնն դժկամակ միշտ ընդ առաջնկայն վնՏակ։ Ա ոչ ասեմք, ի Ա ամպանիա երԹիցոք, տաղտկացեալ ի փափկասէց՝ յանչէնան, ասեմք, փոխեւ

յոյք · ընդ Իրուտեան և ընդ Հուհանեան անտառս յածեսցուք : Այլ յամայի վայրս անդ ինչ մի զուարճալի մեզ գոցուք , յորում աչք փափկասէրք յերեսաց անչքուլեան ահաւոր վայրացն դիւրասցին : Ի Տարենտոն անցցուք՝ ուր նաւահանգիստն է գովելի և ձմեռն մեղմ, և յամախուխիւն յարկաց բաւական նախնոյ իսկ աւերմունն : Այդ ի քաղաք անդր ի Հռոմ փոխեսցուք զոտս , զի շատ ժամանակ դատարկացան լեռնիք մեր ի ծափաձայն և ի դղրդաձայն շառաչմանց . Հաձոյական է և մարդկայնով արեամբն զուարձանալ : Օ այլ ընդ այլոց փոխանակեմք և տեսարանս ընդ տեսարանաց , որպէս ասէ Հուկրետիոս .

Օ այսօրինակ մարդ անդադար
Յանձնէ փախչի միշտ վայրապար :

Այլ զինչ օգուտ եթէ ոչ լինի անձնասպուր . ինքն զհետ իւր ընթանայ և ստիպէ ընդակից անբերելի : Ասն որպ պարտ է մեզ գիտակ լինել թէ ոչ տեղեաց ինչ մեզ է՝ որով չարչարիմք , այլ մեր : Հիւանդամիտ եմք ի տանել ամենայնի , ոչ աշխատանաց երկար համբերեմք և ոչ գրգանաց · ոչ մերոյն և ոչ իրաց ինչ երբեք : Այս իսկ ցամանս ի մահ խարդաւանեաց , զի զառաջարկեալ իրան ատելս փոխելոյ ի նոյնս անդրէն Հոլովելին , մինչև չծողուլ նորուեան տեղւոյ . սկսաւ տաղտուկ լինել նոցա կեանքն և աշխարհ գլխովին . և բուռն և կատաղի զուարճութեանց զհետ եկին քանն այն Հնել չերբ նոյս :

ԳԼՒԻՒ ԵՐԲՈՐԴ

Այդ խնդրես թէ ընդդէմ այդմ տաղտկութեան զինչ դեղ դարմանոյ լաւ գտաւ լինէն : Լաւ քան զամենայն այն էր , որպէս ասէ Հենոգորաս , ի գործառնութիւնս և յիրս պարապել տերութեան , և ի քաղաքական պատառմունս : Ասն զի զոր օրինակ ոմանք յարեւու և ի կրթանս և ի դարմանս մար-

Միով անցուցանէին զոյն, և ըմբշամարտակաց կարի օգտակար է զՀիղս իւրեանց և զոյժ՝ որում և եթէ զանձինս նուիրեցին, մեծագոյն մասամբ ժամանակի տալ, սոյնպէս և մեզ՝ որոց կամ է պատրաստել զանձինս ի Հիմն մըցանաց քաղաքական իրաց, ի սոյն պատաղիլ գործ ոչ բազմօք գեղեցիկ իցէ առաւել։ Վասզի փոյթ ի մարի եղեալ է պիտանի զանձն ընծայել քաղաքակցաց և մահկանացուաց, միանգամայն և կրնթի և զարգանալ նա որ միջամուխ եղև ի պաշտամունս գործոց, բստ կարի անտեսելով զՀասարակացն և զառանձնականն։ Վասլ քանզի, ասէ, Յայսպիսի անմիտ ամբարտաւանութեան մարդկան և ի մէջ այսչափ զրպարտչաց՝ որ և զուղիղն խեղաթիւրեն, չէ այնչափ անբոյնի պարզմտութիւնն, և միշտ առաւել Հանդերձեալ է լինել դիմադարձութիւն քան յաջողութիւն, ապաքէն լաւ կաս է ի բաց կալ յատենէ և ի Հրապարակէ։ Վասլ ունի մեծանձնն և յառանձին տան արտաքսիլել, և ոչ որպէս առիւծու և այլ կենդանեաց բռնութիւն սանձի ի կաղաղս, սոյնպէս կարծիցես և զմարդիկ, որոց արարուածք առաւել են ի միայնանալ անդ։ Վասց սակայն այնպէս զգեցոյն, զի ուր և Հանդարտեսցի ի Հաքստի, օգտել կամիցի եթէ միամիտ և եթէ բոլորից՝ Հանձարով, բարբառով և խորհրդով։ Վան զի ոչ նա և եթէ օգտէ տերութեան որ զսպիտակագգեստ աշակերտեալս ի դուրս Հանէ և պաշտպանէ յանցաւորաց, և իրաւարար լինի պատերազմի և խաղաղութեան, այլ և որ իսրատիչ լինի մանկութեան, որ յայսչափ կաթսութեան բարեաց դաստիարակաց՝ առաքինութեամբ մարզել զոգիս, որ զառ արծաթսիրութիւն և յանառակութիւն չարձակ չարձակ խաղացեալս բուռն Հարեալ ըմբռնել և չետս նՀանջել, և եթէ ոչինչ այլ ՀայեցՀայեցէ, անչուշտ յառանձնականն զՀասարակաց գործէ գործ։ Վիթէ առաւել արդիւնաշատ իցէ այն որ ի մէջ օտարականաց և քաղաքացոյ՝ կամիցէ քաղաքական կացեալ Հաղարապետ, եկեղեցին առ ինքն զպատասխանականացն ձառեսցէ, քան զայն որ ուսուցանէ թէ զինչ իցէ արդարութիւն, զինչ բարեպաշտութիւն, զինչ Համբերութիւն, զինչ արիութիւն, զինչ մահու արհամարհութիւն, զինչ աս-

տուածածանօթութիւն (կամ՝ ձանաչումն աստուածոց), և թէ քանի քաղաքանոյ բարիք է բարի խոհեմութեան։ Այսպս ուրեմն եթէ փոխես զժամանակդ յուսումնասիրութիւն, զոր կորզեցեր յարտաքին գործոցդ, ոչ լքանես և ոչ թողուս զպաշտօնդ։ Օ՛ի ոչ եթէ նա միայն զինուորի ո՛ի ձակատու կայ և եղջերաւ զաջ և զահեակ պաշտպանէ, այլ և որ զդրունս պահէ՝ ուշ նելով զկայս ոչ այնպէս վտանգաւոր, բայց ոչ և դատարկապորտ. տքնի՛ ի պահպանութիւն, և վերակացու լինի աղխամաղխի. արդ այս սպասաւարկութիւնք թէպէտ և անարիւն են, բայց՛ ի համբրի թուշակառուաց։

Այթէ տացես զանձն քո յուսումնասիրութիւն, անձնասպառ լինիս յանձնային ձանձրութենէ կենաց. ոչ գիշերոյ ցանկանաս առ տաղտկալոյ՛ ի լուսոյ տուրս ջեան, ոչ անձին ծանր և ոչ այլոց աւելորդ գոանիս. զբաղումս ձգես՛ ի բարեկամութիւն, և գունդագունդ դիմեսցեն առ քեզ քաջք յարանց։ Օ՛ի ոչ երբեք ծածկի առաքինութիւն՝ թէպէտ և աղօտանշոյլ, այլ արձակէ արտաքս զնշոյղս. որ ոք կայցէ արժանի, ՛ի հետոց նորա գոցէ զնա։ Օ՛ի թէ բարձցուք զամենայն կենակցութիւն և հրաժեշտ տացուք մնդկան ազգի, և կեցցուք մնադիրք անձանց ևեթ, ղհետ գայ այսմ առանձնակեցութեան զերկ եղելոյ յուսումնասիրութենէ, կարօտութիւն իրաց առնելեաց։ Այսա նիմք այնուհետև զայն ինչ շինուածս կառուցանել և զայն տապալել հինն՛ի վեր, և զծովս տեղափոխել, և ջուր ածել՝ հակառակ վայրացն զժուարութեան. և զժամանակն՝ զոր ետ բնութիւնն ծախել՛ ի պէտս մեր, չարաչար մնօքրնել։ Այմանք՛ ի մէնջ չդնելով վարձն զայն, և ոմանք վատնելով շռայլութեամբ. ոմանք՛ ի մէնջ այնպէս ծախեն զնի մարթասցին համար տալ, և կէսք՝ որպէս թէ ոչ ինչ կացցէ նոցա մնացուած։ Այմին իրի չիք ինչ վատնարագոն՝ որպէս ծեր բազմամեայ որ ոչն ունի զայլ նշանակ ցուցանելոյ զերկարակեցութիւն իւր՝ բաց՛ ի թուոյ ամաց հասակին։

Այմա, ով սիրեցեալդ Այերենէ, այնպէս թուի թէ Այթենոդորոս կարի շատ հպատակեաց ժամանակաց, և կարի փութապէս խոյս ետ։ Այ ուրատ լինիմ և

էս Թէ պարտ իցէ տեղի տալ երբեմն , այլ տակաւ ոտն առ ոտն և աղջ պահելով զգրօշս , և զպատիւ զհետս. րութեան : Դառաւել անարատ և անբծրծի են քան զԹշնամիս իւրեանց որք միանգամ հաւատարիմ են առ զէնս իւրեանց : Օ այս կարծեմ պարտի առնել և առաքինութիւնն և ամենայն առաքինասէր . եԹէ զօրացի գժբաղդութիւն և կարձեսցէ զզօրութիւն գործելոյ , ոչ վաղվաղակի Թիւրադարձցուց և անգէն փախստեայ լինիցի , խորշ անձին խնդրելով Թաքստեան , որպէս Թէ կայցէ ինչ տեղի՝ ուր ոչ կարիցէ բախտն հասանել . այլ Ձգելով միջամուխ լիցի ի գործս և ընտրեսցու գոցէ ինչ մի որով կարող լինիցի օգտակար լինել քաղաքի : Ձկարէ զինուորել , զգուշացի պատուոյն . առանձնակեաց լինել ստիպի , Ձարտարախօս լիցի . լռութեան տալ զանձն , լուիկ փաստաբանութեամբ օգնական լիցի քաղաքակցաց . վտանգաւոր է մնալ անգամ առնէին կամ հրապարակին , ի տունս , ի տեսարանս , ի կռուձնս վարեսցէ զբարի ընդելակցի զպաշտօն և զհաւատարիմ բարեկամի և զզգաստ կռնականի : Լ. Թէ կորոյս զպաշտօն քաղաքացւոյ , պաշտօն զինուորոյ վարեսցէ :

Ա տան այնորիկ մեք զմեծանձնն ոչ փակեցաք ի մէջ պարսպաց միոյ քաղաքի , այլ ի տուրևառ Համբրէն տիեզերաց արձակեցաք զնա , և հայրենիս մեզ զաշխարհ դաւանեցաք . զի մարթասցուք ընդարձակ ասպարէզ դաշտի բանալ առաքինութեան : Փակեցան քեզ առեանն և արգելաւ ի բեմ կամ ի ժողովոյ . հայեաց ի Թիկունս կոյս քանի արձակածաւալ նահանգք են , որչափ ժողովք ժողովրդոց . ոչ երբեք այսպէս մեծ իշխան քեզ մնան , զի ոչ ինասցէ մեծագոյնն : Լ. տես , մի արդեօք քո իցէ բռնակալ յանցանք՝ զի ոչ այլազգ կամիս սպաս հարկանել առաքինութեան եԹէ ոչ որպէս Կռնսուլ , կամ որպէս Պրիւտանէս , կամ որպէս Կերիքս , կամ որպէս Յուփէս [1] : Լ. զինչ , եԹէ չկամիցիս զինուորիլ , եԹէ ոչ որպէս սպարապետ կամ հա-

[1] Կռնսուլ առ Հռովմայեցիս , Պրիւտանէս առ Ամենայնից և Յուփէս՝ առ Կարթագինեցիս էին իւրաքանչիւր անուանք իշխանութեան և բանի : Իսկ Կերիքս առ Յոյնս էր անուն աւագ սրբազան պաշտաման :

զաբապետ ։ (Ա)Հպկամ և այլք զառաջին Հնգետն ունի-
ցին, զբեզ վիճակեցոյց ի կարգ երիցուդաւա-
բաց ։ անտուստ զինուորութիւնը ձգտիս, խրախուսելով,
օրինակաւ և ոգւով արուեստս ։ Զեռնտուէութեան ան-
գամ ի մտաբի անդ գտանել Հնարս նիզակակից լի-
նելոյ՝ ուր կայ և եթէ և գոչմամբ ձգնի օգնական լի-
նի ։ Ա յսպիսի ինչ և դու առնիցիր . եթէ յառաջա-
կոյմանէ տերութեան ի բաց օցտեցոյց զբեզ բարեաց,
յոտին կաց և օգնեա աղաղակաւ . եթէ ոք և
զիրազգ կաշկանդեացէ, տակաւին կաց ճնա և լուս-
թեամբ օգնեա ։ Ա և երբեք անպիտան գտանի գործ
բարի քաղաքացւոյ ։ վասն զի լսելեօք , տեսանելեօք ,
երեսօք , ախնարկութեամբ , լուիկ դիմակալութեամբ
և գնայիւք զկնոյին օգտէ ։ Օ որ օրինակ իրք ինչ ա-
ռողջարարք առանց Հաշակելոյ և շօշափելոյ իսկ օգ-
տին Տուող, ըստ սմին օրինակի առաքինութիւնն զո-
գուստ իւր և ի հեռաստանէ և ի գաղտնութեան
ծառալէ , եթէ պարապեսցի և իրաւամբք անձինն վա-
րեսցի , եթէ ի մտալ ուրուք առ նա ազէրսարկու՝
սահպեսցի բանալ զվարագոյր (դրանն), և եթէ Հան-
գարտեալ ի լռութեան կացցէ՝ յանձուկ վայր վա-
կեալ և կամ յարձակ , յորում վիճակի և իցէ՝ օգուտ
մատոյց լինի ։

Ա եթէ փոքր օգուտ կարծիցես դու զօրինակ բա-
րուք Հանգստեան ։ Ա՛ր արդ կարի յոյժ լաւ է Հան-
գիստ ընդ գործս խառնել, յորժամ բազմազբաղ կենաց
խոչընդոտն յառնեն դէպք պատահականք, կամ Հան-
գամանք քաղաքի ։ Օ ի ոչ երբեք այնպէս շքջափակեալ
լինին ամենայն իրք , մինչև չմնալոյ տեղի և ոչ միտ
ի Հանգստ գործառնութեանց ։ Ա եթէ մանրի ինչ իցէ
քեզ առաւել թշուառացեալ գտանել զքաղաք՝ քան զոր
եղև Ա քենէք ի ժամանակին յորում կեղեքին զերփեին
գնա երեսուն բռնաւորք . Հաղար և երեքհարիւր ան-
ձինս ի քաղաքացւոց՝ արս ընտիրս սպանեալ էր նոցա ,
և ոչ վախձան լինէր տակաւին գազտութեանն , այլ
և այ քան զևս զայրանային ։ Յորում քաղաքի էր Ա ստու-
պագոս գատաւորն պատկառելի ըստ կրօնից , ուր ծե-
րակոյտն էր և ժողովրդ նման ծերակուտի , անդ
ժողովէր Հանապազօր անգութի փաղանգ գահՀոյ ,

և հեգ դահլիճն անձուկ թուէր բռնաւորացն։ Որ-
թէ մնար ինչ էր հանգչել քաղաքին յորում այն-
չափ բռնաւորք կային, որչափ արբանեակք։ Ոչ ոչ յոյս
ակնկալութեան կայր ունէք բնաւին, անդրկէն ստանալոյ
զազատութիւն, և ոչ դեղ դարմանոյ երևէր ուստեք
ընդդիմ այնչափ բուռն չարեաց. զի ուստի էր գտանել
չուառական քաղաքին այնչափ Հարմդիոսս[1]։ Սակայն
Սոկրատես ի միջի արձանացեալ կայր և մխիթար լինէր
հարց սգաւորաց և յորդոր մատուցանէր անյուսացե-
լոցն ի Հասարակաց տերութենէ և մեծատանց զան-
գիտելոց լընչից իւրեանց՝ յանդիմանն Հարկանէր զանա-
զան ապաշաւ բազմավտանգ ազատութեան. կամեցո-
ղացն նահանջ լինել ինքեան՝ օրինակ մեծ զանձն առա-
ջի առնէր շուրջանակի չայծեալ, ուր ի միջ տերանց
երեսոից ազատաբայլ չեմիջ։ Սակայն զայսպիսի այլ
նոյն ինքն քաղաքն աթենացւոց սպան ի բանտի, և այն
որ աներկիւն ընդ գունդս բռնաւորաց խիզախէր, ան-
տանելի եղև ազատ քաղաքին առ ազատութեան իւրոց.
զի գիտացեալ թէ և ի տերութեան վարակելոյ ի
վիշտս՝ գտանի պատեհ առն խնամանոյ օգտելոյ ին-
քեան և ի ծագկեալ և յերջանիկ տերութեան՝ ար-
ծաթասիրութիւն և նախանձ և այլ բիւրագղի ախտք
անզէն թագաւորէն։

Այսպա ուրեմն որպէս և զիարդ ընծայեցուցէ զանձն
տերութիւնն, որպէս և թողացուցէ բախան, ըստ
նմին և մեք կամ տարածեացուք զանձինս և կամ ամ-
փոփեացուք. միայն չարժեացուք զմեզ և մի կապեալք
ահիւ ընդարմացուք։ Անաւանութիւ թէ նա է այր որ
ի մօտալուտ գոռալ վտանգաց յամենայն կողմանց և
ի սպառնալ վհատուց և չղեցայից չուրջանակի, ոչ զգետ-
նեացէ զառաքինութիւն և ոչ լաքուացէ, զի ոչ պար-
տի կենդանեաւ թաղիլ։ Արդպէս կարծեմ, Կուրիոս
Դենատատոս ասէր. Կատարէմ ընդ մեռեալս գոլ քան
կեալ։ Յետինն ի չարեաց է ի կենդանեաց համարոյ
եւանել, մինչ չև մեռեալ իցես։ Այլ եթէ պատահես-
ցես յամենաբռնկեալ ժամանակ տերութեան՝ պարտ է
քեզ յայնժամ Հանդարտութեան առաւել տալ զանձն

[1] Հարմդիոս անուն էր ուրումն յերևելի բռնաւորասպանից։

և ուսումնասիրութեան։ Ընդհատ՝ի ժամանակիվատագոյնս նաւակոծութեան՝ իսկ և իսկ՝ի նաւահանգիստս փութասցիր, և մի՛ սպասեր զի իրք թողացուսցեն զքեզ, այլ զի դու որոշեսցես՝ի նոցանէ զանձն քո։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Հաւճեալ պարտ է մեզ նախ յանձինս, ապա յիրս զորոց բուռն հարկանեմք, յետոյ՝ի նոսա՝ որոց պատճառաւ կամ՝ ընդ որս պարտ է առնել։ Յառաջ քան զամենայն հարկ է զանձն կշռել, զի յաձախ առաւել քան զոր կարեմք՝ կարծեմք կարող լինել։ Այն յանձնապաստանութեամբ պերճախօսութեան գլխոյ, ոմն՝ի հայրենի ստացուածս իւր՝ առաւել քան զոր կարողն էր տանել՝ հրամանատար եղև, այլ որ գիսօծագիրն մարմինն տարժանելի գործով ձնշեաց, ոմանց ամենախառնութիւնն չէ այնչափ՝ի ձահ քաղաքական իրաց՝ որք տակուն ձակատ խնդրեն, ոմանց գոռոզութիւնն ոչ ծառայէ պալատան. են և որոց բարկութիւնն չէ ընդ իւրեանց իշխանութեամբ, և ամենայն զայրոյթ ձգէ զնոսա՝ի բանս յանդգնութիւն, և են որ զգուշանան՝ խօսութիւն չկարեն զուսպ ունել և ոչ զգուշանան՝ի վտանգաւոր աղուաբանութեանց։ Անհեթեթն սոցա օգտակար է յոյժ հանդարտութիւն քան գործառնութիւն. բուռն և անժոյժ բնութիւն խորշեսցի՝ի զրգռոցաց միաստակար ազատութեան։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Լռութիւն պարտ է և ևս զիրան յորս ձեռնամուխ լինիմք, ՚ի կշիռ դնել զոյժ մեր ընդ իրաց զորոց կամիմք բուռն հարկանել։ Այն զի պարտի միշտ առաւելուլ զոյժ՝ի բառնալին քան՝ի բեռին. հարկաւ ձիւեն բեռիւք զբեռնակիրն, ուր մեծ խցէն քան զնա։ Այն և իրք՝ինչ ոչ այնչափ մեծամեծք, որչափ բազմածինք և բաղ-

մաց պատուհակողք բանից · պատ է խորշել և ՚ի տուչ նէ , յորոց ծնանին նորանոր զաղանիք և բազմապատիկ ։ Այլ չէ պատ մատչել անդր ուստի ոչ լինի յետս դառնալ ազատօրէն · յայն ինչ իրս պատ է ձեռն ՚ի գործ առնել , զորս գլխաւորել կամ կարիցես և կամ յուսալ կարացցես անշուշտ · ՚ի բաց Թողուլ պատ է զայն ինչ իրս որք երթալով երթան և ընդարձակին ՚ի գործ անդր · և ոչ յանգին , ուր քո կամք էին ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ·

Կարի իսկ քաջ ընտրութիւն պիտի և մարդկանն · արդեօք արժանի իցէ զի զմանն կէնայ մերոյ ծախեսցուք նոցա , եթէ ժամանակաւ լինել կայ առաջի յանպէտս · վասն զի ոմանք յանչափս մէզ գրէն զմէր ծառայութիւնս ։ Այնեղորս ասէ Թէ յընթերիս անգամ չերթամ առ նա որ ոչն ունիցի զանձն չնոր հապարտ համարել ընդ երթեն իմ ։ Ի միտ առնուս , որպէս ինձ Թուի , Թէ և առաւել չէր երթալոյ առ նոսա որք զարիտաւր ծառայութեան բարեկամանց սեղանոյն առնեն , որք զխորտիկս իբրև առ ընծայս հաճարին , որպէս Թէ ՚ի պատիւ օտարին անբարեխառն իցեն ։ Ասաձ ՚ի դոցանէ զվկայս և զհանդիսատես , ոչ է զուարճացուցիչ կոչումնք անհնազակ ։

Ցեսանել պատ է , արդեօք բնութիւն քո յոր ինչ առաւել քաջայարմար իցէ · ՚ի գործառնութիւնս՝ եթէ ՚ի հանդարտական ուսումնասիրութիւն և ՚ի տեսանութիւն · և յայն հակամիտել՝ յոր տանի գբեզ զօրութիւն հանձարոյդ ։ Խոկրատես բուռն հարեալ ՚ի գուբս ձգեաց զկիսոցս յատենէ հրապարակին , պիտանացուս առաւել գնա գատեալ ՚ի շարագրութիւն պատմական յիշատակաց · վասն զի անպտուղ լինին ուշիմութիւնք բանաբարեալք , և յընդգիմ կալ բնութեան՝ ՚ի զուր է աշխատութիւն ։

ԹՂԹԻԿ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ի ԱՄՍ ՈՒՆԻ այնպէս զուարթ առնէ զոգի, որպէս բարեկամութիւն քաղցր և հաստատուն։ Օ՛ բարի, ու՛ են սիրտք պատրաստականք ի շահմանել ի նոսա զամենայն գաղանիս, յորոց ի վիտակցութենէ խղճի մտաց ոչ այնչափ զանգիտեացես՝ սրչափ ի քոյդդ, որոց բանն մեղմեսցէ զառաձնութիւն, կարծիքն յաջողեսցէ զնորհուրդ, զուարթութիւնն փարատեսցէ զտրտմութիւն, լոկ տեսիլ դիմաց զուարձացուսցէ։ Ա՛յսպիսիս ասեմ պարտ է մեզ ընտրել, որոց սիրտք՝ որչափ մարթ է, թափուր խղճէ ի ցանկութեանց։ Ա՛ման զի սողին սպրդին մոլութիւնք, և ի մերձաւորն տարափոխին և շաղախանօք վնասեն։ Ա՛զդ զոր օրինակ ի ժամանակի ախտի սրածութեան զգուշալի է զի մի մերձ նստիցիմք մարմնոց արդէն ապականելոց և բոլ բոքելոց յախտէ անտի, վասն զի ձգելոք յանձինս զվտանգ և ի հնչուղ անգամ խօթանաւք, այնպէս յընտրել անդ զընտրութիւն բարեկամնոյ պարտ է գուն գործել զի մի իւիք իրօք զապականեալս ի մեզ յանկեացուք։ Անկըզն հիւանդութեան է զառողջն ընդ հիւանդս խառնել։

Ա՛չ ոչ զայն պատուիրեմ քեզ զի մի լեցի քեզ զհետ երթալ այլոց, կամ ձգել ի քեզ զայլ՝ զբայ յիմաստնոյ։ զի մեր գտանիցես զայդ, զոր յայնպէս զարուց հետ ունել ինդրեմք։ ընդ խառնցինս հանարեայի քեզ որ նուազ ջան է, Ձկեր քեզ արդեօք կարողութիւն յընտրութիւն լաւագունին, եթէ ի խնդիր լաւոյ ելանելիր ի մէջ Պղատոնայի և Արիստոտէլի և այգաւանդ ծննդոց Սոկրատայ։ կամ իշխան լինելիր գտանել ի Կատոնեան գործս, որ ընծայեցոյց գյոլով անձինս արժան նստուցս ծնանելոյ յատուրս անդ Կատոնի, որպէս և գյոլովս ի վտանգս այսց, որպիսի ոչ եղէն երբեք, այլ

1 Եւ ոչ աստ կցորդին բանքն ընդ նախորգան, թէբեւս հատուած անկեալ եղէ ի բաց։

Ժանտագործք՝ ամենայն չարեաց մեծամեծաց գտակը. վասն զի պէտք էին երկաքանչիւր խմբից, զի ծանիցի Կատուին. պէտք էին լինել բարեաց, որոց ընդունելի զանձն ընծայեսցէ, և չարաց՝ յորս ցուցցէ զզօրութիւն իւր։ Ի՛ւր այժմ յայտնի չքաւորութեան բարեաց՝ նուաղ ծանրատաղտուկ լուցի ընտրութիւնն. բայց առաւել զգուշալի էն տխուր բաղք և ժժգոնք ընդ ամենայն, որոց և ոչ մի պատճառ է անհաճոյ առ ի գանգատել։ Այն և անտարակուսելի իցէ հաւատարմութիւն նորա և բարեսիրութիւն, բայց թէշամի է անդորրութեան ընկերք ալեկոծ և հեծեծող վասն ամենայնի։

ԳԼՈՒԽ ՈԻԹԵՐՈՐԴ

Ինձ ոչ ստացուածս ընչից, որ մեծն է ի նիւթս մարդկային թշուառութեան։ Օ ի թէ զայլ ամենայն իրս՝ յորոց նեղիմք, զոր օրինակ են մահք, հիւանդութիւնք, երկիւղ, ցանկութիւնք, համբերութիւն ցաւոց և վաստակոց, բազդատիցես ընդ այնոսիկ ի չարեաց՝ զորս առեմ մեզ արծաթասիրութիւն մեր, այս մանն ծանրակշիռ գոյի բազմաք։ Ա՛ն որպ արժան է ածել զմտաւ թէ որչափ թեթեւագոյն է ցաւ՝ չունելն քան զկորուսանել։ Ա՛յ ի միտ առցուք թէ աղքատութեանն տանջանք այնչափ փոքրագոյն էն, որչափ սակաւագոյն է նորա նիւթ տուգանաց։ Ա՛ռանցն խաբիս եթէ համարիցիս թէ մեծատունք առաւել արիաբար տանին զխաչս։ եթէ մեծամեծ և եթէ փոքրիկ մարմնոց՝ հաւասար է ցաւ վիրաց։ Ա՛ղեցիկ ասէ Ա՛փոփն. Ա՛յ պակաս ցաւագնիլ է փետուին հերաց կընտոյն և գիսաւորին։ Օ՛նդն իմն ինձ և յաղագս աղքատաց և փարթամաց. հաւասար էն տանջանքն նոցա, վասն զի յերկոսին էս տարրայեալ էն դրամք իւրեանց, և չէ մարթ ի բաց քաղել առանց վշտագնութեան։ Ի՛ւր առաւել տանելի է, որպէս ասացի, և դիւրագոյն չտանջանքն քան թէ կորուսանել։ Ա՛մին իրի առաւել ուրախ տեսանես զայնոսիկ, յորս ոչ երբէք ակնարկեաց բախտն, քան զորս եմող և ելիք։ Ի միտ էառ

զայս Վոխգինեաս՝ մեծամանն այն այր՝ և անկողոպտելի յամենայնէ կացոյց զանձն , Վասն զայդ աղքատու-թիւն կոչեաջիր չքաւորութիւն , կարօտութիւն . և զոր անուն վատութեան և կամիս կարգա աներկեա-նութեամբ . Համարեցայց և ես ոչ երջանիկ զսա զոյ , եթէ զոր ինձ այլ գոյես , որում կորնչիցի և ոչ ինչ : Ամէս խաբէի . և կամ Թագաւորութիւն ինն է՝ եթէ գոյի ի մէջ ագահաց , խարդախողաց , աւազակաց և հուդհարաց մի ոք՝ որում չիցէ մարթ ատենել , Եթէ ոք յերկուանայ ընդ երջանկութիւն դիոգինեան , կարող է նա յերկմիտս լինել և ընդ վիճակ աստուածոց անհաւիցէ , Թէ գուցէ Թերի իցէ երջանկութիւն նոցա . զի չէն նոցա ոչ կալուածք և ոչ գրասիտք , և ոչ անդաստանք մեծագինք յօտարին բնակութեան , և ոչ վաչխ մեծաշահ ի հրապարակի : Ո՛չ իցէ քեզ ամեհ , ահ սպրեալդ ընդ մեծութիւնս . աղէ հայեաց ընդ աշխարհ . մերկ տեսցես զաստուածս , զամենայն ինչ տան , և ոչ ինչ ունին : Ո՞զբաստ համարիս գու եթէ աստուածանման զայն՝ որ մերկանայ յամենէ զամենայն գիպուածոյ իւր . երջանկագոյն գու կարդաս զդեմոտրիոս Պոմպէոսեոս որ այն ամենեցայ հարստագոյն լինել քան զՊոմպէոս : Վասն զի Հանապազորդեան ծառայիցն նորա էր որպէս բանակ զօրու սպարապետի . այլ այնպիսի մեծութեան պիտէին և երկու փոխանորդք և սենեակ ընդարձակագոյն : Իսկ Վոխգինեայ ծառայ մի էր Ո՞մնէս անուն , և այն եղև փախստական . և ոչ այն չափ փոյթ կալաւ զարձուցանել զնա յորժամ մտան և գուշակ լինէին , Վասնզի ասայ . Ո՞մեծ է եթէ Ո՞ա նէս կարող իցէ կեալ առանց Վոխգինեայ , և Վոխգինէս չիցէ կարող կեալ առանց Ո՞անեսի : Ո՞րով Թուի ինձ ասել . Ո՞զա զոր գիտես , զվ բախտ , չկայ ինչ քո առ Վոխգինեայ . փախեաւ չկնէն ծառայն . տի նա ազատաբար գնայ : Վերդաստանն պահանջէ զհանդերձանս զգեստուց և կերակրոց , զայնչափ որովհայնս անյագ կենդանեայ պիտի դարմանել , հանդերձ պիտի գնել և զգուշալի էն ձեռք յաիշտակիչք . և Հարկ է վարիլ արբանեկալեամբ լացողայ և անիծողայ : Վհանիծն առաւել երջանիկ է նա որ ոչ պարտի ինչ ունէք , եթէ ոչ այնմ՝ որում կարի հեշտեաւ կարէ զլանալ , ինքեան

ասեմ՝ Ո՞չ քանզի չկը ի մէջ այդչափ զօրութիւն, անշուշտ պարտ է նուազեցուցանել զդէպս, զի նուազագոյն նեղութ մանկտոյք փորձանաց բախտի։ Այլազգոյն են ի մտաւոր մտածինք զոր մարթին ամենեքին ի գլխոյ իւրեանց, քան զոր առաւել ծաւալին, և մեծամեծ դրիւք յամենայն կողմանց են դիւրաշրջաբեր ի խոցոտածոց։ Առաջին չափ ընդդէմ այն է, զոր ոչ յաղթութիւն հանիւեալ և ոչ հեռագոյն յաղթութենէ գտանի։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Ձառօցական լեզի մէջ այս չափ, եթէ կանխաւ համբոյսացի սահմանափակութիւն։ առանց որոյ ոչ ինչ գանձք բաւական լինին և ոչ ինչ Հոխութիւնք լիուլի առաւելուն։ մանաւանդ ուր դէպն մեծ կայ և կարող է աղքատութիւնն ինքնին ի մեծութիւն փոխարկիլ միջնորդութեամբ չափաւորութեան։ Սովորեացուք մեր ժէլ յանձանց զջուք փառացի, և պիտոյիւք՝ պահանջացոյն չափ գնել։ Ներակուր գքաղցն անցուսցէ և ըմպելին զծարաւ. ցանկութիւն՝ ուր Հարկ է, անդր բերիցի։ Ասացաք ծանրանալ[1] մարմնոյ մերոյ, և զառեղիս և զադանելիս ոչ ըստ նորանոր օրինակաց յարգարել, ըստ որում իրատեն ընթացք նախնեաց։ Ասացաք ածեցուցանել զժուժկալութիւն, սանձահարել զզեղխութիւն, չափաւորել զուրախ, մեղմել զբարկութիւն, քաղցր աչջք անհարկել յաղքատութիւն, պաշտել զպարկեշտութիւն։ Թէպէտ և առնէ Թուեցի մէջ բնական ցանկութեանց մտտուցանել դէզս դիւրապատրաստս, զանձանց անհնկալութիւնս և զսիրտ՝ որ լինելեաց է ցանկացող, իբրև ընդ կապանաք կաշկանդել։ և այնպէս առնել զի Հոխութիւնս ոչ այնչափ ի բախտէ որչափ յանձանց պահանջեացոյք։

Այ հնար, ասեմ, զայնչափ պէսպիսութիւն դիպուա-

[1] Ծանրանալ մարմնոյ մերոյ և ոչ տարբին ուսոց գահաւորակաք կրելեաք ի ծառայից։

ծոց այնպէս ՚ի բաց պարտուիլ, զի ոչ ՚ի վեր յարիցեն մըրիկք մեծամեծք՝ ՚ի վերայ պարզողացն առագաստս մեծամեծս. ամենեքեանց պէտք են, զի ՚ի դէպն երթեն յարձակմանք զինուց։ Որին աղագաւ աքսորանք և այլ արկածք եղեն երբեմն ՚ի դէզ, և Թեոդ փոքանաք ծանուցեալն բուժեցան. ուր մնասցէ գոհիւ խրատուց հոգին և չկարէ մեղմ իրօք ապաքինիլ։ Որ զինչ Թէ և աղքատութիւն և վատանուութիւն և ձախողութիւն ՚ի դոյն օժանդակեացեն. չար ՚ի չարէն նկուն լինի։ Հապա ուսցուք Ձաքէ առանց բազմութեան, և ՚ի սակաւութիւ արբանեկիլ ՚ի ծառայից, և հանգիստն կազմել յոր պէտս և հնարեցան, և յանձուկ վայրի բնականալ։ Որ ՚ի ձիրնեղացս միայն և յառապարիզն, այլ և յընեացս առաջնիկայ կենացս՝ ՚ի ներքսակողմն կայս պարտ է խոտորիլ։

Ուանց գլխովին, որ է աներևոյթ ազատական պաշտօն, չափաւորութեամբ հանգերձ լսելիք պարապմունք։ Որ իմ իցեն ինձ անհին մատեանք և մատենագրանք, որոց տէրն հաւիս զգանին ընդհատուք յամենայն կեանս իւր։ Ոչ անբաւ եանակ զուտանուն և ոչ մարզել խուժան պրոց. և չատ լաւ է սակաւ հեղինակաց անձնատուր լինել քեզ, քան Թափառիլ մնջղայս ընդ բազումս։ Ոչ բերքչարիւք հազար մատեանք այրեցան Ալեքսանդրիա, գեղապանծ յիշատակ արքունի հարստութեան. Թող գոլեցիկ ոք, որպէս Լիւիս, որ զայդ գործ առել լինել պտնդալի և արբայա վայել իմաստակասէրութիւն։ Որ պտնդալի և ոչ բարեխնամ ես կոչեմ, այլ ուսումնասիրական զեղուքեան. սինա և ոչ ուսումնասիրական, զի ոչ ՚ի պէտս ուսման, այլ ՚ի սեսիլ կահաւորեալ էին. որպէս և յոգւոյ անգիտ եղելոյ ծառայական տուից անգամ՝ զրեանք էն ոչ ՚ի հանգերձանս ուսումնասիրութեան, այլ ՚ի զարդ վերնատան ընծրեաց։ Որ արդ պատրաստեացին գիրք՝ օրական և բաւական իցեն, այլ և ոչ մին ՚ի յոյզ հանդիսի։

Ասէ ես է, ասէս, ՚ի տալն ծախել և վատնել ինձ զգլանն, քան ՚ի կորնչեան քանզակս և ՚ի տախտակս նկարեալս. յաճենայնի վաճառս է աւելորդն։ Որ ազատ ոչ այնպէս նեղողաիա իցես այնմ որ

կՀիւբ և փղոսկրեիւբ իմդրէ առնել իւր անուն, որպէս որ զանճանօթից և զվատթար մատենագրաց ըզգործան Հաւաքէ և ՚ի մէջ այնչափ բազմութեան Հաւաքուոր մատենից նատեալ յօրանջէ, և որում առաւել Հաճոյ են Հակառք և մանկարուեիւնք մատենից իւրոց։ Այսպա առ առաւել յոյլս տեսցես զյաճախութիւն Հաւից և վիպասանութեանց, և խորչս մինչև յառաստաղս կազմեալ։ Այնիկ և ՚ի մէջ բազմեալ և ջերմակաց է տեսանել զմատենագարան, որ յարդարի իբրև կարևոր զարդ տան։ Այերեի արդեօք եթէ յառաւելութենէ ուսումնասիրութեան յառաջագայէր, այլ արդ այդ իբր հետաքրքիր և զործք ընտիրարհիկ Հանճարոց ՚իւրաքանչիւր պատկերաջն կենդանագրեալք՝ ՚ի տեսիլ Հանդիսի և ՚ի պաճուճանս տրմոյ ՚ի կիր արկանին։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Այանց դիցուք թէ անկար ՚ի դժուարին ինչ վիճակ կենաց, և առանց քո գիտութեան կամ բանսն Հասարակաց կամ առանձնականն արկ զքեզ յայն թակարդ, զոր ոչ լուծանել կարող ես և ոչ խզել։ Խորհեաց թէ որոց կապինն յոռնակաց՝ զառաջինն դժնդակութիւն թուի ծանրութիւն չղթայից և արգելք ազատ։ յետ այնորիկ յորժամ դնեն ՚ի մեռ՝ թէ չէ պատ զայրանալ՝ այլ Համբերել, Հարկն ուսուցանէ արիաբար տանել, և սովորութիւնն՝ Հեշտասէր։ Յամենայն վիճակ կենաց գտցես զառաձնութիւնս և թոյլ տուութիւնս և փափկութիւնս, եթէ ոչ կամիցիս մանաւանդ չար Համարել զկեանս՝ քան նախանձելի ընծայեցուցանել։ Այ իւիք այնպէս բարեացապատ է մեզ բնութիւն, որպէս այնու՝ զի գիտելով չափ թէ յորպիսի աղետաւոր կեանս ծնանիմք, ՚ի զեղ Հեշտասութենէ անց զսովորութիւն, որ փութով ընտեսցուցանէ զամենայն ծանուն։ Այ որ առկայր եթէ ձախողութեանց նոյն բուռն զօրութիւն էր Համապատղղոր որ ինչ յառաջնում բաղխանին։

Այմենեքին զօդեալ եմք կապանօք ընդ բախտի. ո-

մանց ոսկի է չղթայն և արձակ, ոմանց անձուկ և անչուք. այլ զի՞նչ իցէ խափր. ուր մի և նոյն է բանտ՝ որ փակեալ պաշարեալ ունի զամենեսեան առհասարակ. կապեալ իսկ են և կապողք գլխովին. եթէ ոչ գուցէ թեթևագոյն համարիցես դու զչղթայն որ ի ձառնուն՝։ Օրն փառք և զոմն մեծութիւնք կապեն. զոմանս ազնուականութիւն, զայլս խնամարկութիւն ձնդէ. ոմանց օտարին լուծք ծանրանան ի պարանոցս, իսկ այլոց ևւրեանցն, զոմանս արտաքսմանութիւն և զոմանս քրմութիւն կալ և կապ ունի ի միում տեղւոջ։ Կեանք ամենայն է ծառայութիւն։ Այս ուրեմն պարտ է իւրաքանչիւր իւրումն ընդելանալ վիճակի և ոչ իւիք գանգատել զայնմանէ, և որ ինչ դիւրութիւն է ի նմա, ի նոյն վայելել։ Ոչիք ինչ այնպէս դառն, յորում ոչ գտցէ միխիթարութիւն սիրտ անդորր։ Կառզում անգամ դոյզն միջոց վայրաց ձարտարագրութեամբ արհեստի ընդարձակեցաւ ի չինուած բազում պիտոյից, և Թէպէտ անձուկ էր տեղին՝ տրամադրութիւնն արար զայն յարմար ի բնակութիւն։ Որը ձեռն և դու ի գժուարինս զբաի բանին, և խոստքն կակղացին և նեղքն ընդարձակեսցին և ծանուցք ոչ այնչափ ձնիեսցեն զբարձողս կամաւ։

Դարձեալ չէ պարտ զցանկութիւնս ի հեռագոյնս արձակել, այլ ի մօտաւոր վայրս Թողացուցոյց եղանել. որ զի հնարեն ի սպառ ընդ փականոցք Հանդարտել։ Գոնեղեալ զանկարելիս և զգժուարինս՝ զառձեռն պատրաստականս և զամբիչս յոտից մերոյ իմնդրեսցուք, այլ գիտասցուք Թէ ամենայն ինչ միօրինակ Թեթև է. արտաքուստ են այլակերպարանք և ի ներքուստ են զուգակից ունայնք։ Ոչ մի նախանձեսցուք ընդ որս կանն ի բարձու. բարձունքն կարծեցեալք՝ խափտեալ կործան անկան։ Ոչ դարձեալ զորս բաղդն անիրաւ եդ ի կեզակարծ կայի, առաւել անքոյթ լինին՝ ի բաց պատրուելով զամբարտաւանութիւն յիրաց անտի ի բնէ անբարտաւանից, և յաղթող գտանին ի վերայ բախ-

՝ Կամանութեամբ են ասացեալքս կապելոցն ի հնուն յանցաւորսդ, ընդ որս զգէնն և մեն մի զինուոր պահապան նովին կապանաւք զանցաւորին զոչն անդէալ և զընտաւորին զձահն։

տի իւրեանց ՚ի Հարեմավայրի գեղերէրեալ։ Այսաքէն բազումք էն որոց Հարկ է պինդ ունել զկայս իւրեանց ՚ի բարձու, ուսասի ոչ կարեն ինքանել եթէ ոչ անկանելով։ այլ զդոյն զայդ վկայեացեն թէ մեծ և բեռն իւրեանց այս է՝ զի Հարկաւորին ծանրանալ այլոց։ ուր ինքեանք չեն թեթեւացեալ, այլ հեզասիրք պնդեալ։ Քաղաքավարեամբ, հեզաթեամբ, մանրամասկել օրինօք և բարերար ձեռօք, կանխաւ պատրաստեացեն բազում ինչ ամրութիւնս առ առաջնիկայ անկմանս։ և յոտով սպրին առաւել անեղկեան ՚ի կախ կայցեն։ Այդց ոչինչ այլ այնպես զերծ կացուսցէ զդասս յայսպիսեաց ասասի ծփանայ ոգւոյ, որպէս սահմանն ինչ Հաստատուն դնել միշտ աձեալութեան իւրեանց, և ոչ Հաղալ ՚ի կամն բախտի զդաշտարումն, այլ առաւել անձամբ զանձինս իշխատեացեն գրել դաշտարել և մի միայն ՚ի ծագն ամբառնալ։ Թէպէտ և այնպէս ցանկութիւնք ինչ գրգռիցեն զոգի, բայց սահմանաւորք են և ոչ ձգեն յանդարձ և յանառագդ։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Անկաւարութիւն և միջասահման գտելոյ և Հերատագործ են ՚ի Հաճ այս իմ ասացուածք և ոչ խնամանայ, Այժմ չէ արժան երկչոտութեամբ և զբայլափոխս Հաւելուլ չորիկ։ զի այնպէս է նորա յանձնառաստատութիւն, միայն այնոյ Հերեվետասեալ ընդ առաջ երանել բախտ։ և ոչ ուրեք երբեք տեղի տայ յերեսաց նորա, և ոչ ուրեք զանգիտել ՚ի նահանջ։ Այսան զի ոչ միայն զարծաթագին սրբանակութիւնս իւր և զառատաձեռն և զարժանապատուութիւն, այլև զնաքմին իւր դիտավին և զաչս և զձեռս, և որ ինչ այլ որ սիրելի առնիցէ զնեանս, որպէս և զանձն իւր իսկ՝ յատուկ առեալ Հանաքի, և կեայ որպէս Հեն յանօթի առեալ իւրն ինքեան, պատրաստ ՚ի Հատուցանել անարբուտուք որոց պահանջիցեն։ Այլ չէ անարգ յաչս իւր՝ վասն գիտելոյն Հեն չէ ինքեան իւր, այլ զամենայն ինչ այնպէս փութով պնդութեան և լրջմտութեամբ առ-

նէ, զոր օրինակ այլ կրծոտէր և սուրբ բնաւորեալ է զինքեան հաւատացեալ աւանդսն պահել։ Այլ յորժամ հրամայեսցի նմա տալ անդրէն, ոչ քանիարտաչ ընդ բախան, այլ ասէ. Ճ՚ուրչ ունիմ ընդ ամենայնի որ տուաւն ինձ և զոր տնտղեայ. Մեծաց վարձուց հրաւոյ պաշտելի զքո իրագ. այլ քանզի հրամայես, տամ զոմ և մնադիւր. եթէ կամ իցէ քեզ ունել ինձ ինչ տալ կաբին՝ի քոյոցդ, պահեցիս և ես. իսկ եթէ այլազգ ինչ հաձոյ իցէ, ես արձ զարձամիտն իմ զձեռագործ և զինքեանէ, և զտուն և զգերդաստան տամ անդրէն և հատուցանեմ։ Պահանջեսցէ՚ի մէնջ և բնութիւնն զոր նախն էառ, գոգցուք և նմա. Իսկալ զոգի իմ լաւ ևս քան զոր էտուբն, ոչ թիկնադարձոյց լինիմ և ոչ խուսափիմ. դիւրաստացաստ ընկալ յինէն ինձնէ կամ, զոր էտուրդ առանց իմոյ կիտակցութեան. առ և տար։ Օ ինչ ծանր իցէ զառնալ անդր ուստի եկիր։ Զարաչար սպրի, որ զինն գիտէ բարւոք մեռանել։ Այս ուրեմն զայսր բանի զգինն պարտ է նախ նուագել և ընդ անարգս հանդարել զանձնէն՝։ Իսկ Ալիկ ըսն. Պ՚ժկամակ լինիմք ընդ աուսերասնարատ, եթէ ամենևին ամենայն իրօք իցէ լինին գտանել զկեանս. սիրելք, եթէ արհամարհանօք արհատարէն զայն. գիտեա, զի նոյն անգք և ընդ մեզ անցանէն. վասն զի բազում անգամ պատձառ մեռանելոյ է վատասիրան մեռանել։

Խաբան այն խաղասէր ասէ. Այս ինչ զբեզ պահէ ցկ կենդանի վատ և երիչատ. այնու առաւել վիրաւորեսցիս և խոցոտեսցիս՝ զի չգիտես մնասուցանել սրպ զպարանոցդ։ Խայց գու շատ սպրեացիս և լաւ մեռանիցիս, որ ոչ՚ի բաց տանելով զպարանոցդ և ոչ ձեռն ընդդիմ գնելով, այլ արիաբար ընդառաջես սրոյն։ Որ՚ի մնջոտանէ երինչն, ոչ երբէք զնդգոյ կենդանւոյ զոծձ, զզոծ. բայց որ գիտէ թէ ընդ յղանալ իւր անգ՝ իսկ և իսկ սահմանեցաւ նմա մնալ, կեայ ըստ կանոնի. և միանգամայն զայն ևս առնէ, նոքին սրսաթեամբ ոչ ոք, զի չեղէ ինչ յանեկարծադէպ յամենայն

1 Դարձեալ Թէոդորոսիոն անձնասպանութեան որ յառաջոյ և որ գինն՝ի բանադ՝ ըստ մերոց սկզբանց Աստիճանաց։

անցից՝ որ ընդ նա անցանէն։ Ո՛ան զի որ ինչ կարէ լինել, իբրև լինելոց նախատեսեալ՝ մեղմ գյարձա-
կումն ամենայն չարեաց, որք առ նախապատրաստս և
ակնկալուս ոչինչ բերին նորուն[1]թիւն. և միայն նոցա
են ծանր՝ որք յաջողութեանց ակնկալեալ մնան։ Օ՛ի
ոչ հիւանդութիւն, ոչ գերութիւն, ոչ կործանումն,
ոչ հուր, և ոչ մի ինչ յայսպիսեաց աստի է անակնկալ։
Վիտակ իսկ էր ի յորոյսէ աղմկալից բնակակցու-
թիւն աճ փակեաց զիս բնութիւնն. քանիցս բազում
լուայ ի գրացեացս, քանիցս ընդ սեամն գրացս վաղա-
ժամն օրհասիւք մեռեալք անցին՝ յառաջընթաց ջա-
հիւք և մահ-գինօք, բազում անգամ շառաչիւն հընչ-
եաց շինուածոց ի բարձանց կործանելոց դղորդմամբ.
զազգուսն ի նոցանէ որք ընդ իս բերեալ լինէին ի
հրապարակ, յարքունիս և ի բանս, գիշեր ի միջոց
եթարձ, և զձեռս կապեալս ի զոդիւք ընկերութեան մի-
ջակտուր արար։ Օ՛ արմացոյց արդեօք ընդ հասանել
երբեք յիմ վերայ արկածիցս որք հանապազ շուրջ
զինև թափառէին։ Ո՛ազուզք այն էն ի մարդկանէ
որոց նաւարկել հանդերձեալ չածէն զմտաւ զպէկո-
ծութիւն։ Ո՛չ երբեք ի բարւոջն եղելոյսն ամենի հա-
մարեցայց ինձ գչար որ ստացար։ Պօքղիոս քաջուշիմ
ի նուագս եղերերգականս և կատակերգականս, որ-
չափ ինչ եթող գրոյ ի կարգի միմոսական խեղկատա-
կութեանց՝ նա և լուրջ տեսարանաց, ի մէջ այլոց բազ-
մաց՝ ոչ գիրգ միայն բանից այլ և կրօնից, ասաց և
զայս.

Ո՛ձնեցուն մարթի դիպել,
Ո՛չ որ միւսմ կարաց լինել։

Նմին որ դրոշմեցեալ զայս ի խելս, և զամենայն օտա-
րին չարիս՝ որք զոր ամենայն յորդին յաձախութեամբ,
այնպէս նկատեսցէ որպէս մեզ արձակ ձանապարհ
կայ նոցին և լինքն եկատրելոց, բազմօք վաղագոյն
սպառազինեալ զանձն՝ մինչ չև է յարձակեալ արկածից։

[1] Իմա, ընդ որս ձեռն բարեկամութեան առեալ զգեցայր յեկա-
կարծ մահուամբ բառնին։

Ի՞նձգաման է հոգւոյն կազմիլ վառիլ յէտ փոքձանաց՝ ի համբերութիւն փորձանաց ։

Ոչ կարծէի (ասէն), թէ այդպէս լինելոց իցէ . ոչ հաւատայի թէ այդ պատահէլ ունի երբէք ։ Չէ ընդ դէմ ոչ ։ Որ այն մեծութիւնը իցէ , զորոց ջկնէտ ոչ գոյցեն շատապատ չքաւորութիւն և սով և մաքառութիւն ։ Որ այն շուք և մեծութիւն , որոց իշխանական պատմուճանին և հմայականացն և պատրական կօշկաց՝ չիցեն զուգընթաց և գարշելութիւնք և տարապղուելիքնք և անարգանք և բազմադիմ ստգտանք և յետին արհամարհութիւն ։ Որ այն թագաւորութիւն է , որում ոչ դարանեացցին կործանումն և ոնհպարութիւն և տէր և դահիճ ։ Չէ ոչ մեծ ինչ անկըսկած է ընդ նա և ընդ սոսա , այլ վայրկեան ժամու է ընդ մէջ գահոյից և ծնգաց օտարին [1] ։

Չէ արդ զիտեա , զի ամենայն վէճակ է դիւրաթափ . և որ այլում պատահեաց՝ կարէ և քեզ հանդիպել Ա՛ոյնմ իցես . այլ ոչ Հոխադոյն քան զՊոմպէոս , որում յորժամ Կայիոս՝ վաղջուց ազգակից և նոր հիւր զկայսերականն եբաց տուն զի զնորայն փակեսցէ , պակասեաց նմա հայ և ջուր . և որ իշխանն էր բազմութեան ինքնաբուղխ և ինքնահոսան գետոց , մուրացակաս խնդրեաց զկաթիլս ջրոյ . սուղ և ծանրաւոր սատակեցաւ ի պարտուն ազգականին , և սուվելոյն այնմիկ ժառանգն (Կայիոս) ի վարձու տայ ըզհանդիսական թաղումնն ։

Ի ծայրագոյնն էս հասեալ պատիւ . այլ միեմ յայնչափ մեծ , յայնչափ անաւելական և կամ յայնչափ հանրական , որպէս զՔԵյանոս ։ Յաւուր յորում ծերացեալն ի բարձրութենէնէն զնա կործաներ , ամբոխին զիւազգէշ յօշոտեաց . և այն՝ յոր դիպ և մարդկան կուտակեալ էր զամենայն տլչափ ինչ հնարն էր , ոչ ինչ մնացուած եթող զոր կորզեացե զահիճն ։

Լսագաւո՛ր էս . ոչ առ Աքեսս առաքեմ զքեզ , որ ի խարդախ իւր եղեալ ըստ հրամանին , և էառես զայն չի-

1 Չերթիս աղջս մեծութեանց իւրաքանչիւր նշանագիտացն Թուի յուցանել՝ զառագանդն , զբռմութեան և զազնուականութեան ։

2 Չի որ ի գահոյս նստեր Թագաւոր , ի ծունգս օտարին անկցի աղաչաւոր ։

ջեալ, յերկարակեաց լինելով ոչ միայն քան զԱդամատ-
թումիւն, այլ և քան զմահ իւր իսկ։ Եւ ոչ առ Յու-
գութեամս, զոր Ժողովուրդն Հռովմայեցւոց ՚ի միւմ-
ամի որպէս ոչն կարծէր՝ եհաս ՚ի տեսարանի։ Օ Պաղա-
ՀԱմս ազքայ ափրիկեցւոց և զՀիրդասն Հայոց, ՚ի
Կայիսեան դիպահոդ տեսաք. մին յաքսորս առաքե-
ցաւ, միւսոյն ցանկալն էր արդեօք՝ զի առանց զրժա-
նաց ՚ առաքեցի։

Յայսչափ փոփոխութեան իրաց ՚ի վեր և ՚ի վայր
յուզելոց, եթէ ոչ իբրև լինելոց հանդիսեցիս զնա-
բելիս, ՚ի քո կողմանէ այժ տաս Հախողութեանց,
զոր խորհեալոց նախատեսն։ Սոցին սակի ես և այն
զի մի ընդունայն և յընդունայնս աշխատ լիցուք. այս
ինքն է՝ զի ոչ այնց ցանկացող լինիցիմք զորս չկարեմք
՚ի ձեռս բերել, և թէ ՚ի ձեռս բերիցեմք՝ անագան
՚ի միտ առնուցումք՝ բազում ամենայն Հանդերձ՝ զու-
նայութեան ցանկութեանց մերոց՝ այս է, մի արդեօք
կամ մտավաստակ աշխատութեանն անգործ գտանիցի,
կամ գործն չարժիցէ զաշխատութեանն, վասն զի միօ-
րինակ գոյցես արտմութեան ծառի չյայտանի, եթէ
ոչ չայծոցէսցի և եթէ չայծոցեալն ամենայն իցէ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Կարձել, պարտ է զաստանդական Թափառումն զոր
տեսանեմք ՚ի մեծագոյն մասին մարդկան, որք չածխն
չրջին ՚ի տունս և ՚ի տեսարանս և ՚ի հրապարակս։
Ընձեռանատոյց լինին ՚ի գործս օտարին՝ Հանգոյն իմն ան-
զուլ գործանեից։ Չեթէ զոր ՚ի սոցանէ Հարցանիցես
յերանելն ՚ի տանէ. Չո երթաս, զինչ խորհուրդ ես գո-
տոյ պատասխանի. Օ՝ն և ես ասեմ զի և ոչ ես գի-
տեմ. այլ տեսից զամանս, արարից ինչ։ Ընդհարդարար
Թափառին՝ գործ իմպրելով. և ոչ զոր ՚ի մոլի եգիցեն՝
առնեն, այլ որ ինչ իրաց և պատահեն։ Խորհրդակորոյս
և ընդունայնամիտ են ընթացք նոցա՝ Հանգոյն մինչմանց

1 Քանզի Պաղմեոս գտատպարաեալ յաքսորս՝ սպանաւ յուզուլ

ընդ առնկս վեռելոց, որք ցգաղաթ բարձրութեան և անտի՛ ի ստորոտս կոյս ընդունայն երթևեկեն։ Զայս օրինակ կենաս վարեն յոլովք, զորս ոչ յանիրաւի անհանգստ անգործութեան կոչիցէ զբ։ Քանզի ողորմելոյս սգոյեաք՝ որպէս ընթացելոց ի հրդեհս. այնպէս խթեն մեզն զընդառաջ եելեալ և զանձինս և զայլս յերկիր գլորեն. իսկ վախճան ընթացից նոցա այն է, զի համ ունին ողջունել զբ՝ որ ոչն ունի փոխարէն ողջոյնել զնոսա, կամ զհետ երթալ գագաղայ անճանօթի ուրուք մարդոյ, կամ երթալ՝ի գաւտ ստէպ բանակաւորի, կամ՝ի հարմանիստութեան ստէպ ստէպ ամմանացելոյ, և զկնի երթալ գահաւորակաց, զոր՝ի տեղիս տեղիս և ի՛նքեանք բառնան։ Զկնէհաև աւերդոգ խանջութեամբ գարձ արարեալ՝ի տուն՝ երդնուն անպիտանալ յանձինս թէ էր վանս ելին՝ի տանէ, և ոչ էին (զոյն ողջոյն)։ այլ՝ի վաղիւ անգր ընդ նոյն շաւիղս ունին մոլորական թափառիլ։

Զայց սգոյ առնեացն աշխատութեան հարկ է զի իցէ նպատակ ինչ յոր և բերիցէ։ Զէ երթ չարտարութեան տատանել զանհանգարտն և զանմիտս, այլ առ երևոյթ պատկերք իրաց. զի և ոչ նոքա առանց ակնկալութեան իրիք շարժին. զգոյժ զնոսա երևոյթ իրի իմիք, զորոյ զուշադրութեան ոչ յանդիմանէ միաբ որ սացեալ։ Զայլին օրինակաւ զայր իւրաքանչիւր յայնցանէ՝ որք՝ի գուրս երանեն առ աՀեցուցանել զանձինս, մնոտի և թեթև պատճառք յածեցուցանեն ընդ քաղաքն, և գնա գլխովին՝ որպ ոչ ինչ աշխատութիւն է, ծագումն առաւօտու ընդոստացանել. և որ՝ի զուր յաճեալ ընդ սեամն բազմոյ՝ յանուանել ողջունեաց, ՝ի բազմոց արագաբեալ՝ ոչ զոք՝ի նոցանէ եգիտ առաւել քան զինքն անհանդարտ՝ի տան։

Օգամ չարէ կախեալ է վատթարագոյնն այն ախտ, անկնդրուկութիւն հետաքրքիր և հասարակաց (կամ տէրութեան) գաղտնեացն ընդվզարաքնութեան և յոլովից իրաց գիտութիւն, զորս ոչ է յայտահոլի պատմել և ոչ յայտահոլի լսել։ Զկամ, որպէս ինձ թուի, հասու եղև Վեմիկրիտոս, ուր այսպէսն ախտաւի (խոսել)։ Զոր զի կամի խաղաղիկ կեալ, ոչ առանձինն քաղցր ինչ անխիղճ և ոչ հրապարակաւ. յայտ է, թէ որ

ինչ յաւելցուս բերի ։ Օ՛ն թէ հարկաւորք են , եթէ առանձինն և եթէ հրապարակաւ՝ ոչ միայն բազումն առնել պարտ է , այլ և անթիւս . իսկ ուր ոչ ինչ հարկ պաշտաման հանդիսապէս զմեզ կոչէ, կարձել պիտի զաբարս ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔԱՍԱՆԵՐՈՐԴ

Օ՛ն որ բազումն գործէ , բազում անգամ զիշխանութիւն բախտին նուաճէ ընդ իւրև . ապահով քան զանհնային այն է՝ դուն ուրեք փորձ փորձել զբաղդդ , բայց միշտ խորհել զայնմանէ և ոչ երբէք խոստանալ անձին զհաւատարմութենէն նորա ։ Այաւելցից , եթէ ոչ պատահեցայ ինչ . պրետոր եղէց , եթէ ոչ արգել ինչ լինիցի . և տուրևառքս յաջողեացին , եթէ ոչ խափան ինչ ընդ մէջ մտանիցէ ։ Այս է՝ որոյ վասն ասեմք , թէ խնամտոյ ոչ ինչ հանդիպի ընդդէմ իւրոյն կարծեաց . ոչ արտաքոյ հանեմք զնա դիպուածոց մարդկան , այլ մերբուքեանց նոցա , և ոչ ամենայն յաջողէ նմա ըստ կամս , այլ ըստ մտածութեանն . վասն զի կանխաւ էած զնմանէ թէ մարթի ընդդէմ ինչ յառնել իւրումն առաքարկութեան ։ Այս Հարկաւ թէեմև լինի ցաւ սրտի ընդ անյաջողութիւն բաղձանացն , որում չկայ ոք խոստացեալ զյաջողութիւն ։

ԳԼՈՒԽ ՉՈՐԵՔԱՍԱՆԵՐՈՐԴ

ԴԻՈՐԱՊԱՏՐԱՍՍ ևս պարտիմք առնել զանձինս զի մի կարի յամառեալ յիրս ցորս ի մտի եդաք՝ անցցուք յայնս , յորս դիպուածն առեալ տանի զմեզ ։ Այս մի զանգիտեցուք ի փոփոխմանէ խորհրդոյ կամ վճռի . միայն թէ մի աստանդեսցէ զմեզ թեեմևաբարոյութիւնն՝ ախտ յետին թշնամի հանդարտութեան ։ Վանդի և յամառութիւնն հարկաւորապէս նեղասրտի և չտառապեալ , երբ բախտն յոլովակի կապակ ինչ ի ձեռաց նորա . իսկ թեեմևաւորութիւնն ևս ծանրագոյն , ոչ

ուրեք երբեք գկայ առեալ։ Արկաբին ևս սխերիմ են անդորրութեան. եթէ չկարել փոխել ինչ և եթէ չկա-
րել կրել։ Պատքէն պատ է զոգին յամենայն արտա-
քին իրաց կինքն ի ներքս կոչել, կինքն վստահացի,
իւրև ինդասցե, յիւրն հայեցի, ի բաց հրաժարեսցէ
ըստ կարի յօտարին իրաց և յանձն լոյծ մտադիր, ոչ
գժկամակեսցի ընդ ուզգանս և զհակառակս անգամ
ի բարւոյ մասին ընկալցի։

Երբև պատմեցաւ Օ Հենանի մերում՝ նաւաբեկու-
թիւնն ուր ընկղմեցան ամենայն ինչք նորա, ասաց.
Հրամայէ ինձ բանսն առաւել ազատօրէն խնամատա-
րել։ Պատճառը բռնաւորն Լիվդորոսի խնամատարի
զնամ, և այն՝ անեծադ. ետ պատասխանի. Ասասիկ ի
ձեռս քո հանձոյք քո, Հիմեոնաւ իսկ արիւն ընդ քո իշ-
խանութեամբ է. իսկ որ ինչ վասն ի ազգանն բանք իցեն,
վաշ անմոռանալ քում, եթէ կարծիցես թէ հոգայ-
ցեմ ինչ ընդ երկրաւ արդեօք թէ յերեսս երկրի ապա-
կանեցայց։ Պատուոյ այր արդարև մեծ, որոյ վա-
ռանն ոչ ինչ բամանակ ծնանիցին նորա ի մերումն գա-
րու, յորժամ վիճակաւ յերկար ընդ Կայիոսի, ապա այն
ինչ յերթալն նորա ասաց ցնա Փաղարիոն այն, Ի՞նչ
արդեօք մնասի յուսով զանձն քո խաբեացես, զի ահա
հրամանն ետուս ի մահ տանել զքեզ. զայս արար պա-
տասխանի. Ճ նորա քեզ ունիմ, քաջդ արանց։ Օ ինչ
խնամոք կիցն քանիցն, տարակուսեալ եմ. զի բազում
ինչ անցանէ ընդ միտս իմ՝ Վստահանալիք լինել կա-
մեցաւ արդեօք և ցուցանել թէ քանի էր նորա անո-
զոքմանթիւն, զի մահն ի բարեբարութիւն համարեա-
ցի, կամ թէ յերեսս իսկ յանդիմանեաց զհանապա-
զորդեան յիմարութիւն նորա. քանզի ընդդէմ ունէին
նմա, որոց միանգամ զաւակք սպանեալ լինէին և որոց
գոյք գրաւեալ լինէին. և կամ գուցէ զնամ որպէս զա-
զատութիւն մտադիր ընկալաւ։ Այր ինչ և է, մեծամեծ
նաւթեամբ ետ պատասխանի։ Ասիցի ոք. Կարող էր
Կայիոս յետ այսորիկ հրամանն տալ, զի կենդանի
մնասցէ։ Ել զանգիտեաց յայսմանէ Կանոս. յայտնի
էր հաւատարմութիւն Կայիոսի յայդպիսի հրամանս-

1 Իբրև զի Հիմեոնաւ արիւն հոսեալ յերակաց՝ սպառին և կեանք։

տրամիւնս : Հաւատայցէս Թէ զտան աւուրսն՝ որք ընդմիջեցին մինչև ցսպանումն, առանց իրիք Հոգոյ իցէ անցուցեալ Կանոս: Ընդհատատալի է արդարև զոր միան-գամ այրն այն ասաց և արար , և ոչպէս անդորր եկաց սրտիւ : Կարօտ խաղայր , յորժամ Հարիւրապետն որ զգլխապարտիցն վարէր զմիջը , հրաման ետ և նմա յառ-նել և գալ ի մահ : Ընդ կոչին Հաշուեաց զքուէսայս և ասէ ցընկերը իւր . Տե՛ս , զի մի՛ յետ մահուան իմոյ ստեւ-ցես Թէ զուլաղեցեր . և ցհարիւրապետն անկաթ-կեալ , ասէ . Ո՛վ կայ ընդիր զի ես միով առաւելուիմ: Կար-ծե՞ս Թէ Կանոս ի տախտակի անդ խաղս խաղայ . ոչ , այլ խաղ արար : Ցրտում էին բարեկամքն՝ Հանգերձ-ձեալք զանկոիսի այր կորուսանել . Օ՛ի տրտմեալ կայք , ասէ . զուք իմդրեք , Թէ արդեօք անմահ իցեն Հոգիք . աւասիկ ես ի մեռոյ գիտակ եղէց : Ել զադարեաց և՛ի կատարածի անդ իւրում խուզարկու լինել Հնմարտու-Թեան , և ըստ սովորութեան իւրում իմդիր յուզել: Օ՛չ երեմայր նորա փիլիսոփայն իւր . և իբրև ոչ ինչ կարի հեռի էին ի չերմկն ուր Կեսարու՝ աստուածոյն մերում Հանապազօրեայ զոհք մատչէին, ասէ . Օ՛ինչ խորհիս այժմ, ո՛վ Կանոս , կամ յոր միտս իցես՝ Պա-տասխանի ետ Կանոս . Լսդի՛ ի մտի ուշ ունել այնմ երագաՀռիչ վայրկենի , Թէ արդեօք զգայցե՞ Հոգին զելս իւր : Այ խոստացաւ , զի Թէ խելամուտ ինչ լինիցի , շուրջ Թռուցեալ զբարեկամաք՝ ցուցանիցէ նոցա Թէ զինչ վիճակ իցէ Հոգւոյն :

Հաւատիկ յաղեկոծութեան անդ անդորրութիւն , աՀաւասիկ Հոգի արժանի յաւիտենականութեան , որ զնախատապիր իւր վերածէ ի ցոյց Հնմարտութեան . որ ի յետին օրհասի զելս Հոգւոյն հետաղօտէ . ոչ միայն մինչև ցմահ , այլ և ի մահուան անդ ուսանի ինչ զմահուանէ : Ել զբ յերկարագոյն քան զնս իմաս-տասիրեաց . այլ չէ պարտ Հարևանցի զմեծ արարքն առնել , առաւելագոյն իմանալ արժան է ասել զմա-նէ : Ո՛վ , յաւերժացուցեալ զմիտսատակ քո , գլուխդ գերարիալ . կայիոսեան կոտորածին մնան պանծալի :

1 Հնդհանրաբար ասէ զկայիոսէ որ զաստուածութեան Թեին ածեալ զանձամբ և զանձինսի սպանգան իւր մատուցանէր :

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յիշ. ոչ ինչ օգնէ տարադիպն առնել զպատճառս առանձնական տրամաբանութեան. քանզի պաշարէ երբեմն զանձն քո առեղծութիւն ազգի մարդկան, և ընդ առաջ ելանէ խուժան իմն յաղջղելոց ապիրատութեանց, յածէլն զմտաւ Թէ քանի սակաւագիւտ է պարզմտութիւն, քանի անձանօթ անմեղութիւն, և հաւատք ոչ ուրեք, բայց ուր յօգուտ անձին բերիցի. և շահք անառակութեան և տուգանք միօրինակ գարշելիք, և ամբարտաւանութիւն տարապայման՝ մինչև դժպատեհ և անարժան օրինակաւ արտաքայլել։ Վիշեր պատ զոգին, և որպէս Թէ կործան անկեալ լցեն առաքինութիւնք, ոչ ըոց ոչ աչնկալութիւն է, և ոչ ունելն ինչ օգտ, խաւարաւ մածի անձն։ Այս արդ այսմ պարտ է մեզ ուշ ունել զի ամենայն մոլութիւնք ոտնկին ոչ՝ի բարկութիւն, այլ՝ի ծաղր շարժեսցեն զմեզ, հետևող լինելով առաւել Դեմոկրիտոսի քան Հերակղիտոսի։ Օ՛ի սա ցորչափ՝ի հրապարակ ելանէր՝ լայր, իսկ նա ծիծաղէր. միւսին ամենայն գործք մեր թշուառութիւնք թուէին, միւսումն խաղալիք։ Պարտ ուրեմն Թեթևացուցանել պարտ է զամենայն և մնադիւր բառնալ. առաւել վայելչական է մարդոյ՝ի ծաղր գալ ընդ կենցաղս, քան ողբալ։ Ո՛ւր Թողից զայն զի և մարդկան ազգի առաւել բարեացապարտ գտանի՝ որ ծիծաղէն, քան որ լայ։ Նա Թողու և տեղի ինչ յոյսոյ, իսկ սա անմտաբար ողբայ ընդ այն՝ զորոյ զուղղութենէն անյոյս գտանի։ Այս համանգամայն տեսութեամբ ամենայնի՝ առաւել մեծանձն է որ ծիծաղին քան որ լայն. զկարի Թեթև կիրս ոգւոյն շարժէ, և ոչ ինչ զարմանալի կամ մեծ կամ իսկական առնել զամենայն հանդերձանս և զաղմուկս աշխարհի։ Օ՛մի մի կիրաց անտի, ընդ որս խնդամտիմք կամ տխրիմք, յածեսցէ ոք ընդ միտս և՝ի միտ առցէ Թէ ՃՀմարիտ է ասացեալն՝ի Խիւմէ. Ամենայն արարք մարդկան նման են ծադման նոցա, և ոչ է կեանք նոցա առաւել սուրբ կամ իսկագոյն քան զդողութիւնն սկզբնաւորեալ։

Ի՛մչ լաւ ևս է զհասարակաց բարս և զմարդկային միջոցին խոպան սրտիս տանել, և ոչ ի ծաղր և ոչ յարտասուս բերել։ Ո՛ման զի այլոյն չարեաց տանջիլ է յաւերժական թշուառութիւն. այլոյն չարեաց ինդամանի՝ տմարդի հեշտութիւն, որպես անօգուտ մարդաւարութիւն է այն, ողբալ ընդ մահ զաւակի օտարին և ինձուել զնակատ առ ի ցոյց։ Այլ ի քո չարիս գլխովին պարտ է քեզ այնչափ ինչ տեղի տալ ցաւոյ՝ որչափ նա պահանջէ և ոչ որչափ սովորութիւնն։ Օ՛ի բազումք այն են որք առ ի ցոյց հեղուն զարտասր, և ցորչափ չիք որ տեսող, ցամաքեալ են աչք նոցա, տեղի վարկուցեալ չարտասուել՝ ուր ամենեքեան զայն գործեն։ Ի՛նչափ արմատացեալ է չարս այս զայլոյն կախել կարծեաց, զի և ցաւն՝ կիրք անկեղծ ամենևին՝ ի կեղծաւորութիւն է դարձեալ։

Այլ կան և որք սովոր են ոչ յանիրաւի տրտմակից լինել և հոգալ երբ բարեացն չարչարք լինին եղբ. օրինակ իմն երբ Մոկրատես բռնադատի ի բանտի մեռանել, Հռուտիղիոս յաբսորանս կեալ, Պամփեոս և Արկերան՝ որոց բարեբարեգինն տալ զպարանոցս։ Կատոնին այն կենդանի պատկեր առաքինութեանց՝ կեցեալ ի սուր՝ զանձին և զհասարակաց տերութեան սահմանել զաղէտ։ Հարկ է նեղիլ յանձն զի բարեաց այսպէս անհրաւութեամբ վարձահատոյց լինի, և որ յոյս ինոյ անձին իւրաքանչիւր, ի տեսանել զի լատապղծեալ զայնպիսի չարչարս անոցս կրեցին։ Կակ արդ զինչ իսկ։ տես թէ որպես համբերեաց մի մի ի նոցանէ. եթէ քաջ գտան, նոցուն քաջասրտութեան լեր տեհչող, եթէ հիւանդագին և վատասիրտ օրինակաւ կորեան, ոչինչ կորեաւ։ Կամ արժանի են զի առաքինութեան նոցա քեզ հաձոյասցի, կամ անարժան՝ զի ցանկալի լինիցի քեզ վատասրտութիւն նոցա։ Օ՛ի զինչ գժպատեհ քան զայս, եթէ որք անուանիք քաջութեամբ մեռանելով՝ երկոտս զայլս գործեցեն։ Վասնզոյգ զայնպիսի արժանաւորս գովութեան և աստ յաւ. Արդարեմ արաւել քաջ նոյնպէս և բարեբաձիկ բարեմասնութեամբ ի մարդկայնոցս խոց եառար դիպուածոց, ի յաչառնոց և յախտաւորութեց. էլեր ի բանաւ, ոչ եթէ արժանի չար բախտի երևեցար դու յայս

աստուածոց, այլ անարժան ընդ տէրութեամբ լինելոյ բանին։ Յակ պրոց խոստովինն, և 'ի մանուկ անդ ըզկեանս խնդրեն՝ ձեռն զօձեօք նոցա պատ է արկանել։ Եւ զոր 'ի խնդացելոց լսելոյ և ոչ 'ի լացողաց զոր, նա զարտասուս իմ ինքնին սրբեաց, սա արտասուօք իւրովք անարժան կացոյց զանձն արտասուաց իմոց. զ՚Հերակլէս լսելոյ ես զի կենդանւոյն այրի, կամ զ՚հեռագունս զի բազմահեղոյս բևեռի, կամ զկատուին՝ որ զանձին խոցուած արիաբար տանի։ Որբա ամենեքին 'ի սակաւ ժամանակի գիտացին լինել յաւիտենական, յանանցանելիսն մահուամբ ձանապարհորդեցին։

Եւ՝ փոքր ինչ պատճառք են հոգածութեան և տատամսիլն այն 'ի յարգարումն անձին ոչ ուժեք անկեղծութեամբ ցուցանելոյ զինքն. այսպիսի են կեանք բազմոց կեղծաւորեալ և 'ի ցոյս կերպարանեալ, վասն զի նեղէ զանձն հանապազորդեան գիտողութիւն անձին, և զանգիտէ այլազգ քան զսովորականն երևել։ Եւ երբէք ազատանամք 'ի հոգոց ցորչափ համարիմք՝ թէ այնչափ համարումն առանձամբ, որչափ և տեսանիմք։ Ա՝ ասն զի և բազում ինչ իրք հանդիպին, որ և յանմայ կամն նշանակեն զմեզ. և թէ և կարի զգուշաւոր լինիցի ոք անձին, բայց ոչ է կեանք զուարճալի և ոչ անբոյթ՝ կեալ ընդ պատրուակաւ միշտ օտար կերպարանաց։ Վասն հեշտալի է այն պարզ և իւրև զարդարեալն անկեղծութիւն, որչինչ առաքաստ 'ի վերայ արկեալ բարոյից իւրոց։ Ոչայց և այս կեանք ընդ վտանգաւ է արհամարհութեան, եթէ ամենայն ինչ ամենեցուն յայտնի լինիցի. զի են որ զզուին 'ի հնալ մտաւոցելոյն։ Ա՝ակայն չէք վտանգ և առաքինութեան անարգ երևելոյ աչաց 'ի մտս մտաոյիլ անդ. և լաւ ևս է անկեղծութեամբ արհամարհիլ՝ քան հանապազորդեան տանջիլ կեղծաւորութեամբ։

Ա՝յլ չափ գիցաբ իրացդ. բազում խոիր կայ ընդ կեանն անկեղծութեամբ և ընդ կեանն անհոգութեամբ։ Ո՞ տա ևս պատ է առանձնանալ յանձին. վասն զի կենակցութիւն անմնահեաց խոտնատիպազեկ

1 Ես տես գարձեալ՝ որպէս բազում ուրեք 'ի գրիս՝ ոչ զմիանց ունին բանքն։

զբարեկարգութիւն, արձարձել զիլիս, և որ ինչ կայ յոգւոջ տկար և ոչ քաջ զարմանեալ, զայրացուցանել։ Այլ սակայն պարտ է խառնել զայսոսիկ ընդ իւրեարս, և փոխանակաւ վարել զառանձնութիւն և զկենակցութիւն։ Առանձնութիւնն քաղցրացուցանէ մեզ զմարդիկ, կենակցութիւնն՝ զանձինս, և լինիցին դեղ իրերաց. զառեալութիւն անբոխին բուծեսցէ առանձնութիւն, զառանձնութեանն ձանձրոյթ՝ կենակցութիւն։

Այլ ոչ՝ ի նոյն ուշադրութեան անընդհատ պարտ է ունել զմիտս, այլ զարձուցանել՝ ի զուարճախօսութիւն։ Սոկրատէս ոչ ամենի հանարեր խաղալ ընդ տղայս, և Պատոմն գիտեաւ սփոփել զոգի վաստակեալ՝ ի հոգոց հասարակաց, և Սկեպիոն զյաղթողական և զզինուորական գայն մարմին ետ՝ ի քաղս (ոտից). ոչ իգաբար բեկբեկելով զանձն, որպէս յարդիս է առ վօրութիւն, ուր և՝ ի գնացս անդ առաւել քան զկատարեալ թուլութիւն ծեքծեքին, այլ որպէս առաջին այն արք սովոր էին՝ ի մէջ խաղալ և՝ ի ծանական աւուրս՝ առնացի շարժմամբ կայթել, և ոչ մի գեան ունելով թէ և՝ ի թշնամեաց անգամ տեսանիցին։

Ընդհան է թուլութիւն առնել երբեմն ոգւոց, զի որ հանգչինն՝ լաւ եւս և զօրագոյն յառնին։ Ոչ որ օրինակ չէ պարտ բուռն առնել արգաւանդ անդաստանաց, ապա թէ ոչ՝ փութով տկարացուցանէ գնոսա անընդհատ պտղաբերութիւնն. այնպէս և զաշխոյժ ոգւոց սպառէ անընդհատ աշխատութիւն։ Օ զբաղին առ փոքր մի թոյլտուութեամբ և դիւրութեամբ։ Ի հանապազորդութենէ վաստակոց ծնանի բթութիւն իմն ոգւոց և ընդարմացումն. և ոչ ձկտեր՝ ի նոյն այնպէս ցանկութիւն մարդկան, եթէ չունէր խարն և զուարճութիւնն զնուաղագործն ինչ հեշտութիւն. որոց յաձախ կիրառութիւնն կապուի զանձնային ծանրութիւնն և զանձնային զօրութիւն ոգւոյն։ Պարտ և քունն իսկ կարճոտ է՝ ի հանապատ մարմնոյ, բայց թէ զտիւ և զգիշեր ննջեսցես՝ մահ լինի գլխովին։

Խազում ինչ ընդ մէջ է՝ թողացուցանելոյն և թուլացուցանելոյն։ Զբնեղիքը աւուրս սահմանեցին տօնականս զի մարդիկ հաւաքեսցին՝ ի հանդիսասէս

զեաւթիւնն , որպէս Հարկաւոր բարեխառնուԹիւն ընդ մէջ արկանելով զայն աշխատուԹեանց : Այլ ի մեծամեծ արանց՝ որպէս ասացի , ամենեք աւուրս պարապոյ ամենց յամիս տահմանելին անձանց , ամենեք և զամենայն օր բաժանելին ընդ հանդարտուԹիւն և ընդ Հոգս . որպիսի ոք Պաղտիոն Այսինիոն էր Հարտատ բարեաւն մեծ զոր յիշեմք , որ յոչ ինչ զբաղէր գործ յետ տանեւերորդ ժամու . և ոչ իակ նամակս անգամ ընԹեռնայր զի մի նոր ինչ Հոգ ճնանիցի . այլ զողջոյն իակ աւուրն գլաստակ երկրորդիւքը ժամոքն սփոփէր : Ամենեք զմիջաւուրըն Հանգիստ տային անձանց և գիմի միջօրէին ի ԹեԹև ինչ գործս պարապէին : Այսինքն իակ մեր արգելուին գիմի ժամուն տանեւերորդի չառնել ինչ նոր առաջարկուԹիւն ի ծերակուտին :

Օգոստոսն բաժանէ զպահս գիշերապահս , և գարձեղջն յարշաւանսց պատերազմի ազատ է գիշեր : Այնել արժան է ոգւոց և պարտ է տալ ըստ ժամու ՀանդարտուԹիւն , որ իցէ նման ի մնունդ և ի զօրուԹիւն . պէտք են և ընդհագիլ ի բացօԹեայ վայրս , որպէս զի ընդ արձակ երկինիւք և յորդաբուղս օդովք արծարծեսցի և զօրասցի ոգին : Այ զի և հեծելուԹիւն և ՀանապարՀոդուԹիւն փոխոխումն գաւառաց այժ տան , որպէս և խրախուսնք և գիմեերբուք , արբենալով երբեմն մինչև ցգուարճանալ՝ ոչ զի ընկՀեսցէ գինգ , այլ զի վայրաբերցէ (ի բարձրագունիցն Հոգոց) : Այ ասն զի փարատէ գՀոգս , և ի խոր վայրէ ի վեր շարժէ զոգի . և որպէս ախտից ոմանց , նոյնպէս և արտմուԹեան դեղ լինի : Վատակ գիմեոյ Այցատ՝ կոչեցաւ ոչ ըստ ազատուԹեան լեզուի , այլ զի ազատ առնէ զոգին ի ծառայուԹենէ Հոգոց , և զօրացուցանէ և արտասպնդէ և յանդգնագոյն գործէ յաջողեալն աշխատուԹիւնս : Այլ որպէս ազատուԹեան , սոյնպէս և առողջարար գիմեոյ չափ կայ : Այարծի և Այոյնի և Այրկեսիդեայ վարել գիմեաւս : Այատոյն յանդիմանեցաւ վասն արբեցուԹեան . այլ որ յանդիմանեացն գնա՝ գյանցանսն յաւէտ պարկեշտացոյց քան

՝ Այ՛ղէբ . Ըստ լսելեացւոց կոչեցեալ Բաքոս կամ Դիոնիսոս աստուածն գիմեոյ :

թէ արատ մարթացաւ դնել Աստուծի. բայց չէ պարտ յանձախել, զի մի ոգին ձգեսցէ չկնքն զլաւ սովորութիւն. այլ երբեմն միայն ի ցնծութիւն և յուրախութիւն և առ ի բաց առնելոյ յանձնէ խաչն ինչ զսխալս զգաստութիւնն։ Օ ի եթէ քերթողին Հելլենացւոց հաւատամք, երբեմն և անմանաւն է սխորժելի. եթէ Պղատոնի, Ի զուր մերձի զգճնն ի քերթողական զրուն. և եթէ Քրիստոսելի, Ողջ երբէք հանձար մեծ անխառն յանմտութենէ։ Ոչ կարէ մեծ ինչ և գեր ի վեր քան զայլն խօսել, եթէ ոչ միտք յուզեալ։ Որ զհետևակ և զսովորական բանիւք արհամարհեալ և սրբազան ինն ազգմամբ վերանթարձաւ, յայնժամ ասա գիտասցէ նուագել բարձրագոյս քան զսահ մահկանացու բերանոյ։ Ոչ կարէ ոք ի բարձրագոյն ինչ և ի դժուարանտայց հասանել, ցորչափ ինքն չինքեան կայ։ Պէտք են օտարանալ ի սովորականէն, մոլել, ծամել զանձ և յափշտակել վարել զկառավար իւր յոր վայր զանգիտէր ինքնին վերելակել։

Ոչ սահիկ քեզ, սիրեցեալդ Աերենէ, որ ինչ միանգամ մարթին պահել զանդորրութիւն, որ ինչ զարձուցանել զայն, և որ ինչ դիմակալել մոլութեանցն յարամբի ի ներքս սպրդելոց։ Այայց այժմ գիտակ լինիջիր զի ոչ ինչ յայսցանէ բաւական է որոց ունին պահել ինչ մի դիւրաբեկ, եթէ ոչ անդուլ և անձանձիր փութով չարչ պարապեսցին զոգին դիւրատես։

ՊՕԼԿԱՈՍԻ Ա. ՍԵՆԵԿԱՑՒՅ

ՅԱՂԹՈՒԹԻՒՆՔ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ

ԻՄԱՍՏՈՑ

ԱՅՍ Է՝ ԹԷ ՉՈՏՆԱՆԵՆ ԻՄԱՍՏՈՑ
ՈՉ ԹՔՆԱՄԱՆՔ ԻՆՉ ԵՒ ՈՉ ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ 1։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՊՅՆՉԱՓ խոհր է, Աերենէ, ընդ Աոսիկեանս և ընդ այլ խնամտաւեսս, որչափ ընդ էգս և ընդ արուս, և յիրաւի արդեօք. զի թէպէտ և երկաքանչիւր դասք միօրինակ ստացաբ լինին յընկերութիւն կենաց, այլ մին ծնեալ է՝ ի հպատակութիւն և միւսն՝ ի հրամանատարութիւն։ Պայք յիմաստնոց մեղմով և քաղցրութեամբ՝ որպէս արդեօք առանին և ընտանի քրմիքը, զարման տանին հիւանդացեալ մարմնոց, ոչ որպէս քաջարաւ և երագաբուժիչ թժուի, այլ որպէս մարթի լինել։ Յոկ Աոսիկեանք յուղի անկեալ առնսցի՝ ոչ ինչ փոյթ տանին եթէ ուղին զուարճալի երևեսցի ուղևորելոց, այլ զի վաղ ընդ փոյթ զմեզ կորզեսցին և՝ ի բարձրադիտակ զագաթին՝ ի վեր հանիցեն. որ այնչափ արտաքոյ ամբարձեալ կայ՝ ի յարձակմանց զի-

1 Ա.յս ձառ գրեալ՝ ի Սեռնէկայէ առ նոյն Սերենոս բարեկամ՝ բազմ գովութեանց նպատակ է առ քինիչս, և է՝ ի նախապատրաստ մանեռագրութեանց նորա։ Ա.յլ քաջ խակ՝ ի կատակգրութենէ ազանդոյն՝ ի գովութիւն զեղեխ նա անգէն եւրոց Սոսիկեանց։

նուց առնոյին, մինչև գեր՝ ի վերոյ նստել քան զթախտըն գլխովին։

Ասայց ասիցես. դժուարակոխ են ճանապարհքս յոր հրաւիրիմք, և առապարք անհարթք։ Ասակայն և ընդ հարթն զիաղդ լինիցին վերելք։ Ասայց և ոչ այնչափ զառ՝ ի վեր են, որպէս ոմանց թուի. սիրելքն ևեթ ուղղոյն քարուտ է և ապառաժուտ և իբրու անկոխ. ըստ որում և յորվք՝ ի վայրաց՝ պոյծ՝ ի հեռաստանէ ակնարկիցեն՝ խորտաբորտ և խանիխուռն սովոր էն երևել, զի հեռատոհութիւնն պատրէ զաչս. այլ մերձ երթեալ վայրացն՝ պատրանք ացոյն լուծանին և զգեալքն՝ ի մի՝ տակաւ անջատին, և որք՝ ի հեռուստ գահք և դարաւանդքն երևէին, գառնան՝ ի գագաթն հեշտին։

Ասյն ինչ գեռ ևս յիշատակութիւն լինէր Ասարկոսի Ասատմեի, դժկամակ լինէիր, ըստ որում չէանգուսժէս ընդ անհրաւութիւն, զի զԱատուծի յարգ չնմացաւ ըստ արժանւոյն դար նորա. զի զգեր՝ ի վերոյն քան զՊամ սկսս և քան զԱբեսար՝ խոնարհագոյն եղ քան զի ա տինիսս. և գժպատեհ քեզ թուէր զի վասն հանա ռակելոյ նորա օրինացն առաջարկելոյ՝ զպարեգօտն՝ ի բաց մերկացին՝ ի նահանջ, և յատենէ անտի մինչև՝ ի կամարն Վաբեանն՝ ձգեալ ձեռամբք խռովայոյզ խու ժանին՝ յանձին կալաւ նախատինս, թուէր և զպղ ա մինոյն թշնամանս անմիտ բազմութեանն։ Յայնժամ ետու ես պատասխանի. Ցիրաւի ե քեզ զպրանալ յա նուն Հատարակաց պետութեան, զոր ատի Կղզոիս, անտի Ա ատենիոս և որք յարախտաւորք՝ ի վաՀան հանելին՝ և Տարեալք ցանկութեանն չկացութեամբ՝ յառնուին՝ ի միտ թէ՝ ի վաՀաւել անդ զպետութիւնն վաՀաւոին և ինքեանք։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ո՞ւնչ ողջոյն է արքային, իսկ կորուսեալ՝ զուխտ սըն ջղրէն[2]։

Ո՞չ այս արկածք օրհասաբերք են խաղաղութեանն Հռոմայ, այս է որ զանհնամար ժողովրդեան զբախտ տապալէ։ Ձայնելայր Հեռի է ի վտանգէ այսի ժողովրդի, յորչափ գիտասցէ տանել սանձի. ապա եթէ կոտորեսցէ, կամ՝ զընկերեսցէն ըստ դիպաց ինչ՝ ոչ հանդուրժեսցէ առնուլ միւսանգամ, միութիւնս այս և հիւսուած մեծի ինքնակալութեանս ի յոյզ մատուցանք քայքայեսցի. և ի բառնիլ հպատակութեան ի քաղաքէս՝ բարձցի ի նմանէ և տիրապետութիւն։ Այսին իրի ոչ ինչ էն զարմանք զի և առանց իրիք անձնիւր սիրոյ ոգւոյ սիրելիք ամենեցուն իցեն իշխանք և թագաւորք, և որ այլ ևս անուանքք տէրութեան էն հասարակաց տէրութեան։ Ո՞ ի եթէ առ ողջամիտս ի մարդկանէ՝ գեր ի

[1] Որպէս զնաւորիս։ [2] Վ. Իրգիլ. Մշակ. է. 212։

վերոյ Ճանաչին Հասարակացն իրք քան զմանաւորացդ, ապա ուրեմն և առաւել սիրելի լինել ունի սա՝ յոր ակն կառոյց կայ Պետութիւն Հասարակաց։ Վասնզի այսպէս երբեմն ընդխառնեցաւ Կեսար ընդ Հասարակապետութեանն, մինչև անմարթ է բառնալ զմին յերկուց՝ առանց և երկաքանչիւրոյն վնասու. զի որպէս նա զբութեան պետս ունի, նոյնպէս և սա գլխոյ։

ԳԼՈՒԽ Չ.ԻԳ.ԵՐՈՐԴ

Օգուտ ի յառաջարկութենէ ընթանալ թուի բանս, այլ Հաւատս ինձ զի Հաստատագոյնս այնգէ զնոյն։ Օ ի թէ, ըստ որում է խնաստասիրել յասացելոցս, Հոգի ես դու Հասարակապետութեան, և այն՝ քո մարմին, տեսանես՝ որպէս կարծեմ՝ թէ քանի կարևոր իցէ քեզ գթութիւն. զի այլոց երևեալ խնայել՝ յանձն քո խնայես։ Այլ խնայել պարտ է և յանարժան քաղաքացիս իբրև ի խօթ անդամս. և թէ երբեք արիւն հանելոյ պէտք իցէ, պարտ է զդոյշ լինել զի մի առաւել քան զՀարկն երակ հատանիցես։ Այս ուրեմն, որպէս ասացի, թէպէտ և ամենայն մարդոյ համաբնական է գթութիւն, այլ վայելչագոյն և ինքնակալ լաց· որչափ զի մեծագոյն ինչ է՝ զոր ունի պահպանել ի նոսա, և զի ի մեծամեծ իրս Հանդիսանայ։ Օ ի որքան դուշնաքեայ իցէ միտն որ յանգթութենէ սոսկականի ուրուք առն, իսկ իշխանացն գժնեխութիւն՝ պատեհագոյ է։ Այլ թէպէտ դաշնակիցք միմեանց իցեն առաքինութիւնք, և ոչ մի քան զմիւս լաւագոյն կամ Հաւասարագոյն, բայց է որ միաւին և է որ միասում առաւել ի Ճահ գայ· իսկ մեծամեծնութիւն վայել է ամենայն մարդոյ, թէպէտ և վայրագոյն ինչ ոք իցէ քան զամենեսեան։ Այսն զի զինչ այլ այնպէս մեծ կամ արիական, որպէս զիմակաց լինել ձախողութեան։ Այլ սակայն մեծանձնութիւնս այս ընդարձակագոյն ունի տեղի ի յաջողութեան, և լաւ ևս երևի ի բարձու՝ քան ի

[1] Այս ինքն է յայլ՝ որ ի բարձու տեղւոջ կայ մեծութեամբն և իշխանութեամբ, քան որ ի գետի ի խոնաւոյ տեղւոջ։

գիւրի ։ Յոր տուն և օթևանեացի գԹուԹիւն , երջանիկ և անդորը գնա կացուցանէ . այլ չարքունիս որչափ և սա կատարիւս , նոյնչափ և զարհուրալի ։ Օ ի զինչ առա ւել գովելեան արժանի , քան զնա՝ որոյ ցաւսմանն յորժամ ոչինչ կայ հակառակ և աշագին վճռոյ նորա հպատակեն նոքին իսկ որք կոչնչին , և չհարԹէ բո զոքել գնմանէ , մանաւանդ Թէ և ի հրաւիրել ցաւսմանն աղաչել անգամ չիշխեն որ գնա , անձամբ զանձն սան ձահարեալ ցածուցանիցէ , և ի լաւ անդր գիշխանու Թիւն իւր վարեսցէ հեգուԹեամբ . զայս ինչ չան ձին խորհելով զի սպանանել զոք ընդդէմ օրինաց ոչ ու մեք է իշխանուԹիւն , իսկ ապրեցուցանել՝ իւր միայ նոյ ։ Ա՝ենձի բախտի մեծ սիրտ է վայելուչ . յոր Թէ ոչ ձիտեացի որ և բարձրագոյն քան զբահան լինիցի , ա պաքէն և զայն վայրաբերի և զգետնէ ։ Իսկ մեծ սրտի սեպհական է հեզ և հանդարտ լինել , և զանիերա ւուԹիւնս և զԹշնամիս անդուստ ի բարձանց ար համարհել ։ Իանացի է մոլել ի բարկուԹիւն . և գա զանաց՝ բայց ոչ վեհից , խածատել և ընդոստնել զան կեալն . փիղք և առիւծք զանց առնեն զորովք զգետ նեցիկն . անարգ երիք անագորոնք էն ։ Իմպալել է Թա գաւորի բարկուԹիւն գժնդակ և անողորթելի . զի ոչ շատ վերագոյն գոտնի քան զնա , ում հաւատարիկ զանձն բարհանալով . բայց Թէ կեանս պարգևէ կամ պատիւս բաշխէ վատագեղեցին և արժանաւորաց կորուսանել ցյ զայնսոսիկ , զայն ինչ գործէ առ որ հզօրք և եԹէ ձեռն հաս էն . քանզի և զվերնագունի ուրուք մարԹ իցէ բառնալ զկեանս , բայց չնորհել՝ զատորնագունիցին միայն ։ Պահպանելն սեպհական է գերապանծ բախտի , որում չմարԹէ երբէք լինել բարերաստագոյն , որպէս յոր ժամ դէպ լիցի նմին կարողուԹիւն հանգոյն աստուածոց , որոց չնորհիւ ի լոյս եկաւորեաք՝ եԹէ բարիք և եԹէ չարք ։ Իւ արդ Թագաւոր պատուածոյն բերելով յին քեան զոգի , յոմանս ի քաղաքացւոց զի բարիք էն և պիտանիք՝ մնագիւր ակնարկեացէ , զայլս առ ի Թիւ համարոյ Թողցէ . ընդ առաջինն զուարճացի , յետ նոյն համբերեսցէ ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Օ ՄՏԱՒ ածջիք Թէ՝ ի քաղաքի աստ՝ յորում այն-
չափ ի բազմամբոխ ժողով մնդկան, զի հանգոյն
ինն գետոց անբնդհատ հոսեցելոց ընդ լայնափողոց՝
գտեալ ինչ դիմակաց ընձայից՝ զորէն երազավազ ուղ-
ղիւ գնալ առեալ դիզանայ, յորում՝ ի միում պահու
երից տեսարանաց Ճանապարհք խնդրին, յորում ծա-
խի՝ որ ինչ միանգամ ընդ առնայն երկիր ցանի և վա-
րի, տեսեալ ասեմ, որպիսի առանձնութիւն և տանյու-
Թիւն լինէր եթէ չնայր ոք այլ՝ բայց զոր Թողոյր դա-
տաւոր անաչառ։ Վասնիք տնանք իցեն՝ ի դատաւորաց
որ չիցեն կապեալ ընդ նովին օրինօք՝ որովք դատին.
քանիք տնանք յամբաստանողաց ազատ իցեն՝ ի յանցա-
նաց. և չգիտեմ, գուցէ և ոչ ոք այնպէս դժուարաչարժ
է՝ ի ներել, որպէս այն՝ որ յաձախ կարօտ եղև նեղու-
Թեան։ Վասնեքին մեղաւք, որ ծանր և որ Թեթև.
կէսք կամաւ և կէսք Թերևս բռնադատեալք, կամ
յօտարին անզգամաՒԹենէ ձգեալք. Է զի և՝ ի բարի
խորհուրդս ոչ այնչափ արուեՒեամբ կացաք մնացաք,
և ջանեզուՒիւնն յակամայս և գժկամակելով Ցան-
դերձ կորուսաք։ Վա ոչ եթէ յանցեաք միայն, այլ և
յանցանելոց եմք մինչ՝ ի կատարած կենցաղ. Թէպէտ և
ոք այնպէս քաջ մաքրազարգեալ իցէ զոգին, մինչև ոչ
իմիք այնահեան կարող լինել վերադիլ գնա կամ գտանել,
բայց սակայն յամեզուՒիւն անգր՝ մեզանչելով եղև
ժամանն։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Վի քանզի զատուածս յիշատակէցի, գնասս տաց
քաջալայելոյ օրինակ նմանուՒեան իւրանի. իբր զի
այնպիսի եղիցի ինքն առ քաղաքակիցս, որպիսի կամի
զի իցէն առ ինքն աստուածք։ Վդդ միեթէ կամիցի ու-
նել զդիս անողոքելիս ընդդէմ մեզայ և սխալանայ.

վիթխ կամիցի ունել զնոսա վրէժխնդիրս մինչև ցյետին մեսս ։ Լաւ ո՞ր ՚ի Թագաւորաց վստահ իցէ զի ոչ ՚ի հաւատմամբ ժողովեցեալն անդամք նորա ՚ ։ Իսկ եթէ աստուածք զիւրահաշտք և արդարադատք՝ ոչ առ ժամայն չանթահար պատուհասեն զյանցաւածս հզօրաց , թերևս եւս առաւել արդարացի է մարդոյ որ իշխէն մարդկան՝ հեզութեամբ ոգւոյ վարել զնոխանութիւն , և զմտաւ ածել թէ որ արդեօք երեսք երկնից զե- զեցկագոյն իցեն և հաձոյ աչաց Տեառնդ , որ պարզ և յատակ տունջեամբն լուսափայլեցեալ , եթէ խիտ առ խիտ շառաւիմբ դղրդեալ Տամայն և Տուր չուբջանակի փայլատակեսցէ ։ Լաւ արդ Տանդարտ և բարեկարգ տե- րութեան Տանդուցանօղքս իմն պարզ և լուսապայծառ երկնից են երեսք . իսկ անգութ Թագաւորութիւն սմ- պրոպային է և խաւարամած . անդ արշաւիղք և սօսա- փիւնք առ յեղակարծ շաչիւն՝ ոչ անսասան մնալով և այմ՝ որ խոյլին զամենայն ։ Երբեմն իցէ արդեօք սուս կանգնաց Թէ խիտ վրիժառուք իցեն , զի մարթէ Է նոցա ձեռսիլ և ցաւ նոցա յառաջագոյն ՚ի զրկանաց . Թող զի երկնչին յարհամարհանաց , զի ոչն Տատուցանել զարի- տուրն Տարատարողաց՝ տկարութիւն Թուի նոցա և ոչ գԹուԹիւն ։ Այլ որում՞ առձեռն իցէ վրէժխնդրու- Թիւն և ներէ՝ զՏեզութեամն արժանապէս ընդունի զգովութիւն ։ Ի ցածոն վիճակի եղելոց՝ Տամարձակե- լի է արդեօք բուռն Տարկանել զիմմանց , մաքառիլ , ՚ի կազ և ՚ի կռիւ մտանել և զՏետ երԹալ կամաց բարկութեան իւրեանց , Թեթև են Տարուածք ՚ի մէջ Տաւասարից . Թագաւորի և ձայնարձակութիւն իսկ և բանից խոշորութիւն՝ չ՚ի Տակ չքոյ մեծութեանն ։

1 Խիս Թէ ոչ կայծակնաձայ լինիցի . քանզի զայնպիսեացն զգրու- եալ անգամն ժողովեալ ՏաւաՏմամբ ՚ի Տնուին Թագէին ՚ի սեւջոյն . զի չէր օրէն փոխադրել պլուբ . և զոմն ցանկապատեալ սրբէին զնմամբ երկի մեան կամ երկատասին ոչխարի , որոյ վասն և Երկատասին տեղին կոչէր ։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՕՒՆՆ Թուխիի քեզ վի արգելումք Թագաւորաց վհամարձակախօսութիւն, որ նուաստատոհմիցն օրէն է։ Կ՚ըսիցես. Ծառայութիւն է այդ և ոչ տէրութիւն։ Ակ զիարդ. չգիտիցես զի մեր է աղատութիւն, իսկ քոյդ ծառայութիւն։ Կ՚ասէ վիճակ է այնոցիկ որք ծածկեալք յանձնոխին, զորով ոչ ինչ գերազանցին, և առաքինութիւնք նոցա դժուարութեամբ բազմաւ թէ եկեցեն ի լոյս, և մոլութիւնքն կան ինան ի մէջ։ Ձեր բանք և գործք վհամբաւի հարկանին. ամին իրի ոչ այլ ումեք այնպէս հոգալ պարտ է թէ զինչպիսի հատուած ունիցին, որպէս այնոցիկ զոր զորպիսուց և իցէ՝ զմեծն ունելոց են։ Կ՚ըսէ ինչ իրք են որք չեն քեզ օրէն, այլ մեզ օրէն է քոյին ընդհակառակ։ Կարող եմ ես յոր և է կողմն քաղաքիս միայնակ չերթալ աներկիւղ, թէպէտ և ոչ որ ինձ ընկերեսցէ, թէ և ոչ որ կայցէ ի տան, թէ և չկայցէ իմ սուսեր յաղդեր. քեզ և ի խաղաղութեանդ պահու պարտ է կեալ զինաւառեալ։ Ձկարես խոտորիլ ի բանէդ, չուրջ կայ զքեզ. և յոր վայր և երթիցես՝ մեծաւ հանդերձանօք գնետ լինաս։ Կ՚ըսէ այս ծայրագոյն ծառայութիւն է մեծութեան, չկարել փոքրկանալ։ Կ՚ասէ որպէս քեզ՝ և դից ի վերայ կայ հարկդ այդ, զի և զնոսա կապեալ ունին երկինք. և ոչ ապահովագոյն քան զքեզ մարթ իցէ նոցա վայրաբերիլ։ Ի ծայր բարձրութեանդ հասատեալ կաս. զմեր չարժմունս սակաւք խնաման, մարթ է մեզ յառաջել և ընկրկել, և փոխել գձև առանց ի գիտութիւն գալոյ հատարակաց. քեզ ոչ ինչ առաւել քան զարեգակն մարթ իցէ ծածկիլ. լոյս մեծ վառ զքեզ, ամենեցուն ի նոյն բերին աչք։ Ով եղանիցես ուրեք՝ ծագես. Թէ խօսիս՝ ազգք և ազինք որ ընդ տիեզերս՝ ընկալցին զբարբառ քո. Թէ բարկանաս՝ դողայցուսես զամենեսին. նոյնպէս և ոչ կարես խոչտանգել զոք առանց դղրդելոյ զամենայն չքնաղիս։ Օ որ օրինակ յանկանիլ կայծական՝ սակաւուց է վտանգ

և բոլորից սարսափ, սոյնպէս պատուհասակոծութիւնք մեծամեծ իշխանաց՝ առաւել ահրնկէց լինին քան թէ սանձանեն. և կարի խոկ քաջ. զի ոչ որչափ ինչ ա-րարն, այլ որչափ ինչ առնելոցն իցէ՝ որ ամենայնի է կարող՝ խորհին ամենեքեան: Տէս ինձ և զայն զի առանձնաւորը՝ ի մարդկանէ պատրաստագոյնք գտանին յինդունելութիւն զրկանաց՝ համբերութեամբ առելոցն. Թագաւորացն ստուգագոյն ապահովութիւն՝ ի հեզութենէ է. վասն զի ստէպ վրէժխնդրութիւն զսակաւուց ընկճեալ զատելութիւն, զբազմացն զգրգռէ. Հարկ է զի վաղագոյն պակասեսցին կամք, քան թէ պատձառք խոտանալոյ: Կ՚ըսա թէ ոչ՝ զոր օրինակ ծառք կարեալք շատ և շառաւիղս արձակեն, և յոլովագոյնք՝ ի մնկոց առ առաւել Թաւանալ և ուռճանալ՝ կորին և սրբին, ըստ նմին օրինակի և խոտութիւն Թագաւորին կարձելովն յաձախ զեշնամիս: Ա՛ւ ասն զի ծնողք և զաւակք սպանելոցն, և մերձաւորք՝ ե բարեկամք զնոցա տեղին փոխանակեն:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Օ ՁՀԱՄԲԱՐՏՈՒԹԻՒՆ իրացս առից ցուցանել քեզ ընտանի օրինակաւ: Կ՚ուզացընն Գոստոս՝ եթէ՝ ի միաբանութենէն առնուցու ոք զնա կրնել Թագաւորութեան էր, բայց ընդ իշխանակիցն սուրբ խաղացոյց՝ ի Հասարակապետութեան: Կ՚ըսն ինչ՝ հասարակաց քեզ՝ զուարճատանամենիքն անցեալ էր, զգաշնն՝ ի ծոցին առ բարեկամն Թագոյց, զի՝ Կ՚ըստնիսս հիւպատ դաւով՝ ի կողն եհար և բազմաց տարակուսութեան եղև գործակից: Կ՚ալ զքաւատանամենիքն անցեալ՝ մինչ դեգերէին՝ ի Կ՚ադ զինա՝ ազգ եղև նմա թէ Կ՚ինչ այլ խօսեսիս՝ դարանակալ լինի քեզ. և որ գուշակն եղև մի՝ ի գաւակացն էր, և զտեղն գաւոյն և գժամանակն և զոլորսկն եցոյց Հրդրտիս: Յայնժամ խորհեցար վրէժ առնուլ՝ ի նմանէ. Տրամայ եա՝ ի խորհուրդ կոչել զարեկամն: Յաղնագեցար զգիշերին ողջոյն զմտաւ ածեալ զի գտատպարտելոց էր զամուսա-

տոհմ երիտասարդն զբեռոդի Կիս. Պոմպէոսի՝ զան-պարտն այլով մեսամբ։ Եւ ահա չկարէր սպանանել զայր մի՝ որ յրնթերիս ընդ Ա՛. Կատանինոսի զտարա-գրութեանն Թէլադրեալ էր գատաւնիք։ Յոգւոց հա-նէր ատէպ, բարբառս արձակէր պէսպէս և միաձայց հակառակս։ Իսկ զնարդ. Թողացուցից զդատաստանն կենաց իմոց գնալ աներկեւան, և ես՝ ի ծուխս եղէց. և միթէ ոչ լուծցէ զվնէժ նա որ զայս գլուխ՝ զինգրեան վայրապար յայնչափ քաղաքական կուիս, և զպահեան ողջանդամ յայնչափ ծովային և ցամաքային պատերազ-մանս, ՚ի ծագել արդ խաղաղութեանն ընդ ծով և ընդ ցամաք, ՚ի մոի եգեալ է ոչ եթէ սպանանել այլ զոհել. քանզի ՚ի ժամ զհագործութեան նորա ունէը ՚ի վերայ յարձակիլ։ Պարձեալ՝ յետ լուերց պահ մի, մեծ և ա-ձայնիս բարբառով՝ ընդ անձին ոգորէր բարկութեամբ քան ընդ Կիննայի. Օ ի և կեաս եթէ կորուստ քո օգտէ այնչափ բազմութեան, իւ վախճան եղիցի պատա-հասիդ, իւ սրեան Ճապաղեաց։ Պրպտ իմ նշաւակ եգեալ կայ ամենատոհմիկ պատմութեանց որք սրեն ըզ-սուսերս իւրեանց ՚ի վերայ իմ։ Ո՛չ այնչափ մեծագոհ են կեանք՝ մինչ առ ՚ի չկորուսանելոյ ինձ զայն, այնչափ բազմութեան հարկ իցէ կորնչել։ Ընդ ուրեմն յողոք մատեաւ առ նա կինն իւր։ Իսիա և ասէ. Եթէ հաճոյ իցէ քեզ խորհուրդ կանացի. արա ըստ բժշկացն օրի-նակի, որք յոյն օգտել սովորական դեղոյ՝ զկառակուսն փորձեն։ Ո՛ինչ ցարդ խաւսեցաւքեզ ինչ ոչ չահեցար. զՎաղերիդեն յայնոցեաց։ Եպիդոսի Ո՛ս-բեռա, Ո՛սուբեռայի Կեպիոն և Կեպիոնի Կրնատոս, զի զայսն լուեցից, որոց անօթ մեծ էր յայնչափն յան-դգնիլ. փորձ փորձեա այժմ զգթութեան, թէ օրպէս յաջողեսցէ. Ներեա Կիննայի. լսեցեալ ՚ի յան-ցանսն՝ այսուհետև չկարէ սանանել ինչ քեզ, բայց կա-րող է յաւելուլ զփառսդ։ Օ ուարթացաւ յոգի իւր, զի եգիտ փաստաբան ինքնահաւոյց. Ընդրկս կալաւ կնոջն և անգէն վազվազակի արձակեալ զժողով բարե-կամսն, զկիննա միայն առ ինքն կոչեաց. և Համեալ զամենեսին ՚ի սենեկ անտի և հրամայն առեալ աթո-ռակսն Կիննայի, խօսել սկսաւ և ասէ. Ո՛ այս ինչ ՚ի սկզբանէ ինդրեմ՝ ՚ի բէն. զիսոս իմ մի ընդմիջեսցես և

յընթացս բանից իմոյ մի բողոք արկանիցես . տացի՛ քեզ ժամանակ խօսելոյ հանդէպ։ Օ քեզ Կիւնա՛ ի ժամանակին՝ յորում դու՛ ի բանակի անդ թշնամեաց, զքեզ սակա՞ ոչ զեղեալդ ևեթ , այլ և զծնեալդ ինձ թշնամի , ապրեցուցի . և զկայրենի քո ժառանգութիւն բովանդակ քեզ ընտրեցի . և յաւուր յայմիկ այնչափ բարեբախտ ես և այնչափ ձոխ , մինչ զի յաղթեցելոյդ յաղթականքն նախանձին ։ Արմուխիւն քեզ եղոտ ըստ քումդ խնդրոյ , զանց զայլովք արարեալ բազմաք՝ որոց ծնողք զկնոջդ իմ էին ։ Լուր յետ այսչափ առ քեզ եւթանեաց՝ սպանանել զիս եղեր ՛ի մեղ ։ Կա՛ ՛ի գոլել նորա յայս բան . Չեռի է յիւրն խելագարութիւն այդպիսի , ՛ի վերայ էած ( )գոստոս . Կայ ՛ի դաշնդ Կիւնա . քանզի յանձն առեր չընդմիջել զամս իմ՝ Սպանանել , ասեմ, զիս խորհես ։ Կա՛ ած ևս ՛ի մէջ զեղծին , զընկերան , զօրն , զկարգ դաւադրութեանն , և զայլն՝ որում ապաստեալ էր զսուրն ։ Կա՛ իբրև ետես՝ զի զերկիր նշմարեր , և լուռ ևեթ կայր՝ ոչ բան հարկի դաշանցն , այլ առ մտացն խղճի , ասէ զարձեալ . Կա՛ որով հոգւով գործես զայդ , զի դու արդեօք ինքնակալեսցես . ծո՛ և ծո՛ ասեմ, եղուկ ժողովրդեանն հռոմ ՛ականի , եթէ բաց կիւնէն չիցէ այլ ինչ խափան առ ՛ի թագաւորելոյ քեզ ։ Ունես բաւական և տան քումդ պաշտպանել . դեռ ևս իսկ ընդ առն միայ ազատագրելոյ յառանձինն դատ մնաես յաղթեցար ։ Կ՛դպիս դիւրին քան զամենայն ինչ հանարիցիս ընդդէմ կայսեր խիզախել ։ Կերեալ քեզ՝ եթէ ես միայն իցեմ դիմամարտ յուսոյ քո . այլ միթէ տանիցին քեզ Պաղտոս և Փաւիոս Կաքսիմոս և Կուսեանք և Կրեմիւեանք և այնչափ բազմութիւն աւազ արանց , որք ոչ ընդունայն անուանիք պանծան , այլ որ պատկերքըն իւրեանց են չքեզաստանք ։ Կայց զի մի զսուտս բազոյն մասն մատենիս գրաւեցեն բանք նորա , թէ երկրորդելոյ բովանդակ , քանզի ընդ ժամն երկուս և աւելի խօսեցաւ , յերկարել կամեցեալ զայս պատիժ (կշտամբութեան) , որով և եթէ ունէր շատանալ , ասէ ասա . “ Կատասիկ կեանս քեզ՝ Կիւնա՛ ընտրեմ՝ վերստին . երբեմն թշնամոյ , այժմ դաւաճանի և հայրասպանի ։ Հայմ՝ օրէ սկիզբն երկոյն բարեկամութեան

ընդ իս և ընդ քեզ, և այս պայքար կացցէ ՚ի մէզ Թէ ես արդեօք հաւատարմագոյն գտայ ՚ի շնորհել քեզ զկեանսդ, Թէ դու երախտապարտ լինիս գոլով... : Ձետ այնորիկ կամակարութեամբ ետ նմա հիւպատոսու-Թիւն. շնորհ՝ զոր ոչն համարձակէը խնդրել. և եղև նմա այնուհետև հաւատարիմ բարեկամ, և միաբան Ժառանգորդ, և ոչ մի ինչ դաւ գործեցաւ այնուհետև ՚ի նմանէ :

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Ղերոգաստես գտաւ նախահաս քո առ յաղԹեալս, զի Թէ նեղէը ոչ, այլ ոմանց իշխան լինէը : Օ Պալբուս տիտս, զԱլակեանս, զԱուղեանս և զՀամօքէն գունդն նախընկալ՝ ՚ի բանակէ անտի Հակառակորդաց վերա-գրեաց ՚ի դաս զօրականին : Ալ աղբ. ևս Պոմետիոս, Աեստաղ, Բսկինոս, Ալիկերն, և որ այլ ևս ծաղիկքն էին քաղաքին, շնորհապարտ գտան զԹուԹեան նորա : Այլ նորին իսկ Ղեպիդոսի որչափ երկայնամտեաց մնա-հուանն : Ընդ բազում ամն Թոյլ ետ նմա պինդ ունել զիշաւս իշխանութեանն, և մինչև մեռեալ՝ չէաւ յանձն՝ յինքն շրջԹել ՚ի նմանէ զբռնապետութեանն մեծ, քանզի ընտրելի Համարեցաւ՝ զի պատիւ քան Թէ կողոպուտ կոչեցի այն : ՊոմպէԹեամբս այսմիկ ժամանն եղև նա ՚ի վերկութիւն և յապահովութիւն. սակաւ Համոյ գտաւ և սիրելի, Թէպէտ ձեռն ևս արկեալ էր ՚ի նուաձել զպարանոցս չև ընդ լծով մնեալս տէրութեան հասարակաց. սակաւ և յաւուր յայսմիկ մեծարի նա այնու Համբաւով, որով հաղիւ Թէ ՚ի կենդանութեան պաշտին Թագաւորք : Ըստուած ոմն՝ ոչ որպէս ՚ի հրամանէ՝ հաւատացեալ գոլ գնա : Խոստովան լինէին զՕ գոստոս իշխան բարի, և քաջ ՚ի դէպ եկեալ նմին ասելիք գանուն ծնողի[1]. այս ոչ վասն այլ ինչ իրիք, բայց զի ոչ անգթութեամբ վրէժխնդիր լինէը Թշնամւոց նաց իսկ անձին, որք և քան զանիրաւութիւնս գտա-

[1] Քանզի Հայր հայրենեաց կոչեցաւ նա :

նագոյն թուին իշխանաց . և զի զծաղոտ գայր առ բանս նախատադիրս անձին , և զի ՚ի պատուհասել զայլս զանձն համարէը պատուհասել , և զի զորս միանգամ դատապարտեալն էր յաղագս չնութեան ընդ ընտանիս իւր , ոչ միայն չապան , այլ և հրովարտակօք անէրկնա-նութեան ՚ի բաց տարագրեաց : Ա՚յս է ահա ներել-զի ՚ի զայրանալ բազմաց փոխանակ քո , և ՚ի կամել օտարին արեամբ հնօրհուկս քեզ առնել , դու ոչ միայն կեանս պարգևեացես , այլ և ըստ խոստմանդ կատարի-ցես :

ԴԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՍՆԵՐՈՐԴ

Ո ԱՑՈՍՈՒԿ ( )գոստոս ՚ի ծերութեան կամ՚երձ ՚ի ծերութիւն . այն՝ որ յերիտասարդութեան ջերեաւ բոր-բոքեցաւ բարկութեամբ , և բազում՝ ինչ իրս արար , յորս ակամայ ակնարկէր : Ոչ ոք իշխեցեալ ընդ հեղու-թեան քումՙ ՚ի կրիս դնել զդիւցազնն ( )գոստոս , թէ-պէտ և ընդ երիտասարդական ամաց ածիցեն ՚ի պայքար զալեօք ծաղկեալ զծերութիւն : Ամեղ բարեմտին և գո-թած զրեսցի նա յետ ներկանելոյ արեամբ Հռոմէացե-ցւոց զծոմն Ա՚կտիական , յետ խորտակելոյ ՚ի Ալեկիլիա զիւր և զայլոց նաւատորմիղն , յետ Պերուսեան զոհա-բանացն ՚ և տարագրութեանց : Ա՚յլ ես գծութիւն չկուէմ զնոյն անգծութիւն : Ա՚յս է , ոմն Կայոս , գծութիւն ՃՀմարիտ , զոր դուգ առնես . որ ոչ ՚ի ստրջա-նաց դժնեղութեանն սկսանիցի , որ չունիցի ինչ արատ , որոյ ոչ երբէք հեղեալ իցէ զարիւն քաղաքացւոյ : Ա՚յս է մեծազօր իշխանութիւն , տիրապետ չափաւորութիւն անձին և մարդասիրութիւն համատարած . ոչ ցանկու-թեամբ իւիք և ոչ յանդգնութեամբ բորբոքել . ոչ ա-ռաջնոյ իշխանացն օրինակօք վարակեալ , զամենայն զօրութիւն իշխանութեանն առ քաղաքակիցսն ՚ի վար արկանել , այլ բթացուցանել զայր սուսերի իշխանու-թեան իւրոյ : Ա՚նշազախ յարենէ պահեցեր զբաղաքդ ,

1 Քաջդի անդ ՚ի Պերուսեան բագինն երեքհարիւրօվք չափ և աւելի անձնատուրք՝ զինան իբրև ոչխարք :

ով Կայսր . և յոր պարծեցայն մեծանձնութեամբ թէ "Չէ չիմ մի մարդկայնոց արեան չիք քո հեղեալ ընդ տիեզերս ,, , այնչափ է մեծ և այնչափ զարմանալի , որ- չափ զի ոչ այլոմ՝ ումեք այդպէս վաղագոյն ի ձեռս ա- նանեցաւ սուսեր : Կայս ուրեմն գթութիւն ոչ միայն համեստագոյն կացուցանէ զթագաւորս , այլ և ապահո- վագոյն . և է զարդ իշխանութեանց և միանգամայն կենդանութիւն աներկիւղ : Կանգուն առ իմ թագա- ւորութիւնս . և որդւոց և թոռանց թագուն զթագա- ւորութիւնս . իսկ բռնաւորացն պժգալի և սակաւօրեայ է տէրութիւն : Օ զինչ խաղ կայցէ ընդ բռնաւոր և ընդ թագաւոր , ուր գուգահաւասար է կերպարան բախտին և ինքնիշխանութիւնն . եթէ ոչ՝ զի բռնա- ւորք ըստ Հաճոյս իստանան , թագաւորք չիրաւանց ևեթ և ի չարիկ :

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այլ զինչ . ոչ արդ և թագաւորք սոսկ են սպա- նանել . այլ ցորչափ օգուտ հասարակաց յորդորէ զնոսա ի նոյն . ուր բռնաւորաց ընդաձոյս է անդորմութիւն : Կռնաւորն զանազանեալ է ի թագաւորէ ոչ անուամբ , այլ արդեամբք . քանզի և Վիճեսիոս մեծին իրաւամբք և արդեամբք մարթի նախապատիւ համարիլ քան զբա- զումն ի թագաւորաց : Կակ զի . Ամիղոս զինչ արգե- լուցու բռնաւոր կոչել , որ ի սպառելոյ թշնամեաց վախ- ճան եւս սպանութեանց : Ամոլ լինցէ ի պատուոյ դիկ- տատորութեան և ի կարգ մնոյկ պատմութիւնագրե- ցից . սակայն ո՞ որ երբէք ի բռնաւորաց այնչափ ան- յագութեամբ արբ զարիւն մարդկային՝ որպէս գնա , որ հրամանն եւս սպանողսոյ առնել զեօթեն հազարս ի քա- ղաքացւոց անտի Հռոմայ : Կռ մինչ մեզ առ տեղեաւն բազմեալ ի տաճարին Կեղտոյ՝ լսէր զմիաձայն գոչիւն աղաղակի հազարաւորացն որք հեծեծին ընդ սրով , ի սոսկալ ձերակուտին՝ ասէ . "Կիք մեռցս ուշ դիցուք , հարք առեւտրականք . սակաւք ումանք խուովարարք ի մահ մնասին իսկոյն հրամանաւ ,, : Օ այդ ոչ ստեայ , զի յայս

Աղղայի սակաւք Թուէին ։ Ա յլընդ հուպ զԱղղայէ Ձառեալ զնեւեցուք , ոպպէս արժան իցէ բարեկամել ՚ի վերայ Թշնամեաց , մանաւանդ յորժամ ՚ի մի և ՚ի նոյն մարմնոյ հատուածեալ քաղաքացիք ընդ անուամբ Թշնամեոյ գրեսցին ։ Այսպէս այս է զոր ասէի Թէ գԹուԹեամբ ևԵթ մեծապէս որոշէին ՚ի միմեանց Թագաւորն և բռնաւոր ։ Թէպէտ և երկոքին նովին զնուք են ամբացեալ , բայց առաջինն ՚ի պատսպարանս խաղաղուԹեան վարի նոքօք ։ իսկ երկրորդն առ ՚ի սանձել մեծաւ ահարկուԹեամբ զատելուԹիւն մեծ ։ Այս ոչ ՚ի ձեռս անդր աներևւան ակնարկէ՝ որոց զանձն իւր հաւատաց ։ հակառակօք ՚ի հակառակն վարի ։ առելի է՝ քանզի ահընկէց է , և կամի ահընկէց լինել , վասն զի առելի է ։ և այնու գժպհի առածիւն վարի՝ որ զբազումս խարդաւանեաց ՚ի վէմ ։

“Ասոյ առեսցէն , միայն Թէ զանգիտեսցէն ,, ։

Այս ոչ գիտէ , Թէ ՚ի զայրանալ առելուԹեանն քան զչափ՝ որպիսի գրգռի կատաղուԹիւն ։ Օ ի երկիւղ չափաւոր սանձէ զոգիս , իսկ հանապազորդեանն և խիստ և տարապայման ՚ի յանդգնուԹիւն գրգռէ զլբուցեալս և ստիպէ զնոսա գյետին փորձ փորձել ։ Օ որ օրինակ փետրօք ՚ի խրտուիլակօք ահաբեկ պարուրեսցես զգազանս , բայց Թէ հեծեալ ՚ի Թիկանց նետիւք և աղեզամբք ստիպեսցէ զնոսա , փորձին ՚ի փախուստ և ընդ այնս իսկ՝ յորոց խրտչէին , ոտնակոխ զխրտուիլակսն առնելով ։ Այսուն է և առՀի զօրուԹիւն , զոր գրգռէ հարկն յետին ։ Հարկէ երկիւղն տալ ինչ տեղի փախստի և աներևւանուԹեան , և քան զվտանգն յաձախել զյոյս , ապա Թէ ոչ՝ ուր հանդարտեցելոյ անձին միօրինակ երկիւղ կայ առաջի , լաւագոյն ընտրեսցէ տալ զանձն ՚ի վտանգ և ահացուցանել զհրնկէցն ։ Այսպէս զոյսեր և հանդարտամիտ Թագաւորի աներևւան ՚ի պատրաստ կան օգնականուԹիւնք յապահովել նոքօք զՀասարակացն փրկուԹիւն ։ և զօրականն պանծանօք՝ քանզի տեսանէ զանձն գործօնեայ Հասարակաց ապահովուԹեան , զամենայն աշխատուԹիւն մատղիւք

1 , Քանզի փետուրս հատուց երփներանգս կապել զառաստանօք ՚ի մի շար , ՚ի խրտուիլակս կարգելն գազանաց և Թռչնոց ։

յանձն առնու՝ որպէս ՚ի պահպանութիւն ծնողն . իսկ ժամանակ և զարիւնաթրծուն Հարկաւ լքանիցէ նոցիկնոջ թիւրատրահէն նորա :

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՊՆՉՆԱՐ է ումեք ունել բարի և հաւատարիմ պաշտօնեայս կամաց զայնոսիկ՝ զորս վարէ ՚ի պատրաստել պէտս տանջանացս և կախաղանս և երկաթի գործիս մահու . և որպէս գազանաց՝ առաջի արկանել նոցա զմարդիկ : Իսկ ինպիսին քան զանձնայն յանցաւորս մեծաս կարագոյն է և խուճապեալ . քանզի թէպէտ և յաստուածոց և ՚ի մարդկանէ գողայ իբրև յակամատես վկայից և ՚ի վերիժառուց չարութեան իւրոց , բայց յայն հասեալ է ստիման , զի չմարթէ նմա փոխել զբարն . վասն զի մեծապարագոյնն ՚ի չարեաց անգթութեան այն է՝ զի անդարձ ՚ի լաւ անդր՝ Հարկ է հանապազորդել ՚ի նոյն . զի սպիրտութիւնք սպիրտաութեամբ են պաշտպանելի . և ո՛ այլ չաւառական քան զինա , որում Հարկ է չար լինել : Իսկ ողորմ վիճակ , այլ անձամբ անձին ողորմելի . զի չէ մարթ այլոց ողորմել այնպիսումն՝ որ արիւնհեղութեամբք և յափշտակութեամբք վարեաց զիշխանութիւն , և խիթալից անձին կացոյց զանհնեսին , զօտարս և զընտանիս . ՚ի զինուց երկուցեալ՝ ՚ի զէնս անդր եղև ապաստան . ոչ ՚ի հաւատս բարեկամացն յաւացեալ , և ոչ ՚ի զաւակացն բարեպաշտութիւն : Որոյ շուրջ Հայեցեալ յորս արարն և զորս առնելոցն է , և զիսիղձ մտացն տեսեալ յայտնապէս լի և ծանրացեալ ժանտագործութեամբ և տանջանօք , մերթ երկնչի ՚ի մահուանէ , և մերթ ևս իղձ լինի այմմ . առելի անձին՝ քան իւրոց ծառայից : Օ սորին Հակառակն այն՝ որ Հոգ ՚ի մտի պահ զՀաստատակացն , թէպէտ և ամանց շատ և ամանց սակաւ արգահատեսցէ , զանձնայն իսկ զնաստուն Հաստատակատեսութեան իբրև զիւր մասն մտացանէ և զգրամանէ՝ միտաւ գոյն գոլով՝ ՚ի զգուշութիւն , թէպէտ և պատուհասել իսկ Հարկ իցէ՝ յայտ առնէ թէ որպէս յակամայս ձեռ-

նարիկ՝ ի գեղս գժնդակս նա՝ յորոյ՝ ի սիրտ չիք ինչ ոխե-
րիմ և գազանային ։ Ոչ զիշխանութիւն իւր վարէ խա-
զաղս սերև փրկաբար օրինաբ՝ ցանկացեալ Հաձոյ և սիրե-
լի ընծայեցուցանել քաղաքացւոց զՀրամանս իւր ։ Մե-
ծապէս երանելի զանձն Համարի եթէ բախտին իւրում
կցորդս գիտաց առնել զաներեսեան . քաղցրաբան ,
դիւրամերձենալի , սիրելի երեսաբ՝ որ մեծապէս շահե-
ցոյն է ժողովրդեան , արդարակորով՝ ի ցանկութիւնս
և գժսկի չարաց , սիրելի է բովանդակ քաղաքին որ
պատէն զնա և պաշտպանէ ։ Ոչ ոք օրինակ խօսին զնա-
նէ մարդիկ հրապարակաւ և՝ ի ծածուկ . ցանկան
մուցանել որդիս , և ընդ հասարակաց չարիս Համարի
անզաւակութիւն . ոչ երկուանայ ոք բարեացապարտ
լինել առ զաւակս իւր , ցուցանելով նոցա զայնպիսի
գալ ։ Իչխան այդպիսի՝ իւրովքն պատպարեալ բա-
րեարութեամբք , ոչ իւիք կարօտ գտանի թիկնապա-
հաց . և առ՝ ի զարգ և եթէ կրկ զզէնան ։

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այր միոչ գործ նորա իցէ ։ — Ոչ ինչ բարի ծնողացն
է , որք բնաւորեալ են խրատել զզաւակս և զի մեղմով և
ի վայելուչ օրինաբ , որպէս երբեմն և գանիւք՝ ի զգաս-
տութիւն ։ Ոչ այն Հայր ողջամիտ , որ ընդ առաջնոյ
յանցանացն՝ անժառանգեսցէ զորդին . եթէ ոչ յան-
ցանք մեծամեծք և բազմապատիկք յաղթեսցեն Համ-
բերութեան նորա , և եթէ ոչ առաւելագոյնն չարիքն
յորոց երկնչի , քան զորս գատապարտէն , ոչ մնայէ՝ ի
վճիռ գատողական ։ Խազում ինչ փորձել կանխաւ առ
՝ի գարձուցանելոյ զնա՝ ի խիղճալի բարուցն և՝ ի չար
Ճանապարհէն յորում գտանի , և յուսահատ լեալ ապա
թէ՝ ի յետինն ձեռնարկել փորձ ։ Ոչ ոք անապարհ՝ ի
պատուհասել՝ մինչ չև նախ զզէղոն սպառեալ ։ Այս
գործք են որպէս Հօր նոյնպէս և ինքնակալի , զոր
Հայրենեաց կոչեմք Հայր , ոչ՝ ի մտոի մարդապահանձութե-
նէ Հրապուրեալք ։ Ո՝ ասն զի այլք յանուանց՝ պատուոյ
սակս տուան . Ո՝ Եծ՝ և Աչքանիկ կամ Խարէյազէ ,

Օգոստոս կամ Ահեստոս յորջորջեմք զկայսերս. և յամենատուն մեծութիւն անդր նոցա ոչքան ինչ տիտղոս մարթ իցէ՝ կուտակեմք այդպիսի անուանս կոչութեամբք. իսկ Հայր հայրենեաց կարդամք, զի գիտասցէ թէ հայրական տուեալ է նմա իշխանութիւն՝ բարեխառն ամենևին, խնամարկու զաւակաց. զոորայն առաւել քան զանձինն ինդրելով. Յամր բերի հայր ՚ի հատանել յիւրմէ զանդամս ՚ի բաց. և թէպէտ հատանիցէ և՝ ցանկայ վերստին յօդելոյ զնոսն, և բազում հեծութեամբ հատանէ, յապաղեալ շատ և յերկար. Օ՚ի որ վաղվաղակի՝ նոյն գոգցես և կամակարութեամբ պատուհասէ. և որ սաստիկ՝ նոյն և անզգամութեամբ. Օ՚երիքսոն աստէտ հռովմայեցի յաւուրս մեր՝ վասն սպանանելոյ զորդի իւր ընդ հարուածոլք զանից, ժողովուրդն ՚ի հրապարակ ատենին էր. կամէի գրչովք խոցոտեաց. և հազիւ ուրեմն մեծազօր հրամանն Օգոստոս կայսեր կարաց կորզել զնա ՚ի վերջ ժխտիդիր ձեռաց հարց և որդւոց միանգամայն.

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Օ՚ԱՐԻՈՍ, որ զորդին իւր զսիրեհաւաչ՚ի խորհուրդս հայրասպանութեան յաքսորս տարագրեաց, ամենեքեան յետ հասու լինելոյ պատճառացն գոլեցեն զի շատ հաւատեցաւ զաքսորումին և այն՝ յաքսորք քաղցր: Օ՚ի ՚ի Ա՚ասիկոս գՀայրանենդն տարագրեաց և ռոձիկ տալ ևորական նմին կարգեաց՝ որչափ ինչ սովոր էր տալ ՚ի լուսնեանն, Ա՚յսու մարդասիրութեամբ ամենայն որ ՚ի քաղաքին յայնմիկ, յորում ոչ պակասի պաշտպան չարագործաց, գիտաց աներկիւղ զի իրաւամբք պատուհասեցաւ յանցաւորն զի Հայրն ինքնին կարաց դատապարտել, զոր ատելն ոչ կարէր: Օայդ օրինակ ինձ առնես և ՚ի բաղդատել ընդ Հօր բարւոյ զիշխան բարի: Անդրեձեալ Տ. Ա՚բիոսի փութալոյ առնել որդւոյ իւրում՝ ՚ի խորհուրդ ժողովոյ կոչեաց զՕգոստոս կայսր. եկն՚ի տուն նորա, նստաւ որպէս խորհրդակից լսել օտարին, Ա՚յր միւր ասպատանն զնա կոչեաց. զի թէպէտ արա-

բեալ էր՝ ինքն կայսրն լինէր դատաւոր քննիչ և ոչ Հայրն ։ Լուեալ զդատն , և հետազօտեալ զամենայն , և զոր ինչ պատահէսյն ասացեալ էր ի ջատագովութիւն անձին , և զոր ընդդէմ նորա դատախազութիւն , խնդրեաց կայսրն զի այր իւրաքանչիւր գրով տացէ զնոր կարծիս . զի մի կարծիք կայսերն զօրացեալ հաստատակաց լինիցի ։ Յետ այսորիկ մինչև բացեալ էին տումարքն՝ երդուաւ Թէ առիւ չանձն մնանել ի ժառանգութիւն Հոխի առն Տ · Աբիոսի ։ Ովերևս վատասիրտ որ ասիցէ զնա որ երբ կեաս զի մի առ ի յոյս շահու անձին Թուեսցի դատապարտել զորդին ։ Այլ ինձ հակառակն Թուի , զի իւրաքանչիւր ունէք ի մէնջ պարտք են ըստ բարիոք խղճի մտաց իւրոց վատահ լինել չանձն ընդդէմ չար կարծեաց. բայց իշխանաց պարտք եւս են զգուշանալ և բարի համբաւոյ ։ Երդուաւ չմոռնել ի ժառանգութիւն անդր . ապաքէն Աբիոս յաւուր յայնմիկ և զմիւս ժառանգն իւր կորոյս , այլ կայսրն պահեաց այնու զազատութիւն վճռոյ իւրոյ . յետ գովելոյ զազատակամ զՀօրն խրատութիւն , ապա որ միշտ հոգալին է իշխանի , ասէ . "Պարտ է արտասահմանել ուր և կամք իցեն Հօրն ,, ։ Ով ի պարկ ' դատաւիրէ , ոչ ի գեռանուս իժից և ոչ ի բանտ , յուշ ածեալ զի ոչ ի դատել եկեն այլ ի խորհրդական լինել ։ "Պարտ է քեզ , ասէր Հօրն , չատանալ մեզմէ օրինակ պատժոյ ընդդէմ որդւոյդ՝ որ ի բանն Թագաւորի եղիտասարդական հասակին բերեալ յայդ ոճիր , և զի ոչ յայժ ի բացեայ էր յանմեղութենէ՝ երկիւղին յայտ արար և զանգիտելոյն ի գործ . պարտ է հեռացուցանել զնա ի քաղաքէ և յաչաց ծնողին ։

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ո՛վ խորհրդական արժանաւոր և խրատտու Հարց , ով արժանաւոր ժառանգակից գրելոյ ընտրեալոց զաւակաց ։ Ասպիսի վայելէ գԹուԹիւն իշխանի զի ուր և երԹիցէ , յառաւելագոյն հեզութիւն յորդորեսցէ զամենայն ։ Ոչ որ այնպէս խոտան իցէ յաչս Թագաւորի

1 · Քանզի ի պարկ արկեալ գՀայրապետն բրածնծ առնէին ։

մինչև չզգալոյ կորստեան նորա . որպիսի որ և իցէ՝ մանն
է տերութեան ։ փոքունց՝ մեծամեծ տերութեանց առ-
ցուք օրինակ ։ Ոչ մի ազգ է իշխանութեան . թագաւորն
իշխէ քաղաքացւոց իւրոց , հայրն զաւակաց , վարժա-
պետն ուսանողաց , հաղարապետն կամ՝ հարիւրապետն՝
զինուորաց ։ Ոչ վատթարագոյն Ձանուչի 'ի Հարս՝ որ
Հանապազորդ ձաղկանօք և առ թեթև ինչ շնաստու
սանձակոծէ զղաւակս . որ այն յերկուց վարժապետաց
իցէ արժանաւոր ուսուցիչ ազատական արուեստի . այն
որ զահՃօրէն կերդեալ զմարմնոյ աշակերտացն , երբ
չպահիցեն ինչ յոչի , կամ աչք ուրուք չիցեն աջողակ
'ի վերծանութեան . եթէ այն՝ որ ընտրէ ազգարարու-
թեամբք և պատկառանօք ուղղել և ուսուցանել ։ Կար-
գեա հազարապետ և հարիւրապետ զայր դաժան, անդիման
և անդ սարտուցանէ զզօրականն ։ Ոչ ոչ՛ք իցեն ներու-
թեան արժանիք ։ Ոչ անիրաւ ինչ իցէ ծանուցս և
խստագոյնս խրել 'ի վերայ մարդոյ քան անառնոց ան-
բանից ։ Եւս հեծեալ Ձարտար ոչ ստէպ գանիւք ահա-
բեկ առնէ զերիվար , զի ստուերախիրտ լինի և խոտե-
րայս եթէ ոչ ամբեռս գնա մեղմ շշուափիւք ։ Օնոյն
գործէ և որսորդ , որ զսկունդան վարժէ 'ի հետդնեա-
ցութիւն և կամ զվարժեալսն առեալ ածէ 'ի զրգռել
զերէ վայրիս և գՀետ սնդիլ նոցա . ոչ ստէպ սաստէ 'ի
նոսա զի մի քանիցին և թռուսցի աչխոյժ նոցա և
Ձարտարութիւն և նկուն լիցին վատ երկիւղիւ . այլ և
ոչ թողու նոցա Համարձակ և յանդգնաց այսր անդր
թափառիլ և մոլորիլ ։ Սոցին սակի խնա և զորս վարեն
զդանդաղաշարժ գրաստսն , որք Եգիպտ և գոգցես 'ի
նախատինս և 'ի թշուառութիւն են մնեալ , այլ սա-
կայն յերեսաց տարապայման գժնեայութեան Հարկաւո-
րին լծընկէց լինել ։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Ա՛ր կենդանի յոյլ որպէս զմարդ, և ոչ առաւել չար տարութեամբ վարելի՝ որպէս ընդ մարդ, և ոչ առաւել խնայելի որպէս ՚ի մարդ։ Օ՛ի զինչ անմտագոյն քան զայդ, որպէս ամենի համարել ցասմամբ գնալ ընդ գրաստս եւ ընդ շունս, և մարդոյ ՚ի վատթարագոյն վիճակի։ Հիւանդութեանց դեղ մատուցանեւք և ոչ եթէ բարկանաք, և աստ զհիւանդութենէ ոգւոյ են բանք, մեղմ դեղոյ պէտս ունի և բժշկի՝ որ չիցէ ոխեր իմ հիւանդին։ Ա՛ռաթաւ բժշկի է անյոյս լինել և ՚ի բաց կալ ՚ի դարմանելոյ։ Ա՛յլ այլազգ ինչ առնեւին և ընդ սոսա, որոց ոգիքն հիւանդացեալ են, վարել պարտ է՝ որում՝ հաւատացաւ հասարակաց կենդանութիւն. ոչ իսկ և իսկ զյոյսն ՚ի բաց դնել, և ոչ զմահառիթ նշանսն տարփողել։ Ա՛րգեացի ընդ ախտից, զիմակալ լինի. կիսոց զգաւս իւրեանց յանդիմանեացէ, զայլս պատրեացէ մեղմ դարմանեաւք, վաղագոյն և լաւ և պատրաստքն յաջողելով ՚ի բժշկութիւն։ Հոգ տարցի իշխանն ոչ կենդանութեան միայն, այլ և զի մի ՚ի նախատինս սպիւռն կացցեն[1]։ Ա՛յ ինչ փառք պարծանաց են թագաւորի եթէ դատաւիրեք խիստ տայցէ, զի ո՛ ոչ գիտէ՝ եթէ կարող է. ուր ընդ հակառակն՝ մեծապէս մեծ են փառք եթէ զուսպ կալցի զկար զօրութեան իւրոյ, եթէ զաւգուսն կորզեացէ ՚ի բարկութենէ այլոց, և ոչ զոք իւրումն զոհեացէ բարկութեան։

[1] Խնա զի մի վատ անուն ժառանգեսցէ։

ԳԼՈՒԽ ՈԻԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ՀԱՓՈՎ, իշխել ծառայից՝ ՚ի գովութեան մասին է. և ՚ի սորուէն նկատել պարտ է ոչ զայն թէ արդեաւ ինչ կարող իցէ տանել անվնաս, այլ թէ արդեաւ թողացուցանէն զեզ արդարութեան և լաւութեան օրէնք, որ հրամայեն խնայել և ՚ի գերիս և յարձանագրենս։ Քաջ նիճն ևս իրաւամբք պատուիրէն զազատ և զաղնուական և զհամեստ որեաւր ոչ որպէս ստրուկս վարել չարաչար, այլ որպէս պատուով միայն խոնարհագոյնս քան զքեզ, որք ոչ ՚ի ծառայութիւն քեզ, այլ ՚ի խնամդ են հաւատացեալ։ Օրէնէ ծառայից յարձանս ՚լինել ասպատան. Թէպէտ աներևոյթ ինչ օրէնն իցէ ընդ ծառայս, սակայն է ինչ զոր հասարակաց օրէնք կենդանեացն՝ արգելուն ընդ մարդ, վասն զի բնութենակից քեզ է։ Ո՛ր ոչ առաւել քան զծառայն ատեսցէ զԱ եդիոս Պողիան որ զմարիննայ ձկունս մարդկային արեամբ պարարէր, և զորս դառնացուցանէին զնա փոքու իւիք՝ հրամայ տայր ՚ի ձկնարան անդր իջրև օձից ՚ի կուր արկանել։ Ողառական այր՝ բիւրուց արժանի մահուանց, Թէպէտ ՚ի կերակուր իւր պատրաստէր զմարիննայսն, որոց զծառայն արկանէր ՚ի կուր, Թէպէտ յայն և եթ բուծաներ զձկունսն՝ զի զայսօրինակ բուծանիցէ։ Ոչ զոր օրինակ անողորմ տեառք մատաճք յուցանին ընդ քաղաքն ամենայն, և են ատելի և նողկալի. սոյնպէս և Թագաւորացն անօրէնութիւն առաւելագոյն նշանակի, և անուն վատութեան նոցա և ատելութիւն գարուց ՚ի գարս ձգին։ Որքան լաւագոյն իցէ չլինել ծնեալ, քան ՚ի համար գրիլ ծնելոցն ՚ի պատուհաս հասարակաց։

1 Ցարձանս Թագաւորաց ՚ի հրապարակս և ՚ի կից ճանապարհաց կանգնելոց, յորս իբրև ՚ի տաճարս մարթ էր ապաւինել յանցուցելոցն ծառայից։

ԳԼՈՒԽ ԻԸ ՆԵՏԵՏԱՄՆԵՐՈՐԴ

ՈՒՐ քան զգթութիւն վայելչագոյն ինչ գմտաւ ածել անձին իշխեցողի՝ որ և է օրինակաւ և իրաւամբք գերազգոյն եղելոց այլոց։ Զի այնչափ առաւել գեղեցիկ և մեծավայելուչ գոլ ասեմք զգոյն, որչափ մեծագոյն իշխանութեամբ գերազանցեալ. զի չէ պարտ միասակաւ լինել իշխանութեանն, եթէ ըստ օրինաց բնութեան չարգարի։ Այսմն զի բնութիւնն հնարեցաւ զթագաւոր. զոր և յայլոց կենդանեաց ի իմանալ և՛ի մեզուաց, որոց թագաւորի չարին է՛ի միջին և յանբոյթ վայրի, և ինքն ազատ յարհաստութենէ և հարկապահանջ այլոցն վաստակոց։ Այնդ կորնչիլ թագաւորին՝ բովանդակ կործանն անկանի մեզուացն պարզ, և ոչ հանդարտեն առաւել քան զմի ունել թագաւոր, և զլաւագոյնն ինդրելն պատերազմելով։ Այրևելի է շքով և կերպարան թագաւորին. և անհնարն այլոց՝ եթէ մեծութեամբ և եթէ փայլմամբ. և սովին առաւելապէս զանազանի։ Այպաքէն կարի բարկասիրտք են մեզուք, և ըստ տանելոյ փոքրկութեան մարմնոյ բուռն մարտիկք. որ և զկայթոցս՛ի վէրս անդ թողուն. միայն ինքն թագաւորն է անվհատեցոյ։ Զկաւ մեզաւ բնութիւնն լինել նմա գժնեայ, և ծանրագնոյ լինել քինախնդիր. ՛ի բաց կապտեաց՛ի նմանէ զնեա և զալաք, և անզէն թագացոյց զաւարկութիւն նորա։ Օրինակ է այս մեծ թագաւորաց մեծաց։ Այսն զի այս օրէնք են բնութեան՛ի փոքունս երևեցուցանել զինքն, և զմեծամեծ իրաց զնոցանս՛ի դուշնաքեայս ցուցանել։ Այնթէ է՛ի ընկէն կենդանեաց չառնուլ զնարատ վարուց. ուր այնչափ առաւել պարտ է մարդոյ բարեզգեաց լինել սրտիւ, որչափ առաւել ուժգնագոյն կարէ գնասել։ Այրիւ թէ նոցն օրէնք էին և մարդումս, և բարկութիւն նորա զոյգ ընդ խայթոցի իւրմէ բեկանէր և ոչ աւելի քան զի նուազ օրէն լինէր նմա գնասել այլոմ, և ոչ այլոց ուժով յառաջ վարել զոխս իւր. վասն զի հեշտեաւ խնդիրն ցասումն, եթէ անձամբ զանձին խնդրեր զվրէժ և վտանգաւ մահու վտանգն զոյժ իւր։

Այլև ոչ այդպէս անհրկեանն ընթացք նորա . քանզի Հարկ է նմա այնչափ յահի մնել, որչափ աշընակեցն լինել կամի, և դէտաին ունել և զգոյշ կալ ի ձեռաց բոլորից . և ի կալն իակ ազատ և անբռնաւորելի համանրել Թէ ինդրելոյն անձն իւր , և զի չիք իւր և ոչ վայրկեան մի ազատ յերկիւղէ : Այլ ո՞ հանդուրժիցէ զայսօրինակ վարել կեանս , ուր ի դէպ է անձնասպանք , որով և անհրկեանն զերկրականն վարել զերաւունս իշխանութեան յուսախաբութիւն ամենեցուն : Այսն զի խաբէ որ միանգամ ապահով կարծէ զթագաւորն անդ՝ ուր չիք ինչ ապահովութիւն ի թագաւորէն : Այապահովութիւն ապահովութեամբ դահնաւորեցի : Այն պէտք կանգնելոյ բարձրաբերձ ամրոց , և ոչ ամրացուցանել զդժուարամատոյց բլուրս , ոչ զկողս լերանց հատանել և բազմապատիկ պարսպօք և աշտարակօք զանձն պատրաստել . զթութիւն՝ անպատապար ապահովէ զերկութիւն թագաւորի : Այհայն ամրութիւն անպարտելի , սէր քաղաքացւոյն է : Իբրև զի գեղեցիկ է կեալ փաթթամբ բոլորեցուն , որոց և ուխտք սրտից՝ ոչ լու ի լու ոստիկանաց իցեն . և Թէ դոյզն ինչ գեղեցեցի աւաղջութիւն , ոչ յոյս արձարձեսցի ի մարդիկ , այլ երկիւղ . չկայցէ ինչ ուրուք այնչափ պատուական , զոր այն չօժարեսցի փոխանակել ընդ կենդանութեան իշխանին իւրոյ . զամենայն որ ընդ նա անցանէ , ընդ անձն իւր գլխովին անցեալ համարեսցի : Այսպիսորէն անդուլ յուսալութեամբ լաւութեան յայտ առնէ զի ոչ Է՛ , տէրութիւնն է իւր , այլ ինքն տէրութեան հասարակաց : Այհամարձակեսցի դալ ինչ գործել նմա . ո՞ր՝ Է՛ ի ձեռս իւր իցէ՝ զարաբաղդութիւնս անգամ չկամիցի յետս դարձնել ի նմանէ , առ որով ծաղկին արդարութիւն , խաղաղութիւն , ամենաճաշութիւն , ապահովութիւն և փառք . և քաղաքն Հռոմայեցւոյ՝ յորդեալ զերզու առատութեամբ ամենայն բարութեանց : Այոչ այլով ոգւով նայեսցի ընդ առաջորդ իւր , բայց որպէս ի դիւն անմիջս՝ Թէ գայլին մեզ յանկարծ ի տեսութիւն՝ պատկառանաւք և բարեպաշտութեամբ : Այսկ արդ զինչ իցէ . միթէ չիցէ նոցին մերձաւոր հետզգակաւ նա որ աստուածամանան երևի վարուք , բարերար և բազմապարգև և կարող ի լաւ անդր : Այսոցիկ

արժան է իղձ լինել և զայսոցիկ ձեռք երթալ, և այնպէս մեծանալն եղանիլ, զի և լաւանալն միանգամայն եղիցիս։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Ա ԱՍՆ երկուց պատճառաց պատժել զնաւօրեալ է իշխանն՝ իբր զի կամ զանձին վրէժ ինդրեսցէ, կամ զայլոց. նախ զառաջինսն ձառնեցից որ լինքն հայի. վասն զի առաւել գժուարին է՝ ի չարիս ունել զանձն, յորժամ զգաւոց (անձին) վրէժ ինդրեսցէ, քան յորժամ առ օրինակ։ Ոչ ելոյդ է յոչ առնել յայմ վայրի, զի մի դիւրահաւան գոցի, և զի քաջ խուզարկեսցէ զձեռնարտութիւնն, և զի թեկն ածցէ անմեղութեան և խելամուտ թուեացի զի ոչ ինչ ընդհատ քան զտառապելոյն՝ դատաւորին վարի դատ. այս ամենայն յարդարութիւն անդր ակնարկէ և ոչ ՚ի գթութիւն։ Հայժմեաս յորդոր լինիմք նմին զի թեպետ և յայտնապէս թշնամանս իցէ կրեալ, ընդ իշխանութեամբ կալցի զոգին, և ըզպատիժն՝ եթէ կարող է անվտանգ՝ չնորհեսցէ, ապա թէ ոչ՝ չափաւորեսցէ. և բազմօք աւելի զիւրամարելի իցէ ՚ի զրկանս անձին քան օտարին։ Վասնզի զոր օրինակ ոչ է մեծանձնութիւն յօտարին ընչից առատաձեռնել, այլ յիւրմէ տալ՝ զոր պիտոյն պարգևէ, սոյնպէս գթած կոչելոյ ոչ զայն որ ներողամիտ լինի զիւրաւ վասն ցաւոց օտարին, այլ որ ինքն խթանօք մտրակեալ՝ չընդոստնու. և որ ՚ի միտ առնու թէ մեծանձնութիւն է զրկանս կրել ՚ի գերագոյ իշխանութեան, և թէ չէք ինչ փառացի քան զթագաւոր որ ինասեալ և ոչ պատուհասեալ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

ՅՐԿՈՒ ինչ իբս ընտրեալ է առնել վրէժիւքն-դրութիւն, կամ սիրանս զրկելոյն և կամ ապահո-վութիւն յայլս : Իշխանն մեծի է վճռակեալ բախտի և անկարօտ սիրուելեան . և այնպէս յայտնի է զօրու-թիւն նորա մեծ , մինչև չունել պէտս այլոյն չարակրու-թեամբ տալ հաւատս զօրութեան իւրոյ : Օ այս ասեմ եթէ վայրագոյնք իցեն՝ որք ընդհարան ընդ նա և վշտացուցին . ապա եթէ հաւասարք իւր իցեն , և տեսանելն զնոսա ընդ իւրս՝ չատ իսկ վրէժիւնդրու-թիւն է : Օ թագաւորն սպանանել և ծառայն և օձն և նետ , այլ ապրեցուցանել և ոչ որ , եթէ ոչ որ մեծն է քան զնա զօր պահեացն : Այսպս ուրեմն մեծանձնօրէն պարտի վարել այնպիսեաւ աստուածատուր իշխանու-թեամբ տալոյ և բառնալոյ զկեանս . մանաւանդ 'ի նոսա, զորս գիտիցէ վիմամարտս երբեմն լեալ փառաց իշխա-նութեան իւրոյ . այսպիսեամ հասեալ զատողական իշ-խանութեան՝ ելիցէ և կատարեաց զվրէժիւնդրութիւն, և զարժանին ետ պատուհաս : Այսն զի որ այլեւս պարտի զկեանսն՝ կորոյս զնոյն . և որ միանգամ 'ի բարձրու-թենէ յոտս թշնամանոյն անկեալ՝ օտարին ակն ունի վճռոյ յաղագս գլխոյ իւրոյ և թագաւորութեան , այնպիսին կեայ 'ի պարծանս ազատաբարին իւրոյ . և ողջանգամ պահեալ՝ առաւել մեծացուցանէ զանուն նորա , քան եթէ բարձեալ լինէր յաչաց : Այն զի հանապազորդ-դեան տեսարան է նա զօրութեանն ապրեցուցչին . ուր եթէ 'ի հանդէս յաղթանակի ածեալ լինէր , առ օրին անցանէր : Իսկ թէ և զթագաւորութիւն իւր գլխովին մարթասցի անբոյթ ունել և վերստին հաստատել 'ի բարձրութեանն՝ ուստի անկաւ , յաւելու և ևս վերամ բառնալ զգոլութիւն բարեբարին , որ շատ հանդիպեցաւ զիարս և եթէ պարծանաց պարտեցելոյ արքային կապ-տել 'ի նմանէ : Այս իսկ է և 'ի վերայ յաղթու-թեան իւրոյ յաղթանակել . և գնել վկայութիւն, թէ չգոյս ինչ առ յաղթեալն յիւրմէ՝ արժանաւոր յաղ-

Թագաւորին։ Որ քաղաքացիս և առ անձամբեան և ցանծունս՝ այնչափ առաւել չափով պարտ է վարիլ, որչափ զուշնաքեայ ինն է նկուն առնել զնոսա։ Ամենից կամակար խնայեալքիր, յոհմից վրէժխնդրութիւնն իսկ նողկալի Թուեցի քեզ. և ոչ ընդհատ ինչ՝ի մեռուսից կենդանեաց որք պղծեն զձեռս Աիմողին զնոսա, ի բաց դարձուալքիր զձեռադ. այլ՝ի նոսա՝ որք վկայութեամբ քաղաքին պահելոյ և պատժելոյ իցեն արժանի, պատեհ կալջիր հանդէս առնել մեծի գԹուԹեանդ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Յհետացուէ յայլոյն զրկանս յորոց՝ի վրէժխնդրութիւն զերիս զայսոսիկ պատուիրեն օրէնք, և իշխանին պարտ է զՀետ երԹալ այնց. իբր զի յուղղութիւն յանցուցելոյն իցէ պատուհասն. կամ զի նորա պատուհասիւն լաւագոյս յարդարեսցէ զայլն և կամ զի բարձմամբ չարաց՝ի միջոց աներկիւղս կեցցեն զայլք։ Ո՛չ յանցուցեալն զիւրագոյն և ԹեԹևագոյն պատժովք ածցես յուղղութիւն. վասն զի առաւել զգուշութեամբ կեայ նա՝ յորում դեռ կայ տեղի ինչ ողջմտութեան։ Եւ որ խնայէ՝ի պատիւն կորուսեալ. ազատութիւն իւն՝ի պատժոց է՝ եԹէ չնայ ինչ այլ ուժք որով պատուհասեցցի։ Իսկ յուղղութիւն բարուց քաղաքացւոց օգտէ մանաւանդ պատժոյն խնայութիւն. զի մեղուցելոյն չահախոտութիւն՝ի սովորութիւն զմեղն գարձուցանէ, և ԹեԹևագոյն Թուին նահատիւքն զոր ամբոխ դատապարտելոյն բառնայ. և խրատութիւնն՝ դեղ ազգաց՝ չահախոտութեամբն կորուսանէ զահաւորութիւնն։ Ո՛չ բարս բարիս հաստատէ իշխան՝ի քաղաքացիսն և զնդութիւնս նոցա սանձահարէ զիւրաւ, եԹէ հանդուրժէ այնոցիկ ոչ իբրև՝ի հաւատնուԹենէ, այլ իբրև չահասէր. և մեծապէս սրտցաւութեամբ Թէ գայցէ՝ի պատուհասել։ Յոյն ինքն գԹուԹիւն առաջնորդին առաւելագոյն ազգէ ամԲո՛՝ի մեղանչել, և ծանրագոյն Թուի պատիժն տուեալ՝ի հեզահամբոյր իշխանէ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԲՈՐԴ

ԱՐՁԵԱ, տես ինձ և զայն զի յաձախագոյն ևս գործին չարիքն՝ յաձախութեամբ պատուհասեաքը։ Ոչայր քո լինիցաս հնգից տանց զգաստագոյնս քան զոր ի սկզբանէ և այսր լուեալն էաք, ետ փակել՝ի պարկս՝։ Կուաղագոյնք յոյժ՝ի զուակաց յանդգնեիր յայն եղեռն ապիրատութեան, յորչափ առանց օրինաց էր ոձիրն։ Ա՝ան զի արք աւագք և ներքինիք ընութեան իրաց, ծայրագոյն խոհեմութեամբ լաւ համարեցան երբև ոձիր ինն անլուր և անյանդգնելի լռել զայն՝ի սպառ, քան թէ պատուհասել կամեցեալ՝ մարթելի զերծն ցուցանել։ Այսպա հայրապետութիւն յօրինացն էառ սկիզբն և պատուհասն ուսոյց զեղեռնն, Ա՝ւ վատթարացաւ բարեպաշտութիւն՝ յորմէ հետէ քան զնախայաձախեցին պարկէ։ Ի քաղաքի յորում դուն ուրեք պատուհասին մարդիկ, յաձախ անմեղութիւն, և որպէս հասարակաց բարւոյ իմամ ունին այմ՝։ Ա՝ողջ անմեղ համարեցի զինքն քաղաքն՝ և լինի. առաւել զայրանայ ընդ խոտորեալսն՝ի հասարակաց համեստութենէ, եթէ սկսաւ զնոսա տեսանիցէ գոլ։ Ա՝ան գառաւ է, հաւատա ինձ, ցուցանել քաղաքին թէ յոլովք են չարագործք։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀՈՐՈՐԴ

ԽՆԴԻՐ եղև երբեմն յատենի սինկղիտոսին, զի իցէ ինչ զանազանութիւն տարազու ընդ ծառայ և ընդ ազատ. այլ ասա յայտնի եղև թէ քանի վտանգ՝ի վերայ կայր եթէ ծառայք մեր սկսանէին՝ի թիւրարկանել զմեզ։ Այսօրինակ գիտեա երկիւղալի գոլ,

1 Զի որպէս և յառաջն ասացաք, զգաստապարտեցոյն հայրապատնից վաղվաղակի պատեալ զաչն և զգլուխ և ածեալ՝ի բանս, փաթկէին զնոսա՝ի պարկս մորթեղէնս և ընկէնուէին՝ի ծով։

եթէ ընդեսցի ումեք . իսկ և իսկ յայտնի լինիցի թէ վատթարագոյն մասն քաղաքին քանիպատիկ ծանրեսցի ի կշիռս : Օգո օրինակ վատթարութիւն համարեալ է բժշկի յուղարկաւորելցն բազմութիւն , նոյնպէս և իշխանի՝ պատուոյն : Եւ հրամայեն քաղցրութեամբ՝ լաւ և լիով լսելի :

Ոչնութեամբ խոտապարանոց է հոգին մարդոյ և ի հակառակ անդր և յառապարս գոգցես բերի . և դիւրագոյնս գՀետ երթայ քան թէ ձգի : Այլ որպէս քաջալանջ և պատուական երիվարքը լաւ ևս ուղղին մեզմ սանձիւ , սոյնպէս գՀետ գթութեան ինքնակամ բերի անմեղութիւն անբռնադատ . և արժանի համարի քաղաքն պահել զնա ինքեան . ապա ուրեմն այս Ճանապարհ է շահաւէտ : Ողորմութիւն արտաքոյ է մարդկեղէն մտածեանց իբրև կարի ինն գժպատեհ հեզութեան հոգւոյ : Վաղամեայն մեղգնութիւն է ընդ արիւն բերկրիլ և ընդ վէրս . և թողեալ զմարդկութիւն՝ յերկ վայրի փոխիլ :

ԳՒՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Օ ի զինչ խոհ է , քեզ ասեմ ով Հզեքսանդրէ , եթէ առիւծուց առաջի արկանիցես զ իւսխմաքոս . քո էն այդ ժամիք , քո է այդ գազանութիւն : Ամբէ , քանի ցանկալի էր քեզ արդեօք Ճիրանս ունել և ցուցուկ լայնաբաց՝ յուտել զմարդիկ : Եւ պահանջեմք ի քէն , զի այդ ձեռն՝ սիրասէս գործարան մեհու ընտանեացդ՝ վերկարալ ումեք լինիցի . ոչ զի այդ սիրտ գազանային՝ անցագն ի չարիս ազգաց և ազանց , առանց արեան և կոտորածի յագեսցի , այլ գթութիւն իցէ՝ թէ ի սպանութիւն բարեկամաց ի մարդկանէ կարգեացին դահիճք : Այս իսկ պատճառք են ատելի լինելոյ անգթութեան յոյժ յոյժ՝ զի ելանէ ըստ սահմանի , և ըստ սովորականն և ըստ մարդկային : Վարձաղոր պատիժս հետագոտէ , սէգ զուշն , տանջանսարանս հնարի առ փոխոխելոյ զգայուն և յերկարելոյ և յաղէտս

մարդկան զուարճանալոյ ։ Լաւ ՚ի փոխել անգթութեան ՚ի հեշտութիւն՝ յայնժամ դժուարին այն ախտ հոգւոյ ժամանակ ՚ի յետին մոլեգնութիւն ։ Լաւ ՚ի ձահ պատահ է այնուհետեւ սատակել զմարդն զայն ։ Ուրախ այնպիսւոյն գՀետ սնդիկ կործանումն, տեսլութիւն, թոյն և սուսերը, և այնչափ բիւրաւոր դարանին նմա վտանգք , որչափ բիւրաւորագ Հնչէն է ՚ի վտանգ ։ Լ զի մանանաւորաց ոմանց Համախոհութեամբ , և է զի Հասարակաց դատով թակարդապատի . վասն զի միւսոց թեթև և աննձնական՝ ոչ Համօրէն գրգռէ զքաղաքս . այլ որ արձակ Համարձակ մոլեգնիլ սկսանի և յամենեցուն վերայ յարձակի , յամենայն կողմանց կարեւեր խոցոտի ։ Ոձք մանրիկք անտեսին և ոչ Հետաքննին ՚ի բազմութենէ , բայց թէ ըստ սովորականն չափ անցեալ և անձոռնի իցէ մեծութեամբ , թէ զաղբիւրս թունեսցէ յրմնելն , թէ շնմոք տոչորեալ ապականեսցէ զամենայն ընդ որ և անցանէ , մեքենայիւք բաղխատրաց Հետամուտ լինին նմա ։ Վոքունք ՚ի չարեաց կարեն խաբել և անտես լինել , մեծամեծաց ընդ առաջ ելանեմք ։ Իրակս և մի հիւանդ ոչ վերոմվէ զտուն , այլ ՚ի յաձախել մահուանց և յերեւել սրածութեանն , գոյէ քաղաքն Համօրէն և ձեպին ամենեքեան ՚ի փախուստ՝ ձեռս ՚ի վեր ընդդէմ դիջն ձգելով ՚ի բողբ ։ Ի փայլել բոցոյ ընդ յարկաւ միով , բնակիչք տանն և զրացիք փութան առ ՚ի ջուր . իսկ Հրդեհ արձակածաւալ՝ որ զբազմութիւն տանցն Հարակէ , մնասմբ ամբոխի քաղաքին Հեղձուցիկ լինի ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Օ ԱՆԳԹՈՒԹԵԱՆ մանաւանդ զվրէժ խնդրելոյն և ձեռք ծառայից , յանձն առեալ զվտանգ խաչին . իսկ զբռնաւորացն՝ ազգք և ժողովուրդք , եթէ Հարստահարեալքն և եթէ որոց ՚ի վերայ կային չարիքն , միաՀամուռ զբոհ եւտուն ՚ի կորել արմատաբի ։ Լ զի և թիւնապատիճ նոցա յարեան ՚ի վերայ նոցա , և զՀատուցմունս ժամանակ ՚ի վերայ կոյն չարիքն և զգազանութիւն և զոր Հնչ միանգամ ՚ի նոցանէ ուսեալ էր , ՚ի

վերայ նոցա ՚ի կիր արկին ։ Ոչ ասն զի իմ իմիք ակնկալել ունի որ ՚ի նմանէ , որում ուսոյց զաղաղորժութիւն ։ Ոչ յերկար հպատակէ անգգամութիւն , և ոչ վասն որոց հրամայեցաւն մեզանէ ։ Ասայ եկ և հաստատեաց դու ինձ թէ անքոյթ իցէ անգթութիւնն . և որպիսի արդեօք թագաւորութիւն նորա իցէ ։ Անդորոյն կերպարանաց քաղաքի նուաճելոյ ՚ի գերութիւն և աշխարհս տեսլեան պակուցելոյ առ հասարակ յերկիւղ ։ Համայն տիրութիւն , վարանք և դողումն , և հեշտալիքն անգամ երկիւղալի ։ Ոչ ոք աներկիւղ կոչեսցէ , յորս խնամով պահ դնելի է լեզուի և արբեցելոյ իսկ գլխովին . և ոչ տեսարանք , յորս յուզին պատճառք յանցաւորութեան և վտանգի ։ Ախտ մեծամասն իսկ հանդերձանքն իցեն , թէպէտ և թագաւորավայելք և հարստարարութեամբ՝ բայց ումմէ հաճոյասցի ՚ի խաղալոյ ՚ի բանտ երթալ ։ Որպիսի չարիք իցեն այս , ով բարեբար դիք , սպանանել , գժնեհանալ , զուարճանալ ՚ի ձայն շղթայից և զգլուխս կառափել զքաղաքացւոց , և ամենայն ուրեք ուր և հասանիցէ՝ ճնշապուխս առնել աբեան և տեսլեամբ իւրով ահընկէց լինել և հարթութեանել ։ Օ ինչ այլ կեանք էին մարդկան , եթէ առիւծք և արջք թագաւորէին . եթէ վիշապաց կամ այլոց ևս գիտակարագունից ՚ի կենդանեաց առեալ լինէր իշխանութիւն ։ Այրք անբաժք ՚ի բանէ , և գազանական անուամբ դատապարտեալք առ ՚ի մկնէ , սակայն չիւրայինն ոչ մերձենան , և աներկիւղ է նմանութիւն ՚ի մէջ նոցա ։ Ասկ մարդկան կատաղութիւն և ոչ կարեւոր ծանօթից աչն աճէ . այլ ընդ մի հասնի գրէ զիւրն և զարտաքինս , որպէս զի ՚ի մանաւորայն կոտրած վարժեալ և սովորեալ , մարթասցի ասպա ՚ի կորուստ և ՚ի սատակումն ազգաց հոդել ճանապարհ ։ Հրձիգ առնել գառնս և արօրագիր առնել գհին քաղաքս , իշխանութիւն առդնէ . իսկ զայս որ կամ զայն միանգամ սպանանել ոչ յոյժ արբայավայել . եթէ ոչ հայեցք չուառականաց միանգամայն տասպատ անկեալ զնիցին , հաստարի գանգթութիւն իւր ընդ տասնմանաւ փակեալ ։ Չրջանկութիւն այս է , բազմաց կեանս չնորհել , և անդամին իսկ ՚ի մահուանէ ՚ի կեանս վերադարձել , և գթութեամբ արժանի լինել քաղաքական պատկին ։

Ա՛ւ ինչ այլ զարդ այնպէս գեղեցիկ է և վայելչագոյն ի փառս գլխոյ իշխանին, որպէս պատկն այն նուիրեալ վասն պահպանութեան քաղաքացւոց։ Ա՛ւ պատերազմական զէնք կորզեալք ի ձեռաց պարտեղոյն, ոչ կառք բարբարոսաց արեամբ թաթաւեալք, ոչ աւազք յաղթականք։ Այս է կարողութիւն աստուածանման, միահամուռ և ամենակեցոյց պահպանողութիւն. իսկ յախուռն և անխորհուրդ կորուստ յոլովից, հրոյ և կործանմանն ածէ բռնութիւն։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ի ՄԻՈՑ ևեթ քոյոյ բարբառոյ, ով ինքնակալդ՝ կ՚ե-
լոյն, յորդորեալ եկի ՚ի գրել զգեթ ամենեն. բարբառ,
զոր՝ որպէս յիշեմ՝ ոչ առանց զարմացման լուեալ ՚ի
քէն և այլոց ևս պատմեցի ասել. բարբառ առաքինի,
վեհ և հեզահամբոյր. որ ոչ յերիւրեալ և ոչ յայլոց
լսելիս հասեալ՝ յանկարծակի հնչեաց, և զքո բարու-
թիւնդ ՚ի պայքար ընդ իշխանութեանդ մտեալ՝ հանդէ-
սացոյց. ՚Կախարդն քո [՚Խուռս՝ այլն պանծալի և ար-
ժանաւոր ինքնակալիդ, հանդերձեալ ՚ի մահ մատնել
գերկուս յաւազակաց՝ խնդրեր ՚ի քէն գրել ամէ գոյս և
էր վասն պատուհասիցես. և ՚ի յապաղել քո զերծն բա-
զում անգամ՝ ՚ի միում նուագի իբրև կարի սաստիկ և
յոչ կամաց առ չկամեցողդ զքարտէսն յառաջ մատու-
ցեալ զնէր, զայս բարբառ արձակեցեր. [՚Կրանկ ամէ
չգիտէի զդէր՝ [՚Կարբառ արժանի լսելի լինելոյ յամենայն
ազնիս բնակեալս ՚ի հռոմկական տերութեան, և յորս
սահմանակիցք նոցին՝ ընդ ազատութիւն իւրեանց երկ-
մտեն, և որք ոգւով կամ զօրութեամբ դիմամարտ են
նոցա. [՚Կարբառ արժանի հնչեցուցանելոյ ՚ի ժողով
ամենայն մահկանացուաց, և երդնլոյ իշխանաց և թա-
գաւորաց ՚ի վերայ նորին. [՚Կարբառ արժանի անմեղու-
թեան համարէն ազգի մարդկան, և վաղեմի դարուն.
[՚Կպաքէն այժմ ՚ի դէպ եր միաձայնիլ ամենեցուն ընդ
ուղղութիւն և ընդ լաւութիւն, և տարագիր առնել
զգանկութիւնն իրաց օտարին, ուստի յառաջ գան ամե-
նայն չարիք սրտի. վայել եր վերահանգնիլ բարեպաշ-
տութեան՝ հաւատով հանդերձ և պարկեշտութեամբ.

և մերձեալ եանց, որովք ընդ երկար զեղծաւ թափառութիւնն՝ տեղի տալ այսուհետև երջանիկ և անախտ դարուն։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Այլ արժան իսկ է յուսալ մեծապէս, ամի Աստուած, և վստահ լինել ընդ յաջողութիւն իրացդ. այդ քո հեզութիւն հոգւոյ՝ հնարիկ հարեալ և ծանալեացի տակաւ ընդ բռնանդակ մարմին տէրութեանդ, և՝ ի քոյդ նմանութիւն կերպարանակից լեցին ամենեքեան։ Ի գլխոյ անտի է քաջողջութիւն, անտի է ամենեցուն ուռնալ և զօրանալ, և կամ թօչնիլ տկարութեամբ, ըստ որում ոք կենդանի և կամ հիւծեալ ներգործէ՝ ինոսա։ Այլ եղիցին քաղաքակիցքն և նիզակակիցք համբերն արժանի քոյոյ բարերաւութեանդ. և ընդ ամենայն տիեզերս նորոգեացի ուղղութիւն վարուց, և լիցին պէտք բռնութեան ձեռաց։ Ներկարեցի ապաքէն՝ ի բանս, ոչ առ ամենեցուն մարդահամարութեամբ զետելս քո, զի չիք իմ այդ սովորութիւն. բնտրեմ մնռաւանդ զառնայուցանել ձմանարուեստութեամբ բանիկ, քան հաձել մարդեղութեամբ. իսկ առ ինչ ապա կամիցիմ խելամուտ լինել քեզ բարեաց գործոցդ և բանից. որպէս զի ոք զարդիս՝ ի բերմանէ բնութեան գործին, գործեացին ընտրութեամբ և բանիւ։ Օ այս խորհիմ արդ յանձն իմ, թէ որչափ մեծաբանութիւնք լեցեն բազմահոգւոյ համբաւեալք և զօրացեալք՝ ի մարդիկ, բայց և առելիք. որպէս այն. "Ասող առեացեն, միայն թէ զանգիտեացեն ,, . չէ ինչ ընդ հատ և հեղգնականն տող, "Ձեռ իմոյ մեռանելոյ՝ թող երկիր ձարակ լեցի հոյ ,, , և ոք՝ ի սոցին սակի են։ Այլ ոչ գիտեմ որպիսի անագորոյն և ապառում միտք ձոռամ ձնաբանութեան յառաջ բերին իմաստս այսպիսիս յանդգնութիւն և ուժգնիւ. չիք իմ ցաւդ՝ ի բարւոյ և՝ ի հեզաբարոյ առնել լուեալ բարբառ յանդուգն և ուժգնիւ, Իսկ արդ զինչ իցէ. այն զի՝ թէպէտ և դուն ուրեք ակամայ և մեծաձ դանդաղանօք, սակայն Տարկ իցէ

քեզ երբեմն գրել զդոյն, որ առեալ քեզ կացոյց զվիր. բայց՝ և որպէս առնեսդ իսկ, մեծաւ յաւպաղմամբ և յերկար դանդաղանաք։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Լ՚Ի զի մի երբեք պատրեսցէ զմեզ գեղեցիկ անուն գթութեան և՝ ի ծայրայեղն կոյս խոտորեցուսցէ, տեսցուք զինչ գթութիւնն իցէ, և որպիսի և զինչ նորա վախճան։ Գթութիւնն է չափաւորութիւն ոգւոյ՝ ի կարողութեան խնդրելոյ զվրէժ. կամ մեղմութիւն վերնագունի առ ստորնագոյնն՝ ի սահմանել անդ զպատուհաս։ Պահովագոյն է բազմերիւակ սահմանել, գուցէ միակ սահմանն ոչ քաջ ձեղուսեսցէ զերան. կամ թէ ասել՝ զի մի պարականան իցէ։ Ա՛ն որոյ մարթ է և այսպէս սահմանել. Յօժարութիւն հոգւոյ առ հեզութիւն՝ ի պատուհասելն։ Խակ եթէ ասիցեմք թէ Գթութիւնն է չափաւորութիւն՝ որ նուազեցուցանէ ինչ յարժանաւոր և՝ ի պարտուպատշաճ պատուհասէն. թէպէտ և մերձաւորագոյն ձշմարտութեան է սահմանս, բայց կրէ ինչ ընդդիմութիւն, և մարթի իցէ բողոքել թէ չէք առաքինութիւն որ գործիցէ նուազքան զարժանն։

Բայց այս ամենեցուն յայտնի է զի գթութիւնն չկայ՝ ի չափս սահմանին զոր մարթի էր իրաւամբք սահմանել։ Ա՛մն հակառակել հանարձին անհմտութ զանաչառ խստութիւնն. այլ սակայն առաքինութիւնն չկարէ հակառակիլ առաքինութեան։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Օ[ն]ՆՉ ուրեմն զխնդակաց գթութեանն իցէ. Ընդ գթութիւն, որ ոչ այլ ինչ է՝ բայց գազանաբարոյութիւն՝ի պատժել։ Այլ են և՝ որք ոչ առ վրէժխնդրութեան ինչ պատժեն, և սակայն անգութք են. որպէս որք զանծանօթս ոմանս և որոց հանգիպիցին՝ ոչ՝ի գարձ փոխարինի, այլ սպանանելոյ սակս սպանանեն։ Այլ ոչ շատացեալ խողխողել, գժնդակագոյնս մատնեն՝ի մահ. որպիսի որ Վիճիան էր և Պետրոսատև և հէնք ամենայն, որք զըմբռնեալսն գանահարեալ՝ի հուր արկանեն։ Այսպիսիքն անգթութիւն է և այդ, այլ քանզի ոչ ընդ երկանաց ինչ է անդ պատուհասն, և ոչ գարձեալ ընդ յանցանաց ցաւութիւն, զի ոչ կամեցեալ ինչ մեռք, արտաքոյ է այն մերումս սահմանի, որով է խմանալ միայն զանչափաւորութիւն՝ի պատուհասել զյանցաւորն։ Այլ արդ իցէ ասել և՝ թէ ոչ անգթութիւն է այդ՝ այլ գազանութիւն, որ գժնդակութեամբն հեշտանայ. մարթ իցէ և մոլեգնութիւն առձայնել։ պէսպէս ազգ են նորա և իսկապէս այն որ հասանէ ցկատարումն և ցգիշատումն մարդկան։ Այդ ես անգութս զնոսա կոչեմ որոց են պատճառք պատուհասելոյ, և չափ ոչ ունին։ Որպիսի որ Փաղարիան էր, որ թէպէտ և ոչ տարապարտ՝ որպէս ասեն, բայց չհատուցուլի օրինակաւ և անդր քան զմարդկային բնութիւն գազանանայր։ Այդ արդ է առ՝ի խոյս տալոյ յընդդիմաբանութեանց՝ այսպէս և սահմանել։ Ընդգթութիւն է յօժարութիւն հոգւոյ առ գժնդակագոյնս։ Որում բացի՝ի բաց հակառակի գթութիւնն ուր արդար և անաչառ խոտութիւնն մերձաւորագոյն է և միաբանի ընդ նմա։ Ի գէպ է յայսմ վայրի խնդրել թէ զինչ ողորմածութիւնն իցէ. քանզի բազումք գովէն զայն որպէս առաքինութիւն և զայլ բարի ողորմած կարդան. և սակայն ախտ[1] իմն

[1] Խմն գթութեսիրա ողորմածութենէ։

ի հոգւոյ ։ Այլ երկոքեանն՝ իսկ առ երկի կան անաչառութեան և գթութեան. և պարտ է մեզ զգուշանալ՝ ի նոցունց՝ զի մի ընդ կեղծաբարոյութեան յանգիցեմք, և կեղծաբարոյութեան գթութեան յորոյ մածութեան անկցուք ։ Ի վերջնումն թեթևագոյն սըխալմանն է վտանգ, բայց խոտորելոցն՝ ի չէմարտութենէ, զուգահաւասար է սխալումն ։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Այր արդ զոր օրինակ կրճոյն է աստուածպաշտութիւն՝ իսկ աւելորդապաշտութիւնն զեղծումն նորին, սոյնպէս զգթութիւն և զշեղութիւն ևս պաշտեցեն արք բարիք, իսկ յորոմէսկ խորշեացին ։ Վասն զի պատ է փոքրագի անձին, որ ի տեսիլ չարեաց պյոց գորովեալ նկուն լինի, որ և ի կարի իսկ վատթարագոյնս ի մարդկանէ մարթի երևել։ Պատուհասք և մանկամարդիկք են, որք չարժին յարատաւոյց չարեացապարտից. և եթէ հնար ինչ էր և զամենն անգամ խորտակէին ։ Ոչ ոք ի պատճառն հայի, այլ ի չարաբաստութիւնն. իսկ գթութիւնն բանիւք վարի ։ Վասն զի անախորժ հնչէ յունկն անպրագիտաց աղանդն ստոյգ՝ կենաց՝ որպէս կարի խիստ և ոչ քաջ խորհրդական իւրեանց և թագաւորաց ։ Վասն զի ստգտանէն զինս իբրև թէ ժխտիցէ իմաստնոյն զողորմելն և զներել ։ Այսքիւ եթէ այդպէս առցին չէմարտութեամբ, ստեղիք են. քանզի թուին չթողուլ ինչ տեղի ակնկալութեան մարդկայնոց սխալանաց, այլ զամենեցուն յանցմունս արկանել ընդ պատժով ։ Որ թէ արդարև այդպէս իցէ, զինչ խոտագոյն քան զաղանդն զայն կայցէ, որ պատուիրէ մարդկան մոռանալ զնորդկութիւն, և փակէ ի սպառ ընդդէմ դժբախտութեան զանբոյժն նաւահանգիստ՝ որ առ ի միաբանց ձեռնտուութենէ ։ Այլ չիք աղանդ այլ մարդասիրագոյն, բարեսէր և մտադիր հասարակաց բարւոյ, մինչև կէտ նպատակի ունել առաջի օգ-

1 Երկոքեանն՝ իմա զանգթութիւն և զողորմածութիւն ։

տել կամ օգնել ոչ անձին և եթէ , այլ բոլորեցուն և միոյ միոյ ։ Ողորմելն հիւանդութիւն է հոգւոյ ՚ի տէս թէ չաւառութեան այլոց , կամ տրտմութիւն որով զգածի որ ՚ի չարեաց այլոց . Համարելով թէ ոչ ըստ արժանեաց հասեալ իցեն չարիքն ։ Իսկ հիւանդութիւն հոգւոյ չունի զանձին խնամանոյ . պարզ և վեմ է ոգի նորա . և չիք ինչ որ մարթասցի նաեմնցուցանել զնա ։ Այս արդարև ոչ ինչ այնպէս վայելական է մարդոյ որպէս ուժանձնութիւն . և չմարթի ուժանձն լինել , եթէ ահ կամ տրտմութիւն խռովէ զնա կամ ստուերաձև ՚ի վերայ ածէ մտաց և լքուցանէ ։ Այս և ոչ ընդ ազէտս անձին պատահէ այդ առն խնամանոյ , որ ընկերակ զաւետեանն սպառնալիս բարեհոն , և խորտակէ առաջի երեսաց իւրոց . զնոյն պահելով միշտ տեսիլ երեսաց հեզիկ և անսասան , որ չմարթէր նման եթէ տեղի տայր տրտմութեան ։ Ոտք զի նախատեսս է խնամատուն , և առձեռնպատրաստ կան նորա խորհուրդք աջողակք . և միթէ ՚ի պղտոր ակունէ գայցէ յառաջ յստակ ինչ և պարզ ։ Վասնզի տրտմութիւնն անկարող է յընտրութիւն իրաց , ՚ի խորհրդածութիւն պիտանեաց , ՚ի խորհումն վտանգաւորաց և ՚ի կշռել զալիսն ։ Այս ոչ գործով ողորմաբար , զի և առանց ողորմելի գոյց ոգւոյն չէ մարթ այդմ լինել ։ այլ զայն ամենայն զոր բնաւորեալքն ողորմել՝ դիմակալութեամբ առնեն և ցաւով սրտի , սա մտադրութեամբ գործէ և զուարթութեամբ հոգւոյ ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՕԳՆՈՒԹԻՒՆ ժամանակ յարատասուս այլոց՝ այլ ոչ արտասուակցորդ լինի . ձեռն կարկառէ նաեւբեկելումն , ասպնջական լինի վտարանդի եղելոյն , օժանդակէ կարօտելոյն , ոչ զգուելով իմն ըստ որում մեծ մասն կամ ցողացն ողորմած երևի՝ ՚ի բացէ զտուեալն ընկենուն և տաղտկացուցանէն որոց օգնէին , զանգիտելով իմն զի մի հպեցին ՚ի նոսա , այլ որպէս մարդոյ զհասարակացն տայ ։ Ընդհէն զորդին արտասուաց մօրն , և հրամայն տայ արձակել ՚ի կապանաց , և ՚ի սրախաղաց

վտանգէ կորզէ , և զյանցաւորն անգամ զիակնացեալ՝ Թաղէ . այլ զայս ամենայն գործէ անդորը մնօք և անայլայլակ դիմօք : Այսպա ուրեմն խնամատունն ոչ յողորմ շարժի , այլ օգնէ , այլ օգտէ , իբրև յօգնականութիւն մեղկական ճնեալ և ի բարին հաստատեալ , յորմէ տայ իւրաքանչիւր գնոր բաժին . և և առ Թշուառականս ըստ չափու Թողացուցանելով գնոր լուսաթիւն ի յանդիմանել և յուղղել : Իսկ վշտատեսիցն և փորձանաւորաց մնոգիւրացոյն ի Թիկունս հասանէ : Որքան ձեռնտուրս բանական իցէ՝ հակառակ կայ ձախողակ բախտի . քանզի զի՞ր այլ ուրեք ծախիցէ զինչ իւր կամ զոյժ , որպէս ի կազդուրել զխանգարեալն յարկածից : Չիրաւի ոչ ակնկորէ և ոչ սրտաբեկ լինի ընդ հիւծեալ և ընդ բրդգզեալ կերպարանս մուրոյն քաղաքացւոյ , և ընդ այլս յեցեալս ի յուսոյ . բայց սակայն օգտանմատոյց լինի արժանաւորաց ամենեցուն . և աստուածօրէն կարգօք առաւել ներողամտութեամբ ակն արկանէ ի Թշուառականս : Որդորմածութիւնն զրացի է ողորմելութեան կամ Թշուառութեան . քանզի ունի կցորդութիւն իմն և առնու ինչ ի նմանէ : Ո՞ աստուածս գիտեա ինձ զայս նոսիկ , որք ընդ գիշախնութիւն այլոց և ինքեանք բըլշախնան . նոյնպէս խօթութիւն է և ոչ զուարթութիւն ծիծաղիլ միշտ ընդ ծիծաղողս , և ընդ յօրանջել ամենեցուն տատանել զբերան իւր : Որդորմածութիւնն խօթութիւն է ոգւոց կարի նպաստաւոր եղելոց առ ողորմելս . զոր Թէ ոք պահանջէ յիմնատոյց , Տան գոյն իմն է Թէ պահանջեսցէ և գկոճ և գաշխարումին ի Թաղման այլոց : Իսկ Թէ ընդէր չտանիցէ զայդ խնամատունն՝ Նախագոյն տան զպատճառն որ միանգամ խօսին գնոցա : Ա՛յլ ես ի կարձոյ , որպէս ի գատ

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ասաց արդ սահմանեացուք և գիակութիւն ներողամտութեան , որպէս զի ծանիցուք Թէ խնամատոյ չէ պատ տեղի տալ այնմ՝ Որ ունի է Թողացուցումն արժանաւոր պատուհասի : Իսկ Թէ ընդէր չտանիցէ զայդ խնամատունն՝ Նախագոյն տան զպատճառն որ միանգամ խօսին գնոցա : Ա՛յլ ես ի կարձոյ , որպէս ի գատ

օտարի, ասացից՝ Կ՚երթել լինի այնմ, զոր պատուհասելն պարտ էր. իսկ խնամտանին չասեմ, ինչ, զոր չէ պարտ. և ոչ զանց առնել ինչ, զոր պարտի. ապա ուրեմն և զպատիժն զոր պարտ է պահանջել, չնորհէ ոչ. այլ զոր ներողութեամբ կամ է քեզ ի ձեռս բերել, հաճեստա- գոյն ձանապարհաւ ընձեռեմ. վասն զի խնայէ խնամտանին, խորհուրդ տայ և խրատէ. Օ որ ինչ ներելոյն էր առ- նելոյ՝ առանց ներելոյ գործէ զնոյնս. վասն զի ներողն խոստովան լինի Թէ նուազեցոյց ինչ յորոց պարտն էր առնել. Ո՞ւմն բանիւ և Թէ խրատէ և ոչ պատուհասէ, հայեցեալ՚ի սխս նորա զի ուղղութեան է ընդունակ. զայլոսն գայսոսիկս յանցուցեալն Թշնամութեամբ, ողջանդամ հրամայէ արձակել. իբր զի պատրանօք է յանցուցեալ, կամ զինեհարութեամբ սահեալ. Ողջս արձակէ և զթհնամիս, է զի գովելով և զնոսա, եթէ յարդար իրաւանց հաւատարմութեան, գաշնադրու- թեան և ազատութեան, զրգռեալ իցեն ի պատե- ըազմն. Այս ամենայն ոչ ներողութեան, այլ զԹու- թեան են գործք. Կ՚Թողութիւն ազատաբար գտի՛ ոչ ըստ ձևոյ կանոնացն գատախազից, այլ ըստ արդարու- թեան և ըստ լաւութեան. և օրէնն է նմին արձակել զոր, և որքանոյ կամք իցեն՝ սահմանել զվէճ՚ն. Այս զոր առնէն՝ իբր ոչ եթէ նուազեցուցանելով յարդարու- թենէ առնէ, այլ զի արդարագոյն և սահմանեալն յիւրմէ. Իսկ ներելն է չպատուհասել՝ զոր արժանի գատիս պատուհասի. Կ՚երողութիւնն է Թողացուցումն պարտապատշաճ պատուհասի. զթութիւնն պատ առանելոյ, զի զորս ազատս արձակէ՝ կանխէ և վճիռ հատանէ զնոցանէ, Թէ չէն պարտական կրելոյ ինչ այլ. Այս ուրեմն լրագոյն է և հաւետագոյն քան զներո- ղութիւն. Այլ որպէս կամքն են ասել իմոյ բանիս, վէճ՚ն է ի վերայ բառի և բայի. ուր զկրացն չիք տա- րաձայնութիւն. Խնամտանին ներէ բազմոյ և պահ- պանէ զազատս ոչ իբրև ողջամիտս, այլ զի է յոյս ողջ- մտութեան նոցա. նմանող լինելով քաջ մեկաց, որք ոչ միայն զուղղորդ և զգեղաչնորհ ծառս գարմանեն, այլ և խեղաթիւրեցոյն ի պատճառաց ուստեք՝ նեցուկս մերձ դնեն առ ի յուղղութիւն. Օ այլս որբեն շուր- ջանակի, զի մի լոյսն ոստոց խափանել զվերելս նոցին ի

բարձրութիւն· զայլս՝ զտկարացեալսն առ ախտաւորու-
թեան տեղւոյն՝ ստածեն. և կիսոց ի հովանւոյ օտա-
րէ ճաստելոց՝ բանան զերկիննս։ Ըստ սոցին սակի տեսցէ
ինձ կատարեալ իմաստունն զայր այր ըստ իւրաքանչիւր
բնաւորութեան մտտեսել, և թիւրելոցն մատուցանել
զպատշաճ դարման յուղղութիւն ։

։ Պակասի ձեռագրած գլուցս ։

ՊՂՈՒԿԻՈՍԻ Ը. ՍԵՆԵԿԱՅԻ

ԱՒ ՊԱՒՊՂՆՈՍ

ՅՇՈՂՈՒԹԻՒՆ ԿԵՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԵՆԱՑ՝

De brevitate vitæ

ԳԻՐՔ ՄԻԱԿ

ԳԼՈՒԽ ԱՒԱՋԻՆ

Յ ՈՒԼՈՎԱԳՈՅՆՔ ՚ի մահկանացուաց, ո՛ Պաւղինէ, զանգատին զչարակամութենէ բնութեան, զի սակաւ օրեայս ծնանի զմեզ ՚ի կեանս, և դոյզն այն ևս որչափեալ մեզ միջոց ժամանակի այնպէս երագընթաց և հապճեպ սահեալ անցանէ, զի բաց ՚ի սակաւուց ոմանց, այլք առ հասարակ մինչև պատրաստեալ ՚ի կեանս՝ կառնին ՚ի կենաց։ Եւ ընդ այս՝ որպէս կարծեն՝ աղէտս հասարակաց ոչ ամբոխին միայն և տխմար ռամիկն հեծէ, այլ և արք երևելիք և հռչակապք նովին ցանկութեամբ յայս լուծանն տրտունջս։ Հոմէ՛ն և մեծին այն ՚ի բժիշկս բացագանչութիւն. «Կեանք սուղ, արուեստ երկայն»։ Ոչ ոք է և Քրիստոսելին վէմ՝ թախանձարկու ընդ բնութեան՝ զժպատեաց առն խնամանոյ. իբրև զի այնչափ ներողամիտ գտեալ նորա առ կենդանիս, մինչև հնգեակ կամ տասնեակ դարուց տալ նոցա

1 Յայս ձառ Սենեկա բովանդակ զայն ձգնի խնամանապէս ցուցանել եթէ ոչ այնչափ ինքեին կարճ են կեանք մեր, որչափ մեք զբաղմամբ մերով չանցաւորութեամբս կարձեմք զնոյն ՚ի բազմօրինակ պատճառաւց։

կեանս , իսկ մարդոյ՝ որ առ բազում՝ ինչ և մեծամեծս է ճեռեալ , այսպէս հակիրճ՝ կարգեալ լիցի սահման՝ : Եւ այդպէս . ոչ եթէ ժամանակս մեր կարճ է , այլ մեծաւ մասամբ կորուսանեմք զայն : Ճ ատ իսկ երկար են կեանքս , և լիուլի տուեալ մեզ՝ ի գատարումն մեծամեծ գործոց , շատ է զի պատշաճապէս՝ ի վար արկցուք զայն : Այլ յորժամ զեղծուածեամբ և յանհոգս վատնեսցուք , ոչ՝ ի բարի ինչ՝ ի վար արկեալ , այնուհետև՝ ի սոխակել յեռին հարկին , յոր ոչն խորհեաք , տեսանեմք անցեալ զկեանս : Ցես ապա , զի ոչ եթէ կարճ կենաց վիճակեցաք , այլ մեզինս կարճեմք զայն , և ոչ եթէ չբաւորիմք՝ ի ժամանակէ , այլ վատնեմք զայն շռայլօրէն : Օ որ օրինակ մեծագանձ իսկ և թագաւորական Հոյութիւնք՝ ի ձեռս անպիտան տեառն՝ ի սուղ ժամու վատնեալ ցրուին , իսկ եթէ պատշաճապէս գիտասցէ որ ունիցէ՝ և սակաւքն անձին յարգելով , սոյն օրինակ և ժամանակ կենաց մերոց անձ և երկայնաձգի , որում բարեպէսն վարեսցի նովաւ :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Օ ի՝ զանգատեմք զբնութենէ . յոյժ մարդասիրապէս վարեցաւ նա . երկայն են կեանք եթէ գիտիցես վարիլ նովաւ . Այնի հարեալ է զանցագ ազահութեամբ , այլ ոմն՝ ի մատաղամատակ գործս տարժանի զօրհնաձայ սազ . ոմն թաթաւեալ՝ ի գինւոջ , այլ ոմն անկեալ դնի անգործութեամբ . ոմն տանջի փառասիրութեամբ՝ զայլոցն միշտ կախեալ զդատումնէ , այլ ոմն ուժգնի ցանկութեամբ վաճառաց՝ ի ինդիր շահու յածի ընդ ամեր-

1 Սխալ մեծապէս Ցենեկա , զի չիք ուրեք սասցեալ զայս մեծին Աբիստոտէլի , այլ որպէս Պիկերոն վկայէ՝ ի Տուսկուլեան Հառս իւր , « Թէոփրաստոս Հեւսական , ասէ , ՝ի մեռանել իւրում՝ որպես ասէն՝ ամբաստան եկաց զբնութենէն , զի երջանկութեան և կարաւուց կեանս երկար շնորհեաց , իսկ մարդկան այնչափ սուղ » : Իսկ Աբիստոտէլ՝ ի գործ . կենդանեացդ , զայս ճշդեալ եթէ « Մարդ երկայնակեաց է , ասէ , առաւել քան զամենայն կենդանի , բայ՝ ի փոքր միայնոյ , որչափ ինչ մեք ցարդ՝ ի փորձոյ ծանեաք ինչ աբժանհատաս » : Իսկ զկեանս փոքոյ առ առաւելն ձգէ նա մինչև չեորեք հարիւր տ՝ :

նայն ծով և ընդ ցամաք ։ Այն որք սիրով զինուորու-
Թեան ջեռեալք՝ կամ՝ ի վանդ այլոց դարանին միշտ
և կամ ընդ իւրեանցն հոգան վարանեալք ։ Ոչ են որք
՝ի սպաս ապաշնորհ վերնագունից կամաւոր ծառայու-
Թեամբ յոգիս լինին ապատան ։ Օ բազումն կաշկան-
դեալ ունի կամ՝ ի բախտ այլոց աչառականութիւն և
կամ ընդ անձանցն գժկամակութիւն . և բազմագոյնք
են այնոքիկ են՝ որք և ոչ մի ինչ ունելով ուշ նպատակի՝
տարտամ, յողդողդ և անձանց իսկ գժպհի Թեթեւու-
Թեամբ՝ ի նորանոր խորհուրդս տարուբերեալ տատա-
նին ։ Այսկ և այլոց չիք և ոչ մի ինչ հաձոյական յոր ուղ-
ղիցեն զընացս , այլ ծուռեալ և պղերգ կենօք հասանեն
օրհասի . մինչև ոչ ինչ յերկուանալ ինձ ընդ Ձնմարտու-
Թիւն բանիցն առնառածին ՝ի քերԹողս ՝ պատգամա-
բար բարբառելոց .

“Ա՞ոյդն ինչ մանն է կենաց զոր կեամք ,,։
Ա ան զի ճնացեալ միջոցն բովանդակ ոչ կեանք է , այլ
ժամանակ ։ Ե՞ ուրջ պատեալ կան յամենայն կողմանց
ախտք նեղացուցիչք ոչ Թոյլ տան յառնել, կամ՝ ի
տեսութիւն անդր Ձնմարտութեան վերանել , այլ
Ձնդեալ պահեն ընկղմեալս և բևեռեալս ՝ի ցանկու-
Թիւնս ։ Ըիք նոցա անձին զգալ ընաւ . և եԹէ երբեք
հանգիստ ևս դիպեսցի յանկարծ , որպէս յանդղա-
խոր ծովս որ և չետ մրրկաց տատանի , ծփան ալեկոծ
և ոչ զոյ նոցա խաղաղութիւն յերեսաց ցանկութեանց
իւրեանց ։ Այսուհետև արդեօք Թէ գնացանէ իցեն
բանքս որոց աչն յայտնի տեսանին աղէքս . Հայեաց
և ընդ նոսա , որոց երջանկութիւն նախանձելի է բազ-
մաց և ՝ի Ձոխութիւնս անդ իւրեանց հեղձանին ։ Վ՞անի
քանի մեծատանց բեռն են մեծութիւնք նոցա . որքա-
նիւք պերձախօսութիւնն արիւն ետ ժայթքել ՝ի հա-
նապաղորդեան ցոյցս հանձարոյ իւրեանց . որքանիւք
անընդհատ փափկութեամբքն զալկանան . և որքա-
նիւք ոմանց չիք պարապ և ազատութիւն ՝ի բազմու-
Թենէ դիմելոյն ՝ի հովանաւորութիւն նոցա ։ Ա՞նց
յածեալ և ընդ այլս ամենեսին ՝ի փոքունց մինչև ցմե-

1 Զո կոչիցէ Սենեկա « Ձմենամեծ ՝ի քերԹողս ,, ցարգ ոչ որ ՝ի
քննեալ գիտաց ասել, քան յատաջերեալ տողին ։

ծամածս, և ահա սա յօգնութիւն կարծայ, նա յօգնութիւն դիմէ, ումն վտանգի, այլ ոք պաշտպանէ, և միւս այլ դատաստան առնէ։ Ուր ոք է որ զանձին իւր ի գլուխ տանիցէ. միմեամբք միմեանց ծախիմք։ Չարչ զնացանէ, որոց քաջածանօթ են անուանքք, և տեսցես զի ի յայտնագունից անտի այլքն Ճանայնին։ Ահա գորա է պաշտօնատար և նա նորա. ոչ ոք անձին իւրում։ Ընտանագոյն ևս է զայրոյթ ոմանց, որք տաղտկացեալք տրտնջէն զվերնագունից, իբր զի ոչ պարապ պիտէն տալ ինքեանց մուտ առ նոսա։ Ուր զհարդ իշխէ ոք զանգատել զամբարտաւանութենէ ընկերին, ուր ինքն ոչ երբէք անձին պարապէ։ Ուր սակայն նա որպիսի ոք և իցէ, թէպէտ և խոժոռ դիմօք՝ գՀայեցաւ ի քեզ երբէք և մատոյց զլսելիս իւր ի բանս քո, և մերձեցոյց զքեզ առ իւր. իսկ դու ոչ երբէք արժան համարեցար անկ արկանել ի քեզ և ունկնդիր լինել անձին քումմ։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Ուր արդ մի լեցի քեզ մեղ գնել ուսիք վասն գործոցդ այդոցիկ, ուր դու ի գործել զնոյնս՝ թէպէտ և չկամիլը լինել ընդ այլոսմ, այլ չկարելիր ևս ընդ քեզ լինել։ Ովսիկ և ամենայն միտք նրբափայլք միաբանեսցին ի մի, ոչ երբէք ըստ արժանւոյն զարմանալոյն ընդ այս մտայլ մեզ մարդկեղէն մտաց։ Ոչ հանդուրժէն ընդ գրաւումն կալուածոցն իւրեանց. և եթէ դոյզն վնաս լեցեն զսահմանաւորեաց, ի վիրգս և ի զէնս ընթանան, ուր թողացուցանեն այլոց գրաւել զկեանս իւրեանց. մանաւանդ թէ ինքեանք իսկ հրապիրեն զնոսա լինել առբ և ժառանգ կենաց իւրեանց։ Ուր ոք է որ կամիցի բաժանել յայլս զնչա իւր. այլ զկեանս այր իւրաքանչիւր բաշխ առ բազումս։ Ընդհանայն պահպանութեամբ պահեն զՀայրենի ժառանգութիւնս. իսկ ի կոլուստ ժամանակի, որոյ միայնոյ գովելի է ազատութիւն, զեղս են և շատ բոլորովին։ Ընդ ժան է ի մէջ առնուլ զմի ումն յամբոխէ ծերոց. Ընդ ևս որ դու տեսա-

նեմք զքեզ ՚ի ծայրն հասեալ մարդկան հասակի, զՀա-
բիւրամեհնիւք ուրեմն գոս և ևս աւելի. ազէ ՚ի հաշիւ
մեզ արկ զաւուրս կենաց քոց: Այս որքան ինչ արդեօք
՚ի ժամանակիդ այսմ կապաեաց ՚ի քէն պատառուէրն.
որքան բարեկամուհին, որքան ամբաստանեալ յանցա-
ւորն, որքան չոլանաւորեալն առ ՚ի քէն, որքան վէճ
հնոջ, որքան ծառայիցն ստահակութիւն, որքան ընդ
քաղաքացիսդ հայձեալ երթևեկիք պաշտօնատարու-
թեամբ: Ոմոզ զհօրթութիւնս զորս ձեռօք մերովք
առեցաք, թող և զոր անգործութեամբ անցուցաք,
և տեսցես զի սահաւոտեալ գտար քան զոր թուեցի:
Յուշ ածջիր ընդ միտս քո ՚ի զգաստութեանդ պահու,
և տես թէ քանի ինչ յաւուրդդ անցեալ լցեն որպէս
և ՚ի մեի եղեալ էր քո. քանիք ՚ի պէտս անձինդ՝ երբ
և կամ ցորչափ անայլայլակ կացեր զիմոք. ցորչափ ան-
զդուշելի սրտիւ. զինչ ինչ գործեալ է քո յայնչափ
բազմամեայ աւուրս. քանիք գողացան զկեանս քո՝
առանց զգալոյ քո կորստեանդ. որչափ ինչ խլեցին ՚ի
քէն տրտմութիւն վայրապար, ուրախութիւն անմիտ,
անյագ ցանկութիւն և շողոմարար կենակցութիւն.
որքան դպղն ինչ ՚ի քոյդդ թողաւ քեզ. և խնասիս զի
վաղամեռիկ լինիս:

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Ի՜ՈՎ զիարդ այս. վասն զի այնպէս կեայք որպէս
թէ միշտ ունիցիք կեալ. ոչ երբէք յաշ լինի ձեզ զի
գիւբաթաւամ էք. ոչ տեսանէք թէ որչափ ժամանակ
անցեալ իսկ է. իբրև յառաւոտ թէեհ և յաւելորդաց
վաստեալ կորուսանէք. ուր գուցէ յետին իցէ օրն այն՝
զոր յայս ինչ կամ յայն որ առնուք ծախել: Յամե-
նայնէ որպէս մահկանացուք երկնչիք. ամենայնի որպէս
անմահք ցանկանայք: Լուեալ իցէ քո զի ասէն բա-
զումք. "Յիմանալոյ և անդր տայ ցանձն Հանդար-
տութեան. այն վաթսներորդ ազատ կացուսցէ զիս ՚ի
զբաղմանց.,: Լաւ ո երանեալ որեսցէ քեզ զայդչափ եր-
կարութիւն կենաց, կամ ո Հանդուրժեսցէ քեզ ըստ

եղելոց կարգացագ գնալ յամենայնի։ Յանչեաս գնչխալըըս կենացագ քեզ պահել. և զայն ևեթ ժամանակ սահմանել յողջմտութիւն, որ յոչինչ է պիտանացու։ Իբր անագան է սկիզբն առնել կենաց՝ երբ դադարելիս պարտէր։ Պսիսեի անմիտ մոռացօնք իցեն մահկանացու զոլոյ՝ ի յիմաերորդ և ի վաթսաերորդ ամ յերկարաձգել զաղօղջ խորհուրդս և անտուստ կամել սկիզբն առնել կենաց, յոր վայր սահաւուց եղև հասանել։ Հզօրաց գունից և բարձրագոնից ի մարդկանէ՝ տեսցես զի նուազեալ են ձայնք, առ ցանկալոյ հանդարտութեան և գովելոյ զայն և նախատափուս առնելոյ քան զամենայն բարութիւնս իւրեանց։ Ոչ ևս լինին երբեք երբեք՝ Թէ մարթ ինչ իցէ անվտանգ՝ իմանել ի բարձրութենէն անտի. զի Թէ և չիցէ ինչ արտաքուստ որ ընդհարցի ընդ նոսա և զդուռնեցուցէ, սակայն բախտն ինքնին ծանրանայ ի վերայ նոցա և ձնիլ։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Պիտացաչն (գոստաս, որում առաւելագոյն հնոր հեցին զիք քան այլում ումեք ի մարդկանէ, ոչ զադարեաց աղերսել անձին զհանգիստ՝ և ինդրել զսպառսին ի տէրութենէն հասարակաց։ Ի մինայն բանք նորա յայն յանկերին՝ ի յայս հանդարտութեան անձին։ Ի հնու անստոյգ՝ բայց քաղցր միխիթարութեամբ սիրեր զվաստակս իւր Թէ լցցի նմա կեալ անձին։ Ի միում ի նամակաց իւրոց որ առ ծերակոյսն, յետ խոստովանելոյն Թէ հանգիստ իւր չիցէ անշուք, և ոչ ընդհատ ինչ ի նախկին փառասոլութենէնն, գոհ զրեալ այսպէս. "Ի քան զխոստումին այսոցիկ՝ փառասոլագոյն իբրայն կատարումն մարթի լինել. բայց ես անձկաւ ցանկալոյն խնդ ժամանակին այնորիկ ածայ յայս, զի ոչ իրացն անագանէ բերկրութենէն, քաղցրութեամբ բանիցն գիտէ խոսն ինչ հեշտացայց։" Ի հնչափ մեծ Թուեցաւ նմա հանդարտութենն, մինչ զի ոչ կարացեալ վայելել յայն խնդալէս՝ մոռքն փութայր ի վայելեն։ Ի ին՝ որ ինքնիշխան ի բռին իւրում ուներ զամենայն,

որ զաղգաց և զազանց զբահատն տնօրինէր, խնդամիտ ցանկացեալ աւուրն՝ յորում՝ ի բաց դիցէ յանձնէ զմեծութիւն իւր։ Օ փոքձ առեալ գիտէր Թէ ոչբան քրտանց եղեն նմա մեծութիւնքն նշոդեալք ընդ ամենայն երկիր. քանի՞ զաղտնոզագիտ հոգը և վարանք դարանեալ կային ընդ նոքօք։ Ընդ քաղաքակիցսն նախ, ապա ընդ բարեկիցսն և հնուկ ապա ընդ ազգակիցս Հարկաւորեալ մնքառիլ զնոսա, արեան եհեղ Ձնապաղիս ընդ ծով և ընդ ցամաք, ընդ Աակեդոնիա, ընդ Աիկիլիա, ընդ Աեգիպտոս, ընդ Ասորիս և ընդ Ասիա, և ընդ Համօրէն գոգցես սահմանս չորեան առեալ պատերազմաւ՝ զզօրականն վաստակեալ՝ի կոտորածէ Հռովմայեցւոց գարձոյց յարտաքին պատերազմունս։ Ինչ ինքն զԱլեքսան թաղաղէ, և զբնչեամիս նուաճէ զընդ մէջ թաղաղութեան և տէրութեան խառնեալս, մինչ չայն կոյս Հռէնոսի, Աիփատայ և Դանոբայ զգաւառսն դղրդէ, ի քաղաքի անդ սուսերը սրին ընդդէմ նորա ի Աուրենայ, ի Աեսիոնէ, ի Ասելդոսէ և Աղգնատեանց։ Ինչ չէ վերծեալ ի գաւաճանութենէ անտի նոցա, գուստրն և ազնուական երիտասարդացն խումբ՝ հնութեամբն որպէս երդումնամբ դաշնաւորեալք՝ ահ և դողութիւն արկանէին զինքն Հասակաւն. և գարձեալ միւս անգամ կին՝ ոմն ընդ Ասանիոսի ահարկու լինէին ի նա։ Ընդ հատանել զվէրսն անդամոցն հանդերձ՝ այլք ի վեր ընձիւղէին. որպէս ի մարմնի ծառացելոց յորդութեամբ արեան ի վեր կամ ի վայր գործին պատառուածք։ Ոչ վասն այսորիկ իղձ լինէր հանգարտութեան, և ախնկալութեամբ նորին և խոկմամբ սփոփէր ի վատակս իւր. այս իղձք էին այնորիկ որ կարողն էր զայլոյն հնուլ զիշձս։

Աարկոս Աիկերոն յաղմուկս անդ Կատիլինեանցն և Կղոդեանց, Պոմպեոսեանցն և Կրասոսեանց, որոց կէաք յայտնի թէհամբ էին նորա և կէաք բարեկամք խիճալիք՝ ալեկոծ ծփեալ յերկար ընդ Հասարակա-

1 Որպէս յատաջնումն Կղեոպատրա ընդ Մ. Անտոնիոսի, և սատ գարձեալ ահարկու լինէին Օգոստեայ Գուստոն ընդ Յուլեայ Անտոնիոսի որգոյ Մ. Անտոնիոսի ծնեալն ի Փուլուիայ։

2 «Զվերսն անդամոցն հանդերձ»։ Ինս զընդացոյն գաստերն հանդերձ և Թուսանին զորս տարագրեաց յաբսորս։

պետութեանն՝ որում՝ ի բազմամտանգ ժամանակին առաջնորդեր ի պահպանութիւն, և ընդ որում հանգոյցս ի վերջոյ անկաւ և ինքն, ոչ յաջողութեամբ իրաց հանդիպեալ զեաղ և ոչ ձախողակայն հանդուրժեալ, քանիցս արտունչ ուղի տալոցակացեալ ի հիւսպատութենէ իւրմէ, զոր յիրաւի արդեօք, բայց առաւելագնդ ներբողել գովութեամբ։ Օ որպիսի աւագելի ձայնս արձակէ ի թղթի իւրում գրելոյ առ Լատիկոս՝ յետ պարտութեան մեծին Պոմպէոսի, մինչդեռ որդի նորա զպարտեալ զհայն վերականգնէր ի Սպանիա։ Արդյանեա, ասէ, թէ զինչ գործեցեմ ես աստանօր. դեգերիմ կիսազատ ի Տուսկուղեան ագարակի իմում։ Ոչ յաւելու ողբալ զառաջին հասեալ իւր, և քանզարտալ զներկայիսն, և անյոյս լինել զառաջիկայէն։ Կիսազատ զինքն կոչէ Կիկերոն. բայց քաւ խնամատոյն յայնպիսի խնարհիլ անուն ցածութեան՝ և լինել կիսազատ. անթերի է միշտ նորայն ազատութիւն և անսասան, արձակ և ինքնիշխան, գեր ի վերոյ այլոց։ Օ՛ն զինչ կարէ վերագոյն գոլ քան զնա, որ ի վերոյ է քան զբախտն գլխովին։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Լ ՅԻՒՈՍ Վկրուսոս՝ այր խիստ և աստիճ, յորժամ զնորոց օրինադրութեանց վէճն և զգրակեան գրգռեաց չարիսն, ամբոխ բազում յամենայն Լատինոյ ածեալ զինւրև, և անստոյգ վերից իրացն՝ յորս էր պատ նման ձեռն արկանել և ոչ ձեռնարկեալ գամ մի չեաս կարէր կալ, տագնակացեալ ընդ անհանդարտ կեանսն որ ի մանկութենէն՝ աւանդի ասացեալ. Ճամ միայնոյ և ոչ ի տղայ տիս վիճակեցաւ օր մի պատահել։ Վհանգի մինչդեռ ես ընդ դաստիարակաւ էր և զերազանդութենին զգենոյր, համարձակեցաւ ընծայեցուցանել դատաւորաց առաջի զպատանւորս, և այնպիսի ազգութեամբ ծաւալեաց յատենի զշնորհս շրթանց իւրոց, մինչև՝ որպէս յայտ է՝ յաղթեաց ի քանի հինգ դատս։ Այր վայր ոչ զառածաներ այդպիսի տարաժամ փառասիրութիւն.

ամենեցուն էր ի միտ առնուլ՝ զի այդպիսի վաղահաս
յանդգնութիւն մեծապէս ի վնաս եղիցի և առանձ-
նաւորաց և հասարակաց։ Նոգան գանգատէր ասա
թէ ոչ վնասակեցաւ ինձ օր մի պարապոյդ, որ ի տղայ
տիոց աղմկայոյզն էր և վրդովիչ առեհին։ Ես էհ թէ
զիւրովի արդեօք երթեալ եցէ. քանզի յեղակարծուց
վէրս առեալ ընդ երանն՝ տապալեցաւ. Են որ երկուա-
նան ընդ կամաւոր մահ նոքա, բայց ոչ որ տարադէպ
զայն համարեցաւ։ Ելոյդ է յիշատակ առնել քաղ-
ցաց, որք թէպէտ յաչս այլոց երջանիկ թուեցեալք՝
բայց ինքեանք ետուն զտոյգ վկայութիւն հակառակ
անձանց զրուեալք յամենայն անցից իւրեանց։
Այլ սակայն այնպիսի գանգատանօք ոչ զայլս փոխել
մարթացան և ոչ զանձինս։ Օի թէպէտ ընդ բերան
նոցա սպրդին բանքն, այլ յօժարութիւնք ի սուղու-
թիւն անդր բերին։ Ո՞ն և ծն ասեմ ձեզ, զի թէպէտ
և գՀազարամենիւք անցանիցեն կեանք ձեր, ի հա-
կիրձն յոյժ համառօտին։ Այդ մնալութիւնք ծախեն
կլանեն զամենայն դարս, և ժամանակն այն որ սահ-
կանն է ի բնէ և բանիւ ևեթ ընդարձակի, անցցէ
զձեզ փութապէս։ Ան զի ոչ բուռն հարեալ զնը-
մանէ պինդ ունիք, և ոչ զերազգուշին քան զամենայն
ինչ՝ յամեցուցանիք զընթացն, այլ իբրև զաւերդ
ինչ և դիւրաստաց Թողուք երթալ։ Ընդ առաջինն
ընդ այնոսիկ խնա ինձ, և զորս ոչ այլում իսիք պարա-
պեն բայց գինւոյ և ցանկութեան. զի զինչ զաղուսին
վատթարագոյն քան զնոցայն, ուր ըմբռնեալքդն ի պատ-
րանս ունայն փառաց, գեղեցիկ գեղ ըստ երևութին
պատրանքն են։ Ակ եթէ զարծաթասէրսն ասիցես,
եթէ զբարկացողս, որպէս և զորս յանխրատ բերին ի
թշնամանեթիւնս կամ՝ ի պատերազմունս, սոքա առ հաս
սարակ՝ առնաբար մեղանչեն. իսկ ընկերվէրցն ի պորտ
և ի ցանկութիւն՝ զաղէր է սխտաւորութիւն։ Ոչ
արդ քննեա զամենայն ժամանակս կենաց նոցա և արկ
ի հաշիւ՝ զբաժի ինչ ի հաշուել զնոսիցն իւ-
րեանց անցուցանիցեն, զբաժի ի դատաստանել, զբաժի ի
զանգիտել, զբաժի ի պաշտել, զբաժի ի պաշտօն առ-
նուլ, զբաժն յերբաշխաւորութիւնս անձանց և այլոց,
զբաժն ի կոչումն՝ որք ի պատուհասիչ սակի համարեալ

են արդ, և տեսանիցես Թէ որպէս չտան նոցա ոգի առնուլ եթէ չարիք իւրեանց և եթէ բարիք։ Ամօղ ոք վկայեալ է յամենեցուն՝ զի առն զգաղելոյ չմարթէ պարապել լինչ որպէս պարտ է. ոչ՝ի պերճախօսութիւն և ոչ յազատական հրահանգս. վասն զի ոգի ցնդեալ անընդունակ է բարձրագունից, այլ զամենայն քամահէ՝ իբր առ աճուր կոխելով։ Ոչ յայլ լինչ այնպէս սակաւ զգաղնու մարդ՝ որպէս՝ի կեալ, և այն զի չէք գիտու-թիւն դժուարին քան զայն։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Որ ևս ոչ ամենեցուն վարժապետք բազումք են և ուսուցիչք հրապարակաւ, և զամենա յայնցանէ տղայք անգամ՝ այնպէս սերտիւ ուսեալ գտան, մինչև կարող լինել և գաս տալ այլոց։ Այլ սուղ են կեանք յուսումն կենաց. և որ գոյք առաւել զարմանալի քեզ երևեսցի, սուղ են և յուսումն մնծու։ Ամազամ աղք աւագք Թո-ղեալ զամենայն արգելս և բարեաւ ճեալ ասացեալ մե-ծութեանց, գործառնութեանց և հեշտութեանց, միւմ այամ փոյթ կալան ցվախձան կենաց իւրեանց, զի ուսցին կեալ. և սակայն բազումք՝ի նոցանէ խոստովան լեալ Թէ չէ ևս ուսան, այնպէս ելին՝ի կենաց. և զիարդ այլքն գիտասկ լինիցին։ Ահեծի առն է, հաւատա ինձ, և գեր՝ի վերոյ եղելոց զմարդկեղէնն սխալանօք, չեթողուլ զի խորեսցի ինչ յիւրմէ ժամանակէն. և վասն այսորիկ կարի երկայն են կեանք նորա. զի իւր միայնոյ նուիրեալ են բովանդակ ցոր վայր և յերկարաձգեացին. և ոչ զոյզն ինչ նորա մնան անգործ և ընդ վայր անցանէ և ոչ ըստ կամն այլոց. վասն զի ձիւղ և սնդապաշ պահապան ժամանակին չգտանէ ինչ արժանաւոր՝ի փոխանակել զայն ընդ այնր, այլ վասն իսկ շատանայ այնու. և պակասէ հարկաւ այնոցիկ՝ զորոց զմեծագոյն մնան գողանայ ամբոխն։ Ոչ մի լեցի քեզ կարծել Թէ այդպիսիք չմնանան զտայժս իւրեանց. ապաքէն լաւ զի յոլովք իսկ ճանաչեալք մեծամեծ յաջողասաղմք, ՚ի խաւն անդ հովանաւորելոյն յիւրեանց, կամ գատա-

սայումԹեանցն և այլոց չքեղ ԹչուառուԹեանց՝ ձայն արձակեն երբեք երբեք. Ինձ չմարԹէ կեալ։ Այլ ընդ կեր չիցէ մարԹ, զի ամենեքեան դոքա՝ որ զքեզ կին քեանս կորզեն՝ բառնան զքեզ առ ի քէն։ Պարտաւորն այն քանի ինչ աւուրս եթարձ ի քէն. քանիս պայծառագեղացն այն. քանիս պառաւն այն՝ խնդ ի ԹաղեղՀ զժառանգսն. քանիս հիւանդն այն կեղծեալ ի զրկուել զագահուԹիւն ժառանգողացն գնա. քանիս մեծազօրն այն բարեկամ, որ առ ի շուք ևԹ և ոչ ի պէտս բարեկամուԹեան ունի զքեզ։ Ո՞անր գնեցա սաեմ, և հաշուեա զաւուրս կենաց քոց. և տեսցես զի սակաւք յոյժ և խոտանք են ինացեալքն ի քում ձեռն։ Ոմն զբռամբ ածեալ զիշխանական՝ գառազանս՝ և ցանկայ ի բաց դնել զայնոսիկ, և ասէ ստէպ. Այրը անցցէ տարիս այս. այլ ոք Հանդիսագիր կայ խաղուց վԹ Ձակաւ որում ցանկայցն՝ փառս մեծ Համարեալ անձին, և աՀա սկսանի ասել. Այրը իցէ ինձ զերծ լծեալ յայս ցանէ։ Օ այլ ոք այր զարամբ երեալ յափշտակեն պաշտպան կալ ինքեանց յատենի, և խուռնիսԹաց ամբոխ զեղուս գնալաս՝ մինչև չքաւել ձայնին լծեալ լսելի, և ասէ. Այրը գազարեսցին առեանք։ Այր իւրաքանչիւր երագէ գիւր կեանս և յառաջկայիցն տաղտկացեալ՝ ապագայիցն մտչի ցանկուԹեամբ. ուր նա որ զամենայն ժամանակն յիւր պէտս վարէ և զաւուրս իւրաքանչիւր Համարի որպէս ևԹէ այն իցեն կեանք իւր, ոչ ցանկանայ վաղուին և ոչ երկնչի։ Այլ զի է կարծել մարդոյ ԹԷ իցէ ժամ որում մարԹ իցէ առԹել նմա նոր ինն բերկրուԹիւն։ Յամենայնն ակնարկ կայ նմա, ամենայնիւ յագեալ իսկ է. Թող զայն ամենայն կաղ գաւորեսցէ բերուսն բախտի որպէս և գիարդ կամիցի, կեանքն յասպահովի է. մարԹ է յատեալս ինչ յայն՝ այլ բառնալ և ոչինչ. և յատելոյլ իսկ այնպէս՝ որպէս ևԹէ յագեցելոյ անձին և լեացելոյ՝ տայի ինչ կերա կուր, զոր առնու առանց ցանկանալոյ։

1 Խնա գՀիւպատոսուԹիւն, զի խրձունք գառազանաց յատաջն ԹագՀ լինէին Հիւպատոսաց, և տարեդարձան էր իշխանուԹիւն նոցա։

ԴԱՒԻԹ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՒ՛ զոր ասպա վասն ալեացն և երեսացն խորշոմելոց երկայնակեաց կարծիցես գոլ. զի ոչ շատ եկեաց այնպիսին՝ այլ շատ եկաց. իսկ արդ զնմանէ. միթէ շմտնաւարկեալ համարիցիս զայն, զոր մերկիկ գժնդակ ՚ի նաւահանգստէ անտի առեալ՝ այսր և անդր տարուբերեաց, և բռնութեամբ հողմոց ՚ի զանազան կողմանց փոթորկելոց ընդ նոյն վայրս պտոյտս եաց. ոչ շատ նաւեաց այնպիսին, այլ շատ ծփեցաւ։ Օ արմանամ յորժամ աեսանեմ զոմանս թախանձանօք խնդրել զայլոց ժամանակս և սոցա զիւրացուր գտանել այմմ։ Արկոքեանն իսկ յայն աին եդեալ ունին, որ վասն ժամանակին խնդրեցաւ. այլ ՚ի ժամանակին և ոչ մին։ Արպէս այն թէ՝ ցիչ ինչ խնդրեաւն, և տուեալն ոչ ինչ. խաղ համարին զայն՝ որ պատուականագոյն է քան զամենայն ինչ։ Այլ այնու խաբին զի անմարմին է և անեղեւոյթ. նմին իրի և անարգ ինն համարեալ, որոյ ցիչն իսկ ինչ արժէք։ Պարգեւս տարեւորականս առնոն աւագանին և ջանս ընդ այնր կամ վաստակս կամ զգործ փոխարինեն. ոչ օր է որ յարգել ժամանակին. շահայլաբար վարին նովաւ՝ որպէս ձրի առեալ։ Այլ սեւ դու ինձ գնասս հիւանդացեալս և մերձ ՚ի դուրս հասեալ մահու՝ որպէս գձնգօք փարին բժշկաց. և եթէ ՚ի գլխապարտութենէ զանգիտեն, պատրաստ են ծախել զամենայն ինչս իւրեանց՝ միայն զի կեցցեն. այսպիսի դէմ ընդ դէմ կիրք են ՚ի նոսա։ Այթէ հնար ինչ էր զի որպէս անցելոց անայն թիւս համարոյ՝ նոյնպէս և ապագեալոցն իւրաքանչիւր ումեք կայր առաջի, որպէս արդեօք զդաշնակ հարկանէին որոց սակաւ ինացորդն էր. և զիարդ խնայելով վարեին զայն. բայց արդ զիւրին է իրրև դուշնաքեայ գտոյգն ՚ի վար արկանել. առաւելագոյն զգուշութեամբ պահել պարտ է զոր ոչն գիտես՝ թէ երբ սպառեսցի։ Այս մի կարծիցես չգիտել նոցա թէ որքանոյ իրքն իցեն։ Օ՛ն սովոր են ասել իւրեանցն սեբտ սիրելեաց թէ զկես ամաց խնց տաց քեզ մնա-

դիւբ։ Տալով տան և ոչ իմանան. և տան այնպէս, զի առանց յաւելուլոյ ինչ՝ ի նոսա նուազեցուցանեն յանձանց, բայց և ոչ զայն իմանան՝ թէ պակասէ ինչ յինչ քեանց, յայն սակս իսկ ոչ ինչ ծանր թուի նոցա տուժ անյայտ պատուն։ Ոչ ոք է որ հատուսցէ քեզ զտարիս. ոչ ոք է՝ որ զքեզ անդրէն առ քեզ դարձուսցէ։ Վտանգ ժամանակին յո՛ և դէմ եդեալն է. ոչ ընկրկեալ յընթացեալն և ոչ զկայ առեալ. անցանէ անշշունչ և ոչ զերագրեալ ոտիւն իւր ագտեալ. այլ լռիկ սահեալ գնայ։ Ոչ արքունի հրամանաւ և ոչ ի շնորհս ամբոխիս յերկարաձգի. նուիրն ուժգնութեամբ որով մղեցան ի սկզբանէ՝ ընթանայ անդուլ. ոչ ագանի ուրեք և ոչ դեգերի։ Իսկ զինչ ասես. դու զբաղեալ ես, կեանքդ վաղվաղիկ և մինչ այս մինչ այն՝ գայ հասանի մահ որում կամայ և ակամայ պարտ է հպատակել։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Այժ արդ պանծացելոյն իսկ ի խոհեմութիւն և կարի ինն զբաղելոյն ի բազում հոգս՝ զինչ այլ դիտումն իցէ և փոյթ և ջան բայց լաւագոյն յարդարել զկեանս։ Ո՞նասուք կենաց կեանս հայթհայթեն. յերկարաձգէն զնորշուրդս մտաց իւրեանց, ուր մեծագոյն տուգանք կենաց՝ յապաղումն է։ Դա է որ զայսօրն գողանայ միշտ. դա է որ ապագային խոստմամբ զառաջականն յոտիտակ։ Անեծապէս խափան է կենաց ամենալաւ իւնն վաղուն։ Կորուսանես զայսօրն, և զօր ի ձեռս է բախտին անօրինեալ՝ զօր ի քում ձեռինդ ունիս լքանես։ Իմ իմիք ապասեալ ինաս, յո՛ ձկտեցուցանես զքեզ. ամենայն որ գալոյն է, անստոյգ է. արդ իսկ կեաց։ Լաւնիկ գոչ մեծն ի քերթողս, և աստուածայնով գոգեաս մղելութեամբ մղեալ՝ զերկարարն նուագէ քերթուած.[1]

Ա՛յսելուչ աւուրք տիոց հէգ մնհայցասյ փախչին վաղվաղ։

[1] Ա՛խթկեան է տոյն, ի Մշակ, գիրք Դ. 68։

Օ՛ի կաս, ասէ, զի յապաղես. Թէ ոչ բուռն հարեալեսեաս, փախչի. և յունկդ իսկ տակաւին փախիցէ: Այսպէս ուրեմն ընդ երագութեան ժամանակի՝ երագութեամբ պարտ է մաքառիլ. և հանդոյն ինն՛ի սրընթաց և յարաժամայն ուղխից փութալ և առնուլ զջուր: Այլ այս ևս կարի վայելուչ առ՛ի կշտամբութիւն անսպառ յերկարաձգողաց զնորհուրդս, զի ոչ ասէ վայելուչ գալը, այլ աւուրք: Զինչ յոյսցեալ դանդաղիս և յայդպիսւոյ փախստեան ժամանակաց խոստանաս քեզ ամիս և տարիս և շաբս երկայնս, որպէս զիարդ և հաձոյ Թուի քումդ անյագութեան: Օ՛ի ասէ քեզ՝ և այն խուսափեալ: Այսպս չիք տալակոյս, զի ընտրելագոյնն յաւուրս՝ նախ խուսափէ՛ի ձեռաց հեգ մարդկանն, իմա զգաղելոցն, զորոց գործս չգայամիտ գեռ գոգիսն ընկճէ ծերութիւն, անպատրաստիցն և անզէն եղելոց հասեալ՛ի վերայ: Այանգի չեղեն նախատես՝ յանկարծակի և յեղակարծուց ըմբռնեցան՛ի նմանէ, զորոց գնծաեն օր յորէ ոչ գգայեն: Օ՛որ օրինակ զոյգք կամ ընթերցումն և կամ մտածութիւն ինն խորախորհուրդ խաբէ զուղեւորս, և մինչ չև գնծաեն խնացեալ՛ի ծայր ուղւոյն գտանին ժամանն, ըստ գմին օրինակի և կենցաղոյս անգուլ և երագընթաց ձգտապարհին, զոր յարթնիւք և՛ի քուն նովին քայլիւք հատանեմք, չգգան զգաղելքն բայց՛ի կատարածին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Այժ զառաջարկութենէ իրացս՛ի մնսունս մտսունս ձառել կամիցիմ ցուցակութեամբք, բազում ինչ իրք ընդ առաջ ելանեն ինձ՛ի ցուցանել Թէ կարի սուղ է կեանք զգաղելոյն: Վաբրիանոս խնամատուն՝ ոչ՛ի Թուոյ անտի նոցա որոց ամ[1]ոք՝ էին, այլ՛ի հնոյն և՛ի Ձնմարմոյ՝ ասել սովոր էր Թէ Ինդիմ յօժարութենից ոչ մեզնով այլ ուժգին է կառուցեալ. և ոչ՛ի հարուածս Թե-

[1] Որոց ամ[ո]ոք վարժապետութեան էին և գաստատոյք՛ի գպրոցս:

թէս, այլ բուռն յարձակմամբ պարտ է Տարկանել վանել զՆախատ։ Օ ստութիւնս Տերբել պարտ է և ոչ կծանել։ Ասայց արդ՝ ի կշտամբել զմոլորութիւնն ոտոչ ցանել սկիզբ են, և ոչ ողբալ ևեթ։ Ձերիս բաժանի ժամանակս կեանքն. որ էն, որ եղեն, և որ լինելոցն է. ՚ի սոցանէ՝ զոր վարեմք, սուղ է, անստոյգ՝ զոր վարեցոյն եմք, և զոր վարեցաքն՝ ստոյգ. զի ոչ ևս իշխէ այնմ բախտն և ոչ ընդ իշխանութեամբ Տաձոյիչ ուրուք մոքնի անկանել։ Օ սա կորուսանէն զաղաչելքս. զի և ոչ պարապ գոյ նոցա յանցեալն անդարձելոյ, և ևեթ իսկ ևս, անախտիժ է ապաշաւելեացն յիշատակ. վասն զի դժնդակ մոռք յուշ ածէն գժամանակս՝ զորս չարաչար վարեցին. և ոչ իշխէն որոՀել զանս, որոց պակասութիւնքն՝ առ ժամայն Տեշտութեամն Տրապուրանօք ծածկեալք ՚ի պահուն, ՚ի յիշատակելն վերստին՝ գան յերեսս։ Ասէ ոք մտադիւր յանցելոյն վերադառնալ ՚ի յիշատակ՝ բայց որ զամենային արար ըստ վճռոյ և ըստ Թելադրութեան իւրոյ ստեղին՝, որ ոչ երբեք խաբի։ Ասր միանգամ ցանկացաւ փառասիրութեամբ, արհամարհեաց ամբարտաւանութեամբ, յաղթեաց ժպրքոտութեամբ, նենգեաց դաւաճանութեամբ, յափշտակեաց ագահութեամբ, վատնեաց անառակութեամբ, այնպիսին զանգիտէ Տարկաւ ՚ի յիշողականէն իւրմէ։ Ասայց սրբազանեալ և նուիրական մնան ժամանակին մէջ այն է, որ գեր ՚ի վերոյ զամենայն մարդկային պատահարօք լեալ՝ ոչ ևս է ընդ Թագաւորութեամբ բախտի. և որում՝ ոչ կարօտութիւն, ոչ երկիւղ և ոչ կասկած խօթութեանց կարէն ստնանել. և չկայսի իսկ ուտեբք և կամ վրդովի, այլ հանդիստեան որ է և անսասան ժառանգութիւն նորին։ Ասպահէն ատուրք իւրաքանչիւր ըստ միոյ ևեթ վայրկենի առաջի կան մեզ. ուր անցելոյ ժամանակին ատուրք ամենայն՝ ընդ հրամայելոյ՝ գան զառաջեաւ, և Թոյլ տան քեզ ըստ Տաձոյս քո գնել գնոսա ցորչափ և կամք իցեն, զոր ոչն պարապին առնել զաղաչելքն։ Ասիքոյթ և Տանդարտ մնայ է խաղալ անցանել ընդ ամենայն մնաուն կենաց իւրոց. իսկ զաղաչանքն միաբ ընդ լծոյ իմն են, և ոչ

1 Խմն բան Թելագրութեան ուղիղ բանի։

կարէն դառնալ և հայել յետս։ Յորոյզդ ուրեմն եւ զէն կեանք նոցա. և զոր օրինակ յանօթի անյագակ որ չափ յաւելուցուս ընդ՝ վայրապար է՝ զի չիք որ ընդու նիցի զարկեալն և պահիցէ, սոյնպէս և ուր ուրեք չմարթիմ ժամանակին զկայ առնուլ՝ վայրապար է որչափ և տացի. ընդ բեկ և ընդ ծակոտ ոգիս հոսեալ անցանեմ։ Ի՝ երկայս ժամանակ կարի յոյժ սուղ է՝ մինչև անգոյ ինն և ալինչ համարել զայն ոմանց. վասն զի անդուլ է ի գնացս, հասի սրընթաց, և մինչ չև եկեալ՝ դառնայ ի չիք, և ոչ ինչ աւելի զկայ առնու քան զերկինս և կամ զաստեղս, որք անդադար ի շարժման կան, ոչ ուրեք երբէք զկայ առեալ։ Այս զբաղելոց եւեթ անկ է նեթը կայն ժամանակ, որ այնչափ վաղանցուկ է մինչև չ մարթի զբառամբ ածել. նմին իրի և սալրդեալ խոսք ի տարացնդելոյն ի բազում։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այր արդ գիտէ կամիցիս թէ քանի կարճատև է կեանք նոցա. տես քանի իդձ լինին երկար կենաց։ Ոչ՝ երբք զառաւելագ՝ ուխտիւք ժտեն զքանի մի ամաց յաւելուած, սակաւամեայս կեղծեն զոլ զանձինս, ստուեթամբ համոզեն զինքեանս, և այնպէս կամելիար խաբեին՝ որպէս եթէ և զօրհասն իակ պատրեսցեն։ Ո՞յր ինչ տկարութիւն իմն ազդ առնէ նոցա զմահկա նացուն զոլ, այնպէս ահաբեկ մեռանին, զի իբր ոչ եթէ ելանիցեն ի կենաց, այլ ընդ քարշ ձգիցին։ Ո՞ն միտս կոչեն զանձինս, զի ոչ կեցին ի հանդարտու թեան, այլ խոստանան կեալ եթէ ապրեսցին միայն ի հիւանդութենէ անտի։ Ցայնժամ՝ ի միտ առնուն թէ որպէս ի զուր պատրաստեցին՝ յորս չտնէին վայելել, և որպէս զրաջան և մնաւաստակ գտան։ Ահա որոց կեանքն ազատ է յաւերման զբաղանաց, զիարդ չկոչ բաղմօրեայ, յորմէ չբառնի ինչ մնան ամենևին, և ոչ յայս կամ յայն բաշխեալ ցրուի, ոչինչ բախտին[1] նուիր

[1] Չէ խորհրդով կեաց խնամուածն և ոչ բան բախտի և բան դիպացն բերելոյ. նմին իրի չուտի ինչ բախտն ի նմա։

րի և ոչ կորնչի անհոգութեամբ, ոչ վատնի շռայլութեամբ և ոչ անցանել վայրապար. այլ Տանջին՝ որպէս բանիս կամք են ասել՝ եդեալ կայ ի շահու։ Ա՝ ան որոյ որչափ և դոյզն իցէ, բաւէ լնութեամբ. և ի գալ աւուրն յետնում, ոչ դանդաղի այլ իմաստուն անվհատ ընդ առաջ ելանել մնալու։ Հարցանիցես արդեօք թէ զմա կոչեցեմ զաղեալս։ Ի՛ կարծիցես թէ զնոսա միայն ասիցեմ զորս յատեանական ապաքանիցն հուսկ յետոյ Տանէն շունքն՝ արձակեալք, զորս տեսանես կամ պատուասիրաբար ածեալս յամբոխէ իւրեանց, և կամ թշնամանօք յամբոխէ այլոց. զորս գործառնութիւնք Տանէն ի տանց իւրեանց, առ ի բաղխելոյ զդուրս այլոց, զորս ի ձայն քարոզի վաճառք դատաւորին ձգէն ի յոյս վատ և անարգ՝ մերթ ևս փուտ և ապականեալ շահու։ Այն ևս որք Տանդարտեալ կան ի գեղջ կամ յանկողնի առանձնութեան, և թէպէտ յամենայնի հրաժարեալք՝ այլ անձամբ անձանց են ծանրատաղտուկ, զոր ոչ Տանդարտութիւն է կոչելի, այլ անգործ զբաղանք։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այ միթէ ի Տանդարտութե՞ն Տանուրիցիս դու զնա որ ոգեսպառ Նրբահայեցութեամբ՝ զկորնիւթականն, ըստ սահմանաց մոլեգնութեան ծանրագին թուեցեալ նօթին մաքրագործել և զմեծ կէս աւուրցն ի ժանգաՀալ պախրէն ծախէ։ Որ չիւզարան հելլենացի, ոմ ապիրատութեանս, զի և ոչ Հռովմայեցւոց ախտիւ վարաւիմք, Տանդիպատես նստի մանկանց ընչաքաղցից. որ զգեներացն իւրոց զերան ըստ Տասակացն և ըստ գումտին նմանութեան ջոկէ, որ ըմբշամարտիկս նոքանորս բռծանէ։ Ո՞վ ինչ արգեօք. զայնոսիկ կոչիցես Տանդարտեալս, որոց նստեալ առ վարսավիրային՝ մինչ զանձ-

1 Շունք՝ զորս պահապանք կամ դռնապանք Թողուին ի գիշերի, կամ արձակիկին ի վերայ յարգելոցն յետասիացից. զի ընդ պահապանացն և շունք պահ ունէին Հասարակաց վայրաց և տանց աւադաց։

ցեաքան՝ի գիշերին զնաղան խլեն, մինչ զՏերայ իւրաքան-
չիւր առնուն խորհուրդ, մինչ զԼծօթ ափեաքան կարկատեն
և կամ ընդ պահասելոյն երկուստեք մղեն՝ի Հնախատ,
անցանեն ժամք նոցա յորմէք։ Որպէս զայրանան եթէ
փոքր ինչ անհոգասցի վարսաւիրսայն՝ որպէս զայր խո-
զելով. զինաւոր բորբոքին բարկութեամբ՝ եթէ խուն ինչ
պհասքն կրճատեսցին, եթէ անյարդար թողցի ինչ, ե-
թէ ոչ յիւրաքանչիւր մանեակս գանգուրքն յօրինեսցին
համայն։ Ո՞՛ի սոցանէ ոչ ընտրեսցէ առաւել զՀասա-
րակապետութեանն՝ քան թէ զիւրոյ Տերայ զխատնա-
կութիւն. ո՞ չ առաւելագոյն խնամ կալցի վայելչութեան
զկոյ իւրոյ՝ քան զկենդանութեան. ո՞ չ ընտրեսցէ
մանաւանդ՝ի յօրինուածս զարդուց քան՝ի պարկեշտու-
թեան լինել երևելի։ Ո՞նոյնպ կոչիցես զու Հանդար-
տեալս որք ընդ սանտր և ընդ Հայելի անցուցանեն
զաւուրս։ Խակ զինչ և նոքա՝ որք՝ի յօրինուածն, ՛ի լուր
և յուսումն պարապեն երգոց, արտասուագ և անա-
րուեստ գեղգեղմամբ ոլորելով զձայնս, որոց բնութիւնն
ետ Հնչուածն անսայթաք, պարզ և աներևոյթ. կամ որոց
մատուցքն անդուլ չափակցութեամբ յիւրեանս՝ Հնչեն
միշտ տաղս, որոց և ՛ի պարապեին կարևոր ինչ իրաց՝
բազում անգամ և տխրականաց իսկ՝ մեզմ աւաչ ձայնիցն
լինի լսելի. այդպիսեացն ոչ Հանդարտութիւն է՝ այլ
զբաղումն անպործ։ Խակ զինքնիցն նոցա չկարեմ արդա-
րև անզլաղ Համարել ժամն՝ երբ տեսանեմ թէ որ-
պիսի տատամսութեամբ Հոգոց զարծարեան կարգա-
ւորեն, որպիսի խնամով զլերկ պատանեկացն իւրեանց
զպարեգօտն գօտեպինդ Հանդրիճեն. որպէս ՛ի կախ
են սիրտք նոցա թէ որպիսի արդեօք մատուցցի ՛ի խո-
Հակերէն կինցն խորհրդեալ. որպիսի արագութեամբ
սպրկիկ մանկտին ՛ի ձայն նշանին ընթացցին ՛ի սպա-
սաւորութիւն. որպէս Ճարտարապետաց յօշեսցին Հաւք
՛ի մասունս վայելչաց, որքան աչալրջութեամբ Հեգ
մանկտին զարբեցեալսն որբեսցեն զլորձունս։ Ո՞չ յոյսիւք
Հոխ և պայծառ և յարդարուն կոչուիքն Համբաւես-
ցին. և այնպէս յամենայն ընթացս կենաց զուգընթաց
են նոցա չարիք իւրեանց, զի առանց մնափառելոյ՝ և
ուտել իսկ և ըմպել ոչ գիտեն։ Ո՞՛ի և զայնսիկ ՛ի
Հանդարտութեան Հանդերձիցս որք գոհաւորակօք և

պատգարակօք այսր անդր բերին ըստ սահմանեալ ժա-
մուց անխափան՝ որպէս թէ չիցէ մարթի զանց առնել
գնաջօք։ Ոչ և զայսոսիկ որք այլոց կարօտին ապդելոյ
թէ երբ լոգանալ պարտ իցէ, երբ լողալ, երբ ձաշել
կամ ընթրել։ Այլ ցայն վայր զրգանօքն և փափկու-
թեամբ թուլացեալ մեղկին, մինչև չկարել խմանալ
ինքնին թէ արդեօք քաղցնուցքն։ Ոչայ զուարճիկ՝ ի
փափկակեցից՝ (եթէ արդարև փափկութիւն հան-
ըեսցի մառացումին մարդկային կենաց և սովորութեան),
զի յորժամ վերամբարձ՝ ի ծառայից հանեալ՝ ի բաղա-
նեաց՝ եդաւ ի գահաւորակի՝ եհարց, ասեն, թէ արդ
նատեալ իցեմ։ Արդ նա որ զնատել իւր ոչ գիտէ, հա-
մարիցիս թէ զկեալ իւր գիտիցէ և զտեսանելն և զա-
րասրդն լինել։ Ընդհմ ասել թէ իւ թշուառագոյն
իցէ. անգիտանալովին արդեօք զնատել իւր, եթէ կեղ-
ծելովին զանգիտութիւն։ Ապզում ինչ իրք մառացօնք
են նոցա, ոչ ժիտեմ, բայց և զըազմայն և կեղծեն.
են ախտք ինչ՝ ընդ որս իբրև ընդ նշանակս երջանկու-
թեան ինդան և բերկրին։ Արի ինն նուաստ և ար-
համարհ մարդոյ թուին նոցա գիտելն թէ զինչ առնիցէ։
Արդ աղէ երթ և համարեաց թէ բազում ինչ ստու-
թեամբ յօդեսցեն ինձկատակք՝ ի կշտամբանս զեղծու-
թեան. արդարև ասեմ զեզ, նուաղագոյն յոյժ քան
զձշմարտութիւն կեղծիք նոցա են. և այնչափ չհաւա-
տալն յառնախեցին. մանութիւնք յայմ և յայսպիսիս
և եթէ բազմահանձար դարու, մինչև մարթի իցէ զինքկա-
տակացն ստգտանել զպղերգութիւն։ Ո՞վ ի ահա գտա-
նի և ցայնվայր անզգայացեալ որ՝ ի փափկութիւնս՝
մինչև մնատել իւր յայլմէ ստգել։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱՉ ասպա Հանդարտեալ, այլ այլով անուամբ հիւանդ կոչելի է զայնպիսին՝ մանաւանդ թէ և մեռեալ իսկ։ Հանդարտեալ այն է որ զգայ իւրումն հանդարտութեան, իսկ սա կիսակենդան՝ աղզադարթի ունի պէտս ի գիտել զկիրս մարմնոյ իւրոյ. զի՞պղտ մարթի իցէ այսպիսւոյն իշխել իւրոյ ժամանակի։ Յերկարէ բանս ի ձանձել զմիոյ միոյ ոքէ ի խաղս քաւելից, կամ յարդնըմնիկ տեզըմնիկ լինել, կամ ի փոյթ պնդելոյ զմարմնիս իւրեանոյ յարեւս՝ անցուցանեն զկեանս։ Ընդ հանդարտեալ՝ որոց բազմազբաղ է փափկասիրութիւնն։ Ընդ երկայնել ումեք թէ ոչինչ չայեկանս գործիցեն և նոքա, որք չընդունայն ընթերցասիրութիւնս մաչեն զաւուրս. և այսպիսեացդ Տոյնք ոչ սակաւ են արդ և առ Հռովմայեցիս։ Յանոնց էր այդ ախտ, զոր ինքնիր լինել թէ քանի թիւաւորք էին Ոգիսեայ, Ոդիսականն վաղագոյն իցէ գրեալ եթէ Ոդիսականն, և թէ նորին մատենից գրի գործ իցեն և երկոքեան, և որ այլ ևս այսպիսիք, զորս եթէ չանձին պահեացես, ոչ ինչ օգտեացես լրիկ գիտութեամբ. և եթէ ի դուրս բերես, ոչինչ խնդաստնագոյն երևեալ՝ ձանձրալի ևս համարեացես։ Լաւիկ և Հռովմայեցւոց տիրեալ մնոտի փոյթ զաւելորդս ուսանելոյ։ Յաւուրս յայսոսիկ լուայ յիմնասնոյ ումեքն զի պատմէր զզօրավարացն Հռովմայեցւոց թէ ո՛ ի նոցանէ որոց իրաց նախասկիզբն գտաւ. զի առաջինն ի նաւամարտի յաղթեաց Դուիլիոս. զի Կուրիոս Դենտատոս նախ ած գիլիզս ի հանդէս յաղթանակի։ Լաղթեալ եթէպտ և այսոքիկ ոչ են ի ձնարհս փառաց մնասին, սակայն իցեն յօրինակս կենցաղօգուտ գործոց։ Ծնեպէտ չիցէ ինչ օգուտ յայդպիսեացդ գիտութենէ, բայց գեղեցկատեսիլ ունայնաբեթեամբ գեթ զբօսեցուցանէ զմեզ։

Ներեսցուք որոց և զայն էարցանեն. Ո՞ նախ հանեցոյց զՀռովմայեցիս ի նաւ մտանել.—Ոդիսէոս, յորմէ և Դաւթէս անուն ընկալաւ. քանզի տախ

տակացն առ Միհեռնս շարայարութիւն Պատրէս առ նախնիսն կոչիւր, յորմէ և դիւանական մատեանք Պատրէս կոչեցան. Նա և նաւք իսկ որ ըստ վաղնջուց սովորութեան պարկոնս կրեն ընդ Տիբերիս, Պատրիարէ ասին: Ծով և այն ընդ գետելիս հաստատեցի, զի Ավղերիոս Կորվինոս եղև առաջին յաղթական Աեսսանայ, և ի վաղերեանցն զարմ ինքն նախ ընկալեալ զանուն նուաճելոյ քաղաքին՝ կոչեցաւ Աեսսանոս, որ և ըստ տատիպ ինչ այլափոխեալ տակաւ ի ռամկին՝ Ձայնեցաւ Աեսսալս: Այլ միթէ նեբեսցի և որումիպոյթ յանձին ունի գիտելոյ թէ Գ. Աիղոյս առաջին եթող զառիւծս արձակ ի կրկէս, ուր ի սկզբանէ կապեալս Հանէին, որպէս զի նետաձիգ լինիցին ի նոսա աղեղնաւորք առաքեալք յարքայէն Տոգոսէ. Ներեսցի և այդ: Այլ միթէ և այն յօգուտ իցէ գիտել զի Պամպէոս նախ փղոս ուեֆատան ի կռիւ եՀան ի կրկէս օրինօք պատերազմի ընդ վհասատարտս մատուցեալ ի մարտ: Իշխանն քաղաքին և ի մէջ իշխանացն առաջնոց՝ որպէս Հանրապետ ասանդէ՝ պանծալին լաւութեամբ, յիշատակաց արժանի տեսարան Հանդիսեցաւ՝ նորանշան օրինակաւ կորուսանել զմարդիկ: Ընկերն ի մարտի՝ էր ինչ. խորտակին՝ դղրդն ինչ է և այն. Հարկ է զի և ընդ ահագին ծանրութեամբ անարգիլ գազանացն Ձնիւեսցին: Ա՛ւ և էր անյիշատակ ի մոռացօնս լինել այդոցիկ, զի մի որ յապա եկեալցին ի Հնջոցս ուսանիցի և նախանձ բերիցէ ընդ խժդժութիւնն անմարդի:

ԳԼՈՒԽ ՀՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ա՛վ քանի մեայլ մթութեան արկանէ զնոսք մարդկութեան կարի լինի բարեբաստութիւն: Ոպաքէն ի վեր քան զնմութիւն Հանդիպեցաւ զանձն Պամպէոս յորժամ զայնչափ բազմութիւն եղեալ մարդկանն կոխան դնէր գազանաց ծնեալոց ընդ օտար երկինք. յորժամ զկենդանիս այդչափ անՀաւասար՝ միահանց ընդդէմ ի կռիւ մատուցանէր. յորժամ զարեան Հապաղիան

հեղոյր ի տեսիլ ժողովրդեան Հռովմայ, որոմ բաղմագոյն կա տալոյն էր հեղուլ ընդ հատ։ Բայց սակայն նոյն ինքն սուրբ Յ[illegible]ղեքսանդրիա գտաւճանեալ նահանգաւ՝ յանապագունեն ի սուրկացն զՀարուածն ընկալաւ, անդ ուրեմն ի միտ առեալ զնուտի պարծանս մանկանչ անուանն իւրոյ։ Ա[illegible]լ զարձեալ անդրէն ի կարգ բանիս՝ ցուցից և զայլոց անանց զառաքարար փոյթ ի նահանջրնակ իրս։

Այսոյն ինքն պատմէր խնամուհին զի Աեռեղաս յաղթեալ կաթոգիկեցոց ի Աիկիլիա՝ երբև յաղթանակ առնէր, ինքն միայն յիմ Հռովմայեցւոց՝ փիղս Հարիւր և քանի կանանաւորս ի յաղթանակին առաջի կառացն գնացուցանէր։ Ա[illegible]ղ զի Աիղոս վերջին ի Հռովմայեցիս յաւել տեղի ի շրջափակ քաղաքին Հռովմայ, որ նոցա միայն օրէն էր առ նախնեաք որ ի սահմանս Իտալիոյ աշխարհակալելն և ոչ ի գաւառան։ Ա[illegible]ս այս արդեաք կարևորագոյն իցէ ի գիտել քան զայն՝ զոր նոյն ինքն Հատատատեր գարձեալ Թէ[illegible]ենտին լեառն արտաքոյ իցէ շրջափակի քաղաքին վասն միոյ յերկուց պատճառաց՝ կամ վասն տեղի տալոյ անտի անբոխին, և կամ զի ի հմայել Հռեմոսի ի տեղւոջն հաւք չէտուն բարբառ։ Ամոյ և զայլ անբաւ բանս որք կամ ստայոգք են և կամ ոչ ինչ ընդհատք ի ստուԹենէ։ Ա[illegible]ան զի հաւասի իսկ զգրեալսն համարեալ և ի գրոցացն երաշխաւորեալ՝ սակայն զոյր ուրուք սխալանս ուղղեացին այգոքիկ, զոյր ցանկալ[illegible]ենան նուաճեացեն, զո՞ անդիցեն առաւել քան, առաւել արգար և առաւել մարգասէր։ Ա[illegible]սէր մեր վարիանոս։ Ձերկեայս լինիմ երբեմն, արգեաք լաւ ևս իցէ քնաւ իսկ չսարապել յաւուրն, քան Թէ յայդպիսիս։ Ձամենայն մարդկանէ նոքա միայն են հանդարտեալ, որք միանգամ իմաստասիրեանն պարապեն։ Ա[illegible]րեա Աէեի կեան։ զի ոչ միայն զիւրեանց կենացն զժամանակ քաջիկ պահպանեն, այլ և զամենայն զարս՝՝ի զարս իւրեանց յաւելուն։ Ամբաւ ինչ ամբ անցեալ իցեն յառաջ քան զնոսա՝ նոցա ստացուածք են։ Ամէ չէնք կարի ապահովիք, ամենայն արք մեծասպասք առաք որք իմաստս գերապանծս մեզ ստանդեցին՝ վասն մեր ծնան և վաղագոյն յարդարեցին զմեր կեանն։ Ա[illegible]յոյն վաստակաք առաջնորդիմք յոր ինչ չբնաղագեղ

'ի խաւարէ ածան 'ի լոյս։ Վասքը ամենայն բացեալ կան առաջի մեր ընդունել զմեզ, և Թէ կամք իցեն մեծ անձնութեամբ գեր 'ի վերոյ հանդիսանալ քան զանձուկ վճռակ մարդկայնոց տկարութեան, բազում ժամանակք էն մեզ ընդ որս ՃՆԱՑ առեալ զբանութիւնս։ Արթի իցէ մեզ վճռել ընդ Աստուած, յերկեալս լինել ընդ Յառնէադեայ, հանդիման ինդրել ընդ Յայկիւրայ։ ընդ Յոյկեանց յաղթել մարդկայնոց բնութեանս, ընդ Կիւնիկեանս բարձրագոյն և վերամբառնալ, և ընդ համատարած բնութեան՝ կենդանիոց գոլ ամենայն զարուց առ հասարակ։ Այլ ընդէր չիցէ մեզ 'ի զուգաբանեալ և 'ի վաղանցուկ ժամանակիս աստի Թևածել զօրութեամբ յանսահմանն և 'ի յաւիտենականս, և լաւագունից ամենեցուն գոլ Տաղաղդակից։ Ուր միանգամ հետամուտք պատուոյ պաշտաման յածեալ շրջին 'ի տաղտուկ անձանց և այլոց, քանզ իսկ յիմարաբար զօր ամենայն 'ի սեամն բոլորից յածանխելով, ոչ զանց արարեալ և ոչ զմիով 'ի դրանց 'ի բաց գտելոց, և ընդ առնս առնս շրջաբերեալ յածին յողջոյն շահախոյս զիր, զջս ոմանս և զբանիս կարիցեն արդեօք տեսանել յընդարձակածաւալ քաղաքիս զբազելոց 'ի պէս պէս ցանկութիւնս։ Վանիք այնոքիկ իցեն, որոց քանն կամ շուայտութիւն և կամ տանարդութիւն զդրանս ընդդէմ նոցա փակեսցէ. քանիք որք յետ չարչարելոց զնոսա յերկար՝ շուտափոյթ իմն զանց գնեքօք արարեալ և մեկնին. քանիք որոց Թողեալ զգաւիթն լի բազմութեամբ զիւրեցոյն առ նոսա, ընդ միմիս ելս ապաբանիցն խուսեն գաղտագողի, որպէս Թէ նուազ ինչ տանարդութիւն իցէ խաբելն քան զարտաքսել. քանիք որք յերկիւեան զիւ նեղբռնացն ծանրապաշտք և կիսաբնութք, գետառատ լոյն այնոցիկ, որք զիւրեանց գբանն հատին՝ զի այլոցն սպառեսցեն քնոյ, հաւիս հաղ բացեալ զշրնաունս՝ բաղձրայոն յօրանջիւք տան զարձագանգ անուանն հաղաւրիցս յոսնկս նոցա հնչելոյ։ Օ այնոսիկ օրհն իցէ առել իսկապէս պարտուսատաբս, այք զՕենան և զՄիւթագորաս, զՎեմոկրիտոս և զԷպիկուրոսատել և զՀերակղիտոս և զայլ ևս առաջնորդս լաւագունից դիտութեանց ընտրեն ունել իւրեանց հանապազորդ կենակից։ չիցէ որ 'ի նոցանէ՝ որոյ չիցէ պարտապան, և ոչ որ

զնաւուցեալսն առ ինքն ոչ առաւել ելանելոս և առաւել սիրոյդ իւր արձակեսցէ . ոչ ոք է՝ որ գառաքեալ ձեռն զոք Հաղուցու երթալ յիւրմէ . ՚ի տուէ և ՚ի դիշերի զիւրամատոյցք են ամենայն մահկանացուաց : Ոչ ոք ՚ի նոցանէ ստիպեսցէ զքեզ մեռանել , այլ ամենեքեան առ Հասարակ ուսուցչեն քեզ զայն . ոչ ոք գբո անձն նուազեցուսցէ , այլ զիւրեանցն ՚ի քեզ յաւելցեն . ոչ ուրուք ՚ի նոցանէ բանքն քեզ ՚ի վատոյ եղիցին , ոչ ուրուք բարեկամութիւնն ինոսակար , ոչ ուրուք սպասաՀարկութիւնն թաղանծախ :

ԳԼՈՒԽ ՀԻԳԵՑԱՍԱՑՆԵՐՈՐԴ

Այլ և տար ՚ի նոցանէ որ գինչ և կամիցիս , ոչ ինչ արգելուն զքեզ՝ զի առաւել չոյժ քան զոր առեալն առնուցուս : Այր երջանկութիւն և որպիսի գեղեցիկ ծերութիւն կայ ինոյ այնմ , որ ընդ Հավանեալ Թևոց նոցա է ամբացեալ . իսկ նորա ընդ որս զնմանոնց իրայ և զնեծամեծաց լեցի խորՀրդակից և յորոց զոր ամենայն զոգուս անձինն Հարցանիցէ . յորոց լսիցէ զՀնազանդութիւն առանց Թշնամանաց , գովեսցի առանց մարդահաճութեան և ՚ի նմանութիւն նոցա կերպարանեսցէ զանձն : Այսոքո եմք ասել Թէ զի չէր յիշխանութեան մերում ընտրել զծնողս մեր առեալս մեզ ըստ բաւականի . այլ ահա մարթի է մեզ ծնանիլ ըստ Հաճոյս : Այսպէսն գոն գերդաստանք աղնուականք և Հանճարեղք . ընտրեա ՚ի նոցանէ զոր կամիս՝ յարիլ ՚ի նոյն և ոչ անուանն և՛ եթ գոլ ժառանգ , այլ և գոյիցն բարեաց , զորս չէ պարտ չարամիտելով և ապաՀաւաքս պահպանել . այնուամենայնիւ , որչափ ՚ի յոքունս բաշխեսցին : Այսքա Հորդեսցեն քեզ ՀանապարՀ ՚ի յաւիտենական նուաՀի անդր . և յայն վայր զքեզ ամբառնայցեն , ուստի ոչ ոք ընկեցցէ արտաքս . այսուիկ և՛ եթ Հնար է յաւերժանալ մահկանացուի , մանաւանդ Թէ և յամանաՀութիւն անդր յեղափոխիլ : Այբանաք փառաց , չիրիմք Հոգւոյդ և զոր միանգամ ամբարտաւանութիւնն սահմանեալ վՀատոյք կամ կառուցանել արգելանք , վազափուլ

էն. զամենայն ծախէ հնութիւն բազմաժամանակեայ, և զոր սրբազանեացն՝ վաղ ընդ փոթի և տապալէ։ Այլ իմաստութեան յաղթէ և ոչ ինչ. ոչ յառաջակայն ջնջէ զնա ժամանակ, և ոչ ապագայն նուազեցուցանէ ինչ ի փառաց նորա, այլ հետզհետէ ևս քան զևս արգոյ ընծայեցուցանէ. զի առ մերձաւորս զրգռի նախանձ, յառակայեցեաց ընդ հեռաւորսն պչրուի։ Այսպէս երկայնակեաց է յայժ իմաստունն և ոչ ընդ սահմանաւ այլոց փակեալ. ինքն միայն ազատ է յօրինաց մարդկութեան. զարք ամենայն ի սպասու կան նմա իբրև աստուծոյ։ Օ անցեալն պարուրէ յիշատակաւ, զառաջակայն ի գործ արկանէ և զգալոցն նախազբաւ ըմբռնէ։ Այս ի համագումար բոլանդակելոյ ի նա ամենայն ժամանակաց երկարեն կեանք նորա։ Այոյս կեանք կարի սուղ են և տատամնելի, այք զանցեալն ի մոռացօնս արկանեն, զառաջակայիւքն ապահաս առնեն, ի հանդերձելոյն զանգիտեն և ի ծայր վախճանին հասեալ՝ անագան ուրեմն ի միս առնուն հիպացեալքն թէ այնչափ առաւել զբաղեալ էին՝ որչափ զի գործէին և ոչ ինչ։

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այր մի կարծիցես երկայնակեացս զոր զնոսա վասն այնորիկ զի երբեք երբեք իշձ լինին մահու։ Օ ի կեղա կարծ ցանկութեամբ յերկիւղալիս բերեալք՝ տանջին անխորհրդաբար և առ աչին ստէպ ցանկան մահու։ Այլ ոչ այն գազանալ ցոյց իմն է երկարութեան կենաց, զի բազում անգամ երկայն թուի նոցա օրն, և ի սահմանեալ ժամ ընթրեացն զկտաւին կալեալ՝ գանգատին գյաւրընթաց գոլոյ ժամուց։ Ասն զի թէ գատարկասցին երբեմն ի զբաղանաց՝ գատարկ մնացեալք՝ տագնապին և ոչ գիտեն զինչ առնել և կամ՝որպէս կարձել գժամն պարապորդ։ Այնին իրէ խնդրեն զբաղումն ինչ. և անզբաղ մնացեալ ժամանակն բավանդակ ծանր է նոցա. այնպէս ամենևին՝ որպէս յորժամ սրախաղիցն կամ այլոց ինչ տեսարանաց և կամ զուարճութեանց սահմանեալ լիցէ օր հանդիսին՝ ակնկալելոյն այնմ ցան-

կալը է զի ընդոստ անցանիցէն աւուրքն որ ՚ի միջոցին. զի և զոյգն յապաղումն անձկացեալոյն իրաց յերկար թուի նոցա: Իսկ ժամանակն զոր սիրեն, կարճ է և երագաթռիչ, և վաղանցուկ ևս մտոնութեամբն լինի. վասն զի յայլմէ յայլ ատասանէն և ՚ի միոյ ցանկութեան վերայ կալ ոչ կարեն. ոչ եթէ երկար են աւուրքն յայս նոցա, այլ ատելիք: Ուր ընդ հակառակն՝ քանի սուղ երևին նոցա գիշերք զոր ՚ի գիրկս հոմանեաց անցուցանեն և կամ ՚ի գինեբուս. յորմէ և մելգնութիւնն այն քերթողաց՝ որք առասպելեօք զմարդկան մոլորութիւնն բուծանեն, թէ Ի դամազդ հեշտասուքեամբ զուգաւորութեանն մեզկեալ՝ երկրորդեաց զգիշերն: Օ ինչ այլ դիպողագոյն ՚ի վառել բորբոքել զախտ մեր, որպէս զգիսն կարգել նոցին հեղինակս և օրինակաբ առասուածոցն անստգիտ համարձակութիւն տալ ախտից: Այլ զնմանդ ոչ կարի հակիրճ թուեցին այգպիսեաց գիշերք զոր այնչափ թանկագնով գնեն. զարին կորուսանեն ակնկալութեամբ գիշերոյ, և զգիշերն երկիւղիւ լուսոյ: Հեշտութիւնք իսկ նոցա երկիւղալիք են, և պէսպէս արհաւրօք խռովեալք. և յայսմհանգամանս ուրախութիւնս նոցա սպրդեալ մտանեն այս վարանք հոգոց թէ Չգոր վայր արդեօք: Այսմիսի տեսութեամբ թագաւորք լացին զնուաս իշխանութեան իւրեանց. և ոչ ընդ մեծութիւն բախտին իւրեանց զուարճացեալք՝ հանդերձելոց կատարածին ահիւն զարհուրեցան: Վեց և իրրեա արքայն Պարսից այն ինչ բազմութեամբ զօրաց զլայնածաւալ դաշտաւայրսն ծածկէր՝ ոչ թուով այլ տարածութեամբն զնոսա չափեալ, յարտասուս հարաւ՝ զի յետ ամաց հարիւրոց և ոչ մի յանհամար երիտասարդաց անտի ճնալոց էր: Այս որ լային՝ ինքն զօրհաս նոցա ձեպելոց էր, զմանս ծովակուռ, զայլս ՚ի ցամաքի կորուսանելոյ՝ ՚ի մարտի համ ՚ի փախստեան, և ՚ի սուղ ժամանակի սպառելոյ գնոսա, զորոց ՚ի հարիւր ամն զանգիտէր թէ սպառեսցին:

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵԻՏԱՄՆԵՐՈՐԴ

Լսող զինչ ապա զի և ուրախութիւնք նոցա զաղփաղփունք են չունելով ինչ հաստատութիւն, այլ նովին իսկ ունայնութեամբ, յորմէ զծագումնն ունին՝ վըդովեալք։ Որպիսի՞ ինչ համարեսցիս զժամանակն, զորս և ինքեանք ևս թշուառս անուանեն՝ եթէ և այսոքիկ իսկ յորս փքացեալ սոնքան և անդր քան զենութիւն մարդկան ապարթանեն, չեն ինչ յստակ և անապակ։ Ի՛նծագոյնք իսկ՝ի բարեաց լի են հոգովք, և՝ի բարեբաղդութիւն ամենամեծ՝ նուազագոյն է յոլսալ։

Ի պահպանութի՛ւն բարեբախտութեան այլևս պէտք են բարեբախտութեան, և յաջողեալքն ուխտիւք՝ ուխտիչ դարձեալ ունին պէտս։ Որ ան զի ամենայն որ բախտովի գայ, անհաստատ է. որ՝՛ի բարձունս վերացեալ՝ պատրաստագոյն է յանկումն, և որ անկանելոցն է՝ ոչ զուարճացուցանէ։ Հարկ է ապա զի ոչ սուղ միայն այլ և հեգ և ողբմելի իցէ կեանք նոցա, որք մեծատարժանութեամբ հայթայթեն զայն՝ որով տարժանապէս ևս վայելքն իցեն. տարժանութեամբ ստանան որովհետև կան, տատամսութեամբ ունին՝ զոր ստացան։ Որչափ յայս յաւէնայն չլինի նոցա երբէք յուշ մեռանել է ժամանակն։ Որ նուելոցն զբաղանայ յաջորդեն այլք. յայս գայս զարթուցանէ, փառասիրութիւն զիտասիրութիւն, չեն կամք վախճան առնել թշուառութեանց՝ այլ զպատճառսն փոխոխել։ Ջառապեցեալք՝ի պատիւ իշխանութեան անձանց մերոց, առաւելագոյն ևս վանն այլոյն լիցուք ժամավաճառ։ Հետամուտք պարտանցն՝ խոնջեցեալք յաշխատութենէ, պարտպանք այլոց կացեալ և քուէարկուք՝ անդրէն սկսանիմք։ Ո՛չ դատախազութեանն՝ի բաց եդաք զտաղտուկ, դատաւորութեան վերնիմք հետամուտ։ Ի դատաւորութենէ՛ որ դադարեաց, գանձապետ կայ. ի՛ անտեսութիւն ընչից օտարին վարձկանութեամբ ծերացաւ, իւրոյն կայ անտես։ Որ արթուն զղինուորութեանն՝ի բաց եհան զկօշիկ, հիւպատատութեան թեկն ածէ։ Անհնարիս խոսե՛լ վութայ՝ի դիւ

տատրութեանէ, յարօրոյ իւրմէ կոչի վերսահին։ Ի գործ վերագոյն քան զոհս նահատակի Աղեսիոսի ընդգէմ Ալաքերդաստացւոց՝ յաղթող լեալ Ընտիքոսի, յաղթող Ղեմոսթոսի, և փառաւորէ զՀիւպատոսութիւն իւր. երանեալսա կայ եղբօրն՝ և ընդ Ղամանդայ իակ առնոյր պատիւ թէ չէր ինչն՝ ի բաց տրաժարեալ, սակայն աղաչեալք քաղաքացւոց հաստատեն զփրկիչն իւրեանց՝ որ յԵրուսաղէմէ յարութեան յաստուածամանան պատուոյ հրաժարեալ, ի ծերութեան իւրում զանգաղած արտասահմանութեան պարծանսն խնդրէ։ Ազերբէք պահատեցին բազեբաստ և կամ ձախողակի պատճառք Հոգոց. զոմանք գողացին ի մէնջ զՀանդարտութիւնն ցանկացեալ միշտ այլ ոչ երբեք վայելեալ։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Հնգտա՛ի բաց կաց յամենեսեան՝ սիրեցեալդ ԽրՊաւղնէ, և յետ Տողանգածելոյդ ըստ ոչ չափու Հասակիդ, փութա մեկնասանալ՝ի խաղաղ նաւահանգիստ։ Ո՛մնաւած քանիցս ալեկոծ եղեր, զոլոխսի մըրիկս առանձնաւ կանս կրեցեր կամ զՀասարակացոն յանձն ձգեցեր։ Շատ են ցոյցք Հանդիսից առաքինութեանդ՝ի տարժամանելի և յանդուլ վաստակդ, փորձեա արդ թէ զինչ և՛ի Հանգարտութեան գործեցե՛ք։ Ո՛ մեծագոյն մնան Հասակիդ և զլաւագոյնն անշուշտ՝ աւանիկ նուիրեցեր Հասարակապետութեան, մնան մի և քեզ կալցիս՝ի ժամանակիդ։ Այլ ոչ եթէ՛ի յոյլ և՛ի պարապորդ Հանգիստ զքեզ կոչեցեմ՝ ի քուն և՛ի փափկութիւնս ցանկալիս ոմանկին մեղկել զոր՝ի քեզն է աշխոյժ Հանճարոյ, ոչ Հանգարտել է այդ. քան զգործեցեալսն՝ի քէն ցայս վայր արիաբար՝ կարևորագոյնք եւս և մեծամեծք առաջի կան քեզ աներեւոյթ խաղաղութեամբ։ Ազաբէն զտիեզերաց վարես զանաեսութիւն՝ անձնաւ պահ լինելով յայնմ՝որպէս յօտարին ընչից, ինամ ածելով իբրև՝ի քոյդ, երկիւղածութեամբ որպէս՝ի

՝ Քանզի ասեկան էր կարգեալ՝ի վերայ հանբարոց և պարեհից։

հասարակացն։ Իւրելի ամենեցուն եղեր ՚ի գործակալութեանդ յորում գժուարին է խուսել յատելութենէ։ Ո՛չ հաւատամ ինձ՝ թէ և ես զկենացս անձին ունէի զհաշիւ, քան զհասարակաց ցորենոյ։ Այդ ըստ կորովի մտաց մեծագունից ձեռնհաս՝ յանձն ըս զաղձո ՚ի սպառ սատարութենէ այսր, որ թէ և փառաւոր, այլ ոչ առերեսութիւն կենացս է յանկատոր։ Խորհեաց զի ոչ յայն սակս աշխատ եղեր ՚ի մանկութենէն զկեսթեալ ամենայն ազատական ուսմանց՝ զի յաձախութիւն բազում ցորենոյ ՚ի քո իմասն լիցի յանձն։ Մեծամեծս ևս և բարձրագոյնս մեզ խոստանայիր։ Ես պակասեցին երբէք ոչ արք ծայրացեալք չափաւորութեամբ, և ոչ տարժանակիր աշխատութեանց տակունք։ Վաղ ևս յարմարագոյն են ՚ի բեռնաբարձութիւն յամն գրաստք, քան ածնիւ երիվարք։ զորոց վերագաւարժութեան աչխոյժ ո՛ր երբէք ձնղեաց ընդ ծանրութեամբ բեռանց։ Այլ գարձեալ խորհեաց որչափ հոգոց իւրք իցեն այնպիսեաւք ծանրութեան նեղելոյ գնել զանձն. զի ընդ որկորոյ մարդկան է գործ քո. Ժողովուրդ քաղցեալ՝ ոչ իրաւանց անասց, ոչ արդարութեամբ ամբոխ և ոչ աղաչանաց երեսս առնէ։ Ո՛չպարէն ՚ի սակաւ աւուրսն յորս կորեաւ Կայիոս Կեսար, թէ իցէ զգալ իւիք ՚ի գժոխս, ընդ այն գժուարեր մանաւանդ, զի ողջս զՀոռովմայ, և Թողոյր համբարաւ եօթանց կամ թէ աւելի ուժից այլ ևս աւուրց ՚ի պարէն։ Ո՛ինչ ինքն կամեցող ՚ի նաւաց գործեալ և զամենայն զօրութիւն ինքնակալութեանն ՚ի խաղ արկեալ զօտոյդ, մեսալուս ՚ի վերայ հասանէր չքաւորութիւն պարենից՝ որ և պաշարելոցն իսկ յետինն է ՚ի չարեաց. Նմանել իմն կամեցեալ մոլեգնելոյ և ամբարտաւանութեամբ հիւծացելոյ օտարազգի ՚ արքային՝ կորստական սովոյն, և որ սովոյն են արգասիք՝ հանկարծան աղետիւք։ Ո՛ինչ սիրտ էր արդեօք յայնժամ ՚ի հոգաբարձուս համբարայ, որոց քան ՚ի սրտ, ՚ի քարանց և ՚ի երդ՝ ՚ի ցաւանէն Կայիոսի բուռն ՚ի վերայ կայր տագնապ, և զայնքանսդ չարեացն զաղէտս ՚ի ներքս չինքեանս ծածկէին վեր ՚ի վերոյ կեղծեօք. և յիրաւի արդեօք՝

՚ Փաւեքսեայ Պարսից արքային։

զի են ախտք՝ որոց բժշկութիւն յաջողել առանց զի-
տելոյ ախտացելոյն, բազմից պատճառաք մեհուն՝ ախ-
տիցն իւրեանց եղև գիտութիւն։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

Ի բարձրագոյնս ասպա պատապարեա զանձն քո ա-
ղերկեան անդորրութեամբ։ Որիթէ հաւասար ինչ
Թուեսցի քեզ ինամ ունել յորենոյ՝ զի անմեղոյ և
անվնաս ի կրելեացն անհոգութենէ ածեալ համբա-
րեսցի ի շտեմարանս, և զի մի տապկացեալ ի խոնաւոյ
ջերմնացի և փտեսցէ զչափն և զկիրս, և այն դար-
ձեալ զի բարձրագունիցն և սրբազանից միտ եդեալ
քննեսցես Թէ զինչ բնութիւն իցէ զից, զինչ կամք,
զինչ պայման կենաց և որ կերպարան, զինչ գնով
պատրաստեալ կայցեն հոգւոյդ՝ երբ ի մարմնոյ ատի
փոխադրիցէ զքեզ բնութիւնն. զինչ ջօրութիւն իցէ
որ զծամուռս աչխարհիս կալ և կապ ունի ի միջավայ-
րին և զթեթևան առկախեալ ի վերոյ. Բ ի բարձու-
նըս սլանալ հուր և աստեղք առնուն զիւրաքանչիւր
չջնան և որ ինչ այլ մեծամեծք իցեն և հրաշալիք։
Յանկանայցես յետ քքանելոյ վերկիր յաւիլ մեօք ի
սոսին՝ այժմէն մինչդեռ ջերմ է արիւնդ, բուռն զօ-
րութեամբ ի լուսագոյնս անդր Թևակոխեացես։ Լ՚ա-
պիսի կենօք զուարճասցիս մեծապէս յախորժակս օգ-
տակար գիտութեանց, ի սէր և ի վարժս առաքինու-
Թեանց, ի մտացումն ցանկութեանց, ի գիտութիւն
կենաց և մնհուան, և ի խորին հանգարտութեան։
Լ՚ոքսէն հեգ և տատապետալ է ամենայն զբաղելոցն
վրհակ. այլ մանաւանդ այնոցիկ, որք ոչ գեթ իւրեանց
զբաղմանօքն տանջին, այլ ըստ ինքեանց այլոյն ինքին,
ըստ քայլափոխիկ այլոց ընթանան, ըստ ախորժա-
կաց այլոց ուտեն և յագստութեան քան զամենայն՝
հրամայեն սիրել և ատել։ Լ՚յախեաց եթէ կամք
իցեն գիտել զչափ կարճութեան կենաց իւրեանց,
տեսցեն՝ զչափ ինչ իւրեանցն իցէ մնան։ Լ՚ս արդ
յորժամ տեսցես զոք զնոխանական պատմուճանն ստեպ

ստէպ վերարկեալ, և կամ զանուն բազմահռչակ կալեալ յատենի, մի նախանձիցիս, այդ ամենայն վնասու կենաց հայթայթեին. զի ամ մի՝ ևեթ իւրեանց անուանէն Թուեսցի՝ զամենայն ամն իւրեանց ծախեն։ Ոմանք ի նախապրանս անգ փառատենչիկ ձգանցն ելին ի կենաց. ոմանք ի կատար անդր իշխանական պատուոյ անպատուութեամբ բազմեալ վերբերակեալ՝ անկան ի խորհուրդս տիրութեան՝ զի ամենայն վաստակք իւրեանց ի փառս աւարտեսցին չկրկին. և այլք ի խոր ծերութեան երիտասարդագոյ Հանգոյն մինչ յոյս նոր բանորս անձանց պատրաստէին՝ ի գժպատեհ և ի տարապայման ջանան պակասեալ չիջան։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Այօթագարս է՝ որ ի ծերութեան անարգ դատախազից կացեալ ջատագով և խաժամուժ տիմար անբոխին գովութեանցն աչն ունելով չնչեսցէ զոգին։ Այնթադարա է՝ որ ի կենացն մանաւանդ քան յաշխատութեանցն խանջեալ՝ ի վաստակն անդ տապատ անկանիցի։ Այնթալե է որ ի հաշուել զանխութիւնն մեռանիցի ի ծաղը ժառանգին որ համբերեալ նմա ժամանակս բազումս։ Չկարեմ զանց առնել զօրինակսն որ ինձ ի յուշ գայ։ Տուբանեզոս ծերոնի աչալուրջ անցեալ զինուսանիներիք, հրամայն հրաժեշտ ի գործակալութեան պաշտամանէն ընկալեալ ի Կեսարէ, պատուէր եւս ընտանեացն տարաձել զինքն ի մահիճն որպէս մեռեալ։ Մուգ առնոյր տունն աղջոյն ընդ դատարկանալ ծերունոյ տանուտեառնն ի գործոյն, և ոչ դադարեալ ի տիրութենէն, մինչ չև ետես զնա հաստատեալ վերստին ի նոյն գործ պաշտամանն։ Այդպէս ցանկալի իցէ ի զբաղանս մեռանել։ Այս ցանկութիւն է բազմից. և քան զկար զօրութեամբ՝ տենչ վաստակոց յերկարէ ի նոսա։ Ընդ տկարութեան մարմնոյ մաքառին, զծերութիւնն

1 Խմա զի ամ մի ևեթ լիցին հիւպատոս։

իսկ ոչ այլով իւիք ծառը Համարին՝ բայց զի լքուցանէ զնոսա : Ո զօրական յիմնամեան ոչ ևս բռնադատեն օրէնք . զվաթմնամեսնին ոչ ևս կարգեն յաւագանին ՚ի խորհրդական : Ո յժուարագոյն է մարդկան յանձանց քան յօրինաց առնուլ զՀրաման հանդարտելոյ : Ո՛յն ինչ ձգին և ձգեն՝ այն ինչ զիմեանց վըդովեն զՀան- գիստ և ՚ի թշուառութիւն են իրերաց , անպտուղ անցանեն կեանք նոցա առանց բերկրութեան և առանց ինչ առաւելութեան հոգւոյ :

Ո՛ր է որ առաջի աչաց ունիցի զմահ . ոչ ոք է որ ոչ անդրադարձն ևս բերիցի յուսով : Ո՛յն և որ անդր ևս քան զկեանս տան Հրաման ամբարտակս Հոյակապս շինմանց և արձանս առ յիշատակ նուիրել Հասարակաց և մրցանակս խաղուց կարգել զխարուկաւ և պերճասպա- ծառ յուղարկաւորութիւնս : Ո՛չ ևս ասեմ քեզ այդ- պիսեաց յուղարկաւորութիւն իրրև զսակաւօրեայ ՚ի մե- ռելոյ՝ ջահիւք և մոմեղինօք արժան էր լինել :

ւ Ո՛մանեցուցանէ զնոսա վաղամեռիկ մանկանց՝ որոց յուղարկաւո- րութիւն ջահիւք և մոմեղինօք կատարէր ՚ի դիշերի :

ԴՈՒԿԻՈՍԻ Ա. ՍԻՆԵՒԿԱՅ

ԱՒՐԳԱՊԱՏՈՒ ԵՂԲԱՅՐ ԻՒՐ ։

ՅԱՐԳԱԳՈՒ ԵՐԱՆԵԱԿ ԿՆՆԱՅ

ԳԻՐՔ ՄԻԱԿ

ԳԼՈՒԽ ԱՒԱՋԻՆ

Ա՛ՐԵՆԵԱՒՆ, եղբայր իմ Վաղիոն, ՚ի խնդիր են երանական կենաց, այլ միգաւ մածեալ՝ չտեսանեն զինչ այն իցէ որ զերանելի կեանսն յարդարիցէ ։ Ա՛յնպէս իմն դժուարին է երանելի կենաց հանդիպել, մինչ զի գամմի սխալեալ զուղին՝ որչափ հապճեպ որ փութասցի ՚ի նոյն, նովին չափով բացագոյնս հեռանայ ՚ի նմանէ. զի ներհակաբար ընթացեալ՝ նովին ձեպովն մեծագոյն եւս անջրպետի միջոցաւ ։ Վորին վասն նախ զայն պարտ է առաջի դնել թէ զինչ իցէ որումի ցանկալին, և ապա չուրջ հայել թէ ընդ որ ձանապարհ կարող իցեմք վազգոյն դիմել ՚ի նոյն. ուշ եդեալ ընթացիցս՝ միայն զի ուղիղ իցէ՝ թէ որչափ օր ըստ օրէ յառաջադէմ խազամք և որչափ մերձենամք այնմ՝ յոր բնաւորական ցանկութեամբն բերիմք ։ Օ՛ի ցորչափ այսր անդր

1 Զայս գիրս ՚ի ծերութեան գրեաց Սինեկա առ եղբայր իւր, և ցուցանէ ՚ի սմա գեղեցիկս եթէ յառաքինութեան են հաստատեալ կեանք երջանիկ ։ Ըստ քննչաց վանմախաօս է Սինեկա յայս գիրս և զքնաղ յաստցուածս. և ունի հինգեան խրատս և խմաստս ոսկեզնիկս ։

Թափառիցիմք, ոչ երթալով ընդ առաջնորդի, այլ խոտնատաչոյն գոլանոց և դէմ ընդդիմ հրաւիրանաց՝ ի մոլորութիւնս ծախեսցին կեանք մեր սուղ՝ թէպէտ և զցայգ և զցերեկ վասն բարւոյ վաստակեսցուք։ Հաստատութեամբ խնդրեսցի ապա թէ չ՛ գիմիցեմք և ընդ ար. և այն ոչ առանց հմտուտ առաջնորդի, որում քաջածանօթ իցեն ամենայն յոր ընթանալք։ Օ՛ի ոչ որ ինչ յայլ ուղեգնացութիւնս՝ նոյնն և աստ հանդիպի. յայնս՝ դէմ եդեալ ոք ուրեք և զնեական հարցեալ, չմոլորիցի. իսկ աստանօր և աքահետն անգամ և խուսընթացս հանապարհ մեծապէս խաբէ։ Այլ արդ չէք ինչ առաւել զգուշալի որպէս այն՝ զի մի հանգոյն իմն ոչխարաց յառաջագնաց հօտին գնասցուք, ոչ ընդ որ երթալոյն է գնալով՝ այլ ընդ որ երթանին։ Այլ չէք ինչ որ այնպէս զառածանել զմեզ՝ի մեծագոյն չարիս, որպէս ըստ հանճարոյ տնօրինել զանձինս, լաւագոյն զայն վարկանելով՝ որ միանգամ հաձոյն և ընդունելին է բազմաց և որոց յաճախեն օրինակք, և կեանք ոչ բանիւ այլ նմանութեամբ։ յորմէ և կործանելոցն զմիմեանս բազմակոյտ ամբոխ։ Օ՛ որ օրինակ է տեսանել՝ի մեծի կոտորածի մարդկան յորժամ ասլբոխ բազում զմիմեանս մղիցեն և յանկանել ուրուք գնետ նորա անկանին և այլք, առաջինքն յետնոց լինելով պատճառք կոտորեան, գնոյն է տեսանել և յամենայն՝ի կեանս, զի ոչ որ ինքեանն միայնակ սխալէ, այլ և այլոցն մոլորելոյ պատճառք է և առաջնորդ։ Վասնզի գնասակար է յառաջնեալ ացիոյն միշտ գնետ երթալ. և առն իւրաքանչիւր յորժամ հաւատալ հաձոյ իցէ քան դատել, չիցէ երբէք գիտութեամբ դատաստան առնել գկենաց, այլ հաւատալ միայն. և այնպէս առ՛ի միմեանց առանդեալ մոլորութեամբն կործանիմք գահավէժ, և օտարին կորնչիմք օրինակօք։ Յողջոյնսդ թէ որոշիցիմք ևեթ՝ի խուժանէն. ամբոխն ջատագով չարեացն իւրոց՝ հակառակ կայ բանին։ Այս այնպէս պատահէ ամենևին որ ինչ յընտրութիւն դատաստոյն՝ի ժողովս ժողովրդոց, յորժամ՝ի դադարել բազմահնար յուզմանց հետամտիցին՝ և ընտրողք ինքնին ընդ ընտրեալսն զարմանան։ Ոչ որ հաձիքն՝ գնոյն և անարգեմք. այս եղբ են ահա յամենայն դատմանց եղելոց ըստ յոքոնց։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Այլ ուր զերանելն կենայ են բանք՝ մի լոցի քեզ ըստ ասենականացն օրինի տալ պատասխանի . Այս կողմն առաւելու Թուով . զի վասն այնորիկ իսկ վատ Թարգոյն ևս է . ոչ այն չայնողուԹիւն է մարդկայնոց իրաց , զի լաւ ինչ իրք Տաճոյ յոլովագունից Թուեցին , և վասԹարագունից իրաց ասացոյց՝ խուռն բազմուԹիւն է : Այն խնդրեսցուք որ լաւագոյն է և ոչ որ առաւել չայնախեալ , որ Տաւաստե մեզ զժանդուԹիւն չաւիտենական երջանկուԹեան , և ոչ զոր ռամիկն՝ վրիպակ Թարգման ՉնախատուԹեան՝ ընտրեալոյն Տամարի : Այլ ռամիկ կոչեմ ես եԹէ որ գքրոմիգան զգէնուն , և եԹէ զպսակաւորն : Այ ի ոչ ի գոյս նայիմ Տանդերձից՝ որովք իրք վերջաւորօք զարդաբեալ են մարմինք . և ոչ իսկ այսոյ Տաւաստամ ի կրճել զմարդ . է իմ լաւագոյն և յատակագոյն լոյս լընտրել զՆչմարիտն ի մտի : Այ Տոգւոյ բարին Տոգւոյն է Ճանաչել . սմա եԹէ լոցի երբեք պարապ ոգի առնուլ և մնախորՀ լինել չանձն իւր , ոմ , իբր արդեօք Թերացեալ չանձնէ խոստովան լնցի՝ Թէ զոր ինչ միանգամ գործեցի ցայսմայր՝ խիւր Թէ չէր իմ գործեալ . զոր ինչ խօսեցայ , յուշ ածեալ՝ ընդ Տաւերս նախանձիմ . որոց ցանկացայն , անիծադրուԹիւնս Թշնամեաց վարկանիմ , և յորոց զանգիտեցի՝ բաւե , քանի լաւագոյնք էին քան որոց փափաքեցի : Յոլովից Թշնամացեալ՝ գարձայ անդրէն ի չնորՀս նոցա , եԹէ իցէ արդարև գտանել ինչ չնորՀս ի լացս . իսկ անձին իմում չև եմ բարեկամ : Այ անացայ աւետարան փութով ի բաց որոշել զանձն իմ ի բազմուԹենէ , և առաւելութեամբ իւիք լինել նշանաւոր , և զայս ևԹէ չաՀեցայ զի նեռից կացի նշաւակ , և չարաչնուԹեան ետու զանձն ի խածատուն : Ցեսա նէս զդատս , որք գովին զպերճախօսուԹիւն , որք ձնխուԹեանց զՀետ երԹան , որք մարդեալուգին չնորՀազարդից , որք մեծացուցանեն զիչխանուԹիւն ուրուք .

առ Հաստարակ Թշնամիք են և կամ՝ ոք չէ ինչ ընդհատ, կարէն լինել։ Ոչափ զարմացողացն է ամբոխ նոյնչափ և նախանձոտաց։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Լ՚ԹՈՒԵԼ կամիմ ունել ինչ բարի՝ի ներքս՝ի յիս, քան առ՝ի ցոյցս արտաքոյ։ Լ՚ոչն ամենայն յորս ակնկատոյց և յայտնիուս կան մարդիկ, և աքանչացեալ մտանանիք ցուցանեն միմեանց՝ արտաքոյ նշողեալք և՝ի ներքոյ ողորմելիք են։ Լմնդրեսցուք մի զառերեսյթ բարին, այլ զհաստատունն և զանյեղլին, և զգեղեցիկն ըստ անեղեսյթ մասին։ Օայն զբռամբ ածցուք որ և չէ ինչ՝ի բացեայ. զիւրըմբռնելի է՝ միայն թէ զիտիցեմք ուր ձեռնամիգն լինել։ Լ՚ամ որպէս՝ի խաւարի մծտ քերեալ անցանեմք՝ ընդհարեալք յորս հնդրեմքն։ Լ՚այլ զի մի շուրջ դեգերեցուից զքեզ, զանց առնեմ զայլոցն կարծեօք. քանզի և Թուել իսկ զայս յերկար լինի՝ Թող Թէ հերքել. զու զմերսն ընկալ։ Լ՚ա յորժամ զմերսն ասեմ, ոչ զայն իմանամ զմիոյ ուրուք յատագոյն ստոյիկեանց անմեկնին երեթալ զհետ. են և իմ իրաւունք դատելոյ զարժանն։ Վ՚այն որոյ զմիոյ զհետ երեթամ, այլում հրամանն տամ զնար ծիսն զանազանելոյ, և յետ ամենեցուն յատեան կոչեցեալ և իմ՝ գուցէ չընտրեցիկ և ոչ զմին յայնցանէ, զոր առաջինքն վճռեցին. և ասացից՝ Լ՚այս ինձ առաւել բարիոք Թուի։ Լայց որպէս և ամենայն ստոյիկեանք միաբանին, ձայնակից լինիմ բնութեան. իմաստուն Թէ է չնտորիլ՝ի նմանէ, այլ օրինաց և օրինակի նորա հպատակել։ Լա արդ կեանք երանելի համապատշաճն է բնութեանն իւրում, որում չմարթէ այլազգ յաջողել, բայց զի նախ քան զամենայն՝ առողջ իցեն միտք և անդերկեան հաստատեալ միտ յառողջութեան իւրում։ Դարձեալ՝ զի արի իցէ և զօրաւոր և ազնիւ և համբերող, դիւրայարմար ժամանակաց, մտադիր մարմնոյն և մարմնականացն՝ բայց առանց հոգոյ և անձկութեանց, հետամուտ ամենայնի որք յարդարիչք են

կենայ՝ այլ առանց զարմանալոյ, բախտին պարգեւացն վայելող և ոչ ծառայ։ Այլ թէպէտև ես ոչ յաւելից, դիւրաւ իցէ քեզ խնամալ՝ զի ի մերժելն ի բաց զայն ամենայն ոզք զրգռելոն զմէզ և կամ ահաբեկ առնելն, զՀետ գայ անդորրութիւն մխտուև և ազատութիւն. վասն զի փոխանակ հեշտակամացն և փոխանակ դուժնաքեից և վաղանցուկ իրաց և յապիրատութեանց գխոչվին ՚ի ապատակար եղերից, ՚ի ներքս մտանէ բերկրութիւն անպայման, անսասան և անյեղլի. որով և խաղաղութիւն և անդորրութիւն ոգւոյ և մեծանձնութիւն հեզութեամբ հանդերձ։ Այ՝ ասն զի ամենայն գոռոզութիւն ՚ի տկարութենէ է։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Այ՝ԱՐԹ և այլազգ սահմանել զբարին մեր, իմն նովին իմաստիւք այլ ոչ նովին բառիւք բոլանդակեալ։ Օ որ օրինակ գունդ մի զօրաց է զի լայնանիստ տարածանի, է զի յանձուկն ամիոսփի կամ եղջերաձև կօրմնայ գոգեալ ՚ի միջավայրին, և կամ տողեալ պարզի ՚ի Ճակատ. և զօրութիւն նորա որպէս և զխարդ կարգեսցի նոյն է, նոյն և դիտումն պնդակազմ լինելոյ կողմանցն ամենեցուն, այսպէս իմն ինձ և զսահման ծայրագոյն բարւոյն՝ որում մարթի մերթ Ճապաղիլ և ընդարձակիլ, և մերթ ամիոսիլ և յինքն գումարիլ։ Այպաքէն նոյն է եթէ ասացից. ծայրագոյն բարին է սիրտ արհամարհող պատահիլ՝ առաքինութեամբ իրախտիս։ Կամ անպարտելի զօրութիւն ոգւոյ, խելամիտ իրաց, Ճանդարտ ՚ի գործս, Ճանդերձ բազում մարդասիրութեամբ և խնամով կենակցաց։ Այարթ է և զայսօրինակ սահմանել. Աչրանալի ՚ի մարդկանէ նա է՝ որում չկը այլ բարի կամ չար, բայց որ ինչ Ճոգւոյն է. Համեստութեամբ սիրող, առաքինութեամբ շատացեալ, զոր ոչ փքացուցանեն դէպք և ոչ լքուցանեն, որում չկը այլ բարի մեծագոյն քան զոր անձամբ անձին Կայ թայլ իցէ. որում հեշտութիւն Ճշմարիտ՝ հեշտութեանցն է արհամարհութիւն։ Այարթ է՝ եթէ թափառել կամիցիս, զնոյն

բան յայնմայլ կերպարանս յեղաշրջել, ողջ և անապատ զոջութիւնն պահելով։ Վանզի զինչ արգելու զմեզ երանելի կոչել զկեանսն, որպ ազատ իցէ սիրտ անբնակ ձեղի և անյողդողդ և կայուն, զերծ յերկիւղէ, և անմահն ի ցանկութենէ. որում միակ բարի համեստութիւնն իցէ, և միայն չար վատթարութիւնն։ Այլն ամենայն անարգ խուժան իրաց՝ ոչ կարձէ ինչ յերանելի կենաց և ոչ յաւելու, առանց աձելութեան և նուազութեան ծայրագոյն բարւոյն երթևեկել։ Այսպիսուն հաստատութեամբ եղելոյ, թէ կամիցի և թէ ոչ զհետ գայ հարկաւ զուարթութիւն հանապազորդեան, և վեհ լինն ուրախութիւն ի վեհոյ առեալ սկիզբն. զի իւրովքն բերկրեալ, և ոչ զառաւելն ցանկայ ընտանեաց իւրոց։ Զինչ եթէ քաջ ի կրիս դիցէ զայսոսիկ ընդ մանուցն և ընդ հնչենոց և ընդ յեղյեղուկ շարժմանց չամանդաղից։ Զոր եղեցի նման ի հեշտութիւնս, եղեցի և ի ցաւս։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Տեսանե՞ս որպիսի գառն և ճնասակաբ ծառայութիւն ի վերայ կայ գերելոյն գամ մի ընդ անասոյգ և անզօր տէրութեամբ հեշտութեանց և ցաւոց՝ որք փոխանակաւ տիրեսցեն նոցա։ Պարտ է ասպա յաղատութիւն անգր ի վեր ելանել, որ ոչ այլազգ յաջողեսցէ՝ բայց անփոյթ առնելով զբախտիս։ Յայնժամ ծագեսցի անզուգական բարին այն, հանդարտութիւն յանձերգևանութեան հաստատեալ մտաց և վսեմութիւն. և ի բաց վանել երկիւղին՝ բերկրութիւն մեծ և անչարժ, յաւաջ եկեալ ի զիտութենէ ճշմարտութեան, և քաղցրաբարոյութիւն և զեղումն սրտի, որվք զուարճանայ՝ ոչ իբրև ի բարիս, այլ իբրև յարդիւնս բարութեանն իւրոյ։ Այլ զի ազատօրէն սկսայ վարիլ ի բանս, երանելի մարթի ասիլ՝ որ ոչ ցանկայ և ոչ երկնչի, օժանդակելով բանին։ Այն զի և քարինք անբաժ են յերկիւղէ և ի տրտմութենէ, որպէս և ոչխարք իսկ. բայց ոչ վասն այդորիկ երջանիկս որ կոչեսցէ զնոսա որք

չզգան երջանկութեանն իւրեանց։ Նոյն կարգ գաւսեցեալ և զմարդիկ, զորս ի թիւս համարոյ խաչանց և անանոյ վերապրեալ բնութիւնն և անդիտութիւն զանձանց։ Ձիք խորը ընդ սուտ և ընդ նոսա. զի ի նոսա բնաւ իսկ չիք բանականութիւն, և ի սուտ խեղաթիւր և փոյթ ի միսս անձանց և ի մոլորութիւն։ Օ ի ցորչափ որ տարամերժեալ է ի Ճշմարտութենէ, անմարթ է երանելի կոչել զայսպիսին։ Այլ ուրեմն երանելի կեանքն է՝ հաստատեալ և անփոխելի առկայացեալ յուղիղ և ի Ճշդիւտ դատաստան։ Ա ման զի յայնժամ մաքուր է միտքն և ազատ յամենայն չարեաց, յորժամ զերծ գտանիցի ոչ ի յօշտանելոյ միայն այլ և ի կճանելոյ. անդրդուելի ի տեղւոջն արձանացեալ և անտեղիտալի ի բուռն յարձակմանց ցասուցելոյ բազմին։ Իսկ ըստ Հեշտութեանց մասին՝ թէպէտ և յորդեսցեն յամենատես, թէպէտ և ընդ ամենայն ՝ անցս ի նեղըս զեղուցուն, և հրապուրանօք իւրեանց ամբեսցեն զոգին, և զամենայն ինչ հնարեսցեն ի գրգռել զմեզ բռլանդակ և կամ մասամբ, ո՞ այն որ իցէ ի մտհկանացուաց՝ յորում թէ հեռք ինչ մարդկութեան իցեն ինացեալ, զուխ և զդիրեր ի մարմնէ ցանկութեան ջեռանիցի, և թողեալ զՀոգին՝ մարմնոյ պաշտօն տարցի։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Այ, և Հոգւոյն, ասէ՝, իցեն իւր Հեշտութիւնք։ Այդպէս իցէ. Թող նատցի նա իշխան զեղծութեանց և Հեշտութեանց, և լցցէ զանձն այնու ամենայնիւ որ սովոր են ամբել զզգայութիւնս. և զառաջինսն յուշ ածեալ զփախստեայ զգրգանն՝ անցելովքն բերկրեսցի, և ապագայիցդէտ անկն կացցի և անհակալեցոյն կարգ դիցէ. և մինչ յառաջակայսն յղփացեալ յօրանայ մարմնոյ՝ ի հանդերձեալսն կանխեսցէ մտօք։ Այլ այնու

1 Խմն ընդ ամենայն զգայութիւնս։
2 Յեպիկուրեանց ոք, ընդգէմ որոց Ճառէ յերկար։

ինձ չտառապին Թուխ՝ զի չարիս փոխան բարւոյ քա-
զել խելագարութիւն է։ Ոչ առողջութեան չիցէ
ոք երանելի, և առողջ ոչ է՝ որում միաստակաքն պակս
կարի լաւք ցանկալի իցեն։ Երանելի է ասել ուղղա-
դատն. երանելի որ բանականացն առաջնիկայիւքն՝
պակս և իցեն, և որ բարեկամն իցէ անձին. երանելի
է՝ որում բանն գովելի ընծայեցուցանէ զամենայն հան-
գամանս իրացն իւրոց։ Եւ նոքին իակ որ ծայրագոյն
բարի զհեշտութիւնն ասացին, տեսանեն թէ չիր ա-
նարգութիւն ինքեանն զնա։ Պատճէն անհնար է, ասէն,
զատանել զհեշտութիւնն յառաքինութենէ. և զի չիցէ
մարթ ումեք հանճար կենաց կալ և ոչ ի զուարճու-
թեան լինել, նա և ոչ զուարճանալ՝ առանց համեստա-
նալոյ։ Ազիտեմ որպէս զանմանման ի մի զոդէն։ Ինքեմ
չիցէ մարթ, ասացէք ինձ, զատանել զհեշտութիւնն
յառաքինութենէ. մի արդեօք զի ամենայն բարւոյ
սկիզբն յառաքինութենէ է, և յարմատոց անտի նորա
բղխիցեն որոց գոլոյդ ցանկալք և սիրելք։ Այլ արդ
եթէ սոքա անբաժանք ի միմեանց էին՝ չէր մեզ տե-
սանել հեշտալի ինչ բայց ոչ համեստ, և ի հակառա-
կէն համեստագոյն ինչ՝ այլ խիստ և վշտամբեր։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ո՞ւր Թողից և զայն զի հեշտութիւնն բերի և ի
կենաս յետին վատթարութեան, ուր առաքինութիւնն
անընդունակ է չարաշուք կենաց, և են իակ բազումք
ժամանակաք ի թշուառութիւն ոչ առանց հեշտու-
թեան, այլ մանաւանդ ի պատճառս հեշտութեան.
որում չմարթէր լինել, եթէ առաքինութիւն ամբա-
ժան էր ի հեշտութենէ, յորմէ բազում անգամ
զերկ է առաքինութիւն և ոչ երբեք կարօտ։ Ոչ բր
զանմանման՝ մանաւանդ թէ և զհակառակս ի մի կցոր-
դեք։ Չարձր է առաքինութիւն և վսեմ, թագաւո-
րական, անհնկուն, անխոնջ. իսկ հեշտութիւնն ցածուն
անյարգ, տկար և դիւրակործան, որոյ կաղաղ և քնա-
կութիւն ի պոռնկանոցս է և ի կապելոյս։ Ոչ առա-

քինութիւն ՚ի տանջարի գոյեա , յատեան հրապա-
րակի , յարքունիս , ՚ի տեղի պարսպաց արձանացեալ ,
փոշելից , կարմրերես և բրտացեալ ձեռօք : Իսկ զհեշ-
տութիւն զուգակեալ յանձին և խաւարարգել , ՚ի բա-
ղանիս , ՚ի քրտնարանս , և ՚ի տեղիս՝ [1] յորս երկիւղ է
յոտիկանաց . մերկեալ , թուլացեալ , յիւղ և ՚ի գինի
թաթաւեալ , գալկահար կամ շլարեալ և դեղովք
խանգարեալ : Ծայրագոյն բարին անմահ է և անկո-
րուստ , անյագելի և անապաշաւ . զի միաք ողջախոհ
չիոխին երբէք . ոչ ատեայ զանձն և ոչ լաւագոյն ինչ
է ընդ որում փոխանակիցէ . իսկ հեշտութիւնն յա-
ռաւելն բերկրեցուցանել՝ չիջանի : Իբ ոչ գոյ նորա
տեղի բազում՝ վասն որոյ փութով ընու և յափրացու-
ցանէ , և յետ նախկին յարձակման կթոտի : Իբ չէք
վստահել յայն՝ որ յար ՚ի շարժման կայ բնութեամբ .
որով և չիարթէ լինել ինչ նորա իսկութիւն , զի հա-
բանցի եկեալ շտապաւ և ՚ի վայելն անդ կորնչի :
Որ՝ինչ չև ժամանեալ մեկնի , և ընդ սկսանելն բերի ՚ի
կատարած :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Իսկ զինչ ասա զի բարեաց և չարաց հաստարակ է
հեշտութիւն . և ոչ նուազ բերկրի վատթարն ընդ
դժպատեհս իւր քան զՀամեստն ընդ գործեսն պանծա-
լիս : Որմէն իրի պատուէր ետուն նախնիք՝ Ճանապարհ
զլաւագոյնն երթալ և ոչ զգուարձալին . որպէս զի
ուղիղ և բարի կանոնք՝ ոչ առաջնորդ այլ ուղեկից լիցի
հեշտութիւն : Ա ասն զի զքնութիւնն պարտ է ուսնել
առաջնորդ . զնա կոյսի բանն իւր օրինակ և խորհրդա-
կան : Իպա նոյն է երանելին կեանս կեալ և կեալ ըստ
բնութեան : Իբ թէ զիարդ՝ յայտնաբանեցից :

Իթէ խնամով և անվեհեր պահեսցուք զմարմնոյ
ձիրս և զքնութեան սեփականսն որպէս առօրեայս
տուեալս մեզ և անցաւորս . եթէ ոչ ընդ ճառագայ-

[1] Զի չինուածապետաց յանձն էր հսկել ՚ի վերայ կապելոցից , պոռնկանոցաց և այլոց ևս զեղծութեան վայրաց :

Թեամբ լիցուք նոցին, և ոչ տիրեսցին մեզ օտարոտիք. եթէ հաճոյական մարթիցի և դիպուածոյք համայն այնպէս իցեն մեզ՝ որպէս գունդք օժանդակք և զօրաքանք Թեոդեաղնիք ի բանակս. այն ամենայն արբա-նեկեսցին մեզ և ոչ հրամանատու լիցին. այնու օրի-նակաւ սլիտանի իցեն հոգւով։ Նշաւակս լիցի այր ա-տաքնութք և անսպառելի, յանձն ևեթ մնադիր, վստահ ի հոգի իւր, յայս[1] և յայն պատրաստ և ձար-տարապետ[2] կենաց։ Յանձնապաստանութեան գիտու-թեամբ իցէ և անդրդուելի, հաճոյացեալքն նմա իցեն միշտ հաճոյք՝ և անեզք միշտ վճիռք նորա լինիցին։ Ա-թեպէտ լռեցից ես՝ սակայն խելամուտ լիցի ամենայն որ զի այր այդպիսի՝ բարեկարգ և յարդարուն իցէ յա-մենայնի, և բարեմտին և մեծագործ յամենայն գործս իւր։ Արդարեթեամբ բանին վարեսցին զգայութիւնք նորա, և նոքօք՝ քանզի և այլազգ չնարհեթէ նմա՝ սիրելոցն կալցի և զօրութիւն ի նշանարտութիւն անդր ի վեր ելանելոյ և անդէն ասպա յանձն իւր դառնալոյ։ Վասնզի և որ զամենայնն բովանդակեն տիեզերք և տիե-զերացս վարիչ Աստուած, թեպէտ և արտաքս քան զինքն բերիցի, սակայն յամենուստ անդրէն բովանդակ յինքն առնէ դարձ։ Նա նմին օրինակի և միաբ մեր թեպէտ և առաջնորդեալ ի զգայութեանց յարտաքինս բե-րիցի և նոցա ինքնին իշխեսցէ, և զի այսպէս ասացից՝ նոքօք կալցի և բմբռնեսցէ զծայրագոյն բարին։ Այ-ի միաբանութեենէ աստի զօրութեանց և իշխանու-թեանց ի մի՝ ծնցի բանն այն նշմարիտ և ստոյգ՝ անապչելի ամենևին և անփոփոխ ի կարծիս իւր և ի ձանաչմունս և աներկեայ ի դատաստանս։ Այ-ի յարդարել այսր ամենայնի այսպէս, և ի համաձայնել կամ՝ զի այսպէս ասացից՝ ի դաշնակատրել մասանցն յիւրեանս, ժամանն լիցի ի ծայրագոյն բարին։ Օ ի չնայ ինչ ի վատթարաց և ի պատրոգականաց և ոչ ինչ յոր ընդհարեալ զթեսցէ և կործանեսցի։ Օ ամենայն ինչ ինքնահրամանն գործէ և ոչ ինչ յեղակարծ պատա-հէ նմա. այլ յօժարութեամբ բարւոյն գործէ զոր գոր-

[1] Ի կեաղ և ի մեռանել, կամ յաջողակս և ի ձախողակս։

[2] Որ գիտիցէ գիւր կեանն յարգարել և քաղքենացուցանել ան-ձին զամենայն։

ձէն՝ մեռոպիւբ, անխափան և առանց յապաղանաց. զի յապաղումն և երկմտութիւն զղիմանարտութեան յայտ առնէն և գլաղդղդութիւն։ Ա՝ան որպ մարթի է քեզ համարձակ լինել խոստովան, ՃԷ՝ ի միաբանութեան հոգւոյն է ծայրագոյն բարին. զի զուգութիւն և միութիւն ասպնջական են ամենայն առաքինութեանց, ախտք և մոլութիւնք երկպառակին չիւրեանս։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Ա՝յլ, և դու ինքնին, ասէ, ոչ վասն այլ իրիք պաշտես զառաքինութիւն, բայց հեշտութեան ինչ առ՝ի նանիկ ամն ունելով։ Ա՝այց նախ քան զամենայն՝ ոչ զի հեշտութեան ծնող իցէ առաքինութիւն՝ վասն այն է ցանկալի. զի ոչ երէկ այդմ է ծնող, այլ զի և զայդ ծնանի. և ոչ երէկ յայդ ձգնի առաքինութիւն. այլ թէպէտ և յայլ ինչ բերիցէ ձիգն նորա, սակայն և զայդ գտանէ։ Օ՝ որ օրինակ յանդաստան աթօռազրեալ վասն սերմանեաց՝ բուսանելն ուրեք և ծաղկունք, սակայն ոչ վասն այնորիկ՝ թէպէտ և անպատրաստք իցեն՝ աշխատութիւնքն եղեն. այլ գիտացին էր սերմնացանն, և այդ՝ ի վերայ յաւելաւ. այնպէս և հեշտութիւնն չէ վարձք և ոչ պատճառք առաքինութեան, այլ յաւելած. և ոչ զի զուարճացուցանէ՝ է հաճոյական, այլ զի հաճոյական է՝ վասն այն և զուարճացուցանէ։ Օ՝այրագոյն բարին՝ ի բուն իակ՝ ի գաստան կայ առաքնակատար մտաց, և՝ ի սովորեալ առաքինութեան. որ յորժամ լնու զգլխն, և՝ ի սահմանին իւրում պարագրի, կատարեալ է ծայրագոյն բարին, և առաւելագոյնի իմիք չէք ցանկալ։ Օ՝ի և արտաքոյ բոլորին չնայ ինչ, և ոչ անդրագոյն՝ ինչ քան զսահմանն։ Ա՝խալես ասա՝ ի Տարսոնեցւոյ, Թէ զինչ այն իցէ՝ որ վասն բերիցիմ յառաքինութիւն. վասն զի խնդրես ինչ՝ ի վեր քան զծայրագոյնն։ Հարցանես, Թէ զինչ խնդրեցեմ յառաքինութեան։ — Օ՝չնա ինքն. զի չէք ինչ քան զնա լաւագոյն. ինքն է իւր վարձք։ Ա՝ւ միթէ Թեթեւ ինչ Թուէսցի քեզ մեծութիւնս։ Յորժամ ասեմ

ցքեզ, Թէ ծայրագոյն բարին է անմկուն ինն կորով ոգւոյ, և նախահայեաց տեսութիւն, և վսեմութիւն, և ողջմտութիւն, և ազատութիւն, և միաձայնութիւն, և վայելչութիւն, զինչ ևս այլ խնդրես մեծագոյն յոլսով բովանդակեսցին այդ ամենայն։ Օ՜ի անսահման հնձ գհեշտութիւն. զմարդոյ խնդրեմ ես զբարին և ոչ զորովայնի, որով առաւելուն գրաստք և անասունք։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Ընդհանուն ձևանաս, ասէ, զբանս իմ. քանզի հաւանեալ եմ ես Թէ ոչ կարէ ոք բերկրութեամբ կեալ առանց հաճեստութեան, որ ոչ ի դէպ գայ անանոց անբանից, և ոչ որոց կեղակրովք չափին զերանութիւն իւրեանց։ Համաբձակագոյնս ասեմ և գնեմ վկայութիւն, զի անկցորդ յառաքինութենէ չմարթէ յաջողել բերկրալի կենացն զորմէ ասացի։ — Այլ ո՞ր ոչ գիտիցէ զի անմնագոյնք ի մարդկանէ առաւել լիացեալք են ձերովքդ հեշտութեամբք. զի չարութիւն լուղի ի բերկրանս և զի ինքն իսկ հոգին ոչ միայն առգս ինն վատթար հեշտութեանց թելադրէ, այլ բազում ինչ այլ ևս։ Այս նախ զամբարհաւաճութիւն, վարկ մեծ զանձնէ, զնքացումն և գեր ի վերոյ այլոց ամբարտաւանել, զանձնասիրութիւն կոյր և զայացու, զմեղկ փափկութիւնս և դուխաբէիւք և խաղալեօք զուարճանալ. Թող զնեզուագարութիւն և գՀպարտութիւն Թշնամանագիր, գյոլութիւն և զՅուսամարթութիւն՝ որ է նշանակ անզգայ Թմբրելոյ հոգւոյն յանձն իւր։ Օ՜այս ամենայն վանէ հալածէ առաքինութիւն, զգաստ կայ և մխիչ չև մնալ տուեալ՝ փորձէ և կշռէ գհեշտութիւնսն, և ընդ որ հաՀի ընկալեալ լեր՝ ոչ մեծ ինչ գրէ. և քան ի վայելս նոցին՝ չափաւորութեամբն զուարճանայ. Թէպետ և չափաւորութիւն նուաղեցուցեալ գհեշտութիւնս, անիրաւի առ ծայրագոյն բարին [1]։

1 Խմս ըստ Էպիկուրեանց, որք ի հեշտութիւնս կացուցանէին զծայրագոյն բարին։

Ոտ գիրկ ընդխառն լինիս ընդ հեշտութիւնս , ես ընդ սանձիւ նուաճեմ. դու վայելես ի նոսին, ես վարիմ նոքօք . դու ծայրագոյն բարի առդնես , ես և ոչ իսկ բարի վարկանիմ. դու զամենայն ինչ վասն նոցա առնես, ես և ոչինչ : Այլ յորժամ զանձնէ ասէմ չառնել ինչ վասն հեշտութեան , իմն դու զինամտոյն զայնմանէ , որում միայոյ վարկանիս զհեշտութիւն :

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այլ ես չասացից երբէք զնա իմնաստուն որում ինչ խէն ինչ , թող թէ հեշտութիւնն : Այլ արդարև գերեալն ի հեշտութենէ զինդրդ տոկասցէ աշխատութեանդ և վշտաց վասնզի , չքաւորութեան և բազմադէմ սպառնալեաց որք գոհան շառաչմամբ զմարդկայնին կենօքս : Ոչ պակս ի տեսիլ մահուն և վերահաս ցաւոցն հանդարտեսցէ , զինդրդ աշխարհի դղրդմանդ և այնչափ դժնեայ թշնամեաց յաղթեսցէ՝ յաղթեալն յայնպիսւոյ մեղկ ոսոխէ : Օ՜ որ ինչ և թէպէտև հեշտութիւն՝ չարկ է զի կատարեսցէ . և չգիտեմ , աղէ , թէ ծրչափ ինչ թեպէտև նա : Այլ ասեցես ոչ դժպատեհս ինչ թեպէտև զի կենակից է ընդ առաքինութեան : Այս քնաւ իսկ չտեսանես դու թէ որպիսի ինչ ծայրագոյն բարիդ այդ իցէ՝ որում պահապանի են պէտք առ ի բարւոյն կալոյ :

Այս զինդրդ առաքինութիւն ուղղիչ լեցի հեշտութեան , զորոյ զհետ երթայ . զի հետևեալն հնազանդ զինն է , իսկ ուղղել՝ հրամայողին . դուք յետ կուսէ զառաջնորդն կարգէք : Իստ ձեզ՝ գերագոյն պաշտօն առաքինութեան է ճաշակառու լինել հեշտութենից : Այլ տեսցուք թէ առաքինութիւնն յայդսփնուաստացեալ առ դոսա՝ քնաւ իսկ իցէ՞ առաքինութիւն . զի փոխեալ զտեղին՝ փոխեսցէ և զանուն : Այլ արդ առնու բանս ցուցանել զաւգուտս յդիսացեալս հեշտութեամբք և լիացեալս ամենայն պարգևօք բախտին , զորոց զչարութիւն հարկ իցէ քեզ լինել խոստովան : Ձայեաց ի Աոմենտիանոս և Աբիկիոս որք զծոլու և զցամաքի

բարութիւնն, որպէս ինքեանք անուանեն, չեղջակու-
տեալ և ի սեղանի իւրեանց Հանդէս առնեն զկենդա-
նեաց ամենայն ազգաց։ Ցես թէ որպէս ի քնքուշ
բազմականին համադամ խորտկացն դէտակն ունին,
և ի նուագս ձայնից զլսելիսն հեշտացուցանեն և զաչս
պեսպէս տեսարանօք և զքիմն իւրեանց ի համադամ.
ի գրգռես և ի փափկութեան պարարի մսովին նոցա
ողջոյն. և զի մի անգործ կացցեն և անգունք՝ բուրմունս
անուշից ածէն զվայրօքն ուր պարանոցամաղ ի զեղում-
թիւնն ընկղմին։ Հեշտալից արդարև զնոսա ասէ-
ցես, այլ ոչ և ի բարութեան, զի ոչ բարութեամբ
վայելեն։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ղեն, ասես, ի բարութեան, զի բազում ինչ խափան
ընդ միջ անկեալ ամբոխեն զոգիսն և հակառակամարտ
կարծեօք վըդովին միտք նոցա։ Այդպէս է՝ գիտեմ և
ես. սակայն անմիտքն այնոքիկ և չեղչեղուկք և ի
խղձէ մնացն խարեպաք հանապազ՝ զօմնուն տակաւին
ի մեծասպաս հեշտութիւնս. մինչև հարկ լցի ասել,
թէ այնչափ հեռի իցեն նոքա յամենայն վըդովմանց,
որչափ և յառողջ մնաց. և որպէս յոլովից պատահէ
յիմարին զյիմարութիւն իւին զուարձախառն և մոլին
ծիծաղելով։ Այր ընդ հակառակն՝ խնամոյն հեշտու-
թիւնք ցածունք են և համեստք, նուազեալք և ձկն-
չեալք և անզգալիք իւին. զի ոչ հրապարատաւ գան, և
ոչ ինքնահատոյցք լեալ՝ մեծարին, և ոչ ընդունելու-
թիւնս խնդալից գոհանեն առ որս մնալին. քանզի
խիստունք բարեխառնեն ևեթ և ընդմիջին նոքօք
զկեանս, որպէս զվաղ և զվատակ ի լուրջն խառնեալ։
Ադաքեսցին ապա զանկցորդն յընդ միմեանս կցոր-
դելոյ և զհեշտութիւն ընդ առաքինութեան զուգելոյ
ի շողոմն վատթարագունելոյն իսկ ի մարդկանէ։ Այս
վարակեալ ի հեշտութիւնս, աբբեալ միշտ և իբրև ընդ
քարշ բերեալ՝ քանզի գիտէ թէ կեայ հեշտութեամբ,
կարծէ կեալ և առաքինութեամբ. իբրև զի լսէ զհեշ-
տութիւն անբաժան գոլ յառաքինութենէ. և յայնմ

հետէ իմաստութիւն զանոս իւր համարեալ՝ ամենա-
լեզաց պանծայ։ Եւ իբր ոչ եթէ յԱպիկուրոսէ իսա-
տեալը զեղխին, այլ անձնատուրը ի մոլութիւնս՝ ի ծոց
իմաստասիրութեան զանոս խնդրելն զուգա-
կէ և խուճապեցեալ լինին անդ ուր զգոլութիւնս հե-
տութեանն լսեն։ Եւ ոչ այսմ միայ դնեն թէ գիարդ Ա-
պիկուրեանն հետութիւն՝ որպէս ինձ թուի՝ արդարև
ժուժկալ իցէ և զգաստ. այլ յանուն անդր ածեալ ընթա-
նան՝ պատրուակ ինն և ջատագով անառակութեանցն
իւրեանց խնդրելով։ Եւ այնպէս կորուսանեն և զմիակ
բարին՝ զոր ի չարիս իւրեանց ունէին, զպատկառանսն
մեղանչելոյ։ Վ այն զի յորոց ամաչէինն՝ գովել սկսա-
նին, և պարծին ընդ մոլութիւնս, այլ վասն իսկ անյա-
րիր կայ երիտասարդութիւն, զի համեստ անուամբ
պատուեցաւ զաղիր մեղկութիւն։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Եւ վասն այսորիկ վնասակար է այս գովեստ հե-
տութեան, զի համեստութիւն վարդապետութեանցն
ծածկեալ ի ներքոյ, և որ ապականարարն է՝ այն ևեթ
երևի արտաքոյ։ Վանզի այնպէս համարիմ ես, զոր
ասեմ իսկ համարձակ ընդդէմ կամաց մերոյ ամբոխիս՝
զի Եպիկուրոսի պատուիրանագրութիւնք սուրբ են և
ուղիղ և խոստ իսկ՝ թէ մանր ի մօտոյ քննիցես. քան-
զի ի գոյն ինչ և ի ընդին սահմանի առ ի նմանէ հե-
տութիւնն այն. և զոր օրինս առաքինութեան դնեմք
մեք, նա հետութեան սահմանէ զայն։ Հռոմայէ այնմ՝
զի հպատակեսցի բնութեան, քայց որով շատանայ բնու-
թիւնն չէ այն բաւական վեղխութեան։ Օ ինչ ասա,
որ միանգամ զթուլամորթ պարապորդութիւն և զորկո-
րոյ և զվավաշ ցանկութեանցն փոխանակաւ զվայելեն
երջանկութիւն կոչեսցէ, չարին զբարւոյն խնդրել
պաշտպանութիւն. և քաղցր անուամբն հրապուրեալ
իբրև յայն լինի ժամուն՝ զհետութեան զհետ երթայ.

1 « Մերոյ ամբոխիս » ։ իմ սոսկական։

ոչ որում ուսանէ, այլ որում ինքն ծառայէ. և այն ինչ սկսանի զախտս իւր Հանդիստ պատուիրանադրութեանցն առնել՝ Թոյլ տայ այնոցիկ ոչ երկիւղիլ. և ոչ ծածկաբար և գաղտագողի, այլ յայտնապէս և մերկ գլխով անա-ռակի։ Ա՛ապա, որպէս յոլովք՝ի մերոցն, զԱպիկուրայ աղանդն վարդապետ գոլ ասեմ զաղքատութեանց, այլ յանիրաւի զրպարտեալ՝ չարահամբաւեալ և վատանուն։ Ա՛ոչ ոք այսմ խելամուտ լեցի մինչ չև՝ի խորս մտեալ վարդապետութեանցն. զի վեր՝ի վերոյ երևութիւն առասպելեաց տայ տեղի և զչարեացն զոյս արծարծէ և է որպէս այր արի՝ի կերպ կանացի։ Ընդդիմանալի առնէ ամենախածութեամբդ անարատ իցէ՝ի քէզ առաքինութիւն և մարմնով իցես ժուժկալ. բայց թերևս՝ի ձեռին քումմէ՝։ Ա՛ոչ արդ անուն ընտրեացի հանուստ, և մահագրութիւնն ինքնին զարհուրեցէ զոգին՝ի վանել զախտսն, որովք ընդ վարակելն թուլացեալ մեղկի։ Որ առաքինութեան լինի հետամուտ՝ զարիւրկան և զաղնուական ոգւոյ տայ հաւաստիս. իսկ հեշտասէրն մեղկեալ թուլացեալ և կնամարդի երևեսցի, և մերձ՝ի կործանումն եթէ ոք ոչ ուսուցէ նմա խոհ դնել ընդ հեշտութիւնս, և գիտել զի՝նչ՝ի նոցանէ կարելոք քնութեանս սահմանին, և զի՝նչ վազեալ ըստ սահմանն գահավէժ բերին ոչ չափ գիտելով և ոչ պայման, այլ որչափ և ուտեն այնչափ քաղցեհան. Հանպա, առաջնորդեսցէ քեզ առաքինութիւն և աներկևեան իցէ ուղին։ Հեշտութիւն առաւելազանց՝ վնասակար է. յառաքինութեան չիք երկիւղ թէ լցեի ինչ առաւելազանցութիւն. զի ինքն իսկ է չափ և կանոն. որ ինչ առաւելութեամբն վնասէ՝ չէ բարի։

1 Գաղղիացիք կամ Գուրքք կիւպէգեայ անուանիք անառակ զգխութեամբք թմրուկ՝ի ձեռին՝ի ձայն նոցա դաշնակաւոր զկայմս ոտիցն յարմարէին՝ի պարս լկաութեան։

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Խանգարանք վիճակելոյն բնութեան, զինչ այլ պատուականագոյն կայցէ առաքի քան զայն. և եթէ հաճոյ իցէ այդ զուգութիւն, և կամ թէ դովին ընկերակցութեամբ հաճեսցի զը յերանելի կեանսն ուղևորել՝ գնեայ յառաջընթաց իցէ առաքինութիւն և գհետ երթիցէ նմա հեշտութիւնն. և որպէս զատուէրը շուրջ զմարմնովքն յածիցէ՝ Խակ զառաքինութիւնն զպանծալին քան զամենայն՝ յաղախնութիւն տալ հեշտութեան ոչ վեհմախոհ մնայ է՝ Յառաջոյ երթիցէ առաքինութիւն, նա բարձցէ զդրօշակին, և թէպէտ իցէ ընդ մեզ և հեշտութիւն, այլ ընդ մերոյս իշխանութեամբ ուղեալ և բարեկարգեալ, ժուժեսցէ ինչ՝ի միջոց՝ այլ բռնասցի ոչ՝ Խակ որք տան հեշտութեան զառաջնորդութիւնն, և յերկոցունց իսկ վըխին. զի զառաքինութիւնն կորուսեալ և գհեշտութիւնն ոչ եթէ ինքեանք ունին, այլ զնոսա ունի հեշտութիւն, որոյ կամ չքաւորութեամբն տանջին, և կամ յորդութեամբն յղփացեալք հեղձնուն՝ Անչաւարակաքք են՝ եթէ թողացին՝ի նմանէ, թշուառագոյնք և՝ եթէ ընկճեսցին ընդ նովաւ. Հանգոյն իմն խրելոյն՝ի Վիրտեան աւազուտն, որք է զի թողեալ մնան ցամաքեալք և է զի ուղևաջուր կոհակօք կոծին՝ Զոր այս արգասիք են բռնանձաժալութեան և կորդ ցանկութեան առ հեշտութիւն, զի որ ցանկայ չարի փոխանակ բարւոյ՝՝ի վտանգ անձին ստացի զցանկալին՝ Օ որ օրինակ գազանք վայրենիք աշխատութեամբ մեծաւ և վտանգօք որսացեալք՝ նա և լետ ըմբռնելոյն բազմահոգ է նոցայն պահպանութիւն, քանզի բազում այն է զի գիշատեն զտեսս իւրեանց, սոյնպէս և որք զմեծամեծ հեշտութիւնն ըմբռնեն՝ մեծամեծ չարեաց դիմագրաւեն և՝ի գերելոյն գերին՝ Զոր որչափ բազում և մեծամեծ հեշտութիւնքն իցեն, այնչափ տկար է և յոլովագունից ծառայանայ զոր երջանիկ կարգայ ոամիին՝ Զոր զի

նովին օրինակաւն վարեսցուք, զոր օրինակ որ զիշխես գազանաց հետազօտել, և մեծ ինչ համարի ըմբռնել զնոսա ի հաղես, և ահագին գամբռօք շուրջ պատել զանտառս զի հասցէ ի վերայ հետոց նոցա, թողու լքանել զկարևորագոյն գործն, և հրաժեշտ տայ ի բազմապատիկ պաշտամանցն՝ սոյնպէս և զակատեալն զհետ հեշտութեանն, ի թիկունս կոյս թողու զամենայն, և զնախկին ազատութեամբն ապահով արարեալ՝ պորտոյ և որովայնի ծառայանայ. և ոչ եթէ գնոց առնու իւր զհեշտութիւնսն, այլ ինքն վաճառի հեշտութեանց։

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ասացաք զինչ արգելուցու, ասէ, ի մի խառնել զառաքինութիւն ընդ հեշտութեան որով լինի ծայրագոյն բարւոյն և համեստ գոլ և բերկրալի։ Այն՝ զի որ համեստն է հարկ է զի ամենայն մեծամտիքն իցէ համեստ, և ոչ ծայրագոյն բարւոյն մասթէ է լքանել անխոտան և յստակ, եթէ իցէ ինչ ի նմա խառնուրդ ոչ ի բարւոյ։ Այլ ոչ իսկ բերկրութիւն ճնեալ յառաքինութենէ, թէպէտ և բարի ինչ իցէ, մանն է իսկապէս բարւոյ, որպէս և ոչ ուրախութիւնն և անդորրութիւն, թէպէտ և ի գեղեցկագունից պատճառաց ունիցին զծագումն. զի թէպէտ բարիք իցեն և այդոքիւք, բայց հետևորդք ծայրագունի բարւոյն, և ոչ կատարիչք նմա։ Իսկ որ զհեշտութիւն ընդ առաքինութեան կոչեցիք, (և այն ոչ հաւատարութեամբ), տակաւութեամբ միոյ բարւոյն[1] տապալել և զղօրութիւն միւսոյն[2] և զատութիւն նորա զայն անյաղթելի՝ ցորչափ լինիցէ վերադասեալ քան զնա, արկանէ ընդ լծով. վասն զի սկսանի այնուհետև առաքինութիւն դէտ ակն ունել բախտի որ է արդարև յետին ծառայութիւն. և այնմ՝ զհետ գայ կեանք անհանգարտ, կասկածոտ, խռո-

1 «Տկարութեամբ միոյ բարւոյն» այսինքն հեշտութեանն։
2 «Միւսոյն» այս ինքն առաքինութեանն։

վեալ, երկուտ ՚ի դիպուածոց, և ՚ի վայրկեանս ժամանակաց ակնհատոց։ Զսաս այնուհետև առաքինութեան հիմն և հաստատութիւն անդրդուելի, այլ յերբուն և ՚ի յապաւիտեան վայրի կացուցանես զնա. զի զինչ այնպէս դիւրափոփոխ, որպէս ակնկալութիւն զի պատահոյիչ, և յեղափոխութիւն մարմնոյ և որոց առ մարմինն պատկանին։

ՈՐ ՚ի զոյգն մարդկայ հեշտութեանց և ցաւոց զրգռի՝ զնարդ մարթ իցէ նմա հպատակել ՚ի ստուգոյ, և մտադիւր սրտիւ ընդունել որ զինչ և տացի նմա, և ոչ որոնջել զնախատագրեն՝ ՚ի բարին ընկալեալ զամենայն դէպս նորա։ ՚Այս և ոչ հայրենեաց քաջ վերամարտիկ և վըհէժինդիր իցէ և ոչ բարեկամաց հզօր պաշտպան միտեալն ՚ի հեշտութիւնս։ ՚Նդր ապա հարկ է վերամբարձ լինել ծայրագոյն բարւոյն, ուր ոչ հասցէ նմա բռնութիւն և ոչ ցաւք, ոչ յոյս և ոչ երկիւղ մտաց կացցին անդր, և ոչ այլ ինչ որումմարթ իցէ սանձանել իրաւանց նորա։ ՚Նդր առաքինութեան միայնոյ է վերամբառնալ ցայն վայր, ընդ ոտիւք նորա հարթեացեալս եւքն այն զառ ՚ի վեր։ ՚Այս արձանացեալ արիաբար տարցի եկեղցին ամենայնի ՚ի վերայ, ոչ համբերութեամբ միայն, այլ և յոժարութեամբ. և զամենայն դժոգոհութիւնս ժամանակաց՝ օրինս համարեսցի բնութեան, և որպէս քաջ զօրական՝ տարցի վիրաց, թուեսցէ զսպիս, և թափանցանց հարեալ նետիւք՝ և ՚ի մեռանել անդ սիրեսցէ զսպարապետն, զոր վասն տա պատ անկանի, և անջինջ կացցի ՚ի սրտի զվաղնջուցն զայն պատուէր։ ՚Ստուգոյ լեր հետևող։ Ակ որ արբանջել, լայ և հեծէ, բանի կատարէ զհրամայեալսն, և ականջ ձգեալ բերի ՚ի ընալ զպատուէրն։ ՚Նդր զինչ անմոռութիւն իցէ, ձգիլ առաւել քան Թէ հետևիլ. որպիսի անմոռութիւն և անգիտութիւն իւրոյ բնութեանն՝ ցաւիլ եթէ խիստ ինչ քեզ դիպեսցի, կամ զարմանալ կամ դժկամակել լինել ընդ այն ինչ որ և բարեաց և չարաց հանդիպին անխտիր, զհիւանդութիւնս առեմ, զմահ, զտկարութիւնս և զայլ ձախող պատահարս մարդկային կենաց։ ՚Ի ծանձնութեամբ յանձին կալցուք որ ինչ միանգամ ըստ տիեզերական օրինացն սահմանադրութեան կրել հարկ իցէ. յայս իսկ եր-

դուսաք՝ տանել կենցաղականացս ամենայնի և ոչ խոռվիլ յորոց չեմք իշխան խուսելոյ։ Ընդ Թագաւորութեամբ ծնաք։ Հնազանդիլ Աստուծոյ՝ ազատութի՛ է։

ԴԱՍԻԽ ԱԲՇՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այն երջանկութիւն ձմարիտ հաստատեալ է յառաքինութեան։ Ոչ զինչ խոստ տայ սա քեզ։ Ձհամարել ինչ բարի կամ չար որ ոչ յառաքինութենէ և կամ՝ի չարութենէն ունիցի սկիզբն. և զի անդրդուելի՝ի բաւարն զդմ հացեալ չարին՝ի նմանութիւն Աստուծոյ, որպէս ինչ մարթի է, քերիցիս։ Ոչ զինչ փոխարէն շահատակութեանդ առաջի դնէն քեզ խոստմունք. մի՛ ծամեծք յոյժ և աստուածեղէնք գոյցես։ Օ՛ի ազատ իցես, անբռնադատ, անկարօտ ամենևին, աներկեան և անշնասելի. չեղէ ինչ քեզ խափան՝ի գործսդ և ոչ ուրեք վաստակեսցիս ընդունայն։ Այնոյն ինչ ըստ մտի քեզ յաջողեսցէ, ոչ ինչ՝ի ներհակաց հանդիպեսցի, ոչ ինչ ընդդէմ կարծեացդ և կամաց։ Այսակ զինչ, առաքինութիւնն՝ աստուածացեալին այն և գերագոյնս՝ բառականն ուրեմն իցէ առ երանելի կեանս. և ընդդէմ ոչ, նա և առաւել իսկ քան զբաւական։ Օ՛ի զինչ պակասիցի այնմ որ արտաքոյ է ամենայն ցանկութեան. իմ իմիք կարօտիցի արտաքուստ, որ զամենայն ինչ զիւր յինքն ամբարեաց։ Այսակն և որ յառաքինութիւն անդր զդմ եդեալ և յառաջադէմ յոյժ լեալ իսկ իցէ՝ի նմին, տակաւին ունի ինչ պէտս ներութեան բախտի դեռ ևս ընդ մարդկայինն՝ի կենցաղումն մերում, ցելով մինչև զամենայն մահկանացու կապանն խզեալ խուսեսցէ՝ի բաց։ Ոչ ես իւիք առաւելուցու ապա. այնու՝ զի ուր ոմանք կապեալք, կէսք պնդեալք և այլք կաշկանդեալք են գլխովին, իսկ այնմ՝ որ յառաջադէմ խոյացեալ՝ի բարձունս թևապարի, Թոյլ են շղթայքն զինի. Թէպէտ չև ևս է ազատ, բայց յազատաց է՝ի համարի։

1 Օրինակաւ զինուորութեան զբանն յարմարէ. զի որպէս երդումն է զօրականին զէտ երթալ գօշուն և հպատակելոյ զօրավարին, նոյնպէս և մարդկան, տանելոյ մարդկայնոցն ամենայնի։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

Այլ թերևս ոք, յորոց հաջէնն ընդդէմ իմաստասէ-
րութեան, ասիցէ ըստ նոցին սովորական բարբառոյ.
Խակ արդ ընդէ՞ր դու լաւ քան զոր կեսդ խօսիս. ընդ-
դէ՞ր վերնագունի հպատակ կարգես զանազդ, և գործի
կարւոր համարիս քեզ զարծաթ, և ընդ կորուստ նո-
բին վշտովիս. 'ի լաւ մահու ամենայնդ կամ բարեկա-
միդ արտասուես, տենչաս հանգչուել, ընդ նախատա-
նոյ բանս զկնի. ընդէր յարդարուն են՝ ազարակք
քո քան զոր բնութեանն պահանջէն պէտք. հիմ ըստ
ոչ պատուիրանադրութեանդ են ընծրիք քո և չքե-
զագոյն կահք և կարասիք. հիմ հնագոյն քան զՀա-
սակ պաշտի գինի՝ի սեղանիդ. զինչ այդ բարեզար-
դութիւնք տանդ. առ ինչ տնկին ծառք որոց պտղա-
բերութիւնք ստուերք միայն են. Էր վասն կին քո
զՀաս Ադամ և Հարուստ տան միոյ յահակնէս իւր կրէ.
Էր վասն մանուկն որ ընդ դաստիարակաւ՝ 'ի մեծա-
գին պաշտն պատուհասն. զինչ այդ արուեստ պաշտելոյ
սպասուցն 'ի սեղանիդ. հիմ ոչ յախտուն որպէս գիարգ
և խոտ արծաթիքն զետեղին, այլ Հարստարութեամբ
մեծաւ յարմարեալ. է քո տէր և վարժապետ գիտո-
տիկն յօշելոյ. Յաւել, եթէ կամիս, թէ ընդէր և
յայնկոյս ծովու կալուածք խոտն քո, ընդէր առաւելա-
գոյն քան զոր մարթի խոտ քեզ Հանապէտ. կամ զի անփոյթ
ես յոյժ և զսակաւ ծառայող չհանապէս, և կամ կարի
զեղն, և այնչափ զթիւ նոցա յաւելուս՝ մինչև չկարել
յուշի ունել զնոսա, որոց և երկաբանչիւրն չար է. —
Այս ես ինքնին սատարեցից քեզ՝ի պրատմանագ, յոր-
վագոյնս քան զոր կարծես ինձ՝ի դէմս բերելով. այլ
այժմ զայս տամ քեզ պատասխանի. Ոչ եմ ես խնաստուն,
և զի ըստ չարութեան սրտիդ խօսեցայց, և ոչ իսկ ե-
դեց. Օ այն արդ պահանջեմ յանձնէս, ոչ զի գերակա-
տարիցն իցեմ Հաւասար, այլ զի լաւ քան զվատթարն
գտայց. Պէտ է ինձ և այն թէ օր ըստ օրէ կարճել
զինչ յախտիցս մարթացայց և զսխալանս իմ յանդիման

նել։ Ալեզ ժամն յառաջութիւն և ոչ իսկ եղեց արդեօք. այլ մեզմացուցանել մանաւանդ քան թէ բուժել զտանաւորութիւնն իմ հնարիմ, շատ համարեալ զի ոչ ստեպ զայրացի և գրգռեացի ցաւովք։ Կաղ ձեզ թէ համեմատեցայց՝ ընթանամ։ Թէպետ և մեզմով։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՏԱՍՆԵՐՈՐԴ

Ոչ զանձնէ ասեմ զայսոսիկ, զի ես ի խորս եմ ախտից, այլ զնմանէ՝ որ յառաջադէմն իսկ է։ — Ալլազդ խօսիս ասէ, և այլազգ կեաս։ — Այդ իսկ, ով խեղաթիւրեալդ մտօք և ամենայն բարեաց թշնամի, և Պղատոնի և Արիկոսեայ և Ենանի՛ դէմն ածաս, զի և նոքա առհասարակ ոչ որպէս կէինն վարդապետէին, այլ թէ որպէս արժան իցէ կեալ։ Առաքինութենէ՛ է բանս և ոչ զանձնէս. և՛ ի նշանակել իմում զմոլութիւնս՝ յիմոյն նախ սկսայց, և երբ կարող եղեց՝ կէցից որպէս պարտն է։ Իբրև ոչ վասն թունալից չարաբանութեանցդ կասեցայց ինչ՛ի լուսագունից անտի, և ոչ մահադեղ այդ՝ որով զայլս վարակեալ՝ զանձինս սպանանէք, ոչ ինչ արգելուցու զիս առ՛ի չգովելոյ զկեանսն, ոչ զոր եմն վարեմ; այլ զոր պատշաճ համարիմ՛ի վարել, և առ՛ի չպաշտելոյ զառաքինութիւնն, որում՛ի բացուստ՝ իբրև ընդ քարշ բերեալ՝ զկետ ընթանամ։ Իսկ զի զիմդրդ։ իցէ՞ բնաւ ակն ունել թէ գոյի ինչ կերտ և անբռնաբարելի՛ ի չարակամութենէ անտի՛ որ և ոչ՛ի Հռուտիղոսս խնայեաց, և ոչ՛ի Կատոնի։ Իբրև որոց Վեմերտիոս Կիւնիկեան ոչ որպէս պարտն էր աղքատ թուեցաւ՝ ո՛ր ոչ Հոմագոյն քան զարժանն թուեցայ։ Ոչ այլոյ զայն խստակեաց և մրցող ընդդէմ ամենայն ցանկութենից քնութեան, և այնու և աղքատագոյն քան զայլս՛ի Կիւնիկեանց՝ զի ոչ միայն զունելն՝ այլ և զնդրեւն ինչ արգելոյր անձին, տակաւին չհամարին տիրապէս աղքատ։ Ցեսուսեն զշաղփաղփանդ. որպէս թէ ոչ առաքինութեան զկետ կրթեալ էր Վեմերտեայ այլ աղքատութեան։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Ո՛Դ ՈՐ ինաստասէր Յակիւբեան որ ի սակաւ առուրս իւրովի վախճան արար կենացս, ստգտանէն ոչ ըստ Յակիւբայ պատուիրանին արարեալ կարձելով ինքնին զպէտս կերակրոյն, և համարին կենաց անմոռաթեամբ գործեցեալ և կենաց յանդգնութեամբ։ Յոկ ինքն երանելի և լի վստահութեամբ յանստգիտ խիղճ մտացն՝ յելս իւր ի կենաց վկայեաց զանձնէ գովելով զանդորրութեան կենանն՝ որպէս ի նաւահանգստի խաղխաղ ի ծով ամիացեալ. և ասաց զբանն զայն զան հաձոյն ձեզ, որպէս թէ զնայս և ձեզ պարտ իցէ առնել.

"Կեցի, զբախտին լըցեալ սահման կենաղրաւ ,,։

Ո՛ միշն կենացն, և զմիւսոյն մնդուանէն վիճեք. և ի լուր անուան մեծարոյ արանց նշանաւոր եղելոց պանծալի գովութեամբք, որպէս անձանութիւ դիպեալք՝ իբրև զսկունդս հաղեք ։ Ո՛ ան զի տեսիլ բարւոյն դժպհի է ձեզ, և պյլոյն առաքինութիւնք ի յանդիմանութիւն են ախտիցդ ձերոց. ծանր է ձեզ զվէհան նշողեալ՝ ընդ գարշելին ձեր հանմատել, և չխանայք և ոչ առնուք ի միտ թէ յանդգնութիւն ձեր այդ որպէս զձեր կողմն ձգնիցէ ։ Ո՛ ի թէ որք առաքինութեանց են հետամուտք՝ արծաթասէրք իցեն և ցանկասէրք և փառասէրք, զինչ դուք իցէք ապա, որոց և անուն իսկ առաքինութեան տաել է ։ Ո՛ ի՞ք ոք, ասէք, որ զբանն պահեսցէ և հանգոյն ասացելոցն զկեանսն յարդարեսցէ, Ո՛ չ զինչ զարմանք իցեն, տեսանիցէք որպէս զարք ձրագունից և զարհատաց խօսիցին և զգեր ի վերոյ ամբարձելոց զամենայն կենցաղական յեղափոխութեամբք. որպէս կորզել հնարին զանձինս ի խաչից անտի, յորս իւրաքանչիւր ոք ի ձէնջ ամիասինդ և ս բևեռի օր ըստօրէ, և թէ տանջէին և ս՝ մէն մի զմիոյ փայտէ կախեալ տանջին ։ Յոկ նոցա որք անձամբ զանձինս պատուհասեն, ոչ ցանկութիւնք իցեն՝ նոյն-

չափ և փայտը տանջանաց, և սակայն ՚ի Թշնամանել զայլս տակաւին զուարճախօս են չարաչեզոքն։ Կ՚ցաւոս յայնմանէ համարէի զնոսա արդարև եթէ չտեսանէի զամենս զի ՚ի կախաղանէ անտի փայտին Թքանէին ընդ հայեցողսն ՚ի նոսա։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Ո՞ր ասէին՝ չառնէն խնամատարեք. բայց բազում ինչ առնեն զի ասեն և զի խորհին ողջախոհ մեռօք։ Ո՞ի Թէ և զամենայն ատացեալսն առնէին, ո՞ր է բանելի գոյր քան զնոսա։ Կայց քեզ չէր պատա անգամանել զանաս բարիս, և զսիրտս լցեալս խորհրդովք բարեաց։ Պռավելի են Ճառք փրկաւէտ վարդապետուԹեանց, Թէպէտ և վրէպք ՚ի գործոց գտանիցին։ Ո՞ինչ զարմանք եԹէ վեանիցեն ՚ի բարձունս դիմեալքն ընդ առապարս. այլ դու նայեաց ընդ մեծ Հիզն պարանցն՝ Թէպէտ և անկանիցին իսկ ՚ի Վհաձանց է գործ ոչ յիւրականն այլ ՚ի բնութեանն իւրոյ հայեցեալ ոյժ, ՚ի բարձրագոյնս ձկտիլ, փորձ փորձել և բերիլ մեռօք ՚ի խորհուրդս վեհագոյն քան զկար զօրուԹեան Հոխացեալքն իսկ բարձրագոյն Հանձարով։ Ո՞ր ուխտ եղ ընդ անձին՝ զի այնու դիմեք որով լսէն՝ ընկալցի զնոյ. զի տակացուկ աշխատուԹեանց ամենայնի որչափ և բազումք իցեն՝ զտկարութիւն մարմնոյն Հոգւով կազդուրեալ. զի արհամարհեսցէ բղխութիւնս՝ եԹէ զնիւթատուրն և եԹէ զՀեռատուրս, ոչ ՚ի խուսափել նոցա յիւրմէ՝ տարմելով, և ոչ ՚ի նշողելն զնոսա իւրոխտալով. զի չՀոգասցէ առնելին ընդ մտել և ընդ հեռանալ բախտին յիւրմէ. զի զերկիւղ համօրէն իւր համարեսցի և զնոյն այլոց. զի կեցցէ որպէս վասն այլոց ծնեալ, և վասն այնորիկ իսկ չարչա կացցի բնութեան, որ զի չմարԹէը մեծ և ինչ առնել նմա չարչ, զինչն միայնակ պարգևելով առնեցուն և միւսմ ինքեան զամենեսեան. զի զոր ոչ նմին ոչ պահեսցէ ազահաբար և ոչ վատնեսցէ չնայելով Թեամբ, ոչ առնի զրելով իւր ստացուած՝ բայց զոր

պարգևէն արժանապէս . զի ոչ չափով և կշռով բա-
բերարեցէ , և ոչ աւելի ինչ քան զերախտաւորն զե-
րախտիսն մեծարեցէ , և ոչ ինչ երբեք չատ համա-
րեցէ զոր արժանապէս ընդունի ոք . զի ոչ ըստ հա-
ճոյից ինչ գործեցէ , այլ զամենայնն խղճի մտօք ակ-
նեբև աչխարհի համարեալ զոր գործէն ՚ի ծածուկ .
զի ոչ կերիցէ և ոչ զգենուցու առ ՚ի ընուլ և զա-
տարկել զղովչելն , այլ ՚ի պէտս կարեաց բնութեան .
զի զուարթամիտ իցէ առ բարեկամն և հեզահամ
բոյր առ թշնամիս՝ զիջանելով մինչ չև իցէ աղաչեցեալ
և կանխելով ՚ի կատարումն պատշաճ հայցուածոց .
զի զաչխարհ համարէն համարեացի իւր զաւառ հայ-
րենի և տեսուչ ամենայնի զղիս , որք չուրջ զիւրև
և ՚ի վերայ իւր կան քննիչք և ստիկան ամենայն
բանից և գործոց . և զի ՚ի պահանջել բնութեան զՀո-
գին և կամ յարձակել զայն բանիւն՝ ելանիցէ անդի-
մադարձ՝ վիայութիւն եդեալ զի սիրեաց միշտ զարդար
խիղճ մտաց և զառ ՚ի բարին ջանան , և զի ոչ ուրուք
զաղատութիւնն զրկեաց Թող Թէ զիւրն .

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՒԱՋՆԵՐՈՐԴ

ԱՒ զայս ամենայն առնել ՚ի մտի եդ՝ կամի և ջա-
նայ այնպիսին ՚ի նմանութիւն անդը աստուածոյ հոր-
դել Հանապարհ . և Թէպէտ ոչ Համարէն ածցէ զգ-
բառաբ՝ զորոց բուռն Հարեալն է , սակայն ՚ի բարձրագու-
նիցն գեԹ յեռանեցի : Իսկ գուբ առեցողք առաքի-
նութեան և որոց այնմ իցեն հետաւուտք՝ ոչ նոր ինչ
առնէք . քանզի և այսցաւբ զանգիտեն յարեգակնէ .
և գիշերասէրք ՚ի կենդանեաց՝ առեան զտիւ լուսա-
պայծառ . և ՚ի ծագմանէ նորին ՀարԹուցեալք փութան
՚ի խշտիս , և ՚ի ծերպս ուրէք զուլակին ահաբեկք ՚ի
լուսոյ : Հեծեծարուբ աղէ և զլեզուս ձեր Ժանտս սրե-
ցէք ՚ի թշնամանս լուսոյ . յանուանէցարուբ սիրեցարուբ
և խածատեցէք , այլ վաղ ընդ փոխ խորտակեսցին
ատամունք ձեր մինչ չև ազգեալ ՚ի նոսա : — Իսդէք
այն որ խնատասէր պանծացեալ և փարԹամագոյն վարէ

կեանս. Էր վարդապետ արհամարհել զինչս, և ինքն վարի նոքօք. զկեանս անսգամ ուսուցանէ արհամարհել, և սակայն կեայ. զառողջութիւն ասէ արհամարհել, և սակայն պահպանէ խնամով լաւագոյն զքաջողջութիւնն համարեալ։ Օ աքսորանս անուն լուկ վարկանի. զինչ չար իցէ, ասէ, փոխել զգաւառս. և սակայն՝ ի հայրենիսն ցանկալ ծերանալ։ Ունդ երկար և ընդ սուղ կեանս չդնէ ինչ խոտր. սակայն հնարի յերկարաձգել զաւուրս իւր և՝ ի խոր ծերութեան առոյգանալ ախորժէ։—Արհամարհել զայդոսիկ ասաց, ովդու, ոչ զի չուներիցէ՝ այլ զի մի հոգասցի ընդ այնոսիկ, ոչ զի յանձնէ՝ ի բաց վարեսցէ, այլ փախուցելոյն անխոռով զՀետ երթիցէ։ Չէ ուր այլ յապահովի աւանդեսցէ բախտն զմեծութիւնս իւր, որպէս անդր՝ ուստի առնուցու անդրէն յետս անտրտունջ յաւանդառուէն։ Արիւոսի կատուներ՝ ի գովել անգ զԼուսիոս և զԼուսինդիոս, և զգալն զայն յորում՝ ի մեզս համարեալ էր և ընդ դատաստանաւ անկեալ համարակալաց՝ ունել թիթեղուս ինչ արծաթիս, էին իւր քառասուն բիւրք սեստերտից. նուազագոյն արդարև քան զԼրասոսին, այլ աւելի քան զկատուին համարակալի։ Չէ եթէ՝ ի կշիռ համեմատութեան ձգեսցէ զբ՝ մեծաւ առաւելութեամբ յաղթէ կատուին հաւուն իւրոյ քան թէ Լրասոս կատուին։ Չէ թէպետ տարտագոյն ևս գոյին նմա մեծութիւնք, ոչ մերժէր. զի ոչ եթէ անարժան պարգևաց բախտի համարի զանձն խնաստունն։ Ոչ սիրէ զմեծութիւնս, այլ ընտրելագոյն համարի. ոչ՝ի հոգին, այլ՝ի տունն ընդունի զնոսին. ոչ՝ի բաց ընկենուլ զոր ունին, այլ պահէ և խնդրէ նոքօք պատճ՝ի ցոյց մեծագունի իւրումն առաքինութեան։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Չի՞ երկբայեսցի երբեք զի մեծ ևս պատճ առաջի կայ առն խնաստնոյ՝ի հանգէս առաքինութեանց հոգւոյ իւրոյ՝ի մեծութեան քան չաղքատութեան. զի չաղքատութեան միոյ ևեթ առաքինութեան է հանդէս՝ չընկճելոյ և չվհատելոյ. իսկ՝ի մեծութեան

ասպարէզ լայնածաւալ բացեալ կայ առաջի բարեխառնութեան, առատաձեռնութեան, երկասիրութեան, անտեսութեան և մեծագործութեան։ Եւ անդամակ զանձն իւր խնամատուն, զի կարճ է հասակաւ. բայց հա՛ ձկացոյցն էա էր նմա լինել բարձրահասակ. տակաւ իսկ մարմնով և զիրկ յաչաց՝ թէպէտ և կէցցէ, բայց ցանկայր մանաւանդ կորովի գոլ մարմնով. և այս ոչ վայրապար արդեօք, այլ զի լաւագոյն և կարևորագոյն զայն համարի։ Ա՛յ առատաձեռնութեան տարեալ, քաջողջութեան ցանկայ. քանզի և էն ինչ առաւելութիւնք որք թէպէտ ոչ մեծ ինչ իրք իցեն և առանց իսկ այնոցիկ մարթի իցէ տիրապէս բարւոյն կալ ճաշակ անեղծ և անկործան, սակայն յաւելուն ինչ յայն առ՛ի բերկրութիւն յաւերժական, որ ծնունդն է առաքինութեան։ Ա՛յնպէս ցանկալի և զուարթարար են իմանալոյ ձնխութիւնք, որպէս նաւորդի հողմն ախոռակ և ուղղաշունչ. որպէս օր պայծառ՝ ի ձմերանի և՛ ի սառնամանիս տեղն արեգական։ Ա՛յդ իցէ որ յիմանալոց, զմերոցն ասեմ, առ որս միայն բարի առաքինութիւնն է, որ առ բնաւ լինիցի թէ և այնոցիկ անկարևոր առ՛ի միջոց կոչեցեալ առաւելութեանց իցէ ինչ յարգ և միոյն առաւել քան զմիւսոյն. են յայնմանէ որ պատուականք հասմարին և են որ պատուականագոյնք. և զի մի խաբիցիս՝ գիտեա զի մեծութիւնք չըներականաց անտի են։ Ա՛կառ ինչ ասա, ասիցես, ծաղրես զիս՝ երբ որպէս ինձ՝ և քեզ իսկ նոյնպէս պատուականագոյն թուին այնքիկ։ — Ա՛մենայն գիտել, թէ ոչ ամենևին նոյնպէս թուիցին. չինէն եթէ պակասեսցին մեծութիւնք՝ այլ ինչ չըառնան ընդ իւրեանս. իսկ՝ ի քէն թէ մեկնեսցին՝ շուարեալ տագնապիս, և զքեզ՝ ի քէն համարիս բարձեալ։ Ա՛յլ իս մեծութիւնքն ունին ինչ տեղի. իսկ առ քեզ զգեցագոյնն. և համայն ասել, մեծութիւնքն իմ են, իսկ դու մեծութեանց.

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԲՈՐԴ

Մ՚ասպա արգելուը խնամատարից զինչ. ոչ ոք զխնամատարութիւնն զատապարտեաց յաղքատութիւն։ Մ՚արթ է խնամատարին ունել Հոգաբարձութիւնս բազումս, բայց ոչ՚ի չափաւորութենէ, և ոչ արեամբ պղծոց շահեսել, այլ առանց զրկելոյ զոք և առանց ամօթալի շահուց. և որպէս մուրք նոցին, համեստագոյն և եղբեր իցեն, ընդ որս ոչ ոք զժկամակեսցի՝ բայց չարաչին։ Յաւել կուտել զայնսոսիկ որչափ և կամիցիս՝ չիցեն երբեք անհամեստք. և թէպէտ իցեն ոք ցանկանայցեն մասին ինչ այնոցիկ, բայց չիցէ և ոչ ոք որ կարասցէ ասել թէ իցէ ինչ իւր մասն՚ի նոսա։ Ոչ մերժէ խնամատարն զնուրէս բահտին. և ընդ ժառանգութեէ պատշաճապէս ստացեալ համեստութեամբ՝ ոչ պղծէի և ոչ ամպէ։ Մ՚այլ յայն պարծեսցի եթէ բացեալ զտունն և ընկալեալ անդր զբաղաքացիսն և հանդէս արարեալ իւրոց ընչից՝ կարասցէ ասել. Օ՚որ ինչ ոք զիւր տեսցէ՚ի տունս, բարձցէ։ Այլ մեծի առնն, ոյլ ամենալաւ մեծատան, եթէ զուգաձայն բարբառոյն և արդիւնքն գոցին. և յետ բարբառոյն իսկ նոյնչափ կացցէն ճնասցէն ձնխութենքն։ Մ՚այո, եթէ աներկեւան վստահութեամբ տեղի տայցէ խուզարկութեան ժողովրդեանն, եթէ չգոցի ինչ առ նմա յոր ձեռն ոք ձգիցէ, այնպիսին հաւատձակութեամբ և յայտ յանդիման աչխարհի լիցի մեծատուն։ Որպէս զարծաթ անիրաւ և անարժան ընդ սեամն իսկ տանն չընդունի խնամատարն, նոյնպէս չարաստաքսեալ և չհանի՚ի բաց զհոգս մեծութենէն, զպարգեւս բահտին և զարգասիս առաքինութեան։ Իսկ ընդէր իցէ նմա չարաչինել և չտալ նոցա զպատուական տեղին. Թող գայցեն և օթեւցին։ Ոչ ցրուեսցէ զնոսա, և ոչ դիցէ՚ի թաքստի. զի մին ցնորելոյ է գործ և միւսն երկչոտի և փոքրոգւոյ, որպէս թէ մեծ ինչ և չնաչխար հիկ ծրարիցէ՚ի ծոցին։ Այլ և ոչ, որպէս ասացի, արտաքս ընկենու զնոսա՚ի տանէ. զի զինչ ասիցէ ցնոսա թէ “զի անպիտանք էք ինձ,,. եթէ “չգիտեմ ես

վարել մեծութեամբք ,, ։ Օ որ օրինակ և հետիոտս իսկ ձանապարհորդել կարացեալ, բայց ընտրե ելանել ի կառս, սոյնպէս եթէ կարող իցէ մեծանալ՝ մեծանայ և ունի զհոխութիւնն որպէս թէ ևս ինչ և փախըս տեայս, և չառնու յանձն՝ զի ծանրասցին ինքեան կամ այլոմ։ Պարգևէ . . . . . Ա՛ւ զի ուղղեցէք զակամնջոգ, և զգոգս ձեր բանայք ։ Պարգևէ բարեաց, կամ զորս յուսոյ ածել ի բարութիւն ։ Պարգևէ իմաստութեամբ մեծաւ զարժանաւորսն ընտրելով, զի գիտէ թէ որպէս զառելոցն՝ նոյնպէս և զտուելոցն պահանջեսցի հանապա ։ Պարգևէ ուղղութեամբ և ի հաւանութենէ մնաց. զի չարաչար պարգևաբաշխութիւն՝ չհայրութիւն իմն է ամենայն ։ Ասաց են գոգք նորա՝ այլ ոչ ծակոտեալ, շատ ինչ ելանէ անտի, այլ չանկանի ի բաց և ոչ ինչ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՁՈՐՐՈՐԴ

Ա՛յժմ որ զիւրին ինչ զպարգևաբաշխութիւնն հայմարիցի՝ սխալէ ։ Ա՛ղմնապատիկ դժուարութիւնք են յայնմ, միայն թէ խնամութեամբ ոք պարգևել կամիցի և ոչ յախտուն և ըստ դէպս ցրուել ։ Օ այս որ ի սեր յանկուցանեմ, այլոմ հատուցանեմ զնէր . միամ ի թիկունս հասանեմ, միւսումն գիամ, զայն որ կազդուրեմ, զի մի անձինն արժանաւոր գրաւեալ ընկճեսցի ընդ աղքատութեամբ ։ Ա՛մենց ոչ տամ թէ և չունիցին. զի թէ տաց ևս՝ ի չիք դարձցի . են որոց ընծայեմ, և են զորս ստիպեմ առնուլ ։ Ա՛նհարթ է ինձ անիրացի լինել յայս գործ կարևոր . ոչ ուրեք այնպէս շահաբեր իցէ ինձ արծաթ որպէս ի պարգևելն ։ Ա՛ւ զինչ մեծ իցէ, ասիցես . տաս ուրեմն զի առնուցուս անդրէն զնէրն . — Ա՛յ, այլ տամ զի մի կորուսից ։ Ա՛յմ պարտ է տալ զպարգևսն, յորմէ չիցէ օրէն յետս պահանջել, բայց բաւական իցէ ի հատուցումն ։

Ա՛յսպէս զետեղեսցի բարեբարութիւն, որպէս գանձ ի խորս թաղեալ, զոր մի լիցի քեզ Հանել մինչ ևս ստիպեալ ի հարկէն ։ Ա՛ւ ահա և գերդաստանն ինքնին Հոխ մեծատանն պատեհս յաձախատարս մնասցյանէ ի քա-

բերարել. Օ ի՛նչ զառատաձեռնութիւն առ ազատ քաղաքացիսն Աթենայ մարդկան՝ եթէ ծառայք իցեն և եթէ ազատք, բնիկք կամ ազատագրեալք, լիուլի կամ ստոյգ՝ ազատութեամբ կամ թէ առաջի բարեկամաց և եթէ ազատացեալք, չէ ինչ փոյթ. զի ուր մարդ է՝ անդ և տեղի բարերարելոյ։ Այսպա ուրեմն մարթէ իմաստնոյն և յիւրում սահմանին և ի տան բաշխել զինչսն՝ զառատաձեռնութիւն ի վար արկեալ՝ որ և զառատանութիւն՝ յորջորջի՝ ոչ զի ազատաց տալ պարտ իցէ՝ այլ ազատութեամբ ոգւոյ։ Իմաստնոյն առատաձեռնութիւն ոչ ի վատնարս բերի երբեք և յանարժանս, և ոչ տկարանայ ցայն վայր զի ի պատահելարժանաւորին ոչ լիուլի զպարգևսն զեղուցու։ Այլ զի այսոքիկ այսպէս՝ մի՛ լեցի ձեզ ապա զքաջայանդուգն, զարիական և զպատշաճապէս առացեալսն յիմաստասիրաց չարաչար իմանալ։ Այլ այս ինչ նախ յոլով լեցի ձեզ զի խոր մեծ է ընդ հետամուտն իմաստութեան և ընդ իմաստուն որ կատարեալ իցէ՝ ի նմին։ Զաքինին ի նոցանէ ասեցէք ցքեզ. “Արիւ են յոյժ բանքս, այլ ես զեռ ի բազում չարիս թարթափիմ, մի՛ ըստ բանից վարդապետութեանս զիս զատիցիս՝ մինդեռ ջանամն և հնարիմ կըրթել զանձն իմ և յարդարել և ի գերակատարն թևաւ կոխել օրինակ. յորժամ յառաջադիմիս իմ նպատակ եղիցէ ժամանն՝ յայնժամ պահանջեա յինէն զի բանիցս հաւասարեսցին և գործք.։ Իսկ որ ի կատարն հասեալ է մարդկայնոյ լաւութեան, այլազգաբար խօսելոյն ընդ քեզ և ասիցէ. “Այսքան զամենայն չէ քեզ իւիմաստութեան զբաւագոյնս քան զքեզ գտեալց, և այն իսկ զի անհաճոյ եմ չարաց՝ նշանակ ուղղութեանս իմոյ է և առաքինութեանս։ Այլ զի տաց քեզ հաւատիս թէ ոչ ումեք ի մանկամացուացս բերիմ ի նախանձ՝ լուր զոր յանձն առեալ է իմ և թէ ողբա-

---

1 Այլ և այլ օրինակաւ ազատագրելին սպրուկք առ Հռովմայեցիս, մերթ օրինօք և առնենական կարգաւք որ և կոչէր Աւոյժ կամ Լիուլի ազատութիւն. մերթ կռակաւ և մերթ ևս ի ժողովի բարեկամաց յայտ արար խոստմամբ. և յայսոսիկ անդարձելին բանք Սենեկայի։

2 Ի Լատին Լիբերտինոս որ ի Լիբեր, ազատ բառէն ածանցեալ՝ զնոյն ունի նշանակութիւն որ ինչ ազատաւորն ի մեզ։

նմ՝ Համարիցիմ զնոս իւրաքանչիւր ։ Օ Տ՛ոխուԹիւնս չՀամարիմ բարի ինչ, զի ԹԷ ելից՝ բարիս առնելին և զատացողս. և արդ քանզի անարԺ է բարի ասել զայն ինչ՝ որ ստգտանելի է առ չարս, չտամ նոցա զայդ անուն, այլ խոստովանիմ և ԷԹ զի տանջալ մարԺ է զայնոսիկ. քանզի պիտանիք են և մեծապէս գիւրիչք կենաց ,, ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Այլ զի կողմանք երկաքանչիւր միաբանիմք յայնմ ԹԷ մարԺի իցէ տանջալ Տ՛ոխուԹիւնս, ընդէր ապա ոչ ընդ բարիս Համարիցիմ ես զայնոսիկ, կամ ԹԷ իւ այլազգաբար ի քէն բերիցեմ կարծիս գնացանէ՝ լուր ։ Այս կացս զիս ի տուն վնացեալ Տ՛ոխուԹեամբ՝ ուր ոսկի և արծաԹ խառն ի խուռն վարիցին ի պէտս, ոչ պատուական զանձն իմ Համարեցայց վասն այնոցիկ, որք ԹԷպէտ և շուրջ զնիւ կան՝ բայց արտաքոյ իմ են ։ Այս զիս անտի և տարեալ կացուսցես ի փայտեայ կամրջին ի խուճքս մուրողացն, և ոչ վասն այնորիկ անարգեցից զանձն իմ՝ զի ընդ այնսիկ նստիմ որք ձեռս յողորմուԹիւն կարկառեն ։ Օ ինչ փոյԹ իցէ զի կատարակ Հացի պակասիցէ այմ՝ որում առ ձեռն կայցէ մեռանել ։ Այսակայն ընարեալագոյն քան զկամարջին Համարիմ զտուչն մեծապայծառ ։ Հանդերձանք չքեղք և ազնիւ սպասք Թող վաեւցին զնիւ, ոչ առեալ ինչ երանելի զանձն իմ զրեցից զի փափուկս զգենում և ծիլրանիք ի ներքոյ իմ տարածանին ի խնջոյս. և ոչ Թշուառագոյն գարձեալ՝ եԹէ խանջ պարանոց Հանպիսի ի բարձ խոտեղէն, կամ զմարմին իմ առցի խշտեակ կրկիսեան [1], ընդ որոյ Հնոտի և կարկատուն կտաւոյն կարանան ներքինքն ի դուրս բերիցին ։ Այս սակայն զինչ. Տ՛ամոյա-

1 Կրկիսեան խշտեակ՝ վեհատ և զկարծր անկողինս է իմանալ. և պատճառք կրկիսեան անուանակոչուԹեանս այն իցէ ԹԷպես, զի ի կրկիսեան խաղս երբեմն ազգացն այնպիսեաք սովոր էին վարել խըշտեակք ։

գոյն է ինձ հանդէս առնել ոգւոյ իմոյ՝ նորս և պարկեշտս զգեցեալ քան մերկ կամ կիսաբաց թիկամբք։ Արդ առաքք իմ հաճոքին ըստ հաճոյս իմ անցանիցեն, և բարօրութիւնք նորանորք զիմիմանս յաջորդեսցեն, ոչ վասն այդորիկ հաճեսցի անձն իմ ընդ իս։ Արդ հակառակն՝ յետսախոհեսցին երեսք ժամանակին. աստի և անտի յաճախեսցեն ի վերայ իմ հարուածք ինաստուց, սպոյ, պէսպէս աղետից, և չիցէ ինձ և ոչ ժամի առանց անձկութեանց. ոչ վասն այդորիկ Թշուառ զանձն իմ ասացից և ոչ զի յաւուրցս անիծեցից. քանզի վաղուց ևս յառաջագոյն լեալ է իմ զի չիցէ վասն իմոր սեաւ։ Այլ սակայն զինչ. ընտրեմ մանաւանդ զուրախութիւն ի չափու ունել քան ցաւոց հանդուրժել։

Օ այդ քեզ և Սոկրատէս ինքնին ասասցէ. Պիր զիս յաղթող ազգաց և ազանց. և դիմախեաւն կառք բերք կրակից՝ ձգեսցեն զիս յաղթական ի դրանցն արեւու մինչև ցիմերէ. օրէնս չինէն խնդրեսցեն թագաւորք Պարսից. և ընդ ամենայն ուրեք աստուածազարք պատուեալ՝ յայնժամ մանաւանդ յուշ լիցի ինձ զի մարդ եմ մահկանացու։ Պերճաբարբառ բարձրութեանն այնմիկ հնչուպ ընդ հնչուպ թնդ յաջորդեսցէ կործանումն գահավիժ, և ի սպրկան գերեվար թշնամւոյն ածայց ի շուք փառաց հանդիսի գոռոզ և վայրագ յաղթականին. այլ ոչ նկուն ինչ գոյացց ոգւով զՀետ կառաց յաղթականին ձգեալ՝ քան զոր յիմումն էի։ Այլ սակայն զինչ. զյաղթութիւն ընտրեմ առաւել քան զգերութիւն։ Օ այ մեծայն թագաւորութեամբ բախտին քամահեմ. այլ եթէ ընտրոյն տէր լցեմ, զևս բերկրալիցն առից ինձ անտի։ Այր ինչ և տացին ինձ՝ ի բարիս ինձ եղիցին. այլ յանկամ մանաւանդ զի հեշտիցն տացին և բերկրակաք, և որք դոյզն աշխատութիւն հատուցցեն որոց վարիցին նոքօք։

Զանց աշխատութեան և ձգանց և ոչ մի ինչ յաջառաքինութեանց ոչ յաջողեսցի. զայդ մի կարծիցես, այլ են որ խթանի ունին պէտս, և են որ սանձից։ Օ որ օրինակ ընդ զառ՝ի թափուն ընդ կրունկն՝ և՝ի վերեալ յառաջկոյս հակել պարտ է մարմնով, գնոյն է իմանալ և զառաքինութեանց՝ յորոց են որք ընդ զառ՝ի վայրն բերին, և են որք ընդ վերերն ընթանան։ Այս բնաւ

իսկ ո՞ յերկուանայցէ զի Համբերութիւն, արիութիւն, անդուլութիւն և որ այլ ևս առաքինութիւնք, որ առ հակառակն հանդիսանան և ընդ բախտին մաքառին, ո՛չ ընդ վերեւն ընթանայցեն, Ա՛ղնեսցին և միշեսցին անդուլ։ Ո՛չ ապաքէն և առատաձեռնութիւն, ժուժկալութիւն և հեզութիւն՝ յայտնապէս ընդ զառ՛ի վայրն բերին։ Ո՛ սոսա պինդ կալցուք զոգիս, զի մի գլորեսցի. ՛ի նոսին խրախոյս առեալ յորդորեսցուք. Հապա ընդդէմ աղքատութեան ուժգնագունիւքն վարեսցուք՝ որք հզօրագոյնք են ՛ի մարտի. և ՛ի մեծութիւնս զգօնագունիւքն, որք զառ՛ի վայր զընթացսն հաստատեալ՝ և զբերումն ծանրութեանն ընկրկեն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԱՅԵՐՈՐԴ

Ա՛յլ զի այսոքիկ այսպէս զանազանեալ են՝ ընտրեմ առաւել ընդ գիւրագունիցն ՛ի նոցանէ խաղալիկ և հանդարտութեամբ անցանել ընդ կիրճ, քան ընդ դժուարագունիցն՝ ընդ քիրան գալով և ընդ ապաժոյժ։ Ա՛յ ես ինչ ասա, ասէ խնամտուն, այլագոյ քան զոր խօսիմ՝ կեամ, այլ դուք այլ ընդ այլոց խնամոյք։ Ա՛ ձայն ևեթ բարբառոյն հնչեն լսելիք ձեր, և խնամոյ նոցին չլինիք խելամուտ։ Ա՛յլ զինչ խոիր է, ասէ՞ ես, ընդ յիմարս ընդ իս՝ և ընդ քեզ ընդ խնամտունդ, զի և երկաքանչիւր իսկ ախորժեմք ընդ Ճոխութիւն։

— Ի՛ սազում ինչ առնեայն իրօք։ Ա՛ ասն զի մեծութիւնք առ առն խնամոնոյ ՛ի ծառայութեան կան. առ յիմարին՝ ինքնակալեն։ Ի՛ նխնամտունն ընդերկ մեծութեանց և ոչ ինչ. ձեզ առնեայն ինչ ներեալ է ՛ի մեծութեանց։ Ա՛յո՛՝ որպէս այն թէ մխնջնեալոյր որ խոստացեալ իցէ ձեզ զժառանգութիւն մեծութեանց՝ այնպէս ընտելամայք և յարիք ՛ի նոսա. իսկ խնամտունն ՛ի խնդել անդ մեծութեանց զիւրմէ՝ յայնժամ մնաւանդ զաղքատութիւն յուշ ածէ։ Ա՛ղջախ և հաստատուն համարիցի սպարապետ զխաղաղութիւնն, սակայն պատրաստ կայ ՛ի պատերազմ, որ թէ և ոչ սկսեալ՝ բայց յայտնեալ իսկ է։ Ա՛ղեր որպէս թէ ան-

կէզ և անկործան իցէ տուն գեղեցկակերտ՝ յանհոգս կացք յանդգնութեամբ . և ձոխութիւնք՝ որպէս թէ զամենայն վտանգօք վազեալ և յաձախութեամբն իսկ արկածից բախտին յաղթականք՝ այնպէս զձեզ սալէցուցանեն : Այսպէսք յանհոգս և զբօսնութք ձոխութեամբք և ոչ յուշ լինին ձեզ վտանգք նոցուն , Օ՜ որ օրինակ խուժիցին պատահէ յաձախ պաշարելոց , որք անգէտ մնիցէն յայնց զորութեան՝ տեսանեն զգ-վաստակս պաշարողացն , և ոչ ՚ի միտ առնուն թէ առ ինչ անդ ՚ի բացեայ կազմեսցին այնոքիկ . նոյն անցք և ընդ ձեզ անցանեն . յաջողութեամբդ ձերովք ընդ-արմացեալք ոչ խորհիք թէ քանի յամենատ մծատ-լոտ դարանին ձեզ վտանգք հուպ ընդ հուպ բառնալ ՚ի ձէնջ զձոխ և զպատուական աւարդ : Ախտանոյն՝ թէ և ամենայն ձոխութիւնք բարձցին ՚ի նմանէ՝ սա-կայն կացցէն մեռեալն նման իւրքն սեփականք . զի գոհ և խրախամիտ առաջակայիւքն կացեալ և զհանդերձեալսն ինչ ոչ հոգայ : Ոկրատէս՝ և կամ այլ ոք հան-գուստիպ նմին ձոխացեալ զորութեամբ և իշխանու-թեամբ ՚ի վերայ մարդկանոց իրաց՝ ասէր . “Ի վեր քան զամենայն զայս ՚ի միտ եդի հաստատութեամբ՝ ոչ ըստ կարծեաց և ըստ վարդապետութեան ձերոյ զկեանս իմ՝ ուղղել : Օ՜ սովորականն ձեր՝ յաձախե-ցեք յամենատ զբանս . ոչ ՚ի թշնամանս համարեա-ցին ինձ այնոքիկ՝ այլ ապիկար տղայոց ձիք ,, : Օ՜ այս ասէ վիճակեաւն խնամատութեան՝ որոյ անախտութիւն ոգւոյն համարձակութիւն տայ նմա և իրատունս յան-դիմանելոյ զայլս ոչ առ ատելութեան ինչ այլ առ ՚ի դարման ուղղութեան : Յաւելու և ևս . ոչ վասն իմ ինչ՝ այլ վասն ձեր ցաւ է ինձ զի յայդ խորհուրդս կայք . որ ատեացն և նախատէ զառաքինութիւն , ու-րատ լինի յամենայն ակնկալութենէ բարեաց : Այս-խատիւք ձեր չազդեն ինչ յիս որպէս և ոչ ՚ի դիս՝ որոց զսեղանս նոցա տապալիցեն , սակայն չարութիւն սրտի և կամաց և յոչ կարելն վհատել նշաւակի : Այնպէս հանդուրժեմ լուտանաց ձերոց , որպէս ամենամեծն Այամազդ՝ շաղփաղփութեանց քերթողաց , յորոց ոմն մեւս նման ստեղծանէ , այլ ոմն եղ ջիւրս , ոմն ՚ի չնու-թիւն գիշերաքնաց զնա յանդիմանէ , և միւս ոմն

իբրև գժնեայեալ մոլեգնութեամբ ՚ի դիս . ոնի անա-
գորոյն ասէ զնա առ մարդիկ , ոնի որպէս հափտիչ և
ապականիչ պատանեաց և ազգապիղծ անգամ . և այլ
ոնի հպարտական և աւարառու թագաւորութեան Հօր
իւրոյ և օտարի . կեղծիք ամբաստանութեան որք բառ-
նան ՚ի սպառ ՚ի մարդկանէ զպատկառանս և զամօթ
մեղանչելոյ՝ եթէ այնպիսեաց հաւատայցէն աստուա-
ծոց ։ Այլ թէպէտ և ինձ ինչ ոչ տնտանէն այդոքիկ , սա-
կայն խրատ տամ ձեզ վասն ձերոյ օգտի՝ բուռն հար-
կանել զառաքինութենէ ։ Հաւատասջիք այնոցիկ որք
յերկար ժեռ կրթեալ նորա և աղաղակեն՝ իբրև մե-
ծի իմիք լեալ հետասուտ , որ օր քան զօր մեծագոյն
և երևի ։ Որպէս աստուածս պաշտեցէք զառաքինու-
թիւն և զհետամուտս նորա որպէս զպաշտօնեայս , և
՚ի լուր սրբազնութեր յիշատակի նոցուն օժանդակեցէք
լեզուաւ ։ Այլ օժանդակել՝ ինձ ինձ ոչ ՚ի նպաստ
խօսելով՝ որպէս համարին բազումք , այլ լուսթեամբ ,
որպէս հրամայեր բանիւն այնուիկ , զի անչափթ ՚ի
խառնաձայնից՝ պատշաճապէս և լուռ օրինի սրբազանքն
պաշտեսցին ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Օ ՈՐ առաւել և ևս ձեզ պատուիրել պէտք են զի
՚ի լինել բարբառոյ ՚ի դաբիրայն յայնմանէ՝ մտադիր
լուսթեամբ ընկալջիք զայն ։ Յորժամ ծնծղայս որ
իբրև երկնագղեցիկ հարկանել կեղծիցէ , յորժամ
Ճարտար որ ՚ի ցետել զմարմնոյս իւր՝ թեթև ձեռամբ
յարիւն զբազուկն և զոտս իւր ներկանիցէ , յորժամ
ընդ փողոցս ՚ի վերայ ծնգացն սողալով որ բանս ինչ

1 Վանդնոյ սովորութիւն էր առ Հռովմայեցիս ՚ի ժամ դիցա-
նուեր սրբազան պաշտամանցն լսութիւն քարոզել բանիւս Փաւեթ
Լինխոս կամ Օաե այն ինքն է Ընտրեալ կամ օծանելոյն կամ
Բերանով։ Եւ զի Փաւեթս ածանցի ՚ի բառէն Փաւօա որ նշանակէ
Պատգամաւորիմ , ընտիր , անտի առեալ յարմարէ զբանս իւր Սենե-
կայ . և զառաքինութիւն աստուածասիրալ ինն և սրբանուէր համա-
րեալ՝ անկածու լսութեամբ հրամայէ պաշտել զայն և զհետևողս
նորին զառաքինիս ։

կաղկանձեսցէ, և կամ այլ ՝ ծեր զգեցեալ կտաւիս, դարձի ՝ի գլուխ և լապտեր ՝ի ձեռին զմիջաւուրը ձայն բարձեալ զցաւումն միոյ ուրուք ՝ի դիւոյն գուժեսցէ, խուռն ընթանայք ՝ի լուր և զմիմեանց արհաւիրս յաւելեալ աստուածազդեցիկ վերայն համարիք ։ Այլ ահա Աոկրատես ՝ի բանտի անտի՝ զոր յոյնն իւրում մաքրասրտեաց ՝ի բանտի անտի՝ զոր յոյնն իւրում մաքրասրտեաց, և քան զանհնացն աքքունիս եդ պատուական, ձայն բարձեալ գոչէ . “Աղ քնութիւն Թշնամի աստուածոց և մարդկան . զինչ մեղեցուԹիւնդ այդ իցէ՝ չարահաճաւել զառաքինութիւն , և հայհոյիլ լեզուաւ պղծել զսրբութիւնս ։ Ահ գովել զաւս ոչ կարէք՝ ՝ի բաց կացէք ՝ի նոցանէ . իսկ եԹէ լըքեցի համարձակուԹեամբ վարել անոքժիցէք , ՝ի միմեանց վերայ չարձակեցարուք . զի ԹԷ չերկիւնս ՝ի վեր մղեգ նիցիք , չասցիչ ԹԷ սեղանակատուտք՝ այլ ԹԷ մնաք վաստակք գոտմիջիք ։ Ոչ սաղը և նշաւակ կացի ես երբեմն կատականացն Քրիստոխանեայ , և բովանդակ կատակերգակ բերԹողացն այն պարբ չեմ վերայ Թափեցին զԹոնտիից զաւեչս իւրեանց ։ Յորովք ծաղրեինն՝ պայծառացաւ առաքինուԹիւնս իմ . զի չասպարէս մնատուցեալ և ՝ի փորձ՝ մեծ ևս հանդիսանայ առաքինուԹիւն , և ոչ ոք այնպէս պչաւ առցէ զերուԹեան նորա որպէս որք ընդհարանն ընդ նմա ։ Որ հարկանէ զգայլախառ՝ ծանիցէ զանդուԹիւն նորա ։ Հանդոյն ինն համարեցայց զանձն իմ ժայռի սեպագլոյ յալեցանջ ծովու , զոր յամենատ բաղխեն ալիք անդուլուԹեամբ, բայց չկարեն ոչ ՝ի տեղւոջէն դնա դրդուեցուցանել, և ոչ յաձախուԹեամբ ժամանակաց և ատելք յարձակմամբ մաշել և ծախել ։ Ոչ արիք , զորմ տուեալ յարձակեցարուք , հանդուրժելով չաղԹեցից ձեզ ։ Որ ընդ կարծրագոյնս ընդհարկանի և ընդ անվհատս , ՝ի վեսս իւր վասնզ զգօրուԹիւնս անձին ։ Խնդրեցէք ինչ ձեզ ասա կակուղ և տեղիտալի , յոր հարցին նեւոք ձեր ։ Այլ զի է ձեզ գայլոց չարիսն խուզարկել և տալ վճիռ զնոցանէ ։ — Ընդէր իմաստասէրդ այդ բնականայ չասդորրու . էր միսն այն ուտէ առաստապէս ։ — Համ-

՝ Ի քուրմն Եգիպտացւոց Թուի անդարիել Աւետեայ օրք այնու Նորանշան աչարկու ձեռին և կերպարանօք Հարբեին առաւելագոյն աղդեցուԹիւն առնել ՝ի խուժանն ռամիկ և տնազաչտ ։

բէն լցեալք կեղտով՝ և զգոյն արածս պղտոց զինեք · ոչ ինչ ընդհատաք սմենևին յորոց ինքեանք զաղիր բորոտութեամբ հարեալք՝ զնիշս իմն կամ զպիսակս մաքրափայլ մարմնոյն ծաղրիցեն ։ Չանդիմանեք զՊղատն, զի խրճդրեաց զարծաթ · զՄրիստոսէ, զի էառ · զՀեմիկրիտոս, զի արհամարհեաց · զՃաիկուբոս , զի ծախեաց · և ինձ զՂեբիւտադէս և զԽեդրոս ՚ի դէմս բերէք ։ Որ պարզ բարեբարոյ իցէք թէ յաջողեսցէ ձեզ մեծոցս նմանել մտաւթեանց ։ Այլ ընդէր ոչ ՚ի թշուառութիւնս ձեր շուրջ Հայիք մանաւանդ՝ որք յամենայն կողմանց խոցոտեն զձեզ, և որ արտաքուստ յարձակեալ ՚ի վերայ , և և որ ՚ի ներքս ՚ի ձեզ բորբոքեալ ։ Ովսպէտ և անդէտք ևս իցէք ձերոյ թշուառութեանդ , սակայն ոչ ներեսցէ մարդկայնոց իրացս սահմանն զի իցէ ձեզ դիւր և պարապ յածելոյ զչեզոս ՚ի նախատինս լաւոց ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Օ ԱՁՍ դուք ոչ առնուք ՚ի միտ և ոչ ըստ պատշաճի բախտիդ ձերոյ բերէք կերպարանս , նմանեալք որոց ՚ի Թագաւոր կամ ՚ի կրկէս զուարճանայցեն՝ մինչդեռ ա՜զէտք ՚ի տունս նոցա հասեալ, և գոյժն չև ևս ազդեալ իցէ յումեքն նոցա ։ Այլ իմ Հայեցեալ ՚ի բարձրութիւնէ՝ տեսանեմ սպառնալիս իմն ամպրոպաց մեծացուցա ՚ի վերայ ձեր հասեալ , որք Թէ ոչ Հուպ ընդ Հուպ , սակայն ոչ անագանեսցեն ձայնել քան զեզ քան զարարած և Հարկանել ջնջել զձեզ և զձերդ Համայն ։ Այլ զինչ ասեմ՝ նա այժ մինչ իակ , Թէպէտ և չզգայիցէք դուք , մերկիկ իմն փոթորկեալ պղտոցուցանիմ զոգիս ձեր՝ այն ինչ մերթ խուսափիլդ և մերթ դիմիլդ ՚ի նոյնս , և վերատեալ ՚ի բարձունս և դարձեալ վայրաբերեալ զգետնիդ գահավիժ ՚ ։ . . . .

՝ Պահասին միացուածք բանից գրոցս , և Թէպէտ իցեն օրինակք ինչ որք գայթօրգի Ճառին զբանան ընդ սմա շարայարիցեն , բայց ոչ ինչ կցորդութիւն է բանից ընդ այս և ընդ այն ։ Մինայն գլխակարգութիւնն չարունակի՝ վասն սովորելոյ ոմանց ՚ի վկայութիւն կոչել զերկասին Ճառս իբրև մի համաբերալ ։

ԳԼՈՒԽՈՎԻ Ը. ՍԻՆՈԴԻՍՅ

ՀԱՏՈՒԱԾ ԳՐՈՑ

ՈՐ ՅԱՅՏՆԻ ԸՆԴՈՒՆՉՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏՈՑ

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԴՐՈՐ ՈՒԹԵՐՈՐԴ

. . . . Արհաւիրք առ հասարակ գովելի ընծայեցուցանեն մեզ զանիտս ։ Զվախտ և չիցէ մեզ յայլ ինչ օգտակար պարապել յառանձնութեան , բայց առանձնութիւնն ինքեանն օգտակար իցէ . լաւագոյնք ի միայնանալս իցեմք ։ Եւակ զինչ ելիցէ և առ ընտրելագոյնս ոմանս ի մարդկանէ մեկուսացեալք՝ ի նոցանէ կալցուք մեզ զզբ օրինակ ուղղութեան ըստ նմին զվարս մեր յարդարել . զինչ ոչ լինիցի յառանձնութեան ։ Ընդ լուցի մեզ անխափան ըզհետ երթալ զայնորիկ ընդ որ Տէ՛ւեցաքն , զի չիցէ զբ որ բազմութեամբ ամբոխին շրջելեցէ զմեզ ի դեռակիրթ խորհրդոց մտացս . անդ յայնժամ մնալի իցէ մեզ միօրինակ և անսայթաքակ վարուք յառաջ խաղալ , ոչ և պէսպէս և այլ ընդ այլոց տեսութեամբք վերդովեալք ։ Վասնզի չարեաց չար այն է՝ մոլութիւնս ընդ մոլութեանց փոխանակել . զի և ոչ չընտեսականն մեր յախտ կամք ինամբ անփոփոխք ։ Ալքք ընդ այլոց փոխանակեն Տէ՛ւեանք և չարչարեն զմեզ . և ոչ ելիցէ թիւրութեամբ և ելիցէ խորհրդոցս տանջիլք , այլ և յեղյեղուկ թեթևութեամբն ։ Վարանեալ ծփիլք և այլ յայլմէ փոփոխիլք , զոր ընտրեցաքն թողուլք , և զթողեալսն խնդրելք վերստին . ցանկութիւն և ապաշաւ զմիմեանս

փոխանակեն անդադար։ Օ՛ի՛ տեսութիւնս այլոց կամք ակնկառոյցք, և լաւ քան զամենայն այն թուի մեզ՝ որոց բազումք իցեն ցանկացողք և գովաբանք, և ոչ որ իսկապէս գովելին իցէ և ցանկալի։ Օ՛ուղիղն և զթիւր Ա՛ստուածոյ՛ ոչ գիտութեամբ ընտրեմք, այլ՛ի յառնախութենէ հետոց, յորս չիք բնաւ գետագաղ ձիցն նշմարել։ Ա՛յլոցէ որ ցիս. "Օ՛ի գործես, Աենեկա. լքանես զքո կողմն. ապաքէն այլ բարբառ է Ա՛ստուածկեանցդ ,,։ Ա՛ինչե՞ ցվախճան կենայ մերոց պարապեսցուք, ասէն, ՛ի գործ. մի դադարեսցուք երբէք գործել զՀաստարակայ օգուտ, ձեռնտու լինել միոյ միոյ, ՛ի թիւս կուտս հասանել և թշնամեաց և վաստակել ձեռաք։ Ա՛ՙէք եմք, որք յո՛ր և է հասակի հանումք երբէք պարապ, և որպէս պերճախօսն այն ասէ այլ,

"Ա՛աղաւարտիւ ըզՀերս ընկճեմք աւուրս ,, ՛.

Ա՛ՙէք եմք որոց չիք և ոչ վայրկ մի դադար միւսև ցմահ՝. նա թէ գոյր Հնար՝ և ՛ի մահուն իսկ ոչ դադարեաք։ "Օ՛ի՛ քեզ զՅպիկուրեայ օրինադրութեանցն Ձառեղ՛ի բանակին Օ՛ենսի. Թէ ընդ քո կողմն տաղտ կացեալ իցէ քո՝ էր չանցանես դասալիք՛ի միւս կողմն յայտնապէս. այլ մանն լինիս քոյոցդ ,,։ — Ա՛յս քեզ ՛ի ժամուս պատասխանի. Օ՛ինչ աւելի խնդրես դու յինէն քան նմանող լինել իմոց առաջնորդաց. և իցէ՞ ինչ՝ Թէ ոչ ուր առաքիցէն զիս՝ այլ ուր ածիցէն երթայց։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

ՅՈՒՑՈ քեզ արդ զի չիք իմ օտարացեալ երբէք՛ի վարդապետութեանցն Ա՛ստիկեանց, զի և ոչ նոքա օտարացան յիւրեանցն. Թէպետ արդարանային իսկ Թէ ոչ վարդապետութեանցն՝ այլ զօրինակաց նոցա երթային զՀետ։ Ա՛յս զոր ասեմ յերկուս տրոհեցից մասունս. նախ զայն Ձառելով Թէ մարթ է ումեք յառաջին տիոց

։ Վերգիլ. Յենեակ. գիրք Թ. 963։

տալ զանձն բոլորովին ՚ի խոհումն Չմարտութեան, ինդրել զկանոն կենաց և ՚ի նոյն կրթել զանձն յաոանձնութեան։ Այրկրորդ՝ թէ առաւելագոյն ևս իրաւամբք մարթի իցէ առնել զայդ ումեք ՚ի ծանրացեալ հասակի լցեալ զչափ ժամանակի պաշտամանցն իւրոց. և տալ զանձն յայլօրինակ գործս, ոչ ինչ ընդհատ ՚ի Ա եստեան՝ կուսանաց, որոց բաժանեալ զանս պաշտամանցն՝ ուսանիցն նախ պաշտել զԵրկրդականսն, և վարժեալք ՚ի նոյն՝ զայլս ուսուցանիցեն։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ։

ՅՈՒՏՑ ապա թէ և Աստիկեանցն հանձայն է այս վարդապետութիւն, ոչ որպէս օրէնս իմն դնելով անձին անսալ յամենայնի բանիցն Օ ենանի կամ Եսբիւսիպատոյ, այլ զի իբրեւ հարկ ստիպէ բերել ինձ ՚ի նոցա կարծիս. զի զմիոյ ուրուք կարծեաց միտ գՀետերձալ՝ ոչ արբունեաց և խորհրդականութեան է գործ, այլ կուսակցութեան։ Այսէ թէ ամենայն ինչ սահմանեալ էր Հաստատութեամբ և անսպատրուակ խոստովանեալ Չմարտութիւնն, և ոչ ինչ ՚ի սահմանելոցն փոխելիս. այլ արդ զՉմարտութիւնն ինդրեմք ընդ այնոսիկ որք ուսուցանիցեն զայն։

Արկին աղանդք զվկաւորապէս Հակառակին միմեանց վասն իրացս. Այսիկուբեանցն և Աստիկեանց. այլ և երկաքանչիւրն ընդ այլ և այլ Հանդարտութիւն։ Այսիկուբոս ասէ. "Խմաստունն ոչ միեսցի երբեք ՚ի գործս Հասարակաց պետութեան, բայց ՚ի Հարկէ իրացն բռնադատեալ.."։ Օ ենան ասէ. "Ա՝խեսցի ՚ի գործ Հասարակապետութեան[1] եթէ չարք գելցի ուստեք.."։ Ա՝յն տիրապէս ասէ ինդրել զՀանդարտութիւն, և միւսն պատճառս։ Ա՝րդ յայսոսիկ իսկ էն պատճառքն բազմապատիկք. եթէ անդարմանելի վէրք

[1] Զերեսամեայ ուխտէին Վ եստեանք զկուսութիւն, զսուտ սանն յուսուցին պարապելով, զսանսն ՚ի կրթութիւն գործոց պաշտամանցն, և զմիւս տասն ՚ի վարժապետել այլոց։

ծեալ իցէ հասարակապետութիւնն, եթէ յաւար լեալ չարաց՝ զի ոչ վայրապար Ձգնեսցի իմաստունն և ոչ յանօգուտս ծախեսցի. յաւել ևս թէ չունիցի իշխանութիւն կամ զօրութիւն բաւական. զի և ոչ հասարակապետութեանն ընդունելի է, որ տկարութեամբ մարմնոյ ախտանայցէ: Օ՞ր օրինակ խարխալեալ նաւուք չմիցի որ ՚ի ծով, և ոչ տկարութեամբ մարմնոյ տացէ զանձն ՚ի զմուռսութիւն, սոյնպէս յանկարծ և յանգնալի Ձանապարհ ոչ դիցէ զոն իւր: Ա՞րդեւ իակ իցէ ապա մինչ չև ուրուք վտանգեալ իւիք և մինչ չև զիարձ առեալ արկածից մըրկաց՝ պատսպարել յառաջ Հովի և կանուխ տալ զանձն ՚ի վարժս իմաստութեան և յայն երանելի Հանդարտութիւն, զՀետ կրթելով առաքինութեանց՝ որք կարի իակ Հանդարտեցելոցն ՚ի գէպ գան: Ա՞յանդի և այդ իակ է պարտք մարդոյ՝ օգտել այլոց, և թէ Հնար ինչ իցէ բազմաց, իակ եթէ ոչ՝ գէթ սակաւուց, գէթ մերձաւորաց, ապա թէ և այն ևս ոչ՝ անձին: Օ՞ր որ ոք օգտակար զանձն ընծայեցուցանել այլոց, զՀասարակաց վարէ գործ: Ա՞րդեւ որ վատթարացուցանէ զանձն, ոչ անձին և եթէ ՚ի ծառէ, այլ և ամենեցուն նոցա, որոց բարութեամբն կարող էր օգտել, սոյնպէս եթէ որ ՚ի լաւութիւն անձինն Ձգնի՝ նովին իակ օգտէ այլոց, զի պատրաստէ նոցա օգտատուոյց զոք:

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

ԱՐԿԱՒՆ Հասարակապետութիւնս ածցուք զմտաս, մին մեծ և իակապէս Հասարակաց տէրութիւն, յորում բռնադակին զիք և մարդիկ, որում ոչ այլ ծագ է և սահման՝ բայց զոր արեգականն սահմանէն ընդ ածք. և միւսն՝ այն յոր ծննդեամբս վիճակեցաք. և իակ այն Ա՞թենացւոցն կամ Ա՞ղքեդոնացւոց կամ որ և է այլոց պետութեանն, որ ոչ Հասարակաց իակ մարդկանն Համըրէն, այլ մասին և եթէ: Ա՞րդ էն որ երկոցուն Հասարակապետութեանցս միանգամայն կան ՚ի սպասու և մեծին և փոքուն, էն որ փոքուն միայն և էն որ մեծին

ևէթ, Աստծոյ այսմ հասարակապետութեան կարող եմք և ի հանդարտութեան ծառայել. նա մանաւանդ գուցէ լաւ և ի հանդարտութեան, ի խնդիր լինելով թէ զինչ առաքինութիւնն իցէ, մի՛ եթէ բազմապատիկ, և թէ բնութիւնն արդեօք՝ եթէ արհեստ և կրթութիւն բարիս գործեացեն զմարդիկ. մի միայն իցէ աշխարհ պարունակիչ ծովու և ցամաքի և որոց ի նոսա՝ եթէ բազումք և այլ այսպիսի ցանկալք իցեն Աստուծոյ ընդ երկինս. նիւթն ծնող առնոյնի անընդհատ գրաւեալ ընութեամբ զտիեզերս համայն, եթէ ընդհատ և դատարկութեամբ խառնեալ. Եթէ Աստուած ի զինին և եթէ գործոց իւրոց նստիցի յանդորրութ՝ եթէ և ներգործեացէ ինչ. Աղեօք արարչութեամ պարագրիցէ զամենայն, եթէ ի ներքոյ հոգւոցիցէ բովանդակ. Նմանի իցէ աշխարհս եթէ ժամանակաւոր ստեղծեալ և ընդ եղծանելիս համարեալ. Այս որ խորհին յայսոսիկ զինչ ընծայեացէ Աստուծոյ՝ բայց զայն զի մի անվկայ լիցին գործք նորա. Ապեմք յաձախս. Ոչ այլագոյն բարին և կեալ ըստ բնութեան. արդ յերկուս յայսոսիկ ծառա զմեզ բնութիւնն ի խորհել և ի գործել.

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Ոչ եմ արդ յումեքէ զոր նախն ասացաք. Այլ աղէ ոչ շատ իցեն ի ցոյց իրացդ առն իւրաքանչիւր խորազգած լինել յանձին և տեսանել զընդակից իւր զցանկութիւնն զայն մեծ իրագէտ գոլոյ անծանօթից՝ մինչև յառաջագոյն անգամ զտարձանալ. Այն իսկ բազմաք որք նաւարկեալք ընդ ծով յերկար և բազմատաժան պանդխտութեան իւրեանց շատ հանդիպին ի վարձս զգիտութիւն հեռաւոր ինչ գաղտնեաց. Այս ցանկութիւն է որ զբազմանդիսին ածէ ձգէ ի տեսարանս. սա ստիպէ զմարդիկ հետազօտել զերկոսս և քննել զգաղտնիս բնութեան, խուզարկել զնութիւնս և խելամուտ լինել բարուց խուժադուժ ազգաց. Հանձար հետաքննին ետ մեզ բնութիւնն. և իրագէտ գեղցն իւրոյ և ձարտարութեան՝ հանդիսատես զմեզ ծնաւ

բազմայեղանակ տեսարանացն իւրոց . և վայրապար արդեօք և անարգասուր լինէին այնչափ մեծամեծքն նորա չքեղ և պայծառ հրաշակերտք , աքանչելարուեստ և բիւրազգի փողփղեալք գեղեցկութեամբք՝ եթէ յանմարդի միայնութեան նշոդիկն ։ Այլ զի գիտասցես՝ թէ ոչ ՚ի տեսութիւն աւետ այլ և ՚ի քննութիւն տուան մեզ այն առնոյն , տես զոր կայանս ետ մեզ բնութիւնն ։ Ի միջավայրին առ կացոյց պարադիտէզ չուրջանակի զառնոյն . ոչ միայն կանգուն եղ զմարդն , այլ և պատշաճեալ առնելին ՚ի գիտողութիւն ՚ի բարձու զգլուխն ունելով ՚ի գիւրաշարժ պարանոցի՝ զի ըստ պարբերելոց տիեզերաց շուրջ զերեսան յածեալ յելից մինչև ցմուտս զլուսաւորացն զննեսցի զամենեսին ։ Այլ զարձեալ կենդանակս վեց կարգեաց ՚ի տուէ և վեց ՚ի գիշերի և զմի մի ՚ի մասանցն ած ՚ի տեսութիւն , որպէս զի ցուցելովքն յանտեսին և ՚ի ցանկութիւն ձգեսցէ զմարդ՝ Օ ի ոչ եթէ համարկն որպիսի ինչ և իցեն տեսանեմբ բռնադատ , այլ տեսութիւն մեր մտադիր հետազօտութեամբ հորդե իւր ձանաչարկ , և արկանէ զչիմունս ձշմարտութեան , որպէս զի ՚ի յայտնագուշից յանյայտիցն յառաջ անցեալ ՚ի խնդիր՝ գոցէ հնագոյն ինչ քան զաչխարհս ։ Աստ՛ի լուսաւորագոյ այգոցիկ սկիզբն իցէ և ծագումն . զինչ կերպարանք կէին տիեզերաց՝ մինչ չև մասանց յիւրաքանչիւր կայանս զատուցեալ . որ միտք զուշգալն ՚ի վէրին խաոնակութեան վերբերեաց և իրաց ամենայնի սահմանեաց զիւրաքանչիւր տեղի . մի՝ թէ ինքնին ՚ի քնէ ծանուցն վայրաբերիցին և թէեւ ևք սանայգէն ՚ի վեր՝ թէ զօրութիւն իմն գերագոյն օրինս ետ մարմնոց իւրաքանչիւր նուաձելով զերծուն նոցա և զծանրութիւն ։ Ձանարտութեամբ իցէ արդեօք , (որով հաստատագոյն և ցուցանի հոգի աստուածգիէն գոլ ՚ի մարդ ,) զի մասունք իմն կամ՚ցնցուղք եթերական սուրբ հրոյն թափեալք յերկիր և տարաբնակ օձագայիցին ։ Ել շատացեալք գիտութեամբ որոց երևէին մեզ՝ թափանցանց լինիմք մտօք լնդ ամուրս երկնից հետազօտել և զոր ինչ անդր քան զաչխարհս է . թէ արդեօք տարաձութիւն իմն իցէ անդնդախոր և անբաւ՝ եթէ յերեսս իւր սահմանափակ . զինչ բնութիւն իցէ արտաքոյ եղէ լոյն . խաոն ՚ի խաոնն ինչ իցէ և անկերպարան և

ընդ ամենայն ուրեք տարածեալ, թէ իսկ ինչ և նոցա ձև և կարգ և կերպարան: Հաղորդակիցք ընդ աշխարհս իմս իցեն, եթէ բացագոյնս մեկուսացեալք և ի զատ տարկետեան Թափառիկքն: Ընթաժանելիք իցեն տուրեք եղելոյն ամենայնի և որոց լինելոյն են, եթէ բազդրեալք և փոխոխելիք ամենևին: Արդեօք դիմաստիք միաեանց տարերըդդ իցեն, թէ հաշտք և անկռիւ ընդ այլևայլ Հանապարհս ի նոսն բերիցին:

Արդ որովհետև ի հետազօտութիւն ծնեալն է այսոցիկ տես թէ որչափ սուղ է ժամանակ, թէպէտ և մեծաւ խնայութեամբ իսկ վարեսցի նովաւ. զի թէպէտ և չթողացու ումեք խորել անտի՝ և ոչ անհոգութեամբ վատնեսցի ինչ, թէպէտ և ազահաբար և ի վայրկեանս ժամուցն խնայեսցի և յատաջադէմ իսկ գոյն մինչև ցլուսին սահմանի հասանի մարդկութեանս, և ոչ ինչ յորմէ ետ նմա բնութիւնն կատարեսցի ի նմանի բախտն, սակայն և այնպէս ի Հանապազումն անմահական նոցն կարի չոյժ մահկանացու է մարդ: Այսպա ուրեմն ըստ բնութեան կեաս՝ թէ ի նա ինքն բոլորալին լինիս անձնատուր և պատեհ գնա և մեծարեա զբանեացեալ ընդ նա: Այս և բնութեանն կամք այն են՝ յերկաբանչիւրն իսկ պարապել ինձ՝ ի գործ և ի տեսողական կեանս. և զերկոսեանն իսկ առնել, քանզի և տեսողական կեանք չեն անգործ:

Այլ Հարցանիցես. Այս հեշտութեան ինչ արդեօք գոյցեմ ի սոյն, ոչ այլ ինչ ինդրելով ի հայեցողութեան, բայց զանգուլ և զանպղտաստոր իմն հայեցողութիւն, որ քաղցր և և անլի զիւր գրգռանս: Այս այդ Հարցիկ և ես նոյնպէս. Ապրիլ ոգւով վարիցիս և դու ի քաղաքական կեանսդ. զի անգուլ և անհանգիստ միշտ՝ ճառնուցիս երբեք ժամ և պարապ ի մարդկայնոցս առ աստուածայինսն վերակենդդ: Օ որ օրինակ չէ գովելի գործ անմահն ամենևին ի սիրոյ առաքինութեան, և անօգուտ ի կիրթ Հանձարդ, և իբրև գործ մերկ ծնեալ, այլ Հարկ է խառնիլ սոցա և զուգիլ ընդ միմեանս, սոյնպէս և առաքինութիւն ընդունայն և անգործ որ զարդիւնս վաստակոցն երբեք ոչ ցուցանէ՝ թէ բաւատար և անկենդան է բարի: Այս ո ժխտեսցէ երբեք թէ պարտ է նմա արդեամբք և գյատաջադիմու-

Թէհնա իւր ցուցանել և ոչ յայն և Եթէ խոչհել Թէ վինչ արժան իցէ առնել, այլ և երբէք երբէք ձեռն ի գործ առնել և զխորհեալն յարդիւնս ածել։

Իսկ եթէ իւրոյնոյն չգանդաղի երբէք խնաստունն, եթէ ոչ գործոցն այլ գործք պակասեն, զիաքդ արգե- լուցուս զնա ի պարապուղոյ յանձն իւր։ Այլ առ ինչ բնաւ առանձնանայցէ խնաստունն՝ բայց առ ի գիտել զի և յառանձնութեան անդ յայնս պարտի պարապել որովք յետնոյն օգտեցցէ։ Ել մեք ինքեանն խոստովա- նիմք մեծամեծս և գործեալ Օենանի և Խրիսիպպոս քան Թէ ի զօրավարութեան կային և յիշխանու- թեան, և օրհնաղիր լինէին. զի ահա ոչ քաղաքի միայն Աթէնայ, այլ համօրէն ազգի մարդկան եղեն օրհնաղիրք։ Այլ արդ ընդէր իցէ առն բարւոյ դժպատեհ համարել զհանդարտութիւնն այդպիսի՝ որով հանդերձելոց դա- րուց լինի տնօրէն, և ոչ սակաւուց տմենից լինի քարող՝ այլ համօրէն ազգաց և ազանց, որոց են և որոց լինե- լոյն են։

Հուսկ ապա հարցանեմ. Արդեօք բան վարդապե- տիցն իւրեանց կեցին Զղէանթէս, Խրիսիպպոս և Օենան։ Ընդէրկայ տացես պատասխանի. Յամենից կեցին տմենեւին որպէս և արժան համարեցան կեալ։ Այլ սակայն ոչ որ ի նոցանէ տեսուչ եկաց Հասարակա- պետութեան։ — Ոչանգի չեղև նոցա, ասիցես, ոչ այն բախտ և ոչ մեծութիւն որ պահանջին յամենի յրնդունելութիւն տեսչութեան հասարակաց պետու- թեան։ — Այլ և այնպէս ոչ կեցին անդործ. քանա- հնար եղեն որով օրինակաւ առանձնութիւն իւրեանց օգտակարագոյն գոյի մարդկան քան զերթևեկս և զբրոնանս այլոց։ Յաղագս ինչ ասես գործեցին նոքա, Թէպէտ հրապարակաւ և ոչ ինչ։

Վարձեալ երբեակ ազգք են կենաց, և որ լաւա- գոյն իցէ ի նոսա՝ խնդրի յամենի. առաջինն՝ հեշտու- թեանց զբաղել, երկրորդն՝ ի հայեցողութիւն, և եր- րորդն՝ ի գործս։ Այլ նախ ի բաց եդեալ զվեճ և զա- տելութիւնն անհաշտ զոր ընդ այլս յաղանդասուրացն բերեմք, սեւացուք Թէ ոչ արդեօք սոքա երեքեանն ընդ այլ և այլ ձանապարհ ի մի և ի նոյն բերիցին ուշ նպատակի։ Ել որ գհեշտութիւնն ընտրեաց՝ առանց

հայեցողութեան է, և ոչ հայեցողութիւն առանց հեշտութեան, և ոչ գործառնութիւնս պարապել առանց հայեցողութեան իցէ։

Խազում ինչ խոհր է՝ ասիցես, ընդ բանն իսկ առաջադիր ուշ նպատակին և ընդ պատճէն ի վերայ այնր յաւելեալ։ Այդպէս է արդարև. սակայն և ոչ միւն առանց միւսոյն յաջողէ. ոչ սա անգործութեամբ հայեցողութեան պարապիցէ և ոչ նա գործեսցէ ինչ առանց հայեցողութեան. որպէս և ոչ միւսն՝ զորմէ ոչ բարիոք բերեմք կարծիս, գովելի համարի զհեշտութիւնն անգործ. այլ որ ի բանէն առնու զհաստատութիւն որով և նոյն ինքն հեշտակատարն աղանդ՝ է ի ներգործութեան։ Ոչ զիարդ չիցէ ի ներգործութեան, ուր ինքն իսկ Արիստոտէս ասէ. "Ոչ պատճէն հրաժարիլի ի հեշտութենէ և ցաւոց իսկ ցանկալի եթէ հեշտութեան յաջորդելոց էր ապաշաւ, կամ զոյն ցաւը ի մեծագունիցն զնս ապահովիչն"։ Ոչ չինչ ակնարկիցեն բանքս. բայց յայն՝ զի առնեցուն հաճոյական է հայեցողութիւն։ Այլք ի նոյն գիմեն, մեք ի նմին իսկ կանք, և է այն տեղի մեր և ոչ նաւահանգիստ։ Յաւել արդ և զայն զոր Խրիսոստոմն հրամայէ հանդարտեցելոյն, կեալ ի նմին ոչ իբրև ի հարկէ այլ կամաւոր ընտրութեամբ։ Հրամայեն մեզքն ի բաց կալ խնամոցն յոր և է հասարակապետութենէ։ Ոչ զի փոյթ է եթէ որով օրինակաւ գայցէ խնամոցն ի հանդարտութիւն. արդեօք զի պակասի նմա հասարակապետութիւն, եթէ ինքն հասարակապետութեան։

Եթէ չիցէ հաճ խնամոցն ընդ հասարակապետութիւն իւր՝ որպէս և չիցէ իսկ եթէ խուն ինչ նրբաչայեաց իցէ և խիստ, հարցանեմ՝ յոր հասարակապետութիւն երթեալ յարիցի։ Յունաստանցւոցն, յորում Սոկրատ զատապարտի, և Արիստոտէլ խոյս տայ՝ զի մի զատապարտեսցի. ուր առաքինութիւնն ընկճի ի նախանձուէ։ Արդ, ասիցես, մի մնասիցէ իմաստունն ի հասարակապետութիւն այդպիսի։ Ի կար քեզ ոմանցոցն ուրեմն յարեսցի յաղվիայդն հանապազ, յորում ազատութիւն աղիտաբեր է լաւաց, յորում արհամարհութիւն ուղղութեան և արդարութեան, խժդժութիւն ընդդէմ ձշմարտաց, և առ իւրն իսկ

Թշնամեմիւն ։ Փախիլ և անտի ։ Լինել զմի ի՝ հասարակապետութեանց աճիլ ի մէջ չկել և ոչ մի որ հանդուրժել կարացել խնամոցն և կամ խնաստանն նմա ։ Այս եթէ չիք հասարակապետութեն այնպիսի , որպիսի ստեղծանեմբս մեօք , այնու հետև ամենեցուն կարևոր իցէ հանդարտութիւն առանձնութեան . զի չիք ինչ ուրեք զոր մարթ իցէ վերադասել քան զնա ։ Լինել գովեալ ուրուք զնաւարկութիւն իբրև բարի ինչ յոյժ , և առ նմին յաւելուցու թէ չէ պարտ նաւարկել ի ծով ուր ստէպ պատահեն նաւաբեկութիւնք՝ և մերիկք յեղակարծք յափշտակեալ վարեն յաձախ զղեկավարն ի հակառակն կոյս , թուի ինձ թէ արգելուցու քնաւ իսկ չարձակել զնաւն թէպետ և գովիցէ զնաւարկութիւն ՝ ։

. . . . . .

՝ Մնայ և այս Ճառ պակասաւոր ։

ԳԼՈՒԽՈՍԻ Ա. ՍԱՆԵՑՎՈՅ

ԱՌ ԵԲՈՒԿՈՍ ԼԻԲԵՐԱԼԻՍ

ՅՈՎ ԼՑԱՒ ԸՆԴԼԱՅՐՈՒԹԻՒՆՑ[1]

Le benefici

ԳԻՐՔ ԸՒՆՏԻՒ

ԳԼՈՒԽ ԱՒՆԱՏԻՒՆ

Ի մէջ բազմադիմի մոլորութեանց՝ որոց կէանն յաւուրս եւ ամիսս երդաբար, ոչ ինչ արդեօք այնպէս դժպատեհ իցէ, որպէս ինձ Թուի, ընտրեալ յարանց իբեւրալիս, իբրեւ այն զի զբարերարութիւնս ոչ առնել դիտեմք եւ ոչ առնուլ: Այլ զի ոչ պատշաճապէս տամք՝ Հարկ է զի եւ ոչ ըստ պատշաճի լցցի երախտագիտութիւն, եւ՝ի չընդունել զդարձ փոխարինին արտնջեմք անագան, զի վազ իսկ՝ի բարերարեալ մերում՝ կորուսեալ էին այնոքիկ: Այլ չեն ինչ զարմանք զի քան զբազմախոսուն եւ զմեծամեծ մոլութիւնս Հանդէպ յաձախեալ իցէ սակաւախոտութիւն: Այլ այս որպէս ինձ Թուի՝ ի յոքունց յառաջ գայ պատճառաց. նախ՝ զի ոչ արժանաւորաց բարերարեմք ընտրութեամբ, ուր՝ի տալը ումեք փոխ՝ փութով սկզբնութեան հետազօտեմք զՀայրենի ինչս եւ զկամ կարասի պատուականին. յերկիր անգէտ եւ ամուլ ոչ սերմանեմք, իսկ զբարերա-

1 Ըստ Հեթանոսական այս գիրք Յաղագս Բարերարութեանց անուանին են՝ի մատենագրութիւնս Սենեկայի: Այլ գրեաց նա զայսոսիկ առ Հոյակապ բարեկամն իւր Եբուկիոս յետ մահուան Ներոնեան կայսեր՝ի ժամանակս Կլաւդեայ:

րութիւնս տամբ անխորհրդաբար, մանաւանդ թէ՛ ի բաց ընկենումբ։ Զկարեմ իսկ ընտրել հեշտեաւ որ վատթարագոյն իցէ՝ զանազանել զբարեպարտութիւնն՝ եթէ զվիճաբանէնն պահանջել։ Զանազն այնպիսի իմն է այս փոխառութիւնն՝ յորմէ որչափ ինչ և հատուցանիցէ որ կամակար, զայն ևեթ արժան է ընդունել։ Իսկ ապերախտութիւն չար է և գարշելի, մանաւանդ զի ոչ ընչից պէտք են առ հասարակութիւնն՝ այլ սրտի. և որ մտադիրութեամբ պարտապան զանձն խոստովանի՝ երախտահատոյց է։ Իսկ եթէ յանցաւորք իցեն որք և ոչ բանիւ գերախտագիտութիւն յայտ առնեն՝ նոցին յանցանացն հաղորդակիցք եմք և մեք։ Զպաքէն ապերախտք բազումք են, այլ առաւել և մեք յաճախեմք. քանզի է զի ծանուցս կշտամբեմք որոց բարեբարեցաքն և պահանջեմք իսկ, է զի թեթևամտութեամբ իսկ և իսկ ստրկացեալ թուիմք ընդ պարգևան մեր. և է զի տրտնջեմք, և զդրդեն պատեհին խօսել՝ յերեսս տամբ կշտամբելով։ Զյսոյ օրինակաւ եղծանեմք զնորհեան, ոչ յետ բարեբարելոյն միայն՝ այլ և՝ի բարեբարելն անդ։ Օ՜ի ո՞ որ՝ի մեզ առ դրդեն աղաչանաց իսկ և իսկ չնորհեաց ինչ ումբ. ո՞ որ գիտացեալ թէ խնդրեսցէ ինչ որ՝ի նմանէ և ոչ գնակատն կենձուեաց, ոչ գերեսուն գարձոյց, ոչ զղջաղանն պատճառեաց և ձարտարութեամբ յերկարագոյն նուագօք զանհնարիչ ինչ իրաց զբանիւբ անկեալ վայրապար՝ ոչ՝ի դերև եհան զպատեհ աղաչաւորին, և ոչ ազգի ազգի հնարիւբ ապաիտ արար զմտալուտ կարեօք ընկերին։ Իսկ յանհնարս լեալ կամ յապաղեցոյց՝ այն ինքն է զլացաւ երկիւղիւ, կամ թէ խոստացաւ՝ այլ գժուարութեամբ մեծաւ՝ այլ զյօժան կենձուելով՝ այլ պատ՝ի պատ և կցկտուր բանիւբ։ Յա՜ո՞ մտադիրբ հատուսցէ զայն ինչ զոր ոչն էառ, այլ շռթեաց։ Զ՜նորհաւորատ լիցի այնմ՝ որ զերախտիս իւր՝ի բաց ընկէց հպարտութեամբ, յերեսս եհար զայրացմամբ և կամ՝ի թախանձանաց ե՜ի ժուռթենէ տաղակացեալ էտ։ Այսքի որ կարծեն թէ երախտահատոյց լինիցի նա՝ զոր յապաղմանէն տանջեաց և յերկար ակնկալութեամբ յոգիս արար տպատան։ Զգաստեացն հանգոյն և երախտագիտութիւնն լիցի նոցվինն հոգւով. նմին իրի չէ պարտ անհոգութեամբ բա-

լերսարել . զի անձին իւրում երախտապարտ է որ յան-
գիտս տուողին գողանայ զերախտիս : Եւ ոչ յապաղել
պարտ է, զի՛ի տուչսն Թէնայն տուողին կամք մեծ
համարին . և որ զ յապաղել ՚ի տալ՝ չկամեցաւ յերկար :
Եւ տառապել առանց Թէնամադրու Թեան լեցին երախտիք .
քանզի բնաւորապէս խորագոյնս ազդեն ՚ի սիրտ նախա-
տինք քան զերախտիս , սորայն զիւրանցուցիկ է յիշատակ .
իսկ նորայն պնդագոյն պահի յուշն , և որ ՚ի բարերարէն
և զկնեցուցանել զոք՝ իմ իմիք ակն ունիցի ՚ի նմանել :
Ո՞ստ իսկ երախտագէտ իցէ որ առնոյ՝ եԹէ այնպիսւոյն
երախտեաց նորա ներեսցէ : Եւ ոչ վասն ապաշնորհ
մարդկանն յաձախանԹեան պարտ իցէ մեզ յամր բե-
րել ՚ի բարերարել . նախ՝ զի որպէս ասացի , մեք եմք որ
յաձախեմք զԹիւս նոցա . զարձեալ զի և ոչ ամբարիշտ-
քրն սեզանակապուտք և արհամարհոտք զաստուածան
անմահս կասեցուցանեն երբեք յիւրեանց առատապար-
գև բարերարուԹենէն , որք ընդաբոյս բարուԹեամբն
բարերարեն ամենեցունս , եւս և որոց չարաչար պար-
գևօքն իւրեանց վարիցին : Ո՛յսպիսեաց զհետ երԹի-
ցուք առաջնորդսդ՝ ըստ ներելոյ մարդկայնոյ տկարու-
Թեանս : Ո՛ պարգևի տացուք զերախտիս և մի՛ ի վաչխի :
Ոչ յաւսով փոխարինին ետ՝ արժանի է զի խաբես-
ցի : Ո՛չ խաբեցայ , ասիցես : Ո՛պաքէն է ուրեք զի և
որդիք և կանայք ՚ի գերև Չանին զանկալուԹիւնս
մեր , և սակայն մնուցանեմք զնոսա և իմամեմք . և է
երբեք զի չաղԹեալք ՚ի պատերազմի և նաւաբեկեք
՚ի ծովի՝ չամառեալ պնդիմք և արհամարհեալ զփորձ՝
զարձեալ վերստին ՚ի նոյնս միմիք : Ո՛չա որչափ և
առաւել չէ պարտ զազարել ՚ի բարերարելոյ : ՈչԹէ
չտայ ոք զի չընկալաւ զփոխարէնն , ապա ուրեմն էտ
զի ընկալցի . և արդարացուցանէ այնու զապերախտս .
ոչք չայն սակս առնչէն ընդ չառնելն փոխարէնս , '
զի մարԹի իակ է չառնել : Ոլրչափ բազումք իցեն անար-
ժանք լուսոյ , և սակայն ծագէ արեւն . քանիք ընդ
ծնանիլ իւրեանց զանգատեն , և սակայն ծնունդս ՚ի

1 Չի երախտագիտուԹիւն իակապէս օրէնք ոչ են , այլ կամաւոր է
առնելն . իսկ եԹէ առիկեցես զոք ՚ի Տառուցումն երախտեացդ՝ կո-
րեաւ չնորհն և վայելչուԹիւն , ընդ նմին և ապերախտուԹեանն առնի :

Նորոց յարուցանել բնութիւն, և որոց ընդ ոչնութիւն իւրեանց ցանկային՝ Հանդուրժել։ Այլ մեծանձն և բարի ոչ զարգասիս խնդրել զբարերարութեան՝ այլ զնա ինքն. և չարացս իսկ Հանդիպեալ խնդրել զբարին։ Օ՜ինչ մեծ էր բարերարել բազմոց, եթէ չէր զբ որ խաբէր. իսկ այժմ առաքինութիւն է առանց ակնկալութեան փոխարինոց՝ առնել զբարիս, զորոց զարգասիսն այլ առաքինի անգէն յառնեն իւրում ընկալաւ։ Այսպէս չէ և չէ արժան վասն այսորիկ կասել և Հեղգագոյնս վարել յայդ գործ զեղեցիկ. և թէ բնաւ իսկ անյոյս եղիցի ի գոանալոյ զոք երախտագէտ՝ ընդբեմ մնանաւանդ չընդունել ինչ Հատուցումն, քան թէ չբարերարել. զի որ ոչն տայ՝ կարասիս ինն լինի մոլութեան ապաշնորհաց։ Այսոցիկ իսկ Տէրարձակ. այլ և պերախտ մեծագոյնս մեզանէ, իսկ վաղագոյն՝ որ ոչն առնէ երախտիս։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Այսց ոմն ի Վերթողաց։

“Ով խոժանին չտայցես բարիս ի պարգեւ
Ճ՜առք կորիցեն զի չեզիւ միմն ի դերեւ ...։

ԱՌԱՑ երկու ինչ իրք ստացանելիք են յառաջնում տողին. նախ՝ զի չէ պարտ առատանալ ի խոժանին, և երկրորդ՝ զի որպէս յամենայնի դժպատեհ է չտայլութիւն և առաւել ի բարերարել, որպէս թէ ընդութիւն և գոտումն մերձ ոչ իցէն՝ ոչ և է բարերարութիւն, այլ այլով անուամբ կոչելի։ Իսկ զարմանալի են յաջորդն տողին խնամարքն որ միով պատշաճ բարերարութեամբն՝ զյոլովիցն տոյժս սիրեն։ Ջես ինձ, ազատեմ, ոչ Հնարատութեամբ ուրեմն իցէ և ի դէպ իսկ մեծանձնութեան բարերարին եթէ յորդո-

1 Նա Սենեկա յայլմ յայլ անգանի խնամատ՝ մանաւանդ թէ ոստոնո՛, կամ թէ ոչ՝ խրատատ է ի տեզօջս որպէս և այլուր ի գիրս յայտնի։

բեմք զնա ՚ի տալ, Թէպէտ և ՚ի գերև իակ տուեալքն ելանիցեն. զի ոչ ձշմարտութիւն է ասացեալն, “Հ ատք կորիցեն,, : Իշխաբէն կորնչի և ոչ ինչ՝ զի որ կորուսանէն՝ զՀաչիւ ուրեմն ունէր զկորուսեալսն: Պարզ և ան կեղծ է բարեբարութիւն. պարգեւք միայն էն, որում Թէ լինիցին ինչ փոխարէնք, Համարեսցի այն ՚ի շահ. իակ եԹէ ոչ ինչ ինչ կորուսաս: Ի տալ ետուս զայն. ոչ որ ՚ի տումար յիշատակաց զբարեբարութիւնս իւր զրկեսցէ, և ոչ իբրև պահանջող իսիաւ ըստ ասելոյն և ըստ ժամանն արձանագրեսցէ: Ալր բարի չսիրէ երբեք զայնոսիկ բայց ՚ի հնարհակալսէն ազդեալ. ապա Թէ ոչ ՚ի փոխատուութիւն գառնային: Պարբերելի վաշխառութիւն է՝ զբախտիան ընդ փոխան Համարել: Ախտի ինչ և լեալ իդէն առաջնոյ բարեբարութեանցդ դէպք՝ յաւել դու ՚ի բարեբարել. վայելչապէս և անկորուստ կացցէն և առ ապաչառէս երախտիք, և մարԹի իակ է զի առ ամենՀոյ կամ ՚ի տալ պատճէնին և կամ օրինակաւ այլոց ածցի յերախտագիտութիւն: Ալ՚ի գաղարիր, յաւել ՚ի վաստակդ և զառն բարւոյ վճարեա զդործ: Ախտին արդեամբք, ուժեին խոստմամբ, այլում ՀնարՀիւ, միւսումն խորհրդով, և այլում փրկարար խրատուք լծիս ձեռնտու:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՐԴ

Օ ԵՐԱՒՏԻՍ նաև գազանք Հանդիպին. չիք կենդանի այնպէս վայրագ, զոր ոչ ընտելացուցեն իտանք և ոչ ածցեն ՚ի Համբոյր: Օ բերանս առիծուց անվտանգ շօշափին վերակացուք նոցա. զիտացն գազանութիւն մինչև յարբանեկութիւն ծառայութեան նուաձէ կերակուր: Ալ յայսոսիկ աՀա անդուլ և Հանապազորդ երախտիք նուաձէն և զայնոսիկ որոց բնաւ իակ անծանօթ է բարեբարութիւն և յարգ նորա. Թէ առ նախկին երախտիս գտաւ ապաչառէ, տեղի ատցէ երկրորդին. մոռացաւ և վերկրորդն, երրորդն յուշ ածցէ նմա և զմոռացեալսն: Ալր վաղ ընդ փոյթ կորուսեալ Համարի զբարերարութիւն, կորուսանի զայն որդարև: Ակ որ պըղծէն և ցանկորդէ ՚ի նոյն՝ և զառաջինսն յեռանալքն առ

բասիգէ , և ՚ի խիստ և յապառաժն սրտէ իսկ բղխե-
ցուցանել զբարեխոհականութիւն : Զի յաճախմանէն
երախտեացդ ոչ իշխեսցէ բազում ուրեք և զաչս ՚ի վեր
ամբառնալ . ՚ի յիշատակէ նոցին խուսափեալ յոր կողմն
և դարձցի՝ անդ տեսանիցէ զքեզ . շուրջ պատեալ պա-
շարեալ զնա երախտեօք քովք : Իսկ թէ զինչ զօրութիւն
իցէ բարեբարութեան և զինչ բնութիւն , ասացից ,
թէ նեբեսցի հնձ խուն ինչ ըստ կարգ բանիցս արտաքս
ելանել և թէ օրէն իցէ՝ ասել նախ թէ ընդէր քոյր
իցէն Շ նորհք , և երբեակ թուով . ընդէր ձեռն՚ի ձեռն
տուեալ և զուարթերեսք , էր երիտասարդուհիք , կու-
սանք և գօտելուծք պայծառ զգեստուք : Զմանոյ թուե-
ցաւ ասել զմիւս շնորհսատու՝ զմիւս շնորհընկալ և վեր-
բորդն շնորհահատոյց , այլոց թէ վերիս զայսոսիկ նշա-
նակիցեն՝ զարժանաւորսն շնորհի , զշնորհակալսն և
զոր ընկալեալ միամտանայն և հատուցանեն զշնորհ-
սըն : Իսկ թէ ոչ կերկուց այսոցն ուղղութեամբ գա-
տիցեն՝ զինչ օգուտ իցէ մեզ գիտել : Իսկ զինչ այն
նոցա ձեռն՚ի ձեռն տալ և շրջադարձ բոլորել՚ի պար :
Իբրև զի նովին օրինակաւ և շնորհք կամ բարերա-
րութիւնք ձեռն՚ի ձեռանէ անդրէն՚ի տուողն վերա-
դառնան , և թէ ընդհատեցին ինչ՝ կորեաւ՚ի սպառ
վայելելութիւնն . այլ վայելապեղ յոյժ է թէ ան-
ընդհատ և անխզելի զկարգն բերիցեն : Իսկ զուարթե-
երեսք . զի արժանաւորացն էրեսք զուարթագին էն ,
որպէս սովոր էն լինել որոց տանին և առնուն զշնորհս :
Իբրհատասարդուհիք . զի զայրատակ բարեբարութեանց
չէ պարտ թողուլ լքանել զի ծերասցին : Կուսանք էն .
վասն զի պարզ և անխառն է բարեբարութիւն և սահ-
մատուք : Իբ բարեբարութեանց ոչ կապ ինչ է և
ոչ պարաւանդ , նմին իբրև գօտելուծք էն և պայծառա-
զգեստք , զի համապիտանալ ախորժին բարեբարութիւնք :
Իսկ զբերևոյթսափ յուսատեր որ կարևորհամարեսցի
զայսոցիկ գիտութիւն . բայց չիցէ որ և զայն արժան
համարեսցի ինդրել թէ ինչ անուն կոչէ զնոսա Հե-
սիոդոս , այն է զանդրանիկն Աշխոյս , զմիջինն ԵՒփրո-
սինէ և զկրտերն Կաղա , զորս և որպէս զկարդ համայ
ումեք թուի մեկնաբանեմ և պատճառս ինն հնարի
տալ անուանցն զորս Հեսիոդոս ըստ հաճոյս եղ գտե-

բայց իբրոց ։ Այլ Հոմերոս զմիմն փոխեալ զանուն՝ ի Պաղեստինա ետ յամենայնի . զի գիտասցես՝ թէ ոչ՝ ի Վ եստեանց ելեն սոքա ։ Եւ այլ ոք՝ ի քերթողաց որ զօտեպինդ և փափագացի Թաւ զդեստաւք՝ ի հանդէս աճէ գնասս ։ Այս և Հերմէս առընթեր նոցա գտաւ ուրեք նկարեալ, իբր ոչ եթէ Հարտարխօսութիւնն յաւելցուս զգեղ բարերարութեան, այլ զի այսպէս Հանգոյ Թուեցաւ նկարչին ։ Եւ Խրիսոպոս իսկ՝ Նրբամիտն և խորամուխ՝ ի գիտութիւն Հնմարտութեան որ ըզգործնականաց ևեթ Հաւէ ոչ ինչ աւելի քան զկարևորն՝ ի բացայայտութիւն իմաստից բանս՝ ի վար արկեալ, սա ինքն զգիրս իւր ողջոյն ընծ աղՀատանաւք . սակաւ ինչ յոյժ յաղագս երախտեաց առնելոյ և ընդունելոյ և երախտաՀատոյց լինելոյ ասացեալ կարծ՝ ի կարծոյ, ոչ եթէ զառասպեա՛ի սոսա այլ զոսա յատապելս Թուի պատուաստել ։ Օ ի Թողեալ՝ ի բաց զորս առ՝ ի նմանէ առեալ աւանդէ՝ Խրիսոպոս, ըստ Խրիսոպոսի ԽարիԹաչքն երեքին կամ՝ Շ նորՀք, գաւերք են՝ Վիտոսի և Լաբրինոսի, և կրտսերագոյնք Հասակաւ քան զՀամ, այլ չքնաղագեղք, վասն որոյ և՝ ի կենակցութիւն տուեալք Խաղան ։ Եւ զմօր նոցա անուն պատշաճապէս ասէ կոչեցեալ Լաբրինոսի , զի Հոխացելութիւն փարԹամ միծուԹեամբք սեփական է առատանալ՝ ի տուրս երախտեաց, որպէս ԹէՀ յետոյ քան զդստերացն սովորութիւն իւր զմօրն անուն կոչել կամ ԹէՀ քերթողք ըստ իսկ սեփական անուամբն վարկին ։ Օ ի որպէս անուանակոչն զյանդգնութեան ընդ յիշողութեան փոխանակեալ՝ զոր ուրուք չիՀիշէ զանունն կոչել՝ . սոյնպէս և քերթողաց ոչ ինչ փոյթ է ստուգագուշեն . այլ՝ ի Հարկէն տարեալք , և կամ առ վայելչութեան՝ այնու վարկն անուամբ , զոր չափ և քաղցրութիւն տաղիցն իւրեանց պահանջէն ։ Եւ չՀամարի նոցա այն՝ ի նենգ զի այլով անուամբ յաշխարհամոլ գիւանն նշանակիցի . զի և այլ ոք՝ ի քերթողաց զՀետ եկեալ ըստ Հանգոյս իւր կոչէ զնա յայլ անուն . զայս Հաւաստեսցէ քեզ Վալերիա

1 Այնուանակոչք էին առ միծամիծս Հռովմայեցւոց ծառայք յուշարքը անուանց գիպելոցն զանանապարհայն . որոց և՝ ի չիչել երբեմն մուսացութեամբ զանուն ուրուք յօդուածոյ ինչ կցկցելին առ ժամայն։

զօրէն բանս է, զի առ Հեբռոդեայ ընդ Խարիթայս, և առ Յոաերոսի ընդ Մուզայն յորջորջի։

ԳԼՈՒԽ ՀՈՐՈՐԴ

Այլ զի մի լուցի ինձ զոր կշտամբեսին ախտանալ, թողից անդր՝ ի բաց զայս ամենայն իբրև օտարս՝ ի բանից, և անկցուցից ամենևին առաջարկութեանս մերում։ Ասացից զու լեր ինձ ջատագով՝ եթէ ոք ստգտանիցէ զիս, զի՝ ի խոսն նշանակիցեմ և գԽրիսիպպոս, զայր մեծ արդարև, բայց յոյն. որոյ սրութիւն նուրբ հանճարոյն՝ բերի յառնաին և յինքն ընկրկի. և ուր ծուէն թէ ներդործիցէ ինչ՝ խայթել և ոչ թափանցէ։ Այլ առ ինչ քնաւ նըրբութիւնդ այդ. յաղագս բարերարութեանց առաջի կայ մեզ ասել և ուղղել զայն ինչ որ մեծապէս զօրինէն է մարդկայնոյ ընկերութեան. Հարկ է տալ կանոնս կենաց, զի մի ընդ կերպարանաւոք մարդասիրութեան՝ ի ներքս սպրդեսցի մեղկութիւն անխորհուրդ, և զի մի դարձեալ օրինադրութեամբք չափաւորել կամեցեալ՝ պակասեսցի առատաձեռնութիւնն, որում ոչ առաւել լալ պարտ է և ոչ նուազել. ուսուցանել առաջի կայ մեզ մտադիւր ընդունել և մտադիւրագոյն ևս հատուցանել և մեծ իմն միջանս երախտառուացն կարգել առաջի արդեամբք և յօժարութեամբ հաւասարելոյ և յաղթելոյ իսկ երախտեաց բարերարին. զի երախտագիտութիւն ոչ յաջողի եթէ ոչ յառաջադէմն բերիցի։ Երախտաւորացն ուսուցանել պարտ է զի չպահանջեսցեն ինչ. և երախտաւորելոցն, զի առաւել քան զոր ընկալանն պարտին։ Զայս պանծալի պայքար երախտեաց երախտեաց յաղթելոյ՝ զայսօրինակ յորդորել զմեզ Խրիսիպպոս յաւէտ. Կենածել պարտ է և զգոյշ կալ զի մի ապաշնորհք երևեսցուք սրբասիրեցեալ ամբարտեսցուք առ Խարիթայն զոտեսս Վոխայ և լուցի այն յարհամարհութիւն զեղապանծ օրհորդացն։ Վաւ ինձ, ով Խրիսիպպէ, ինչ մի ուսս յայսպիսեաց անտի, որովք մարթացայց լինել առաւել բարերար և առաւել երախտագէտ առ բարերարս. և որով երախտաւորքն և երախ-

տառուք զմիմեանսիք եղեալ մրցիցին. սոքա՝ զի զպար-
գևսն մառասցին, և նոքա՝ զի պնդագոյնս կալցին յուշի:
Իսկ զաղաչատանդ ՚ի քերթողս անդր Թող, որոց ուշ
նպատակի առաջի կայ ամբոխել զլսելիս և առատպէտս
քաղցրալուրս հիւսել: Կայց որոց կամք իցեն առողջա-
գոյնս յարդարել զմիտս և առաքինութեամբ ուղղել
զմարդկայինսն և խորագոյնս տպաւորել ՚ի հոգիս զյի-
շատակ երախտագիտութեան, լրջութեամբ և զգօնա-
գոյնս բարբառին և զամենայն զօրութիւն յայն ՚ի վար
արկանեն. եթէ ոչ գուցէ Համարիցիս Թէ ծանծաղ
և յօդուածոյ առատպելօք և պատաւական զրուցիւք
մարթ ինչ իցէ խափանել զմիաբակարագոյնն ՚ի չարեաց,
և չՀողուլ զի բարերարութեանցն սրբեացին յիշատա-
կիր տախտակք ՚:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հ ԱՊԱ զանց զաւելորդօք արարեալ՝ զկարևորագոյնն
առցուք ասել Թէ նախ քան զամենայն զինչ պարտ
իցեն երախտաւորելոյնն: Ա՝ան զի է՛ որ ընդ արծա-
Թոյ և եթէ տուելոյ Համարի՝ զանձն պարտական, է՛ որ
ընդ հիւպատոսութեան, է՛ որ ընդ քրմութեան, և այլ
ոմն վասն կուսակալութեան: Կայց այդոքիւկ Համայն
բարեացն նշանակք են և ոչ բուն իսկ բարիք: Կարեւա-
րութիւնն անշօշափելի է՛ և Հոգւոյ աչաց տեսանելի.
խոիր մեծ է ընդ բարերարութիւն, և ընդ այն ինչ
որով բարերարութիւնն երևի: Ա՝մին իրի ոչ ոսկին և ոչ
արծաթն, և ոչ այլն ամենայն պարգևեալ յայլմէ՝ բա-
րերարութիւն է, այլ կամքն պարգևողին:

Կայց տխմարք յայն և եթէ զկայ առնուն որ ընդ ա-

1 Ի գրամանացս առեալ յարմարէ զանուն նմանութեամբ. և կամ
ասել զի մի Համայնաջինջ մոռացումն լիցի երախտեաց: Քանզի ան-
ժողութիւն էր առ Հռոմայեցիս Թողութիւն պարտուց առնել, եր-
բեմն. որով ոչ փոխառուքն ինային այլ ևս պարտաւորքն և ոչ փոխա-
ռուքն պարտապանք՝ ազատացեալք յիւրաքանչիւր պարտուց, և որբ-
եալ նորոգէին յայնժամ տախտակքն ցուցակք պարտուց կամ արծա-
Թոյն տուելոյ ՚ի փոխ, և կոչէին «նոր տախտակք»:

*կամբ անկանի և զոր մարթ իցէ տալ և առնուլ, իսկ որ պատուականագոյն է և մեծարգոյ 'ի բնէ՝ չերևի իսկ ինչ նոցա : Օ որ ունիմբս և չօշափելիբ, զոր տեսանելիբս և յոյս բերիմբ ցանկութեամբ՝ կորստականք են. բաղդն կամ զրկանք կապտեսցեն 'ի մէնջ զայնոսիկ. բայց բարերարութիւնն և յետ կորնչելոյ պարգևին կայ մնայ անկորուստ, վասն զի ուղղութեան է գործ. և չիք զօրութիւն որ կարասցէ եղծանել զայն : Օ այլ բարեկամ փրկանաւորեցի 'ի հինից ծովս. այլ կալաւ զնա Թշնամի՝ և արգել 'ի բանտի, ոչ զբարերարութիւն այլ զարգասիս եբարձ բարերարութեանս իմոյ : Օ այլոյ ուրուք զորդիսն 'ի նաւաբեկութենէ ապրեցուցեալ կամ 'ի հրկիզութենէ՝ դարձուցի 'ի նա, և ահա հիւանդութիւն կամ արկածք այլ 'ի վերայ հասեալ յափշտակեցին զնոսա. կայ մնայ և առանց նոցա՝ զոր նոքօքն բարերարեցի : Այս այն ամենայն որ յանձնէս յափշտակեցին զանուն բարերարութեան, արբանեակն ևԹէ 'ի ցոյց բարեսէր կամայ բարերարին : Օ այդ և յայլ ինչ իրս է տեսանել խափ ընդ իսկութիւն իրացն և ընդ երևոյթ : Վասամանեակս և պսակս [1] քաղաքական և պարապային պարգևէ զինուորի սպարապետ. զինչ 'ի բնէ իցէն պսակքն, զինչ եզրածիրանին, [2] զինչ գաւազանացն [3] խորհ, զինչ ատեանն [4] և զինչ կառք [5]. այդոքիկ համայն պատուոյ նշանակք են և ոչ պատիւ. սոյնպէս ցոյցք են և նշանակք բարերարութեան որ ինչ աչաց երևին և ոչ բարերարութիւն :

1 Պսակ քաղաքական 'ի կաղնւոյ տնօրհէր այնմ՝ որ զմի ոք 'ի քաղաքացոց ապրեցուցանէր 'ի մահուանէ :
2 Նշանագգեստ աւագանեաց :
3 Նշանակք հիւպատոսութեան :
4 Նշան Պրետոր 'ի գաւառորութեան :
5 Պառք յաղթական որ գյաղթողն բերէր 'ի հանդիսին :

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Օ՜ն ասա բարեբարութիւնն իւր։ Պօրճ բա-
բեսէր կամաց, որով զայլս ուրախացուցեալ ուրախանայ
և ինքն մեծադիւր և ամենապատրաստ յօժարութեամբ
եկեալ 'ի նոյն։ Այսն որոյ ոչ է այն որ խնդրէին, թէ
զինչ տայցէ կամ զինչ առնիցէ, այլ թէ որո՞վ ոգւով։
Այսն զի բարեբարութիւնն ոչ 'ի տուեալն է կամ յա-
բարեալ, այլ 'ի սիրտն որ տայն և առնէ։ Նա զի խոիր
մեծ է ընդ այս և ընդ այն, անտի և այ է 'ի միտ առնուլ՝
զի բարեբարութիւնն բարի է միշտ. իսկ որ ինչ տուեալ
լինի կամ պարգևի՝ ոչ բարի է և ոչ չար։ Այնոյն է որ
զիոքունս մեծացուցանէ, զանարգն աղնուացուցանէ և
զմեծամեծս և զպատուականս արհամարհ կացուցանէ։
Այն ամենայն որոց ցանկամբս ոչ բարիք են 'ի բնէ
և ոչ չարք, այլ յոր ինչ և վարիցին 'ի հոգւոյ անտի
զկերպարանն առնուն։ Այսպս ոչ այն որ Թումն և ոչ
այն որ պարգևին՝ իսկ բարեբարութիւն. որպէս և ոչ
'ի սպանդս զոհիլ՝ Թէպէտ պարարակք իցեն յօժ և ոս-
կեձանանք՝ պատիւ աստուածոյն է Հաստատեալ, այլ
'ի նուիրողացն կամն ուղղութեան և բարեպաշտու-
Թեան. վասն որոյ լաբքն բարեպաշտք և ցորեկովք և
արմաեօք կրօնասէրքը են. իսկ չարք Թէպէտ և 'ի Հա-
պաղիս սրեան զսեղանս ողողեսցեն, տակաւին ամպա-
րիշտք են։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Այն բարեբարութիւնք ոչ 'ի բուն իսկ 'ի բարեսէր
կամն՝ այլ յիւրս անդ էին Հաստատեալք, ապաքէն ըստ
մեծութեան իրացն տուելոց և բարեբարութիւնքն լի-
նէին, որ ոչ այդպէս է։ Վասզի է ուրիք զի առաւել
երախտապարտս զմեզ կացուցանէ որ զիոքն տայ մե-
ծանձնութեամբ՝ Հաւատալ սրտիւն մեծութեանց
Թագաւորի, որ զսակաւն տայ յօժարութեամբ, որ

զիւր աղքատութիւնն մոռանայ յիմն հայեցեալ, որ ոչ կամքը ևս ևթե, այլ և ցանկութեամբ փութայ օգնել, որ ի բարերարէն համարի զտեալ զբարիս, որ տայ առանց իրիք ակնկալութեան և առնու որպէս տուեալ և ոչինչ, որ ինդրեալ եդիտ զպատեհ օգտելոյ։ Կնդ հակառակն անհաձոյ է և զժպհի բարերարութիւն, Թէպէտ և մեծ յոյժ տեսլեամբ և իրօք՝ ևթէ բռնազբօս իցէ և կամ խուսեալ ի տուողէն։ Հաձոյագոյն են յոյժ գիւրաձեռն քան լճաձեռն պարգևք։ Պոյոն ինչ է զոր պարզևեայն, բայց առաւելագոյնին չէր ձեռնհաս. այլ որ մեծ ինչ էտ, այլ երկմտեաց, այլ յապաղեաց, այլ հառաչելով էտ, այլ ամբարտաւանեաց ի տալն, այլ առ ի ցոյցս էտ, և ոչ ի հաձոյս որում տայրն. փառասիրութեան իւրում էտ և ոչ ինձ։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Սոկրատես յորժամ բազումք բազում ինչ ընծայեալ զբերք լինէին ըստ իւրաքանչիւր կարի, Անթիսթես աղքատագոյնն յաշակերտաց նորա ասէ ցնա. "Զգատանեմ ինչ ինձ ըստ քոյ արժանաւորդ տալ քեզ. և այսուհետ ևթէ զգամ աղքատութեանս խնդ. վասն որոյ զմիս զոր ունիմ տաց քեզ. Օ անձն իմ. և աղաչեմ զնուերս զայս որպիսի և իցէ ընդունել քեզ ի հաձոյս, յուշ առնել զի այլոց բազում ինչ քեզ ընծայեալ բազմագոյն ևս անձանց պահեցին ,,։ Ընդ որ Սոկրատ. "Նա ոչ դոյն ինչ է, ասէ, նուէրդ քո, բայց ևթէ՝ զի նուաստ Թերևս զանձդ հանարիցիս. և արդ իմ խնամք իցեն լատագոյն քան զոր ընկալայ դարձուցանել քեզ զքեզ ,,։ Սոփն ընծայիւք յաղթեաց Անթիսթես Գնկիւթագեայ՝ որոյ զուգահաւասար հարստութեանն էր և սիրտ. յաղթեաց և առաւտաձեռնութեան Հոխագունիցն առ մեհենսն ի պատանեկայ։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Տես ինձ որպէս և ’ի կարօտութեան իսկ հնարիցի հոգին ’ի լուծն առատաձեռնութեան իւրոյ։ Ծանուր ինձ ասացեալ յայնժամ Աբրհեայ առ բահան. “Այլ զինչ օգտեցար կամ ելոյզ զնս աղքատ. ահա գտից ես նուէր արժանաւոր այնքանոյ առնն. և ոչ ինչ ’ի քոյոդ ունելով յիմոցս ատց նմա։ Ա’ի կարծիցես թէ անարգ ինչ համարեալ էր յաչս իւր, որ զանձն արժանի ինքեան մատոյց ’ի նուէր։ Ուշիմ պատասխն եդիտ հնարս թէ որպէս պարգևեսցէ անձին զՈորատ։ Ա’ի յայն հայեցիս ապա թէ որքանո՞ պարգևքն իցեն, այլ թէ յորմէ սրտէ յառաջ եկեալք ’ ***։

Ա’այր խոպանակ հեշտալուր տայ ունկն որոց զգժպատեհն խնդրիցեն, և զայսոյն անպատեհ տածէ խոստմանքը զորս ոչ երբեք ածցէ յարդիւնս, բայց վատթարագոյն քան զայն թուի ինձ այր չարաչեզու և դժոխերես՝ որ յաչաղանաքը հանդէս առնէ զնւրոյ բահտին. զի թէպէտ և մեծարեալ պաշտիցի պերճացեալ ձոխութեամբ՝ սակայն գարշելի է և ատելի այնոցիկ իսկ՝ որոց թէ մարթ էր՝ հանգոյն նմին զոր ատեանն գործէին ***։

Ամենեք ոչ գաղտագողի այլ յայտնապէս ընդ օտարին ամուսնոյս խաղացեալ ցանկութեամբ՝ և զնւրեանցն այլոց Թողին ’ի խաղ։ Ը ինակատագոյն, տմարդի և չարաչահամարեալ է առ տիկնայս և այլ վատատոհմիկ՝ որ չծողզու ամուսնոյ իւրում յայտնապէս բազմեալ ’ի գահաւորակի՝ բերել ’ի տեսիլ ամբոխին։ Այթէ չիցէ ուրուք սիրուհի չքեղ, և թէ ոչ նախաճաշդ կացցէ հինջ օտարի, զայնպիսին շուայտոտ կարգան տիկնոջք, և ցանկասէր վատ և աղախնայց սիրահար։ Այսոի հարստահօսութիւն իմն վայելուչ համարի չնութիւն. և երկուսեքեան հաւանութեամբ այրիացեալ ոք իբրև

1 Յերկոսին ևս յատագանիչ տեղիագ Թերի են բանքն և ընդհատեալ և որպէս Թուի՝ հատուած անհնալ ’ի բաց։

աւուրի՝ զոր գողացան յայլմէ՝ գնա ածէ իւր ի կին։ Այլ զարամբ եղանէն ցրուել զյափշտակեալսն և զցրուեալսն զարձեալ վերստին նոալին յափշտակութեամբ ժողովել։ բարձեալ են չափ և կշիռ, անպտանելի է այլոյն աղքատութիւն և անձինն զարհուրելի համարեալ և քան զմահացայն ադեաս չարագոյն։ խաղաղութիւն անիրաւութեամբ վերդովեալ, և տկարք հարստահարին ահարկութեամբ և ուժով։ Խակ կողոպտել զգաւառս, և կաշառաց տալ վերաւունս որում շահն խթիցէ՝ չէն ինչ զարմանալիք, զի զգնեալն վաճառել իրաւունք ազգայ են։

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Այլ հեռագոյնս ած ձգեալ զմեզ ուժգնութիւն բանին ըստ իրացն պատշաճի։ Յա արդ յայս յանգեսցուք զբանս, սչ համօրէն մերսման գարու գրելով զամենայն յանցաւորութիւն։ Օ այս բողոքեցին առաքինքն մեր, զայս բողոքմբ մեք, զայս բողոքեացին և յետինք, թէ ապականեալ են բարք, թագաւորի անզգամութիւն, ի վատնարն բերին ընթացք մարդկան և յամենայն գործս գժպատհս։ Խայց այդ ամենայն որպէս ինչ եղեւն ի սկզբանէ և ի նմին կայի կան և կացցեն գոյքն ինչ յետ և յառաջ խաղացեալք՝ Հանգոյն իմն սեաց ծառոյ որք ուժգնութեամբ մերկին անդրագոյնս վաթեալք՝ ընկերին անդրէն յիւրեանց սրճատիպ սահման։ Ի զի չնութեան յանխոնարհ գօրացի ածիր, և ամենախառնութիւնն խղեսցէ զամենայն սանձ։ Ի զի կռնոց և խրախճանաց զպղտոցի մերկութիւն, և խոհակերութիւն կորուստ ամենայն ի վերայ ածցէ հայրենի ժառանգութեան։ Խրկեւին առաւելազանց յորդեացեն մարմնոյ պշնութիւնք և խնամ գերզոյ որ զՀոգին տգեղացուցանեն։ և երբեմն ազատութիւն տարագիպ ի ցոփութիւն կրթեացի և ի յանգգնութիւն։ Ասկրթ և առանձնաբար և կամ աշխարհօրէն մերկեացի անգթութիւն, և ի կատաղութեան քաղաքական պատերազմաց պղծեացին համայն սրբութիւնքն նուիրակքն։ Ասեմարեալ պատուեացի երբեք և արբեցու-

Թիւն, և առաւելագոյն արբենալ անապակաւ՝ հանի-
բեսցի ՚ի քաջութիւն. մոլութեանց վէր ուրեք դադար՝
այլ անկայ տատանմամբ միմեանց ընդդէմ մնալուն
մերթ զօրացեալք և մերթ վանեալք։ Չէ միւք զնոյն միշտ
ասիլովք ասել զմեզ, զի չարք եմք, չարք էաք, յաւէ-
լից և զոր վաղվի ասել՝ Թէ և լմնելոց իսկ եմք։ Ոչ
կասեսցին երբէք ոչ մնդասպանք, ոչ բռնաւորք, ոչ
գողք, ոչ շունք, ոչ յաւիշտակուք, ոչ սեռասակաւուրք,
ոչ մանուիչք, յաւելուի Թէ և ոչ ապերախտք, եթէ ոչ
այդ ամենայն ինչ յապերախտութենէ առնուին սկիզբն,
առանց որոյ ոչ զայրացի անօրէնութիւն։ Յայնմանէ
զգուշասջիր դու իբրև ՚ի մեծագեղեն ապիրատութենէ
զի մի ուստք ապերախտեսցիս. իսկ եթէ առ քեզ ոք ապե-
րախտացաւ՝ Թեթև Թուեցի քեզ և լեր ներողամիտ։
Օ՛ի ՚ինչ յանկեսցի անկիրաւութիւն նորա. ոչ կայն
զի զբարերարութիւնդ կորուսեր. այլ ողջ կայ առ քեզ
կարևորագոյնն զի ետուր։ Չէ որպէս առաւելագոյն
բարերարել արժան է յորոց երախտագիտութեան ակն
ունիմք, նոյնպէս և այնոցիկ երբեմն յորոց չկայ բնաւ
ակնկալութիւն, Թէպէտ և ոչ կարծեաք և եթէ այլ և
հաւաստեաւ զապերախտութիւն նոցա գիտեցեմք։

Օ՛որ օրինակ Թէ կարող ինչ իցեմ առանց տուժից
անձին չնորհել հօր զորիս ՚ի մեծաց ապրեցուցեալ
վտանգաց, ոչ զանգաղեցայց։ Օ՛այլ արժանաւոր Թէ
տեսից վտանգեալ՝ արեամբ չափ պաշտպանեցից նմա,
զանձն ՚ի վտանգ տուեալ. իսկ Թէ անարժան ոք իցէ
և կարող իցեմ բարձրագոյն աղաղակաւ և եթէ փրկել
զնա ՚ի ձեռաց աւազակաց, ոչ զլացայց և նմա զձայնն
փրկարար։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յաճախ է արդ ասել Թէ զոր բարերարութիւնս առ-
նել պատ իցէ և արդէս։ Յախ զկարևորսն ասացոք,
ապա զօգտակարս և ապա զդուարձալիս՝ բայց ոչ զիւ-
րաքանչիւրսն։ Ի կարևորաց պատ է սկիզբն առնել. զի
այլ ազգ ազգէ ՚ի սիրտ որ ՚ի պահպանութիւն կենաց
է կարևոր, քան որ ՚ի զարգ իցէ և ՚ի զուարճութիւն։

Վասն որոյ մարթի է արհամարհել ումեք զայն ինչ որում չէն կարօտ և ասել. Ո՛չ ընկալ զպարգեւդ որով չէն ինչ ինձ պէտք. չատացեալ եմ ի քէն։ Եւ ոչ միայն չկամի փոխարէնս տուելոյն առնել, այլ և զառեալն տայ ի բաց։

Եւ ի կարեւորս անդ էն զոր զառաջինն ունին տեղի առանց որով չմարթի կեալ, են զոր զերկրորդն՝ առանց որոց չէ պարտ կեալ և այլք զերրորդն՝ առանց որոց չէն կամք կեալ։ Զառաջնոց սակի էն ազատել զոք ի չէեալոյ թշնամւոյ, ի ցաւոցն, ի ցաւատարած և յայլոց բազմախառն և ի յեղակարծ վտանգաց, որք մարդկայնոց կենացս են զարհուրելիք։ Օ՛ր և ի սոցանէ վտանգաւք՝ ըստ արհատր մեծութեան վտանգին, մեծագոյն և չարչը ելախտեացս եղիցին։

Օ՛ի ի յիշատակ անցելոց արհատր չարեացն և կանխելոց երկիւղին քաղցրանան և ևս ելախտեացն պարզիք։ Ասոյց ոչ վասն այգորիկ դանդաղիլ պարտ է մեզ յազատութիւն ուրուք՝ որպէս զի առաւելութիւն երկիւղին յաւելուցու զիշխո ելախտեացս մերոց։

Համագունակից ինն առացելոցս են և այնոքիկ առանց որոց թէպէտ և մարթի իցէ կեալ, բայց յաւագոյն զմեռանելն Համարիլով։ Որպիսիք են ազատութիւն, պարկեշտութիւն և ուղղութիւն հոգւոյ։ Որոց գէտ գան և սիրելիքն մեզ կենակցութեամբ, արհեստկցութեամբ, պիտանութեամբ և յերկար տեսլութեամբ, զոր օրինակ են զառակք, ամուսինք, առանին զիք և այլք սոյնպիսիք, որոց այնպէս անձուկ կցորդութիւն է ընդ հոգւոյ, մինչև յանձն առնուլ ի կենաց քան ի նոցանէ հրաժարել։

Կարևորացն գէտ գան օգտակարք բազմութիւք և բազմդիմի զանազանեալք։ Ընդ որով է իմանալ և զարծանել ոչ առաւելութեամբ յաւելորդս շեղջակուտեալ, այլ ըստ չափու պատշաճին ի վայելուչ պէտս. ևս և առագութիւնն բարձի և պատուոյ և մանաւանդ զառ ի բարձրագոյնն յառաջադիմութիւն յառաքինութիւնս և ի գիտութիւնս, զի օգտակարագոյն քան զանհնդն է օգտակար լինել անձին։ Ասկ այլք ի զառարձութիւն կարգեալք յաւելորդաց անտի են, յորս այնմ պարտ է իմանալ ունել, զի վայելչութեամբն հա-

Նոյասցին. և զի չիցէն յամախաւոք, այլ կամ սակաւուց իցէն և կամ ոչ բազմից յիւրոցն հաւասարից. և թէ չիցէն մեծագոյնք ի քան, տեղեաւն գէթ և ժամանակաւ լիցին մեծարգոյք. Այլ նա զիցաք թէ որ այն պարզ հաճոյագոյն իցէ և ցանկալի. որ ինչ յամախագոյն ընդ ակամբ անկեալ պարգեւաւէն, զի ի նուէրսն անդ զմիգ յամախեսցէ տեսանել: Այլ զգուշանալ պարտ է չընծայել ինչ յուսմէտս. զոր օրինակ կնոջ կամ ծերոյ գործիս պատկանս, չինականի գիրս և ուսումնասիրի և գրասիրի ցանցս: Այլ ի հակառակն զգուշալի է նոյնպէս զի մի հաճոյական ինչ պարգևել կամիցեալ՝ ցոյս ինն տացուք ախտիցն յանդիմանութեան, զոր օրինակ արբեցողի զինի պարգևեալ և դեղս ախտացելոց, զի ի նախատինս հանարի և ոչ ի պարգևնուէրս, որալ ընդունողին յանդիմանի ախտ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այժ ընտրութիւն պարգևին ի մէջ ծոզեալ իցէ, զնոյնոյնն առաւել ընտրեսցուք, զի երկայնակեաց պարգևս մեր լինիցի: Վանդի սակաւք են յոյժ այնպէս երախտագէտք, զի զոր առինն՝ ոչ տեսեալ և յիշեցէն: Այլ ապերախտից և յուշարար յիշատակի լիցի պարգևն տևական, և ցորչափ առաջի աչաց կացցէ՝ չհոգացու նման մոռանալ զպարգևատուն, այլ յիշեցուցէ անդադար: Այլ այնչափ առաւել գտեալ կանան ինդրել պարտ է, որչափ զի չիցէ մէջ օրէն յիշեցուցանել զպարգևն, այլ իրն ինքնին արծարծանիցէ ցյիշատակն անհետացեալ. մոռացիւք տաց ապա արծաթեղ ձեռագործեալ քան զրուխմբոյ, արձանս քան զգետս և քան զայլ ինչ դիւրածախ: Այս սակաւս յոյժ երկայնակեաց քան զպարգևսն են ընդհէք. առ բազումս զուգատև վայելիցին է պարգևին յիշատակ: Այ սան որոյ անանցականս՝ որպէս մարդեն է՝ զպարգևս իմ կամիմ զի մինչև ի սպառ կեցցէ ընդ բարեկամիս:

Ձիցէ զբ այնչափ անմիտ մինչև Հարկ Հանդրեցցյց յուշ առնել նման զի մի սուտերամարտիկս և կամ գա-

զանս չետ խաղալն վճարելոյ չղեսցէ ի պարգև, և ոչ զգեստս ամառնայինս ի ձմեռնամիջի, և ձմեռնայինս չամարային չեղեզակին։ Խոհական ընտրութեամբ լեցի բարերարութիւն՝ կշռելով զժամանակն, զտեղին և զանձինն։ զի բազում ինչ հանգոյ կամ անհանգոյ ժամանակն ընծայեցուցանէ։ Ընդսի ընդունելի իցէ տալ ումեք զոր չունին քան զայն որով լիացեալ իցէ. զայն՝ զոր ինդրեալ չամախ և ոչ գտանէ, քան զայն զոր առնոյն ուրեք տեսցէ չամախեալ։ Ընչաւատ մեծագնիւք իցեն պարգևք որչափ չքնաղագիւտք և ընտիրք, միայն ձոխից անգամ լինել ընդունելի. զոր օրինակ և միրգք սովորականք որք չետ սակաւուց չամախութեամբն լեցին ի տաղտուկ, եթէ երեխայրիք իցեն կամխահասք՝ զուարճացուցիչք են։ Պատուական են և նուէրք զոր չեզ ընծայեալ ուրուք չայրմէ, կամ զոր մեր իսկ չեզ երբեք տուեալ այլոմ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ընդհանուր Պահեզոնացի այն ինչ չամեհական Ընկալելոց սոքացեալ զեր ի վերոյ քան զնարգկայինն ամբարտաւաներ, հրեշտակք ի կորնթացւոց եկին առ նա ի խնդակցութիւն, բերելով առ նա և զպատիւ քաղաքակցութեան քաղաքին եւրեսոնց։ Ծխծաղեցաւ Ընդհանուրդ ընդ այսպիսի նուէրն, և ասի ցնոսին ի հրեշտակսն ասէ ցնա. Ոչ ումեք երբեք արարեալ է մեր զնուէրս բայց քեզ և Հերակլի։ Հաճութեամբ ընկալաւ չայսժամ Ընդհանուրդ զնուէրն չուշ ածեալ ոչ թէ գիք ոմանք նուիրողքն էին, այլ թէ ուր նուիրեալ էր այն չատաքազոյն։

Ասպէս այնն փառասիրն, որ ոչ զգնութիւն և ոչ զպայման գիտէր զիարաց, զՀերակլի և զԱթաոսի հեռացոյն զչետ երթալով՝ և ոչ իսկ անդ գնայ առեալ ուր ոչ ևս նշմարէին հետք, չայեցեալ թէ ընդ ուր մեծարի զուգապատիւ ի փառս՝ հանդերձաւ որպէս զերբոսամբ ածեալ զերկինս, որում ոնայնասէր մնօք տէր չայր, զի Հերակլեայ գնաց հաւասարէին։ Ըս զինչ

նմանութիւն էր ընդ Հերակլ և ընդ անմիտ պատանին յորում յաջողութիւն զանդգնութեան և զզօրութիւն ունէր զօրելոյ : Հերակլէս ոչ վասն իւր ինչ կամզնեաց յաղթութիւն . յածեալ չղջեցաւ ընդ երկիր ոչ աշխարհակալութեան տենչանօք այլ ի վերժինդրութիւն : Այլ որպիսի ինչ առնէր յաղթութիւնս ոսոխին չարաց , վերիժառուն բարեաց և խաղաղարարն ծովու և ցամաքի : Այսոցիկ ի մանկութենէ , առաքառաւ ազգաց , ինաստակար թշնամեաց և բարեկամաց՝ որում լրումն ամենայն բարութեանց համարեալ էր արկու լինել մանկանացուց համօրէն՝ մուսացեալ զայն թէ ոչ զազանագոյնք և ևթէ ի կենդանեաց , այլ և վտանգն անարիք չարաթոյն հարուածոցք ահարկուք են :

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այլ արդ զարձցուք անդրէն ի կարգ բանիս : Որ յախտուն և անխտրաբար բարերարէ ամենեցուն , ոչ զոք կալցի իւր չնորհապատ : Այլ որ համարեսցի զանձն պատուասիրեալ ասպնջականութեամբ յախտապատիկ կամ՝ ի պանդոկապետէ և ոչ իսկ ի կոչնատեառնէ հասարակաց կոչնոց՝ մինչ մարթի ասել . Ո՞վ չնչին չնորհս ինձ արար . բայց զայն զոր և անճանօթիցն արար և թշնամեաց և ապիրատից : Այնմ արժանի մեծապանծաց համարեցաւ զնա . ոչ երբեք , այլ զտոլորութեան անտան մեծարեաց : Ով հաձոյական զպարգևող առնել կամից՝ սակաւուց պարգևեաց և դուն ուրեք . ոչ որ գյաձախեալն առ առնեսեան համարեսցի իւր ի չնորհս : Այի որ այնպէս համարեսցի զասացեալս , որպէս թէ ընդ խիստ և անճոռնի սանձիւ զսպեալ ընկերիցեմ զնափ առատաձեռնութեան : Այդպէս . վասն զոյգ որպէս և կամի՝ միայն զնի ընծայեցի և ոչ մոլորեցի : Այարձի իսկ է և այնպէս առատաձեռնել զնի այլ իւրաքանչիւր թէպետ և հասարակաբար զչնորհս ընկալեալ , բայց ոչ և հաւասարեալ առքոխին զանձն համարեցի , այլ այլ ընկալցի ցոյցս իմն մեծութեան , որով լցէ նման հասարեալ զանձն առաւելագունի հանդիպեալ մարդասիրու-

թեան և ասել. Օ՜ որ ինչ այլում՝ զնոյն ետ և ինձ, այլ մտադիւրացոյցս. զնոյն՝ այլ փութով. ուր նման վաղագոյն ևս պարտ էր տալ վճռն ծառայութեանցն, կամ և այլոց զնոյն՝ այլ ոչ նովիմբք պատուասիրական բանիւք և ոչ նովին քաղցրութեամբ. կամ ետ՝ աղաչանացն զիջեալ. իսկ ինձ ազերսելով. նման ետ ահնկալութեամբ դիւրապատրաստ փոխարկին, և զի ծերութիւն նորա և անզգաւորութիւն բազում ինչ խոստանային նմա. իսկ ինձ զնոյն տուեալ՝ առաւել ետ, զի առանց ահնկալութեան փոխարկնայ ետ։ Օ՜ որ օրինակ կին պոռնիկ պար առեալ՝ ի համանեաց այնու ձար-տարութեամբ բաժանել զանձն ամենեցուն, զի մին ի՝ ի նոցանէ համարի ընկալեալ ուրոյն զհատատիս ընտանութեանն, այնպէս և որ կամի սիրելի վերախտիս իւր ընծայեցուցանել՝ յայն խորհեցայն թէ որպէս բազմից բարերարեալ և միայ միայ ՚ի նոցանէ առաւելագոյն ինն մեծարանաց տայէ հատատիս։ Վրա. կինն խափան լինել բարերարութեանց, որք ըստ չափոյ առաւելութեանն և մեծութեան՝ առաւելագունից գովութեանց գոն արժանիք։ Ի՝իայն զի խորհրդով իցեն և ընտրութեամբ, զի յախուռն և անխորհրդաբար տուեալք չիցեն երբէք սիրելիք։ Ա՝ան որպ չարաչար ընդելացայն որ ասացելոցս, եթէ համարի զի ամիսփել կամք իցեն մեզ օրինաւորութեամբքս զառնմանս բարերար մարդասիրութեան և անձուկ կոպարար պարագրել զայն։ Օ՜ի զո՞ր այլ յաւաքիւութեանց այնպէս մեծարիցեմք և առաւել յորդոր լինիցիմք ՚ի նոյն, և մա՜ր այլ պատշաճագոյն իցէ այս յորդոր՝ որպէս մեզ որ պատսպարանքս եմք մարդկայնոյ ընկերութեան։

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Օ՜ՆՁ ասա. քանզի որ և է ՀԻՔն Հոգւոյ՝ թէպէտ և յօդուածեն կամաց առաջնորդեալ՝ չհամարեսցի յաւաքիւութիւն եթէ ոչ ՚ի չափս պայմանին կացցէ, ապա չէ օրէն շայլել և զառատաձեռնութիւն։ Ա՝իրելի էն և հանձկական յոյժ ընտրութեամբ բանին

պարգեւեալք արժանաւորաց և ոչ յախտուն և ըստ դիպաց տուեալք անխտրաբար . և յորս պանծալ մարթ իցէ և անձին իւրում վերագրել զայնոսիկ : Այլ բնաւ իսկ բարեբարուեթիւն թուեսցին քեզ այնոքիկ՝ որոց և որ բարեբարեացն ամեն անձին Տանալի երեւել գործոն : Այլ քանիսն Տաճոյական իցեն երախտիք , և որպէս անջնջելի տպաւորեսցին ի խորս սրտի , յորժամ աւանել քան զպարգեւն՝ զպարգեւատուն յոչ ածեալ որ և զբարձասցէ : Արիստոս Պասսիէնոս ասէր ստէպ թէ զոմանց զընտրութիւնն կամիմ և զդատումն քան թէ զբարեբարուեթիւն . և զոմանց զբարեբարուեթիւնն քան թէ զընտրութիւն . և օրինակս ի միջ մատուցեալ ասէր . Օ դիւցազնին Հեգոտեայ զընտրութիւնն կամիմ մանաւանդ , իսկ զԼղոդեայ զբարեբարուեթիւն : Իսկ ինձ արհամարհ թուի բարեբարուեթիւն այնորիկ՝ որոյ վատթար է ընտրութիւնն : Այլ ընդ ինչ . մերժել ինչ պարտ էր զպարգեւս Լղոդեայ . ոչ , այլ որպէս զպարգեւս ընդունել բախտի , որ Տուալ ընդ Տուսի՝ որպէս յայտ է՝ դառնալ գիտէ և ի թշնամութիւն : Իսկ ընդէր իցէ ասպա զերկոսին կցորդեալսն ի մի՝ բաժանել յիրերաց : Ընդ բարեբարուեթիւն , որ ոչ ընտրութեամբ լեալ՝ զիրկ է ի կարեւորագունէն որով մեծարին : Օ ի և արծաթի բազում անընտրողաբար և առանց ուղղութեան կանուց պարգեւեալ՝ ոչ այնչափ բարեբարուեթիւն իցէ՝ որչափ գանձ : Խազում ինչ իրք են զոր մարթի է ընդունել , այլ առանց երախտապարտ լինելոյ :

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Տեսություն արդ, քաջդ յարմնոյ | իբերալիս, որ ինչ այլ ևս ինոյ մեզ յառաջնոյ մնոնէ առաքարկութեամբ, զայն՝ թէ որպէս բարեբարել պարտ իցէ. զոր ոչ այն ունիմ զդիւրին ձանապարհ ցուցանել քեզ։

Այնպէս տացուք զբաբերարութիւն, որպէս առնուն կամէաք. նախ քան զամենայն յօժարութեամբ, փութով և աներկմիտ։ Ընդհանոյ են պարգևք յապաղեալք յերկար՝ ի տարտամձեռս տուողին, զորս որպէս բռնի և խլելով ինն յանձնէ թուլոյն պարգևել։ Ոչ թէպէտ յապաղել իսկ հարկ իցէ, զդոյշ լինցաք չտալ ինչ ցոյցս ամենևին գյապաղմանն։ Եւ ընդ հատ ինչ՝ ի զանազանել և և երկմտելն, որով անդհանոյ վնաս ընդունուն։ Օ՛ն որ բարեբարէն՝ հարկ է զի յբծմտութեամբ բարեբարեսցի. իսկ որ յապաղեացն՝ զկատարելութիւն իւր յայտ արարեալ, վիպեաց զի ոչ ետ, այլ թուլութեամբ կալեալ՝ քարշողին տեղի ետ։ Յապուքը առ չտոհալոյ երբեմն լինին առատաձեռն։ Հանդգնագոյնքն յերախտիս դիւրապատարագն են և ինքնամատոյցք, որոց միայն յապաղումն յամենի խոցոտութենէն առողջ իցէ։ Աւագպոյն քան զանհոյն է յառաջել քան զցանկութիւն, և մերձաւորագոյն այնմ՝ զհետ երթալ ցանկութեան։ Եւ է ասեմ կանխել միոչ չև աղաչեցեալ. զի ասն բարւոյ՝ ի թոմեռվել շրթամոյն յաղաչանս՝ և երեսքն շառագունին ամ-

1 աթուլութեամբ կալեալ. օրինակաւ առաւաձի յարմարէ զբանն զորոյ զմի ի ծայրիցն կալեալ ուրուք թուլութեամբ, և այլ ոք ի հանդիպոյ քարշելով ելցեն զայն ի ձեռաց նորա։

Թով. և որ ինդայ նման զանճին զայն՝ բազմապատիկ
գշնորհս իւր։ Ոչ ձրի էառ զոր ինչ որ ազատանօքն ընկալաւ։ Օ՜ի որպէս առաքեացն մերոց Հանձարեղ սրտիկ
Հաձոյ Թուեցաւ ասել, «Ողիք Թանկագին ինչ քան զդնեան ազատանօք»։ Կան ուրեք ուխտս գնելոյն մարգիվ եղել հրապարակաւ Հարկ էր ուխտել. այսպէս և
աստուածոց իսկ, որոց չՀանարիմք ինչ անձի ազերս
արկանել, լուծեայն և՛ի սրտէ ախորժեմք կալ յաղօԹս։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ինչ յոժ և գժպհի է բարբառս Ողգևմ, զոր
երեսք՛ի գետին բարբառին շրԹունք։ Օ՜այդ չնորհեաս
բարեկամիդ, և որոց միանգամ յանկաս երախտեօքդ առնել քեզ բարեկան։ Ողնապարել արժան է. անագան
բարեբարեաց՝ որ ազատաւորին ետ։ Ող ասն որոյ գուշա
կել պարտ է զկատն իւրաքանչիւր և ընդ գետնի՝ ազատ
կացուցանել զնա՛ի ծանր Հարկէ ազատանայ։ Օ՜այնո
սիկ՛ի բարեբարուԹեանդ բերկրալիս Հանարեցջիր և
երկայնակեացս՛ի սրտի՝ որ կանխեն ելանել ընդ առաջ։
Ող ոչ յաջողեաց մեզ կանխել՝ կարՀեացուք գնԹ գյաւ
Նախանձիեն բանից ազատաւորին, զի մի յաղագսանցն
երևեսցուք չարժեալք, այլ երագիտք ինդրոյն՝ խոստացուք վաղվադակի, և անապարեալ՛ի նոյն՝ յայտնի
արացուք ԹԷ և առանց ազատանդ հնչենայօժարք
էաք՛ի տալ։ Օ՜որօրինակ հիւանդագ առողջարար է
կերակուր՛ի ժամու, և ջուր տուեալ՛ի ժամուն զդեղդ
կալցի զօրուԹիւն, սպնօրինակ և բարեբարուԹիւն
ԹԷպէտ դոյն և սովորական՝ փուԹասէս և՛ի պատեհ
ժամուն լեալ անյապաղ՝ զօրաւոր է յոյժ, և յաղԹէ
մեծապարգև Հնորհի՝ որ բազմավաստն դանդաղանօքն
պարգևի։ Ող երագն է՛ի տալ՝ տայ և մտադիւր, ընդ
այս չէք երկբայել՝ նմին իրի իսկ և զուարԹագին բարեբարէ զՀոգւոյն իւրոյ զկերպարան՛ի դէմին ածեալ։

ԳԼՈՒԽ ԵՐԻՐԴ

Օ ՄԱՆՑ զմեծամեծ երախտիս եղծանէն լուծ թիւն և յամբարիսս շրթունք, զարտմուեթեան և զդիժ կամակուեթեան տալով ցոյցս, երբ ՚ի կերպս զանապատ խոստանան։ Ո՞չ լաւ և իցէ քանս բարիս ՚ի բարի գործմն յաւելուլ, և քաղցր բանիւք մարդասիրուեթեան յանձնախել զյարգ հնօրհիդ, որով և անձամբ զանձն կրշտամբեսցէ երախտաւորեան զի յապաղեաց ազատել։ Արթի է յաւելուլ խոստնել ՚ի բանդ և զսիրալիր գանգատանս՝ ասելով. "Յաւէ ինձ ընդ այն զի այդպէս կարօտ գոլով քո՝ ոչ վաղ զգացուցեր ինձ զայդ, և զի այդպէս գժուարաւ եկիր յաղաչանս, և զի մինջորդ և և բարեխօս ՚ի մէջ մատուցեր. բայց արդ ուրախ եմ զի զիտձ առեր սրտի խնդ, յայսմ հետէ իմ իմիք և կարօտ իցես պահանջեացես յինէն համարձակ. զայս մինուագ ներեալ լեցի պարզմտուեթեան քում,,։ Այսու օրինակաւ՝ քան զպարգևադ, որպիսի ինչ և իցեն ոչք խնդրեցանն ՚ի քէն, մեծարեսցին խնամոք սրտիդ։ Այաքինուեթիւն պարգևատուին և մարդասիրուեթիւն նորա գերազանցեալ փայեսցի՝ եթէ որ մեհենին ՚ի նահանջ՝ ասիցէ ցանձն իւր. "Արեմ ինչ շահեցայ այսօր. ուրախ եմ յոյժ զի զպնպիսի ոք գտի բարերար, քան եթէ Հոխագոյն և յայլմէ հասանելին ինձ պարգևք. և չիցէ ինձ երբեք ըստ արժանւոյն երախտագէտ գոլ այնպիսուին բարերար սրտի,,։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Ի ԱՅՑ շատ և այնք են որք խոստուեթեամբ բանից և ամբարտաւանուեթեամբ ատելի առնեն զբարերարուեթիւնս իւրեանց, այնու ամբարտաւանուեթեամբ վարեալ և բանիւք, մինչև առջանալ խնդրողին ընդ պարգևան, ՚ի գոլ և գյապաղումին յետ խոստմանին, զի գառ-

նագոյն ևս այն է՝ եթէ յետ ընդունելութեան խըն-
դրոյն՝ դարձեալ վերստին աղաչել Հարկ իցէ : Հարկ
իցէ գնոց առնուլ զպարերարութիւնն , զորոց զհոս-
տումին ընկալեալ և չկարեմք ի ձեռս բերել : Օ այս
ոք պարտ է աղաչել զի յուշ արասցէ , զայն որ՝ զի ըն-
կալցի : Յայսպես ընդ բազմաց ձեռս յածեալ մաշին
պարգևք և նուազին յոյժ չնորհք երախտեաց խոս-
տացողին , զի բառնան ինչ ի պարգևատուէն՝ առ որս
յետ նորա մնալին աղերսք : Ո՛ան որոյ եթէ հաճոյա-
կան կամիցիս ընծայեցուցանել՝ գտուրդ , այնմ իսամ
կալ ջիր զի ողջ և անվնաս՝ և որպէս ասի՝ անվնաց ամե-
նևին հասցեն պարգևդ որոց խոստացար : Ո՛ի ոք մի-
ջամուխ լիցի յայնս , մի՛ ոք կասեցուսցէ : Ո՛ւ ոք ի քո
պարգևդ յաւելուլ կարասցէ զիւր չնորհն առանց
նուազեցուցանելոյ զքոյս :

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ղ՝ԱՐՁԵԱԼ չիք ինչ զառնագոյն , որպէս յերկար ի
վաթանս կալ : Այն իսկ որոց հաճոյագոյն ևս է յուսա-
հատ լինել ի սպառ՝ քան յուսալ յերկար : Ա՛և այս
սիտ բազմաց վատասիրութեամբ յերկարելոյ
զհոստումնս իւրեանց՝ զի մի ամբոխ աղաչաւորացն
պակասեսցի : Յայսիսիք են արբունական մեծու-
թեանն սպասաւորք որոց ցանկալի է յերկարել զՀան-
դէս ամբարտաւանութեան իւրեանց . և նուազեալ հա-
մարին յիշխանութենէ եթէ ոչ միամ միամ ցուցցեն
յերկար և բազմերիսակ զկար զօրութեան իւրեանց :
Ձառնեն ինչ փութով և միանգամայն . երագունք ի
ջարիս և յամրաչարժք ի բարերարել : Ամեն իրի ստոյգ
թուեսցի քեզ առացեալն ի հատակերգակ քերթողէն .

“ Ձիցե՞ս , աղէ , դեռ խելամուտ զի չնորհք քոյին
Ո՛ստ յերկարել դանդաղանացըդ տուժեսցին ,, :

Ո՛ստի և այն բանք սրտառուչք յայտարարք ցատց ,
“ Ո՛ւրա զոր առնելոցդ ես ,, . և եթէ , “ Ա՛յդքանդ իրըդ

են. լաւ եւս էր թէ զլանայիր Համարձակ ,, : Լաւ երախտագէտ լեցի Ընդհին՝ զոր առեին սկսանի յերկար ակընկալութեամբն տաղտկացեալ : Օ որ օրինակ խժդժութիւն մեծ է յերկարել զտանջանս , և գԺուխն ինի սպանանել առ Ժամայն (զի յետինն 'ի տանջանսդ ածէ ընդ իւր և զկատարած , իսկ որ յառաջկն Ժամանակ՝ գԺուխակարծին մնան է Հանդերձելոց պատուհասին) քան զմին օրինակի մեծ իչեն Ընդհք պարգևաց՝ որչափ անգամդագ մնատուցին : Վանդի և բարեաց իսկ ակընկալութիւն չէ զերծ 'ի Հոգոց . և զի բարեբարութիւնք յառնախ 'ի զեղ դարմանդ են չարեաց , որ որ Թողու տանջել յերկար՝ զոր փութապէս ազատել կարող էր , կամ անագան ուրեմն տայ խնդալ, Հեղձուցանել զնւր և բախտիս : Վարդասիրութիւն յապաղել ոչ գիտէ , և որ մոռացութիւն գործէ ինչ՝ գործէ անյապաղ : Որ յապաղաչոքն և օր յօրէ առնելոյ օգուտդ ինչ՝ ոչ 'ի յօժարութենէ սրտի արար . որով և զերկուս ինչ մեծամեծս կորոյս , զժամանակն և զպղյցս բարեսէր կամացն , զի որ դանդաղի 'ի կամել՝ ոչ կամի :

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՅԱՄԵՆԱՑՆ ինչ իրս , ով Լիբերալիս , գործ այն է գիտել , թէ զինչ և որովք օրինակաւ ասել պարտ իցէ և կամ առնել : Վազում ինչ յատելոյ երագութիւն . և բազում ինչ նուազեցուցանել յապաղումն : Որպէս նեսոյ նայն զօրութիւն երկաթոյ է յամենեսին , այլ խոիր մեծ է՝ արդեօք բնական և ջլապինդ բազկաւ արձակեցին եղիցէ՝ 'ի թոյլ ձեռանէ Թափիցին . սակաւ նայն՝ գծէ և Թափանցուց լինի քան զօրութեան բազկին յորմէ ինքանէ : Վյսպէս և պարգեւք նայն են , այլ քան տուչութեանն տարազաւ զանազանին : Վրպէս քաղցր են և մեծարգոյք յօրժամ որ պարգևէն չտայ Թոյլ Ընդհակառակ , յօրժամ ընդ տալն և մնանայ . խակ զմեծութիւն տուելոյ երախտեացն յերեսս Հարկանել, անմտութիւն է և նախատինս ընդ Ընդհն խառնել :

Այսպա չէ արժան դառնացուցանել զբարեբարուվեհիւնս և ոչ ինչ գԺպրի խոստնել ՚ի նոսին . այլ ևս և ազգա-բարուվեհան ինչ իրք իցեն , այլևս պահեա ժամանակի :

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՓԱՌՈՍ Ա երրուկ զամն Ժամուի զԺկամակ պարգևան՝ քարեաց Հայ կոչէը . զոր Տարկ է առնուլ սովեցան , և ուտել զառնուվեհաւթ : Տիբեր Կայսր ազատեցեալ ՚ի Ա՛ . Ա՛լիսոսէ պրեստրէ՝ որ վատնողն էր ընչից՝ ձեռնտու լինել Հռոմեացւոյն պարտուց իւրոց , Տրամայեաց նմա ցուցանել զանուանս որոց պարտէրն : Ա՛յս ոչ պարգևք են , այլ Տանձնմբել զպարտատէրս : Այս ՚ի նշանակել նորա՝ գրեաց Կայսրն , զի ՚՚ Հատուսցին Ղնտակէին պարտքն ,, . և նախատալից յաւելուածովն այնուհիկ որպէս ՚ի պարտուցն՝ նոյնպէս և յեպախտագիտութեենէ կացոյց զնա ազատ : Օ էր ծոյց զնա ՚ի պարտատէրսըն , այլ ոչ ընդՀապատ իւր արար էրախտեօքն : Ա՛յլ ինչ , որպէս Թուխ , խոչնուրդ կէն Տիբերեայ՝ զի մի և այլք յաՀախանցին խնդրել զնայն . և իսկ արդեօք լեալ այն Հնարք զօրաւոր առ ՚ի զսպել ահեղով զվատ ցանկութեհիւնս մարդկանն . այլ որ բարեբարէն՝ այլ ազգ ամենևին կացցի Հանապարհ :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Օ ՚ի Հաձոյ և ընդունելի իսկ բարեբարուվեհիւն Տարկ է նման ըստ ամենայնի զոլ բարեչարութեանր . իսկ Տիբերեայն ոչ բարեբարել է այլ նախատալից յանդիմանութեհիւն : Այս զի յայտ մասին ևս զոր խոչնիմն ասացից Տարևանցի , նաև Թագաւորի իսկ ոչ ՚ի պատիւ իսկ պարգևել ինչ առ ՚ի նախատինս : Վասպէտ և ոչ այսու օրինակաւ խաւսել կարաց Տիբերիոս , որպէս կարծէին , ՚ի Թախանձողացն տազտկու-

Թէնէ . քանզի հուսկ ընդ հուսկ գտան ոմք զնոյն ազա-
տանս մատուցին նմա . և նա հրամայեաց ամենեցուն
նոցա տալ զհամար պարտուցն իւրեանց յատեան ծե-
րակուտին , և այնպէս ետ նոցա գումար ինչ չափով :
Ո՛չ առատաձեռնութիւն էր այն՝ այլ համարառուծիւն,
ոչ օգնութիւն այլ հարկ Թագաւորի : Ո՛չ բարերա-
րութիւն , զոր չմարթէ յիշել առանց ամօթոյ : Յա-
տեան կոչեցաւ , դատ վարեցի զի առից զնոցունէն :

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Ա՛ԱՍՆ այնորիկ օրինադրեն առնային վարդա-
պետք խմաստութեան , ինչ ինչ ՚ի բարերարութեանց
յայտնապէս տալ և ինչ ինչ ՚ի ծածուկ : Յայտնա-
պէս , զոր ՚ի փառս են ընդունողին , որպիսիք են
պարգևք զինուորականք , բարձ և պատիւ , և որ
ինչ միանգամ յայտնութեամբն յաւելուն ՚ի պայծա-
ռութիւն : Իսկ որ ինչ ոչ ՚ի պատիւ իցեն և ՚ի փառս
ընդունողին , այլ ՚ի գործոն տկարութեան նոցա , չքա-
ւորութեան կամ՝ վատանձնութեան , լուռեայս տալ
են . զի նոցա միայն որոց օգտեն լինցին գիտելի : Ո՛երթ
և գնա իսկ որ օժանդակին՝ խաբել պարտ իցէ . իբր
զի ընկալեալ զպէտսն և զուտան չգիտիցէ :

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Ո՛ՅԱՆԴԵՆ զԱ՛ղեքսիոսեայսն զի կամեցեալ ծածկա-
բար նպաստատմամբ լինել բարեկամին, որ զաղքատու-
թիւն իւր ծածկէր , և հիւանդ գոլով՝ և անձեռն-
հաս ՚ի ծախս կարևոր պիտոյիցն չայսոսեր ինչ , քանզի
արծաթոյ եդ ընդ բարձիսն , զի այնն որ վայրապար
ամաչէր՝ գոցէ զնմանէ քան Թէ ընկալցի : Իսկ զնա-
պղ , ասիցես , անգիտացի յոմանց ընկալաւն . — Ո՛չ
անգիտացի , զի և այն մնան է բարերարութեան .
և երկրորդ զի այնչափ այլ ևս բարերարեցից նմա և

այնչափ ինչ պարգևեցից՝ մինչև զառաջնոցն իսկ ի միտ առցէ զառիչն : Հուսկ ապա , թէպէտ անգիտացայն նա զառնուէ իւր . բայց ես գիտացից զնա իմ: Այդպէս ասէ Տէր . ահա ես կոչեցից զառիչն ինչ է ասիցես : — Այդպէս է այո եթէ վաչխատուռ լինել կամիցիս . իսկ եթէ տալ՝ տուր այնպէս զի առաւել օգտակար իցէ առողջիւ , և դու վկայութեամբ անձինդ շտացիս : Այլա թէ ոչ՝ ոչ եթէ բարեբարուեթեան իցես ցանկացող , այլ բարեբար երևելոյ : Կամիմ, ասես , զի գիտացէ : — Պարտապան ուրեմն քեզ խնդրես : Կամելով կամիմ զի գիտացէ : — Իսկ զնարդ . եթէ նման լաւ ևս իցէ չգիտեցես , եթէ առաւել հաճոյական իցէ և առաւել ի պատիւ , ոչ փոխեցիս ի մտացդ : Կամիմ զի գիտացէ : — Ընկամիցիս դու ուրեմն և ի մեծան փրկել զնարդ : Ես ժխտեմ զի ըստ տանելոյ իրացն օրէն իցէ զուարճանալ երախտագիտութեամբ պարգևառուին , այլ եթէ նպաստն որում կարօտի յայտնապէս լեալ՝ ամենի ածիցէ նման և ի զառնուելիսն պարգևս իմ եղիցի , չարարից Հանդէս բարեբարուեթեանս ինչ : Այլ քնաւ իսկ իցէ օրէն ցուցանել նման զանձն իմ պարգևատու՝ երբ ի կարևորագունից և ի գլխաւոր օրինաց բարեբարուեթեան մի և այն է չերախտել զոք երբէք , և ոչ յոչ ածել նման գերախտիս : Ի այս օրինաց են բարեբարուեթեան կրկնատեք . միոյն իսկ և իսկ մոռանալ զառնելն , և միւսոյն չմոռանալ երբէք զառեալն . երախտեացն ստէպ յիշատակուեթիւն տագնապ զայր և նկուն առնէ :

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ի Դէպ իցէ բարբառել աստանօր զոր այլն այն պահեալ ի տարագրուեթենէ Յոասեփեայ ձեռամբ միայ ուրուք ի բարեկամացն Կեսարու , գոլեաց առ վշտին , ոչ համարժէտ ամբարտաւանուեթեան ազատարարին . “Տուր զնա անգրէն ի ձեռս Կեսարու . և մինչև ցերբ ասիցես , ես զքեզ պահեցի , ես զքեզ ապրեցուցի ի մահենէ . զայդ ես ինձէն յոչ ածեալ միգի ինձ ի կեանս . իսկ ի քէն՝ մահ է ինձ : Ընդ քեզ երախտապարտ

Թէ առ ցոյց ինչ բարեբարութեանցդ պահեցեր զիս . մինչև ցերեք շաբթ բերցես զիս ի հանգիս , մինչև ցերեք չհոգուցաս մոռանալ ինձ զգժբախտութիւն իմ . ի հանգիս իսկ յաղթանակի գնեմ միանգամ ածելով ձագնի ,, : Օ՜ զր տուաքն չէ պարտ յիշել , զի զր յիշէն՝ յետս պահանջէ . և ոչ յիշդ կարել պարտ է և ոչ նորոգել զյիշատակ երախտեացն , բայց եթէ նոր ինչ ի պարգևագ յաւելուլ առաջնոցն յուշարար : Կաև ոչ այլոց պատմել պարտ է . որ եան լսեցէ . խոսեցայ զր հատն : Կզգա Թէ ոչ՝ ի գնդ գոյցէ տասնեան յումմէն՝ առ այն՝ զր ամենայն ուրեք պարծելը ընդ երախտիս իւր , ՀԹէ կարիցես ուրուստ լինել Թէ չընկալաք զխոստեղէնն : Կչ յաճել նորա Թէ երբ , յուսա պատասխանի . Կազգում անգամ և ի բազում գնգս . այն է՝ ուր և քան նիցս քարոզ եղեր այնմ : Կչ զինչ պէտք իցեն քեզ խօսելոյ և զոյցդ զգործ կատարելոյց : Կ՝ որ պատշաճագնէս յոյժ քան զքեզ կարացէ՝ ընալ զայդ պաշտօն , որպ ի խօսելն և լռութիւնդ քո գովեսցի : Կպաշտիրէ ուրեմն վարկանիս զիս կարծելով Թէ ի լռել քո զայդ՝ զիտացէ և ոչ ոք : Կչ այնչափ գժպատեհ և զգուշալի են իրգ՝ զի և այլոց ուրուք ի պատմել զայն առաջի մեր զայս պարտ է առնել պատասխանի . ,, Կեծայ արգարև բարեբարութեանդ արժանի է պլին , այլ իմ չէք ինչ առեալ ընձս տալելին , բայց միայն զի ցանկացեալ եմ տալ ընձս զանձայն ,, : Կչ զայսոսիկ ոչ իբրև կեղծաւորտիր Հանճառութեամբ , և ոչ այնու ձևով պրպտս առ զնս են ամենք . զի զոր ձգել յինքեանս ցանկան՝ մերժեն , Կչև զանձնայն ինսան և զնդրգասիրութիւն պարտ է ի վար արկանել : Կչկրկագործք եթէ զանձնայն զատասկան ի սերմնանելն ամիսիկին՝ կոխնելին սերմանելոքրն : Կազգում ժամանակի պէտք են հասանելոյ սերմանցն յոմ և ի հանձս : Կեթէ ոչ ի սկզբան՝ մինչև ցվախճան անգալ և անխնդք մնակութեամբ խոանգարել կասցին առնելք՝ ոչ պազաքերեն . ոչդպէս խնս և ըզբարեբարութենէ : Օ՜ինչ այլ խոանգ մեծագոյն քան զնոցայն առ զրգիս . բայց ի գերև երանեն և այսքիկ , եթէ մնակութեանէն նոցա եթէ առ՝ձանձրացցին , և ոչ սկզին ծնողական ի խնսն իւր յաւելացս յերկարել : Օ՜նոյն խնս ինձ և զայլոց երախտաց , յորս

եթէ ոչ յաւելուցուս ի նպաստ՝ կորիցեն. ոչ մեծ ինչ է տալն, եթէ ոչ ի նոյն յաւելցին խնամք։ Եթէ ջարդեալ պարտ ցանկալ առնել զերախտագործելոյն առ ի քէն, ոչ բարեբարել միայն պարտ իցէ քեզ, այլ և սիրել։ Այնպէս մնասցուք, որպէս ասացի, ի լսելիս նոցա. յիշատակութիւն երախտեաց տալոյ ածէ. յանդիմանութիւն զրգռէ զատելութիւն։ Այլ ինչ այնպէս զգուշալի է ի բարեբարելն որպէս յամբարտաւանութենէ. Օ՜ինչ պէսք իցեն խրոխտ կերպարանաց, զինչ պէսք ինքնագոյց բանից. արդիւնքն ինքնին բարձր առնեն զքեզ։ Ի բացէ՛ ի միջ մեծապանծութիւն. ի լռութեանս մերում գոչեացեն արդիւնք։ Ամբարտաւանութեան՝ երախիք ոչ գժպհիք միայն այլ և ատելիք են։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Կացուսս Կեսար զՊոմպէի Պետեայ զկեանսն ջարդեցեալ (եթէ ջարդիցի արդարև ոք չարատեսն)։ Այլ երբեմն մատուցեալ ջարդչս մտնէր նմա ազատասէն, գնախոյ սանն մատոյց նմա ի հարթոյր։ Որք ջատագովքն են Կեսարու՝ չընդունին ամբարտաւանութեամբ արարեալ գայն, այլ առ ի ցուցանելոյ նմա զոխերգարդ՝ մնասանդ եթէ զմարգարտացեալ զոսկի կօշկին։ Այդպէս, բայց ոչ ի նուաստութիւն իւրմէ սուն հիւպատոսի ի Համբոյր խոնարհել ոտից և մարգարէի. քանզի և չէր իսկ ի բռնադատ մարմնի նորա մնան մարգարէին ի Համբոյր։ Այլն ծնեալ ի փոխանակել զաշխարհս ազատ քաղաքի ընդ պարսկական ծառայութեանն, ոչ չուտ Համարեցաւ զի ծերունին և խորհրդականն մեծ ի ծայրագոյն փառացն խոնարհեալ յանդիմանն առաքանչին գեհենատարած կայցէ ազատասէր՝ որպէս ի պարտեալոյ ոք եթէ մեծ յոտս յաղեղակոնին, հնազանդեցաւ և ի վայր բան զծունկան նուաստացուցանել գնա և նկուն առնել զատելութիւն. և չար եւ այն էր, որպէս ի դէպ իսկ ասիցէ ոք արդեօք, զի գնախոյ սանն մնասցանէր։ Ոչ գիտեմ և գժպհի գառաքելութենէն

ոչ չատացեալ ինքնակալն՝ կօշիկ յոտն՝ կալ և լսել զխուսիր դատապարտութեան առն հիւպատոսի, այլ և զբևեռս կօշկացն՝ ի բերան նորա մխել։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ա՛վ անմիտ և չարասէր ամբարտաւանութեան հզօրաց։ որպէս ընդունայն էն պարգևք քո։ զիարդ՝ ի նա֊խատինս զբարերարութիւնդ յեզափոխես։ որպէս ա֊ռաւելագոյց մոլելովդ զուարճանաս, և չիք ինչ քեզ վայելուչ։ Որչափ բարձրագոյն՝ ի վեր ամբառնաս՝ այնչափ նուաստագոյն ես, և յայտ իսկ ցուցանես թէ անձամբ էն քեզ բարիքդ որովք այդպէս փքանաս և եղծանես զնորհդ։ Ա՛յս ինձ, ես խրոխտաս այդպէս և բարձրավզիս։ Հիմ յեղաշրջէս զտեսիլ զիմացդ և զկերպարան՝ դիմակ ինն վերեսօքդ արկեալ։ Վաղվը էն պարգևք մարդավայելուչ կերպարանօք չնորհեալք հեզութեամբ և քաղցրութեամբ։ պարգևք՝ զորս ոչ իշխանութեամբն՝ ի վերայ իմ յոխորտալով տացէ ինձ հզօրն, այլ մարդասէր քաղցրութեամբ՝ որպէս մար֊թէրն՝ ի տկարութիւնս իմ զնչնանելով, զպերճութիւն փառացն՝ ի բաց եդեալ և զդէպ ժամանակին դիտելով, այնպէս՝ զի զպատեհէն մանաւանդ թուիցի բոլոն Տարկանել քան թէ կարօտութեան՝ ի թիկունս հասա֊նել։ Ա՛յսու ևեթ մարթ իցէ հաւանեցուցանել զդո֊սա առ՝ ի չկորնսանելոյ տմարդութեամբ զերախտիս իւրեանց եթէ ցուցանիցեմք զի ոչ ինչ աւելի մեծասցին պարգևք նոցա հանդիսապէս տուեալք։ և ոչ այնու մեծ ինչ երևեսցին և ինքեանք։ և զի սուտ է և ընդու֊նայն՝ պերճութիւն ամբարտաւանութեան, և զարժա֊նիսն սիրոյ ստելիս կացուցանէ։

1 Դժպատեհ էր յոյժ առ Հռովմայեցիս կօշիկք կալ յատենական և ի հրապարակական տեղիս, որպէս և կիկերոն վան պարսիկ կշռամէկ խօսիւ զկատիլինա։

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Լ՝ ուրեք զի ՚ի ՚ճաստակար խնդրոցագ էն պարգևքն, զորս Թէ ետամք՝ բարեբարեմք. նոքին իրի առաւել քան ՚ի կան խնդրոցին օգտի նորա խնամ կալցուք։ Օ ՚ի ՚ճաստակարաց եմք յաձախ ցանկացողք. և չկարեմք իսկ տեսանել զրա՛վ չափով ՚ճաստակաւքն իցէն. զի ցանկութիւն Թիւրե զդատաստան. այլ ընդ զիջանիլ ցանկութեանն և ընդ դադարել ուժգնութեան կրիցն բորբոքելոց՝ որք չանսան խորհրդոց, նզովս զՀետ սրկանեմք որոց զ՚ճաստակար պարգևան ետուն մեզ։ Օ որ օրինակ ետամք խոճացելոց ջուր ցուրտ, և ոչ սուր ՚ի ձեռս կոծողաց և ընդ անձինս ոգորելոց, և ոչ սիրողացն զոր ինչ միանգամ յեռանգան կրից խնդրիցէն առ ՚ի վարել նոքօք Հակառակ անձանց, նոյնպէս և զ՚ճաստակարսն Թէպէտ և խոնարհութեամբ, Թախանձանօք և պատուհասս որ խնդրեսցէ՝ պարտիմք սլինդ կալ և չտալ։ Որպէս ՚ի ՚ի սկիզբն նոյնպէս և ՚ի վախձան բարեբարութեանն պարտ է Հայել. և զայն և՛Թէ տալ ընդ որ ոչ յաոնուն միայն՝ այլ և յետ առնլոյն խնդասցէ որ առնուն։ Այսումբ են որ ասեն. “Վհատեմ զի ՚ի վնաս իցէն նմա իրքէդ. բայց զինչ առնել իցէ. աղաչէ պաղատի. ոչ կարեմ զդէմ առնել Թախանձանացն. Թող զանձնէ զանգատեսցի և ոչ զինէն,,։ Այսբիս. զքէն մանաւանդ և ոչ յանիրաւի զանգատեսցի երբ ՚ի Թողանալ եռանդնալ բորբոք կրիցն՝ անձին իւրում զգայցէ։ Օ Խորդ ոչ ատիցէ զնա, յորմէ ՚ի տոյժս և ՚ի կորուստ անձին եգիտ օգնականութիւն։ Այժական բարութիւն է զիջանել ՚ի ՚ճաս աղաչողին։ Օ որ օրինակ գործ մի գեղեցիկ է և զորս չհամիցին և Հակառակիցին փրկել և պահել, սոյնպէս և զանհացող պարգևան տալ խնդրողին՝ առեալ Թիւն իմն է մարգահաճոյ և չողմնարար։

Լ՝յիպիսի արասցուք բարեբարութիւն, որ ՚ի վայելս անդ և՛ս քան զևս Հաճոյացի, և ոչ ՚ի չարն երբէք փոխեսցի։ Այ տաց ումեք երբէք արծաթ, զոր գիտեմ Թէ ՚ի կապէնս տացէ պռոնկի, զի մի գործակից

գոայց գործոցն կամ խորհրդոյն անարժանութեան ։ Եթէ կարող ինչ իցեմ՝ արգելից , իսկ եթէ ոչ՝ չեղից նմա ձեռնտու և օգնական ի չարագործութիւն ։ Զ-թէ բարկութեամբ բորբոքեալ բերիցի յանարժանս , և եթէ ի տենչ մեսիտութեան ուծացոյն յուղղութենէ , ոչ թողացուցից նմա անձամբ անձինն մեսանել , և ասել ապա յաւուր միում թէ " Սիրելով սպան զիս ,, ։ բազում այն է , զի չիք խորը ընդ տուրս բարեկամաց և ընդ ուխտս թշնամեաց ։ Օ՜ որ ինչ ուխտիւք խնդրեին թշնամիք իմ զի անցցէ ընդ իս , ի նզոն մտէ և հոսէ զիս բարեկամացս տարագէպ ներողութիւն ։ Զ-զինչ վատթարագոյն քան զայս , որ և ատելի պատահէ , զի ընդ ատելութիւն և ընդ բարեպարութիւն չիցէ ինչ խորը ։

ԳԼՈՒԽ ՀՆԴԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ա՛ռ՝ ինչ տացուք երբեք , որում մարթի իցէ լինել մեզ ի նախատինս ։ Վասանզի լուսին բարեկամութեան է հատատարել անձին զարեկամին , սպա և երկաքանչիւրումն օգտի միմեանցմէ պարտ է խնամ ունել ։ Տայ կարօտելումն , այլ այնպէս՝ զի ոչ կարօտ ձեացից ։ ի թէ կուռն հասիցէ կորստականին , այլ այնպէս՝ զի և ես ոչ կորեայց , բայց եթէ ի վրկանս մեծի ուրուք առն , և կամ վասն մեծաց ինչ գործոց ։ Ել տայ զայն չնորհ , զոր և ինձ գժպատեհ է խնդրել Ել զղոյզն ինչ և զփոքր մեծացուցից ։ և ոչ զմեծն որպէս գոյզն ինչ և չնչին տայ ընդունել ։ Օ՜ի որպէս որ զպարգևն հաշուի՝ անարգէ զշնորհն , սոյնպէս և որ զյարգ պարգևին զնուազանէ , գոլեալ ընծայեցուցանէ և ոչ անարգէ ։ Խրաքանչիւր ումեք հայել պարտ է ի կար զօրութեան անձին , զի մի աւելի ինչ կամ նուազ քան զարժանն տացուք ։ Պարտ է և ի նա ինքն հայել որում տամքս , զի են ինչ պարգևք փոքունք և դուշաբեայք գժպատեհք մեծապարգև ձեռին ։ և են դարձեալ որ ստորևք քան զարժանն են որում պարգևին ։ Զ-ինչ արդ զերկաքանչիւր անձինն կշռեալ և զպարգևդ՝ տեսջիր մի արդեօք ծանր իցէ կամ

խոնարհագոյն քան զարժանն առաղիւդ , և զի որ առնուն՝ հանդերձեալ զայն արժանի ընդունելութեան կամ բառնան իցէ այնմ՝

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՎՌԱՂԱՔ պարգևէր ումեմն մոլին Կղեբատպէ , որ մեծամեծս միշտ երկեր 'ի պարին ։ Իսկ այլոն պատ՝ պարգևէր՝ յանձն իւր Հայեցեալ հրաժարեաց 'ի յաղաղանց այնքանոյ պարգևին և ասէ . « Ոչ 'ի դէպ են պարգևդ իմումս բախտի ,, . առ որ Թագաւորն . « Ոչ ինչ ինձ փոյթ , ասէ , Թէ զինչ վայել իցէ քեզ առնուլ , այլ Թէ զինչ ինձ 'ի տալ ,, ։ Վեծանձնութեան Թուիցի բարբառս և արդարև Թագաւորի . և սակայն լի է յիմարութեամբ ։ Այսն զի չէք ինչ վայելուչ և անկատար 'ի քնէ , այլ ամենայնին ըստ իրացն է , ըստ անձինն , ըստ տեղւոյն , ըստ պատշաճին այլոցքն հանդերձ , առանց որոց անյայտ իմն և աննչան է գործն ։ Այլ փքացեալդ ամբարտաւանութեամբ . եԹէ դմա չիցէ անկ առնուլ զպարգևդ , տպա և ոչ քեզ տալ . ըստ անձին և ըստ արժանւոյն կշռեցի ամենայն . և զի յամենայնի 'ի չափս կայ առաքինութիւն , որ յաւելուն և որ պակասէ՝ միօրինակ մեղանչէ ։ Վեպէտ և արժանի քեզ պարգևդ իցէ , Թեպէտ յայն հասեալ իցես բարեբախտութիւն՝ միանգ քաղաքս 'ի պարգևի տալ , սակայն մեծի և վեհանձնութեան է գործ չառնուլ յանձն պարգևս այնպիսի՝ քան Թէ շռայլել , Թող զի ոչ ամենայն գոգ բառնան իցէ յընդունելութիւն քաղաքի ։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՅԱՆՑԻՊՈՆՈՍԻ տաղանդ մի արծաթոյ խնդրեաց Կիւնիկեանն[1] . ետ նա պատասխանի . Ո՞ւստ է այդ և 'ի վեր քան զարժանն Կիւնիկեան խնաստասիրի ։ Հաւել նա յայնժամ խնդրել զնոյն մի , ասէ Կնտիգոնոս .

[1] Թրասիբղոս խնաստասէր Կիւնիկեան ։

Այլ այդ զոյչն ինչ է և ոչ բան արժանեաց Թագաւորի, Խաղ անարգ և փախուստ վատ՝ որով Հնարեցաւ չտալ և ոչ ինչ, ի գետնայն զարքայն և ի քանեարն զԱխնի-կեանն նկատելով. երբ մարթի իսկ եր նմա տալ զգետնայն որպէս Ախնիկեան առն, և իբրև Թագաւոր գքանեարն. Թէպէտ և իցէ ինչ մեծ և առաւելեալ քան զարժանն յընդունելութիւն Ախնիկեան առն, սակայն չէր ինչ այնպէս փոքր զոր չիցէ կարող տալ վայելչապէս մար-դասիրութիւն Թագաւորի՝։ . . . . . .

. . . Լեմ զնա հարցանել, Հաճեալ եմ ընդ այդ. վասն զի դժպատեհ իմն է արհամարհել զարծաթ և ինդրել զնոյն։ Լուեալ ատեցեր զինչս, ուստ եղեր, զայդ կերպարանս կալար յանձին. կաց ապա ի նմին։ Ընդրուկ մեծապէս Թէ աղքատութեամբ պան-ծացեալ և հետամուտ ընչից իցես։ Այս այլ իւրաքան-չիւր ոչ զանձն իւր աւերէ պարտի նկատել՝ այլ և զնա որում կամիցի լինել ձեռնտու։ Կամ է ինձ զներոյն Ադրիսիպպոսի ի մէջ առնուլ զօրինակ գնդաբաղդու-թեան. ասպաքէնն չէր երկայել զի չանկցի երբէք գնդակն ի գետին բայց առ Թերութեան այնոցիկ որ ձգելոն զայն և կամ ընկրկելոն։ Իսկ յորժամ պատշաճա-պէս Հարստարութեամբ երկաքանչիւրն ձեռաց ի ձեռս ձգեալ և ընկրկիցէ՝ պարբերիցի անընդհատ։

Այս Հարստար խաղակիի սէրք են զի բան երկայ-նութեան կամ բան կարճութեան Հանդիպակաց խա-ղակցին զգնդակն ձգեսցէ։ Բան այսմ իմն և զբաւե-բարութենէ, որ Թէ երկաքանչիւրումն իսկ տուողին և առողն չիցէ Համապատշաճ՝ ոչ աստի որպէս պարան է լիցի տուեալ և ոչ առ նա ժամանեսցէ պատշաճապէս։ Լեմ կիրթ զբ և Հմուտ կացցէ ի Հանդիպել, յան-դգնագոյնս արձակեսցուք զգնդակն. զի որպէս զնարդ և ընկերսցէ՝ կալցի զայն ձեռնն Հարստար և աջողակ։ Իսկ Եթէ Հաճակ ոք և անՀմուտ՝ ոչ յանդուգն և ոչ ուժ-գին, այլ մեղմով և Թուլագոյն ի ձեռս անդր նորա զձգուծին ուղղեսցուք։ Օ՜նոյն պարտ է առնել և ի բարեբարութիւնս, և զամենայն իսկ ուսուցանել՝ շատ Համարեալ Եթէ ջանասցին, փորձեսցին և կամեսցին[3]։

1 Պակասէ և աստ ի բնագրին։

2 «Ջանասցին փորձեսցին և կամեսցին» բան արժանագոյն ընդու-նել զերբեմն և երբեմնասացոյց լինել։

Կայց շատ ևս այն է զի մեք յաճախեմք զաղերախտս, և սատար լինիմք նոցա ՚ի նոյն. որպես այն Թէ յայնժամ մեծ իցէն երախտիքն մեր, եթէ չկարիցէ ոք չնորհատոյց լինել նոցին. նմանեւապէս չարակամ գնդակախտ զից ոքք ընդ խայտառակել կամին հանդիպակաց խաղակցին, նաև ՚ի միւսոյ իսկ խաղըն, որում չմարթէ յերկարել եթէ երկուստեք չիցէ համաձայնութիւն։

Այն իսկ բազումք այսպէս խեղաթիւրեալք մտօք զի լատագոյն համարին կորուսանել զերախտիս իւրեանց՝ քան Թէ ընդունել յայտնապէս զիմոխարէնսն. ամբարտաւանք և նախատադիրք այլոց։ Այանի լատագոյն է և մարդասիրագոյն Թոյլ տալ և երախտաւորելումն առնել զիւրն, ձեռնտու լինել նմա ՚ի հատուցումն չնորհացն, մարդասիրաբար ՚ի բարին վերագրել զամենայն, զչնորհակալեաց բանսն որպէս փոխարէնս չնորհացն ընդունել և դիւրապատրաստ ընծայեցուցանել զանձն ընդունելոյ Թեամբ փոխարինաց ազատս առնելոյ զնոսա զորս երախտեաքն արար իւր պարտական։ Դժուարի է վաշխառուն, եթէ խստիւ զտոկոսսն պահանջեսցէ. նոյնպէս Թէ գանդաղեսցի ևս և պատճառանս պատճառեսցի չառնուլ կետս զարծաթի իւր. այսպէս և գհատուցումն երախտեացն ընդունել պարտ է, բայց ոչ պահանջել։ Այլ արդարև բարեբարն նա է որ տայն մոռադիւր և ինչ ոչ պահանջէ. որ խնդայ ընդ հատուցմանն և զոր եամն մոռացեալ՝ բարեսէր մտօք իբրև զերախտիս զիմոխարէնսն ընդունի։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Այն ևս որք ոչ ՚ի տալն միայն զտուրս երախտեաց ամբարտաւանեն՝ այլ և յառնուելն, որ ստգտանելի է յոյժ. քանզի ժամ է արդ անցանելոյ յերկիրզորդ մտանն առաքինութեանս Հառելով Թէ զիարդ և որպէ օրինակաւ պարտ իցէ ընդունել զբարերարութիւնս։ Յառնեացն գործս պատշաճից՝ որ ՚ի մէջ երկուց վէճարին, նոյնչափ ինչ պահանջին և յերկուստեք։ Այեթէ ՚ի հայրական պարտսն հայիցիս Թէ որպիսի պարտ իցէ նմա

լինել, ի միտ առնուցուս Թէ ոչ ինչ ընդհատ և որդոյն
են պարտք լինելոց որպէս պարտն է, Որպէս առնն նորս
և կնոջն են պարտք, և զոր պահանջեին՝ հատուցանեն
միմեանց փոխանակաւ, և զնոյն խնդրեն օրինս հատա-
սարութեան, և այն է ահա գժուարինն, որպէս ասէ
Հեկատոնէն: Այս զի ի գժուարինս է առաքինու-
թիւն և որ ինչ առաքինութեան է ազգակից. զի չէ
բաւական գործել միայն զարին, այլ և որպէս պարտն
է գործել բանիւ: Վասն առաջնորդութեամբ գնաս-
ցուք զմտապարշն ողջոյն. զամենայն ինչ մեծ և կամ
զիարդ նորին խորհրդով գործեսցուք. և որպէս զտայն
ուսուցանեն նա մեզ՝ նոյն ինքն օրինադրէ գարձեալ
նախ քան զամենայն մի յամենեցունց առնուլ անխոտ-
բաբար: Յորոց առցուք ապա: Օի առացից քեզ
Համառօտ. ի նոցանէ՝ որոց տալն ցանկալաւք: Ա-
միեէ ոչ առաւելագոյն խնամոց պէտք իցեն յընտրու-
թիւն այնորիկ որում լիցուք պարտապան քան որում
տալքն: Օի թէպէտ և ոչ այլ ինչ հասցեն մեզ
անտի վնասք, յորոց հասանեն բաղումք, բայց ոչ ծանր
տանջանք իցեն պարտապան գոլ՝ որում ոչն կամիմք:
Վնգ հակառակն՝ որպէս քաղցր իցէ ի նմանէ ընդու-
նել զբարերարութիւն՝ յորմէ թէհանմանեալ իակ և սի-
րեացես. որով և ցանկալին ի բնէ բարեկամութիւն
արգարանայ և իրաւամբք: Վակ բարւոյ առն և հաս-
տի վնաս թշնամանգոյն որպէս հարկ սիրելոյ գնալ զոր
գժպատահն իցէ սիրելոյ հարկ է ինձ ազգ առնել առ-
զի ոչ վնասանաց են բանք իմ, որոց ամենայն ինչ ի
դէպ է և պատշաճ, որք իշխեն սրտից իւրեանց, և զոր
կամին սահմանեն անձանց օրինս, և զսահմանեալն
պահեն, այլ զանկատարից ի մնոդկանէ, որք զա-
ռաքինութեան կրթին զկետ և զյօժարութիւնս իւ-
րեանց սատարակս բռնութեամբ նուաձեն յանձին:
Վր ազգ ընտրելի է յումէ զբարերարութիւնս ընկալ
լոյց: Վր առաւելագոյն փութոյ և խնամոյ պէտք
են յընտրութիւն բարերարին՝ քան զիսոհատուին. զի
սակս զոր առին պարտիմ հատուցանել. և Թէ հատուցի՝
աշխատեալ եմ և ազատ յամենայն պարտուց. բայց
նման առաւել ինչ պարտապան եմք. զի և ընդհատագոյց
ևս լեալ՝ չեմք տակաւին զերծք ի պարտուց, այլ հա-

տուցեալ միանգամ՝ դարձեալ վերստին սկսանել պարտ է։ Օ՛ի զոր օրինակ զայր անարժան չէ օրէն ընդունել՝ ի բարեկամութիւն, նոյն անբռնաբարելի օրէնք էն և բա-
րեբարութեան՝ որ ծնողն է բարեկամութեան։

Ա՛յլ ասիցես. Ես միշտ մարթ իցէ ինձ ասել. Ես կամիմ. է ուրեք զի ակամայ պարտ է ընդունել զբարերարութիւն։ Պարզևէ ինչ ինձ բռնաւոր ան-
գութ և բարկասիրտ, որ զմերժումն պարգևին նա-
խատինս անձին համարեսցի՝ և հարկ իցէ ինձ ըն-
դունել զայն։ Իբրև զաւազակն և գՀինս ծովու հա-
մարեսցի քեզ թագաւոր որ գնոցին կրէ զսիրտ. բայց զինչ։ իցէ՞ նա երախտապարտութեան ինչ արժա-
նի. իսկ ես յորժամ ընտրել ասիցեմ՝ ի բաց տանիմ զերկիւղ և զբռնութիւն, որոց ի նեբքս սպրդեալ՝ բառնի ընտրութիւն։ Եթէ ազատ իցես և ինքնիշ-
խան ընդունելոյ և կամ ոչ, զայդ կրնես քեզէն. ապա եթէ հարկն բառնայ ի քէն զազատութիւն, գիտես զի չառնուս, այլ հնազանդիս։ Եւ որ ընդհակառակ իցէ ընդ այնմ՝ զոր մերժել չկարէր։ Եթէ ինդրիցես գի-
տել եթէ կամիմ, տուր ինձ ազատութիւն և կամե-
լոյ։ Ասայ կենամ ես քեզ. չ՛ ինչ որ պինչ և տայցէ. զի որ տայն և որ առնուն ոչ ի կամաց է։ Ծակպատ և կեցուցեր գիս, բայց չես կեցուցիչ. նաև թոյնն եղև ուրեք ի քեզ դարմանոյ, բայց ոչ վասն այնորիկ ընդ առողջարարս հանդիպեսցի։ Եւ ամենայնի որ օգտեն՝ երախտապարտը իցեմք։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

Որ՛ի սպանութիւն եկեալ էր բռնաւորին՝, զկոյրն Ձեղքեաց սուսերաւ, յոր բժշկոյն ձեռք ոչ իշխեցեալ էին հպել. այլ ոչ վասն այնորիկ շնորհս ինչ կալաւ նմա բռնաւորն, զի՛ ի մեսաներն արար բժշկութիւն։ Տեսա-
նեմ զի բնաւ իսկ չարժեն ինչ իրքն. զի ահա և Հանա-

1 Յաստվեի Փերեացւոյ, որպէս պատմէ Պլիկերան՝ ի գիրն որ յՀ-
բութեան առաւածոց. բայց Պլուտարքոս գՊրոմեթեայ Թեսա-
ղացւոյ առնդէ գնոյն։

բի իսկ բարերարեալ, որ չարակամութեամբն օգտեաց. զկնի՛ բարի պատահեցին, իսկ մարդն աներախտեաց: Օ՜ահաւ՜ի կրկիսի տեսաք զի ծանուցեալ զոր՛ի գաղանաբուծից՝ որոյ լեալ էր երբեմն իւր մարզիչ, պատրաստեաց նմա՛ի չարձակմանէ գազանաց: Այլ միթէ՛ի բարերարութիւն ինչ համարեսցի օգնութիւն գազանին. և ոչ երբէք. զի ոչ՛ի կամաց ինչ բարերարութեան արար զոր արար նա: Այլ փոխանակ գազանին եղկեի քեզ բռնաւորն. երկաքանչիւր և եւս՝ եւս՝ բայց և ոչ միւն բարերարեաց: Օ՜ի չէ բարերարութիւն զոր ընդունի որ բռնութեամբ. չէ բարերարութիւն ընդ որոց հնարհաւարատ գտանի որում ոչն կամի: Այսպէս զազատութիւնն իմ ինձ ընարհեա, և ապա թէ զբարերարութիւն:

ԴԱՏԻԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Խնդիր է զի՛. Կրտսեակ թէ արդեօք պարտ էր նմա զկեանս իւր ընդունել պարգև՛ի Կ՜. Յուլիոսէ, զոր արժանի մահու համարէր: Ահ որպէս և առ հինս սպան զինա՝ Ճառեսցուք այլուր. բայց հինձ այսպէս Թուի զի թէպէտ և այլոմն ամենայնիւ մեծ որ իցէ Կրտսեաս, այլ չայդ գործ մեծապէս պատշեաց, և ոչ ըստ Վատրկեանց վարեցաւ վարդապետութեան. զի ընդէր էր նմա զանդիտել յանառանձ Թագաւորի, երբ չէր քաղաք երջանկագոյն քան որ ընդ տեսչութեամբ իցէ արդար Թագաւորի. կամ՝որպէս ակն ունէք պահելոյ ազատութեան, ուր խոստմունք մեծամեծք առաջի կային իշխեցողացն և նոցին արբանեկաց. կամ՝ երբ հնարաւոր համարէր վերադառնալ քաղաքին չիւր յառաջին կերպարան, չէտ եղծանելոյ նախկին բարուց և սովորութեանց. և կամ՝ զիարդ չոյսայր Թէ լծոյն անդ հաւասարութիւն քաղաքական իրաւանց և զօրացեալ հաստատեալին անդրէն օրէնք, երբ տեսանէր զբիւրաւորսն մարդկանն մարտնչել՝ ոչ որպէս՛ի վերայ ազատութեան, այլ Թէ ուր ծառայեացեն: Այս որպիսի միտացեալք լեալ իցեն նմա բնութեան մարդկայնոցս իրաց, և կամ

իւրում քաղաքին . զի սպանեալ զմին՝ համարեցար և Թէ չգտանիցի ոք այլ որ ի նոյն ջանասցի , ուր և կեա այնպէս չանթաւսար և սրախողխող սպանմանն Թագաւորաց գոսա ոք Տարկուհիոս : Կու Թէպէտ զկեանն պարտ էր ընդունել առ ի նմանէ , այլ ոչ վասն այնորիկ իբրև հայր իւր ունել զնա , որ անիրաւութեամբ բռնացեալ ունէր զիրաւունս բարեբարելոյ : Օի որ չապանանէն՝ ոչ Թէ կեցուցանիցէ . քանզի ոչ բարեբարուԹիւն , այլ արձակուրդ ՝ չնորհեաց :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

[1]ԱԺՈՒԱՐԱԳՈՑՆ ևս խնդիր այն է Թէ զինչ արժան իցէ առնել գերելոյն , Եթէ այր զղջագործ և զայրի գերեԹափ առնել զնա խոստանայցէ : Պալայ յանձին զի պիղծն այն լցցի իմ ազատարար . և կեա ազատութեան զմր չնորհս կալայց նմա , կեցից ընդ զաղրագործին , մերժեցից զազատարարն : Չհաւասիկ որ ինչ ինձ Թուի . առնուլ առից և յայրպիսւոյ անտի զարծաԹն կարևոր ՝ի փրկանս անձին . այլ առից որպէս ՝ի փոխ , և ոչ որպէս ՝ի պարգև : Հատուցից նմա զարծաԹըն . և ԵԹէ դէպք ասցէն ինձ պատեհ փրկելոյ զմեսանգհաւն , փրկեցից փոխարէն . ոչ եկից ընդ նմա ՝ի բարեկամուԹիւն , որ զօդիչն է նմանեաց . ոչ կալայց զնա իբրև ազատարար , այլ իբրև վաչխատու , եդեալ ՝ի մտի հատուցանել նմա զոր առի :

Այլ ոք այր արժանաւոր յորմէ ընկալայց երախտիս . այլ լցցի նմա այն ՝ի միտս . նմին իբրև ոչ ընկալայց , զի ՝ի վիշտս և վտանգաւ իսկ անձինն հանդերձի օգտել ինձ . խոստանայ պաշտպան կալ ինձ յանցաւորիս , այլ նուիրն պաշտպանուԹեամբ Թշնամի իւր կայցի զԹագաւորն : Ա)չնամի իմն եդեալ նմա ԵԹէ Թողից զնել զանձն ՝ի վտանգ վասն իմ և Թէ ոչ ես ինձէն մնասանգ ,

[1] Որպէս և այլուր ազգեցաք՝ ՝ի սուտերամսոյս Արձակուրդ կամ Ներումն քան խնդրոյ հանգիստառեալքն շնորհէր պարտեցելոյն , որով ապրէր յանհրաժեշտ մահուանէն , և Անհերելի կոչէր մարտն՝ յորում հարկ էր պարտեցելոյն մեռանել :

որ դիւրագոյն ևան է, վասնզի եցոյց առանց նորա։ Եւ ինչ դժպատեհ և մտոտի քան զոր ի մէջ առնու Հեկաւ տումն զօրինական Աբդիսխոյ որ չընկալաւ սակ զարձանն պարգևեալ յորդւոյն ի մի ցասուցեալ զՀայրն ագահ։ Օ ինչ արժանի գովութեան գործեայ նա, զի զպողծանն չընկալաւ, զի լաւ համարեցաւ բնաւ իսկ չառնուլ քան թէ յետս դարձուցանել զառեալն. քանզի զինչ առաքինութիւն իցէ չառնուլ զինչս օտարին։ Աղթէ օրինակի պէտք իցեն մեծանձնութեան, բեր աղ ի մէջ առցուք զՅուլիոսի Պրեկինեայ զպանծալն առնն զոր յայսմ սակս ևեթ ասեն Ա. Կեսար զի էր այր լաւ յոյժ, ոչ լով չմարթէր Հաձոյ լինել բռնաւորին։ Որպա ընկալեալ զտուրս արծաթոյ բարեկամանն ի ծախս խաղուցն՝ զդրեան ի վաթիսոն Պերսիկայ զարծաթ բազում ոչ ընկալաւ։ Այլ իբրև նախատինն զնա որք ոչ ի տուղն հայեին այլ ի տուրսն զորս մերժեայ՝ ասէ. Իսկ զի այրդ ընկալայց ես երթայիս ի նմանէ, յորմէ և զայժակ մտորոգութեալ ոչ առից։ Եւ ևս քան զվաթիսոն յղեայ գումար զրամոյ Հաբերիոս այր հիւպատոս և վատանուն իբրև զվաթիսոս, և իբրև սոխակեր առնուլ ասէ. Ոչ երեսոյիր ինձ, աղաչեմ. զի և զՊերսիկեան ոչ ընկալայ։ Այլ իցէ այս ընդունելութիւն պարգևաց, եթէ ընտրութիւն առեալ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Իսկ արժանի ընդունելութեան Համարեալ զպարգևս ուրուք, ընկալցուք զայն յայտ առնելով զբարեխոհութիւն սրտից մերոց և առաջի պարգևատուին զի վայելեսցէ անդէն չարգասիս երախտեացն։ Օ ի թէ ուրան զաբեկային տեսեալ իմիտք՝ սրչափ և յառնելս մերում բերկրեսցուք, Օ Հաձոհութիւն սրտից մերոց յայտ արասցուք զեղմամբ կրից իմոգութեան, ոչ ի լուր նորա ևեթ, այլ ամենայն ուրեք վկայելով։ Եւ ախորժ Հաձոհութեամբ ընդունի զերախտիս՝ Հատուցանէ զնախկին փոխարէնն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԲՈՐԴ

Այն որ ծածկապէս ընդունել կամին զերախտիս, և չախորժէն ունել զոք տեսող և վկայ բարերարութեանն, գիտեա զի չար է խորհուրդ նոցա։ Այնէ պարգևատուին անկ է ոչ այլևս ուժեք յայտնել զնուիրելութիւն հնարիցն բայց որոց առողին հաճոյ իցէ և ախորժելի, տալս և պարգևատուին անկ է քարոզել լինել առ ամենեսին։ Այլ առնուցուս զայն ինչ ընդ ուրեմ առնել հանարիս լինել պարտապան։ Այն և այնք որ գաղտագողի յանկեան ուրեք և կամ յանկանէ զնուիրհակալին մատուցանին։ Չէ այդ առնելութիւն, այլ գողացութիւն լինի հնարիցն։ Այպանարիչ է հնարհակալն անվկայ։ Այսք են ունանց ծածկաբար առնել փոխ առանց միջնորդաց և ինքագիր վկայիչ և ձեռնագրեալ մատենակաց. զնոյն առնեն և այք ջանանն և գուն գործեն զի երախտիքն եղեալ առ ինքեանս՝ հետախաղաղ ծածկեսցին։ Ո՞անգիտեն՝ի յայտ բերել զի անձանց քաջութեամբ քան ձեռնատուութեամբ այլոց կարծեսցին ստացեալ։ Գուն ուրեք մատչին՝ի մեծարանս առ այնոսիկ որոց պարտապան են գնեանս իւրեանց և զպատիւ. և երկուցեալք չերևել պատասխանել չումեքէ՝ զարագոյնն առնուն յանձն երևել ապաչնորհ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀՈՐՈՐԴ

Յ[ԱՆ]Ձ չարաճօճն զկարի չոյժ երախտաւորացն իւրեանց. և զայնպիսին ապահովագոյն չոյժ իցէ զառնացուցանել՝ քան հնարհակալ ստանալ երախտեօք, որք ստեղութեամբ ջանան հաւաստել թէ չեն իմիք պարտապան։ Այմմ առաւելապէս իմաստ ունել պարտ է զի անմոռաց կացցէ՝ի մեզ երախտեացն չիշատակ, և ստէպ ստէպ արծարծանել զնոյն. քանզի և ոչ երախ-

տահատոյց մարթի որք լինել, եթէ ոչ՝ որ յիշէն. և որ յիշէն՝ նովին իսկ երախտահատոյց լինի: Զի պարտ կարի իմն նոցին լինել և ծանրանալ յընդունելութիւն երախտեաց և ոչ դարձեալ անարգաբար ցածութեամբ ընդունել. զի որ դանդաղանօք և ցրտութեամբ ընդունի զերախտիս, որք հաճոյագոյնք ի սկզբանն են, զինչ գործիցէ ասա՛ի թողանալ նախկին հեշտութեանն: Եւ որ ժխտամանութեամբ ընդունի, որպէս թէ ասել. Վախէտ և չեն ինձ պիտոյ պարգեւդ, բայց քանզի բռնադատես առնուլ՝ հաճեցից զկամս քո: Այլ որ ծանրադանդաղ յապաղմամբ յերկեսից թողու զտուողն, եթէ զգաց երախտեացն: Այլ որ հապճեպ զբաժանման շարժեալ՝ չար և էրևի ապերախտ քան թէ բնաւ իսկ լռեալ էր: Այսր երախտեացն մեծութեան յարմարել պարտ է և զընծորհակալեացն բանս, յաւելուլով և զայսոսիկ. “Օ քաղցրութիւն յոյժ քան զոր կարծեսդ երախտապարտ քեզ կացուցեր,, : Օ՛ն ոչ որք է՝ որ ոչ ինդայջ ընդ ծաւալել երախտեաց իւրոց առ բազումս: “Նշանաւոր է քեզ մեծութիւն ընծորհիդ որ առ իս, բայց գիտեա զի մեծագոյն է յոյժ քան զոր կարծես,, : Որ առաւել պարտապան զանձն ցուցանէ երագէ՛ի ընծորհակալութիւն: “Ջեղէ երբեք բաւական ըստ արժանւոյն ընծորհաւատոյց քեզ լինել, և ոչ դադարեցայց ընդ ամենայն ուրեք զանբաւականութիւն իմ լինել խոստովան,,:

ԴԱՒԻԹ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ձ ինչ իւիք այնպէս ընծրհս եգիտ փուռնոս առաջի Գոստեայ կայսեր, և առաւելագոյն առ՛ի նմանէ բարերարութեանց եղև արժանի՝ որպէս այնու զի՛ի խընդրել զթողութիւն յանցանացն հօր իւրոյ, որոյ համախոհ եղեալ էր ընդ Նշտոնիանոսեանց, ասաց. “Այսու և եթէ զրկեցեր զիս, ով Կեսար, զի ետուր ինձ կեաս և մեռանել անշնորհակալս,,: Օ՜ինչ երախտագիտութիւն մեծագոյն որպէս անբաւական համարել զանձն՛ի հատուցումն, և ոչ այն ունել երբեք բաւ արժանի երախտեացն երախ-

տագէտ լինելոյ։ Այսմիջոց և սոյնպիսի բանիւք մերկացեալ զյօժարութիւն սրտից մերոց՝ առն յայտնի ցուցցուք զբարեաւէր կամս մեր։ Եւ թէ զգացեալ իցեմք որ պէս պարտն է երախտագիտութեամբ՝ ի կարձել իսկ բանից բերեցոյ՝ վկայութիւն սրտին յերեսաց արտափայլեսցէ։ Այլ արգարև երախտագէտ անդէն ընդ առնուն զնորն խորհի թէ պարտ է երախտհատոյց լինի։ Եւ Խուիսիպպոս նմանեցուցանէ զայնպիսին որոյ ի մրցմանէ ընթացից ասպարիզին իբրև ի փակարանին արգելեալ՝ ուշ կալցի պահուն յորում ընդ լինել նշանին ի դուրս վազեսցէ։ Եւ յերաւի մեծի արագութեան պէտք են նմա և բուռն ձգանց առ հասանելոյ յառաջընթաց եղելոյն[1]։

ԳԼՈՒԽ ՔԱՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Լաւ է տեսանել թէ ի լինիցի ոք առաւել ապերախտ, եթէ վարկ մեծ ունիցի ոք զանձնէ, և քան ընդաջոյս ախտի մտհկանացուաց զինքն և զիւրսն մեծ համարեցի. կամ թէ հարեալ իցէ զագահութեամբ, և կամ նախանձկոտ։ Յառաջնոյն սիրզեն արասցուք։ Ձինք ոք անաչառ դատաւոր անձին, նմին իրի արժանաւոր ամենայնի զանձն վարկանի և իբրև հատուցումն զնորն ընդունի, և ոչ երբեք համարի մեծառեալ զանձն որպէս արժանն էր։ “Որ ուրեմն յետ այնչափ աշխատութեանցս զայս ինչ ընկալայ, ասէ, արդարև առաւել մարթ էր ինձ ի ձեռս բերել եթէ սմա կամ նմա և կամ անձին իմոյ սպաս տանիմ։ Եւ այսպէս յուսայի. ի խառն ընդ այլ համարեալ՝ այդչափ զոյն իրաց գոայ արժանի, լաւ և էր թէ քնաւ իսկ անտեսէի։

1 «Յառաջընթացս եղելումն». այն ինքն է բարեբարին որ յառաջեացն ի բարեբարել։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ա՛նէօս Հաստուսս Ա՛գրիպպա օրինակին փարեմամ Ա՛նխուեանց, մինչ չև աղքատացուցեալ էր զնա ազատագրելոց, զի հարիւր բիւրս սետերտից տեսին աչք նորա, (ստուգութեամբ ասեմ զի տեսին միայն), էր այր ապուշ մտօք և փքրոգի։ Ա՛ւ Թէպէտ ագահ էր յոյժ, այլ այնչափ և աղքատ ՚ի բանից՝ զի դիւրագոյնս տայր ՚ի դուրս զարծաթ քան զբանս։ Ա՛ն՝ որ զամենայն հարստութիւն իւր ունէր ՚ի դիւցազն ()գոստեայ, յոր եկեալ յեցեալ էր աղքատութեամբ և մինչ ընդ փառաք աշնուատոհմութեանն հեծէր, և գեր ՚ի վերոյ ամենեցուն կացեալ ՚ի քաղաքին ընչիւք և պատուով, գանգատէր ստէպ զ()գոստեայ զի ՚ի պարապմանց իւրոց ՚ի բաց քեցեալ զինքն՝ և ոչ որպէս պարտն էր փոխարինեաց կորստեանն զոր արար՝ ՚ի բաց Թողեալ զպերձախօսութիւն։ Ա՛ւ սակայն դիւցազնն ()գոստոս ՚ի վերայ ամենայնի զայդ և չնորհ արարեալ էր նմա, զերծուցանելով զնա ՚ի ծաղուէ, և յընդունայն աշխատութենէն։ Ա՛զահութիւն չներէ ումեք գոհ լինել՝ զի ցանկութիւն անյագ որ զինչ և ընկալցէ՝ չասէ երբեք շատ։ Յոլովս ընկալեալ՝ յոլովագունից և ցանկամբ, և ՚ի լուծեան բազմակոյտ Ճոխութեանց՝ ուժգնագոյն և զրգռի ագահութիւն, որպէս և բռնութիւն բոցոյն ՚ի մեծաբորբոք խարուկէն ցոլացեալ ուժգնագոյն է։ Ա՛յս և մեսիսաուութիւն չթողու ումեք ՚ի նմին չափս հանդարտել պատուոյ, որում ուխտիւք չափ հետամուտ էր անմոռութեամբ։ Ա՛ն որ չնորհս մատուցանէ ընդ հազարապետութեանն չնորհի, այլ գանգատէ զի գաստաւորութեան ոչ եհաս. և ոչ յայն հասեալ՝ հաճ է և գոհ՝ զի պակասի հիւպատոսութիւն, և ոչ հիւպատոսութիւն զնա յագեցուցանէ, եթէ առ մի աւելի նուագ իւր։ Ա՛նդր և յառաւելագոյնն ձգտի միշտ ցանկութիւն և չզգայ երբեք երջանկութեանն իւրոյ. զի ոչ յայն հայի թէ ուստի եկն՝ այլ թէ յո՞ դիմի. բայց բուռն և դժնդակագոյն քան զայս ամենայն չար է նախանձն, որ տանջէ զմեզ ընդ այլս ձգեալ ՚ի կշիռ։

ԴԱՏԻԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Օ ԱՑՍ ետ ինձ , ասէ , այլ զմս առաւել, նման վաղագոյն . և ոչ ումեք տայ իրաւունս , այլ Հակառակ բռնութիւն՝ անձին լինի պաշտպան և ձեռնտու : Վասն՝ պատշաճագոյն է Համեստ պարզմտութեամբ զառեալ երախտիսն մեծացուցանել և խորհել զի ոչ ոք այնպէս մեծարոյ է յաչս այլոց որպէս անձին : Ուռեալագոյն ինչ ինձ պարտ էր առնուլ , այլ նման չէր դիւրին աւելի ինչ տալ՝ զի և այլոց բազմից Հարկ էր նման առատաձեռնել : Այս սկիզբն է պարգևացն . ընկալցուք զայն ՚ի բարին , և երախտագէտ ընդունելութեամբ յանկուցուք ՚ի մեզ զսիրտ նորա : Պայդն ինչ է զոր ետ , բայց տացէ ստէպ . զայն որ մեծարեաց քան զիս , այլ և զիս քան զյոքսունս : Այնուամ այն չէ ինձ զուգահաւասար առաքինութեամբ , և ոչ իսկ արգեամբ , բայց է՝ որ պաշտպան կայ նմա : Ով գանգատիմ՝ մեծագունիցն չեզեց արժանի , նա և առելոցն գլխովին անարժան .. : Այդ արք վատթարք առաւելագոյն յոյժ ընկալան . և զինչ այսի , երբ ուղղութեամբ դատեցաւ բախտն : Օ օրհնասպաս տրտնջելոյ զերջանկութենէն չարացն . բազում՝ այն է զի և կարկուտ զանց արարեալ զանդովք անօրինաց՝ զլաւացն եհար զհունձս : Ոըպէս յայլ ինչ իրս՝ նոյնպէս և ՚ի բարեկամութեան է իւրաքանչիւր բախտ : Զիք բարերարութիւն մեծ և կատարեալ զոր չկարիցէ անարգել չարամտութիւն . և ոչ այնպէս զուգնաքեաց՝ զոր բարեսրտութեամբն ընկալեալ ոք և չմեծարիցէ : Որ վատ ակամբ յերախտիսն հայի՝ զոյն միշտ պատճառս տրտնջելոյ :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Տես ինձ որպէս և յիմնատնոց իսկ ոմանք արհամարհոտք աստուածայնոց պարգեւացն բողոքէն յանիրաւի. զի չեմք մարմնով վիճիմարք իբրև զդիզս, երագունք որպէս զեղջերուս, թեթեւասլացք իբրև զՀաւս, կորովիք որպէս զցուլս, և զի ամրագոյն է երկոցն մարթ, վայելչագոյն այծեմանցն, թաւագոյն արջուց, փափկագոյն բեհկահիկոց, և զի հոտոտելոք յաղթեն մեզ շունք, սրատեսութեամբ արծուիք, երկայնակեաց կենօք ագռաւք և ձարտարութեամբ՝ լուղ՝ յոլովք յանասնոց։ Եւ յայն հայեցեալ զի են ինչ իրք անկցորդք՝ ի քան, որպէս երագութիւն մարմնոյ ընդ պանդարան կորովոյ, զրկանս իմն հանարին լեալ մարդոյ զի ոչ հակառակօք պերճացեալ՝ ձրիւք. և իբրև թերահոգս ամբաստանեն զդիս, զի չետուն մարդկան քաջողջութիւն և զօրութիւն անվկանդ և նախահայեաց գիտութիւն։ Ո՛չ անդրագոյն ևս բերեալք՝ անպատկառաբար յանդգնին ատել և զընդութիւնն, զի իմանարհագոյնս եղ զմարդիկ և ոչ զուգահաւասարս դից։ Եւ լաւ ևս էր՝ ի տեսութիւն այնչափ և այնպիսի պարգեւաց գոհանալ զդից, զի երկրորդապատիս զմեզ արարեալ յայսպիսում գեղեցիկ բնակութեան՝ երկրաւորացս ամենայնի եղէն գեր՝ ի վերոյ։ Ո՛չ ո՞ զմեզ՝ ի կշիռ ձգիցէ ընդ կենդանեացն, որ ընդ մերոյս կան իշխանութեամբ։ Որ ինչ ոչ տուաւ մեզ՝ չմարթէր տալ։ Այսպա քեզ ասեմ, ով արհամարհոտ բարեաց մարդկայնոց բնութեանս, տես և զմտաւ ածէ, թէպէտ ինչ չնորհեաց մեզ Հայրն հասարակաց. ոչ ահա զՀզօրագոյնս քան զմեզ՝ ի կենդանեաց նուաճեմք ընդ լծով, ոչ երագընթացիկն հասանեմք զՀեա, և չեք ինչ՝ ի մահկանացուաց որ ոչ ամիսարկութեանս մերում հպատակեսցի։ Տես զայնչափ առաքինութեանց և զարհեստից պարգեւսն զորս ընկալաք, և՝ ի վերոյ ամենայնի զՀոգիս, յորոյ՝ ի կամէն ևեթ և՝ ի խորհել՝ ամենայն ինչ՝ ի բեթեղել ական լինին մեզ յանդիման. որ արագաշարժ քան զլուսաւորսն է, յա-

ոաքընթաց քան զազգմանէ այ դարուց վհանդերձեալ
չքնաներ նոցա լինելով. յաւել և զայնպսի բերս արմտեաց
և զձոխութիւնս , և զկուտակութիւն ամենայն բա-
րեաց : Նոց մտաք քովք ընդ ամենայն . և չգտեալ յա-
մենայնի և ոչ մի ինչ ընդ որում փոխանակել զանձնդ
ընտրելիր, գոցես ինչ յամենայնի զոր ունեն ցանկացիս :
Այսպս խելառնալ լեալ սպարգևաց բնութեան , Հարկ է
քեզ լինել խոստովան Թէ ցանկալի եղեր նմա . և Հարկի
իսկ քաջ , մեծապէս սիրեցին զմեզ դիքն և սիրէն . և
զմեծագոյնն որչափ մարթի էր Շնորհեցին մեզ զպա-
տիւ՝ աստուածամերձ զմեզ կացուցեալ : Այեծամեծս
ընկալաք անբաւականաքս մեծագոյնից :

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ

Օ ընչասուկ Հարկ Համարեցայ ասել , սիրեցեալդ
իմ՝ Աղբերալիս , քանզի զմնոնցց բարերարութեանց
առեալ Ճառել Հասարակաբար՝ դժպատեհ իմն էր զմե-
ծագունիցն լռել ՚ի սպառ . և զի անդուստ դարձեալ
սկիզբն կալեալ ապերախտութեան գարշ սխտին և
յայլս անցանել . զի որ զծայրագոյնն ՚ի բարութեանց
արհամարհէ , զոր պարգևս մեծարիցէ , կամ որո՞մ ե-
րախտապարտ զանձն Համարեսցի՝ լինել նմա հնորհս
Հատոյց : Այ՝ եր երախտապարտ զանձն խոստովանեսցի
ընդ կենդանութեանն և ընդ հնչոյն որ ուրանայ ընկա-
լեալ Այ՝ստուծոյ զկեանն , զոր ՚ի նմանէ իսկ խնդրէ
զոյհանապազ : Այսպս որ երախտագէտն լինել ուսուցա-
նէ՝ ոչ զմարդկան ևեթ վարէ զատ , այլ և զաստուա-
ծոյն . որք թէպէտ և անկարօտք իցեն բնութեամբ և
ամենայն ցանկութեանց գեր ՚ի վերոյ , սակայն զնոր-
Հակալիս մեր ընդունին :

Այ՝ ս մի՞ զ ՚ի չքմեղանս ապերախտութեանն զակա-
րութիւն իւր և զչքաւորութիւն ՚ի մէջ ածցէ , ասելով .
Օ ինչ արարից , զիա՞րդ կամ որպէս Շնորհաւատոյց եղէց
վէրհիցն և տերանց Համբերն աչխարհի : Այիւրաքանչ,
և եթէ ագահ իցես՝ առանց իսկ ծախուց , և եթէ ծոյլ՝
և անգործ իսկ և անաշխատ ամենևին անգէն իսկ ՚ի

պահու ընդունելութեան երախտեաց, եթէ կամիցիս, որպէս և է զկնի հատուցանիցես. զի որ խրախուիս հաճութեամբ ընդունի զերախտիս՝ հատուցանէ առ ժամայն։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Այ և այս է, որպէս ինձ թուի, ի հրաշալուց վարդապետութեանց ստոյիկեան ազանդոյ, ոչ յոյժ զարմանալի կամ դժուարահաւատալի. թէ որ հաճութեամբ ընդունի զերախտիս՝ հատուցանէ զարիւրն։ Օի եթէ ամենայն ինչ ըստ կամաց և ըստ յօժարութեան հոգւոյ է կշռելի, և զոր ինչ ոք կամեցաւն՝ համարի ինն արարեալ. և զի բարեպաշտութիւն, հաւատք, արդարութիւն և համայն իսկ առաքինութիւնք թէպէտ ոչ յարդիւնս եկեալ՝ կատարեալք ասին յինքեանս, ապա և երախտագիտութիւն կամաք և յօժարութեամբ վէմարեսցի։ Որ զոր յառաջագիւր ուշ ներպատահին լինի ժամն՝ ըմբռնէ զարդիւնս վաստակոյն իւրոյ. և որ բարերարէն՝ չինչ այլ ունիցի զիտուն, բայց օգտել այլոմ և զուարճանալ յանձն իւր։ Այլ թէ յաջողեցաւ ի կամս իւր, և ըստ ցանկութեան սրտի իւրոյ աղգեցին յիս երախտիք նորա և երկուստեք ուրախութեան եղէն պատճառք, կալաւ զինդրելին։ Օի ոչ եթէ այն կամք և էին նորա փոխանակաւ տալ ինչ, ապա թէ ոչ չիննէր իսկ բարերարութիւն, այլ տուրն առիկ փոխանակութիւն։ Արդարոք նաւարկեաց որ ի դէմ եգեալ նաւահանգիստն եղև ժամուն, քաջ նետաձիգ եղև որ եհար զնպատակն։ Որ բարերարէն՝ ցանկայ ընդունելն լինելոյ երախտեացն, որ թէ հաճոյ գըտաւ՝ կալաւ զոր խնդրէրն։ Այսպս եթէ շահու խիք ակն ունէր՝ չհամարեցաւ երախտիք, որում սեպհական է չխորհել ինչ զիտարինաց։ Այթէ ըստ ցանկութեան սրտի բարերարին զերախտիսն ընկալայ, հատուցի զիտարինն. ապա թէ ոչ՝ գերեզկապոյն յառաքինութեանց ամենահաշուառ էր, եթէ երախտագիտութիւն ի բահու անդր ինայր ապատան։ Այթէ հաճոյք

բախտին ոչ ներէն ինձ այլապէս փոխարինել, շատ իսկ սիրտ ընդ սրտի փոխարինել։ Օ՜ ինչ ապա. ա՛ն ինչ փայթ կալայց զոր կարեմ առնելոյ և հատուցանելոյ, ա՛ն գէտն կալայց ժամուն և պատեհին և ո՛չ ցանկացայց ընուլ զգոգ նորա, յորմէ ընկալայ ինչ։ — Այ. գժբախտ իսկ բարեբարութիւն, եթէ և ունայնաձեռն չկարիցէ զբ երախտագէտ լինել։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Լաւոց ասիցես. Թէպէտ և խրախուիտ հաճութեամբ ընկալաւ զբերախտիս, ոչ անթերի զպարտսն ելից. զի չհատոյց ինչ։ Օ՜ զբ օրինակ 'ի գնդակախաղս մեծ խին է արդարև. Ձարտարութեամբ զդնդակն ըմբռնել, այլ չհամարեսցի քաջ, եթէ ոչ նովին Ձարտարութեամբ պատշաճապէս զկալեալն անդրէն յետս դարձուցանիցէ։ — Այ. Ընդհանդէպ է օրինակդ, և գիտեցեր թէ ընդէր, զի գնդակախաղու թեանն գովութիւն յեղաշարժութենէ մարմնոյ է և 'ի Ձարտարութենէ՝ և ոչ 'ի հոգւոյն. և Հարկ է զի անթերի իցէ յաւելնայիսի որ ինչ ընդ դատաստանաւ անկանին ասեց. այլ ոչ եթէ վասն այնորիկ անարգեցից զնա, որոյ պատշաճապէս Ձարտարութեամբ կալեալ զդնդակն՝ և ոչ առդանդաղութեան իւրոյ չժամանեաց դարձուցանել անդրէն։ Ա՛յլ ասիցես, թէպէտ և արհեստ և Ձարտարութիւն անթերի իցէն 'ի խաղացողն, որ զիւրն զաւձնայն արար անվրէպ և զայն ևս յոր չժամանեացն՝ կարող էր առնել, սակայն անկատար մնաց խաղն, որ անդրադարձ ձգմամբ վՁարեսցի։ — Այն ինձ կամք յերկարագոյն նուագաբ դեկերել 'ի գրուին բանիցդ, Համարեա թէ այդպէս իցէ և թերի իցէ խաղն, այլ ոչ և խաղացողն. այնպէս և յառաջարկեալս մեր ինդիր՝ է ինչ արդարև որ պակասի 'ի բարեբարութեան՝ այն է Հատուցումն փոխարինին. այլ ոչ և 'ի սրտին՝ որ եգիտ զսիրտ Համանմանն իւրումն. իբրև զի զոր կամեցաւն ինչ աբ՝ արար իւրովհետև և կատարեաց։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Խարերարեաց ինչ ինձ ոք, և ես ընկալայ զայն այնպէս որպէս և կամէրն. և ահա ընկալաւ նա զոր խընդրէրն և որում միայոյ ցանկայր, և ես գոյ երախտագէտ։ Եւ ինչ այլ միայ բարերարին՝ բայց սպառ ինչ ընդունել ծառայութեան և օգուտ ի շնորհատարտ սըրտէ երախտաւորելոյն. և այն ոչ իբրև ի լուծն պարտուց թերացելոյ երախտագիտութեան, այլ իբրև յաւելուած։ Ընդրկ գործէ փիղիաս, այլ է ի նմա գործ արհեստին և այլ ձարտարին. արհեստին գործ այն է՝ յառաջ բերել զոր խորհին, իսկ ձարտարին՝ առնել իւր նովաւ օգուտ։ Կատարեաց փիղիաս զգործն, և թէպէտ և ես վաճառեալ, սակայն երբակի օգտեցաւ նա այնու. մի՝ զի կատարեալ եւս զգործն և հաճեցաւ յանձն իւր. երկրորդ՝ զի արար իւր անուն, և երրորդ զի պարգեւեալ զայն կամ վաճառեալ, և կամ յայլ ինչ ի վար արկեալ՝ շահեցաւ այնու։ Եւ յայսկս և բարերարութեան առաջին արգասիք էն՝ անձինն հաճութիւն զոր ընկալաւ բարերարն ի բարերարել անդ որում կամէր։ Երկրորդն է համբաւ բարեացն, և երրորդն սրինուր փոխարինին որում մարթ է լինել։ Եւ զայս հաճոյ և ընդունելի լեալ երախտացն, բարերարն ընկալաւ զփոխադարձ շնորհն, իսկ զվարձան ոչ. վասն որոյ զոր պարտին այսու հետեւ՝ յաւելուած իմն է արտաքոյ բարերարութեան, որում վաղ իսկ հատուցի բարւոք ընդունելութեամբս։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՀԱՐՐՈՐԴ

Լսեա զիմոյդ. երախտահատոյց եղև աաեն՝ որ չարար և ոչ ինչ։ — Հաղում ինչ արար որ սրտի բարեաց՝ բարութեամբ սրտի փոխարինեաց ըստ օրինաց բարեկամական հաւասարութեան, զի և ոչ հատուցումն երախտեաց իբրև զպարտուցն է։ Այլ կարծիցես թէ

մեբՀակս պարտուց և Հատուցմանն ցուցից քեզ · սրտե
'ի սիրտ է տուրևառաս : Ա՛ր զոր ասեմն , մի Թուեսցի
քեզ խիտ , զի Թէպէտ և դիմամարտս կարծեացգ
երևեսցի քեզ զառաջինն , այլ ՀանդարտուԹեամբ
ունկն մատուցեալ բանիցս 'ի միտ առցես զի քան
զամս առաւելուն իրք : Ա՛ր արդարև բազում ինչ
իրաց պակասեն սեպհական անուանք , և պիտակարար
և բուս յատնութեան անուանակոչեալք : Ա՛ան ասեմք
և զմարդոյ և զմահճոյ և զառագաստի ' և զտաղ ·
չուն կոչեմք և զօրսականն և զծովայինն և զՀա-
մատեզուԹիւնն : Օ՛ի չեմք բուսական միոյ միոյ այլ
և այլ անուանս սեպհականել , բուս Հարկի պիտոյիցն 'ի
փոխ առեալ վարեմք : Ա՛րուեստիւնն առաքինուԹիւնն
է՝ որ խիզախ ընդդէմ ստոյգ վտանգաց , կամ է
գիտուԹիւն վանելոյ կամ ընդունելոյ և արհամար-
հելոյ զվտանգս : Ա՛այց և զօրախաղացն արի անուա-
նեմք , որպէս և զծառայ չար և անօրէնն որ յան-
դգնուԹեամբ արհամարհէ զմահ : Ա՛մպուԹիւն է
գիտուԹիւն զգուշանալոյ յաւելորդ Ցախուց , կամ
արհեստ չափաւորուԹեամբ վարելոյ յառանին իրս ·
բայց խնայող կոչեմք և զՀղՀիճն և զագահ · ուր խորը
մեծ է ընդ չափաւորն և ընդ անչափ · և Թէպէտ եր-
կու ինչ իրք իցեն զանազանեալք բնուԹեամբ , այլ առ
չքաւորուԹեան բառիս Ա՛ ուրեք զի և զնս կոչեմք խնա-
յող , որպէս և քաջ կոչեմք զնա՝ որ խնամուԹեամբ
և բանիւ խիզախ ընդդէմ արկածից , և զնս զարձեալ
որ յախուռն և յանդգնաբար դիմագրաւէ վտանգաց :
Ա՛սա նմին օրինակի բարեբարուԹիւն ասի և նոյն ինքն
գործն բարուԹեան և որ ինչ բարեգործուԹեամն այ-
նուիկ պարգևի , որպէս էն արծաԹ , տուն , պատմու-
Հան , ծիրանի · միով անուամբ կոչին և երկաքանչիւրն՝
այլ զանազանեալ են յոյժ զօրուԹեամբ և իրօք :

1 Կրկին տողքն ծայրք առագաստից յորոց ձգինն երկուսեքք կապեալ չուանօք , ոչ՛ առագաստից 'ի Յառնացս և 'ի Լատինացւոց առացան :

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Այր արդ միա դիր, և տեսանիցես զի ոչ ինչ օտարու
տի ի քոյ կարծեացդ խօսեցայց։ Արեգործութեան
բարերարին շնորհատոյց գտանիմք՝ եթէ մտադիւր
հաձութեամբ զերախտին ընկալաք. իսկ ընդ տուեցե-
լումն ի բարեգործէն չէ և ս ինչ հատուցեալ՝ բայց
ցանկամբ հատուցանել։ Կամն ընդ կամացդ և յօժարու-
թիւն ընդ յօժարութեան փոխարինեալ, և իբր ընդ
իրացն տուեցելոց պարտիմք։ Զմին իրի որ զբ ախորժ
հաձութեամբ զերախտին ընկալաւ, թէպէտ և հա-
տոյց ասացաք շնորհս ընդ շնորհաց, սակայն և առե-
ցելութիւն փոխարէն պատուիրեմք տալ ինչ զուգահա-
ւասար։ Այն ինչ յասացեալցս օտար թուեցեալք ի
հասարակաց սովորութենէ. բայց ընդ այլ ձանապարհ
ի նոյն առնէն զարձ։ Պսեմք խնամոյն չընդունել
երբեք զանիրաւութիւն և զձշմարտոն, և սակայն որ
կոփահարէն զնա, զատի որպէս անիրաւ և ձշմարտող։
Զհմարին չեն ասեմք ստացուածք. և սակայն՝ որ կողոպ-
տէն զնա՝ զատապարտի որպէս գող։ Զնորեաս ասեմք
զչիմարան զամենեսին. բայց ոչ զամենեսին բուժեմք
եղջորոսիւ, այլ և նոցին իսկ կոչեցելոյն ի մէնք ցնորե-
լոյ՝ գործ ի ձեռս տամք քուեայս արկանել և առնել
իրաւունս։ Պատ այսմ օրինակի որ հաձութեամբ սրտի
ընկալաւ զնորհս երախտեաց, հատոյց ասեմք զնորհան,
սակայն և պարտապան ևս համարիմք զնա հատուցանե-
լոյ ինչ արիտուր, թէպէտ և փոխարինեալ իցէ նորհս
ընդ նորհի։ Զյորդոր երախտագիտութեան են բանքս
և ոչ ի զգացումն երախտեաց։ Զի վերերեսցուք և մի
ընդ ծանր և ընդ անբառնալի ձիրեալ բեռամբ վհատես-
ցուք ասելով Զարիք եղէն ինձ, պատիւ անձինս ոչ
անարգեցաւ, կարօտութիւն ոչ և ս տապնապէ զիս,
յաւելան ինձ կեանք և ազատութիւն առաւել քան
զկեանս և զիւրդ մարթացայց լինել երախտագէտ. որ
այն օր իցէ յորում յայսմի աշարհից բարերարին իմոյ
զիմ սիրտ։ — Զայն ինքն օրն այն է՝ յորում եղոյց նա

քեզ զնուրն ։ Նկալ զերախտիսն , մեծարեա զայն , ինդա և ուրախ լեր , ոչ զի առնուագդ , այլ զի պաբ-տական գտանիս և հատուցանիցես և դէպք գքեզ ոչ արիցեն ՚ի վտանգ մեծ ապաշնորհ գտանելոյ ։ Եւ ինչ գժուարինս առաջի առնեմ քեզ , զի մի լքանիցիս սրտիւ և վհատիցիս զանգիտելով ՚ի վաստակոց և յերկար ծառայութեանց . և ոչ յապաղել ինչ պէտք իցէն քեզ , այլ առ ժամայն վճարեսցի առենայն ։ Զիցես երբէք երախտագէտ թէ չեղեր առ ժամայն ։ Օ ինչ ապա առնել իցէ քեզ . զէն առնուլ , առցես և զայն Թերևս յաւուր միում . ընդ ծով անցանել , անցցես և ընդ այն Թերևս մրրկալից իսկ հողմովք . բայց ՚ի ժամուն Թէ կամիցիս լինել երախտագէտ , ընկալ զայն սիրալիր հաճութեամբ և գտար չնորհահատոյց , ոչ իբրև ազատացեալ զանձնդ համարելով ՚ի պարտուց փոխանինացն , այլ հաստատագոյն ևս զպարտսդ խոստովանելով ։

ԳԻՐՔ ԵՐԲՈՐԴ

ՅԱՂՈՂԱԿԱՆ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Զ ՓՈԽԱՐԻՆԵԼ ՀՆԱՐՀ ընդ երախտեաց, ոմ[1] կ՚իրբաղիս, ապերախտութիւն է, չար համարեալ առ ամենեսին։ Այլ մի իրի և ապերախտք ինքնին գանգատին զապերախտից։ Այլ Թէպէտ ստելի ամենեցուն իցէ՝ սակայն և համբերէն զրաւեալ ոմանի ամենեցուն. և այնպէս բանիցն հակառակին գործք՝ միանգամ յետին Թէ[2] համախ ունել մեզ երբեմն զբարերարսն ոչ յետ բարերարելոյն միայն, այլ և վասն բարերարութեանն։ Վասն զի ոմանց ի վատթարութենէ բնութեան պատահէ այդ. բայց յոլովագունից և ի մոռացութենէ և ի բազում ժամանակաց ի վերայ անցանելոյ. զի ուր զառաջինն ստէպ կրաշ լինէին նոցա երախտիքն՝ յետոյ ուրեմն անսիրատակ լինին ի սպառ։ Օ որոց և վիճեալ քո երբեմն ընդ քո՝ ոչ ապերախտս կոչելիք զայն պիտոյս, այլ մոռացկոտս. որպէս Թէ այնու իսկ որով ապերախտինն՝ արդարանայցեն։ Այլ զիարդ որ մոռանայն ջուր ապերախտ, ուր ապերախտին միայոյ է մոռանալ։ Այպերախտից բազում ազգք են, որպէս և զողոց և մարդասպանաց. որոց Թէպէտ նոյն են յանցանքք, այլ ըստ հանգամանացն զանազանին։ Այպերախտ է՝ որ զընկալեալ երախտիսն զլանայ. ապերախտ է՝ որ կեղծաւորի չգիտել. ապերախտ է՝ որ ոչն հատուցանէ. այլ քան զամենեսին ապերախտ՝ որ մոռանայ զերախտիս։

վ[ա]նզի առաջինքն թէպէտ և չհատուցանիցէն , բայց հետք իմն երախտեացն անջնջելի են ՚ի խոյթ խղճի մտաց նոցա և կան ձիան պարտապանք , և մարթ իցէ նոցա զգաստանալ իւիք և լինել երախտագէտ , եթէ ազդեսցէ ՚ի նոսա ամենի և կամ յեղակարծ իմն տենչ առաքինութեան որ և ՚ի չար սիրտս զարթնու երբեմն , կամ թէ պատեհ իմն դիւրամատոյց յորդոր լինի նոցա ՚ի նոյն : Իսկ որ մոռանայն՝ չկարացէ երբէք լինել երախտագէտ , զի քնաւ իսկ զերախտիսն չգիտէ : Այս որ յերկուց աստի վատթարագոյն քեզ թուեսցի . որ զհատուցումն երախտեացն մոռացաւ , թէ քնաւ իսկ և զերախտիս : Յաւուր են աչք՝ որք խուսափեն ՚ի լուսոյ , կոյրք՝ որք քնաւ իսկ չտեսանեն : Չսխրել զմեղաւս՝ անպարտութիւն է . չմանաւել յիմարութիւն : Որ ապերախտ իբրև զինս , որ հեռագոյնս ՚ի բաց ՚ի մտացն եղեալ անգիտացաւ ՚ի սպառ զայն ինչ՝ որում պարտ էր զնախապատիւ տեղին տալ և ստէպ յուշ ածել : Որում ՚ի մտացնա եղեն երախտիք՝ յայտ է զի չմորհեր քնաւ ՚ի հատուցումն :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Յաւել և զայն , զի առ ՚ի չնորհահատոյց լինել և՝ առաքինութեան պէտք են , և ժամանակի և կարողութեան և յաջողելոյ բախտին : Իսկ որ յիշէն զերախտիս՝ առանց ինչ ծախուց երախտագէտ է : Զանց չքմեղանայ է և զատագովութեան որ որ զանց առնէ և զայնու՝ առ որ ոչ աշխատութեանցն ինչ պէտք են , ոչ ընկեց և ոչ բարեբախտութեան : Այս որ այնպէս ՚ի բաց ընկեց զերախտիս մինչև չտեսանել զայն , ոչ կամեցաւ երբէք լինել երախտագէտ : Որ որինակ և գործիք հանապազօր յածեալք ՚ի ձեռս և շօշափեալք ոչ ժանգահարին երբէք և ոչ փշոտին , իսկ որք իբրև անպէտ ինչ և վարկպարագի յանկեան ուրեք անտես աչաց լինին ընկեցիկ՝ նովին իսկ հնութեամբն ապականին , ըստ սմին օրինակի և որ ինչ ստէպ չիշատակաւ յեղյեղի և նորոգի , ոչ երբէք անկանի ՚ի յուշոյ , զի զորս ոչն յիշէ ստէպ՝ զայնոսիկ և եթէ մոռանայ :

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

[illegible] աստի էն և այլ պատճառք որ գողանան ՚ի մէնջ երբեմն և զմեծամեծ երախտեացն զյիշատակ։ Յորոց մեծ և առաջին քան զամենայն այն է, զի ՚ի նորանոր ցանկութիւնս զբաղեալք միշտ՝ ոչ յոր ուր նիմբս կամք ակնկառոյցք, այլ թէ յինչ ձկտիցիմք. ցանկալեացն յաչէտ ուշ եդեալ քան որոց ՚ի ձեռինս ունիմք, զի որ ինչ առանին կայ՝ անարգ է։ [illegible] պէս նորագունիցն ցանկութեամբ զառեալ պարգևազ արհամարհեալ՝ և զպարգևատուն նոցա արհամարհես յաձախ։ [illegible] ընկալեալ յումեքէ՝ ցորչափ հաձոյ և սիրելի մեզ բարքն էին՝ ցանկալի և մեծարոյ էր մեզ և բարերարն՝ իբրև սկիզբն և պատճառ բարեբախտութեանս մերոյ, այլ ցանկութիւն ինն գրաւեաց կալաւ յանկարծ զսիրտս մեր, և որպէս մնկամացուացաս է սովորութիւն ՚ի մեծաց յևս մեծագոյնս ձկտելոյ, այնմ եղեալ հետամուտք, և անդէն վաղվաղակի ՚ի մոռացօնս եղեն անուանեալքն յառաջագոյն ՚ի մէնջ բարերարութիւնք, և ոչ ևս յայն հայիմք որով յառաջադէմ քան զայնն գոաք, այլ յայնս ևեթ՝ որովք յեանիմք քան զայլս ՚ի բարեբախտութեան։

Ձիք որ նախանձոտ որ և չնորհակալութիւն. զի որ նախանձին՝ տխուր է և տրտնջող, իսկ չնորհակալքն բերկրեալ սրտիւ։ [illegible] դարձեալ՝ քանզի յաձախ սովորութեամբ ՚ի ներկայն պղտցեալ ժամանակ որ պղտ պղտ սահեալ անցանէ, դուն ուրեք յանցեալն ակնարկեմք և ՚ի մոռացօնս լինին մեզ վարժապետք և դաստիարակք և երախտիք նոցին, զի մոռացաք ՚ի սպառ զնոցա երախտեացն. այսպէս և զոր ՚ի պատանեկութեան մերում ընկալաք զչնորհս մոռանամք. զի չգոռնամք ակնարկել յայն հասակ։ Ձիք որ զեղեալն իբրև անցեալս համարեսցի և ոչ իբրև կորուսեալս. նմին իրի իսկ և որ զհանդերձելոյն միշտ հոգան՝ նոցա զնբաստահ է յիշողութիւն։

ԳԼՈՒԽ ՁՈՐՈՐԴ

ՅՈՏԱՆՈՐ հարկ է իրաւունս տալ Յակիմբեայ, որ բողոքէ անդուլ ընդ ապերախտութիւն մեր առ անցեալն. իբրև զի զբարիսն զորս ընկալաք՝ ոչ ևս յիշեմք, և ոչ ընդ հեշտալիսն մեր դնեմք ի համարի. փոխանակ զի չէք քան զյոտսիկ հեշտութիւն աներկիւան, որ ընտ իսկ անկապտելիք են առ ի մեզ։ Օ՛ր ա՛ռաջի մեր կան բարիք՝ չև ևս հաստատունք են և աներ-կևանք. դէպք ինչ մնրեմ է թէ եղծցեն զյոտսիկ. ապագայքն անստգք են և յերկբայս, անցեալքն միայն կան յապահովի։ Յո զնարդ երախտագէտ որ իցէ որ ընդոստ ընդ առնոյն կեացս իւր անցանել։ Յառաջիկայիցն տեսութեամբ և անցելոյն յիշատակաւ յորդորիմք յերախտագիտութիւն։ Ով յաւելուն՝ի յոյս՝ նուա-զէ յուշի։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՕՐ օրինակ են ինչ յուսանող, իմն Լրբերալէ, զոր ուսեալ գամ ի և յարևանան՝ի միտս, և են՝ յորոց՝ի գիտութիւն չէ բառական ուսանիլն և եթէ, զի եթէ ոչ Նանապազորդեացս՝ի նոսին՝ խուսեն՝ի մտաց, որպէս երկրաչափութիւնն է և երկնայնոցն ընթացից գիտութիւն, և որ ինչ այլ ևս դիւրաւոյ կայցէ առ նրբութեանն. սոյնպէս և՝ի բարերարութեանց, ունիմք առ մեծութեան անհոգանալիք են, և ունիմք թեպետ մանուկք՝ բայց յաճախաւորք թուով, և ժամանակօք զանազանեալք, Նոսեալ անկանին՝ի մտաց. զի որպէս ասացի, ոչ ստէպ յիշատակեմք զյոտսիկ, և ոչ մտադիր ածեմք զմտաւ՝ զինչ իւրաքանչիւր ումեք իցեմք պարտական։ Յուր աղէ զբարբառ ապերարկուաց. ամենեքեան խոստանան անջինջ պահել միշտ՝ի սրտի զյիշատակ երախտեացն. ամենեքեան ծառայս անձնանուէրս դառանեն զինքեանս և ջերմ պաշտօնեայս, և զամենայն ցածութեան անուանան յանձն առնուն՝ի հաւաստիս և

'ի գրաւական երախտագիտութեան իւրեանց : Ա՛յլ կաց միա վայր մի , և ահա ատելի իցէ նոցա բարբառն այն իբրև ցածութեան և ծառայութեան . յայն ժամս նեսցեն տակաւ , զի և 'ի սպառ մոռասցին զերախտիս , որ որպէս ասացաք , վատթարագունից և յեղուն ա պաշնորհաց է : Օ՛ի թէ երախտագէտ է այր , որ զյետ չատակ երախտեացն կրէ 'ի սրտին , ապա և որ մոռա նայն զայն՝ ապերախտ է :

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Խնդիր է թէ արժա՞ն ինչ էր արդեօք Թողել ան պատուհաս զայս ախտ գարշելի , եթէ որ ինչ 'ի գպրոց՝ զնայն և 'ի քաղաքի կարգել օրէնս 'ի դատ կոչելոյ զապ երախտս , որպէս իրաւացի Թուխ ամենեցուն : Ա՛յլ կարի իսկ քաջ . քանզի քաղաքաց քաղաքայ 'ի դէմս ածէն զբարիսն զոր ցուցին , յորդւոց պահանջելով և 'ի Թո ռանց՝ զոր նախնեացն նոցա արարին : Ա՛զաջինքն մեր՝ արք արդարև նահապետականք , 'ի Թշնամեաց միայն պահանջէին յետս զբարիսն , մեծամեծս նմանեցնելով առ նեին զերախտիս , մեծամեծս եմանք և կորուսանէին : Ա՛ն որ յապագայ բաց 'ի Ա՛ակեդոնացւոց՝ սահմանեաց օրէնս և դատաստանս ընդդէմ ապերախտից : Ա՛յս այս ցոյց մեծ է Թէ չէր պարտ սահմանել . վասն զի ընդ դէմ ամենայն չարագործութեան միաբանիմք Համ բէն , և Թէպէտ և ոչ միօրինակ՝ սակայն ամենայն ուրեք սահմանեալ գոն պատուհասք ընդդէմ մարդասպանու Թեան , սեղանակապութեան : Ա՛յս և եթ ոձիր ապիրատութեան յաճախեալ յոյժ , և ընդ ամենայն ուրեք յամենեցունց պարսաւեալ՝ կայ անպատուհաս , բայց ոչ և անդատապարտ : Օ՛ի անծանօթ յանցանացն գժուարին գոլով դատաստան , յատելութիւն և եթ դատապարտելիք , և զպատուհասն որպէս զայլոց ինչ լ բաց , 'ի դիւժ վրէժխնդրութիւն առնեմք ապաստան :

1 Գրչացն կամ մատենագրին վրիպակաւ՝ սպրդեալ Թուխ ասա Մա կեդոնացւոցն անուն փոխանակ Մարաց կամ Պարսից , առ որս ըստ վկայելոյ Քսենոփոնի , սահմանեալ կային օրէնք խիստ ընդդէմ ապե րախտութեան .

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Յիւ. Թէ առ ինչ չիցէ պարտ ընդ օրինօք դատաստանի արկանել զայս եղեռն յանցանաց, բազում յոյժ Թուէին ինձ գոլ պատճառք։ Նախ այն իսկ զի Թէ հանդոյն իմն փոխոց և վաշխից ընդ դատաստանաւ անկեալ՝ արծաԹով սահմանէր և բարերարութիւն, պատուական մտագոյն մտաց նորա անարգէր և ի կորուստ երթայր։ Յանդի գեղեցկագոյն ի նմա և պանծալի այն է՝ զի և զկորուստ նորին յանձն առեալ տուաք, ի կամս ընդունողացն Թողեալ բովանդակ։

Նա Թէ բողոքեմք և ի դատ կոչեմք՝ ոչ ևս բարերարութիւն իցէ՝ այլ փոխ. և ի հակառակէն զարձեալ՝ քանզի և երախտագիտութիւն ինքնին առաքինութեան է գործ, ի հարկէ լեալ և ի բռնադատութենէ՝ ոչ ևս իցէ առաքինութիւն. զի և ոչ առաւելագոյնս ինչ գովութեան իցէ արժանաւոր այր երախտագէտ՝ քան զայն որ զառանդն դարձոյց, կամ՝ զպարտսն Հատոյց առանց դատաստանաց։ Նայսու օրինակաւ զերկոսին գեղեցկագոյնս ի մարդկայնոյն առաքինութեանց՝ զառատաձեռնութիւն և զերախտագիտութիւն եղծեալ աղաւաղեմք։ Օ՜ի զինչ մեծ իցէ միաւին՝ ոչ ձրի այլ ի փոխ տալ զբարերարութիւն. և կամ միւսանգին ոչ ի կամաց այլ ի հարկէ Հատուցանել զիմոխարէնն։ Զնոյն ինչ փառք երախտագիտութեան՝ Թէ ոչ աներկևան իցէ ապերախտութիւն։

Յառաջ արդ և զայն զի ստեանք Համբերէն ոչ բաւական յայս օրինադրութիւն։ Նմինքեան առ Հասարակ դատափետեալք և դատափետէին զայլս։ Օ՜ի ո՞ր ոչ զիւրն պանծացուցանիցէ. ո՞ր և զդոյզն ինչ զոր արար այլում՝ ոչ մեծացուցանիցէ։ Նա զի որ ինչ ընդ Հանդերձեալ անկանի՝ մարթի գալ ի ծանօթութիւն, և դատաւորին չինայ անդ ազատութիւն անսահման՝ նմին իրի իակ և ի Հատատի դատս լուսագոյն իցէ յոյժ Թէ առ դատաւորն առաքինութիւնք քան Թէ առ իրաւարար. զի դատաւորն կարգաւ օրինացն սահմանաւոր՝

չկարիցէ արտաքս ըստ սահմանին ելանել. իսկ իրաւասրսն ազատ յամենայն կապից՝ հանապարհակ խղճիւ յաւելուցս ինչ կամ նուազեցուսցէ, ոչ ըստ Թէլադրութեան օրինաց և իրաւանց դատաստանի զվճիռն տալով, այլ ըստ ազդելոյ ի նա գԹուԹեանն և մարդասիրութեան։ Ի դատս ապերախտուԹեան՝ ազատ յամենայն կապից է դատաւորն, և է նման իշխանուԹիւն անսահման։ Օի արդար և որպիսի ինչ բարերարուԹիւնն իցէ՝ չէ յայտ. և ԹԷպէտ իցէ արդար ինչ էն, բայց ըստ բարեգուԹ ակնարկելոյ ի նա դատաւորին առցէ զիւր չափ և կշիռ։ Իսկ Թէ ո՛ կամ զինչ ապերախտն իցէ՝ ոչ ուրեք սահմանեն օրէնք։ Կայ պատասխի իսկ յաձախ զի և որ զարիտուր երախտեացն հատույց՝ ապերախտ իցէ, և որ ոչն հատույց՝ երախտագէտ։ Կայն դառը յորս և դատաւոր տգէտ կարող է տալ վճիռ, երբ զգործոց և զարարոց իցեն իրքն և վաւերականաբ վիճքն սահմանեսցին. բայց ուր երկուստեք բանն է դատաստ, խեղամուԹեան անդ պէտք են. և ուր խնամուԹեան միայնոյ է սահմանել զվիճն՝ չիցէ առայն բաւական՝ որ յամբոխել անտի վիճակելոցն վասն ձախուԹեան ընչից և ժառանգուԹեան կացցէ դատաւոր։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ոչ Թէ անարժան ինչ Թուեցցաւ ասել զապերախտուԹիւն ձգել ի դատաստան, այլ զի պակասեն դատաւորք՝ կարողք ի դատել զայն. և ընդ այս ոչ զարմացսիս եԹէ քննիցես Թէ որպիսեաց հանդիպեսցի գործարուԹեանց որում հասանել դատել զայդ դատ։ ԸստաԹէ բազում՝ ընդ ոչ ունէք, բայց զի ձեռն էք՝ չզգաց ինչ տայիս. այլ որ պարգեւեաց գնոյն՝ համբրէն յիւրոց գոյիցն մերկացեալ. պարգեւք նոյն են՝ բայց ոչ և բարերարուԹիւն։ Օառաւելն ասացից. հատոյց որ զպարտս պղծ յաղագս ուԹիւն պարտաւորելոյն, բայց արծաԹ ի տանէն ածեալ. գնոյն արար և այլ որ, բայց արծաԹ ի փոխ առեալ կամ յաղաչանս մատուցեալ՝ գնձէն իւր տալով պարտապան մեծի հնարիւն։ Կայ

միթէ հաւասար Թուեսցին քեզ՝ որ ՚ի պատրաստ գանձուց անաչխատ զպարգեւսն առատաձեռնեաց, և որ էառն զի տացէ ։

Ոչ չափ և կշիռ պարգեւին՝ այլ ժամանակին և հանգամանք բազում ուրեք մեծացուցանեն զնոյն ։ Խարեբարուքիւն է պարգեւել կալուածս՝ որոց առատ պտղաբերութեամբ նուազեսցին պարենիցն գինք ։ Խարեբարուքիւն է և հաց մի տալ սովելոյն . բարերարութիւն է պարգեւել գաւառս ընդ որս հոսեսցին գետք բազումք և նաւագնացք . բարերարութիւն է և պատքելոյն ՚ի ծարաւոյ և որ ընդ չորացեալ կոկորդն հաղիւ հնչիցէն՝ ցամաքել աղբիւր ։ Չէ ո՛ ՚ի կշիռ հաւասարութեան առեալ կշռեսցէ զայսոսիկ . դժուարին է յոյժ տալ վճիռ , ուր ոչ գիրաց՝ այլ զգօրութենէն իրաց իցէ խնդիրն . Թէպէտ և նոյն ինչ պարգեւքն իցեն՝ այլ ոչ նոյնօրինակ տուեալք՝ ոչ զնոյն կշիռ ունիցին ։ Խարեբարեաց ինձ ինչ ոք՝ բայց ոչ չօժարութեամբ , բայց տրտնջելով ընդ տուբան , բայց խոժոռ և տաքարտաւան չայեցիւք ըստ ոչ սովորութեանն . բայց այնպէս անագան և զանգաղանօք՝ զի Թէ զլանայր վաղագոյն՝ առնուել ինչ պարգեւք ։ Չէ ո՛ բաւական իցէ ՚ի կշռել և ՚ի դատել զայսոսիկ , ուր և բան մի և երկմտութիւն և տեսիլ երեսաց եղծանէն զչնորհս երախտեաց ։

ԳԼՈՒԽ ԻԹ ՆԵՐՈՐԴ

ՅԱՒԵԼ, եւս զի են ինչ բարերարութիւնք անուանեալք և երևելիք առ մեծի ցանկութեանս մերում, և են եւս ոչ նոյնպիսիք չասարակաբար Թուեցեալք . բայց մեծագոյնք են Թէպէտ և փոքունք իսկ Թուեսցին ։ Խարեբարութիւն Թուի քեզ մեծազօր քաղաքի զրել զոք քաղաքացի , յասպետութեան ամբառնալ կարգ , գլխապարտ եղելումն պաշտպանել . իսկ Թէ զինչ իցէ խրատս բարիս տալ ումեք , զինչ արգելուլ զսուր ՚ի մեծ եղեռն չարագործութենէ , յափշտակել զսուր ՚ի ձեռաց անձնասպանին , զսգացեալն և որ ցանկայ սիրեցեալն իւրոյ ինքնակամ լինել մահուիւ՝ աղքատ զեղուկք

'ի զգծուածին ածել և 'ի կեանս, առընթեր կալ խոթացուածն և 'ի մեծի վտանգի հիւանդութեանն և կենաց 'ի դէպ ժամու մատուցանել կերակուր, և զծուլացեալ երակն կազդուրել զինեաւ, վտանգեցուցին առ 'ի մահ ածել բժիշկ, ո՛ է որ 'ի միտ առեալ կշռեսցէ զայսոսիկ, ո՛ է որ համազօր բարերարութեամբ զՀատուցումն նոցին հրամայեսցէ։ Պարգևեաց որ քեզ տուն. բայց ես նախագուշակ քեզ եղէ թէ ահա 'ի վերայ քո կործանի տունդ։ 'Այս ետ քեզ ժառանգութիւն. իսկ ես տախտակ ետու 'ի նաւաբեկութենդ։ 'Այս փոխանակ քո մարտուցեալ վէրս ընկալաւ, այլ ես լուսնթեամբ ետու քեզ կեանս։ Այս զի այլ ինչ ազգ բարերարութիւնքն են և այլ ինչ ազգ փոխարէնքն, դժուարին է յոյժ հաւասարել զնոսին։

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

'Այն և ոչ որպէս փոխառիկ դրամոց օր սահմանեալ իցէ 'ի հատուցումն բարերարութեան, և որ չէ հատուցեալ իցէ՝ կարող է հատուցանել, զի ո՛ր, աղէ տաս, սահմանն ժամանակի իցէ ապերախտութեան։ Ընծամեծքն 'ի բարերարութենէ ծածկապէս գործին յաշխարհի, կոչուն 'ի միտս թաղեալք 'ի լուսնթեան։ Այս միթէ սոխակիցիք վկայս ունել միշտ բարերարութենէն մեծոց։ Իսկ զինչ պատիժ սահմանեսցուք ապերախտից, մի՛ ինչ ամենեցուն ուր անհաւասար են երախտիք, եթէ ըստ չափոյ երախտեացն գանազանեալս 'ի ծանր և 'ի թեթև։ Ո՛ տուգանս ևեթ արծաթոյ սահմանեսցին արդեօք պատիժքն. և զիա՞րդ, մինչ կենօք չափ և առաւել իսկ քան զկեանս լինին ուրեք բարերարութիւնք։ Այս զի՞ր այսպիսեացս սահմանեսցուք պատիժ. զիա՞րքն քան զերախտիս, այլ անիրաւ իցէ. զՀատուսանն կենօք փոխարինելոց, այլ զինչ խժդժագոյն քան զայն՝ արեան ձեռագործ վախճան առնել բարերարութեանն,

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՍՆԵՐՈՐԴ

ՊԱՏՃԱՌԸ, ասիցես, են ինչ ինչ ըստ ոչ հասարակաց օրինի հնարհեալք ճնողաց, հանդերձ նոցա պատ է և այլոց երախտաւորացն լինել։ Ընդողջն սրբազանեալ է առ ի մէնջ պաշտօն ի կարևոր պէտս որդեծնութեան, յոր և խրախուսել պարտ էր զնոսա ի յանձն առութիւն ծանուռ բեռինն և կեղեկարծ և բազմավտանգ բախտին։ Ունէր մարթ ասել նոցա, զոր ինչ բարերարացն ասեմք. ընտրեա քեզէն որում բարերարես ցես, և եթէ խաբեցար՝ ընդ անձին ոգորեսջիր, և արժանաւորին լեր ձեռնտու։ Յորդեծնութեան չիք բնաւ ընտրութիւն առ ի ճնողաց, ամենայն ինչ ուխտիւք վճարի. վասն որոյ հարկ էր ընտրել ինչ նոցա իշխանութիւն՝ որով յորդորամիտ գոյին տալոյ զանձինս ի վտանգ։ Կաց ասասի է և այս առաւելութիւն ճնողաց, զի որոց բարերարեցինն՝ բարերարեն անդուլ և բարերասցեն. և չիք կասկած ստելոյ նոցա ի բանս իւրեանց։ Կայց յայլս քննել հարկ է և ստուգել ոչ զայն միայն թէ ընկալաւն ինչ փոխարէն, այլ թէ բնաւ և ետուն իսկ։ Ընդողջն խոստովանեալ են երախտիք. և զի օգտակար է մանկութեան լինել ընդ տեսչութեամբ, զճնողս կացուցանեմք ի վերայ նոցա իբրև առանին դաստատս, ի տեսչութիւն պահպանութեան նոցա հաւատացեալ զնոսա։ Ուր այսոքիւք ճնողաց ամենեցուն միօրինակ են երախտիք. ուստի և հասարակաբար սահմանել ինչ մարթ էր, իսկ այլք առ հասարակ պէսպէս են և անմնման և անբաւ խորոցաւ զանազանեալք ի միմեանց. նմին իրի անմարթ էր ընդ միով կանոնաւ սահմանել զնոսա, զի արդարացի և էր բնաւ իսկ անսահմանս թողուլ զնոսա, քան զամենայնն հաւատալ ի մի։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Լ՝ ինչ որ մեծ և ճանրագին է տուողին, և է որ թէ պէտ չարժէ ինչ նման՝ բայց մեծ է յոյժ և պատուական որում պարգևին. է զոր տամք բարեկամաց, և է զոր անծանօթից։ Վասպէտ և նոյն իսկ բարեբարութիւն՝ բայց յաւելու ի չարչ՝ տուեալ այնմ զոր բարեբարութեամբ պղտիկ սկսանիցիս Ճանաչել։ Ոչին զկարևորսն ընձեռեալ յօդնականութիւն. այլ զօձան պերճութեան, և միւն ի սիփսիանս։ Լ՝ որ ոչ զայլ ինչ խնդրէ և մեծագրէ՝ բայց զայն որով մարթասցի սիփսիանս և սրտի դիւր ի վիշտս իւր գտանել։ Լ՝ գարձեալ որ պերճութեան և փառաց առաւել իշամ ունի, քան կենացն ապահովութեան. և է որ երախտապարտ խոստովանի զանձն այնմ՝ որ զկեանս իւր ապահովէ, քան որ փառաւորէն զայն պատուով։ Լ՝ ըստ այսմ յաւելուն կամ նուազին երախտիք ըստ միտեցոյ յօժարութեան հոգւոյ զատաւորին յայս կամ յայն։ Լ՝ գարձեալ, զիսոստաւոն ինձ՝ ես ինձէն ընտրեմ. իսկ զերախտիս բազում այն է զի յորմէ ոչն կամիմ ընդունիմ. է զի և յանդգնաս իսկ պարտական գտանիմ։ Լ՝ զոր զինչ ասիցես. ապերախտ Համարիցիս զնա որ յանդգնաս ընկալաւ զբարերարութիւն զոր թէ զիաէր ոչ ընդունէր. և ոչ նոյնպիսի կոչիցես զայն, կամ չՀամարիցիս զնա ապերախտ՝ որպ որ և է օրինակաւ ընկալեալ զերախտիս և չվճռիցի երախտաՀատոյց։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Լ՝ԱՐԵՐԱՐԵԱՑ ինձ որ, բայց ապա և անիրաւեցաւ. սահմռկիմ սրտիւ զի ոմն միոյ բարերարութեանն զանձնայն անիրաւութիւնն Հանբերութեամբ յանձն առնուլ, կամ թէ զերծ ի պարտուց երախտագիտութեան Համարեցայցի զիս այնու զի յաւել անիրաւու-

թեամբն եզծանել զպարգեւս իւր։ Կամ զարձեալ պարգեւքն արդեօք եթէ անիրաւութեանն տայժ առաւելութեան՝ զինքն ընտրեսցէ։ Կամ թէ մի մի զամենայն գժուարութիւնսն թուել կամիցայց՝ չգաւեն ինձ առաքք։ Այլ ասիցես, ի չպահանջել զերաւունս տուէղոյն՝ ի մէնջ երախտեաց և՝ ի չպատուհասել զապերախտսն՝ զանզաղագոյնս բերիցիւք՝ ի բարերարել։ Այսպէս յուշ լեցի քեզ զի և՝ ի հակառակէն զանդաղագոյնս յընդունելութիւն երախտեացն բերիցին, եթէ վասնզ զատատանայ՝ ի վերայ կայցէ, և անմեղութիւնն իսկ չիցէ զերծ՝ ի հոգոյ։ Այսուհետև զի և մեք ինքեանս վասն այսորիկ յամրաշարժք գոլոյք՝ ի բարերարել։ զի ոչ աբ յօժարութեամբ տայ որոց դժկամակիին ընդունել, այլ որ՝ ի բարութենէ սրտի և յերկայն գեղեցկութենէ յորդորի՝ ի բարերարութիւն՝ յօժարագոյնս բարերարէ և այնոցիկ զոր ոչ՝ ի պատուոյ այլ՝ ի կասկած թէ տացեն փոխարէնս։ Օ՛ն որպէս առաւել զգուշացայն զբարերարութեանդն, այնպէս նուազին երախտեացն փառք։

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Պարզեւ, թէպէտ և նուազեսցին բարերարութիւնք՝ բայց չէմարտագոյնք եղեսցին, և զինչ պատ իսկ եթէ կարձեացի յախտան հանդարտակութիւն՝ ի բարերարել։ Այս՝ յայդ իսկ ջահմանեցան զայնմանէ օրէնք, որպէս զի առաւել այլազրկք իցեմք և զգաստք՝ ի տուրս, և առաւել զգուշացզրկք յընդունելութեան այնոցիկ որոց տացեմք։ Ցես քաջ, ասացի և զարձեալ ասացից։ ուես քաջ, որպէս պարգեւես, ոչ զատք գոն և ոչ պահանջմունք։ Խոթես, եթէ յօժարակամութիւն զատատուրին յատացիս։ Զնոյն օրէնք զոր զբոյդ քեզ զարձուացեն անկոտուսս. ի հաւատարմութիւն և եթէ ընդունողին անկալցիր։

Այսու օրինակաւ մեծաբոյ իցեն և պատուական երախտիքն, զոր թէ վիճիկ և հակառակութեանց դիցես պատճառ՝ անպարգեկեր գնոսա։ Յղդարութեան վերհ և հիմնեալ յերաւունս ազգաց, Հատո զոր պարտիդ.

բայց ի բարերարութեան դժուխալուր բարբառ է, Հատո։ Այլ զինչ հատուսցէ. զկեանն զոր պարտի, զիշխանութիւն, զապահովութիւն, զառողջութիւն և որ ինչ այլ մեծամեծքն իցեն և անկարելիք։ Վեթ այլ ինչ զուգաչափ հատուսցէ, ասիցես, ընդ այդոցիկ։ Այդ իսկ եր աՀա՝ զոր եան ասէի, թէ շահավաճառ արարեալ զբարերարութիւն՝ անարգեալ կորիցէ յարգ մեծի առաքինութեանն։ Ձեն պէտք զրդռելոյ զսիրտ յագահութիւն, ի քրթմնջիւն և յերկպառակութիւն յորս մնադիւք բերի ի բնէ, նա մանաւանդ զդէմ կալցուք յամենայն զօրութենէ և զպատճառս պատճառահանդրայն հատցուք։

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յ8Ե՛ թէ կարող իցէ ոք հաւանեցուցանել և զպարտատէրս չառնուլ ի բաց զարձաթեն տուեալ ի փոխ՝ բայց յորոց մնադիւքն հատուցանիցէն. իսկ թէ ոչ գնողն վաճառողին սակարկութեանն դաշամբ լինէր պարտապան, և ոչ գաշինք և պայմանք կնքօք հաստատեալ պահէին. այլ հաւատարմութիւն և հոգի արդարակրօով հաստատութիւն էր և պահապան առնոյին։ Այլ քան զլուսն նախապատիւ արարին մարդիկ զվարկաւորն՝ և ընտրեցին պահանջել հատատս, քան վտանգ լինել յայն։ Այրկաւտեք յառաջ բերին վկայք, սա բազմանման հաստատեալ տախտակօք և երաշխաւորացն միջնորդութեամբ վճարէ զանձնոյն, նա և զդաշնադրութիւն չհամարի բաւական՝ եթէ ոչ գրով զխոստումն ունիցի ի ձեռին։ Այվ որպիսի առաջնապարտ խոստանալութիւն իցէ այս վկայեալ հրապարակաւ զդժանաց և անիրաւութեան մարդկան ազգի. մտամտեաց առաւել քան թէ բանիւ ընծային հաւատք։ Այսկ զինչ զոր ծիցէն արդ այդոքիկ չքեզաւարդք, առ ինչ կնքեալ գրաշեն. զի մի զոր էառն դա՝ ուրացաւ լեցի իբրև չառեալ։ Այս միթէ անկաշառք ոմանք իցէն դոքա և պաշտօնեայք վերաժխղիլը արդարութեան. ո՞չ և դոցին իսկ ընդ հուպ այդու օրինակաւ հաւատասցի արծաթ։ Այս

եթէ այդպէս իցէ, ո՛չ լաւ և էր խաբել յանհաւատարմութենէն ունայն՝ քան յամենեցունցն Թերամա՛ի հաւատոյ։ Ո՛չ յոյս լուսոյ իցէ ազահութեան եթէ և երախիտիք առանց երաշխաւորի ոչ տացին։ Ո՛գաբինի և մեծագործ անձին է՝ օգնել և օգտել. որ բարերարէն՝ աստուածոյ է համանման, իսկ որ պահանջէն՝ վաշխառուի. և ընդէ՞ր իցէ պատճառանաւք ապահովութեան անարգագունիցն ի մարդկանէ զբարերարն դնել հաւասար։

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ո՞յր ասացես. Չանախեցին ապերախտը յանպատուհաս մնալ ապերախտութեանն։ — Կուգացցին մանաւանդ, զի առաւելագոյն ընտրութեամբ լցին բաբերարութիւնք։ Լծողից ասել, զի զչանախել ապերախտիցն հրապարակագոյժ առնել ոչ յօգուտ ինչ իցէ. զի չանախութիւն յանցուցելոցն բառնայ զամենի յանցանացն, և նզովեսցէ ի հասարակաց ոչ և լինի յարհամարհանս։ Նա՛ և ո՞ի կանանց պատկառեսցէ լինել այրաձող՝ տեսեալ զմեծուհիսն և զպատուական տիկնայս զի զամն իւրեանց հաշուէն՝ ոչ հիւպատոսաց այլ արանցն թուոյք. Թողուն զարս զի առնանասցին, և առնանանան զի Թողցեն։ Աստկալ Թուէին ոՀիրքն մինչ չև էին չանախեալք. այլ արդ քանզի չամենայն առեանս յորդեցին հնաձողացն վէմք, ատկ լսովքն ընդելացեալ՝ ի նոյն սովորեցին մարդիկ։ Նա՛ ո՞ւմ չեսցէ արդ ընդ հնութիւն, ուր չայն հասեալ են իրքն՝ զի առ ի գրգռել և էՀ զհամանին առնանանայցէ ոք. և հաւաստիքք իմն տգեղութեան համարեալ է առնձիսաճառութիւն։ Նա՛ ո՞ի կանանց այնպէս հեգ և փցուն, որում չիցեն աւելի քան զղջագ մի հոմանեաց. և որոյ զժամն աւուրն բաժանեալ միոյ միոյ ի հոմանեացն, և ո՛չ կարէ՞ցցի օրն ողջոյն, որոյ ոչ երեկոթեալ առ միում և գիշերեսցէ առ այլում։ Ցիմոր է և պարզամիտ և ի հնոց մեացեալ ժամանակաց որ չգիտիցէ Թէ հնութիւն ընդ միոյ միայնոյ՝ յանհնութեան է ի համարի։ Ո՞րդ որպէս ի համաձարակ ծաւալել ախտին բարձաւ

առնէի մեղանացն, սոյնպէս և ապերախտութիւն լսելոյ չեալ յորդեացդ համարձակ ի նշաւակել Թուոյ բազմութեան ապերախտից։

ԴԱՍԻԽ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Ասէ զինքն. անպատուհաս ուրեմն լինի ապերախտն։ — Այլ զինքն. անպատուհաս ուրեմն է ամենայրիշն. անպատուհաս չարասիրսն, անպատուհաս ագահն, և անժուժկալն և անգութ։ Այլ միթէ անպատուհաս համարիցիս զու զատեցեալն յամենեցուն. կամ Թէ գուցէ ինչ պատուհաս խոստացոյն քան զՀասարակացն առելութիւն։ Ո՛ստ իսկ է ապերախտին պատուհասն զի ոչ ուստեք համարձակեալ ընդունել երախտիս և ոչ առնել ումեք իշխէ. զի ամենեցուն նշաւակ կայ կամ համարի գոլ զանձն. և զի անմահն է ամենևին և անձնակ ի քաղցրութենէ լաւագունին յառաքինութեանց։ Ահաւասիկ Թուեացի քեզ արդեօք բլշկին և ծանրասուր. և ոչ Թշուառ համարիցիս զվերիպեալն ի զգայութենէն երախտեաց։ Հանապազորդ խղճիւ ընկալեալ բարերարութեանցն խոթեալ և տանջեալ՝ զանգիտէ ի վերադառնալ ցառնեան զիջն Թշնամեաց ապաշնորհս։ Այլ հանգոյն, որպէս ասացի, շատ իսկ էր նմա պատուհասն մեծ զիրկ գոլոյ ի վայելից քաղցրագունին յառաքինութենէ։ Իսկ որ արժանապէս զերախտին ընդունի՝ յանապատկան ինն վայելէ միշտ ի զուարճութեան, և քան ի տուեալն ի տուողին հայեցեալ սիրտ բերկրի։ Ոարերարութիւն զայր երախտագէտ ուրախ առնէ միշտ, իսկ զապերախտն միանգամ ևեթ։ Ուէր աղէ Թէ կամիս և զերկաքանչիւր նոցա զկերպարանս մերձ զիցոք իրերաց. մին տրտում է և հոգած երեսաք, որպէս զրժողն և նենգաւոր. որ և ոչ զպարտապատշաճ պատիւն հատուցանէ ծնողացն, զատահարակաց և վարժապետաց. իսկ միւսն ուրախ և զուարթ՝ խնդրէ պատեհ երախտահատոյց լինելոյ, և այնու մանաւանդ զուարճանայ. ոչ ջանայհատ լինի խորել և կամ ժխտել զերախտիսն, այլ Թէ արդէն լիուքն առատութեամբ

զիսախարէնան հատուցէ ոչ ծնողաց միայն և բարեկամաց՝ այլ և խնամարհպատնիդին և և նուաստից ։ Օ՛ի թէպէտ և ՚ի ծառայէն իւրմէ ընկալցի երախտիս՝ ոչ զտուողն կշռէ այլ զտուբան ։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Ասկացն խնդիր է առ ոմանս , զոր և ՚ի մէջ առնու և Հեկատոնն , թէ մարթ ինչ իցէ ծառային երախտաւոր լինել տեառն իւրում ։ Օ՛ի ըստ ոմանց այլ է բարերարութիւն , այլ պարտք պատշաճիւ և այլ սպասաւորութիւն ։ Բարերարութիւն է զոր ընդունի ոք յօտարէն , և օտար է՝ որում մարթի իցէ անստգիտ և չբարերարել ։ Պարտք պատշաճիւ էն զաւակացն , կնոջ և այնոցիկ ամենեցուն՝ զորս կարևոր կցորդութիւն ստիպէ լինել նպաստամատոյց ։ Սպասաւորութիւնն է ծառային , որ ըստ հարկի ծառայական պայմանին զամենայն զոր ինչ և առնէ՝ ոչ ՚ի ընդհսն համարեսցի տեառն իւրում ՚ ։

. . . Յաւել՝ զի և որ ժխտէն թէ չիցէ մարթ ծառայից երախտաւոր գոլ երբէք առ տեառս իւրեանց , անգէտ է իրաւանց մարդկութեանս . ոչ եթէ պայմանն անձինն է որ խնդրի ՚ի բարերարութեան՝ այլ սիրան ։ Ոչ պահեստ ինչ յոժարէ է առաքինութիւն՝ այլ գիւրապատրաստ ամենեցուն . զամենեսին ընդունի , զամենեսեան հրաւիրէ , զազատս և զազատս գրեալս , զծառայս , զթագաւորս և զվտարանդիս . ոչ զտունս ընտրէ և ոչ զճոխութիւնս մեծարէ , այլ զմարդկսկ ։ Օ՛ի զինչ այլ գոյր անեղկեան յերեսաց արևածից , և կամ յինչ այլ բարձրագոյն գոյր վտահանալ մարդոյ եթէ և առաքինութեանն հաստատութիւն ընդ յեզափոխութեամբ անկանէր բախտի ։ Օ՛ի եթէ ոչ ծառայ տեառն իւրում՝ ապա և ոչ թագաւորին ոք , և ոչ զօրական իւրում՝ զօրավարի չկարասցեն լինել երախտաւոր ։ Օ՛ի զինչ փոյթ է թէ ընդ որսիսեան իցէ ոք իշխանութեամբ , մինչ ընդ ծայրագունիւն կայ ։ Օ՛ի

՚ Պակասէ և առա ՚ի բնագրին ։

Թէ ծառայ՝ի հարկէն խափանեալ և յերկիւղէ յետին պատուհասից՝ չժամանիցէ լինել երախտաւոր, նոյն խափան կայ և այնմ որ ընդ Թագաւորաւ իցէ կամ ընդ զօրավարաւ. զի ընդ այլ և այլ կերպարանաց ընդ նոսին անկեալ կան իշխանութեամբ։ Իսկ արդ մարթ է երախտաւոր գոլ առ Թագաւորս և առ զօրավարս, ապա և առ տեառս։ Այո՝ մարթ է ծառայի արդար լինել, արի և ունճանճն, ապա և բարերարել ևս. զի և այն առաքինութեան է արգասիք. և զի մարթ է ծառայից երախտաւորս գոլ տերանց իւրեանց, յայտ և անտի է զի բազումք բազում անգամ չնորհապարտք գտան իւրեանց ծառայից։ Այլ թէ հնար է ծառային բարերարել ահա և է՝ի մարդկանէ, որպէս չիք երկբայութիւն, ընդէր չկարիցէ բարերարել և տեառն իւրում։

ԴԱՒԻԹ ԻՆՆԵԻՑԱՄՆԵՐՈՐԴ

Օ՛ի կարէ, ասես, տեառն իւրում լինել պարտաւոր, թէպէտ արծաթի իակ՝ի փոխ տացէ նմա. ապա թէ ոչ՝ բարերարել նմա զօրհնութեամբ նշդեհակից լեալ նմա, ՚ի հիւանդութեանն ապաստարեալ և անբաւ վաստակօք պաշտօն տարեալ նմա։ Այլ սակայն այդ ամենայն յայլմէ ումեքէ լեալ՝ թէ հանդերձեցին յերախտիս, ծառայիւն սպասք պատանին էն։ Օ՛ի բարերարութիւնն այն է, զոր ազատաբար առնէ ոք կարող գոլով և չառնել. իսկ ծառայի չէ այս ազատութիւնն չառնելոց. ուստի և չընորհէ ինչ, այլ չպատակի. և չմարթէ նմա պարծիլ յայն ինչ՝ զորով չկարէր զանց առնել։ — Այդպէս իցէ. բայց և ըստ այդմ տեառութեան ևս եղէց յաղթող, և ցուցից զծառայն՝ի բազում ինչ իրս՝ ազատ ամենևին։ Այլ արդ աղէ ասա ինձ, եթէ՝ի հանդէս ածից զքեզ զայր ծառայ, որ՝ի փրկութիւն կենաց տեառն իւրոյ արհամարեալ զնովն՝ մարտ եդեալ կռուիցի և վերս բազումս ընկալեալ՝ի հեղուլ անդ զյեղին չնթաս կենդանական արեանն, յամի մահաբեր հնձբեացի ժամ տալ և պարապ փախստեան տեառնէն, զայդպիսի ոք այր ժխտեացե՞ս գոլ երախտաւոր, զի ծառայ

է : Այլ եթէ զայլ ոք ցուցից քեզ , որպ ոչ խոստմամբք բռնաւորին հրապուրեալ , ոչ ի սպառնալեացն զանգիտեալ , և ոչ տանջանաքն յաղթահարեալ , չառնուցու յանձն մնան լինել գաղտնեաց տեառն իւրոյ , և մինչև ցմահ հաւատարիմ գտեալ փարատեսցէ զամենայն կասկածանս մտաց հարցաքննողին , ժխտեսցե՞ս դու զնա չլինել երախտաւոր տեառն իւրում , զի ծառայ է : Տես մանաւանդ գուցէ այնպէս առաւել երախտաւոր իցէ՝ որչափ գժուարագիպ է առաքինութեան օրինակ ի ծառայս . և այնչափ առաւել պատուական՝ որչափ զի ամենայն գոգցես տէրութիւն ստելի ինն գոլով ի քեզ և ամենայն հարկ ծանր , նա միայն գտաւ որ թէպէտ ծառայ , բայց տիրասիրութեամբն յաղթեաց ստելութեանն՝ որ հասարակաց է ծառայից ամենեցուն : Որով ոչ միայն անժխտելի երախտիքն են , թէպէտ ի ծառայէն ընձեռնեալք , այլ և մեծարգոյք յոյժ այնու՝ զի և ոչ ծառայութիւն կարաց կասեցուցանել զնա անտի :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Որ զմարդն ողջոյն համարի զբաւեալ ընդ ծառայութեամբ՝ սխալէ , ազնուագոյն նորա մնան ազատ է : Այսպիսով միայն է վաճառեալ և ընդ իշխանութեամբ անկեալ տերանց . իսկ հոգին ինքնիշխան կայ , և այնպէս ազատ է և աննուաճելի , զի և ոչ բանտս այս յորս արգելեալս է՝ կարող է կալ և կալ ունել զնա , այլ ուժգնիւս սպանայ , գործէ մեծամեծս , և յանսահման բարձրութիւնն՝ երկնայնոցն լինի զուգապար : Այսպա զմարմինն եւեթ աւանդէ բանտն ի ծառայութիւն , զայն գնէ տէրն և զայն վաճառէ . իսկ նեղբերինն այն մտաց անբեւեայթ , չմարթի երբեք նուաճիլ ի սորկութիւն , Որ յաւիտեան ի գործս իւր ազատ է ամենևին , զի և ոչ մեր իշխանութիւն է զամենայն ինչ հրամայել ծառայից , և ոչ նոցա պարտք հնազանդելոյ ամենայնի . ի միասս հասարակապետութեանն հրամայեալք՝ ոչ հնազանդեսցին , և գործակից ապիրատութեանց երբեք ոչ լիցին :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՒԱՋՆԵՐՈՐԴ

Այն ինչ իրք զորս ոչ հրամայեն օրէնք և ոչ արգելուն, և յայնոսիկ մարթ է ծառային երախտաւոր լինել տեառնն։ Յորչափ զհրամայեալսն՝ զորս օրէն իցէ պահանջել՝ ի ծառայէ՝ կատարիցէ, զպարտս ծառայութեան հատուցանէ. իսկ յորժամ աւելի ինչ քան զպարտս պաշտամանն առնիցէ, երախտիք են։ Յորժամ զբարեկամութեան բերիցէ զսիրտ և զկերպարանս, ոչ ևս համարեսցի ծառայութիւն։ Այ ինչ զոր տեառնն պարտ էն տալ ծառային, որպէս զկերակուր և զզգեստ. և ոչ համարեսցի զայն զոր երախտիս, բայց թէ մարդասիրեաց առ նա, և աղաչագոյն հրահանգօք կրթեաց զնա, և՝ ի վարժս արհեստից իւրոց զմի յազատորդւոց ուսոյց զնա, բարերար գտաւ նմա։ Օսոյն և՝ ի հակառակէն է խնամալ և՝ ի ծառայն, զոր ինչ անցանէ ըստ չափ ծառայական պաշտամանն՝ զոր ոչ՝ ի պարտուց, այլ՝ ի կամաց մատուցանիցէ, բարերարութիւն է, միայն թէ իցէ ինչ այնպիսի, որ և յայլմէ ումեքէ լեալ՝ կոչեցի բարերարութիւն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Նաւուձն, որպէս Խրիսոստոմոս կամք եղեն ասել, է ՀԱՆՁԵՒաւոր վարձկան։ Զոր որպէս վարձկանն յորժամ առաւել քան զսակ գործոյն՝ յոր վարձկանեցան վաստակիցէ երախտաւոր է, նոյնպէս և ծառայ յորժամ առ սէր տեառն իւրոյ՝ ի բարձրագոյնս քան զչափ պայմանի ծառայական բախտին բերէաւ և՝ ի վեր քան զանկնկալութիւն տեառն իւրոյ զարժանին ազատազգւոյ գործեսցէ գործ, երախտաւոր է և ընտանի բարերար։ Այնթէ արդարութիւն Թուեսցի քեզ զի ընդ Թերացեալսն՝ ի պարտուպատշաճ ծառայութենէ ցասուցեալք, և որոց առաւել քան զօրինաւոր զպարտսն

վաստակիցին՝ չունիցիմք ինչ ընդդէմ։ Կամիցիս գիտել
թէ երբ չիցէ բարեպաշտութիւն. երբ մարթի իցէ ասել,
թէ աղաղ թէ կարէր՝ չառնէր զայդ։ Իսկ յորժամ զոր չառ-
նելն կարէր՝ կամեցաւ և արար, գովութեան է արժա-
նէ։ Կարեպաշտութիւն և անիրաւութիւն զհմայրեալ
են իրերաց։ Կթէ մարթի իցէ ծառայի կրել անիրաւու-
թիւն ՚ի տեառնէն, ապա և բարեպաշտել նմա կարէ։
Կէ ոչ ահա զատուորը կարգեալ կայ լսել զանիրաւու-
թիւնս տերանց ընդդէմ ծառայից, և ՚ի զսպել զդժնեու-
թիւն նոցա, զանգթութիւն և զագահութիւն ՚ի տալ
զկարելոյն պէտս կենաց ծառայից։ Օ ինչ ապա. երախ-
տիս ուրեմն ընդունի տէրն ՚ի ծառայէն. — Կանաւանդ
թէ մարդ ՚ի մարդոյ։ Կէ զի համայն ասացից, նա զոր
ունէցին՝ արար, բարեպաշտեաց տեառն իւրում. քեզ անկ
է ընդունել զայն և կամ ոչ ՚ի ծառայէդ։ Կէ ո՞իցէ ՚ի
մարդկանէ այնչափ մեծ՝ զոր ոչ չարկեացէ բախտն և
յեռնագունից անգամ լինել կարօտ։ Կազումն ՚ի մէջ
մատուցից օրինակս բարեպաշտութեան, զանազանեալս
յոյժ և հակառակս իսկ իրերաց։ Կ որ կեանս տայ
տեառն իւրում, և է որ զնոյն։ ոմն ՚ի վերահաս կորըս-
տնեալ ապրեցուցանէ, և թէ փոքր ինչ թուեացի քեզ
այդ, կորուստեամբ իսկ անձինն ապրեցուցանէ զտէրն.
այլ ոք օժանդակէ տեառն իւրում ՚ի մնոյ, և միւս այլ
արգելու զայն պատրանաք։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

ԿՂՈԴԻՈՍ Կաւագրիգար յաթեւտանեօրդումն ՚ի
տարեգրութեանցն իւրոց ասանդէ զի ՚ի պաշարել
Կգրոմենտոն քաղաքի և յանկանել ՚ի յեթին անյու-
սութիւն, ծառաք երկու փախստեայք անկան առ Ըզը-
նամիս, և գտին ՚ի նոցանէ ընդունելութիւն։ Կբրև
առաւ քաղաքն և այսր անդր ընթանային յաղթականն,
նոքա ընդ ծանօթ պողոտայս յատաջընթաց եղեն ՚ի
տուն անդր՝ ուր ծառայէինն, և առեալ զտիկինն իւ-
րեանց վարեին զառաջեաւ. և որոց չարցանէինն թէ
ո՞ իցէ, տային պատասխանի թէ Տիկին մեր է, այլ

անգութ յոյժ, զոր և վարեալք ՚ի պատուհաս։ Այլպա իբրև արտաքս ըստ պարիսպն հանին, Թագուցին զնա ուրեք ամենայն զգուշութեամբ մինչև անցցէ ցասումն Թշնամւոյն։ Այլ այն ինչ յագեալ կատաղութեան զօրականին վաղ ընդ փոյթ ՚ի հռովմէականն դարձան զգծնութիւն, նոցա ևս յիւրեանցն գարձ արարեալ ՚ի ծառայութիւն, ածեալ կացուցին ինքեանց անդրէն զտիկինն։ Այլ նա իակ և իակ ազատ արար և զերկսեանն. և ոչ գժպհի համարեցաւ զկեանս իւր առնուլ պարգև ՚ի նոցանէ, զորոց զմահուն և զկենաց ունէր զիշխանութիւն։ Այս հաձոյացոյց ևս էր նմա հնարն այնու՝ զի այլազգ պահեալ ՚ի կուսորածէն՝ ոչ նոր ինչ և անսովոր գթութեամն լինէր առ նա պարգև. իակ այսու օրինակաւ պահեալ ՚ի զոյգս եղև և յօրինակ չքեղ կրկին քաղաքաց։ Յայնչափ ազմկաց առանն քաղաքին, ուր այր իւրաքանչիւր զանձնէ հոգայր, ամենեքին Թողին զնա և փախեան, բաց յերկուց անտի փախստեից որոց ցուցանել կամեցեալ զսիրոտ իւրեանց և զսատանառս նախկին փախստեանն, ՚ի յաղթահասնոց անտի անցին անդրէն առ գերեաւն, յանձն առեալ երևել իակ տիրասպանք. որ արդարև գերասպանծ մանն էր բարերարութեանն իւրեանց. զի առ ՚ի ասպետեսցանելոյ զտիկինն, ոչ ինչ գժպատեհ համարեցան և կենաց նորա երևել դատաւանաք։ Այն և չէ իակ, հաւատաս ինձ, ծառայական սրտի Թելադրութիւն, ընդ կերպարանօք ապիրատութեան գործ պանծալի ՚ի գլուխ հանել։

Կ. Ա հետիոս պրետոն Ա՝արսաց մինչ գերի ածեալ վարեր ՚ի հռովմէական տերութիւն, ծառայ նորա յաչըշտակեալ զսուսեր գերեվար զօրականին, եհար նախ զսեր իւր. և ապա ասէ. "Այզատեցի զտէրն իմ. ժամ է արդ հոգալ և զանձնէ ,,. և ՚ի մի հարուած չոքաւ գիւրովի։ Յոյզ ինձ աղէ զայլ որ պանծագոյն և օրինակաւ ապրեցուցեալ իցէ զտէր իւր։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՐՐՈՐԴ

Կեսար պաշարեր զՈրփհենիոն քաղաք, ուր ամրացեալ կայր Դամետիոս. սա հրամանն ետ բժշկին որ մի ի ծառայից էր՝ տալ ինքեան դեղ մահու. և տեսեալ զնա Թիհնադարձոյց, ասէ. Օ՛ի դանդաղիս, միթէ հասանդ ի քո՛մ իշխանութեան լցեն իրդ, սպառազէն անձամբ՝ մահ ինդրեմ ի քէն։ Հայնժամ խոս տացաւ նա կատարել զինդրելն, և մատոյց նմա դեղ անվնաս յարբուսին. և ի թմբրիլ նորա դեղոյն, մատեաւ ինքն առ որդի նորա, և ասէ. Հրամանն տուր պահել զիս ի դիպահոդ, մինչև յելից իրացն լցիս խելամուտ եթէ ի՛մ դեղ մահու արբուցեալ էր քո։ Ել մեռաւ Դամետիոս, և ապրեցոյց զնա Կեսար. այլ նախկին ապրեցուցիչ եղև նմա ծառայն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ի քաղաքական պատերազմի մի ոմն ի ծառայից Թագուցեալ զտեր իւր, որ ի տարագրելոցն էր, եգաս զնատանեխ նորա և զՀանդերձեան զգեցեալ, ել ընդ առաջ ինդրակացն և ասէ. "Ել ընորհս ինչ ինդրեմ ի ձէնջ, այլ զի զՀրամայեսդան ձեզ կատարեսջիք,, և մատոյց անդէն զպարանոցն ի բերան սրոյ։ Ել դայն ուժեք իւիչ տալ զկեանս փոխանակ տեառնն՝ ի ժամանակի յորում Հատատարմութիւն մեծ և ընտիսրհիկ համարեալ էր չլինել դաւաձան կենաց տեառնն, ի համշաշրհական անգթութեան երևել բարեգութ և ի հատարակաց անհատատարմութեան՝ հատատարիմ. և ուր վարձք մեծամեծ մատնեաց կային առաջի, ի մերյանակ հատատարմութեանն ընդունել զնահ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՉ զանց արարից և զօրհնակօք մեծաւն դարու։ Ի կայսերութեամբ Տիբերեայ մեղկութիւն ինն մտնութեան և քաւութեան յանախեալ և որպէս համաձայնակ ծառայեալ՝ չար ևս քան զամենայն ընտանի պատերազմանս՝ ի խաղաղութեան աղետաբեր լիներ քաղաքին։ Ե ատ իսկ էին յանբաստանութիւն և արբեցելոցն բանք՝ և պարզամտացն զուարճաբանութիւնք. չկայր ինչ աներկիւն, ամենայն պատեհ՝ ի ձայ թուէր առ խժդժութիւն, և ոչ անկայտ ինչ յանցաւորացն էին ելք. զի մի էր ամենեցուն նոցա կատարած մահ։ Պաւղոս՝ երբեմն պրետոր՝ ի ինձեայս կոչեաց բազմեալ կայր ուրեք. և մտատանի ականակալ՝ ի ձեռին՝ որ զՏիբերեայ կայսեր զքանդակագործ պատկերն բերէր։ Պաժպատեհ իցէ արդեօք՝ ի ինդիր լինել այսբանութեանց՝ ի նշանակել զի էառ նա՝ ի ձեռս զմիզանցն։ Օ՜ր իբրև դիտեր Մարսէլ յականաւորացն որ ի լատեաց ժամանակին, ծառայն արբեցելոց տեառնն որում դաւն այն գործէր, կորզեաց ի նմանէ զմատանին. և այն ինչ Մարսէլ վկայութիւն գներ կռնապանաց զի պատկեր ինքնակալին ընդ աղտեղիսն չիեցաւ և զխոբսիչ ամբաստանութեանն պատրաստեր, մտեաւ ծառայն և եղոյց զմատանին յիւրում ձեռին։ Նմին որ զաս ծառայ, և զՄարսէլ համարեցան կռնապան։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ի դիւցազն Պատեաւ չև ևս աղետաբերք էին խօսելոցն իւրաքանչիւր բանք, այլ դժուարալուրք միայն և դժարկիք։ Հաւատոյ ոմն ի խորհ աւագանւոյն յընթերից ուրեք ցանկանալով ինն զի մի ազգանդամ դարձցի Աեսար ի չուայն յոր պատրաստէր, յաւելեալ էր, թէ "Օ՜այդ ինդրեն և ցուրք և զուարթք առ հա-

սարակ ,, ՝ : Լսդեն անդ ոմանք որք ուշի ուշով լուան զբանին : Ընդ լուսանալ առաւօտ՝ ծառայն որ ՝ի ժամ ընթրեացն առ ոտն կայր տեառն իւրոյ , պատմէ նմա զերեկոյի ընթրեաց զարքեցաւելեան բանին . յորդորէ զնա կանխել առ Կեսար և անձամբ զանձնէ լինել առ բաստան : Հաձի Հաւսիոս ընդ խորհուրդն , և յինքն նել կայսեր յարքունեացն՝ ընդ առաջ երթայ և երգմամբ խոստովան եղեալ զյերկիկ խօթամտութիւն իւր , ասէ . Ցմէ վերայ և ՝ի վերայ որդւոյ իմոյ եղիցին անէծքն . և պատասխան Թողուլ զյանցանսն , և Հաշտել ընդ իւր : Լաւ ՝ի Հաւանել ընդ այն կայսերն , ասէ Հաւսիոս . Այլ զի Հաւատասցէ ընդ Հաշտութիւն քո ընդ իս , մինչև ոչ պարգևեսցես ինչ ինձ . և խնդրեաց գումար որչափ բաւական էր ՝ի նուէր ընդունելի՝ եղելոյն ՝ի Հնարս ինքնակալին . զոր և Հնարէաւ նմա կայսեր ասէ . Փոյթ կալայց մի քնաւ բարկանալ քեզ վասն իմ : Վեղեցիկ առաքինացաւ Օգոստոս՝ զի ներել ներեաց , և ՝ի գթութիւնն յաւել և զառատաձեռնութիւն : Որ միանգամ լսէ զզրկնակս զայս , գովել գովեսցէ զկայսրն , բայց նախ զծառայն գովեալ : Լաւ զինչ և միայնակս լսել , զի որ զայն գործեաց Թողութիւն . — Լա՛յ բայց ոչ ձրի , զի վաղ իսկ Հատոյց Կեսար զփրկանս ազատութեան նորա :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Յետ այսքանեաց օրինակաց երկբայեսցի՞ որ դեռ և Լիկ միտքն իցէ տերանց ընդունել երբեմն երախտիս ՝ի ծառայից : Լաւ ընդէր իցէ անձին ծուաստացուցանել զգործն . և ոչ միանաւանդ գործոյն ազնուացուցանել զանձնէն : Ալի սակիզբն է բոլորեցուն և նոյն ծագումն , և ոչ այլ քան զայլ պատուականագոյն , բայց ուղղութեամբ Հանճարոյ և յարմարութեամբ առ ազնուագոյնս արհեստից : Որք միանգամ զգաւթման զարդարեն պատկերաք , և շարս իմն զանուանց ազգատոհմին իւ-

՝ Ընդ խառ իմն և զուարճաբանութեամբ ասացեալ , խրթև զի յոյնանդամ գործին կեսարու և ցլուց և զուարակաց հասանէր կոտորած մեծ ՝ի ղոնս գոհութեան :

բեանց կարգ ըստ կարգի և պատշաճ նշանակօք ի մուտս ապարանիցն իւրեանց կարգեն՝ երեելիք են ազգաւ, այլ ոչ աշխատականք։ Ալի ի ծնող հաստատակաց՝ աշխարհս, և յայն սկիզբն և ի ծագումն հարկ է ի վեր ելանել առնելոյն ընդ չքեղ և ընդ անչուք աստիճանս ազգատոհմից։ Ալի պատրեսցեն զքեզ արք, որպ ի ի թիւ արկեալ զազգահամար նախնեացն իւրեանց, ուր ուրեք պակասէ անուն չքեղ և փառաւոր՝ դիս ինձ առեալ ածէն ի ներքս։ Ալի զոր արհամարհիցես, թէպէտ և անչուք իցէ և անանուն ըստ ազգի, և անտեսեալ ի բազկէն։ Ալթէ ազատորդիք իցեն ձեր յառաջընթացք, եթէ ծառայք և եթէ օտարածինք, միօրինակ իրախտաւեսջիք. և վեհմախոհ մոգ անտեսեալ որ ինչ ցածուն և անչուք կայցէ ի միջոցին, ի ծայրն հայեցուցուք և ի սկիզբնն թէ որպիսի առաջի կայ ձեզ աշխատականութիւն։ Ալնդէր իցէ մեզ այնչափ յոխորտալ ամբարտաւանութեամբ, մինչև գժպատեհ համարել երախտիս ի ծառայիցն ընդունել, և ի բախտ նոցա հայեցեալ արհամարհել զարգիւնս վաստակոց նոցա։ Ալև զնաւն իսկ ծառայ կուչսցես զու զոր որ ծառայդ ես ցանկութեան և որկրոյ և պոռնկի, մանաւանդ թէ սարուկ պոռնկաց։ Ծառայ կոչես զու զոր... Ալև ասր բարձեալ տանին զքեզ արդ այդորիկ, որք զուն ի գրանել զգեստպակդ չքնեցուցանեն. ասր զգեցեալք այդորիկ միանձև և բան զինուորաց օրինի պերճաբար ևս չքեղազարդեալք. ուր, ասեմ, բարձեալ տանին զքեզ դրօս. ի դուրս դունապանի ուրուք կամ ի պատեզ տոհմնագունի ուրուք ի ծառայից որ ի ձեռանէ կայ այլոց։ Ալև ժխտես զու տակաւին եթէ չկայ ինչ ծառայ քո երախտիս առնել քեզ, որ և զհամբոյր օտարին ծառայի համարիս քեզ յերախտիս։ Ծ ինչ այդ ներհակութիւն խորհրդոց ի քեզ. արհամարհես զծառայս՝ միանգամայն և պաշտես։ Ի ներքոյ սեմոյդ խրոխտ և ստամբակ, իսկ արտաքոյ վատ և ցածուն. արհամարհեալ միանգամայն և արհամարհոտ։ Ծ ի ոչ որ այնպէս արհամարհէ զանձն՝ որպէս որ յանապատեսն ամբարհաւաճեալ ամբառնայ. և չիք որ այնպէս զիւրաստաւոտ յոռնհաւատութիւն այլոց, որպէս որ անձին նախատանօք ուսաւ նախատել զայլս։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Ովասիոսիկ արժան համարեցայ ասել առ ի քաղաքելոյ զարձրատութեին այնոցիկ որոց ի բանսն ևեթ կան ակնկատողք, և ի լինել վրէժխնդիր իրաւանց երախտաւոր ծառայից, զի և որդիական երախտեաց յայտնելոյն իրաւունք։ Վասզի և այն ընդ ինդրոյ է թէ արդեօք կարիցեն որդիք երախտաւոր լինել ծնողացն իւրեանց առաւել քան զոր երախտաւորեաքն են ի նոցանէ։ Պարզեն չհարթէ ժխտել թէ որդիք բազումք եղեն որք առաւելան քան զծնողս իւրեանց ի մեծութիւն և ի զօրութիւն. և ոչ զայն դարձեալ՝ զի և լաւութեամբ գեր ի վերոյ գտան քան զնոսա։ Այլ եթէ հաւատարիմ է բանս, առաւելեալ որդւոյն բարերարութեամբ և բարեսէր կամօք՝ մարթէ զի առաւելութիւն և երախտեօք առ ծնողս իւրեանց։ Պարզ ասէ. զոր ինչ և տայցէ Հօրն որդին, փոքր իցէ միշտ, զի և զկարողութիւն զայն տալոյ՝ ի Հօրէ անտի իւրմէ ունի. և այսպէս ոչ երբէք յաղթեսցի բարերարութեամբ որդւոյն որպ և յաղթութիւնն իսկ իւր բարերարութիւն է։ Այլ այդ զայս նախ տաց պատասխանի. զի են ինչ իրք որք յայլոց անտի ունելով զծագումնն, առաւելուն քան զսկիզբն իւրեանց. և ոչ վասն այնորիկ զի թէ չէր առեալ զնա, գումնն չկարէր մեծանալ այնչափ՝ չկարիցէ լինել մեծ քան զսկիզբն իւր։ Ոչիք ինչ ի բնականաց որ ոչ մեծաւ առաւելութեամբ առաւելուցու քան զսկզբունս իւր։ Մինոյն իրաց պատճառք սեռականքն են, սակայն փոքրագոյն են յոյժ քան զորս ծնանիցին։ Հայեաց ընդ Հաւնոս, տես զԱրիստէս, և զամենայն իսկ գետս մեծամեծս. զինչ են եթէ յաղբերանէն նոցա Հայիցես. այլ յառաջ խաղացեալք՝ ահաւիկուք են և անուանիք։ Պատ զարմանան, ոչ ևս յարիցեն անտառք և մերկացեալ անչքասցին լերինք։ Հայեաց ի բունսն որպէս երկնաբերձ ծրարին յամառ, և որպէս աճիւնաձիւղ տարածանեն չուրջանակի զտեղունս իւրեանց, և

տե՛ս քանի անձուկ իցէ առ նոքօք զոր մանրամասն ելիւքն զրուէ արտասն ։ Յաճախք հոգեկանք և պարիսպք քաղաքաց ի հիմունս են հաստատեալք , այլ որ ինչ ի հիմն և ի հաստատութիւն բովանդակ շինուածոցն ալ կան՝ անյայտք են և անբեւեռնելք ։ Օ այս և յայլ ինչ իրս է տեսանել · զարգացումին և մեծամեծութիւն հետևորդ յաղթել սկզբանն ։ Լրեկ ոչ ծնողացս կանխեին երախտիք , չկարեի ունել և ոչ ինչ · այլ ոչ վասն այնորիկ զոր ինչ և ստացայն , փոքր իցէ քան զայն՝ առանց որոյ չկարելի ինձ ստանալ ։ Լրեկ ոչ գայեակ մնուցանէր զիս ի տղայութեան , չկարելեր ինձ առնել և ոչ ինչ յորոց գործեմն արդ մնօք և ձեռօք , և ոչ վայելել յայս կամ բաւ փառաց , զոր քաղաքական և զինուորական ձարտարութեամբ ինձ հայթհայթեցեր ։ Լրե միթէ վասն այնորիկ քան զամենայն զգործս իմ մեծամեծս գերազոյն համարիցիս զնուսնդ գայեկիս ։ Լրդ զինչ խոիր կայցէ ընդ այս և ընդ այն , զի որպէս առանց երախտեաց ծնողիս չկարելեր ինձ յառաջադէմ զարգանալ , նոյնպէս և ոչ առանց ինամոց գայեկիս ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ

Լրթէ վասն ամենայնի զոր կարեմն շնորհապարտ իցեմ սկզբանս խնամ, համարեաց Թէ ոչ ի հօրէ և ոչ ի հաւէ խնդ իցէ իմ սկիզբն , քանզի և ամենայն իսկ մերձաւորագոյն ծագմանն՝ իցէ հարկաւ սկիզբն անգրագոյն ։ Լրդ ո՞ ոք ասիցէ զնս անծանօթիցն այնոցիկ և անյիշատակ մնացելոցն նախնեաց երախտապարտ գոլ առաւել քան հօրն խոյ ։ Լրե սակայն իցեմ արդեօք առաւել երախտապարտ , եթէ և հայրն իմ վասն ծնանելոյն իսկ զնս իցէ երախտապարտ նախնեացն այնոցիկ ։

Որ զինչ և շնորհեցից հօր խոյ՝ Թէպետ և մեծամեծ , ոչ հաւասարեացեն հայրականի բարերարութեանն . զի Թէ ոչ նորա ծնեալ էր զնս՝ ոչ էի ։ — Թէ այգպէս իցէ՝ ապա և ոչ բժշկին , որոյ Թէ ի մահացու հիւանդութենէ կեցուցեալ իցէ զհայրն իմ,

չկարիցեմ առնել ինչ հատասար երախտեաց նորա, զի եթէ ոչ նուաճ կեայր հայր իմ, ոչ ևս ծնանէր զիս։ Այլ զա տես զուցէ իրաւացի ևս իցէ քննել թէ զոր կարացին և արարի, իմ ինչ իցէ արդեօք, յիմմէ զօրութենէ և յիմոց կամաց։ Այեաց՝ ի ծնունդն իմ և տես զինչ իցէ՝ ի բնէ. և գոցես դժգէն իմն և անստոյգ. բարւոյ և չարի անխտիր պատճառք. սկիզբն այս և առաջին ոտնտիս՝ ի վերոյս ամենայնի, այլ ոչ վասն այնորիկ և մեծագոյն քան զամենայն։ Այպրեցուցի զՀայրն իմ, և՝ ի ծայրագոյնն ամբարձի պատիւ, իշխանս կացուցի զնա իւրոյ քաղաքին, ոչ միայն գործովք խնդիր փառաւորեցի զնա, այլ ետու ևս նմա պատեհ իւրովք իսկ մեծագործութեամբք դիւրաւ և անաշխատ յաւելուլ իւր փառս անեղականս։ Ցուցի զնա ճշմարտութեամբ և պատուով և ամենայն ցանկալեօք՝ որ գրաւէն զսիրտս մահկանացուաց. և ես որ գեր՝ ի վերոյ կայի բոլորից, կացի ստորև քան զնա։ Այրդ ասա՝ եթէ կարես՝ թէ այդ ամենայն զի կարացեր՝ հնդիր երախտիք են։ Այս ես տաց քեզ պատասխանի, թէ Այո, եթէ ծնանէին եւ եթ իցէ բաւական՝ ի գործել զայդ ամենայն. ապա թէ կեաղն զդժգն ինչ՝ ի կարևորացն է առ՝ ի կեալ բարւոք, և զու զայն ինչ ետուր ինձ, որ և գազանացն առնեցուն և կենդանեաց ընդհանուր և զազրելեացն իսկ հասարակաց է, մի անձին ինչ վերագրեսցես զայն՝ իբրև՝ ի քումմէ ընտրհեալ բարերարութենէ, թէպէտ և ոչ առանց քոյոյ գործակցութեանդ տուեալ։ Հատուցեալ թէ և ես ետու քեզ կեանս ընդ կենաց, և այնու իսկ յաղեցոյ եղէ քամ բարերարութեանդ, զի ոչ յանզգաստից քեզ ետու զայն, այլ քոյովդ և իմով իսկ գիտութեամբ և իմանալով զի ոչ առ հեշտութեան ինչ անձին կամ դէմ հեշտութեամբ ետու քեզ զայն. և զի քան զընդունելութիւն ընդ կենդանութեան՝ այնչափ մեծ է պահպանութիւն նորին, որչափ դիւրին է և թեթեւ մեռանել յատաղ քան զնահան երկիւղ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԱՒԱՋՆԵՐՈՐԴ

Այս ետու քեզ կեանս, մինչ կարողն եմիր և բաւական վայելել յայն առ ժամայն, իսկ զոր ետուր ինձ մինչ գիտէի իսկ ոչ թէ կայցեմ. ես ետու քեզ կեանս ի վերասյս մահկանացուիդ զքեզ ապրեցուցեալ. իսկ զոր ետուր ինձ կեանս ի մեռանել: Այս ետու քեզ կեանս անթերի և կատարեալ. իսկ զոր անբանաւոր ծնար զնս ի բեռն օտարին: Կամիցես գիտել թէ որպիսի ինչ իցեն այդօրինակ ծննդեանդ երախտիք. թէ ընկեցիկ առնէիր զնս, ոչ ապաքէն պարգևդ քո լինէր ինձ ի չարիս: Յորմէ մարթ է իմաստասիրել զնս ոչ մեծ ինչ բարերարութիւն է ծօրն և մեր զուգաւորութիւն ի մի, եթէ ոչ սկզբանն այնորիկ ի վերայ յաւելցին և այլ պարգևք և իմաք յաճումն և ի հաստատութիւն ապաւինայն: Այլ եթէ բարի ինչ կեաս իցէ, այլ բարւոքն կեալ: Իսկ արդ ասիցես. Ստարիոք կեաս. այլ մարթ եր ինձ չարաչար կեալ. ապա մի ինչ է զոր ունիմ ի քէն՝ գկեանս: Այնէ և զասպիկար և զսոսկապէս կեանան հաւ մարիցիս ինձ ի պարգևս և որպէս մեծ ինչ պարծիցիս ընդ այն, գիտեա զնս ոչ ինչ աւելի քան զձանձիցն և զորդանն են բարիքդ: Չուսկ ապա, զնս զայլոց ամենեցուն լուեցից, վարժեալ իմ ի հրաշանգս բարձրադոյն մարզից առ ի յաղթութիւն ընթացից կենացս, զնոյն իսկ զպարգևսդ առաւելուն հանդերձ հաստուցի քեզ. տիմար ամենևին և անհրաշանգ ետուր զնս ինձ. իսկ ես եղէ քեզ զաւակ այնպիսի՝ ընդ որ ուրախ լինիցիս զնս ծնար զնս:

ԴԱՎԻԹ ԵՐԵՄՆԵՐԱՐԴ ԵՐԿԱՐԱՐԴ

Ասոցն զիա հայր իմ. եթէ և ես զնա մնացից, առաւելեալն հանդերձ հատուցանեմ նմա. զի ոչ միայն ընդ մնալդ իւր խնդացէ, այլ և ընդ այն զի յորդւոյ իւրմէ զարմանի. և առաւել քան ընդ խնամն մնդեան ընդ սիրտ իմ զուարճացեալ բերկրեսցի. ուր նորայն զարմանն մնդեան առ մեզմէն իմ և եթէ սահմանէր։ Յակ եթէ և յառաջադէմ զարգացաւ որ այնպէս մինչ չև պերճախօսութեամբ կամ արդարութեամբ և կամ պատերազմական արուեստիւքն հռչակաւոր լինել ընդ տիեզերս, և զՅօրն և ս համբաւ մեծացուցանել, և զանշուք մեծութիւն զարմին գեղանշոյլ պայծառացուցանել, ոչ ապաքէն անհամեմատ երախտաւոր գտաւ առ ծնողս իւր։ Ի Ձանաչէր երբէք զԻսքատն և զՎրիւղս, եթէ ոչ Վաճառիսն և Պղատոն որդիք նոցա էին։ Օ չիշատակ Սոփրոնիսկեայ անմահացուսցէ միշտ Սոկրատ։ Լչ զի մի մի թուիցեմ զամենեսեան, որոց ոչ գոյր արդ չիշատակ, եթէ ոչ պանծալի առաքինութիւնք որդւոց նոցա ասանդէին զայն չեռնոց։ Ի որդեաք ա աւել երախտաւոր գտաւ Ի Սոկրոսի Ի գրիպպոսայ հայր նորա՝ անծանօթ մնացեալն և չետ որդւոյն, եթէ Յօր իւրում Ի գրիպպոս, համբաւեալն նաւապետի պատերազմի, որում միայնոյ պարգևեցաւ զինուորականն այն մրցանակ փառաց՝ որ այնպիսեաք շքեղացոյց զքաղաքն մեծագործութեամբք, զի առաջնոց ամենեցուն յաղթական և ի չեռնոցն չգտաւ որ նմին հաւասար։ Հոկտաիոս արդեաք առաւել բարերարեաց որդւոյ իւրում, եթէ դիւցազնին ( )գոստոս Յօր իւրում, թէպետ և հայրագրին նորա փառք ՝ սաստկածաւ ածին նմա։ Վանի բերկրութեամբ գեղոյր արդեաք սիրտ նորա, թէ տեսանէր զորդին ընթագրեալ զքաղաքական պատերազմունս և վերաբազմեալ յանեզրկեան խաղա-

՝ Փառք մեծ և համբաւ Յուլիոսի կեսարու, որոյ որդեգրեալ եր իւր զՕգոստոս և հայր նորա համարեր, մեծացուցին զհամբաւ Հոկտաւիոսի հարազատ Յօր նորա։

զուարեան . անձանօթ իւրոյ բարուէն և ՚ի չափ անձինն հայեցեալ՝ չկամէր հաւատալ թէ մարթ ինչ իցէ այնքա նոյ առնն ՚ի տան իւրում ծնանիլ : Այլ զի Թէոփեմ զա մենեսեան որոյ ՚ի խորս խաւարին մոռացութեան ծած կեալ էր արդ , եթէ ոչ որդւոյն փառք Տանեալ վտոտա ՚ի խաւարել յաւերժացուցանէին ՚ի լոյս : Ոտոլ զի ոչ զայն արդ կամք էն մեզ ցուցանել թէ իցէ՞ լեալ ոք յորդւոց որոյ առաւել քան զընկալեալն բարերարեալ իցէ հօր իւրում: այլ թէ իցէն արդեօք հնարաւոր իրքն : Այ թէպէտ օրինակք յառաջ բերեալք՝ չիցեն իսկ բաւա կանք ՚ի ցոյց իրացդ և ոչ ուրուք երախտիք առաւելու ցուն քան զնոսացն , սակայն զոր գաղք Տամբէն չև ևս ածին ՚ի Տանդէս , մարթ է բնութեանն յարու ցանել զայն : Այթէ մէն մի յերախտեաց ոչ յաղթէ մեծութեան Հայրականի բարերարութեանն , յոլովք ՚ի մի հաւաքեալք զօրացին յաղթել :

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Ասկիոն ասրէեցոյց զՀայր իւր ՚ի պատերազմի , և այն ինչ զպատահանեկութեանն արկեալ զանձամբ գեղ բածիբանին ձիարշաւ խոյացաւ ՚ի խոտն Թէնաեաց՝ դղզն ինչ էր զի արՀամարՀեալ զայնչափ վտանգս՝ որ և զքաջայաղթ զօրավարս մեծապէս Ձգնէին և յաղթեալ մեծութեանց ամենայնի՝ եՀաս առ Հայր իւր , զի նախկին մոռեալ ՚ի Ձակատամարտ՝ Համբակին ՚ի վե բայ զիականց Հինաւուրց զօրականաց ընթացաւ , գեր ՚ի վերոյ քան զՀասակ իւր արիացեալ . յաւել և ևս ջա տագով կացեալ Հօր իւրում ՚ի դատաստանի , և ՚ի Հա մախոհութենէ բուռն ոսոխաց Թափեաց զնա և զեր կրողն և զերկրորդն իսկ Հիւպատոսութիւն բազմագիմի այլ ևս փառաք որք և Հիւպատոսականացն իսկ ցանկալի էին արանց , նաւթՁեաց նմա , և յաղքատութենէն նորա Ձոհացոյց զնա արգասեօք պատերազմին , և որ ցանկալին է և շքեղ առն զօրավարի՝ յաւարէ Թշնա մեաց լիացոյց զնա : Այթէ ոչ շատ իցէն այդ ամե նայն , յաւել և զայն զի իշխան դաւառաց կացոյց զնա անսովոր փառաք . և զի քաղաքս մեծազօրս քանդեալ

և զՀաւատկականն պետութիւն ի մտին արեւու մինչև ցելս՝ անդիմակաց հաստատեալ և որպէս նեցուկ իմն լեալ նման և հաստարան՝ յաւել շքեղազարդել զաշխատասկանութիւն Հօրն ։ Պանծացո արդ , աղէ , զՀօրն Աստուածպետութիւն . բայց ո՞ երկեայեսցի էրբէք զի սովորական երախտեաց ճնդեանն յաղթեաց դերասանն բարեպաշտութիւն և քաջութիւն որդւոյն , որ ի պատսպարանս առաւել [Ե]ի պարծանս վայելչութեան եղև քաղաքին՝ ասել ոչ ունիմ ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՁՈՐՐՈՐԴ

[Ա]յն և այս չիցէ բաւական՝ Համարեաց զերծուցեալ ուրուք զՀայր իւր ի տանջանաց , նա և զանձն իսկ տուեալ փոխանակ ։ [Ա]րդի իցէ քեզ որչափ և կամք իցեն , յաւելուլ և մեծացուցանել զերախտիս որդւոյ , ուր Հայրականն պարգև պարզ է և դիւրին և ոչ առանց հեշտութեան տուողին ։ [Ա]յլ զինչ պէտք իցեն յաձնախտութեան բանիւ . եթ իսկ զնոյն և այնոցիկ , որոց չը գիտէ և զտայն . էր իւր և այլ ոք լծակից ի տուրն . և քան զնա որում զերախտիսն առնէր , այլ ինչ յորդորք էին նման ի նոյնս , օրէնք աշխարհին , վարձք խոստացեալք Հարց , և այլ ինչ բազում ։ Իսկ եթէ ոք խնստութեան լեալ ժառանգաւոր , զնոյն և Հօր իւրում աւանդեսցէ՝ վիճիցեմք տակաւին զի առաւել քան զոր էառն ետ . ընդ սոսկալիս կենացն զերանաւէտ կեանսն նմա փոխարինեալ ։ [Ա]յլ և այն , ասիցես , Հօրդ երախտիք էն՝ զոր առնեսգ , և զոր կարես չհորհել նմա ։ [Ա]յլ վարժապետիս արդեօք երախտիք են , զի յաւագադէմ եղէ յաղատական Հրահանգս ։ [Ա]յլ զնոսա որք աւանդեցին մեզ զաշնսոսիկ գլեմք . մանաւանդ զնոսա որք զառաջին սկզբունսն ուսուցին ։ Օ՛ի թէ պէտ և առանց այնոցիկ ոչ ոք ուսանել ինչ կարէր , այլ ոչ եթէ որ ինչ և ուսանի՝ խոնարհագոյն քան զայնոսիկ իցեն ։ [Ա]յլ որ ինչ առաջինքն են՝ նոյն և մեծագոյնք իցեն . և ոչ՝ զի առանց սկիզբն ունելոյ չհարթէ առնել իմիք և մեծանալ , վասն այնորիկ և սկզբունք Հաւատոյդ մեծաւմեծացն իցեն ։

Ոչամբ է արդ և՝ ի մերոյ գանձուց, զի այսպէս ասացից, բանս ինչ յառաջ բերել։ Ոը զայնպիսի առնէ այլում երախտիս, քան զոր գոցէ ինչ լաւագոյն, կարէ յաղթիլ. արդ Հայրն կեանս էտ որդւոյն, և է ինչ լաւագոյն քան զկեանսն. ապա կարէ յաղթիլ Հայրն, զի զայնպիսի արար երախտիս՝ քան զոր գտանի ինչ լաւագոյն։ Վասնեալ՝ որ կեանս էտ այլում, եթէ և ինքն միանգամ և երկիցս ընդ ձեռն նորա զերծաւ՝ի վտանգէ մահու, մեծագոյն քան զոր էան ընկալաւ երախտիս. արդ Հայրն կեանս էտ որդւոյն և թէ ընդ ձեռն նորա ապրեսցի յահաւոր՝ի վտանգից մահու, մեծ և այս երախտիս քան զոր էան ընկալցի։ Ոը ընդունի ինչ երախտիս, ըստ չափոյ կարօտութեանն առն՝ մեծ իցէն և երախտիքն. արդ որ կեանն՝ առաւել կարօտի կենաց, քան զայն որ չէ է ծնեալ և ոչ կարօտել իմիք կարէ, ապա մեծ և այս ընկալցի երախտիս Հայրն ապրեցուցեալ յորդւոյն, քան որդին՝ի Հօրէ ծննդեանէն։

Խարերարութիւնք որդւոյն չկարեն յաղթել Հօրն բարերարութեանց. էր ասեն. զի կեանս ընկալաւ՝ի Հօրէն, առանց որոյ չէր մարթ նմա բարերարել առնելոյն։ — Ա՛յլայդ Հաստարակաց է և Հօրն և այլոց առնեցուն որ տան ունիք կեանս. զի թէ չէր նոցա տուեալ զկեանսն՝ չկարէին նոքա երախտահատոյց լինել, և ոչ երախտեաց բժշկին մարթ իցէ փոխարինել առաւելութեամբ, քանզի և բժիշկն սովոր է կեանս տալ. և ոչ նաւագին, եթէ գնաւաբեկեալ յաւեաց յափշտակեաց։ Խակ արդ և ասացայն և այլոցն եւ՝ որք օրինակաւ ինն կեանս մեզ ետուն՝ մարթ իցէ յաղթել բարերարութեանց, ապա և Հարցն։ Ա՛յթէ որ այնպիսի արար ինձ բարերարութիւն, չոր և այլոց բազմաց օգնականութեան ունէք պէտս, իսկ ես բարերարեցի նմա չունելով ինչ պէտս օգնականութեան այլոց, առաւել քան զընկալեալն էտու նմա։ Ա՛րդ Հայրն այնպիսի էտ որդւոյն կեանս, որում թէ ոչ և այլք բազումք ձեռնտու լինէին

'ի պահպանութիւն՝ կորնչէր. իսկ որդին Թէ ետ կենաս հօրն, այնպիսի ետ որ ոչ ուրուք օգնականութեան կարօտեալ 'ի պահպանութիւն. ապա մեծ ևս քան զբազումսն յիւրմէ որդւոյն ընկալաւ երախտիս 'ի նմանէ Տայրն լինդունելն զկեանն։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՎԱՃԵՐՈՐԴ

Ոչ զմեծարանս ծնողաց նուազեցուցանէն ասացեալքս և ոչ վատթարագոյնս առ նոսա յարդարէն զորդիս, նա մանաւանդ լաւագոյնս. զի է 'ի բնէ ցանկացող փառաց առաքինութիւն, և ցանկալ գերազանցել զամենեքումբք որք յառաջընթաց իւր իցեն. զուարթութիւն առաքինական որդիական բարեպաշտութիւն, յուսով յաղթութեան 'ի հատուցումն երախտեացն յորդորեալ։ Ոչ եթէ ծնողաց ևս ցանկալի իցեն իրքն, որ զի 'ի բազում ինչ իրս յօդուտ մեր է պարտութիւնս մեր, զինչ այնուհետև մոլութեանք պանծալի քան զայդ, զինչ մեծագոյն երջանկութիւն ծնողաց որպէս խոստովան լինել Թէ յաղթեցաք երախտեաք յորդւոց մերոց։ Ոչ Թէ ոչ զայդ պղպէս գտեսցուք, տեղի տանք չքմեղութեան զաւակաց, և հեղգագոյնս գործիցեմք գնասս յերախտահատոյց լինել. զորս մնրակել պարտ է մանաւանդ ասելով. Ոչ աջալերեցարուք, ընտիր պատանեակք, պայքար գեղեցիկ կայ ձեր առաջի ընդ ծնողս ձեր. նոցա՞ արդեօք առ ձեզ, Թէ ձեր առ նոսա առաւելուն երախտիք։ Ոչ զի յառաջեցին քան զձեզ՝ յաղթողք իցեն. քաջացարուք միայն որպէս պարտ է և մի լքանիք, և յաղթեսջիք որոց ցանկալի է պարտութիւն։ Հայս չքնաղ մարտ ոչ պակասեն ձեզ և առաջնորդք որք օրինակաւ իւրեանց յորդորեն զձեզ և խրատեսեն զձեռ իւրեանց ընթանալ 'ի յաղթութիւն, զոր հնարեալք կալան յաշխարհ 'ի վերայ ծնողացն իւրեանց։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Այնէնց յաղթեաց Հօր իւրում. զի որ ի մանկու-
թեան որպէս բեռն թեթև և անկասկած բառնայր ի
նմանէ, զծերունին ծանրացեալ բարձեալ տանէր ընդ
մէջ խմբից թշնամեաց և ընդ աւերակս քաղաքին
Հոսեցելոցն շուրջ զնովքն, մինչ կրծոտասէր ծերունին
զրկեալ զնաւիրական սպասս և զառանին դիս՝ կրկին
բեռամբք ծանրանայր որդւոյն յընթացսն։ Տարաւ ան-
ցոյց զնա ընդ հուր, զի առ ինչ ակարանայցէ բարեպաշ-
տութիւն, և ածեալ կացոյց ի պաշտօն ընդ հիմնար-
կուս հաւուէնական պետութեանն։ Յաղթեցեալ և
սիկիլեան պատանիք, յորժամ ի զայրանալ բորբոքել
Հանոյ լերինն, և ի հրահոսան ծածկել զքաղաքս,
զագարակս, և զմեծ մասն կղզւոյն, բստահանձնեալ տա-
րան զծնողս իւրեանց։ Իսկ՝ տէր իմն այնպէս եթէ
տեղի տացէ հուրն, և յայսկոյս և յայնկոյս խու-
սափեալ բոցոյն՝ Հանապարհ արասցէ անցից քաջացն
պատանեաց յանէրկևան կատարուին մեծի գործոյն։
Յաղթեաց և Ենտիգոնոս՝, որպ ահագին պատերազմաւ
պարտեալ զթշնամին՝ զարգասիս յաղթութեանն շնոր-
հեաց Հօրն՝ի նա թագաւորել զտէրութիւն Ալկրոսի։ Այս
իսկ է ահա թագաւորութիւն, թագաւորել կարացեալ՝
և ոչ թագաւորել։ Նա և Տ. Պանկիոս յաղթեաց Հօր
իւրում՝ որ խիստն իսկ էր, զի արատասհման լեալ՝ի նմա-
նէ առ ժամանակ մի, քանզի զրաստաւիրատ և ապուշ
յերիտասարդութեանն թուէր, եկիս եհաս առ հազա-
րապետ Ժողովրդեան, որպ ժամադիր եղեալ էր Հօր նո-
ցա՝ի դատաստան. և ժամ պարապոյ իմնդրեաց՝ի նմա-
նէ՝ի տեսութիւն, զոր և շնորհեաց նմա հազարապետն
առն ունելով թէ առելոյ Հօրն լինի նա մնանիկ. և զի
դարձեալ երախտապարտ նմին Համարէր զանձն զի և

1 Զ բիսպակ իմն մատենագրին և կամ գրչաց է՝ի բանիս. փոխանակ
ասելոյ "Յաղթեաց Ենտիգոնոսի որդի Դորա,,. զի որպէս ասացեմք
պատմութիւնն՝ Դեմետր որդի Ենտիգոնոսի մեծին պատերազմա-
յաղթեալ Պտղոմէոս կալաւ զԿիպրոս և պարգեւեաց զդին Հօր իւրում։

զարտասահմանում թիւն նորա որպէս եղեւն մեծ ընդ այլ
ամբաստանութիւնն ի դէմ ածէր Հօր նորա ։ Կամ այն
ինչ միայն ընդ միայնումն էր՝ մերկացեալ երիտասար-
դին զսուսերն թաքուցեալ ի ծոցին , ասէ . “ Կրդուխր
ինձ ի բաց կալ ի թշնամութենէ Հօր իմոյ , ապա թէ
ոչ՝ միեցից զսուսերս ի կողս քո . վերծոյ Հայր իմ ի
դատախազութենէ քումմէ , բայց թէ այսպէս և կամ
այն՝ քեզ մնայ ընտրել ։ Կրդուխ Հաղարապետն , և
ոչ ստեաց . և Հրապարակախօս եղեալ եղոյգ զպատճառս
թողոյն զդատն ։ Կէ այլում ումեք յաջողեցաւ երբեք
անպատուհաս ստիպել Կայսպէս զայր Հազարապետ ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ԿԱՋՈՒՄ և այլ օրինակք են որոց զծնողս իւրեանց
ապրեցուցին ի վտանգաց , և որ ի ցածութենէ ի
բարձրութիւն վերստեալ , և ի գոհէիկ աննշան
ամբոխէ անարդ խուժանին յաւերժայիշատակս եղին
զնոսա յազգաց յազգս ։ Կէ մարթի բացատրել բանիւք
և ոչ զօրութեամբ հանճարոյ օրպէս մեծ իցէ և գովելի
և յաւերժ յիշատակաց արժանի զի կարասցէ որ ասել .
Հայր եղէ և հնազանդ ծնողացս , և զամենայն հրա-
մանս նոցա թէպէտ արդար թէպէտ անիրաւ և խիստ՝
անդիմադարձ ընկալայ Հպատակութեամբ , յայսմ և եթ
յանառեալ զի մի ի բարերարութեանց յաղթեցայց ։
Հայր քաջացարաւք ի պայքար , և թէպէտ պար-
տեալք՝ խրախուսեաք զնդրէն ի նոր Հակատտնար .
երանի որոց յաղթենն , երանի և որոց յաղթին ։
Օ ինչ պանծալի քան զայր երիտասարդ որ կարիցէ
ասել յանձն իւր , քանզի ասել զայն այլուր օրէն ոչ է .
Հաղթեցի Հօր իմում բարերարութեամբ ։ Կէ զինչ
բարերարեալ քան զծերունին , որ ամենեցուն ամենայն
ուրեք լեցի քարող թէ Հաղթեցայ յորդւոյ իմմէ բարե-
բարութեամբ ։ Կիք երջանկութիւն մեծ քան զայս
պատուհաս ։

ԳԻՐՔ ՀԱՐՑԱՍԱՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԲԱՐԵՐԲՈՒԹԵԱՆՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Յառենացն ոչ զորոց Հառեցաքս ցայս վայր , ո՛չ Աբուկէ Խբերացիս , ոչ ինչ այնպէս մեծ և կարևոր , կամ որպէս Պաղեստինոն ասէ , առաւելագոյն խնամով ինդրելի , որպէս այն՝ զորմէ առաջի կայ մեզ Հառել Թէ Ա՛րդեօք բարերարութիւն և երախտագիտութիւն իցէ՞ն ինչ իսկապէս փափաքելիք : Ա՛ն որք առ ի՛ շահ պաշտեն զուղղութիւն , և չ՛ նոցա Հաճոյական առաքինութիւն ձրի որ ի՛ շահասիրս փոխեալ կապտի յանհնայն մեծութենէն : Վ՛անգի զինչ այլ գժպատեհ քան զսակ արկանել Թէ որքանո՞ եղիցի այր բարի . զի առաքինութիւն ոչ շահու զոք հրապուրէ և ոչ ձեռաւք խորշելոյ անէ , ոչ յոտով և խոստմամբք զոք պատրէ , այլ ընդ հակառակն յիւրմէ իսկ ծախել և յանձին ևս հարկատուութիւնս կամաւորս օրինադրէ : Ա՛յ աճուր հարեալ զշահ և զօգուտ պարտ է զինել յառաքինութիւն անդր , յոր վայր և կոչիցէ , յոր վայր և առաջնորդեսցէ , առանց Հայելոյ յառանձին պէտս , է զի և առանց խնայելոյ յարիւն իւր՝ ընծայել պարտ է և ըստ բան Տրամանի Նորա չէանել երբեք : Ա՛ւ զինչ շահեցայց , ասիցէ օք , եթէ ձրի գործեցից զայդ : Օ՛այն իսկ , զի գործեցեր : Ա՛ւ այլ ինչ քան զայդ խոստումն կայ քեզ : Ա՛պա եթէ և օգտի ինչ առ ի նմանէ Հանդիպեսցիս՝ յաւելուած իմն Համարեսցի քեզ այն : Ա՛ղղութեանցն զինք՝ նոքին իսկ

ուզղութիւնքն են : Եթէ առաքինութիւն ցանկալի է յինքեան , և եթէ բարեբարութիւնն առաքինութիւն իցէ , ապա չզանազանին յիրերաց , զի համաբոյնք են : Իսկ զի առաքինութիւն ցանկալի է յինքեան՝ բազում ուրեք և Հոխագոյն ցուցեալ է Հաւատեօք :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Յաւցսմ մասին մաքառումն է ընդ մեզ և ընդ Նսիկու բեանցն մեզի և Հեշտասիրաց ամբոխ , որք ՚ի ինջոյս իբեանց խմաստասիրեն . և առ որս առաքինութիւն ծառայ է , և Հեշտութեանց իւրեանց անսայ . նոցա ծառայէ , և ընդ իշխանութեամբ կայ նոցա : Զիք , ասեն , Հեշտութիւն առանց առաքինութեան : Ոչայց առ իմէ նա խապատիւ իցէ քան զառաքինութիւն : Ոչ զնախապատուութենէ և զկարգաց են վէճք , այլ զբնութենէ իրին և զզօրութենէ նորա : Զէ առաքինութիւն , եթէ կարիցէ լինել յեղբնեցոյ . նորա են ամենայն նախամտութիւնք , առաջնորդել անկ է նմա , Հրամանն տալ և գերագահ բազմել . իսկ դու ստիպես զնա Հրամանն առնուլ : Ոչայց ասիցես . Օ՛ի փոյթ է քեզ՝ խոստովանիմ և ես զի առանց առաքինութեան չիցէ երբեք կեանք երանելի . Հեշտութիւնն գլխովին , որում Հետամուտ լեալ և պաշտեմ , անմահն յառաքինութենէ խոտեալն է ինձ և դատապարտ : Ոչ այս ևեթ խնդիր է մեր եթէ արդեօք առաքինութիւնն պատճառ իցէ ծայրագոյն բարւոյ , եթէ ինքն իսկ ծայրագոյն բարին : — Ովպիսի և այս ևեթ խնդիր իցէ մեր , ուր ապաքէն փոփոխութեան կարգաց թուին քեզ վէճքս : Ոչ այդ իսկ յայտնի կուրութիւն է և վեր ՚ի վայր խառնակել զամենայն . առաջնոցն նախատասել զհետինս : Ոչ ընդ այն զայրանամ զի Հեշտութիւն նախապատ իցէ առաքինութեան , այլ զի բնաւ իսկ ընդ Հեշտութեան դնի ՚ի կշիռ , որ թշնամի է նորա և արհամարհող և բացագոյն խոսէ առ ՚ի նմանէ , սիրող է առաւել վատասկոյ և ցաւոյ և առնացի խստամբերութեանց՝ քան այնպիսւոյ կանացի մեղկ բարւոյ :

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՕԳՈՍՏՈՍԻԿ հարկ եղև ասել, իմն [illegible] վասն զի բարեբարութիւնն՝ զորմէ է Ճառս՝ գործ է առաքինութեան. և որ չայլ ինչ պատճառս և ոչ վասն բարերարելոյ և եթէ բարերարէ՝ չար ինչ գործէ։ Օր եթէ յուսով հատուցման պարգևատու լինեաք, Ճոխից մանաւանդ պարտ էր տալ քան արժանաւորացն. և սակայն նախապատիւ առնեմք զաղքատսն քան զՃոխն անարժան։ Զի բարերարութիւն եթէ ի պայման բախտի ուրուք հայեցի։ Վարձեալ թէ առ ի չահ և եթէ անձանձ յորդորիչաք ի բարեգործել այլոց, բնաւ իսկ չէր պարտ բարերարել՝ որոյ դիւրին էր յոյժ բարերարելն, Ճոխին, ասեմ, և հզօրաց և թագաւորաց, որոց ոչ ինչ են պէտք բարեաց օտարի։ Այս և դիք գլխովին՝ որ անդադար ի տուէ և ի գիշերի զանչափ պարգևացն բաշխեն լուսինք, չունեն ինչ տալ. զի անկարօտք են ի բնութենէ լինացեալք ամենայնիւ, անբերկրանք և ապէնիաղք։ Այս եթէ միայն պատճառք էին բարերարելոյ զանձինն խնդրել և զիւր դիւրութիւն, չէր պարտ բարերարել նոցա և ոչ ումեք։ Այլ բարերարութիւն իցէ այդ՝ այլ վաշխառութիւն. շուրջ հայիլ և տեսանել ոչ եթէ ուր արդեօք պատշաճագոյն՝ այլ եթէ ուր օգտակարագոյնս գետեղեսցես զայս ուսոի և դիւրութեամբ մարթի իցէ առնուլ յետս։ Այս զի այդ տեսութիւն ամենևին օտար է ի գից, վասն այնորիկ և առատաձեռնն զլաբիս. ուր եթէ մի միայն պատճառք բարերարութեան էր օգուտ բարերարողին, քանզի չմարթէր գից օգտի ինչ առ ի մէնջ ահն ունել, ապա և չիներայր ինչ նոցա պատճառք առ մեզ բարերարութեան։

ԳԼՈՒԽ ՀՈՐՈՐԴ

Պ·ՏԵՄ զինչ առ այս տան պատասխանի . Յո վասն այնորիկ իսկ , ասէն , չբարեբարէ ինչ աստուած , այլ յանեբրկևանութեան Հաստատեալ՝ անփոյթ ըզ-մէնջ և զաչս ի բաց դարձուցեալ յաշխարհէ՝ այլ ինչ գործէ , կամ որ մեծ ևս երջանկութիւնն է Հա-մարեալ ըստ Եպիկուրեանց , գործէ և ոչ ինչ . և որպէս չազգէն ինչ ի նա նախատինք՝ նոյնպէս և ոչ երախտիք : — Ա.յլ որ զայս ասէն՝ խոցեալ է զլսելիս առ ի չլսելոյ զաղերսարկուացն զձայնս , և զոր ընդ ամենայն ուրեք Համբարձմամբ ձեռաց յերկինս վեր-առաքէն զուխտ՝ հրապարակաւ և առանձինն : Յո զինդր մարթ էր այդմ լինել և ի նոյն ցոյս միաբանել մահկանացուաց ամենեցուն , կարդալոյ առ անդուր աս-տուածս և առ անգործ դիս՝ եթէ ոչ գիտէին զի մերթ ինքնակամ պարգևօք և մերթ չաղաչանս խնդրելեացն զինջեալ բարեբարկն մեծապէս , և ի դէպ ժամանակի ի Թիկունս Հասեալ փարատէն զահագին սպառնալիս : Յո ո իսկ այնպէս Թշուառական , այնպէս հեղգասիրտ , կամ ո այնպէս չարաբասխ և ի վիշտս ծնեալ , որ ոչ յանձին զգայցէ զանչափ ձիրս աստուածգնացն պար-գևաց : Հայեաց , աղէ , և ընդ որս ողբանն և գանգա-տեն ընդ բախտ իւրեանց , և գնասին իսկ տեսցես ոչ ի սպառ զիրկ յերկնառաք բարեբարութեանց . և չիք որ որպ չիցէ արբեալ ամենևին չառատաբուղիս Հոսանաց անտի աղբերն մարդասիրութեան : Յո միթէ դոյզն ինչ իսկեն պարգևքն ծնեալոց ամենեցուն Հատասարապէս բաշխեալք . իսկ զոր չէտ այնորիկ անՀատասար բաշ-խին ձեռամբ՝ ո Թուեսցէ . միթէ սակաւ ինչ իսկ զոր չնորհէ մեզ բնութիւն ի տալն զինքն գլխովին :

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՈՂ ինչ բարիս, ասես, պարգևէ մեզ աստուած։ Յորժամ ուսցի՛ իցէն քեզ ապա բարութիւնք զորս տաս և կամ զանաս, զոր պահեսդ և զոր յափշտակես. ուստի՛ այդ անհամար պարգևք հրապուրիչք աչաց և ունկան և սրտի. ուստի՛ և առատագեղ բարութեանցն սպասք՝ի զեղխութիւնս. զի ոչ եթէ զկարևորսն և եթէ հոգացաս մեզ՝ի պէտս, այլ և մինչ՝ի փափկութիւնս անգամ եղեաք նմա սիրելիք։ Այեաց, աղէ, յայնչափ ծառայունէիս պաղաքերս ըստ աղգս աղգաց,՝ի դալարիս առողջարարս, յաղգի աղգի արմտեացն յաձախութիւն՝ ՚ի կերակուր ըստ իւրաքանչիւր եղանակաց տարւոյն պատրաստեալ, մինչև ծուլիցն իսկ անգործից ինքնաբոյս մատուցանել երկրի զնուագ։ Ցէս և զազգս ազգս կենդանեաց, որոց կէսք զհաստատուն զգամաքն ունին, կէսք զջուրսդն խոնաւութիւն, և այլք՝ի բարձունս սաւառնեն, որպէս զի բնութեանն համայն ըստ իւրաքանչիւր ժասանց՝ հարկատու լինել մեզ։ Ցէս և զգեստս յորոց կէսք զալարուն և զուարձալի զարձուածովք շուրջ պատեն զզաշտօրէիւք, և կէսք լայնամիստ ընձայիւք՝ի գնացս վաճառաշահ նաւուց հորդեն ձանապարհ. յորոց և ոմանք սահմանեալ ժամանակաւ յորդեալ զերդն սքանչելապէս, և զովարար ուղխիցն յանկարծահաս հոսմանօք ողողանեն զանջրդի և զտօթակէզ երաշտացեալ վայրս։ Իսկ զինչ ասացից և զբժշկական ջուրցն ՚ձնակաց, զինչ և զջերմաջրցն յափունս իսկ ծովու բղխեցելոց։

. . . Իգքեզ ըզմեծդ ՚ի արիոս
Յոչ ըզքեզ ծովակուտակ ալեօք գոչմամբ յոխորտ
Ռենակ՚։

1 Ի վերջիկնայ Աշակաձաց են տողքն, (Բ. 160) որոց ոչ ինչ կցորդութիւն է ընդ նախընթաց բանիցն. Նմին իրի գուշակի զի և հատուած մի այլ բանից զձիոյ և զծովակաց անկեալ էիցէ՚ի բաց։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Աթէ ածու փոքր պարգեւէր ոք քեզ, երախտիս մեծ համարիկիր ընկալեալ, և զլայնածաւալ տարածութիւն անասհման վայրոց՝ չհամարիցիս յերախտիս։ Աթէ ոք դրամ տայր քեզ՝ ի պարգև, և որ մեծ թուի քեզ, զարիկ քո ընոյն՝ բարերարութիւն համարիկիր, և ահա այնչափ բուռ հանդոյց պատրաստեայ քեզ բնութիւն, այնչափ գետս գնացոյց՝ որք աւազախառն ընդ յատակսն թաւալեն զոսկին, զպղինձ և զերկաթ կշռոյ անթաւ յամենայն ուրեք՝ ի գաղտնիս ընդ երկրաւ մըթերեալ՝ հետազօտելոյ և պեղելոյ զայնոսիկ ետ քեզ զօրութիւն, զծածկեցեալսն զանձուց զհետն յերեսս երկրին նշանակեալ, և դու չհամարիցիս ինչ ընկալեալ բարերարութիւն։ Աթէ տուն քեզ պարգևեսցի փայլեալ՝ ի դոյն կճեայս և ոսկեձեղուն երփներանգ շողշողեալ, ոչ փոքր զպարգևան համարիս. և ահա պատրաստեալ քեզ բնակութիւն անասհման, անծախս՝ ի հրոյ և աներկիւղ՝ ի կործանմանէ, յորում ոչ դոյնն թերթս տեսանես քարանց պատուականաց նրբագործս քան զթիթեղսն որով տանսի, այլ զանգուածս ողջոյն ստուարս՝ բազմադիմիս տեսլեամբ՝ ի գեղ և՝ ի նիւթ, որոց և ընդ դոյնն կոտորակսն աքանչանաս. որով և ձեղունքն այլազգ՝ ի գիշերի և այլազգ՝ ի տունջեան լուսատայլեն. և դու չհամարիս ինչ ընկալեալ՝ ի պարգև։ Աթէ մեծ թուին քեզ համայն զոր ունիսդ, ոչ ապերախտութիւն մեծ իցէ ոչ ունիք ընդՀատարտ ընդ այնոցիկ զանձինդ համարել։ Ո՞տա քեզ զոդ՝ ի շրջել, ո՞ զլծոյգ, որով զգործս կենացդ տնօրինես. ուստի ունիցիս զարիւնդ որ շրջաբերութեամբ ազգի՝ ի քեզ ջերմութիւնն կենդանական. ուստի զայն ամենայն որ բազմահամ ախորժ ճաշակօքն դիտիսդ պարարէն առանց յաւիրանաց. ուստի և զարծարծիչսն համայն կթուցեալսդ ցանկութեանց. ուստի և զայգ անդորր հանգըստեան յոր յօրանաս և թաւալեալ վառարիս։ Ո՞ ապաքէն եթէ երախտագէտ իցես՝ ասիցես.

"Օ՜այս մեզ պարապ, Պետրէ, աստուած՝ ի դիւր պատրաստեաց.
Խստուած իմ ինքն իւր յաւերժ, և ըզսեզան իւր յաձախ
Ի փարախս մերմէ՝ ի ձօն գառնիկ մատաղ գունեացէ.
Այո՛ւա իմ այդ՝ զոր տեսանես, արջառք՝ ի ձեմ թափառին
Նա գեղջկայնով ես եղեգամբ յերգս ըստ հաճոյս ըզբանամ.,,

Այս՝ նոյն ինքն աստուած է որ ոչ զսակաւ արջառսն, այլ զբոկս պարսրելից ընդ տիեզերս արձակեաց, որ հօտից ընդ ամենայն ուրեք սփռելոց Քարակս ընձեռէ, որ զարօտս առնպայնոյ՝ ի պարէն ձմերայնոյն պատրաստէ. որ ոչ եղեգամբ և եղեմ ուսոյց նուագել, և տաղս գեղջուկս և անհարթս ի դոյզն հեշտութիւն եղանակել, այլ և զայնչափ արհեստից հոյլս, և զձայնս պէսպէս, և զհնչմունս ներդաշնակս, եթէ մարդկեղէն հնչով և եթէ արտաքուստ օդնականութեամբ յարմարել աւանդեաց։ Օ՜ի ոչ մեր ինչ են զոր ինչ Քարտարութիւնք, որպէս և ոչ ձմեռնի մեր, և ոչ ըստ իւրաքանչիւր պայմանեալ ժամանակի մարմնոյս մերոյ յեղափոխութիւնք, մերթ՝ ի տղայութեան ատամնոց անկումն, մերթ՝ ի զարգանալ Հասակին և՝ ի զօրանալ բնութեան՝ յարբունս եհաւորութիւն. և Հուսկ ապա վերջինն այն ատամն՝ որ սահման կարգէ խուստիւղ Հասակին։ Որպէս Հասակաց նոյն և արուեստից ամենեցուն անկախից են՝ ի մեզ սերմանք և Քարտարապետան աստուած յանելութիւն ծածկեցելոց արտադրէ զհանճարս։

ԳԼՒԻԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԲԳԴ ամենայն, ասես, բնութեան ինձ տուեալ են. և ոչ առնուս՝ ի միտ զի զանազան եղեմ գաստուածոյ փոխես բանիւքդ։ Օ՜ի զինչ այլ բնութիւնն իցէ, եթէ ոչ աստուած, և բան աստուածեղէն Համատարած սփռեալ ընդ աշխարհ և յամենայն մասունս նորա։ Նոր անուն և կամիցիս՝ օրէնս իցէ քեզ կոչել զարարիչն մերոցս իրաց.

որպէս Աքսանդր ամենամեծ և ամենաբարի՝ կոչի իրաւապէս և Շ անթընկէց և Հաստիչ, իբր ոչ եթէ, որպէս վիպասանքն աւանդեցին, զի Հռովմայեցւոցն փախատէից Հակաս՝ յետ ոխատարժութեանն զտեղի առեալ եկաց Հաստատուն, այլ զի նորա բարերարութեամբն Հաստատեալ կայ ամենայն, նմին իրի և Հաստիչ և Հաստատող Հռոմայ։ Օնայն ինքն եթէ և Հակատագիր անուանեսցես՝ ոչ սխալիս, քանզի ոչ այլ ինչ է Հակատագիրն, բայց կարգ իմն և յաջորդութիւն պատճառաց որք զմիմեանս ունիցին. և աստուած առաջին պատճառ է ամենայնի, յորմէ այլքն ամենայն առնուն սկիզբն։ Օր և է անուն յայտարար զօրութեան և կամ ներգործութեան ինչ երկնից՝ պատշաճապէս կոչեսցես նմա, Ընտրափ ձիրք պարգեւաց նորա իցեն, նոյնպէս և անուանս մարթ իցէ ընծայել նմա։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Օնոճն ինքն և Աքսատ Հայր կամ Վիմփոս և Հերակլէս և Հերմէս մերքն վարկանին։ Աքսատ Հայր, զի ճնող է ամենեցուն և նախագտակ սերմանցն բեղմնաւորութեան հեշտութեամբն նպաստատուրեալ։ Եւ Հերակլէս՝ զի անպարտելի է զօրութեամբն, և ի թափառնալն ի գործոց՝ ի հուր լուծցի զօրութիւն նորա։ Եւ Հերմէս զի ի նմանէ է հանճար և թիւ, կարգ և գիտութիւն։ Հոր կոզմն և գաղձցիս՝ գոյնս զնա քեզ յանդիման. չկը վայր թափուր ի նմանէ, ինքնին գրաւեալ ընդ զգործս իւր։ Եւ զի այս այսպէս՝ ի զուր է քեզ, ով ապերախտդ և յետին ապերախտ ի մարդկանէ, ոչ աստուածոյ՝ այլ բնութեան ասել զանձն ընդհանրապատ. զի ոչ բնութիւն առանց աստուծոյ է, և ոչ աստուած առանց բնութեան. երկոքին մի են և նոյն երկաքանչիւրոյն գործ։ Օր որ օրինակ Թէ առեալ քո ինչ ի Վեհեկայ՝ Ընդհանուր կամ Ուսիոսի պարտապան զանձ-

1 Քանզի եռանուանք սովոր էին լինել Հռովմայեցիք, զՅովն և զՀաւուն ևս զանուանսն կրելով, նմին իրի և Սենեկա կոչէր Ղսիոս Ընդհանուս Սենեկա, որով և անուանէք երկքին գնա ինքն ցուցանէին։

Նրդ ասէիր , ոչ պարտատուրն՝ այլ անուանն առնէիր փոխոխումն . զի Թէպէտ նախանուանքն, Թէպէտ անուանքն՝ Թէպէտ և մնականուանքն զնա կոչեցեալ , նոյն ինքն իսկ միշտ . նոյնպէս , Եթէ բնութիւն ասիցես Եթէ Ճակատագիր և Թէ բախտ , միայն աստուծոյ այլ և այլ անուանք են պէսպէս զօրութեան նորին յայտնապրեալ : Կյա և արդարութիւն , լաւութիւն , խոհեմութիւն , արիութիւն և պարկեշտութիւն , միով հոգւոյ առաքինութիւնք են . և ոմ ի նոցանէ Հաձոյասցի քեզ, հոգին է որ Հաձոյանայ :

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Կյն, զի մի զարտուղի անկայց յայլ խնդիր , առից ասել . Կազմողապետիկ և մեծամեծս բարեբարեկ մեզ առաւած առանց իրիք փոխարինոյ ակնկալութեան , զի ոչ ինքն կարօտ է Հատուցման , և ոչ մեք կարողք ի Հատուցանել ինչ նմա : Կյս ինքնին ցանկալի է բարեպարգեւութիւնն , միայն ուշ նպատակի զարեբարեկչին ունելով զօգուտ . սմին այսմիկ ուշ կալցուք և մեք՝ ի քաց գնել զանձանց օգուտ : Կայց դուք ինքնին պատուիրէք , ասեն , ինամով ընտրել որոց բարեբարիցեմք . զի և ոչ երկրագործք յաւազուտս զսերմանիսն աւանդեն . և Թէ արգաւաւ այդպէս է , ապա օգուտ անձանց խնդրելիք ի բարեբարել որպէս ի վարելն և ի սերմանել . զի և ոչ սերմանելն ինքնին ցանկալի ինչ է : Կան այսորիկ իսկ ընտրէք որոց բարեբարիցեքն , զի Թէ ինքնին ցանկալի էր բարեբարութիւն՝ այդմ ընտրութեան չէին պէտք , այլ ամենայն ուրեք և որպէս և վիպող տուեալ՝ բարեբարութիւն էր : — Օ առաքինութեան ջՀետ կրթիլք զնոյն ինքն զառաքինութիւն ինդրելով և ոչ զայլ ինչ . և Թէ պէտ այդպէս իսկ օրէն իցէ և արժան՝ սակայն խնդրելիք տակաւին զինչ առնել իցէ՝ երբ և որպէս , զի ի սոսկ Հաստատեալ կայ առաքինութիւն : Կատ այսմ և յընտրել խնամ զարժանին բարեբարութեան՝ յայն բերի Հիմն իմ զի բարեբարութիւնն իմ լինի բարեբարութիւն , զի Թէ առն վատթարի բարեբարելոյ՝ ոչ առաքինութիւն իցէ և ոչ բարեբարութիւն ։

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

ՀԱՑՈՒՑԱՆԵԼ. զաւանդն՝ գովելի է քան ինքեան, բայց ոչ միշտ և յամենայն ուրեք և յամենայն ժամս նախի հատուցից անխտիր. քանզի է իսկ ուրեք զի ընդ զլանալն և ընդ հատուցանել յայտնապէս՝ չէք ինչ խրատիր։ Այսպս յօգուտ տուողին հայեցեալ, ժխտելոյց զարձուցանել որ ինչ ի միասս եղիցի նմա։ Օ՜նոյն արասլից և ի բարերարութեան, թեպետ կալեալ թէ երբ, ուր, զիա՞րդ և առ ինչ բարերարիցիս։ Օ՜ի առանց ընտրութեան բանին չէ պարտ առնել և ոչ ինչ, և ուր չէք ընտրութիւն՝ բարերարութիւն անդ ոչ է. զի և յառաքինութիւնս ամենայն՝ բանն է առաջնորդ։ Օ՜բազմաց իսկ յաձախ սորվացելոյն ընդ անխորհուրդ տուրս պարգևացոյն իւրեանց լուսաւորք՝ թէ Աստուած էր զի բնաւ իսկ կարուսեալ էր իմ, զոր այսպիսիսն ետուս ի պարգև։ Ցոյժ իսն է ամենայն պարգևել անընտրողաբար, և վատնարարգոյն իսկ է բարերարել չարաչար, քան չառնուլ ինչ փոխարէն հատուցումն։ Օ՜ի այլոց մեզք էն թէ չընկալաք ինչ փոխարկնս, բայց թէ չարեարեցաք ուիք՝ մեր մեզք էն։

Եւ յընտրութեան անդ՝ ոչ որպէս զուզ կարծես, զայն ինդրիցեմ թէ չումիջ անկալութիւն իցէ փոխարկնոց, այլ քան զերախտահատոյցն ընտրեմ զայր երախտագէտ։ Խաղումայն է, զի չհատուցեալ ինչ ոք՝ սակայն երախտագէտ է. և որ հատուցանէն՝ ապերախտ։ Ապրիլ առնեմ ընտրութիւն, նման իբրև թողեալ ի բաց զձոխն և զանարժանն, աղքատին բարերարեմ առն բարւոյ, որ և ի յետին չքաւորութեանն իւրում լինի երախտագէտ, զի չումինայնէ նուազեալ՝ ոչ պակասեցի նման սիրտ իւր։ Ոչ առ ի շահ ինչ բարերարեմ և ոչ վասն հեշտութեան և ոչ վասն փառաց, այլ առ ի հաճոյս և ելեի որում ընդունելին. և վասն այնր ևս ելեի բարերարեմ՝ զի զոր արժանն է առնել արարից. և առ ի զի տէր զարժանն՝ ընտրութեան պէտք էն. իսկ թէ որպիսի ինչ ընտրութիւնն իցէ՝ լուր։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՍՆԵՐՈՐԴ

Ինչպէս զայր անսոգիւա, անկեղծ, յիշեցող, երախտագէտ, բարեսէր, անձնասպառ յօտարին քան զից, և յիւրան ոչ ագահաբար խնայող։ Օ այնպիսին ընտրեալ՝ թէ և անձեռնհաս իցէ ի հատուցումն երախտեացն, սակայն իմ բուն ըղձիցս վճարեալ է ամենայն։ Ով յօդուտ ևեթ անձին և ի հաշիւս անարգ շահասիրութեան բերիցիմ առատաձեռնել, եթէ առանց փոխարէն ակնկալութեան չիցեմ ումեք օգտասիրոյ՝ ապա չբարերարեցից ոչ որում ձեռնասպարտոր գէն ի տար աշխարհ, և ոչ մեկնեցեալսին անդառնձառ յինէն, և ոչ խօթացելոյսին անյոյս յառողջութենէ. Նա և էս իակ մերձ ի մահ չարարից ինչ բարեբարութիւն, զի ոչ ևս է ինձ ժամանակ զփոխարէնն ընդունելոյ։ Այլ զի գիտացես թէ ինքնին ցանկալի է բարերարութիւն, եկատարացն իակ հարևանցի ի մեր նաւահանգիստ յորմէ հուպ ընդ հուպ մեկնելոց իցեն, առնեմք մարգասիրութիւն։ Ընծայութիւն նաւաբեկ եղելոյ հանդերձեալ կազմեմք նաւ և տանք նմա ի նաւարկել. չուէ այլոց հաղիւ զապրեցուցիչ իւր ծանուցեալ, և ոչ ակնկալեալ տեսանել զմեզ միւսանգամ, զդին ազեբսէ, զնոսա կացուցանել իւր փոխանակ զառ ինքն երախտեացն հատուցանել զարիտուր։ Իակ մեք գիտութեամբ ևեթ առնել երախտեացն մերոց զուարճանաւք։ Այլ զինչ այն իցէ զոր ի վախճանի կենացս առնեմք, կտակս գրեալ և հրամանս տուեալ. ոչ ապաքէն երախտիս բաշխեմք անօգուտս մեզ։ Ընդքան ժամանակս ծախեմք ի նոյն. զրչաւի խորհուրդս գաղտնիս ի մէջ առնումք թէ ուստի զինչ և որպէսի թողուցումք։ Այլ քանզի չկք մեզ և ոչ յումեքէ առնուլ փոխարէն, բնաւ իակ ընդէր եր մեզ հոգալ թէ որոց տայցեմք։ Այլ սակայն ոչ երբէք այնպէս զգուշագոյնս տանք և ոչ ուրբք այնպէս յերկարեմք յընտրութեան, որպէս յորժամ յաւէնայն շահասիրութենէ մերկացեալք՝ արժանւոյն ևեթ և հանեստին պատուոյ կամք։ Յոր-

չափ յոյս կամ երկիւղ կամ հեշտութեանն սիրտ ա-
պահանջարար թիւրեն զմիտս , չէ՛ք արդար դատաւորք
պատշաճիլ , այլ՝ ի լռեցուցանել մտհոն զամենայն և
՝ի կարգել դատաւոր անաչառ վճռատու ամենայնի ,
արժանաւորագունիցն լինիմք՝ ի խնդիր՝ աւանդել նոցա
զինչս մեր . և ոչ ինչ՝ ի մերոյն այնքանեաւ սրբագինա-
բար փութալ տօրինեմք՝ որպէս զայն որ ոչ և մեր իցէ ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այր արդարև որպիսի զուարճութիւն մեծ որում
զմտաւ ածիցէ թէ աչա զայս որ մեծացուցից , զմիւ-
սոյն չքեզափառ պայծառացուցից զայսոքիւ՝ Հոխու-
թիւնս՝ ի նոյն յաւելեալ ։ Այնէ առանց սակայնու-
թեան փոխարինաց չբարեբարեալ ումբք , և անկտակ
իսկ պարտ էր մեռանել ։ Այայց զբարեբարութիւնն փոխ
անվճարելի առեք , ասէ ոսոխն , իսկ փոխն չէ ինչ ըստ
հնբեան ցանկալի ։ — Այլ մեր փոխ ասել զբարերու-
թիւնն , նմանութեամբ է և փոխաբերութեամբ . զոր
օրինակ և զօրհնս կանոն զող ասեմք արդարոյ և անար-
դարոյ , իսկ կանոն չէ ցանկալի ինչ ըստ հնբեան ։ ի
յայտնաբանել զիրսն զիջմանիմք վարել բանիւքդ , և
փոխ ասելովՔ որպէս փոխ ինն է իմանալ ։ Այս հաւաս-
տիք քեզ՝ ի նոյն յաւելուածդ անվճարելի , զի չէք փոխ
զոր չիցէ մարթ և կամ օրէնս հատուցանել ։ Այս զի ոչ առ
շահաբերութեան բարերարեմք , յայտ անտի է՝ որպէս
ասացի , զի տուժիւք իսկ և վտանգաւ անձանց բարե-
րարեմք ։ Որպէս տեսեալ զոք պարտեալ յաւազա-
կաց՝ ի թիկունս հասանեմ նմա , մինչ մարթէր ինձ
անցանել զնովաւ անվտանգ . պարտապանին ընկէզոյց
՝ի դատախազից պաշտպան կամ և զոսոխաց նորա
խումբ հզօր՝ ի վերայ իմ յարուցանեմ, զուցէ և զաղ-
տեղին՝ զոր ՝ի բաց հանեմ՝ ի նմանէ , ՝ի դատախա-

1 Չազատելոյն իմս զհանգերձան ազատելս զոր յանցաւորացն ամ-
բաստանելոց զգեցուցանէին , և չէր մարթ մերկանալ զայնոսիկ մինչ չև
ազատեալ գաւն . նմին իրի մերկանալ կամ փոխել զազատելս ամ-
բաստանելոցն կամ յանցաւորին՝ է զերծուցանել զնա յամբաստանու-
թեանցն ։

զկոյն բռնադատութեանէ սահմանեցեալ առնուլ զանձամբ, մինչ մարթէր ինձ՝ ի միւս կողմն անցանել, և անվտանգ՝ ի զկեն կալ այլոցն կռուոյ։ Արքայական պարտապանքն կամ անկելոց ընդ դառնատանեաւ և զկախեալն ցուցակ՝ ընկից բարեկամին՝ ի բաց առեալ ընկենուի, պարտապան պարտուց նորա զանձն իմ տուեալ. և զի մի այլոց ինչք ածցին՝ ի վաճառս, զինեն արկանեմ՝ ի նոյն վտանգ։ Ո՞ր՝ ի տուկուզեան կամ՝ ի տիբուրտեան զկողջունեան աղագաւ կամ՝ ի պետս անարայեոյ ինդրեալ տէրն՝ և վասն գնոյն նստեալ վճիռ. և թէ գնեաց՝ չարկ է զի և պահպանութեանն իմամ կալցի։ Ոնոյն է խնամել և զբարերարութեանէ. զի թէ չարցանիցես, զինչ տացէ ինձ փոխարէն բարերարութիւն այգպիսի, տաց քեզ պատասխանի. Ո բարիոք խիղճ մտաց։ Ո ինչ տացէ քեզ փոխարէն բարերարութիւնն. և զոր ասաս ինձ՝ զինչ տացէ արգարութիւնն, զինչ անմեղութիւնն, զինչ մեծանձնութիւնն, զինչ պարկեշտութիւնն, զինչ ժուժկալութիւնն, թէ ինդրես ինչ բաց՝ ի նոցանէ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ի՛ ինչ տիեզերաց անդուլ և անդադար զՀանապազորդեան պաշտամանէնն կատարել, առ ինչ արեգական երկայնել և կարձել զտիւն. ո՛չ ասաքէն բարերարութիւնք են այգ ամենայն առ՝ ի մեր օգուտ։ Այլ զոր օրինակ տիեզերքք՝ ի Հարկ պաշտամանն պարքերեն զերկինս, և արեգակն զերկոյն և զմոխրկ փոխոխ զտեղի ձրիաբար կենդանութիւն մեզ պարգեւեալ, սոյնպէս և մարդոյ պարտք են ընդ այլ ինչ երս և ձրի բարերարել։ Այլ ընդէր բարերարիցէ. — Ո՛վ մի յեանեսցի՝ ի բարերարութենէ. զի մի կորուսցէ զպատեհն։ Ձեզ[2]

[1] Տաճառակ կամ գիր կամ ցուցակ ընկից էր՝ յորում նշանակեալ մի ըստ միոջէ իւրաքանչիւր գնոյին և տեղւոյ զամենայն ինչս պարտապանին որ չկարէր Հատուցանել զպարտն՝ կախէին՝ ի սահմանեալ տեղւոջ՝ ի տես և՝ ի վաճառս պարտատերց։

[2] Առ Եպիկուրեանն են բառքն։

'ի հեշտութիւն համարեալ է դիւրել մարմնոյն ձերոյ անգործ յուսութեամբ, և հանգոյն իմն թմբրեցելոյ խնդրել զառ 'ի նոյն աներկիւանութիւն՝ և ընդ թանձրախիտ հովանեաւ զուգակիլ, և զհիւծելոյ հոգւոյդ զմահահանգոյն թմբիր՝ զբօսեցուցանել 'ի խորհուրդս մեղկութեան՝ զոր և անդորրութիւն անուանեք. և 'ի խորչս պարտիզաց կերակրոք և ըմպելեօք զհեգ և ըզգունատեալ մարմինդ պարարել։ Իսկ մեր հեշտութիւն այս է՝ բարիս առնել այլոց, յանձն առեալ զանհնոյն աշխատութիւնն՝ միայն զի անդորր լինի այլոց, և զմտանդ, միայն զի այլք ապրեսցին 'ի վտանգաց, և զձախուց առաւելութիւն, միայն զի զայլոց պէտս լցուցեալ և դիւր արասցուք նոցա։

Օ հինչ փոյթ է ինձ զխոխարինոց, զորս թէ և ընկալայց իսկ՝ տայց եմ միւսանգամ։ Իսարերարութիւն յօգուտ այնոցիկ իցէ որոց չտրհին՝ և ոչ 'ի մեր, ասպա թէ ոչ՝ անձամբ անձին բարերարեալք։ Իայն իրի բազում հինչ իրք 'ի սպաս կենաց մարդկան օգտակարագոյնք՝ գնովք սահմանեալք՝ չհամարին 'ի չտրհս։ Իայ ձառականն զօգուտ գործէ գքաղաքաց, բժիշկն ըզհիւանդաց, մարգաւաձառն զգերեզման. բայց զի սոքա ամենեքեան առ 'ի շահ անձանց գայլոյն գործեն զօգուտ, ոչ զոք ստանան իբրեւց երախտապարտս։

ԳԼՈՒԽ ՀՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Հէ և է բարերարութիւն որ ինչ առ 'ի շահ գործի։ Օ այս տաց, զայն առիլ, ահա տուրևառիկ չհամաձառութիւն։ Իէ պարկեշտ կոչէմ զկինն որ մերժէ զշամանին առ 'ի գրգռել և ևս, և որ յօրինաց կամ յառնէն զանգիտէ ըստ ասից Իվկղիոսի.

"Իոր չէտ զի տալն օրէն ոչ էր, գիտեա զի էտ այնպէս սին „։

Իէ յանիրաւի ընդ մեզառպարտս համարի որ առ ահին պարկեշտանայ և ոչ վասն պարկեշտութեան.

ապա և որ բարերարէ զի ընկալցի զիմաստութիւնն՝ ոչ բա-
րերարէ : Այլ թէ ոչ՝ միթէ երախտիս ինչ առնիցեմք
անառնոց , զորս առ ՚ի պէտս մեր կամ ՚ի կերակուր
բուծանեմք . միթէ երախտիս ինչ առնիցեմք և տնկոց՝
՚ի զարմանալիս զնոսա զի մի ՚ի ծառեացն յերաշտոյ և
կամ ՚ի սնդուէնէ անհնամ կոչտացելոց երկրին : Այլ
ոք առ սէր արդարութեան և կամ ՚ի պատշաճից բերի
՚ի մշակել զերկիրս և կամ յայլ ինչ , որոց բաց յերբ-
մէն իցեն ինչ այլ արգասիք : Իսկ ՚ի բարերարել ոչ
ագահութեան բերիմք խորհրդով , և ոչ վատ և անարգ
շահասիրութեամբ , այլ ՚ի մարդասիրութենէ և յա-
ռատութենէ սրտի՝ որով բարերարեալ և փափաքիմք
բարերարել և ևս , և երախտիս նորանորս յանցեալսն
յաւելուլ ՚ի հնացեալսն . ոչ այլում իմիք ուշ եդեալ՝
բայց առաւելագոյն օգտի այնորիկ որում բարերա-
րեմքս . քանզի և վատութիւն իսկ է անբաժ ՚ի գոլո-
թենէ և ՚ի փառաց՝ յօգուտ անձին օգտել այլոց :
Ո՞ ինչ մեծանձնութիւն իցէ սիրել զանձն , խնայել
անձին , զանձինն խնդրել շահ : Ո՞չմարիմ սէր բարե-
րարութեան յայսպիսեաց աստի ՚ի բաց մերժի՛ հրա-
ժարեալ ՚ի շահասիրութենէ . նա և տոյժս յանձն
առնու նովին իսկ բարերարութեամբն լեալ խրախա-
միտ :

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ոչ ինչ երկբայութիւն՝ զի բարերարութեան հա-
կառակի անիրաւութիւն . արդ զոր օրինակ անիրաւէն
հնձին ՚ի բնէ ատելի է և խորշելի , սոյնպէս և բարե-
րարելն ցանկալի ըստ ինքեան . յառաջնումն իրացն
վատթարութիւն առաւելու յաղթել ամենայն հրա-
պուրանաց չարագործիս վարձուց եղեռանն , յերկրորդն
յորգորել առաքինութեանն ինքնաբուխ վայելչութիւն :
Այլ ինչ սխալեմ յասելս թէ չիք ոք որում չիցեն սի-
րելի բարերարութիւնքն իւր , չիք ոք որ ոչ խրախու-
միտ հայեսցի ընդ նա՝ յորում երախտիս բազումն առ-
բարեաց , և որոյ նախկին բարերարութիւնք չիցեն
պատճառք վերստին բարերարելոյ . որ ոչն լինէր ար-

գեօք, եթէ ոչ ի բարեգործութիւնս մեր զուարճա-
նայաք։ Վասնիցս լուեալ իցէ քո ասել. Ձհանդուր-
ժեմ թողուլ լքանել զայդ որում կեանս եատ, և
զոր ի վտանգէ ապրեցուցի. աղաչէ զիս վարել զդատ
իւր ընդդէմ հզօր ոսոխաց, զինչ գործեցից, չառնից
յանձն. բայց միանգամ և երկիցս ձեռն տուեալ է իմ
նմա։ Տեսանէս ապաքէն զի է ինչ զօրութիւն յիրիկ
յայդմիկ՝ որ ստիպէ զմեզ ի բարերարել. մի զի ար-
ժան է, և միւս և՝ զի բարերարեցաք միանգամ։ Ա-
րում անպատճառ բարերարեցաք ի սկզբանէ, ապա
բարերարեմք վասն առաջնոյ բարերարութեանս։ Ա՛յն
չափ հեռի եմք ի բարերարելոյ առ շահասիրութեան՝
զի առ գութ և է նախկին բարերարութեանս մերոյ
յաւելումբ այլ և վայրապար և յանօգուտս իսկ տալ
ի վերայ, որք թէպէտ չարաչարք և ոչ ըստ պատշաճի
տուեալք, բայց հանդոյն ախեղճ զաւակաց բնաւորա-
պէս իմն սիրելիք են մեզ։

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ա՛ՈՔԻՆ իսկ Աքսիկուբեանք և զայս գարձեալ խոս-
տովանին զի զիմաստնէնս երախտեաց ոչ վասն հա-
մեստութեան ինչ՝ այլ առ ի շահ օգտի և է հատու-
ցանեն, զորոյ դիւրագոյն և առաջի կայ մեզ յուցանել
զանտեղութիւն։ Ա՛ռն զի որովք միանգամ յուցաք
զարբերարութիւն ցանկալի գոլ յիրքեան, նովիմբք
յուցցուք և զայս։ Ա՛նժխտելի է առածս, զոր և ի հա-
ւաստիս այլոց իրաց ի մէջ մատուցաք, զի ինքնին հա-
մեստութեամբն պարտելի է առաքինութիւն, և ոչ
այլ ինչ աղագաւ։ Ա՛րդ ո՞ զբ իչխեսցէ հակառակել
և է երախտագիտութիւն վայել գործ համեստու-
թեան։ Ա՛ զբ ոչ գարշելոցի յաւելեալս մարդկանէ,
որ անձին իսկ իւրում միտակար է։ Ա՛յժ պատմեցի
քեզ զի առ մեծամեծ երախտիս բարերարին գատ-
զբ ապաշնորհ, զիմիզդ թուեսցին քեզ իրքն. Համա-
րիցիս արդեօք չար ինչ գործեցեալ նոցա, եթէ զանց
և եմ արարեալ զօգտակարսն և զշահ անձինն ան-

գիտացեալ։ Վասն ինձ զի այր ապերախտ զնա վարկանիցէր, պատժոյ յաւէտ քան խնամակալութեան և խրատուց արժանի. իսկ առ Քրիստոս այդ եթէ երախտապիտութիւն չէր Համեստ ինչ և ցանկալի ըստ ինքեան. իսկ թերևս յառաքինութեանց որք ոչ այդպէս ակներև բերիցին զօրացս լուսոյ եանց իւրեանց, և ի հաւաստիս համեստութեանն՝ Թարգմանի խօսեն կարօտք, այլ սորայս ակներև կայ, և քան զշուս անաղօտ և անմահալի փայլէ գեղով։ Օ ինչ առաւել գովելի և ամենեցուն առ հասարակ ցանկալի՝ որպէս ընդհակառակս առ երախտաւորս գոլ։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

Այր ևս աղէ բերիցիմք ի գոյն, միթէ առ ի շահ. այլ որ զշահ անձինն ոչ արհամարհէ՝ ապերախտ է։ Վասն որոյ երախտապիտութեան աղագաւ. և զինչ պարծանք խօսել հաստուցանել զոր պարտիս. յերկիւղէ. այլ չիք ուստեք երկիւղ ապերախտին. զի այժմ ևեթ յանցանացդ չէդան օրէնք, որ զի բնութիւնն ինքնին շատ իսկ ըզգուշացաւ այնմ։ Օ որ օրինակ չէն օրէնք սիրելոյ զծըծողս, ինամ ունելոյ որդւոց, քանզի վայրապար իսկ էր ատիպել յայն ինչ՝ յոր բերիքեա ի բնէ, որպէս և ոչ յորդորել զոք ի սէր անձին որ անկասկիծ է նմա, սոյնպէս և ոչ ի սիրել զառաքինութիւն որ ինքնին ի բնէ սիրելին է. և այնչափ գեղեցիկ և հաճոյական, զի և չարագործաց իսկ ընդաւոյս է զուգողութիւնն գովել։ Ո՞ է որ ոչն կամիցի երևել բարեբար. որ ի վերայ ամենայն ապիրատութեանցն և անիրաւութեանց՝ չիցէ ցանկացող համբաւոյ բարութեան, և զըմբծեղեռն ոձրագործութիւնս իւր ոչ ընդ կերպարան նօք իմն ուղղութեան պատրուակեսցէ, և այնոցիկ իսկ որոց միասեաց չկամիցի երևել բարեբար։ Ո՞չ յայսմ աշխ և յորոց վշտացուցիչն՝ չամաչէն ընդունել չնորհակալս. և ոչ կարացեալ բարեբարել խոհական՝ ըզբարւոյ և զարբերարի առնուն զանձամբ զկերպարանս։ Օ որ չառնէին արդեօք եթէ ոչ ընդաւոյս սէր ինքնա

բուն գեղոյ առաքինութեանն՝ ստիպէր զնոսա Հակառակ անբարի գնացից վարուց իւրեանց՝ բարւոյ անուան լինել ՚ի խնդիր . և Թագուցանել զանգամանութիւն, որպ արգասիքն նեղ ցանկալի են, իսկ ինքն ատելի և ամենայնից : Ընդէ՞ր երբէք այնչափ օտարացեալ ՚ի բնական օրինաց և այնպէս վերջացեալ ՚ի մարդկութենէ՝ մինչև ախորժելով չարանալ :

Ասոյց զայնոսիկ ոչք ՚ի յաւիտականութենէ կեան . միթէ՞ ոչ Հաճոյագոյն իցէ նոցա արդար օրինօք ստանալ զայն զոր գողութեամբ և աւազակութեամբ զբռամբ ածեն : Այլ որ անցաւորացն ՚ի վերայ յարձակեալ յաւարէ նոցա ընու զանձն, ոչ ապաքէն ցանկայր մանաւանդ գտանել զՆոխութիւն՝ քան աւարել Հուզկահարաբար : Այլ զոր գոցես որ ոչ ցանկացէ յարգահա անգգամութեան առանց անգգամելոյ վայելել : Այս մեզ մեծագոյն երախտիք են բնութեանն, զի առաքինութեանն նշոյլ ծագէ ՚ի սիրտս ամենեցուն, մինչև տեսանել զայն և որոց ոչ գՀետ նորա երթան :

ԳԼՈՒԽ ԺԹ. ԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

Այլ զի ինքն ըստ ինքեան ցանկալի է երախտագիտութիւն՝ և անտի առցես ՚ի միտ զի ինքն ըստ ինքեան ատելի է ապերախտութիւն . քանզի չէք ինչ որ իբրև զաբ ախտս զայս քակեսցէ և ցրուեսցէ զմիայօդ չարմարութիւն աղգի մարդկութեանս : Այն զի որով այլ իւիք իցեմք անեղիևան՝ որպէս առ ՚ի միմեանց նպաստաւորեալք : Այիսուս այսուիկ՝ այն է տուրևառուԹեամբ բարերարութեանց , չարդարուն է կեանքս մեր՝ և ամրացեալ յերկասց յեղակարծ արկածից : Օ՜ մի՛ ՚ի մէնջ կացո ինքնասրոյն, զինչ այլ իցեմք , բայց որս երէոց և սպանդ , և մարմին տկար և դիւրածախ : Այն զի այլոց կենդանեաց է զօրութիւն բաւական ՚ի պաշտպանութիւն իւրեանց : Այլը Թափառականքն ծանրին և մեհեանդը չինքնասրոյն կեանս՝ սպառազէնք են . իսկ մարդս տկար և անզէն ամենևին, ոչ Ճիրանք են նորա կամ մագիլք , և ոչ ժանիք ահաղ

կու լինել այլոց . այլ անզկնն այն և տկար՝ ընկերու-
թեամբն պատսպարեալ տմրանայ : Հրիզքումբք պըն-
դեաց և զօրացոյց զնա բնութիւնն ընդդէմ ՚ի պատահա-
րութեանց . բանիւ և ընկերութեամբ : Որով անզօրն
և անբաւական ամենայնի ՚ի միայնութեան , իշխան է
աշխարհի : Ընկերութեամբն զօրացեալ տիրէ ՚ի վերայ
ամենայն անասնոց . նա՝ զգամնաքաջնան ծնեալ՝ ընդ
այլազգ տարերն խառնեալ ընդ իշխանութիւն , հրա-
ման տայ նոցա տիրանալ և ՚ի ծառս : Զա զախտիցն
նուաձէ զբնութիւն , ցուպ և նեժուկ պատրաստէ ծե-
րութեան , և սիրտիանս ընդդէմ ցաւոց . նա խրախու-
սէ զմեզ յարութիւնն մինչև ընդդէմ արկածից բախ-
տի խիզախել : Ուարձ զնա , և ահա հերձեալ պատա-
ռեցեր զմութիւն ագռի մարդկան , զմիակ պատապա-
րանն կենաց . և բարձես , եթէ ոչ ինքնին գլխովին
առելի հանդարիցիս զապերախտութիւն , այլ վասն այ-
լոց ինչ երկիւղի . այլ ոչ ահա բազումք իսկ են որոց
մարթի է աներկիւղ լինել ապերախտ : Հանգոյն ասէ՝
ապերախտ է որ առ ահի լինի երախտագէտ :

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

Ոչ ոք յոյժամտաց երկնչի յաստուածոց , զի խե-
լագարութիւն է զանգիտել՝ յորոց ունելիք զկենդանու-
թիւն . և որ երկնչին յումեքէ՝ սիրել զնա ոչ կարէ :
Իսկ արդ զու ով Հալիկարե , անզկն կացուցանես
զաստուած . զամենայն կապտեցեր ՚ի նմանէ զզկն և
զզօրութիւն , և զի չկիցէ ումեք ահարկու՝ տարագիր
հաներ զնա ՚ի շարժականացս հանապն . և անսահմանն
իմն և անվթարանց անջըպետաւ պարփակեալ զնա՝
անհնազ և անտես ՚ի մանկանացուածս , չնիայ ինչ քեզ
տեղի երկիւղի , ոչ բարւոյ և ոչ չարի ունելով ինչ ՚ի
նմանել առնկալութիւն : Ո միջոցի անդ որ անջըպետէն
զերկինս յերկինից՝ լքեալ մեհեաւոր , ոչ ինչ ունելով առ
իւր՝ ոչ կենդանի , ոչ մարդ և ոչ այլ ինչ առնելիս ,
Թափառեալ շրջի զգուշութեամբ յաւերակս աշխար-
հայն՝ զնւրև և ՚ի վերայ իւր հոսեցելոց , անլուր ուխ-

տից մարդկան և անխոցել զմիմեանս ։ Արդ զինա ասես դու պաշտել իբրև զՏայր , հնարհակալս մեռաք որպէս կարծեմ ։ Ոակ եթէ չկամիս հնարհատարտ գոլ նմա , որպէս ոչ ինչ երախտիս ի նմանէ ընկալեալ , այլ ի հիւանդից քոց և ի մանկաց խառն ի խուռն յուզելոց ըստ դիպաց բաղկացեալ , գնաւ իսկ ընդէր պաշտես զնա ։ — Յաղագս զերահրաշ մեծվայելչութեան նորա , ասես , և անհամեմատ բնութեանն ։ — Արդպէս իցէ , բայց պաշտես ուրեմն զնա՝ առանց իրիք ակնկալութեան և վարձուց փոխարինաց ։ Ոչ ինչ ապա ցանկալի ըստ ինքեան , յոր ըստ արժանեացն բերիս , այն ինքն է Տաճեան ։ Արդ զինչ համեստագոյն քան զերախտագիտութիւն՝ որոյ կենաց չափ է սահման ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Յայլ ոչ ի սպառ անմանն յօգտութենէ է , ասէ , ա ռաքինութիւնդ այդ ։ — Ոչ որ յառաքինութեանդ իցէ ի սպառ անօգուտ . այլ այն ինչ ցանկալի ասի և ըստ ինքեան՝ որոյ բաց յիւրմէն թէ և իցէ ինչ այլ շահ օգտի , այլ և առանց այնորիկ ինքնին միանգամ հաճոյ գտանի ։ ( )գտակար է երախտագիտութիւն . բայց թէ և շնաստակար ևս իցէ , եղեց երախտագէտ ։ Ամ իմիք հետամուտ իցէ այր երախտագէտ . ոչ սպաքէնն զի յաւելցէ իւր նուաճ բարեկամն , և այլոց ևս հանդիպեսցի երախտեաց ։ Այլ թէ վտանգ իցէ նմա զըրգռելոյ նուաճ իւր Թշնամիս , եթէ փոխան օգտի երկիւղ իցէ նմա կորուսանելոյ բազում ինչ և յիւրոյն զոր ունի , միթէ կամակար առցէ յանձն զոյժմն ։ Պէերախտ է որ միանգամ յերախտահատոյցն լինել՝ այլոց դէտ ակն ունի երախտեաց . և որ միանգամ՝ ակն կալութեամբ հատուցանէ ։ Պէերախտ կոչեմ և զայն որ առընթեր նստեալ հիւանդին , որ զի զրկոյց է զկրտակ իւր , և յածէ ի խորհուրդս ժառանգութեան և հրկոտակի ։ Ով և առնել արասցէ զամենայն որ ինչ ի դէպ իցէ երախտագէտ և ձնարհիս բարեկամի՝ սակայն եթէ է նորա ակնկալութիւն ինչ ի սրտի՝ շա-

հասեր է և կարճ ընկեց . զոր օրինակ հաւք գիշակերք զախտացեալս գիտեն ՚ի խաշմէց զր գիտապատսն անկանիցին , սոյնպէս և նա մանկացելումն հասանէ ՚ի վէրայ , և Թռիչս առնու զդիահարէ ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Այր երախտագէտ ՚ի սիրոյ Աեղի առաքինութեան վառեալ , և ոչ ՚ի հրապոյրս շահասիրութեան բերի ՚ի նմին . և այս քեզ հաւաստիք՝ Թէ կամիցիս , զի կրկին ազգ են երախտագիտութեան . երախտագէտ է որ փոխարէն ընկալեալ երախտեացն հատուցանէ ինչ տրիտուր . և այդպիսումն մարթի իցէ առնել ՚ի ցոյցս , ուր նեղալ ինչ տեղի պարծանաց և Ձոխանալոյ ։ Երախտագէտ ասի զարձեալ որոյ բարիոք սրտիւ զերախտիսն ընկալեալ և պատասխան զանձն Տանարի ։ Եւ զի մտաւորաբար վէմարի աստ ամենայն , զինչ ՚ի գաղտնի յօժարութենէ սրտին լեցի նմա օգուտ ։ Ասացք Թէպէտ և չկարիցէ առնել ինչ այլ այնպիսիոն՝ երախտագէտ է . սիրէ , չնորհապարտ զանձն Ճանաչէ , և ցանկայ լինել երախտահատոյց , և Թէ այլեւայ ինչ ևս ցանկայ անձն քո , ոչ պակասի նմա ։ Այլեւէ չիցէ զր արուեստագէտ այնու՝ զի պակասեն նմա գործիք պատկանաւորք ՚ի գործ արհեստին . կամ անեբաժիշտ զր՝ զի խառնասցէ աղաղակ խափանել զձայն նորա ։ Եւ չիս ցանկութիւն ՚ի հատուցումն երախտեաց . պակասէ ինչ՝ այլ ոչ առ ՚ի լինելոյ երախտագէտ , այլ ՚ի հատուցումն Աեղի ։ Վասն և բազում այն է զի որ փոխարինեացն ապերախտ է , և որ ոչն փոխարինեաց՝ երախտագէտ ։ Օ ի որպէս այլ ամենայն առաքինութիւնք , նոյնպէս և երախտագիտութիւն ըստ յօժարութեան հոգւոյն է կշռելի . եթէ սա ոչ Թերացաւ ՚ի պարտուցն , այլ ամենայն Թերութիւնք բախտին գրեցին ՚ի չանցանս ։ Օ որ օրինակ ոչ զի լաւ զր ևիցէ պերձախօս , և ոչ զի ձեռնասուն կայ , կամ կասկեալ ձեռաք՝ չիցէ քաջաբազուկ , և ոչ զեկավար Նաւատոր՝ Թէ ՚ի չանցսի զեզերիցն նաւազեալ ինչ իցէ ՚ի հմտութենէ*

արհեստին, թէպէտ և խափանեալ՝ վարիչն ի վար արկանել զայն, ըստ այմ և երախտագէտ է որ ոգւով և եթէ չժարի ի նոյն, թէպէտ և չժարութեան իբրև չունի զոք այլ վկայ բայ յիւրմէն։ Այս զառաւելագոյնն ասացից, և ուրեք զի և ապաշնորհ իսկ կարծեցեալ որ՝ սակայն երախտագէտ է. զի կարծիք՝ թարգման չար՝ ներհակաբար առնել գնահատ զատաստան։ Այլ նա ոչ այլուամ ուժգին անայ՝ բայց մնացն խղճի որ ծածկապէս սփոփէն ի ներքուստ, որ ուժգնագոյն և քան զամբոխ բազմութեան և քան զհամբաւ նայն, և որ ի տես ներհակախոհ և դիմամարտ ամբոխին ոչ ի թիւս համարոյ նոցա հայի, այլ միանաւոր՝ կարծեաց աներեւոյթն յաղթէ։ Այլ թէ տեսանիցէ զառաքութիւն մնան լեալ ի պատուհաս նենգաւոր չարութեան՝ չնաստանայ երբէք յիւրմէ բարձրութենէն, այլ գեր ի վերոյ քան զպատուհաս իւր կայ անդրդուելի։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Կաւաց սակ զոր խնդրեի և որում ցանկայի. ոչ զղջանամ և ոչ զղջայայց երբէք ընդ այն, և ոչ ցայն վայր մղեալ զիս բախան ամենայն անիրաւութեամբն իւրով միւնչև լսել յիենէն զայս բարբառ. Օ՜ինչ էր զոր խնդրեցի, և զինչ օգուտ էիցէ ինձ արդ ի բառնութենէ կամացս. բազում ինչ օգուտ է և ի փորձ տանջանաւորանայ և ի բոց հրոյ, որ եթէ չամենայն անգամին մատուցեալ և ձարակեսցի տակաւ ընդ մտրմիին ողջոյն, թէպէտ և ձենձերել ձենձերեսցի կենդանոյն, այլ լի վստահութեամբ բարիոք մնացն խղճի սիրելի էիցէ նման բոյն՝ յորում բաւութիւն նորա և հաւատարմութիւն գերազանցէին։

Այսր իսկ երկրորդել հարկ է գիտաձառաւեալն առ ի միջոց պատճառաբանութիւն, թէ առ ինչ ի մեռանելս մերում ցանկամբ լինել երախտագէտ. ընդէր զիարդ միայ զառ մեզ ծառայութենան մանր կշռադատեմք, և ընդ

ամենայն կեանս մեր անցեալ մնօք՝ զգուշանամք զի մի ուրուք երախտիք մոռացօնք լինիցին մեզ։ Ոչ եւս այլ ակն կալուլեան ինչ տեղի է յայնժամ, սակայն և առ դուրս հասեալ կենաց՝ երախտագիտք որպէս մարթին է ցանկամք մեհկով՝ի կենցաղոյս։ Յայտ ուրեմն է ապա զի նոյն ինքն երախտագիտութիւն և զվարձն ընդ իւր ունի, և զի բուռն և հզօր է առաքինութեան զօրութիւն առ՝ի գերել զիիտս մարդկան, զի գեղեցկութեամբն հրապուրէ զոգիս, և՝ի հիացումն ձգեալն չափէ զնշուլից փայլմանն լինքն պարարէ։

Այլ և առաւելութիւնք բազում են երախտագիտութեանն։ Այլ լաւ անկասկած կեայ, սիրելի է և մեծարոյ ամենեցուն, անդորրաւէտ վարէ կեանս՝ յանմեղութեան և յերախտագիտութեան հաստատեալ։ Չանգիի մեծագոյն անիրաւէր բնութիւնն եթէ զայսպիսի և զայսքան առաքինութիւն հեգ և կասկածոտ և անարգասուր առնէր։ Այլ դու յայն հայեսդիր՝ զի առ այս գեղեցիկ առաքինութիւն, յոր ընդ գիւրինն և ընդ ապահով մարթ է եկաւորել յաչախ՝ ուղևորեցիս և ընդ քարուտս և ընդ ապառաժուտս ընդ մէջ գազանաց և օձից։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Ոչ զի իրաց ինչ կից են այլ և առաւելութիւնք արտաքուստ՝ չիցէ այնու ցանկալի ըստ ինքեան. չէք գրեթէ և ոչ մի ինչ՝ի չքնաղագեղոյն օրում չիցէն յարակից բաղմապատիկ ձրից Հոխութիւնք. այլ ինքն յառաջընթաց գՀետ իւր առեալ ձգէ գայիութիւն։ Այպոքէն չէք երկբայութիւն՝ զի զհնակութիւնս զայս ազգի մարդկութեանս արեգանն և լուսին պարբերեալ բարեխառնեն փոխանակաւ. միոյն չերմութեամբ բուծանեն մարմինք, փափկանան հողք, առաւելազանց հիւթոյն ցնդի խոնաւութիւն, տրտութեան ձմերայոյ խզին կապանք կաշկանդիչք. և միւսոյն ազդու և արգասաբեր եղևութեամբ առաքացեալ հասունանան արմտիք, և ըստ նորին յեզափոխութեանց՝ մարդկանն

յաջողէ բեղմնաւորութիւն . միոյն շրջաբերութեամբ սահմանի տարի , և միւսոյն անձուկ շրջանաւ ամիսքն Թուին : Այլ և առանց խոկ այսոցիկ միթէ ոչ ակնապարար տեսլեամբն լսիւղ զշուտեր զայս արեգակին և արժանի գոյր պաշտամանն , և ոչ լուսին յինքն գրաւեր զայս եթէ որպէս լուսաւոր անարգասաբեր քերեալ անցանէր գմեօք : Ցիեզերքը գլխովին՝ մինչ գցոլմունն հրեղէնս Թոթափեն ՚ի գիշերի և ՚ի պարս անհամար աստեղացն շողշողին , զո՛ որ ոչ յակձիռս կացուցանեն . և ո՛ այն իցէ որ ՚ի պշնուլն ՚ի նոսա զօգտակարութենէ նոցին խորհիցի : Հայեաց ապէ յորս յանբաւ բարձրութեան երկնից սահեալ գնան ՚ի լուսնեան , գիարդ զանչափ երագութիւն ընթացիցն իւրեանց ծածկեն իրրև անշարժ առկայացեալք : Մրչափ ինչ ՚ի գիշերական պահուն յայնմիկ գօրձին՝ որ ՚ի Թիւ համարոյ և ՚ի խորանս աւուրց կարգին առ ՚ի քէն , որչափ իրաց անբաւութիւնք խուռն վերբերին ՚ի ծոցի անդ լուսնեան , որչափ աղԹարայ բազմնշանակ կարգք ՚ի սահմանաւոր ծրին նկատին . այնմ՝ ամենայնի՝ զոր դուզ ՚ի զարդ վայելչութեան նեթէ համարիս ցանեալ և սփռեալ՝ իւրաքանչիւր գործք են սեպհականք : Մ՚ի այնպէս համարիցիս , որպէս Թէ եօԹանեքին նեթէ գնայուն և մեղբականք՝ իսկ այլքն անշարժ կայցեն . սակաւուց ընԹացքն զգալի են մեզ . այլանդամանը դիք ՝ բացագոյնս ՚ի մերմէ տեսութենէս երԹևեկին , և յայնցանէ իսկ որք ընդ տեսութեամբ մերով անկանին՝ յոլովագունից անծանօԹ են մեզ ընԹացք և զանխոսուլ շրջան : Ոչ արդ ապէ ՚ի տեսիլ նեթէ աքանչելեաց այդքանից Հաստատութենէն՝ ոչ զմայլել յաչխատակիսը , Թէպէտ և ոչ ՚ի տեսութիւն քո , ոչ ՚ի պահպանութիւն , ոչ ՚ի մնոնդ և ոչ ՚ի ծննդագործութիւն օժանդակիք ինչ , և ոչ կենսաձիր ազդեցութեամբքն կազդուրիք զքեզ :

1 Ա՛յս վարգապետութիւն է Պտոլիմէոսից որք զաստեղն աստուածս համարէին :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՉՈՐՐՈՐԴ

Ա՛ՏԴ զոր օրինակ այսոքիկ Թէպետ անհրաժեշտ մեզ ի պէտս և կարևորը ի կենդանութիւն, բայց ահաւոր մեծութեամբքն զրաւեն բովանդակ զմիտս մեր, սոյն պէս և ամենայն առաքինութիւնք, մանաւանդ երախտագիտութիւն, Թէպետ և բազում ինչ ընծայէ բարիս, այլ ոչ եթէ վասն այնր իցէ սիրելի. է ինչ այլ առաւելութիւն ի նմա ոչ քան այժմ բաւականին ծանուցեալ այնմ որ յօգուտ ի վար արկանէ զերախտագիտութիւն։ Աչքախտագէտ է վասն զի օգտի, ապա չիցէ՝ եթէ չօգտեսցի։ Ա՛ռաքինութիւն չընդունի զսիրեցողս իւր վասն անարգ շահասիրութեան. բայաւ գոգով պարտ է դիմել առ նա։ Ա՛պերախտն զայսոսիկ խորհի ի միտս իւր. "Կամէի երախտաշատոյց լինել, այլ զանգիտեմ ի ծախուց, խիճամ ի վտանգէ, կամ կածեմ ի թշնամութենէ. զայն ինչ արարից մնասանդ որ օգտէ ,, ։ Ձմարթէ և երախտագիտութեան և ապերախտութեան նոյնն վարել խորհրդով. որպէս զանազանեալ են ի գործս՝ նոյնպէս և ի դիտաւորութեան խորհրդոց։ Ո՞ւն ապերախտ է՝ զի օգտի այնու, Թէպետ և ի պարտուցն վերջացի. միւսն երախտագէտ Թէ և չօգտիցի ինչ՝ զի պարտք իւր պահանջէն զայն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՒՐ. Նպատակի առաջի կայ մեր ըստ օրինայ քնութեան քաղաքավարիլ, և զաստուածոյն գՀետ երթալ օրինակի. արդ յայնմ ամենայնի զոր առնեն աստուածքն, ոչ ինչ այլ խնդրեն՝ բայց զառնելն ևՀետ. բայց եթէ Համարիցիս Թերևս զի Նոքա զարդիւնս գործոց իւրեանց ընդունիցեն ի ձեռնՀաս զոհից և ի բուրմունս հնդրկաց։ Ցես օրէսփ ինչ բարեգործեն զօրհանապազ, օրըզան պարգևս բաշխեն, օրըզանեաւ

առատութեամբ պտղոյ ըմուն զերկիր , որպիսի աջողակ հողմովք՝ որ ընդ ամենայն ծովախուռնս կոյս հնչիցեն , տատանեն զծով . որպիսի տեղատարափ անձրեւովք ըզգետինն կակղեն , և զցամաքեալ ակունս աղբերաց ջրակուտակ արբուցանեն , զարձեալ և ընդ գողուղի անցս պատրաստեալ նոցա մտուղղ վերանորոգեն : Օ այս ամենայն անվարձ գործեն նոքա և առանց ինչ օգտի ակնկալութեան : Կոչին պարտ է նախանձաւոր լինել և մեզ բանիւ , եթէ չեն կամք օտարանալ ի նախատիպ մերոց օրինակաց և ոչ վարձկանութեամբ գալ ի բարեգործութիւն : Իմաչեսցուք գնոց վաճառել զբարեբարութիւնս՝ զոր ձրիատուր ընդունիմք յաստուածոյ :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Այժ աստուածոյ , ասեն , նմանել կամիցիս , բարեբարեա և առ ապերախտս . քանզի և չարագործաց ծագէ արև , և հիւսից բաց են ծովք : Հայեմ վայրի հարցանեն , արդեօք պարտ իցէ առն բարւոյ բարերարել և ապերախտին , գիտելով չափ զապերախտութիւն նորա : Ալ առ ի ձողպրելոյ ի նենգաւոր վարդուածոցդ՝ ներեսցի ինձ բանս ինչ ընդ մէջ արկանել : Ապերախտութեանց կրկին ազգ են ըստ Աոյիկեանց : Ոմն է ապերախտ , զի անմիտ է , և անմիտն քանզի չար է , և չարն լի ամենայն ախտիւք՝ ապա ապերախտ ևս է : Ասյր աղագաւ զչարս ամենայն անժուժկալս կոչեմք , ագահս , հեշտասէրս և նենգաւորս . իբր ոչ եթէ յամենեսին ի նոսա տիրացեալ իցեն ախտքս և երևիցին յայտնապէս , այլ զի կարեն լինել , և են իսկ՝ թէպէտ անյայտք : Ոսկ այլ ոք ապերախտ է և կոչի ի ոամկին , ի բնէ միտ և յօժար գոլով յայն ախտ : Ասդ առաջնոյ ապերախտին յոր ոչ ինչ աւելի քան զայլ ախտս է և ապերախտութիւն , առնել առնէ երախտիս այր բարի . զի թէ և զայսպիսին ի բաց հաներ՝ ոչ ումեք բարերարելոց էր : Ոսկ երկրորդին՝ որ դժուն է երախտեաց և ի բնէ միտեալ յայն , ոչ արասցէ երախ-

տիս , որպէս և ոչ փոխ տայէ վատնողին , կամ աւանդ այնմ՝ որոյ բազմաց զլացեալ է զաւանդն : Արիչտա տսի ոք զի անմիտ է , և անմտութիւն սեփական է չարքաց՝ յորս անխտիրս ամենայն տխտից է պատառութիւն : Այլ տիրապէս երկչոտ այն է՝ որ վհերոտ ի բնէ՝ ի դոյզն հնչմանէ դողայ : Ամենայն տխտք բռնադակին չանտիան , այլ ոչ առ ամենայն միտեալ է ի բնէ . զի է որ յագահութիւն , է որ ի վատաշոտութիւն , և է որ ի զեղխութիւն հակամիտ :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Սխալեն ապա սակ Հարցանէն զՄատիկեանս՝ Թէ Օ՞ւրիչ , երկչոտ ուրեմն էր Ալքիպէս , անիրաւ Ալբիսթիդէս՝ որ զարդարութեան անուն ժառանգեաց , յանդո՞ւն Փաբիոս՝ որ դանդաղանօք վերականգնեաց զՀասարակապետութիւնն , երկչոտ ի մահուանէ Գնեա՞ս , մանաւանդ Մուկիոս և դասալիք Կամիլլոս : — Ոչ զայդ ասեմք Թէ ախտք Համարէն այնպէս զօրագեալ իցեն յամենեսին՝ որպէս մեն մի յայնցանէ յամենս : Այլ զի չարն և անմիտ չէն զերծք և ոչ ի միոյ յախտից , այնպէս զի և ոչ զյանդուդսն ազատ կացուցանեմք յերկչոտութենէ , և ոչ զշռայլն յագահութենէ : Օ՞ր օրինակ զգայութիւնք ամենայն բռնադակին ի մարդումն , բայց ոչ ամենեցուն է սրակն լինել իբրև զլուսանուն , սոյնպէս և ոչ ախտք Համարէն այնպէս բռնան և հզօրագեալք են յանտիտսն , որպէս ոմանք յոմանս : Ախտք ամենայն բռնադակին յամենեսին , այլ ոչ ամենայնն զօրանայ յիւրաքանչիւր ոք : Օ՞ոմն յագահութիւն մեզ բնութիւնն , զայլ ոք յանառակութիւն , ոմն զինւոյ տայ զանձն , կամ Թէ չէ իցէ անձնատուր , տակայն յայն բերի ի բնատրութենէ : Այլ զի այս այսպէս՝ յառաջարկեաք մեր զարձ արարեալ ի բանս , չիք ոք չար որ չիցէ ապերախտ . զի ախտից ամենեցուն սերմունք բռնադակին ի նմա . այլ տիրապէս ապերախտ նա է , որ ի բնութենէ հակամիտ ի նոյն . արդ այսպիսումն բարերարեցից ոչ : Ոը

պէս անիրաւի դատեր իւրում Հայր՝ որ առն թշնամանողի և ատելի կնաթողի տայ վնաս կնութեան, և անմիտ է տանուտէրը, որ առն չիշատակարժի ի գործս անտեսութեան՝ յանձն առնէ զնիւթս ընչից և ժառանգութեան իւրոց, և խելագար է կառավարիչ՝ որ զկողոպտիչն որբոց հաղարապետ հոգաբարձու կարգիցէ որդւոյն, սոյնպէս բարերարէ չարաչար՝ որ զապերախտս ընտրէ ի բաշխել նոցա զերախտիսն ի կորուստ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՒԱՑ և առաուածք, ասէն, բազում ինչ պարգևեն ապերախտից։ Այլ վասն բարեաց պատրաստեալ նոցա զայն՝ մնասուորին այնոցիկ և չարք՝ որք անբաժանն են ի բարեաց. լաւ եւ է ի ընդհարս բարեաց՝ օգտել և չարաց, քան ի պատճառս չարաց զրկել և զբարիս։ Այլ ըստ այսմ ահա զյառաջերեալսն առ ի քէն, զոյս տուընչեան, զարեգակին, զամարայոյ և զձմերայնոյ յերազախոսութիւնսն, և զլարեխառնութիւնս գարնանայոյ և աշնանայոյ, զհոսմունս անձրևաց և զղրնմանս աղբերաց, և զառհմանեալ ժամանակաւ հնչմունս հողմոյ, հասարակաց ամենեցուն կարգեալ գոլով ի պէտս, չմարթեր արգելուլ զայն յոմանց։ Վասն որժանաւորաց տայ զպատիւս, իսկ զպարգևս և անարժանից։ Ո՞ հասարակաց ցորենոյն բաշխ եթէ զոմն և եթէ պոռնիկ և եթէ ուխտապրուժ և ամենայն իսկ քաղաքացիք՝ ընդունին անխտիր առանց ընտրութեան բարոյից։ Այլ յայն ամենայն որ ընդհին որպէս քաղաքացւոյ՝ և ոչ որպէս առն բարւոյ, չարք և բարիք վայելեն միօրինակ։ Այմանապես և աստուած պարգևս ինչ հասարակաց ետ ազգի մարդկան, յորոց զրկի և ոչ ոք. քանզի և անմարթ իսկ էր թէ հողմն աջողակ բարեաց՝ չարացն հնչեսցէ ձախողակ. յօգուտ հասարակաց հարկ էր թագաւորութեան ծովու բաց գոլ՝ ի վաճառաշահութիւն և անարգել առաջի մարդկութեանս համայն։ Այլ անձրևացն ինքեսց էր մարթ տալ օրէնս, զի մի և յանդաստանս չարացն և անզգա-

մաց ցօղեսցին ։ Այն ինչ ինքը Հաստարակաց կարգեալք՝ ի պէտս ։ Արեւուց և լուսոյ՝ ի բնակութիւն կանգնին քաղաքք · Հրաշալիքն Հանճարոյ՝ գրով Հանդիսացեալք՝ և յանապատին Հաստանին՝ ի ձեռս · բժշկութիւն և եղէնաւորացն իսկ մնասուցանել զնա օգուտ ։ Այլ ոք զառողջարար գեղոյն արգել զկազմութիւն՝ զի մի բուժեսցին և անարժանք ։ Օ ընտրութիւն անճանց և զնոսիր յայն ինչ իցս խնդրեալը՝ որք ուրոյն որպէս արժանաւորաց ընծրհին , և ոչ յայնս՝ որ անխտրաբար բաշխին ամբոխին ։ Վանգն և ընդ ընտրեն զոք և ընդ մերժել ընկենուլ՝ ի դուրս՝ մեծապէս է խոիր ։ Այս և գողոց լինին իրաւունք՝ ի գատաստանի , և մարդասպանք զնոսովին վայելեն՝ ի խաղաղութեան , և որք զայլոյն յափշտակեցին՝ զնոսիրեանցն պահանջեն ։ Այս և որ զայլ Հարկանեն և առ ընտանիսն լինին սուսերաձիգ՝ նոսին պատապարին պարսպաւ յերեսաց թշնամեացն , նա և կարի օրինազանցքն նոցին իսկ օրինացն պաշտպանին օգնականութեամբ ։ Այն ինչ՝ ի բարեաց յոս չվայելեին արդեօք ումանք եթէ ոչ ամենեցուն Հաւասարաբար էր տուեալ ։ Այ ապա զայն ինչ իցս ինձ՝ ի գէմս բերցես՝ յոս Հաւասարաբար գոսաք Հրաւիրեալք ։ Օ որ ինչ՝ ի կամս իմ է տալ որում՝ ընտրեցեմ, ոչ տաց այնմ՝ զոր ապաշնորհ Համարեմ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Թէ այդպէս իցէ , ասիցես , ապա և ոչ խորհրդակից բարեաց լինիս ապերախտին , և ոչ ջուր տացես նմա ըմպելոյ և ոչ մոլորելոյն ցուցցես Հանապարհ · և զի զայսոսիկ առնես , ընդեր և զայլ ինչ չընծրհիցես ։ Օ անազանեմ կամ գէթ ջանացայց զանազանել զայդոսիկ ։ Այրախտիքն է բարեգործութիւն , այլ ոչ ամենայն բարեգործութիւն իցէ երախտիք · զի էն և գուշնաբեայ ինչ իրք որ չէն իսկ արժանի զի կոչեսցին երախտիք ։ Վանգի երկու ինչ խնդրին՝ ի բարերարութեան · առաջին՝ մեծութիւն իրին · զի էն և իրք՝ խոնարհագոյնք յոյժ քան զարժանիս մեծի անուանին ։

Աւ ո՞ երբեք Համարեսցի յերախտիս վկայութեան Հայի, կամ զներելիս մի ընկեցեալ յողորմութիւն, կամ Թողուլ ումեք զի լսցէ զՀրաց. և այն զի սոքա երբեմն օգտակարագոյնք քան զմեծամեծ ինչ իրս էն, այլ փոքրկութեամբ նուաղի յարգ նոցին, Թէպէտ և 'ի կարևոր իսկ ժամու չնորհեսցին։ Աչխարհդին և կարևորագոյն այն է՝ զի նման տայ վերախտին որում բարերարելն ցանկայի, արժանաւոր վարկուցեալ զնա չնորհին, և զի մնադիւր և յօժար կամօք տուեալ ուրախ և եղէց ընդ տուրս իմ. և յայսցանէ ամենեցուն վերջացեալ էն նախասացեալքդ։ Օ՞ի ոչ եթէ որպէս արժանաւորաց տամք գայնոսիկ, այլ 'ի Հարևանցի որպէս գոյդն ինչ և Թեթև. և ոչ մնարդոյ տամք, այլ մնարդկութեան։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ

Ըզ ժխտեմ զի և անարժանից և սոքա բարերարեցից ուրեք 'ի պատիւ երեսաց այլոց. զոր օրինակ յընդունելութիւն բարձի և պատուոյ՝ բազում ուրեք ազնուութիւն տոհմին նախապատիւ եղ զվատթարս քան զլաւսն՝ այլ երիկեանս ազգաւ։ Աչ այս ոչ վայրապար. զի նուիրական է չիշատակ մեծամեծ առաքինութեանց. և յոլովագոյնք յորդորին 'ի բարութիւն եթէ լաւացն փառք և պատիւ ոչ ընդ նոսա չինչանիցին։ Օ՞չ երկերանի զորդին զԱիկերն զինչ այլ կացոյց հիւպատոս, բայց պատիւ երեսաց Հօրն։ Օ՞ինչ զԱիննա յառաջ քան զաւուրս զայսոսիկ՝ 'ի բանակէ անտի Թշնամեաց վերառեալ ամբարտ 'ի հիւպատոսութիւն. զինչ զԱեքատոս Պամպէոս և զայլ և Պամպէոսեանսն՝ եթէ ոչ միոյն գերամբարձ մեծութիւն, որոյ և աւերբակք իսկ բաւականաբ գտան չայն բարձրութիւն զիւրոն ամբառնալ։ Օ՞ինչ և զարդիս զԱաբիոս Պերսիկոս՝ յորոյ 'ի Համբաւրիցն և անմոքրութեն պժգայեն, քուրմ կացոյց, և այն ոչ 'ի միում աւերի ժողովարանի, եթէ ոչ 'ի Ա՛երրուկեանցն և Ա՛յլոցդագաց գոլ սեբունդ, յերից Հարիւրոցն որք 'ի պաշտպանութիւն

հասարակապետութեան զաղգատոհմ մի վերնեանց թուով ընդդէմ եղին յարձակման թշնամեաց ։ Եւ ի մեծոյ ևեթ պարտիսք պաշտել զառաքինութիւն՝ այլ և ի հեռանալն իսկ յայցս տեսութենէ ։ Որպէս նա- քա առաքինութեամբն իւրեանց ոչ միայն ևեթ օգ- տեալ դարձ և յետնոցն իսկ ժամանակաց զբարեր- րութիւնսն թողին , նոյնպէս չէ պարտ և մեզ միով դարու զերախտապիտութիւնս մեր սահմանել ։ Այլ զի ծնող եղիւ աւագ արանց՝ որպիսի ոք և իցէ՝ արժանի երախտեաց է զի արս արժանաւորս ընծայեցոյց ։ Այլ ոք ի պանծալի նախնեաց ծնանիս՝ որպիսի ոք և ինքն իցէ՝ ընդ հովանեաւ իւրոյն թաղիցէ ։ Որպէս աղ- ջամղձն վայրք՝ ի ցոլացեալ նշուլից արեւու լուսաւո- րին , նոյնպէս և վերջացեալքն յարդեանց ի նշոյլ փա- ռաց նախնեացն իւրեանց փայլեսցին ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Ա ՅՑԱՆՕՐ կամք են ինձ , իմն Լիբերալէ , և աս- տուածոյն տեսչութեան կալ Քառագով ։ Այնպէս լաւք ասել Հանապազ · Օ ի է , զի տեսչութիւնն էտ Աքրի- դեոսի զգաւազան Թագաւորութեան ։ — Այ նմա՛ Համարիցիս տուեալ զայն . ոչ , այլ Հօր նորա և եղբօր ։ — Հիմ զկայոս Կեսար իշխան կացոյց տիեզերաց , զանյագ ծաղաւին մարդկեղէն արեան , որ որպէս աք- բեհալ կամելով նոավաւ՝ հրամայեբ հեղուլ առաջի այց իւրոց ։ — Այ նմա՛ կարծիցես տուեալ զնորէդ · ոչ , այլ Հօր նորա տուաւ Վերմինիկոսի և Հաւուն և նախա- Հաւուն , և այլոյն ևս նախնեաց նոցին Հանգուցեալ արանց ընտրելոց , Թէպէտ Հանգոյն ամենեցուն տոս- կական վարկին կենաս . իսկ զինչ դու ՝ յորժամ ըզ- Աամերիկոս Կաբրոս կացուցեր Տիւպատոս · անգիտա- նայիր զառնն զազրութիւն և զպագշոտութիւն ։ Այ միթէ պատրուակէր նա զիւր չարիս կամ Թէ յանկայր քնաւ երևել պարկեշտագոյն · պատմեցից քեզ զզոյց*

1 Ա՛ս տեսչութիւնն են բանքն բացադատութեան ձեռվ։

ինչ նորա զանձնէն, զհաչակեաւն առ ամենեսեան և իւր իակ լս ի լս երկրորդեալ. քանզի բարբառեալ նորա առ Պողիկն Ա՛սիոյ առ տարածեալն ի մահիճն՝ ասէ զաղօթեան բանիւք. Ա՛ստուածդ քեզ զայն զոր կրեցն ցանկայի. և ի կնձնել Ա՛սիոսի զձակատ իւր ասէ. Հիմ վերայ և ի վերայ գլխոյ իմոյ չարիքն զորս խօսեցայ. և զայս ինքնին իակ պատմէր ասացեալ. Ա՛ռ զայդպիսի որ այր զաղիր և զանպատկառ ամբարձեր ի պատիւ և ի բարձ հիւպատոսութեան. զի ի նախ նին յայն Վկաւրոս՝ յիշխանն առեւրին՝ ան արկեալ մաօք, գժպատեհ ինն Թուէր զղուակ նորա քեալ Թողալ ընկեցիկ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Ա՛ի որպէս ընդ ունմս նեբողուէեամբ վարին դիք ի ընորհս երեսաց Հարց նոցա և Հաւուց, նոյնպէս և ընդ այլս ի ընորհս լսուելութեան Թոռանցն և Թոռնեայց և Հանդերձելոց նոցա ազգատոհմին։ Օ՛ի ամենայն Հանդիպք գործոց նոցա ակներևւ կան գիք՝ և ոչ ինչ յորոց ընդ ձեռն նոցա լինելոց են ծածկի ի նոցանէ, այլ ի միջնդ ծածկեալ է ամենայն, և որ ինչ յերկարծ և անակնկալ մեզ Թուին՝ նախաճանօթք են գից և ընտելականք։ Ա՛ղող կալցին սոքա զթագաւորութիւն զոր ոչ կալան նախինք նոցա, զարդարութիւն և գժուժկալութիւն նախապատիւ քան զգերադոյն իշխանութիւնն Հանարեալ, և զի ոչ զՀասարակապետութիւնն ինքեանց, այլ զինքեանս ձօնեցին Հասարակապետութեան։ Ա՛ղաւաղեսցին և գոքա, զի այր որ բարի էր նախահաւ նոցա և սրտիւն յաղթական բախտին. որ ի քաղաքական կռիւսն յանձն առ յօգուտ Հասարակապետութեան յաղթել քան յաղթել։ Ա՛յ գմա ի բազում ժամանակաց Հետ չէզև պատեհ Հաստուցանելոյ ինչ փոխարէն, արդ ի պատիւ երեսաց նորա լեցի սա իշխան ժողովրդեան. ոչ զի կարող ինչ ոք է և Տմնաւ, այլ զի այլ ոք փոխան նորա գտաւ այնմ արժանի։ Ա՛յս անգեղեայ է մտքիմով և զաղտահեսիլ, որ և

զսպաս արքունական զարդուցն դիցէ ՚ի ծաղը և յան-
արգութիւն, թող մեզաղիր լինիցի ինձ մարդիկ, կոյր և
անխորհուրդ զիս կարդացցեն, որպէս թէ չգիտիցեմ
ում տալ յոր վայր զետեղել, զոր քաջալաւացն և գեր-
ատհանից տալ արժան էր։ Այլ ձարտար գիտեմ
ես թէ ումմ տամ և ումմ զվաղնջուց պատուն հատու-
ցանեմ։ Այլ ուստի գիտիցեն զոքա զդիւցազունն զայն որ
՚ի հետամուտ իւր փառացն խոստիւք, որ այնու գիմօք
գիմագրաւէր վտանգաց՝ որով այլք ՚ի բաց վազէին յայն-
ցանէ, որ զանձին օգուտ գՀասարակացն Համարէր։ Այլ
իցէ, Տարցանիցես, այրդ այդ՝ կամ ո իցէ և ուստի։
Զեզ անծանօթ է այրն, այլ առ իս Ճշդիւ նշանակեալ
կան այդ Հարիւք առից և տրուց. գիտեմ ես ումմ զինչ
պարտիցիմ. ունիմ կանխեմ Հատուցանել և այլոց ա-
նագան յետ առուրց բազմաց, որպէս և գիարդ գէպք
և տեսչութիւն պետութեանս իմոյ բերիցեն։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

ԲԱՐԵՐԱՐԵՑԻՑ ասպա երբեմն և ապերախտին,
բայց ոչ վասն իւր։ Այսկ զինչ, Տարցանիցէ որ թէ-
բևս, եթէ չգիտիցես՝ երախտագէտ արդեօք թէ ա-
պերախտ որ լինելոց իցէ. սպասեալ մնայցես մինչև գի-
տասցես, եթէ չկորուսանիցես զպատեհն բարերարե-
լոյ։ Սպասեալ՝ յերկարեսցեն յոյժ իրքն. զի որպէս
Պղատոն ասէ, գժուարին է յոյժ տեսութիւն մարդ-
կային սրտին, իսկ և ամենապարեալ յանդգնութիւն եղե-
ոյն։ — Այլ այդ այս է մեր պատասխանի թէ ոչ կացցուք
մնասցուք Հաւատոյ օր և ստուգութեամբ Հաստ լինելոյ
իրացն, քանզի դժուարին է հետազօտութիւն չմար-
տութեան, այլ ընդ Հաւանականացոյն գնամք ուղի։
Օ այս ՃանապարՀ ունիմք և յամենայն գործս պատշա-
Ճից, այսու օրինակաւ սերմանեմք, Նաւեմք, զինուս-
բիմք, կին ածեմք, որդիս ծնանիմք. որոց ամենեցուն
եզք անստոյգ են։ Օ այնցանէ բուռն Հարկանեմք յորոց
առաւելագոյն իցէ մեզ ակնկալութիւն։ Օ յ ո՞ է որ
խոստանայցէ սերմանողին զառատ պտղաբերութիւն,

նաւերդն զնաւահանգիստ, զինուորեալն զյաղթութիւն, փեսայի զՀարսն պարկեշտ, հօր զառակս առաքինիս։ Պաշտօղութեան բանին քան եթէ Հնմարտութեան գՀետ երթամք աներևակայ ստուգութեամբ։ Այսպես՝ զի դատեսցիս զամենայն և հաստատեաք Հնմարտութեան բերիցիս ի գործ՝ յանգործութեան անցցին կեանք քո։ Այր ուրեք տիպք կերպարանաց Հնմարտութեան հաւանեցուցեն զիս յայս կամ՝ յայն՝ ոչ ինչ զանգիտեցից բարերարել այնմ՝ որոյ հաւանական Թուի երախտագիտութիւն։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՀՈՐՈՎՈՐԴ

Ասաց և ի բազում ինչ դէպս, ասէ, մարթի իցէ Հարին ընդ կերպարանաւք բարւոյ յարմարի ի ներքս սպրդել և բարւոյն որպէս զայր անհամոյ լինել. զի պատիւք են երևոյթք իրաց՝ որոց հաւատս ընծայեմք։ Այս ո՞ Հրամայեցե զայդ. բայց սակայն չգտանեմ ինչ այլ կանոն ուղղութեան խորհրդոց։ Ինդ այս ևեթ ուղի Հարկ է ինձ Հետամուտ լինել Հնմարտութեան, ստուգագոյն քան զայս չէք ինձ ցուցանել։ Այս զի ըզգուշութեամբ զատեսայց յայսոսիկ, փոյթ կալայց չլինել զիւրահաւան։ Կա և ի մարտս պատերազմի պատահեսցէ ուրեք զի վրիպակ կարծեաք սխալեալ ձեռն իմ՝ ի զինուորակից անդր լինի նետաձիգ, և ի թնդանին ինայեսցէ որպէս ի զինուորակից։ Այայց գուն ուրեք Հանդիպեալ այդ, և ոչ ի յանցանս ինձ գրեսցի. զի իմ կամք էին զՀնդանին Հարկանել և քաղաքացւոյն կալ պաշտպան։ Եթէ գիտացից զապերախտութիւն ուրուք՝ ոչ բարերարեցից, բայց Թէ սպրդի Հնարի խաբել զիս, ոչ իմ մեղ է անդանօր, զի ես որպէս երախտագիտի բարերարեցի։

Այայ Թերևս Հարցանիցէ ոք. Ինստացեալ քո բարերարել ումեք, եթէ ստուգեացես ապա զապերախտութիւն առնն՝ բարերարեսցես Թէ ոչ։ Եթէ բարեբարես, գիտութեամբ մեղանչես. զի տաս՝ ում չէր պարտ տալ. իսկ եթէ զլանաս՝ մեղանչես դարձեալ.

զի չասաւ՝ որում խոստացար ։ Յայմ վայրի երեւեալ դեղեւի անդրդուելին ձեր Հաստատութիւն հոգւոյ և մեծաբան խոստմանդիր Թէ խնամատուն ոչ զղջասցի երբեք ընդ գործս իւր , ոչ ուղղագրեսցէ զոր արար միանգամ, և ոչ զհարկաւորդ մտացն փոխեսցէ ։—Ո՛չ փոխեսցի խնամատուն ՚ի խորհրդոյ իւրոյ՝ ցորչափ ամենայն ինչ կայ մեայ որպէս էրն ՚ի սկզբանէ՝ մինչ կալաւ նա զայն խորհուրդ ։ Այլ ինչ իսկ ոչ սարքասցի երբեք զի լաւագոյն քան զոր արարաւն՝ ձեռնարկեր առնել ՚ի ժամուն յայմիկ . և ոչ լաւագոյն ինչ քան զՀաստատեալն խորհել ։ Ասաց և առ ամենայն ինչ բերի պայմանաւս այսուիկ՝ եթէ ոչ խափան ինչ պատահեսցի ։ Յայս միտս ասեմք Թէ յաջողէ նմա ամենայն , և զի ոչ ինչ հակառակ կարծեաց նորա պատահէ . քանզի կանխեաց եդ ՚ի մտի Թէ մարթի խափանարար ինչ խորհրդոց կամացն պատահել ։ Ընդմուայ է այդ յանդուգն վստահութիւն ՚ի բախտ աջողակ . խնամատունն զերկաքանչիւր իսկ զերեսոն բախտին տեսանէ . գիտէ , որչափ դիւրին իցէ սխալել, քանի անատոյգ իցեն իրք մարդկէ՛ղինք , և որքան խափանարարք խորհրդոց ։ Ոգ յեղյեղուկ և դիւրաւահ բախտին հետս գայթ ՚ի գայթի ընթանայ , և հաստատութեամբ մտաց՝ անատոյգ ելիցն հետևի , և պայմանաւոր որոշմանքն այնուիկ որով զամենայնէ բուռն հարկանէ՝ պատսպարի և յայսմ մասին ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Խոստացաւն ուժեր բարեբարել , եթէ ոչ խափան ինչ ընդ մէջ անկեալ արգելուցու վիս ՚ի խոստմանէս . իսկ զինչ , եթէ զոր նմին խոստացայ՝ Հայրենիքն զնոյն յինէն պահանջեացէն . եթէ օրէնք ՚ի վերայ եկեալ՝ արգելուցուն չառնել զայն ինչ զոր խոստացեալ եր իմ բարեկամին ։ Ո՞գուտար իմ խոստացայ քեզ ՚ի հնութիւն , և ապա գիտացի զի եկ իցես և օտարական , և չմարթէ ինձ ընդ օտարին առնել խնամութիւն ։ Օրէնք որ արգելուն ինձ զայն՝ նոքին են իմ քաղա-

գով ։ Եթէ ամենայն ինչ որպէս ի խոստանալոյ իմում էին՝ կացցեն ճշմարիտ, և ես պահասեցայց ի խոստմանէս, յայնժամ գտայց հաւատարուժ և որպէս փոփոխիտ կշտամբեցայց. իսկ եթէ ոչ՝ ի փոփոխել իրաց տացի և ինձ ազատութիւն խորհելոյ վերստին, և արձակուրդ ի խոստմանէս ։ Խոստացայ փաստաբանել յատենի, բայց ասպա գիտացի զի ի վնաս հօրն իմոյ վարեր գտան այն. խոստացայ ուղեկից քեզ լինել ի տար աշխարհ, այլ պատմեցաւ ասպա Եթէ աւազակք ունին զՀանապարհս. խոստացայ անձամբ գալ առ քեզ, այլ խօթացաւ որդի իմ, այլ երկունք կանան զկինն իմ։ Օ ի հաւատարիմ կացից ի խոստմանս իմում՝ Հարկ է ամենայնի կալ ինալ անփոփոխ որպէս ի խոստանալ իմում էին ։ Իսկ զինչ այլ փոփոխութիւն մեծ որպէս ի վերայ կալ ապիրատութեանդ և ապերախտութեան. ապաքէն զոր տալոյն էի որպէս արժանւոյ, զլանամ որպէս անարժանի. նա և զայրանալոյ իսկ պատճառք են ինձ այն զի խաբեցեր զիս ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՎԱՃԵՐՈՐԴ

Ասացաւ և յայն հայեցայց Եթէ որքանն ինչ իրքն էին. և չափ և կշիռ խոստացելոյն լինէին ինձ խորհրդակից զի եթէ զուշաքեայ ինչ իրքն են՝ տալով տաց, ոչ զի արժանի այմ իցես՝ այլ զի խոստացայ. և ոչ որպէս պարգև տաց, այլ ի գին խոստմանս որ ել ընդ շրթունս իմ, և ի խրատ ինձ՝ իմովս վնասուս պատուհասելով զյախուռն խոստումն իմ. և ասացից յանձն իմ. Եաւ է զի ցաւեսցի քեզ, զի խոհականագոյն էս յայսմ հետէ խօսեցիս. և տաց զպարգևանն որպէս տուգանս լեզուի ։ Իսկ եթէ մեծ ինչ իրքն էին՝ ոչ առից յանձն, որպէս Եհեհասա ասէ, զի խրատ ի արժիցէ ինձ հարիւր սեաւեթորից ։ Խրոստեաք ի կշիռ մատուցեալ քննեցից զայսոսիկ. իբր զի մեծ ինչ է հաւատարիմ ի խոստմանն կալ, այլ մեծ էս է չառնել երախտիս անարժանին. բայց և ի կշիռս երախտեացն հայեցեալ՝ եթէ Թեթև ինչ իցէ, զինջայց. ապա եթէ

'ի միասս մեծ կամ 'ի շառագունանս անձին՝ լաւ իցէ հնձ առ մի նուագ յանձն առնուլ զտգտանս ժխտելոյ՝ քան զանճթ տալոյս կրել միշտ ։ Օ՜ի որպէս ասացեր՝ յայն հաստատեալ և ամենայն ձեզ որքանդ խոստումն իմ իցէ ։ Ոչ միայն զանխորհրդաբար խոստացեալսն չհատուցից , այլ և զոր ոչն ետու ուղղութեամբ՝ պահանջեցից յետս ։ Ընդմէջ և որ հաւատարիմ 'ի սխալանսն կամիցի կալ ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՓԻԼԻՊՊՈՍ Ոակեդոնացւոց արքայի էր զօրական քաջաքաղաքի , զորոյ զարիւնան հանդիսից 'ի բազում պատերազմունս զիտրձ առեալ՝ 'ի մրցանակ քաջութեանն ընդհէր ինչ յաւարացն , և ատեպ պարգեւօք խրախուսեալ զսիրան վարձկան ։ Գնալ եղև սմա անկանել նաւաբեկութեամբ 'ի կաղուածս Ոակեդոնացւոց ուրումն . որ 'ի լուր արկածիցն ընթացաւ առ նա վաղվաղակի , սփոփեաց զնա և ժողովեալ ած յաւարակ իւր 'ի տուն . Հանդերձ զնա յանկողնի իւրում՝ կազդուրեաց զառ 'ի մահ կոչմանէն , և զաւուրս երեսուն զարման տարեալ նմա իւրովք ծախուք՝ ապաքինեաց , և պարեհաւորեալ թոշակօք ուղղոյ արար զնա , որ 'ի հրաժարել իւրում առեալ . Ոչ մոռացայց զերախտիս քո , միայն զի լիցի ինձ գամ մի հանդիպել ինքնակալին իմում՝ Պատուեաց Փիլիպպոսի զնաւաբեկութիւն իւր , իսկ զերախտիս օգնականութեանն լռեալ աւանդեին՝ յաւել իսկ և խնդրեաց յարքայէն չորհել ինքեան զկալուածս ուրումն . այն ինքն է զիւրոյ ասպնջականին՝ յորմէ հիւրընկալեալ և զարմանեալ էր ։ Յաղում ինչ աչօք փակելովք պարգեւէն թագաւորք՝ մանաւանդ 'ի պատերազմի . այլ մի արդար ոչ բաւեսցէ ընդդէմ սպառազէն յանկութեանց այնքանոյ ամբոխին , և ոչ զիւրին ինչ իցէ այր լաւ և զօրաւոր քաջ լինել միանգամայն . Ըս յագեցեալն բիւրաւորացն ամբոխ անյագ , զինչ զբռամբ ածցէն եթէ իւրաքանչիւր զիւրն կալցի ։ Օ՜այս խորհէր յանձն իւր

Փիլիպպոս, մինչ հրաման ետ ածել զպրն ի ժառանգութիւն ցանկացելոյ կալուածոյն։ Իսկ այրն կապտեալ ի ստացուածոյ իւրոյ՝ ոչ իբրև տխմար ոք և ապուշ՝ լռութեամբ տարաւ զրկանացն, մեծ ինչ համբերալ զի և ոչ անձն իւր տուաւ նմա ի ստրկութիւն, այլ զրեաց առ Փիլիպպոս զկիրճ և ազդու. զոր իբրև ընթերցաւ Թագաւորն՝ ջեռաւ բորբոքեցաւ բարկութեամբ, և անդէն վաղվաղակի հրամայեաց ետ Պաւսանիայ գարձուցանել զպրն ի ժառանգութիւն իւր սեպհական, և զզօրականն զայն չարաչարսիրտ զհիւրն ապաշնորհ և մինչ ի նաւաբեկութեան իսկ ագահ, խարանաւ գրոշմել ի ձախակ ի նշանակ ապերախտութեան նորա։ Ոչ արդարև արժանի իսկ էր՝ ոչ լոկ գրոշմելոյ այլ և փորագրելոյ տասիցն ի ձախակատ նորա, որ զասպնջականն իւր հանգոյն իմն նաւաբեկեալոյ մերկ և կողոպուտ եդ ընկեցիկ անդ ի ծովամուխ ոք ինքն էր անկեալ։ Այլ զոր դատաւինքը պատուհասի արժան էր կապել ի վերայ այսպիսումն. պարտ էր այո բառնալ ի նմանէ զյափշտակեաւն մեծ եղեռն անզգամութեամբ. և ո՞ ոք կարեկից լինէր ընդ պատուհաս նորա, որոյ խժգժութեամբ կասէր ամենայն ոք յողորմելոյ կարօտելոց։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Այդ միթէ տացէ քեզ Փիլիպպոս զի խոստացաւ՝ թէպէտ և չկոչ արժան տալ, թէպէտ և անիրաւեացի ի տանն և եղեռն մեծ գործիցէ, թէպէտ և արգելեալ փակեսցէ այնու նաւաբեկելոցն զծովելեզրս աստեղայն։ Ի ծանուցեալ և ի զգրուելն սխալմանց յետս կալ ոչ ինչ թերեւսութեան իցէ. նա արժան իսկ է անկեղծութեամբ լինել խոստովան թէ Այլազգ կարծեի, խաբեցայ։ Ոչ ի հակառակէն՝ ամբարտաւանութեան է խօսական յամառել մնդալ ի նոյն՝ ասելով. Որ ընդ չերեսս իմ եղ, զսխալ ինչ և իցէ, մի զարձցի յետս։ Ընդ փոխելն իրացն ոչ ինչ ամօթ իցէ և խորհրդոց փոխոխումն։ Այլ եթէ փի-

լսպտեայ Թողացուցեալ էր զժառանգութիւն Ծովե-
զերեայցն այնմ՝ որ նաւաբեկութեամբն զառաջ ած ,
ոչ ապաքէն կարօտելոց ամենեցուն զանապր զՏայ և
զՔրիստ : Այս և այս իցէ , ասէ , զի միշտ ի ծայրս սահ-
մանաց Տնազատութեան իմոյ կրիցես ի պնդագոյն ձա-
կատուդ զտառադ՝ զորս արժան իսկ էր արդեօք յաչս
քո գրոյել . ցոյց դովին Թէ քանի նուիրական իցէ
հիւրամերժար ասպնջականութիւն . ի գէմն քո ըն-
Թերցոյն ամենեքեան զվճիռն որով վատահ լինին Թէ
չէք ինչ վատնգ յասպնջական լինելոց հիւգացելոց : Ա-
ռաւել քան Թէ ի տախտակս սրտիդ փորագրեալ՝
այդու օրինակաւ հաստատագոյն լոյս օրհնդրու-
Թիւնդ :

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԽՆԵՐՈՐԴ

Ասդե՛ր ապա , ասէն , պարագլխին ձեր Օ հնան դե-
նարս հինգհարիւր խոստացեալ ումեք տալ ի փոխ՝ և գի-
տացեալ ապա զի չմարԹէ վատահանալ ի նա , և ի բա-
րեկամաց իսկ յորդորեալ չտալ , ոչ անսաց և ետ զփոխն
զի խոստացեալ էր : — Ախ քան զամենայն՝ ընդ փոխն
և ընդ բարերարութիւնն խոիր մեծ է . զի զարծաԹն
անխորհրդաբար տուեալ ի փոխ , մարԹ է պահանջել ,
մարԹ է յատեան կոչել զպարտապանն . և Թէ մնան-
կացեալ և այ իցէ՝ զնոյն ինչ արծաԹոյն առնուլ . իսկ բա-
րերարութիւնն նոյնժամայն կորնչի ի սպառ . Թողից
ասել զի ի միումն է վատնարութիւն , իսկ ի միւսումն
վատ տնտեսութիւն : Այլ Թողից զայն , զի և ոչ Օ հնան
տայր զարծաԹն զայն ի փոխ եԹէ բազմագումար ինչ
էր . զի դէնարս հինգ հարիւր , որպէս սովորութիւն է
ասել , և ի հիւանդութեան ոք ծախեցեալ . և ոչ այն-
չափ ինչ էր գումարն մինչև յետս կոչել զնոստումն
իւր : ԱրԹամ յոմԹրիս՝ ԹԷպէտ և ցուրտ իցէ օրն ,
զի խոստացայ . բայց ոչ եԹէ և ձիւնեցիկ . երԹայց ի
հարամիս զի խոստացայ , ԹԷպէտ և չկէտ իմ մար-
սեալ զոր կերայ ի տան . բայց ոչ եԹէ և տենդ զիս
կացցէ . կացից ումեք երաշխաւոր՝ զի խոստացայ . այլ ոչ՝

եթէ և անյայտ իցէ ինձ գումարն, և կամ գոյիւ չափ արասցէ որ զիս պարտապան։ Վասն զի պայմանաւոր են խոստմունքք և է իմանալ լռելեայն՝ եթէ կարացից, եթէ օրէն իցէ ինձ, եթէ անփոփոխ մնասցէ ամենայնին։ Այլեթէ զամենայնին վերածիցես յիւրաքանչիւր կերպարան, որպէս ի խոստանալն իմում էին, օրէն իցէ քեզ ստիպել զիս, և ինձ ի ծանծաղամտութիւն համարեսցի ի բաց կալ ի խոստմանէս։ Այլ եթէ նոր ինչ իրք դիպեցան՝ զի զարմանաս զի ի փոխեալ համառաց խոստացեալումն՝ և խոստացողին փոխեացին խորհուրդք։ Դու ինձ զամենայնն նոյն ընծայեցր, և ես նոյն ինքն իցեմ։ Ոչ ապաքէն օր սահմանեմք և երաշխաւորութիւն տամք յանդիման լինելոյ առեւնին. այլ ոչ ամենեքեան որք չերևիմք անկանին ընդ դատաստանաւ, զի զօրութիւն բռնադոյն անպարտ առնէ զնոսա։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՄԵՐՈՐԴ

Օ՜ն ոճն ընկալջիր և ի պատասխանի խնդրոյն այնորիկ եթէ արդեօք պա՞տ իցէ երախտագէտ լինել յամենայնի և բարեբարութիւն ընդ բարեբարութեան հատուցանել միշտ։ Միշտ երախտագէտ յամենայնի պարտիմ ընծայեցուցանել. բայց երախտահատոյց լինել հնարէ ինձ երբեմն իմն գժբաղդութիւն, և երբեմն բարեբաղդութիւն այնորիկ որում երախտապարտ եմ։ Օ՜ի զինչ տաց արիտուր Թագաւորի, կամ աղքատաս մեծատան. նա և են իսկ որք նախատինս անձանց համարին յետս առնուլ զերախտիսն, և նորանոր բարերարութիւնս ի կրկին առաջնոցն յաւելուն իսկոյն։ Այնպիսեացն զինչ այլ կարիցեմ փոխարինել, բայց գյաժարութիւն կամաց. զի և չէ ինձ արժան մերժել զնոր երախտիսն վասն չէ և առաջնոցն փոխարինելոյ։ Այնու մտադիրութեամբ ընկալայց՝ որով և ընծայեին. և պատճառս տաց բարեկամին իմում յիս ի վար արկանելոյ զմարդասիրութիւն իւր։ Այլ զնոր երախտիսն չընդունի, ընդ առեալն երևիլ գժկամակեալ։ Այայց չկարեմ լինել երախտահատոյց. և զինչ. միթէ

իմ ինչ մեղք իցեն եթէ պակասէ ինձ պատեհ կամ կարողութիւն ։ Այլ նա բարեբարեաց առ իս , զի եղիցի նմա պատեհ և կարողութիւն ։ Արդեօք այր բարի իցէ եթէ չար . եթէ բարի՝ յաջող է ինձ դառն իմ. իսկ ընդ չարին և՛ի դատ ոչ մտանեմ։ Այլ ոչ զարձեալ՝ զայն արժան համարիմ փութալ հատուցանել զիոխա- րէնս երախտեաց այնոցիկ՝ որ դժկամակին , և կամ զորս հրաժարինն բռնադատել ։ Ոչ այդ փոխարէնք իցեն երախտեաց , զի զոր դու յօժար կամաք ընկալար՝ հա- տուսցես բռնի որում ոչն կամիցի ։ Այն որոց պարգեւս ինչ ընկալեալ ուստեք՝ անդէն՛ի տարագէալ ժամու փու- թան այլ ինչ առաքել փոխարէն և համարին զերծեալ՛ի պարտուց ։ Այլ այլ ինն ազգ մերժելոց է փոյթ ընդ փոյթ յղել զիոխարէնն , և զպարգեւն պարգեւաւ վա- նել։ Այ՛ ուրեք զի կարող իսկ գոլով չառնեմ փոխա- րէնս երախտեաց , երբ առաւել քան զոր օգտեմն այ- լում՝ անձին ինասեցից . երբ բազում ինչ տուժեցից ես՝ ոչ ինչ յաւելուած բարեաց առնելով որում՝ տամն ։ Որ աձապարէ՛ի հատուցումն փոխարինին՝ ոչ զե- րախտագիտի առն՝ այլ զպարտապանի կրէ զներս ։ Համայն ասել՝ որ աձապարէ հատուցանել փութալ չկամի լինել պարտապան . և որ չկամին՝ ապերախտ է ։

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՅԱՂԱԳՍ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԵՆՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Յաճս վայր որպէս ինձ թուի՝ յանգ հանեալ կատարեցաք զառաջարկեալս մեր բան ձառելով զբարեբարուԹենէ՝ Թէ որպէս առնել զայն պարտ իցէ և ընդունել։ Ո՛ի՛ սոսա հաճոյն բարեբարուԹեանն բովանդակին պատշաճէ, և Թէ յաւէրտմբ այլ ևս գիՀերէ՛ի նոյն, ոչ ըստ Հարկի՝ այլ ըստ զիջանելոյ իրացն իցէ, որոյ չՀետ երԹալ պարտ է ուր տանիցն զմեզ և ոչ ուր Հրաւիրեն։ ՎՀանգի և զայնպիսիս առաջի առնեն մեզ, որք Թէ ոչ՛ի սպառ անօգուտք, սակայն և ոչ՛ի կարևորացն գոլով՝ քաղցրուԹեամբ իւիք գրգռեն զոգիս։ Ասացի արդ, զի այդպէս Հաճոյ է քեզ, յառաջ մատուսցուք զբանս, և զկարևորացն վՀարեալ ասել՝ զայնոցիկ Ճառեսցուք, որոց՝ զի զՀիմարիսն ասացից՝ ոչ ինչ կարևոր միուԹիւն է ընդ իրսն, այլ կցորդուԹիւն ևԹէ. և յորոց՛ի քննուԹիւն պարապեալ ուրուք՝ Թէպէտ և ոչ մեծ ինչ գործեսցէ, բայց և ոչ վայրապար վատնեսցէ զաշխատուԹիւն։

Ա՛յլ դու, ով մեծդ Ալբուկիւ Իբերացիս, բարեբարոյ վՀՃակեալ քննուԹեան և սիրող բարեբարուԹեանց, ոչ յագեսցիս երբէք նոցին գովուԹեամբք։ Այեսի զբաց ուրեք իբրև զքեզ մարդասէր և զոյգն իսկ երախտեաց մեծարող, և այնչափ առաւելեալ՛ի բարուԹեան՝ մինչև անձին Հանդիր որ ինչ այլում բարեգործին. և զի մի լիցի ումեք ընդ երախտիս իւր

սարջանալ՝ պատրաստ ես մնադիւբ ի հատուցումն փո-
խանակ ապաչնորհացդ ։ Այլ այնչափ հեռի գոս ի մտա-
պարծանէն , և այնչափ խնամոտ առ ի չծանրանա-
լոյ որոց բարերարեան , մինչ զի ոչ իբրև չնորհս՝ այլ
որպէս զհատուցումն վերահասիդ տամ ։ Այլ վասն այ-
նորիկ իսկ տակաւրեք վերագառնան առ քեզ տուեալդ
այդօրինակ , զի երախտագիտութիւն զհետ նոցա մնդի
յաձախ որոց չինդրեն զնա ։ Այլ զոր օրինակ փառք՝
փախստեից ի նոցանէ պնդազոյնս լինին հետամուտ ,
նոյնպէս և երախտեացն փոխարէն արգասիք՝ առատա-
պէս յորդին այնոցիկ՝ առ որս և ապերախտ լինել
մարթի է ։ Ընդ ինչ ի քո կողմանէ որ արդելուցու ըղ-
բարերարեան առ ի քէն մատչել միւսանգամ ի խնդիր
չնորհաց , և ոչ վերջացիս երբէք մեծամեծս ևս ընձե-
ռել յաձախութեամբ ընդ մռայլելոյն և ընդ ծածկե-
ցեալոյ ի լուսեան ։ Այլ լաւ և մեծանձն քան ի մտի
եդեալ երկայնամտիւ ապերախտին՝ մինչև ածիցէ զնա
յերախտագիտութիւն ։ Օ այդ փոյթ յանձին կալեալ
ոչ խաբեացիս երբէք ի խորհուրդս քո . զի առաքի-
նութիւն հոսկ ուրեմն նուաճեսցէ զախտս եթէ ոչ
շտապեսցիս առելութեամբ բերիլ առ նոսա ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Այն ևեթ տիրապէս հաձոյական քեզ թուի որպէս
ասացաւած իմն մեծավայելուչ՝ եթէ Աստծի է չաղ-
թիլ բարերարութեամբք . որ թէ չնմարտութեամբ
արդեօք իցէ ասացեալ , արժանապէս ընդ խնդրով ան-
կանի . զի այլազգ ամենևին քան զոր կարծեաղ իրքն
են ։ Աստղի ի միջնում առաքինութեան չիցէ առեղ և
վատութիւն թէ չաղթեացի ոք . միայն զի մի լցցի զէն
ընկեց՝ այլ քանացի լինել չաղթական . ի կատարումն
զեզեցիկ առաջադրութեանց՝ ոչ ամենեցուն նոյն զօ-
րութիւն է , նոյն կայ և նոյն բախտ՝ առանց որոց և
ամենաբարի խորհրդոյ կատարումն ոչ չաջողեսցէ .
գոլելն է միշտ կամքն հետամուտ ուղղութեանց թէ և
այլ ոք երագեալ չատաջեսցէ քան զնա . ոչ որպէս ի

Հանդիսի մրցանաց՝ արմատնեին իցէ քաջագունին նշանակ . նաև անդ իսկ բազում անգամ զակարագունին նախապատիւ եղիս դնել : Յորժամ այլ իւրաքանչիւր զպատրաստ պատշաճիդ ցանկայ իւրոյնմանն որպէս կարէն՝ Հատուցանել լնուլն , թէպէտ և միւն առատևեալ զօրութեամբ ձեռնհաս գոյի ի լրումն փափաքանաց սրբոյն , և ջանիկ նորա օժանդակեսցէ բախտն , սակայն ոչ ընդհատ լինչ ի նմանել իցէ և միւսն յօժարութեամբ կամացն , որ թէպէտ սակաւ յոյժ քան զոր էառն փոխարինեաց՝ կամ թէ քնաւ իսկ ոչ , այլ ցանկայ փոխարինել , և այնմ դէտահն ունի յամենայն զօրութենէ . նմանն է այնպիսին անկեալսին ի մարտի զէն ի ձեռին , զոր եհար և սպան թշնամին բայց ընկրկիլ ոչ կարաց : Ընդ լաւ չմարթէ երբեք յանձն առնուլ զպարտութիւնն զայն՝ զոր դուն ամենի համարիս , զի ոչ ընկճեսցի քնաւ և ոչ թիկնադարձոյց լինիցի , այլ միշտ յօրն վերջին կենաց իւրոց կացցէ կազմ և պատրաստ , և ի կայի իւրում անկցի՝ խոստովանեալ համարձակ զի բարիս մեծամեծս ընկալեալ և զգփոխարէնսն ցանկայ հատուցանել :

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

Ընկերամանացիւք արգելին յիւրեանս զընտմարսն և զկռփանարտ , վատութիւն համարեալ զպարտեցեալսն ի նոսա զանձնասպառս խոստովանութիւն : Որ յընձացս ասպարիզին ի նպատակ անդր յառաջեաց՝ երագութեամբ ոտիցն առաւելաւ քան զընձացակիցսն և ոչ սրաիւ : Խնդիրն գոտեկռիւ երիցս զգեառնեալ կորոյս զնրցանսին , այլ ոչ տեղի էտ : Ընդ զի ընակեմնացուոց իսկ մեծ այն էր՝ անյաղթս և անընդկունս գործել զքաղաքացիսն , ի բաց հրաժարեցուցին զնոսա յայնպիսի մրցանաց , յորս ոչ գատաւոր և ոչ կռուոյն ելք զյաղթողն ցուցանէին , այլ պարտեցելոցն բարբառ հրաժեշտի և տեղի տալոյ վատութեամբ յասպարիզին : Ընդ զոր նոքա քաղաքացեացն իւրեանց հոգացան՝ անհնկունս առնել զնոսա յամենայնի , առա-

քինութիւն և կամք բարեյօժար՝ զնոյն հայհոյեն ամենեցուն՝ զպարտեալն իսկ անյաղթս արարեալ և անընկճելիս հոգւով։ Այն իրի ոչ ոք զվաթսունամեայ ղերեքջարիւրս յաղթեալս ասիցէ, այլ անկեալս ի սրոց, և զՀռոմեացոցս ձերբակալ ի Կարքեդոնացւոց, այլ ոչ յաղթեալ. զնոյն պարտ է ասել և զամենեցուն՝ որք բուռն զօրութեամբ դժնդակ բախտին ընկճեալք՝ ոչ լքան սրտիւ։ Օ այս այսպէս է խմհալ և ի մըրցանս բարերարութեան. զի թէպէտ և երախտիս բազումս և մեծագոյնս ընկալցի ոք յաձախութեամբ՝ չիցէ յաղթեալ. թէ զերկուստեք բարերարութիւնս ինքնուրոյն կրնասցես՝ թերևս մին միւսումն յաղթեսցէ, բայց թէ զարերարողն և զարերարեալ ըստ յօժարութեան սրտից նոցա դիցես ի կշիռ, ոչ միւսին և ոչ միւսումն զյաղթութեանն տայցես մրցանակ։ Որպէս և ի սուսերամարտս պատահէ երբեմն զի միմին բազմադոյն առեալ վէրս սաստիկս, և միւսումն հարեալ թեթևագոյն, հաւասարք և անպարտելիք հաճարին և երկոքեանն, թէպէտ մին տկարագոյն քան զմիւսն թուեսցի։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Ձ ոք ասա՝ ի մրցանս բարերարութեան յաղթեալ ի յայլմէ ցորչափ պարտապան զանձն խոստովանի և ցանկայ հատուցանել փոխարէն. և զոր ոչն կարէ արդեամբք՝ հատուցանէ սրտիւ։ Ցորչափ կայ միայ յայդ խորհուրդս, ցորչափ հաստատուն ունի զկամսն, զերախտագիտութիւն սրտին յայտ առնէ և արտաքոյ. և զինչ պէտք իցեն ձերկուստեք զընծայիցն յաձախութիւն՝ ի թիւ արկանել. ՎՀեզ մարթ է բազում ինչ պարգևել, իսկ ինձ ընդունել միայն. քեզ ձեռնտու է բախտն, իսկ ինձ կամք բարեյօժար. և որպէս սպառազէնն մարտիկ՝ թէթևագէն կամ անգէն եղելումն՝ այնպէս և ես հաւասարիմ քեզ։ Ոչ ոք ուրեմն յաղթի յերախտեաց. զի ըստ ցանկութեան սրտին և ըստ յօժարութեան կամացն իցէ երախտագէտ։ Օ՛ի եթէ

ամենայն իրք ելին յաղթիլ երախտեաւք՝ չէր պարտ բա-
րիս ընդունել՝ ի հզօրագունից, որոց չէ մարթի փոխա-
րէնս առնել, յիշխանաց ասեմ, և՝ ի թագաւորաց,
զորս յայն մեծութիւն ամբարձ բախտն, զի բազում
ինչ կարեն առատաձեռնել, սակաւս յոյժ և անհատա-
սոյս պարգեւացն իւրեանց ընդունելով փոխարէնս։
Այլ և նոցա մարթի իցէ սպասս ծառայութեան հար-
կանել, և գերագոյնն այն նոցա իշխանութիւն՝ ի հա-
ճութենէ և՝ ի հպատակելոյ ստորակայիցն է։ Այլ ելն
և այնպիսիք ոմանք այնչափ գեր՝ ի վերոյք մարդկայ-
նոցս կրեց և յամենայն ցանկութեանց գերծք, զի և
բախան ինքնին գլխովին չկարէ առնել ինչ նոցա ընդդէմ։
Յաղթեացէ ինձ բարեբարութեամբ Աակրատ, յաղ-
թեացէ Պիտգինէս, որ ընդ մեծութիւն գանձուցն Աա-
կեդոնացւոց անց գնաց մերկ և անինչ՝ առ ոտն կոխելով
զարքունի ճոխութիւնս։ Ինքնին նա յայնժամ և անձին
և պլոց, որոց չէին խաւարեալ միտք՝ ի տեսութիւն
Հնդկաստանեան, երևեցաւ գեր՝ ի վերոյ այնմ որ զտիե-
զերս համօրէն նուաճեալ ունէր ընդ իւրև։ Ճոխա-
գոյն յոյժ և հզօրագոյն գտաւ քան զԱղեքսանդր, որ
տիեզերակալէրն յայնժամ. զի շատ ևս այն էր, զոր
կամէր առնուլ Պիտգինէս, քան զոր կարող էր տալ
Աղեքսանդր։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ա Հ ՈՉ ամենի իցէ յայնպիսեացն յաղթիլ. զի ոչ
ինչ պակաս իցէ յիս քաջութիւն եղեալ անխոցոտելի
թիկանց Հանդէս զնս գիմանալոյ. քանզի և ոչ ունիմ
չիցէ այրեցող՝ անբոցակէզ նիւթոց պատահիլ, և ոչ
երկաթ՝ ի հատու զօրութենէն թուլանայցէ այնու՝
զի տկարանայ հերձանել զանգծելին վէմ որձաքար և
զամենիտատիան՝ ի բնէ կարծրակուռ պնդութեամբ։
Օհնդին իմս և վասն երախտագիտ անձին. զի ոչ ամենի
ինչ իցէ նման թէ յաղթեացէ երախտեաւք այնոցիկ՝
որոց մեծութիւն բախտին և կամ առաքինութիւն
գերապանծ արգելուն առաջի նորա զամենայն ձանա-

պարհս փոխարինելոյ երախտեաց նոցա ։ Ի ծնողաց մերոց զրեթէ միշտ յաղթիսք բարերարութեամբք . զի ցորչափ կենդանի էին՝ ծանուցս զնոսա մեզ վարկանիմք , և չառնուամք ի միտ զերախտիս նոցա . և այն ինչ ի զարգանալ հասակին զգծնացեալք՝ սկսանիմք խելամուտ լինել , թէ վասն որոց առէաքն զնոսա՝ սիրել պարտիմք մանաւանդ , վասն խրատուցն ասեմ , և խոտութեանցն և ինամոտ զգուշութեանն ի վերայ խորհրդակորոյս մանկական հասակին , և ահա յափշտակին առ ի մէնջ ։ Վախտուց է կեալ ցայն վայր մինչ չև վայելեցուցեն իսկապէս յարգասիս արդեանց զուարճացն իւրեանց . այլք առ հասարակ զծանրութիւն և եթ բառնան զնոցա ։ Ոչայց չէ ինչ ամենի երախտեաք ի ծնողացն յաղթիլ . և ընդէր ընաւ իցէ այն ամենի ուր և յայլոց իսկ յաղթիմք առանց ամենայն ։ Վասն զի բազում այն է զի հաւատարիք և անհաւատարիք գտանիմք միանգամայն . հաւատարիք սրտիւ , որ միայն պահանջի ի բարերարութեան , և զոր միայն մարթի իցէ մեզ խոստանալ . իսկ և անհաւատարիք՝ բախտիւն , որ թէ արգելուցու զոք ի հատուցանելոյ զարիտուր երախտեացն , չէ պարտ նմա ամաչել իբրև զպարտեալ ։ Եւ ամենի ինչ է եթէ չժամանէ ոք , միայն զի ընդ անայլոյ ։ Հարկ է բազում անգամ զայլ և ս ինդրել չնորհս՝ չև առաջնոցն փոխարինեալ . և ոչ եթէ նահանջիմք ի ինդրելոյ և կամ ինդրելիք ամենայն , անկարողս տեսանելով զմեզ ի հատուցումն . քանզի ոչ մեր մեղք են թէ պակասիմք յերախտագիտութենէ , այլ զի այլ ինչ արտաքուստ խափան ընդ մէջ մտանէ ։ Ահա է եթէ մեք անպարտելիք իցեմք ոգւով և ոչ յաղթիցիմք վատութեամբ յորոց չենն ընդ մերում իշխանութեամբ ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Ալեքսանդր արքայ Մակեդոնացւոց պարծէր ստէպ իբրև ոչ յումեքէ յաղթեալ երախտեօք ։ Ասէն այն և գոռոզ ոչ ինչ համարէր զինքն Մակեդոնացին , և զՀոյնս , և զԱսիացիս , և զՊարսիկս , և զայլ ևս ազինս՝ զգինուորեալսն ընդ իւրև , և ոչ զոր նոցա օգնականու-

թեամբն ստացեալ ունէր զարքայութիւնն՝ ի ծագաց լուսակիզ մինչև յարեւմտեան ծովուն անդանօթի։ Օ այդ կարող էր պարծել Մակրաս, կարող էր և Պիղինէս, յորմէ նա ինքն արգարև յաղթեցաւ։ Օ՛ի ոչ աղէ փըթացեալն այն ամբարտաւանութեամբ՝ ի վեր քան զըմարդկայինս բնութիւն՝ յաղթեցաւ յաւուր յայնմիկ յորում ետես զայր ոք որում չկարէր պարզևել ինչ և ոչ բառնալ՝ ի նմանէ։

Ա՛ըքեզայոս ազգայ ազատեաց զՄակրատէս զալ առ ինքն. առ որ զայս ասէն տուեալ պատասխանի Մակրատայ. Օվն ինձ կամք երթալ առ նա, յորմէ ընկալեալ ինչ՝ ի պարգև՝ ոչ կարիցեմ զխոխարկենն հատուցանել նմա։ Ապա Մակրատայ յիշխանութեան իւրում էր նախ՝ չընդունել զպարգևսն, և երկրորդ՝ ինքն յառաջէր երախտաւոր լինել նմա, քանզի յաղաչանս նորա զիջեալ երթայր զայն ինչ առնելով նմա ընծայ՝ զոր Ա՛ըքեզայոսի չէր մարթ առնել Մակրատայ։ Ա՛ւ զինչ. ասկի և արծաթ տայր նմա Ա՛ըքեզայոս. սակայն զարհամարհանս այնոցիկ ընդունէր փոխարէն։ Ա՛րդեօք ապա չմարթէր Մակրատայ երախտահատոյց լինել Ա՛ըքեզայոսի. և զինչ կարէր ընդունել առ՝ ի նմանէ հաւասար տուեալոյն յիւրմէն, եթէ ցուցանէր նմա զայր որ զկենաց և զմահու ունէր զգիտութիւն, և զերկաքանչիւրոցն գիտէր քաջ զսահման։ Եթէ զմոգութեան՝ ի լոյս տուընդհան զթագաւորն՝ խորհրդազգած առնէր խորոյն բնութեան, որոց այնպէս տգիտանայր՝ մինչև յաւուր խաւարելոյ արեգականն փակել զաչքսն նախ և փաքրել զհերս որդւոյն իբրև յաւուր սգոյ և աղաւթից։ Ա՛րդիւք ինչ բարերարութիւնն էր եթէ զասասնեաւն ահիւ և զձակատուտ արտաքս ձգեալ քաջալերէր սրտապնդել ասելով. Ա՛ եթէ նուաղուն արեգական իցէ այդ, այլ երկուց լուսատուաց զուգընթացութիւն, զի լուսինն խոնարհագոյն քան զարեգականն գործելով պարունակ՝ զսկաւառակ իւր բոլորշի խափան ընդ մէջ արկեալ գողանայ զնա առ՝ի մէնջ, մերթ զդէմն ինչ զնորա մանն ծածկելով եթէ հաբևանցի և եթէ քերեալ անցանիցէ առ նովաւ, մերթ զառաւելագոյնն՝ եթէ մեծագոյն մասամբ իւրով պատահեսցէ նմա, և մերթ և՛ա՛ի սպառ ծածկէ զնա, եթէ

կչիռ ընդ մէջ անկցի արեգականն և երկրի ։ Այլ Հուպ ընդ Հուպ մեհենալ լուսատուացդ երագութեամբ իւրեանց ընդ այլ և այլ դիմս , անդրէն վերստին դառնայ երկիր ի լոյս տուընջեան . և այս օրինաք պահեսցին անսխալ ի դարս դարուց , և ըստ սահմանեալ և ըստ նշանակեալ աւուրցն արգելցի արեգականն անջրսկտութեամբ լուսոյն սիրել Համօրէն զձառագայթս իւր յերկիր ։ Այլ վայրկին մի , և ահա բարձցի անջրսկտեան , յայտնեսցի ծածկեալն և որպէս յառաջ վերբերեալ արձակեսցէ անարգել զձառագայթս իւր ։

Ի՛նձ գոյն ինչ Հատուցանէր Մոկրատ փոխարէնս Լաքեդայոսի եթէ ուսուցանէր նմա զօրինս Թագաւորելոյ . նա և այդ իսկ զի կարող լինէր պարգևել ինչ Մոկրատայ ոչ ապաքէն մեծ ինչ ընծրէք էին առ ի նմանէ ։ Ընդէր ապա զայն պատասխանի արար Մոկրատես ։ Լ՛այն զուարճախօս և Ձարտար ի ձևս բանից որովք վարէր յառնախ՝ ծաղր առնելով զամենեսեան մանաւանդ զմեծամեծս , լաւ Համարեցաւ զլաւ նալ զուարճաբանելով՝ քան գոռոզ ամբարտաւանութեամբ , և ասաց . Ձկամիմ ընդունել երախտիս ի նմանէ , որում ոչ կարեմ փոխարէնն Հատուցանել ։ Խելացայր արդեօք , զի մի բռնադատեսցի ընդունել զոր ոչն կամէր , երկեաւ մի գուցէ ընկալցի ինչ անվայել Մոկրատայ ։ Սրիցէ ոք . Մոռ չառնոյր , եթէ չկամէր ։ Այլ զրկէր ի վերայ իւր զԹագաւորն մեծամիտ՝ որ կամէր զի ամենայն պարգևք իւր յարգեսցին ։ Օ լա նալ ինչ արքայի և կամ մերժել և չառնուլ ի նմանէ՝ միօրինակ յարհամարհանս Համարեսցին նմա ոչ ինչ խորհելով ընդ այս և ընդ այն . և առն ամբարտաւանի դժոխքն են և թէ արհամարհեսցէ զնա քան թէ չերկիցէ ի նմանէ ։ Կամիցիս գիտել ստուգութեամբ թէ առ ինչ Հրաժարեցաւ Մոկրատ . զի չկամէր երթալ ի ծառայութիւն կամաւոր . նա՝ զորոյ չՀամաձակ ազատութիւնն չկարաց տանել քաղաքն ազատ ։

ԴԱՒԻԹ ԵՕԹՆԵՐԻՊԻ

Շ ԱՏ իսկ, որպէս կարծեմ, Հաւանեալք զայսմանէ թէ արդեօք ամօթ ինչ իցէ յաղթիլն երախտեօք. և որ զայդ ասէն՝ հարկ է թէ գիտիցէ մի ոչ ոք անձամբ անձին բարերարէ. ապա թէ ոչ՝ ո՞ ոք ոչ գիտէ մի չէ ամօթ յաղթիլն յանձնէ: Բայց առ ասմունս՝ ի Պօտիկ կեանց երկբայութիւն է և զայսմանէ թէ արդեօք մարթէ իցէ ուժիւք անձամբ անձին բարերարել, և թէ պարտակա՞ն իցէ երախտահատոյց լինել անձին իւրում: և պատճառք երկբայելոյ նոցա են բանքն յառաքեալք՝ ի բերանս ամենեցուն թէ Ընդհին իմում ընդորհասարտ եմ: և թէ Ողկաբեմ զանգատել զայլմէ բայց զանձնէս. Իսկ ինքնին ընդ անձին ոգորիմ. Ո՞վ իմ ինդրեցից յանձնէս. Բառեմ զանձն իմ, և ոչ այլ ևս բանք այսպիսիք. որովք իւրաքանչիւր ոք զանձնէ իբրև զայլմէ բարբառի: Իմէ մարթ է, ասասցէ ոք, ինասել անձին, ընդէր ոչ և բարերարել. և զարձեալ՝ որ ինչ արարեալ պիտի թէ համարիցէ յերախտիս, ընդէր ոչ նմին պէս համարիցի եթէ անձին իմում արարիցէ զայն. եթէ յայլմէ առեալ ինչ՝ երախտապարտ եի նմա, ընդէր յանձնէ ընկալեալ զնոյն՝ չիցեմ անձին երախտապարտ: Ընդ այսպիսեսին և ապաշնորհ գտայց առ իս՝ որ այնպէս ամօթալի է որպէս թէ ագահեսցի ոք անձին, կամ անգթացի խստութեամբ և կամ անխոյնի իցէ և թերահոգ: Ովսիկա զիւր իսկ մարմին վարեալ ձգեցեր ոք՝ ի պղծութիւն՝ թէպէտ զայլոյ միօրինակ չարահաճեալ: Իրաւամբք պարսաւի մարդկեցդն և շրջորիթ՝ զիւրապատրաստ՝ ի սուտահաստատս գործութիւնս այլոց. այլ ոչ ինչ ընդհատ պարսաւելի է և անձնահաճն և ինքնահաւան, և զի այսպէս ասացից, մարդկեցդն անձին: Իտեղիք են ախտք ոչ՝ ի ինասէն և ևթէ արտաքոյ՝ այլ և յորժամ նեղքոյ անձանց իցեն ինասակարք: Ո՞ այլ ոք առաւել զարմանալի քան զայր որ զիտիցէ անձին հրամայել և անձին իւրում իշխել: Դիւրագոյն է նուաճել զազգս խուժադուժս և ընդ-

կէցս՝ քան սանձ դնել Հոգւոյն և զանձն իւր նուաճել։ Պզատուն Հարցն ունի Սոկրատայ զի՝ ի նմանէ ուսաւ. իսկ Սոկրատ ընդէր չիցէ անձին իւրում Հարկաւոր, զի ինքնուսոյց գտաւ։ Լսեր Ա՞. Կատուին. Օ՞ր ինչ պակասի քեզ՝ յանձնէ քումմէ՝ ի փոխ առջիր. արդ Թէ մարթի է փոխ տալ անձին՝ ընդէր ոչ և պարգեւս։ Ի բազում ինչ դէպս յանձինս մեր բաժանիմք յաձախ. և ասեմք, Հոգ զիս խօսակից լինել ընդ անձին, և Թէ Հնազանդ զանձն կատարելոց։ Նա Թէ արդարացեալ էն բանդ, ապա զոր օրինակ զայրանայ ոք ընդ անձին, նոյնպէս և Հարցն ունել պարտի. որպէս նախատէն՝ նոյնպէս և գովեսցէ. և որպէս Հնազանդ կարէ անձին՝ նոյնպէս և օգտել։ Նչխրաւանքին և բարերարութեան Հակադրեալք էն իրերայ. արդ եԹէ մարթի իցէ ասել Թէ անիրաւեցաւ ոք անձին, ապա Թէ և բարեբարեաց։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՈՉ ոք անձին իւրում լիցի երբէք պարտապան, և երախտապարտ ոք ոչ է՝ մինչ չև իցէ նախ պարտապան։ Ուր չիք փոխատու՝ չիք և պարտապան. որպէս չիք այր առանց կնոջ և ոչ Հայր առանց որդւոյ։ ՆԹէ չէ որ տայ, զնարդ առնուցու ոք. ոչ տալ իցէ և ոչ առնուլ՝ յաջմէ՝ ի ձախն փոխանակել ինչ։ Օ՞ր օրինակ Թէպէտ և տեղափոխեալ չարժեսցէ ոք զնմանին իւր՝ չիցէ այնու բարձող և կրող անձին իւրոյ, և որ ջատագով կայ անձին՝ չիցէ ինքն իւր պաշտպան, և ոչ որպէս տեառն բարերարի և խնամակալուի կանգնեսցէ ինքն իւր արձան, և ոչ ախտացեալն Թէ իւրով խնամարկութեամբն առողջանայ՝ պահանջեսցէ յիւրմէ վարձս, նոյնպէս և յայս ամենայն դէպս յորս անձամբ անձին օգտեսցէ ոք՝ չիցէ ինքն իւր Հնարհատարս, զի չիք որում Հնարս մատուսցէ։ Այլ և Հաւանեցայք ասել Թէ բազբերարէ ինչ անձին, սակայն ոչ ապաքէն ընդ տալն և ընդունի. Թէ և Հաւանեցայք ասել Թէ ընդունի ինչ երախտիս յանձնէ, սակայն ոչ ապաքէն ընդ առնուլն

և Հատուցանէ ։ Պատանին , որպէս ասի , պարտուք Հատուցանին պարտք , և կեդծ մարդկին մինչ չև կրնքեալք՝ պատառին ։ Օ ի ոչ եթէ այլ ոք ոչ տայն և այլ ոչ առնու , այլ մի և նոյն երկոքեանն ։ Պարտք յորժամ ասին՝ միոյ առ այլ է խնամոյ . և զիարդ ասա բռնաւոր դակեսցի այն ՚ի միում՝ որ ընդ լինելն պարտաւոյն և արձակի ։ Օ որ օրինակ գնաց և բոլորակի ոչ վերջին կոչին է և ոչ ստորին՝ ոչ ծայր և ոչ կատարած , վասն զի ՚ի շարժման անդ փոխոխին կարգք , և յեանողքըն յառաջինն և խնարհեալքն վերբերին , և ամենայնն ընդ որ կայս և շարժեցեալն ՚ի նոյն դառնան , սոյնպէս իմն և զմարդոյ որ թէպէտ ՚ի բիւր դէմս կերպարանեսցի՝ սակայն մի և նոյն է ։ Պատահմունք արար զանձն , չունի բողոքել զումեքէ . կապեաց և եդ յայդ գերանս , չիցէ պարտաւոր վասն բռնաւորեանն . բարիս արար անձին իւրում , անդրէն Հատոյց բարեբարին ։

Այժմ քնութիւն կիսրատանէ , որպէս ասեն , և ոչ ինչ ։ զի անջատեալքն ՚ի նմանէ , առ նոյն ինքն առնեն դարձ . և չէ մարթ կոմնել իմիք , երբ չիք այլ տեղի ուր անկցի , այլ ուստի մեհենչացեալ վերադառնայ ՚ի նոյն ։ Օ ինչ նմանութիւն է , ասիցես , ընդ օրինակդ և ընդ առաքարկեալս իմոյդր . լուր ։ Համարեայ թէ ասէ բահտ գտար անձին . ոչ կոմնչին երախտիքն , այլ վայելէ յայն որ եան գնա . համարեայ թէ չիտիս ընդունել զիմոխարինն , այլ առ քեզ իսկ է այն մինչ չև փոխարինեալ ։ Նմարթ է քեզ կորուսանել ինչ . զի որ բառնի ՚ի քէն , անդրէն ՚ի քեզ դառնայ , յանձին քում առնէ շրջան . յառնուդ տաս , և ՚ի տադ առնուս ։

ԳԼՈՒԽ ԻՆԵԵՐՈՐԴ

Պարտ է , ասես , բարեբարել անձին , ապա և երախտաՀատոյց լինել ։ Նախ այն իսկ սուտ է , որում զՀետեւորդ ածես ՚ի վերայ ։ Օ ի ոչ ոք երախտիս առնէ անձին ; այլ Հպատակէ բնութեան իւրում որ զսէր անձին անկեաց ՚ի մարդումն , որով մեծասէս փոյթ է նմին խորհել ՚ի Հնաւանդարարայ և օգտակարարին զՀետ

կրթել։ Ա՝ ամն որոյ չկէ ոք առատաձեռն՝ զի պարգևէ ինչ անձին՝ և ոչ գթած՝ զի ներէ, և ոչ կարեկից՝ զի յաղէտս իւր գորովի։ Ա՝ը ինչ այլոյն արարեալ՝ առատաձեռնութիւն իցէ գթալիւն և ողորմածութիւն, ՚ի լինելն առ մեզ բերումն է բնութեան։ Խարերարութիւնն գործ կամառոր է. իսկ օգտել անձին՝ հարկաւոր։ Ա՝ըչափ առաւել բարերարէ ոք՝ այնչափ բազմերախտ համարեսցի. իսկ ո՞ ոք գովեցաւ զի պաշտպանեաց անձին, զի ապրեցոյց ՚ի ձեռաց առաջելոց։ Ա՝ը բարերարէ անձին, լինիցի և ասմնջական. և որ պարգևէ ինչ ինքեան, ապա և փոխ ևս տացէ։ Ա՝ՀԷ բարերարել կարէ ոք անձին, բարերարէ միշտ, բարերարէ անընդհատ, և ոչ կարասցէ գիտել զՀամար բարերարութեանց իւրոց։ Ա՝ՀԷ երբ և զիաթող երախտահատոյց լինիցի մինչ և ՚ի հատուցանելն անդ բարերարէ դարձեալ։ Օ՝ խաթդ կարասցէ ընտրել՝ երախտիս առնէ արդեօք ԷԹԷ երախտահատոյց լինի, որ զի ՚ի միում անձին գործին Հանցին։ Ա՝ղբեցուցեալ զանձն իմ ՚ի վտանգէ՝ Համարեաց ԹԷ բարերարեցի անձին. ապրեցուցանեմ միանգամ, այլ երախտիս առնեմ արդեօք ԷԹԷ երախտահատոյց լինիմ։ Ա՝ վերայ ամենայնի ացօցիկ՝ ԹԷպէտ և ներեցիկ առաջնոյ մասին առաջարկութեանդ ԹԷ բարերարել կարիցեմք անձանց, բայց չկարեմ ներել և այժմ զոր ՚ի վերայ ածես։ Օ՝ ի ԹԷ և բարիս ինչ արասցուք, չիցեմք պարտական. Էր վասն. զի ՚ի տալն և ընդունիմք։ Հարկ է ընդունել մեզ նախ երախտիս և ապա լինել երախտապարտ և Հուսկ ապա Հատուցանել. իսկ ուր ընդ տալն ընդունիմք առժամայն և զիսիարձին, չիցայ ինչ տեղի պարտականութեան։ Ա՝ը տայն՝ այլևս տայ, և որ պարտին՝ այլևս պարտի, և որ Հատուցանէն՝ այլևս Հատուցանէ. և այս ամենայն որ ՚ի մէջ երկուց վէճարին, ՚ի միում անձին լինել ոչ կարէն։

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

ԽՈՐԵՐԱԲՈՒԹԻՒՆ է չնորհել ինչ յօգուտ . իսկ չնորհելն սուինչանակ է : Եւ ասացէն յիմար կոչելոք զնա որ ասիցէ զանձնէ վաճառեալ ինչ անձին , զոմն զի վաճառումն է հրաժեշտ ի վաճառելոյն և յիրա- նանց նոցա , փոխանցելով զայնս յայլ ոք : Այդ ոչպէս ի վաճառելդ նոյնպէս և ի տալդ ինչ՝ բառնաս զայն ի քէն , և որ ինչ քո էր՝ այլում չնորհես ի վայելս : Այ- զի այս այսպէս , ոչ ոք ասպա բարերարել անձին զի չկա- րէ անձամբ անձին տալ ինչ : Այսպա Թէ ոչ՝ երկու հա- կառակք միաւորին ի մի , որպէս Թէ նոյն ինչ իցէ տալն և առնուլ , ուր բազում ինչ խոիր է ընդ տալն և ընդ առնուլ . և յիրաւի , քանզի դիմադրեալք են իրե- րաց ձայնքս . այլ Թէ բարերարէր ոք անձին իւրում՝ ոչ ինչ խոիր լինէր ընդ տալն և ընդ առնուլ :

Այժմ իսկ ասացի զի բառք ինչ սուինչանակք են , և այնպէս յերիւրեալք՝ միանգամ Թերեւս նշանակուԹեան նոցա համարձակ յանձինս ևէԹ սահմանել : Այղջայր եմ , բայց այլոց . զի ոչ ոք իցէ ինքն ինքեան եղբայր : Հաւա- սար եմ՝ յայտ է Թէ այլում . զի ո՞ ոք հաւասար ասիցէ ինքեան : Որ ինչ համեմատին՝ հարկ է Թէ ընդ այ- լում համեմատեսցի . և որ կցորդին՝ կցորդեսցի ընդ այլում : Նոյնպէս և որ տային՝ հարկ է զի այլում տացէ , ապա և որ բարերարէն՝ հարկ է զի այլում բարերա- րեսցէ : Այդ և ի ձայնէն է յայտնի , զի բարերարել ասէ , զոր առ այլս է խնդալ : Ո՛չ ի ոչ ոք անձին իւ- րում իցէ բարերար , որպէս և ոչ օգնական և կամ կռ- սակից : Նոյնագոյն և սմարթ է յայտնաբանել զայս և բազմապատիկ օրինակօք ցուցանել զի և բարերա- րութիւնն յայնոց հանդարի է որք առանց այլոց ոչ վնա- րեսցին : Այն և այլ ինչ իրք , Թէպէտ և հաւասար յոյժ և գեղեցիկք և մեծի առաքինուԹեան գործք , բայց Թէ չիցէ ոք այլ՝ ի միոյ միայնոյ ոչ վնարեսցին : ՀաւատարմուԹիւն գովել և պատճի ի կարգս մե- ծագոյն առաքինուԹեանց ազգի մարդկութեանս , այլ ո՛լաւ երբեք հաւատարիմ լեալ ուրուք առ անձն իւր :

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱՍՏՑՈՒՔ արդ յերկրորդ մասն առաջարկու-
թեանդ ։ Որ երախտահատոյցն լինի՝ հարկ է զի ծա-
խեսցէ ինչ յանձնէ , որպէս և որ զխոխն հատուցա-
նէ . բայց որ անձին իւրում լինի երախտահատոյց՝
չծախէ ինչ , որպէս և ոչ շահի ինչ որ յանձնէ իւրմէ
ընդունի երախտիս ։ Խարեբարութիւնն և երախտա-
գիտութիւն ՚ի միոյ առ այլ փոխանակաւ պարտին
անցանել , իսկ ՚ի միում անձին այս փոխանակութիւն
ոչ է ։ Այլ որ երախտահատոյցն լինի , փոխարէն
օգուտ այնմ՝ յորմէ շահեցաւ ինչ . իսկ որ անձին հա-
տուցանել զերախտիս , ոմո՞ւմ օգտիցէ՝ բայց անձին ։ Այ-
ո՞ւ է որ ոչ համարեսցի այլոք զերախտիս և այլոք զե-
րախտեացն հատուցումն լեալ ։ Որ առ ինքն երախ-
տագէտ լինի՝ անձին իւրում օգուտ . և ո՞ յապերախ-
տից չկամիցի առնել զայդ , մանաւանդ ո՞ չ գոսա ա-
պերախտ՝ առ ՚ի առնել զայդ ։ Այլ ասիցես . Լինի
օրէն իցէ շնորհս ունել անձանց , օրէն իցէ և երախ-
տահատոյց լինել ։ Այդ ասեմք . Շնորհ ունիմ անձին
զի ոչ հաձեցաւ առնուլ զնա ինձ ՚ի հրուժիւն . զի
ընդ այնմ չէզի ինչ գաղն ընկերութեան ։ — Օ այդ
՚ի գոլութիւն ասեմք անձանց . և հաձեալ ընդ գործս
մեր՝ շնորհակալեաց իմն վարիմք բանիւք պիտակաբար ։
Խարեբարութիւն այն է՝ զոր արարեալ մարթի է մէկ
չընդունիցիմք զխոխարէնն . իսկ որ անձին բարերարէ ,
վասն չընդունել զխոխարէնն , ապա ուրեմն ոչ է բա-
րերարութիւն ։ Ասոյց ասել զի ոչ ՚ի նմին ժամու յո-
րում ընդունի զբարերարութիւն՝ և զխոխարէնն
հատուցանիցէ ։ Որ բարերարէն՝ այսմ առաւելապէս
պարտի զգուշանալ , զի առ ՚ի օգտել այլում՝ մոռասցի
զանձին օգուտ . և զոր այլում տայ , նուազեսցի այն
յիւրմէ . այլ որ անձին իւրում բարերարի՝ վերջացեալ
է յայցեանէ ։ Խարեբարութիւնն զօգ ինն է ընկերա-
կան , զոմն սիրելի ընծայեցուցանէ և զայլ ոմն պարտա-
կան . իսկ բարերարէն անձին անմոռն է յայցեանէ .
ոչ զոք առնէ սիրելի և ոչ զոք պարտական և ոչ ումեք

տայ յոյս ասելոյ . Պաշտելի է այլն , բարեբարեաց գնա՝ բարեբարեացէ և ինձ : Խարեբարութիւն է զոր ոչ վասն իւր ինչ առնէ ոք , այլ վասն այնորիկ որում բա- րեբարէ . իսկ որ բարեբարէ անձին՝ բարեբարէ վասն իւր , ապա ոչ է բարեբարութիւն :

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍՆԵՐՈՐԴ

Լ՝ԱՆՑԱ աստանօր թուեցայց քեզ արդեօք իբրև ոչ կացեալ ի բանին խնամ զոր ի սկզբանէ խոստացայ , և կարծիցես զիս զարտուղի անկեալ ի կարևորացն և յօգտակարացդ և մնալաստակ լեալ պարզմտութեամբ : Լ՝ԱՒ կաց ինձ և ստուգագոյնս ասացես զայդ՝ յոր ժամ ի բան իսկ ի խորսն առեալ մուծիլ զքեզ , յո- րոց թէ ձողայրեացիս՝ ոչ ինչ այլ շահ իցէ քո բայց զի զերծար ի դժուարութեանց անտի՝ յորս մարթի իսկ էր չլինել բնաւ միջամուխ : Օ ի զինչ օգուտ իցէ ար- դարև հինհուն ի հինհուն յանելոլ , առ ի լուծանելոյ զայն ապա : Լ՝ԱՒ զոր օրինակ առ ի զբօսանս և ի խաղ գործին երբեմն հանգոյցք ձարտարք՝ անհմուտ եղելոյն դժուարալուծանելիք , այլ որ գործեացն զայնոսիկ՝ հեշտեաւ և անաչխատ լուծանէ՝ գիտելով զոլորսն մա- նուածոյս , որք և այնու զուարճալիք էն զի սրէն ըզ- հանձար և յանելուն զձարտարութիւն մնաց , նոյն- պէս և այսպիսի նենգութարիք և խորամանկեալ բանք զարթուցանեն զմիտս և զանհոգութիւն և զվճռբու- թիւն հոգւոյն ի բաց փարատեն , որում մերթ դաշտ դիւրագնալի պարտ է բանալ առաջի , և մերթ ապա- փայս դժուարինս , ընդ որս սողոսկեալ հօրդեսցէ իւր շաւիղ զգուշութեամբ :

Լ՝ԶԳ որք ասենն թէ չիք որ ապերախտ , զայս օրի- նակ պատճառաբանեն . բարեբարութիւնն օգտակար ինչ է . իսկ առն չարի , որպէս ասեն Աստիկեանք , օգ- տել ոչ է մարթի , ապա չընդունի զբարեբարութիւն . նմին իրի և ոչ ապերախտ իցէ : Վարձեալ՝ բարերա- րութիւնն բարի ինչ է և գովելի . իսկ այր չար , քանզի բարւոյ և գովելոյ ընդունակ ոչ է՝ ապա և ոչ բարե-

բարութեան . և եթէ չէ ընդունակ բարեբարութեան , ապա և ոչ պարտական հատուցանելոյ . նմին իրի և ոչ ապերախտ : Վասն զի , որպէս ասէրդ , այր բարի զանհնարին ինչ ուղղութեամբ գործէ . և որ զանհնարին գործէ ուղղութեամբ , չկարէ լինել ապերախտ : Վասն որոյ Ճանաչէ զիւր բարիս , իսկ չարն չընդունի զնաւ բարիս . ապա՝ ոչ բարին երբէք ապերախտ գտանի , և ոչ չարն . և լինի ապերախտութիւնն անուն լոկ զիրկ չարդեանց :

Արդարև միակ բարի առ մեզ առաքինութիւնն է զոր այր չար ոչ կարէ ընդունել . զի թէ ընդունակ էր առաքինութեան՝ ոչ ևս էր չար : Իսկ յորչափ չար է , անընդունակ է բարերարութեան . վասն զի բարին և չարն դիմահարապար են և չէ մարթի միաբանել նոցա ՚ի միասի . վասն որոյ ոչ օգտել չարին . զի որ զինչ և առ նա հասանիցէ՝ ապականել , չարաչար վնասել նովաւ : Օ որ օրինակ ստամբ ախտացեալ և խանգարեալ մաղձայոյզ , զանհնարն կերակուր զոր առնու ՚ի մունդ՝ յեղափոխի ՚ի հիւթ ախտարծարծ , սոխակս և անձն խառնեալ ախտիւք զոր ինչ և ընկալցի՝ եղիցի նմա այն ՚ի բեռն վհատակար և ՚ի պատճառս թշուառութեանց : Այնմ իրի բարեբաստիկն և Ճոխիկ մեծատուս հասանել տագնապ , և որչափ յաւելուն խորամուխ լինել ՚ի մեծութիւնս յորս որպէս ՚ի ծովս պղեհոծին , նոյնչափ նուազեալ գտանին գանձիւս : Ձիւք ինչ ապա զոր ընկալեալ առն չարի և օգտեցի՝ մնասանդ թէ ոչ վնասեցի նովաւ : Օ ի զանհնարն ինչ որ և պատահեցի նոցա , յիւրեանց բնութիւն չեզաշրջէն . և գեղեցկագոյնք յիրաց՝ որք լաւագունից տուեալք օգտակարք լինէին՝ մնչհաւերք են նոցա . նմին իրի բարեբարել և ոչ կարեն պղծել . զի զոր ոչն ունի զի պիղծ տալ կարացել . այլ վասն իսկ պահասեն ՚ի նմա և կարճ բարեբարելոյ :

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այլ Թէպէտ այսոքիկ այսպէս՝ սակայն մարթի է չարչին ընդունել պարգեւս իմն համանմանս երախտեաց. որոց ոչ արարեալ փոխարէնս, ապերախտ գտանի: Այ բարեաց ևն որ հոգւոյ են, են որ մարմնոյ և են որ բախտի: Այ բարեաց հոգւոյ անմահն են առհասարակ յիմարքն և չարք. և հաղորդին այլոցն զորս ընդունել կարեն, և ընդ որոց պարտին երախտահատոյց լինել. և որ չլինի, ապերախտ է: Այս ոչ միշ ևէթ վարդապետութիւն է, այլ և Ջեմականք ինքնին որք ընդարձակեալ լայնեն զսահմանս մարդկայնոյ երջանկութեան, ասեն զարս ընդունական գոլ մնանուցս երախտեաց, որոց որ ոչն լինի երախտահատոյց՝ ապերախտ է:

Այդ Թէպէտ և ոչ Թուիցի միշ բարերարութիւն որ ինչ ոչ ի լաւութիւն օժանդակ հոգւոյն, սակայն և ոչ ժխտեմք Թէ առաւելութիւնք իմն են ցանկալիք. զոր օրինակ ինչք, հանդերձք, բարձ և պատիւ և կեանք՝ զորս մարթէ առն չարի տալ բարւոյն և առնուլ ի նմանէ, որոց եթէ չլինիցի երախտահատոյց, զապերախտի ընկալցի զանուն: Այայց, ասիցէ որ արդեօք, զիարդ հանարեալի որ ապերախտ ի չհատուցանել նորա զայն ինչ զոր ուրանաս գոլ բարերարութիւն: — Այն ինչ ինչ որք Թէպէտ չիցեն իսկապէս բարերարութիւնք, բայց վասն նմանութեանն նովին կոչմամբ յորջորջին: Այստ այսմ՝ տուի՝ կոչեմք և զարճաԹիւն և զսակեղէնս: և անուսումն՝ ոչ զտիմարն առհասարակ, այլ զվերջացեալն ի բարձրագոյն գոլութեանց. որպէս և որ զաղքատն տեսանիցէ պատառատուն զգեստուք, միշ զմին ասէ տեսեալ: Այոյնպէս խնս և զայնոցիկ որք Թէպէտ չեն իսկապէս բարերարութիւնք, բայց ունին զկերպարանս բարերարութեան: Այսակ եթէ ասիցէ ոք՝ Թէ որպէս երախտիքն զկերպարանս

1 Այսոքին ունի սոս pyxis ‡Էոխս որ յատկապէս նշանակէ փոս կամ փէչ փօսախ առեալ ի յատնէն πυξίς որ փօսախ ի միջս լսի:

ևեթ ունին զբարեբարութեան , նոյնպէս և ապե-
բահան կեղծաւորեօք ևեթ լինի ապերահատ և ոչ խոհա-
պէս , խաբէ . վասն զի որ ասայն և որ ընդունի՝ բարե-
բարութիւնս կոչէ զայնոսիկ . ապա և որ կեղծաւոր-
նեալ երախտեացն նենգիցէ՝ այնպէս ապերահատ հա-
մարի՝ որպէս զեզատուն որ զիմքրադէղն իբրև մահա-
դեղ խառնեալ մատուսցէ :

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԱԻԳՆԱԳՈՑՆ ևս խօսի Կղէմանթէս . Ամէն և չէզէ , ասէ , բարեբարութիւն զոր ընկալաւն ; բայց ինքն ա-
պերահատ է . զի թէ և խոհապէս զերախտին ընդու-
նէը , չէը լինելոց երախտահատոյց : Ոչ այսմ և ա-
ւազակ մինչ չև շաղախեալ զձեռս իւր յարիւն՝ ուա-
զակ է . զի մնհայցու զինուք զինեալ պատրաստ կայ ՚ի
կողոպտել և ՚ի սպանանել : Ընօքհնութիւն ՚ի գործ
եկեալ՝ ոչ եթէ սկսանի , այլ կատարի և ՚ի չայտ գայ :
Չէը բարեբարութիւն զոր էառն , բայց կոչէը : Ամ-
բարիշտն սեղանակալուտք վրէժս լուծանէն , թէ-
պէտ և ոչ ուրուք ՚ի նոցանէ ձեռն մինչ ՚ի դիս անդր
հասանիցէ : Ոսկ պիծդ , ասես , ապերահատ լինիցի որ
առ չարս , եթէ չէ նոցա մարթի բարեբարել ումեք :
Ասյնու զի ընդունի ՚ի նոսանէ ինչ մի չայնպիսեաց որք
առ սիտաւոր ՚ի բարեբարութեանց են համարի . զորս
թէ առ բարիս ունին չարք , ինքն ևս այնպիսի ինչ իրօք
պարտի լինել երախտահատոյց . և որպիսի ինչ և իցեն
այնոքիկ , հատուցանել որպէս բարիս՝ զոր ընկալաւն
որպէս բարիս : Ո՛իբրնսակ պատրապան համարեսցի
որ այլում , թէպէտ զրամս ոսկիս առնուցու ՚ի փոխ ,
թէպէտ և կաշէսյս , որք զզրաշին բերելով զգետու-
թեան , որպէս առ Ա սկեղեմացիան էր , իբրև զզրամն
յարգելին : Ոյսիսեօք եղէր պարտապան , նոսիկնք և
հատուսցես :

ԳԼՈՒԽ ՀԱԳԵՑԱՍԱՆԵՐՈՐԴ

Լսկ թէ ցինչ իսկապէս բարեբարութիւնն իցէ, կամ թէ արժան իցէ զայդ անուն մեծ և փառաւոր նուաստացուցանել՝ յայտնիսիս պատշաճեցուցանելով յանարգս և՝ ի ցածունս, ոչ է ձեզ քննել. այլոց թողջիք խնդրել զայդ ՀՀմարտութիւն, և դուք չատասջիք զորոց զՀՀմարտութեան կերպարանն բերիցեն երթալ զՀետ, և զոր առաքինութեան անուանք յորջորջէք, որ ցինչ և իցէ այն, զնա պաշտեսջիք։ Պրսիկս չէք որ ապերախտ ըստ ձեզ, նոյնպէս և՝ ի հակառակէն ամենեքեան են ապերախտք. զի որպէս ասէքդ՝ ամենայն անմիտք չար են, և թէ՝ որ միոյ իւիք սիրատեայ՝ համարէն ամենայն սիրք բուհնդակին՝ ի նմա. և զի ամենեքեան անմիտք են և չարք, ապա և ապերախտք։

— Աչ ցինչ. միթէ չիցէ. ոչ ահա պարսաւի յամենատ ազգ մարդկան. ոչ հասարակաց է սրտունդ՝ ի բերանս ամենեցուն զի՝ ի կորուստ զնան բարեբարութիւնք, և զի սակաւ յոյժ են որ ոչ չարահատոյց լինցին բարեբարացն իւրեանց։ Աչ մի համարիցիս թէ մեր միայնոյ բողոքքս իցէ, որ զի չարս համարիմք զամենեսեան և վատթարս՝ որք արատաքս քան զկանայն երանեն ուղղութեան։ Հատասիկ ձայն իմն, չգիտեմ ո՞ր, ոչ յիմաստասիրացն տաճարէ հնչեցեալ, այլ յամբոխէ բազմութեան՝ ի դատապարտութիւն բերի ազգայ և ժողովրդոց.

. . . Ոչ հիբրն յիւրմէ հիբրինակութենն անկասկած
Աչ ոչ աներ՝ ի փեսայէն. սէր յերջորդ նուազեաց,
Աչ ամուսնոյն իւր զարանի, և առնէն կին՝ ի կորուստ։

Ա տաթարագոյն և ժամանակս է. բարեբարութիւնք՝ ի չարագործութիւնս փոխեցան, և ոչ ինոյն չարիւն այնոցիկ, այլ վասն պարտ էր հեղուլ զարիւն։ Ի սուր և՝ ի Թոյն հետանուտ լինիմք բարեբարութեանց. և

իշխանութիւն մեծ Համարեալ է և փառք՝ ձեռս Համբառանել ընդդէմ Հայրենեաց, և գաւազանօք՝ նորա զնա Հարկանել առ՝ի մահ։ Որ ոչ գեր՝ի վերոյ գլեալ Հայր կայ Հասարակապետութեան՝ յեռանեալ Համարի զանձն և նուաստացեալ։ Օ՞րթ՝ի նմանիլ առեալ ընդդէմ նորա մղել՝ի մարտ. և այս առ զօրսն քաջալերքն են սպարապետի. Արարեալք ընդդէմ կանգնց և ընդդէմ որդւոց ձերոց. զնո՝ի ձեռին յարձակեցարուք և Հարեք զառնս ձեր զազգինս և զձերսփս։ Արիք երբեմն և եկելոյն իսկ՝ի յաղթանակել՝ ձեր մարթ առանց Հրամանի ծերակուտին՝ի քաղաքն մտանել, և որոց յաղթական բանակաւն դարձեալ գայիս՝ արտաքոյ պարսպացն էր տեղի և ատեան, արդ՝ի կոտաքած քաղաքացւոյն մղեալ և ընտանի արեամբ չաղախեալ դրօշոք պարզելովք՝ի քաղաքն մտանեք. Թող՝ի տեսիլ մարտացու զինուցն և նշանաց լեալ հեծեծեցէ աղաւաղութիւն, և յաղթականն և խաղաղարար ազգաց ժողովուրդ՝ ձիդ՝ի բաց վանեալ յիւրմէ զպատերազմնէն և փարատեալ զամենայն երկիւղ, յիւր պարիսպն նստիցի պաշարեալ և յիւրոց արծուեացն երկիւղ ահաբեկ։

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Պերսէս է Կորիռան, որ անագան ուրեմն սորջացեալ ընդ չարիս խըր և զգծոացեալ՝ի բարեպաշտութիւն, ՝ի բաց էդ զգէնան, այլ՝ի խոան կոտրածի Համազգեաց։ Պզեբախտ է Կատիլինա, զրամ դպրն յոյժ Թուի նաւաձել զՀայրենիս, զի տապալել և խնդրէ զայն և ասպատակաւորս՝ի վերայ նորա չարուցանել զիշաղանդս Աղբրոգաց, և յայմ կողմանէ Պլսկան լերանց հրաւիրել զՀնամիս զի եկեալ յագեցուցեն զՀռոցեալ և զընդաբոյս տիտղիհնս իւրեանց, և զզօրավարս Հռոմայեցիս գենուլ՝ի սպանդ՝ ցանկացեալ՝ի վաղուց՝ ի վերոյ գերեզմանացն Վաղ-

1 Ի հիւպատոսական և յիշխանական գաւազանն ակնարկէ բանն։

զնայցոց ։ Լ՚պերախտ է Կ. Պարիոս, որ ՚ի սինքղոլ զնուղուլթենէ ամբարձեալ ՚ի հիւպատոսուլթիւն, եթէ ոչ զդիակունս Հռովմայեցւոց հաւասարեր կատարելոյն Վիքթորացոց, եթէ ոչ ինքնին տայր նշան, մանաւանդ եթէ ոչ ինքնին լնէր ՚ի նշան քաղաքական սպանդիցն և կոտորածի, չհամարեր փոխեալ զսխտ իւր և յատաջինն անդրէն հաստատեալ մեծուլթիւն ։ Լ՚պերախտ է Պղղա, որ ծանուցնս քան զվտանգսն մնացոյց դեռս յաղէտս հայրենեաց, որ Լ՚ըրենատեան ամրոցէն մինչև ցդուռն Կոլինեան Հապադեօք մարդկեղէն արեան հորդեալ Հանապարհ, այլ ինն մարտ և այլ կոտորած արար ՚ի քաղաքին, լեգէոնս կրկին յետ յաղթուլթեանն, որ անագորոյն մնաց է, և ընդդէմ դաշանցն և երդմանն՝ որ ամբաստուլթեան է, յանկեան ուրեք փողոտեալ, և հնաբեցաւ զտպագրուլթիւն . ոչ անմահ աստուածք, զայր Հռովմայեցի որ ոք սպանանէր՝ վարձս առնոյր արծաթոյ և ազատուլթիւն ՚ի պատժոյ, գուցէ արդեօք և զդիակ քաղաքական ։ Լ՚պերախտ է Կն. Պանիկոս, որ ընդ երիցս հիւպատոսուլթեանն, և ընդ երիցս յաղթանակին, և ընդ բազմապատիկ իշխանուլթեանցն զորս յանտիական հասակին մեծաւ մասամբ կալեալ էր, զայս փոխարէն հատոյց հասարակապետուլթեան՝ զի և զայլս իշխանակից իւր առեալ եմոյծ ՚ի ժառանգուլթիւն նորին . որպէս եթէ նուազ ինչ առելի լնէր իշխանուլթիւն իւր անիրաւ՝ եթէ բազումք մտանէին յիրաւունս այնորիկ որ ոչ ունէր անկն էր ։ Տարօրէն իշխանուլթեանց զակատեալ զհետ, բաշխս արարեալ գառաւաց՝ զի զոր կամէրն յայնցանէ պահեսցէ անձին, և յեռապետս զհասարակապետուլթիւնն բաժանեալ, այնպէս զի զկրկին մասնիւն յինքն կալցի, յայն տեղի հասոյց զժողովուրդն Հռովմէական՝ զի ծառայուլթեամբ ևեթ ապրել կարասցէ ։

Լ՚պերախտ է և ասոնն յաղթական Պոմպէի որ ՚ի Պաղդիոյ և ՚ի Պոմպանիոյ ած ձգեաց զպատերազմն մինչ ՚ի վերայ քաղաքին Հռովմայ, և փաղաքուշն այն կուսակից ժողովրդեան ՚ի Պլանինեան կրկիսին եհար բանակ մնատպոյն և ս քան զՊոպսենայն ։ Ել արդարև զեղծաւ յաղթուլթեամբն, և ոչ յանչախս անդթա-

ցաւ . այլ զոր ասէրն ստէպ՝ ելից և արգելանք՝ ոչ զոք սպանեալ բայց զդիմակացս զինուք : Այլ զինչ այն իցէ , Թէպէտ յորդագոյն արեանց Ճապաղեաք արբուցին պյլք զառւսերս իւրեանց , բայց յապեալք ուր ուրեմն՝ ի բաց ընկեցին . իսկ սուր վաղագոյն ամիսս ետ զառնի՝ այլ ոչ երբեք ի բաց եդ : Պղերախտ է և Ճնոտիսս առ իշխանապետ իւր , զոր որպէս իրաւանքն եցոյց սպանեալ , և զապանդոյն նորա կացոյց ի վերայ գառւսոյց և իշխանութեանց . և զհայրենիս զհիգս տեսին տարագրութեամբք , ասպատակութեամբք և բռնութեան կռուոք , ի լուսին չարեաց նորա՝ ընդ օտարազգւոյ արկ ընդ իշխանութեանէ . զի որ Պքսպեցւոց , Ճողացւոց և այլոց ևս մեծապայծառ քաղաքաց չնորհեալ էր զիւրաքանչիւր իրաւունս ազատս և ապահարկս զնոսա կացուցեալ , ինքն նեղբինեաց եկաց հարկատու :

ԴԱՒԻԹ ԵՕԹՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

ՊՅՈՒՐՔ ոչ բաւեցան ի թուել զապերախտս առնեացն ինչ ի սպառսպուռ կործանումն հայրենեաց : Նշմարիս յանչափս բերկրիմ եթէ առնուա՛ց ցուցանել եթէ և Ճասարակապետութիւնն ինքնին պրպտել և զչար անիրաւեալ ապերախտութեամբ առւրս պրպտն և ջերմ պաշտօնատարս իւր , ոչ ընդհատ ինչ քան զայլս ինքն յանցուցեալ ապերախտութեամբ : Ցարաքերեաց զնաւիրեան , մերժեաց զԱկիպիոն , արտաքսման արար զԱկիպեան յետ մահուն Պատիլինեայ , կործանեաց զառնն և յաւար մատնեաց զինչս նորա . և զոր ինչ գործէլոց էր Պատիլինս թէ յաղթէր՝ գործեաց ինքնին : Ճառւտիղիս զվարձս անմտութեան Վիբոյ՝ ընկալաւ ի խորշ ինչ Պչոյ . Պատուիլի Ժողովրդն Ճռովմայ չետ զպատառութիւն , և զհիւպատութիւն զլացաւ ի սպառ : Պղերախտք եմք առհասարակ : Այլ իւրաքանչիւր յանձն իւր լիցի խորհեալ : չէք գ որ ոչ զանգատ կացի զապերախտելոյ ուրուք : Ակ արդ անհնարիլ էր զանգատել ամենեցուն՝ եթէ ոչ ամենեքեան արժանի գանգատանաց էին . ապա

ուրեմն ամենեքին էն ապերախտք : Կ՚ես միթէ ապերախտք ևեթ . այլ և ցանկասէրք առ հասարակ , զանազանք և վատասիրտք , նա այնոքիկ առաւել ոչք քան զասիրտքն Թուխն : Յաւել Թէ և փառասէրք առ հասարակ և ամբարիշտք ամենեքեան : Կ՚ասէ միւսն քեզ զայրանալ . ներեսջիր բոլորեցուն զի չհանդուրժեալ էն առ հասարակ : Ցկամիմ յանատոյգս ղբեզ վարանեցուս ցանել եթէ ասացից . Ցես քանի ապերախտ է պատանեկութիւն : Ո՞ոք այնպես առաքինի՝ զի ոչ ցանկասցի օրհասի հօր իւրոյ . աջնջասի բարեկամ՝ որ ոչ այմ սպասիցէ . աջնջասի բարեպաշտ՝ որ ոչ զայն զմտաւ ածիցէ : Ո՞ոք ընդ ամենաբարւոյ ամենայնի երկիցէ ընդ մահ , և ոչ զառ ի նմանէ շահն հաշուի . ո՞ոք , աղէ ասա , պաշտպանեալ ի գատաստանի և ոչ ընդ ելանելն յատենէ՝ զայնքանոյ բարերարութեանն մոռասցի զյիշատակ . Նա և այս վկայեալ է՝ Թէ չիք ոք որ մեռանիցի անտրտունջ . չիք որ համարձակեսցի ասել յաւուրն յետնում

Կէցի զաղղին լըցեալ սահման .

չիք ոք որ անդիմադարձ և առանց յոչուց հանելոյ ելանէ ի կենաց : Կ՚ասէ և այդ ապերախտութիւն է ոչ շատանալ անցելոյն ժամանակաւ : Ի համար արկեալ զաւուրսդ՝ սակաւք Թուեսցին քեզ միշտ . խորհեաց զի ծայրագոյն բարին ոչ ժամանակաւ է , այլ Թէ բարւոք վարեսցիս նոսա՝ արքան և իցէ : Ի յապաղելոյ աւուր մահուան չիք ինչ օգուտ առ երջանկութիւն , զի ի յաւելն՝ ոչ երանագոյն այլ երկարագոյն լիցին կեանք : Ո՞չ լաւ ևս է՝ ընդհակառակ սրտիւ ընդ ընկալեալ վայելս հեշտալոյս , ոչ զայլոյն հաշուել զամն , այլ զիւրն յարգել երախտագիտութեամբ , և շահեցուցանել զայնոսիկ : Ո՞չ այմ արժանի համարեցաւ զիս աստուած . շատ է և այս : Կ՚ելնի ինչ կարեր ընդհել , բայց և այս իսկ բարերարութիւն է : Կ՚երախտագիտք լիցուք աստուածոյ և մարդկան և ամենեցուն՝ որ միանգամ ընդհելոյն ինչ մեզ . երախտագիտք և առ այնոսիկ՝ որք մերայնոյն եւտուն ինչ :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ՅԱՅՏ ԱՍԻՑԷ , ասիցես , պարտս ինձ անսահման՝ ի վերայ դնես յասելդ և մերայնոց . զիր ապա չափ և սահման , Որ բարերարէ , ասես , որդւոյն՝ բարերարէ և Հօրն : Այսր գան հարցից Թէ ուստի սկսեալ , և ուր յանգիցի . երկրորդ և զայն յայտնաբանեսցես ինձ , զի նոյն բարերարութիւն որ առ Հայրն բերի , բերիցի և առ եղբայրն և առ Հօրեղբայրդ և առ Հաւն և առ կին և առ աներ : Այսա ինձ . ուր գնայ առիւ , ցո՛ր վայր զարեւտակացոյն կարդ յառաջ ձգեցից : — Այնժէ զանդաստան քո վարեցից , երախտիս քեզ առնեմ , և եթէ ըզտուն քո հրդեհեալ շիջուցից , կամ զգեմ կալայց՝ զի մի կործանեսցի , ոչ ապաքէն լիցին ինձ երախտապարտ : Այնժէ զծառայ քո ապրեցուցից , պարտական գքեզ կացուցանեմ . և եթէ զորդիդ քո ապրեցուցից , չիցես ինձ երախտապարտ :

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ՅԱՆԱՆԳԻՏ էն , ասես , օրինակիդ . զի որ վարէ զանդաստանն իմ , ոչ անդաստանին առնէ երախտիս՝ այլ ինձ , և որ Հաստատէ զառունն իմ՝ զի մի անկցի , ինձ բարերարէ . զի ինքն տունն անզգայ է : Օ իս ինքն կալցի շնորհապարտ , զի զայլ որ չկարէ ունել : Այս զի և որ վարէ զանդս իմ , ոչ զանդսն ցանկայ ունել շնորհակալս , այլ զիս : Օնոյն խնա և զծառայէն . զի իմ արծաթագնէն է , ինձ Համարի պահպանութիւն նորա . վասն որոյ ես ինքն եմ պարտապան ընդ նորա : Այլ որդի իմ ինքնին ընդունակ է բարերարութեան , նմին իրի ինքն ընդունի . և ես ուրախ լինիմ ընդ բարերարութիւնն . կցորդ եմ երախտեացն և ոչ պարտապան : — Այայց որ ժխտեսդ գոլ շնորհապարտ՝ տուր ինձ , ասէ , պատասխանի . քաջղջութիւն որդ-

ւոյն, բարօրութիւն և ժառանգութիւն պատշաճիցէն
Հօրն Թէ ոչ, կիսի արդեօք Հայրն երջանկագոյն կէն-
դանութեամբ որդւոյն, և Թշուառագոյն՝ կորստեամբ
նորա : Այլ ո՞ երկբայեսցի երբեք . արդ որ ինեա լինի
երջանկագոյն, և՛ի վատանգէ Թշուառութեան զերծա-
նի, չկիցէ ինձ երախտապարտ : — Այ, ասիցես, զի որ
ինչ առ այլս լինին երախտիք՝ Թէպէտ և միտեա առ մեզ
ժամանեսցեն, և՛ի նամանէ որում տուանն պահանջեսցին .
զոր օրինակ և արծաԹ որում աւանդեցան և՛ի փոխ՝
պահանջի և՛ի նմանէ, Թէպէտ և իմ իսկ օգտեալ ինչ
իցէ նոքա : Ունիք բարերարութիւն յորմէ ոչ օգտես-
ցին և մերձաւորք, մերթ ևս կարի իսկ հեռաւորք :
Այ այն իցէ խնդրելի Թէ յումմէ առ ո՞ երիցին երախ-
տիք, այլ Թէ ո՞ւմ զառաջինն չտրհեցար . և՛ի բան իսկ
և՛ի պարտապանէն որ գլուխ է բարերարելոցն՝ իցէ քոյդ
պահանջք : — Այ անտա ազատեմ, ոչ ահա դու ինքն
նին ասես, Թէ զորդի իմ ինձ չտրհեցեր . և եԹէ դա
կորնչէր՝ և ինձ չէր մարԹ ինալ կենդանի . և չիցէս
երախտապարտ վասն կենացդ նորա , զորոյ զկեանսն
վերադասես քան զքոյդ : Այդ իսկ յապրեցուցանել
իմում զորդիդ և՛ի գուշն անկեալ գոհանալիր զդից՝ որ-
պէս զանձինդ պահպանութենէ , և զայս բարբառ ար-
ձակիցէր . Ովպէտ զիս՝ Թէպէտ զիմեն ապրեցուցեր ,
հաւասար են ինձ տրհեցդ , և զիս և զնա փրկեցեր ,
միանաւանդ Թէ զիս : Այ առ իմ՞ բանդդ իցեն, եԹէ
չհամարիս ընկալեալ ինչ երախտիս : — Օ՛ի և
զպարտս որդւոյ իմոյ՝ եԹէ փոխ առեալ իցէ ուս-
տեր , հատուցանեմ փոխատուին , այլ ոչ պէտս Թէ
ես իցեմ պարտական . նա Թէ և՛ի տնտեսեան ըմբռ-
նեսցի որդի իմ, զամենի հարկանիմ, այլ ոչ եԹէ ես
կոչեցիմ տուն : Ե՞ տրհեցար պարտ զանձն իմ ընծայեցու-
ցանեմ քեզ վասն որդւոյս , ոչ զի պարտապան եմ
արդարև՝ այլ զի կանխաւրապէս առնում զայս յանձն :
Այ Թէպէտ խնդութիւն մեծ և օգուտ բազում եղեն
ինձ յողջանալ ազատութենէդ որդւոյս , և զերծալ՝ և
կարեվէր հարուածոյ որդեկորոյս լինելոյ , բայց ոչ այդ
խնդիր է մեր՝ Թէ արդեօք օգտեցեր ինձ , այլ Թէ բա-
րերարեցեր և առ իս . քանզի օգտել օգտին և անբանին
և քար և խոտ , այլ ոչ բարերարին . զի առ բարերա-

բարուվիճն ինդրին կամք. իսկ դու ոչ Հօրն կամիս զբա-
րերարութիւնդ, այլ որդւոյն. Է զի և բնաւ իսկ չձանա-
չես զՀայրն. Ասին իրի զայդ ձև բանիդ, Աիթէ չեղէ
բարերար առ Հայրն զորդի նորա ապրեցուցեալ, ի հա-
կառակին փոխեալ ասացես. Աիթէ եղէ բարերար և
առ Հայրն զոր ոչն ճանաչէի, և որ ի միտս իմ ոչ ան-
կաս: Իսկ զինչ ապա եթէ զատելոյ քեզ Հօրն զորդին
ապրեցուցանիցես. Համաքիցիս երախտաւոր այնմ զոր
մահուամբ առեիր ի բարերարէդ: Ա. Լև զպայքար բա-
նիդ ի բաց եդեալ, ըստ իրաւաբանիդ զայս տաց պա-
տասխանի. Ի բարերարողին կանն պարտ է Հայել:
Աբում և կամէրն այնմ բարերարեաց. զի եթէ ի
չնորՀս Հօրն աբար, Հայրն է ընդունող բարերարու-
թեանն. իսկ եթէ ոչ, ընդ բարերարութեանն եղելոց
առ որդին չէ պարտական Հայրն, թէպէտ և վայելեցիլ
իսկ յայն: Ասակայն ի տալ պատճէին՝ թէ յօժարի և
ինքն առնել ինչ փոխարէնս, ոչ որպէս ի Հարկէ պար-
տուցն փոխարինել, այլ պատճառս իմն առնելով զայն ի
բարերարել: Չէ օրէն զորիտուր երախտեացն պա-
Հանջել ի Հօրէն. եթէ իւրովի արասցէ ինչ մարդասի-
րութեամբ, չարդարութիւն Համարեսցի նմա այն և
ոչ յերախտագիտութիւն: Ապա թէ ոչ՝ վիցէ վախճան
իրացդ, զի թէ երախտապարտ իցէ Հայրն՝ ապա և
մայրն, ապա և Հարն և քեռին և զաւակքն, և ազ-
գականք և բարեկամք և ծառայք և Հայրենիք, և
ուր զկայ առեալ դադարեսցի բարերարութիւնն: Ա ան-
զի շարաբերութիւնդ այդ անվախճան է և դժուարին
յոյժ գնել նմա չափ և սահման. քանզի տակաւ յա-
ռաջէ սողալով մեղմաբար՝ և ի սոզելոյ երբեք ոչ դա-
դարէ:

Ասայ է ինչ այլ արժանի ինդրելոյ. Ազաչեալ երկու
խոռվեն ընդ միմեանս. եթէ զի ի նոցանէ ապրե-
ցուցից, բարերարիցեմ և միւսումն որ դժկամակի ընդ
փրկութիւն եղբօրն ատելոյ: — Չիք երկբայութիւն
զի բարերարութիւն իցէ և օգտել որում ոչն կամի.
որպէս և որ ակամայն օգտի՝ չէ բարերար:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Այո՛ զիա՛րդ , ասասցէ ոք , բարեբարութիւն կոչես դու զայն որով վշտացեալ ոք և նեղի : — Այլ սակաւք ի բարեբարութեանց տիրապետիլ են և դաժանադիմ. որպիսիք են կարել և խարել առ ի բժշկութիւն և կապանաւք կաշկանդել : Այլ յայն հայել պարտ է թէ յաւէ՞ ումեք ընդ ընդունելութիւն երախտեացն , այլ թէ արժա՞ն էր նմա ուրախ լինել : Ոչ անպիտան դրամն զոր այր խուժ և անձանաչող արքունի ինքեան՝ զընկենու ի բաց : Իմպէտ և առեսցէ ոք՝ սակայն և ընկալցի զերախտիս , միայն թէ օգտակար իրքն իցեն և յօգուտ նմին տուեալ . չէ ինչ փայլ եթէ զարմին չարաչար ընկալցի ոք : Այլ եկ աղէ և ընդ հակառակն չքնեաս ըզբանդ : Տեայ ոք զերազայս իւր , յորմէ օգուտ բազում է նմա . զնա սպանանեմ ես , այլ ոչ բարերարեմ եղբօր , թէպէտ և նա ի բարերարութիւն համարեալ ինդայցէ ընդ այն : Զենդուեցեամբ յայժ մեսք ոք և ընդ չարեացն զորս արար՝ ընդունի չնորհակալս : — Այդպէս իցէ . ի բարերարութիւն համարեսցի այն որ օգտէն, իսկ որ մեսք՝ ոչ ես . այլ ես ահա չնորհեմ ինչ ումեք , որոյ ոչ օգուտ իցէ և ոչ մեսս , և սակայն բարերարութիւն է : Օ՜ հայր ողորմ գտանեմ անչնչացեալ յանապատ տեղւոջ , բարձեալ թաղեմ զմարմինն . մեռելոյն օգտեցի ինչ ոչ , (զի զինչ օգուտ իցէ նմա թէ այսպէս կամ այնպէս ապականեսցի) . և ոչ որգւոյն , զի զինչ առաւելութիւն իցէ նմա անտի : — Այդ իսկ՝ զի զկարեւոր պարտս հանդիսասիս յոչզարհուրելութեանն ինեւ կատարեաց : Օ՜ այն չնորհս արարի հօր ողորմ՝ զոր ցանկայր առնել ինքնին , և պարտական իսկ էր առնելոյ : Տայց յերախտիս որգւոյն հմանեսցին իրքն՝ եթէ ոչ լոկ առ գթութեան և մարդասիրութեան՝ որպէս զամենայն իսկ գիակունս՝ թաղեցից և զհօրն , այլ գիտելով չափ թէ այր մարմին է , կամք իցեն ինձ այնու սպաս ինչ ծառայութեան առնել որգւոյն : Իսկ եթէ որպէս անճանաչի մեռելոյ հող՝ ի

վերայ ածից՝, ոչ ոք իցէ ինձ ընդ այնր պարտական. Համարակաց մարդկութեան բարերարեցի։ Ընչիցէ ոք ցիս. Օ՛ի այդչափ խնամով՝ի խնդիր լինիս ԹԷ ումէ ունէք երախտաւոր եղեր, որպէս ԹԷ զարիստարն ունիցիս պահանջել երբէք։ — Այն են արդարև ոք համարին ԹԷ չիցէ օրէն երբէք պահանջել զիմիարէնն, և՛ի հաստատութիւն բանիցն յառաջ բերեն զայսօսիկ։ Այլ ապերախտ ԹԷ և պահանջեցի՝ ոչ հատուցանէ. իսկ երախտագէտն իւրովի զիմիարէնն առնէ։ Ապա դարձեալ՝ եթէ առն բարւոյ բարերարեցեր՝ երկայնամիտ լեր մի արդեօք բողոքելովդ նախատինս գիցես նմա որպէս ԹԷ չուներ հատուցանել իւրովի. իսկ եթէ չարի՝ համբեր լռիկ և մի զչնորհս երախտեացդ եղծաներ բանիւք՝՝ի փոխատուութիւն դարձուցեալ զայն։ Օրէնք ինքնին ոչ հրամայեալ պահանջել զիմիարէնն երախտեաց՝ նովին իսկ արգելուն զայն։ — Այո՝ այդպէս է. ցորչափ չիցեմ բռնադատեալ՝ի հարկէն՝ ցորչափ չատիպ գիս բանսն, չնորհս մանաւանդ ինդրեցից քան ԹԷ յետս զերախտիսն պահանջել. ապա ԹԷ առ՝ի մահ կան որդիք, եթէ՝ի վտանգի է ամուսինն, եթէ՝ի փրկութիւն հայրենեաց կամ՝ ազատութեան առաքիմ երթալ ուր ոչն կամիմ՝, բուռն պարիս պատկառանացս և եղից վկայութիւն զի զամենայն հնարս հնարեցայ առ՝ի չլինելոյ կարօտ առն ապերախտի. Հուսկ ապա հարկն և կարօտութիւն ընդունելոյ զերախտիս՝ յաղթեսցէ ամենայ պահանջելոյ զիմիարէնն։ Ածոյից ասել զի՝ի բարերարէնն առն բարւոյ՝ բարերարեմ այնպէս զի ոչ երբէք պահանջեցից զիմիարէնն բայց՝ի ստիպել հարկին։

Ա. Այս սովորութիւն էր և սպաս կրօնից առ հինն, զի և յանապատ տեղոջ պատահեալ մեռելոյ՝ հոդ ափով երիցս ածէին՝ի վերայ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋԵՆԵՐՈՐԴ

Այլ. ասիցես. Օրէնքն ոչ թոյլ տուեալ պահանջել զփոխարէն երախտեաց՝ նովին իսկ արգելուն։ — Ահա զուտ ինչ իրք ոչ յօրինադ և ոչ ի զատաստանադ հրամայեալք՝ ի հասարակաց սովորութենէ մարդկան, որ հզօրագոյն քան զամենայն օրէնսն է, ընկալեալք են։ Որ օրէնք հրամայէն չխօսել արտաքոյ զգաղտնիս բարեկամաց, չդրժել և թշնամեաց, հատուցանել զխոստումնս մեր. սակայն գանգատեմ զառնէ որ զգաղտնիս իմ հռչակէ, և զարմանամ ընդ նա որ խոստմանն իւրում դրժիցէ։ Այլ զբարերարութիւնն ի փոխատուութիւն փոխես, ասէն։ — Ահա լիցի. զի ոչ եթէ զտուեալն պահանջեմ, այլ խնդրեմ ընդհս. մանաւանդ թէ և խնդրեմ իսկ ոչ, այլ յիշեցուցանեմ ևեթ։ Օ՜ի և՛ ի ստիպող իսկ հարկին ոչ մատեայց երբեք առ նա՝ ընդ որում հարկ էիցէ ինձ պայքարել յերկար։ Որ այնչափ ապերախտն ի մինչև չազդել՝ ի նա ազգարարութեանն, զանց առնեմ զնովաւ՝ ոչ ինչ արժանի համարեալ ստիպել զայնպիսին յերախտագիտութիւն։ Օ՜ր օրինակ այր վաշխառու ոչ քարշէ՝ ի դատաստան զայնոսիկ՝ ի պարտապանաց՝ զորոց գիտէ թէ կերան և հալեցին զարծաթն և չիք առ նոսա ամենեւին եթէ ընդ կրնասն ամենեցուն, նոյնպէս և ես զոմանս յապերախտից՝ զայսոսիկն և զայնդգունս անտես արարեալ, յայնպիսեաց ևեթ պահանջելոյ զփոխարէնս երախտեաց՝ յորոց ոչ խլել հարկ իցէ այլ ընդունել։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Այն իսկ բազումք որք ոչ ժխտել գիտեն զոր ընկալանեն, և ոչ հատուցանել փոխարէն, զի ոչ որպէս զերախտապէտս լաւք են և ոչ վատթարք որպէս զապերախտս. այլ հեղգասիրտք և դանդաղկոտք, վատք և ոչ վատթարք։ Օ՜այնպիսին ոչ յատեան կոչեցից,

այլ խրատեցից և եթէ և զբաղմունքդ միտս նոցա ածից ի յիշատակ պատուոյն իւրեանց ։ Ընդ և զայս առ ժամայն տացեն ինձ պատասխանի . “Ոչ ինձ , ոչ գիտէի արդարև թէ ի կարօտութեան իցես . ապա թէ ոչ՝ մտադիւր հասանէի քեզ ի թիկունս . մի ազաչեմ համարեսցիս զիս ապերախտ . յիշեմ զոր արարեր ընդ իս ,, ։ Այսպիսին ոչ ինչ երկբայեմ և ինձ և անձնդ լաւս և օգտակարս յարդարել։ Զոր ոք և կարեմն , արգելից ի մեղանչելոյ , և առաւել զբարեկամն զի մի մեղանչիցէ , և մի՛ առ իս մանաւանդ մեղանչիցէ ։ Այր ինչ առնեմ նմա երախտիս՝ եթէ չթօղից զնա լինել ապերախտ . և ոչ իստիւ յանդիմանեցից նմա զերախտիսն իմ զոր արարի , այլ մեղմագոյնս որպէս մարթեն է , առ ի յորդորելոյ զնա յերախտագիտութիւն . զարթուցից ի միտս նորա զյիշատակ բարեացն և հայցեցից ի նմանէ չնորհս , և նա ինքնին լեցի խելամուտ՝ թէ փոխարէնս խնդրեմ։ Երբէմ իսկ խստագունիւք վարեցայց բանիւք ընդ այմ՝ յորմէ գուցէ ինչ ակնկալութիւն ուղղութեան . իսկ ուստի չիք յոյս՝ ոչ զբազեցից զնա , զի մի զապերախտն՝ թշնաս մի և ինձ կացուցից ։ Զի եթէ և զազգաբարութեանն խթան ի բաց դնեաք , գանգաղագոյնք և այլոցն ապերախտք ի հատուցումն ընկալեալ երախտեացն ։ Այլ միթէ արժան ինչ իցէ առանց ազգեցութեան խրատուց թողուլ կորնչել և զայրսոիկ՝ որոց է յոյս ողջանալոյ և գալոյ յաղղութիւն զոյն կծանող բանիւք ։ Ոչ ահա և հայցն այնու երբեմն յաղղութիւն ած զորդին , և կին զայր իւր մերթեալ դարձցոյ ի զգաստութիւն , և բարեկամ հատատեաց զերացեալ սէր բարեկամին ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Ի զարթուցանել զանձն՝ ոչ հարուածոց են պէտք , այլ միջոց եւեթ . ըստ նմին օրինակի և ի սիրտ ոմանց երախտագիտութիւն ոչ է մեռեալ՝ այլ նիրհէ , զոր զարթուցանել եւեթ պատ է ։ Ի լեցի քեզ զպարգեւս քո յանիրաւութիւն յեզաշրջել . և իցէ անիրա-

ւսւԹիւն , եԹէ չհանդրիցես զփոխարէնն զի ապերախտ գտայց ։ Եւ զինչ , եԹէ չգիտիցեմ Թէ ինձ կատ֊ րոտիցիս ; կամ պատաղեալ՝ի գործ և յայլ ինչ զբա֊ ղեալ՝ չգտանեմ պատեհ փոխարինելոյ . ցոյց ինձ զոր կամիս և յոր ինչ կարող իցեմ ։ Ո՛ինչէվ զփորձ առեալ զի յուսահատիս , հինդ չեպիս փուԹաս և զերախտիդ և զբարեկամ միանգամայն կորուսանել ։ Ո իմդ գիտիցես , Թէ չկամիցիմ արդեօք եԹէ չգ֊տնիցեմ , յօժարուԹիւն պակասէ յիս եԹէ կարողուԹիւն , փորձ տես ինձ ։ Ո՛ղդ ուրեմն արարից՝ ոչ դառնու֊ Թեամբ , ոչ հրապարակաւ և ոչ Թշնամանօք , այլ այնպէս՝ զի ինքնին իւրովի և ոչ որպէս յինէն հա֊ րեսցի յուշ ածեալ զերախտիդն իմ ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՁՈՐՐՈՐԴ

Դ֊ԱՏ վարէր երբեմն առաջի դիւցազնին Յուլիոսի ոմն՝ի հինաւուրց զօրականէն , ամբաստանեալ՝ի բրո֊ նուԹիւն առ դրացիսն . և իբրև դատն տկարանայր , ասէ ցկայսրն . Յիշե՛ս ով ինքնակալ , զի՝ի Սպանիա մօտ՝ի Սուկրոն՝ կոչ ոտիցդ ոլորեալ շրջեցաւ . յասել կեսարու , Յիշեմ այո , ասէ դարձեալ . Յիշե՛ս և զայն զի՝ի տօԹակէզ արևու մինչ ցանկայիր նատել ընդ դոյզն հովանեաւ Թփատեսակ ծառոյն որ միայն երևէր յապառաժուտ վայրին՝ի սայրատուր վհմաց վերաբու֊ սեալ , ոմն՝ի զինուորակցաց զամղան իւր քեզ՝ի ներքոյ տարածեաց ։ Պատասխանի ետ կեսար . Այո զիարդ ոչ . և զայն իսկ յիշեմ զի պաքեալ էի՝ի ծարաւոյ և ոչ կարացեալ ցաւագնեալ ոտամբ ընԹանալ առ աղ֊ բիւրն մօտակայ , իբրև յափսԹերս սողայի ընդ եր֊ կիր , մի ոմն՝ի զինուորակցաց քալ և արի՝ սաղաւար֊ տիւն իւրով բերեալ աղբոյց ինձ ջուր ։ Ո՛չ զօրականն , Այո Ձանաչեցե՛ս , ով ինքնակալ , զայրն կամ զսաղաւարտ . ասէ կեսար . Ո սաղաւարտն ոչ , բայց զայրն քալ իսկ կարող եմ Ձանաչել ։ Այո ցասուցեալ արդեօք ընդ այն՝ զի արտաքոյ յառաջակայ խնդրոյն զվաղնջուց վէպն՝ի մէջ ածէր , յասել և ասէ . Բայց դու արդարև ոչ

այն զօրականն իցես : Յիրաւի է քեզ , ասէ այրն , չէա՛ նաչել զիս , ով կեսար , զի աղջանդամ էի յամենժամ և ապա ՚ի Մոնդպ պատերազմին կորուսի զաչն իմ և ոսկերք զլեզոյս քաղեցան : Նա ոչ զսաղատարան զայն տեսեալ՝ ձանաչէիր , զի սպանիացի սուսերաւ հարեալ ձեղբեցաւ : Յայսմանէ արգել կեսար մի ևս նեղել զզօրականն զայն , և զանդան զորոց վէձքն էին և կռիւք , պարգևեաց նմա :

ԴԱՒԻԹ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ա՛ՐԴ չէր նմա արժան ինդրել զարիտուր երախտեացն ՚ի կայսերէ , որ ՚ի բազմապատիկ հոգս զբաղեալ՝ չտիէր զանցեալսն , որ մեծաղոր բախտիւ բազմամ բոխ զօրաց կացեալ առաջնորդ , ոչ ժամանակ միոյ միոյ ՚ի նոցանէ ինամ ունել : Ել այդ կեսս պահանջել էր զերախտիս , այլ զաւանդեալն ՚ի պահեստի յանքոյթ տեղւոջ առնուլ վերստին . ապայն և առ ՚ի առնուլ՝ հարկ է ձեռն կարկառել : Պահանջել պահանջեցից ասա Թէպէտ առ Հարկի , Թէպէտ յօգուտ այնորիկ յորմէ պահանջեմ՝ Տիբերիոս կայսր ՚ի սկզբան անգ հնչնակալութեանն՝ իբրև մատուցեալ զբ առ նա ասէր . Չիշեա . . . . ոչ Թոյլ ետ նմա յառաջ վարել զբանն՝ և ՚ի միջ բերել զբազմապատիկ ցոյցս վաղնջուց ընտա նութեանն , այլ ՚ի վերայ էած . Ել , չիշեմ ամենևին զինչ լեալ էիցէ ինձ : Նա բնաւ իսկ պիտի էր յուշ ածել այնպիսումն զընկալեալ երախտիս , և ոչ մանաւանդ ցանկալի էր Թէ ՚ի մոռացմս լինէին նմա : Խորչէր ՚ի մերժէր ՚ի տեսութենէ բարեկամացն և հասակակցաց , և ախորժէր Հայել միայն յառաջիկայ բախտ իւր , յայն ևեթ խորհել և զայսմանէ խօսել , և իբրև դատաւոր խիստ Թուէր նմա բարեկամին վաղնջուց :

Վ՚էան ՚ի ինդիր երախտեաց՝ ՚ի պահանջել զիրախտիսն պարտ է դէտսին ունել դիպողագոյն ժամուն . և զգուշաւոր գոլ և Հարտար ՚ի բանս զի և ապերախտիցն իսկ չիցէ մերթ զդէմ ունել այնոցիկ : Ել Թէ չիմասնոյ միջի քաղաքավարեաք՝ ապաքէն լռել պարտ

էր և երկայնատեսել, թէպէտ և նոցա իսկ լաւ էր առաջի գնել զկարիս մեր և զհանգամանս անձանց։ Զոյ իսկ, որոց առնոյն ինչ յայտնի է և ակներև, արկաս նեմք աղերս, և ուխտք մեր և պաղատանք իբր ոչ եթէ բռնադատեն զնոսա, այլ յորդորեն։ Զոյն իսկ դիցն, ասեն, համերակատն այն քուրմ [1] առաջի արկանել զբժուելեաննն իւր պաշտօն և զնուիրական գործս բագնաց նոցա՝ զի հեշտալովք աղաչանացն լցցին և կամակատարք։ Որ ընդունի զխորատ և առնէ զայն՝ երկրորդ լեա յառաջընթացից է յառաքինութեան. զայնպիսւոյն զսիրտ՝ գոյն ցնծմամբ անձինն յայսկոյս և յայն ուղղել պարտ է. ասկաւուց է անձամբ անձանց լինել ուղղակ։ Օ՜հէտ նոցա գան որք խրատուք բերին յուղղութիւն, և այնպիսեացն առաջնորդի պէտք են։ Ո՜չօք փակելովք՝ կորով տեսութեանն ողջ կայ, այլ անգործ ամենևին, մինչև լցս երկնառաք ի գործ պաշտամանն զնոսա չարժեսցէ։ Ո՜չգործ դադարն գործիք եթէ ոչ ձեռն ձարտարին վարեսցէ զնոսա ի գործ։ Ո՜ւրեք զի և հոգի՝ առ ի բարին յօժար ի բնէ, զրգռանօք և յուշութեամբ և կամ պարտուցն իւրոց անգիտութեամբ նիրհէ թմբրեալ։ Օ՜գնպիսին օգտակար առնել պարտ է և պիտանի և ոչ առ դժկամակութեան թողուլ զքանել յիւրում թերութեանն, այլ հանգոյն իմն վարժապետացն մանկանց աշակերտեսեալոց յուսումն՝ երկայնամտել մտացութեան մտաց նոցա, որք որպէս ի յիշատակ միոյ կամ երկուց բառիցն զարթնուն յաձախ ի տալ զհամար բովանդակութեան բանիցն, նոյնպէս զարթուցանել պարտ է և զայնպիսին ի հատուցումն երախտագիտութեան։

1 ԶԽրիւաւայ քրմէն են բառքն, զորմէ Հոմերոս յառաջին գիրս Իլիականին։

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

ՅԱՂԵՑԱ ԲԸՐԵՐԸՐՈՒԹԵՆՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Լ՚ԱՆ ինչ՝ ի խնդրոց, քաջդ Իսբեալէ, որք՝ ի կիրթ հանձարոյ յուզեալք և առ՝ ի պէտս կենացդ անպիտանք էն. և էն զարձեալ որք զուարճացուցիչք էն և կարևորք՝ ի պէտս: Յերկոցունցն իսկ յառնիտուԹեամբ ածից քեզ՝ ի մէջ, և զոմ որպէս և զիարդ հառնդ քեզ Թուեսցի հետազօտել հրամայեացես, և կամ՝ որպէս՝ ի խաղս Թատերաց՝ ի հանդիսի ևԹ անցուցանել: Այս և այնոքիկ իսկ ընդ որս չՀառիցիս, ոչ՝ ի սպառ անօգուտք իցեն. զի որոց ուսումն ասելորդ է, զիտուԹիւնն օգտեսցէ: Ընդ ակնարկուԹեան քումմ Հղատակեցից, որպէս և զիարդ տեսիլ զիմացդ ազդեսցէ ինձ, զմինդ յերկայել զնառս և զայլոցն՝ ի բաց յատկաւել:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԽՆԴԻՐ է, արդեօք մնՐԹ իցէ կարելի բարեբաԽտուԹեանն: Ամենք ոչ Հաւանին, իբրև զի ոչ՝ ի նիւԹական իրն է բարեբարուԹիւն՝ այլ՝ ի տուչուԹեանն, որպէս և պարգևն այլ է և պարգևատուուԹիւնն այլ. այլ նաւօրդն և այլ նաւարկուԹիւն: Այլ ԹէպէՔ աԽտացեալ առանց ախտի ոչ է, բայց ոչ այնու ախտն և

ախտացեալ նոյն իցէն, առիսպէս և այլ ևս բարեբարու-
թիւնն յինքեանն, և այլ որ նոսաւն մեզ ընտրհի։ Պա-
ջինն անմարմին է և անեղծանելի. իսկ որ նոսաւն ընտր-
հի, յայլմէ յայլ տարուբերեալ փոփոխի։ Այժմ իրի
Թէպէտ յետս ի բաց առնուցուս, բայց բնութիւնն
ինքնին չկարէ զոր արարն յետս դարձուցանել. կարէ՞
զպարգևան, այլ ոչ Թէ ի բաց ջնջէ։ Վասպէտ և մե-
ռանիցի ոք՝ այլ եկեաց. Թէպէտ կուրացի՝ այլ եռես։
Օգուտ ընկալեալ վայելեմք զարիսն՝ խափանել մտքի
է, այլ ընդ չեղեալն առնել՝ անհնարին։ Պարզ կա-
րևորագոյն մասն բարեբարութեան և ստուգագոյն այն
իսկ է՝ որ եղևն։ Ոչ ուրեք զի խափանիմք յերկար
վայելից երախտեաց, այլ կայ միայ բարեբարութիւնն
և ոչ ջնջի. Թէպէտ և զամենայն ձիրն իւր յայն Թա-
փեալ բնութիւնն, զերեալ բարեբարութիւնն յետս
դարձուցանել ոչ կարասցէ։ Յարձակիս յինէն և տուն և
արծաթ և ստրուկ և այլն ամենայն յորս բարեբարու-
թեանն է անուն, այլ ինքն բարեբարութիւն կայ միայ
Հաստատուն և անշարժ։ Ունիք զօրութիւն որ կարող
իցէ առնել զի ոչ մին տուեալ և ոչ միւսն առեալ իցէ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՐԴ

Պաննաւն հնձ Թուի զոր Հաբերիոս քերԹող
տայ բարբառել ։ Նոտնինոսի, որոյ տեսեալ գյա-
ջողութիւն իւրոյ բախտի անցեալ յայլ և զի միայր
ինչ իւր իշխանութիւն բայց ի մեռանել, և այն Թէ
աճապարեր ի նոյն, գուէ. "Ունիք իմ այլ, բայց զոր
ետու,, ։ Ի որպի ինչ Թէ կամէր, մարթի էր ունել
յայդպիսեաց։ Յոգիկ են արդարև յամենայն դէպս
ունայնութեան մարդկայնոյ կենցաղոյս իսկապէս մե-
ծութիւնք, որք և մեծերեալք անկորուստ պրպտի և
յաւելուցուն, այնչափ զերծք են ի նախանձուէ։ Օգ
իբր ի քոյդ խնայես. անտես ես։ Պարզ ամենայն որ
փքացուցանեն զձեզ, և ի վեր քան զմարդկեղէն
բնութիւնս ամբարձեալ ի մեռացօնս ածէն զձեր տկա-
րութիւն, զորս երկաթի դրամիք և զինուք զդուշացեալ

պահէք, զորս այլոց արեամբն ստացեալ ձեռամդ պահպանէք, որոց վասն ևաւատուրն խաղացուցանէք առ բեամբ ներկանել զծով, որոց վասն զբաղաքս քանդէք, ոչ ինչ զմտաւ ածեալ՝ թէ քանի՞ քանի՞ նեաւք և պահպողդ ձեզ պատրաստեալ կան ՚ի բախտէն, որոց վասն արեանառուս ազգականութեանն, բարեկամութեան և ընկերութեան խզեալ կապք և դաշինք և ոսոխ ընդ ոսոխի մաքառուցեալ՝ դղրդեցան տիեզերք, ոչ ձեր ինչ էն, այլ յատանդի եղեալք առ ձեզ։ Հուսկ ընդ հուպ տապին այլոց, և այլ թշնամի, և կամ որ ոչ ինչ ընդհատ ՚ի թշնամանս է՝ ժառանգն զրաւեսցէ զայնոսիկ։ Վամիցիս քո առնել զդոսա, տուր ՚ի պարգև։ Հապա ինսցէս ինչս քո, և ստացիր զնոսա ՚ի ժառանգութիւն աներ կեան և անկապտելի. որով ոչ հաճեստագոյնք միայն, այլ և ապահովագոյնք իցեն։ Այն ամենայն յորս պրծուցեալ է քո, և որով ձոխ և հզօր զբեզ վարկանիս՝ ցորչափ առ քեզ կան՝ անարգ անուանք յորջորջին տուն, ծառայ, արծաթ. իսկ ՚ի տալդ՝ փոխեալ կոչին բարեբարութիւն։

ԳԼՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Այգաբէն խոստովանիս, ասես, և զու՝ զի չեմք երբեմն պարտականք երախտապարտ լինելոյ այնմ՝ յումմէ զերախտիսն ընկալաք, ապա կորուսեալ է բարերարութիւն։ — Ազգում պատճառք են զգազրելոյ մեզ ՚ի պարտուց երախտագիտութեան, ոչ զի կորուսեալ է բարերարութիւնն, այլ եղծեալ։ Պատրանեաց ինձ զբ Ք զատաստանի, նոյն ինքն և վկինն իմ բռնաբարեաց, ոչ ՚ի բաց երարձ զերախտիսն՝ այլ զուգահաւասար անիրաւութեամբ ազատ կացոյց զնս ՚ի պարտուց. իսկ եթէ առաւել քան զոր օգտեացն յաւելուցու ՚ինասել՝ ոչ միայն եղծանի բարերարութիւն նորա, այլ և վերիժուց և գանգատանաց հնորհի ինձ ազատութիւն յորժամ առ հաւերմատութեամբ երախտեացն ծանրանիցէ գտանիցի անիրաւութիւն, և այսպէս ոչ եթէ կորնչի բարերարութիւն՝ այլ յարեաւն յաղթի։ Այ-

զինչ. Միթէ չիցէ՛ի հարս այսպէս խաղասիրաք ամենք և անօրէնք որոց ոչ ինչ անիրաւին որպիսի եթէ զերեսս՛ի բաց դարձուցեալ և ուրացօղ լինիցին՛ի նոցանէ։ Օ ինչ, Միթէ կորեան երախտիք նոցա զոր արարին. քաւ լիցի, այլ առաջնոց երախտեաց նոցա գովութիւնք յետագայ ամբարշտութեանցն եղծան։ Եւ եթէ բարերարութիւնն կորնչի, այլ բարերարութեանն չնորհ. և բառնի յինէն՝ ոչ զոր ընկալայ, այլ երախտագիտութեանն պարտք։ Իբր այն թէ զրամն տուեալ ուրուք ինձ՛ի փոխ և զառնն իմ այլեւայլ. փոխարինեցայ փոխն տուժիւքն. չարարի նմա հատուցումն, և չեմ իսկ պարտապան։ Իբրպէս իմն և աստ. մնարգասիրեաց ոք առ իս կամ առատաձեռնեաց. այլ յետոյ բազում ինչ և ամբարիշտանումեւեմք՝ թէչնամանօք և անպատշաճ մտօք անիրաւեալ առ իս, ազատ կացոյց զիս՛ի պարտուց որպէս թէ բնաւ իսկ չէր իմ ինչ ընկալեալ՛ի նմանէ. զղջութիւն երախտեացն իւրոց եղծ։ Իբր՛ի վարձու զանդատանան տուեալ և առաւեմք զոչն կոխիկ և զծառատունկն կոտորիցէ, չէ ցեն նորա պահանջք՛ի վարձկանէն, ոչ զի զսակ արկեալ վարձան ընկալաւ, այլ զի զարգասիս անդոյն եբարձ՛ի նմանէ։ Ոտ այսմ՝ բազում այն է զի և փոխատուն փոխառուին իւրում ինայ պարտական՝ յորժամ այլով ինն օրինակաւ առաւել քան զոր պահանջն՝ բարձոյ՛ի նմանէ։ Եւ ընդ փոխատուն լեւեմ և ընդ փոխառուն կարգեալ կայ զատաւոր իրաւարար ասել. Ըզծաղեւտուր զնա՛ի փոխ, այլ զհաշինս զօրա յափշտակեցեր, զաղարիւն սպաներ և զագարակ զոգա առանց գնոյ գրաւեցեր. արդ զին հատեալ ամենայնի՝ երեսս պարտապան որ եկիցէ որպէս պարտաւէր։ Այլն օրէնք են գատելոյ և ընդ բարեբարութիւնս և ընդ անիրաւութիւնս։ Ոտազում այն է՝ զի կայ ինայ բարեբարութիւն, այլ չէ որ այնմ պարտապան՝ եթէ որ բարեբարեացն զղջացաւ ընդ տուրն, եթէ աւազեաց զանձն զի էաւ, եթէ հատուցեալ էաւ և զդէմն կնձռեաց տոյժս իմն զպարգևան հանդերձեալ. եթէ վասն իւր էաւ, կամ թէ չէաւ տուգիս վասն իմ. եթէ յաւել նախատել, խրոխտալ, պարծիլ ընդ ամենայն ուրեք և դառնացուցանել զընդոչս իւր։ Այս կայ ինայ բարե-

բարութիւնն՝ թէպէտ և չիցէ ոք պարտական՝ այնմ. զոր օրինակ և զարծաթն զոյն տուեալ՝ ի փոխ՝ յորոյ վերայ չիցեն իրաւունք փոխատուին՝ թէպէտ և պարտի փոխառուն, այլ չմարթէ պահանջել զոյն ի նմանէ։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԽԱՐԵՐԱՐԵՑԵՐ լինէ և յետոյ անիրաւեցար. բայ ըերարութեան փոխարէնք խնդրին և անիրաւութեան վրէժ, ոչ ես ընդհասարտ գտանիմ, և ոչ զու վրէժ ժապատ. բարերարութիւն և անիրաւութիւն յիւրեանս ապարին զհատուցումն։ Յորժամ երախտահատոյց լինել ասեմք, ոչ խնամանքն զոյն իսկ զընկալեալ երախտիսն զարձուցանել, այլ այլ ինչ փոխանակ. զի և արիտաւր այն է՝ տուրս ընդ որոց հատուցանել։ Լաւ կարի իսկ քաջ. զի ահա և ամենայն հատուցումն ոչ նոյնիսկ լինի, այլ նոյնանեաւս։ Այսպէսն հատուցեալ ասեմք և զարծաթ, թէպէտ և փոխանակ արծաթոյ ոսկի Թուեալ իցէ մեր, թէպէտ և առանց իսկ գրոյ՝ փոխանցմամբ և բանիւք պարտեալ զհատուցումն։

Այսուհետև լինէ զի ասես. Օ բայեան աշխատութիւն. զի փոյթ է ինձ գիտել եթէ արդեօք կայցէն մեռացեն, որ ինչ ոչ ևս են պարտք։ Արտաքանիչ են այդ շաղփաղպի նրբաբանութիւնք, որք ոչ ընդունին՝ թէ ըզժառանգութիւնն մարթի իցէ ստանալ, այլ զժառանգեալ իրան. որպէս թէ այլ ինչ ժառանգութիւնն իցէ, և այլ իրքն ժառանգեալք։ Այսու զոյն ինչ լինէ զանազանեսես զո՝ ի դէպ գայ առաջարկութեանս մերում, զոյն զի յորժամ նոյն ինքն որ բարերարեացն լինէ յաւելցու ապա և անիրաւել, պարտ իցէ արգելօք փոխարէնս ընդ երախտեացն հատուցանել նմա, և գվրէժս ևս անիրաւութեանն պահանջել, որպէս եթէ երկոցունց ևս տուչութեանցն ուրոյն ուրոյն առնել զհատուցումն. եթէ գմին միւսումն համարեալ փոխարէն, և ոչ ինչ հոգալ այնուհետև, իբր զի երախտիքն բարձան զրկանօք և զրկանքն երախտեօք։ Օ այս այսպէս տեսանելի լեալ յատեանս գատաստանայ, իակ

թէ զինչ ձերոց գաղտագողի իցեն իրաւունք՝ ձեզ անկ է գիտել։ Ապրեալ զանազանին գատքն՝ և որով գատաստանաւքս նոքին և գատախազիսք։ Վերեն եւս և անշփոթ իցեն խնդիրքն, եթէ դրան յատանդ եդեալ ուրուք առ իս՝ գողացի զայն ասա. ես գատախազեմ զնմանէ վասն գողութեանն և նա զինեն վասն աւանդին տուելոյ։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՈՐՆԱԿԻԴ յառաջ բերեալք, իսն Ի իբերայէ, ընդ հաստատուն և ընդ անսիփոխ անկանին օրինաւք, զորոց հարկ է գՀետ երթալ, և օրինաց ընդ օրէնս խառնել չէ հնար. իւրաքանչիւր այլ և այլ հանգամարդ են, աւանդից այլ օրէնք են գատի, և գողութեան այլ։ Վարերարութիւնն չէ ընդ օրինաւք անկեալ, անձամբ անձին նատի գատաւոր և իրաւարար. ինձ պարտ է Ի կրկս զնել զոր ինչ ընկալեալ իցէ իմ յումեքէ զգուշանալ և զվնաս, և բատ այնմ տալ վՀիս՝ նա արդեօք պարտական իցէ ինձ եթէ ես նմա։ Յառաջ արկեալ օրինակաց չկը ինչ որ ընդ մերովս իցէ իշխանութեամբ. յո և վարիցէ գնալ պարտ է. Ի բարերարութեան՝ իշխանութիւն յիմում ձեռին կայ. նմին իրն ես ինքն գատիմ զայնցանէ. ոչ գատանեմ և ոչ որոշեմ, այլ՝ որպէս գղջիանն՝ նոյնպէս և գերբահտիս առ նայն գատաւոր առաքեմ։ Վպա թէ ոչ՝ հարկ իցէ ինձ առել և սիրել միանգամայն, գանգատել և չնորՀս ունել, որում ոչ Հանդուրժէ բնութիւնս։ Ի աւագսն յոյժ է գերբահտիս ընդ գղջիանն Հաւեմատեալ, տեսանել մի արդեօք առաւելագոյն իցեն իմ պահանջք։ Օ՞ր օրինակ եթէ որ Ի վերայ գրեցելոյն առ Ի մէնջ յաւելուցու գրոշել զայլ ինչ առաջ, ոչ բառնայ զառաջինն գրեալն՝ այլ ծածկէ, սգնպէս և անկրաւութիւնն Ի վերայ եկեալ ծածկեսցէ գերբահտիս։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ա. 31. քո ահա խոժռուին դէմք զոր ի կանան ինձ ընկալայ, և հնձիմն ի ձակատ քո ծնանիմ, որպէս թէ զարտուղի անկեալ ընթանայցեմ. և թուիմ լսել զձայն քո զի ասէ

Ո՞ր խոտորիս այդքան դու յայլ հակամէտ
Ա՝ արեա այսրէն, ամս դու զեզերբք ժայռիդ կից՝։

կարձեցից ապա զբանս, որ զի շատ թուին քեզ ասացեալքս զինդրոյդ. և զայն առից ի մէջ թէ պարտիցիմք ինչ արդեօք այնմ՝ որ յակամայս օգտեաց մեզ։ Ա՝Դէմ ևս մարթ էր առնել զառաջարկութիւն խրճդրոյս, բայց խառն ի խուռն ասացի լայնաբար, զի կրկին ևս ինդիրքդ զանազանեալք խնայցին ընդ նուաճ, այնք թէ՝ պարտիցիմք ինչ այնմ որ օգտէ մեզ դժկամակութեամբ. և այնմ դարձեալ՝ որ օգտէ յանգէտս։ Ակ զի չպարտիմք ինչ այնմ որ բարերարէ ի բնական դաստութենէ՝ այնպէս յայտնի իրք են, զի և խօսել իսկ զայնմանէ՝ ընդունայն է։

Ա՝այց խնդիրս մեր այս, որպէս և որք սմին նմանքն են, չիցեն դժուարալուծք՝ եթէ անմոռաց կացուք ի մտի զայն թէ բարերարութեան հարկ է լինել նախ կամաւ և խորհրդով. և երկրորդ խորհրդով բարեաց և օգտի որում՝ բարերարին։ Ա՝մին իրի իսկ ոչ ինչ չնորհս մատուցանեմք գետոց զի ի բերս առատութեանց ուղխանդուր ընթացիւքն անդուլ նաւս մեծամեծս ի մակնունս իւրեանց բարձեալ բերեն, զի ձկնաւէտ զուարճալի ալեօքն՝ ծառալեալ մատուռակեն պարարտութիւն անդաստանաց։ Ա՝և զբ երախտագիտութեան արժանի համարի զԱ՝եղոս, և ոչ դարձեալ ասելութեան, թէ առաւելութեամբ յորդեալ և անագան տեղի տայէ։ Ա՝յլ բարերար և հոգին թէ քաղցր և

1 Վիրգ. Եհէակ. Ե. 232։

յաջողակ ընէսցի . և ոչ կէսակաւ՝ Թէպէտ և օգտակար և առողջարար : Օ՛ի որ բարեբարէն ինձ՝ ոչ օգտել ևէթ պարտի՝ այլ և կամաք բերիլ՛ի նոյն : Վասն որոյ և ոչ անբանիցն անասնոց գոանիմբ երախտապարտ , Թէպէտ և բազումք յոյժ խղճն ապրեալք՛ի վտանգէ երագումեաւք երիվարաց . և ոչ վարսաւոր ծառոց՝ Թէպէտ և ընդ հովանեաւ նոցա զովանան բազումք՛ի տօթաժամու : Վանդի ոչ ինչ ընդհատ յիրերաց են՝ զի որ բարեբարէն ինձ չդիտիցէ զոր առնէ կամ Թէ գիտէ տկարանայցէ , որ զի և յերկոսին իսկ պակասեն կամք : Այլ զոր օրինակ Թէ ասէր գիս որ նաւաւ՝ կառաց և գեզարդեան երախտապարտ գոլ , նոյնպէս իցէ ամենևին պարտապան գոլ այնմ՝ յորում ոչ ինչ աւելի քան զանշունչն զայնոսիկ էին կամք բարեբարելոյ , և բարեբարեաց ըստ դիպաց :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Օ ԲԱՐԵԲԱՐՈՒԹԻՒՆ ընդունել մարթ է յանդիտս , այլ ոչ՝ և տալ . բազում ինչ բազմաց առողջարարք եղեն ըստ դիպաց , այլ ոչ այնու՛ի զեզ Տամարին . գեւտա վէմ իսկ լինել յատուկս սատնատնեաց՝ պատճառք բժշկութեան եղեն ոմանց , և ոմանց գանգահար լեալ՝ փարատեցաւ աենդ քառօրեայ . և յերակալծ երկիւղս գրաւեալ միաք՛ի նոր Տոգս՝ յանզգաստից անցին ժամք բազմախտանգք , և ո՛ր յայդպանէ Տամարեցի առողջարար գի՛ի բժշկութիւն եղև . բստ այսմ օրինակի մարթի իցէ ոմանց օգտել մեզ առանց կամելոյ , մանաւանդ Թէ վասն ոչ կամելոյն . սակայն չեմք ինչ նոցա երախտապարտք , գի գիշատակար խորհուրդս նոցա գէպք՛ի լուն փոխեցին : Այլ Թէ երախտապարտ իցեմ այնմ՝ որոյ՛ի Տարկանէն գիս սխալեալ ձեռինն եՀար գիՀատին իմ , և Թէ չէր վերիպեալ՝ ինձ Տատաներ Տարուածն : Խազում այն է գի վկայ սուտ երդուեալ Տամարձակ՝ և գչմարիտ վկայն անՀատատելոյն կացոյց և գյանցաւորն պատիս գրպարտեալ՝ գՀուԹեան եցոյց արժանի : Խազումք նոյնիսկ գօրաւԹեամբ

յորմէ տաղնապէին՝ ապրեցան, և զորս արդար դատաստանաւ դատապարտել պարտ էր դատաւորաց՝ առ Հարկաւոյն անպարտ արձակեցին։ Արդ ինչ՞ն սոքա բարերարք՝ զի օգտեցին. ոչ. զի ոչ եթէ զոր եհար նեաս, այլ եթէ առ ի ուղղեաւն էր խնդրի. սոյնպէս և բարերարութիւն ոչ ըստ դիպոց՝ այլ ըստ կամաց որոշի յանիրաւութենէ։ Ասէին իմ անձամբ անձին հակառակաբանեալ և զոռոզաբար զայրացուցեալ զդատաւորն, և ի մի ևեթ վկայ յուսացեալ յանգգնութեամբ, զդատն իմ յոտին կացոյց։ Արդ կամբ էին ինձ ընդդէմ, և զինչ փոյթ է ևեթ յօգուտ իմ սխալեաց։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԻՐՊԷս որ բարերարէն՝ կամաւ պարտի բարերարել, նոյնպէս պարտ է և ինձ կամաւորաբար լինել երախտագիտ։ Օ ինչ առաւել անիրաւ քան զայն եթէ ասիցէ ոք զայր որ ի խառն ամբոխին կոխեաց զոտս իւր և տիղմն զիւրև ցայտեցոյց և կամ ուր ոչն կամէր մղեալ ձգեցաւ ի նմանէ։ Այլ զի չայտ իսկ նախատինք էն ինքեր՝ ես այլ անբասիր լեցի որ արարէն, բայց այնու զի զոր գործէրն ոչ գիտեր։ Արվէրն ապա և ոչ սա գոցի բարերար, և ոչ նա անիրաւ. զի զբարեկամին և զձեռնամի ի կամացն է ընտրելն։ Վանիք ոմանք ախտիւ ըմբռնեալք ազատ եղեն ի զինուորութենէ. ոմանք չոսխէն իւրեանց արգելեալք չատէին՝ ի կործանմանէ տանց իւրեանց ապրեցան, և այլք նաւաբեկ լեալ զերծան ի հինից։ Այլ չայս աներևոյթ գէպս չեմք ուժք երախտապարտք. զի գէպք առանց գիտութեան զործեն. նա և ոչ ասոխին այնմիկ որ գատաստանութեամբն ապրեցաք, զի նորա կամք էին արգելուլ զմեզ և տանջել։ Վարերարութիւն որ ոչ գիտութեամբ լինի և ոչ ի բարութենէ կամաց՝ չէ բարերարութիւն։ Օգտեաց ինձ որ չանգիստ՝ չեմ նման երախտապարտ. օգտեաց ի չտասէն՝ նմին և ես եղէց նմանող։

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Բայ. արդ զվնասօրեացուք զանձս։ Բռնաջնումն՝ որ չարար ինձ և ոչ ինչ առ ի վնաս երախտաւոր, կամիս զի արարիս ես ինչ առ ի վնասուց երախտագէտ։ Յերբ կրօղդն անցցուք. կամիս զի Հնօրհասպատ եղէց և մատադիւք Հատուցից կամաւ այնմ՝ որ ակամայ ետ ինձ ինչ։ Ոսկ զինչ վասն երրորդին ասացից որ յանիրաւս ձեռն՝ ի բարերարութիւն սպրդեալ անկաւ։ Օ ի եղէց քեզ երախտապատ, չէ բաւական կամելդ և եթէ բարերարել. իսկ զի չեղէց պարտական՝ շատ է և չկամելդ։ Բդ զոր օրինակ չէ բարերարութիւն եթէ բարւոյ և ամենայօժար կամաց ոչ ծանդակեսցէ բախտն, նոյնպէս չիցէ բարերարութիւն եթէ ոչ քան զբախտն յառաջեսցեն կամք։ Օ ի ոչ եթէ վասն այնր իցեմ քեզ պարտապան զի օգտեցեր ինձ, այլ զի կամաւզաբար օգտեցեր։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԿՂԵԱՆԹԷՍ զայսպիսի ինն ի մէջ առնու օրինակ. Ա՛անկանա երկու առաքեցի, ասէ, ի Նեմպրանն առ Պղատոն խնդրել զնա և կոչել առ իս։ Ա՛իսոյն յածեալ ընդ սրահն ոչզոյն և ընդ այլ ամենայն վայրս՝ յորս յուսայր գտանել զնա, զարձաւ ի տուն իմոջ և ունայն. իսկ միւսն առ մերձակայ առասպելարկու չաղակրատէն Նատեալ՝ կամ Թափառական այսր անդր մինչ ընդ գառաւակիցսն խաղայր ընդ ծառայս՝ եգիտ զոր ոչն խնդրէր զՊղատոն, յանգանել նորա ընդ այն։ Բդ գովէք, ասէ, զառաջինն ի մանկանց որ որսալ ի կարի եւրում էր սրաթ զՀրամայեալն. իսկ զպղերգն բարեբախտ՝ պատուհասական առնեմք։ Կամքն է միայն կանոն և ուղղեակ պարտուց. արդ տես զի զինչ պայմանքն իցեն՝ զի եղէց պարտական։ Ո՛չ բաւական կա-

մեզն ևԷր՝ Թէ ոչ և օգտեսցէ ազ . և ոչ օգտէն ևԷր՝ Թէ ոչ և կամեսցի : Համարեաց Թէ կամեցաւ ազ ինձ չնորհս առնել , և չարաչ : Ընկալաւ գյաժարութիւն սրտի նորա , այլ ոչ և զբարերարութիւն՝ որ կամքն վճռարի և արդեամբք : Օ՞ր օրինակ չեմ պատասխան այնմ՝ որոյ կամեցեալ արդարև տալ ինձ արծաթ ՚ի փոխ՝ բայց չետ , նոյնպէս և այնմ՝ որոյ կամեցեալ առնել ինձ բարիս , այլ ոչ կարաց . եղէց արդարև բարեկամ այլ ոչ պատասխան : Կամել կամեցայց և ես առնել ինչ նմա , քանզի և նա կամեցաւ . այլ սակայն եԹէ բարեբախտագոյն գտայց ես չնորհել ինչ նմա , բարեբար եղէց և ոչ երախտաչատոյց . նա լեցի ինձ երախտապարտ և չինչն լոյի սկիզբն բարերարութեան :

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այլ արդ մինչ չև քո խօսեցեալ ինչ ՚ի գէմդ ակն արկեալ ՚ի միտ առնում զոր ինչ խնդրեմն չինէն . զայն՝ Թէ խլեմք արդեօք երախտապարտը այնմ որ չիւր սակս օգտէ մեզ . չի լսեմ ՚ի քէն գանգատել ստեպ զայնպիսեաց որք անձանց իւրեանց բարերարեալ և այլոց համարին զայն չերախտիս : Այլ այդ մինչ չև տուեալ պատասխանի , իմն Ա խբերալե , Հարկ է զանազանել զառաքլուԹիւն խնդրոյդ և ընտրել զիրաւն յանիրաւէ : Ահաւղ և խոիր մեծ է Թէ բարերարէ մեզ ոք վասն իւր և ոչ վասն մեր , և կամ Թէ վասն իւր և վասն մեր միանգամայն : Որ զանձինն ևԷր խնդրէ և վասն իւրոց օգտի՝ որում քանզի չանուԹԷր յաջողել այլազգ՝ օգտէ մեզ , Թուի ինձ նմանեալ այնմ՝ որ յամարան և ՚ի ձմերան Ձարակ պատրաստէ իւրոցն խաշանց , որ զիւր գերիսն մնասցանէ ՚ի շահաւճառ , որ զայլսն զերծինն զարմանալ պարարէ , և որ սուսերամարտից գոլով վարժապետ՝ մարզէ զիւրան և զինու զարգու Հանդերձէ : Բարերարութիւն՝ որպէս ասէ ԿղէմանԹէս , Հեռի է յոյժ ՚ի վաՃառաշահութենէ ,

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ապագան չեմ և այնչափ անիրաւ՝ մինչև չհամարել իւիք զանձն իմ պարտական որում յօգուտն ինձ օգտեսցի և ինքն ։ Ողջախոհեմ երբեք զի առանց զանձինն խորհելոյ՝ զիմ ևեթ հոգւոցի օգուտ. նա մանաւանդ ցանկալի է ինձ զի բարեբարութեամբն որ առիս՝ մեծապէս օգտեսցի և բարեբարն, միայն զի այն կամք իցեն նորա ՚ի բարեբարէն՝ օգտել և երկոցունցս և բաժանել ընդ իս զբարեբարութիւնն ։ Զոր իւր իցէ բաժինն մեծագոյն, շատ է զի բաժանորդ բարեացն ընկալաւ և զիս, և երկոցունցս եղ ՚ի մտի օգտել ։ Եւ անիրաւ միայն այլ և ապաշնորհ գտայց եթէ ոչ ուրախ եղէց՝ զի յօգտէն ինձ օգտեցաւ և ինքն ։ Ընդդամբարձութիւն մեծ է՝ զայն ևեթ համարել բարեբարութիւն որ ծանրանայ իւիք բարեբարէն ։ Իսկ այնպիսուն որ վասն իւր միայնոյ բարեբարէ՝ զայս տաց պատասխանի. Ոչ ընդէր քնաւ համարիցիս զու ինձ բարեբար և ոչ ես քեզ մանաւանդ ։

Ասացեալ ասիցես. Չհամարեաց թէ չկարիցեմ այլազգ հասանել յաւագութիւն եթէ ոչ ՚ի բազմաթիւ գերելոյն քաղաքացեաց՝ տասանց ոմանց եղեցգ գերեթափ. արդ չկրճես ինձ երախտապարտ եթէ զքեզ ազատեցից ՚ի գերութենէ և ՚ի կապանաց, թէպէտ և վասն իմ առնեմ զոր առնեմն ։ — Ո՛չ այդ տաց պատասխանի. Ոչ ինչ ՚ի բանիդ զոր քո վասն առնես և է զոր վասն իմ. զի փրկանաւորես՝ այն վասն քո է, իսկ ընտրութիւնդ յիմ. զի յօգուտ անձինդ շատ իցէ փրկանաւորել զայնքան և իցէ. և ես երախտապարտ իցեմ քեզ ոչ վասն փրկանաւորելոյդ՝ այլ վասն ընտրութեանդ, զի մարթէր քեզ զայլ ոք փրկել և զնոյն գործ վճարել ։ Օ՜ օգուտ բարեբարութեանդ բաժանես ընդ իս, մանաւանդ ընդունելով զիս այնմ որ երկուց ոմանց բերի յօգուտ ։ Ախտապատիւ քան զայլս արարեալ զիս՝ զայն ևեթ արարեր ինձ ընդ ինքն ։ Ասացեալ թէ տասանց գերեաց փըրկանաւորութեամբ հարկ էր քեզ ամբառնալ յաւա-

գումիւն և գերեւացս Թիւ ւառաւելոյր քան զտան, ոչ
ոք ՚ի մէնջ երախտապարտ քեզ լինէր, զի ՚ի քո օգուտ
ապաւեր զամենայն և չէք ուժք անտի մնան։ Ըհմ
յաջողոտ նախանձախնդիր բարերարութեան, ուչ
ցանկամ միայնակ վայելել յայն՝ այլ և քեզ ընդ իս։

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ի՛ՍՈՒՏՍ։ Իակ զինչ. եթէ վիճակաւ հրամայեալ
Հանել զանուանս ձեր, և քոյդ ընդ վրկանաւորելոյն
եղանէր, միթէ չլինէիր ինձ երախտապարտ։ — Փոքու
յոյժ։ Իակ Թէ ընդէր, լաւ. է ինչ արգասիւ յայդմ
զոր առնես առ իս՝ ընկալեալ զիս ՚ի Թիւ Հանդրոյ ան
կելոյն ընդ վիճակաւ ազատութեան, յորմէ Թէ իմ
անուն եւ բախտին է չարչ. իակ քոյդ՝ զի եղանել
կարաց։ Օ սկիզբն բարերարութեան ՚ի քէն ընկալայ,
իսկ զվճռադոյն նորա մնան ՚ի բախտէն, բայց զի չարչ
Հաց բախտի մարթեցայց գոլ բաժանորդ, քոյդ չարչ
է այն։ Ռեմ ՚ի սպառ վնասանէ որք վաճառականք
են չարչհաց բարերարութեան՝ ուչ յայն Հայեցեալ Թէ
որպէմ տան՝ այլ Թէ որքանի, զանձանցին ևեթ խնդրե
լով յամենայնի։ Ա՛ ասաւել ինձ որ ցորեան. և Հարկ
է ինձ գնել զայն ՚ի պահպանութիւն կենացս, բայց
զի գնոց առնուսցի՝ չեղեց նման երախտապարտ վասն
կենացս։ Ա՛ ուչ ՚ի կարևորութիւն Հայիմ իրացն առանց
որոց չմարթեիր ինձ կեալ, այլ Թէ պարկս և զիարդ
առացայ զայնս. զի Թէ չէր իմ գնոց առեալ՝ քնաւ իսկ
չունէի։ Ա՛ամպի և վաճառականն ՚ի բերել անդ զցո
րեանն՝ ուչ զայն խորհեցաւ Թէ պրկափ ինչ օգուտ իցէ
ինձ անտի, այլ Թէ պրկափ ինչ ինքն շահեսցի։ Ա՛ն
պարտիմ զայն զոր գնեցի։

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՅԱԱՑՑ ասիցես . Քան այդմ, և ոչ բժշկին հանարժ ինչ ունել ինչ պարտս քայց զդոյզն վարձս նորա . և ոչ ուսուցչի , զի հատուցեր ինչ նմա . և սակայն պատուական կանք յոյժ համարեալ են նոքա առ ի միջոջ և սիրելագեալք որպէս բարերարքը : — Այլ այդ տաց պատասխանի Թէ իրաց ինչ ոչ ըստ պատուականութեանն սահմանեալ են գինք : Ի բժշկին գնես դու զկեանս և զառողջութիւն՝ որոց գինք ոչ են , և յուսուցչաց լաւագունիցն արհեստից՝ զաղատական գիտութիւնս և զըհրահանգս հոգւոյ : Ալ սոյն որոյ ոչ ըստ արժանեաց իրացն հատուցանին նոցա գինք , այլ արիտուր իմն ընդ վաստակոյն զոր վաստակեցին առ մեզ՝ Թողով գնըրաքանչիւր սեփական գործս . վարձս ընդունելին ոչ ընդ արդեանցն , այլ ընդ աշխատութեանն : Ա և այլ ինչ ՀՀզգրտագոյն պատասխանի զոր և յառաջ ածից ընդ հոսւ , այլ ցուցեալ նախ և հերքեալ զառաջակայս : Ասիցես . Ան իրք ինչ , որք առաւել յոյժ արժէն քան զգինսն . նմին իրի և աւելի ինչ քան զոր հատուցանեսն պարտիս : — Ասայ զի փոյթ է նախ Թէ որքանո՞յ արժիցեն , երբ որ գնեն և որ վաճառեն միաբանիցին ի գինսն : Արկրորդ , ոչ գնոցայն հատուցի ես զգինսն՝ այլ զոր դու քեզկեն եդեր : Ասայ առաւելագոյն արժէր , ասես , քան զոր հատուցեր : — Ալակայն չէր մարթի Թանկագնոյ ըստ արժէիցն վաճառել , և գինք իրաց իւրաքանչիւր փոխոխին ըստ ժամանակին : Ամենպէտ և լինաբերան պանծացուցես դու զվաճառող , սակայն այնքանոյ իցես որքանոյ մարթիցն վաճառիլ , Թող զի չիցէ որ պարտական վաճառողին զի գիւրաքնոյց գնեսցայ ինչ : Կարձեալ Թէ և առաւելագոյն յոյժ իրքն արժիցեն , սակայն ոչ ըստ մեծութեան նոցին և ըստ կարևորութեան գինք հատանին , այլ որչափ ինչ հատարակաց սովորութիւնն սահմանէ : Ասանց , ասէ , համարիցիս դու զվաստակս այնորիկ որ հատանէ անցանէ ընդ ծով , և ի խորս անդնդոց աներևոյթ զա-

փունս Թողեալ՝ կոհակակոծ հորդե շաւիղ ընդ ալիս, և ի խաղաղութեան՝ մեծապատ մրրկին կանխատես՝ ամփոփել զառագաստսն հրամայէ, և կազմն կալ ա-մենայնիւ և պատրաստ վերահաս փոթորկին բուռն և յեղակարծ յարձակման, և սակայն այնքանեաց վաս-տակոյն գինք են զոյզն վարձք նաւուն։ Օ ինչ մեծ և ցանկալի կայցէ որպէս զպատրաստ օթեւանս յանձ-ւոլ, և զարկ ծածկութի՛ տեղալ տարափոյ և որ-պէս զՀոգւոյ և զբաղանիս ի սաթուռ ձմերայնոյ, սա-կայն գիտեմ քաջ քանզ լեցի ինձ այն ամենայն ի պանդխի։ Օ ինչ չնորհ մեծ քան զայն եթէ որ հաս-տատեալ սիրտիւք զտուն մեր ի մեծապատ կործան-մանէ, և զարմանագործ Հարտարութեամբ արուես-տին առ ի կախ ընդ օդս զվերնայարկն կուգաս՝ ի ներ-քոյ զներսանոյն կարկառեալ, բայց գոյզն գնալ սահ-մանեալ փեթեթիկն գործի։ Ո՛չ և պարիսպք պատապա-րեալ պահէն զմեզ յերեսաց Թշնամեաց և ի յեղա-կարծ յարձակմանէ աւազակաց, այլ որ զպատուարան զայնոսիկ և զմարտիկսն յաներեւոյթ և յապահովու-թիւն հաստարակաց կանգնէն գործատուքդ՝ գիտեմ քաջ Թէ զինչ յաւուրն շահիցին։

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յանշագիպ բերիցին բանքս եթէ Հոխապոյն և օրինակօք կամեցայցէ ցուցանել Թէ որպէս փոքուկք փոխարինին մեծամեծք։ Իսկ ընդէր ապա բժշկին և ուսուցչին չՀամարիսցին բաւական վարձքն և աւելի ինչ պարտիցեմ նոցա։ — Ո՛ւստն զի ի բժշկութենէ և ի վարժապետութենէ անցանեն ի բարեկամու-թիւն. և երբեմնապարտս զմեզ կացուցանեն՝ ոչ ար-հեստիւն զոր գնոց տան, այլ բարեյօժար և սիրայոր զոր կամքն։ Վասն իրի իսկ և բժշկին որ ի գնին եւ եթէ երբեմն մատուցեալ առ իս և Համարիցի զնս ընդ այ-նոսիկ առ որս Հարեանցի շրջի այցելութեամբ, ոչ ինչ առաւել խնամ ածեալ ի պատուիրել կարեկցաբար զոր առնելն պարտ իցէ և յորմէ զգուշանալ, ոչ ինչ

աւելի քան զվարձն պարտիմ և էս . վասն զի ոչ որպէս բարեկամ եկին տեսանել զիս , այլ որպէս հրամանատու առ հիւանդ : Այս և ոչ առ ուսուցիչն առաւելագոյն մեծարանաց վասն պարտական եմէ, որպէս զմի յամբոխէ աշակերտացն համարեցայ և զիս , եթէ ոչ առաւելագոյն փառաց և առանձին խնամոց գրեաց զիս արժանի , եթէ ոչ երբեք խորհեցաւ զինէն , և յորմէ ոչ եմէ ուսայ ինչ , այլ զընկերեցեալսն ի լուր հասարակաց ամփոփեալ չտեսանեցի յիս : Որ առ ինչ ասպա առաւելութիւն պարտք մեր առ նոսա : — Այլ յայն սակս զի աւելի քան զոր հատուցաքս արժէ վաճառ նոցա , այլ զի առաւելագոյն ինչ առանձինն մեզ արարին : Ապա յաւել առնել այնչափ ինչ զոր չէր օրէն պահանջել ի բժշկէ , և քան զհամբաւոյ հարատարութեան արհեստին զինէն հոգ կալաւ և խնամ , ոչ շատ համարեցաւ զգեղոն ցուցանել , այլ և ած մատոյց ինձ զպնոսիկ . իբրև խնամոտ հոգաբարձու մերձ նստաւ առ իս , ի բազմախտանգ ժամուն գտաւ առընթեր , և զամենայն սպաս ծառայութեանն առատ զգուելոյ մատոյց յօժարութեամբ : Ի լուր հեծութեանցն իմոց մերձեցաւ , ի բազմոց յոյժ կոչեցեալ ինձ զերիցագոյն խնամին մատոյց , և ըստ ներելոյ նմա հիւանդութեանս ժամ առեալ պարապեցաւ ի գործոն այլոց : Զդէպ այսպիսուին էրախտապարտ եմ էս ոչ որպէս բժիշկի , այլ որպէս բարեկամի : Որ և միւսն յաւուցանել անդ իւրում՝ զամենայն աշխատութիւն և զհամբերութիւն յանձին կալաւ . բայ յորոց առանձինն հատարակաբար նորաստին աշակերտելոց՝ յաւել և զայլ ինչ հրահանգս յաստին ինձ առանձինն . ազդեցութեամբ բանից ուղղեաց և արծարծեաց զընտուրն ինձ կար զօրութեան . մերթ խրախուսեաց գովութեամբ և մերթ խրատուք փարատեաց յինէն զծուլութիւն , և բուռն իմն հարեալ արտաքերեաց ի լոյս զձգտուցեալն յիս հանձար վեհերոտ , ոչ զոր գիտէին յայտ դերով և ձգդեալ մատակարարեաց ինձ զի յերկար ժամանակաւ վարժապետեսցէ , այլ ցանկացաւ , եթէ մարթ ինչ էր , զամենայն միանգամայն հեղուլ յիս : Պակերախտ եմ , եթէ ոչ սիրեմ զնա որպէս զմի ի բազմերախտ և ի կարևոր բարեկամանց :

ԳԼՈՒԽ ԼՕԹՆԵԻՏԱՄՆԵՐՈՐԴ

ԽՆԱՁՈՒՄ այն է, զի և Ձարտարաց իսկ անարգ ար-
հեստիւ՝ աւելի ինչ քան զանկն առատաձեռնեալք՝ եթէ
ժրաջան վաստակօքն Հաճոյք մեզ գտանիցին . և զե-
կուաքին իսկ և յետին գործատրի և առօրեայ վարձ-
կանի յատկութիւք ինչ ձեռաձիրս : Իսկ պարապելոյն ՚ի
լաւագոյնս յարհեստից , որք ՚ի պահպանութիւն կամ
՚ի հրճանգս կենաց կարգեալ են , եթէ ոչ ինչ աւելի
քան զսակարկեալն համարեսցի որ զոլ պարտապան՝ ապ-
երախտ է : Յաւել, զի այդպիսի ուսմանց տուչութիւն
ոգեխառնէ զարբեկան . և ՚ի լինել այսմ՝ այսպէս՝
վարձք վաստակոցն Հատուցանին առ բժիշկն և ուսու-
ցիչ , այլ սրտից նոցա ճնամք պարտապան :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵԻՏԱՍՆԵՐՈՐԴ

ՊՂԱՏՈՆ անցեալ նաւակաւ ընդ գետ , իբրև ոչ ինչ
պահանջէաց ՚ի նմանէ նաւավարն՝ ՚ի ձեռն իւր կար-
ծելով արարեալ՝ ասէ . Ո՞ ընդհատապար քեզ կալար ըզ-
Պղատոն : Կայց տեսեալ ապա զի և զայլ ոք և զայլ
նոյնպէս ձրի անցուցանէր , ասէ . Ո՛վ ա՛ռ ՚ի ընդհատապար կացուցանելոյ
զիս ընդ տուչսդն առ ՚ի քէն բարեաց՝ չիցէ բաւական
ընդհատել ևեթ զպնտսիկ , այլ և ընդհատել որպէս ինձ :
Ո՛վ զոք կացոյս քեզ պարտապանս վասն որոյ ոճրեցեր-
յաստիճանին : Ա՛ռ զնորդ , չիցէ՞ ոք քեզ ընդ այնր երախ-
տապարտ . — Ո՛վ ոք առանձնաբար . զի զոր ընդ այլ
ընկալայ ՚ի հասարակի , ընդ այլ և հատուցից հասա-
րակաբար :

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՒՏԱՄՆԵՐՈՐԴ

Այլ միթէ ժխտիցես, ասէ, և համարիցիս չընկալեալ բնաւ երախտիս՝ յորմէ ձերն անցոյցն զքեզ ընդ Պաղտս։ — Վկայեմ այո, բարիս արար, այլ ոչ ինձ բարեբարեաց զի վասն իւր արար, կամ թէ ոչ վասն իմ անշուշտ։ Այլ զի համայն ասացից՝ նա և ինքն իսկ չհամարի ա- րարեալ ինչ առ իս բարերարութիւն, այլ կամ՝ ի չնորհս հասարակապետութեան, կամ զրակցութեան աղագաւ և կամ առ մնասարծութեան. այր վասն իսկ՝ այլ ինչ ամենևին քան զոր՝ ի միոյ միոյ՝ փոխարինայ սին ունի։ Իսկ զինչ, ասիցես, եթէ համապատիւս քաղա- քացւոց զրեսցէ թագաւորն զՊաղղայիս համօրէն և ապահարկս զՀայսմիացիան արասցէ, միթէ չիցէ մեր մի՞ նոցանէ երախտապարտք ընդ չնորհին։ — Ոչին այո, ոչ առանձնաբար որպէս ընդ չնորհի եղելոց առ իւրաքանչիւր ոք, այլ հասարակաբար իբրև բաղկացուք բոլորին։ Այլ ասիցես թէ զինեն նա ինչ ոչ խորհիր. և՝ ի չնորհել անդ ամենեցուն հասարակաբար զպատիւ քաղաքացութեանն՝ ոչ եթէ ինձ առանձինն չնորհեաց և ոչ ես ինչ անկայ՝ ի միտս նորա. և ընդէր իցէ ինձ ապա երախտապարտ գոլ առ նա որ ոչ վասն իմ արար զոր արարն։ — Վկանզի նախ՝ ի կամել անդ նորա բարե- րարել Պաղղիացւոց առ հասարակ՝ զնոսին և ինձ կա- միցաւ, զի և ես ինքն Պաղղիացի էի, և ընդ նովին ա- նուամբ նկատեալ՝ ի նմանէ, թէպէտ և ոչ ուրուն և առանձնաբար։ Այսպէսդ նաև ես ինքն ոչ առանձինն այլ իբրև զմի՝ ի բազմութենէնն ընդ հասարակաց չնոր- հին լինիմ նմա պարտապան. և ոչ որպէս յանձնէ հատուցանեմ, այլ որպէս՝ ի հաշիւ հայրենեաց։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Լ՛ԹԷ ոք արծաթ ՚ի փոխ տացէ հայրենեացս իմոց, ոչ ԷՀԷ ես ինչ իցեմ նմա պարտապան, և ոչ յանձին կալցայ երբէք զայն պարտս ԹԷպէտ և ՚ի սպիտակացզգեցից ոք իցեմ՝ ԹԷպէտ և ՚ի պարտաւորաց, սակայն ՚ի հատուցումն նոցին տաց որ ինչ ինձ անկանի։ Ի՛ստ այսմ օրինակի հասարակաց եղելոց ընդ երկինս չհամարիմ զանձն իմ պարտական. զի ԹԷպէտ ընդ երկինս եաց և ինձ, այլ ոչ վասն իմ. ինձ իսկ ընդ երկինս որ ընդ երկինսն, այլ յանգիտս ԹԷ տայր և ինձ. սակայն պարտ է և ինձ բաժանորդ գոլ իւրոք հատուցմանն, զի և առ իս հասանիցէ ընդ երկինս երկար շրջանաւ։ Որ ինչ ոչ վասն իմ լինի՝ չեմ ընդ այնր պարտասան։ Լ՛ԹԷ այսպէս է, ասիցես, ապա և ոչ լուանի և արեգական իցես երախտապարտ, զի ոչ վասն քո պարբերին։ — Ա՛յլ հանդերձ ՚ի պահպանութիւն տիեզերացս պարբերեալք, վասն իմ և ես պարբերին. զի և ես մնամ եմ տիեզերաց։ Յաւել և զայն զի ընդ մեզ և ընդ լուսաւորսդ բազում է խաղ։ Որ զգօտի ինձ, զի ինձ օգտեացի ինքն, ոչ ինչ բարերարել. զի խրատին օգտի կալաւ զիս գործի. իսկ արեգակն և լուսին ԷՀԷ օգտեն մեզ, ոչ վասն այսորիկ է՝ զի օգտեսցին մեօք. քանզի զինչ կարիցեմք մեք օգտել նոցա։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՒԱՋՆԵՐՈՐԴ

Ի՛ՍՏԱՑԵՍ ԹԷրևս. Լ՛ս զնարդ հաւատացից ԹԷ արեգակն և լուսին օգտել մեզ կամիցին, երբ չկամել ոչ կարեն և ոչ անշարժ կալ. ապ՛ զկայ առցեն՝ ԹԷ կարեն և կասեսցին յընթանալոյ։ — Ա՛յլ բազմապատիկ է առ այդ պատասխանի. Ոչ ԷՀԷ նուազիցի որ ՚ի կամից այնոյ՝ զի չկամել ոչ կարէ. նա մնամաւանդ ցոյց մեծ հաստատութեան կամից է ԹԷ փոխել իսկ

ոչ կարիցէ ։ Այն բարւոյ չէ մարթ ճանեալ զոր առնէ . զի չէր բարի եթէ չառնէր , ապա և այլ բարի չըարեբարել ուժիք . զի զոր պարտէրն առնել զայն արար՝ և չէ մարթ նմա ճանեալ զոր ինչ առնէին պարտ էր ։ Դարձեալ՝ բազում ինչ խոհ է ընդ այս թէ Ոչ կարէ ճանել զայդ , զի Հարկաւորեալ է , և ընդ այն թէ Ոչ կարէ վճռիլ ։ Ո՞ւ թէ Հարկ ի վերայ կայ նորա առնել , ոչ նմա երախտապարտ եմ վասն բարեբարուելոյն , այլ որում զնա Հարկաւորէն ։ Իսկ եթէ Հարկաւորի ոք առնել ինչ առ ի չգոյէ այլոց լատագոհի զոր կամեցի , անձամբ զանձն Հարկաւորէ . և ես որ այն էի պարտապան որում բարեբարեալն ի Հարկէ , եղէց պարտապան որում անձամբ զանձն Հարկաւորեաց ի նոյն ։ Իմոյ կասեցին , ասես , լուսաւորչդ ի կամելոյ . բայց ո՞ր այնպէս անմիտ որ ոչ կամ Հանդերձեցի զայն որ անթուլանալին է և անփոփոխ ի հակառակին ։ Այս մանաւանդ ոչ տպաւորէն որ արդարապէս ընտրութեամբ կամի ինչ , Հարկ է կամաց նորա Հաստատուն գոլ , անդրդուելի և յատենական ։ Այլ եթէ կամն ընծայեմբ այնմ որ ի կամելն ինչ կարէ նոյնժամայն և չկամել , զիարդ ժխտիցեմբ զայն այնմ՝ որոյ բնութեամբ անփոփոխ են կամք ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Այլ ոմն աղէ , ասես , Թէ կարող ինչ էն՝ կասեցին յընթացից . որպէս Թէ ասել . Իմոյ այդ ամենայն առեղք անհուն խորոցաւ վայրաց տարակաց և ի պահպանութիւն կարգեալք տիեզերաց՝ Թողչեն զիւրաքանչիւր կայանս և յեղակարծ իմն ստանութեամբ բնութեան՝ աստեղք ընդ աստեղս ընդհարձին , և դիմանալոյ եկեալ առ հասարակ ընդ իրեարս՝ աստուածաստեղծքն տապալեցին կերտուածք , և երագ ընթացքն ի բնէ՝ ի կիսոց բալանդարեան սահմանեալ իւրեանց մշտահոսով Ջանապարհին ընկրկեալ կասեցին , և որք երթևեկիչն արդ փոխանակաւ զուգակշիռ և գեղեցիկ բարեխառնելով զաշխարհ , բոցակի-

զեալ Հրդեհեցին յանկարծ և բազմակերպ գեղ վայելչութեան նոցա՝ ի մի լուծցի տարր : Հուր զրեւ զերս Ձարակեացի և խառար մշտագիրեր զնա յաջողեցեալ , և վերջ անդնդոց կլցեն զդիս : Նմ այս առնեն լցցին զի զու յաղթահարեալ հաւանեացես եթէ քո աղագաւ շքաբերին զոքա և քո իսկ չկամելով օգտեն քեզ . Թէպէտ և ի նոցա մեծագոյն ևս և առաջին պատճառ :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Յաւել արդ և զայն զի ոչ ուստեք արտաքուստ բռնադատին զդիք , այլ կամք յատիճնական օրինք են նոցա . սահմանն եղին և ոչ փոխոխեն : Մի այնպէս Թուեցի ասել Թէ ակամայ առնիցեն ինչ , այլ զի հաստատութեամբ հանապազորդել կամեցան յոր սկսանն , այնր աղագաւ Թողուլ քքանել զայն ոչ կարեն . և ոչ ընդ նախկին խորհուրդս իւրեանց ստրջանալ : Զդարձ չէ մտքի նոցա զկայ առնուլ և կամ յետս ընդ կրունկն դառնալ . իւրեանց զօրութեամբն հարկաւորեալք սինդ կան յառաջադրութեանն իւրեանց . ոչ առ տկարութեան ինչ , այլ զի չէ արժան ի բաց կալ ի լուսոյ նէն ընդ որ անդարձութեամբ վճռեալ է ընթանալ : Ի սկզբանէ անտի հաստատութեան և տեսչութեան տիեզերացս Տամերէն նկատեցին և զմեզ և զմարդկան իակ խորհեցան զօգուտ : Ոմն որոյ չէ մտքի ասել Թէ իւրեանց վասն միայն ընթանայցեն և զիւրեանց գործ կատարեսցեն . զի է և մեր մասն յիրիզ : Զպա ուրեմն երախտապարտ եմք և արեւու և լուսնի և այլոց ևս երկնայնոց . զի Թէպէտ և վիհագունից վասն քան զմեզ պարբերեալ ծագիցեն , սակայն օժանդակեն և մեզ առ բարձրագունիցն ի վերեւս : Յաւել և զայն զի և յառաջատես խորհրդով օգտեն մեզ . վասն որոյ և երախտապարտք գտանիմք բարերարեալքս ի նոցանէ ոչ իբրև յանպէտ եղելոց , այլ յորոց գիտեմեն Թէ վայելելոց եմք յոր վայելեմքս արդ ի նոցա բարիս : Զի Թէպէտ մեծ ևս ուշ նպատակի կայցէ նոցա առաջի , և

քան զնահկանայուսյս պահպանութիւն մեծ և ար-
գասիք իւիւն գործոց նոցա , սակայն ՚ի սկզբանէ էիցս
հաստատութեան և զօրուս մեր կանխատեսել դիմ՝
զայս կարգ հաստատեցին աշխարհի , զի յայտնի լինիցի
թէ ոչ դոյզն իմամ կալան և զմինչ : Լրախտապարտք
ծնողացս եմք , թէպէտ և ոչ ամենեքեան վասն զաւա-
կագործութեան եկին ՚ի զուգաւորութիւն : Ալ է
մարթի կարծել զդից թէ չգիտէին զոր ինչ առնէլոցն
էին , որ զի և զնչպաքանչիւր մտանդ և զպէտս կարէորս
միանգամայն պատրաստեցին . և ոչ վայրապար և ա-
ռանց խորհրդոյ ծնան զպնտսիկ , որոց վասն և այնչափ
ինչ ստեղծին յատկութիւնս : Ստութեանն միոչ
չէ ստեղծագործեալ զմիզ՝ նկատեաց կանխատես-
թեամբ . չէիք ստեղծուածք այնչափ դոյզն և անարդ՝
միոչ վայրապար ՚ի ձեռաց նորա անկանել : Տես որչափ
ինչ հնարհեալ է մեզ . մարդոյ իշխանութիւն ոչ ՚ի
մարդիկ եւեթ սահմանի : Տես ցորվայր յածեալ բե-
րիմք մարմնովքս . ոչ ՚ի ցամաքի եւեթ կացեալք սահ-
մնոափակ , այլ և ընդ ամենայն մտանս աշխարհի
գնամք համարձակ : Տես ցորվայր վերաբերիմք հո-
գւով մեք միայն բաւականք ՚ի հանգուցել և ՚ի խնդրել
զդիս և վերամբարձ մնոք աստուածամոյն գոլ զու-
գապար . խելամուտ լերս ասա զի ոչ խաոն ՚ի խուռն և
անխորհուրդ գիպուց գործ է մարդս : Յամենայն հրա-
շակերտս տիեզերաց չիք աղուագոյն ինչ յոր պարտ-
ճեացի բնութիւնն կամ առ որ պարճեացի անշուշտ :
Ալսպիսի մոգեզնութիւն իցէ յերկեսից արկեալ ժխտել
զդիցն բարեբարութիւնս : Օ՜ խորդ երախտագէտ լիցի
որ առ մարդիկ , առ որս չէ մարթի ունայնաձեռն լինել
հնարհակալս , երբ ժխտէ և չհամարի ընկալեալ ինչ
՚ի նոցանէ , որք մեծամեծս պարգեւեալ և պարգեւեցեն
միշտ , ոչ ինչ խնդրելով փոխարէն : Ալսպիսի խօթա-
մտութիւն է չհամարել զանձն երախտաւորեալ վասն
այն՝ զի և ապերախտութեամբն հանդերձ երախտա-
ւորի , և զհանապազորդեան երախտեաց անդուլու-
թիւն առնուլ ՚ի ցոյց հարկաւ բարերարելոց տուողին ,
և ասել . Ոչն ինձ պէտք , թող անձին կացցի . և ո՞
խնդրէ զայն ՚ի նմանէ , և որ այլ ևս նոցին սակի են
ամբարշտութեան բանք : Ալ եթէ նուազ ինչ բարեա-

յառաջա իցէ քո , որպ առատասպարգև ընտրեալ ի ժխտելոյ իսկ զանխտիկ՝ յանձախեն առ քեզ , և որպ մեծագոյն ի բարերարութենէդ այն իսկ է զի և յար համարհել քո զնա բարերարել ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՈՐԴ

Ո՞չ տեսանես զմարդ և ծնողք զմտադ մանկու թիւն որդւոց իւրեանց բուռն արարեալ մարզին ի չա րակրութիւն տոկալ օգտակարաց . և թէպէտ ճըշմ գին՝ թէպէտ ընդդէմ դառնայցեն , դարմանեն խնա մով զմարմինս նոցա . և զի մի տարաժամ ազատու թեամբ խեղաթիւրեսցին անդամքն , զսպեն և կաշ կանդեն զի բարեյարմար և ըստ պատշաճի աձեսցին , և վաղվաղակի տան զնոսա յուսումն՝ ղժկամակու թիւն նոցա նուաճեալ ահիւ ։ Հուսկ ապա զիեռու թիւն պատանեկութեանն , եթէ չիցէ հպատակ պարտ կեշռութեան և վարուց բարեաց , սաստիւ բռնադա տեն ի նոյս ։ Եւ զաղգացեալքն իսկ և հասեալք յարբունս՝ թէ առ ահին կամ առ նողկանաց դժկամա կիցին առնուլ դեղս , բռնութեամբ և ուժգին ածեն ի հպատակութիւն ։ Այսպէս մեծագոյնքն ի բարե բարութիւնս ծնողաց առ մեզ այնոքիկ են զոյս յան գէտս և դժկամակելով ընդունիմք ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Յ ՅՈՎՍԵԳՈՑ ապաշնորհաց , որք մերժէին զերախ տիս՝ ոչ զի չկամէին , այլ զի մի պարտապան գտանիցին՝ նման են ի հակառակէն առաւելագնաց երախտագէտք՝ որք թշուառութիւնս բարերարացն իւրեանց մաղթէն և ձախողակս զի պատեհ լիցի նոցա զերախտագիտու թիւն իւրեանց յայտ առնելոյ ։ Այպիսիքդ նման նեալ Թուխն ինձ մեղգնելոյն ի սէր անարժան , որք աքսորելոյ սիրուհւոյն իւրեանց ցանկան զի վտարանդի

եղբայրն և փախստին երթիցեն վէտ . զաղքատութիւն մաղթեն նմա , զի ի կարօտութեան ցանկալի պարզևք իւրեանց լինիցին . մաղթեն զխօթութիւն զի ի սպասս կացցեն առ նմա . և զոր ինչ ցանկայ այր թշնամի՝ զնոյն և սիրահարը սիրուհեացն մաղթեն ուխտիւք , որով ատելութեան և մտկան սիրոյն գոյացես նոյն իզձք են ։

Այնպէս իմն հնձ և զայնոսիկ որք թշուառութեան բարեկամքն ցանկան զի օգնեսցեն նոցա , և անիրաւութեամբ հարցեն իւրեանց ձանապարհ ի բարերարել . մինչ լաւ ևս էր քնաւ իսկ չբարերարել քան անօրինութեամբ խնդրել պատճէ ի նոյն ։ — Օ խրդ թուեր քեզ եթէ մրրիկս ահագինս և փոթորիկս խնդրեր ի գից նաւուղդ՝ զի քալ ևս ի վտանգի ձարտարութիւն իւր երևեսցի . զնոյդ , եթէ մաղթեր և սպարապետ , զի ամբոխ մեծ թշնամեաց յերզարծ զեղեալ զանակաւ զնորափոսն ընուցուն՝ զցցապատնէշն խլեսցեն յահ և յերկիւղ զօրուն , և առ դուրս բանակին զթշնամի զօրուն կանգնեսցեն , որպէս զի ի մեծի տագնապին վատթարելոյ իրացն և կործանման՝ գործ մեծ յառաւելագոյն ի փառս իւր վճարեսցէ ։ Այդպէս առհասարակ ընդ գաղջ և զայրի ձանապարհ ըղբարերարութիւնն ածէն . որոց օգնելն կամին , ընդդէմ նոցա և ի վնաս կարդան զդիս , զի նախ զգետնատել և ապա թէ ձեռն տուեալ կանգնեսցեն զնոսա ։ Խրժական և խեղաթիւր երախտագիտութիւն է չարիս մաղթել այնմ՝ որում բարերարելն պարտք են ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԱՑԵՐՈՐԴ

Ասացե , ասիցես , ոչ ինչ անիրաւիմ առ նա ցանկութեամբս իմով . զի ընդ վտանգին և գերծ ցանկամ նմա ։ — Այո կայես ուրեմն թէ մեղանչես . թէպէտ և թեթևագոյն քան թէ առանց ելիցն՝ ընդ վտանգն ևեթ կամիր ։ Չզգամանաթիւն է ջրասոյզ առնել զոք , զի ապա ի վեր հանցես . տապալել զի կանգնեսցես , բանտարգել առնել զի արձակեսցես ։ Այլ բարերարու-

թէն ինչ է վախճան առնել աներաւութեան , և ոչ ումեք յարդիւնս հանարեսցի խել զմուշն զոր ինքն միտաց ։ Յանկամ մնասանդ զի բնաւ իսկ ոչ հարցես զնա՝ քան թէ հարեալ և բժշկեսցես ։ Շարչապար քեզ լեսեմ թէ զվերս իմ բժշկեսցես , այլ ոչ թէ վերս ինձ տացես զի բժշկութեան եղէց կարօտ ։ Այսի՛ վերացն զհետ իցէ հաձոյական . ընդ կարկառել վերին խրոմք , այլ ցանկալի ևս էր թէ բնաւ իսկ չէին լեալ վերք ։ Ակնպետ և այլում՝ ումեք , յորմէ չէր քո ընկալեալ երախտիս՝ մաղթէիր զայդ , խաժական և տմարդի մաղթանքդ էին , իսկ ոչափ առաւել այնմ որում երախտապարտ ես ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ինձ ընդ չարեացն և զնպաստն , ասես , մաղթեմ նմա միանգամայն ։ Այլ նախ՝ թէ ՚ի կէս մաղթանացդ հասից քեզ ՚ի վերայ , ոչ ապաքէն ապերախտ զքեզ գտանիցեմ . մինչ չև լուեալ ինչ ՚ի բարեաց զոր առնել նմա կամիցիս , գիտեմ զոր չարիս ցանկաս կրել նմա ։ Ոչզս վշտալից և տագնապ երկիւղի և զայլ ինչ մեծագոյն մաղթես նմա չարիս ։ Ի միասս ևորս ցանկաս զի կարօտ օգնականութեան իցէ . և յօգուտ քեզ՝ զի քոյին օգնականութեանդ լեցի կարօտ ։ Այլ եթէ ձեռն տալ նմա կամիս այլ զայարտագ հատուցանել . սակայն որ այգպէսն փութայ՝ ոչ եթէ երախտահատոյց լինել ցանկայ , այլ ՚ի պարտուց վերծանել ։ Եւ այսպէս այնու իսկ որով եւեթ մարթ էր արդարանալ ըղձիցդ՝ պարտաւելի գտանի և ապերախտութեան արգասիք , զի չկամիս գոլ պարտական ։ Յանկաս ոչ զի քեզ լեցի պատեհ երախտահատոյց լինելոյ , այլ զի նա կարիս ունիցի խնդրելոյ զնոյն ։ Ալ երագոյն լինել կամիս , և որ չար ևս է՝ զայր բարեացապարտ քեզ՝ յոտս քո խոնարհեցուցանել ։ Ակնեթևագոյն մեղգ էին եւեթ զընկալեալ երախտիդ ժխտիլը , որով զտուեալն եւեթ յիւրմէ կորուսանէր բարերարն . այլ դու ցանկաս զի կորուսեալն ընդից նմուն լեալ խոնարհեսցի ընդ քեւ , և

վատթարելով բախտին ներգևաւել վայրագոյն քան զբախտիս իւր գոյի, և ես երախտագէտ զքեզ համարեցայց. զայդ դու երթ մաղթեա, թէ կարես, լու՛ի լու այնորիկ՝ որում օգտելն կամիս։ Ոչձս բարեաց համարիս դու զմաղթանդ որ և թշնամիդ և երախտագիտի պատշաճին անխտիր. և որ թշնամիդ և հակառակորդի անշուշտ թուէին քեզ իղձք՝ եթէ զաւարան չեկիր։ Այսպէսին և թշնամիք ցանկացան երբեմն նուաճել քաղաքս՝ ի պահպանել զայնոսիկ. և յաղթել հակառակորդաց առ՝ ի ներել նոցա. սակայն միթէ ոչ թշնամութեան էին իղձքն, յորս անկը՛թութեանց զՀետ գայր զթութիւն։ Համայն ասել՝ զպիսի ինչ թուեսցին քեզ իղձդ, որոց կատարումն ոչ ումեք այնպէս անհաճոյ է, որպէս որում ըղձանասն։ Այնիրաւիս մեծապէս առ բարերարն, որում զի դու օգնեսցես՝ ցանկաս զի դիքն վնասեսցեն. անօրինիս և առ դիս՝ ի նոսա զանգթութեան զդժպհի մանեն թողլով և քեզ զգթութեանն, որպէս զի դու բարերարեսցես՝ և չարարսը լսցին զիք։ Այթէ չարախօս զբաժանեցան զբարերարէն կացուցեալ և ապա ի բաց մերժէիր, եթէ ի փոքրիչ դատաստանի մանուեալ գնա և ապա առեալ զերծուցանէիր, ոչ ոք ընդ ապիրատութիւն քո յերկուանայր, իսկ արդ զինչ խոիր է թէ խաբանօք կամ թէ ըղձիւք իրքն վնաբեսցին, բայց այն զի ըղձիւդ հզօրագոյն ևս մաղթես նմա թշնամի։ Այս մի ասասցես թէ զինչ անիրաւիմ. զի կամ ընդունայն էն իղձք քո և կամ անիրաւ. մանաւանդ թէ անիրաւ միշտ՝ թէպէտ և իցեն ընդունայն։ Այվ. վերիպին իղձդ՝ դից չնորհք էն այն, իսկ քո անիրաւութիւն այն՝ զի իղձ եղեր, և այդ իսկ չատ է։ Այյիպիսի սոյ արժանի գոս ցասման որպէս թէ իսկապէս արաբեալ էիր։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Այժ իղձքն իմ, ասես, արդիւնք լինիցին և անշուշտ պահպանութիւն անձինդ ապահովեսցի : — Այլ նախ՝ ստոյգ ի վտանգն զոր մաղթես և օգնութիւնն անստոյգ : Այսպէսդ՝ Թէպետ և երկաքանչիւր իսկ ստոյգ իցէն, բայց յառաջ միշտ շուտն. և հուսկ ապա՝ պայմանք ըղձիցդ քեզ գոն ծանօթք, իսկ զիս կալաւ մերիկ և զոգ նմին իսկ կասկածանաց Թէ ուր կամ ուստի օգնութիւնն իցէ և նաւահանգիստ : Արի Թէ դոյզն ինչ Թուեսցի քեզ կարօտութեամն տագնապ, Թէպետ և զօգնութիւնն գոից. կամ ահ սըրտատրոփ երկիւղին, Թէպետ և ապրեցայց, և կամ ընդ դատաստանաւն անկանել Թէպետ և անպարտ արձակեցայց : Ձկիք երկիւղ պոյ կատարածն առաւել հաճոյական իցէ և ցանկալի քան զաներկևան և զանսասան ապահովութիւն : Խնդրեա զի ի լինել հարկին կարասցես առնել ինձ բարիս, այլ մի խնդրեր զի ի վերայ իմ ծանրացի հարկ : Այնժ կատարումն ըղձիցդ ի քեզ էր Թողեալ, ինքնին զոր կամիդ առնելիր :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Արշաւ Համեստագոյն իղձք իցեն ասել. Յանկամ լինել նմա միշտ այնպիսի՝ զի անկարօտ ինքն՝ այլոց բաշխեսցէ բարիս. կացցեն նմա և յաւելցին Հոխութիւնքն որովք այնպէս մարդասիրաբար վարի յօգուտ այլոց առատաձեռնելով. մի լիցի նմա չքաւորել երբեք առ ի տալ և ոչ ընդ տուրսն սորջանալ : Ինքնայօժար ի քնէ յողորմածութիւն, ի գթութիւն և ի մարդասիրութիւն, յորդորեսցի և ևս ի նոյն յերախտագիտացն բազմութենէ, որք հնոյհակալք իցեն նմա, իսկ ինքն և ոչ ումիք : Այլ ումիք անողոքելի լեալ ինքն և ոչ ումիք մեահիցէ ողոքաւոր. անչեղի հաստատեալ ի բա-

լեբեախտութեան՝ ոչ որ կարասցէ լինել նմա այլ ազգ երախտագէտ բայց արուիս եւեթ ։ Ցեսանէս որչափ արդարացոյն իղձք են այսոքիկ , առ որս ոչ ժամանակք խնդրին եւ ոչ պատեհ . այլ իսկ եւ իսկ մարթի է լինել նոքօք երախտագէտ ։ Օ՛ի զինչ արգելու զմեզ երախտագէտ լինել եւ յաջողելոյն ՚ի բարեբախտութեան . ոչ տպաքէն եւ կարի յոյժ երջանկացելոյն՝ բազմօրինակ մարթի է մեզ հատուցանել զպարտս երախտագիտութեան , լեալ նոցա խորհրդական առաքինի , սերտ մտերիմ , կենսակից քաղցր եւ հաճոյական առանց մորդեւլզելոյ , խնամատար ունկնդիր հարցուածոց եւ հաւատարիմ խորհրդապահ գաղտնեաց եւ սեղանակից ընտանի ։ Ումեք որ ցոյն վայր յաջողեալ ՚ի բարեբախտութեան արուամբ ըստ սմանիսդ լուսեղեան ամենայնի չպակասիցին բարեկամք հաւատարիմք ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ

Լսեկ պատեհն այն զոր դուզ խնդրես՝ գժպատեհ է և գժպհի և նզովիւք չափ մերժելի . զի դու երախտագէտ իցես՝ պէտք իցեն ցասման ։ Աչ ոչ ամարի իսկ ՚ի միտ առնուս զմեզանդգ զի բարեբախտագոյն յապեբախտութեանդգ քում իցէ՝ որում ցանկաս լինել երախտահատոյց ։ Ունէ ած կացս քեզ զառաքեաւ զբանտ , զկապանս , զթշուառութիւնս , զծառայութիւն , զպատեհամ և զկարօտութիւն , և ահաւասիկ պատեհքն որոց ցանկաս . և որ զոգիս բարեբարութեան կապեալն է ընդ քեզ՝ նոքիմբք զարձակուրդն ընկալցի ։ Աչ ընդէր մնանաւանդ չկամիս զի որում այնչափ երախտապարտն ես՝ մեծաձարտասս իցէ և երանելի ։ Օ՛ինչ արգելուցու զքեզ , որպէս կանխեցեր ասել , և պերձացելոցն իսկ մեծաբաստս երջանկութեանբ լինել երախտահատոյց , առ որ բազմօրինակ առաքի կան քեզ պատեհք ։ Ունէ չգիտիցես զի և Ձոխիոն փարթամաց հատուցանելոք զպարտս ։ Ումեն լինձ կամք բուռն առնել քեզ ՚ի հատուցումն երախտեաց . եթէ փարթամ Ձոխութիւն բառնայ ՚ի քէն գՀնարս իրին , յուցից թէ

իւ իսիք նուազեալ իցէ բարեբաստիին պերճանքիւն, և որք լինցեալքն են ամենայնիւ զինչ պակասիցէ նոցա։ Պակասէ այր որ խօսիցի զՔրիստոսէ թիւն, և որ զանզգայեալն՝ի խոտան սուտակասպաս ամբոխին զօտարացեալն՝ի Քրիստոսէ և զընտեռացեալն՝ի շողոմ մարդելուզաց որպէս՝ի լուր բանիդ ուղղութեան, զարձուցէ՝ի բաց յախորժ հաճութենէ հրապուրող սուտութեանց։ Ընտանեօ՛ յոր անդունդս բերին գահավիժ՝ի լռել առ նոսա ազատախօս Քրիստոսէ թեան և՝ի զիջանել նուաստանալ հաւատարիմ բարեկամութեանն՝ի սպաս մարդահաճութեան։ Ա՛ւրք ըստ սրտի իւրում իրատուս կայ նոցա և ազգալար, այլ ամենեքեան էլ և՛ելք զմիմեանք մրցին՝ի փազաքչել։ և բարեկամոյ ամենեցուն մի փոյթ է և մի Ձիգն հաստակաց՝՝ի պատրել զնոսա քաղցրաբանութեամբ։ Ա՛յսպէս անգէաբ չափոյ զօրութեանն իւրեանց և մեծ իմն ըստ ասացեալն բերելով զանձանց կարծիս՝ տարտարտ ձեռն երիցք գտան՝ի պատերազմունս օրհասաբերս պետութեանն, և գկարևորն և զօգտակար վերդվէզին գնաղաղութիւն, և ըստ սպրելոյ ցասման բարկութեանն իւրեանց, զոր չէր օր որ չաճուցանէր, զաւգնոց հեղին զարիւն՝ հուսկ ապա և զիւրեանցն՝՝ի նոսա խառնելով, և՝՝ի խնդրել զվերջ կարծեցեալ անիրաւութեանց որպէս զհաւատեաց, զներողամիտ զիջումին չար քան զապստամբութիւն վարկուցեալ և յաւերժական զմեծագոր իշխանութիւն իւրեանց, որ՝՝ի ծայր բարձրութեանն հասեալ դիւրակործան ևս է, տապալեցին զաշագին պետութիւնս՝՝ի վերայ իւրեանց և որոց զիւրեանքն էին, և ոչ՝՝ի միտ առին զի՝՝ի շքեղափայլ տեսարանիս վաղանցուկ և ընդունայն փառաց և մեծութեանց՝ յայնմ օրէ յորմէ Քրիստոսէ թիւն անմահացոյց մեծութեամբ՝՝ի նոցանէ՝ աննայն չարիք և թշնամութիւնք՝՝ի վերայ կային նոցա։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄԵՆԵՐՈՐԴ ԱՌԱՔՉԵՆԵՐՈՐԴ

ՎԱՍԵՐՔՍԵՍ յորժամ փքացեալ ամբարտաւանու-
թեամբ և ի ջախջախ զօրութիւն իւր ապաստան՝
յառնէր պատերազմաւ ընդդէմ Յունաց աշխարհին՝
ամենեքեան ի նոյն գնա գրգռէին։ Կր որ ասէր թէ և
համբաւոյ պատերազմին ոչ հանդարտեալ թշնամեաց՝
ի լուր և եթ արշաւանիդ լինին թիկնադարձեցեք. այլ
ոք՝ թէ առաջի այդքանոյ ծանր ամբոխիդ անշուշտ ոչ
պարտեսցի միայն Յունաստան, այլ և յաւէր լեալ և ի
կործանումն, խիճամ մանաւանդ զի անմարդի ա-
մայսցին քաղաքք և փախստեամբ թշնամեաց անա-
պատ մեծ եղիցի աշխարհն, ուր չիցէ իսկ մեզ ընդ որում
մարտնչել և զանձանոյ ամբոխին ցուցանել զզօրու-
թիւն. և այլ ոք՝ թէ և արարածոցս բնութիւն հազիւ
տանել բաւեցէ զզօրութիւնդ մեծ. բազմախումբ
նաւատորմիդ անձկանան ծովք, ամբոխի զօրացդ բա-
նակեցեալք, յընդունելութիւն այրուձիոյդ դաշտօրայք
և համախուռն նետաձգութեանց սլաքք։ Կ յաձա-
խել այսպէս ամենեցուն մեծապանծ բանիւք գրգռել և
ևս զիօրական վստահութիւն յանձնապաստան ար-
քային՝ միայն Կեմարատ ակեղեմնացի համարձակե-
ցաւ և ասէ. Կ՚ոդ ամբոխ ծանր բազմութեան յոր դուզ
յուսացեալ ես՝ առաջնորդիդ մանաւանդ իցեն խիճա-
լի. առաւելուն թուոյ այլ ոչ զօրութեամբ. և զան-
բաւութիւն խուժանին չէ մարթի ունել ի կարգի, և
ամբոխ խառնիխուռն տակալ ոչ ունի։ ակռացիք նախ՝
իսկ և իսկ առ վերամբն երեալ քեզ առարկու՝ հանդէս
արասցեն զօրութեան իւրեանց։ Կ՚ոքք երեք հարիւր
զդեմ կացցեն բիւրաւորաց ազգաց և ազանց, և ան-
խիլորք ի կայից իւրեանց՝ կայցեն զկիրճն տուեալս նո-
ցա ի պահ, և մարմնովք իւրեանց արգելեալ խնուցուն
զանցան. Կ՚ոչիս ազգայն ոչ բաւեսցէ զրգռեեցուցանել
զնոսա ի տեղւոջէն, և զայսչափ սպառնալիս մարտի և
զհամախուռն յարձակումն հանգրէն զոգեցես ազգի
մարդկութեան ժուժկալեալ տարցի գունդ սակաւա-

ձեռն ։ Եւ ի յեղափախել օրինաց բնութեան և տալ քեզ անցս յայն կոյս՝ զկայ առեալ յաղօղ զՏանդերձեալ տոյժն առցես կրեալ յորոց ի Ներմայկնեայ կիրձն քեզ պատահեցին, և լինիս խեղանդուտ ղի որ գիտացն արգելուլ գիտացել և ի փախուստ դարձուցանել ։ Ողառաքինն տալով տացես քեզ տեղի Տանդերձ ին յաղթանդամը հեղեղաց փախուցեալ որ նախկին Թափոմն դիմեալ գայցէ ահագինս, այլ ապա ատաի և անտի համախումբ անկեալք ի վերայ՝ քոյովքդ զքեզ ընկճեսցեն զօրութեամբք ։ Ոչնմարտութեամբ է ասացեալն թէ մեծ են յոյժ Տանդերձանք պատերազմիդ որում չկայ բանական տանել աշխարհն յոր դիմեալ երթաս ի Նուաձել, բայց և այդ ևս Ձգնէ զմեր կողմն Նովին իսկ յաղթեսցէ քեզ Յուհատատն՝ զի չըստ տանել զքեզ և ոչ կարացես Տանդերձ զօրութեամբդ մարդկեչէր ։ Եւ զարձեալ որ մեծն է և կարևորագոյն ի փըրկութիւն՝ ոչ ժամանեսցես իսկ և իսկ զառաջս առնուլ ամենայնի, ոչ պարտեղոյն Տասուցանել զօրավիդն և ոչ զտկարացեալսն անդել և Տաստատել ։ վաղագոյն յոյժ միոչ չև տկարութեանդ զգացեալ՝ յաղթեսցես ։ Եւ միկայի քեզ անպարտելի զզօրութիւնս քո Տանդերձ ահռելի զի և քեզ զօրավորիդ անգիտելի է թէ Տանդգնացաս ։ չէք ինչ այնպէս մեծ որում չկայ մարթի կորնչել ։ զի թէ ոչ այլուստ՝ սակայն մեծութեամբն իսկ իւրով կորչիցէ ։ Եւ ցան Ներմարատայ գուշակութիւնքն, և որ զառաջայինս Տանդերձ զմարդկայինս կայն եղեալ՝ դղրդել վանել կարծէր զդիմակացս ահեղայն, յերից Տարիւրոցն արգելեալ կասեցաւ, և ընդ ահեղայն գոյեցս Ընդ Յուհատատն ցիր տապատա անկեալ զօրուն՝ յայնժամ տպա գիտաց Ներքսէս զինչ խոիր իցէ ընդ ամենայն և ընդ զօր ։ Եւ քան ի վերասուց տաժիցն՝ ահռելով նկուն եղեալ, Տնորհս կալաւ Ներմարատայ զի միայն խոսեցաւ զՏմարտութիւն ։ և ասաց Նման խրդել զօր ինչ և կամիցի, և նա խնդրեաց զի ի Նարդես քաղաք մեծ Ներիոյ մնցէ կառաք խոյր ուղղորդ ի գլուխըն ունելով, որ Թագաւորաց սեպհականն էր ։ Ներ արգասն արժանաւոր Տնորհին միոչ չև խնդրեալ էր զայն ։ Ներ առաղ ազգին յորում չգտաւ ոք որ խոսէր զՏմարտութիւն առ Թագաւորն՝ բայց յորմանէ որ չասէր զայն անձին ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Պետրոսն (1) գոստոս զգուստը իւր՝ զանամեթա-
յեանն անգր քան զնգովս անաւեթեմեան՝ տարագիր
արար. և զարքունեացն զկայսրատակատս նշանակեաց՝
յուցեալ հրապարակաւ զհամանեաց նորա զամբոխ, զորս
ընդունէրն խմբովին, զդեգերանսն ի քաղաքին ի գի-
շերական շաւայտութիւնս, զատեանս հրապարակին և
զբեմն՝ ուր հօրն օրէնս ընդդէմ ընացելոց սահմանեալ,
զտերեր եր տեղի պատշաճական ի գործ պղծութեան,
զհանապազորդեան համախմբութիւնսն առ անդրեաւն
Արսիայ՝ այն ինչ ի շուրթ ենէ անցեալ ի բոզութիւն
և ընդ անճանաչից լեալ հոմանեաց՝ կապչնս ընդ
կուրութեանցն պահանջէր։ Ո այս ամենայն զորոց ըզ-
վրէժ խնդրել պարտ եր թագաւորի՝ բայց և ծածկել
ի լուսեան, (զի ամենի նախատանաց չարեացն ի
ուրեք զի և առ վրէժխնդիր անգր ի վեր ելանէ), առ
չժուժալից բարկութեանն հրապարակագոյժ արար
(2) գոստոս։ Ալ ապա ժամանակ ի վերայ անցեալ իբրև
զարկութիւնն փոխանակեաց ամենի՝ հառաչէր ստէպ
զի ոչ թագոյց լսութեամբ զնախատինսն, զորս անպի-
տանայր յերկար՝ ցուցաւ ամենի համարեր առնուլ զայնս
ի բերան, և ասէր. Լեհ Ալքիպպոս և կամ Ա-
կեհաս կենդանի էին, և ոչ մի ինչ յայտնանէ ընդ իս
ոչ անցանէր։ Ալ յաչափ ահա գժուարին եղև զերկուց
ամանց փոխանակել զկորուստ՝ որում բիւրաւորք մարդ-
կան կային ընդ ձեռամբ։ Հարան կոտրելոցն լեգէոնք,
բայց այլք ընդ նոցա փոխանակեցին առժամայն. խոր-
տակեցաւ կորեաւ նաւատորմ՝ բայց ի սակաւ աւուրս
տորմիղ նոր էզ ի ջուր. Հուր ձարակեցաւ զշինուածս
հրապարակականս, այլ փառաւորագոյնք յայժ կան-
գնեցան փոխանակ, բայց Ալքիպպոս և Ակեհեաց ոչ ոք

1 Մարսիայ անգրի ի հրապարակին կանգնեալ և առ նովաւ կայր
տաճար աստեղին, և յայթակղութք ի գաւառ սովոր էին զանգրին պատ-
կել. որում և Յուլիա գուստրն Օգոստոսի պղծութենից պատկեր
նուիրեր։

գոտւոյ փոխանակ յամենայն ի կենաց ( ) գոտւոյ։ Եթէ պակասեցին արդարև որք զնոցա ունէին զաւէտ , Եթէ ( ) գոտւոյ ինքնին Եթէպացաւ՝ արանձնել կամեցեալ մանաւանդ քան արժանաւորագոյ լինել ի խնդիր , ասել ոչ ունիմ՝ Եւ ես ոչ զայն մարթի իցէ ասել ստուգութեամբ զի Եկենաց և Յղիսպաս Հատատուածեամբ բնաւորեալ էին ասել նմա զՀնամարտութիւն . և Եթէ կային կենդանի՝ ոչ և նոքա ընդ այլոն կեղծաւորէին ։ Այս բաքը են և սովորութիւն Եթագաւորաց ի նախատինս կենդանեաց գովել զվախճանեալս և որպէս Հնամարտութեաս ընծայեցուցանել զնոսա յորոց չէք վտանգ լսելոյ գայն ։

ԳԼՈՒԽՆ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Այլ զի գարձցուք անդրէն ի կարգ բանիս , տեսանեմ ոչափ գիւրին իցէ երախտահատոյց լինել և Հնիցն երջանկացելոց , և որոց ի ծայր Հասեալ իցէն մարգկայնոյն մեծութեանց ։ Խոտաց նոցա ոչ զոր լսելն կամին , այլ զոր ցանկացոյն անշուշտ Եթէ լսեալ էին ։ Ոգ լսելիս լցեալս մարդեղութեամբք մոցէ երբեք և Հնամարտութեանն ձայն . տուր նոցա խրատս պիտանիս ։ Հարցանեմ Եթէ զինչ երջանկացելումն կայ բիւրեց առնել ջնորհս . ասա զի մի յերջանկութիւն իւր յուսացցի , զի գիտացէ Եթէ ի պահպանութիւն նորին յոլովից պէտք էն նմա Հաւատարիմ բազկաց ։ Այնքան գոյզն ինչ Համարիցիս առնել նմա երախտիս Եթէ Հարձակես մերժեացես ի նմանէ զանմիտ վստահութիւնն և գիտացէ զի ոչ մնանջեան է նմա խնամութիւն իւր , զի անկայուն էն ջնորհք բախտին և երագուանք ի խուսել քան ի գալ , և զի ոչ նովին ոտանաւորով վերամբառնայ աք , բերցի ի խոնարհ . բազում այն է զի ընդ ծայրագոյն բարեբախտութիւն և ընդ յետին չարաբախտութիւն՝ ոչ ինչ է խոտր ։ Այգիտացիս ոչափ մեծ և պատուական իցէ բարեկամութիւն Եթէ գոյզն ինչ Համարիս պարգևել ումեք՝ պարգևեալ զբարեկամ , զԺուարագիան ոչ ի տունս Եւթէ այլ և ընդ աշխարհ Համարէն , և անդ առաւել ուր Եթէնն

յառնախեաղ ։ Ա՛ռ զինչ, միթէ բարեկամդ Համարիցիս դու ցուցակ գիւրաստակաց գիրուն զայնոսիկ զոր Հազիւ բառնն տանել յուշարարացն միտք և ձեռք ։ Ա՛յ այն բարեկամդ է ամենից որ գունդապետդ գան բախել զդուռս և առաջնոյ կամ երկրորդի ընդունելութեանն անցանել ՚ի կարգ ։ Ա՛ղխնամ սովորութիւն է այդ Թագաւորաց և Թագաւորակերպ պերճացելոց՝ ամբոխ մեծ արձանագրել բարեկամաց ։ Ա՛յնպարտանութեան իրք են մեծագնոյ Համարել զնուստ ապարանսիցն, և զսեմսին իսկ կոխել, և որպէս պատիւ չնոր հել զի մերձաւորագոյն մտիցն կացեալ՝ նախկին գիցես զոտգ ՚ի ներքս ապարանիցն ուր բազում այլ և պրանք են, որ և զնեալսն արգելուն արտաքոյ ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՁՈՐՈՐԴ

Ա՛յն ժէ՛ կ · Վրաքեաս և յետնորա Լիխաս Վրուսաս սահմանակին նախ ջոկել զեկաւորացն ամբոխ, զոմանս յառանձնաւորաբար ընդունելութիւն՝ զկնոս ընդ բազմաց և զայլն միահամուռ ։ Ա՛յն նոցա արդարև բարեկամք առաջինք և երկրորդք՝ բայց Ձնմարիտք և ոչ մի ։ Ա՛յ բնաւ իսկ բարեկամ կոչիցես դու զնա զոր խարեաց ողջունել յառաջ կամ յետոյ, կամ ինչ՝ ես վստահ ՚ի Հաւատարմութեան այնորիկ որ ոչ եթէ մտանէ՝ այլ ընդ կխաբայ զրուծան սպրդեալ սողոսկի ՚ի ներքս ։ Կամ զիարդ ազատախօսել կարիցէ նա որ և զՀաստատակաց սովորութեան ողջոյնն զոր ամենեցուն անխտիր ծանօթից և անծանօթից օրէն է տալ՝ ըստ բերելոց կարգին Հարկաւորի մատուցանել ։ Ա՛յս ՚ի Հանդիպել քո ամ և է յայդպիսեացն՝ յորոց յողջոյն մեծարանաց դղրդի քաղաքն Համայն, և մեծի ամբոխին բազմութեան թէպետ և անձկացեալ տեսցես զգլխոց գաւթին, թէպետ ՚ի գունդապետդ բազմութենէ խուռնրնթաց երթևեկին խցեալ զրաւեալ զանցան, սակայն գիտասջիր զի Հասեալ կաս ՚ի տեղի լցեալ ՚ի մարդկանէ՝ այլ ամպի ՚ի բարեկամաց ։ Ո՛ բարեկամ ՚ի ներքս ՚ի սրտի խնդրել պարտ է և ոչ ՚ի վայրագաթի · անդր տալ նմա մուտս, անդ ունել զնա և պահել

սիրոյաբար ։ Օ այս ուսմ և ահա եղեր երախտագէտ ։ Ա՛ն ինչ բարիոք բերես զքէն կարծիս եթէ Թշուառա-
գելցն և եթ պիտանացու զանձնդ համարեալ և ՚ի
յաջողութեան անպիտան իցես ։ Օ որ օրինակ յա-
ճախեայնի եթէ ՚ի կեզակարծս , եթէ ՚ի ձախողակս և
եթէ ՚ի յաջողութեան իմաստութեամբ զանձնդ անօ-
րինես , խոհեմութեամբ ՚ի կեզակարծն վարեալ ,
արիութեամբ ՚ի ձախողակս և չափաւորութեամբ ՚ի
յաջողութեան , նոյնպէս մարթ իցէ քեզ և յաճախա-
նի օգտակար զանձնդ ընծայեցուցանել բարեկամին ։
Ա՛ն անտեսելը զնա ՚ի Թշուառութեանն , քանզ և ոչ
այնմ ցանկացեալ և առանց իսկ քոյոյ իղձ լինելոյդ լի-
ցի քեզ տակաւին ՚ի բազմադէմ պատահարս կենցա-
ղոյս պատեհ հանդէս առնելոյ հաւատարիմ երախտա-
գիտութեանդ ։ Օ որ օրինակ եթէ մեծութիւնս ցան-
կասցի ոք ումեք զի և ինքեան ելցէ մանս յայնցանէ՝
թէպէտ և զայլոց օգուտ Թուիցի ինդրել՝ զանձինն
ինդրէ , նոյնպէս և որ ընդ Թշուառութիւն կամի բա-
րեկամին զի իւրով ձեռնտուութեամբն հանցէ զնա
անտի , զանձն իւր վերադասէ քան զնա , որ ապերախ-
տութեան գործ է արգարև . և ոչ ինչ համարի և հոգայ
ընդ Թշուառութիւն նորա զի ինքն երախտագէտ իցէ ։
և այնու իսկ ապերախտ է՝ զի Թեթևանալ ինդրէ և
բեռն իւն ծանր յանձնէ ՚ի քաց ընկենուլ ։ Վ՚անզի և
խոր մեծ է Թէ երախտահատոյց լինի ոք առ ՚ի բա-
րերարել և կամ առ ՚ի վերծանել ՚ի պարտուց ։ Ա՛ր
երախտահատոյցն լինել կամի բարերարին՝ բարւոյ նորա
և օգտի յարմարէ զանձն , և անկասկած ինայ հասանել
լոյ պատեհին ։ իսկ որ զանձին և եթ խորհի զազա-
տութիւն՝ ոչ և է օրինակաւ ինդրել հասանել ՚ի նոյն ,
որ չարակամութեան է գործ ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՈչՔ չտապումն, ասեմ, ապերախտութեան է նշանակ. զոր ոչ է ինձ մարթ յայտնաբանել այլ ազգ՝ բայց զնախկին ասացեալսն երկրորդելով թէ ոչ երախտաՀատոյց լինել կամք են քեզ՝ այլ՛ի պարտուցդ Ճողոպրիլ ասելով իմն. Ոչզրը իցէ ինձ զերծանել՛ի պարտուց աստի, Համարկ է ինձ Ջանալ և որ և է օրինակաւ Ճողոպրել զանձն: ՈչԹէ յիւրոց անտի ցանկայիը Համտուցանել բարերարին զորիտուր երախտեացն, ոչ ապաքէն հեռի յոյժ գտանիիը յերախտագիտութենէ. այլ այդ որում ցանկան՝ վատթարագոյն ևս է: Ոչզովս կարդասնան, և զգլուխն նուիրական քեզ՝ ընուս գտան անիծադրութեամբ: Ոչ ոք, որպէս կարծեմ, երկուանայր ընդ անգթութիւն անագորոյն սրտիդ եթէ յայտնապէս մաղթիցիր նմա չարիս զաղքատութեան, զգերութեան, զսովու և զերկիւղն, և զինչ խոիր իցէ ընդ բարբառ բերանոյդ և ընդ ցանկութիւն սրտիդ: Օ մի՛նչ՛ի չարեացդ՝ Թէ կարես առոչՋ մոռք՝ մաղթեա անձին քումՀ, և ապա Թէ արժանի երախտագիտութեան Համարեսցիս զոր՝ զոր և այր ապաշնորՀ ժբխտողէ արասցէ ոչ՝ չև՛ի Թշնամութիւն բերել ընդ բարերարին:

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Ո՞զ բարեպաշտ ասէր զՀնեաս եԹէ ցանկացեալ էր նորա առնուն Հայրենեաց զի զՀայր իւր ապրեցուցցէ՛ի գերութենէ, կամ՝ ո՞ զՀիկիլիացիան զերիտասարդս՝ եԹէ առ՛ի տալ որդւոց օրինակ բարեաց ըղձանային Հրացայտ բորբոքելոյ Ոչտնայ լերինն անսովոր ուժգնութեամբ՝ զի տացի ինքեանց պատեհ բարեպաշտելոյ առ ծնողս իւրեանց կորզելով զնոսա՛ի Հրկիզութենէ անտի. նա և ոչ Հռոմ երախտապարտ է Ոկիլիացւոյն Սկիպիոնի, որ ազատեաց զնա ի Հաննիբաղայ ահաբեկչէ, և ի ծառայութենէ ազատեաց զբազումս ի գերեաց, զոր ոչ ոք ի Հռոմայեցոց կարաց ազատել, և ոչ ոք ի Հռոմայեցոց ետ ինչ ի փրկանս գերեացն, այլ ինքն Սկիպիոն ետ ի փրկանս գերեացն զամենայն ինչս իւր, զոր

պիտի եթէ ցանկացեալ իցէ նորա յերկարաձգելոյ Պաւնիկեան պատերազմին մինչև կարող լինի ինքեան վճարել զայն . որպէս և ոչ Վեկեանց , ոք ետուն զանձինս ի մահ ի վերայ հայրենեաց , եթէ կանխաւ իղձ յետ էր նոցա մեծի վտանգին այնմիկ ի վերայ հասանելոյ՝ ի ցոյց հանդիսի արիական եռանդեան իւրեանց : Այնմապէս չարահաճելի բժիշկ որ ցանկայ զի մի պակասեսցին իւր գործք : Աղէն իսկ բազումք որոց զախտս ցաւոց գրգռեալ և զայրացուցեալ զի մեծ ևս փառաք բաժեսցեն ապա , չեղէն բաւականք ի փարատել զայս , և կամ մեծաւ չարակրութեամբ անտանելի կրացն հիպացելոց ուր ուրեմն կարացին նուաճել :

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ալանդեն զվալիտարատսէ , որպէս պատմէ իսկ Հեկատոն , զի իբրև երեսայր նա յաքսորս յոր ընդ այլոց բազմաց դատապարտեաց զնա քաղաքն խռովայզդ և տարօրէն ազատութեամբն գեղծեալ , ի մաղթել ուրումն զի մեծաւ վտանգաւ ստիպեալ Աթենացիք դարձուցեն զաքսորեալսն , նզովելով նզովեաց զայնպիսի դարձ : Վաղագոյն ևս ետ պատասխանի մեծ Հռոտիպիոս զոր ի միխիթարել ուրուք յաքսորեան իւր՝ զի մարտ քաղաքական մծատուտ ի վերայ հասեալ ի Հռոմ՝ հուպ ընդ հուպ դարձին ամենայն աքսորեալք , ասէ . Օ ինչ չար արարեալ է իմ քեզ՝ զի չարագոյն քան զերս իմ մաղթես ինձ դարձ ի Հռոմ : Ջանկամ մանաւանդ զի ընդ արտասահմանութիւնն իմ ամայեսցեն հայրենիք՝ քան թէ ընդ դարձն իմ տիրեսցեն : Այս բնաւ իսկ արտասահմանութիւն իցէ ընդ որ առաւել յոյժ քան զդատապարտեալն ամայեն այլք : Օ որ օրինակ նոքա զբարւոք քաղաքացւոյ գործեցին գործ ոչ կամելով հասարակաց վնասուք դառնալ ի տունս և առ թերափս իւրեանց , լաւագոյն համարեալ զի երկուք ոմանք կրեսցեն տարապարտ քան ամենեքեան առ հասարակ , նոյնպէս ոչ վերահատագիտի առն բերել զվնաս որ ցանկայ չարեաց և թշուառու-

թեան բանբերին՝ զի ինքն լսցի նման ձեռնտու . զի թէպէտ և բարեաց խորհրդովք՝ բայց չարիս նման մաղթէ : Եչ արդարոցի երբէք՝ թող թէ փառասիրեցի՝ որ զարհեաւն լիովին չիմանայ զՆոսա :

ԴԱՍԻԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Ի քաղաքս ուրեք իղձք անարժանաք ընդ ամբարշտութեան հանդիպէին : Զեմադէս Ա՛թենն՝ զնա որ վաճառականն էր կարևորաց յաղարհատութեան թաղեան՝ դատապարտ արար , ի վերայ հասեալ զի առաւել լագունի ցանկայ շահաճառութեան պատմ առանց մեռանելոյ բազմաց չմարթէր յայնոցիկ : Ա՛յլ խնդրել արժան է՝ իրաւանքն արդեօք դատապարտեցաւ . զոյն ոչ այն ցանկութեն էր նորա բազմաց վաճառել , այլ թանկագնոյ : Այլ զի երկոքուանքը վճարի վաճառաշահութեան՝ գնելով և վաճառելով ընդէր իցէ քեզ ի մեզ և եթէ գցանկութեն նորա սահմանել , մինչ և երկուտեք իսկ յայնոցիկ նման շահ : Յաւել ևս զի և ամենեքեան ուրեմն որք պարապեն ի վաճառաշահութեան՝ դատապարտութեան իցեն արժանի , որ զի զնոյն խնդրեն ամենեքեան և նոյն ցանկութեն է ի սիրտս նոցա : Արդ և մեծ կէս մասն մարդկան ընդ նովին անկանին դատաստանաւ . զի գիր ուրուք շահ ոչ այլոցն տուժիւք յայոդեսցի : Օ օրական ցանկացող փառաց՝ իղձ լինի պատերազմի . երկրագործին բարեբախտութեն ի մեծագնութեան պարենիցն կայ : Ձարտարախօսին շահ ի յաչախելոց դատիցն է . տարեւոյն ինաւակարութեն զբժշկացն յաչախ զօգուտ . և զոյց զգեղութեան և զգրգանաց զսպասն վաճառիցն՝ ի զեղծանելոց բարուց երիտասարդութեան յորդ ձախութեն . և հիւանդեաց ի սպառ անկեալ չքաւնայ արուեստ եթէ ոչ հուր և կամ փոթորիկ գարկան փոնգեսցեն : Գր ի միւսն դատապարտին իղձք՝ նոյնք հասարակաց են ամենեցուն : Այլ համարիցիս զու զի Ա՛ղնուտիոս միայն և Ա՛տերիոս՝ և ոչ նորա ամենեքեան

որոց գործ է հետամուտ լինել կատարգիր՝ ժառանգու-
թեան, զնոյն իղձս և զցանկութիւն ունիցին որ ինչ
յարդարիչքն հանդիսից յուշարկաւորութեան և գիա-
զարդիկք. այն զի սոքա չգիտեն իսկ թէ՝ այր մահուանն
ցանկանայցեն, իսկ նոքա ցանկան մահուան կարևոր
բարեկամաց և ծանօթից, յորոց՝ վասն բարեկամու-
թեանն առաւելագոյն յոյս է շահու։ Այսքա տուժես-
ցին ինչ ոչ՝ թէ յերկարեսցէ ոք ի կեանս, իսկ սոքա
մերկասցին յամենայնէ. նմին իւրն իսկ ցանկան ոչ միայն
զառաքն ածել զոր վատ ծառայութեամբն հայթայ-
թեցին անձանց, այլ և ի ծանր տրոց զերծանել։ Այս
չիք երկբայութիւն բռնագոյն յոյժ լինելոյ ի սոսա
ցանկութեանն այնորիկ՝ այր վասն մին այն զատապար-
տեցաւ. զի այր մահուամբն օգտեցան են, կենդանու-
թեամբն վնասեցին։ Այսպէս ահա թէպետ յայտ-
նի և անպատրուակ է ցանկութիւն սոցա, սակայն և
անպատուհաս։ Չետ ամենայնի այսոցիկ զարձցի իւրա-
քանչիւր ոք և յանձն իւր, և իջեալ ի խորութիւն
սրտի իւրոյ հետազօտեսցէ զծածուկ ցանկութիւնսն
տեսանել թէ արդեաւ իղձք իցեն ի նմա զորս ամաչեսցէ
խոստովան լինել և արդեաւ սակաւք զորս լու ի լու այլոց
յայտնել համարձակեսցի։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԻՍՆԵՐՈՐԴ

Այլ ոչ ամենայն որ ստգտանելին է՝ և ընդ դա-
տաստիւքաւ անկանիցի. զոր օրինակ և այս ահա՝ զորմէ
բանս է՝ իղձ բարեկամի, որ բարութեամբ սրտին զեղ-
ծեալ՝ յորմէ խուսափիէն՝ ի նոյն անկանի վրիպակ. զի
փութացեալ լինել երախտագէտ գտանի ապերախտ,
և որպէս թէ ասիցէ. Այս ինքն խոնարհեսցի ընդ ինև,
իմումն կարօտասցի ընդերկի և առանց իմ ոչ կեանք նո-
քա և ոչ պատիւ իցեն յականատեսի. այնպէս թէշա-

1 Ընդ ինչ մարգկան էր առ Հռոմայեցիս որք ձոխեցին և անգա-
ւակ ծերոց ընդելացեալ և յաճախեալ առ նոսա ի մեծարանս. ի
սպաս ծառայութեան և ի պարգեւս, հնարէին որսալ զնոսա և ժա-
ռանգորդ լինել ձոխութեանց նոցա կտակաւ։

ասացի՝ մինչ և զարիտուրն զոր ընդունի գրեսցէ յեբրայեցիս ։ Յայնմհետէ լարեսցի նման որոգայթի զոր ինձ միայոյց մարթի իցէ լուծանել ։ Թէևսամի բուռն և ահաւոր յարիցէ ի վերայ նորա և խումբ սպառազէն հալածեսցէ զնա ։ քննեսցէ փոխատու զինչս նորա և զատեսցէ զնա ։ Օ այսոսիկ գու ի լաւ գիցն ։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ

Այն այս ահա արդարութիւն քո ։ զի Թէ չէր նորա բարեբարեաւ առ քեզ՝ և ոչ մի ինչ յայդպիսի ոչ մաղթէիր նմա ։ Ողորմելոյ զայլն առնեսցի որովք ծանուսնս յանցանեաւ՝ չարիս մեծամեծս ընդ մեծաց բարեաց փոխարինելով, բայց և սովին անշուշտ յանցաւոր ես՝ զի զերաց իւրաքանչիւր չհնդրես զդէպ ժամանակին և ըզպատեհ, զորով որպէս որ զանցն առնիցէ, նոյնպէս և որ կանխէն քան զայն՝ հաւասար մեղանչէ ։ Օ ի որպէս բարեբարեցոյ ժամ ի և ժամանակ, նոյնպէս և փոխարինացն ։ և եթէ առանց իմոյ կարօտութեանս երախտահատոյց լեալ առ իս՝ ապերախտ գտանիս, քանզի՞ն առաւել եթէ ստիպես զիս ի կարօտութիւն ։ Այս ինա, եր չկամիս զի ազանիցին առ քեզ պարգեւքս իմ։ հիմ գժկամակիս լինել պարտական ։ առ ինչ որպէս անգութ վաշխառուի հատուցանել փութաս զկիւրն ։ եր յուզես զրգռես ինձ վիշտս, զի գուժարես ի վերայ իմ զգիս ։ Այեթէ այդպէս խիստ ես ի հատուցանել՝ զիաւրդ պահանջելիր արդեօք ։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

Այդ չատաջ քան զամենայն զայս գիցուք ի մտի, զի Հրեաքաղս, անդորրութեամբ սրտի կալ ինալ երախտապարտ և գժանին և զպատեհ երախտահատոյց լինելոյ ինդրել և ոչ բռնազբօսել ։ Յուշ լիցի մեզ զի որ փութայ տալոյժամ վերծանել ի պարտուց ապերախտ է, զի ոչ ոք մտագիւր հատուցանէ զոր գժկամակութեամբն պարտի, և զոր ինչ չկամի ոք ունել

առ իւր՝ բեռն Տաճարի զայն անձին և ոչ՝ ի պարգև։ Վասնիցն լաւ իցէ և արդար՝ ի պատրաստի ունել զնորա բարեկամին և ընծայել նմա զայն և ոչ յերեսուն ընկենուլ և Տաճարել զանձն զերծեալ՝ ի պարտուց։ Ասէրբարութիւն զօդ է հաստակաց՝ կցորդել զերկուս ընդ իրեարս։ Ասա. Չանկամ զքոյդ քեզ վերընծայել, բայց կամիմ զի՝ ի Տաճոյս քեզ ընկալցիս. եթէ արիածք՝ ի վերայ Տասեալ միւմ՝ ի մէնջ և այնպէս Տարկն բերիցէ կամ՝ քեզ զիմարքէն երախտեացդ ընդունել և կամ՝ ինձ զերախտիս այլ, ընտրեմ մանաւանդ զի որ սակաւագոյն տալ՝ տացէ զարձեալ։ Ասա դիւր պատրաստ կամ, չէք յապաղումն՝ ի Տուանս. ՝ի տալ պատեհին ցուցից զՏաւատս յաժարութեան սրտիս, ՝ի ժամուս դէպ կայցեն վկայք։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Ողջոյն կիրս երկիւղի և զխոշտապուճն նշմարեմ՝ ի քեզ յաձախ, իմն Լքերալ, և որպէս թէ աչերդիս տեսանեմ զի զանգիտես չլինել յամէ և դանդաղ՝ ի փոյթ երախտագիտութեան։ Լքախտագէտ սրտի ոչ՝ ի դէպ, ոչ արժան այդ խոշտապ տագնապի, այլ ընդ հակառակն աներկիւղ վստահութիւն յանձն իւր և յանկեղծ սէր մտերմութեան առ բարերարն որ անբաժանէն է ամենայն անձկութեանց։ Որպէս ստգտանելի է չհատուցանել զոր պարտիս, նոյնպէս և փութալի՝ ի նմին և կանխել քան զոր պարտն է։ Որ յառաջեաց՝ ի բարերարել՝ նորա իրաւունք են ընտրելոյ և ժամանակ փոխարինման ընդունելութեան։ Ասէ խիթամ ասես, զի մի այլ ընդ այլոց ինչ խօսիցին զինէն մարդիկ։ Ցար է համբաւոյ ծառայանալ և ոչ մնացն խղճի։ Պատասխանք երկու առնեմէր կան քեզ՝ ի դէմս. ինքեա՝ զոր խոթել ոչ կարես, և Տանքաւն որ խոթի։ Կամ զինչ, ասես, եթէ ոչ տացի ինձ և ոչ մի պատուհ. կացից մնացից պարտապան։ — Ասնացես այո, այլ պարզերես, այլ մնադիւր, այլ խնդագին զաւանդն առ քեզ պահելով։ Ասրջացեալ է ընդ ընդունելութիւն բարերարութեանն որ ընդ յապաղումն Տատուցման

փոխարինայն տալնապի։ Օ՛ի՛ է զի զոր արժան հա-
մարեցար ընդունել՛ի նմանէ, անարժան համարիս լի-
նել նմա պարտական։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

ԽԱՐԻՆ մեծապէս ոք մեծանձնութիւն վարկանին պարգևել բաշխել և զգոյս ամենեցուն և զտուն ընալ մեծութեամբ, զի այդ ամենայն ոչ մեծանձնու-
թեան՝ այլ յաձախ և բախտի են արգասիք։ Զգի-
տեն այնպիսիքն թէ զինչդ գժուարին իցէ երբեմն ընդ-
ունել քան տալ՛ի դուրս։ Վասն զի, առանց նուաս-
տացուցանելոյ և ոչ զմի կողմն՝ որ զի և երկաքանչիւր առաքինաբար լեալ հաւասարք իրերացդ են, ոչ ինչ ընդ-
հատ մեծանձնութիւն է պարտական գոլ երախտեաց քան զբարերարել. այնու և առաւելագոյն միւսոյն քան զմիւս՝ զի առաւելագոյն զգուշութեան և խնամոյ պէտք են՛ի պահպանութիւն առելոյն քան թէ՛ի տալ։ Օ՛ի պարտ ապա տագնապիլ և շտապել՛ի հատուցումն. զի որ՛ի դէպ ժամուն դանդաղի հատուցանել և որ փութայ տարաժամ՝ միօրինակ յանցանէն։ Վրայն առ
իս կայ՛ի պահեստի. ոչ յանձնէ ինչ և ոչ վասն նորա զանգիտեմ. քաջ պահպանութիւն է առնոյնի. չէք վտանգ կրընդելոյ բարերարութեան նորա բայց եթէ ընդ իս, նա մանաւանդ և ոչ ընդ իս։ Ո՛չ նորէն կալայ նմա, և այն իսկ փոխարէնք են։ Այլ՛ի հատուցումն երախտեաց խորհի յաձախ՝ կարծէ զի և որ բարերա-
րեացն՝ զընդունելութենէն փոխարինայն խորհելի միշտ։ Պատրաստս առ երկաքանչիւրն կացցուք զանձին. եթէ հաձոյ իցէ բարերարին ընդունել զփոխարէնն, զուար-
թամիտ հատուցցուք նմա. իսկ եթէ կամք իցեն զի կացցէ առ մեզ՛ի պահեստի, հիմ՛ի բաց հանցուք զգանձ նորա, ընդէր զլացուք նմա զայսպիսեաւութիւնն. զպէս և կամիցի՝ արժանի է ընդունի։ Իսկ զմարդկան կարծիս և զհանգաւ մի ցայնմայդ մեծարեցուք զի առաջնորդեսցէ մեզ, այլ զհետ մեր եկեսցէ։

ԴԻՐՔ ԱՕՐԻՆԵՐՈՒԹ

ՅՈՂՈՎՈՒ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԵՆՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Պատձառք եղեալք

Աչքիվ առ ձեռն՝ առ ծովափամբք ·
Ել ես ըզքեզ աստանօր երգասացիդ առասպելեօք
Ել՝ ի հիւս մանուածապատ յերկար նուագօք կալայց
առ դուբս [1] ։

Օ կաց ինաց Ձառիցս բովանդակեն գիրքս այս · և՝ ի սպառել իրացն՝ ոչ յայն գէտանին ունիմ՝ զոր ասել ինձ պարտ է, այլ Թէ զինչ լիցի իմ ասացեալ։ Այս Թէպետ վարկպարագի ինացուածքս Թուեսցին, ՝ի հա Ձոյս քեզ ընկալցիս ։ Այնժէ զանձն իմ՝ ընծայեցուցա նել կամք էին ՝ի բանիս, պարտ էր գամ քան զգամ ՝ի կարևորսն յառաջել և ՝ի վերջ կոյս Ձառիցս պահել զկարևորագոյնն որ և գյագելոցն անձանց բաւական էր զրգռել զքաղց ։ Իակ ես զկարևորագոյնսն անդէն ՝ի սկզբանն Համախուռն միայարեալ՝ և այդ զինացեալսն առ յինէն Հասկաքաղ առնեմ՝ ՝Այ՝ Թէ և ինձ Հաբ ցանիցես՝ ոչ ինչ կարևոր Համարիմ յետ Ձառելոյ ըզ կարևորագ որք յուղղաԹիւն են վարուց, դեգերիլ ՝ի հետազօտաԹիւն այնոցիկ ամենայնի՝ որք ոչ յօգուտ

[1] Վիրգիլ· Մշակական, Բ· 44 ։

ինչ Հոգւոյ՝ այլ՝ի մարզս ևԷթ Հանձարոյ Հնարեցան։ Ա՛Հանգի որպէս գէղեցիկ յոյժ ասէ Պաեմետրիոս Վիւ՝ նիկեան՝ այլն մեծ, որպէս ես Համարիմ, և քան ըզ-մեծագոյնս ոչ ինչ խոնարհագոյն, Լաւ ևս է, ասէ, սակաւս ուսանել խրատս խնամատուածեան կարևորս և առ՝ի պէտս կենաց պատշաճեալս, քան Թէ զբազումս ուսանել և ոչ բնաւ վարիլ նոքօք։ Ա՛յս յաւելու. Օ՞ր օրինակ ըմբիռ քաջամարտիկ է ոչ որ զԹէս Համարոյ շարժմանց գիտիցէ և զմնուածածապատ ոլորս, որք դուն ուրեք՝ի պէտս գան ընդդէմ ախոյէնին, այլ որ՝ի մին կամ յերկուսն քաջալարժ և ըզմնուԹեամբ դէտակին կալցի պատեհին յօգուտ՝ի վար արկանելոյ զայնս։ Օ՞ ինչ օգուտ է բազմայոլով գիտուԹիւն. շատ գիտէ որ զյաղԹելն գիտիցէ։ Այնպէս և՝ի կրԹանս խնամատուԹեան բազում՝ ինչ առ՝ի զուարճուԹիւն են՝ այլ ոչ յաղԹուԹեան սատարք։ Օ՞ ինչ իցէ, ասէ, ԹԷ չգիտիցես Եւ յորդեալ ջղոյս Վիվիան և պակասեալ տեղի տայ. ընդ՝ը յիւրաքանչիւր եօԹներեակս ամաց Հասակի նշանաւոր իմն յեղաշրջուԹիւն լինի՝ի մարդ. Հիմ՝ կացեալն՝ի Հեռաւոր ծայր երկայնաձիգ սրահի՝ անՀատասար Թուի լայնուԹիւնս նորա զի երԹայ տակաւ և անձկանայ՝ի ծայրին վիճակ վերջնոց սեանցն անանջրպետ մօտել իրերաց. Եւ երկօրեակքն զատաբար յղացեալք և ծնանին միանգամայն. միով արդեօք եԹէ այլ և այլ սաղմնաւուԹեամբ իցեն յղացեալք. առիմ՞ Համանձինք իրերաց և անմանք են բախտիւ. և անանջրպետքն յիրերաց՝ի ծննդեան ընդ՝ը այնչափ զանազանեալք իցեն կենօք։ Ա՛յ մեծ ինչ եղև՝ի քեզ վնաս եԹէ չխնդրես զորս ոչ անկ են քեզ գիտել և ոչ օգուտ։ Ա՞շխարհաՀռչակ Թիւն պարուրեալ ծածկի՝ի խորս, և վկարեմք որպէս յաւադոյս բամբասել զբնուԹիւն, որ զայն և ԹԷ պարտ մեզ գժուարագիւտ՝ յորմէ ոչ ինչ այլ օգուտ իցէ մեզ բաց՝ի գիւտէն։ Որ ինչ՝ի լաւուԹիւն մեր և յերջանկուԹիւն արբանեկեն՝ աչխերիս մեզ և կամ մերձաւորագոյնս եղ։ Որ արհամարհեաց Հոգւով զարկածս բախտի և գեր՝ի վերոյ ամբարձաւ երկիւղն, որ ոչ զանբաւից պնդեցաւ զՀետ անյագ ցանկուԹեամբ՝ այլ յանձին իւրում խնդրել ուսաւ զիակատս մեծուԹիւն, որ զաստուածոց և զը-

մարդկան ահ յանձնէ ՚ի բաց փարատեաց, գիտելով զի ոչ բազում ինչ երկիւղալի է մեզ ՚ի մարդկանէ, իսկ յաստուածոյ՝ և ոչ ինչ. որ անարգեալ զամենայն, որք ՚ի զուարճութիւն կենաց համարեալք և ՚ի տանջանս են մարդկան, յայն հասանիցէ՝ մինչև ոչ ինչ չարեաց պատճառ դնել զնահ՝ այլ բազմաց իսկ վախճան. որ բոլորանուէր յառաքինութիւն՝ ընդ որ և կոչեցաք՝ գնայ որպէս ընդ հարթ և ընդ դիւր. որ իբրև կենդանի ընկերական ՚ի պէտս հասարակաց համարի ծնեալ զանձն, և զաշխարհս որպէս տուն մեծ բոլորից. որոյ խիղճ մտացն մերկապարանոց կայ առաջի աստուածոց և որպէս ակներև ամենեցուն միշտ քաղաքավարի. որ յանձնէ առաւել քան յայլոց ակն ածէ, այնպիսին ՚ի մերկածին օդոյ վերամբարձ՝ ՚ի պարզն և ՚ի հաստատութեան կացոյց զոտս իւր. ուստև և կատարեաց գկարևորացն և զօգտակարաց գգիտութիւնս, և այլն ամենայն ՚ի զբօսանս իցէն պարապոյ։ Օ՛ի և յանքոյթն յայն հասեալ հոգւոյն յաներկիւղութիւն, օրէն իցէ նմա այնուհետև պարապել և յայնոսիկ որք ոչ ՚ի կորով այլ ՚ի մարզս են հանձարոյ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Օ ԱՑՍՈՍԻԿ ահա զփրկութիւն վարդապետութիւնս պատմեալ մերս Վեմերիոս զկետ եղելոյն իմանաւտութիւն հանեալ կրկին ձեռամբք պինդ ունել, և ոչ երբեք լքանել, այլ միանաւանդ սերտիւ սեեռել յանձին և միաւորել իմն ընդ ինքեան և հանապազորդ խոկմամբ այնպէս ընդելանալ ՚ի նոսին, մինչ զի ինքնամեծ տոյգք ելցեն մեզ ընդ առաջ և ամենայն ուրեք և յաժենայն ժամանակի ընդ ցանկալն՝ գոյին պատրաստաւ կանք, որով լինի նմա ընտրել առ ժամայն ընդ հաճոյանն և ընդ անհաճոյս, և ՚ի միտ առնուլ զի չիք ինչ չար բաց յախտից, և ոչ բարի ինչ բաց յառաքինութենէ։

՝ Այսչիկեանց է այս վարդապետութիւն, որք ժխտին պատուհասել Աստուծոյ և վրէժխնդիր լինել։

Ա՛յս այս լոյն նման կանոն կենաց լրնտրութիւն ամենայնի, և այնու վարեսցի օրինաւք ՚ի գործել զամենայն և ՚ի դատել զայլոյն : Հիգս և ամենահշուառս ՚ի մարդկանէ համարեսցի վնասս՝ որք թէպէտ և բարգաւաճք յոյժ Ճոխութեամբք , այլ պորտոյ և ցանկութեանց ծառայք՝ վտառ և անգործք թմբրեալք կան հոգւով : Ա՛յս ասիցէ յանձն իւր . Աշուղ և պատիր է հեշտութիւն և դիւրատղտուկ յամենայնի . որպէս ազահագոյնս բերիցի որ ՚ի նոյն՝ այնչափ վաղագոյն ՚ի ցաւս փոխեսցի նման այն , և զեղջ և կամ ամթի հուսկ ընդ հուսկ փոխանակեսցէն ընդ նորա : Ոչիք ինչ մեծավայելուչ ՚ի նմա և ոչ աստուածամարգ բնութեան մարդկան պատշաճական . վայելք ամենապարտ՝ զազիր և անարգ անդամոյն սպասաւորութեամբ հայթայթեալ , որոց և կատարածն արհամարհ է : Հեշտութիւն արժանի մարդոյ , արժանի վէհ անձին ոչ այն է՝ ընդ պարարել զորովայն իւր և զրգռել զցանկութիւնս , յորոց փախուցեալ մանաւանդ՝ իցէ յապահովի , այլ խոցս տալ ՚ի վերովիմանց կենցաղոյս , զորս յուզէ առ բարհաւանձութիւն մարդկան զգռեղոյն ընդ միմեանս ՚ի կռիւ , և որ գժնդակագոյն ևս է և անդուստ ՚ի վերուստ պատճառեալ՝ երբ դիւրահաւան գտանիքն համբաւոյն որ զդիցն՝ յորոց կրեմքս ՚ի նոյն և զնոսա կարծելով : Յայս հեշտութիւն անյեղլի , աներկևան և անտատանուկ վայելէ նա՝ զորոյ զգերապանձ նկարագիր կարգեմք աստանօր , և որ՝ որպէս բանիս կարգ է ասել՝ իւրոցն որ առ Աստուած և առ մարդիկ պարտուց քաջահմուտ՝ առաջնակայիւքն բերկրի և ոչ յապագայն լնի ակնկառոյց . զի որ յանատոյգսն բերի՝ ուրեք երբեք չունի հաստատութիւն : Ա՛յսու օրինակաւ ազատացեալ ՚ի ծանր և յոգեսպառ հոգոյ և ինքն իւրև բաւականացեալ , ոչ ցանկութեամբ , ոչ յուսով և ոչ անատոյգ տանջի կասկածանօք : Ա՛յս մի կարծիցես զնա իբրև սակաւուք բաւականացեալ . նորա է ամենայն , ոչ որպէս էին Ա՛ղեքսանդրի , որոյ միայն յաին Աստուծոյ մի ծովու հասեալ աշխարհակալութեամբ՝ բաղում ինչ քան զորս ունէրն պակասէր նմա . նա մանաւանդ և ոչ այնք որոց յաղթեալ և ընդ իւրև նուաճեալ էր՝ իւր էին , միոյ ահա Ալեհիկրիտոս նախաբար նորա

նաւատորմիւ շուրջ յածեալ ընդ Աֆրիկան՝ ի ծովս անծանօթս յուզէր պատերազմ։ Ինձ ոչ շատ իսկ ցոյզք էին աղքատութեան նորա այն՝ զի անդր քան զամենայն կարգեալս ի քնութենէն՝ զէն ածէր, և զաչացու անյագութեամբ տայր զանձն յանդունդս անսահմանս անծանօթի խորոց։ Օ՜ինչ փոյթ է ինձ քաղծ թագաւորութիւնս նուաճեաց կալաւ, քանիս պարգևեաց և ոչխարի ազգս կալաւ իւր հարկատուս. ապա՛ զէն այնչափ ինչ պակասէ նմա որքանով և ցանկայ։

ԴԱՍԻԽՕ ԵՐԲՈՐԴ։

Այլ ոչ ևս ինձ Աղեքսանդրի միայնոյ եղև մանեցութիւնս այս, որ յաջողութեամբն յանդգնեալ խաղայ ընդ հետս Ալաքսի և Հերակլի, այլ ամենեցուն նոցա զորս զրգռեաց բախտն առատապարգև։ Ընկ՛ի համար ինձ արկ զվիրտս և զվաճիւս, և բռնադակ իսկ զկարգ թագաւորացն Պարսից. և ցոյց ինձ զոր ի նոցանէ որ իւրով տերութեամբն բաւականանային և ոչ ի խորհուրդս այլոց ևս աշխարհակալութեանց վճռել էին զկեանս իւր։ Այլ ոչ ինչ էն զարմանք. զի որ ինչ միանգամ զբռնամբ ածէ ցանկութիւն, ծախէ առաժամայն և սպառէ. յանօթի անյագութիւն լից որչափ ինչ և կամիցիս, այլ օգտի ինչ ոչ։ Ախտացումն միայն ունի զամենայն և անաշխատ պահպանէ։ Ընդէն ինչ նմա պէտք տեղակալս իւր յայնկոյս առաքելոցն, և ոչ ի գետեղէրն Թէնամեաց հարկանել բանակ. ոչ գունդս պահակապան ի դիպուն յամուրս զետեղել, ոչ լեգէոնաց և ոչ այրուձիոյ փաղանգս կազմել։ Օ՜ որ օրինակ զիջն անմահէք անգէն վարէն զԱթաւրութիւն և յանդգնութիւնս պաշտպանեն ի բարձանց զժտանգութիւն իւրեանց, նոյնպէս և իմաստունն զպարտս պաշտաձիցն՝ որչափ և բազումք էցեն, անչափոյ կատարել. և որպէս հզօրագոյն և պատուականագոյն յամենայն ազգս մարդկան՝ ստորև քան զինքն տեսանէ զնոսա։ Օ՜ատղութիւնս քեզ Թեւրևա՝ բայց մեծի հոգ ոչ իրք են՝ լեզուին արևու մինչև ի մեսս ընդհանայ ոչ օք, որում

չէք ինչ անէծախանց և անմահացեալ յանմահութիւն, և տեսեալ զայնչափ կենդանեաց հոյլս, զայնչափ առատութիւն իրաց ամենայնի զոր Ձոխաբար զեղու բնութիւն, արձակել զայս բարբառս աստուածգեղէն. Ա՛յս ամենայն իմ են։ Այս իմ իմիք արհեստից անկասկած այսպիսին. քանզի և արտաքոյ ամենայնին չիոչ ինչ այլ։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

Օ աՁդ ահա, ասիցես արդեօք, կամիլ և ես։ Պինդ կալայց զքեզ ասելն՝ տեսանել Թէ որպէս Ձողոպրել կարացես յորոգայթէ աստի յոր քեզէն ըմբռնեցար։ Այս ինձ ապա, զիարդ կարէ ոք պարգևել ինչ իմասանոյ, եԹէ ամենայն ինչ նորա իցէ. վասն զի և զոր պարգևէն՝ նորա իսկ է։ Ընդհանուր ուրեմն է երախտիս առնել իմասանոյ. որում զինչ և տացես՝ յիւրոյն տաս. և սակայն ասէք Թէ մարԹ է տալ պարգևս իմասանոյ։ Օնոյն ինձ հնձ Հարցուած և զբաղեկամաց, առ որ ամենայն ինչ Հասարակաց է ասէք. ապա ուրեմն չկարէ ոք պարգևել ինչ բարեկամին, զի գՀասարակացն պարգևէ՝ — Ա՛յս զինչ արգելու, զի որ իմասանոյն է՝ նոյն և նորա իցէ որ սեպՀականեալ ունի զայն։ Այս քաղաքական իրաւանց ամենայն ինչ Թագաւորին է, և սակայն այն ամենայն որոյ առ Հասարակ տիրէ Թագաւորն՝ յինքնուրոյն տեարս են բաժանեալ, և միոյ միոյ յայնցանէ սեպՀական տեարք էն. և այսպէս կալոզք եմք տալ Թագաւորի և տունս և ծառայս և դրամս. և ոչ Համարիմք յիւրոյն ինչ տուեալ նմա։ Օ ի ամենայնի տիրէ Թագաւորն, և իւրաքանչիւր ոք զիւրն ունի սեպՀական։ Ա՛յ Թէ ինացուց կամ Վանգանիայցոց կոչին սահմանքն, զոր մանաւանդ բաժանեն ապա յիւրեանս զրահիցք ուրոյն սահմանաւ. և Թէպէտ միոյ միոյ անդաստանք՝ Համօրէն Հասարակապետութեանն էն, բայց և մասանց իւրաքանչիւր ինքնուրոյն տեարք էն. վասն որոյ մարԹ է մեզ զազարակս մեր ընծայել Հասարակապետութեան, Թէպէտ և

նորա Համարեցոյին գոլ. վասն զի այլազգ նորա էն և այլազգ իմ։ Ո՞ երկբայեցոյ երբէք զի որ ստրուկն է՝ պարկերին Հանդերձ պատշաձի տեառն իւրում, բայց տայ նմա ընծայս։ Օ ի ոչ եթէ անենչ իցէ ստրուկն, իբր զի առանց Հաձուելեան տեառն չկարէ ունել ինչ. և ոչ եթէ տուեալք ինչ ինքնակալ չՀամարիցի տուեալ ի պարգև, իբր զի և յակամայս մարթի երբ բառնալ զայն ի նմանէ։ Այս արդ քանզի միաբան եմք յայսմ թէ ամենայն ինչ խնամատոյն է, ժամ է ցուցանել զոր ինդրեմք թէ որով իւիք մարթի իցէ առատաձեռնել պարգևս խնամատոյն որոյ առացաք լինել զամենայն։ Ամենայն ինչ որդւոց՝ Հօրն իւրեանց է. այլ ո՞ ոչ գիտէ թէ մարթի է որդւոյ ընծայաբեր լինել Հօրն իւրում։ Ամենայն ինչ զիջն էն. բայց և զից պատարագս մատուցանեմք և տուրս ի գանձանակս նոցա արկանեմք։ Այլ եթէ չկայ իմ զոր ունիմն, զի և քոյդ է. քանզի մարթի է նոցին իսկ իրաց լինել և իմ և քո միանգամայն։ Այսես. Ամոյ իցէն կանայք պատնիկք ընդ ձեռամբ՝ կատար է. և եթէ ամենայն ինչ խնամատոյն էն, և պատնիկք բռանգակին յամենայնն, ապա ուրեմն և նորա խնամատոյն էն. որով և նա ինքն խնամատուն լինի կատար։ Ասյսիսի բանիւք և զգնեցն արգելուն նմա. առեն. Այ ոք է որ գնէ զիւրն. իսկ արդ ամենայն ինչ խնամատոյն է, ապա չկարէ գնել ինչ խնամատուն։ Այսպես անընդունակ Համարին գնա և փոխառուեան, զի ոչ ոք տայ տոկոսս վասն իւրոյն ընկից։ Ասգուշ ինչ և այլ անՀամարս խնամատակալ մեզ ի գէմս ածէն, Հեպտ և քաջ խնաման զատացեալն առ ի միջ։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ասանձն զամենայն ինչ առեմ լինել խնամատոյ այնպէս՝ զի և առն իւրաքանչիւր իցէ իշխանութիւն յիւրոն. զոր օրինակ և Հաւատոր բարի Հեպտ իշխանութիւնն առեալ ունի զամենայն, բայց և իւրաքանչիւր ոք իւրումն տիրէ. զայս մեք յիւրում տեղւոջն ցուցցուք. իսկ յայժմուս յառաջարկեալս մեր խնդիր շատ է և

այն՝ զի կարող եմ պարգևել խնամանոյ զայն ինչ՝ որ
լսա այլ և այլ տեսութեան և իմ է և նորա ։ Այլ զի
ընդ այն զարմանաս թէ որպէս զամենայն ինչ անկի՝
պարգևել ինչ մարթիցի . ՚ի վարձու կալայ զառն
քո , և ահա երկաքանչիւր այլ և այլ տեսութեամբ
տեսեալ եմք նմին . տանն տէր զու՞ ես , իսկ վայե-
լիցն ես ։ Այո՛ ՚ի պտուղս անդոյ քոց չիցէ քեզ օրէն
հակել թէ չՅոյզուցս քեզ որ զանդոյ վարձեայ ։ Այլ
եթէ նուաղութիւն իսկ իցէ արմտեայ և կամ սուլ ,

Ի չեզՔ օտար բարդեալ ՚ի զէզ
Ո՛Հ , վայրապար զաչս արձակես .

թէպէտ քոյոց կալուածոցդ իցէն բերք՝ թէպէտ ՚ի
քում անդի չեզՔեալ՝ և որ ՚ի քոյդ ամբարելոց էին ՚ի
չտեմարան ։ Այս ոչ մոցես ՚ի առնն զոր ես վարձեցի ,
թէպէտ և քո իցէ . և ոչ զատրուկ քո զվարձկանեաւն
ինձ՝ առնուլ կարիցես ՚ի բաց . նա թէ և գկառս քո ՚ի
վարձու կալեալ և տայ քեզ բազմել ՚ի նմա՝ ՚ի ընդրս
հանարեսցի քեզ այն ։ Տեսեր արդ եթէ արպէս զիւրն
առեալ որ և համարի առնուլ ՚ի պարգևի մնասին ։

ԳԼՈՒԽ ՎԱՑԵՐՈՐԴ

Յաց ամենայն զոր առ օրինակի ՚ի մէջ մատուցի ,
նոյն ինչ իրք երկուց անանց պատշաճեին , միոյն՝ որպէս
տեառն ստացուածոց , և միւսոյն՝ վայելչին ։ Արիերիմ
են գիրքս ասեմք , և ահա Ղեովոս գրավաճառ՝ իւր
համարի զնոյն ։ և երկաքանչիւրք իսկ իրաւունք են , զի
մին իրրև մատենագիր , և միւսն որպէս ստացող մա-
տենին՝ իւրեանց ասէն լինել զայն . և արդարև եր-
կաքանչիւր նոցա իսկ են , այլ ոչ նովին օրինակաւ .
այսպէս և Տիտոսի Յիւթոսի մարթի իցէ առնուլ ՚ի
պարգև , կամ գնել զգիրս իւր ՚ի Ղեովոսէ ։ Այսպէս
մարթի է և ինձ ՚ի սեփական ընչիցն իմոց պարգևել
ինչ խնամանոյ , թէ և նորա իցէ ամենայն ։ Օ ՚ի թէ-
պէտ և զօրէն Թագաւորի հասարակաբար տէր իցէ

ամենայնի, բայց զի և իրաց իւրաքանչիւր գոյ և սեփական տէր, նմին իրի և պարգեւս առնուլ կարող է, և պարտական լինել և գնել և՛ վարձու առնել։ Սեփական տէր է ամենայնի. այլ գանձք արքունի՝ նորա միայոյ են սեփական. ամենայն ինչ նորա են ըստ իշխանութեանն, այլ իւրքն՝ և ըստ ժառանգութեան։ Բայց սահմանեալ ինչ ինքնակալ տէրութեանն՝ խրոչ դրել մարթ է՝ զինչ նորա իցէ և զինչ ոչ։ Օ՛ի և այն ինչ որ ոչ նորա համարի՝ այլով տէրութեամբ նորա է։ Ըստ այսմ՝ օրինաւի և իմաստունն տէր է ամենայնի հոգւով այլ արդեամբք և իրաւամբք իւրոյն ևեթ։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ասէ՝ զի զամենայն մարդ ցուցանել պատճառս բանութեամբք սեղմանակապուտս գոլ, և է զի և ոչ զոք։ Թվ կամք իցեն նմա զամենեսին՛ի Տարպեան ժայռէն առնել զահավէժ, ասէ. Որ զբաստուածոյն եբարձ և վանեաց, և չիւր պետս՛ի գործ հարկ՝ սեղմանակապուտ է. իսկ արդ ամենայն ինչ է աստուածոյ, ուրեմն զինչ և առնուցու զբ՝ սեղմանակապուտ է։ Իսկ յորժամ քակել զմեհեանս հրամայէ և անպատուհաս կապտել զկապուտին, ասէ. Որ ինչ սեղմանակապուտութիւն է չիրագ, զի բարձեալ ինչ՛ի տեղւոջէ մտաի որ աստուածոյն էր, փոխադրի չայն՝ որ դարձեալ աստուածոյն է։ Ոչ որ՛ի դէպ է ասել. Ըզգաթա ամենայն ինչ իրք աստուածոյն են, այլ ոչ ամենայն ինչ ձօնեալ աստուածոյ, և սեղմանակապուտութիւն ահա չայնոսիկ է՝ զորս միանգամ կրճնն նուիրեաց Աստուծոյ։ Այսոցիկս և աշխարհս համօրէնս՝ տաճար է անմահիկին աստուածոյ՝ զաբմնագործ մեծութեամբն նորա ևեթ արժանի. այլ սակայն խորհ է ընդ սրբեացն և ընդ անսուրբ, և ոչ զոր ինչ օրէն է առնել ընդ երկնաւ և չայնպիսեան լուսաւորաց, գնոյն օրէն իցէ առնել՛ի տեղւոջ յորոյ վերայ կոչեցեալ է անուն մեհենի։ Այլ սեղմանակապուտ ամբարչտութեամբն ոչ ինչ սահման Աստուծոյ՝ որ բնութեամբն

գեր ՚ի վերոյ է ամենայն ՚ինաստակարաց , բայց որպէս զի՝ ստուած Թէսաղոնեայ կրէ պատուհաս . ըստ մերոց և ըստ իւրոց իսկ կարծեաց պատժապարտ է : Քրդ զոր օրինակ սեղանակատուտ հանարի որ բառնայ ինչ ՚ի նուիրեալեացդ , Թէ և ՚ի սահմանս աշխարհիս իցէ տեղին ուր և զգողնին փոխադրէ , տոյնպէս և յիմաստնոյ մարթի է բառնալ ինչ գողութեամբ . բառնալով ոչ ինչ մի յայնցանէ զոր ունի հասարակաբար , այլ յիրաց անտի՝ որ նորա էն սեփական և յատանձին պէտս նորա սահմանեալք . Թէպէտ իմաստունն ըստ առաջնումն տեսութեան ինդրէ ունել զամենայն և ոչ ըստ երկրորդին՝ Թէ և կարիցէ , և արձակէ զաւրբեան հոռմայեցւոց սպարապետին , որում յորժամ ՚ի փառասէրն արութեան քաջութեանն և բարւոք վարելոյ զհասարակապետութեանն՝ վճռեցին տալ անդաստան օրաւար գետնոյ . Օ ինչ պէտք իցեն ձեզ , ասէ , այն-պիսի քաղաքացւոյ՝ որում աւելի ինչ պէտք էն քան զմիոյ քաղաքացւոյ : Ոչ առաւելագոյնի յոյժ մեծանձնութեան Թուեցի քեզ հրաժեշտ նորա ՚ի պարգևէն , քան զարժանին լինել այնմ: զի բազումք արդարև չափ և սահման եդին այլոց , այլ անձին և ոչ ոք :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ցպսպէս ուրեմն նկատեալ իմաստունն ըստ հոգւոյն՝ որով աւելի է ամենայնի և յամենայն ուրեք հասանել անարգել՝ ունել ունի զամենայն . իսկ Թէ ըստ հասարակաց մերոց իրաւանցս կշռել գնա հարկ լինի՝ որ ինչ անձին առանձինն է , այն ևեթ նորա գրեցի : Ոչազում ինչ խոտոր է եթէ ըստ մեծանձնութեան նորա կամ Թէ ըստ բախտին մեծութեան հաշուեացն ստացուածք նորա . իսկ զամենայն ունել այնպէս պարտ ասես , զգուշալի է նմա : Ոչ ըզՈսկրատ ածեմ քեզ առ այս յօրինակ , ոչ զՎրիւսիպպոս և ոչ զՕենոն այլոցն հանդերձ զարս մեծամեծս արդարև , բայց գուցէ հնութեանքն առաւելապէս մեծարեալ , որ զի հնոյն գովութեանց ոչ հակառա-

կին մահանաք . խուն ինչ վերագոյն զԱՒետարան բանք եղեն , զոր՝ որպէս ինձ Թուի՝ յաւուրս ժամանակաց մերոց ընծայեցոյց քնութիւնն ի ցուցանել Թէ որպէս լիցի հնար նմա մեզ վատթարանալ և մեզ նուաւաւ գալ յաղղութիւն : Այլ գերակատար խնամուԹեամբ , Թէպէտ և ժխտեսցի զայն ինքն , և անյողդողդ ի խոր հաւատս իւր , և պերճախօսութիւն նորա ոչ պակաս Ձեալ և ոչ յերիւրեալ՝ այլ Ձառեցելոյն քաջագէպ վեհ և հզօր ինքնօրէն ըստ բերելոյ իրացն ուժգնութեան առեալ Թափ : Ոչ ինչ երկայիմ նախախնամութեանն տուեալ նմա զայդ կեանս և զայդպիսի պերճախօսութիւն յօրինակ բարեաց և ի կշռամբուԹիւն մերումն դարու :

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Այր Թէ ի գից ոք յօժարիր տալ Աւետարի զմխուԹիւնս մեր ի ստացուած ժառանգութեան պայմանաւ չշնորհելոյ ումեք զայնոսիկ , հաստատեալ եմ զի ի բաց հրաժարիր ասելով . Այս ընդէր իցէ ինձ տանձնել զայդ բեռն ծանր և գժոխմջեր և զթեԹաբեռն ազատութիւն անձինս արկանել ի խորս տղմոյ . զի ածես Թափես ի վերայ իմ զաղէտս չարեաց ազգաց և ազանց , զորս պայմանաւ իսկ շնորհելոյ այլոց չառնուի յանձն . զի բազում ինչ իրք են զորս ոչ ի դէպ յանձին համարիմ պարգևել այլոց : Այլ կամիմ տեսանել գամ մի որ ինչ զազգաց և զԹագաւորաց զայն զօշտեն . զգիս արեան և զչոգւոց ձերոց կամիմ տեսանել : Ոչ ասա այսր մտաւ ինձ նախ ի հանդէս զսպասս զեղխութեան կարգ ըստ կարգի՝ Թէ այնպէս հաճոյ իցէ քեզ , կամ որ լաւ ևս է՝ միաձայն զոյն կուտեալ զամենայն : Ցտեսանեմ ահա զկրայս արուեստագործեալ Ձարտար նրբութեամբ և զչամն և զսխեզձ կենդանեացն զխեցիս վաՁառեալս Թանկագնոց , և գունակ գունակ երանգոյն երևոյԹ՝ որով պատուականագոյնքն են , պէսպէս դեղոց առ ի ներքոյ

յարմարութեամբ ՚ի նմանութիւն ածեալ Աշմարտին՝, Տեսանեմ սեղանս յաղխիւ փայտէ՝ որ ՚ի կշիռ գայ գանձուց մեծի իշխանի, և որ այնչափ յաւելու ՚ի գին որչափ առ խեղաթիւր ոլորից ծառոյն ՚ի բաղնատեան Հատոյի ՚ի քնոյ։ Տեսանեմ և անօթս բիւրեղեայս որք դիւրաբեկութեամբն առաւելուն ՚ի գին, զի վտանգաւ կորստեանն ցանկալի և լինին տպիտաց իրքն, յորոց խոչընդ մանաւանդ պատճառ էր։ Տեսանեմ բաժակս մեծագինս որպէս եթէ ոչ լաւ արժան բաւականին մոլեցի զեղծութիւն՝ եթէ ոչ ականակուռ նուագօք պաշտեցեալ շուրջանակի զոր ժայթքելոցն են ընդ Տուփ։ Տեսանեմ մարգարիտս ոչ մկն մի իւրաքանչիւր ա կանջս յարմարեալ, որ զի վաղ իսկ սոխորեալ են ա կանջք տանել ծանրութեան բեռինն, այլ կցեալս իրե րաց ՚ի զոգ՝ և այլս ՚ի վերայ զուգելոցն յաւելեալ, որ պէս եթէ կանանցն մոլեգնութիւն ոչ լաւ բաւակա նին գերեալ էր զարս՝ եթէ ոչ ժառանգութիւնք կրկին և երեքկին զերկաքանչիւր ականջաց նոցա կախէին։ Տեսանեմ Հանդերձս մետաքսեայս, եթէ Հանդերձս կոչել մարթ իցէ զորս ոչ մարմնոյն և ոչ ամենևին են ՚ի պատասպարանս. և կին որ զգենու զայնոսիկ, չկարէ երդնուլ Աշմարտութեամբ թէ ոչ մերկ իցէ։ Օ՜այսոսիկ յանծանօթից ՚ի վաճառաշահութեան իսկ չազգայ՝ ծանրագնոյ առեալ բերութիւք, զի տիկնայք մեր չեն նկատեր ինչ առելի ցուցանելոյ սեղեխացն իւրեանց յա ռանձնութեան, քան զոր Հրապարակաւ ցուցանեն ամենեցուն։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

Օ՜ գործեա, ով ագահութիւն, որչափ ինչ իրք են աշխարհի որոց Թանկագնութեամբն նկուն եղև և պար տեցաւ ոսկիդ. զի այն ամենայն զորս ՚ի մէջ մատուցի՝ պատուականագոյն Համարեալք են և մեծագինք։ Ա՜յդ կամք են ինձ և Հոխութեանդ քոց կալ ՚ի գինին և

՝ Ա՜յն ինքն է ՚ի նմանութիւն ածեալ փայտիկ։

զկրկին հանաքայն որք զցանկութիւնս մեր գրգռեն՝ տե-
սանել զթիզոնոզ։ Լսաբէ, երկիր որ զամէնայն
կարևորսն մեզ և զօգտակարս ամենեւին եղ, խորագոյնս
ի ծոց իւր ծածկեաց զՀանքսոզ, և որպէս միաստակա-
բաց՝ որոց գիւրք աղետաբերք էցեն ազգաց և ժողովը-
դոց՝ զգուշացաւ պահել զնոսա։ Լ նոցին իսկ ՚ի
խաւարամած խորոց՝ ուստի ոսկին է և արծաթն՝ տե-
սանեմ վերբերեալ և զերկաթ զի ՚ի սպասուածիւն
իրերաց ոչ զինք պակասեալին և ոչ զինք։ Լայց տա-
կաւին գոյ ինչ իակութիւն ՚ի նոսա, և է ինչ նոցա որ
զօշտակ զայս և շլացուցանէ զմիտս, իսկ զինչ այն յետ
կարքն էցեն զորս տեսանեմ, զինչ մարգկքն և ձե-
ռագիրք ապահովութեան, բայց սին ուրուականք ձո-
խութեանց և ստուերք իմն զորս հնարի ապահովութիւն
՚ի պատրանս խնդամտելոյն մնոտի յուսով։

Օ ի զինչ այլ էցեն այդոքիկ, զինչ վաշխն, զինչ
տոհմն կաղանդագիր՚, և զինչ տոկոսքն, եթէ ոչ
մարդկայնոյ ցանկութեանն արտաքոյ բնութեան ա-
նուանաստեղծութիւնք։ Լչ ընդ այն բողոքեմ ես առ
բնութիւնն, զի ոչ խորագոյն ևս թաղեաց զոսկին և
զարծաթ, և ոչ յաւել զնել ՚ի վերոյ նոցա ծանրու-
թիւն անբառնալի։ Օ ինչ այդ տախտակք, զինչ հա-
շուեգիրք, զինչ այդ վաճառաշահութիւն ժամանակի[2],
և արիւնաբբու հարիւրեակք[3]։ Ջարիք կամուղք առ
՚ի մէնք հնարեալք, ագահութեան սին և ցնորական
երևոյթք, յորս չիք ինչ ոչ ական տեսանելի և ոչ ձե-
ուն չօշափելի։ Ալ հեզ և թշուառական այր որ խըն-
դայեկ ընդ ստուարութիւն հաշուեգրոյ ժառանգու-
թեաւք իւրոյ, և ընդ կալուածոյն ընդարձակութիւն
զոր գործեն կալանաւորք, և ընդ բազմութիւն անթիւ
հօտից խաշանց որք Ջարակին ընդ գառաւս և ընդ Թա-
գաւորութիւն, և ընդ խումբ մեծ ծառայից բազմու-
թեան քան զազգաց պատերազմողաց, և ընդ լայնա-
հիաս շինուած սեփական բնակութեան իւրոյ առաւե-

1 Վաշխին մասեան յորում ըստ աւուրց և ըստ կաղանդաց նշա-
նակեալ էին տոկոսքք։
2 Ջի ըստ աւուրց և ըստ ժամամակաց պահանջին վարձք և տոկոսքք։
3 Շահարագոյնն ՚ի վաշխս որք յամիս հարիւր հաւասարեին գլխոյն,
նմին իրի և արիւնաբբու՝ զի զարիւն անանկացն ծծէին այնու։

լեալ մեծութեամբ քան զընդարձակ քաղաքաց ։ Յետ ակնարկելոյ ի սոսին որովք բարգաւաճեալ Հաստատի մեծութիւն իւր , և որովք մեծամեծաց ամբարտաւանի , եթէ զոր ունին դիցէ ի կշիռ ընդ որոց ցանկանայ , աղքատ է ։ Այլ տուր ինձ կալ ինալ ի մեծութիւնս իմ . իմ թագաւորութիւն մեծ է և անդորր , թագաւորութիւն խնամոտութեան . ամենայն ինչ իմ է այնպէս՝ զի իցէ և այլոց ամենեցուն ։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Սորին վասն ի պարգևել նմա Աստիսոյ Աբսարու զերկերիւք սեստերտան՝ ի բաց մերժեաց ծիծաղելով, դոյզն ինչ զգումարն համարեալ և ոչ ինչ պարծանաց արժանի զարհամարհութիւն նորին ։ Իվ անհամ աստուածք , որպիսի փքրոգի մտաց էր կամել զայր այնպիսի մեծարել , և կամ զեղծուցանել ։ Հարկ է ինձ տալ վկայութիւն ասելն պանծալոյ , և խոստովան լինել զի բարձրագոյնս յոյժ լուայ բանս ի նմանէ . քանզի զարմացեալ նորա ընդ անմտութիւն Աստիսոյ , որ համարեցաւ այնչափ դիւրագնոյ որսալ զնա , ասէ . Եթէ փորձել զիս կամէր՝ զիաբեկալութիւնն բռնական դակ պարտէր մատուցանել ինձ ի փորձ ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յաց ուրեմն է ասել , զի մարթ է պարգևել ինչ և խնամոյոյ , թէ և նորա իցէ ամենայն ինչ . և թէ պէտ զամենայն ինչ Հաստարակաց ասիցեմք զոլ առ բռնական , սակայն ոչ ինչ արգելուցու այն՝ պարգևել ինչ և բարեկամին ։ Ո՛ ի ոչ եթէ այնպէս Հաստարակաց է ամենայն ինչ ընդ իս և ընդ բարեկամս , որպէս առ բաժանորդս ընկերութեան՝ միայ բաժինն իմ գոլով տէր և միւսոյն նորա , այլ որպէս Հաստարակաց են որդիք հօրն և մօր , որոց եթէ իցեն որդիք երկու , ոչ եթէ մէն

մի զմին ունիցին, այլ երկոքին իսկ զերկոսեանն։ Այսպէս քան զամենայն այսմ ինամ կալայց, զի որ հրաւիրէն զիս յընկերութիւն, ո՛ զը և իցէ, գիտակ լինիցի՝ զի չիք ինչ մեր հասարակաց. և ընդէր· զի այդ բաժանութիւն միայն յիմանատունս է յորս գոյ բարեկամութիւն. իսկ այլքն ոչ բարեկամք այլ բաժանորդք են ընկերութեան։ Այս դարձեալ բազմօրինակ տեսութեամբ հասարակաց լինին իրք։ Յասպետական կարգին՝ բազմանկանք՝ հասարակաց են ասպետացն ամենեցուն Հռոմայեցւոց, բայց զոր գրաւեալ ունիմ՝ ի կարգին՝ իմ տեղի է սեպհական, զոր թէ այլում ընծրեցից՝ թէպէտ և զհասարակացն ընծրիցեմ, սակայն շնորհեմ ինչ։ Այն և ինչ ինչ պայմանաւ սահմանեալք հասարակաց. է իմ տեղի՝ ի կարգս ասպետաց, այլ ոչ եթէ՝ ի վաճառել կամ տալ զայն՝ ի վարձու, և կամ առ՝ ի բնականալ՝ ի նմա. այլ զի հանդիսատես միայն կացից անդ։ Այսան որոյ ոչ ստեղից յասելը թէ է իմ տեղի յասպետական կարգին. այլ յորժամ՝ ի տեսարան անդր երթեալ և գրաւեալս տեսից զազամականն ողջոյն, թէպէտ և իցէ իմ անդր տեղի ըստ իրաւանց՝ զի օրէն է և ինձ բազմել՝ ի կարգին, բայց պակասէ ինձ տեղի՝ զի հաւասարակիցք ինձ յիրաւունս տեղւոյն գրաւեալ ունին զայս։ Հանգոյն իմն համանեցաց զայս և առ բարեկամն գոլ· որ ինչ և է բարեկամին՝ հասարակաց է ընդ իս, այլ նորա է սեպհական զոր ունին՝ ի ձեռին. և իմ առանց նորա կամացն հաճութեան չմարթէ վարել նոքօք։ Ոչազր թուիցին քեզ բանքս և ասիցես. Եթէ որ ինչ բարեկամին է իմ իցէ, օրէն է ինձ ասպա վաճառել զայս։ Այլ այդպէս, զի և ոչ զասպետանիստ տեղին օրէն է վաճառել թէպէտ և և հասարակաց են ընդ քեզ և ընդ այլ ասպետս։ Այլ ոչ այսու՝ զի չկարես վաճառել ինչ կամ ծախել, և կամ փոխել՝ ի լաւն կամ՝ ի վատթար, ցուցանի թէ չիցէ քո, զի թէպէտ և պայմանաւ և օրինօք, այլ քո է։ Այպէտ և բարձցի՝ ի քէն, բայց ստուգապէս քո իցէ տակաւին։

1 Ի Թատերս կարգն չորեքտասաներորդ ասպետաց սահմանեալ ևր՝ ի նմա։

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

՝ Այլ զի մի յերկարագոյն ևս նուագօք դեգերեցուցից զքեզ, բարերարութեանն մեծագոյն ոչ է. այլ իրացն ևեթ որովք բարերարութիւնն գործի, մարթէ առաւելուլ մեծութեամբ կամ յոլովութեամբ ըստ առատագեղ յորդելոյ ըղձից բարեգործութեանն. Ահա գոյն իմն տարփաւորացն խիտ առ խիտ համբուրից և անձուկ զրկախառնութեանց, որովք ոչ եթէ առաւելեալ աձէ սէր, այլ՝ի զուարս բերի։ Այլ որ առացելոցս այսոցիկ զՀետ գայ խնդիրք՝ վաղ իսկ լուծեալ է մեր և սպառեալ՝ի նախընթաց գիրսն, վասն որոյ սուղ բանիբք գլխաւորեմք աստ. քանզի և որ զայլոց առացան բանք՝ պատշաձին և՝ի սոյն։

Այլ խնդիր է թէ որ զամենայն փայլ՝ի գործ եդեալ առ՝ի հատուցանել զփոխարէն երախտեացն և ոչ կարաց, համարեսցի արդեօք հատուցեալ։ Այլ աստի գիտասջիր, ասէ, թէ չհատոյց՝ զի գուն գործէր՝ի հատուցանել. և զի ոչ որպէս կամէրն յաջողեցաւ նմա այն, յայտ ուրեմն է ապա թէ չէ հատուցեալ։ Օ որ օրինակ և ոչ որ պարտապանն է՝ համարեսցի հատուցեալ զարծաթեն, որում ամենայն ուրեք խնդիրս արարեալ՝ և ոչ եգիտ որով հատուցանիցէ։ — Այն ինչ իրք այնպիսի որոց կատարումն պահանջի արդեամբք. և են դարձեալ որք ջանիւքն և ևեթ համարին կատարեալք։ Ախչկին զամենայն հնարս արուեստին՝ի վար արկեալ՝ի բժշկութիւն՝ զպարտս իւր կատարեաց. և փառաւքն զամենայն ձարտարութիւն պերձախօսութեանն՝ի գործ արկեալ՝՝ի գտառապարտել իսկ ամբաստանելոյն ինքն զատենախօսութեան զպարտսն էլից անթերի. գովելի է և սպարապետ զօրու՝ թէ և յաղթեացն՝ եթէ խոհական խորհրդով, հնարիմաց ձարտարութեամբ և արութեամբ քաջութեամբ զգործ

՝ Ասա՝ի տեզս ընդհատութիւն թուի լինել, զի յայլմէ յայլ անցանէ խնդիր՝ առանց պատշաձապէս կցորդելոյ բանին։

պաշտամանն էլից ։ Այսպէս և նորա զամենայն փոյթ և գՀնարս ի վար արկեալ լինել երախտահատոյց, այլ բարեբաստութիւնք քո խափան գտան ի նոյն, և ի փորձ հանդիսի ձգմարիտ բարեկամութեանն նորա ոչ ինչ ի դժնդակաց պատահեաց քեզ ։ Ո՞րպէս էիր և ան կարօտ ամենայնիւ զի ընծայաբեր քեզ լինէր. քաջալուղջ զի ի հիւանդութեանդ առընթեր կայր քեզ ի սպասու, յաւերժացեալ ի բարօրութեան՝ զի ձեռն տու լինէր քեզ իւիք, Հատոյց քեզ ընդ երախտեացդ Թէպէտ և դու ընկալար ոչ ։ Այսոլից ասել զի յայս և ի սոյն հակելով նորա միշտ ի խնդրել պատեհ առաւել յոյժ աշխատ եղև Հոգովք և ձգաձքք քան զայն որում յաջողեցաւ փութապէս լինել երախտահատոյց ։

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Այլ այս ոչ ի դէպ գայ յառաջաբերեալք օրինակ պարտապանին, որում չէ բաւական ի խնդիր ևեթ ելանել արծաթոյ, այլ և Հատուցանել զայն ։ Վասզի նորա փոխատու աստկապահանջ ի վերայ կայ գլխոյն՝ և ոչ զօր մի Թողացուցեալ նմա ձրի. իսկ աստ՝ բարեբար քաղցր և մարդասէր. որպ տեսեալ զքեզ ի Հոգս և ի խուճապ տագնապի՝ ասէ. Ի բաց արա յանձնէդ զայդ Հոգ և մի տագնապիցիս վայրապար. իմ առեալ և ընկալեալ է ի քէն զամենայն. անիրաւիս Թէ աւելի ինչ կաթնիցես պահանջել ինձ ի քէն. բոլորանուէր ընկալայ ես զսիրտ քո ։ Այլ ասիցէ ոք դարձեալ. ազէ ասա ինձ, ոչ ապաքէն երախտահատոյց կոչէս դու և զնա որ զսրիտուր երախտեացն Հատուցանէ արդեամբք. ապա որ Հատուցանէն և որ ոչն Հատուցանէ՝ ընդ մի Համար գրեսցին քեզ ։ — Այս այդ և ես գՀակառակն Հարցանեմ. եԹէ ոք անյուշ ընկալեալ երախտեացն և խորհեացի իսկ ոչ ի Հատուցումն նոցին՝ ոչ ապաքէն անշնորհակալս ասիցես և զնա Հաւասար այնմ որ ըզյայդ և զգերեակ աշխատ լեալ և զամենայն ինչ զնուր Թողեալ՝ այնմ միայնոյ փոյթ կալաւ և խնամ՝ զի մի անց-

ցի զԻսրև ժամն և պատեհ երախտահատոյց լինելոյ. ընդ մի համար գրեսցին քեզ ասպա նա՝ որ անփոյթն եղև ամենեին, և ասա՝ որ ոչ թուլացաւ երբեք ի փութոյ երախտահատոյցն լինելոյ։ Նախրաւիս մեծապէս էթէ չեա տեսանելոյ զանհիաղ յօժարութիւն սրտիս՝ զարդիւնան և զայլ չկնէն պահանջիցես։ Նայլ զի համայն ասացից՝ համարեաց թէ գերեալ քո ի հինից ելուզապկաց և ես զամենայն զոր ունէի եղեալ ի զրաւի՝ հայթայթեցի զդամն ի փոխ, և ի գառնաշունչ ձմերուկի նաւեցի ընդ ծովախեաչս աւազակուտս, և դիմագրաւեալ բիւրաւոր վտանգաց բնաւորելոյ ի ծովս և ի խաղաղաւէտ իսկ պահու, և անցեալ ընդ անհուն ամպիս ի խնդիր հինից ելուզակաց յորոց ամենայն ոք խուսափէ, և հասեալ ուրեմն առ նոսա՝ գիտացի զի այլոց ուրուք փրկանաւորեալ էր զքեզ. արդ ժխտիցես թէ երախտահատոյց քեզ գտայ։ Իսկ զինչ թէ և ի նաւարկել անդ վասն քո՝ նաւաբեկ ևս լեալ կորուսից զգինս փրկանագդ. զինչ թէ և ի նոյն ի կապանս՝ յորոց յազատել զքեզ գայի՝ ես ինքն մատնեցայց, ժրխտիցե՞ս զարձեալ թէ չնորհահատոյց քեզ եցեմ։ Նէ ահա Նքսիդիոս և Նքիստոգիտոն՝ գոռոզասպանք ՀԱթենացւոցն կոչեցան. ոչ և Ա՛ուկիոսի ձեռնն ի բագին թշնամւոյն տոչորեալ՝ որպէս սպանող Պորսենայ պատուեցաւ, և առաքինութիւն դիմամարտ ձախողակաց՝ թէպէտ և վերջացեալ ի յաջողութենէ՝ ոչ ապաքէն մեծապայծառ փայլեաց միշտ փառօք։ Որ փախուցեալ պատերհին լեալ միշտ հետամուտ և զբազմաց ինչ իւրաց եհար բուռն առ ի կարող լինելոյ գոլ երախտահատոյց՝ շատ ինչ արար քան զայն որում առանց ինչ իւրոց քրտանց և աշխատութեան դէպ եղև պատեհ զարիտուր երախտեացն հատուցանելոյ։

1 Արմոդիոս և Արիստոգիտոն զՀիպպիաս զբռնաւորն սպանանել ոչ կարացեալ՝ զեղբայր նորա սպանին զՀիպպարքոս և համարեցան բռնաւորին սպանողք։

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Յիսուս. Օ երկուս հոգիք նա քեզ, զկամն բարեաց և զգործ, ապա և դու պարտիս նմա երկուս։ — Օ այդ քեզ իրաւամբք իցէ ասել այնմ որ զանգործունեայ յօժարութիւն կամացն լոկ ընծայեցուցանէ. իսկ նմա որ ընդ կամացն և զամենայն ջան և ըզփոյթ ի վար արկանէ՝ ասել ոչ է մարթ։ Օ ի իւրովսանն հատուցանել և զերկաքանչիւրն։ Չէ դարձեալ, ոչ միտ և ըստ թուոյ զուգակշռել պարտ իցէ զամենայն։ Ա ուրեք զի մի ինչ երկուց գոյ համազօր. աստ զարդիւնս գործոյն փոխանակէն ամենապատրաստ կամք հետամուտ և ցանկացող ի հատուցումն։ Իսկ եթէ յօժարութիւն առանց արդեանց ոչ համարեսցի բաւական լինել յերախտապիտութիւն, ապա չմարթէ գոլ երախտագէտ և ոչ առ դիս, որոց զկամն և զյօժարութիւն ևեթ ընծայաբերեմք։ Իսես. Վհանգի աստուածոց չմարթէ ընծայել ինչ այլ։ — Չէ զինչ թէ և ոչ նմա, որում պարտ է ինձ լինել երախտահատոյց, չկարիցեմ ընծայել ինչ այլ. և ընդէր իցէ ինձ չլինել երախտագէտ առ մարդիկ այնու որով առ աստուածն լինիմ՝ ոչ ինչ աւելի ընծայեալ և նոցա։

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

Ա թէ ինձ անսալ կամիցիս՝ ասացից քեզ ահա զՀնչգրիան։ Ա համարեսցի զփոխարէն երախտեացն ընկալեալ և նա չև և ևս լեալ երախտահատոյց. սա արձակեսցէ զնա ի պարտուց, իսկ նա անձամբ զանձն պարտաւանդեալ կապեսցէ. սա ասացէ՝ Ընկալայ, և նա տացէ պատասխանի՝ Պարտիմ։ Չամենայն ի խընդիրս հասարակաց բարւոյն ուշ ունել մեզ պարտ է և մի տալ պատճառս անպտղութեան և տեղի փախստի, յորս ապաւինեալ և նոքօք զապերախտութիւն իւրեանց ծածկեսցեն։ Բարի, ասէ, զամենայն։ Ա դա դար-

ձեալ։ Ա՛յնչափ անմիտ համարեսցիս դու զգնահինին մեր մինչև ոչ ինչ անիրաւութիւն համարեալ և ընդ ի համար դասել նոցա որ զիմոխառեալ զրաման յանառակութիւնս վառնեսցէ և ՚ի խաղս, և որ ընդ իւրոցն ընչից և զօտարինն կորուսցէ հրոյ տուեալ զայն Ճարակ կամ գողոյ և կամ այլոց ինչ ցաւալի արկածից։ Ա՛յլ զի չարին յանձն տալ տեղի չքմեղանացս զի փոյթ կացցին ամենեքեան հաւատարիմք գոլ ՚ի Հատուցումն պարտուց։ Այլ արդարև լաւ ևս էր զանկաւուց ոմանց և զարդար չքմեղանին չընդունել, քան տալ համարձակութիւն ամենեցուն բաղայս բաղաւորել։ Օ՜ա մեծայն փոյթ ՚ի գործ արկեր զի հատուցես բարեբարբրին. քաջ է, այդ շատ իցէ նմա. իսկ քեզ սակաւ։ Օ ի որպէս նա՝ եթէ զանգուռ և զժբաղձն փութոյգ անտես արարեալ համարեսցի և ոչ ինչ, անարժան իցէ փոխարինացն հատուցման, նոյնպէս և դու ապաշնորհ ես՝ եթէ ոչ մտադիւր ևս համարեսցիս զանձն պարտապան այնմ որ զյօժարութիւն սրտիդ որպէս զՀատուցումն ընկալեալ և զպարտագ եղեալ։ Ա՛յ լեցի քեզ բռնագբօս առնուլ Թողութիւն և ածել զայն ՚ի վկայութիւն. այլ ինդրեսջիր տակաւին պատեհ երախտահատոյց լինելոյ։ Հատո այլում զի պահանջէ, սմա՝ զի Թողու քեզ. նմա՝ զի չար է, սմա՝ զի ոչ չարանայ. վասն որոյ իսկ մի առ քեզ համարիցիս պատշաձեալ և զՀետագայս խնդիր՝ Թէ արդեօք զերախտիս զոր ընկալաւ զբ յիմաստոյ պարտիցի հատուցանել նմա՝ եթէ վերջացեալ նորա յիմաստութենէ տացէ զանձն ՚ի չարիս։ — Ա՛պաքէն զարձուցանել զարձուցանիդր զաւանդն ընկալեալ յիմաստոյ, և չարին իսկ հատուցանես զարծաթն առեալ Ի փոխ. Հիմ ոչ ապա և զերախտիս։ Ա՛եթէ նորա փոխելոյին փոխիցիս և դու։ Այ զինդրդ լինէր այն եթէ զոր յատկութենեան ընկալար՝ խօթացելոյն ոչ հատուցանիդր։ Ա՛ն ապաքէն տկարացելոյն բարեկամի առաւել չոյժ պարտապան գտանիցէ. և սա հիւանդ է հոգւով. զիջանել պարտ է տկարութենեան և ձեռն տալ. զի և անմոռութիւն ախտ ինն է հոգւոյ։ Այ զի չայտնագոյն ևս չարդարեցից զձանս՝ Հարկ համարիմ զայսպիսի ինն առնել զանազանութիւն։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵԻՏԱՄՆԵՐՈՐԴ

ԲԱՐԵՐԱՐՈՒԹԵԱՆՑ կրկին ազգք էն . մին՝ զոր խնամանդն միայնոյ է առնել առ խնաստուն , և այն ինքն է տիրապէս և իսկապէս բարերարութիւն . և միւս՝ նուաստ և գոհհիկ զոր տխմարքս առնեմք իրերաց . և զվերջինսդ զայսորիկ զփոխարէնն չէք երկայնութիւն զի Հատուցանել պարտ է բարերարին որպիսի ոք և իցէ՝ եթէ մարդասպան , եթէ գող և եթէ չոն ; Զարատգործաց վասն օրէնք սահմանեալ կան . լաւ և պատուհասեսցէ զնոսա դատաւորն քան այլ ապերախտ . ոչ ուրուք չարութեամբն լիցի և քեզ լինել չար ; Զայրին յերեսս ընկենումի զնոր բարերարութիւն . բարւոյն Հատուցանեմ փոխարէն , ասա՝ զի պարտական եմ , նմա՝ զի մի գոյց պարտական ;

ԴԵՒՈՒԽ ՈՒԹԵԻՏԱՄՆԵՐՈՐԴ

ԽՆԱՅՑ վասն տիրապէտն անուանեալ բարերարութեան յիրաւի իցէ երկայել . զի թէ չմարթէր ինձ ընդունել զայն բայց որպէս խնաստուն , ապա և խնաստնոյ և եթէ Հատուցանել զայն պարտ է ; Չէ թէպէտ Հատուցից իսկ ես անտեղի՝ բայց նա չկարէ ընդունել , զի վերջացեալ ի գիտութենէն վարելոյ նովաւ՝ անբնդունակ գոյ այնմ՝ և որպէս թէ ոք առ փեշին ձեռօք զձիտանն ընկենուցու՝ այնպէս է ; Ընծութիւն է տալ ինչ ումեք զոր ընդունել ոչ կարէ ; — Չէ զի անտի՝ որ զկայ առեր՝ սկսայց տալ զպատասխանին , Ոչ տայ նմա զոր առնուլ ոչ կարէ . բայց Հատուցից թէ և ընդունել չկարիցէ ; Չկասատարուիլ ոչ կարեմ զի առնուլ ոչ գիտէ . բայց զպատաս իմ ընծայ Հատուցանելով ; Սակայն ոչ կարէ նա վարիլ տուեցեալքն . — Ինքն գիտասցէ . Թող իւր իցէն մեղքն և ոչ իմն

ԳԼՈՒԽ ԻԵ՝ ՆԵՐՈՒԹԵԱՄԲ

Այսպես՝ Հաստատանեալ է տալ որում առնուլն կալցէ՝ Ո՞վ զինչ, ասէ, եթէ պարտական գոլով քո ումեք գինի և նա հրամայն տալը հեղուլ զայն յանկան կամ ի մաղ, համարիցիս հաստուցեալ կամ քնաև իսկ կամիցիս հաստուցանել զայն՝ որ անդէն ի տալն և երկաբանչիւրոցդ իսկ կորիցէ՝ Հաստուցանել է՝ տալ ինդրողին զիւրն զոր պարտս նմա. և այս են ահա իմ պատք. իսկ զի զտուեալն յինէն ընկալցի որում տամ՝ ոչ ինձ անկ է հոգալ՝ Այլ ինամակալութիւն այլ հաւատարմութիւն յինէն պահանջի. և լաւագոյն իցէ յոյժ նմա ջանալ քան թէ ինձ հաստուցանել՝ Այլ և փոխատուին հաստուցանեմ զարժանի իւր թէպետ և ընդ առնուլն զայն ածցէ ի պանդխտի. նա և նմին իսկ կնոջն պոռնկի թէ հրամայեաց ինձ տալ զարժանի՝ տաց. և թէ զղրամն ընկալեալ արկանիցէ ի ծով իւր գոտելոյծ, տակայն և այնպէս տաց. զի ինձ հաստուցանել զարժանին պատք են և ոչ գհատուցումն ինամ ունել և պահպանել՝ Հրամտեացն զոր ընկալայ՝ ինձ անկ է պահպանութիւն մինչև հատուցից, զի ցորչափ առ իս կայ՝ ողջիկ մնասցէ. բայց ի ինդրել զայն առողին, հարկ է հաստուցանել թէ և հասեցի այն ի ձեռաց նորա՝ Զն բարւոյ հատուցից ի դէպ ժամն, յարին երթ և պահանջեսցէ՝

Այց, ասիցես, ոչ որպէս ընկալարն հատուցես զբախտիս նորա. զի յիմանալոյ առեալ անմտին տաս՝ — Այս կարի իսկ քաջ. հատուցանեմ նմա՝ որպէս և զիարդ ընդունել նմա մարթ իցէ. և թէ նուազեն ինչ պարգևքս իմ՝ ոչ յինէն է այն այլ յիւրմէ. ես զոր ընկալայ՝ զայն հատուցանեմ. և թէ գարձցի անդրէն ի գգաստութիւն՝ հատուցից և որպէս ընկալայն, այլ ցորչափ ի չարիսն կայ՝ հատուցանեմ որպէս և զիարդ հնարեաւն ընդունել մարթ իցէ՝

Ասիցես. Իսկ զինչ եթէ ոչ խօթամիտ միայն՝ այլ և մոլեգնեալ իցէ և կատաղի, որպէս զԱպողոնոս

կամ զվաղարիս . Հաստուացէս և այնպիսումն զընկալեալ երախտիսդ : — Յայդ վայր փոխոխումն խնամանոյ հակառակ է բնութեան . զի ՚ի լուէն որչափ և ՚ի վատթարն փոխեսցի , հարկ է զի և ՚ի վատթարութեան անդ՝ հետք ինչ առաքինոյ լաւութեանն մնասցեն ՚ի նմա : Եւ երբեք այնպես շինչանի առաքինութիւն մինչև չթողուլ ՚ի հոգւոջ գՀետս անջնջելիս յամենայն արկածից փոփոխմանց : Վաղանք վայրի ընդելութիւնք առ մեզ թէ յարձակեսցին անդրէն յանտառս , ոչ ՚ի սպառ կորուսանեն զնախկին ընտանութիւնն . այլ որչափ յընտանեգունիցն ընդհատք իցեն ՚ի կենդանեացս , նովին չափով ընդելագոյնք գտանին քան զբնիկսն վայրենիս , որոց չիցէ բնաւ զմարդկայնոյ ձեռինն առեալ զիորձ : Նմանութիւ է կրթելոցն գամ մի յիմաստութիւն՝ յանդունդս չարեաց գլորել զյատակ . խորագոյն տարրացեալն ՚ի նմա գոյն՝ ոչ ՚ի սպառ ջնջեսցի և ոչ յայլ գոյն յեղափոխեսցի :

Վարձեալ Հարցանեմ . Որ ոլեգնութիւն նորա յանձին ևեթ բերի ՚ի միաս եթէ և հաստարակաց . քանզի զ՚պղտոգորս ինձ ՚ի դէմս ածեր և զվաղարիս բռնաւորս , որոց թէ հանմանման իցէ չարութեամբ՝ ընդէր իցէ ինձ չհաստուցանել զիմաստութիւն երախտեաց նորա զի չիցէ ինչ ընդ իս և ընդ նա : Յակ եթէ ոչ արիւնահեղ միայն՝ այլ և արիւնբռնուշտ է , և զամենայն հասակ տանջեալ անխնայ և ոչ յագեալ , որ ոչ առ բարկութեան ինչ այլ ցանկութեամբ խժդժութեան մեղեսիլ , որ հանդիպ աչաց ծնողաց զորդիսն խողխողէ , որ ոչ մահտուքն լսելով շատացեալ դառն տանջաքաջ լինել , որ ոչ ընկենու և եթ զբռնամահսն ՚ի հուր այլ և յամբ և յոշխիկ խորովէ , և որոց բացին ՚ի ջերմաջերմ արեանց Հանապազ Թանալ Հանապազ , այնպիսումն Թէթև ինչ է վերախտին չհաստուցանել : Օ մարդկայնոյ ընկերութեան զիրաւանցն խզեալ զկապ՝ Հատ կարեաց զամենայն և որովք ընդ իսն կցորդեր , Եթէ Հնարն ինչ արարեալ առ իս և ապա զէն ընդդէմ Հայրենեացս վերացոյց , կորուսանելով կորոյս զարդիւնս երախտեացն , և այնպիսումն երախտագէտ գոլ՝ յեղեռն ինձ Համարեսցի : Վամ Թէ հանց Հայրենեացս անվնաս՝ բայց իւրոցն է գժոխմբեր , և Թէ

պէտ զքաղաքակիցն իմ Թողուցու յանդղորու՝ բայց զի բան տատապեցուցանէ, զարձեալ այնու չարաչարեմք վատթարելոյ սրտին տարամարժեալ է լինէն. զի Թէ և չիցէ ինձ Թշնամի՝ բայց տակելի իմ է. զի քան զմիոյ ուրուք ի մարդկանէ՝ նախասպառիւ և հզօրագոյն են առ իս համօրէն մարդկութեանն իրաւունք։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Ի՛ՐԴ Թէպէտ այսոքիկ այսպէս, և ես՝ յայնմ օրէ յորմէ Թիւրեալ նորա և առ ոտն Հարեալ զանհնայն իրաւունս՝ յայտ արար զի ոչ ինչ ի չարեաց եղելոյ առ ինքն զրեսցի յանիրաւութիւն, Թէպէտ ազատ ի պարտացս իցեմ, սակայն այսու արժան Համարիմ վարիլ կանանիւ. իբր զի եԹէ երախտեաքս իմովք չյաւելում ինչ նմա զօրութիւն ի կորուստ Հասարակաց և ոչ յիւրումն գնա պնդեալ Հաստատեմ, այլ առանց իրիք ջնասու Հասարակաց մարԹ է ինձ փոխարինել երախտեաց նորա՝ փոխարինեցից։ Ի՛պզեցուցից զորդի նորա զմանկահասակ. զի զինչ ջնաս իցէ ի բարերարութենէ առաի իմմէ օրոց տանջինն և գիշատին ի խաժգժութենէ նորա, բայց զրամս ի Թոշակ և ի ռոճիկ արբանեկաց նորա ոչ ընձեռեցից նմա։ Ի՛ԵԹէ կՀեայց և Հանդերձից ունիցի պէտս՝ ոչ ինչ ստանակ ունիք ԹԷ լիասցէ ինև զեղութիւն նորա. բայց զինս և զինուոր ոչ տաց նմա։ Ի՛ԵԹէ գուսանս կատակերգուս, Հարձս և որ ինչ այլ զխժգժութիւն բարուց նորա կարէն մեղկել՝ իմդրեսցէ յինէն ի պարգև, մնատուցից մնադիւր։ Ի՛ռաԹիս և ցոկանաւս նմա ոչ յղեցից, բայց յղեցից նաւակս զբօսանոց Հովանոցեալս, և որ ինչ ի ծովաչեմ զբօսանս զուարճութեան Թագաւորացն իցեն ի Հաճ։ Ի՛ակ եԹէ անյոյս ամենևին ի բժշկութենէ իցէ, ի մի Հարուած ձեռին բռնոցիկ բարերարել, և նմա զերախտիսն Հատուցից. զի այսպիսեացն բնաւորելոյ դեղ՝ զրաւել ի կենացն է. և որում չիք յոյս զքաստանալոյ՝ լաւագոյն մեռանիլն է։ Ի՛Այլ անզգամութիւն այնպիսի ուր ուրեմն երևեալ և ընդ հրեշս Համարեցի

և ընդ երեսոյթս անտուրբս . որպէս երկրի պատահել և ի խորոց ծովու հրաբուխս ցոլացուցիչս : Ա ան որոյ զայրագին ի բաց Յողեալ, խօսեացուք գնացանէ՝ յոր խորշիք առանց արշաւելոց : Ի՛նչպիսուն վատ Թարի , որ յամենայն հրապարակս գտանի , և որ սա կաւուց ոմանց է ահընկէց , հատուցից զերախտիսն զոր ընկալայ : Ո՛չ ի գէպ , ոչ արժան , զի չարուԹեամբ նո՛ր օգտեցայց ես . որ ինչ ոչ է իմ՝ դարձցի առ տէր իւր եԹէ բարի իցէ և եԹէ չար : Ո այդ ես զգուշագոյնս քննելի խնամով ԹՀ բարերարել ումեք առաջի կայր և ոչ երախտեացն առնել հատուցումն : Ռ՛առջիկայս օրինակ յայտնաբանեսցէ զասացեալքս :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՒԱՋՆԵՐՈՐԴ

Ի՛ՅՐ ոմն ՊիւԹագորեան գնեաց ի կարուակէ կօշիկս հելլենացիս՝ ոչ առժանայն հատուցեալ զգինն , որպէս դոյզն ինչ : Ո՞ետ աւուրց ինչ գայ ի կրպակ անդր առ ի հատուցանել : Ո՛չ գտեալ զայն փակ՝ բախեր յերկար : Ի՛սկ ոմն ցնա . Ո՛ի ընդ վայր բախես . կարուակդ այդ զոր ինդրես մեռաւ և յաձիւն լուծաւ : Ի՛եզ արդարև գառն են աղէտքդ զի յաւելժաբար համարիմք կորուսեալ զմերն , բայց ոչ նոյնպէս և քեզ որ վերկենցաղելոյ ' բարեկամիդ անկս ունիս : Ո այս նա զծաղու գալով ընդ այրն ՊիւԹագորեան . ՚նակ խնամատարն մեր՝ յօժար սրտիւ՝ ցնցեալ ատկ զերիս կամ չորս փողն ի ձեռին դարձաւ ի տուն : Ի՛նդ ամաչեցեալ յանձն իւր վասն ծածուկ հանուԹեան սրտի իւրոյ ընդ չանն ընդ այն որով զերծանէր ի հատուցանելոյ , գառնայ ի կրպակ անդր և ասէ . ՚Ա կենդանի կաց քեզ , հատո նմա զոր պարտիսդ : Ի՛ւ ընդ ծերսս զրացն ի կրպակ անդր զչորս փողսն ընկեցեալ՝ անձամբ զանձն պատուհասեաց վասն անյագ արծամարհուԹեանն , զի մի ուսցի յօտարին ինչս վայելել :

1 Ըստ ՊիւԹագորեանցն մարմնափոխիկ ազանդին :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Օ՜ր պարտիդ, խնդրեա որում Հաստուցանելն պարտ է. և եթէ չիցէ որ որ պահանջիցէ, անձամբ անձին կացցես դատախազ։ Ով չար իցէ կամ բարի՝ որում պարտիդ, չիք ինչ քեզ անտի։ Հատո և ամբաստան լեր, անմոռաց կալեալ ՚ի մտի որ ինչ իւրա-քանչիւրոցդ եղան պարտք, նման մոռանալ, և քեզ չիչել միշտ։ Այլ զի մոռանալ ասեմք բարերարին զեղծախտիան, սխալէ՝ որ կարծէն թէ կամիցիմք այնու ջնջել ՚ի սպառ ՚ի մտաց նորա զչիշատակ մեծի առաքինական գործոյն։ Այժգինս և առաւելապանցութեամբ պատուիրեմք ինչ ուրեք զի ՚ի ձէգրիտ և ՚ի պատշաճ չափուն կացցեն։ Յորժամ չիչել ասեմք, զայս կամք են մեզ ազդել, չպարծել յայն՝ ոչ հոխանալ և ոչ հռչակ հարկանել, զի էն ոմանք որ յամենայն ակութիւն հրապարակաց՝ երախտեացն իւրեանց լինին քարոզք. զնոյն խօսին ՚ի գթաստութեան, զնոյն յեղյեղեն և յարբեցութեան, զայն յայտ առնեն անձանձութիւ, զայն առանդեն և բարեկամաց։ Այլ ահա առ ՚ի լուցանել զայսպիսի դժպատեհ և զյանդիմանողական ինն չիշատակութիւն՝ պատուիրեցաք բարերարողին մոռանալ զերախտիան, և առաւելապնց օրինադրութեամբն՝ որպ անչնարին էր պահպանութիւն՝ ազդեցաք զլռութիւն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Ի հրամայել ինչ ումեք յոր չիցես վստահ՝ առաւելութեամբ պահանջել պարտ է զի ըստ արժանի բաւականին ընկալցիս։ Ի սոյն բերի և առաւելապանցականն ձև իւրովքն կուտական Ճոռոմութեամբք, զի առաւելապանց բանիւք ՚ի ձշմարտութիւն անդր եկեսցէ։ Այսն որոյ որ ասացն՝

Ամբ քան ըզնիւն իսկ առաւել ըսպիտակք
Յո քան ըզկողմն էին Թեթևք և երագք ՝ ։

անկարելեաքն զիրացն յայտ արար զաստուածութիւն որ-
չափ և մարթ իցէ . նոյնպէս և որ ասացն ։

Ո՛րան զայդոսիկ ըզժայռագ անշարժ և ուժգնա-
գոյն քան ըզգետ .

ոչ կամեցաւ Հաւատարիմ առնել զի լինիցի ոք երբէք
անշարժ քան զժայռ ։ Ո՛չ որչափ համարձակի ասել
առաւելագանցութիւն նոյնչափ և յոտայ , այլ անհա-
ւատութեաքն առ Հաւատացիս Տոքգէ իւր Ձանապարհ ։
Ո՛չինչ իրի միոյ մոռանալ ասեմք բարերարին զոր ինչ
և արարն , ասել կամիմք՝ երևել որպէս մոռացեալ , ոչ
յիշատակել զայն և ոչ Հոգալ Հարկանել ։ Ո՛չ յասէն ,
Թէ չէ պարտ զարիտուր երախտեացն պահանջել , ոչ
՛ի սպառ արգելում չպահանջել զդարձ փոխարինին ,
վասն զի բազում այն է՝ զի ՛ի չարաց պահանջել Հարկ
է և բարեացն յուշ առնել ։ Ո՛չ զինչ . ոչ ազգեցից
անգիտացելոյն զպատճէն . ոչ ցուցից նմա զիմ կարիս
զի միւ ձևացի չգիտել և կամ ընդ տգիտանալն ցաւես-
ցի ։ Ո՛ւրեք զի յուշ առնել պարտ է , բայց պատկա-
ռանօք , զի միւ պահանջել երևեսցի , և կամ ՛ի դատ
կոչել ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՁՈՐՐՈՐԴ

Մոկրաց լու ՛ի լու բարեկամացն ասաց . Ո՛րթ էին
իմ զրաքք՝ գնել ինձ մեհեանց ։ Ո՛չ խնդրեալ յումեքէ՝
բոլորեցուն ազգ արար , և այր այր ցանկայր լինել նմա
պարգևատու ։ Ո՛չ զիաթդ ոչ , քանզի Թէպէտ զդյգն
ինչ էր զոր առնոյին Մոկրաց , բայց մեծ այն էր՝ գոլ
բարեկամն այն բարերադդ յումմէ Մոկրաց առնուցու ։
Ընդ որթէր մեղմագոյն և յանդիմանել գնոսա .

՝ Վէրգիլ . Եկեակ . ԺԲ . 137 ։

Վտեի, ասէ, զմեզնոց, Թէ Էին իմ դրամք։ Ընտ այնորիկ այր իւրաքանչիւր աձապարէ 'ի տալ, այլանա գան մինչ պակասեալ էր Մոկրատայ։ Ի սակս սասա կապահանջիցն արգելուիք զպահանջել, ոչ զի մի ինդրեսցի երբէք՝ այլ զի զգուշութեամբ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Յրիստիպոս զուարձացեալ երբեմն 'ի հոտ իւղոյ անուշից, Ընծեալ լեցին, ասէ, հնամաղդիքն, որք զայսպիսի ինչ զանձիս և զգեղեցիկ չարահամբաւ արա րին։ Օնոյն և մեզ ասելի է. Ընծեալ լեցին վատքն և գժպշի պահանջողք երախտեացն իւրեանց տոկո սեաք, որ բարձին 'ի բարեկամաց զգեղեցիկ համարձա կութիւն ազգելոց զկարիս իւրեանց։ Յլ իմ իրա ւամբք բարեկամութեանն վարեալ՝ անտի զփոխարէն երախտեացս ինդրեցից՝ յորմէ և զերախտիս իսկ ինդրէի. և որ երկրորդ ինն գրեսցէ անձին երախտիս թէ առաջնումն փոխարինել կարասցէ. ոչ գանգատ կալայց երբէք և ոչ ասացից

Հիւրընկալայ զվարեալն յեզերս այսր 'ի մեր
Յա կացուցի զկարօտն անմիտս ինձ ընկերը '։

Ա ազգեցութիւն է այդ՝ ոչ, այլ թէ՛նամանք, այլ ատե լի առնել զբարերարութիւն, և զապերախտութիւնն կամ օրինաւոր և կամ հաձոյական։ Ե ատ իսկ է և աւելի քան զշատ՝ մեզմ և ընտանի բանիւք յիշեցու ցանել ասելով.

Յա բարերար եթէ իւիք քեզ գլուայ,
Ամ թէ երբէք գլուաւ ինչ յիս քեզ հաձոյ.

Յա որ լսէն՝ 'ի վերայ ածցէ. Յա զմարդ ոչ համարե ցայց զքեզ երախտաւոր, զի զընկեցիկս 'ի ծովաբեն՝ զկարօտեալ անձն իմ՝ ընկալար մարդասիրապէս։

։ Վ խրդ. Ենեակ. Դ. 887։

ԴԱՆԻԵԼ ՔՈՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Յն. ասիցես. Յզդեցութիւնք իսկ ինչ ոչ օգնեն, չգիտել ձեւանայ ի մոռացօնս արկեալ զամենայն. և զինչ ինձ պարտ իցէ առնել։ — Օ մեծ ինչ և գիտութ ի վախճան ձառիցս խնդրես արդարև. Թէ որով օրինակաւ պարտ իցէ առնել ապերախտին։ — Հոգւով հեզութեան, համբարտութեան և մեծանձնութեան։ Ընչաւր և տմարդի որ իցէ և երախտամոռաց և ապաշնորհ՝ մի երբէք զառնացուսցէ զքեզ այնչափ, մինչև զողանալ ի քէն և զհետութիւն բարեբարութեանդ։ Յնկերաւորութիւն կամ զայրոյթ մի երբէք տացեն քեզ ասել. Ոչինչ Թէ չէր իմ բարեբարեալ։ Ամերկի քեզ իցէ բարեբարութիւնդ նա և ի ձախողէն անդ. և եթէ չարիացիս գու երբէք, նա ինքն սարկաւագի միշտ։ Ամի որպէս ընդ նոսր ինչ և ընդ յեզակարծ զայրացիս. առաւելագոյն զարմանայ իւրք էին Թէ չդիպէր քեզ այդ։ Օ՜ոմն կասեցուցանել աշխատութիւն, զոմն ծախք, զոմն վտանգ, զոմն ամօթ դժպատեհ, զի մի ի հատուցանէին՝ զառնուլն լեցի խոստովան, զայլ ոմն անգիտութիւն պարտուցն իւրոց, զայլ որ պղերգութիւն և զայլ ոմն զբազանք։ Չպահաց և տես զգան կութիւնս մարդկան, զիարդ անյագ են և առաւելագունին միշտ ի խնդիր. և մի զարմանայիս Թէ չհատուցանեն որ, երբ չիք որ առեցելոյքն շատացի։ Ո՛ որ այնպէս ողջամիտ ի նոսա և անյողդողդ մնաք, որում մարթացիս աներկիւղ վատահութեամբ յաւանդի տալ զերախտիս քո։ Ոմն մոլի անառակութեամբ, այլ որ պղծոց և որովայնի է ծառայ, ոմն ցանկացող շահուց՝ յաձախել զայնս ինդրէ և ոչ զայլ ինչ, այլ որ մխանաւոք տանջի, և այլ որ գարձեալ զայացու փառասիրութեամբ՝ որպ և արեան լեալ դիմագրաւ։ Յաւել յայտսիկ և զասչութիւն մնայ զառամեալ հասակին, և գնորին հակառակին՝ զանանդորը յուզելոյ սրտից զտագնապ և գծուփս մշտատատան։ Յաւել և զամբարտաւանութիւն ինքնահաւան և զիսօլական

փբացումն ընդ այնոսիկ՝ յորոց ամաչէին մանաւանդ պարտ էր և նկուն լինել։ Ողջոյ ասել զյամառելոյն ի չարիս և զյեղյեղական մտաց յարափոփոխս յայլ. մէ յայլ, Ծաղել և զյանդգնութիւն գահավիժ և զերկչոտութիւն խորհրդակրօրայս, և զայլ ևս բիւրս պատիկ չարիս յորոց պաշարեալ կամք, զվատասրտացն խիղախել, զընտանեացն ընդ միմեանս խռով, և որ հատարակաց են աղէտք, յանհաւատս լինել ապատան, տագնապալ յառձեռն բարիս՝ զորս անակնկալ սաստ զգուսք։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ի խոսն այսքանեակս մեռատատան կրից՝ զանպղտելին քան զամենայն խնդրես զհատատութիւն։ Չէ՛ զմարդկայնոց կենացս ձեղբատիպ պատկեր տեսանելիր զատաքեաւ՝ հանգոյն իմն Թագէր քեզ այն՝ կերպարանացս մեծի քաղաքի այն ինչ առելոյ ի Թշնամեաց, ուր ոչ առնէի և ոչ ուղղութիւն ազգին ինչ, այլ այր իւրաքանչիւր ըստ ուժելոյ զօրութեանն մերի, օրպէս ի ձայն նշանին տուելոյ, յասպականութիւն դնել զամենայս։ Հաւր և սուր Ձարակին անդ անխնայ, ապիրատութիւնք անարգելք յօրինաց, և սրբութիւն կրօնից՝ որ և ի խոսն մոլելոյ օխերիմ զինուց պատրաստն կայ աղաչաւորաց, զձեռս աւարառուացն ոչ արգելու բնաւ. ոմն զառանձնաւորացն յաւարի առնու զտունս և ոմն զհատարակացն, ոմն ի նուիրականացն ձեռն արկանել և այլոք յանենուելոս. յարձակին, Ձարկանեն, խորտակեն, և առ անձկութեան մեհեցն տապալեն զդիմակաց ամենայն և ընդ աւերակս հողդեն իւրեանց Ձանապարհ առ ի շահ։ Իսկ առանց հեղման արեան կողոպտել և է որ արիւնաշաղախ ձեռօք զաւարն բարձեալ բերէ. և չկայ որ ոչ ոքոյ չիցէ բարձեալ զոյլոյ ինչ։ Իսկայաժ է ահա և այսպիսի անյագութիւն մարդկան ազգի. և քո ի մեռացօնս արկեալ զհատարակաց զաղէտն՝ ի խոսն այնքանեակս յաչխատակողաց՝ ընծայաբերս խնդրես և երախտահա-

տոյցս ։ Եթէ ընդ ապերախտս զայրանաս , զայրացիր , աղէ , և ընդ պղծագործս , և ընդ արծաթասէրս , և ընդ անառնելիս . զայրացիր և ընդ հիւանդս ծիւրեալս և վատեարեալս , և ընդ ծերս գունատեալս ։ Զերբահատումէն արդարև սիրտ ծանր է և դժնդակ , որ ըզմարդկայնոյ ընկերութեան խզէ զկապ , և հերձեալ պատառէ զմիաբանութիւն զիակ ապականին և գնեցուկ տկարութեանս մերում . բայց և այնպէս յանձնախեալ է առ ամենեսին՝ զի և որ բողոքէն զայնմանէ՝ չէ և ինքն ազատ յախտէն ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Զննեա , աղէ , զանձն քո և տես զի որոց միանգամ գոսոր երախտապարտ՝ Տատուցէր նոցա գչնորհսն . եթէ չկայցէ առ քեզ երախտիք ուրուք առանց փոխարինոյ . եթէ զանհնազոյն երախտեացն գչիշատակ ունիցես անմոռաց ի մտի ։ Չէ տեսցես զի զոքս ի մանկութեան ընկալաւ զերբահատ՝ մոռացեալ է քո յառաջ քան զպատանեկութիւն , և զոքս ի պատանեկութեան՝ յառաջ քան զձերութիւն ։ Զոք կորուսաւ , և է զոք ի բաց ընկեցաք . կէաք առ սակաւ սակաւ անհետացան յաչաց մերոց , և չկայցոյ զայն ի բաց դարձուցաք ։ Ա՛յլ զի մի կարի մեզադիր եղեց քեզ գիտեմ զտկարութիւն բնութեանս . նախ քան զանմեղսն դիւրաւասհ է յիշոզութիւն և անբաւական իրացն յոգմոզեան . որպէս ինչ և ընդունիցի՝ նովին չափով և կորուսանէ , զառաջինսն վերջնովքն հեղձուցեալ ։ Զայր ազգաւ յոչինչ զղայեակդ Հաւանիս՝ զի ամբ ի վերայ անցեալ ի բաց տարան ի քէն զերբահատս նորա . այլ ազգաւ նուաղեցին ի քեզ պատիւ և մեծարանք վարդապետիդ . այլ ազգաւ և ի ցանկութիւն հիւպատոսութեան զաղեալ և քրմութեանց հետամուտ՝ մոռացար զոր յիմդունելութիւն գանձս պետութեան դուն քեզ սատարք ։ Եթէ քաջիկ հետազօտեցիս զանձն քո՝ գուցէ զգալ գանգատիս՝ ի ծոցի քում գոյն ախտն ։ Ընդհատ եթէ ընդ հասա-

բանակաց ամենեցուն զայրանալոյ ընդ յանցանս, յիմանալ եւ եթէ ընդ քոյդ ։ Այլեւս զի արձակեցից ։ Արկայնալ միտ համբերութեամբ թերեւս ածցես զնա ի զգաստութիւն, իսկ ինձնամնեալ՝ ի չար անգղ մի՛ եցես անշուշտ ։ Օ՛ի բանադատես զնա զպոգացուցանել ըզդէմն. Թող զի թէ հեաք ինչ ամենայ իցեն մնացեալ ի նմա, պահեսցին ։ Ասեմ՝ այն է զի զդեղեւէսն ամենթադատութիւն բառնայ ի սպառ յանդիմանութիւն յայտնաբարբառ ։ Եւ զբ զանգիտեսցէ լինել այն պիսի՝ զպիսի եւ յանդիմանեսցան. ամենի կշտամբեալ գնայ ի կորուստ ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

Ա՛ՆԱՐԵԱՐՈՒԹԻՒՆն իմ, ասես, եղև ի կորուստ. բայց զոր ինչ սրբեալ նաւիրեցեր՝ Տանուրեցիս լեալ ի կորուստ ։ Ունդ սրբազանեաւն ի նուէր Տանարի եւ բարեպարութիւն. բարւոք իցէ միշտ եւ գեղեցիկ Թէպէտ եւ ձախողակի փոխարէնքն լինիցին. Թէ ոչ որպէս կարծէսքն գտաւ նա, մեք լեցաք որպիսի էաքս անդնդանք նմա ։ Այլեւթահեին ամենի եւ առ բարեբարն Տաւասանէ. եւ որ ընդ կորուստ երախտեացն գանգատի, չայտ առնէ զի ոչ գիտաց առնել զայն պատշաճապէս ։ Ուրեմն ի մեզ է՝ անբասիր պատցուք զպարեխոտութիւն նորա այնու՝ զի անկարող էր Թերեւս, կամ Թէ ոչ գիտաց եւ կամ Թէ Տատուցէ իսկ գեռ եւս ։ Փոխարէն զգօն եւ խոհական երկայնամտեալ՝ անարատ պահէ զՏամբառ պարտապանին. զնայն արատցուք եւ մեք, եւ զտկարացեալն ի Տաւատարմութեան Տաստատեալ պնդեսցուք ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ

ՆԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆՆ իմ, ասես, եղև ի կորուստ Յ՚ոյ՝ ի քումմէ անմոռնալեացդ զի ոչ ծանեալ զկորըստեանն ժամանակ. կորեաւ՝ այլ ի բարերարելդ, և արգ տուժիցդ ի վերայ կաս։ Այլ և ի դէպս իսկ անյուսալեան մեծապէս օգտէ անվրդով չափաւորութիւն։ Որպէս զմարմնոյ՝ նոյնպէս և զհոգւոյ ախտս մեզմով դարմանել պարտ է. բազում այն է՝ զի որ երկայնամիտ վաստակովք լուծեալ սարզի, խուճապաւ ձգեալ՝ խըզեսցի։ Ո՞ինչ պէտք իցեն անիծից, տրտնջելոյ և թըշնամանաց, որովք արձակեալ զնա՛ի պարտուցն և ազատ առնես. զի թէ ապերախտ է՝ ապա չպարտի ինչ քեզ։ Ո՞ի դառնացուցանես զնա՝ որում այնքան մեծամեծս ընտրհեցեր, և զկեղտկարծ բարեկեաին ընդէր ստիպես լինել քեզ ստուգապէս թշնամի, և թշնամանօքդ քովք հայհոյեցել իւր պաշտպանս և ջատագովս. զի իցէ որ ասասցէ. Ո՞ինչ պատճառաք իցեն չգիտեմ, զի որ այնչափ երախտապարտն էր՝ հանդուրժել նման ոչ կարաց. ոչ վայրապար իրգդ իցեն։ Ոչիք որ որոյ տրտունջ չիցէ բաւական՝ թէ ոչ յաղարտել՝ այլ յարատել զհամբաւ վերնագունին. և որ ծանուցս ստելով հնարի լինել արժանահաւատ, փոքումբքն և թեթեւագոյն ստութեամբք ոչ շատասցի։

ԳԼՈՒԽ ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

ՎԱՆՈ՛Ն իմանալեաւք գործէ՝ որ պահէն զգաստութեամբ զորձէ՝ որ պահէն զգաստութեամբ բարեկամութեան, և զբարեկամութիւն իսկ՝ թէ զգաստասցի։ Խարութիւն տոկուն և անդրդուելի յաղթանակ չարութեան. զի որ այնպէս խրատատիրտ և ատեցող բարեաց՝ որում՝ ոչ լիցի սիրելի առաքինութիւն յաղթական անիրաւութեանց, և որ այնու և այս տեսանէ զինքն լեալ նման պարտական՝ զի ազատ

օրէն և անպատուհաս ապերախտեցաւ։ Զայս Հայեաց ինձ ասա . Ընկալայ , ասես , զխոխարէն երախտեացն , և զինչ արարից ։ — Օ այն՝ զոր և աստուածք առնեն տուիչքն ամենայն բարեաց . որոց չանգիտաս մեզ բարերարել սկսեալ՝ ապաշնորհացս ասա զնոյն Հանապազորդեն ։ Ա՛ , որ ստգտանէ զնոսա իբրև անփոյթս զմինչ , և է՛ որ իբրև անիերաւս ։ Այն արտաքոյ զնոսա յիւրեանցակերտ աշխարհէս , և որպէս անգործս և պարապորդս անլոյս սահմանաւ պարփակէ . և այլ այն զարեգակն՝ որում երախտապարտս եմք՝ և որով Հանգրստեանս մերոյ և վաստակոց սահմանին ժամանակք , որով զերծեալք ի մշտագիշեր խաւնակութենէ ելանեմք ի լոյս , որ կենսաձիր ընթացիւքն բարեկարգէ զտարին , բուծանէ զմարմինս , կենդանագործէ զտունկս և Հասուցանէ զպտուղս , քար ապառաժ զնա անուանէ կամ գունտ իմն հրկիզութեանց դիպաց արգասիք և կամ այլ ինչ՝ զոր և կամիցիս՝ բաց յաստուածոյ ։ Այս կայն և այնպէս՝ նոքա Հանգոյն իմն բարեգործով ծնողաց որք ընդ ձշնամանս տղայոցն իւրեանց ժպտիցին , ոչ դադարեն ի բարերարելոյ ընթացեալքն իսկ և ապաշնորհացդ առ պարգեւատուս . նա մնանաւանդ անխոր առատացուցանեն զպարգեւն յաղքս և յաղիս ամենայն , յայն և ևեթ զգօրութիւն իւրեանց ի վար արկեալ զի օգտեսցեն ։ Ա՛ տարափս անձրևաց ոռոգանեն զերկիր ըստ ժամանակին , ի ձեւս հողմոց տատանեն զծով , յընթացս լուսաւորաց սահմանեն զժամանակս . զամառն և զձմեռն քաղցրասիրտ հողմոց փչմամբ բաբեխառնեալ մեղմեն և անվրդով հեզութեամբ ներդաշտ լինին ընթերութեանց դիւրագայթ բնութեանս ։ Ա՛ցին և մեք լծցուք նմանողք . մի դադարեսցուք ի տալոյ , ընդ որս և ի դերև պարգևքս մեր ելանիցեն յաչաս ։ Ա՛ արարեսցուք այլոց , և նոցա իսկ բարերարեսցուք առ որս սուգն երախտիքս մեր ։ Ա՛ղ յաւերակս կործանելոյ տանն կասեցաւ կառուցանել վերստին . նա՝ ընդ ծախել զայն հրոյն մինչդեռ ջերմ ևս աւերակքն էին՝ հիմունս անդէն արկանելոյ . և զքաղաքս երկրասոյզ կորուսեալս յաչաս՝ ի նմին տեղւոջ կանգնեմք անդրկիւղ ։ Ա՛յսպէս աննկունք բարեացն ի յոյս խիզախեմք ։ Ա՛յն զանկեալն և զկործանեալս յար-

կածիկ վտանգաց կանգնել վերստին և յարուցանել չէր օրէն, մարդկայինքն համայն ընդ ծով և ընդ ցամաք զկայ առեալ դադարէին։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Պերա՞ծ է, անձին զնէ նախատինս և ոչ ինձ։ Իմ զվայելս երախտեացն իմոց անդէն ՚ի բարերարելն ընկալեալ է, նովին իրի ոչ հեղգացայց, այլ մտադիւրա գոյն ևս բարերարեցից, և զոր ՚ի նմա կորուսի՝ ընկալայց յայլում։ Այլ և նմա իսկ բարերարեցից վերստին. և սպասս երկրագործ բարւոյ՝ Ջանիւ գարմանոյ և մշակութեամբ յաղթեցից անպտղութեան երկրին։ Այլ մեծանձնութիւն իցէ առնել երախտիս և կորուսանել, այլ մեծանձնութիւն այն է՝ կորուսանել և գարձեալ բարերարել։

ՅԱՆԿ ԳՐՈՑՄ

Յաղագս Բարկութեան առ Նովատոս

Գիրք Առաջին 1

Գիրք Երկրորդ 28

Գիրք Երրորդ 69

Յաղագս Մխիթարութեան առ մայրն իւր Հելվիա 119

Յաղագս Մխիթարութեան առ Մարկիա տիկին ի մահ որդւոյ նորա Մեսիղոսի 131

Յաղագս Մխիթարութեան առ Պողիբիոս բարեկամ իւր ի մահ եղբօր նորա 152

Յաղագս Նախախնամութեան Թէ ընդէր չարիք պատահեսցեն բարեաց երբ գուցէ վերին տեսչութիւն 223

Յաղագս Ընդդրբութեան ոգւոյ առ Սերենոս 245

Յաղագս Անհասանութեան իմաստնոյ , Թէ չտանջեն իմաստնոյ ոչ թշնամիք ինչ և ոչ անիրաւութիւն 282

Յաղագս Գթութեան առ Ներոն կայսր . . . . . .

Գիրք Առաջին 311

Գիրք Երկրորդ 347

Յաղագս Կարճութեան կենաց առ Պաւլինոս 357

Յաղագս Երջանիկ կենաց առ Գալիոն եղբայր իւր 389

Յաղագս Անանձնութեան իմաստնոյ 427

Յաղագս Բարեբարութեանց առ Եբուկիոս Լիթերալիս.

Գիրք Առաջին 437

Գիրք Երկրորդ 458

Գիրք Երրորդ 492

Գիրք Չորրորդ 528

Գիրք Հինգերորդ 569

Գիրք Վեցերորդ 602

Գիրք Եօթներորդ 644

ՎՐԻՊԱԿՆԵՐ ՏՊԱՐՐԻՆ

Է.Ջ.	ՏՈՂ.	ՎՐԻՊԱԿ	ՈՒՂՂԵԱԼՔ
132·	24·	զի ոչ ինչ պակասէ- ցին ինձ	զի ոչ ինչ պակասե- ցին ինձ
217·	29·	յայնչափ հաւակին	յայն չափ հաւակին
246·	31 - 32·	անանպակասելի	անպակասելի
285·	25·	միանգամայն · չիջան	միանգամայն չիջան
324·	24·	խորհուրդ կանացի·	խորհուրդ կանացի՛
325·	2·	համաձակ	համարձակ
331·	3·	խաղաղաս սէր	խաղաղասէր
427·		ՔՍԱՆԵՐԴՐՈ	ՔՍԱՆԵՐՈՐԴ
447·	1·	ՉԻՆՉ	ՉԻՆՉ
484·	7·	հոտոսէլ զք	հոտոսէլ զք
490·	4·	հաձուելեմբ	հաձուելեամբ
580·	22·	այսոցիկ	այսոցիկ
593 - 594·	40 · 1·	բալսբարուելիւն	բալսբարուելիւն
656·	Ի ծանօթ·	ժամամակաց	ժամանակաց
658·	31·	Ելպեա և և	Ելպեա և